Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1978

АР₁
0-79

0 $\frac{70303\ (341)}{705\ (01)\ 78}$ 78 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1978

Վ Ե Պ Ե Ր

ԸՆՏԱՆԻՔ, ՊԱՏԻՎ, ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԳԼՈՒԽ Ա

Ժամերե ի վեր, հոն դուրսը, դռան ետև, կսպասեր դեկտեմբերի ցուրտ ու ձյունոտ օդով մը։ Աղքատախնամի անդամները, ներսը, իրենց կիրակնօրյա սովորական նիստը կընեին, կարգավ նըպաստ բաժնելով հոն հավաքված աղքատներուն, որոնք արդեն իբրև նպաստընկալ արձանագրված էին և կուգային իրենց հատկացված գումարը առնելու։

Ինք, հեգ կինը, առաջին անգամն էր, որ կուգար. տակավին չէր արձանագրված, հետևաբար զինքը չէին ճանչեր։

Դռնապանը ըսած էր, որ մյուսներուն գործը լմննալեն ետքը պիտի կրնար ներս մտնել ու խնդիրքը ներկայացնել ժողովքին։

Առանձնաշնորհյալները, բախտավորները հետզհետե կկանչվեին։

— Ֆերիգեղցի Թագուկ, Տոլապ Տերեցի Սուրբիկ, Հաճի Թումիկ... և այլն։

Ու ահա դռնապանին հրմշտուքներովը ներս կմտնեին, իրենց դույզն նպաստը կառնեին և ստացագրի մը տակ կստորագրեին կամ խաչ մը կշինեին, իրենց ուսումնական վիճակին համեմատ։

Ոմանք երբեմն դիտողություն մը, խնդիրք մը, խոսք մը կունենային ընելիք, վեհերոտ, սարսափահար կերպարանքով մը.

— Էֆենտիներ, աստված մեկ օրերնիդ հազար ընե, աստված ձեր քեսեներուն պերեքեթ տա... մեկ աղաչանք մը ունիմ զավակներուդ գլխուն համար... աս ամիս...

— Հայտե՛, հայտե՛,— կլսվեր խոշոր ու դաժան ձայնը ատենապետին,— էվել խոսքի պետք չկա, փարադ առի՞ր, գործդ լմնցա՞վ, հայտե՛, առապադ քաշե։

Ու քարտուղարին դառնալով.

— Ասկե ետքինը ով է նե՝ կանչել տուր նայինք։

Եվ խնդրարկուն դռնապանին հրմշտուքներովը դուրս կնետվեր, առանց խոսքը կարենալ ավարտելու։

Դուրսը, իրենց կարգին սպասողները, կասկածոտ, գրեթե թշնամական ակնարկներ կուղղեին դռան ետև նստող նորեկ կնոջ։ Այդ անծանոթը, որ ապահովաբար կուգար նպաստ խնդրելու, մրցակից մըն էր, որ իրենց բերնեն պատառ մը հաց խլելու կպատրաստվեր. և ահա շեղակի ակնարկները հետզհետե կծանրանային իր վրա, նեղացուցիչ, անպատկառ երևույթով։

Պառավ մը, չոր ու նիհար, թոմթոկած մագաղաթացյալ մորթով, ա՛լ չկրնալով զսպել իր հետաքրքրությունը, ելավ հարցուփորձելու, բան մը հասկնալու համար։

— Աղջիկս, ո՞ր թարաֆեն ես,— հարցուց փաղաքշական, գթասիրտ շեշտով մը։

— Ֆերիգյուղեն։

— Առջի անգամն է փարա ուզելու կուգաս կոր։

Մյուսը գլխու հաստատական շարժումով մը պատասխանեց, ջանալով կարելի եղածին չափ կարճ կապել այդ անհաճո հարցաքննությունը, բայց պառավը միտք չուներ իր որսին օձիքը դյուրավ ձգելու։

— Ի՞նչ կըսվիս,— պնդեց։

— Սաթենիկ։

— Էրիկ չունի՞ս.

— Մեռած է։

— Վա՜խ, վա՜խ, վա՜խ, չոճուխ ունի՞ս։

— Աղջիկ մը ունիմ,— պատասխանեց կինը անհամբերության շարժում մը ընելով։

Պառավը նոր հարցումներու կպատրաստվեր, երբ սրահին դուռը բացվեցավ և դռնապանին ձայնը գոչեց.

— Եղիսաբեթ Քյություկյան, հայտե՛, չապուխ...

Հետաքրքիր ու շատախոս պառավն էր։ Անմիջապես ոտքի ելավ և սենյակ ուղղվեցավ, մինչ մյուսը լայն շունչ մը կառներ, վերջապես ազատած ըլլալուն այդ ջատուկին ձեռքեն։

Եվ սակայն այդ քանի մը կարճ հարց-պատասխանը վեր ի վար հուզած էր խեղճ կինը, վերակենդանացնելով իր ամբողջ

կյանքը, ամուսնին մահը, աղջկան հիվանդությունը, իր թշվառ վիճակը։

Սաթենիկ Ամասյան, հազիվ երեսուն տարեկան, շնորհալի ու նուրբ դիմագծերով կին մըն էր, գեղեցիկ սև աչքերով, փոքրիկ բերանով և սպիտակ ակռաներով։ Թշվառությունը զինքը ընկճած ու քիչ մըն ալ խաթարած էր. բայց բոլորովին չէր եղծած իր կնոջական հրապույրը։ Դեմքին տժգունությունը և մանկամարդ որբեվայրիի տրտմությունը, որ ամբողջ կերպարանքին մեջ նկարված էր, ազնվական շնորհ մը կուտային իրեն։

Երկու տարիե ի վեր կորսնցուցած էր ամուսինը, կարող, առաջնակարգ ուսուցիչ մը, որ տասնըհինգ օրվան միջոցին, իր կնոջ թևերուն մեջ մեռած էր ժանտատենդե, որբ ձգելով իր հինգ տարեկան մեկ հատիկ աղջիկը՝ Սիրվարդը, հորը պես խարտյաշ, փոքրիկ հրեշտակ մը։ Այդ հախուռն, հանկարծական մահը, որ մեկ քանի օրվան մեջ քանդած ու փճացուցած էր ամբողջ երջանկություն մը, խելահեղ հուսահատության մը մատնած էր Սաթենիկը, ահռելի աղետին առաջին ամիսները։ Հետո, կամաց-կամաց ստիպվեր էր համակերպիլ, ապրելու որոշում տալ։ Մանավանդ որ փոքրիկ Սիրվարդը կար, ամուսնույն թողած միակ ժառանգությունը, զոր հարկ էր խնամել, մեծցնել։ Այս պարտականությունը զինքը զորացուց կյանքի դժնդակ պայքարին մեջ, սիրտ ու կորով տվավ իրեն։

Ամուսինը նյութական բան մը չէր թողած իրեն։ Թեև ամիսը 15—20 ոսկի կշահեր, բայց ամենքն ալ կծախսեին, անհաշիվ ու անհեռատես շռայլությամբ մը։

— Հիմա ապրելու, զբոսնելու, կյանքը վայելելու ատեննիս է,— կխորհեր էրիկը,— ավելի ետքը, երբ քիչ մը տարիքնիս առնենք, կրնանք խնայողություններ ընել։

Մահը երբեք հաշվի չէին առած։ Իրենց առողջ երիտասարդության մեջ բնավ չէին խորհած, որ անիկա կրնար գուցե շուրջերնին թափառիլ ու հանկարծ զգետնել զիրենք։

Ու այսպես, մեկ օրեն մյուսը, խեղճ այրին դյուրակեցիկ կյանքեն՝ թշվառության անդունդը ինկած էր։ Առաջին տարին կրցած էր գեշ-աղեկ ապրիլ, մաս-մաս ծախելով ավելորդ կարասիներն ու մեկ քանի զոհարեղենները, բայց երկրորդ տարին շատ ավելի անձկության մատնված էր. ի զուր փորձած էր աշխատիլ, ձեռագործի մասին իր ճարտարությունը արդյունավորել, գործ առնելու միջոցներ չուներ, աղջիկը իրեն արգելք կըլլար դիմումներ ընելու և

ատեն-ատեն ծանոթներու կողմե եղած հանձնարարութիւններն ալ շատ ոչինչ բաներ էին։ Հիմա Ֆերիգեղ՝ փայտաշեն փոքրիկ տուն մը վարձած էր. վեց մեճիտիեի և լավագույն սենյակն ալ տված էր երիտասարդի մը, որ իր հանդուցյալ ամուսնույն բարեկամն էր, և իրեն ալ ծանոթ։ Երիտասարդը սենյակի վարձքի ու լվացքի համար 120 ղրուշ կվճարեր, որով տան վարձքեն ազատված էր ինք։ Իսկ սնունդը, հազիվհազ անոթի չմնալու չափ բան մը կրնար ձեռք բերել իր ձեռագործի աշխատութիւնամբը։

Ու հեգ մանկամարդ կինը, իր այս տվայտանքին մեջ, մեկը չուներ օգնական կամ խրատատու։ Հայրը արդեն մանկության հասակին կորսնցուցած էր, իսկ մայրը չորս տարիե ի վեր մեռած։ Ամուսնացած քույր մ'ուներ Պուլկարիա հաստատված և որմե նյութական ակնկալութիւն չէր կրնար հուսալ։

Իր միակ բարեկամն ու խորհրդակիցը պ. Գարեգինն էր, երիտասարդ վարձակալը, որ երբեմն շատ նեղ պարագաներուն, քանի մը ղրուշի օգնութիւն մը կըներ իրեն։ Այս անձուկ վիճակին մեջ նոր անակնկալ դժբախտութիւն մըն ալ ունեցած էր։ Աղջիկը՝ Սիրվարդ, ահռելի տենդով մը պառկեր էր, խոլական երկյուղներու մատնելով զինքը։ Բժիշկը հայտարարած էր, որ հարկ էր մեծ զգուշությամբ խնամել։ Սաթենիկ ամբողջ ամիս մը անքուն հսկած էր զավկին քով, ու վերջապես հաջողած էր մահվան ճիրաններեն փրկել զայն։ Բայց խեղճ աղջիկը շատ տկար ինկած էր, կաշին ու ոսկորը միայն մնացած, քալելու, շարժվելու կարողութիւն չուներ։

Բժիշկը հանձնարարած էր, որ լավ սնունդ առնե, առատ կաթ խմե, պաղեն զգուշանա։ Եվ թշվառ մայրը տասը փարա չուներ գրպանը։ Հիվանդության միջոցին Գարեգին կրցածին չափ նյութական օգնութիւններ ըրած էր, դեղի ու բժշկի դրամները վճարած էր, բայց այն ալ մեծ կարողութիւն մը չուներ, վաճառականի պարզ գրագիր մըն էր, 5—6 ոսկի ամսականով։

Խեղճ մայրը խելահեղ, շվարած չէր գիտեր ուրկե օգնութիւն հուսալ։ Այդ տագնապի վայրկյաններուն, դրացուհիները խորհուրդ տվին Աղքատախնամին դիմելու, որ ըստ իրենց ըսածին, այնքան անարժաններու առատ-առատ նպաստներ էր բաշխեր։

Սաթենիկ նախ ընդվզեցավ։ Մինչև այդ օրը, հակառակ իր կրած անտանելի անձկութիւններուն, երբեք մտքեն անցուցած չէր այդպիսի դիմում մը, որ նվաստացում մը կհամարեր իր արժանապատվության համար։ Բայց ճար չի կար, մանկուհին սնունդի պետք ուներ, եթե ոչ բժիշկը սպառնացեր էր, չէր կրնար դիմանալ, փոքրիկ զանցառություն մը կրնար մահաբեր ըլլալ։

— Ինչո՞ւ չերթաս-չուզես,— կխրատեին դրացուհիները,— դեռ քու վիճակեդ շատ ավելի աղեկ վիճակ ունեցողները կերթան կարձանագրվին կոր, հաց, ածուխ, կաթ, զգեստ կառնեն կոր... քիչ մըն ալ քեզի տան։

Վերջապես իր աղջկան սիրույն համար Սաթենիկ հանձն առած էր Աղքատախնամին դիմելու։

Առտուն կանուխ, ձյունին տակ քալելով, Ֆերիգյուղեն մինչև Բերա, Ս. Երրորդության եկեղեցին եկեր էր ու Աղքատախնամին տեղը հարցուցեր էր բանկալը նստող ծերունի մը։

— Ժամուն ձախ կողմեն շիտակ գնա, հոն դիմացդ դուռ մը կելլա, ներս մտիր, սանդուխեն վեր ելիր, կտեսնաս,— պատասխանած էր մարդը։

Հիմա, հոն կծկված ժամերե ի վեր, այդ արհեստով մուրացկաններու բազմության մեջ, որոնք իրարու հետ կվիճաբանեին ու կկռվեին, ժամ առաջ ներս խուժելու և նպաստի մեծագույն բաժինը հափշտակելու համար։

Ինք քանի մը անգամ փորձած էր կամաց մը դուռը բանալու ու ներս մտնելու, բայց դռնապանը բրտորեն ետ հրեր էր զինքը։

— Սպասե՛, փ ա թ լ ա մ ի շ չես ըլլար կոր ա՞...— պոռալով երեսին։

Բոլոր այս սպասումը, ստորնացումը, նախատինքը այնքան զինքը հուզած ու ջիղերը թունդ հանած էին, որ վայրկյան մը ուզած էր ձգել փախչիլ, ինքզինքը փրկել այդ անտանելի կտտանքներեն։ Բայց հեգ Սիրվարդին տժգույն և երիթացած դեմքը հանկարծ ցցվեր էր իր առջև, անմեղ մանկուհին, որ կաթի ու կրակի կըսպասեր... և գամված մնացեր էր իր տեղը։

Նպաստընկալները հետզհետե կհեռանային, քիթերնուն տակեն մոլտալով և բողոքի տրտունջներ բարձրացնելով տրված նըպաստին քանակին դեմ։

Երբ վերջին ծերուկն ալ մեկնեցավ, անթացուպով քալող յոթանասունամյա մարդ մը, Սաթենիկ ոտքի ելավ, պատրաստվեցավ ներս մտնելու, դուռը կամաց մը զարնելե ետքը։ Բայց դռնապանը կրկին տնկվեցավ իր դեմը։

— Քիչ մը սպասե ըսինք ա, աս ի՞նչ էտեպսիզություն է...

— Ո՞վ է, ի՞նչ կա, տահա չմնցա՞ն,— հարցուց խոշոր, հրամայական ձայն մը։

— Էֆենտի, կնիկ մը կա, առտվնե ի վեր եկեր կսպասե...

— Ո՞վ է, արձանագրվա՞ծ է, ի՞նչ կուզե...

— Չէ, էֆենտի, նոր կնիկ մըն է, ուրիշ ատեն չի եկած, Ֆեբրիգյուղեն է եղեր...

— Ներս կանչե նայինք։

Դռնապանը այս հրամանին վրա դուռը բացավ և Սաթենիկին ըսավ.

— Հայտե՛, նե՛րս մտիր... կեցի՛ր... ոտքերդ սրբե՛, քյո՞ր ես, խսիրը չե՞ս տեսնար կոր...

Հեգ կինը, երկչոտ ու դողահար, ոտքերը սրբեց և երկու քայլ առաջ գալով կեցավ, խոնարհ, սպասողական դիրքով մը։

Կանաչ ծածկոցով խոշոր սեղանի մը մեջտեղը թիկնաթոռին վրա բազմած էր ազնվաշուք Ղուկաս էֆենտի Կելկիթյան, Աղքատախնամի ատենապետը, ինչպես նաև Կալվածոցի անդամը, քառասունհինգը անցած՝ միջահասակ գիրուկ մարդ մը, գլուխը քիչ ճաղատ, խոշոր բերան մը, լայն՝ վավաշոտ շրթունքներով։ Ֆեսը հանած էր գլխեն և մերթ ընդ մերթ ճարպոտ կլոր ձեռքովը ճակատը կշփեր, անընդհատ ծխելով։ Իր շուրջը բոլորված էին Աղքատախնամի բոլոր անդամները, ատենադպիր, գանձապետ և այլն. բայց հայտնապես կերևար, որ անոնք ամենքն ալ անկարևոր մարդիկ էին, ու հոն տիրապետող ամբողջ հեղինակությունը Ղուկաս էֆենտին էր։

Սաթենիկ շվարած, շլմորած՝ այդ անծանոթ մարդերուն կնայեր, որոնք իր բախտը պիտի վճռեին։ Անոնք ալ փոխադարձաբար կդիտեին ու կզննեին այդ կինը, որ իրենց ներկայացող սովորական խնդրարկուներեն չէր, որուն երեսը պատռած չէր տակավին և հոն ամոթահար, կարմրած կկենար առանց կարենալ խոսք մը արտասանելու։ Իր այս ամչկոտ դիրքը. որ իր տժգույն այտերը թեթև կարմրությամբ կներկեր. իրեն պատկառոտ հրապույր մը կուտար։ Բայց Ղուկաս էֆենտի այդ մանրամասնություններուն վրա համենալու ատեն չուներ, անհամբերությամբ ժամացույցը նայելով, դոչեց.

— Օ՜, կեսօրին մուտեցեր է...

Հետո, Սաթենիկի դառնալով, կոշտ ու կոպիտ ձևով մը հարցուց.

— Է, ի՞նչ կա, ի՞նչ կուզես, առտուն չի՞ գայիր։

— Առտըվնե ի վեր հոս դուրսը կսպասեի կոր,— կմկմաց Սաթենիկ։

— Էյ, ի՞նչ կուզես. նպաստ կուզե՞ս, անունդ արձանագրվա՞ծ է, քննություն կատարվա՞ծ է քու մասիդ, խոսե՛, պատասխանե՛, ի՞նչ փատի պես կեցեր ես...

— Ոչ, դեռ առաջին անգամ է, որ եկա. աղջիկս հիվանդ է, սնունդի պետք ունի, ես այրի եմ ու ոևէ նյութական կարողություն չունիմ... կաղաչեմ, կխնդրեմ, անմիջական օգնության մը շնորհ բերեք...

Ու խեղճ կինը այս բառերը դժվարավ, հազիվ լսելի ձայնով մը արտասանելէ ետքը, թաշկինակը աչքերուն տարավ, անոնց խոնավությունը սրբելու համար։

— Ճանըմ, քեզի բան մը կհարցնենք կոր, պատասխան տուր,— գոռաց Ղուկաս էֆենտին,— նյութական վիճակիդ մասին քննություն եղա՞ծ է...

— Բայց այս կինը դեռ այսօր, առաջին անգամ ըլլալով մեզ կներկայանա կոր նպաստ խնդրելու համար,— բացատրեց անդամներեն մեկը։

— Հա, սանկ ըսե,— պատասխանեց էֆենտին...— անանկ է նե՝ անունը և հասցեն նշանակեցեք, քնիչ հանձնաժողովեն մեկը թող երթա վիճակը լավ մը հասկնա տե, տեղեկագիր մը բերե, մենք ալ անոր համեմատ բան մը որոշենք։

Եվ Սաթենիկի դառնալով՝ վճռական շեշտով մը գոչեց.

— Տասնըհինգ քսան օրեն մեյ մը անցիր...

Ոտքի ելավ, մեկնելու համար։ Մյուսներն ալ հետևեցան իրեն, մինչ քարտուղարը անոնց դուրս ելլելուն կսպասեր, որպեսզի կնոջ անունն ու հասցեն արձանագրեր։

Սակայն Սաթենիկ խելահեղ սոսկումով մը իր շուրջը կնայեր, կարծես առանց բան մը հասկնալու անցած դարձածեն։

Քսան օր ետքը.... միթե կարելի՞ էր, ինք, որ նույն ժամուն, նույն վայրկյանին անհրաժեշտ պետք ուներ օժանդակության։ Ու նորեն աչքին առջև կցցվեր Սիրվարդի տժգույն և ազազուն դեմքը, որ իր ստամոքսին պարապությունը կողբար։ Ինչպե՞ս կրնար ձեռնունայն դառնալ տուն, ինք՝ որ ինքզինքին խոստացեր էր ամեն ստորնացումներու, ամեն նվաստության գնով, անպատճառ բան մը տանելու զավկին։

— Էֆենտի, կազաշեմ, կպաղատեմ, այսօրվան համար գոնե փոքրիկ նպաստ մը շնորհ քրեք, բացառիկ բան մը... պզտիկ գումար մը, որով կարենամ զավակս գոնե քանի մը օր ապրեցնել...

— Անկարելի է, էֆենտիմ, անկարելի,— բացագանչեց Ղուկաս էֆենտի,— հոս կարգ կանոն կա, ամեն բան օրենքով կըլլա՝ մինչև հիմա ինտոր ապրեցար նե՝ քանի մը օր տահա ապրե... առանց քննության դրամ չենք կրնար տալ, նայինք ո՞վ ես, ի՞նչ ես, իրավունքդ կարո՞ տ ես... կարելի է մեզի կխաբես կոր, կարելի է քեզի օգնող մը ունիս, բռնաֆ բան, չհասկցված՝ փարա կտրվի՞... մենք ի՞նչ գիտնանք ո՞վ ես, ի՞նչ ես... կարելի է բոզին մեկն ես... ալլա՜հ, ալլա՜հ...

Եվ էֆենտին անձրևանոցը ու լաստիկը հագնելով, երկուքնոց մը նվեր տվավ գոնապանին ու առավ քալեց իր պաշտոնակիցներուն հետ։

Սաթենիկ քարացեր մնացեր էր եղած տեղը. էֆենտիին վերջին բառերը՝ «կարելի է բոզ մըն ես», ահռելի հարվածի մը պես իջած էր գլխուն, զինքը սահմռկեցնելով։ Երբ քիչ մը ինքզինքին եկավ, սենյակին մեջ առանձին մնացած էր քարտուղարին հետ։

— Անունդ արձանագրել պիտի տա՞ս,— հարցուց քարտուղարը, որ կուզեր ժամ առաջ տետրակները ժողվել ու երթալ։

Սաթենիկ զարմացումով քարտուղարին նայեցավ, չհասկնալով թե ի՞նչ կուզեր։ Իր շփոթության մեջ ամեն բան մոռցեր էր, հետո հիշեց.

— Այո, անունս ու հասցես... քննություն կատարելու համար... Սաթենիկ Ամասյան, Ֆերիգյուղ, Պաքալ փողոց, թիվ 26...

Ու մեկնեցավ, մտամոլոր, գլուխը սև շալին տակ ծածկած, եկեղեցիին պատի քովեն սողալով։

Երբ բանկալին մոտ հասավ, Թաղ. Խորհրդարանի դռան առջև բազմություն մը խմբված էր։ Դռան սեմին վրա կերևար Ղուկաս էֆենտին, իր հաստ, զանգվածային մարմինը հաղթականորեն տնկած, ոլիմպյան Աբամազդի մը վեհափառությամբ. իր պաշտոնակիցներ ակնածանքով, քիչ մը հեռու կեցած էին։

Ծանրակշիռ դեպք մը տեղի ունեցած էր քիչ մը առաջ, որ խիստ բարկացուցեր էր էֆենտին, Աղքատախնամին սենյակին խորհրդարանը եկած միջոցին։ Ժամուն բակը քանի մը տղաք ձյունագնդակ կխաղային զիրար հալածելով։ Գնդակներեն մին վրիպելով՝ եկած ինկած էր էֆենտիին բալթոյին թավիշե օձիքին վրա։ Տղաքը իրենց գործած այս անլուր ոճիրը տեսնելով՝ արդեն լեղապատառ փախած ու անհայտ եղած էին, և Ղուկաս էֆենտի ստիպվեր էր իր բարկությունը թափել ժամկոչին, լուսարարին, բարապանին ու խեղճուկ տերտերի մը վրա, որոնց պատահեր էր խորհրդարանին դռան առջև։

Չորսն ալ իր դեմը կեցեր էին, բարև բռնած, հանցավոր ճորտերու պես, մինչ շուրջերնին հետզհետե եկեղեցիեն ելլող հետաքրքրիները կանգ կառնեին։

— Ա՜ս ի՞նչ խաղություն, ա՜ս ի՞նչ խայտառակություն է,— կորոտար Ղուկաս էֆենտի,— ինչո՞ւ թող կուտաք որ բակին մեջ խաղան... մազ մնաց, որ ձյունը աչքիս կուգար կոր։ Աստեղը ժա՞մ է, չէ՞ նե մի Տոլապ Տերեսին չեռփլիկը... ա՜ս բիճերուն վարժապետը ո՞վ է, տնօրենին ո՞ւր է... ա՜ս ի՞նչ անբարոյականություն է, էֆենտիմ...

Լուռ, սարսափահար, ամենքը մտիկ կընեին, առանց նույնիսկ հավանության մրմունջ մը լսելի ընելու կամ շարժում մը ընելու։ Գիտեին էֆենտիի բնությունը, գիտեին, որ երբ անիկա բարկանար ու պոռար, հարկ էր կրավորական հլությամբ մը մտիկ ընել և թողուլ, որ բարկությունը անցնի։ Էֆենտին, բարկության ժամանակ, նույնիսկ չէր ներեր, որ իրեն իրավունք տային։

— Ատ չափխըներեր ինչո՞ւ ա՜ս ժամեն ներս կառնեք,— շարունակեց էֆենտին, հետզհետե ձայնը բարձրացնելով,— ժամուն խրթլրխը չի կա յա... թող Հարություն երթան, Լուսավորիչ երթան, Ֆերիգյուղի ժամը երթան, ճեհեննեմին պուճախը երթան... Ս. Խրրորդությունն ալ թող մեզի ձգեն, թոհաֆ բան, շնորհքով մարդիկը ասանց երեսեն ժամ չեն կրնար կոր երթալ... ա՜ս դուրս ելլողներուն նայեցեք...

Եվ էֆենտին աջ ձեռքովը մատնանիշ ըրավ նույն միջոցին եկեղեցիեն դուրս ելլող բազմությունը, պառավ, անկար կիներ, համալներ, պատառոտուն լաթերով ծերունիներ։

— Ա՜ս խաղքության, ա՜ս աղտոտության նայեցեք,— գոչեց նորեն,— ինչպե՞ս կուզեք, որ ազնվական ընտանիքներ ժամ գան, երբ այս պապուկները հոն լեցված են... գոնե կարգերնին ճանչնա՞ն, սանկ հետևոք կայնին, չէ՞, կերթան դասին առջև կանկվին, առանց նայելու, որ քովը կեցողը ո՞վ է, իրեն աստիճանի՞ն մարդ

է։ Կարծես ժամը ապրեցնողը, շեն պահողը, փարա տվողը իրենք են...

Սաթենիկ պահ մը ինք ալ կեցած մտիկ կըներ այս խոսքերուն։ Ղուկաս էֆենտին տեսնելով, խորհած էր վերջին, գերագույն դիմում մը փորձելու, բոլորովին ձեռնունայն տուն չվերադառնալու համար, բայց այդ բարկաճայթ խոսքերը, որոնց վերջը չէր գար, ու հետո, շուրջը խռնված բազմությունը զինքը բոլորովին ջլատեցին և հուսահատ շարժումով մը ինքզինքը դուրս նետեց եկեղեցիեն։

Նույն միջոցին Ղուկաս էֆենտիին հետևը թաղական մը երևցավ, որ ներսեն լսելով Աղքատախնամի ատենապետին ձայնը, եկեր էր խնդրին ինչ ըլլալը հասկնալու։

— Ղուկաս էֆենտի, ներս հրամմեցեք, դռան առջև կմսիք,— ըսավ նորեկը. որ ինքն ալ մեծ աղա, մտերմական շեշտով մը կխոսեր էֆենտիին հետ,— եկեք սուրճ մը հրամմեցեք...

Ղուկաս էֆենտիի բարկությունը իջած էր քիչ մը և առանց շատ աղաչել տալու հետևեցավ թաղականին, իրավցնե վառարանի կրակեն քիչ մը տաքնալու պետքը զգալով։

Ներսը քանի մը թաղականներ նստած էին, որոնք սիրալիր ընդունելություն մը ըրին Ղուկաս էֆենտիի և թիկնաթոռի մը մեջ տեղավորեցին զինքը։

— Ղուկաս էֆենտի, կերևա որ ձեզ նորեն բարկացուցեր են, ի՞նչ պատահեցավ որ,— հարցուց թաղականներեն մին։

Ղուկաս էֆ. մանրամասնորեն պատմեց ձյունագնդակին դեպքը, շեշտելով մանավանդ սա ծանր պարագան թե «մազ մնացեր էր, որ ձյունը աչքին գար». նորեն քիչ մը առաջվան ըրած դիտողությունները կրկնեց, թեև նվազ բարկաճայթ շեշտով մը։

Քիչ մը ետքը ներս մտավ ավագերեցը, երկայնահասակ, նիհար, խոշոր ու սպիտակ մորուքով։ Պատկառելի Տ. Միքիաս ավագ քահանան այն ատեն վաթսուն տարեկան կար. երկար ատենե ի վեր ավագերեցն էր Բերայի եկեղեցիին։ Ինք էր, գերազանցորեն, մեծատուններու տաներեցը և իր այդ առանձնաշնորհյալ դիրքը իրեն գերակշիռ ազդեցություն մը կուտար ամբողջ քահանաներուն դասին մեջ։ Ոչ միայն Բերայի, այլ նույնիսկ Գատը գյուղի և ուրիշ արվարձաններու հարուստները իր ծուխերն էին. կարծես ջոջերու տաներեցությունը մենաշնորհի վերածած ըլլար։ Ամբարտավան և խրոխտ իր ստորադասյալներուն հետ, Տ. Միքիաս կեղծավոր ու

շողոքորթ կդառնար իր հարուստ ծուխերուն հանդեպ և ասոր համար կսիրվեր ու կհարգվեր ամենեն, մանավանդ թե ինք, որ իր ձեռքին մեջ ուներ բոլոր ծանոթ ընտանիքները, շատ անգամ կհաջողեր անոնց մեջ խնամության կապեր հաստատելու։ Այս ծառայության լիակատար վարձը անշուշտ Տ. Միքիաս պիտի ստանար հանդերձյալ աշխահի մեջ, բայց այսուհանդեձ, սպասելով երկնային վարձատրության, հոս ալ, առհաշիվ, նյութական փոխարինություններ կստանար այս միջնորդության համար, որոնք բարդվելով իր ավագերեցի և տաներեցի եկամուտներուն վրա, բավական ճոխ ու հանգստավետ կյանք մը կապահովեին իրեն։

Ղուկաս էֆենտի Կելկիթյան իր հնավուրց ծուխերեն մեկն էր և հաճախ կճաշեր անոր տունը, ուր մտերմորեն կընդունվեր միշտ։

Իմանալով ձյունագնդակի դեպքը, մանավանդ այն վտանգը, որուն մազ մնացեր էր, որ ենթարկվեր Ղուկաս էֆ-ի աչքը, ինքն ալ սաստիկ սրտմտեցավ.

— Այս շունշանորդիներուն ձեռքեն չենք կրնար կոր ազատիլ,— գոչեց,— կուգան բակին մեջ կլցվին, խաղություն չմնաց, որ չընեն... անցած կիրակի ալ տիկին Մ-միկյանի շրջազգեստին վրա կոխեր են... քիչ մնացեր է պատռի... դեռ առաջին անգամն է, որ կհագնի եղեր... քսան ոսկինոց շրջազգեստ, «Մեյ մըն ալ ոտքս չպիտի դնեմ այդ ձեր ժամը», ըսավ, իրավունք ունի, ի՞նչ ըսեմ։

— Էֆենտիմ,— մեջ մտավ թաղական մը,— անկիրթ ազգ ենք վեսելամ, մեծի հարգանք ըսված բանը չունինք... Եվրոպայի մեջ ասանկ չէ, ազնվականները իրենց հատուկ եկեղեցին ունին՝ հոն կերթան, վարնոց մարդիկն ալ իրենց եկեղեցին... հոս չամաշրճի կնիկը, օրինակի համար, կուգա Ղուկաս էֆենտիի տիկնոջ քովը կկայնի... ճեմեն-ճեմեն պիտի ըսեմ, որ «ողջույն» ալ կուտա կառնե հետը...

— Շատ իրավունք ունիս.— հաստատեց Ղուկաս էֆենտի,— ճիշտ ատոր համար ժամ երթալու կաշվիմ. որչափ վարնոց մարդիկ կան՝ քովս կշարվին... ինծի մնա նե՝ տեղերը բաժնելու է, էֆենտիմ, ուրիշ ճար չի կա. ծանոթ պատվավոր մարդոց համար զատ տեղ մը որոշելու է, մյուսներուն համար ալ զատ տեղ մը... պետք ըլլա նե՝ ասոր համար բացեն բան մըն ալ կվճարենք... շիտակը այսօրվան եղածեն արյունս գլուխս զարկավ, աղբար, մազ մնաց ձյունը աչքիս կուգար կոր... կտեսնաք սա բոզին զավակները։

Ավագերեցը զգաց, որ այս խոսքերուն և դիտողություններուն գործնական գոհացում մը տալու էր. ուստի խոսքը բանկալը կեցող երիտասարդ պաշտոնյայի մը ուղղելով։

— Սա ժամկոչ օլաճախը հոս ղրկե,— պոռաց։

Քիչ մը ետքը ծերուկ ժամկոչը ներկայացավ, վեհերոտ կերպարանքով մը։ Կնախզգար, որ փոթորիկը բոլորովին չէր անցած տակավին և կվախնար, որ ի վերջո իր գլուխը պիտի պայթեր ան։

— Ինծի նայե,— պոռաց Տ. Միքիաս քահանա,— ասկե ետքը չըլլա որ դպրոցի տղաքներուն թող տաս ժամը մտնելու, տիրացուներեն զատ մարդ ներս չառնես։ Անոնք ալ գործերնին լմնցնելուն պես թող տեֆ ըլլան երթան, եթե մեյ մըն ալ բակը տղա տեսնեմ՝ նայե ինչ կընեմ։

— Շատ աղեկ, գլխուս վրա, տեր հայր,— ըսավ ժամկոչը և խոնարհություն մը ընելով, դուրս սպրդեցավ, այսքան ածան կերպով օձիքը ազատելեն ուրախ։

Խորհրդարանին մեջ խոսակցությունը կրկին շարունակվեցավ այս անգամ, այլ լոկ ակադեմիական հանդարտությամբ մը։

Այն թաղականը, որ Եվրոպայի եկեղեցիները իբրև օրինակ հիշած էր, իր դիտողությունները առաջ տարավ, ըսավ թե շատ կարելի էր Ս. Երրորդության եկեղեցին միմիայն բարձր դասի ընտանիքներու հատկացունել, նստարաններուն վրա որոշ գիներ դնելով։

— Եվրոպայի մեջ ասանկ կընեն,— պնդեց նորեն,— գացեք Փարիզ, Մատլեն եկեղեցին և պիտի տեսնեք, որ բոլոր ազնվականները իրենց որոշյալ տեղերը ունին, ուր իրենց տեղը ուրիշ մարդ չկրնար նստիլ, իսկ հասարակ մարդիկ դուրսը՝ գավիթը կկենան։

Այս իրենց հատուկ մասնավոր եկեղեցի մը ունենալու գաղափարը շատ հաճո թվեցավ Ղուկաս էֆենտիի, որ անմիջապես ավելցուց.

— Եթե ասանկ կարգադրություն մը ընեք, հավատացեք, ես գրպանես տարին տասը ոսկի կուտամ, միայն թե այն պայմանով, որ դռանը առջև մեկը նստի և ածեմ չածեմ մարդոց արգիլե ներս մտնալը։

Ավագերեցը ինքն ալ համամիտ գտնվեցավ այս կարգադրության։ Ինքն ալ աղնվական ըլլալու հավակնություններ ուներ. Կ. Պոլսո մոտակա փոքրիկ գյուղի մը հինավուրց մեկ ընտանիքի

պատկանելով և մանավանդ տարիներե ի վեր ջոջ աղաներու տանտերեցը ըլլալով։

Կեսօրը անցած էր արդեն և խոսակցությունը ավարտած։ Ղուկաս էֆենտի ոտքի ելավ, հրաժեշտ առավ և ուղղվեցավ դեպի դուռը։

Բակը, եկեղեցիին պաշտոնեությունը շարված էր ակնածանքով, վերջին գետնաքարշ ցույցով մը էֆենտիին պատմությունը մոռցնել տալու համար։

Էֆենտին բարի և անհիշաչար եղավ գլխու թեթև շարժումով մը և բանկալը դրված պնակին մեջ մեճիտիե մը նետելով դուրս ելավ։

— Ինչ որ է, սիրտը առինք,— մտածեց ժամկոչը, սրտի անճառ թեթևացումով մը։

Նույն միջոցին տղա մը, որ ձյունագնդակի դժբախտ պատահարեն ի վեր ծակամուտ եղած էր, հանկարծ երևցավ բակին մեջ և շուտաքայլ ուղղվեցավ դեպի դուռը։

— Շունչանորդի բիճ,— գոչեց ժամկոչը, ետևեն վազելով և կոնակին բռունցքի ուժգին հարված մը իջեցնելով, մինչ ավագերեցը՝

— Բռնեցեք սա լակոտը,— կաղաղակեր՝ չարաշուք անգղի մը պես իր թևերը շարժելով։

Բայց տղան արդեն ինքզինք դուրս նետած ու անհայտ եղած էր ամբոխին մեջ։

ԳԼՈՒԽ Բ

Ղուկաս էֆենտիի բնակարանը շատ հեռու չէր եկեղեցիեն, ուստի ոտքով ուղղվեցավ դեպի Մեծ փողոց և գրեթե տասը վայրկյան ետքը հասավ իր տեղը։

Ղուկաս էֆենտի մտավ մեծ սրահ մը, արևելյան գորգերով ծածկված, պերճ ու պոռոտ կարասիներով լեցուն, ահագին ագեռ դաշնակ մը լեցուցած էր մուտքին ձախ անկյունը. մինչ աջ անկյունը դրված էր խոշոր վառարան մը, որուն կրակը կշողշողար։ Բազմոցները, թիկնաթոռներն ու աթոռները իրենց սնդուսե, մետաքսե և թավիշե արդուզարդը կպարզեին այն օրվան համար, մերկացած ըլլալով իրենց սովորական ճերմակ կերպասե ծածկոցներեն։ Պատերը ծածկված էին մութ-կարմիր գույնե թուղթով մը։ Երկու յուղաներկ պատկերներ, հաստ, ոսկեզօծ շրջանակ-

ներու մեջ առնված, սրահին ամենեն աչքառու զարդերը կկազմեին։ Մին կներկայացներ Ղուկաս էֆ. Կելկիթյանը,— խնկարկվելու սպասող պատկառազդու պուտտայի մը անշարժ վեհափառությամբ մը, մյուսը՝ տիկին Կելկիթյանն էր, գիրուկ, կարմրերես հայուկին մը, պաշտոնական ժպիտ մը դեմքին վրա, ձեռքը հողմահար մը բռնած, մինչ մատներուն, ականջներուն, դաստակներուն, վզին վրա ու մազերուն մեջ կերևային մատնիներ, օղեր, ապարանջաններ, գայտեր, գնդասեղներ, ադամանդե, սուտակե, զմրուխտե և հակինթե։ Գոհարավաճառի ցուցափեղկ մը վերջապես։ Այդ երկու պատկերները, դեմ դիմաց առտրվնե մինչև իրիկուն, իրարու վրա հիանալու, իրարմով կշտանալու երևույթ մը ունեին։

Երբ Ղուկաս էֆենտի ներս մտավ, երիտասարդ կին մը, հազիվ երեսունհինգ տարեկան, թուխ դեմքով ու վառվռուն աչքերով, սրահին վարագույրները շտկրտելու վրա էր։ Գիրուկ, մարմնեղ կին մըն էր, որու կարկառուն կուրծքը թաքուն հրապույրներ ծածկելու երևույթը ուներ։

— Ո՞ւր են,— հարցուց Ղուկաս էֆենտի, խոսքը կնոջ ուղղելով, որ այդ անորոշ հարցումին իմաստը ըմբռնելով պատասխանեց.

— Վերը կհագվին կոր։

Ղուկաս էֆենտի մոտեցած էր կրակին ու ձեռքերը վառարանին մարմարին վրա դրած. կտաքնար, ակնարկովը հետևելով կնոջ, որ անընդհատ կերթևեկեր սենյակին մեջ, լուցկիի ամաններու, մոխրամանները և աթոռները կարգի դնելով։

Այս կինը Ղուկաս էֆենտիի քենին էր, որ քանի մը օրե ի վեր հյուր եկած էր իրենց՝ փոքրիկ աղջկան հետ։ Տիկին Երանիկ Ամիսյան իր քրոջ բախտը չէր ունեցած և չէր կրցած ամուսնանալ Ղուկաս էֆենտիի պես հարուստ ու ճարպիկ վաճառականի մը հետ, թեև իր քրոջմեն ավելի երիտասարդ ու գեղեցիկ էր Էրիկը միջնակարգ վաճառական մը, իր ամուսնութենեն ետքը, հետզհետե ձախողանքներու հանդիպեր և վերջապես սնանկացեր էր, հետո պզտիկ դրամագլխով մը և Ղուկաս էֆենտիի հովանավորության տակ կրկին գործի ձեռնարկեր էր և շատ համեստ կյանք մը կվարեր Կետիկ փաշա քաշված։

Կինը հաճախ կուգար իր քրոջը տունը հյուր ըլլալու, գոնե քանի մը օր անոր պերճանքին մեջ մոռանալու համար իր գետնաքարշ կյանքը, բայց Էրիկը կնախընտրեր իր տունը մնալ, չուզելով ներ-

կայությամբը իր և Ղուկաս էֆենտիի միջև անհաճո բաղդատության եզր մը ընծայել կնոջ։ Եվ իր այս մեկուսացումը հաճելի էր ամենուն, որովհետև այդ շաջողած ազգականը տեսակ մը կենդանի նախատինք համարված էր ընտանիքին մեջ։

— Ո՞ւր տեղեն ալ դեմդ ելավ այդ ուղուրսուզը,— կըսեր Ղուկաս էֆենտի ամեն անգամ, որ քենեկալին խոսքը կբացվեր։

Երանիկ կշարունակեր սրահին մեջ իր երթևեկը, մինչ Ղուկաս էֆենտի վառարանին քովեն անոր ուղղած կպահեր իր ակնարկը, որ հետզհետե հայրատ, վավաշոտ կդառնար. իր խոշոր, լայն շրթունքները անորոշապես կսարսռային, քունքին երակները կկոտտային։

— Ասոր աչքիս բեմ աղվոր կերևաս կոր,— ըսավ հանկարծ, դեպի կնոջ կողմը քայլ մը առնելով։

— Ամա՛ն, նորեն մի սկսիր, ատենը չէ,— ըսավ մյուսը, թեթև հանդիմանական շեշտով մը։

Բայց արդեն Ղուկաս էֆենտի մոտեցած էր իրեն. լայն թևերով սեղմած էր զայն կուրծքին վրա, առանց ուշադրություն ընելու անոր ընդդիմության և գրկախառնումեն խուսափելու ճիգերուն, թաց-թաց ու կատաղորեն կհամբուրեր շրթունքները։

— Ոտքի ձայն կա, հիմա քույրս վրա կհասնի,— մրմնջեց Երանիկ, վերջապես ազատելով ինքզինքը անոր թևերուն մեջեն։

Իրավցնե դուրսը ոտքի ձայն մը կլսվեր։ Երանիկ իսկույն վազեց վառարանին քով, դռնակը բացավ և վառող փայտերը սկսավ ունելիով շտկել, շփոթությունը ծածկելու և ինքզինքին գործի վրա երևույթ մը տալու համար։

Ճիշտ ատենն էր։

Դուռը հանկարծ բացվեցավ և տիկին Թագուհի Կելկիթյան ներս մտավ։

Քառասուն տարեկանի մոտ մարմնեղ ու պարարտ մսերով կին մըն էր, հետույքն ու որովայնը դուրս կարկառուն, խոշոր սև աչքերով ու կարմիր այտերով։

— Վա՛յ, եկեր ես եղեր,— ըսավ, խոսքը Ղուկաս էֆենտիին ուղղելով։

— Կես ժամ է հոս եմ, ձեր վար իջնելուն կըսպասեմ կոր՝ կերակուրի նստելու համար... անոթութենե կմարիմ կոր,— պատասխանեց Էրիկը դժգոհ, անհամբեր շեշտով մը։

— Էյ, վար իջնանք անանկ է նե՝ աղջիկներն ալ հիմա կուգան։

Եվ երեքը մեկ ուղղվեցան սեղանատուն։

Նույն օրը, ինչպես ըսինք, տանը մեջ իրարանցում կտիրեր։

Ղուկաս էֆենտիի անդրանիկ աղջիկը, օրիորդ Ռոզիկ, աղջիկտեսի պիտի ելլար կեսօրեն ետքը, խորհրդավոր աղջիկտես մը, որ մասին իրենց ծանոթներեն ոչ ոք բան մը գիտեր։ Մանչը Փարիզեն էր, հոն հաստատված հարուստ ակնավաճառ մը, որ իր մորը հետ եկած էր Պոլիս, միմիայն ամուսնանալու նպատակով։ Աղեկ պատառ մըն էր, զոր պետք չէր ձեռքե փախցնել և ասոր համար ամեն զգուշություն կընեին, որպեսզի ձայնը դուրս չելլա և աս ու ան խոսք-չխառնեն ու գործը չավրեն։

Տղան հազիվ շաբաթե մը ի վեր հասած էր Պոլիս և մորը հետ իջած էր Բերա՝ Պրիսթոլ պանդոկը և տակավին ընտանեկան հարաբերություններ չէր հաստատած. իր գալուստը թերթերը միայն ծանուցած էին, գրելով, թե՝ «Փարիզաբնակ ծանոթ ակնավաճառ ազնվաշուք Լևոն էֆ. Կոկիկյան իր ազնվափայլ մորը հետ մայրաքաղաքս եկած էր քիչ մը ժամանակի համար», հետո ավելցուցած էին, որ «Կոկիկյան էֆենտի ձեռներեց և գործունյա երիտասարդ մըն էր, որ քիչ ժամանակի մեջ հաջողած էր իրեն փայլուն դիրք մը շինել Փարիզի հրապարակին վրա»։

Բարեկամ մը Փարիզեն նամակով հանձնարարած էր ակնավաճառը Ղուկաս էֆենտիի, հայտնելով, թե երիտասարդը ամուսնանալու դիտավորությամբ Պոլիս կուգար։ Ղուկաս էֆենտի փութացած էր Սիրքեճիի կայարանը՝ դիմավորելու համար Լևոն էֆենտիին, որուն մեջ իսկույն ապագա փեսացու մը տեսած էր և զայն առաջնորդած էր պանդոկը։

Լևոնի մայրը շուտով հայտնած էր Ղուկաս էֆենտիի, թե ինչ նպատակով եկած էին Պոլիս և խնդրած էր անկե, որ իր աջակցությունը չխնայե իրենց, որովհետև իրենք երկար տարիներե ի վեր Փարիզ հաստատված ըլլալով՝ հարաբերություն չունեին պոլսական բարձր դասու ընտանիքներուն հետ։

Ճշմարտությունն այն էր, որ Լևոն Կոկիկյան Ենիգաբուցի անշան ոսկերիչի մը զավակն էր, որ իր հոր մահվենեն ետքը, փոքրիկ դրամագլուխով մը Փարիզ գացած ու նախ ակնագործի մը քով իբրև աշկերտ օրականով աշխատելե ետքը, գոհարեղենի միջնորդ՝ և ի վերջո վաճառական եղած էր. իր հայ շուկացիի աշքաբացությանշնորհիվ կրցած էր բավական մեծկակ հարստություն մը դիզել և հիմա ինքն ալ իր կարգին ջոջ հարուստ մը ըլլալով, հետամուտ

եղած էր Պոլսո ծանոթ ընտանիքի մը հետ խնամիանալու, բոլորովին մոռցնել տալու համար իր գռեհիկ ծագումը։

Ղուկաս էֆենտի շուտով հասկցավ այդ ամենը և իր կնոջ հետ կարճ խորհրդակցություն մը ետքը, երբ Լևոնի մայրը կրկին խոսք բացավ իր տղուն աղջիկ մը գտնելու մասին, պարզապես պատասխանեց.

— Ուրեմն կուզես, որ ձեզի խլավուզությո՞ւն մը ընեմ։

— Ինչո՞ւ չէ, խեր մը ըրած կըլլաս,— ըսավ մայրը խնդալով։

— Էյ, եթե հաջողցնեմ, ինծի ի՞նչ կա։

— Ճանըմ, դուն գործը ըրե տե, մենք ալ ամոթով չենք մնար քովդ։

— Անանկ է նե՝ եկուր իմ աղջիկս տամ Լևոն էֆենտիին...

Այս հանկարծական առաջարկը մեկեն ի մեկ շփոթեցուց Լևոնի մայրը, որ չէր գիտեր, թե Ղուկաս էֆենտի հարսնցու աղջիկ ուներ, և սակայն առաջարկությունը անընդունելի բան մը չէր, և փոքրիկ բացատրութենե մը ետքը, որոշվեցավ, որ այդ կիրակի օր մայր ու զավակ աղջիկտեսի գան։

Ղուկաս էֆենտիի աղջիկը՝ Ռոզիկ՝ տասնութը տարեկան, եթե ոչ շատ գեղեցիկ՝ սիրուն և մտացի աղջիկ մըն էր, Հոմ Սքուլեն շրջանավարտ, ինչ որ հայ օրիորդի մը համար զարգացման բարձրագույն աստիճանը ըսել է։ Ամերիկյան վարժարանին մեջ իր առած կրթությունը ազատ ու համարձակ շարժուձև մը տված էին իրեն, որով իր սիրունությունը ալ ավելի հրապուրիչ կդառնար։ Երբ իմացավ ծնողքին իր մասին պատրաստած ամուսնական ծրագիրը, ոևէ ընդդիմություն կամ դիտողություն չըրավ, մանավանդ որ Փարիզ բնակելու հեռապատկերը ամեն կերպով զինքը կհմայեր։ Ուստի այդ կիրակի օրը դեմքին վրա ուրախության ճառագայթումով մը իջավ սեղանատուն, իր կրտսեր քրոջ՝ Նոյեմիի հետ, որ տակավին հազիվ տասնըհինգ տարեկան՝ թուխ, աղվոր աղջիկ մըն էր, չարաճճի աչքերով։

Սեղանին վրա խոսակցությունն աննշան նյութերու շուրջը անցավ. որովհետև միտքերը որքան որ միևնույն մտածումով տոգորված էին, այր ու կին չէին ուզեր իրենց ծառաներուն դիմաց աղջիկտեսի մասին ոևէ ակնարկություն ընել։

Ղուկաս էֆենտի չմոռցավ հիշել օրվան մեծ դեպքը, եկեղեցիին բակը տղոց ձյունագնդակ խաղալը։

— Շունչանորդիներ, մազ մնաց ձյունը աչքիս կուգար կոր...

Իրիկվան դեմ Լևոն Կոկիկյան և մայրը եկան։

Տեսակցությունը, երկու ապագա խնամիներուն միջև, շատ սիրալիր եղավ։ Ղուկաս էֆենտի երկարորեն խոսեցավ ամուսնական կյանքի առավելություններուն վրա։

Մարդս, ամուրի վիճակին մեջ, կիսկատար էակ մըն էր, ամեն տեսակ մոլորումներու ենթակա։ Բուն բարոյականությունը, բուն պատիվը ընտանեկան կյանքի մեջ միայն գոյություն ունեին։ Եվ ասոր համար ինք, Ղուկաս էֆենտին, կուզեր, որ իր զավակները պզտիկ հասակեն ամուսնացնե, որպեսզի պատվավոր ընտանիքներ կազմեն և ազգին պատիվը բարձր պահեն։

Լևոն իրավունք տվավ Ղուկաս էֆենտիի տեսությանը, ըսավ թե ինք թեև Փարիզ ապրած ու հոն հաստատված, սակայն ուզած էր Պոլիս գալ և ազգակիցի մը հետ ամուսնանալ, որովհետև այդ կերպով կրնար ապահովել ընտանեկան սրբությունը, ընտանեկան պատիվը, ընտանեկան բարոյականը։

Օրիորդ Ռոզիկ, ինքն ալ, իբրև ամերիկյան կրթություն առած համարձակախոս աղջիկ, խոսքի մասնակցեցավ։

— Ես երիտասարդի մը համար իբրև մեծագույն արժանիք խելքն ու բարոյականը կփնտրեմ,— ըսավ,— իսկ մնացածը կարևորություն չունի։

— Հարստության կարևորություն չե՞ք տար, օրիորդ,— հարցուց Լևոն ժպտելով։

— Ո՛չ,—պատասխանեց աղջիկը վճռաբար,— պատիվ և բարոյական մեծագույն հարստություններն են։

— Կենցե՛ս, աղջիկս,— գոչեց Ղուկաս էֆենտի խանդավառված։

Տիկին Թագուհին ալ հաղթական և հպարտ ակնարկ մը ուղղեց Լևոնին ետը, կարծես ըսել ուզելով։

— Կտեսնե՞ք ինչ տեսակ ապրանք ցույց կուտանք ձեզի։

Վերջապես հյուրերը մեկնեցան սրտազեղ մեծարանքներ ընդունելե վերջ։ Լևոն հաջորդ օրվան համար Ղուկաս էֆենտին ընտանյոք պանդոկ հրավիրեց։

— Կարծես այս գործը պիտի հաջողի,— ըսավ Ղուկաս էֆենտի, երբ իր կնոջ հետ առանձին մնաց։

— Ինձի ալ անանկ կուգա, մանչը աչքը Ռոզիկիս վրայեն չէր շատեր կոր։

— Միայն թե քիչ մը աղջկանդ խրատ տուր, որ սանկ ավելի

կիրկիրություն ցույց տա մանչուն, քովը նստի, հետը շախալաշմիշ ըլլա... Փարիզ մեծցող մարդիկը անանկ բաներ կփնտռեն,— դիտել տվավ Ղուկաս էֆենտի։

— Էյ, տանա կեցիր նայինք, առաջին անգամեն ճիտը ցատկելու չէր, ամեն բանին սրան կա։

— Նայելու է, որ քիթեն բռնե, իմ խելքս ասոր կհասնի... քսան-երեսուն հազար ոսկիի տեր մարդ է, խաբար ունի՞ս...

Քսան-երեսուն հազար ոսկիի հայտնությունը տարօրինակ կերպով շլացուց տիկին Թագուհին, որ պահ մը սահմռկած մնաց, կարծես թե այդ ոսկիներուն տոպրակները, մեկիկ-մեկիկ իր գլխուն իջնեին։

— Իրա՞վ այդչափ հարուստ է եղեր,— գոչեց խանդավառությամբ։

— Հապա, աղեկ տեղեն իմացա, անոր համար ձեռքե փախցնելու չի գար... քիչ մը խրատ տուր սա աղջիկին, ինքզինքը սիրցնելու ճարը նայի, միայն խոսելով չըլլար, թող հետը քիչ մը ճիվելեշմիշ ընե... վաղը իրենց երթանք նե՝ անանկ մը ընենք քի՝ մանչ ու աղջիկ միանակ մնան. Ռոզիկին ալ ըսե, որ մարդը չորս կողմը սխմրտելու ելլա նե՝ խոշոլություն՝ չընե... քա, երեսուն հազար ոսկի է աս... Հագածին ալ, արդուզարդին ալ ուշադրություն ընե, հեմ վրայի հագածին. հեմ ալ տակիններուն... պակաս բան մը ունի նե՝ ըսե առնենք։

— Մեղա, պակաս բան ինչո՞ւ պիտի ունենա, ամեն բան ունի, դուն հոգ մի ըներ, ես պետք եղածին պես կհագվեցնեմ, իրեն ալ կխոսիմ... արդեն ինքն ալ հոգի կուտա կոր, որ այս գործը ըլլա։

— Հելպեթ հոգի կուտա, ես ալ աղջիկ ըլլայի նե, հոգի կուտայի... երեսուն հազար ոսկի, Փարիզի պես տեղ, շնորհքով երիտասարդ, տանա ի՞նչ կուզե. բայց խնդիրը աս է, ինքզինքը սիրեցնելու է, եթե ոչ ձեռքերնուս կփախցնենք հա...

Այս հրահանգները տալե ետքը, Ղուկաս էֆենտի դուրս ելավ տունեն և դեպի Սբլանտիտ քաֆե ուղղվեցավ, ուր ընդհանրապես իրիկունները կերթար քանի մը գարեջուր խմելու և բարեկամներու հետ տեսակցելու համար։

— Արդյոք դրամօժիտի մասին դժվարություն պիտի հանե՞ այս տղան,— կմտածեր ինքնիրենը, փողոցը գացած միջոցին։ Ինք անշուշտ տրամադիր էր երկու հազար ոսկիի չափ դրամ տալու, բայց արդյոք բավական պիտի ըլլա՞ր այդ գումարը... ա՜խ, եթե

աղջիկս քիչ մ'ավելի գեղեցիկ ըլլար, եթե գիտնար պետք եղածին պես պոչ խաղցնել. եթե հաջողեր մանչուն խելքը գլխեն առնել, այն ատեն գուցե նույնիսկ առանց դրամօժիտի կրնայի աղջիկս անոր գլուխը փաթթել, և ի՞նչ հաղթություն, ի՞նչ հաջողություն պիտի ըլլար ասիկա իրեն համար։ Բայց տեսակցությունը իրեն ապագա խնամիներուն հետ, շատ սիրալիր եղած էր։ Լևոնի անմիջական հրավերը, հետևյալ օր փոխադարձ այցելության երթալու, բավական զորավոր պատճառներ էին գործի հաջողության մասին հույսեր ներշնչելու և Ղուկաս էֆենտի այդ հույսերով օրորված՝ զվարթ տրամադրությամբ մը մտավ Սբլանտիտի, ուր արդեն բազմությունը խռնված էր, դուրսը տիրող ցրտաշունչ օդեն մղված։

— Հրամմեցեք, Ղուկաս էֆենտի,— ըսավ ձայն մը, երբ մեր վաճառականը աչքը չորսդին ժուռ կածեր, նստելու հարմար տեղ մը գտնելու համար։

Աբգար էֆենտի Սմսարյանն էր, իրեն պես ազնվաշուք ջոջ վաճառական մը, որ իր աղջկան հետ էր սեղանի մը քով։

Ղուկաս էֆենտի մոտեցավ և տեղավորվեցավ իր բարեկամին մոտ։

Բարևաուքի սովորական բանաձևերեն ետքը, Աբգար էֆենտի հանկարծ հարցուց.

— Ո՞վ է սա Փարիզեն եկող հարուստ ակնավաճառ երիտասարդը, Լևոն Մոմիկյան է, ի՞նչ է...

— Կոկիկյան, հայրիկ,— ուղղեց աղջիկը։

— Հա, Կոկիկյան... Կճանչնա՞ս կոր։

Ղուկաս էֆենտի թեթև, աննշմարելի սարսուռ մը ունեցավ։ Այդ անունին հանկարծ մեջտեղ նետվիլը զինքը շփոթեց։ Աբգար էֆենտիի աղջիկը, Հերմինե, որ հոն նստած էր, հրապուրիչ սև աչքերով, վարդագույն այտերով և հրաշալի եբենոսյա մազերով քսաներկուամյա գեղուհի մըն էր, հաջող դաշնակահար, որ իր կրթությունը առած էր Բանկալթիի Սեռոերուն վարժարանը։ Թերայի մեջ իր գեղեցկությունը համբավված էր և շատ շնորհքով երիտասարդներ իր ձեռքը խնդրած էին, սակայն աղջիկը ոչ մեկուն չէր հավնած։ Բացարձակապես եվրոպական կրթություն ունեցող երիտասարդ մը կուզեր ինք, որուն վարքն ու բարքը համաձայներ իր ստացած կրթության, և հայրը, որ կպաշտեր իր աղջիկը, միշտ տեղի տված էր անոր կամքին առջև, թեև շատ կփափաքեր զայն ամուսնացնել։

Առաջին վայրկյանեն խսկ, երբ հարցում ուղղվեցավ իրեն, Ղուկաս էֆենտի, Հերմինեի մեջ Ռոզիկի մրցակից մը տեսավ և մանավանդ զորեղ մրցակից մը։ Հասկցավ, որ իրեն բերնեն ելելիք խոսքերը շատ զգուշավոր, շատ շրջահայաց պետք էր ըլլային, ուստի նախ՝ ուղղակի հարցին չպատասխանեց։

— Ուրկե՞ լսեցիք Կոկիկյանի գալը,— ըսավ։

— Լրագիրը գրեր էր, կարդացինք,— պատասխանեց Աբգար էֆենտի, անտարբեր ձևով մը,— կճանչնա՞ս զինքը։

— Այո... այսինքն առաջուց չէի ճանչնար, Փարիզեն բարեկամ մը հանձնարարած էր, գացի կայարանեն առի, պանդոկ տարի... գործի համար եկեր է. շուտով պիտի երթա։

— Տիկին Զատիկյանը այդ մյուսյու Լևոնի մայրը կճանչնա եղեր, այցելության գացեր է,— մեջ մտավ Հերմինը։

— Այո,— հաստատեց Աբգար էֆենտի,— և անոր ըսեր է, որ տղան կարգելու համար Պոլիս եկեր են։

Հարվածը ավելի ուժգին կերպով իջավ այս անգամ։ Ղուկաս էֆենտի պարզապես դող ելած էր, բայց ջանաց իր պաղարյունությունը չկորսնցնել։

— Այդ պառավները բոլոր այդպես են, միշտ տղաին կարգելու խորհուրդներ ունին, ես մանչուն հետ քանի մը անգամ տեսնըվեցա, ատանկ բան մը չըսավ...

Հետո պահ մը լռելե ետքը՝ ավելցուց։

— Արդեն ո՞ր շնորհքով ընտանիքը կհանե անմիջապես իր աղջիկը կուտա անծանոթ մեկու մը, նայինք իրավցնե հարո՞ւստ է, ի՞նչ տեսակ մարդ է, բարոյական ունի՞... այդչափ տարի Փարիզ ապրեր է, ով գիտե ինչպես կյանք անցուցեր է... կարելի է հիվանդություն մը ունի։

— Շիտակ է,— դիտել տվավ Աբգար էֆենտի։

Ղուկաս էֆենտի, իր խոսակցին հաստատումեն քաջալերված՝ երկար տեսություն մը ըրավ օտար երկրներե եկող անճանաչ երիտասարդներու աղջիկ տալու վտանգներու մասին։ Ըսավ թե անոնց մեջ հաճախ բախտախնդիր խաբեբաներ կգտնվին, որ իբրև հարուստ ներկայանալով կուզեն վարպետությամբ հարուստ որս մը ձեռք ձգել։

— Ես շիտակը,— եզրակացուց,— մինչև որ երիտասարդի մը ընտանիքը, պատիվը, բարոյականը տեղն ու տեղոք չճանչնամ, աղջիկ չեմ տար իրեն, կուզե նե հարյուր հազար ոսկի տանեն... փա-

բան կարևորություն չունի, մարդս պատիվ, բարոյական ունենալու է։

— Շատ ճշմարիտ կխոսիս,— կրկնեց Աբգար էֆենտի։

Խոսակցությունը քիչ մըն ալ տևեց, հետո Ղուկաս էֆենտի «մնաք բարով» ըսավ և մեկնեցավ, խորհելով թե վտանգին առաջը հաջողած էր առնելու։

Երբ հայր ու աղջիկ առանձին մնացին՝ Աբգար էֆենտի ըսավ Հերմինեի.

— Կտեսնա՞ս կեղծավորը, երկու ժամ առաջ Ռոզիկը աղջիկտեսի կհանե Լևոն Կոկիկյանին ու անկե ետքն ալ կուգա հոս մանչը ավրելու, որպեսզի ձեռքեն չառնենք... ատ վարպետությունը ինծի չի կըրնար կլլեցնել, ես իրմե առաջ տեղեկություններ առի այդ Լևոնին վրա, Էլմասի պես տղա է եղեր, բոլոր ճանչցողները գովեստը կընեն կոր, տասը տարվան մեջ 30—40 հազար ոսկի շիներ է...

— Քառասուն հազար ոսկի,— գոչեց Հերմինե իր աղվոր աչքերը խոշոր-խոշոր բացած։

— Հապա՛, ամիսը 8—10 հազար ոսկի շիներ է... բարոյական, պատիվ կփնտռե եղեր,— շարունակեց Աբգար էֆենտին,— ինք շատ ունի, չբավեր կոր, ուրիշներուն վրա ալ կփնտռե կոր, ըսելիք շատ բաներ կան, բայց ինչ որ է...

Նոր ծանոթի մը գալուստը վերջ դրավ հայր ու աղջկան խոսակցության։

ԳԼՈՒԽ Գ

Հետևյալ օրը, երկուշաբթի, Ղուկաս էֆենտի գործի չգնաց, վճռական այցելության օրն էր և թեև կեսօրեն ետքը պիտի երթային Պրիսթոլ պանդոկը, բայց ինքը ուզեց, որ առտվընե տունը գտնվի, ամեն մանրամասնություններուն անձամբ հսկելու համար։

Աբգար էֆենտիի հետ տեսակցությունեն ի վեր շատ ջղագրգիռ վիճակ մը ուներ։ Գիշերը, իրենց խոսակցությունը մանրամասնորեն պատմած էր կնոջ, որ ինքն ալ դող եկած էր այդ անակնկալ մըրցակիցեն։

Հերմինե ապահովապես շատ ավելի գեղեցիկ էր, քան թե Լրենց աղջիկը, թեև անկե մեկ քանի տարու մեծ։ Բաց ատի, կրթությունը Սեռուերու վարժարանը առած ըլլալով ֆրանսերեն շատ լավ կխոսեր, ավելի փարիզյան հով մը ուներ, մանավանդ որ իր ծնողքին հետ Եվրոպա ճամփորդած և մեկ քանի ամիս Փարիզ անցուցած էր։ Իսկ իրենց Ռոզիկը ավելի անգլիերենի մեջ քաջ էր։ Այս մանրամասնությունները ծանրակշիռ համեմատություններ կառնեին իրենց մտքին մեջ։ Ու հետո, Աբգար Սմսարյան ավելի հարուստ էր, աղջիկ մը և մանչ մը միայն ունեին և կրնար, ի պահանջել հարկին, 7—8 հազար ոսկի դրամօժիտ տալ աղջկանը։

Խեղճ Թագուհի հանըմին քունը չտարավ մինչև առտու։

Արդյոք անոնք ալ իրենց աղջիկը Լևոնին տալու կաշխատեի՞ն, կմտածեր, արդյոք արդեն աղջիկնին ցույց տվա՞ծ են... բայց այն ատեն ինչո՞ւ համար այնքան սիրալիր վերաբերում մը ունեցած էին Լևոն և իր մայրը՝ իրենց հետ։

— Վաղը ամեն բան պելլի կըլլա,— վճռեց վերջապես։

Ղուկաս էֆենտին ալ իր կնոջ չափ մտատանջության մատնված էր, բայց իբրև էրիկմարդ ավելի պաղարյուն ու կորովի, փոխանակ անձկության մատնվելու, կովի կպատրաստվեր, հաղթահարելու համար թշնամին, եթե հարձակում գործեր։

— Եթե իմանամ որ այս գործին մեջ քիթերնին խոթել կուզեն կոր, իրավ որ բոլոր փիսությունները մեջտեղ կհանեմ,— հայտարարեց Ղուկաս էֆենտի իր կնոջ, երբ առտուն կրկին խոսք բացվեցավ Աբգար էֆենտիի և իր աղջկան մասին։

Բայց այս մարտաշունչ սպառնալիքը կարող չեղավ մեղմել կամ հանդարտեցնել կնոջ մտատանջությունները, որովհետև, տիկին Թագուհի կզդար, որ եթե զիրար աղտոտելով պիտի պայքար մղեին, Սմսարյանի ձեռքն ալ բավական զորավոր զենքեր կար իրենց դեմ գործածելու համար։ Երկու ընտանիքները մտերիմ հարաբերություններ կմշակեին իրարու հետ։ Գրեթե ընտանեբար կտեսնվեին տարիներե ի վեր, հետևաբար զիրար աղեկ կճանչնային... ավելի լավ էր խնդիրը այդ տեղվանքը չիգար, և ասոր լավագույն միջոցն էր անմիջապես նշանտուքը և հարսնիքը ընել լմնցնել, առանց միջոց տալու, որ ուրիշներ մրցակից հանդիսանան։

— Իշալլահ այսօր խոսքը կլմնցնենք, հինգշաբթի նշանտուքը կընենք, քանի մը շաբաթեն ալ հարսնիքը,— եզրակացուց տիկին Թագուհի,— մեյ մը որ նշանտուքը ծանուցվի, ալ ամեն մարդ հույսը կկտրե և մեզի հանգիստ կթողուն։

— Այնպես է, բայց խնդիրը այսօր վաղը ընելուն վրա է,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, և աս ալ աղջկանդ ձեռքն է, թող

քիչ մը աշխատի ինքզինքը սիրցնե, մենակ մեր աշխատելովը չըլլար...

— Այդ մասին դուն հոգ մի ըներ, ես պետք եղած խրատը տվի իրեն,— ըսավ Թագուհի խորհրդավոր կերպով։

Ղուկաս էֆենտի իրենց տալիք այցելության առթիվ, որ վճռական ճակատամարտի մը կարևորությունը ուներ, այնքան ջղագրգիռ վիճակ մը ստացած էր, որ տան մեջ անտանելի կդառնար ամենուն։ Կուզեր արդուզարդի ամենափոքր մանրամասնություններուն հսկել, աղջկանը մազի հարդարումին դիտողություններ ընել։ Նույնիսկ ուզեց, որ երեսը քիչ մը շպարե, առարկելով՝ թե նույն օրը քիչ մը դեմքը տժգույն էր։ Սակայն Ռոզիկ ընդդիմացավ, այդ կեղծ շպարանքը իր արժանապատվությունը կվիրավորեր, չէր ուզեր ընդունել, թե իր գեղեցկությունը կարկտնելու պետք ուներ։

— Կուզեն հավնին, կուզեն չհավնին, մեռնելու չեմ յա,— գոչեց ի վերջո, զայրագնոտ շեշտով մը, երբ հայրը նորանոր հրահանգներ կուտար իրեն։

Եվ սակայն ներքնապես ատանկ չէր խորհեր, ընդհակառակը, բուռն կիրքով մը կբաղձար գործին հաջողության, մանավանդ հիմա, երբ հավանական մրցակից մը կցցվեր իր դեմը։

Մայրը, առտուն, պատմած էր իրեն առջի իրիկվան Ղուկաս էֆենտիի հանդիպումը Աբգար էֆենտիի և Հերմինեի հետ և իրենց միջև փոխանակված խոսակցությունը, և որպեսզի աղջիկը ավելի գրգռե, կրցածին չափ հաճո ըլլալու ակնավաճառ երիտասարդին, վտանգը ավելի մեծցուցած էր, այնպես որ՝ Ռոզիկ՝ հայելիին առջև իր մազերը շիտկած միջոցին, մտովի բաղդատություններ կըներ իր ու Հերմինեի միջև և տեսակ մը դառնությամբ ինքնիրեն կստիպվեր խոստովանելու անոր առավելությունները։ Եվ այս բանը տեսակ մը կատաղությամբ կլնուր զինքը։

Այս վայրկյանիս պարզապես կատեր Հերմինեին՝ որուն հետ մտերմական բարեկամությամբ մը կապված էր սակայն։ Ու կխորհեր օգտվիլ մորը տված խրատներեն, երիտասարդին հանդեպ պըչբանքները կրկնապատկել, իր մարմնական ու մտային ամեն մեկ արժանիքը երևան հանել, անոր աչքը խոթել։

— Հերմինեն թեև շատ աղվոր է, բայց համարձակություն չունի,— կմտածեր,— մանավանդ երբ անծանոթ երիտասարդի մը հետ առաջին անգամ կգտնվի, ես իրմե պզտիկ ըլլալով հանդերձ շատ ավելի համարձակ եմ...

Ու տենդոտ շարժումներով կշարունակեր իր զարդարանքը։

Ղուկաս էֆենտի ալ վերջապես հեռացած էր քովեն և վարի սրահը, վառարանին քով կսպասեր, որ մայր ու աղջիկ իրենց արդուզարդը լմնցունեն։

Հանկարծ սենյակի դուռը բացվեցավ և Տ. Միքիաս քահանան ներս մտավ։

— Վայ, Ղուկաս էֆենտի, այսօր տո՞ւն եք եղեր, գործի չեք գացեր, արդյոք անհանգի՞ստ եք,— հարցուց։

— Ոչ, տիկնոջ հետ այցելության մը պիտի երթանք, անոր համար վար չիջա։

— Ես ալ տիկինը տեսնելու եկա, իրեն կարևոր բան մը հաղորդելու համար,— ըսավ Տ. Միքիաս խորհրդավոր կերպով մը։

— Հիմա ուր է նե՝ վար կիջնա, կհագվի կոր... խե՞ր է ըսելիքդ...

— Աստված ուզե նե խեր կըլլա, արդեն գաղտուկ բան մը չէ, ձեզի ալ կրնամ ըսել։

— Խոսե տեսնենք, տեր հայր,— ըսավ Ղուկաս էֆենտի հետաքրքրված։

— Այս օրերս Փարիզեն մայր մը և տղա մը եկեր են, Լևոն Կոկիկյան է եղեր մարդուն անունը, հարուստ ակնավաճառ երիտասարդ մը, որուն գալուստը Թերթերն ալ ծանուցած էին։

— Էյ,— ըսավ Ղուկաս էֆենտի ականջները խոշոր-խոշոր բացած։

— Բարի գալուստի այցելության գացի իրենց, շատ շնորհքով մարդիկ կերևան կոր, պանդոկին մեջ ալ սենյակ վարձեր են. բավական տեսնվեցանք։

— Գիտեմ, կճանչնամ զինքը,— պատասխանեց Ղուկաս էֆենտի,— տղան գործեր ունի եղեր, քանի մը օր պիտի մնան, մեկնին...

— Ինծի այնպես չըսին,— ըսավ Տ. Միքիաս քահանան,— ընդհակառակը, երիտասարդը ամուսնանալու միտք ունի և ճիշտ ես այդ բանը իմանալուս ուզեցի հոս գալ... արդյոք չե՞նք կրնար մեր Ռոզիկին համար կարգադրություն մը ընել...

Ղուկաս էֆենտի հայտնապես նեղություն կըզգար այս անհարկի միջամտութենեն, բայց և այնպես չուզեց եղած առաջարկությունը կտրուկ կերպով մերժել։

— Աղեկ կըլլա թեև, բայց նախ որոշ տեղեկություններ առնե-

լու է մանչուն մասին, ասկե զատ, նայինք կինս աղջիկը հեռու տեղ հարս տալ կուզե՞... չե՞ս գիտեր, մեր կիները քիչ մը տարօրինակ են... եթե ծառայություն մը ընել կուզես մեզի, առայժմ ուրիշի խոսք մի բանար, լավ մը տեղեկություն առնենք իրենց մասին և եթե լսածնուս պես պատվավոր երիտասարդ մըն է, ինչո՞ւ չէ, կըրնանք աղջիկնիս տալ... միայն թե, կկրկնեմ, առայժմ ուրիշին բան չըսես...

— Ուրիշին ինչո՞ւ պիտի ըսեմ, ամուսնանալու դիտավորություն ունենալը լսածիս պես, առաջին անգամ Ռոզիկս միտքս ընկավ, մեյ մը երթամ Թագուհի հանըմին հետ խոսիմ, ըսի... գիտես թե որչափ կսիրեմ Ռոզիկը։

— Շատ շնորհակալ եմ, տեր հայր, կխորհինք և քանի մը օրեն վերջնական պատասխան մը կուտանք... Ե՞րբ տեսար Լևոն Կոկիկյանը։

— Շաբաթ առտու գացի իրեն։

Տ. Միքիաս պարզապես կստեր, նույն առտուն իսկ գացած էր Պրիսթոլ պանդոկը և նույնիսկ Լևոնի մորմեն տեղեկացած էր թե առջի օր աղջիկտեսի եկած էին Կելկիթյաններեն և թե նույն օրն ալ փոխադարձ այցելության կսպասեին։ Ինք եկած էր պարզապես Ղուկաս էֆենտիին բերանը փնտռելու և տեսնելու համար թե անկեղծորեն ամեն բան պիտի պատմեին իրեն և իր աջակցությունը պիտի խնդրեի՞ն գործը դյուրավ ելուխ հանելու համար։

Հիմա Ղուկաս էֆենտիի խոսքերեն հասկցավ թե առանց իրեն կուզեին աղջիկը նշանել, այսինքն չէին ուզեր նյութական բաժին հանել իրեն ամուսնական գործե մը՝ որուն նմանը հաճախ չէր պատահեր։ Տ. Միքիաս հայր որոշած էր սրտանց աշխատել գործին հաջողության, եթե իր աջակցությունը չմերժեին, բայց այժմ որ իր ծառայության պետք չէին տեսներ, ինքն ալ ինքզինք ազատ կզգար ուզածին պես գործելու։

— Ուրեմն, այսպես,— ըսավ Ղուկաս էֆենտի,— առայժմ խոսք մը չընենք։

— Այո, այո,— պնդեց մյուսը,— քանի մը օր համբերենք։ Հետո, եթե պետք ըլլա, մենք քեզի լուր կուտանք։

Տ. Միքիասը պատրաստվեցավ մեկնելու, բայց նույն միջոցին սպասուհին սուրճ բերավ, ուստի պարտավորվեցավ այցելությունը քիչ մը ևս երկարելու։

— Ես այդ Կոկիկյանի մասին բավական տեղեկություն առի,—

ըսավ քահանան,— անշան մեկու մը զավակն է եղեր, հոր մեռնելեն ետքը պզտիկ հասակին Փարիզ գացեր է մորը հետ և հոն ինքնօգնությամբ հարստացեր ու դիրքի տեր է եղեր... մայրը իրեն օգներ է սակայն։

— Մայրը դրա՞մ ունի եղեր։

— Ոչ, դրամ չէ, բայց Փարիզ բարեկամներ ունի եղեր... այդ բարեկամները տղուն պաշտպան կեցեր, արհեստ սովրեցուցեր, ետքն ալ օգներ են գործի մեջ... մայրը երիտասարդությանը շատ գեղեցիկ կին մըն է եղեր. զինքը մոտեն ճանչցողները այնպես կըսեն կոր։

Տ. Միքիաս լեզվին տակ բաներ մը ուներ ըսելիք, բայց այսչափով գոհացավ, մանավանդ թե Ղուկաս էֆենտի այդ տեղեկություններեն հետաքրքրվելու երևույթ չուներ, ընդհակառակը, խոսքը փոխելու համար, հանկարծ հարցուց.

— Այս կիրակի պատրիարքը հո՞ս պիտի պատարագե եղեր։

— Այո,— պատասխանեց Տ. Միքիաս,— Նորին Սրբազնությունը Թաղական Խորհուրդին հրավերին վրա որոշած է կիրակի օր Ս. Երրորդության եկեղեցին պատարագելու։ Ցերեկվան ճաշին ալ Աբգար էֆենտին տունը հրավիրած է... ինձի հետ։

Սրահի դուռը կրկին բացվեցավ և տիկին Թագուհի ու երկու աղջիկները՝ Ռոզիկ ու Նոյեմի՝ ներս մտան։

— Բարի եք եկեր, հայր սուրբ,— ըսավ տիկինը տաներեցին ձեռքը համբուրելով, մինչ Տ. Միքիաս կըսեր.

— Օրհնյալ ըլլաս, աղջիկս։

Ռոզիկ և Նոյեմի իրենք ալ իրենց կարգին եկան աջահամբույրի և արժանացան «օրհնյալ ըլլաս»-ներու։

— Սա ի՞նչ գեղեցիկ արդուզարդեր ըրեր եք այսօր, թատրո՞ն պիտի երթաք, ո՞ւր պիտի երթաք,— հարցուց Տ. Միքիաս, որ ինչպես ըսինք, արդեն գիտեր ուր երթալիքնին։

— Չէ,— մեջ նետվեցավ Ղուկաս էֆենտի,— Գատը գյուղ պիտի երթանք, շատոնց է խոսք տված էինք Մարկոս էֆենտիենց։

— Ալ Ռոզիկս շենք շնորհք հարսնցու աղջիկ եղեր է,— շարունակեց քահանան, որ հաճույք կզգար Ղուկաս էֆենտիին շփոթության մատնելով,— ե՞րբ պիտի նշանենք զինքը, Թագուհի հանըմ։

— Աստված երբոր կամենա,— պատասխանեց տիկին Թագուհի, մինչև Ղուկաս էֆենտի անհամբեր գոչեց.

— Էյ, խոսքերնիդ կարճ կապեցեք, ժամանակ չունինք, շոգենավը կփախցնենք։

Փողոցը դռան առջև կառքը կսպասեր։ Տ. Միքիաս մնաս բարով ըսելով մեկնեցավ հետիոտն և ուղղվեցավ դեպի Թարլա Պաշի։

— Այսպես հա՞, Տ. Միքիասը դուրս կնետեք գործի մեջեն,—

— Այսպես հա՞, Տ. Միքիասը դուրս կնետեք գործի մեջեն,— կմտածեր քահանան ճամփան գացած ատեն,— բայց ե՞րբ տեսնված է, որ ջոջ ընտանիք մը նշանտուք կատարե առանց իմ միջնորդությանս... քանի մը ոսկի շտալու համար ասանկ խաբեբայություններու դիմել, ծածուկ գործ տեսնել, քիթիս խնդալ... առնելիքդ ըլլա, Ղուկա՛ս էֆենտի։

Քինախնդիր, մեծամիտ, ամբարտավան Տ. Միքիաս քահանա պարզապես նախատված կըզգար ինքզինքը Ղուկաս էֆենտիի բռնած դիրքին պատճառավ և արդեն իսկ մտքին մեջ վրեժխնդրության ծրագիրներ կպատրաստեր, գործը վիժեցնելու, նշանտուքը խանգարելու և հետո զայն իր աջակցությամբ ի գլուխ հանելու միջոցներ խորհելով։ Եվ պետք է ըսել, որ Տ. Միքիաս այս տեսակ մեքենայություններու մեջ շատ ճարպիկ էր։

Բայց թողունք, որ ինքը իր մտքին մեջ սարքելիք խաղերը որոճա և մենք դառնանք կառքին ետևեն, որ սրընթաց կթավալի դեպի Պրիսթոլ պանդոկը։

Հազիվ թե կառքը կեցավ մուտքի դռան առջև, դռնապանը, կողմնակի մորուքով փառավոր ծերունի մը, փութաց կառքին մոտ և դռնակը բանալով հյուրերը ներս առաջնորդեց։

Հոն ուրիշ սևազգեստ սպասավոր մը զիրենք տարավ առաջին հարկը, մեծակակ հյուրասրահ մը, ուր քիչ ետքը Լևոն Կոկիկյան և մայրը եկան իրենց քով։

Տեսակցությունը առաջին վայրկյանին սիրալիր եղավ և շատ ավելի մտերմական, քան առաջի օրվանը։

Այս բանը առաջին վայրկյանեն նշմարեց Ղուկաս էֆենտին և միտքը պաշարող հընհընուքները հետզհետե փարատելով, զվարթորեն սկսավ կատակաբանել։

Ռոզիկ, իր ստացած հրահանգներուն հավատարիմ—հաջողած էր պահ մը, ընդարձակ սրահին մեկ անկյունը, չինական հողմարգելի մը ետև առանձնանալ Լևոնի հետ ու բազմոցի մը վրա, անոր քով նստած պատկերազարդ ֆրանսերեն հանդես մը կթղթատեր, թեև կեղծ՝ բայց խորին հետաքրքրությամբ մը։

Երիտասարդին ու Ռոզիկի գլուխները թերթին վրա հակած՝

իրարու կդիպչեին և Լևոն առաջին անգամ ըլլալով՝ կզգար կուսական մարմնի մը հպումին անճառելի հեշտանքը։ Անշուշտ Փարիզի մեջ կանուխեն հարաբերություն ունեցած էր ամեն տարիքի կիներու հետ, որոնց գեղեցկությունը, վայելչությունն ու մտացիությունը անբաղդատելի կերպով գերազանցված էին, բայց անոնք պարզապես հաճույքի ու տարփանքի ճարտար արվեստավարժներ էին ու չունեին այն թաքուն ու անդիմադրելի հրապույրը, որ կուսությունն կկոչվի։ Իրենց մազերուն հպումը բավական եղեր էր հեշտամոլ սարսուռով մը ցնցելու Լևոնի ամբողջ էությունը և տարօրինակ հուզումով մը համակելու զինքը։

Ինքը, որ իբրև Փարիզի պուլվարներուն վրա մեծցող երիտասարդ մը, հանդուգն՝ գրեթե անպատկառ էր կիներու հետ, հիմակ, այդ առաջին հպումեն իսկ դղրդված՝ տակնուվրա եղած, երկչոտ ու ամոթահար, շվարեր մնացեր էր ու բան մը չէր կրնար գտնել ըսելիք, խոսակցություն մը սկսելու համար, կարտմտեր իր այս վեհերոտությանը համար, զոր ծիծաղելի կգտներ։

Սակայն Ռոզիկ, շատ ավելի նվազ հուզված և բոլորովին ինքզինքին տեր, գոհ ու հաղթական, կռահեց երիտասարդին հոգեկան դրությունը և ուզեց իր համարձակությամբ քաջություն տալ անոր։

Գլուխը վերցուց, պատկերազարդ հանդեսը գոցեց մեկ կողմ դրավ և խոսակցության նյութ մը ստեղծելու համար՝ հարցուց.

— Պոլսին հավնեցա՞ք։

— Շիտակը ոչ,— պատասխանեց Լևոն սրտին խորեն շնորհակալ ըլլալով աղջկան, որ վերջապես անտանելի կացությունեն մը փրկած էր զինքը, խոսելու նյութ մը հայթայթելով։

Հետո շարունակեց.

— Փարիզի մեջ ապրիլ վարժվողի մը համար շատ անտանելի է Պոլիսը... փողոցներուն աղտոտությունը, ելևէջները, հաղորդակցությանց անբավականությունն ու դժվարությունը մարդս կհուսահատեցնեն... վերջապես հանգստավետությունը կպակսի ամեն կողմ և ամեն բանի մեջ։

— Ես շատ կփափաքեի Փարիզը անգամ մը տեսնել,— ըսավ Ռոզիկ ժպտելով,— հայրս խոստացավ, որ գալ ամառ զիս պիտի տանի... անշուշտ հիմա որ բարեկամ եղանք, մեզ պտտեցնելու ձանձրույթը հանձն պիտի առնեք, այնպես չէ՞։

— Գալ տարի... ուշ չէ՞,— պատասխանեց երիտասարդը, որ հետզհետե իր քաջությունը գտած էր,— Փարիզի բուն եղանակը

ձմեռն է և հիմա, կամ, առ առավելն, մեկ երկու ամսեն պետք է երթալ... թատրոններու ամենեն փայլուն միջոցին։

— Այո, բայց հայրիկիս զբաղումները չեն ներեր, որ ձմեռը ճամփորդե։

— Ուրեմն առանց հայրիկին կճամփորդեք...

— Առանձի՞ն, ամերիկուհիներու պես,— ըսավ Ռոզիկ խընդալով։

— Ոչ, բայց ուրիշ մեկու մը հետ...

Եվ այս խոսքերը արտասանած միջոցին Լևոնի ձայնը թեթև մը դողդողաց։ Ռոզիկ ինքն ալ կարմրեցավ, բայց չընկրկեց ու հարցուց.

— Ինչպե՞ս ուրիշի հետ։

— Չկրնա՞ր ըլլալ, որ ամուսնանաք Փարիզ հաստատված մեկու մը հետ և մեկ երկու ամսեն միասին մեկնիք...

Ակնարկությունը ուղղակի, բացահայտ էր։ Ռոզիկ չպատասխանեց այս անգամ և ակնարկը սևեռեց գետնին, այտերը բոլորովին շառագունված։

— Այս ըսածս չկրնա՞ր ըլլալ,— պնդեց Լևոն։

— Կրնա ըլլալ,— պատասխանեց աղջիկը։

Երիտասարդը ավելի մոտեցավ մանկամարդ աղջկան, ձեռքը բռնեց և կամաց մը շրթունքին տարավ։ Ռոզիկ, հուզված՝ շփոթված, գլուխը կոթնցուց Լևոնի կուրծքին՝ անպատմելի երանությամբ մը։ Ճակատամարտը շահած էր։

— Ռոզիկ, աղջիկս,— լսվեցավ սրահին մյուս ծայրեն Թագուհի հանըմի ձայնը,— քիչ մըն ալ մեր քովը եկեք նստեցեք։

Երկու երիտասարդները ակամա ոտքի ելան, մինչ Ղուկաս էֆենտի կըսեր իր կնոջ։

— Չգե՛, թո՛ղ անոնք ալ հոն խոսակցին։

Բայց Ռոզիկ և Լևոն եկած էին արդեն իրենց քով։ Տիկին Թագուհի ակնարկ մը փոխանակեց աղջկան հետ և անմիջապես հասկցավ, թե գործը կարգին էր։ Ինքն ալ շատ սիրալիր, շատ հուսալից տեսակցություն մը ունեցած էր Լևոնի մոր, տիկին Անթառամի հետ։ Վճռական խոսքեր չէին փոխանակված թեև, սակայն հայտնի էր, որ խոսք-կապի առաջարկությունը չպիտի ուշանար։

Մեկնելու ատենին տիկին Թագուհի հայտնեց Լևոնի և իր մոր, թե հինգշաբթի երեկոները իրենց ընդունելության գիշերն էր և հատկապես հրավիրեց զիրենք։

Բայց Ղուկաս էֆենտի այս չափով չգոհացավ.

— Մենք ձեզի կերակուրեն առաջ կսպասենք,— ըսավ,— ճաշը միասին կընենք, շատոնց է պոլսական կերակուրներ չեք կերած հարկավ, ուստի ձեզի տաճկական աղվոր ճաշ մը կպատրաստենք։

Այս հրավերը առանց դժվարության և շնորհակալությամբ ընդունվեցավ։

Երբ իրենց բնակարանը վերադարձան, տիկին Թագուհի երկարորեն հարցուփորձեց աղջիկը երիտասարդին հետ ունեցած առանձին տեսակցությանը մասին, և Ռոզիկ մի առ մի պատմեց ինչ որ անցած էր իր և Լևոնի միջև։

— Ալ կասկած չիկա,— եզրակացուց տիկին Թագուհի,— այդ Փարիզ երթալու խոսքերեն բացե ի բաց կերևա, որ մանչը միտքը դրեր է քեզ առնել... մայրն ալ ըսավ, որ տղան շատ համակրեր է քեզի։

Միայն թե նշանտուքի մասին բացորոշ խոսք մը չէր եղած տասկավին, և այս բանը քիչ մը մտատանջության մեջ կթողուր Ղուկաս էֆենտին, որ իբրև գործնական մարդ, կուզեր, որ այդ տեսակ խընդիրները շուտ և որոշ կերպով կարգադրվին։

— Տեսնել էր նե՝ իրար տեսան, խոսիլ էր նե՝ իրարու հետ խոսեցան, ալ միտքերնին ինչ է նե՝ թող հայտնեն,— ըսավ կնոջը, երբ այս վերջինը իրեն պատմեց Լևոնի խոսածները։

— Կարելի է դեռ հասկնալիքներ ունին մեր մասին...

Այս ենթադրությունը բարկացուց Ղուկաս էֆենտին։

— Ի՞նչ հասկնալիք պիտի ունենան, անոնք ո՞վ են, որ մեր վրա տեղեկություն առնեն պիտի... հոշ կուզեն նե՝ թող առնեն, թող երթան պանքաներուն, վաճառականներուն հարցունեն Ղուկաս էֆենտին... մենե պատվավո՞ր պիտի գտնան Պոլսո մեջ... իրենք ո՞վ են նայինք... Փարիզ գացեր, քանի մը փարա վաստկեր է տեյի ինքզինքը թող այդչափ մեծ բանի մը տեղ չդնե... շատ հարցնելու փնտռելու ելլանք նե՝ ետքը իրենք վրա կուտան...

Հանկարծ Ղուկաս էֆենտիի միտքը ինկավ Տ. Միքիաս քահանայի տարտամ ակնարկությունները Լևոնի մոր մասին.

— Իրենք ո՞վ են, ի՞նչ են, առանց տասը փարայի Փարիզ գացեր են, մայրը բարեկամներ ունի եղեր, ինքն ալ աղվոր կնիկ է եղեր, պաշտպաններ, տղան մարդ են ըրեր։

— Ամա՛ն, Ղուկաս էֆենտի, այդ խոսքերը ուրկե հանեցիր,— գոչեց կինը դողահար։

Բայց Ղուկաս էֆենտի շարունակեց բերնին տալ, մինչև որ Ռոզիկ ներս մտնելով՝ ստիպվեցավ լռելու։

Ղուկաս էֆենտի, հակառակ իր պողոտաքներուն, իրավցնե կվախնար, որ Կոկիկյանները իրենց մասին մանրազնին քննության մը կձեռնարկեն և գուցե անախորժ հայտնություններ երևան կուգան։

Որչափ ալ հարուստ և երեսանց հարգված, իր անցյալը մաքուր չէր եղած և այդ անցյալը ճանչցողներ շատ կային։

Ղուկաս էֆենտի, պարզ սարաֆի մը զավակ, իր ասպարեզը սկսած էր վաշխառությամբ և անոր շնորհիվ իր հարստության հիմը դրած էր։ Ահռելի, քստմնեցուցիչ բաներ կպատմվեին այս մասին, իր ճանկը իյնող զոհերու եղերական դրվագներ։

Իր հափշտակիչ անհագ դրամապաշտությունը զինքը մղած էր ամենեն վատ արարքներու, երբ մանավանդ իր դեմը գտած էր անպաշտպան, տկար ու միամիտ անձեր։ Մուրհակներ կեղծած, իր քով ձգված ավանդները ուրացած, գոհարեղեններ ու թանկագին քարերը գողցած ու տեղը կեղծեր դրած էր անպատկառորեն և այս առթիվ երբեմն իր դեմ բացված դատերեն կրցած էր օձիքը ազատել սուտ երդումներով կամ կաշառքով։

— Աստված թշնամիս անոր ձեռքը չձգե,— կըսեին զինքը մոտեն ճանչցողները։

Հետո, երբ հարստությունը 8—10 հազար ոսկիի հասած էր, ուզած էր ավելի լայն ասպարեզի մը մեջ իր ավազակությունը առաջ տանիլ և վաճառականության ձեռնարկած էր, Ղալաթիայեն Պոլիս փոխադրվելով։ Հոն մեկ երկու տարի վերջ կեղծ սնանկությամբ մը քանի մը հազար ոսկի ներս նետած էր, գավառացի կարգ մը մանր վաճառականներ փճացնելով։ Ալ անկե ետքը Ղուկաս էֆենտի, որ մեծապատվութենե ազնվաշուքության բարձրացած էր արդեն, կթողու վաճառականությունը և կըլլա կառավարության հայթայթիչ ու զոշաքաղ նախարարներու ընկերակցությամբ, կսկսե կողոպտել պետական գանձը։ Այս առթիվ կստանա նաև աստիճան և պատվանշան, պետության մատուցած իր բարվոք ծառայություններուն համար։

Իր հարստության հետ զուգընթաց կաճի նաև իր խելացի ու պատվավոր մարդու համբավը։ Իր գործած հին աղտոտությունները կմոռցվին, կծածկվին, իր զոհերուն անեծքը այլևս չի կրնար հասնիլ իր համբավին մեծության և անոր վնասել։ Ինչ որ մասնավորաբար կհատկանշե Ղուկաս էֆենտիին իր ներկա բարձրության մեջ, ընտանիքի, պատիվի, բարոյականի մասին ունեցած աններող նախանձախնդրությունն է։

— Ընտանիքը պատիվը, բարոյականն է մեզ անասուններեն զանազանողը,— կդավանի։

Եվ ամեն ատեն, ոևէ մարդու մը իրական արժանիքը չափելու համար, կդիմե անոր պատիվի ու բարոյականի քանակին։

Ասոր համար Ղուկաս էֆենտի մասնավոր հարգանք ու ակնածանք կներշնչե իր շրջանակին մեջ։ Ոչ ոք կհամարձակեր իր քով «վրան բաց» խոսքեր ընել կամ «անբարոյական» դեպք մը պատմել։

— Էֆենտին անանկ բաներեն չախորժիր,— կըսեին իրարու։

Իր գրագիրներն ու պաշտոնյաները, որոնք գիտեին անոր պատիվի ու բարոյականի մասին ունեցած մենամոլությունը, կշանային պատվավորության և բարոյականության արտաքին շպարով մը ծածկվիլ ամեն ատեն. քանզի ասով միայն կրնային հուսալ իր համակրանքը շահիլ և գործերնուն մեջ հառաջդիմել։

Ընտանեկան բարոյական մանավանդ, սրբազնասուրբ բան մըն էր Ղուկաս էֆենտիի համար և վայ այն կնոջ կամ մարդուն, որուն մեկ ընտանեկան անբարոյականությունը կհրապարակվեր։ Այդպիսին ոևէ շնորհ չէր կրնար գտնել իր առջև։

Ահա այսպիսի նկարագրով մարդ մըն էր Ղուկաս էֆենտի Կելկիթյան։

ԳԼՈՒԽ Դ

Հինգշաբթի գիշերվան հացկերույթը և երեկույթը շատ փայլուն անցան։ Հոն էին Բերայի գրեթե բոլոր «ազնվաշուք» ընտանիքները, որոնք հետաքրքիր՝ կդիտեին Փարիզեն եկող այդ հարուստ ու վայելուչ երիտասարդը, որուն համար կըսվեր արդեն իսկ՝ թե քանի մը օրեն պիտի նշանվեր օրիորդ Ռոզիկի հետ։

Հակառակ Կելկիթյաններու ծայրահեղ գաղտնապահության՝ լուրը տարածված էր ամբողջ Բերայի մեջ, թեև այդ մասին ոչ ոք ակնարկություն մը կըներ աղջկան ծնողքին, քանի որ անոնք տակավին չէին ուզեր իրենց գաղտնիքը երևան հանել։

Երեկույթին ներկա էին նաև տեր և տիկին Աբգար Սմսարյան

և իրենց աղջիկը Հերմինե, վայելուչ արդուզարդով մը ալ ավելի դուրս ցայտեցված իր հրաշալի գեղեցկությունը։

Հերմինե սիրալիր կերպով համբուրվեր էր իր բարեկամուհիին՝ Ռոզիկի հետ, որ ալ իր հաղթության վրա գրեթե ապահով, վաներ էր սրտեն իր հավանական ոսոխին մասին զգացած տեսակ մը ատելությունը և զվարթ քաղցրությամբ մը կտեսնվեր հետը։

Ռոզիկ այս գիշեր շատ պատճառներ ուներ վերջնական հաջողության մասին բոլորովին վստահ ըլլաու։ Ճաշեն առաջ Լևոնին հետ կրկին պահ մը առանձնացած էին հյուրասրահի կից փոքրիկ խուցը, տիկին Թագուհիի և Ղուկաս էֆենտիի բարյացակամ մեղսակցությամբը։

Այս անգամ Լևոն ավելի համարձակ ու հանդուգն եղած էր, համբույրներ փոխանակված էին ու նույնիսկ ծունկերուն վրա առած էր աղջիկը, որ իր ընդունած պատվերներուն համաձայն, ընդդիմություն չէր ըրած երիտասարդին ցույց տված տոփական բորբոքումներուն։

Եվ առանձնության մեջ հրայրքի գինովության միջոցին, Լևոն վերջապես իր սերը հայտներ էր և ըսեր էր, որ քանի մը օրեն պիտի գային՝ իր մոր հետ՝ պաշտոնապես իր ձեռքը խնդրելու։ Այս հավաստումը ալ ավելի թույլատու ըրած էր Ռոզիկը, որ բոլորովին աչքն էր գոցեր երիտասարդին քիչ մը չափազանց անպատկառություններուն... չէ՞ մի որ իր կինը պիտի ըլլար քիչ օրեն, քանզի Լևոն ըսած էր, թե նշանտուքեն մեկ շաբաթ ետքը պիտի ամուսնանային, որովհետև իր գործերը չէին ներեր երկար ատեն Փարիզեն հեռու մնալ։

Ու, հետո, խոսեր էին իրենց ապագային մասին, Փարիզ անցնելիք կյանքերնուն վրա, բոլոր այն հաճույքներուն՝ որոնք իրենց կսպասեին... ճաշի հրավերը հանկարծ ընդհատեր էր երկու սիրահարներու երազանքը։ Ճաշը շատ երկար տևած էր և հազիվ թե սեղանեն ելած՝ հյուրերը սկսեր էին գալ ու ալ անկե ետքը Ռոզիկ չէր կրցած նորեն առանձնանալ Լևոնի հետ, նույնիսկ միջոց չէր գտած իր մոր հաղորդելու մեծ ավետիսը, նշանտուքին լուրը։ Բայց տիկին Թագուհի աղջկա դեմքին վրա ճառագայթող անճառ ուրախությենեն կռահած էր, որ վճռական քայլ մը առնված էր և անհամբեր կսպասեր հյուրերու երթալուն՝ որպեսզի տեղն ի տեղոջ ամեն բան իմանա։

Կիրակի օրվընե ի վեր Ղուկաս էֆենտի նորանոր տեղեկություններ առած էր Կոկիկյանի մասին։ Զինքը վստահեցուցած էին, որ երեսուն քառասուն հազար ոսկիի կհասներ հարստությունը, թե ադամանդ գնահատելու մասին մեծ համբավ կվայելեր, թե շատ գործունյա, ճարպիկ ու ձեռներեց երիտասարդ մըն էր, որուն մեծ ու շատ փայլուն ապագա մը կըսպասեր։ Այս տեղեկությունները նոր գրգիռ մը եղեր էին Ղուկաս էֆենտիի՝ գործը անպատճառ հաջողեցնելու համար։ Ինք արդեն նշանտուքի խորհուրդը ունենալուն պես գրած էր Փարիզ իր այն բարեկամին, որ Կոկիկյանները իրեն հանձնարարած էր և անոր բացատրելով խնդիրը, մանրամասն տեղեկություններ խնդրած էր երիտասարդին նյութական վիճակին մասին։ Հետո իմացած էր, որ շուկան, ծերունի ոսկերիչ մը, Հակոբ աղա, Կոկիկյանները ճանչցած էր, Փարիզ երթալեն առաջ և շատ մտերիմը եղած էր Լևոնի հորը։ Ծանոթի մը միջոցավ լուր ղրկած էր այդ մարդուն, որպեսզի հետևյալ օրը՝ ուրբաթ, իր գրասենյակը գա, իբր թե իրմե մեկ քանի գոհարեղեն գնելու համար։ Ղուկաս էֆենտի կփափաքեր այդ ծերունիեն տեղեկություններ քաղել Կոկիկյանենց անցյալին վրա։

Ցերեկույթին մեջ ամենուն աչքին կզարներ տնեցիներու կողմե հարգանքի ու մեծարանքի այն բացառիկ ցույցերը, որոնք կըլլային Լևոնի մոր, տիկին Անթառամին, որ պատվո տեղը բազմած, կուռքի մը վեհափառությամբ կընդուներ իրեն ընծայված պատիվները։ Իր զավկին հետ գլուխ գլխի կարճ խոսակցությունե մը ետքը, տիկին Անթառամ միջոց մը տիկին Թագուհիի ցույց տալով Ռոզիկն ու Լևոնը, որոնք՝ անդին՝ ոտքի կեցած՝ կխոսեին, ըսավ.

— Հասակնին որչափ հարմար է իրարու։

— Այո,— հաստատեց տիկին Թագուհի ժպտելով։

Անթառամ պահ մը լռեց, հետո ավելցուց։

— Զավակս շատ համակրած է ձեր աղջկան, արդյոք օրիորդ Ռոզիկն ալ համակրա՞ծ է անոր։

— Ո՞վ գիտե,— պատասխանեց Թագուհի,— միթե աղջկան մը կվայելե՞ այդ մասին խոսք մը ըսել... մանավանդ մեր աղջիկները, որոնք շատ խիստ մեծցած են... հայրերնին անանկ կուզե... բայց ինչպե՞ս չպիտի համակրի, անանկ շնորհքով, պարկեշտ երիտասարդ մը։

— Զավակս ըլլալուն համար չեմ ըսեր, ամմա, հավատացեք, հազարին մեջ մեկ հատ չգտնվիր իրեն պես,— պատասխանեց Անթառամ գոհ հպարտության դեմքով մը...— Փարիզի մեջ անգամ

խենթ կելլան վրան, բոլոր զինքը ճանչցողները կսիրեն... երբոր ավելի մոտեն ճանչնաք, պիտի տեսնաք որ ինչ բնության, ինչ վարք ու բարքի տեր է...

— Աստված պահե,— ըսավ Թագուհի, որ կհասկնար, թե ուր պիտի հանգեր խոսակցությունը։

— Ձեր աղջիկն ալ աստված պահե, առաջին տեսնելուս սիրեցի, վրայեն հայտնի է, որ շատ պարկեշտ, շատ համեստ, շատ կրթված աղջիկ է...

— Այդչափ հավնեցար նե՝ ձեզի տանք,— պատասխանեց Թագուհի խնդալով։

— Ինչո՞ւ չէ,— ըսավ մյուսը,— եթե աստուծո կամքը այդ է։

Երկու խոսակիցները վայրկյան մը լռեցին։ Նույն միջոցին, քիչ մը անդին նստող խոշոր ու տարիքոտ կին մը, որ առանձին մնացած էր, գոչեց.

— Տիկին Թագուհի, այս ինչ բան է, ալ նոր հյուր ունեցար տեսի, մեզի բոլորովին մոռցար, երեսնիս անդամ չես նայիր կոր... բայց անիկա կելլա, կերթա, դարձյալ մենք կմնանք։

— Շիտակը ես ալ կնախանձիմ կոր այդ ձեր մտերմության վրա, արդյոք հինուց իրար կճանչնայի՞ք,— մեջ մտավ նաև տիկին Սմսարյան։

— Չէ, դեռ քանի մը օր է իրար ճանչցանք, սակայն քրոջ պես իրարու կապվեցանք,— ըսավ տիկին Անթառամ։

Եվ ահա խոսակցությունը ընդհանուր դարձավ, բայց տիկին Թագուհի այլևս կասկած չուներ Կոկիկյանենց տրամադրության վրա, կարելի էր գործը լմնցած համարել։

Երբ կես-գիշերեն ետքը հյուրերը մեկնեցան, տիկին Թագուհի իր աղջիկը հարցուփորձելե ետքը, ալ բոլորովին ապահովվեցավ և ամուսնույն հաղորդեց բարի լուրերը։

Ղուկաս էֆենտին ուրախացավ. այսպես ուրեմն՝ գործը իր ուզածին պես եփած էր, առանց ձգձգումի և առանց արտաքին արգելքներու։ Հիմա կմնար դրամօժիտի խնդիրը. տղան անշուշտ բավական գումար մը պիտի պահանջեր. ինչ որ աբդեն աչք առած էր Ղուկաս էֆ. բայց եթե իր հավակնությունները չափազանց ըլլային, եթե ելլեր 8—10 հազար ոսկի ուզեր, այն ատեն գործը կխանգարեր։

— Եթե իրավցնե աղջկան սիրահարած է՝ գործը քիչով կրբնանք կարգադրել,— ըսավ կնոջը...— դուն նորեն Ռոզիկին ըսե, որ կրցածին չափ ինքզինքը սիրցնելու նայի... տղան որչափ շատ սիրահարի՝ դրամը այնքան քիչ կուտանք...

Ու կնոջ այս խորհուրդը տալե ետքը, Ղուկաս էֆենտի գոհ սրտով մը պառկեցավ և խռկալ սկսավ։

Հետևյալ օր, իրիկվան դեմ, իր գրասենյակը նստած էր, երբ ծերունի մը ներկայացավ։

— Էֆենտի, զիս ուզեր եք,— ըսելով։

Ոսկերիչ Հակոբ աղան էր, ուրկե Ղուկաս էֆ. կուզեր տեղեկություններ առնել Կոկիկյանենց անցյալին մասին։

— Հա, Հակոբ աղան դո՞ւք եք, հրամմեցեք, ազրանքները բերի՞ք։

— Այո, էֆենտիս,— ըսավ մարդը բալթային գրպանեն գոհարեղենի մեկ քանի տուփեր հանելով։

Ղուկաս էֆ. հյուրին սուրճ մը ապսպրեց, սիկարեթ մը հրամցուց և սկսավ գոհարեղենները քննել, գիները հարցնել, դիտողություններ ընել։ Հետո շուկայի և մասնավորաբար ոսկերիչներու առևտուրին վրա խոսք բացավ և այդ միջոցին անտարբեր ձևով մը հարցուց.

— Ճանըմ, Փարիզեն այս օրերս հարուստ ակնավաճառ մը եկեր է, լրագիրը գրեր էր, Լևոն Կոկիկյա՞ն է, ի՞նչ է... ո՞վ է այդ մարդը, որ լրագիրները անցուցեր են, դուն կճանչնա՞ս կոր...

— Հասկցա,— ըսավ Հակոբ աղա,— ես ալ լսեցի, Լևոն Կոկիկյան...

— Հա, Լևոն Կոկիկյան։

— Հապա, լավ կճանչնամ, այսինքն տղան չէ, բայց հայրը, ինչ պատվական մարդ էր, աղբոր պես էինք մեկտեղ։

— Հարո՞ւստ էր...

— Չէ, ճանըմ, պարզ մինանի մըն էր, օրե կվաստկեր, օրե կուտեր, բայց աղեկ դրամ կշահեր, բնությամբ ալ շատ ազնիվ էր, ամենքը զինքը կսիրեին... շռայլ մարդ մըն էր, վաստկած դրամը կուտեր, բայց աղեկ կապրեր, տունն ալ աղեկ-աղեկ կնայեր... Աստված ողորմի հոգուն։

Հակոբ աղա ալ անցյալին վերհիշումներեն տարված, հին բարի օրերուն պատմությունները սկսավ ընել, ամեն ծերերու պես ներկան գլշ գտնելով և երիտասարդության օրերը փառաբանելով։

— Ան ատենվան մարդիկը իրավցնե մարդ էին, Ղուկաս էֆ. ճեմ իրենք կշահեին՝ ճեմ ուրիշներուն շահեցնել կուտային... Հի-

մա չմնացին անանկ մարդիկ, հիմակվանները միայն իրենց տաշել կուզեն, իրար խաբելու, իրար կործանելու կնային...

Այս խոսքերը սակայն չէին շահագրգռեր Ղուկաս էֆենտին, ուստի բուն նյութին դառնալու համար ըսավ.

— Ըսել է Լևոն Կոկիկյանը չես ճանչնար...

— Չէ, հայրը, Նիկողոս աղան, աստված ողորմի հոգուն. մեռած ատենը պզտիկ տղա էր... խեղճ մարդը մեռնելիք մարդ չէր, ամա ինչ ըսեմ ես այն փոսքալին, որ մարդուն էճելը մտավ...

— Փոսքալը ո՞վ է,— հարցուց Ղուկաս էֆենտի, մտատանջ կերպով շահագրգռված։

— Իշտե կնիկ օլանախը, Անթառամ հանըմ է, ի՞նչ է... բարով խերով դեմը չելլար տե՝ մարդուն մահվանը պատճառ չըլլար...

Ղուկաս էֆ. աննշմարելի սարսուռ մը ունեցավ։ Զղջաց այդ մարդը կանչած՝ հարցուփորձած ըլլալուն, բայց հիմա այլևս շատ ուշ էր, հարկ էր ակամա լսել ամենը։

— Ատ կնիկը, աստված թշնամիիս դեմը չհանե, ատեթա բոզ մըն է,— գոչեց Հակոբ աղա, անցյալի վերհիշումներեն հետզհետե բորբոքած։

— Հակոբ աղա, ի՞նչ կըսես, ատանկ թեթևորեն ծանր ամբաստանություններ ընելու չէ... մանավանդ կիներու մասին,— ըսավ Ղուկաս էֆենտի։

— Ամբաստանությո՞ւն մի, ամեն մարդուն գիտցած բանն է... խեղճ լուսահոգի Նիկողոս աղան ինքը լալով պատմած է ինծի՝ վրա հասնելը տե՝ կնիկը սիրականին հետ յաթախին մեջ բռնելը... զավալլըն ատ բանին վրա չէ՞ր քի տեռտեն հիվանդ ինկավ մեռավ... անոր վրա տարին չանցավ, Անթառամն ալ զավակը առավ Փարիզ՝ սիրականին քովը գնաց, շուկան հին ոսկերիչները ամենքն ալ գիտեն այս բաները... արդեն ատ Լևոնն ալ Նիկողոս աղային զավակը չէ, ուրիշեն ունեցած է, ճալե հայրը ողջ է, տակավին կապրի, ատ խաղքությունն ալ զատ... երկայն բարակ է ատոր պատմությունը... ինչ որ է, գոցենք այս խոսքերը, մենք մեր գործին նայինք... հիմա հարստացեր՝ մեծ մարդ եղեր է, աստված տա, դրամը ամեն բան կգոցե, կպարտկե...

Ղուկաս էֆենտի, շփոթված, շլմորած, այս լախտի հարվածները ընդուներ էր, բայց և այնպես ուզեց խոսքը առաջ տանել։

— Այս Անթառամը ո՞րուն աղջիկն է,— հարցուց։

— Ասոր հայրը շատ կանուխեն մեռած է եղեր, մորը Թոփ

Գաբուցի պայրաքտար Սուրբիկ կըսեին, առսրզ էտեփսիզ կնիկ մըն էր, աղջիկը շատ աղվոր էր, խեղճ Նիկողոս աղան հավնեցավ, վիճակին ալ մեղքցավ առավ, հուսալով, որ մորմեն հեռու մնա նե՝ կարգի կմտնա, եկուր տես, որ Անթառամ մայրն ալ պաստրմիշ ըրավ... ինչ որ է, մեր գործին նայինք։

Ղուկաս էֆենտի ալ չհամարձակվեցավ հարցուփորձը ավելի առաջ տանելու, քանզի կտեսներ, որ հայտնությունները հետզհետե անախորժ կդառնային։

Բայց հայտնի կերևար, որ Հակոբ աղա չէր զրպարտեր, այլ բուն ճշմարտությունը կխոսեր և այս բանն էր, որ մտածել կուտար Ղուկաս էֆենտիի։

— Եթե նշանտուքը ըլլալե, ծանուցվելե ետքը այս մարդը իր գիտցածները ասդին անդին պատմե, ի՞նչ կըլլա մեր պատիվը,— կխորհեր Ղուկաս էֆենտի, սիրտը դող ելած։

Եթե վստահ ըլլար, որ չպիտի խոսեր, այն ատեն խնդիրը կարևորություն չուներ, ընտանեկան պատիվը, բարոյականը ոչէ կերպով չէին կրնար արատավորիլ. ինք միայն պիտի գիտնար ճշմարտությունը և ինքն ալ խենթ չէր, որ ուրիշին իմացներ։ Ուստի պետք էր ամեն միջոցով Հակոբ աղայի լռությունը ապահովել։

— Իրավ, թողունք Կոկիկյանները, թողունք մեկ կողմ և մեր գործին նայինք,— ըսավ,— ասկե զատ աղեկ բան չէ ասոր անոր ընտանեկան գաղտնիքներով զբաղվիլը... ամեն մարդ ինքզինքին դատավորն է, անցած գացած հին խնդիրները պետք չի կա խառնըշտելու։

— Իրավունք ունիս, էֆենտիս,— պատասխանեց Հակոբ աղա.— իմ մտքես անգամ չէր անցներ այդ խոսքերը բանալ, եթե դուք չհարցնեիք։

Ղուկաս էֆենտի կրկին քննեց գոհարեղենները և ըսավ...

— Ասոնց մեջ գործիս գալիք բաներ կան, բայց պետք է, որ մեյ մը կնոջս ալ ցույց տամ և անկե ետքը կորոշենք առնելիքներս... գինին մասին կհամաձայնինք, մեկ վեր, մեկ վար, վնաս չունի. դուն, Հակոբ աղա, պատվավոր ու պարկեշտ մեկը կերևաս կոր, իշալլահ միասին գործ կընենք...

— Իշալլահ, էֆենտի, ես ալ ձեր շնորհիվ քանի մը փարա կվաստկիմ։

— Ուրեմն, այսպես, քանի մը օրեն անցիր, պատասխանը կուտամ։

Հակոբ աղա իր հասցեին ուղղած գովասանքներեն գոհ և հպարտ, գոհաբեղեները հանձնեց Ղուկաս էֆենտիին, որ տուն դարձին մոայլ կերպարանք մը ուներ։ Հակոբ աղայի խոսքերը խոր տպավորություն մը ըրած էին. տիկին Անթառամի անհավատարմությունները, Լևոնին անհարազատ զավակ մը ըլլալը, Թոփ Գամուրյունները, Սուրբիկը, բոլոր այդ ապետավոր հայտնությունները, ամոթալի անցյալը զինքը կտանջեին, կլլկեին։ Կինը նշմարեց իր էրկան այդ անսովոր կերպարանքը և հարցուց.

— Ի՞նչ ունիս այսօր, տխուր կերևաս կոր։

— Բան մըն ալ չունիմ, քիչ մը գլուխս կցավի կոր,— պատասխանեց Ղուկաս էֆենտի չորությամբ։

Ճաշեն հետո նամակ մը ստացան Լևոնեն, զոր Ռոզիկ բարձրաձայն կարդաց.

«Ազնվաշուք Ղուկաս էֆենտի,— կգրեր երիտասարդը,— վաղը, շաբաթ իրիկուն, ընտանեկան պարահանդես մը տեղի պիտի ունենա մեր պանդոկին մեջ. ուստի մայրս և ես կխնդրենք, որ դուք ևս, տիկնոջ և օրիորդներուն հետ ներկա գտնվիք։ Շատ ուրախ պիտի ըլլանք, եթե հաճիք իրիկվընե մեզ պատվել և ճաշը միասին ընել»։

— Սպասավորը վարն է, պատասխանի կրսպասե,— ըսավ աղախինը, որ նամակը վեր բերած էր։

— Իմ կողմես գրե, որ շատ կցավինք, բայց չպիտի կրնանք երթալ, որովհետև... անհանգիստ եմ,— ըսավ Ղուկաս էֆենտի, նեղոտիրտ ձևով մը խոսքը աղջկանը ուղղելով։

Մայր ու աղջիկ զարմացած երեսը նայեցան, չկրնալով ըմբռնել, թե ինչպես կարելի էր մերժել այսպիսի հրավեր մը՝ ճիշտ գործը եփվելու միջոցին։

Ղուկաս էֆենտի, որ ցերեկվան խոսակցության դժնդակ ազդեցության տակ այդ հրամանը տված էր իր աղջկան, հանկարծ ինքզինքին եկավ, մեկեն զգաց թե ձախող խոսք մը փախցուցած էր բերնեն և ուզեց սխալը դարմանել։

— Գլուխս կցավի կոր տե՝ անոր համար չեմ գիտեր ինչ պատասխանելու է...

— Ճանըմ, գլխու ցավդ օրերով չտևեր,— ըսավ տիկին Թագուհի,— այս իրիկուն դեղ մը կընենք, կանցնի։

— Իրավունք ունիս, անանկ է նե՝ գրե որ շնորհակալությամբ կընդունինք հրավերը և մեծ պատիվ կհամարենք մեզի իրենց հետ

ճաշելը... վերջապես դուն գիտես, շնորհքով բան մը գրե իմ կողմես։

Հետևյալ իրիկուն Ղուկաս էֆենտի ալ մոռցած էր Հակոբ աղայի խոսքերը և զվարթ տրամադրությամբ մը գնաց օթել Պրիսթոլ՝ իր կնոջ և աղջիկներուն հետ։

Ճաշեն ետքը, տիկին Անթառամ հայտնեց տիկին Թագուհի, թե քանի մը օրեն իր տղուն հետ պիտի գար պաշտոնապես Ռոզիկի ձեռքը խնդրելու Լևոնին համար և թե տղան շատ կփափաքեր հարսնիքը շուտով կատարել ու անմիջապես Փարիզ վերադառնալ։

— Այդ դյուրին է, ինչպես որ կուզեք, այնպես կընենք,— պատասխանած էր տիկին Թագուհի։

— Միայն թե,— ավելցուցած էր Անթառամ,— տղան այդ պաշտոնական այցելություններեն առաջ կփափաքեր Ղուկաս էֆենտիի հետ առանձին տեսակցություն մը ունենալ, կարևոր մանրամասնությունները կարգադրելու համար։

Ապահովաբար խնդիրը դրամօժիտի մասին էր։ Թագուհի ըսավ, թե անմիջապես իր էրկանը պիտի հաղորդե Լևոն էֆենտիի փափաքը և իրավ ալ պահ մը Ղուկաս էֆենտիի հետ առանձնանալե ետքը, լուր բերավ, որ երկուշաբթի առտու էֆենտին իր գրասենյակին մեջ պիտի սպասե փեսացուին։

— Իցիվ, թե քիչով գործը կարգադրեինք,— կմտածեր Ղուկաս էֆենտի, դիտելով իր աղջիկն ու Լևոնը, որոնք թև թևի, ուրախ զվարթ կերթևեկեին պարասրահին մեջ, անուշադիր իրենց շուրջի իրարանցումին և միմիայն իրենք իրենց մեջ ամփոփված։

Երկուշաբթի օր էֆենտին գրասենյակ եկավ։ Եվրոպական սուրհանդակը հասած էր և նամակներու ծրարին մեջ կգտնվեր ճիշտ այն նամակը, որուն կսպասեր, այսինքն՝ Փարիզի բարեկամին բացատրողական գիրը։

Ղուկաս էֆենտի՝ բնականաբար՝ նախ և առաջ այդ նամակը կարդաց, որ շերմ ու խանդավառ ջատագովական մըն էր երիտասարդ ակնավաճառին համար։ Բարեկամը անվերապահորեն խորհուրդ կուտար Ղուկաս էֆենտին՝ աղջիկը տալու Լևոն Կոկիկյանի, որուն նման գործունյա և ճարպիկ երիտասարդ երբեք չպիտի կրնար գտնել։ Գալով հարստության, գրությունը կհավաստեր, թե առնվազն քառասուն հազար ոսկի ըլլալու էր, եթե ոչ ավելի, բայց այդ գումարը Լևոնի ճարտար ձեռքերուն մեջ քանի մը հարյուր հազար ոսկիի գործ կտեսներ։

«Երկինքեն ինկած բախտ մըն է այս աղջկանդ համար, չըլլա որ ձեռքե փախցնես»,—կըսեր բարեկամը, իր նամակը վերջացնելով։

Հազիվ թե ընթերցումը ավարտած՝ գրասենյակին դուռը բացվեցավ և Լևոն Կոկիկյան երևցավ սեմին վրա։

— Օ, հրամմեցեք, բարով եկաք,— գոչեց Ղուկաս էֆենտի, ոտքի ելլելով։

Եվ իր թիկնաթոռին քով դրված քանափեին վրա հրամցուց։

— Մայրս ձեր տիկնոջ իմացուց մեր դիտավորությունը օրիորդ Ռոզիկի մասին,— սկսավ երիտասարդը, շփոթված ու ամաչկոտ կերպարանքով մը։

— Այո, այո,— պատասխանեց Ղուկաս էֆենտի աշխույժով,— շիտակը ասիկա մեր ալ փափաքն էր առջի օրեն։

— Շատ շնորհակալ եմ, Ղուկաս էֆենտի, հետևաբար չորեքշաբթի օր, եթե կհաճիք, մորս հետ պիտի գանք ու խոսք-կապը ընենք։

— Հրամմեցեք, և վստահ եղեք, որ դուռը երեսնուդ չպիտի գոցենք,—ըսավ Ղուկաս էֆենտի խնդալով։

— Միայն,— կմկմաց երիտասարդը,— արդյոք լավ չըլլա՞ր, որ ապագա դժվարություններու տեղի չտալու համար, այժմեն կարգադրենք ամեն խնդիր...

Ղուկաս էֆենտի տեսնելով երիտասարդին վարանումները և միանգամայն, իբրև գործի մարդ, ուզելով արագորեն կարգադրել ամեն բան, ըսավ.

— Կհասկնամ ձեր միտքը. խնդիրը աղջկանս օժիտին վրա է. լավ, այդ ալ մենք մեր մեջը կկարգադրենք և կարծեմ որ այս մասին դժվարության չենք հանդիպիր։ Նախ ըսեմ, որ ըստ իս, աղջկանս մեծագույն օժիտը իր պարկեշտությունը, ընտանեկան պատիվը և բարոյականն է... հիմա ատանկ բաներու շատ կարևորություն չեն տար թեև, սակայն ինձի համար ատկե թանկագին բան չի կա։ Դրամը շուտով կերթա, բայց բարոյականը, պատիվը կմնա։ Այսուհանդերձ չկարծեք, որ այս խոսքերը կըսեմ հասկցնելու համար, որ աղջկանս դրամօժիտ տալ չեմ ուզեր, քավ լիցի, գիտեմ, որ ինչ է հոր մը պարտականությունը, ասկե զատ փառք աստուծո, աղքատ չենք, քիչ մը դրամ ալ մեր քովը կգտնվի... արդեն իմ հարըստությունս որո՞ւնն է, զավակներունս... հետս գերեզման տանելու չեմ։

— Շատ ճշմարիտ է,—ըսավ Լևոն Կոկիկյան, որ չէր հասկնար, թե ուր կուզեր գալ Ղուկաս էֆենտի իր այս խոսքերով։

— Ես,— շարունակեց Ղուկաս էֆենտի,— պատվույս շատ նախանձախնդիր եմ և կուզեմ, որ աղջիկնիս իրենց արժանավայել դիրքը կարենան պահել։

— Ձեզ նման պարտաճանաչ հայր մը անշուշտ ուրիշ կերպ չկրնար մտածել,— ըսավ Լևոն, պարզապես խոսք մը ըսած ըլլալու համար։

— Հիմա ինծի նայե, զավակս... կներես, որ քեզ այսպես կոչեմ, անանկ չէ՞, աղջկանս համար բնականաբար առաջնակարգ օժիտ մը պիտի պատրաստենք, զինքը Անատոլու հարս չենք ի տար կոր, այլ Փարիզ, և պետք է որ հոն կարենա մեր պատիվին արժանի դիրքով մը ներկայանալ, իհարկե, շատ մըն ալ արժեքավոր գոհարեղեններ և նվերներ պիտի ընդունի իր ծնողքեն ու ազգականներեն. այս ամենեն դուրս, իբրև զուտ դրամօժիտ երեք հազար ոսկի որոշած եմ աղջկանս համար։

Այդ գումարը լսելով՝ Լևոն Կոկիկյան դեմքի աննշմարելի կրծկում մը ունեցավ։ Ապահովաբար գումարը իր հուսացածեն շատ փոքր, ճղճիմ երևցավ և սակայն ձայն չհանեց։

Ղուկաս էֆենտի գրպանեն սիկարեթի արծաթյա տուփը հանեց, հատ մը ինք առավ, հատ մըն ալ երիտասարդին հրամցուց և հետո շարունակեց.

— Արդեն գիտեմ, որ դրամի պետք չունիս, դուն այն երիտասարդներեն չես, որոնք կուզեն իրենց կնոջ դրամովը ապրիլ կամ միայն մեծ դրամօժիտ մը ձեռք ձգելու համար աղջիկ կփնտռեն, այդ տեսակ երիտասարդները, խոսքը մեջերնիս, շատ շնորհքով, շատ պատվավոր մարդիկ չեն ըլլար։ Դուն, փառք, աստուծո, քու աշխատությամբդ հարստացեր, դիրքի տեր ես եղեր։ Քու փնտռածդ պատվավոր ընտանիքե, կրթյալ, պարկեշտ, գեղեցիկ աղջիկ մը առնելն է և ոչ թե դրամը, և կարծեմ թե այդ քու փնտռած բոլոր թանկագին հատկությունները Ռոզիկս ունի... այնպես չէ՞։

— Իհարկե,— պատասխանեց երիտասարդը...— բայց և այնպես ձեր տված դրամօժիտը թե իմ և թե ձեր պատիվին համար կարծեմ շատ քիչ է... ես եթե դրամօժիտի խոսք կընեմ, ինձ համար չէ և այդ դրամն ալ երբեք գործածելու դիտավորություն չունիմ, այլ միայն կնոջս անունին ֆրանսիական բանք պիտի դնեմ, անոր ապագան ապահովագրելու համար։

— Շատ գեղեցիկ գաղափար,— ըսավ Ղուկաս էֆենտի,— բայց անոր ապագան արդեն ապահով է... մեռնելես ետքը որո՞ւ պիտի մնա հարստությունս... միթե ձեզի չպիտի՞ մնա... երեք հազար ոսկին պատկառելի գումար մըն է վաթսունը հազար ֆրանկ կընե, այստեղ ո՞ր երիտասարդին ատկե ավելի դրամօժիտ կուտան։

Երիտասարդը հայտնապես նեղություն կըզգար խոսակցության առած այս ընթացքեն և կզղջար այս բանակցությունը անձամբ ընելու համար։ Լավագույն պիտի ըլլար գործը երկու կողմանց բարեկամի մը հանձնել, բայց դժբախտաբար ինք Պոլսո մեջ ծանոթներ չուներ։ Ի վերջո ուզեց կարճ կապել։

— Ղուկաս էֆենտի,— ըսավ,— դրամօժիտը խնդիր չէ, վերջեն ալ կրնանք համաձայնիլ, ես չեմ ուզեր դրամական խնդիրի համար խզել ամուսնական ծրագիր մը, որուն համար ես և մայրս որոշում տված ենք։

— Կեցցե՛ս զավակս,— գոչեց Ղուկաս էֆենտի, որ Լևոնի այս անշահախնդրությենեն այնպես կենթադրեր, թե երիտասարդը բուռն կերպով սիրահարված էր իր աղջկան.— կեցցես, տեսա՞ր մի խելացի գործը, երիտասարդ մը, որ պիտի ամուսնանա՝ ընտանիք, պատիվ, բարոյական պետք է փնտռե ամենեն առաջ...ես այնպես ըրած եմ։

— Ուրեմն, այնպես, առայժմ գոցենք այս խնդիրը... գալով խոսք-կապին՝ մայրս ըսավ որ, եթե ձեզի կհարմարի, հառաջիկա երկուշաբթի օր կկատարենք։

— Շատ աղեկ, զավակս, շատ աղեկ, ինչպես որ կուզեք... սա ալ ըսեմ, որ ես հին խաֆալը մարդ չեմ, նշանվելուդ սպասելու պետք չունիս, ազատ համարձակ աղջիկս տեսնելու համար, այսօրվընե դուռս բաց է, տանդ պես կրնաս գալ ուզած ատենդ... Մենք Պոլիս ապրած ենք, բայց եվրոպական սովորություններ գիտենք։

— Շատ շնորհակալ եմ,— պատասխանեց Լևոն,— վստահ եղիք, որ ձեր տված արտոնությունը չարաչար չպիտի գործադրեմ...

— Ընդհակառակը, կուզեմ որ չարաչար գործադրես,— գոչեց Ղուկաս էֆենտին՝ զվարթ ծիծաղով մը։

Երիտասարդը ոտքի ելավ, մնաք բարով ըսավ և դեպի դուռը ուղղվեցավ։ Ճիշտ դուռս ելած միջոցին Հակոբ աղա ներս կմտներ։ Ծերունի ոսկերիչը ուշադրությամբ նայեցավ այդ անծանոթ գլխարկավոր երիտասարդին, որ ավելի եվրոպացիի մը, քան թե հայու մը կերպարանքը ուներ.

— Ուրեմն այսպես։ Ղուկաս էֆենտի, հառաջիկա երկուշաբթի օր,— ըսավ Լևոն դռան մեջ։

— Շատ աղեկ, զավակս, կսպասենք ձեր այցելության, ալ ասկե ետքը հրավերի պետք չունիք գալու համար։

— Շնորհակալ եմ։

Երբ դուրս ելավ և դուռը գոցեց, Հակոբ աղա զարմանքով ըսավ Ղուկաս էֆենտիի.

— Հա՞յ է եղեր այս երիտասարդը, շիտակը ես եվրոպացի կարծեցի, բնավ հայու կերպարանք չի կա վրան... կերևա, որ շատ տարի Եվրոպա ապրած է։

— Այո... այնպես կերևա,— մռմռաց Ղուկաս էֆենտի, որ բնավ գոհ չէր մնացած երիտասարդին և ծերունիին այս հանդիպումեն։

Բայց Հակոբ աղա դյուրավ չուզեց թողուլ Ղուկաս էֆենտիին օձիքը։ Այդ մաքուր հագված՝ փայլուն երիտասարդը հարուստ մեկը կերևար և գուցե կարելի էր հետը գործ ընել, մեկ քանի ապրանք ծախել, բաց աստի, զայն անորոշապես մեկու մը նմանցուցած էր, ուստի խոսքը առաջ տարավ։

— Նո՞ր եկած է Պոլիս,— հարցուց։

— Այո... կարծես։

— Ի՞նչ կըսվի։

— Տոքթոր Թովմաս կըսվի, վաղը Վիեննա կվերադառնա կոր, մնաս բարովի եկավ,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, ոսկերիչին միտքը կռահելով և ուզելով առաջին վայրկյանեն հուսակտուր ընել զինքը։

Հետո ավելցուց.

— Բայց ինչո՞ւ այդքան կհետաքրքրվիս կոր այդ երիտասարդով։

— —Չէ, այսինքն հայ ըլլալուն զարմացա... մեյ մըն ալ մեկու մը նմանցուցի, հին ծանոթի մը, բայց անիկա զավակ չուներ, ամուրի էր, հետևաբար անոր զավակը չէր կրնար ըլլալ...

— Որո՞ւ նմանցուցիր նայիմ,— հարցուց Ղուկաս էֆենտի, որուն մտքին մեջ տարտամ կասկածներ արթնցան։

— Շուկան ատենոք հարուստ ոսկերիչ մը կար... Ոսկյան

կըսեին, ճիշտ անոր երիտասարդությանը կնմաներ, մանավանդ աչքերը, քիթը, բերանը։

— Ոսկյա՞ն...

— Հա, ուր է սա անցած օր կպատմեի կոր, Նիկողոս աղային կնոջ — Անթառամին սիրահարը, որ ետքը Փարիզ գնաց հաստատվեցավ...

— Տիկինին ցուցուցի գոհարեղենները, սա մատանին զատեց, վերջնական գինը ըսե տե առնենք,— ըսավ Ղուկաս էֆենտի, վերջ տալու համար ծերուկ ոսկերիչին խոսքերուն։

Եվ գրասեղանին դարակը բանալով գոհարեղեններու տուփերը դուրս հանեց։

Սակարկությունը երկար չտևեց, քանզի Ղուկաս էֆենտի միտքը դրած էր անպատճառ բան մը գնել Հակոբ աղայեն, անոր հետ բարեկամություն հաստատելու համար։

Դրամը վճարելե ետքը՝ ոսկերիչը նստեցուց և բավական ժամանակ տեսնվեցավ հետը, նույնիսկ զգացուց, որ գուցե մոտ օրեն աղջիկը նշաներ ու կարգեր պիտի, հետևաբար նորեն պետք պիտի ունենար գոհարեղեններ գնելու իրմե։

Այս հավանականությունը մեծ ուրախություն պատճառեց ծերուկ ոսկերիչին, որ շատ մը շնորհակալություններ հայտնելե ու կրկին ինքգինքը հանձնարարելե ետքը՝ մեկնեցավ։

ԳԼՈՒԽ Ե

Լևոն Կոկիկյան Ղալաթիայեն կառք մը վարձեց պանդոկ վերադառնալու համար։ Ղուկաս էֆենտիի հետ ունեցած տեսակցությունը, դրամօժիտի մասին եղած սակարկությունը, այդ բանակցության աննպաստ արդյունքը իր ջիղերը գրգռած էր։

— Այս մարդը զիս խաղի բերել կուզե ու պզտիկ գումարով մը աղջիկը գլուխս փաթթելու կաշխատի,— կմտածեր.— երեք հազար ոսկի դրամօժիտ ինծի պես երիտասարդի մը, որ մեկ միլիոն ֆրանք դրամագլուխ ունի և տարին քանի մը հարյուր հազար ֆրանք կվաստրկի, միթե տեսնվա՞ծ բան է... աղջիկը անշուշտ պզտիկ է, սիրուն է, կրթված է, բայց և այնպես չգտնված բան մը չէ... եթե կկարծե, որ խենթի պես սիրահարված եմ Ռոզիկին, շատ կսխալի... երեսուն տարեկան մարդ մը միամիտ պատանի մը չէ... մեռնելեն ետքը հարստությունը մեզի պիտի ձգե եղեր, այսինքն հավանորեն քսան կամ քսանհինգ տարիեն... եթե մինչև այն ատեն հարստությունը փճացնե, սնանկանա՞, ինչ պիտի ընենք։ Անպիտանը այնպիսի լեզու մը բռնեց, որ չկրցա պետք եղածին պես խոսիլ... և ան ալ կարծեց, որ զիս համոզեց և ամեն բան լմնցավ... քանի որ շատ հարուստ է, ինչպես ըսին, թող շնորհքով օժիտ տա։

Պանդոկ հասնելուն Լևոն մորը հաղորդեց իր տեսակցության արդյունքը։ Անթառամ պարզապես դայթակղեցավ։

— Երեք հազար ոսկի, երեք հազար ոսկի,— կկրկներ, գրեթե բարկացած,— չըլլա որ ընդունիս, մեծ անպատվություն է քեզի պես երիտասարդի մը համար, իմացողները ի՞նչ պիտի ըսեն... աշխարհ արար վրանիս պիտի խնդա կամ պիտի ըսեն, որ մեծ պակասություն մը ունիս տե, անոր համար ասանկ քիչ դրամով գոհ ես եղեր... չէ, չէ, չըլլալիք բան է աս։

Նույն միջոցին ծառան դալով իմաց տվավ, թե քահանա մը այցելության եկած էր իրենց և հյուրանոցը կսպասեր։

— Քանի մը օր առաջ ալ անգամ մը եկավ այս քահանան և տեսակցեցաք,— ավելցուց ծառան։

— Հասկցա, տեր Միքիասն է, շատ աղեկ, թող նստի, հիմա կուգանք։

Վայրկյան մը ետքը մայր ու տղա մտան այն սրահը, ուր թիկնաթոռի մը վրա բազմած էր քահանան ու լրագիր կկարդար։

Ձիրար բարևելե ետքը Տ. Միքիաս հարցուց կեղծավոր ժպիտով մը։

— Արդյոք ձեզ անհանգիստ կընե՞մ այս ժամուս այցելելով։

— Բնավ երբեք, բարի եկաք,— պատասխանեց երիտասարդը, սիկարեթ մը հրամցնելով հյուրին։

— Տակավին երկար կմնա՞ք հոս, թե մոտերս մեկնելու միտք ունիք։

— Հայտնի չէ, տեսնենք, պարագաներեն կախում ունի,— ըսավ Լևոն։

— Այո՛, կհասկնամ. աստուծով հաջող ընտրություն մը կընենք... կարծեմ նույնիսկ որոշում տված կամ տալու վրա եք եղեր,— շարունակեց Տ. Միքիաս, խոսքն ավելի տիկին Անթառամին ուղղելով։

— Վերջնական բան մը չկա դեռ,— պատասխանեց Լևոնի մայրը։

— Աստծով կըլլա, շիտակը ես շատ ուրախացա՝ իմանալով,

աղջիկը շատ ազնիվ, շատ ուսյալ, շատ բարեկիրթ, շատ ալ սիրուն աղջիկ մըն է, ծնողքն ալ պատվավոր, հարուստ... վերջապես շատ հարմար միություն մը պիտի ըլլա... Ղուկաս էֆենտի իմ բարեկամս է, արդեն տաներեցնին ալ ես եմ։

— Իրենցմե՞ իմացաք,— հարցուց Անթառամ։

— Չէ, տակավին իրենց չգացի... Ե՞րբ խոսք-կապ կտանիք կոր։

— Տեր հայր, դեռ վերջնական բան մը չի կա,— կրկնեց մայրը,— անանկ խոսք մը անցավ միայն։

— Ճանըմ, ըրեք լմնցուցեք, քանի որ զավակդ ամուսնացնելու դիտավորությամբ եկած ես, շատ հարմար է Ռոզիկը։ Ղուկաս էֆենտին հարուստ մարդ է, հարկավ մեծկակ դրամօժիտ մըն ալ կուտա, արդեն պետք է որ տա, իրեն պես մարդ մը ձեզ նման երիտասարդի մը առնվազն տասը հազար ոսկի տալու է և անշուշտ պիտի տա...

Տ. Միքիաս շատ լավ կճանչնար Ղուկաս էֆենտին և անոր դրամապաշտությունը և վստահ էր, որ իր ըսած գումարին նույնիսկ մեկ երրորդը տալու պիտի դժկամակեր, բայց այս խոսքերով կուզեր պղտորել Կոկիկյանենց միտքը, քանզի կզգար, որ այդ ամուսնական խորհուրդը վիժեցնելու միակ միջոցն էր դրամական դժվարություններ հարուցանելը։

— Միթե այդքան հարո՞ւստ է Կելկիթյան էֆենտին,— հարցուց տիկին Անթառամ։

— Հարկավ հարուստ է, մանավանդ որ իր աղջիկն ալ շատ կսիրե և ամեն զոհողություն հոժարակամ հանձն կառնե անոր համար... մինչև հիմա դրամօժիտի մասին խոսք չեղա՞վ։

— Եվ ոչ մեկ բանի համար խոսք եղած չէ,— պատասխանեց երիտասարդը,— ձեր տեղեկությունները տակավին շատ կանխահաս են, տեր հայր։

— Թող այնպես ըլլա.— ըսավ Տ. Միքիաս,— կաղոթեմ, որ իրականանա... ես կփափաքիմ, որ երիտասարդները մանավանդ ձեզի պես ազնիվ, գործունյա, պարկեշտ երիտասարդներ ժամ առաջ ամուսնանան, տուն տեղ կազմեն, ընտանիք կազմեն, զավակներ ունենան.. ընտանեկան կյանքի պես անուշ բան չի կա, ան է ազգի մը հիմը։

— Այնպես է, շատ իրավունք ունիս,— ըսավ տիկին Անթառամ։

— Երիտասարդ մը որ ժամանակին չամուսնանար, կփճանա, կմոլորի և օր մըն ալ բոլորովին կկորսվի... տեսեք, ինչ խելացի մտածում մը ունեցեր եք, տիկին, ձեր զավակը հոս բերելով ամուսնացնել հայ օրիորդի մը հետ, փոխանակ հարս մը առնելու, որ ոչ մեր բնության, ոչ ալ մեր բարքերուն, մեր ավանդական պարկեշտության կհարմարի... այդպիսի ամուսնությունները ճշմարիտ է աղետք մըն են մեր երիտասարդներուն համար, որոնք օտար երկիր կգտնվին և ձեր օրինակին չեն հետևիր... քանիներ գիտեմ, որոնք ֆրանսացի, անգլիացի կամ գերմանացի կիներ առած ու հետո դժբախտ եղած են, մինչդեռ հոս վարդի պես աղջիկներ տունը կմնան... տեսեք օրիորդ Ռոզիկը ինչ կրթյալ, ինչ ազնիվ ու պարկեշտ աղջիկ է, թեև մեծ գեղեցկություն մը չունի, բայց վերջապես տգեղ ալ չէ... հապա Սմսարյան Արգար էֆենտիի աղջիկը օրիորդ Հերմինե՝ հրեշտակի պես աղջիկ մը, որ հիանալի դաստիարակություն մը առած է, ֆրանսուհիի մը պես ֆրանսերեն կխոսի, սքանչելի դաշնակ կզարնե և հոն ալ մեկ հատիկն է... այսօր եթե շնորհքով, արժանավոր փեսացու մը ներկայանա, վստահ եմ, որ Արգար էֆենտի հոժարակամ տասը հազար ոսկի օժիտ կուտա, միայն թե մարդը արժելու է... ճանչցա՞ք Սմսարյան էֆենտին։

— Այո՛, Ղուկաս էֆենտիին տունը երեկույթի մը գացեր էինք, անոնք ալ եկած էին։

— Օրիորդ Հերմինեն ալ տեսա՞ք։ Ձեք գիտեր ինչ պարկեշտ, խելացի, տանտիկին աղջիկ է, ձեռքս մեծցած է և զավակիս պես կսիրեմ... Բանկալթիի Սեռոերուն վարժարանը կրթություն առած է... հիանալի ֆրանսերեն կխոսի և տաղանդավոր դաշնակահար է... անցած տարի բարեգործական նվագահանդեսի մը մասնակցեցավ, բոլոր թերթերը մեծամեծ գովեստներ ըրին... Հապա գեղեցկությունը. Բերայի մեջ ասանկ աղջիկ չգտնվիր. ի՜նչ երիտասարդներ ամուսնության խնդրեցին, բայց ծնողքը մերժեց, Արգար էֆենտի շատ խստապահանջ է և իրավունք ալ ունի, այդպիսի աղջիկ մը տասը հազար ոսկի դրամօժիտով, որևէ մեկու մը կարելի չէ տալ... տարբեր բան, եթե Լեոն էֆենտիի պես պարկեշտ, պատվավոր, գործունյա, խելացի դիրքի տեր երիտասարդ մը ըլլա։

Տ. Միքիաս տակավին խոսքը շարունակեց նույն ձևով. անուշ-

նովնալե ետքը, նյութական խնդրի մը պատճառով ոտնակոխ ընել իր տված խոստումը։ Խաբեբայություն մը, ամոթալի արարք մը չէ՞ր ասիկա։

— Չէ,— եզրակացուց երիտասարդը,— չէ, չեմ ուզեր դրամօժիտին համար որոշումես ետ դառնալ, վերջին փորձ մըն ալ կընեմ գումարը ավելցնելու համար և եթե չհաջողիմ, այն ատեն տրված դրամօժիտովը կգոհանամ...

Այս որոշումը փարատեց իր տրտմությունը, զգաց, որ Ռոզիկ դարձյալ իրեն կվերադառնար, իրեն կմնար։

Ալ հիմա՝ զվարթացած մեկնեցավ շաքարավաճառի խանութեն։

— Խոսքկապը որոշված օր կկատարենք,— կմտածեր ճամփան գացած ատեն,— ու հարսնիքն ալ անմիջապես կընենք կլմնցընենք։

Սակայն հանկարծ ճակատը մթագնեցավ և կրկին թեթև մտատանջություն մը երևցավ դեմքին վրա։

— Բայց մայրս ի՞նչպես պիտի համոզեմ, համառ կին մըն է և դյուրավ չպիտի ուզե տեղի տալ և եթե հակառակ իր հաճության ամուսնանամ, առաջին օրեն պիտի սկսի նեղել կինս, անհամաձայնություններ ստեղծել և վերջապես տան հանգիստը խռովել... այո՛ Տեր Միքիաան ալ իր Սմսարյաններու աղջկան գովեստներովը, տասը հազար ոսկի դրամօժիտի պատմությամբը բոլորովին միտքը պղտորեց։

Դեպի Թագուհի այսպես խորհրդածելով կհառաջանար, երբ մեկեն ցնցում մը զգաց և սիրտը սկսավ ուժգին բաբախել. դիմացեն՝ միևնույն մայթի վրա տիկին Թագուհի և Ռոզիկ կհառաջանային։ Մանկամարդ աղջիկը թուխ գույն շրջազգեստ մը հագած էր, գլուխը մուշտակե սիրուն գլխարկ մը դրած։ Ինքն ալ հեռվեն նշմարած էր Լևոնը և կժպտեր, շրթունքներովը ու աչքերովը։

Երիտասարդը ուղղակի գնաց դեպի երկու կիները։

— Բարև, ո՞ւր կերթաք այսպես,— ըսավ զվարթ դեմքով մը։

— Քանի մը գնումներ ունինք ընելիք,— պատասխանեց տիկին Թագուհի։

— Հապա դո՞ւք,— հարցուց Ռոզիկ,— արդյոք այցելությա՞ն մը կերթայիք։

— Այցելություն, որո՞ւ կուզեք որ այցելեմ այս քաղաքը, ուր տակավին ձեզեն զատ մարդ չեմ ճանչնար։

Հետո ավելցուց.

— Անպատակ կպտտիմ կոր, պանդոկը սիրտս նեղացավ, դուրս ելա, եթե կներեք, և եթե ձեզ անհանգիստ չեմ ըներ, ձեզի կընկերանամ, գործերնիդ լմննալե ետքը կերթանք տեղ մը կնստինք և թեյ կխմենք։

— Ամենայն հաճությամբ,— գոչեց Ռոզիկ, բոլորովին ուրախ Լևոնի այս մեծարանքեն։

Մինչ տիկին Թագուհի կըսեր.

— Մեզի համար պատիվ կհամարենք ձեր ընկերակցությունը։

Գնումները երկար չտևեցին և կես ժամ ետքը երեքը միասին մտան Քաֆե Սբլանտիտ թեյ խմելու։

Ռոզիկ շատ սիրուն, շատ հրապուրիչ էր այդ օրը իր մուշտակե փոքրիկ գլխարկովը ու Թավիշե կարճ վերարկուովը։

Լևոնի հետ հանդիպումը շատ զվարթացուցած էր զինքը ու հիմա, սեղանին շուրջ նստած, անընդհատ կշաղակրատեր ծիծաղելով։ Ժամեմ մը ավելի այսպես նստեցան, հետո տիկին Թագուհի առարկեց թե ժամանակը ուշ էր, հարկ էր տուն վերադառնալ։

Երկու երիտասարդները ակամա ոտքի ելան։

— Մինչև տուն ձեզի պիտի ընկերանամ,— հայտարարեց Լևոն։

— Շատ շնորհակալ կըլլանք։

Դուրսը սկսած էր ձյունել և բարակ ճերմակ խավ մը արդեն պատած էր փողոցին մայթերը։

Ռոզիկ, որ երիտասարդին քովն ի վեր կբալեր, մեկ անգամ գայթեցավ։

— Վար պիտի իյնաք, հարկ է, որ թևս մտնաք,— ըսավ Լևոն իր թևը ներկայացնելով, զոր աղջիկը ամենայն ուրախությամբ ընդունեց։

— Այս առտու գացի ձեր հայրիկը տեսնելու,— ըսավ հանկարծ Լևոն, որ մինչև այն ատեն չէր խոսած իր այցելության մասին։

— Իրա՞վ, ինչո՞ւ համար,— հարցուց աղջիկը զարմացած։

Ռոզիկի զարմացումը կեղծ էր, արդեն իր մորմեն իմացած էր, որ նույն առտուն Լևոն պիտի երթար տեսակցիլ հորը հետ, բայց չգիտենալ կձևացներ, իբրև անմեղ աղջիկ մը, որ բանե մը տեղեկություն չունի։

— Բայց,— ըսավ երիտասարդը,— վերջնական կարգադրության համար...

— Ի՞նչ վերջնական կարգադրություն,— հարցուց աղջիկը անմեղ չարաճճիությամբ մը։

— Երկուշաբթի օրը պիտի գանք խոսք-կապ բերելու։

Ռոզիկ չպատասխանեց, բայց Լևոն զգաց որ իր թևին տակ աղջկան բազուկը թեթև մը սրսռաց։ Այդ սարսուռը անճառելի հեշտություն մը պատճառեց երիտասարդին։

— Գո՞հ եք,— հարցուց փաղաքշոտ ձայնով մը։

Ռոզիկ Լևոնի երես նայեցավ և կարմրելով ժպտեցավ։ Այս համր խոստովանությունը չբավականացուց երիտասարդը, որ կըրկին պնդեց.

— Ըսե՛ք, խնդրեմ, գո՞հ եք...

— Այո,— մրմնջեց Ռոզիկ ալ ավելի կարմրելով։

— Եվ գիտե՞ք որ Ղուկաս էֆ. հրաման տվավ ուզած ատենս ձեզ այցելության գալու, առանց երկուշաբթիի պաշտոնական գործողության սպասելու։

— Ուրեմն հիմա մեզի հետ վեր կելլեք ու կնստինք կխոսակցինք։

— Ոչ այսօր, բայց վաղը իրիկուն անպատճառ պիտի գամ։

Երիտասարդը նույն միջոցին շատ կփափաքեր օգտվիլ Ղուկաս էֆենտիի տված արտոնութենեն — սակայն չուզեց շատ վրաձըգոց երևնալ։ Մանավանդ որ տիկին Թագուհի դեռ տեղեկություն չուներ ամուսնույն տեսակցութենեն։ Լավագույն էր, որ օր մը գոնե անցներ։

— Եվ անգամ մը, որ նշանվինք, ալ այն ատեն անմիջապես հարսանիքի պատրաստության կսկսինք,— շարունակեց Լևոն, որ բոլորովին խանդավառված էր,— քանզի պետք է, որ շուտով Փարիզ վերադառնամ... ասկե զատ փետրվար ու մարտ ամիսները Փարիզի ամենեն փայլուն եղանակն է, պետք չէ որ փախցնենք։

Ալ հասած էին դռան առջև և հարկ էր բաժնվիլ։

Տիկին Թագուհի կրկին ու կրկին շնորհակալություն հայտնեց երիտասարդին, մինչ Ռոզիկ խնդալով ըսավ.

— Ուրեմն, այսպես, վաղը իրիկուն անպատճառ կսպասենք։

Մայրը, որ աղջկան ու երիտասարդի միջև փոխանակված խոսակցությունենեն տեղեկություն չուներ, զարմացած Ռոզիկի երեսը նայեցավ, որ միշտ ծիծաղով բացատրեց.

— Լևոն էֆենտին այսօր հորս հետ տեսակցելու գացեր է և

հայրս իրեն արտոներ է ուզած ատեն գալ մեզի այցելելու, ուստի էֆենտին ալ վաղը իրիկուն պիտի գա։

— Շատ լավ, բայց միթե հոս գալու համար արտոնությա՞ն պետք կա,— պատասխանեց Թագուհին, որ արդեն կոահած էր ամեն բան։

Վերադարձին Լևոն ամենազվարթ տպավորության տակ էր. այդ հանդիպումը բոլորովին կազդուրեր, երջանկացուցեր էր զինքը և հիմա քթին տակեն եվրոպական եղանակ մը սուլելով կքալեր ձյունին տակ, որ հետզհետե կսաստկանար։ Հակառակ գեշ օդին, չուզեց պանդոկ երթալ. առանձին մնալ կուզեր իր մտքի ուրախ տրամադրության հետ։ Կվախնար որ պանդոկ երթալով՝ մորը հետ տեսակցություն մը կրկին խանգարեր իր հոգեկան դրությունը և կուզեր վերջնական հատակագիծ պատրաստելե ետքը, ներկայանալ պատերազմի դաշտը, քանզի կխորհեր թե իրավցնե հարկ պիտի ըլլար գուցե կռվիլ իր մոր հետ։

Այսպես, ուրեմն, ալ վերջնականապես որոշված էր ամուսնանալ Ռոզիկի հետ։ Եթե այդ մասին փոքրիկ վարանք մը ուներ, այն ալ անհետացած էր այս դիպվածական հանդիպումեն ի վեր։

— Այս որոշումս պիտի հայտնեմ մայրիկիս,— կխորհեր,— գալով դրամօժիտի խնդրին, անգամ մըն ալ խոսք կբանամ Ղուկաս էֆենտիին, և եթե համառի ավելի տալու, անուշ տեղը կկապեմ. գալով մորս առարկություններուն՝ անոնց ալ ճար մը կգտնեմ... չըլլա նե՝ զինքը կխաբեմ, կըսեմ, որ վեց հազար կամ յոթ հազար ոսկի կառնեմ կոր, գալու համրելու չէ յա։

Այս մտածումներով թեթևցած՝ երիտասարդը որոշեց այլևս պանդոկ վերադառնալ։ Ճամփան հարսանիքի մանրամասնություններուն վրա մտածեց, և հանկարծ գաղափար մը միտքը եկավ։ Պրսակի հանդեսեն անմիջապես ետքը ճամփորդել, մեղրալուսինը կառախումբին մեջ անցնել, առանձին, Ռոզիկի հետ գլուխ գլխի, քանի մը օր մնալ Վիեննա և անկե երթալ Փարիզ։ Մայրը կրնային հոս թողուլ. և հետո, քանի մը շաբաթեն առանձին թող գար, երբոր իրենք ալ հաստատված կըլլային տուներնին։

— Ո՞ւր մնացիր մինչև այս ատեն,— հարցուց մայրը, երբ Լևոն սենյակեն ներս մտավ։

— Գացի ասդին անդին պտտեցա, հետո տիկին Թագուհիին և օրիորդ Ռոզիկին հանդիպեցա, միասին թեյ խմեցինք։

— Բայց, զավակս, քանի որ հիմա կարելի է միտքդ փոխելու կըլլաս, պետք չէ որ ատանկ մոտիկութիւն ցույց տաս անոնց։

— Չէ, մայրիկ,— պատասխանեց Լևոն վճռաբար,— երկար բարակ խորհեցա, ես օրիորդ Կելիիթյանը պիտի առնեմ, ամենեն հարմարն է ինծի համար. գալով դրամօժիտին՝ ես վստահ եմ, որ եթե քիչ մը պնդեմ, հայրը կհավանի ավելի տալու, այսօր ես շատ թույլ խոսեցա և անոր համար ինքն ալ երեք հազար ոսկի առաջարկեց, բայց դուն պիտի տեսնաս, որ անոր կրկինն ալ պիտի տա։

— Կերևա որ աղջիկը խելքդ դարձուցեր է,— ըսավ Անթառամ, դժգոհությամբ մը, որ չկրցավ ծածկել։

Լևոն չպատասխանեց։

ԳԼՈՒԽ 2

Այդ կիրակի առտուն, երբ Ղուկաս էֆենտի՝ մուշտակապատ հաստ բալթոյի մը մեջ ծվարած վեր ելավ Աղքատախնամի գրասենյակը առաջնորդող սանդուխեն, վարի բակը, սանդուխին վրա ու վերը՝ նպաստընկալներու ահագին բազմություն մը խռնված էր։

Դեկտեմբերի 28-ն էր և Կաղանդի ու Մնունդի տոներուն առթիվ բացառիկ նվիրատվություններ պիտի ըլլային թաղին աղքատներուն։ Աղքատախնամի օժանդակ Տիկիններու խնամակալությունը խանութներե և մասնավորներե շատ մը հագուստ և ճերմակեղեն ու բրդեղեն հավաքած էր, որոնք նույն օրը պիտի բաշխվեին աղքատներուն, բացի ասկե, մեկ քանի բարեսեր հարուստներ իրենց մեջ հանգանակություն մը կատարելով այդ գումարը հանձնած էին Աղքատախնամին, որպեսզի կարոտյալներու ածուխ տրվի։

Այսպես, բացի արձանագրված նպաստընկալներե, նույն օրը հոն խռնված էին նաև առավել կամ նվազ վավերական աղքատներ, դիպվածական կարոտյալներ, առիթեն օգտվող կեղծ չքավորներ։

Երկու օրե ի վեր անընդհատ ձյուն տեղացած էր ու կշարունակեր նույն օրն ալ առտվնե ի վեր, խոշոր-խոշոր թափթփիլ, և ասիկա բարեպատեհ նախախնամական շնորհ մը համարված էր հոն դիմող թշվառներուն համար, որոնք կենթադրեին, որ եղանակին անողոք խստությունը պատճառ պիտի ըլլար Աղքատախնամի անդամներուն սիրտը կակղեցնելու և իրենց ընդունելիք նպաստին քանակը ավելցնելու։

Շատերը գիտմամբ՝ առանց շալի, առանց վերարկուի, գլխաբաց եկած էին հոն, ավելի խղճալի ու սրտաճմլիկ երևույթ մը առնելու համար։ Հեգ դերասաններ, որոնք թշվառությունը պետք էին ներկայացնել արվեստին բոլոր կատարելությամբը, որպեսզի արժանանային հանդիսականներու շնորհին։

Ղուկաս էֆենտի՝ երբ ներս մտավ, սանդուխը այնքան խճողված էր, որ հնար չի կար վեր ելլելու, առանց կոխոտելու հոն նստողները։

— Ի՞նչ խաղքություն է, ի՞նչպես վեր ելլենք, մարդ չի՞ կա հոս... Ծո՛, Մարկո՛ս, ո՞ւր ես,— գոռաց Ղուկաս էֆենտիի ձայնը։

Ամենքը զսպանակե մը մղված պես ոտքի ելան, տեղ բանալ փորձեցին, բայց և այնպես նորեն ճամփան գոց կմնար։

Մարկոս՝ դռնապանը, որ լսեր էր էֆենտիին ձայնը, երևցավ սանդուխին գլուխը։ Հասկցած էր Ղուկաս էֆենտիի բարկության շարժառիթը և ուզեց փութկոտ եռանդով մը դարմանել եղածը։ Բռունցքը բարձրացուցած՝ հարձակվեցավ սանդուխին վրա եղողներուն վրա։

— Ծո ճամփա չբանա՞ք, ծո էֆենտին է, ծո քեռ՞ էք, չե՞ք տեսնար կոր էֆենտին, ծո ձեզի չըսի՞, որ այստեղ չնստիք, հիմա էֆենտին կուգա...

Ու բռունցքները կիջնեին աջ ու ձախ, առանց սեռի ու տարիքի խտրության։ Վայրկյանե մը սանդուխը մաքրվեցավ և Ղուկաս էֆենտի կրցավ վեհափառորեն վեր ելլել, շուրջը ակնածանքով ու երկյուղածությամբ բաբեի կեցած բազմության մեջեն։

Մարկոս փութաց էֆենտիին բալթոն հանելու.

— Սա վրայի ձյունները թոթվե տե՝ մաքուր տեղ մը փռե, թող քիչ մը չորնա,— հրամայեց Ղուկաս էֆենտի։

— Գլխուս վրա, էֆենտի։

Գրասենյակին դուռը բացվեցավ և Ղուկաս էֆենտի ներս մտավ։

Դուրսը, դռան մոտ, երեք աթոռներ դրված էին. մին դռնապանինն էր, որուն վրա ոչ ոք կհամարձակեր նստիլ, մյուս երկուքին վրա կհանգչեին երկու առանձնաշնորհյալներ, որոնք հաջողած էին Մարկոսի համակրանքը շահիլ և անոր պաշտպանությունը վայելել, մին որբևայրի կին մըն էր, վեց տարեկան աղջիկ մը ծունկին վրա և փոքրիկ ծծկեր մը գիրկը, և մյուսը անկար ծերունի մը՝ որուն մեկ ոտքը չէր բռներ։ Հոն գտնվողները նախանձոտ աչքերով

մը կնայեին այս երկուքին՝ որոնք աթոռի մը վրա նստած սպասելու բախտը կվայելեին։

Բայց դռնապանը էֆենտիին բալթոյին վրայի ձյունը թոթվելե և զայն մասունք մը կրողի պատկառանքով բերելե ետքը, խոսքը այրիին ու անկար ծերունիին ուղղելով գոչեց.

— Ելեք նայիմ։

Երկուքն ալ չհասկցան այդ հրամանին իմաստը և ապուշ զարմացումով մը Մարկոսին նայեցան։

— Ելեք կըսեմ կոր, չե՞ք հասկնար Բեռ՞ ելք, էֆենտիին բալթոն չե՞ք տեսնար կոր...

Կինն ու անկարը ոտքի ելան և մեկ կողմ քաշվեցան, թեև տակավին չկրնալով ըմբռնել էֆենտիին բալթոյին և իրենց ոտքի ելլելուն միջև եղած առնչությունը։

Մարկոս թաշկինակով աթոռներուն վրայի փոշին թոթվելու ձև մը ըրավ, հետո զանոնք քով քովի բերավ և բալթոն զգուշությամբ անոնց վրա տարածեց։

Այրի կինը, իր երկու մանուկներով, պահ մը շվարած մնաց, չկրնալով կծկվելիք տեղ մը գտնել, հետո տեսնելով, որ անկյուն մը գետնին վրա պզտիկ տեղ մը կա, դեպի հոն ուղղվեցավ և երիտասարդ կնոջ մը ուղղելով խոսքը ըսավ.

— Քուրուկ, սանկ քիչ մը անդին երթայիր տե ես ալ սըտեղ սխմվեի ոտքերուս վրա կենալու կարողություն չունիմ։

Մյուսն ամենայն հաճոյականությամբ ջանաց գոհացնել խեղճ մայրը և վերջապես հաջողեցավ տեղ մը բանալ։

Այն սևազգեստ կինը, որուն այրին այդ խոսքերը կուղղեր, Սաթենիկն էր, այն, որ երկու շաբաթ առաջ ներկայացած էր Աղքատախնամին և ձեռնունայն ետ դարձած, արձանագրված չըլլալուն և իր մասին քննություններ կատարելու պետք տեսնվելու համար։

Այդ քննությունն այժմ կատարված էր։ Քանի մը օր առաջ, Աղքատախնամի օժանդակ մասնախմբեն անդամ մը, որուն պաշտոնն էր այդ տեսակ քննություններ կատարել, եկած էր իր տունը և մանրամասն հարցուփորձած էր զինքը, և կարգ մը բաներ ծանոթագրած՝ հուշատետրի մը մեջ։

Քառասունըհինգ տարեկան մարդ մըն էր եկողը, որ պարկեշտ և գթասեր մեկու մը տպավորությունը թողուցեր էր Սաթենիկի վրան, թեև իր նյութական վիճակին ու կյանքին վրա կատարված

բոլոր այդ քննությունները շատ անհաճո, շատ ստորացուցիչ եղեր էր խեղճ կնոջ համար, որ արհեստով ու կոչումով մուրացկան մը չըլլալով, երբեք չէր վարժված այդ տեսակ բաներու։

Հետո, իմացեր էր, որ մարդը միայն զինքը տեսնելով չէր բավականացած՝ այլ նաև այցելած էր մեկ քանի դրացիներու, անոնցմե ալ տեղեկություններ քաղելու համար։

Անշուշտ իր զավկին ամենատարրական պետքերը եթե հոգալու կարողություն ունենար, Սաթենիկ երբեք չպիտի դիմում ընել Աղքատախնամին, բայց երկու շաբաթե ի վեր իր դժնդակ վիճակն ալ ավելի հուսահատական դարձեր էր։ Իր փոքրիկ աղջկան՝ Սիրվարդի վիճակը թեև փոփոխություն մը չէր կրած ու չէր ծանրացած, ինչպես բժիշկը վախ հայտներ էր, բայց միշտ տկար ու նիհար կմնար, սնունդի անբավականության պատճառով։ Եթե չլինեին կարի գործերը, որոնք արդեն մեծ բան մը չէին արտադրեր, դրեթե բոլորովին անոթի պիտի մնար իր փոքրիկ Սիրվարդին հետ, եթե իր երիտասարդ վարձակալը՝ պ. Գարեգին՝ ինքնաբերաբար և գրեթե բռնի, նյութական օգնություններ չըներ։

Այժմ Սաթենիկ բավական դրամ պարտական էր երիտասարդին և ասիկա մեծ խղճի խայթ մըն էր իրեն համար, որովհետև գիտեր, թե ան իր անհրաժեշտ պետքերեն զրկվելով էր, որ այդ նյութական փոքրիկ օգնությունները կրներ իրեն։

Եթե պզտիկ ամսական մը կապեին իրեն Աղքատախնամին կողմե, գոնե հացի դրամ մը, եթե քանի մը բրդեղեն լաթեր տային Սիրվարդին համար, Սաթենիկ ինքզինք երջանիկ պիտի համարեր։ Ու ժամերե ի վեր դուրսը, ցրտին կծկտած այդ շնորհին կսպասեր անհամբեր, վերադառնալու համար իր աղջկան քով, զոր քանի մը ժամվան համար բարյացակամ դրացուհիի մը խնամքներուն հանձնած էր։

Մյուս աղքատները հաշտ աչքով չէին նայեր այդ երիտասարդ կնոջ, որ հայտնապես կերևար թե իրենցմե չէր և որ թշվառության մեջ պահած էր տակավին հանկուցիչ գեղեցկության մը հետքերը։

Բաց աստի, Սաթենիկ իրենց հետ չէր մտերմանար, չէր խոսակցեր, իր տվայտանքն ու թշվառությունը չափազանցելով չէր ցուցադրեր ամենուն, չէր փորձեր շուրջիններուն արգահատանքը հրավիրել իր վրա։ Աղքատ ու հպարտ էր միանգամայն, ինչ որ աններելի թերություն մըն էր իրենց աչքին։ Չէ՞ մի որ ժողովրդա-

կան բացառություն ալ «Աղքատ ու հպարտ» տեսակ մը անբնական, արտառոց, չըլլալիք բան մը կենթադրե։

Աղքատը իրավունք չունի հպարտ ըլլալու, պետք է գետնամած սողոսկի, խոնարհի, կքի, ցածնա ամենուն առջև, առանց արժանապատվության ամենափոքր հետք մը պահելու վրան։

Աղքատ ու հպարտ, աստված իմ, միթե կարելի է երևակայել այդպիսի անհեթեթություն մը։ Եվ սակայն, ահա այդպիսի տարօրինակ աղքատ մըն էր Սաթենիկ...

Երբ Ղուկաս էֆենտի մտեր էր Աղքատախնամի գրասենյակեն ներս, ամենքը փութացեր էին հարգանքով ոտքի ելլելու, նույնիսկ հոն գտնվող երկու խնամակալուհի տիկինները և օրիորդ մը, որ անոնց կընկերանար։

— Նստեցե՛ք, էֆենտիմ, ի՞նչ կընեք, կաղաչեմ,— ըսավ Ղուկաս էֆենտի դանդաղաբայլ դեպի իրեն սահմանված թիկնաթոռը հառաջանալով։

Ղուկաս էֆենտի գիտեր, որ մյուսները նստելու համար պիտի սպասեին, որ նախ ինք բազմեր և ասոր համար կամաց կքալեր, որպեսզի զանոնք ոտքին վրա կեցնելու հաճույքը ըմբոշխնե։

— Է, գործի սկսինք,— ըսավ գրասեղանին մեջտեղը տեղավորվելով —...սարսափելի օդ։

— Ես այդ օդը շատ կսիրեմ,— ըսավ օրիորդ Նունիկ՝ հարուստ հանձնակատարի մը սիրուն, թխագույն աղջիկը, գվարթ ու բարի։

— Ես ալ այնպես,— ավելցուց տիկին Սոֆի, քառասունը հինգնոց մսեղ ու լայնափոր կին մը, ունևոր այրի մը, որ իր գայթակղալից պատմություններովը հաճախ խոսեցնել կուտար իր վրա —... այս առտու ելած ատեն անկողնիս մեջեն խոշոր-խոշոր ձյուներու իյնալը տեսա նե՝ անանկ քեյֆ ըրի որ...

— Մեյ մըն ալ աղքատներուն հարցուցեք,— ըսավ Մարգար էֆենտի, ծանոթ փաստաբան մը, որ Աղքատախնամի անդամ էր, սակայն հազիվ տարին մեկ քանի անգամ կմասնակցեր ժողովներուն։— Տաքուկ անկողնին մեջ պառկած ձյունը դիտելը կրնար շատ հաճելի բան մը ըլլալ, բայց երբ վառելիք ու հագնելիք չունիս, այն ատեն այսպիսի օդ մը պարզապես պատուհաս մըն է, և կարելի չէ հանգիստ սրտով վայելել ձյունը, երբ միտք բերենք ավուր հացի կարոտ հազարավոր չքավորները։

— Այդ մասին իմ խիղճս հանգիստ է,— պատասխանեց տիկին Սոֆի, իր դեմ ուղղված համարելով փաստաբանին խոսքերը,— ես կրնամ հանգիստ սրտով ձյունը վայելել, քանի որ ձեռքես եկածը կընեմ աղքատներուն համար։

— Իմ ալ խիղճս հանդարտ է,— մեջ մտավ Նունիկ,— տեսեք ասանկ օդով օրս զոհեցի հոս գալով, փոխանակ տաքուկ սենյակս նստած՝ դաշնակ զարնելու։

— Կեցցեն ուրեմն մեր պատվական խնամակալուհիները, որոնք այսքան անձնվիրաբար կաշխատեին աղքատներու համար,— ըսավ տարեց մարդ մը, ձեռքերը թեթևորեն իրար զարնելով։

— Կեցցեն նաև Աղքատախնամին անդամները, որոնք նույնպես այնքան կհոգնին թաղին չքավորներուն համար,— ավելցուց տիկին Սոֆի։

— Ամենքս ալ կեցցենք, քանի որ ձեռքերնես եկածը չենք խնայեր,— եզրակացուց Ղուկաս էֆենտի։

Այս փոխադարձ գովասանքներեն ետքը՝ վերջապես նպաստներու բաշխումը սկսավ։

Երկու կիները և օրիորդ Նունիկ բրդեղեն ու ֆանելայե հագուստները, որոնք խոշոր ծրարներու մեջ դրված էին, մեջտեղ հանեցին ու խոշոր սեղանի մը վրա դիզեցին։ Հետո մեկիկ-մեկիկ նպաստընկալները ներս կանչվեցան և իրենց հանած աղմուկին, պոռչտուքին ու լացուկոծին համեմատությամբ նվերներ ընդունեցին։

Ղուկաս էֆենտի իր թիկնաթոռին մեջ փռված, անձնդյուր, սիկարեթը բերանը. կդիտեր այս տողանցությունը, ատեն-ատեն չափազանց աղմկարարները սաստելով բարձրագոչ։

— Է, երկան ըրիք, դուրս կորսվեցեք նայիմ, աս ի՞նչ անամոթություն է... շատ խոսիս նե՝ հիշ բան մը չենք իտար հա... էտեպսիզություն պետք չէ,— և այլն։

Ասիկա կըներ պարզապես զգացնելու համար իր իշխանությունը։ Իրողությունն այն էր, որ այդ գործողություններուն միջոցին ինք՝ մտովի՝ բոլորովին այլուր փոխադրված էր։ Հետևյալ օրը, երկուշաբթի, վերջապես պիտի կատարվեր աղջկան խոսք-կապը։ Տղան ալ բոլորովին «ապան էրած էր», ինչպես ուրախությամբ կըսեր Ղուկաս էֆենտի։

Թեև դրամօժիտի մասին անգամ մըն ալ խոսք բացեր էր երիտասարդը, բայց ինք որ կացությունը կշռած էր, բացարձակապես մերժած էր երեք հազար ոսկիեն ավելի վճարելու։ Նույնիսկ այդ գումարը այժմ չափազանց կնկատեր։

— Գուցե երկու հազար ոսկիով ալ գործը կլմնցուներինք,— կխորհեր. և միտքեն ի վար միջոց մը կփնտռեր խաղի մը բերելու համար իր փեսացուն։

Խոսք-կապի առթիվ նույն առտուն կրկին իրենց տունը հյուր եկած էր քենին, տիկին Երանիկ Ամիսյանը, իր փոքրիկ աղջկանը՝ Արաքսիի հետ, որ տասներկու տարեկան գիրուկ, սևաչվի և թուխ աղջիկ մըն էր։

Ղուկաս էֆենտի քանի մը տարիե ի վեր ծածուկ հարաբերություններ հաստատած էր քենիին հետ, որ ինչպես գիտենք, հաճախ իրենց տունը հյուր մնալու կուգար։ Այս բանը գրեթե բոնի պարտադրած էր կնոջ, իբրև փոխարինություն մը այն պաշտպանության և դրամական օգնության, որ ըրած էր սնանկացյալ ամուսնույն։

— Խալթ մըն էր, իմ սայիես կապրիք կոր,— ըսած էր Երանիկի, անոր ընդդիմություններուն հաղթելու համար։

Եվ խեղճ կինը ստիպվեր էր տեղի տալու, նախ տեսակ մը խղճի խայթով ու պժգանքով, հետո, ալ սորված, գրեթե անտարբերությամբ, անձնամատույց կիներու պես, որոնք ապրելու համար ստիպված են իրենց մարմինը վաճառելու։

Այդ առտու, երբ Ղուկաս էֆենտին տեսած էր քենին, հաճելի զգացում մը, տարփոտ ցանկություն մը զգացած էր ու հիմա շվայտ հեշտանքով մը կխորհեր իրեն սպասող հաճույքին վրա, քանզի միտքը դրած էր նույն իրիկունն իսկ օգուտ քաղել անոր ներկայությենեն։ Բոլոր այս հայրատ մտածումները կգրգռեին իր երևակայությունը և ամբողջ ջղային դրությունը։ Աճապարանք մը ուներ ժամ առաջ տուն դառնալու։

— Դեռ շատ մարդ կա՞, դեռ որքա՞ն մնաց,— կհարցներ ատեն-ատեն դռնապան Մարկոսին, անհամբեր կերպարանքով մը։

— Դուրսը լեցուն են,— կպատասխաներ մարդը անդրդվելիորեն։

Եվ կշարունակեր տողանցությունը, պոռչտուկները, լացուկոծը, բողոքները, օրհնություններու և փառաբանություններու հետ խառնված։

— Ողջ ըլլաք, շատ ապրիք, աստված մեկ օրերնիդ հազար ընե, տերտ խասավեր չցուցնե, ևն։

Բրդեղեն ու ֆանելա զգեստներն ալ սպառեցան, երկու տիկինները և օրիորդը գործերնին ավարտած նկատելով՝ մեկնեցան, կեսօր էր ու տունը ճաշի կսպասեին։ Դուրսը հազիվ մեկ քանի հոգի մնացեր էին։

— Ամենքը մեկեն ներս կանչեցեք,— գոչեց Ղուկաս էֆենտի, ժամացույցին նայելով։

Ջորս կին և երկու ծերունի մարդ ներս մտան ու եկան շարվեցան գրասեղանին առջև։ Սաթենիկն ալ իրենց մեջն էր, երկչոտ, ամաչկոտ, ետևոք կեցած՝ լուռ ու նեղված։

— Սրվոնց ալ գործը տեսեք, ճամփեցեք,— հրամայեց էֆենտին։

Բայց անոնք սովորական նպաստով գոհանալու երևույթ չունեին։

— Մեր լաթերը ո՞ւր է... ասանկ օրով շրպլա՞խ պիտի ձգեք մեզի, ամենուն ալ տվիք, մեր հանցանքը ի՞նչ է, մենք հայ չե՞նք, քրիստոնյա չե՞նք... փայտ չունինք, բեռմյուր չունինք, ուտելիք չունինք...

— Ինչ ընենք, չմնաց, ուշ եկաք,— ըսավ Աղքատախնամի անդամներեն մեկը —...ամենքն ալ տրվեցավ, դուք ալ զատկին կառնեք, քիչ մը համբերեցեք...

Եվ ընդհանուր դժգոհության մրմունջներու մեջ մեկնեցան մեյմեկ դրամական նվեր քսանական օխա ածուխի համար տոմսակ մը առնելով։

Ալ միմիայն Սաթենիկը մնացած էր դռան քով։

— Դուն ի՞նչ կուզես,— գոռաց Ղուկաս էֆենտի։

Սաթենիկի մասին քննություն կատարող անձը ծռեցավ էֆենտիին ականջին ու բաներ մը փսփսաց.

— Ահավասիկ, հոս, ձեր առջև, գրասեղանին վրա է,— պատասխանեց մարդը,— ծալված թուղթ մը ցույց տալով։

Էֆենտին առավ և սկսավ կարդալ։

Տեղեկագիրը կհաստատեր թե Սաթենիկ իր, ինչպես նաև իր դրացիներու վկայությամբ, ոևէ ապրուստի միջոց չուներ, թե ձեռագործի աշխատությունները բացարձակապես անբավական էին զինքն ու փոքրիկ աղջիկը, որ նոր հիվանդություն ելած էր, ապրեցնելու։ Բայց կհավելուր, մութ կետ մը կար, որ լուսաբանության կարոտ էր և որու մասին գայթակղական զրույցներ կշրջեին դրացիներու մեջ, Սաթենիկ իր տան մեջ իբրև վարձակալ ուներ Գարեգին անունով երիտասարդ մը, որ կվճարեր տան վարձքը, ըստ խոստովանության նույնիսկ Սաթենիկի, դրացիները կկասկածեին,

թե այդ երիտասարդը հավանորեն Սաթենիկի հոմանին էր, մանավանդ որ շատ հոգ կտաներ տունվորներուն և նույնիսկ աղջկան հիվանդության ատեն բժիշկ բերած, դեղերը շինել տված և ամեն կերպով հոգածու գտնված էր, ինչ որ պարզ և անտարբեր վարձակալի մը պարտականությունները չէին։ Գրացիները նկատած էին նաև, որ Սաթենիկ միշտ կխուսափէր դրացի էրիկմարդոց հետ ոևէ հարաբերություն ունենալե, կամ հետերնին խոսելե, ինչ որ ցույց կուտար, թե, երիտասարդը շատ նախանձոտ նկարագիր մը ունենալու էր։

Տեղեկագիրը կեզրակացներ, թե որոշումը տալե առաջ լավ կըլլար, որ Ֆերիգյուղի եկեղեցիի քահանային կողմե ալ կնոջ բարոյականին մասին քննություն մը կատարվեր և անոր վկայաթուղթը լսվեր։

Երբ Ղուկաս էֆենտի տեղեկագրին ընթերցումը ավարտեց, խոսքը Սաթենիկին ուղղելով՝ ըսավ.

— Հոս եկուր նայինք։

Սաթենիկ կամաց-կամաց հառաջացավ, հետզհետե ավելի կարմրած, ավելի ամոթահար։

— Ի՞նչ կուզես կոր հիմա,— հարցուց էֆենտին։

— Տասնըհինգ օր առաջ եկած էի աղջկանս հիվանդության առթիվ, որ ամսական նպաստ մը շնորհվի ինծի, դոնե քիչ մը ատենվան համար, և դուք ալ ըսիք, որ նախ պետք է քննություն կատարվի իմ մասին և թե հարկ էր, որ երկու շաբաթ ետքը կրկին գայի... կարծես քննություն կատարվեցավ, ուստի այսօր եկա, որպեսզի նպաստը առնեմ։

— Այո, քննությունը կատարված է... կրնաս երթալ։

— Շնորհակալ եմ, բայց նպա՞ստը — կմկմաց Սաթենիկ, որ չէր հասկցած Ղուկաս էֆենտիի խոսքերուն իմաստը։

— Նպաստ չի կա։

— Ինչո՞ւ համար,— կակազեց հեգ թշվառուհին։

— Դուն նպաստ քու ձեռքովդ ճարեր ես,— շարունակեց էֆենտին չար ժպիտով մը —... սիրականիդ տվածը չի՞ բավեր կոր։

Սաթենիկ այլայլած՝ շլմորած՝ գույնը հանկարծ մեղրամոմի սպիտակություն մը առած, կմկմաց.

— Ո՞ր սիրականս...

— Վա՞յ, ըսել է քանի մը հատ կա, հա՞... կեցցես,— գոչեց Ղուկաս էֆենտի խնգալով,— տեղեկագրին մեջի սիրականդ, գոբեգին է, ի՞նչ փեզվենկ է... ազգին փարաները քեզի պես բոզերո՞ւն պիտի տանք... դուրս կորսվե, նայիմ, խալթախ քեզի...

Սաթենիկ, լեզուն բռնված, առանց կարենալ բառ մը արտաբերելու, ինքզինք սենյակեն դուրս նետեց և սանդուխեն վար գահավիժեցավ։

Ամենքը մեկնելու համար ոտքի ելած էին։

— Բայց, էֆենտի,— առաջարկեց Աղքատախնամի քաստաբան անդամը, որ քիչ մը առաջ տեղեկագիրը աչքե անցուցած էր,— որոշ ամբաստանություն մը չի կա, եղածները պարզ ենթադրություններ, դրացիներու բամբասանքներ են...

— Դեռ ի՞նչ ըլլա,— գոչեց Ղուկաս էֆենտի բարկացած,— երիտասարդ այրի կնիկ մը, որ ամուրի երիտասարդի մը հետ առանձին կնստի ու այդ երիտասարդը տանը վարձքը կվճարե... արդեն չտեսա՞ք, բերանը կըրցա՞վ բանալ, խոսք մը կըրցա՞վ ընել, ձգեց փախավ անամոթը, վայ անբարոյական, վայ, մեյ մըն ալ եկեր երես ունի տե փարա կուզե կոր, կնայի՞ք մի խալթախը...

Փաստաբանը, որ դյուրավ տեղի տվող չէր, կրկին փորձեց արդարացնել հեգ կինը.

— Տունը երիտասարդ վարձակալ մը ունենալով անպատճառ անոր սիրուհին եղած չըլլար... և հետո պարզ ենթադրությամբ մը իրավունք չունինք զինքը նախատելու, կրնանք նպաստ չի տալ, առանց պատիվին դպչելու։

— Ի՞նչ ընեինք, էֆենտիս,— պոռաց Ղուկաս էֆենտի,— աղաչեի՞նք, պաղատեի՞նք, ոտքը ձե՞ռքը իյնայինք, գլխերնուս վրա՞ նստեցնեինք... ըրածս քիչ էր անգամ, այդ տեսակ անպատիվ կնիկները բոլիսին տալու է, անառականոցը բանտարկելու է, որ երթան սորվին... չտեսա՞ք ինչ լկտած կերպարանք մը ուներ, աղաչել, պաղատիլ չկա, խոնարհիլ չի կա... «քննությունը ըրիք, նպաստ տվեք»... վայ անբարոյական... գրելու է Ֆերի Գյուղի թաղական խորհուրդին, որ այդ բոզը հանել տա այդ մահալլեեն... ազգերնուս մեջ մեկ ընտանեկան պատիվ մը ունինք, անիկա գոնե մաքուր պահենք։

Հասած էին եկեղեցիին դռան առջև, Ղուկաս էֆենտի մնաք բարով ըսավ. կառք նստավ և մեկնեցավ։

— Սիրտը բարի մարդ է, բայց բարոյականի մասին խստապահանջ է,— ըսավ Աղքատախնամի անդամներեն մեկը՝ էֆենտիին ակնարկելով։

— Ընտանիք, պատիվ, բարոյական՝ ուրիշ բան չի ճանչնար,— ավելցուց ուրիշ մը։

— Անանկ ըլլալու է, էֆենտիմ, եթե անոր պես մարդիկ չըլլան, ո՞ւր կերթա վերջերնիս։

Եվ փողոցին ծայրը Աղքատախնամի անդամները իրարմե զատվեցան։

Ջյունը կշարունակեր տեղալ։

Սաթենիկ հետիոտն կքալեր Բանկալթիի շիտակ ճամփեն, ընկճված, ջախջախված։ Ղուկաս էֆենտիի անլուր նախատինքները տակավին կայրեին իր սիրտը։ Լալու, արցունքներու մեջ անէանալու փափաք մը կզգար ներսիդին, բայց գերմարդկային ճիգով մը կզսպեր ինքզինքը։ Երբեք չէր կրնար երևակայել, որ իր վրա կատարված քննություն մը այդպիսի արդյունքի մը պիտի հանգեր։ Իր վարձակալը՝ Գարեգին՝ մեռած ամուսնույն մտերիմ բարեկամը, միմիայն եղբայրական համակրանք և խնամք ցույց տված էր իր ու աղջկանը՝ Սիրվարդին հանդեպ։ Ինքն ալ փոխադարձաբար, իբրև իր մեկ մոտիկ ազգականը նկատած էր զայն միշտ, առանց երբեք մտքեն տարփական մտածում մը անցնելու։ Եվ ահա հիմա իբրև սիրահար ու սիրուհի կամբաստանվեին... Ասիկա հրեշային բան մը, ահավոր անարդարություն մը կթվեր իրեն։ Ալ գրեթե մոռցած էր ձեռնունայն դառնալը, իր նյութական սարսափելի կացությունը, թշվառությունը, որ իրեն կսպասեր քիչ մը անդին։

— Իցիվ թե չերթայի, իցիվ թե չենթարկվեի այդ խոսքերուն, այդ նախատինքներուն,— կխորհեր ինքնիրեն։

Վերջապես հասավ Ֆերի Գյուղ, իրենց բնակած թաղը։ Գնաց գտավ աղջիկը, որ դրացիի մը պահպանության հանձնած էր և որ անհամբեր իրեն կսպասեր։

— Պարե պան մը տվի՞ն,— հարցուց դրացուհին, հոգատար ձայնով մը։

— Չէ, Շազիկ հանըմ, բան մըն ալ չտվին, պարապ տեղը մինչև հոն գացի ժամերով սպասեցի։

— Քա, վո՜ւյ, մեղքիս, ինչո՞ւ համար... ածեմին չածեմին կուտան կոր, քեզի պես կենճին ինչո՞ւ չիտան... մեղա, սա ի՞նչ անաստվածություն է։

Սաթենիկ չուզեց պատմել եղածը, ամոթ կըզգար ըսելու թե ինչո՞ւ մերժած էին նպաստը։

— Քա, հեչ խորաթա մը չըրի՞ր, պան մը չըսի՞ր... քիչ մը

պոռայիր կանչեիր... մինչև որ էտեպսիզություն չըներս, անոնք փարա չեն իտար... Խուզիի պես ծանդ քաշես նստիս նե՝ հելպեթ չեն իտար։ Քա, վա՞խ, զավալլը, ասանկ օրով, փարասըզ ձգել... գետինն անցնին, սա ինչ վիճտանսըզ մարդիկ են եղեր... տալըս կըսե նե հախ ունի, մարդկությունը աշխարհքես վերցեր է... քա, վախ, վախ, վախ... էլ բեմ գեշ եղա, քուրուկ, աս ինչ պան է գլխուդ եկավ...

— Եկ տուն երթանք, աղջիկս,— ըսավ, Սաթենիկ, Սիրվարդի ձեռքը բռնելով, որպեսզի վերջ տա այս անախորժ խոսակցության։

Շազիկ հանըմ, որ այսպես կողբար Սաթենիկի վիճակին վրա, այն կինն էր, որ Աղքատախնամի կողմեն եկող քննիչին հաղորդեր էր դրացիներու կասկածները Գարեգինի և Սաթենիկի սիրային հարաբերություններու մասին, կասկածներ, որոնք միայն իր երևակայության մեջ ծնունդ առած էին և որ սակայն իբրև հանրային կարծիք կներկայացներ։

Երբ Սաթենիկ իր աղջկան, փոքրիկ Սիրվարդի հետ վերադարձավ տուն, Գարեգին հոն էր։ Երիտասարդը, երբ այսպես օրը գեշ ըլլար կիրակի օրերը, իր սենյակը նստած՝ ընթերցանությամբ ժամանակ կանցներ։ Սրճարանի կյանքը հաճելի չէր իրեն, մանավանդ որ, մենասեր ըլլալով, բարեկամական հարաբերություններ չէր հաստատած իրեն տարեկից երիտասարդներու հետ, ուստի կնախընտրեր կիրակիի ազատ ժամերը օգտակարապես գործածել, զանոնք ինքնազարգացման զոհելով։

Պատմական գիրքի մը ընթերցումին մեջ թաղված էր, երբ որ լսեց տան դռան բացվելը և Սաթենիկի ներս մտնելը։ Գիտեր, որ Աղքատախնամեն կուգար և կուզեր իր դիմումին արդյունքը իմանալ, քանզի խեղճ կնոջ թշվառ վիճակը, որուն ականատես վկան էր ամեն ժամ, զինքը սաստիկ կտագնապեցներ, մանավանդ որ իր ալ նյութական միջոցները չէին ներեր ուզածին պես օգնելու իր բարեկամին այրիին ու աղջկանը։ Մեծ հույս ուներ նույն օրվան Սաթենիկի դիմումին վրա։ Անկարելի կթվեր իրեն, որ Աղքատախնամը չփութար օգնության հասնելու այսքան իրապես թշվառ կնոջ մը, որուն վիճակին վրա ալ նախապես քննություն մը կատարված էր։

Ուստի երբ Սաթենիկ վեր ելավ, Գարեգին անմիջապես գիրքը բազմոցին վրա դրավ և սենյակին դուռը բանալով, ըսավ.

— Դո՞ւք եք, տիկին, կհուսամ, որ ձեր խնդիրը հաջող կերպով կարգադրվեցավ... գոնե կարևոր նպաստ մը որոշեցի՞ն։

Սաթենիկ վարանում մը ունեցավ. ինչպե՞ս կարելի էր Աղքատախնամի մեջ անցածը պատմել երիտասարդին, բայց ստելն ալ անկարելի էր, ուստի վճռաբար ըսավ.

— Նպաստը մերժեցին, բան մըն ալ չտվին, պարապ տեղը գացի մինչև հոն։

— Մերժեցի՞ն,— գոչեց Գարեգին զարմացած —... ինչո՞ւ համար։

— Քննության տեղեկագիրը աննպաստ է եղեր ինձ,— մրմնջաց Սաթենիկ, որուն ձայնը հուզումեն կդողար։

— Բայց անկարելի բան է ձեր ըսածը, ինչպե՞ս կարելի է որ ձեր վիճակը ունեցող մեկու մը աննպաստ տեղեկագիր տրվի։

— Որովհետև... սիրահար ունիմ եղեր։

Առավնե ի վեր զսպված հուզումն էր, որ ալ կպայթեր։ Սաթենիկ ինկավ աթոռի վրա և սկսավ դանդաղորեն լալ, երեսը երկու ձեռքերուն մեջ պահած։ Մանկուհին, որ քովն ի վեր կանգնած էր, մոր արցունքը տեսնելով, ինքն ալ սկսավ լալ։

Գարեգին չանաց հանդարտեցնել խեղճ կինը, ստիպեց որ երեսը լվա, լացը դադարեցնե, մանավանդ որ հեգ փոքրիկ Սիրվարդը, առանց գիտնալու պատճառը, ինքն ալ մորը փաթթված բարձրաձայն կարտասվեր։

Սաթենիկ վերջապես հանդարտվեցավ և մանրամասնորեն պատմեց Աղքատախնամի գրասենյակին մեջ պատահածը։

Գարեգին երբ իմացավ, որ Սաթենիկ իր պատճառով կզրկվեր նպաստե և միանգամայն անունը կաղարտեր, շատ հուզվեցավ, մանավանդ չէր կրնար ընդունիլ, որ այս թշվառ կինը այդպիսի նախատինքներու ենթարկվեր բոլորովին անմեղ տեղը, այս իրողությունը զինքը կկատղեցներ։

— Պետք է երթամ այդ Ղուկաս էֆենտիին հետ տեսնվիմ, ըսած խոսքերը ետ առնել տամ,— կկրկներ սենյակին մեջ բարկությամբ վեր վար քալելով։

Բայց Սաթենիկ զգացուց, թե երիտասարդին կողմե այդպիսի արարք մը ոչ թե օգուտ մը չպիտի ունենար, այլ ավելի փաստ մը պիտի համարվեր եղած ամբաստանության ու պատճառ պիտի ըլլար, որ իր անունը ավելի ևս աղարտի։ Լավագույն էր լռություն պահել, ծածկվիլ, մոռացվիլ։

Երբ Գարեգին վերադարձավ իր սենյակը, չկրցավ ընթերցումը

շարունակել։ Սաթենիկի պատմությունը տակնուվրա ըրած էր զինքը ու այժմ անհոգի խղճահարության մը մատնված էր։

— Ուրեմն այսպես, խեղճ կինը իմ պատճառով կզրկվեր նպաստե մը, իր ապրուստի միակ հույսեն, ինչպե՞ս կրնամ խղճի հանդարտությամբ հանդուրժել այսպիսի բանի մը... ձգել ելլել տունեն և սակայն այն ատեն խեղճ կինը բոլորովին անոթ ու անպաշտպան պիտի մնա. հիմա գոնե ինե ստացած դրամովը տան վարձքը կվճարե և հոգ մը պակաս կունենա, բայց ստի վերջապես միշտ քովը մեկը ունի, որ նեղ պարագաներուն գոնե փոքրիկ օգնություն մը կրնա ընել... չէ, թողուլ երթալը պարզապես վատություն պիտի ըլլա, դասալքություն մը... ընդհակառակը պետք է մնալ և կռվիլ, պետք է այդ մարդոց հասկցնել, թե անլուր զրպարտություն մըն է այդ ըսած խոսքերը, թե իրավունք չունին պարզ ենթադրություններու վրա հենվելով, այսպես անոթության մատնելու որբևայրի մը ու իր փոքրիկ աղջիկը։

Գարեգին հետզհետե այդ գաղափարին կկառչեր. պետք էր երթալ գտնել Աղքատախնամի անդամները և ջանալ զանոնց համոզելու, թե իրենց տեղեկաբերը սխալած էր և թե Սաթենիկ պարկեշտ կին մըն էր ու ամեն կերպով արժանի օգնության։

— Վաղը իսկ պետք է որ երթամ և համոզեմ զիրենք, ասով միայն խիղճս պիտի կրնա հանգստանալ... իսկ եթե ինծի հետ ալ նախատական լեզվով խոսին, այն ատեն գիտեմ ընելիքս։

Ու այս որոշումը տալեն ետքը, երիտասարդը հանդարտած շարունակեց իր ընթերցումը։

Սաթենիկ իր խուցը քաշված՝ կջանար կուրծքին վրա տաքցնել Սիրվարդը, որ ցրտեն կդողար։

Նույն իրիկունը մեծ ուրախություն կար Ղուկաս էֆենտի Կելկիթյանի բնակարանը։

Հետևյալ օր խոսք-կապ պիտի կատարվեր վերջապես, լուրը արդեն գրեթե կես պաշտոնապես հաղորդված էր բարեկամներու և շատերը եկած էին մտերմորեն իրենց խնդակցությունը հայտնելու։

Այս խնամությունը մեծ բախտ մը կհամարվեր Ռոզիկի համար և բոլոր բարձր դասու աղջիկներուն նախանձը կգրգռեր։ Ամբողջ Թերայի մեջ օրվան խոսակցության նյութ էր այդ նշանտուքը։

— Ինտոր այս Բելեփիրը խափմիշ որին — կըսեին ծնողքները, Կելկիթյանները ակնարկելով։

Եվ սակայն կըսեին, թե երիտասարդին մայրը շատ համամիտ

չէր այս միության, թե անոր կամքին հակառակ կկատարվեր, տըղուն ստիպումներուն վրա և թե այս առթիվ բավական բուռն վեճեր տեղի ունեցած էին մոր ու զավակին միջև։

Իրավ ալ վերջին օրերս Լևոն միշտ առանձին այցելած էր Ղուկաս էֆենտիի տունը, տիկին Անթառամի բացակայությունը վերագրելով անհանգստության մը։ Տիկին Թագուհի և աղջիկը առջի օր գացեր էին պանդոկ հիվանդտեսի, սակայն հիվանդը դուրս ելած էր, ինչ որ ցույց կուտար, թե այդ անհանգստությունը պարզ պատրվակ մըն է։ Տիկին Անթառամի այս ընթացքը անուշադիր չէր անցեր Ղուկաս էֆենտիի և կնոջ աչքերեն և միակ սև կետն էր, որ կմնար հորիզոնին վրա։

Արդարև տիկին Անթառամ բավական բուռն ընդդիմություն մը ցույց տվեր էր զավակին, մասնավորաբար դրդված Տ. Միքիաս քահանայեն, որ կրկին եկած էր պանդոկ, և հոն առանձին գտնելով Լևոնի մայրը, այս անգամ բացե ի բաց ջանացեր էր համոզելու, որ փոխանակ Ռոզիկը հարս առնելու, Հերմինեի հետ ամուսնացնե տղան։

Տ. Միքիաս քահանան հիմա առանձին, իր հաշվույն չէր գործեր, այլ գացած էր միջնորդությունը առաջարկած էր Սմսարյանենց և անոնք ալ սիրով ընդունած էին և մեծկակ գումար մըն ալ խոստացած՝ եթե հաջողեր Լևոնը իրենց աղջկան հետ նշանելու։

Եվ սակայն Լևոն անդրդվելի մնացեր էր և նույնիսկ կովեր էր մոր հետ, որ այժմ բոլորովին հակառակ դարձած էր Կելկիթյաններուն, որոնց մասին շատ մը աննպաստ բաներ պատմած էր Տ. Միքիաս քահանան։

ԳԼՈՒԽ Է

Եվ սակայն, ինչպես ըսինք, երկուշաբթի օր խոսք-կապ կատարվեցավ։ Տիկին Անթառամ ակամա՝ ոսկի օղակը անցուց Ռոզիկի մատը և անոր երեսը համբուրեց։

Տ. Միքիաս հայրը, որուն մեքենայությունները հեռվեն հեռու իմացած էին Կելկիթյանները, չհրավիրեցին այս հանդիսավոր արարողության, ինչ որ ալ ավելի կատաղեցուց քինախնդիր քահանային։

Ղուկաս էֆենտի շատ ուրախ էր։ Այս նշանտուքը անձնական հաղթանակ մը կհամարեր իրեն համար և անով կփառավորվեր։

— Վերջապես հաջողեցա երեք հազար ոսկիով խնդիրը լմնցընել,— կխորհեր։

Իսկ երկու նշանածներուն դեմքին վրա երջանկություն կճառագայթեր։

Միայն պզտիկ տխրություն մը ունեին։ Լևոն 1--2 օրեն անակնկալ ստիպված էր Փարիզ մեկնիլ խիստ կարևոր անակնկալ գործի մը համար, որու մասին առջի օր հեռագիր մը ստացած էր։ Բացակայությունը հազիվ երկու շաբաթ պիտի տևեր։ Տիկին Անթառամ Պոլիս պիտի մնար, իր զավակին վերադարձին սպասելով։

Այս մեկնումը ահա միակ սև ամպն էր երկու սիրահարներու ջինջ երկնքին վրա և խոսք-կապի օրը գրեթե բոլոր խոսակցությունը անոր շուրջ դարձավ։

— Թող գործը ըլլա տե՝ վնաս չունի, ինչ ընենք, երկու շաբաթը շուտով կանցնի,-- ըսավ Ղուկաս էֆենտի, որ գիտեր թե իր փեսացուն փայլուն գործ մը լմնցնելու համար կերթար Փարիզ։

— Մենք ալ հոս օժիտի պատրաստություններ տեսնելով ժամանակ կանցնենք,— ավելցուց տիկին Թագուհի,-- այնպես չէ՞, տիկին Անթառամ։

Տիկին Անթառամ գլխով հավանության նշան մը ըրավ։

Լևոն արտոնություն խնդրեց Ղուկաս էֆենտիեն, որպեսզի բացակայության միջոցին թղթակցի իր նշանածի հետ։

— Ուզածիդ չափ գրե,— արտոնեց Ղուկաս էֆենտի։

Երկու օր ետքը Լևոն մեկնեցավ Փարիզ։ Ղուկաս էֆենտի և Ռոզիկ իրեն ընկերացան մինչև Սիրքեճիի կայարանը։

Բաժանումը շատ սրտահույզ եղավ, Ռոզիկ գրեթե կուլար մինչև ետքը, մինչև Լևոն գողտր բառերով կջանար զայն մխիթարել։

Խոստացավ որ ճամփեն, ամեն կայարան հասնելուն իրեն քառթ մը պիտի ուղղեր, ցույց տալու համար թե միշտ իր սիրելի Ռոզիկի վրա կմտածեր։ Ղուկաս էֆենտի պատշաճ դատեր էր մեկ կողմ քաշվիլ, որպեսզի երիտասարդները կարենան ազատորեն վայելել իրենց վերջին վայրկյանները, նույնիսկ թույլ տված էր, որ թե թեի հեռանան կայարանի քարափին վրա, հեռու հետաքրքիր ու պրպտող ակնարկներե։

Եվ երկու նշանածները փութացեր էին օգուտ քաղել հայրական այս թույլտվությունեն։

Բայց վերջապես հնչեր էր մեկնումի սուլումը, ճամփորդները

կվազեին վակոններեն ներս մտնելու համար և Լևոն վերջին անգամ մըն ալ համբուրելով Ռոզիկի այտերը, ցատքեր էր իր վակոնը։

Շոգեկառքը վերջին սուլում մըն ալ արձակելով, կամաց-կամաց ճամփա ելած էր։

— Յտեսություն, Ռոզիկ։

— Յտեսություն, Լևոն։

Եվ աղջիկը իր արցունքները կսրբեր, մինչ երիտասարդը, հուզված, բայց ժպտերես՝ ձեռքով համբույրներ կղրկեր։

Վայրկյան մը ետքը կառախումբը անհետ եղեր էր, մինչ Ռոզիկ մտածկոտ՝ աչքը հառած կմնար երկաթուղիի գիծերուն։

— Քալե երթանք, աղջիկս,— ըսավ Ղուկաս էֆենտի։

Հետո անոր տրտում տխուր կերպարանքը տեսնելով, ուզեց մխիթարել, իր գիտցած կերպովը։

— Աղջիկս, ինչո՞ւ կտխրիս, հոն չպիտի մնա յա, երկու շաբաթեն պիտի գա, աղվոր շահ մը ընելու միտք ունի, ինծի պատմեց գործը, եթե հաջողցնե՝ քանի մը հազար ոսկի պիտի շահի, գե՞շ է, դուն ալ կօգտվիս, քանի մը ոսկիի ավելի նվեր կառնես... փոխանակ տխրելու՝ պետք է որ ուրախ ըլլաս։

Աղջիկը չպատասխանեց. հորը մխիթարանքը ավելի նյութականի վրա հիմնված, դինքը կվիրավորեր։ Հիմակ սկսած էր ճշմարտապես սիրել այդ երիտասարդը, որուն հետ նախ արվեստակյալ պչրանքներ ունեցած էր միայն. և իրեն ծանր կթվեր, որ իր սերը այսպես նյութական հաշիվներու առարկա ըլլար։

Բայց Ղուկաս էֆենտի չնկատեց աղջկան վրա իր խոսքերուն թողած ազդեցությունը և ուզեց ավելի առաջ տանել մխիթարանքը և իր տեսությունները։

Աղջիկս,— շարունակեց,— ես քեզ ավելի լուրջ և խելացի կկարծեի, նշանածիդ քով անշուշտ ինքզինքդ տխուր ցույց տալու էիր, քանի որ կբաժնվի կոր քենե, ատոր ըսելիք չկա, բայց հիմա որ գնաց, հեռացավ ալ պետք չունիս այդ տխրությունը շարունակելու։

— Բայց ի՞նչ ընեմ, երբ որ ճշմարտապես տխուր եմ,— կմկըմացաղջիկը, վիրավորված հոր խոսքերեն։

— Վայ, ըսե որ իրավցնե կսիրես կոր այդ մյուսյու Լևոնը,— ըսավ Ղուկաս էֆենտին խնդալով։

Ռոզիկ կրկին չպատասխանեց։

— Անշուշտ պետք է սիրել այսպիսի գործունյա և հարուստ

երիտասարդ մը, որ ինքն իր գլուխը կրցած է այսպիսի գիրքի մը տիրանալ,— շարունակեց հայրը,— ես ալ կսիրեմ այս տեսակ գործի մարդերը, բայց ամեն բանի մեջ հաշիվ պետք է, մինչև իսկ սիրո մեջ... առանց հաշվի սերը մարդուս գլուխը փորձանք կբերե։

— Բայց ինչո՞ւ այս խոսքերը կընես,— հարցուց խեղճ Ռոզիկ, որ հոր այդ տարօրինակ մխիթարանքներեն ավելի կվշտակրեր ու աչքերը արցունքով կլեցվեին։

— Այս խոսքերը կընեմ քու երջանկությանդ համար, աղջիկս— ըսավ, անողոք հայրը,— եթե, այսպես, իրավցնե զգացումներուդ գերի ըլլաս, ամիս մը առաջ չճանչած մեկ մարդու մեկնումին համար տխրիս ու լաս, այն ատեն ինքզինքիդ տերը չես կրնար ըլլալ... տես, մինչև հիմա գործը հաջողցուցինք, մինչև այս կետին հասցուցինք, որովհետև մենք կրցանք անոնց քիթեն բռնել... որովհետև հաշիվով՝ վարպետությամբ գործ տեսանք... դեռ ամեն բան չմնցավ, մինչև պսակը լմննալը վարպետությունը ձեռքե ձգելու չէ, այս գործի մեջ տակավին շատ բաներ կրնան դառնալ, դուն փորձություն չունիս, խելքդ չի հասնիր, բայց ես հեռուն կտեսնեմ... իրավ է որ տղայեն վախ չի կա, բայց անդին ճատը մայրը կա, որուն խելքը դարձուցեր են... չտեսա՞ր խոսք-կապ օրվան կերպարանքը, երեսեն գենիր՝ կվազեր կոր, կարծես մեռելի տուն եկեր էր... Տ. Միքիաս օլանախն ալ ամեն աղոտություն կընե կոր ետեվես։ Ասոնց ամենքը աչքիդ առջև բեր ու խոհեմությամբ վարվե...

— Բայց ի՞նչ ըրած ունիմ,— հարցուց Ռոզիկ այդ խոսքերեն վրդովված։

— Դեռ ի՞նչ պիտի ընես, իրավցնե սիրել սկսեր ես այդ մարդը... կեցիր նայինք, մեյ մը սա հարսնիքը ըլլա, անկե ետքը ուզածիդ չափ սիրե, բայց մինչև այս ատեն նայե որ ինքզինքդ ազատ պահես, վարպետությամբ, խոհեմությամբ վարվիս... սիրո մեջ խոհեմություն չմտնար, ասիկա աղեկ միտքդ դիր, աղջիկս, ես քու աղեկությունդ կուզեմ, ասոր համար այսպես կխոսիմ... դուն լուրջ աղջիկ մըն էիր մինչև հիմա, նորեն անանկ մնացիր... դուն նայե, որ ան քեզ սիրե, անոր քիթեն բռնես և ոչ թե դուն քիթեդ բռնվիս... այս աշխարհքը խաբեբայությամբ կդառնա։

Ռոզիկ, լռին, առանց պատասխանելու, մտիկ ըրավ իր հոր իմաստուն խրատներուն, սակայն առանց կարենալ համոզվելու։ Միտքն ու սիրտը կթռչեին հեռուն, ուրացող կառախումբին ետևեն։

Եվ երբ կառքով վերադարձան Բերա, ճամփան գրեթե խոսք

մը չփոխանակեց հորը հետ, այնքան անոր նյութապաշտ խրատնե-
րը հուզեր էին իր սիրահար հոգին։

Սակայն Ղուկաս էֆենտի անկեղծորեն վրդովված կթվեր. տի-
կին Անթառամի ակնհայտնի դժգոհությունը, գրեթե թշնամական
ընթացքը իրեն կասկածներ կուտային։ Կրնար ըլլալ, որ բաներ մը
դառնար, և նշանտուքը, որ տակավին պարզ խոսք-կապի մը վրա
հիմնված էր՝ խզվեր, քայքայվեր։

— Արդյոք մեյ մը սա Տ. Միքիասը կանչե՞մ, հետը խոսի՞մ,
բերանը ոսկոր մը նետե՞մ,— կխորհեր կառքին մեջ։

Բայց այդ բանը իր արժանապատվության համար վիրավո-
րանք մը կհամարեր։ Մինթե այդ տերտերե՞ն պիտի վախնար, եթե
մինչև հիմա իր մեքենայությունները չկրցավ հաջողցնել, ասկե
ետքը ալ բնավ բան մը չէր կրնար ընել։ Լևոն ապահովաբար ականջ
չպիտի կախեր անոր խոսքերուն։ Գալով մորը, հայտնի էր, որ տը-
ղան անոր ազդեցությանը ենթարկված չէր, քանի որ խոսք-կապը
հայտնապես անոր կամքին հակառակ տեղի ունեցած էր։

Երբ հայր ու աղջիկ տուն հասան, սպասավորը նամակ մը
հանձնեց Ղուկաս էֆենտիին, ըսելով որ երիտասարդ մը բերած էր
զայն և ժամե մը պիտի գար պատասխանը առնելու։

Մութն արդեն կոխած էր և լամպարները վառված, Ղուկաս
էֆենտի սրահ մտնելով, լույսին մոտ գնաց, նամակին պահարանը
պատռեց, բացավ և ստորագրության նայեցավ, աչքերը շատ զորա-
վոր չէին և գիրն ալ հատուկ չէր, ուստի չկրնալով կարդալ, աղջ-
կանը օգնության դիմեց.

— Աղջիկս, ուրկե՞ է սա նամակը, եկուր նայե, ստորագրու-
թյունը չեմ կրնար կարդալ։

Ռոզիկ մոտեցավ, թուղթը առավ և կարդաց.

— Գարեգին Հայկյան։

— Գարեգին Հայկյան,— ըսավ Ղուկաս էֆենտի, զարմացա-
կան ձևով մը,— ո՞վ է... ատանկ մարդ չեմ ճանչնար կոր։

— Կուզե՞ս որ նամակը կարդամ,— հարցուց Ռոզիկ։

— Կարդա տեսնեմ։

«Աղնվաշուք տեր,— կըսեր նամակը,— ներեցեք, որ առանց
ձեզ անձնապես ճանչնալու համարձակիմ գրել ձեզ։ Խնդիրն այն-
քան կենսական է, որ անշուշտ ներողամիտ պիտի ըլլաք ինձ»։

— Փարա պիտի ուզե, ի՞նչ պիտի ընե,— ըսավ Ղուկաս էֆեն-

տի, նամակին քաղաքավարական սկզբնավորությենեն կասկածե-
լով։

«Երկու օր առաջ, այս կիրակի, Բերայի Աղքատախնամին ներ-
կայացած է այրի տիկին Սաթենիկ Ամասյան, ընդունելու համար
նպաստ մը, որ խոստացված էր տալ, իրեն վիճակին ու բարոյա-
կանին մասին կատարվելիք քննությենե ետքը։ Արդ, փոխանակ այդ
նյութական նպաստին, որուն ամեն կերպով արժանի էր հիշյալ
թշվառ այրին, ձեր կողմեն կարգ մը անարգանքներու ենթարկված
է...»։

— Հասկցա, սա խալթախին համար է... վայ Լուսկսիզ, դեռ
երես ունի տե՝ նամակ գրել կուտա կոր ինձի...

Ռոզիկ ընթերցումը շարունակեց։

«...Ձեր կողմեն կարգ մը անարգանքներու ենթարկված է,
որոնք ծանրապես վիրավորած են իր արժանապատվությունը»։

— Վայ, վայ, վայ, բոզերն ալ արժանապատվություն ունին
եղեր հա՞,— գոչեց էֆենտին, որ երթալով կկատղեր նամակագրին
դեմ։

«Մասնավորաբար,— շարունակեց աղջիկը,— իր վարձակա-
լին համար ձեր ըրած, ձրի զրպարտությունը, թե՝ իր սիրահարն է,
և այլն, ոչ թե միայն տիկին Սաթենիկի՝ այլ նաև իմ ալ պատվույս
արատ կբերե, քանի որ ակնարկված վարձակալը նույնիսկ ես եմ»։

— Վա՜յ անամոթ, սա ի՞նչ աներես մարդիկ են եղեր... թող
առնելիքնին ըլլա... էյ կարդա՛ տեսնենք։

«Արդ, ազնվաշուք տեր, կենթադրեմ, որ դուք անգիտակցաբար
խաբված եք և այդ նախատինքները ըրեր եք սխալ ու սուտ տեղե-
կություններու վրա հիմնվելով, քանզի պատրաստ եմ պատվույս
վրա երդում ընելու, որ հիշյալ տիկնոջ հետ, որ մեռած բարեկամի
մը այրի է ու նվիրական ինձի համար, ոևէ մեղապարտ հարաբե-
րություն չեմ ունեցած, այլ իբրև պարզ վարձակալ մը բնակած եմ
իր տունը, հետևաբար ինձի համար խղճի խայթ մը պիտի ըլլա,
եթե իմ պատճառով խեղճ կինը զրկվի նպաստե ու միևնույն ատեն
անունն ալ աղարտի։ Ուստի դիմում կընեմ ձեր արդարասիրության,
որպեսզի բարեհաճիք գոհացում տալ հեգ կնոջ, թե իր անարգված
պատիվը վերահաստատելով և թե զինքը չի զրկելով նպաստե մը,
որուն գուցե ձեր օգնած աղքատներեն ամենեն ավելի արժանի է։

Ուզելով այս մասին բերանացի բացատրություններ ալ տալ
ձեր ազնվության, իրիկունը կրկին պիտի հանդիպիմ ձեր բնակա-

բանը, վստահ ըլլալով, որ զիս ընդունելու պատիվը պիտի ընեք. մեկ քանի վայրկյանի համար։

Մնամ ձեր ազնվության ամենախոնարհ ծառա»։

— Թող գա, թող գա, որ պոյը ցուցունեմ,— մռլտաց Ղուկաս էֆենտի, երբ աղջիկը նամակին ընթերցումը ավարտեց։

— Բայց գուցե կինը իրավցնե անմեղ է,— դիտել տվավ Ռոզիկ,— նամակին մեջ անկեղծության շեշտ մը կա կարծես։

— Քու խելքդ չհասնիր, անանկ կեղծավոր խոսքերե խաբվելու չէ, ես ապրանքս կճանչնամ, մարդուն երեսը մեյ մը նայիմ նե՝ ուրկե գալ ուր երթալը կհասկնամ... վա՛յ անբարոյականներ, վա՛յ։

Քիչ մը ետքը ծառան եկավ և ըսավ, որ նամակը բերող երիտասարդը եկած է պատասխան առնելու։

— Վեր ղրկե տեսնիմ,— գոչեց Ղուկաս էֆենտի, հետո աղջկանը դառնալով ըսավ, որ զիրենք առանձին թողու։

Ռոզիկ դուրս ելավ սենյակեն։

Քանի մը րոպե ետքը Գարեգին ներս մտավ։ Երիտասարդը բարեգուշակ նշան մը համարած էր էֆենտիին քով ընդունվիլը և կենթադրեր, որ գրած նամակը արդեն իր արդյունքը տված էր, ուստի համարձակ կերպով մոտեցավ էֆենտիին, որ թիկնաթոռի մեջ ընկղմած էր, նամակը ձեռքը բռնած։

— Ներեցեք, որ կհամարձակիմ ձեզ անհանգիստ ընել,— ըսավ Գարեգին, խոնարհ բարև մը տալով։

Ղուկաս էֆենտի ձեռքի ու գլխի անորոշ շարժում մը ըրավ։

— Անշուշտ կարդացիք ձեր ազնվությանն ուղղած նամակս։

— Հա, կարդացի, դո՞ւն ես Գարեգինը...

— Այո, Գարեգին Հայկյան։

— Էյ, ի՞նչ կուզես կոր։

— Բայց նամակին մեջ բացատրած էի խնդիրը,— կակազեց երիտասարդը, որ այդ պաղ ու անպատկառ ընդունելությունեն սկսած էր շփոթիլ։

Ղուկաս էֆենտի ոտքի ելավ հանկարծ ու գոչեց.

— Մենք տասը փարա չենք կրնալ տալ ոչ քեզի, ոչ ալ այդ կնկան... գացեք, որ քարը մեծ է նե՝ գլխնիդ անոր զարկեք... հասկցա՞ր։

— Բայց ինչո՞ւ այդքան խիստ անիրավությամբ կվարվիք կոր կարոտ ու անպաշտպան այրիի մը հետ,— ըսավ Գարեգին, որ միտքը դրած էր դյուրավ տեղի չտալու։

— Անիրավությո՞ւն մի,— գոչեց Ղուկաս էֆենտի,— ի՞նչպես կրնանք նպաստ տալ կնկան մը, որ էրիկ մարդ մը առած նստած է, ո՞ւր տեսնված է ասանկ բան։

— Բայց, էֆենտի, ձեզի բացատրեցի թե...

— Այդ բացատրությունը դուն ֆեսիս հասկցուր,— հառաջ տարավ էֆենտին,— երիտասարդ որբևայրի, աղվոր կին մը, որ տունը քեզի պես փաղախ տելիֆանը մը ունի, միս մինակ, տան մեջ և սուրբի պես կապրի... ըսել է, որ դուն քարե շինված ես, ան ալ փայտ է, հա՞... ընտանեկան պատիվ ունեցող ո՞ր պարկեշտ կնիկը ատանկ բան կընդունե... ճոշ ինչ կուզե թող ընե, մերին խառնվելիք բանը չէ, անիկա որբևայրի, դուն ամուրի, ուզածնեբուդ պես ապրեցեք, միայն թե Աղքատախնամի դուռը պալքա մի կախեք...

— Բայց, Ղուկաս էֆենտի,— գոչեց երիտասարդը,— կերդնում, որ այդ կինը պարկեշտ է, կերդնում, որ ոչէ հարաբերություն չունինք միասին, բոլոր այդ խոսքերը զրպարտություն են, հավատացեք իոսքիս։

— Երկար խոսք չեմ ուզեր, բոլոր դրացիները ըսեր են, որ այդ կնիկը իր firաեին առած նստած է, ձայն բազմաց՝ ձայն աստուծո, կըսեն, առանց կրակի մուխ չըլլար, հարկավ բան մը կա, որ մահալլեի մեջ ամենուն բերանը ինկեր եք... դուն այդ կնոջ բարիք մը ընել կուզե՞ս, ժամ մը առաջ տունեն ձգե ելիր... պատվավոր երիտասարդ մը ասանկ վարվելու է։

Գարեգինին համբերությունը ալ հատած էր, հակառակ իր վրա բրած ճիգին ու պաղարյունությունը չկորանցնելու մտադրության, ինք ալ ձայնը բարձրացուց։

— Չէ, Ղուկաս էֆենտի,— գոչեց,— պատվավոր երիտասարդ մը այդպես չի վարվիր, այդ ձեր ըսածը վատ մարդու գործ է... ես չեմ կրնար աղտոտ բամբասանքներու զոհել թշվառ կին մը, որուն վարած պարկեշտ ու զրկված կյանքին ականատես վկան եմ ամեն օր. չէ, չպիտի հեռանամ տունեն, ընդհակառակը պիտի մնամ ու պիտի պաշտպանեմ զինքը և ցույց տամ, որ շատ անխիղճ կերպով կվարվիք կոր դուք և եթե անբարոյական մը կա գործին մեջ, ոչ թե տիկին Սաթենիկն է, այլ զինքը դատապարտողը...

Ղուկաս էֆենտի այս խոսքերեն կրակ կտրած, վազեց էլեկտրական զանգակին քով ու դայն հնչեցուց ուժգին. հետո երիտասարդին դառնալով պոռաց.

— Ծո, դուն ո՞վ կըլլաս կոր, որ իմ տանս մեջ ասանկ խոսքեր կընես ինծի... սըվոր նայեցեք, ճեպը տասը փարա չունի, անոթուկընես ինծի... Ղուկաս էֆենտի Կելկիթյանի պես մեկուն, դուրս կորսվե նայիմ...

Նույն միջոցին ծառան, որ զանգակին ձայնը առած էր, ներս մտավ։

— Դուրս հանեցեք սա սրիկան,— գոչեց Ղուկաս էֆենտի ծառային՝ Գարեգինը ցույց տալով։

— Թո՛ւ, գարշելի արարած,— պոռաց երիտասարդը էֆենտիին երեսին ու դուրս ելավ սենյակեն։

Ղուկաս էֆենտիի ոտքը ձեռքը բարկութենեն կդողար ու չէր կրնար կանոնավորապես շնչել։ Սկսավ բավական ժամանակ ժուռ գալ սենյակին մեջ, հետո քանի մը սիկարեթ ծխեց վրա վրայի և երբ քիչ մը հանդարտեցավ, քթին տակեն մռմռաց.

— Վաղը կտեսնվիմ այդ սրիկային հետ...

Հետևյալ առտուն, երբ իր գրասենյակը հասավ, առաջին գործը եղավ իր գրագիր պ. Արշակը կանչել։

— Գարեգին Հայկյան անուն մեկը կճանչնա՞ս,— հարցուց։

Պ. Արշակ, գրիչը ականջին անցուցած, պահ մը մտածեց, ճակատը շփեց և ի վերջո հարցուց.

— Ի՞նչ գործ կընե եղեր։

— Չեմ գիտեր, վաճառականի գրագի՛ր է. ինչ է։

— Այդ անունով մարդ չեմ ճանչնար կոր,— եզրակացուց գրագիրը հուսահատ դեմքով մը. որովհետև տակավին նոր մտած ըլլալուն՝ Ղուկաս էֆենտիի քով իրեն համար ձախողանք մը կնկատեր այս գարագային օգտակար չկրնար ըլլալը։

— Ի՞նչ գործ ունիս ձեռքդ,— հարցուց Ղուկաս էֆենտի։

— Քանի մը նամակներ կան գրելիք...

— Չգե, այդ նամակները կեսօրեն ետքն ալ կրնաս գրել, ու շուտով գնա ասդին անդին, հարցուր փնտռե և աղեկ մը հասկցիր թե ո՞վ է այդ Գարեգին Հայկյանը և որո՞ւ քով կաշխատի... անունը միտքեդ չելլե։ Գարեգին Հայկյան, Ֆերիգեղ կնստի... քեզ նայիմ, պարապ ետ չդառնաս։

— Շատ աղեկ, հիմա կերթամ կհասկնամ,— պատասխանեց գրագիրը և դուրս ելավ էֆենտիին քովեն։

Երկու ժամ ետքը պ. Արշակ զվարթ ու հաղթական վերադարձավ։ Լիակատար տեղեկություններ բաղած էր Գարեգինի մասին։

— Ի՞նչ լուր նայինք,— գոչեց Ղուկաս էֆենտին, իր գրագրին ներս մտնալը տեսնելով։

— Հասկցա այդ Գարեգին Հայկյանին ով ըլլալը. չորս տարին ի վեր Աբրահամյան Քերովբե էֆենտիին քով գրագիր է եղեր, վեց ոսկի ամսականով...

— Սա մեր Աբրահամ էֆենտիի՞ն քով,— հարցուց Ղուկաս էֆենտի։

— Պաղչե Գաբուն, կերպասեղենի վաճառական Աբրահամյան էֆենտին։

— Հասկցա, հասկցա... աղեկ, ուրեմն ետքը գնա գտիր այդ Աբրահամյան էֆենտին, իմ կողմես հատուկ բարև ըրե և ըսե, որ անպատճառ գա զիս տեսնե։

Գրագիրը դուրս ելավ և Ղուկաս էֆենտի սկսավ գոհունակ դեմքով մը ձեռքերը շփշփել։ Քերովբե էֆենտին ոչ թե իրեն ծանոթ բարեկամն էր, այլև երախտավորյալը. դեռ մոտերս եկած էր իրմե մեծկակ գումար մը փոխ առնելու՝ տոկոսով գումար մը, որ պայմանաժամին չպիտի կրնար վճարել։

Ղուկաս էֆենտի փողոց ելավ ճաշարան երթալու համար։ Հունվարի մեկն էր և ահագին բազմություն մը կար դուրսը և խանութներուն մեջ։ Էֆենտին այդ իրարանցումը տեսնելով հիշեց, թե կաղանդ էր. ժպիտ մը գծագրվեցավ իր դեմքին վրա ու միտքն ի վար մտածեց։

— Ատ մյուսյու Գարեգինը ու տիկին Սաթենիկը աղվոր նվեր մը պիտի ընդունին ինե։

Երեկ իրիկվընե ի վեր ատելությունը ու բարկությունը երիտասարդին ու հեգ կնոջ դեմ ոչ թե միայն չէր մեղմացած՝ այլ ավելի սաստկացած էր։ Քանի միտքը կբերեր Գարեգինի «թու, գարշելի արարած», խոսքերը, արյունը գլուխը կցատկեր։

Ինք — Ղուկաս էֆենտի մը, այդպես նախատվեր տասը փարա չունեցող գրագրի կտորե մը... ասիկա անհավատալի, անըմբռնելի, անկարելի բան մըն էր։ Եվ սակայն եղեր էր այդ բանը, ականջին միշտ կշառաչեին այդ բառերը մտրակի պես։

— Աղվոր կաղանդչեք մը պիտի առնեն,— կմտմտար քթին տակեն, իր վրեժխնդրության խորհուրդով սիրտը պաղըշկելով։

Ճաշեն հետո, գործի համար քանի մը տեղեր հանդիպեցավ և հետո վերադարձավ։

Քերովբե էֆենտի արդեն եկած՝ իրեն կըսպասեր։

— Ինչպե՞ս եք, աղեկ եք, Քերովբե էֆենտի, բարի եք եկեր, արդյոք շատո՞նց է ինծի կըսպասեք։

— Չէ, էֆենտի, հիմա եկա, պ. Արշակը լուր ձգեր էր խանութը ես ալ դուրս ելած էի, վերադարձիս երբոր ըսին զիս ուզեր եք, վազեցի եկա... խե՞ր է։

Ղուկաս էֆենտի անմիջապես չպատասխանեց, գրպանեն արծաթյա տուփը հանեց և սիկարեթ մը հրամցուց հյուրին և հետո ըսավ.

— Քերովբե էֆենտի, գիտես, որ ես քեզ կսիրեմ և պետք եղած ատենն ալ ձեռքես եկած ծառայությունը չեմ զլացած, ինչպես որ ասկե ետքն ալ չպիտի զլանամ։

— Այնպես է, ես ալ ատոր համար շատ շնորհակալ և երախտապարտ եմ,— պատասխանեց Քերովբե էֆենտի, առանց հասկնալու թե իր խոսակիցը ինչ եզրակացության պիտի հանգեր։

— Ասոր փոխարեն,— հառաջ տարավ Ղուկաս էֆենտի,— ես ալ անշուշտ իրավունք ունիմ ձենե ծառայություն մը խնդրելու, եթե առիթը ներկայանա։

— Ինծի համար բարեբախտություն մը պիտի ըլլա, եթե կարենամ իմ կարգիս ձեզի օգտակար ըլլալ։

— Օ, խնդրելիքս մեծ բան մը չէ...

— Հրաման ըրեք, էֆենտիս, խնդիրքը ինչ է... եթե ձեռքես գալիք բան մըն է, գլխուս վրա, անմիջապես կատարեմ։

— Ձեր քով գրագիր մը ունիք եղեր Գարեգին անունով...

— Այո, Գարեգին Հայկյան, չորս տարի է, քովս է։

— Գո՞հ եք իրմե։

— Շատ գոհ, պարկեշտ, գործունյա, խելացի երիտասարդ մըն է։

— Եթե այդպես է, ուրեմն չպիտի կըրնաք ուզած ծառայությունս ընել ինծի... ատոր մասին ալ չխոսինք։

— Բայց խնդիրը ի՞նչ է, էֆենտիս։

— Խնդիրը այն է, որ այդ սրիկա Գարեգինը անբարոյականի մեկն է...

— Ի՞նչ կըսեք, Ղուկաս էֆենտի,— գոչեց մյուսը շվարած։

— Եվ այդ անբարոյական սրիկան համարձակեցավ մինչև տունս գալ և զիս նախատել և եթե ծառաները չհասնեին, գուցե վրաս ալ հարձակեր...

— Տեր աստված, տեր աստված, այս ինչե՞ր կլսեմ։

— Հիմա քեզի կարճ խոսք մը ըսե՞մ, Քերովբե էֆենտի, կամ այդ սրիկային անմիջապես ճամփա կուտաս և կամ բարև աստծու բարինը կկտրենք իրարու հետ։

Քերովբե էֆենտի շփոթված, այլայլած՝ պահ մը անխոս՝ Ղուկաս էֆենտիին երեսը նայեցավ։ Անոր հետ խզվելու հեռանկարը զինքը կսահմռկեր. ոչ թե միայն մեծագումար պարտք մը ուներ Ղուկաս էֆենտիի վճարելիք, այլ հրապարակին վրա, իր գործունեության մեջ հաճախ անոր երաշխավորությանը դիմելու պետք ուներ։ Ուստի վարանում կարելի չէր. պետք էր զոհել Գարեգինը։

— Ղուկաս էֆենտի, եթե այդ է ձեր խնդիրը, գլխուս վրա, հիմա երթալուս պես հաշիվը տեսնեմ, ճամփեմ... վայ, թշվառական, վրայեն պարկեշտ, խելոքիկ մեկը կերևար...

— Տես, ես քեզի չեմ ստիպեր, որ ճամփես... եթե կուզես պահե, բայց անկե ետքը ալ Ղուկաս էֆենտին մոռցիր։

— Աստված չընե,— գոչեց խեղճ մարդը,— չէ թե Գարեգինը, այլ անոր պես հարյուր հատ Գարեգին ալ ըլլա, քու մեկ եղունգիդ հետ չեմ փոխեր, ատ ի՞նչ խոսք է, Ղուկաս էֆենտի, դուն իմ բարեբարս կսեպվիս...

Ղուկաս էֆենտի տեսավ, որ հաղթանակը տարած էր, ձայնը մեղմացուց և դեմքը զվարթացավ։

— Միայն թե,— ըսավ,— ճամփած ատենդ չըսես, որ ինծի համար է, չեմ ուզեր, որ միտքը դնե, թե իրեն պես սրիկաներուն կարևորություն կուտամ։ Ասկե զատ կելլա գեշություն մը կընե. ատ տեսակ անբարոյական մարդիկներեն ամեն բան կսպասվի։

— Անհոգ եղիք, Ղուկաս էֆենտի, անհոգ եղիք...

Հետո խոսեցան գործերու վրա և Ղուկաս էֆենտի ըսավ, որ եթե դրամի պետք ունենա, կրկին կրնա իրեն դիմել. գալով հին պարտքին, եթե պայմանաժամին չկրնա վճարել, վճարումը երկարաձգելու համար նոր մուրհակ մը կշինեն։ Քերովբե էֆենտի՝ հուզված, իր խորին երախտագիտությունը հայտնեց և մեկնեցավ։

Դուրս ելած միջոցին Ղուկաս էֆենտի ըսավ.

— Վաղը ատ սրիկայի ճամփվիլը պետք է որ իմանամ։

— Հիմա երթալուս պես առաջին գործս այդ պիտի ըլլա։

Արդարև, Քերովբե էֆենտի, երբ խանութ հասավ, անմիջապես կանչեց Գարեգինը, 6 ոսկի ամսականը տվավ, 3 ոսկի ալ կաղանդի առթիվ բացառիկ նվեր մը ըրավ և ըսավ.

— Տղաս, խամերդ այսչափ է եղեր, ալ վաղվընե ուրիշ գործի մը նայե։

Երիտասարդը ափ ի բերան մնաց։

— Բայց հանցանքս ի՞նչ է, էֆենտի,— կակազեց։

— Հանցանք մը չունիս, միայն թե խնայողության համար ասկետքը ես պիտի տեսնեմ քու գործդ... ի՞նչ ընենք, գործերը գեշ կերթան կոր, իտարե ընելու է... երթաս բարով։ աստված հաջողություն տա։

Եվ Քերովբե էֆենտի կարճ կապելու համար խոսքը, ոտքի ելավ գրասենյակին մեջ և խանութեն դեպի դուրս ուղղվեցավ։ Իրեն համար շատ դժնդակ էր երիտասարդին հետ ոևէ բացատրություն ունենալ այդ միջոցին։

Բայց երիտասարդը չէր կրնար առանց որոշ բացատրության մը թողուլ, հեռանալ, այսպես հանցավոր կամ զեղծարար պաշտոնյայի մը պես։ Չորս տարիե ի վեր կծառայեր այդ վաճառատան մեջ և օր մը դժգոհության տեղի չէր տված։ Միշտ գովեստներու արժանացած էր և ամսականը, որ նախ երկու ոսկի էր միայն, ամեն տարի ավելցուցած էին ու այս տարի ալ, հույս ուներ հավելումի մը։ Կաղանդի օրով այս հանկարծական վտարումը բոլորովին անբացատրելի էր։ Իզուր Գարեգին մտքին մեջ կորոներ ամենափոքր թերություն մը, սխալ մը, հանցանք մը, որ գործած ըլլար այս օրերը. ոչինչ, ոչինչ։ Ուրեմն տարբեր պատճառ մը կար, գուցե զրպարտություն մը, որուն զոհ կերթար։

— Կաղաչեմ, էֆենտի, աստուծո սիրույն, վայրկյան մը կենցք։

Քերովբե էֆենտի ստիպվեցավ կենալ դժգոհ դեմքով մը։

— Գիտեմ, որ մինչ այսօր գործիս մեջ թերություն մը չեմ գործած, միշտ հավատարմությամբ ծառայած եմ և միշտ գոհ թողած ձեզ, հետևաբար իրավունք ունիմ հիմա գոնե գիտնալու թե ի՞նչ բանի համար կեմփվիմ։

— Ըսի արդեն, խնայողական պատճառներով։

— Ոչ, այդ չէ ճշմարտությունը, կաղաչեմ, որ բուն պատճառը ըսեք,— պնդեց Գարեգին։

Վաճառականը ինքն ալ հուզված էր։ Խղճի խայթ մը կզգար այսպես ճամփու դնելով պաշտոնյա մը, որմե ոևէ դժգոհություն չուներ։

— Տղաս,— ըսավ Գարեգին,— քենե միշտ գոհ եմ և կամքիս հակառակ քեզ կճամփեմ կոր, կհասկնա՞ս, չուզելով, բռնի...

— Բայց ինչպե՞ս,— գոչեց երիտասարդը, այս առեղծվածային խոսքերեն բոլորովին այլայլված։

— Ուրիշ բացատրություն չեմ կրնար տալ,— ավելցուց Քերովբե էֆենտի,— միայն սաչափը ըսեմ, որ եթե քեզ անմիջապես ճամփու չդնեմ, ինքզինքս կկործանեմ, գործս կխանգարեմ...

Եվ այս խոսքերն արտասանելով վաճառականը գրեթե վազելով հեռացավ Գարեգինին քովեն, որ եղած տեղը գամվեր մնացեր էր։

Հիմա կըմբռներ իրողությունը։ Հարվածը դուրսեն կուգար, բայց որմե՞։ Ղուկաս էֆենտին բնավ մտքեն չէր անցուցեր. չէր կրնար երևակայել. որ այդպիսի ցած վրեժխնդրություն մը կարելի է գործել։

Գարեգին քիչ մըն ալ մնաց այդպես շվարուն, մտախոհ՝ հետո գլխիկոր անցավ խանութեն և ուղղվեցավ փողոց։

Դռանը քով կգտնվեր արկղակալը, իր բարձր աթոռին վրա թառած. էֆենտին արդեն դուրս ելած էր, չուզելով նոր բացատրություն մ'ունենալ երիտասարդին հետ։ Գարեգին երբ արկղին առջևեն կանցներ, գլուխը կախ, արկղակալին ձայնը լսեց, որ կըսեր.

— Ի՞նչ է այս, Գարեգին, կանուխ կանուխ կփախչե՞ս կոր... հիմա էֆենտին գա քեզ փնտռե նե՝ ի՞նչ ընենք։

— Ան գիտե երթալս,— պատասխանեց երիտասարդը, հետո խորհեցավ թե գուցե կրնար արկղակալեն բան մը հասկնալ և մոտեցավ իրեն։

Արկղակալը, պ. Գրիգոր, Քերովբե էֆենտիի կնոջ ազգականներեն էր, շատախոս երիտասարդ մը, վայելուչ և ունայնամիտ։

— Ո՞ւր գնաց էֆենտին,— հարցուց Գարեգին՝ խոսակցության սկսելու համար։

— Չեմ գիտեր, կերևա որ մեկը տեսնելու գնաց։

— Այսօր խանութը կեցած չունի,— շարունակեց Գարեգին,— ցերեկեն վերջն ալ հոս չէր։

— Այո, որովհետև ցերեկին լուր եկավ, որ Ղուկաս էֆենտին զինքը կուզեր տեսնել անպատճառ։

Ղուկաս էֆենտիի անունը, թեթև սարսուռ մը պատճառեց երիտասարդին։

— Ղուկաս էֆենտի Կելկիթյա՞նը,— հարցուց։

— Այո, գրագիրը եկավ և լուր թողուց, որ էֆենտին անպատճառ իրենց գրասենյակը երթա... հա, աղեկ միտքս ինկավ, գրագիրը քու խոսքդ ըրավ։

— Ի՞մ խոսքս...

— Այո, հարցուց, թե քանի՞ տարի է, որ հոս կաշխատիս, թե գործդ ի՞նչ է, թե ո՞ւր կնստիս, և այլն։

Գարեգին գույնը նետեց. կսկսեր գուշակել թե հարվածը ուրկե կուգար։

— Ղուկաս էֆենտի և Քերովբե էֆենտի իրարու հետ շա՞տ մտերիմ են,— հարցուց։

— Հարկավ,— պատասխանեց արկղակալը,— Ղուկաս էֆենտի մեր պանքեռն է, երբոր գրամի պետք ունենանք՝ իրեն կդիմենք. իր քասան մեր տրամագրության տակն է և քասային մեջն ալ լեպլեպի չի կա՝ այլ կարմրուկ ոսկիներ։

Եվ Գրիգոր սկսավ ապուշ-ապուշ խնդալ, իբր թե սրամիտ խոսք մը ըսած ըլլար։

Բայց Գարեգին իրեն պետք եղածը իմացեր էր և բարևելով հեռացավ արկղակալին քովեն։

Ալ կասկած չի կար. Ղուկաս էֆենտին էր, որ առջի օրվան դեպքին վրեժը կլուծեր։ Այս հարվածը սակայն արիաբար ընդունեց երիտասարդը, ոչ թե չընկճվեցավ անկե՝ այլ ընդհակառակը նոր զորություն մը զգաց իր մեջը պաշտպան կանգնելու թշվառ այրիին։ Հետո տեսակ մը գոհունակություն կվայելեր այսպես պաշտոնեն ճամփվելուն։ Իրեն համար խորին ցավ մը, տեսակ մը խրդճի խայթ եղած էր խորհիլը, թե խեղճ Սաթենիկ իրեն պատճառավ զրկված էր նպաստե։ Հիմա որ ինքն ալ անոր պատճառով գործեն կզրկվիր, այլևս կաղատեր խղճի խայթեն, քանի որ անոր զրկանքը փոխարինած էր այս կերպով։

— Ինը ոսկիով ամիս ու կես կրնամ ապրիլ և մինչև այն ատեն անշուշտ գործ մը կգտնեմ... իսկ Ղուկաս էֆենտիին հետ նորեն կտեսնվինք։

Երբ Բերայի մեծ փողոցը հասավ, բազմությունը խռնված էր ամեն կողմ, կաղանդի իրիկվան ուրախ-զվարթ ամբոխ մը, ծարներով բեռնավորված, որ մայթերուն վրա հրմշտկելով կհառաջանար։ Գարեգին հանկարծ գաղափար մը հղացավ.

— Պետք է, որ նվեր մը տանիմ Սիրվարդին, կաղանդի առթիվ,— մտածեց ինքնիրեն։

Եվ Պոն Մարշե մտնելով փոքրիկ սիրուն պեպեք մը առավ։

Հետո, երբ Ֆերրիգյուղ հասավ, պտղավաճառե մը զանազան պտուղներ առավ և մանչու մը ձեռքը տալով, հաղթանակորեն ուղղվեցավ տունը։

— Այս իրիկուն բան մը հայտնի չեմ ըներ,— կխորհեր,— կաղանդի օրով պետք չէ տխրեցնեմ խեղճ կինը, ընդհակառակը զվարթ կերպարանքով մը կերթամ...

Եվ իրավ ալ նույն դիշեր տիկին Սաթենիկ և իր աղջիկը ուրախ կաղանդ մը անցուցին, մանավանդ Սիրվարդ, որ աչքերուն չէր ուզեր հավատալ, երբոր պեպեքը իրեն նվիրեցին։

Հետևյալ օր, երբ Ղուկաս էֆենտի եկավ իր գրասենյակը, Քերովբե Աբրահամյան սրդեն իրեն կսպասեր ավետիսը հաղորդելու համար։

— Երեկ, ասկե երթալուս պես, հաշիվը տեսա, ճամփեցի այդ Գարեգինը,— ըսավ Ղուկաս էֆենտիին։

— Աֆերիմ, յա, այդ տեսակ անբարոյական սրիկաները անոթութենե սատկեցնելու է, որ երթան չափերնին սորվին։

Եվ սակայն այս չափով չգոհացավ, ուզեց, որ այդ բոզը և այդ շափխրը՝ իրենց բնակած տունեն հանել տա, որպեսզի թաղը չապականեն։ Ասոր համար դիմեց Բերայի Թաղ. ատենապետին, որ իր բարեկամն էր և խնդիրը բացատրեց։

— Էֆենտիմ, անբարոյական կին մը, որ երիտասարդ մը առեր նստեր է, ըլլած էտեպսիզությունենին չմնար կոր, բոլոր դրացիները կբողոքին կոր... ասանկ գայթակղություն, ասանկ խաղքություն, կըլլա՞ մի. ամենուս պատիվին արատ կբերե ասիկա. մեկ ընտանեկան պատիվ մը, սրբություն մը ունեինք պարծենալիք, ան ալ վրա տա՞նք...

— Բայց Ղուկաս էֆենտի, ի՞նչ կուզեք որ ընենք։

— Դուք հանել տվեք տունեն, կառավարության դիմեցեք, ոստիկանության ձեռքով թող դուրս նետեն։

— Մինչև որ դրացիներու կողմե գրավոր բողոք մը չըլլա, մենք չենք կրնար միջամտել,— առարկեց ատենապետը։

— Ատ ըլլա ուզածդ,— գոչեց Ղուկաս էֆենտի,— ամբողջ թաղեցիին կողմե ստորագրված քեզի բողոքագիր մը բերել կուտամ։

— Եթե այդպես գիր մը գա, այն ատեն անմիջապես կրնանք դիմում ընել Բերայի մյութեսարըֆին ու զիրենք տունեն հանել տալ։

Ղուկաս էֆենտի անմիջապես լուր ղրկեց Սաթենիկի մասին քնութիւն կատարող մարդուն, որ ինչպես ըսինք, Աղքատախնամի օժանդակ անդամ էր։ Խնդիրը բացատրեց անոր և առաջարկեց, որ բողոքագիր մը պատրաստե և տանի ստորագրել տա դրացիներուն։

Մարդը սակայն չուզեց հանձն առնել այդ պաշտոնը, առարկելով, որ ինք Ֆերիգյուղեն չէր ու ազդեցություն չուներ այդտեղի թաղեցիներուն վրա. հարկ էր հոնտեղեն մեկը գտնել, այդ գործը գլուխ հանելու համար։

— Ուրեմն մեկը գտիր ու ղրկե,— հրամայեց Ղուկաս էֆենտի,— ես իր հոգնությունը կվճարեմ, վստահ եղիր։

— Շատ լավ, էֆենտիս,—ըսավ մյուսը։

Երկու օր ետքը երբ Ղուկաս էֆենտի գրասենյակը նստած էր, մարդ մը ներս մտավ, խոնարհ բարև մը տվավ և նամակ մը երկարեց իրեն։

Ղուկաս էֆենտի պահարանը պատռեց և նամակը բանալով կարդաց.

«Վսեմաշուք էֆենտի.

«Գրաբերս, գինեպան Հաճի Թումիկ Ֆերիգեղցի է և թաղին մեջ շատ ծանոթ մարդ մը, ինք խիստ հարմար է բողոքագրին գործը հաջողցնելու, միայն թե հարկ է քիչ մը բան վճարել։

Մնամ ձեր վսեմության խոնարհ ծառա»։

Նամակագիրը Աղքատախնամի օժանդակ քննիչն էր։

— Հրամմեցեք, նստեցեք,— ըսավ Ղուկաս էֆենտի։

Մարդը կրկին խոնարհ բարև մը տվավ և աթոռի մը ծայրը նստավ, երկու ոտքը քով քովի բերած։

Հիսուն տարեկան, գիրուկ, թավ հոնքերով և խոշոր շրթունքներով մարդ մըն էր Հաճի Թումիկ։ Երկաթագործությամբ սկսած էր իր ասպարեզը, հետո ջրհանկիր եղած էր, հետո ալ ձկնավաճառ։ Արիասիրտ ու կովարար, շատ անդամներ, բարկության կամ գինովության մեջ, մարդ վիրավորած ու ամիսներով բանտարկություն կրած էր։ Այդ բանը իր վարկը բարձրացուցեր, տեսակ մը հեղինակություն և ժողովրդականություն տվեր էր իրեն։ Հաճի Թումիկ իր հիացողները, կուսակիցները, հետևորդները ուներ, որոնց վրա բարոյական իշխանություն մը ի գործ կդներ։ Տարիներե ի վեր եկած հաստատված էր Ֆերիգյուղ, ուր գինետուն մը կբանեցներ։ Իր հաճախորդները միևնույն ժամանակ իր հպատակներն էին, որոնց վրա կատարածեր իր գերիշխանությունը։ Բայց իր ազդեցությունը միայն

իր գինետան մեջ չէր սահմանափակվեր, անկե դուրս ալ կճառագայթեր, երբ հարկը ներկայանար։ Կիրակի օր, երբոր եկեղեցի երթար, հարգանքով կողջունվեր թաղականներուն, քահանային, ժամկոչին և վարժապետին կողմե։ Հաճի Թումիկ մարդ մըն էր, որ լավագույն էր իրեն հետ ունենալ, քան իրեն դեմ։

Եվ սակայն Հաճի Թումիկ իր ազդեցությունը չարաչար չէր գործածեր, իր հեղինակությունը չէր գոհեկացներ ճղճիմ խնդիրներու մեջ մտնելով։ Մեծ վճռական վայրկյաններուն երևան կուգար ան ու կգործեր հանուն ժողովրդին, որուն մարմնացումը, շոշափելի արտահայտությունն էր։

Տգետ, բայց մտացի, իրեն որոշ սկզբունքները ուներ, հաստատ, անսրբագրելի սկզբունքներ, որոնց վրա հիմնված էր իր ապրելակերպը։

Ղուկաս էֆենտի վայրկյան մը ուշադրությամբ քննեց իր հյուրը, հասկցավ թե իր փնտռած մարդն էր։

— Շատո՞նց է, որ Ֆերիգյուղ կնստիս,— հարցուց։

— Տասը տարի կա։

— Ըսել է թաղին մեջ ճանչցված ես։

— Էֆենտի, Բանկալթիեն բոնե մինչև Շիշլի Հաճի Թումիկը չճանչցող չի կա։

— Գիտե՞ս քեզ ինչու համար ուզեցի։

— Քիչ մը հասկցուցին։

— Ըլլալիքը թե մեր ազգին պատիվին և թե մասնավորապես ձեր թաղի պատիվին համար է։ Դուն ամուսնացա՞ծ ես, զավակներ ունի՞ս, Հաճի Թումիկ աղա։

— Ամուսնացած եմ, էֆենտի, երկու հատ ալ աղջիկ ունիմ...

— Աստված պահե։

— Շնորհակալ եմ, շատ ապրիք։

— Էյ, քեզի պես ամուսնացած, աղջիկներու տեր, պարկեշտ, բարոյական մարդու տանը քով բոզ մը նստի նե՝ թող կուտա՞ս, ձայն չե՞ս հաներ...

— Ինչ ըսել է, էֆենտիս, մենք զենկին չենք ամա, նամուսի համար հոգինիս կուտանք...

— Կեցցես, Հաճի Թումիկ աղա... հիմա քեզի խնդիրը բացատրեմ, ատ ձեր կողմերը Սաթենիկ անուն որբևայրի մը եկեր տուն բոներ նստեր է իր սիրականին հետ, ատ անամոթ կնիկը եկավ մեր Աղքատախնամեն դրամ ուզելու, մենք ալ մարդ ղրկեցինք,

ինչպես կնիկ ըլլալուն մասին հարցուցինք, փնտռեցինք, մեյ մըն ալ ինչ իմանանք, անբարոյական բոզին մեկն է եղեր... երկրորդ անգամ գալուն աղեկ մը լվացի զինքն ու դուրս վռնդեցի։ Հիմա գալիս աղեկ մը լվացի զինքն ու դուրս վռնդեցի։ Հիմա պատվավոր մարդիկ կուզեն, որ այդ կինը և քովի սիրականը նըստած տունեն հանեն, որպեսզի փողոցը մաքրվի։ Ասոր համար թաղական խորհուրդեն դիմում պիտի ընենք Բերայի մյութեսարըֆին, բայց պետք է որ այդ կողմերը բնակող, ընտանիքի տեր, պատվավոր մարդիկը գրավոր բողոք մը ընեն թաղական խորհրդին, որպեսզի ան ալ կարենա կառավարության դիմել... հիմա ատանկ թուղթ մը պատրաստվի, դուն կրնա՞ս ստորագրել տալ։

— Ի՞նչ ըսել է, էֆենտիս, Հաճի Թումիկին խոսքեն հիշ դուրս գալլող կգտնվի՞ Ֆերիդյուղի մեջ... մինակ սա կա, որ խանութս ձգելու, այդ գործին եռեռն պտտելու եմ քանի մը օր... էհ, գիտես ա, էֆենտի, մենք օրե շահող օրե ուտող մարդիկ ենք... իրավ է, այդ գործը ազգերնուս պատիվին համար է, բայց...

— Կհասկնամ, կհասկնամ,— ընդմիջեց Ղուկաս էֆենտին,— այդ մասին դու հոգ մի ըներ, ես քու վնասիդ տեղը կլեցնեմ, ես այսօր գրելիք թուղթը կպատրաստեմ, դուն վաղը առտու, Բերա իմ տունս հանդիպես, որպեսզի քեզի տամ և անմիջապես ստորագրել տաս... ժամ մը առաջ այդ աղտոտությունը վերցնելու է մեջտեղեն։

— Շատ աղեկ, գլխուս վրա, էֆենտիս։

Ղուկաս էֆենտի քսակը հանեց, մեջեն երեք ոսկի առավ և Հաճի Թումիկին երկարելով ըսավ.

— Հիմակուհիմա աս երեք ոսկին առ, գիտնաս որ թուղթը ստորագրել տալ ու բերելդ ետքը նորեն ես քեզի պարապ չեմ հաներ։

Ոսկիներուն տեսքը բոլորովին շլացուց Հաճի Թումիկը։ Երբեք չէր սպասեր, որ տակավին չսկսված գործի մը համար այսքան առատ կանխավճար մը պիտի ստանար։

— Էֆենտի՛ս, շատ շնորհակալ եմ, շատ ապրիս,— թոթովեց հուզված կերպարանքով։

— Քեզ տեսնեմ, Հաճի Թումիկ աղա, դուն պատվավոր մարդ մը կերևաս կոր, աշխատե աս անբարոյականները հանել տալ այդ տեղեն, որ ընտանիքները հանգստանան։

— Դուն ալ հոգ մի ըներ, էֆենտիս,— գոչեց գինեպանը — ...

ինձի կհարցնես նե՝ ատանկ թուղթ ստորագրելու ալ պետք չի կա, ես անոնք այն տեղեն աս սահաթին հանելու յոլը գիտեմ...

— Չէ, չէ,— ըսավ Ղուկաս էֆենտի կես մը ժպտելով,— օրինավոր կերպով գործ տեսնանք։

— Ինչպես որ կուզես...

Եվ Հաճի Թումիկ կրկին խոնարհ բարևներ տալով՝ դուրս եկավ գրասենյակեն։

ԳԼՈՒԽ Ը

Նույն իրիկունն իսկ, Ֆերիգեղ Հաճի Թումիկի սրճարանը, Սաթենիկի ու Գարեգինի խնդիրը սեղանի վրա դրվեցավ։

Գինեպանը երբոր տեսավ թե իր խանութին հիմերը մեկիկ-մեկիկ եկան բոլորվեցան սեղաններու շուրջ, որոնց վրա տյուզի շիշեր շարված էին, ճիեր թավասիի, խաշած լուբիայի ու ձիթապտուղի մեզեներով, վայրկյանը եկած համարեց խոսելու։

— Ծո, Տարսավիշ աղա, իմացա՞ր,— հարցուց խոսքը ուղղելով ձկնավաճառի մը, որ առանձին նստած խորին համոզումով մը իր օղիի գավաթը կպարպեր կամաց-կամաց,— գեշ մը եկեր է մեր մահալլեն, չըրած խաղքությունը չմնար կոր. դրացիները պյուրյուն ոտք ելեր են, իլլե՝ տունեն հանել կուզեն կոր։

— Ի՞նչ միլլեթ է...

— Հայ, աղբար, հայ չըլլար նե՝ որո՞ւ հոգ... Հայ ըլլալուն համար է քի խոսքը կընեմ կոր։

— Ո՞ւր կնստի կոր այդ փոստալը,— հարցուց ազգային արժանապատվության նախանձախնդիր ուրիշ խման մը։

— Սրտեղեն վար, յուշինեի սոխախը մտնաս նե՝ սալիդ վրա պիրինեի սոխախը՝ պախալ Մանոլին տունը,— բացատրեց Հաճի Թումիկ, որ արդեն նախնական քննություն մը ըրեր ու այդ մանրամասնությունները իմացեր էր քիչ առաջ։

— Հասկցա,— միջամտեց ներկաներեն մեկը,— որբևայրի կնիկ մըն է, պզտիկ աղջիկ մըն ալ ունի... ամա անիկա վեց ամիս է որ եկած է...

— Վեց ամիս է գալը, ամա հոտը հիմա օրքա՛ն ելավ,— ըսավ Հաճի Թումիկ։

— Մինչև հիմա բան մը չխոսվեցավ,— պատասխանեց մարդը, որ Սաթենիկի տան փողոցը կբնակեր և պարկեշտ ատաղձագործ մըն էր, Սիմոն անուն։

— Ինչ կըսես կոր պե,— գոչեց գինեպանը, որ ընդդիմախոսության վարժված չէր,— Պեյ Օղլուի ժամուն թաղական աղաները քննություն բացեր, տեղն ու տեղը հասկցեր են — սիրող ունի եղեր առած նստած, ես պոշ տեղը խոսք չեմ ըներ...

— Անանկ է, Հաճի Թումիկ պոշպոշունա խոսք չըներ,— հաստատեցին ներկաներեն մեկ քանին։

— Աղբար, սիրող ըսածդ իր բիրաճին է, մազլըմ երիտասարդ մը... ատ ձեր ըսած կնիկը մեր փողոցը կնստի... վեց ամիս է գալը, դեռ օր մը օրանց վրան բան մը չլսվեցավ, խեղճ աղքատ կնիկ մըն է, իր եղովը կտապկվի,— ըսավ ատաղձագործը։

— Վայ, Սիմոն աղա, քեզի դրացի է եղեր, հա՞, անոր համար ատանկ պաշտպան կելլաս կոր իրեն,— մեջ մտավ ուրիշ մը խընդալով— ...ինտոր, աչքդ խածեր է կերևա կոր։

— Իրավցնե ալ գեշ ապրանք չէ եղեր, իմացածիս նայելով,— ըսավ գինեպանը։

Երիտասարդ գործավոր մը, որ մինչև այն ատեն լուռ կհետևեր խոսակցության, ուզեց ինքն ալ մասնակցիլ վիճաբանության։

— Ես տեսած եմ կնիկը. իրավցնե աղվոր է ամա, երեսին քիլ մը խնդացողին անանկ ժանիք մը կընե՝ որ... ես շիտակը չեմ հավատար, որ այդ կնիկը գեշ ըլլա...

— Ծո, շաշխրն, իշտե անանկներեն վախնալու է յա,— գոչեց գինեպանը.— արդեն մեր խոսիլը ավելորդ է, թաղականները քններ, ամեն բան հասկցեր են... հիմա մենք այդ էտեպսիզները ասկե սանաթ մը առաջ տեֆ ընելը նայինք...

Եվ Թումիկ աղա վիճաբանությունը ավելի լուրջ հողի մը բերավ։

Բացատրեց թե մեր ազգը մինչև հիմա հաստատ մնացած է իր եկեղեցիին, գերեզմանոցին և ընտանեկան պատիվին շնորհիվ է, եթե այդ երեք հիմերը խախտին՝ ազգը կփճանա։ Ինչպես օդին առանց մեզեի չկրնար ըլլալ, պատիվը ընտանիքին մեզեն է։ Այսօր եթե թույլ տանք որ անբարոյական կին մը մեր թաղին մեջ հաստատվի, վաղը ամբողջ թաղը բոզանոց մը կդառնա։ Չարիքը դեռ չմեծցած պետք է խափանել։ Կրակը մարելու է առաստաղը չբռնած, եսքը աշխարհի բոլոր ջրհանները օգուտ չեն ըներ։

Հավանության մրմունջներով ընդունվեցավ Հաճի Թումիկի «հաղագս բարոյականի» ճառը։ Գինեպանը ստորագրվելիք հանրագրության խոսք չըրավ, թողուց, որ նախ մտքերը պատրաստվին։

Երբ ներկաները մեկնելու կպատրաստվին, Թումիկ հրամայողական ձևով մը գոչեց.

— Նստեցեք, այս իրիկուն մեյ մեկ շիշ ալ ինե պիտի խմեք։

Ու շիշերը լեցվեցան, բացառիկ մեղեներով։

Հետևյալ օրը Հաճի Թումիկ ներկայացավ Ղուկաս էֆենտիի բնակարանը, ուր գինքը առաջնորդեցին սեղանատան քով փոքրիկ սենյակ մը։

Քիչ մը ետքը էֆենտին եկավ, ձեռքը թուղթ մը բռնած, թաղական խորհուրդին ուղղելիք հանրագրություն մը, զոր Ղուկաս էֆենտի գրել տված էր մասնավոր խնամքով մը։

Այդ գրությամբ Ֆերիգյուղի հայերը կդիմեին Բերայի թաղական խորհրդին և հանուն ընտանեկան սրբության, ազգային արժանապատվության և բարոյականին, և մանավանդ «ի բուժումն գայթակղյալ մտաց» կխնդրեին որ ոստիկանական միջամտությամբ իրենց թաղեն վտարվեին Սաթենիկ Ամասյան և Գարեգին Հայկյան, որոնք թաղին մեջ քար գայթակղության եղած էին։

— Քեզ տեսնամ, այսօր վաղը այս գործը լմնցուր... արդեն ըսի, գիտես ա, քու հոգնությունդ էվելոք պիտի վճարեմ։

— Ողջ ըլլաս, էֆենտի, արդեն մեր պարտքն է ասիկա ընել,— պատասխանեց գինեպանը և թուղթը խնամքով ծալելե ու գրպանը տեղավորելեն ետք մեկնեցավ։

Նույն իրիկունն՝ իսկ գինետան մեջ հանրագրությունը քսանե ավելի ստորագրությամբ լեցվեցավ։ Հաճի Թումիկ այնքան վստահ էր մարդոց վրա, որ բացակա ծանոթներուն անուններ ալ գրել տվավ։

— Ցազ,— կհրամայեր գրել գիտցողի մը,— տեոքմեճի Պետրոսը տա յազ, պալըգճը Համբիկի տա յազ, Հաճի Հոսեփի տա յազ...— վերջապես բոլոր միտքը ինկած անունները։

Հաճի Թումիկ այս կեղծ ստորագրությունները դնել կուտար ամենայն բարեմտությամբ, առանց խղճահարության հետքի մը, բարիք մը, ազգին ծառայություն մը մատուցած ըլլալու հաստատ համոզումով, նույնպես բոլոր ներկաները այդ հավատքը ունեին... թաղը պիտի մաքրագործեին, իրենց ընտանեկան պատիվը պիտի փրկեին։

— Ապրիս, Հաճի Թումիկ աղա, կենե դուն ես քի աս բանը մտածեցիր,— կըսեին գինետան հաճախորդները։

— Ծո, ես չըլլայի նե՝ նամուսնիս փարայի մը պիտի ըլլար...

Եվ գինեպանը, հաղթական ու հպարտ իր բեղերը կոլորեր։

Խեղճ Սաթենիկ ու Գարեգին չէին գիտեր իրենց շուրջ տեղի ունեցած անարգ մեքենայությունը։ Որբևայրին գրեթե շատ քիչ կտեսնվեր իր դրացիներուն հետ, իսկ երիտասարդը Քերովբե էֆենտիին քովեն ճամփվելեն ի վեր առտուները կանուխ կերթար և շատ ուշ, միայն պառկելու համար կվերադառնար տուն. խելքը միտքը նոր գործ մը գտնելու տված։

Շատ տեղեր արդեն դիմած էր և հույս տվեր էին իրեն, որ աս տոնական օրերը անցնեն, խթում, ծնունդ, և այլն։ Քերովբե էֆենտի բավական բարեսիրտ գտնվեր էր իրեն բարի վարուց վկայական մը տալու, որու մեջ կհաստատեր թե Գարեգին իր հոժար կամքովը թողած էր գործը, ամսականի անբավականության պատճառով և թե, իր ամբողջ պաշտոնավարության միջոցին շատ գոհ ձգած էր ղինքը, իր պարկեշտությամբը, աշխատությամբը և գործունեությամբը։

Երբ այդ վկայագիրը ծալեց ու գրպանեց, Գարեգին, որ կուզեր վստահ ըլլալ իր կասկածներուն մասին, շեշտակի Քերովբե էֆենտիին նայեցավ և ըսավ.

— Շիտակ ըսեք, էֆենտի, Ղուկաս էֆենտի Կելկիթյա՞նը պահանջեց, որ զիս ճամփեք։

Քերովբե էֆենտի թեթև սարսուռ մը ունեցավ, որ չվրիպեցավ Գարեգինի աչքերեն։

— Այնպես չէ՞,— պնդեց երիտասարդը։

Վաճառականը չկրցավ ստել։

— Իրավ է,— հաստատեց,— բայց տղաս,— շարունակեց,— կաղաչեմ, որ գիտցած չըլլաս ու մանավանդ այդ մարդուն հետ չիյնաս, թե քեզի և թե ինծի փորձանք կբերե ետքը... Ինչո՞ւ այդ տեսակ մարդոց հետ կովելու կելլաս. մի՞թե քեզի պես պզտիկ գրագիր մը կրնա Ղուկաս էֆենտիին հետ գլուխ ելլել... տես, պարզապես տեղը դուն ջախջախվեցար, ստիպվեցա քեզ ճամփելու, որովհետև յուլարս անոր ձեռքն է, կհասկնա՞ս...

— Բայց Քերովբե էֆենտի, ինչպե՞ս կարելի էր համբերել գործված անիրավության։

Եվ Գարեգին մանրամասնորեն պատմեց այրի կնոջ ամբողջ

եղերական պատմությունը, որ շատ հուզեց վաճառականին սիրտը։

— Բայց,— խոստովանվեցավ տխրությամբ.— ձեռքես բան մը չի գար։ Ղուկաս էֆենտի անանկ համառ մարդ մըն է, որ կարելի չէ համոզել. երբոր միտքը բան մը դնե։ Քանի որ հիմա միտքը դրած էր, որ այդ կինը անբարոյական է, լավագույն է իրմե փոխչիլ...

Երիտասարդը գլուխը թոթվեց այնպիսի ձևով մը, որ ցույց կուտար, թե ինքը վաճառականին կարծիքին չէր և ոտքի ելավ մեկնելու համար։

— Նորեն կխրատեմ, խելոք վարվե,— եղավ Քերովբե էֆենտիի վերջին խոսքը։

Գարեգին առանց հաստատական խոսք մը ըսելու դուրս ելավ։

Հիմակ ալ կասկածը ստուգության փոխված էր։ Ղուկաս էֆենտին էր ղինքը այսպես անխնա հալածողը և ինչո՞ւ համար, որովհետև անմեղ ու թշվառ կին մը փորձած էր պաշտպանել...

Այս ահռելի անիրավությունը կըմբոստացներ ղինքը։ Վրեժխնդրության ծրագիրներ միտքը կշարշարեին, բայց ի՞նչպես կարելի էր հավասար առ հավասար կովել մեկու հետ, որ իր հարստության ու դիրքին ազդեցության շնորհիվ, անհատապես զորավոր է իրմե։

Եվ այս տխուր մտածումներուն մեջ թաղված՝ երիտասարդը մտամոլոր կանցներ Ղալաթիայեն. երբ զվարթ ձայն մը հանկարծ գոչեց իրեն.

— Ծո, Գարեգին, դո՞ւն ես...— երիտասարդը ձայնին կողմը դարձավ և զարմացական ճիչ մը արձակեց.

— Վայ, Սերգիս...

Երկու բարեկամները համբուրվեցան։

— Ե՞րբ եկար,— հարցուց Գարեգին։

— Կաղանդեն օր մը առաջ... ալ հոս փոխադրվեցա, եկուր տեղ մը նստինք ու քիչ մը խոսակցինք... քանի մը օր առաջ ձեր խանութը գացի քեզ տեսնելու և ըսին թե ելած ես Քերովբե էֆենտիին քովեն, տունդ հարցուցի, Ֆերիգյուղի կողմն է ըսին, բայց հասցեդ որոշ գիտցող չի կար... ինչ որ է, բարեբախտաբար հոս իրարու հանդիպեցանք։

Ու գացին նստեցան թրամվայի ճամփուն վրա գտնվող ռատուն մը։

Սերգիս Գարեգինի տարեկից երիտասարդ մըն էր, անոր դրպրոցական ընկեր և մտերիմ բարեկամը, կարելի է ըսել միակ բա-

բեկամը, որովհետև Գարեգին իր դժվարահաղորդ բնավորությամբ դյուրավ մտերմություն չէր հաստատեր իր ծանոթներուն հետ։

Վարժարանեն ելլելեն ետքն ալ իրարու անբաժան ընկերներ մնացեր էին։ Հետո Սերգիս անգլիական առևտրական տան մը մեջ մտած էր և այդ տան կողմե հետզհետե ղրկված էր Տրապիզոն, Սելանիկ և Պեյրութ, ի վերջո Իզմիր, ուր հաստատված էր երկու տարիե ի վեր։

Իզմիր երթալեն առաջ ամսի մը չափ մնացեր էր Պոլիս և անկե ի վեր Գարեգինը զինքը տեսած չէր։

Սերգիս եռանդուն, անձնվեր, բարի և քիչ մը մեծախոս երիտասարդ մըն էր, դյուրահաղորդ և զվարճասեր։

Երբ գացին բազմեցան գարեջրատան մը սեղանին առջև, Սերգիսի առաջին գործը եղավ իր ընկերոջ վիճակին մասին տեղեկություններ հարցնել։

Գարեգին մի առ մի ըրավ Սաթենիկի և իր պատմությունը, Ղուկաս էֆենտիի և Քերովբե էֆենտիի ընթացքը ևս. վերջապես իր երկու շաբաթվան արկածները։

Սերգիս շատ հուզվեցավ իր բարեկամին գլուխն եկած դժբախտությունները լսելով.

— Ծո, վա՜յ շունչանորդի, այդ ինչ գազան մարդ է եղեր Ղուկաս էֆենտի ըսածդ,— գոչեց բռունցքը սեղանի մարմարին զարնելով ու գավաթները դողդողացնելով։

— Բայց,—ըսավ Գարեգին վճռաբար,— ինքզինքս պարտված չպիտի համարեմ և կրցածիս չափ պիտի կռվիմ հետը։

— Անշուշտ,— պատասխանեց Սերգիս,— խերը անիծելու է այդ գարշելի արարածին, և եթե ասոր համար մեկու մը պետք ունենաս՝ ես պատրաստ եմ ձեռքես եկածը ընելու։

— Շնորհակալ եմ,— ըսավ Գարեգին,— որ գիտեր, թե իր ընկերոջ խոսքերը պարապ խոսքեր չէին և թե կրնար իրավցնե հույս դնել անոր անձնվիրության վրա։

— Նախ աշխատինք, որ գործ մը գտնես սակայն,— առաջ տարավ Գարեգին ընկերոջը,— ամենեն կարևորը այդ է... իսկ գալով Ղուկաս էֆենտիին, կմտածենք, թե ինչ կրնանք ընել այդ մարդուն ճաիեն գալու համար։

Երկու բարեկամները երկարորեն տեսակցելեն ետքը միասին ճամփա ելան և ուղղվեցան Բերա։

— Ո՞ր կողմ կրնակիս,— հարցուց Գարեգին իր ընկերոջը։

— Դեռ սենյակ չբռնեցի, առայժմ պանդոկն եմ, բայց հավանորեն Բանկալթիի կողմը պիտի հաստատվիմ։

Եվ Սերգիս պատմեց, թե այլևս Պոլիս պիտի մնար մնայուն կերպով և ամսականի հավելումով։ Իր մեծերը շատ գոհ են իրմե և կհուսար թե քանի մը տարիեն պիտի կրնար կարևոր դիրք մը գրավել իր գտնված Անգլիական մեծ հաստատության մեջ։

Եվ խոսակցելով հասան մինչև Ֆերիգեղ ու կրկին նստան շիտակ ճամփու վրա սրճարան մը։ Երկար բացակայությունե մը ետքը, երկու բարեկամներ չէին կրնար դյուրավ իրարմե կարոտնին առնել, մանավանդ որ Գարեգին, իր ներկա վիճակին մեջ պետք կըզգար մտերիմ ընկերոջ մը խորհուրդներուն։

Հազիվ թե քառորդե մը ի վեր նստած էին սրճարանը, երբ որ գինեպան Հաճի Թումիկ ներս մտավ և ուղղվեցավ խումբի մը, որ Գարեգինի ու Սերգիսի սեղանեն քիչ մը անդին կգտնվեր։

— Բարև, աղաներ,— ըսավ Թումիկ։

— Աստծո բարին, Հաճի Թումիկ աղա, եկուր տեսնանք, ի՞նչ կա չի կա։ Գինեպանը աթոռ մը առավ և բազմեցավ իր ծանոթներուն քով։ Հետո գրպանեն թուղթ մը հանեց և ներկաներուն երկարելով ըսավ.

— Սըտեղ մեյմեկ իմզա դրեք։

— Ի՞նչ է,— հարցուց մեկը։

— Ճանըմ, մահալլեեերնիս գեշ մը եկեր է, իր սիրոջին հետ, անոր համար այս թուղթը պիտի ստորագրենք ֆի Պեյ Օղլու թաղական խորհուրդին տանք տե, առոնք տունեն հանեն։

Իր սովորության համեմատ Հաճի Թումիկ բարձրաձայն կխոսեր ու Գարեգին և Սերգիս լատարելապես կլսեին զինքը իրենց նստած տեղեն։

— Ո՞վ է քի...

— Սաթենիկ կըսեն կոր, սա պախալ Մանոլին տունը կնստի եղեր,— առաջ տարավ Հաճի Թումիկ։

Գարեգին այդ բառերը լսելով գունաթափ ու շանթահարված մնաց։

— Ի՞նչ եղար,— գոչեց Սերգիս, որ տակավին իրողությունը լավ չէր ըմբռնած։

— Մեկնինք այս տեղեն անմիջապես,— մռմռաց Գարեգին ոտքի ելլելով ու գարեջուրին դրամը վճարելով։

Երբ փողոց ելան, Գարեգին գոչեց.

— Տեսա՞ր հիմա եղածը։

— Շիտակը դեռ չհասկցա քու հանկարծական հուզումիդ պատճառը այդ մարդուն խոսքերեն։

— Հանրագրություն կպատրաստեն կոր տունեն հանել տալու համար Սաթենիկն ու գիս... իբրև բոզ ամբաստանելով խեղճ կինը։

— Ի՞նչ կըսես, եղբայր,— գոչեց Սերգիս, չուզելով իր ականջներուն հավատալ։

— Այո, կատարելապես լսեցի, մեր բնակած տան մասին էր... պախալ Մանոլին տունը... բայց ո՞վ էր հանրագրությունը ստորագրել տվող այդ մարդը... — ըսավ Գարեգին,— դեմքը անծանոթ չի ինծի, թաղեցի է, բայց լավ մը չեմ կրնար հիշել... խեղճ տիկին Սաթենիկ, երբոր իմանա՝ խելքին պիտի գա, ինք որ այնքան նախանձախնդիր է իր պատիվին և երբեք չուզեր, որ ոևէ կերպով իր վրա խոսեցնե...

Ու խեղճ երիտասարդը, շվարած, սահմռկած, չէր գիտեր ինչ ընելը։

— Բայց ի՞նչ կուզեն այդ մարդիկը մենե, ինչ ըրած ենք իրենց,— կգոչեր ատեն-ատեն։

— Ինծի նայե,— ըսավ Սերգիս վճռաբար,— պարապ հառաչանքները օգուտ մը չունին, պետք է շենք շնորհք ճար մը մտածենք... եկուր նախ ուրիշ տեղ մը նստինք, սանկ առանձին տեղ մը, մենք մեզի։

Եվ ուղղվեցան Օսման պեյի սրճարանը, ուր այդ եղանակին բոլորովին թափուր էր։

Գարեգին լուռ կմնար, մտքին մեջ փնտռելով հանրագրության մարդը, որ վստահ էր, թե անծանոթ մը չէր իրեն համար։

Վերջապես հաղթական ճիչ մը արձակեց։

— Գտա,— գոչեց,—մեր բնակած տան մոտերը գինեպան մըն է, նույնիսկ մեկ անգամ գացած եմ խանութը... այո, հիշեցի, բոլորովին վստահ եմ, նույն ինքն է... բայց ինչո՞ւ համար այդ թշնամությունը մեզի դեմ։

— Ո՛վ գիտե, գուցե ուրիշի մը դրդումով կգործե։

— Ամեն պարագայի, ասիկա նոր սկսված գործ մը չէ, որովհետև երբ թուղթը հանեց, աչքիս ծայրովը տեսա, որ ստորագրություններով ծածկված էր... կտեսնա՞ս, ամբողջ թաղը մեզի գեմ ելած է... բայց ի՞նչ սարսափելի բան է այս։

— Ըստ իս, գործելու մեկ եղանակ մը կա,— ըսավ Սերգիս,— երթալ այդ գինեպանը գտնել և իրմե բացատրություն ուզել։

— Բայց գուցե ինծի կճանչնա և այն ատեն այդ անկիրթ մարդոց հետ խնդիրը կրնա անհաճո հետևանքներ ունենալ։

— Ուրեմն ես առանձին կերթամ, գիս ոչ ոք կճանչնա, դուրսեն նոր եկած մեկն եմ. այդ մարդը կխոսեցնեմ և գուցե կհաջողիմ գայթակղության առաջքը առնելու։

Սերգիսի առաջարկությունը շատ խոհական և օրինավոր էր և Գարեգին ոևէ առարկություն չգտավ ընելիք, նույնիսկ շնորհակալությունը հայտնեց ընկերոջը անձնվիրության համար։

Հետո միասին դուրս ելան և Գարեգին ցույց տվավ Հաճի Թումիկի գինետունը։

Երկու բարեկամները որոշեցին, որ Գարեգին դարձյալ երթա Օսման պեյի սրճարանը և հոն սպասե իր ընկերոջ վերադարձին, տեսակցության արդյունքը իմանալու համար։

Երբ Սերգիս մտավ գինետունեն ներս, ներկաներու ուշադրությունը իր վրա հրավիրեց։ Նախ որ ինք նոր դեմք մըն էր այդ միջավայրին մեջ, հետո հայտնի կերևար, որ այդ գինետան հաճախորդ ըլլալու սահմանված մեկը չէր։ Իր վրա սևեռված ակնարկներեն նեղված՝ գնաց անկյուն մը նստավ և օղի մը ապսպրեց գինետան աշակերտին։

Երբ մանչը օղին բերավ, երիտասարդը հարցուց.

— Ո՞ւր է վարպետդ։

— Հաճի Թումիկ աղա՞ն։

— Այս խանութին տերը։

— Հա, էյ իշտե Հաճի Թումիկ աղան է խանութին տերը,— պատասխանեց մանչը, որ կզարմանար, թե ինչպես կարելի է չգիտենալ այդ բանը։

— Աղեկ, ըսե Հաճի Թումիկ աղային, որ քիչ մը հոս գա։

Սերգիսին մոտ նստող հաճախորդ մը, որ ուշադրությամբ կհետևեր այս խոսակցության, պետք համարեց միջամտելու։

— Մյուսյու, Հաճի Թումիկը գործ ուներ քիչ մը, դուրս ելավ, հիմա կուգա։

— Լավ, կսպասեմ։

Եվ Սերգիս սիկարեթ մը վառեց, ումպ մը առավ օղիեն և ըսկըսավ սիկարեթի ծուխը դուրս տալ՝ աչքերով անոր բռնած ուղղության հետևիլ։

— Հաճի Թումիկին հետ գո՞րծ մը ունիս,— հարցուց։

— Չէ, կարևոր բան մը չէ, միայն կուզեմ քիչ մը հետը տեսնվիլ։

— Կճանչնա՞ս ինքը...

— Չէ, դեռ նոր պիտի տեսնամ։

Սերգիս ի բնե շատախոս, երբեք չէր խրտչեր անծանոթի մը հետ խոսակցելե, նույնիսկ հաճույք կզդար ատկե և հետո կխորհեր, որ թերևս իր պատահական խոսակցեն կրնար բան մը իմանալ՝ զինքը հոն մղող խնդրին մասին։

— Ըսել է, որ դուն աստեղացի չես,— առաջ տարավ մյուսը,— որովհետև եթե Շիշլի, Ֆերիգեղ կամ Բանկալթի նստեիր, անպատճառ պիտի ճանչնայիր Հաճի Թումիկ։

— Այդչափ նշանավոր մա՞րդ է,— ըսավ երիտասարդը թեթև մը ժպտելով։

— Նշանավորն ալ խո՞սք է, հինգ տարու տղան Հաճի Թումիկը կճանչնա. .

— Արդյոք ո՞ւշ կուգա։

— Չեմ կարծեր, հոս մոտերը սրճարան մը գնաց, քանի մը բարեկաններ տեսնելու, ստորագրություն կժողվե կոր... ալ լմննալու մոտ է, թուղթին վրա արդեն ստորագրություն դնելիք տեղ չմնաց... ուրիշ մը ըլլար նե՝ տասը ստորագրություն չէր կրնար ժողվել, ամա, Հաճի Թումիկին խաթրը ամեն մարդ կսեպե... անոր չէ չեն կրնար ըսել։

— Ի՞նչ թուղթ է որ...

Մյուսը տեսնելով, որ երիտասարդը իր խոսքերովը կհետաքրքրվի, օղին շիշն ու գավաթը առավ և եկավ անոր սեղանը բազմելու։

— Ծո, Գառնիկ, սա մեզենները հոս բեր,— գոռալով գինետան աշակերտին։

— Էֆենտիմ,— շարունակեց հետո, ձայնը ցածցնելով ու իբր թե խորհրդավոր գաղտնիք մը հաղորդելու ձևով,— մահալլեներս գեշ մը կա եղեր, մեկը առած նստած, մեր Հաճի Թումիկը կիմանա, հեմեն թուղթ մը գրել կուտա, որ այդ նամուսսուզները տունեն հանվին, որ ամենուս պատիվը տեղը գա, իշտե այդ թուղթը ստորագրել տալու համար բան գործ ձգած է, ինչու որ սա գիշեր պիտի տանի Թաղական Խորհրդին թեսլիմ ընե։

— Դուն ալ ստորագրեցի՞ր...

— Հարկավ, չէ թե ստորագրել, տահա պետք ըլլա նե՝ պոյովա կպառկիմ տակը։

— Ըսել է այդ կնոջ ու երիտասարդին անբարոյական ըլլալուն վստահ ես։

— Ոչ կինը կճանչնամ, ոչ ալ երիտասարդը, մինչև այսօր ալ խոսքերնին լսած չէի, անուններն ալ չեմ գիտեր...

— Ուրեմն ի՞նչպես ատանկ թուղթ մը կստորագրես։

— Հաճի Թումիկը ստորագրե ըսավ, անիկա պոշ տեղը պան չըներ։

— Ուրեմն միայն անոր խոսքին վստահելով ստորագրեցի՞ր...

— Ճանըմ, Հաճի Թումիկը անանկ թեթև գործի մեջ չմտնար... ճեմ կարելի՞ է անոր խաբրը կոտրել, ուզածը ինչ է որ... ստորագրություն մը, փարայով չէ՞ յա...

Ու մարդը իր օղիի գավաթը պարպեց և ուրիշ մը ապսպրեց։

Երիտասարդը տխուր մտածումներու մեջ ինկած էր. կդիտեր այդ մարդը, որ ներքնապես բարեմիտ մեկը կթվեր. և որ սակայն իր տգիտությամբ, խորհելու և դատելու կարողություններ զուրկ ըլլալու պատճառավ, անգիտակցաբար ու միամտորեն՝ չարության մը, գուցե ստորին վրեժխնդրության մը գործիք կըլլար։

— Ինձ մտիկ ըրե, բարեկամ,— ըսավ Սերգիս,— այդ ստորագրությունը, որ առանց գործը մոտեն քննելու դրեր ես Թուղթին տակը, գիտես ի՞նչ պիտի ընե։

— Ի՞նչ,— հարցուց մյուսը։

— Գուցե երկու անմեղ անձեր խայտառակաբար տունեն վըռընտվելու պատճառ պիտի ըլլա, խեղճ աղքատ որբևայրի մը պատիվը պիտի արատավորե, պարկեշտ երիտասարդի մը երեսին մուր պիտի քսե... Խիղճդ կներե՞, որ այդ գեշությունը ընես մարդիկներու, որոնք չես ճանչնար իսկ, և որոնք քեզի չարություն մը չեն ըրած, միմիայն Հաճի Թումիկի խաթրը չկոտրելու համար...

Մյուսը, որ կառքի նորոգություններ ընող վարպետի մը քով գործավոր էր, պարկեշտ, պարզամիտ և իրավամբ բարեսիրտ, այս խոսքերեն հուզվեցավ, ուզեց ինքզինք արդարացնել, կրկին գինեպանին վկայությանը դիմելով։

— Բայց Հաճի Թումիկ աղան անանկ մարդ չէ, հարկավ համոզվեր է, որ մեզ ալ համոզեց։

— Կարելի է զինքը խաբած են... մարդս անսխալ չէ։ Ասանկ ծանր խնդիրներու մեջ թեթև կերպով գործ տեսնելը մեծ ոճիր է...

ես վստահ եմ, որ այդ կինն ու երիտասարդը անմեղ են... որչա՞փ ատեն է, որ Ֆերիգեղ եկած են։

— Վեց ամիսե ի վեր հոս են եղեր։

— Լավ, այդ վեց ամսվան միջոցին օր մը օրանց վրանին խոսք մը լսվեցա՞վ, տուներնին խնդիր մը, կռիվ մը ելա՞վ, թաղին մեջ գայթակղության պատճառ եղա՞ն...

— Իրավ որ ես բան մըն ալ չեմ իմացած, մյուսներն ալ, որոնք թուղթը ստորագրեցին, անոնք ալ բան մը չէին գիտեր կոր։

— Տեսա՞ր մի,— գոչեց Սերգիս,— ի՞նչպես կըլլա որ մեկ օրեն մյուսը այս կինը գեշ եղած եղավ, անբարոյական ու բոզ եղավ։

Գործավորը բոլորովին պղտորվեցավ, իր մտքի անդորրությունը խախտեցավ և հանկարծ երիտասարդին դառնալով հարցուց.

— Է, հիմա ի՞նչ ընելու է... Հաճի Թումիկն ալ չեկավ, որ գործը անկեց աղեկ մը հասկնայինք։

Սերգիս մտքին մեջ ծրագիր մը պատրաստած էր. աչքը գինետան նստողներուն վրա ժուռ ածեց և ըսավ.

— Հոս նստողները ամենքն ալ ստորագրա՞ծ են թուղթը։

— Գրեթե ամենքն ալ ստորագրած են, միայն սա նստողը չուզեց ստորագրել,— պատասխանեց գործավորը, իրենցմե երկու սեղան վեր գտնվող մեկը ցույց տալով։

— Ո՞վ է որ։

— Ուստա Սիմոն կըսեն, մառանկոզ է...

Այս այն սակավաթիվ անձերեն մեկն էր, որ ինչպես ընթերցողները գուցե կհիշեն, թեթև կերպով պաշտպան կանգնած էր այրի կնոջ։

— Ինչպե՞ս մարդ է։

— Շնորհքով, ամուսնացած, զավակներու տեր մարդ է... ճեմ ատ կնկան նստած սոխախոր կնստի, երկու տուն վեր... ուստա Սիմոնը իլլե չստորագրեց, ըսելով որ ինք անոնց մոտը կնստի և օր մը օրանց մեկ անպատիվ վարմունքնին չէ տեսած։

Սերգիս ներքին ուրախություն մը զգաց, բայց հայտնի չըրավ։ Գինեպանին աչկերտը կանչեց և ըսավ, որ իրենց շիշ մը օղի բերի, հետո գործավորին դառնալով.

— Սա ուստա Սիմոնը քովերնիս հրավիրե՛,— ավելցուց գործավորին։

Ատաղձագործը. առանց դժվարության, ընդունեց հրավերը։

Սերգիս տեսավ, որ Սիմոն ագա կատարյալ դաշնակից մըն էր

իրեն, որ բացարձակ կերպով կպնդեր այրի կնոջ ու երիտասարդին պատվավորության վրա։

— Անմեղ կնկան արունը պիտի մտնաք, ինտո՞ր ատ թուղթը ստորագրեցիք,— ըսավ գործավորին հանդիմանական շեշտով մը։

— Ամա Հաճի Թումիկը երբոր ըսավ քի...։

— Ճանրմ, Հաճի Թումիկ աղեկ մարդ է, բայց քիչ մը դյուրահավատն է,— պատասխանեց Սիմոն,— շուտով մըն ալ կբռնկի, կօգտե որ քիչ մը կռնակը ծեծես, դուն ես ըսե. այս գործին մեջ կլսաբվի կոր անիկա, մեկու մը ձեռք խաղալիք կըլլա կոր, ամմա չեմ գիտեր որո՞ւ... ետքը մեջտեղ պիտի ելլա հարկավ։

— Ծո, անանկ է նե՝ հիմա գալուն պես ես իմ ստորագրությունս ետ կառնեմ,— գոչեց գործավորը, որ արդեն ելսկսեր խղճահարութենե տառապիլ...— ես իմ հոգիիս վրա ասանկ բեռներ չեմ ուզեր, իլլե ասանկ Ծնունդի օրերուն...

Եվ ահա, կամաց-կամաց, խանութին մեջ գտնվող մյուս հաճախորդներն ալ խոսքի խառնվեցան։

Սերգիս իր ամբողջ պերճախոսությունը թափեց։ Բավական մոտեն ծանոթ էր ժողովրդական դասակարգի մարդոց պարզ հոգեբանությանը, գիտեր անոնց սրտին փափուկ թելերը։ Նույնիսկ հայտնեց, թե ինք խնդրո առարկա երիտասարդին մտերիմ բարեկամն էր և այս առթիվ երկարորեն Գարեգինի գովեստը ըրավ, հետո խոսեցավ նաև Սաթենիկի վրա, պատմեց ինչ որ ինք լսած էր իր բարեկամեն, խեղճ այրի կնոջ թշվառ վիճակը, Աղքատախանային ըրած դիմումը, նպաստի մերժումը, վերջապես մեզ ծանոթ ամբողջ եղերական մանրամասնությունները։

Բոլոր ներկաները խորին ուշադրությամբ մտիկ կընեին երիտասարդը՝ որուն հետ միացած էր նաև ատաղձագործ Սիմոն աղա, որ Սերգիսի բացատրությունները լսելով ինքն ալ այժմ ջերմ պաշտպանը կհանդիսանար զրպարտված այրիին ու երիտասարդին։

Գինետան մեջ գտնվող հաճախորդներու մեծամասնությունը ստորագրած էր այդ հանրագրությունը՝ Հաճի Թումիկի վստահելով և հիմա արտունջներ կբարձրանային անոր դեմ։

Սերգիս կրկին խոսեցավ, ըսավ թե գործված սխալին առաջքն հարկ էր առնել, որպեսզի ամեն մարդու խիղճը հանդարտեր. և ասոր միակ միջոցն էր համոզել Հաճի Թումիկը, որ այդ թուղթը մեջտեղեն վերցնե, առանց իր հասցեին տանելու։ Իսկ եթե համաձայն չեր, այն ատեն անոնք, որ կզզջային ստորագրություն դրած ել-

ելալուն. թող նոր թուղթով մը հայտնեին Թաղ. Խորհրդին, թե անգիտակցաբար տված են իրենց ստորագրությունները։

Այս առաջարկության ամենքն ալ հավնեցան, նույնիսկ անհամբեր խնդրեցին երիտասարդեն, որ անմիջապես հետո կոչումի գիր մը պատրաստե, որպեսզի նույն վայրկյանին ստորագրեն։

— Չէ, նախ սպասենք Հաճի Թումիկի գալուն,— պնդեց Սերգիս,— պետք չէ, որ այդ մարդը վշտացնենք, քանի որ կըսեք թե բարեմտությամբ այս գործին ձեռնարկած է։

Բայց գինեպանը կուշանար, ժամանակը բավական առաջացած էր և Սերգիս ստիպվեցավ շարունակել օղի խմել, սպասելով Հաճի Թումիկի վերադարձին։

Վերջապես ներկաներեն մին գոչեց.

— Իշտե եկավ։

Այո, նույն ինքն էր, ուրախ, հաղթական։

— Ո՞ւր մնացիր, Հաճի Թումիկ աղա,— բարձրացան ձայները ամեն կողմե։

— Տղաք, գործը լմնցուցի, քանի մը հոգիի ալ ստորագրել տվի, ալ թուղթին վրա տեղ չէ մնացած, միտքես ըսի, որ անանկ ալ եղավ, անանկ ալ, փոխանակ վաղը առտու տանելու, այս իրիկվընե տանիմ թուղթը տեղը տամ, լմննա...

— Էյ, տարի՞ր, տվի՞ր,— հարցուց Սիմոն աղա դող ելած։

— Հա անկե կուգամ կոր...

Այսպես ուրեմն, չարիքը գործվեր էր։ Սերգիս գավաթը բարկությամբ սեղանին զարկավ. մինչ մյուսները ապշությամբ իրարու երես կնայեին։

Հաճի Թումիկ իր խոսքերուն առաջ բերած հուզումը նշմարեց և զարմացած հարցուց.

— Ի՞նչ կա, ի՞նչ եղաք...

Նախ ոչ ոք չպատասխանեց, գինեպանին հեղինակությունը այնքան մեծ էր, որ չէին համարձակեր բողոքի կամ դիտողության խոսք մը ուղղել իրեն։

Վերջապես ամենեն հանդուգն ձկնավաճառ Համբիկը խոսեցավ։

— Մենք մեր իմզուները ետ պիտի առնենք, Հաճի Թումիկ աղա...

Գինեպանը այս խոսքերեն ցնցվեցավ, շուռեց ականջներուն

հավատալ։ Ինչպե՞ս կարելի էր այդպիսի բան մը։ Ընդվզում մը չէ՝ ապստամբություն մըն էր այդ՝ իր իշխանության դեմ։

— Ինչո՞ւ համար,— գոչեց բարկաճայթ հոնքերը պռստելով։

— Ան կնիկը ու երիտասարդը պարկեշտ, խեղճ մարդիկ են եղեր, մենք խաբվեր ենք, չենք ուզեր, որ մեր իմզայով անոնց գեշություն ըլլա... մենք խղճի տեր մարդիկ ենք։

— Ատ խալթը ո՞վ խառնեց,— գոչեց այս անգամ Հաճի Թումիկ բարկութենեն փրփրած։

Ձկնավաճառ Համբիկ, որ ամենուն կողմե խոսք առածի ձևով կլլոսեր, չպատասխանեց. մյուս ներկաներն ալ լուռ մնացին։

— Ո՞վ է ձեր խելքը դարձնողը,— հարցուց գինեպանը։

Այն ատեն, ընդհանուր լռության մեջ ձայն մը բարձրացավ.

— Ես ըսի, որ այդ կնիկն ու երիտասարդը անմեղ են։

Խոսողը Սերգիսն էր։

Հաճի Թումիկ անծանոթ երիտասարդին նայեցավ, զայն աչքովը վերեն վար չափեց, հետո խոսքը մյուսներուն ուղղելով հարցուց.

— Ո՞վ է այս մյուսյուն...

Մյուսյու բառը արտասանած էր ամենախորին արհամարհանքի շեշտով մը։

Սերգիս որ ոչ թե կռվիլ՝ այլ հաշտ երթալ կուզեր գինեպանին հետ, հանդարտությամբ պատասխանեց.

— Այս բարեկամները չեն գիտեր ով ըլլալս, անոնք ալ զիս քիչ մը առաջ ճանչցան, արդեն քանի մը օր է Պոլիս հասնիլս... ես Գարեգինին դպրոցական ընկերն եմ, այսինքն՝ այն երիտասարդին, որ անմեղ տեղը կզրպարտվի. եկուր նստինք և առանց բարկության իրարու միտք հասկնանք.

— Այո՛, այո՛, նստե՛ նայինք, Հաճի Թումիկ,— ըսին ներկաները Սերգիսի սեղանին քով տեղ բանալով։

Գինեպանը նստավ և Սերգիս կրկին իր պաշտպանողականը սկսավ նույն համոզիչ կերպով, որով քիչ մը առաջ խոսեր էր մյուսներուն։ Երբ խոսքը ավարտեց, Հաճի Թումիկին դարձավ և ըսավ.

— Ես իմ գիտցածներս, այրի կնոջ ու Գարեգինի մասին մեկիկ-մեկիկ պատմեցի, հիմա դուն քու գիտցածներդ ըսե նայինք։

Գինեպանը, ինչպես հայտնի է, որոշ բան մը չէր գիտեր իր զոհերու մասին, միայն Ղուկաս էֆենտիի ամբաստանությունը կար մեջտեղ, ուստի մեկեն չկրցավ պատասխանել, վարանում մը ունե-

ցավ, ինչ որ չվրիպեցավ ներկաներուն ուշադրութենեն, որոնցմե մին նույնիսկ, անհամբեր ըսավ.

— Խոսե՛ նայինք, Հաճի Թումիկ աղա, դուն ուրկե՞ իմացար այդ կնոջ անբարոյական ըլլալը։

— Բերայի Աղքատախնամին մեծը, Ղուկաս էֆ. Կելկիթյանը կանչեց ինծի և ան ըսավ, որ ասանկ կնիկ մը կա մեր թաղը, իրենք քններ, իմացեր են,— պատասխանեց գինեպանը։

Այս հայտնությունը չզարմացուց երիտասարդը, որ արդեն Գարեգինեն իմացած էր Ղուկաս էֆենտիի շահատակությունները։

Եվ ահա վիճաբանությունը վերսկսավ, շատերը կըսեին, որ, հարկ էր այդ թուղթը ստորագրելե առաջ՝ իրենք քննություն մը ընեին, փոխանակ միայն Ղուկաս էֆենտիի մը խոսքով ճամփա ելլալու, մանավանդ որ այդ մարդը կերևա, թե հայտնի հակառակություն մը ուներ Գարեգինի դեմ, ինչպես Սերգիս իրենց բացատրած էր. Սիմոն աղա ույժ կուտար այդ դիտողություններուն, կպատմեր Սաթենիկի թշվառ վիճակը, շարաշար աշխատությունը անոթի չմեռնելու համար իր յոթը տարեկան աղջկան հետ, որ նոր հիվանդութենե ելած էր։ Եվ հիմա որ այս ստորագրություններուն հենելով՝ զինքը պիտի նետեին ձյուն ձմեռ եղանակին, առանց մեկ փարայի, ի՞նչ պիտի ըլլար այդ թշվառ կնոջ ու աղջկան վիճակը։ Միթե մեղք չէ՞ր այսպես հալածել անօգնական կին մը, որ հայտնապես զոհ կերթար հարուստի մը անխիղճ հակառակության։ Ի՞նչ պետք էր իրենց, պարկեշտ գործավորներ, ճակտերուն քրտինքովը ապրող մարդեր, որ գործիք ըլլային անոր...

— Ես եթե այս թուղթը ստորագրած ըլլայի,— եզրակացուց ատաղձագործ Սիմոն,— ալ գիշերը հանգիստ քուն չպիտի ունենայի, կերած հացս կոկորդես վար չպիտի երթար. խմածս հարամ պիտի ըլլար։

Այս խոսքերը իսկապես հուզեց գինեպանը, որ թեև բարեմտությամբ և համոզումով գործած էր, բայց հիմա կզղջար ըրածին։ Իրավ, պետք էր որ անձամբ տեղվույն վրա քննություն մը կատարեին և կուրորեն հավատք չընծայեին Ղուկաս էֆենտիի խոսքերուն։ Հիմա մեկիկ-մեկիկ կհիշեր իր տեսակցության միջոցին էֆենտիի խոսքերը, որոնք ատելության և հակառակության դրոշմը կկրեին։ Նույնիսկ, քիչ առաջ, երբ ստորագրություններով ծածկված հանրագրությունը ներկայացուցեր էր Ղուկաս էֆենտիին,

վաճառականը արտակարգ ուրախություն մը ցույց տվեր էր, կըրկին լուտանքներ տեղացեր էր Գարեգինի հասցեին... «ան չափիրը ոյուրկին ալ ընել ոյիտի տամ՝ իշալլահ» գոչեր էր ու բսակը հանելով կուկին երեք ոսկի տվեր էր Հաճի Թումիկին։

— Եթե պարզապես մեր աղեկության համար այդ կնոջ ետևեն ինկած է,— կմտածեր գինեպանը,— ինչո՞ւ համար այդքան կիրքով կխոսեր երիտասարդին մասին, հետո ինչո՞ւ այդպես առատորեն կվարձատրեր զինքը։ Ի՞նչ պետք ուներ գրպանեն դրամ ծախսելու հեռավոր թաղի մը անբարոյական կին մը տունեն վտարելու համար։ Բոլոր այս բաները կպղտորեին իր միտքը և այդ ընդունած դրամը այժմ ահռելի կերպով կտանջեր զինքը։ Պահ մը խորհեցավ ետ դառնալ, երթալ Ղուկաս էֆենտիին գտնալ և թուղթը ետ պահանջել, բայց հետո ինքնիրեն մտածեց, որ ապահովաբար չպիտի տար և պարապ տեղը պզտիկ պիտի մնար։

— Էյ, ի՞նչ պիտի ընենք հիմա, Հաճի Թումիկ աղա,— ըսավ ներկաներեն մեկը— ...տեսա՞ր մի գլխներուս բերած փորձանքդ... աս լսած խոսքերես ետքը, ես ալ հանգստություն կորսնցուցի դնաց...

— Վույ շունշանորդի, անապա՛ ինծի ոյիեի՞ բերավ այդ Ղուկաս էֆենտին.— գոչեց գինեպանը, որ կամաց-կամաց կբորբոքվեր վաճառականին դեմ։

Ատենը ուշ էր սակայն և հաճախորդները մեկիկ-մեկիկ կմեկնեին հաշիվնին մաքրելով, և իրարու խոստանալով «վաղը դարման մը մտածելու»։

Սերգիս, իր կարգին, ոտք ելավ մեկնելու համար, սակայն Հաճի Թումիկ արգելեց զինքը։

— Դուն նստե, մյուսյու, քեզի հետ քիչ մը խոսիլ կուզեմ,— ըսավ։

Երբոր ամենքը հեռացան, Հաճի Թումիկ աշակերտին նոր շիշ մըն ալ բերել տվավ և երիտասարդին ու իր գավաթները լեցնելե ետքը, ըսավ.

— Ինծի նայե, մյուսյու Սերգիս, ես կեցած տեղս մարդու գեշություն ընել չեմ ուզեր, և եթե գիտնամ, որ այդ կնիկն ու երիտասարդը անմեղ են, պետք է որ անպատճառ այս գեշության առաջքը առնեմ... ես խղճմտանքի տեր մարդ եմ, ուստի քանի որ դուն անոնց ճանչվոր ես, հիմա միասին իրենց տունը կերթանք, աչքովս պիտի տեսնամ իրենք, հետերնին խոսիմ, հասկնալիքս

հասկնամ և եթե համոզվիմ, որ պարկեշտ մարդիկ են, ան ատեն ես գիտեմ ընելիքս... թող նայինք որ Հաճի Թումիկին խաղ կխաղցվի՞ մի...

Այս առաջարկը մեծ հոժարությամբ ընդունեց երիտասարդը։

— Քալե երթանք,— ըսավ, ոտքի ելլելով։

Եվ երկուքը միասին դուրս ելան գինետունեն։

— Նախ «Օսման պեյ» հանդիպինք,— ըսավ ճամփան Սերգիս,— որովհետև Գարեգին հոն ինծի կսպասե կոր։

Երբ սրճարանեն ներս մտան, Գարեգին չկրցավ զարմանքը ծածկել իր բարեկամը տեսնելով գինեպանին հետ։

— Ահա թշնամիդ քեզի կբերեմ,— ըսավ Սերգիս խնդալով։

Հետո նստեցան ու բավական խոսակցելե ետքը, երեքը միասին ուղղվեցան Սաթենիկի տունը։

Դուռը զարկին, բայց բավական սպասելե ետքը, տեսնելով բացող չի կար, Գարեգին կրկին դուռը զարկավ, այս անգամ ավելի ուժգին։ Քիչ հետո վերջապես Սաթենիկ եկավ դուռը բանալու, հուզված, այլայլված դեմքով մը, աչքերը արցունքոտ։

— Ի՞նչ ունիք, ի՞նչ եղավ, տիկին,— հարցուց Գարեգին անոր տակնուվրա վիճակը տեսնելով։

Հետո, իրեն ընկերացողները ներկայացնելով ըսավ.

— Պ. Սերգիս Սմբատյան, դպրոցական ընկեր և մտերիմ բարեկամս... Հաճի Թումիկ...

Այս անունը լսելով տիկին Սաթենիկ ահռելի աղաղակ մը արձակեց։ Երիտասարդը՝ շվարած՝ քովը փութաց և զայն առաջնորդեց գետնահարկի վրա գտնված սենյակը, որ արդեն իրեն իբրև նստելու սենյակ կծառայեր։

— Բայց ինչո՞ւ այսպես հուզվեցաք,— հարցուց կրկին երիտասարդը. մինչ մյուս երկու մարդիկը բակը մնացեր էին, առանց ներս մտնել համարձակելու...

— Այդ մարդն է, որ ինծի դեմ հանրագրություն ստորագրել կուտա կոր,— հեկեկաց թշվառ կինը։

— Մենք ալ ճիշտ ստոր համար եկանք, հիմա ինքն ալ համոզված է, թե վատ գործ մըն է ըրած... կաղաչեմ, հանդարտեցեք. մենք ամեն բան բացատրեցինք իրեն. .

Եվ Գարեգին դուրս ելլելով՝ սենյակ մտցուց Սերգիսն ու Հաճի Թումիկը, որ ինքն ալ հուզված կթվեր իր անունին առաջ բերած ազդեցութենեն։

Երբ Սաթենիկ քիչ մը հանդարտեցավ, պատմեց թե ինչո՞ւ այնքան այլայլված ու հուզված էր։ Իրիկունը՝ իր դրացուհին՝ Շազիկ հանումը՝ եկեր և իմաց տվեր էր, որ զինքը իբրև անբարոյական տունեն հանելու համար հանրագրություն մը ստորագրված էր և թե գինեպան Հաճի Թումիկն էր այդ գործը կատարողը։ Ասիկա շանթի հարված մը եղեր էր իրեն համար։ Խելահեղ և հուսահատ ինկեր էր անկողնին վրա և ժամերով լացեր էր և ճիշտ ասոր համար չէր կրցած անմիջապես գալ դուռը բանալ։

Ու նորեն սկսավ հեծկլտալ։

Գարեգին գնաց գավաթ մը ջուր փնտռելու կնոջ հուզումը հանդարտեցնելու համար, մինչ Սերգիս կշանար զայն համոզել թե ամեն բան կարգադրած էին իրենք, թե եղածը թյուրիմացության մը արդյունք էր։

— Ես իբրև անբարոյական ամբաստանվիմ,— կհեկեկար Սաթենիկ,— ես որ խեղճ էրկանս մահվանեն ի վեր ամեն զոհողություն, ամեն զրկանք աչքս կառնեմ անարատ պահելու համար... իցիվ թե չդիմեի այդ անիծյալ Աղքատախնամին և այս փորձանքները գլուխս չի գար... այս ինչ ոճրագործություն է, աղջկան տեր կնոջ մը պատիվը արատավորել, ինչպե՞ս ասկե ետքը պիտի կրնամ մեկու մը երես նայիլ, ինչպե՞ս փողոց պիտի ելլեմ։

Հաճի Թումիկ այժմ կզգար իր արարքին ամբողջ չարիքը, ահռելիությունը, կուզեր խոսիլ, ինքզինք չքմեղացնել, բայց խոսքերը կոկորդին մեջ կմնային և անդադար գլուխը կտատաներ, հուսահատ շարժումով մը։

Սաթենիկ շարունակեց խոսիլ։ Իր աղքատ ու թշվառ այրիության ամբողջ պատմությունը ըրավ, անկեղծության այնպիսի շեշտով մը, որ կարելի չէր չհամոզվիլ իր ըսածներուն ճշմարտության։ Հետո՝ խոսեցավ Գարեգինի մասին, ըսավ թե ինչ մտերիմ բարեկամը եղած էր իր ամուսնույն և թե ինչ եղբայրական հոգածություն մը ունեցած էր իր վրա, անոր մահվընե ետքը և հիմա այդ անձնվեր պաշտպանությունն էր, որ կդատապարտվեր, որ անբարոյական կհռչակվեր...

Գինեպանը հարաճուն խղճի խայթով մը մտկկ կըներ Սաթենիկը։ Հիմա ալ բացարձակապես կզգար խաբված ըլլալը և այս ստուգությունը կկատղեցներ և ամբողջ բարկությունը կկուտակեր Ղուկաս էֆենտիի դեմ, որուն անարգ գործիքը եղած էր։ Եվ որով-

հետև Սաթենիկի ուղղելիք խոսք մը չէր գտնար, հանկարծ պոռթ-
կաց Ղուկաս էֆենտիի դեմ.

— Վայ, շունշանորդի ճերիֆ, անանկ իմ քթիս խնդա, ձեռքս
արյունի մեջ թաթխել տա, վայ, անխիղճ, անաստված մարդ,
ամա անոր աս ըրածը իրեն չպիտի թողում... անոր պիտի սորվեց-
նեմ, որ Հաճի Թումիկին հետ խաղալ չըլլար... հարուստ է տեյի,
կկարծե, որ ուզած գնշությունը կրնա ընել...

Եվ սկսավ պատկերալից հայհոյանքներու շարք մը վաճա-
ռականին հասցեին։ Այժմ, ալ ամենքը բարեկամ եղած էին, Սա-
ռականին հասցեին։ Այժմ, ալ ամենքը բարեկամ եղած էին, Սա-
թենիկ բոլորովին հանդարտած կթվեր. իրեն այնպես հավատացու-
ցին, թե թուղթը տակավին չէ հանձնված իր տեղը, հետևաբար
քանի որ այժմ պիտի չնչեին զայն, ոչէ նախատինք մը չէր կըր-
նար գալ իր անունին։

Վերջապես ժամանակը եկավ մեկնելու, գինեպանը և Սերգիս
ոտքի ելան, մնաս բարով ըսին և դեպի դուռը ուղղվեցան Գալե-
գինի հետ հետևյալ առտու ժամադիր ըլլալով։

Փողոցը Հաճի Թումիկ ըսավ Սերգիսին։

— Մյուսյու Սերգիս խնդիրք մը ունիմ, չէ չպիտի ըսես և խոսք
պիտի տաս, որ պիտի կատարես... տես ես քու խոսքիդ մտիկ ըրի։

— Ի՞նչ է խնդիրքդ։

— Ասիկա այդ որբևայրիին պիտի տաս, թող ծնունդի խաշլը
ընե...

Ու գինեպանը անոր հանձնեց Ղուկաս էֆենտիեն ընդունած
երեք ոսկին։ Ասով կարծես թեթևացում մը կզգար խղճին վրա։

ԳԼՈՒԽ Թ

Լևոն Կոկիկյան, տասը օր էր, որ մեկնած էր Պոլսեն ու այդ
միջոցին երեք նամակ գրած էր իր նշանածին՝ Ռոզիկի, առաջինը
Ֆիլիպեեն, երկրորդը Վիեննայեն և վերջինը Փարիզեն, որուն մեջ
կհայտներ, որ հակառակ իր ենթադրության, չի պիտի կրնար երկու
շաբաթեն վերադառնալ և հավանորեն իր բացակայությունը ամիս
մը պիտի տևեր և թե այս պարագան անհուն հուսահատություն
կպատճառեր իրեն։

«Ամբողջ ուղևորությանս միջոցին քու վրադ մտածեցի,—
կգրեր,— և հոս հասնելես ետքն ալ վայրկյան մը չէ եղած, որ քեզ
չհիշեմ։ Փարիզը զոր այնքան կսիրեի, հիմա ձանձրույթ կպատ-

ճառե ինծի. կուզեմ ժամ առաջ գործս լմնցնել քու քովդ դառնա-
լու համար։ Դժբախտաբար ստիպված եմ սպասելու անգլիացի
գոհարավաճառի մը, որ Լոնտոնեն պիտի գա և ես կենթադրեի, որ
արդեն հոս պիտի գտնեի»։

Եվ երիտասարդը պաղատագին կխնդրեր նշանածեն, որ
ամեն օր նամակ գրեր իրեն, «որովհետև,— կըսեր,— քու նամակ-
ներովդ միայն կապրիմ»։

Ռոզիկ երիտասարդին այս սիրային հայտարարությունները
կլափեր անսահման հրճվանքով մը։ Արդեն Լևոնին մեկնելեն եր-
կու օր ետքը նամակ մը գրած էր անոր և հետո, հաջորդաբար եր-
կու օրը անգամ մը, շարունակած էր իր նամակները։ Բայց անոնք
շատ կարճ էին և չունեին երիտասարդին նամակներուն խանդավառ
ու հրայրքոտ շեշտը։ Ռոզիկ զգաց, որ պետք էր ինքն ալ կրակ
դներ ասկե ետքը իր գրությունններուն մեջ, որպեսզի նշանածը կաս-
կած չունենար իր զգացումներուն մասին։

Երբ որ մորը կարդաց Լևոնի նամակը, մայրն ալ նույն խրա-
տը տվավ։

— Նայե որ սիրտը վրադ տաք պահելու բաներ գրես,— ըսավ։

Եվ սակայն, եթե Լևոն, իր բացակայության մեջ խանդակաթ
սիրահար մը կմնար, իր մայրը, տիկին Անթառամ հետզհետե պաղ
վերաբերում մը կունենար իր հարսնացուին հանդեպ։

Իր տղուն մեկնելեն ի վեր երբեք այցելության չէր եկած Ղու-
կաս էֆենտիի տունը, թեև Ռոզիկ ու իր մայրը մեկ քանի անգամ
գացեր էին պանդոկ, զինքը տեսնելու։ Այդ տեսակցությանց միջո-
ցին ալ շատ չոր կերպով վարվեր էր։

Ռոզիկ իր նշանածեն ամեն նամակ ստանալուն՝ փութացած
էր երթալ իմաց տալու տիկին Անթառամի։ Եվ այս բանը ալ ավե-
լի կատաղեցուցած էր զայն, քանզի Լևոն մինչև հիմա տակավին
երկտող մը չէր գրած իր մորը։ Եվ Ռոզիկի դեմ նախանձը բույն
դրեր էր սրտին մեջ։

— Այսչափ տարվան մայրը, երեկվան նշանածին համար մոռ-
ցավ,— կխորհեր դառնությամբ։

Տիկին Անթառամի հայտնապես թշնամական այս ընթացքը
միակ սև ամպն էր Ռոզիկի պայծառ երկնքին վրա։ Եվ շատ ան-
գամ մայր ու աղջիկ տխրությամբ իրենց մտահոգությունը իրա-
րու կհաղորդեին այս մասին։ Բայց Ղուկաս էֆենտի բնավ փույթ
չէր ըներ անոր համար։

— Ատ ճատրին բնավ կարևորություն մի տաք,— կըսեր,— հերիք է որ տղան ձեռքերնուս մեջն է...

Ու կփութացներ օժիտի պատրաստությունները, որպեսզի Լևոն վերադառնալուն պես կարելի ըլլար հարսնիքը կատարել։

Եվ սակայն տիկին Անթառամ արհամարհելի թշնամի մը չէր և տակավին չէր հուսահատած այս նշանտուքը ետ ընելու մասին, միշտ իրեն գործակից ունենալով Տ. Միքիաս հայրը, որ գրեթե ամեն օր կուգար զինքը տեսնելու։

Այն օրն, որ Ռոզիկ Փարիզեն նամակ մը ստացած էր, ուզած էր կրկին երթալ տիկին Անթառամին լուր տալ և մորը հետ ընկերակցությամբ ուղղված էր Պրիսթոլ պանդոկը, բայց հոն դռնապանը ըսած էր.

— Տիկին Կոկիկյան դուրս ելած է։

— Ե՞րբ կվերադառնա։

— Հավանորեն շատ ուշ, ինքը այսպես ըսավ...

Երկու կիները իրենց այցաքարտը ձգեցին։ Բայց Ռոզիկ իրենին վրա երկտողով մը իմացուց, թե Լևոնեն նամակ ստացած է Փարիզ հասնելեն ետքը, որով իր բացակայությանը քիչ մը երկարիլը կծանուցանի։ Հետո ավելցուց, թե հետևյալ օրը կրկին պիտի գային զինքը տեսնելու։

Արդ, դռնապանը կստեր։ Տիկին Անթառամ հոն, պանդոկն էր, սակայն ինք պատվիրած էր, որ եթե հյուր գար, այդպես ըսեին։

Եվ պանդոկին մեջ առանձին չէր, Տ. Միքիաս քահանային հետ էր։ Քահանան հավատացուցած էր տիկին Անթառամի, որ եթե տղուն նշանը ետ ըներ, Սմսարյանները պատրաստ էին իրենց աղջիկը տալու ութը տասը հազար ոսկի օժիտով մը, մինչ Ղուկաս էֆենտի հազիվ երեք հազար ոսկի խոստացած էր և այն ալ պարզ խոստում մը, որ հավանորեն չպիտի հարցեր, մանավանդ որ,— կըսեր քահանան,— իր առած ստույգ տեղեկություններուն համեմատ, Ղուկաս էֆենտի մեծ-մեծ կորուստներ ըրած էր իր գործերուն մեջ և շատ նեղ դրության մատնված էր։

— Պարզապես ձեր վրա բեռ պիտի ըլլան, տիկին Անթառամ,— ըսավ Տեր Միքիաս...— ես կկարծեի, որ այդ Ղուկաս էֆենտին հաստատ հարստություն մը ունի, մինչդեռ ամբողջ ունեցածը կառավարութենեն առնելիքներ է, որոնք երբեք գանձելիք չունի։

— Ա՜խ, ինտոր այս փորձանքը գլուխնուս բերինք,— կշարունակեր Լևոնին մայրը։

Նույն միջոցին ծառան ներս մտնելով հանձնեց երկու այցաքարտերը, որոնց վրա աչք մը նետելով՝ Անթառամ գոչեց.

— Միտքես անցավ, որ պիտի գան, աղեկ որ առաջուց պետք եղածը ըսած էի դռնապանին։

Հետո կարդաց Ռոզիկին երկտողը.

— Կտեսնա՞ս, նորեն Լևոնեն նամակ առեր է... ինծի դեռ երկտող մը, բան մը չղրկեց. տեսնվա՞ծ բան է աս։

— Իրավ որ, մեղք այս եղածին,— պատասխանեց Տ. Միքիաս,— քանի կմտածեմ, սիրտս կայրի կոր։ Հերմինեին պես աղջիկը թողուլ և երթալ Ռոզիկը գտնել, թե ավելի հարուստ, թե ավելի գեղեցիկ և թե ավելի ուսյալ... Ասկե զատ Սմսարյանները ճըշմարտապես ազնվական ընտանիք են, իսկ գալով Կելկիթյաններուն, ո՞վ են որ, երեկվան մարդիկը... քիչ մը դրամ շահեր է տե՝ Ղուկաս էֆենտի եղեր է։

— Աս գործը ավրելու ճար մը գտնելու է՝ ես աս գիտեմ,— ըսավ Անթառամ վճռաբար.— չեմ ուզեր, որ ձեռքովս մեծցուցած զավակս այսպես ինե պաղեցունեն, ձեռքես առնեն... անկե զատ, առաջին վայրկյանեն սիրտս այդ աղջկան վրա չտաքցավ։ Կաղաչեմ, տեր հայր, միջոց մը սորվեցուր ինծի...

Տ. Միքիաս իր երկայն փառավոր մորուքը շոյեց, ինչ որ մտածելու սովորական շարժում մըն էր իրեն համար, հետո պատասխանեց.

— Զավկիդ բացակայութենեն պետք է օգուտ քաղել՝ այդ խոսք-կասը ետ ընելու համար։

— Բայց ի՞նչ կերպով...

Քահանան նորեն սկսավ մորուքը շոյել և խոսքը շարունակեց.

— Պետք է, որ խնամիցուներուդ հետ խոշոր կռիվ մը հանես, ուէ պատրվակ մը գտնելով, անանկ կռիվ մը, որ նույնիսկ իրենք ստիպվին նշանը ետ ընել... ուրիշ ճար չկա, ու այս բանը կարելի եղածին չափ շուտ ըլլալու է։

Զուգադիպությամբ մը Անթառամ ալ, ինքնիրեն, նույն բանը մտածեր էր, այսինքն գժտություն մը առաջ բերել իր ու Կելկիթյաններուն միջև, այն աստիճան, որ զավակը ստիպվեր կամ զինքը զոհեր և կամ աղջիկը, ուստի Տ. Միքիասի խորհուրդը շատ գործնական գտավ։

— Ես ալ ատիկա մտածեցի,— գոչեց,— միայն թե հարկ էր կռիվի բավական լուրջ շարժառիթ մը գտնել։

— Այդ դյուրին է,— ըսավ քահանան,— նախ երեք հազար ռուբլի օժիտի խնդիրը կա, հետո Ղուկաս էֆենտիի նյութական կացության մասին եղած աննպաստ տարաձայնությունները, ասկե զատ, եթե պետք ըլլա, ներքին ընտանեկան ազատ բաներ ալ մեջտեղ կրնաս դնել... օրինակի համար, այդ Ղուկաս էֆենտիի համար կըսեն, որ իր քենին կսիրե...

— Ի՞նչ կըսես, տեր հայր,— գոչեց Անթառամ գայթակղած։

— Ամենուն գիտցած բանն է աս, տիկին, ես մտքես չեմ հնարեր կոր։

— Բայց ինչո՞ւ առաջին օրվընե ի վեր այդ բաները զավկիս չըսիր։

— Ես երբոր ձեր հետ առաջին անգամ տեսնվեցա, բանը բանեն անցեր էր, որոշումը տվեր էիք և որովհետև ես չեմ սիրեր այդ տեսակ խնդիրներու մեջ խոսք խառնել, մանավանդ որ իմ դիրքիս ու աստիճանիս ալ անվայել է, հետևաբար ձայն չհանեցի... նույնիսկ, երբ ձեր համակրությունը տեսա Ռոզիկին ու Ղուկաս էֆենտիին վրա, ես ալ վրա տվի, աղջկան ու ընտանիքին գովեստը ընելով... կարծես ով որ ալ ըլլար իմ տեղս, նույն բանը պիտի ըներ... բայց հիմա խնդիրը փոխվեցավ, հիմա ճշմարտությունը հայտնելու ատենը եկավ, ուստի ես ալ կխոսիմ։

— Շնորհակալ եմ, բայց կվախնամ, որ ուշ մնացած չըլլանք։

— Եթե վարպետությամբ և շրջահայեցողությամբ գործենք, տակավին ուշ չէ, կրնանք հաջողիլ՝ Լևոն էֆենտիին այս փորձանքեն ազատել... սակայն միայն հոս գործելով չի լմննար, մյուս կողմեն ալ նամակով ազդելու է ձեր զավկին վրա, անոր ալ հասկըցնելու է ամեն բան, որպեսզի աչքը բացվի... երթալեն ի վեր նամակ գրեցի՞ր իրեն։

— Շիտակը չգրեցի... ինք պարտավոր էր ինծի գրել, նշանածին ժամանակ կգտնա կոր գրելու, մորը երկու տող բան չգրեր... աս ըրածին շատ ցավեցա ու միտքս դրի, որ մինչև որ ինք չգրե, ես իմ կողմես բան մը չգրեմ։

— Ինծի նայե, տիկին Անթառամ, հիմա ատանկ բաներու համար զավկիդ հետ քեն պահելու ատեն չէ. ընդհակառակը, նայե, որ իր վրա ավելի սեր ու գուրգուրանք ցույց տաս, որպեսզի քենե բոլորովին չփախչի... ես եթե քու տեղդ ըլլամ, անմիջապես կնըստիմ, երկար նամակ մը կգրեմ, նախ իր մեկնելուն առթիվ զղացած վիշտս կպատմեմ, կըսեմ, որ իրմե հեռու չեմ կրնար կոր ապրիլ, և այլն. հետո, խոսք կբանամ Ղուկաս էֆենտիենց մասին և անոնց նյութական աննպաստ վիճակին մասին առած տեղեկություններս կհաղորդեմ, առանց աղբյուրը ցույց տալու. հետո երկրորդ նամակով մը ընտանեկան գայթակղությունները կհիշեմ... այդ մասին ես, եթե պետք ըլլա, նորանոր տեղեկություններ կրնամ տալ։ Անկե ետքը կամաց-կամաց Ռոզիկի թերությունները մեջտեղ կդնեմ. վերջապես անանկ մը կընեմ, որ իբր թե իր մեկնելեն ի վեր ամեն օր մեկ մեկ աննպաստ տեղեկություններ կստանաս Կելկիթյանների վրա, մյուս կողմեն ալ հոս, դուն քեզի խզում մը առաջ կբերես, այնպես որ զավակդ հոս հասնելուն՝ ամեն բան տակնուվրա եղած գտնա... ալ անկե ետքը կմտածենք մեր ընելիքը։ Դուն վըստահ եղիր, որ նշանը ետ ըլլալեն շաբաթ մը ետքը Հերմինեին հետ կրնանք Լևոն էֆենտին նշանել...

Տիկին Անթառամ հանձն առավ հետևելու Տ. Միքիսի խորհուրդներուն, որոնք շատ բանավոր կթվեին իրեն։

Երբ Տ. Միքիսս հրաժեշտ առավ ու մեկնեցավ, տիկին Անթառամի առաջին գործը եղավ խոստացված նամակը գրել Փարիզ, իր զավկին, գործ՝ որ բավական դժվարին էր իրեն համար. որ շատ նախնական կրթություն մը առած էր և հաղիվ պարզ կարդալ մը գիտեր ու քիչ մըն ալ գրել, անհեթեթ, աներևակայելի տառասխալներով։

Այս տաժանակիր աշխատությունը ավարտելե ետքը, որ գրեթե երկու ժամ տևած էր, թեև նամակը հազիվ երեք երես եղեր էր, Անթառամ իր կոիվի հատակագիծը պատրաստեց։

Ռոզիկ իր այցաքարտին մեջ ծանուցած էր, որ հետևյալ օրը կրկին պիտի գայլին պանդոկ, իրեն այցելություն տալու. միթե այդ լավ առիթ մը չէ՞ր ճակատամարտը սկսելու։ Որովհետև շատ ժամանակ չունեին կորսընցնելու, իրավ էր, որ տղան պարտավոր էր իր վերադարձը մեկ քանի օր հապաղել, բայց այդ հապաղումը շատ աննշան բան մըն էր, ուստի գործել կուզեր անմիջապես, մշղոն վերադարձեն ետքը անկարելի էր բան մը ընել։

Գիշերը ամբողջ իր միտքը այս խնդիրներով շարշարեց։ Լևոն խենթի պես սիրահարված ըլլալու էր այդ աղջկան՝ զինքը այս աստիճան ժողոված ըլլալու համար. ինք՝ որ մինչև այդ օրը մորը հանդեպ սեր ու պատկառանք միայն ցույց տված էր և ուզած էր, որ իր ամուսնությունն ալ մոր հաճությամբը ըլլար։ Այժմ կգլար.

որ տղան խույս կուտար իր ձեռքեն և այս բանն էր, որ ամենեն ավելի կկատղեցներ զինք, և Ռոզիկի դեմ սիրտը ատելությամբ կլեցներ։ Ինք՝ որ մինչև այն ատեն իբրև տիրուհի մը ապրած էր Փարիզի մեջ իր զավակին հետ, և կփափաքեր նույն դիրքը պահել հարս մը առնելեն ետքն ալ, այժմ երկյուղ մը կզգար, որ այդ դիրքը կխախտեր, թե կրնար ըլլալ, որ հարսը դառնար տան տիրուհին և ինք ստիպվեր վար իջնել պատվանդանեն և այս հավանականությունը սոսկալի մտատանջություններու կմատնեին զինքը։

Անշուշտ որդին ամուսնացնելու փափաքած էր. ինք հղացած ու հետապնդած էր այդ ծրագիրը, բայց պատշաճության ամուսնություն մըն էր իր ուզածը և ոչ թե սիրային ամուսնություն մը, ինչպես կսպառնար ըլլալու։

— Ես իմ ձեռքովս իմ դժբախտությունս պատրաստե՞մ.— ասանկ կմտածեր անկողնին մեջ քունը փախած.— այս ի՞նչ փորձանք բերի գլխուս...

Չէ՛, անկարելի էր համակերպիլ սպառնացող վտանգին, պետք էր կռվիլ, անկարելին ընել, ամեն գայթակղություն աչք առնել, խզում մը առաջ բերելու համար Ղուկաս Կելկիթյաններու հետ։

Եվ Անթառամ, այս հաստատ մտադրությամբ, վերջապես, առտվան դեմ քիչ մը աչքերը փակեց։

Հետևյալ օրը, արդեն մութը կոխելու վրա էր, երբ որ տիկին Թագուհի և Ռոզիկ, որոնք դերձակուհիին գացած էին, ներկայացան պանդոկ։

— Հո՞ս է տիկին Կոկիկյանը,— հարցուց աղջիկը կասկածոտ դեմքով մը, որովհետև սկսած էին կռահել, որ տիկին Անթառամ զիրենք չընդունելու համար հաճախ «հոս չէ» ըսել կուտար։

Սակայն այս անգամ դռնապանը պատասխանեց.

— Այո՛, հոս է, ներս հրամմեցեք։

Իր բնակած սենյակը գիտեին, ուստի ուղղակի հոն դիմեցին և դուռը զարնելե ետքը ներս մտան։

Տիկին Անթառամ թիկնաթոռի մեջ բազմած էր, անժպիտ խոժոռ դեմքով մը։

Տիկին Թագուհի ժպտերես մոտեցավ, ըսելով.

— Երեկ ալ հանդիպեցանք ձեզի, բայց դուրս ելած էիք, ուստի քարթերնիս ձգեցինք.

— Այո, առի,— պատասխանեց Անթառամ չոր կերպով մը։

Ռոզիկ ալ իր կարգին մոտեցեր էր իր ապագա կեսուրոջ և ըստ սովորության, ձեռքը համբուրելե ետքը, ճակատը ներկայացուցած։

Անթառամ հազիվ թե շրթունքը դպցուց աղջկան ճակատին։

Հյուրերը առաջին րոպեին զգացին ընդունելության արտասովոր պաղությունը, այսուհանդերձ տիկին Թագուհի թիկնաթոռի մը մեջ տեղավորվեցավ, մինչ Ռոզիկ կլոր սեղանի մը քով դրված աթոռի մը վրա կնստեր։

Տեսնելով որ տիկին Անթառամ սփինքսային լռություն մը կպահե, նախ և առաջ տիկին Թագուհի խոսիլ սկսավ։

— Ինչպե՞ս եք, աղեկ եք, տիկին,— հարցուց։

— Չէ, աղեկ չեմ,— պատասխանեց մյուսը,— քանի օրե ի վեր վրաս նեղություն մը կա։

— Արդյոք դուք ալ մյուսյու Լևոնեն նամակ առի՞ք... անշուշտ առած ըլլալու եք։

Այս հարցումը, մանավանդ վերջին հավաստումը դժնդակ հարված մը եղավ Անթառամի համար, որ ինքզինքին վրա մեծ ճիգ մը ընելով պատասխանեց.

— Այո, առի։

— Ուրեմն ձեզի ալ գրած ըլլալու է, որ իր վերադարձը քանի մը օր պիտի ուշանա։

— Այո, գրած էր։

Ինչպես գիտենք, տիկին Անթառամ շարաշար կստեր, սակայն իր հպարտությունը չէր ներեր իրեն խոստովանելու, թե զավակը զինքը մոռցած էր բոլորովին։

— Ինծի տասը երես նամակ մը գրած էր,— ըսավ Ռոզիկ աշխույժ զվարթությամբ մը, հակառակ սենյակին մեջ տիրող պաղության։— Ամբողջ ճամփորդությունը մանրամասն պատմած էր, հետո գործերուն մասին տեղեկություններ տված էր և հետո ըսած էր, որ ձեզի ալ իմաց տամ Փարիզ հասնիլը և գործի պատճառավ իր վերադարձին քիչ մը ուշանալը...

— Բայց արդեն տիկինին ինքն ալ գրեր է,— դիտել տվավ Թագուհի։

— Այո,— ըսավ աղջիկը,— զարմանալի բան, ես իր նամակեն այնպես ենթադրեցի որ ձեզի չէր գրած միևնույն ատեն, քանի որ կհանձնարարեր այդ հապաղումը իմաց տալ ձեզ...

Բոլոր այս փոխանակված խոսքերը ծայրահեղորեն գրգռեցին տիկին Անթառամը, որ իր մտային ներկա տրամադրության մեջ

այնպես ենթադրեց, որ այդ խոսքերը հատկապես կըլլային, իր նամակ ընդունելու պարագան սուտ հանելու համար, թեև ճշմարտությունն այն էր, որ տիկին Թագուհի և ոչ ալ աղջիկը այդպիսի կասկած մը չէին ունեցած։

— Ի՞նչ ըսել կուզե կոր,— գոչեց հանկարծ Անթառամ, խոսքը Ռոզիկի ուղղելով,— իբր թե նամակ չեմ առած ու սո՞ւտ կխոսիմ կոր, հա՞... կերևա որ դուն խրատեր ես զավկիս, որ նամակ չգրե ինծի...

Պատերազմի նշանը տրված էր և առաջին գնդակն էր, որ կարձակվեր։

Խեղճ Ռոզիկ շփոթված, դողահար այդ հանկարծական հարձակումեն, որուն բնավ չէր սպասեր, չէր գիտեր ինչ պատասխաններ։

— Բայց, տիկին, ինչ կըսեք,— կմկմաց.— ինչպես ատանկ ենթադրություն մը ձեր մտքեն կանցնեք... միթե կարելի՞ բան է...

— Լռե՛, լռե՛,— շարունակեց Անթառամ, հետզհետե բորբոքելով,— ես ան քու գիտցած տըլլա տիկիններեդ չեմ, ես գիտես որ լուր չունի՞մ անցած-դարձածեն, ձեր խաղցած խաղերեն... մեյ մըն ալ եկեր են, մայր ու աղջիկ, չամչնալով դեմս անցեր, քթիս կխընդան կոր, ասոնց նայեցեք մեյ մը...

— Կաղաչեմ, տիկին, հանդարտեցեք, ատոնք անվայել խոսքեր են,— գոչեց Թագուհի, որ չէր կրնար խելք հասցնել իրենց ապագա խնամիին այս անսովոր ընթացքին։

Իսկ հեգ Ռոզիկ, հուզված՝ սիրտը ելած՝ կարտասվեր այս անիրավ նախատինքներուն տակ։

Անթառամ, որ միտքը դրած էր կիսկատար գործ չտեսնել և ներսիդին կուտակված բոլոր մաղձը դուրս թափել, շարունակեց.

— Քանի համբերեմ, աչք գոցեմ ըսի, այնչափ խաղերնիդ առաջ տարիք... զավակս միամիտ գտաք, ծուղակ ձգեցիք տեյի՝ մա՞յրն ալ անանկ կարծեցիք, ինծի նայե, Թագուհի հանըմ, ես քեզի պես հանած վարածները ճեպես կհանեմ... հեմ աս ալ մտքերնիդ դրեք, որ զավակս հալու պես փեթթել չեմ ի տար ձեզի, անիկա այսչափ տարի աշխատեցավ, արյուն քրտինք թափեց մի հոս գա տե, կործանած, պարտքը պաղազը մարդե՞ աղջիկ առնե... այսօր ուզեմ նե՝ ձեռքս պագնելով տասը հազար ոսկիով աղջիկ կուտան տղուս... ամեն օր լուր կուգա կոր, ինչ աղջիկներ, մեկը մյուսեն աղվոր, մեկը մյուսեն ուսյալ... չէ քի Ռոզիկին պես...

— Աղջիկս, ել եքթանք,— ըսավ Թագուհի, բարկութենեն կամ-

կարմիր կտրած, մինչ Ռոզիկ ոտքի կելլեր հեծկլտուքը շարունակելով, ավելի բարձրաձայն։

— Ելեք, դացեք, դռները բաց են...— գոչեց Անթառամ ձեռքովը վանողական շարժում մը ընելով։

Տիկին Թագուհի և Ռոզիկ հասան տուն, ճամփան առանց խոսք մը փոխանակելու իրարու հետ։ Հարվածը այնքան անակնկալ, այնքան սաստիկ եղած էր, որ երկուքն ալ պապանձեր էին։ Անշուշտ Լևոնին մեկնումեն ի վեր նշմարած էին, որ Անթառամ պաղ վերաբերում մը ցույց կուտար իրենց հանդեպ, նույնիսկ կզգուշանար հետերնին տեսնվելե կամ մտերմություն ցույց տալե, բայց երբեք չէին երևակայեր, որ այդ չկամությունը կամ պաղությունը այսպիսի անբացատրելի մոլեգնությամբ մը պիտի պայթեր։ Խեղճ Ռոզիկ, տուն հասնելուն՝ ազատ աւպարեզ տվավ իր զսպված հուզումին և սենյակը քաշվելով, ուր մայրը գացած էր իրեն միանալու, սկսավ հորդ արցունք թափել։

Մանկատի աղջիկը իրապես կսիրեր Լևոնը, մանավանդ այն օրեն ի վեր, որ տեսած էր, որ երիտասարդը անկեղծ ու անշահախընդիր վարմունք մը ունեցած էր իրեն հանդեպ։ Այն կեղծ քրծնումները, որոնք, իր ծնողքին խորհուրդով, ի գործ դրեր էր երիտասարդին հետ ունեցած տեսակցություններուն ատեն, շուտով ճըշմարիտ տարփանքի մը փոխված էին։

— Ա՜խ, մայրիկ, ի՞նչ պիտի ընենք հիմա,— կհեծկլտար գլուխը իր մոր ծունկերուն վրա դրած...— ան ինչ սարսափելի նախատինքներ ըրավ մեզի, հիմա ինչպե՞ս իրարու երես պիտի նայինք...

— Անպատճառ մեկը խոսք խառներ է,— կկրկներ տիկին Թագուհի.— այս եղածին մեջ թշնամիի մատ կա, ինչո՞ւ մեկ օրեն մյուսը այդ կինը այսպես մեզի դեմ դարձավ, ի՞նչ ըրինք իրեն...

Հետո ջանաց աղջիկը մխիթարել, ըսելով թե գուցե Անթառամ ջղային տագնապ մը ունեցած էր, թե իր ըրածին վրա պիտի զղջար, թե գուցե ներում պիտի խնդրեր։ Բայց աղջիկը այդ խոսքերեն չէր համոզվեր. այդ կնոջ աչքերուն մեջ կարդացեր էր անհաշտ ատելությունը իրեն նկատմամբ և հիմա կսոսկար, խորհելով, որ իր բոլոր ոսկի երազները պիտի ցնդեին այդ պառավին պատճառով, զոր սիրաշահելու համար պետք եղածին չափ փույթ չէր տարած։

Իրիկունը սակայն, երբ Ղուկաս էֆենտի եկավ, Ռոզիկ անակնկալ ուրախություն ունեցավ. նոր նամակ մը Լևոնեն, ավելի սի-

բազեղ, ավելի հրավառ. իր գրած առաջին նամակը ընդուներ էր ու անոր կպատասխաներ։ Եվ ի՞նչ նամակ, ամբողջ տասնվեց երես։ Անգլիացի ադամանդավաճառը եկած էր Փարիզ, գործը հաջող ճամփու մեջ էր և կհուսար, որ քանի մը օրեն պիտի կրնար ճամփա ելլել։ Լևոն նույնպես կծանուցաներ, որ տուփ մը շաքար կղրկեր իրեն Փարիզեն, բայց տուփը տակավին չէր հասած։ Հետո կըսեր, թե գեղեցիկ մատանի մը, զույգ մը օղ և ապարանջան մը առած էր Ռոզիկի համար, զոր իր հետը պիտի բերեր։ Ու հետո կպատմեր այն անհուն տառապանքը, որ կըզգար իր նշանածեն հեռու մնալով, թե ինչպես օրն ի բուն Ռոզիկի պատկերին նայելով կմխիթարվեր, թե ինչ անճառ հեշտությամբ ընդունած էր անոր նամակը, զոր օրը հարյուր անգամ կկարդար, համբուրելով զայն։

Մինչ Ռոզիկ իր սենյակը առանձնացած՝ այդ նամակին ընթերցումով կամոքեր օրվան մեջ ընդունած ահռելի հարվածը, Թագուհի՝ Ղուկաս էֆենտիին կպատմեր իրենց այցելությունը և Անթառամի ըրած ընդունելությունը և արտասանած նախատալից խոսքերը։

Ղուկաս էֆենտի ուշի ուշով մտիկ ըրավ իր կնոջ պատմությունը, առանց հուզումի նշան մը ցույց տալու, հետո վճռաբար ըսավ.

— Ասոնք բոլորը Տ. Միքիասի կերած խալթերն են, բայց այդ Անթառամ հանըմը թող ծանր նստի ու բերնին եկածը դուրս չի տա, ետքը ես ալ բերանս կբանամ...

Այս սպառնալիքը, ուրկե մեծ բան մը չհասկցավ տիկին Թագուհի, վերջ տվավ խոսակցության, որովհետև նույն միջոցին Ռոզիկ ներս կմտներ և ծնողքը չէին ուզեր օրվան այդ դժնդակ միջադեպին վրա խոսիլ իրենց աղջկան ներկայությանը։

Ռոզիկ բոլորովին այլափոխված էր. իր հուզումին ու հեծկլտուքին հաջորդեր էր պայծառ զվարթություն մը։ Լևոնի նամակը դարմաներ էր տիկին Անթառամի բացած վերքերը։ Հիմա ալ գրեթե չէր հիշեր պանդոկի միջադեպը, իբր թե պարզապես մղձավանջ մը եղած ըլլար ան։

— Հայրիկ,— ըսավ աղջիկը Ղուկաս էֆենտիին,— Լևոնը ինծի տուփ մը շաքար ղրկեր է, ինչո՞ւ նամակին հետ չբերիր։

Հայրը բացատրեց, թե թղթատունը այդ տեսակ ծրարները նամակներուն հետ չի բաժներ, այլ ավելի ուշ, և խոստացավ հե-

տևյալ օրը մեկը ղրկել ֆրանսական նամակատունը, տուփը փնտռել տալու համար։

— Էհ, ուրիշ ի՞նչ գրեր է,— հարցուց հետաքրքիր շեշտով մը։

— Շատ մը բաներ, տասնըվեց երես,— գոչեց աղջիկը զվարթորեն,— ինծի շատ մը գոհարեղեններ առեր է, որոնք միասին պիտի բերե, գործերն ալ քանի մը օրեն կարգի պիտի դնե եղեր։

— Աղեկ, աղեկ, իշալլահ մինչև տասնըհինգ օր հարսնիքը կլմնցունենք։ Դուն նստե աղվոր պատասխան մը գրե նշանածիդ, սանկ սրտանց նամակ մը, ու նայե, որ կարճ չկապես, դուն ջանա իր գրածեն ավելի երկար գրելու... այս իրիկվընե գրե, որ վաղը ղրկենք։

Ռոզիկ հանկարծ վարանում մը ունեցավ և մորը դառնալով հարցուց.

— Այսօրվան անցած դարձածին մասին արդյոք բան մը գրե՞մ...

Խնդիրը այնքան ծանրակշիռ էր, որ տիկին Թագուհի չկրցավ ինքն իր գլխուն պատասխանել և ամուսնույն նայեցավ հարցական ակնարկով մը։ Ղուկաս էֆենտի ինքն ալ պետք տեսավ քիչ մը մտածելու, հետո վճռաբար ըսավ։

— Չէ, չըլլա որ բան մը գրես, ես ինքս պետք եղածը կգրեմ։

Աղջկան համար շատ դժվար պիտի ըլլար այդ միջադեպին վրա խոսիլը, ուստի գոհությամբ պատասխանեց.

— Այո, ավելի աղեկ կըլլար, ես բնավ խոսք չեմ ըներ այս մասին։

Գիշերը, երբ երկու ամուսինները իրենց ննջասենյակը առանձնացան, երկարորեն խոսեցան տիկին Անթառամի նույն օրվան անըմբռնելի ընթացքին վրա։

— Ի՞նչ պիտի ընենք, ձայներնիս քաշած պիտի նստի՞նք, բոլոր այդ նախատինքները պիտի կլլե՞նք,— կհարցներ տիկին Թագուհի , որ չէր հասկընար, թե այսպիսի ծանրակշիռ միջադեպի մը հանդեպ ինչպե՞ս Ղուկաս էֆենտի ոևէ ընդվզում մը չէր ունենար։

— Այնպես կենթադրեի, որ,— շարունակեց կինը,— աս պատմությունը իմանալուդ պես խոսք-կապը ետ պիտի ղրկես...

— Ճիշտ Անթառամ հանըմն ու Տ. Միքիասն ալ անանկ կենթադրեն ու ատոր կրսպասեն,— պատասխանեց Ղուկաս էֆ.— և ասոր համար ես ալ իրենց բնավ չսպասած ընթացքը պիտի բռնեմ... ուստի ահա իմ խորհուրդս. այսօրվան պատահածը մենք

պետք է բոլորովին չեղյալ նկատենք, չգիտնալ ձևացնենք և խոսքը անգամ չընենք... դուք ալ վազ անցեք իր այցելություններեն... մենք մեր աղջիկը մյուսյու Լևոնին նշանած ենք և ոչ թե Անթառամ հանրմին... անոր հետ հարաբերություն ունենալու պետք չունինք։ Ինք մեզի չուզեր կոր, մենք ալ զինքը չենք ուզեր։

Եվ Ղուկաս էֆենտի անկողին մտնելով հանդարտ քնացավ, զոր-ավարի մը պես, որ իր ընելիք ճակատամարտին հատակագիծը արդեն պատրաստած է։

Հետևյալ առտու կանուխ Տ. Միքիաս ներկայացավ Գրիսթոլ պանդոկը և շիտակ ուղղվեցավ տիկին Անթառամի սենյակը։

Անթառամ զինքը հաղթական ուրախությամբ մը ընդունեց։

— Մայրն ալ, աղջիկն ալ երեկ աղվոր մը վերեն վար լվացի, անկեց ալ վռնտեցի։

— Ի՞նչ կըսես, տիկին Անթառամ, է բան մը չըսի՞ն։

— Ինչ պիտի ըսեն, մուկի պես սմքեցան, պոչերնուն վրա նայելով ելան գացին... օֆ, մեյ մը սիրտս զովացավ որ...

— Մանրամասնորեն պատմե նայինք եղածը,— ըսավ Տ. Միքիաս, որ գոհունակությամբ իր սպիտակափառ մորուքը կշոյեր։

Անթառամ աղաչել չտվավ. արդեն ինքն ալ երեկվընե ի վեր կայրեր կմրրկեր իր հաղթությունը մեկու մը պատմելու մարմաջով, ուստի սկսավ մանրամասն պատմել անցած դարձածը։ Տ. Միքիաս ծայրահեղ շահագրգռված՝ մտիկ կըներ, ակնհայտի ուրախությամբ մը։ Երբեք չէր հուսար, որ իր խորհուրդները այսքան արագ ու հաջող պիտի գործադրվեին։

Երբ Անթառամ խոսքը ավարտեց, հարցուց.

— Էյ, տակավին խոսք-կապը ետ չղրկեցի՞ն։

— Չէ, բայց կսպասեմ կոր... զավակիս ալ գրեցի, որ այս աղջիկեն վազ անցիր, ըլլալիք բան չէ...

Տ. Միքիաս դեռ ժամու մը չափ նստավ, երկարորին գովեստը ըրավ օրիորդ Հերմինեի և Սմսարյան ընտանիքին և հետևյալ օր կրկին վերադառնալու խոստումով մեկնելու պատրաստվեցավ։

Երբ դուրս ելլելու վրա էր, Անթառամ մտատանջ կերպարանքով մը հարցուց.

— Ասոնք եթե անամոթաբար խոսք-կապը ետ չղրկեն, ի՞նչ պիտի ընենք։

— Կեցիր մինչև վաղը սպասենք, տեսնենք ի՞նչ կըլլա,—

պատասխանեց քահանան.— ես հույս ունիմ, որ մինչև իրիկուն լուր մը կառնես։

Ու փողոց ելավ հոգին ցնծության մեջ։ Հակառակության, ոխակալության և ամբարտավանության զգացումը այնքան զորավոր էր իր մեջ, որ անոր կզոհեր ուրիշ ինչ մաքուր զգացում որ կար մեջը։

— Հիմա պիտի տեսնվինք քեզի հետ,— կըսեր մտքեն Ղուկաս էֆենտիին մասին մտածելով,— հիմա պիտի տեսնաս, որ առանց Տ. Միքիասի աջակցության բան մը չես կրնար ընել... քանի մը ոսկի խնայելուդ և զիս արհամարհելուդ պատիժը պիտի կրես։

Եվ շունչը առավ Սմսարյանենց տունը։ Տիկին Աննա, Աբգար Սմսարյանի կինը, զինքը ընդունեց։ Սովորական ողջույններեն ետքը, երբ քահանան բազմոցին վրա՝ և տիկինն ալ թիկնաթոռի մը մեջ նստան, այս վերջինը հարցուց.

— Ի՞նչ լուր տեսնենք, տե՛ր հայր, նոր բան մը կա՞, քու քովդ միշտ թարմ լուրեր կըլլան։

— Տեսա՞ր, տիկին Աննա, ինչպես իմ խոսքս ելավ,— գոչեց քահանան հաղթական ժպիտով մը։

— Ի՞նչ կա որ,— հարցուց մյուսը հետաքրքրված։

— Ի՞նչ պիտի ըլլա... նշանտուքը ետ կըլլա կոր։

— Ո՞ր նշանտուքը,— ըսավ տիկին Աննա, թեև շատ լավ կհասկնար, թե Տ. Միքիաս ինչ բանի կակնարկեր։

— Ռոզիկի նշանտուքը մյուսյու Լևոն Կոկիկյանի հետ։

— Մեղա, ի՞նչ կըսես, տեր հայր, դեռ առջի օր աղջիկս Ռոզիկը տեսեր էր, ընդհակառակը շատ ուրախ-զվարթ է եղեր, ըսեր է, որ ամեն օր նամակ կառնե, թե վրան կխենթենա կոր։

— Աղջկան խոսքերը կարևորություն չունին, ես հիմա տղուն մորը քովեն կուգամ կոր, երեկ տիկին Թագուհին և Ռոզիկը վռնտեր է քովեն, երբոր այցելության գացեր են։

— Ամա՜ն, տեր հայր, ինչ բաներ կըսես կոր, բնավ հավատալս չի գար կոր... մանրամասն պատմե տեսնենք։

— Կպատմեմ, բայց նախ ինձի աղվոր անույշ մը բերել տուր և ուզածիս պես շաքարը քիչ խահվե մը ապսպրե,— ըսավ Տ. Միքիաս, գրպանեն ծխախոտի տուփը հանելով։

Տիկին Աննա փութաց էլեկտրական կոճակը հնչեցնել, սպասուհին կանչելու և տեր հոր ուզածները բերել տալու համար։

Տ. Միքիաս սիկարեթը վառեց և սկսավ մի առ մի կրկնել ինչ որ Անթառամ քիչ մը առաջ ըսած էր իրեն։

Տիկին Աննա անհագորեն կըմբոշխներ այդ գայթակղական պատմությունը, որուն առարկան իր բարեկամուհիներեն մին էր։

— Հիմա ինձ նայե,— ըսավ Տ. Միքիաս պատմությունը ավարտելով,— հայտնի է, որ այդ եղածեն ետքը ալ նշանտուքը այսօր վաղը պիտի խզվի, ուստի պետք է, որ անմիջապես Լևոնը մեր Հերմիներին ընենք։ Արդեն ես խոսեր եմ տիկին Անթառամին, ինք ամեն կերպով համամիտ է և վստահ եմ, որ մանչն ալ կըրնանք համոզել, միայն թե Աբգար էֆենտին պետք է, որ քսակին բերանը բանա, առնվազն վեց յոթը հազար ոսկի օժիտ տա...

— Ինչ կըսես, Տեր հայր, այդչափ դրամ կտրվի՞, մեր մեջեն ո՞ր հարուստը իր աղջկան այդչափ օժիտ տված է։

— Բայց մեր մեջն ալ ե՞րբ մյուսյու Լևոնին պես փեսացու մը եղած է, ուսյալ երիտասարդ, գեղեցիկ և միանգամայն հիսունվաթսուն հազար ոսկիի տեր ու տարին քանի մը հազար ոսկի շահող։

— Այդ օժիտի խնդիրին ես չեմ կրնար խառնվիլ, հորը գիտնալիք բանն է։

— Ես կխոսիմ Աբգար էֆենտիին հետ և զինքը կհամոզեմ։

Եվ Տ. Միքիաս ոտքի ելավ ու մեկնեցավ ուրիշ տուն մը երթալու և օրվան մեծ դեպքը պատմելու համար։

Երկու օր ետքը ամբողջ Բերայի հայ ընտանիքներու խոսակցության նյութն էր Կելկիթյանենց նախատվիլը ու վռնտվիլը տիկին Անթառամի կողմե։ Սակայն խոսք-կապը ետ ղրկած չէին և այս բանը, թե Անթառամը և Տ. Միքիաս քահանան հավասարապես կկատղեցներ։

Նոր խորհրդակցություն մը ետքը, քահանան և Անթառամ որոշեցին նամակով մը հայտարարել Ղուկաս էֆենտիի, որ նշանը ետ եղած էր։

— Դուն շնորհքով նամակ մը գրե և ես ընդօրինակեմ,— ըսավ Անթառամ։

— Ամենայն սիրով,— պատասխանեց Տ. Միքիաս և պանդոկի միջադեպը պատահելեն չորս օր ետքը, Ղուկաս էֆենտի, երբ իրիկունը տուն եկավ, իր հասցեին հետևյալ նամակը գտավ.

«Մեծապատիվ Ղուկաս էֆենտի Կելկիթյան,

Անցյալ օրվան ձեր տիկնոջ ու աղջկան այցելութենեն և

անոնց ըրած խոսքերեն ետքը, կսպասեի, որ անմիջապես տղուս խոսք-կապը ետ ղրկեք, քանի որ այլևս անհնարին է այդ ամուսնությունը, բայց զարմանքով կտեսնեմ, որ մինչև այսօր այդ բանը չըրիք։ Կերևա, որ ձեր տիկինն ու աղջիկը ձեզի չեն պատմած մեր մեջ փոխանակված խոսքերը, ուստի այս նամակով կուզամ հայտարարելու, որ բացարձակապես որոշած եմ արգիլելու զավակիս ձեր աղջկան հետ ամուսնանալը, որովհետև շատ աննպաստ տեղեկություններ առած եմ ձեր՝ թե նյութական և թե բարոյական վիճակին մասին և չեմ ուզեր զավկիս դժբախտությունը պատրաստել այսպիսի ամուսնությամբ մը։

Կհուսամ, որ այս նամակիս վրա վերջապես կհաճիք խզված նկատել մեր խոսք-կապը և հարկ չեք թողուր ծայրահեղ միջոցներու դիմելու։

Անթառամ Կոկիկյան»

Ղուկաս էֆենտի երկու անգամ ուշի ուշով կարդաց այս նամակը, հետո գրպանը դրավ զայն։

— Այդ կինը,— մտածեց ինքն իրեն,— պարզապես մեզ գրգռել կուզե կոր, որպեսզի մեր կողմե նշանը ետ ընենք, սակայն հայտնի կտեսնվի, որ տղան ընդհակառակը, ավելի մեզի հետ է, քան թե մորը, ուստի լավագույն է բնավ կարևորություն չի տալ այս նամակին, ինչպես որ կարևորություն չտվինք անցած օրվան վարմունքին...

Եվ որոշեց նույնիսկ կնոջը չըսել այդպիսի նամակ մը ընդունիլը։

Վերի սրահը մարդ չի կար, Տիկին Թագուհի և Ռոզիկ այցելության գացած էին։ Ղուկաս էֆենտի բազմոցին վրա բազմեցավ և սկսավ լրագիր կարդալ։

Քիչ ետքը ծառան դուռը բացավ և ըսավ, որ երիտասարդ մը եկած էր և հետը տեսնվիլ կփափաքեր։

— Ո՞վ է, անունը ի՞նչ է, ի՞նչ կուզե,— հարցուց Ղուկաս էֆենտի, որ Գարեգինի այցելութենեն ի վեր երիտասարդ այցելուներե չէր ախորժեր։

— Ահավասիկ քառթը,— պատասխանեց ծառան։

Ղուկաս էֆենտի առավ զայն և կարդաց.

Սերգիս Սմբատյան

— Սերգիս Սմբատյան, Սերգիս Սմբատյան,— մտածեց Ղու-

կաս էֆենտի, ջանալով հիշել այդ անունը,— այդպես մարդ չեմ ճանչնար կոր։

Հետո ծառային դառնալով.

— Ի՞նչպես մարդ է,— հարցուց։

— Շնորհքով հագված երիտասարդ մըն է... գլխարկով։

Փոքրիկ վարանումե մը ետքը, Ղուկաս էֆենտին ըսավ.

— Ինչ որ է, թող գա նայինք։

Բայց նախ ըսենք այս այցելության շարժառիթը։

Ղուկաս էֆենտի, Սաթենիկի ու Գարեգինի դեմ հանրագրությունը ձեռք ձգելուն պես, փութացեր էր այն անմիջապես Բերայի թաղական խորհրդին ղրկել, հետո ինքն ալ անձամբ տեսեր էր ատենապետը, որպեսզի գործին կարելի եղածին չափ շուտ մղում տա և, իրավ ալ, ոստիկանության իմաց տրված էր և նախորդ օրը պաշտոնյա մը ներկայանալով Սաթենիկի տունեն ելլելու համար երեք օր պայմանաժամ տված էր, հակառակ պարագային սպառնալով բռնի զինքը դուրս նետել։

Խեղճ կինը, որ կկարծեր, թե ամեն վտանգ հեռացուցված է, քանի որ այդպես վստահացուցած էին զինքը Գարեգին, Սերգիս ու Հաճի Թումիկ, ահ ու դողի մատնվեր այդ սպառնալիքեն և իրիկունը, երբ Գարեգին տուն վերադարձեր էր, ամեն բան տեղն ու տեղոք պատմած էր անոր։

— Ես վաղը առտու աղջիկս պիտի առնեմ երթամ,— ըսած էր Սաթենիկ,— չեմ կրնար այլևս համբերել այս խաղքություններուն. կերթամ անծանոթ թաղ մը, սենյակ մը կվարձեմ և աստված ողորմած է...

Այն երեք ոսկիեն, զոր Հաճի Թումիկ Սերգիսի միջոցավ, նվիրած էր Սաթենիկի, հազիվ 30--40 ղրշ. ծախսված էր և որքևայրին տունեն անմիջապես ելլելու որոշում տված էր այս դրամին վրա հույս դնելով։

Եվ սակայն Գարեգին հակառակ էր այսպես ձգել փախչելուն, ինչ որ կերպով մը իրենց ճշմարտապես հանցապարտ ըլլալին խոստովանելու ձև մըն էր և ինք երբէք չէր կրնար ընդունիլ այս բանը, հիմա, մանավանդ, որ թյուրիմացությունը փարատած էր թաղին մեջ և իրենց երեկվան կատաղի հակառակորդը, Հաճի Թումիկ, դարձեր էր ամենեն եռանդուն պաշտպանը։

Երկարորեն խոսեցավ ու ջանաց համոզել Սաթենիկը և ի վերջո երկուքը միասին համաձայնեցան, որ նախ Սերգիսի հետ խորհրդակցելե ետքը տան իրենց որոշումը։

Գարեգին նույն իրիկունն իսկ գնաց իր բարեկամին մոտ և մանրամասնորեն պատմեց ոստիկանական միջամտությունը։

— Երթանք Հաճի Թումիկը տեսնենք,— ըսավ Սերգիս, իր ընկերոջ ըսածները մտիկ ընելե ետքը,— քանի որ ինք այս վիճակը ստեղծեց, պետք է որ ինք ալ այժմ դարմանը մտածե։

Գարեգին հավանեց այս դիմումին և երկու բարեկամները ճամփա ելան դեպի գինեպանին սրճարանը։

Ատենը արդեն բավական ուշ էր և երբ հասան Հաճի Թումիկի խանութը, արդեն ան, աշակերտին օգնությամբ, կպատրաստվեր դուռն ու պատուհանները գոցելու, բայց երբ տեսավ երկու երիտասարդները, անմիջապես գոչեց.

— Օ, օ, բարև մյուսյուներ, հրամմեցեք նայինք։

— Բայց խանութը կգոցես կոր,— դիտել տվով Սերգիսը։

— Վնաս չունի, դուք ներս մտեք, ավելի աղեկ, դուռ պատուհան կգոցենք, հանգիստ կտեսնվինք. ես ալ արդեն ձեզի կփնտռեի կոր...

— Ի՞նչ կա որ,— հարցուց Գարեգին զարմացած։

— Չե՞ս գիտեր ինչ կա, այդ Ղուկաս էֆենտի օլանախը թուղթը ղրկեր է Պեյ Օղլուի մյութեսարֆին, անոնք ալ այսօր մարդ են, ղրկեր, որ ձեզ տունեն հանեն, մինչև երեք օր... ի՞նչ, դուն լուր չունի՞ս։

— Ինչպե՞ս չունիմ, ճիշտ ատոր համար խոսելու եկանք ես և իմ բարեկամս։

— Հասկցա, հասկցա, ներս մտեք և խոսինք։

Երբ երեքը մեկ բոլորվեցան սեղանի մը շուրջը, Գարեգին Հաճի Թումիկի հաղորդեց Սաթենիկի տված որոշումը, հետեյալ օրն իսկ տունեն ձգել ելլելու մասին։

— Չըլլա որ ատանկ բան մը ընեք, ձեզի կարգիլեմ հա, սրկե հոն ա չպիտի երթաք,— գոչեց գինեպանը — ...ձգել երթալնուդ պես նամուսնիդ փարայի մը կընեք ու ամենուն բերանը բանալ կուտաք։

— Բայց երեք օրեն ետքը, երբոր գան բռնի դուրս հանել ուզեն նե տիկին Սաթենիկը։

— Հոգերնիդ մի ընեք, մենք հոս կեցեր ենք...

— Խեղճ կինը այդ տեսակ բաներու վարժված չէ, սրտագողեն հիվանդ կըլլա։

— Ես անիկա ու աղջիկը կառնեմ տունս կտանիմ, դուք այդ մասին բնավ հոգ մի ընեք,— պատասխանեց Հաճի Թումիկ...— Ես ալ ասանկ բան մը կփնտռեմ կոր, որ Ղուկաս էֆենտին մեյ մը վերեն վար խայտառակեմ, անոր աղեկ մը հասկցնեմ, որ Հաճի Թումիկը օյինի բերելը ինտո՞ր կըլլա...

— Բայց ի՞նչ է ծրագիրդ,— հարցուց Սերգիս, որ ինքն ալ ներքնապես տրամադիր էր տեղի չտալու և Ղուկաս էֆենտիի սարքած մեքենայությունը դիմակազերծ ընելու։

— Ծրագիրս ան օրը կտեսնաք,— պատասխանեց Հաճի Թումիկ,— հիմակ ու հիմա բան մըն ալ չեմ ըսեր, բայց աղեկ գիտցեք, որ կիսկտուր գործ չպիտի տեսնեմ ու դուք ալ մատ պիտի խածնեք... միայն թե չըլլա, որ ձգեք երթաք հա, ան ատեն տավան կկորսընցնեք և վրանիդ կասկած կբերեք։

— Ես ալ տունեն ելլելու կողմը չեմ,— ավելցուց Գարեգին,— և այդպես ալ խորհուրդ տվի տիկին Սաթենիկին, բայց խեղճը աղմուկ, իրարանցումե կվախնա... Եթե կարենայինք գործը խաղաղությամբ կարգադրել, որչափ աղեկ պիտի ըլլար, արդյոք ճար մը չենք՞ կրնար գտնել։

Պահ մը երեքն ալ լռեցին և սկսան մտածել։ Ի վերջո Սերգիս խոսք առավ։

— Փորձ մըն ալ ընե՞նք արդյոք Ղուկաս էֆենտիին մոտ... ես հանձն կառնեմ երթալ զինքը տեսնել և ըսել, որ ինքն իր ձեռքով գործին առաջքն առնե, հակառակ պարագային՝ ամբողջ հանրագրությունը ստորագրողները իրենց ստորագրությունը ետ պիտի առնեն և ինք պիտի խայտառակվի... Ի՞նչ կըսեք ասոր, փորձե՞նք անգամ մը, կարելի է, կհամոզվի ու այն ատեն ամեն բան խաղաղությամբ կվերջանա։

Այս առաջարկը բանավոր թվեցավ մյուս երկուքին, որոնք մտածեցին, թե ոյսպիսի դիմումե մը, եթե օգուտ մըն ալ չծագեր, գոնե ուէ վնաս հառաջ չէր կրնար գալ։

Հաճի Թումիկի սրճարանը տրված այս որոշումին վրա էր, որ Սերգիս Սմբատյան կներկայանար Ղուկաս էֆենտիին տունը, ճիշտ այն միջոցին, ուր դեռ նոր ստացած էր տիկին Անթառամի նամակը։

Սպասավորին առաջնորդությամբ Սերգիս մտավ այն սրահը,

ուր վաճառականը նստած էր, որուն առաջին անգամ կտեսներ և որուն վրա ուէ օրերե ի վեր խոսվիլը կլսեր։

Սերգիսի առաջին տպավորությունը սակայն նպաստավոր չեղավ Ղուկաս էֆենտիի մասին։ Երիտասարդը առաջին ակնարկով զգաց, թե դեմինը համակրելի տիպար մը չէր, այլ ընդհակառակը՝ ամենագռեհիկ, համառ, չար ու ինքնահավան մեկը։

Ղուկաս էֆենտին ալ՝ իր կողմե՝ ուշադիր կզններ երիտասարդը, որ բոլորովին նոր դեմք մըն էր իրեն համար և որուն մաքուր հագուստները, խրոխտ ու համարձակ կեցվածքը և անկեղծ կերպարանքը իրեն տեսակ մը ակնածանք կներշնչէին։

— Կարծես Ղուկաս էֆենտի Կելկիթյանի հետ խոսելու պատիվը ունիմ,— ըսավ Սերգիս, սրահին մեջ հառաջանալով։

— Այո, ես եմ,— պատասխանեց վաճառականը ոտքի ելլելով կիսովի։

— Կներեք, որ ձեզի անհանգիստ ըրի,— շարունակեց երիտասարդը,— բայց ինչպես պիտի տեսնեք, խիստ կարևոր խնդիր մը զիս ստիպեր է ձեզ մոտ գալու, առանց նախապես ձեզի ճանչնալու պատիվը ունենալուս։

— Հրամմեցեք, նստեցեք։

Երիտասարդը թիկնաթոռի մը մեջ տեղավորվեցավ, Ղուկաս էֆենտիի մոտիկը։

— Ի՞նչ է արդյոք այդ կարևոր խնդիրը,— հարցուց էֆենտին։

— Ղուկաս էֆենտի,— ըսավ Սերգիս,— այդ կարևոր խնդիրը ձեր պատիվին մասին է։

— Իմ պատիվի՞ս, ի՞նչ է եղեր իմ պատիվիս, ո՞վ կհամարձակի իմ պատիվիս դպչելու, անով զբաղվելու,— գոչեց վաճառականը, որ մեկենիմեկ ենթադրեց, որ տիկին Անթառամի հետ իրենց ունեցած միջադեպին շուրջը կդառնա խնդիրը։

— Ձեր պատիվին դուք եք դպչողը և ոչ թե ուրիշներ,— պատասխանեց Գարեգինի ընկերը ամենայն պաղարյունությամբ, առանց կարևորություն տալու իր խոսակցին հուզմանը։

— Բայց խոսե, ի՞նչ է խնդիրը, որո՞ւ կողմե կուգաս կոր,— գոչեց Ղուկաս էֆենտի, որ անպատճառ կենթադրեր, թե աղջկան նշանտուքին վրա էր խնդիրը...— ըսե՛ տեսնենք։ Տիկին Անթառամին կողմե՞ կուգաս...

— Ոչ, տիկին Անթառամը չեմ ճանչնար,— պատասխանեց երիտասարդը,— ես Հաճի Թումիկ աղայի կողմե կուգամ։

Ղուկաս էֆենտի թեթևացումի ու գոհունակության լայն շունչ մը առավ։

— Էյ, ի՞նչ է, ի՞նչ կա եղեր նայինք, Հաճի Թումիկ աղան բարի, պապա մարդ մըն է, ի՞նչ կուզե տեսնանք...

— Այո, բարի, պապա մարդ մըն է Հաճի Թումիկ աղան, զոր դուք շարաշար խաբեր եք,— գոչեց Սերգիս։

— Ի՞նչ, խաբե՞ր եմ եղեր... ատ ի՞նչ խոսք է, երեք ոսկի մեյ մը տվի, երեք ոսկի ալ մեյ մը, ալ ի՞նչ կուզե, արդեն ինք երկու անգամն ալ շատ շնորհակալությամբ ընդունեց դրամները և երբեք քիչ ըլլալուն մասին դիտողություն չըրավ կամ դժգոհություն չհայտնեց... արդեն իրավունք ալ չուներ, որովհետև էվելոք իր հոգնությունը վճարեցի, ըրածը ի՞նչ էր որ...

— Այո, ըրածը բան մը չէր... խեղճ օրբևայրի անմեղ կին մը բարոյապես և գուցե ֆիզիկապես ալ սպաննել իր յոթը տարեկան աղջկանը հետ, այո, այդ ձեր ընել տվածը բան մը չէ... բայց խնդիրը այդ չէ, այդ մասին ապագային վիճասինք։ Դուք ըսածս սխալ հասկցաք, դրամի մասին չէ, որ խաբված կըզգա ինքզինք Հաճի Թումիկ աղան, այլ այդ ամոթալի հանրագրությունը ստորագրել տալու համար ձեր հնարած սուտ զրպարտություններեն...

— Վա՜յ, էյ, եթե սուտ զրպարտություն էին նե՝ ինչո՞ւ համար այդչափ մահալլեցին թուղթը ստորագրեր են...

— Ամենքն ալ Հաճի Թումիկին՝ խոսքին համոզվեր են, որ ինչն ալ ձեր խոսքերուն խաբվեր է։

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ,— գոչեց Ղուկաս էֆենտի հեգնաբար,— խեղճ միամիտ մարդիկ, ամենքն ալ իր խոսքին հավատալով ստորագրեր են հա՞... էյ, հիմա ի՞նչ ընելու է, որ պատիվս տեղը գա, քանի որ ձեր խոսքին նայելով՝ այդ գործին մեջ պատիվս կվտանգվի կոր...

— Ձեր ընելիքը շատ պարզ է,— պատասխանեց երիտասարդը, առանց անդրադառնալու Ղուկաս էֆենտիի խոսքերուն հեգնական շեշտին և զանոնք իբրև լուրջ ընդունելով։— Բերայի Թաղական խորհրդի դիմումին և ձեր դիմումին վրա, ոստիկանները երեք օր պայմանաժամ տված են տիկին Սաթենիկի և պարոն Գարեգինի, տունեն ելլելու համար և եթե մինչև այդ պայմանաժամին լանալը չելլեն, այն ատեն բռնի դուրս պիտի նետեն։

— Ճանըմ, ինծի ի՞նչ, ատոնք իմ խառնվելիք բաներս չեն,— ընդմիջեց Ղուկաս էֆենտի։

— Կխնդրեմ քիչ մը համբերեցեք. արդ, Ղուկաս էֆենտի, ոչ տիկին Սաթենիկ, ոչ ալ պարոն Գարեգին տունեն ելլելու միտք ունին։ Հետևաբար իշխանությունը պիտի ստիպվի զանոնք բռնի դուրս հանելու...

— Տղաս, ատոնք իմ գիտնալիք բաներս չեն, ինչ կուզեն թող ան ընեն,— գոչեց կրկին վաճառականը,— ես ալ զզվեցա այդ խնդիրներեն... տարին տասներկու ամիս բոզերով ու սրիկաներով չեմ կրնար զբաղիլ...

— Մեջտեղ ոչ բոզ կա, ոչ ալ սրիկա,— պոռաց Սերգիս բարկությամբ,— և ձեզի չեմ ներեր, որ այդպես նախատեք մարդիկ, որոնք իմ բարեկամներս են...

Սերգիսին ձայնին մեջ այնպիսի կորովի ու միանգամայն բարկաձայթ շեշտ մը կար, որ Ղուկաս էֆենտի, շփոթվեցավ, ու թեթև մը սարսռաց։

— Առանց բարկանալու ըսելիքդ ըսե նայինք,— վրա բերավ վաճառականը, ձայնը մեղմելով։

— Արդ, երբ այս բռնի միջոցին դիմվի, գիտցիր, որ ամբողջ թաղեցին, Հաճի Թումիկի առաջնորդությամբ, թույլ չպիտի տան, որ այդ անիրավությունը գործվի և բացե ի բաց ձեզի պիտի ամբաստանեն, իբրև ստախոս զրպարտիչ մը, և բոլոր անոնք, որ հանրագրությունը ստորագրած են, պիտի հայտարարեն, թե իրենց ստորագրությունը ետ կառնեն... ահա ինչ որ պիտի պատահի վաղը կամ մյուս օրը։

— Լավ, ի՞նչ կուզեք, որ ես ընեմ, քանի որ խնդիրը այլևս ինե ելած է...

— Ղուկաս էֆենտի, մեր փափաքածը այն է, որ, որպեսզի անհաճո գայթակղություններուն առաջը առնվի, դուք անձամբ դիմում ընեք Բերայի Թաղ. խորհրդի ատենապետին հետ, որպեսզի այդ որոշումը չեղյալ նկատեն ոստիկանության պաշտոնյաները և հանգիստ թողուն այդ օրբևայրի կինը... ասիկա շատ դյուրավ կրնաք ընել, եթե ուզեք... և այս կպահանջե ձեր պատիվը, որովհետև հակառակ պարագային, ինչպես ըսի, գործը շատ ծանր հետևանքներ պիտի ունենա։

Ղուկաս էֆենտի բոլոր այս խոսքերը մտիկ ըրած ատեն թեև առերևույթ հանդարտություն կկեղծեր, սակայն՝ ներքնապես բարկութենեն ինքզինք կուտեր։ Կուզեր նախատել, դուրս վռնտել այդ անծանոթ մարդը, որ եկեր այսպես տիրաբար կխոսեր իր տան մեջ

և միանգամայն կհանդգներ պատիվի դասեր տալ իրեն, բայց առաջին վայրկյանեն Սերգիս տեսակ մը պատկառանք ազդած էր իրեն. բաց ասոնի կըզգար, որ երիտասարդը գուցե իրավունք ուներ, կրնար գայթակղություն մը ծագիլ, որուն մեջ իր անունն ալ խառնվեր։ Եվ ներկա փափուկ միջոցին այդպիսի բան մը աղեկ չպիտի ըլլար իր համբավին համար։ Ատիկա նոր զենք մը պիտի հայթայթեր Անթառամի և Տ. Միքիաս քահանայի ձեռքը, ուստի պահ մը խորհելե ետքը, շատ ավելի մեղմ, գրեթե անույշ ձայնով մը ըսավ.

— Տղաս, հիմա քեզի որոշ խոսք մը չեմ կրնար տալ, մեյ մը Թաղական Խորհուրդին ատենապետը տեսնեմ, եթե կարելի է բան մը ընել, կընենք... դուն ատ Հաճի Թումիկը ղրկե, անոր հետ ալ տեսնվիմ։

— Այո՛, բայց կորսնցնելու ժամանակ չի կա,— առարկեց Սերգիս,— երկու օրեն մարդիկը պիտի գան զիրենք տունեն հանելու համար։

— Դուն հոգ մի ըներ, ես այս իրիկունը կտեսնեմ...

— Ուրեմն շատ շնորհակալ եմ ձեր ազնվութենեն և կհուսամ, որ ասկե ետքը ալ լավ բարեկամներ կըլլանք։

Ղուկաս էֆենտի, առանց պատասխանելու, գլխու անորոշ շարժում մը ըրավ։ Երիտասարդը ոտքի ելավ և մնաս բարով ըսելով մեկնեցավ։

Սերգիս սկսած էր կասկածիլ վաճառականին մեղմ ու հաշտարար լեզվեն. կվախնար, որ պարզապես զինքը խաբած չըլլար, խոստանալով Թաղական Խորհրդի ատենապետին խոսելու։ Ղուկաս էֆենտիի ընթացքը այնքան տարօրինակ թվեցավ իրեն, որ նույնիսկ որոշեց Հաճի Թումիկի չըսել, որ էֆենտին զինքը տեսնել կփափաքի, վախնալով, որ կրնա ոևէ կերպով գինեպանին միտքը փոխել. և այս ենթադրության մեջ շատ ճիշտ էր երիտասարդը, քանզի հազիվ իր քովեն հեռացած, Ղուկաս էֆենտի ինքնիրեն սկսավ մտածել.

— Թող մեյ մը ես այդ Հաճի Թումիկին հետ տեսնվիմ, ձեռքը քանի մը ոսկի ալ դնեմ, անկե ետքը կտեսնվինք, թե ո՞վ ստորագրություն ետ կառնե եղեր, ո՞վ արդելք կըլլա եղեր այդ բոզին ու սրիկային տուներենեն դուրս նետվելնուն։ Այս երիտասարդը կերևա, որ պարզապես Սաթենիկի մյուշտարիներեն է, ատոր համար ելեր պաշտպան կկայնի կոր...

Այս խորհրդածություններուն մեջն էր, երբ դուռը բացվեցավ, տիկին Թագուհի և Ռոզիկ ներս մտան։ Երկուքն ալ այլայլված կերպարանք մը ունեին, որ չվրիպեցավ Ղուկաս էֆենտիի աչքերեն։

— Ի՞նչ կա, ի՞նչ ունիք նորեն,— հարցուց մտատանջ ձայնով մը։

Տիկին Թագուհի, իր ամուսնույն պատասխանելե առաջ դեպի աղջիկը դարձավ և ըսավ.

— Հայտե, աղջիկս, սենյակդ գնա և հանգստացիր ու պարապ տեղը նորեն սիրտդ մի հատցներ, մանավանդ նորեն մի նստիր լար...

Ռոզիկ լռիկ մնջիկ հեռացավ։

— Քա, ի՞նչ եղավ նորեն, չըսե՞ս,— գոչեց Ղուկաս էֆենտի անհամբեր։

— Ի՞նչ պիտի ըլլա, սա քաշվելիք բան չէ,— սկսավ տիկին Թագուհի, թիկնաթոռի մը վրա իյնալով...— ինչ ընել ընելու է՝ աս խաղաղության վերջ տալու է... ամեն բերնի ծամո՞ն պիտի ըլլանք...

— Քա կնիկ, եղածը պատմե,— գոչեց Ղուկաս էֆենտի, ձայնը ավելի բարձրացնելով։

— Օֆ, այնչափ հուզված եմ, որ խոսքիս թելը կկորսնցնեմ կոր,— շարունակեց Թագուհի,— իրիկվան դեմ Ռոզիկիս հետ դերձակուհիի գացեր էինք փորձի համար, անկե ելելնուս քիչ մը Մարտիկ էֆենտիենց հանդիպինք՝ ըսինք, գացինք. ասկե անկե խոսք ըլլալե ետքը, տիկին Վերոնիկը ըսավ, որ «հանըմ, տիկին Թագուհի, ես ձեր անկեղծ բարեկամն եմ, սա ինչ խոսքեր կլսեմ կոր քանի մը օրե ի վեր ձեր մասին, սիրտս կտոր-կտոր կըլլա կոր, կաղաչեմ, շիտակը ըսեք. ինչ է այդ անճոռնի խոսքերուն պատճառը»։

— Ի՞նչ խոսք է որ...

— Օրիորդ Ռոզիկին նշանը ետ եղեր է, տիկին Անթառամը ձեզի հետ կռիվ ըրեր է, իրարու առեր տվեր եք, ասոնցմե զատ ուրիշ առկոց առակ խոսքեր։

— Էյ, դո՞ւն ինչ պատասխանեցիր,— հարցուց Ղուկաս էֆենտի։

— Ի՞նչ ըսեմ, նախ ուրացա, անանկ բան չի կա ըսի, սակայն ետքը տեսա, որ բուն իսկ խոսքը Անթառամեն ելեր է, տեղն ու տեղոք ամեն բան գիտե կոր, օրովը, ժամովը... արդեն Վերոնիկ հանըմը ըսավ, որ ամենուն բերանն է եղեր, բոլոր տուներուն մեջ մեր վրա

կխոսին կոր... Նայեցա որ ճար չի կա, ուրանալը ավելի գեշ պիտի ըլլա, ըսի որ, ասանկ խոսքեր մը դարձան տիկին Անթառամի հետ, բայց նշանը ետ ընելու խնդիրը չի կա... բայց այդ խոսքերեն այնչափ հուզվեցա, որ... Ռոզիկը ըսես մազ մնաց նորեն լալ պիտի սկսեր, շուտով մը խոսքը կարճ կապեցինք ու դուրս ելանք...

— Իրենք ուրկե՞ իմացեր են այդ խոսքերը,— հարցուց Ղուկաս էֆենտի։

— Ճանրմ, ամենուն բերանն է եղեր, քանի մը տեղե լսեր են։ Սմսարյաններեն լսեր են, Տ. Միքիասեն լսեր են, ուրիշներե լսեր են...

— Ատ Անթառամին ու Միքիասին խառնած բաներն են ասոնք... Խալթախը ելեր նամակ ալ գրեր է ինծի...

— Ի՞նչ նամակ,— հարցուց Թագուհի անձկությամբ։

— Նա. կարդամ տե՝ մտիկ ըրե։

Եվ Ղուկաս էֆենտի իր կնոջ կարդաց այն նամակը, զոր տունեն ներս մտած ատենին տվեր էին իրեն։

Տիկին Թագուհի այս նամակը լսելով, բոլորովին այլայլվեցավ։

— Ալ հիմա հասկցա, որ այս գործը չպիտի ըլլա. ամենեն աղեկը ժամ առաջ նշանը ետ ընել ու խոսքը մեջտեղեն վերցընելն է։

— Խե՞նթ ես, քա,— գոչեց Ղուկաս էֆ. ոտք ելլելով,— ընդհակառակը ամեն բան ընելու է, որպեսզի հարսնիքը ժամ առաջ ընենք, լմնցունենք ու այդ ամենուն ալ բերնին չափը տանք... ե՞տ ընենք մի, որպեսզի բոլոր այդ խոսքերը վրանիս վավերացվին, հա՞... Աստված չընե, եթե պետք ըլլա, բոլոր հարստությունս կզոհեմ, այս նշանը ետ չեմ ըներ... ինծի Ղուկաս էֆենտի կըսեն...

— Աղեկ, բայց այս խոսքերուն, այս խաղքությունները ուն առաջքը ի՞նչպես պիտի առնենք։

— Դուն վաղը առտու պատրաստվե, երթանք այդ տիկին Անթառամ օլանախը տեսնանք, ես անոր բերանը գոցելու կերպը գիտեմ... մինչև հիմա ձայն չհանելուս համար, կերևա որ համարձակություն առավ, կեցիր ես անոր ով ըլլալը հասկցնեմ...

— Ի՞նչ,— գոչեց տիկին Թագուհի,— կո՞վ ընելու պիտի երթանք...

— Չէ, կռվի բան չկա,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, որ իր որոշումը տված էր,— բարեկամաբար պիտի տեսնվինք, հինեն

նորեն պիտի խոսակցինք, մեղա, կռիվ ինչո՞ւ ընենք մեր խնամիին հետ...

— Ամա՛ն, Ղուկաս էֆենտի, դուն մինակդ գնա, ես դող կելլամ։

— Չէ, չըլլար, անպատճառ դուն ալ գալու ես, հեմ հետերնիս մեկ քանի հոգի ալ տանինք նե՝ ավելի աղեկ կըլլա... վաղը առտու պատրաստվե. ալ աս գործը մեկ անգամեն մաքրելու է։

Տիկին Թագուհի գիտեր իր էրկանը համառությունն ու անդրդվելի կամքը, ուստի չընդդիմախոսեց, հուսալով, որ գուցե հետևյալ առտու միտքը ինքնին կփոխե։

Բայց ոչ. Ղուկաս էֆենտի, ընդհակառակը հետևյալ առտուն կանուխ պնդեց այդ անհրաժեշտության մասին և ստիպեց կինը, որ շուտով հագվի։

Խեղճ Թագուհի ակամա համակերպեցավ և երկու ամուսինները, կառք մը բերել տալով, գացին Պրիսթոլ պանդոկը։

Տիկին Անթառամ երբեք այդպիսի այցելության մը չսպասելով, ոևէ հրահանգ չէր տված դռնապանին, այնպես որ երբ Ղուկաս էֆենտի հարցուց, թե տիկին Կոկիկյանը հո՞ն էր, դռնապանը պատասխանեց.

— Այո, հոս է, ներս համմեցեք։

Ղուկաս էֆենտի ավելորդ սեպեց ծառային միջոցավ իրենց գալուստը իմացնելու Անթառամին, վախենալով որ կրնա զիրենք չընդունիլ և կնոջը հետ ուղղակի դիմեց իրենց խնամիցուհիին սենյակը և դուռը զարկավ։

— Մտեք,— լսվեցավ ներսեն։

Երբ դուռը բացվեցավ ու տեր և տիկին Կելկիթյան սեմին վրա երևցան, Անթառամ զարմացական ճիչ մը արձակեց, չուզելով աչքերուն հավատալ։

— Բարև, տիկին Անթառամ, ի՞նչպես եք, աղե՞կ եք,— ըսավ Ղուկաս էֆենտի, հառաջանալով։

— Շնորհակալ եմ,— մրմնջեց Անթառամ, թիկնաթոռին վրայեն ելլելով։

Տիկին Թագուհի, որ միշտ հուզված էր արդեն, գլխովը բարև մը տվավ և նստելու համար սպասեց հրավերի, որ սակայն տեղի չէր ունենար։

— Նստե՛ նայինք, Թագուհի,— ըսավ Ղուկաս էֆենտի՝ իր կնոջ շփոթությունը տեսնելով,— մենք օտարական չենք, նստելու հա-

մար հրավերի պետք չունինք... խնամի կսեպվինք, հոս ալ գրեթե մեր տունն է։

Եվ ինքը օրինակը տալով՝ թիկնաթոռի մը մեջ բազմեցավ։ Թագուհի նույնպես նստեցավ աթոռի մը վրա։

Տիկին Անթառամ շվարած, շլմորած, ապուշ-ապուշ կնայեր Ղուկաս էֆենտիի, առանց կարենալ խոսք մը ըսելու։

— Երեկ իրիկուն ձեր գրած նամակը առի,— ըսավ Ղուկաս էֆենտի, գրպանեն սիկարեթի տուփը հանելով և հատ մը վառելով. քանի մը անգամ կարդացի, խելք մը չկրցա հասցնել, անոր համար որոշեցի անձամբ գալ և բացատրություն ուզել։

— Կարծեմ գրածիս մեջ չհասկնալիք բան մը չի կար,— պատասխանեց Անթառամ չոր ձայնով մը։

— Ընդհակառակը, ծայրե ծայր անհասկընալի էր,— պնդեց Ղուկաս էֆենտի,— անոր մեջ խոսք-կապը խզելու բաներ մը ըսած էիք, այդ որոշումը դուք ձեր կողմե՞ տվիք, թե մյուսյու Լևոնն ալ գիտե։

— Ջավկիս ալ պետք եղածը գրած եմ, արդեն անիկա իմ խոսքես դուրս չելլար, ասոր վստահ կրնաք ըլլալ...

Նույն միջոցին դուռը զարնվեցավ։

Դուռը բացվեցավ և Տ. Միքիաս քահանան ներս մտավ։ Երբ հոն նստած տեսավ Ղուկաս էֆենտին ու տիկին Թագուհին՝ հանկարծակիի գալով՝ զարմացական փոքրիկ ճիչ մը արձակեց և ակամա ետ քաշվելու շարժում մը ըրավ։ Ղուկաս էֆենտի սակայն ուրախությամբ ողջուներ էր այս երևումը։

— Վա՜յ, Տեր Միքիաս, աս ի՞նչ աղեկ հանդիպում,— գոչեց զվարթորեն,— ճիշտ ատենին եկաք, հրամմեցե՞ք, հրամմեցե՞ք...

— Եթե առանձին խոսք ունիք, ես կերթամ,— ըսավ քահանան վարանոտ, հաղար անգամ զղջալով, որ առանց նախապես ծառաներեն տեղեկություն հարցնելու, սենյակ մտած էր, կարծելով որ տիկին Անթառամը, սովորականին պես, առանձին պիտի գտներ։

— Չէ, չէ, առանձին խոսք չունինք,— գոչեց Ղուկաս էֆենտի,— եկուր նստե։

Տ. Միքիաս տեսնելով, որ անկարելի է իր օձիքը ազատել, որոշեց կուրծք տալ փոթորիկին և ելավ տեղավորվեցավ թիկնաթոռի մը մեջ։

— Տեր հայր,— ըսավ Ղուկաս էֆենտի,— որպեսզի մեր խոսակցության նյութը լավ մը հասկնաս, նախ և առաջ ուշադրությամբ կարդա սա նամակը, զոր երեկ իրիկուն տուն գալուս ստացա։

Եվ վաճառականը քահանային տվավ տիկին Անթառամի նամակը, զոր, ինչպես արդեն ընթերցողները գիտեն, նույնիսկ Տ. Միքիաս շարադրած էր։

Քահանան ուշի ուշով կարդաց, զարմացած դեմքով մը, հետո թուղթը վերադարձուց Ղուկաս էֆենտիի։

— Ի՞նչ կըսես ասոր,— հարցուց վաճառականը պիշ-պիշ Տ. Միքիասի երեսը նայելով։

Տիկին Անթառամի խորհրդատուն չպատասխանեց, միայն երկու ձեռքերը բանալով ու աչքերը դեպի վեր հառելով գոհացավ, այս ձևով անշուշտ իր զարմացումը հայտնելու համար։

— Հիմա, Տեր հայր,— շարունակեց Ղուկաս էֆենտի,— այս նամակը առնելուս պես հարկ համարեցի մեր տիկինին հետ գալ և մեկ քանի բացատրություններ ուզել տիկին Անթառամեն, նամակին մասին, որ բավական մութ է... շատ գոհ եմ, որ դուն ալ դիպվածով եկար և մեր տեսակցությանը ներկա կգտնվիս կոր... նախ կուզեմ հասկնալ. թե ի՞նչ են մեր նյութական ու բարոյական վիճակին մասին առած շատ աննպաստ տեղեկությունները... միթե ատիկա հարցնելու իրավունք չունիմ։

Տ. Միքիաս գլխովը շատ տարտամորեն, հաստատական ձև մը ըրավ։

— Ուրեմն, տիկին,— ըսավ վաճառականը, դեպի Անթառամը դառնալով,— կխնդրեմ և միևնույն ատեն կպահանջեմ, որ մեր նյութականին ու բարոյականին մասին ինչ աննպաստ տեղեկություններ որ ունիք, մեզի հաղորդեք...

— Ես երկար բարակ բացատրություններ տալու պետք չունիմ,— պատասխանեց տիկին Անթառամ բորբոքած,— ես զավակս չեմ ուզեր կարգել ձեր աղջկան հետ, ուրիշ բան չեմ գիտեր... զարմանալի բան՝ բռնի կերպով աղջիկնիդ մեր գլո՞ւխը պիտի փաթթեք, ո՞ւր տեսնված է այս տեսակ խայտառակություն... ձեր աղջիկը չեմ ուզեր, չեմ ուզեր, չեմ ուզեր...

— Մեր աղջիկը հավնողը հավներ, ուզողը ուզեր է,— գոչեց Ղուկաս էֆենտի, ինքն ալ բորբոքած,— եթե մյուսյու Լևոնը չուզե, այն ատեն նշանը ետ կառնենք, բայց քու չուզելովդ նշանը ետ չըլլար... գալով բարոյականի, աղեկ կընես, որ այդ տեսակ խնդիր-

ենքու մեջ չմտնաս ու տեղդ ծանր նստիս ու բերնիդ եկած խոսքերը դուրս չի տաս մեր ետեւեն...

— Փեմ ալ աղվոր կընեմ, մարդ բերանս չկրնար կապել, այդ տեսակ խոսքերով զիս չես կրնար վախցնել... կերևա որ դուն տակավին զիս չես ճանչցած,— պատասխանեց Անթառամ, վճռաբար կոփվի ասպարեզը նետվելով։

— Ընդհակառակը շատ աղեկ կճանչնամ,— պոռաց Ղուկաս էֆենտի,— Թոփ Գաբուցի պայրաքտար Սուրբիկին աղջիկը չե՞ս...

Այս խոսքերը լսելով, Անթառամի գույնը նետեց, այլայլվեցավ ու թեթև մը սարսռաց։

Ղուկաս էֆենտի, նույն բարկաճայթ շեշտով շարունակեց.

— Դուն չէ՞ր, որ էրկանդ, խեղճ Նիկողոս աղային մահվանը պատճառ եղար... տեբուտեու տեր ըրիր... սիրականիդ հետ մեկ յաթախի մեջ օձիդդ ձեռք տվիր... բարոյական աննպաստ տեղեկություններ, հե՞... դեռ կուզե՞ս բարոյական աննպաստ տեղեկություններ...

Ղուկաս էֆենտի լռեց։ Տիկին Անթառամ իր գլխուն իջնող այս լախտի հարվածներեն սահմռկած՝ կապարագույն ու դողահար, չէր կրնար բան մը արտասանել։ Տիկին Թագուկ այդ անլուր հայտնությունները լսելով, ինքն ալ գրեթե սարսափած էր ու ամոթահար առջին կնայեր, իբր թե Անթառամի վրա ժայթքող նախատինքը զինքն ալ արատավորած ըլլար։ Իսկ Տ. Միքիաս իր խոշոր փառավոր մորուքը կշոյեր, առանց հուզումի ոևէ նշան մը ցույց տալու։ Նախատինքներու տարափին հաջորդող ճնշիչ լռությունը առաջին անգամ քահանան փորձեց խզել։

— Ղուկաս էֆենտի,— ըսավ մեղմ ու համոզկեր ձայնով մը,— ինչո՞ւ այդչափ կհուզվիք, ինչո՞ւ այդչափ ծանր ու անտեղի խոսքեր կընեք... ավելի աղեկ է այս տեսակ խնդիրները անուշությամբ կարգադրեք։

— Անուշության տե՞ղ մնաց,— գոչեց Ղուկաս էֆենտի,— քանի մը օր առաջ կինս ու աղջիկս կելլան այցելության կուգան և ահա մեր Անթառամ հանրմը, առանց տեղի տված ըլլալու, կելլե կարգ մը անվայել, անկիրթ խոսքեր կընե... խեղճերը դող եկած կուգան ինծի կպատմեն, ես ալ որպեսզի խնդիր չելլա, ասոր անոր բերանը չիյնանք, կպատվիրեմ, որ մարդու բան չըսեն, եղածը դողտուկ պահեն, գայթակղության պատճառ չըլլան... Եկուր տես, որ աս մեր հանքմը, ձայնը հասած տեղը, խենթ ու խելառ կերպով, եղածը

կպատմե. «նշանը ետ ըրի, մայր ու աղջիկ վոնտեցի» և այլն կրսե... այնպես որ այսօր ամբողջ Բերայի մեջ ամենուն բերանն ենք... այս ամենուն վրա մեյ մըն ալ հրեկ աս նամակը կառնեմ... դուն եղիր տե՝ դիմացիր տեսնեմ։

— Ճանքմ, Ղուկաս էֆենտի, դուք խելացի, կատարյալ մարդ մըն եք,— պատասխանեց Տ. Միքիաս,— հետևաբար պետք է խոհեմությամբ շարժիք և խնդիրը քաղցրությամբ լմնցնեք...

Քահանան իր ճերմակ մորուքը շոյելե ետքը, կրկին խոսքը շարունակեց.

— Հիմա ես տիկին Անթառամին գրած նամակեն ու ձեր հոս քիչ մը առաջ արտասանած խոսքերեն սա կհետևցնեմ կոր, որ դժբախտաբար մյուսյու Լեոնի և մեր սիրելի Ռոզիկի միությունը, արդի պայմաններուն մեջ անկարելի կդառնա, և եթե երկու կողմեն ալ նշանը խզելու տրամադրություն կա, քանզի այդ բանը բացահայտ կերպով կտեսնվի, թե՝ տիկին Անթառամի ձեզ ուղղած նամակեն և ձեր քիչ մը առաջ տիկնոջ հասցեին ուղղած նախատինքներեն, որովհետև եթե խզումը որոշած չըլլայիք, բնականաբար այդ խոսքերը չպիտի արտասանեիք...

— Բայց...— բողոքեց Ղուկաս էֆենտի։

— Ներեցեք,— ըսավ Տ. Միքիաս,— թող տվեք, որ խոսքս լմնցնեմ և հետո եթե դիտողություն մը ունիք, կընեք։

— Շարունակե, շարունակե,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, որ իր բոլոր պաղարյունությունը գտած էր։

— Արդ, քանի որ երկու կողմե ալ խոսք-կապը խզելու դիտավորություն կա, փոխանակ կռիվներ հարուցանելու, անօգուտ բանավեճերու տեղի տալու և թաղին մեջ խոսքի առարկա դառնալու, լավագույն է սուսիկ փուսիկ գործը մեջերնիդ լմնցնել... այդպես չէ՞, տիկին Անթառամ։

— Հարկավ, իմ փափաքս ալ ան է, գործը խաղաղությամբ վերջացնել... քանի որ խսմեք չէ եղեր, ետ կընենք կլմնցնենք,— ըսավ Տիկին Անթառամ, որ շատ գոհ մնացած էր Տ. Միքիաս քահանայի միջամտութենեն։

— Ես ալ արդեն գործը խաղաղությամբ լմնցնելու համար ձգա եկա,— պատասխանեց Ղուկաս էֆենտի։

— Տեսա՞ք մի,— գոչեց քահանան ուրախությամբ,— ուրեմն ամեն բան կարգին է։

— Միայն թե,— ավելցուց Ղուկաս էֆենտի,— կետի մը մասին ես համաձայն չեմ տիկին Անթառամի հետ։

— Ճանրմ, պզտիկ անհամաձայնություն մը ըլլա նե՝ դյուրին է, կկարգադրենք,— աճապարեց ըսել Տ. Միքիաս։

— Այսինքն թե,— առաջ տարավ Ղուկաս էֆենտի,— ինձ այնպես կերևա, որ տիկին Անթառամի համար խնդիրը խաղաղությամբ կարգադրելու միակ միջոցն է հարսնիքը կատարել անպատճառ, որով միայն կարելի է մեջտեղ եղած խաղքությունը վերջացնել։

Ղուկաս էֆենտի մասնավորապես շեշտած էր անպատճառ խոսքը։

Տ. Միքիաս և Տիկին Անթառամ այս հայտարարության վրա ափ ի բերան մնացին։

— Բայց, Ղուկաս էֆենտի,— կակազեց քահանան,— ինչպե՞ս կարելի է այդ տեսակ բան մը... փոխանակված խոսքերեն ետքը։

— Այդ խոսքերը կարևորություն չունին, ան մեզի ըսավ, մենք ալ անոր ըսինք, ֆիք եղանք... այս ամուսնությունը պետք է կատարվի, ես աս գիտեմ... ուստի տիկին Անթառամ, կխնդրեմ, որ ալ ասկե ետք վերջ տաք այդ տեսակ խոսքեր ընելու և լեզունիդ կզսպեք, մինչև որ հարսնիքը ընենք լմընցնենք... հակառակ պարագային ես ալ պիտի ստիպվիմ ձեր վրա բոլոր գիտցածներս մանրամասնորեն մեջտեղ հանել, և եթե հարկ ըլլա թերթերուն մեջ ալ հրատարակել... «Թոփ Գաբուցի պայրաքտար Սուրբիկի աղջկան շահատակությունները» վերնագրով։ Ջմոռնամ ըսելու, որ ձեր հանգուցյալ ամուսնույն մտերիմ բարեկամը, ոսկերիչ Հակոբ աղան, տակավին ողջ է և հատուկ բարևներ ունի ձեզի... ուրեմն առայժմ մնաք բարով։

Եվ Ղուկաս էֆենտի ոտքի ելավ մեկնելու համար. տիկին Թագուհի ինքն ալ ոտքի ելած էր, իսկ տիկին Անթառամ, այլայլած, անէացած, տեղեն շարժվելու կարողություն չուներ։

Երբ տեր և տիկին Կելկիթյան սենյակեն դուրս ելան, Տ. Միքիասին դառնալով, հետո անոր ականջին ծռելով փսփսաց.

— Իշտե ես մարդուն մարը ասպես... կլացունեմ։

Երբ տեր և տիկին Կելկիթյան սենյակեն դուրս ելան, Տ. Միքիաս և տիկին Անթառամ պահ մը լուռ մնացին։

Քահանան սիկարեթ մը ոլորելով հանդերձ կնայեր Անթառամին երեսը, որ ամոթահար, աչքերը վար հառած, չէր համարձակեր իր դավակցին նայելու։

Տ. Միքիաս կըզգար, թե Ղուկաս էֆենտիի բոլոր հայտնությունները տիկին Կոկիկյանի մասին ճշմարտություններ էին, եթե ոչ, անշուշտ Լևոնի մայրը պիտի կատղեր, բողոքեր իր վրա տեղացած այդ անարգանքներուն դեմ, մինչ ընդհակառակը, ընկճված, սահմռկած մնացեր էր, առանց կարենալ բերանը բանալու։

— Աս ի՞նչ սարսափելի մարդ է, աս ի՞նչ փորձանք բերինք գլխներուս,— ըսավ վերջապես տիկին Անթառամ, ձեռքը ծունկին զարնելով։

— Այո, այս մարդն իր գաղափարեն չպիտի հրաժարի,— պատասխանեց Տ. Միքիաս,— հայտնի կտեսնվի կոր... Միայն թե ուռ հուսահատելիք բան չի կա, տակավին կրնանք հաջողիլ և մեր նպատակին հասնիլ։

— Ինչպե՞ս, տեր հայր,— հարցուց Անթառամ հուսակտուր շեշտով մը։

— Մյուսյու Լևոնին միջոցավ... Հոս գալեն ետքը, եթե բոլոր այս անցած դարձածները իմանա, չեմ կարծեր որ տակավին համառի այս աղջկա հետ ամուսնանալ ուզելու, վերջապես, բնականաբար, մայրական իշխանություն մը ունիս իր վրա...

— Երթալեն ի վեր տակավին նամակ մը չգրեց,— դիտել տրվավ Անթառամ։

— Ատ կարևորություն չունի,— վճռեց քահանան,— ճամփորդության մեջ, գործերով զբաղված, գուցե չէ կրցած ժամանակ գտնել... ատիկա ներելի բան մըն է... վերջապես, տիկին, պետք չէ, որ հուսահատինք. . առայժմ լուռ կկենանք, նոր գայթակղություններե կզգուշանանք, մանավանդ կաշխատինք, որ Ղուկաս էֆենտի բերանը կողպած պահե և ես վստահ եմ, որ այնքան ատեն, որ հույս ունենա աղջիկը մյուսյու Լևոնին հետ ամուսնացնելու, երբեք այդ ըսած խոսքերը ուրիշին չպիտի կրկնե... այս կպահանջե իր շահը, հետևաբար այդ կողմեն վախնալիք բան մը չունինք։

Այս ապահովիչ և հուսատու խոսքերուն վրա՝ Տ. Միքիաս ոտքի ելավ ու մեկնեցավ, խոստանալով կրկին այցելել։

ԳԼՈՒԽ Ժ

Ղուկաս էֆենտիի այս պատմական այցելությենեն երեք օր ետքը, հինգշաբթի իրիկուն մը Ռոզիկ հետևյալ նամակը ստացավ Լևոնեն։

«Պաշտելի նշանածս,

«Վերջապես, երեկ ամբողջ գործերս լմնցուցի շատ հաջող կերպով։ Կրնամ ըսել, որ քեզի հետ նշանվելես ի վեր բախտը տարօրինակ կերպով կժպտի կոր ինծի, ճշմարիտ մասգոթ մը եղար ինծի համար։

«Ոչ թե միայն այն գործը, որուն համար այս ճամփորդությունը ըրի, հուսացածես շատ ավելի լավ պայմաններով կատարվեցավ, այլ նույնիսկ ուրիշ մեկ քանի անակնկալ գործեր ալ կատարեցի։

«Վաղը չէ մյուս օրվան էքսպրեսով կվերադառնամ Պոլիս, հետեւաբար այս նամակս ձեռքդ հասնելե երկու օր ետքը, այսինքն շաբաթ առտու ժամը 10-ին կհասնիմ Սիրքեճիի կայարանը, ուր վստահ եմ, որ պիտի գաս զիս ընդունելու, հայրիկիդ հետ։

«Չես կրնար երևակայել, թե որչափ կարոտցած եմ քեզ և թե ինչ անհուն հրճվանքով քեզ պիտի գրկեմ թևերուս մեջ։ Երբ այս տողերս կարդաս, ես արդեն ճամփա ելած պիտի ըլլամ Փարիզեն, վազն ի վազ դեպի քեզ գալու համար։

«Տարօրինակ նամակ մը առի մայրիկես, որ զիս շատ վշտացուց։ Չեմ գիտեր, թե իմ բացակայությանս միջոցին ինչ անցեր դարձեր է մեջերնիդ, որ տեսակ մը պաղություն տիրեր է։ Նույնիսկ մայրս քեզ նկատմամբ անհաճո բաներ ըսելու չափ առաջ գացեր էր։ Այդ գրածները այնքան ցավ պատճառեցին ինծի, որ բարկությամբ նամակը պատռեցի և նույնիսկ չուզեցի պատասխանել. գիտեմ, որ մայրս քիչ մը ջղային է և գուցե աննշան միջադեպե մը գրգռվելով է, որ այդ նամակը գրած է։ Ինչ որ ալ ըլլա, երբ Պոլիս հասնիմ, խնդիրը կկարգադրեմ։

«Դուն, սիրելի Ռոզիկս, վստահ եղիր, որ ոչ մեկ բան կրնա ազդել մեր սիրույն վրա, մենե դուրս ուրիշներ կրնան իրարու հետ խնդիրներ ունենալ, բայց մեզի ի՞նչ փույթ, մենք իրար կսիրենք ու ասիկա բավ է մեզի. այնպես չէ՞։ Ինծի համար այս միջոցիս, աշխարհիս երեսը քենե զատ բան մը չեմ ճանչնար, ամբողջ էությունս քեզմով լեցված է...

«Երկար չեմ գրեր այս անգամ, կուզեմ բոլոր ըսելիքներս պահել շաբաթ օրվան, երբ գլուխ գլխի առանձին մնանք, քանզի, անշուշտ, մեզ քիչ մը առանձին թողնելու բարությունը պիտի ունենան՝ այսքան օրվա բաժանումե մը ետքը։

«Չեմ ուզեր խոսիլ բոլոր այն աղվոր բաներուն վրա, որոնք

քեզ համար գնեցի. կուզեմ, որ եկած ատենս անակնկալ մը ըլլա քեզի համար։

«Իմ դիտավորությունս է Պոլիս հասնելես շաբաթ մը ետքը հարսնիքը կատարել և նույն օրն իսկ վերադառնալ Փարիզ, ուր ներկայությունս այլևս անհրաժեշտ է։ Կհուսամ, որ բացակայությանս միջոցին ամեն պատրաստություն տեսած եք արդեն։ Իմ այս դիտավորությունս իմացուր հայրիկիդ, մայրիկիդ և միևնույն ատեն, իրենց հաղորդե իմ խորին հարգանքներս ու սիրալիր բարևներս։

«Իսկ քեզի միլիոն համբույր, մազերեդ մինչև ոտքերուդ ծայրը»։

Երբ Ռոզիկ նամակին պարունակությունը իմացուց իր ծնողքին, Ղուկաս էֆենտի հաղթական գոհունակություն մը զգաց և գոչեց.

— Եթե կուզե, եկած օրը պսակը կընենք, կլմնցնենք... և կարծեմ այդ ամենեն աղեկը կըլլա։

Բայց տիկին Թագուհի հակառակեցավ այս ձև ափհափոյ ամուսնության, որ կրնար իրենց կողմե տղան խաղի բերելու դավ մը համարվիլ ու բամբասանքներու տեղի տալ։ Ընդհակառակը ինք կուզեր, որ Լևոնի բացատրվեր իր բացակայության ատեն տեղի ունեցած անցքերը և հետո անոր ազատ կամքին ձգել ամուսնությունը կնքել կամ նշանը խզել։

— Շատ աղեկ, թող քու ըսածիդ պես ըլլա,— պատասխանեց Ղուկաս էֆենտի,—արդեն այս նամակեն կերևա, որ տղան իր մորը գրածներուն բնավ կարևորություն չէ տված, հետևաբար հոս ըսելիքներուն ալ ականջ չպիտի դնե։

Ռոզիկ հետևյալ օրը տենդային անհամբերությամբ անցուց։ Կուզեր, որ ժամ առաջ Լևոնի ժամանումին վայրկյանը հասներ։ Խեղճ աղջիկը օրերե ի վեր անցած դարձածեն այնքան հուզված ու գրգռված էր, որ գրեթե ինքզինք հիվանդ կզգար ու կփափաքեր ժամ առաջ վերջացած տեսնել իր երջանկության դեմ սարքված մեքենայությունները։

Շաբաթ առտու կանուխեն ելավ և սկսավ իր արդուզարդով պարապիլ. Ղուկաս էֆենտի պատշաճ էր դատած տիկին Անթառամին իմաց տալու իր տղուն գալուստը, բայց կենթադրեր, որ գուցե Լևոն նամակով մը իր մոր լուր տված էր այդ մասին։

Երբ Ռոզիկ ու հայրը Սիրքեճիի կայարանը հասան, տակավին

կառախումբին հասնելու կես ժամ կար, ուստի գացին սպասման սրահը, ուր հեռվեն նշմարեցին տիկին Անթառամը, որ վառարանին մոտերը, նստարանի մը վրա, խոր մտածումներու մեջ ընկղմված կթվեր։

— Կերևա որ Լևոն իրեն ալ իմացուցեր է գալը,— ըսավ Ղուկաս էֆենտի իր աղջկան։

Հետո, պահ մը կանգ առնելով՝

— Ի՞նչ պիտի ընենք հիմա, քովը երթա՞նք, թե հեռու փախչինք,— հարցուց Ռոզիկի։

Աղջիկը, որ արդեն իր ապագա կեսուրը տեսնելով դող ելած էր, չպատասխանեց։

Բայց Ղուկաս էֆենտի, որ ամեն դժվարին կացություններու հանդեպ գործի մարդու կտրուկ որոշողությունը ուներ, վճռեց։

— Պետք է որ քովը երթանք, լավագույնը ան է։

Եվ վստահ քայլերով հառաջացան դեպի այն նստարանը, որուն վրա բազմած էր Լևոնին մայրը։

— Բարև, տիկին Անթառամ,— ըսավ Ղուկաս էֆենտի, քովը մոտենալով,— կերևա, որ մյուսյու Լևոնը ձեզ ալ իմացուցեր է իր գալուստը...

Տիկին Անթառամ գլուխը վեր վերցուց, դաժան նայվածք մը արձակեց իր խոսակցին երեսին և ըսավ.

— Այո, երեկ նամակ առի։

Ռոզիկ ևս մոտեցեր էր իր ապագա կեսուրոջ և կուզեր ձեռքը համբուրել, մինչ Անթառամ ետ կքաշեր զայն։

Ղուկաս էֆենտի ուզեց անպատճառ սուրճ մը հրամցնել տիկին Անթառամի, մինչ ինք իրեն համար կոնյաք մը կապսպրեր պյուֆեի ծառային։ Տիկին Կոկիկյան թեև քանիցս մերժեց սուրճը, բայց Ղուկաս էֆենտիի ստիպումներուն վրա տեղի տվավ։

— Մյուսյու Լևոնը,— ըսավ վաճառականը,— աղջկաս գրած նամակին մեջ կըսե, որ գալ շաբթու հարսնիքը ընենք լմնցնենք, որովհետև իր գործերը չեն ներեր եղեր, որ ավելի երկար ատեն հեռու մնա Փարիզեն։ Արդյոք այս մասին ձեզի ալ բան մը գրա՞ծ է։

— Չէ, բան մը չէ գրած,— պատասխանեց Անթառամ, որ հայտնապես նեղություն կզգար այս դժնդակ խոսակցությունեն։

Բայց Ղուկաս էֆենտի կարևորություն չտվավ տիկին Անթառամի բռնած ընթացքին, որ միավանկ բառերով կպատասխաներ

իրեն ամեն խոսքերուն, այլ, ընդհակառակը, սկսավ երկարորեն խոսիլ հարսնիքի մանրամասնություններուն վրա։

Վերջապես հեռավոր սուլոց մը իմացուց կառախումբին գալուստը. ճամփորդները դիմավորել հկող բազմությունը սկսավ խուժել քարափին վրա ու անոր երկայնքը շարվիլ. տիկին Անթառամ և Ղուկաս էֆենտի քով քովի կեցած էին, իբր թե աշխարհի լավագույն բարեկամները ըլլային, իսկ Ռոզիկ քիչ մը անդին աչքերը հառած էր մոտեցող կառախումբին վրա, երջանիկ ու սրտատրոփ։ Ու ահա վերջին շչյուն մը արձակելով, կառախումբը հևալով ու ֆշշալով մտավ կայարան։

— Ահա Լևոնը,— գոչեց Ռոզիկ ցնծագին, նշմարելով իր նշանածը, որ առաջին կարգի վակոնի մը պատուհանին առջև կեցած էր, խուզարկու ակնարկը չորս կողմ պտտցնելով։ Ինքն ալ իր կարգին տեսեր էր մանկատի աղջիկը։

— Ռոզիկ, ի՞նչպես ես, աղե՞կ ես,— կպոռար պատուհանեն։

Բոպե մը ետքը իրարու գիրկն էին։

Լևոնի համար հաճելի անակնկալ մը եղավ տեսնել իր մայրն ու Ղուկաս էֆենտին քով քովի կեցած, զինքը դիմավորելու համար։

Վերջին օրերը իր մորմեն ընդունած մեկ երկու նամակները զինքը շատ վրդոված էին։ Անթառամ սոսկալի կերպով լարված կթվեր այդ նամակներուն մեջ Կելկիթյաններու հանդեպ։ Նույնիսկ իր տղուն կզգացուներ, թե ծրագրված ամուսնությունը անկարելի էր կատարել կարգ մը պատճառներով, զորս պիտի բացատրեր Լևոնին Պոլիս հասնելուն։ Այդ խորհրդավոր խոսքերը զինք քիչ մը տակնուվրա ըրած էին։ Իրավ է, որ ինք որոշած էր անպատճառ ամուսնանալ Ռոզիկի հետ, առանց դրամօժիտի կամ ուրիշ երկրորդական դժվարություններու կարևորություն տալու, սակայն եթե իրավցնե այդ միության դեմ լուրջ ու անակնկալ արգելքներ ըլլային. ինչ պիտի ըներ։ Եվ ճամփորդության ամբողջ տևողության միջոցին իր միտքը չարչարած էր գուշակելու համար մոր ակնարկած պատճառները։

Եվ ահա հիմա կայարան հասնելով, կտեսնար, որ մայրն ու Ղուկաս էֆենտի, ինչպես նաև իր նշանածը, քով քովի իրեն կըսպասեին։

Իր առաջին տպավորությունը այն եղավ, թե իր մայրն ուէ մեքենայության մը զոհ գացած է պահ մը, և թե հետո, իր սխալ-

մունքը հասկնալով հաշտված է իր խնամացուներուն հետ։ Եվ այս ենթադրությունը չափազանց ուրախացուց զինքը և սկսավ զվարթորեն ու սիրալիր կերպով տեսակցիլ ամենուն հետ։ Հետո, երբ Բերա դառնալու կպատրաստվեին՝ առաջարկեց.

— Ղուկաս էֆենտի, օթել երթանք և ճաշը միասին ընենք, չըլլա՞ր։

— Ամենայն սիրով,— պատասխանեց վաճառականը։

Երկու կառք սակարկեցին և Լևոնի կարգադրության համեմատ՝ մեկուն մեջ նստան տիկին Անթառամը և Ղուկաս էֆենտին, իսկ մյուսին մեջ՝ ինքն ու նշանածը։

Հազիվ թե կառքերը ճամփա ելած էին, Լևոն խնդալով ըսավ Ռոզիկին.

— Գիտե՞ս թե որքան մտատանջ էի հոս հասած վայրկյանիս և թե հիմա որքան հանգիստ երջանիկ եմ։

— Ինչո՞ւ համար,— հարցուց աղջիկը միամտաբար։

— Պարզապես կվախնայի, որ հոս հասնելուս հարաբերության խզում մը տեսնեի մորս և ձեր միջև, մինչդեռ, ընդհակառակը, ահա հայրդ ու մայրս քով քովի զիս ընդունեցին։ Ուրեմն պատահած միջադեպը կարևորութենե զուրկ բան մըն է և արդեն ամեն բան մոռցված է...

Լևոնի այս խոսքերը շփոթեցուցին Ռոզիկը, որ չէր գիտեր ինչ պատասխանելը։ Չէր ուզեր մեկեն ի մեկ հուսախաբ ընել երիտասարդը, իսկ մյուս կողմե անտանելի կուզար իրեն ստելը։ Ուստի շեղակի պատասխան մը տվավ.

— Եվ եթե տեսնայիր. որ իրավցնե հարաբերության խզում մը պատահած է, իմ ծնողքիս ու քո մորդ միջև, ի՞նչ պիտի ընեիր,— հարցուց Ռոզիկ, իր սև աղվոր աչքերը հառելով երիտասարդին վրա։

— Շիտակը, շատ ցավ պիտի զգայի, ջանայի պատճառը հասկընալ և անմիջապես հաշտություն մը գոյացնելով, խնդիրը անույշ տեղը կապել։

— Եվ եթե չհաջողեի՞ր այդ հաշտությունը հառաջ բերել,— կրկնեց աղջիկը ժպտելով։

Լևոն զարմացումով իր նշանածին նայեցավ։

— Բայց ինչո՞ւ այդ հարցումները կընես, քանի որ այլևս խնդիր չէ մնացած մեջտեղը։

— Պարապ ենթադրություն մըն է բրածս, միայն թե կուզեմ, որ պատասխաննես,— պնդեց մանկատի աղջիկը։

«Կերևա, որ զիս փորձել կուզե՝ այս շարաճճին»,— խորհեցավ Լևոն։ Հետո հանկարծ շեշտով մը պատասխանեց.

— Իրավ որ, ընելիքս շատ պարզ է, երբոր հաշտության ամենամիջոց սպառեր, այն ատեն կձգեի, որ անոնք իրարու հետ ուզածնուն չափ քեն ընեն և որովհետև մենք իրարու հետ հաշտ ենք ու բան մը չունինք, քեզի հետ կամուսնանայի ու կելլեինք կերթայինք... միթե մեր երջանկությունը ուրիշին քմահաճույքի՞ն պիտի զոհենք։

Ռոզիկ, երիտասարդին այս պատասխանին վրա, անհուն երանության և շնորհակալության ակնարկ մը ուղղեց իր նշանածին և այտերը անոր ներկայացնելով, ըսավ.

— Ուրեմն համբուրե ինձի։

Ու երկու սիրահարները իրարու փարեցան։

Սակայն Ռոզիկի բոլոր այս հարցումները կասկածներ հարուցած էին Լևոնի մտքին մեջ։

— Կերևա, որ դեռ հաշտությունը կատարյալ չէ,— մտածեց,— բայց վնաս չունի, քանի որ իրարու հետ բոլորովին խզված չեն, կրնանք դյուրավ կարգադրել ամեն բան։

Եվ ալ այդ խնդրին վրա չխոսեցավ աղջկան հետ։

Օթելին մեջ, սեղանի վրա, ճաշը բավական զվարթ անցավ։ Ղուկաս էֆենտի անհման կերպով մտերմություն կեղծեց տիկին Անթառամի հետ, միշտ հետը խոսելով, գինի մեծարելով, կատակելով, մինչ տիկին Անթառամ կշարունակեր իր դաժան ու վերապահ դիրքը։

Միջոց մը Ղուկաս էֆենտի խոսքը Լևոնին ուղղելով ըսավ.

— Ուրեմն այսպես, անպատճառ կուզես, որ գալ շաբթու հարսնիքը ընե՞նք... ես պիտի նախընտրեի, որ գոնե ամիս մը հետաձգեինք, որպեսզի ավելի հանդարտորեն պատրաստություններ տեսնեինք...

— Ամիս մը,— գոչեց Լևոն,— չէ, չէ, Ղուկաս էֆենտի, անկարելի է, նույնիսկ մեկ շաբաթը ինձի համար մեծ զոհողություն մըն է... դուք գործի մարդ եք, գիտեք, որ երբ բացառիկ առիթներ ներկայանան, պետք չէ ձեռքե փախցնել և ճիշտ այս միջոցին այդպիսի առիթներ կան...

— Այսինքն,— վրա բերավ Ղուկաս էֆենտի,— իմ հայտնածս

պարզ փափաք մըն էր, բայց քանի որ գործերդ չեն ներեր, էհ, ինչ բնենք, թող ուզածիդ պես ըլլա։

Հետո, Լեոնի մորը դառնալով, Ղուկաս էֆենտի ժպտուն, փայ-փայլիչ ձայնով մը հարցուց.

— Ձեր կարծիքը ի՞նչ է այս մասին, տիկին Անթառամ։

Ճաշը արդեն ավարտված էր և պտուղ ուտելու միջոցին այս խոսակցությունը կանցներ։ Առտվընե ի վեր տիկին Անթառամ, դերագրգռված վիճակ մը ուներ, Ղուկաս էֆենտիի այս կեղծ մեծարանքները, ամեն առիթ հետը խոսելու ճիգը, զինքը չափազանց գայրացնած էին։ Անթառամը կփափաքեր, որ զավկին հետ առաջին անգամ ինք առանձին տեսակցություն մը ունենա ու այս մասին գրեթե վստահ էր հաջողելուն։

— Նույնիսկ եթե հայր ու աղջիկ կայարան գան Լեոնը դիմավորելու,— կխորհեր,— անշուշտ քանի մը վայրկյանի տեսակցությունենե ետքը մեզ առանձին պիտի թողուն և ելլեն տուներնին երթան։

Բայց ահա այդպես չէր եղած։ Տղան զանոնք ստիպեր էր միասին պանդոկ գալու և այնպես մը կարգադրեր էր, որ ինք նշանածին հետ առանձին կառք նստի։ Արդ, տիկին Անթառամ, վստահ էր, որ կառքին մեջ Ռոզիկ ու իր զավակը խոսած էին իրենց միջև ծագած գժտության վրա և անշուշտ աղջիկը իր ուզած ձևովը ներկայացուցած էր։ Եվ այս ենթադրությունը ալ ավելի ջղագրգռած էր տիկին Անթառամը, որ ճաշի բոլոր տևողությանը գրեթե բերանը չէր բացած։

Երբ Ղուկաս էֆենտի հարսնիքի խոսքը բանալով ի վերջո իր կարծիքը հարցուց, ալ տիկին Անթառամ չկրցավ համբերել և ոտքի ելլելով՝ զավկին դարձավ և ըսավ.

— Աման, Լեոն, վրաս գեշություն մը եկավ, կենալու կարողություն չունիմ, ինծի սենյակս տար։

Երիտասարդը փութաց իր մոր քով և թևը առնելով դուրս առաջնորդեց.

— Ի՞նչ եղավ, ի՞նչ ունիս, արդեն անհանգիստ էիր,— հարցնելով։

Սեղանին վրա հայր ու աղջիկ առանձին մնացին։ Ղուկաս էֆենտի բաժակին մեջ գինի լեցուց, մի մի ումպ խմեց և ինքնիրեն մտածեց.

— Կարծես քիչ մը չափը անցուցի...

Ծառան եկավ սեղանը վերցնելու, հետո սուրճը բերավ։

— Արդյոք ի՞նչ եղավ հանկարծ տիկին Անթառամը,— հարցուց Ռոզիկ, մտատանջ կերպարանքով մը։

— Հոգ մի ըներ, բան մըն ալ չունի, պարզապես տղուն հետ առանձին մնալու համար այդ անհանգստությունը հնարեց,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, սիկարեթը վառելով։

Եվ սակայն Լեոն կուշանար վերադառնալու իրենց մոտ, և կես ժամեն ավելի սպասելե ետքն էր, որ վերջապես երևցավ սեմին վրա։

Վրդովված ու հուզված կերպարանք մը ուներ։

— Կներեք, ձեզ չափազանց սպասցուցի,— ըսավ սեղանին մոտենալով։

— Օ, վնաս չունի,— պատասխանեց Ղուկաս էֆենտի,— միայն թե ինչպես է ձեր տիկին մայրը, կհուսամ, որ այդ հանկարծական անհանգստությունը ծանր բան մը չէր և հիմա բոլորովին անցուց։

— Այո, գլխու պտույտ մը ունեցեր է մեկեն ի մեկ, այժմ հանվեցավ և հանգստացավ։

— Ձեր ուշանալեն բավական մտատանջության մեջ ինկանք, նույնիսկ Ռոզիկս կպատարստվեր կոր վեր ելլելու, տեղեկություն մը առնելու համար։

— Ուշացա, որովհետև բավական խոսակցեցանք միասին,— պատասխանեց երիտասարդը։

Հայր ու աղջիկ ուզեցին մեկնել, սակայն Լեոն ստիպեց, որ մնան և կրկին խոսք բացավ հարսնիքի մասին, ըսելով, որ անպատճառ կուզեր առաջիկա երկուշաբթի պսակը կատարել և նույն իրիկունն իսկ կառախմբով մեկնիլ Փարիզ։

— Ես ու Ռոզիկ առանձին պիտի երթանք,— ըսավ,— այնպես որոշած եմ, իսկ մայրս թող տասնըհինգ օր ետքը գա... կուզեմ, որ գոնե երկու շաբաթ գլուխ գլխի անցնենք... ասիկա կարծեմ ամեն ամուսնացողներու իրավունքն է։

— Հարկավ,— հաստատեց Ղուկաս էֆենտի,— ո՞վ հակառակը կպնդե, ես ալ քու տեղը նույնը պիտի ընեի... միայն թե մայրդ ալ կհավանի՞ կոր այդ կարգադրության։

— Այս մասին դեռ բան մը չըսի իրեն, բայց վստահ եմ, որ չհակառակիր։ Վերջապես պզտիկ տղա չեմ ու ամեն բան մորս հրամանով կատարելու պարտականություն չունիմ։

— Այնպես է,— ըսավ Ղուկաս էֆենտի...

Այս տասնհինգօրյա առանձնության հեռապատկերը երջանկությամբ կլեցներ Ռոզիկի սիրտը։ Տեղի ունեցած միջադեպերեն ետքը, առաջին վայրկյանեն տիկին Անթառամի հետ ըլլալու հավանականությունը պարզապես սոսկում կազդեր իրեն և ասոր համար, երբոր Լևոն իր դիտավորությունը կրկնեց, անհուն շնորհակալության նայվածք մը ուղղեց երիտասարդին։

Լևոն հանկարծ խոսքը փոխեց.

— Հիմա որոշենք, որ վաղը՝ կիրակի՝ ինչ պիտի ընենք։

— Նախ, բնականաբար, մեզի պիտի դաս ճաշի, այնպես չէ՞— հարցուց Ռոզիկ։

— Տես իմ ծրագիրս,— պատասխանեց երիտասարդը։— Առտուն ձեզի կուգամ՝ տիկին Թագուհիին հարգանքներս մատուցանելու համար, հետո քեզի հետ դուրս կելլենք և... ո՞ւր կարելի է երթալ։

— Վաղը տոն է, հետևաբար լավագույն է, որ միասին եկեղեցի երթանք,— ըսավ Ղուկաս էֆենտի։

— Օ, եկեղեցին նշանածներու տեղը չէ,— պատասխանեց երիտասարդը ժպտելով,— ես կնախընտրեմ դեպի Շիշլի կառքով պտույտ մը։

— Ես ալ անանկ,— երկրորդեց Ռոզիկ։

Բայց վաճառականը իրեն հատուկ խորհուրդը ուներ։

— Չէ,— պնդեց նորեն,— հարկ է, որ անպատճառ միասին Երրորդություն երթանք, ասիկա գրեթե պարտավորիչ բան մըն է։

— Ինչո՞ւ համար,— հարցուց երիտասարդը ժպտելով։

— Որովհետև այս օրերս, ձեր տիկին մոր հարուցած խնդիրներուն և հոս ու հոն ըրած խոսքերուն պատճառավ, կարգ մը անտեղի տարաձայնություններ կան Բերայի ընտանիքներուն մեջ, ինչ որ՝ թե մեր և թե ձեր անունին պատիվ չեն բերեր. նույնիսկ լուր տարածված է, որ աղջկանս և քու նշանտուքը ետ եղած է և այլն։ Բոլոր այս անտեղի խոսքերուն վերջ տալու միակ միջոցն է ձեր երկուքին թե թեի եկեղեցի երթալը։ Մեյ մը որ ձեզ միասին տեսնեն հոն, ալ ամեն բամբասանք վերջ կգտնե ու մենք ալ կապատինք, դուք ալ։

— Եթե խնդիրը այդպես է, ամենայն սիրով կընդունիմ ձեր առաջարկությունը։ Ուրեմն, այսպես, վաղը առտու նախ ձեզի կուգամ, Ռոզիկը կառնեմ ու եկեղեցի կերթանք, հետո տեղ մը կնստինք և ցերեկվան ճաշն ալ միասին կընենք։

— Բայց եթե առտուն մայրդ անհանգիստ ըլլա՞,— դիտել տրվավ Ռոզիկ։

— Այդ մասին անհոգ եղիր,— պատասխանեց Լևոն,— մայրս բան մըն ալ չունի։

— Ավելի լավ։

Այս կարգադրությունը ընելե ետքը, հայր ու աղջիկ, երիտասարդին բարի դիշեր մաղթելով մեկնեցան։

Հետևյալ առտու, Լևոն իր խոստումին հավատարիմ, եկավ Եելկիթյանենց բնակարանը, մորը հետ բուռն վիճաբանություն մը ունենալե ետքը։ Արդեն նախորդ իրիկունն ալ, տիկին Անթառամ, անհանգստություն կեղծելով, երբ զավկին հետ իր ննջասենյակը մտած էր, առաջին խոսքը եղած էր.

— Լևոն, գիտցած ըլլաս, որ եթե այս աղջիկը առնես, ձեռքովդ գերեզմանս փորած կըլլաս...

Ու հետո սկսած էր բերնին եկած նախատինքները թափել Ղուկաս էֆենտիի, տիկին Թագուհիի ու Ռոզիկի գլխուն։ Երիտասարդը տեսնելով իր մոր գերագրգռված վիճակը, ջանացեր էր զայն հանդարտեցնել, առանց ընդդիմախոսելու, լավագույն համարելով ավելի հանդարտ վայրկյանի մը մեջ խոսակցություններ ունենալ մորը հետ։ Տիկին Անթառամ՝ հանդարտորեն զավկին իր նախատինքները մտիկ ընելեն այնպես ենթադրեր էր, որ իրեն քիչ շատ համամիտ էր և այս լավատես տրամադրությամբ պառկեր էր, հետևյալ առտուն կրկին ու ավելի մանրամասնորեն այդ ամուսնական խնդրին դառնալու որոշումով։

Բայց իրմե առաջ արդեն Լևոն խոսք բացավ.

— Մայրիկ,— ըսավ առտուն իր քով դալով,— երեկ իրիկուն շատ հուզված վիճակ մը ուներիր և ասոր համար չուզեցի շատ խոսեցնել քեզ, բայց հիմա կհուսամ, որ հանդարտած ես, ուստի կրնանք պաղ արյունով տեսակցիլ։

— Իմ ուզածս ալ այդ է արդեն,— պատասխանեց տիկին Անթառամ։

— Նախ կուզեմ, որ կիրքով ու հուզումով չխոսիս, հետո անորոշ ակնարկություններ ալ չընես, այլ որոշ կերպով և ապացույցներով ըսես, թե՝ ի՞նչ պատճառավ կդժկամիս այս ամուսնությանե։

Տիկին Անթառամ զավկին այս խոսքերեն շփոթվեցավ։ Իրավամբ որոշ ու հայտնի ամբաստանություն մը չէր գտներ ընելիք Կելկիթյաններու դեմ։ Անոնց դեմ, կամ մանավանդ Ռոզիկի դեմ իր հակառակությունը ծնունդ առած էր նախանձի զգացումե մը։ Տիկին Անթառամ այնպես կմտածեր, թե Ռոզիկի հետ իր զավակը ամուսնանալե հետո ինք բոլորովին պիտի լքվեր, երեսի վրա թողվեր, քանի որ զավակը այնքան բուռն կերպով սիրահարած էր այդ աղջկան։ Եվ այս հեռապատկերն էր, որ զինքը դրդեր էր ամեն արգելք ըլլալու այս ամուսնության։ Ու երբ Տ. Միքիաս ալ եկեր, իրեն միացեր էր նույն նպատակով, Տիկին Անթառամ անոր խոսքերուն անմիջապես հավատացեր էր, քանի որ քահանային ըրած ամբաստանությունները իբրև զենք պիտի ծառայեին, իր նպատակին հասնելու համար։ Հետո, իր և Կելկիթյաններու միջև տեղի ունեցած միջադեպերը բոլորովին ատելի դարձուցած էին զանոնք իր աչքին ու հիմակ անհաղթելի ատելություն մը կզգար, թե Ղուկաս էֆենտիի և թե անոր աղջկանը դեմ։ Բայց բոլոր ասոնք չէին կրնար որոշ ամբաստանություն մը ներկայացնել։

Եվ սակայն տիկին Անթառամ չէր ուզեր տեղի տալ և լսելով հանդերձ, կպատրաստվեր կռվի։

— Խոսե տեսնենք,— ըսավ Լևոն անհամբեր,— ի՞նչ պատճառավ կուզես այս ամուսնությունը խզել։

— Ո՞ր մեկը ըսեմ,— պատասխանեց վերջապես Անթառամ,— ականջդ հոս ըլլար և լսեիր այդ մարդոց վրա ըսված խաղքությունները...

— Ատոնք պարապ խոսքեր են, մայրիկ,— ըսավ Լևոն սրտնեղած,— քեզի ըսի, որ անորոշ խոսքեր մտիկ չեմ կրնար ընել...

— Նախ սա ըսեմ, որ այդ Ղուկաս էֆենտի ըսվածը կործանած մեկն է եղեր։

— Ո՞ւրկե իմացար,— գոչեց Լևոն։

— Տ. Միքիաս քահանան, իրենց տաներեցը ըսավ...

— Հետո՞։

— Հետո, ամո՞թ չէ քեզի, որ երեք հազար ոսկի օժիտով աղջիկ առնես, մինչ տասը հազար ոսկի օժիտ տալու պատրաստ ընտանիքներ կան, և ինչ ալ աղջիկներ։

— Ես դրամի համար չէ որ կամուսնանամ կոր, ես այդ աղջկան սիրահարված եմ, և եթե տասը փարա օժիտ չտա հայրը,

կրկին պիտի առնեմ,— պատասխանեց երիտասարդը վճռաբար, որ գոհունակությամբ կտեսներ, թե մայրը ոչէ լուրջ առարկություն չէր գտնար ընելիք այս ամուսնության դեմ։

— Ասոնցմե զատ.— ըսավ տիկին Անթառամ,— դեռ ուրիշ ծանր բաներ լսեցի. այդ Ղուկաս էֆենտին շատ անբարոյական մարդ է եղեր։

— Ի՞նչ ըրած է տեսնենք...

— Իրավ, որ բերանս առաջ չերթար կոր ըսելու համար... ինծի նայե, զավակս, եթե կուզես, դուն մեյ մը Տ. Միքիաս քահանան խոսել տուր և անկե ետքը, դուն գիտես, ուզածիդ պես ըրե, միայն թե գիտցած ըլլաս, որ այս ամուսնությունը ընելեդ ետքը, այլևս այդ աղջկան հետ մեկ տունի մեջ չեմ կրնար նստիլ...

Եվ տիկին Անթառամ հուզված, սիրտը ելած, սկսավ արտասվել։

Տղան ջանաց քիչ մը հանդարտեցնել զինքը և կարճ կապելու համար ըսավ.

— Լավ, մեյ մը Տ. Միքիասի հետ կտեսնվիմ, տեսնենք ան ինչ կըսե։

Հետո, ժամացույցը նայելով գոչեց.

— Օ, ուշ մնացեր եմ, պետք է որ երթամ տիկին Թագուհիին ալ այցելություն մը տամ և հավանորեն ցերեկվան կերակուրի ալ հոն կմնամ, ուստի դուն ինծի մի սպասեր...

— Ե՞րբ պիտի տեսնաս Տ. Միքիասը,— հարցուց Անթառամ։

— Այսօր անկարելի է, բայց գուցե վաղը կտեսնամ։

— Ավելի աղեկ։

Եվ երիտասարդը սենյակեն դուրս ելավ գոհ ու զվարթ տրամադրության մը տակ։ Խեղճը կվախենար, որ մայրը ծանր հայտնություններ պիտի ըներ, բայց հիմա հասկըցավ, թե ամբողջ խնդիրը չնչին միջադեպերու և անհիմն բամբասանքներու շուրջը կըդառնար։

Զավկին մեկնելեն ետքը, տիկին Անթառամ որոշեց եկեղեցի երթալ, ոչ այնքան աղոթելու, այլ մանավանդ Տ. Միքիաս հայրը տեսնելու և հետը խորհրդակցելու համար։

Միևնույն ատեն կուզեր անոր պատվիրել, որ հետևյալ առտու իրենց գար, անպատճառ, որովհետև ստած էր, երբոր Լևոնի ըսած էր, թե քահանան հետևյալ օրը իրենց պիտի այցելեր։

Լևոն երբ հասավ նշանածին տունը, Ռոզիկ արդեն շնորհալի արգուշարդ մը ըրած կազմ ու պատրաստ իրեն կսպասեր, վարի սալոնը։

— Ի՞նչպես եղավ մայրդ,— հարցուց աղջիկը։

— Ազեկ է, բան մըն ալ չունի,— պատասխանեց երիտասարդը զվարթորեն,— երեկ գիշերվան հանկարծական անհանդստությունը պարզապես կեղծիք է եղեր...

— Կեղծի՞ք,— գոչեց աղջիկը զարմացած։

— Այո, ինձի հետ առանձին մնալու և քո մասիդ բամբասանքներ ընելու համար,— առաջ տարավ Լևոն խնդալով։

Բայց Ռոզիկ նշանածին այս խոսքերեն հուզվեցավ և գույնը նետեց։

— Ես ի՞նչ ըրած եմ իրեն...— մրմնջեց տխուր շեշտով մը։

Երիտասարդը այն ատեն մի առ մի պատմեց իր մոր հետ քիչ առաջ ունեցած խոսակցությունը։ Եվ ի վերջո եզրակացուց.

— Մինչև այս առտու կվախնայի, որ մայրս գուցե ոևէ ծանր հայտնություն մը պիտի ըներ, բայց հիմա տեսա, որ մեջտեղ բան մըն ալ չի կա և ասոր համար շատ ուրախ եմ։

Նույն միջոցին տիկին Թագուհի ներս մտավ և կես ժամի չափ ալ անոր հետ խոսակցելե ետքը, Լևոն և Ռոզիկ դուրս ելան միասին, եկեղեցի երթալու համար։

Ղուկաս էֆենտի առտուն կանուխ արդեն գացեր էր Աղքատախնամի ժողովին նախագահելու համար։

Հակառակ Սերգիսի տված խոստումին՝ Ղուկաս էֆենտի ոևէ դիմում չէր ըրած հանրագրության համար։ Եվ ահա որոշյալ օրը ոստիկանության կողմե եկեր էին խեղճ կինն ու Գարեգինը տունեն հանելու։ Բարերախտաբար Հաճի Թումիկ նախապես Սաթենիկն ու փոքրիկ աղջիկը իր տունը փոխադրած էր, այնպես որ գործողությունը պարզ ձևակերպություն մը եղած էր, առանց թաղին մեջ զայթակղություն առաջ բերելու։

Եվ սակայն դեպքը մեծ գրգռում հառաջ բերեր էր, մանավանդ հանրագրությունը ստորագրողներուն մեջ, որոնք եկեր, բողոքեր էին Հաճի Թումիկ աղային, ըսելով, որ զիրենք խաղի բերած էր։

Սերգիս նույնպես սաստիկ զայրացած էր Ղուկաս էֆենտիի կողմե խաբվելուն համար, քանզի ինք այնպես հավատացած էր, որ վաճառականը իր խոստումը պիտի հարգեր և պիտի ջանար ոստիկանական միջամտության առաջքը առնել։

Հաճի Թումիկի գինետան մեջ մթակ խոսակցության նյութն էր այս խնդիրը։ Կիրքերը գրգռված էին և գինեպանը կզգար, որ իր ժողովրդականությունը ծանր հարված մը կկրեր։ Պետք էր իր վարկը վերահաստատել։

— Ես այդ Ղուկաս էֆենտիին նախեն պիտի գամ, դուք ալ պիտի տեսնաք,— կորոտար ատեն-ատեն, առանց ինքն ալ գիտենալու, թե ինչ ձևով պիտի կրնար իր սպառնալիքը գործադրել։

Ու իր երեկի հիացողները զինքը կհեգնեին.

— Պալ-պալ մի նետեր, Հաճի Թումիկ, տեսանք ըրածդ, ամենքս ալ խաղք ըրեր, նամուսնիս փարայի մը եզավ... բոլոր լսողներք վրանիս կխնդան կոր։

Եվ իրավ, թաղին մեջ հանրագրությունը ստորագրողներուն դեմ հեգնությունները անպակաս էին, մանավանդ Հաճի Թումիկի ընթացքը շատ մը ծաղրաբանությանց ու չարախոսությանց տեղի կուտար։ Իբրև անպարկեշտ՝ կնոջ մը դեմ հանրագրություն պատրաստելե ետքը, այդ կինը հովանավորությանը տակ առած էր ու իր տան մեջ հյուրընկալած։ Այս տարօրինակ հակասությունը շատ մը խոսքերու տեղի կուտային։

Գարեգին, տունեն ելլալեն ետքը, առժամապես Սերգիսի սենյակը փոխադրված էր և իր բարեկամը որոշած էր, որ հոն մնա, մինչև պաշտոնի մը մտնալը։

Երկու բարեկամները անբաժան էին իրարմե, և որովհետև Սերգիս ֆշարունակեր ամեն երեկո Հաճի Թումիկի գինետունը հանդիպիլ՝ Գարեգին ալ կընկերանար անոր։

Սերգիս և Թումիկ տեսակ մը սերտ ընկերակցություն կազմած էին, զինակցություն մը ընդդեմ Ղուկաս էֆենտիի, որովհետև երկուքին ալ արժանապատվությունը վտանգվեր էր անոր պատճառով։ Ու գաղտուկ խորհրդակցություններ կկատարեին իրարու հետ, որոնց ինչ ըլլալուն մասին նույնիսկ Գարեգին տեղեկություն չուներ։

Երբոր այս մասին Սերգիսի հարցում ուզեր էր, երիտասարդը խորհրդավոր կերպով մը պատասխաներ էր.

— Քիչ մը սպասե, կիմանաս, վերջին խնդացողը ադեկ պիտի խնդա, կըսեն ֆրանսացիները։

Իրիկուն մը, երբ գինետան մեջ բարձրագոչ վիճաբանություն մը կընեին կրկին հանրագրության առթիվ, որուն միջոցին հանկարծ կհեղհեղվեր Ղուկաս էֆենտիի անունը, մարդ մը, որ առանձին

նստած օդի կխմեր, առանց խոսքի խառնվելու, հանկարծ ըսավ Հաճի Թումիկին։

— Այդ Ղուկաս էֆենտի ըսածնիդ Կելկիթյա՞ն է։

— Այո,— պատասխանեց գինեպանը։

— Սա Բերայի Աղքատախնամին նախագահը...

— Ճիշտ անիկա։

— Անիկա աղեկ մը ճանչնալ կուզեք նե,— ըսավ անծանոթը,— ես ձեզի տուն մը տանիմ տե, հոն անոր ի՞նչ մարդ ըլլալը լսեցեք։

Թումիկ աթոռ մը առավ և անծանոթին մոտենալով, սկսավ ցած ձայնով հետը տեսնվիլ, հետո Սերգիսին մոտ եկավ և ըսավ.

— Վաղը առտու կանուխ հոս գտնվե. տեղ մը պիտի երթանք... հիմա անոր խերը անիծեցինք, աս մարդը երկինքեն ինկավ...

Սերգիս խոստացավ անպատճառ գալ։

Հետևյալ առտու կանուխ Թումիկ ու Սերգիս, անծանոթին առաջնորդությամբ, Բանկալթիի ետևի փողոցները, փայտաշեն տուն մը գացին, ուր երկու պառավներ ու մանկամարդ աղջիկ մը կբնակեին։

Ժամու մը չափ մնացին հոն և հետո վերադարձան գինետուն։

Քստմնելի պատմություն մը լսած էին և երկուքն ալ, գինեպանն ու Սերգիս, տակավին անոր ազդեցությանը տակ կգտնվեին, առանց իրենց տպավորությունները իրարու կարենալ հաղորդելու։

Այն տունը, ուր գացեր էին, աղքատիկ ընտանիք մը կբնակեր, երկու պառավ կիներ և մանկամարդ աղջիկ մը, որ այդ կիներեն մեկուն զավակն էր։ Բերայի Աղքատախնամը այդ պառավներուն ամսական 80 ղրուշի նպաստ մը հատկացուցած էր, զոր աղջկան մայրը կերթար գանձելու։ Ամսուգլուխ մը, սակայն, պառավը հիվանդ ըլլալով ու իր քույրն ալ արդեն քալելու անկարող, մանկամարդ աղջիկը գացած էր ամսականը առնելու։

Շուշանիկ, այս էր աղջկանը անունը, տասնյոթը տարեկան, վարդագույն, հիանալի սև աչքերով, մանկամարդուհի մըն էր, թարմ ու առույգ գեղեցկությամբ։

Երբ եկած ներկայացած էր Աղքատախնամի սենյակը, բոլոր հոն գտնվողները սքանչացեր էին այդ գեղանի աղջկան վրա և Ղուկաս էֆենտի նույնիսկ մեճիտ մը ավելի վճարել տված էր։

Հետո աղջկան մեկնելուն ու ժողովականներուն ցրվելեն ետքը, հարցուցեր էր Միքայել աղայի, որ աղքատներու վիճակը քննելու պաշտոն ուներ և մոտեն կճանչնար բոլոր նպաստընկալները։

— Այս աղջիկը մորմեն զատ մեկը ունի՞։

— Չէ,— պատասխանած էր մարդը,— միայն պառավ մայր մը և ալ ավելի պառավ մորաքույր մը ունի, գրեթե անդամալույծ կին մը, որ երբեք դուրս չելլեր տունեն։

Առաջին անգամ հոս վերջացուցեր է հարցումը։ Սակայն աղջկան պատկերը քանդակվեր էր վաճառականին երևակայությանը մեջ և մինչև իրիկուն անոր վրա մտածեր էր։

— Ի՜նչ պատվական կտոր,— խորհեր էր ինքնին։

Հետո, հիշեր էր, թե այդ Միքայել աղան կնամոլ ու հեշտասեր մարդ մըն էր, որու մասին շատ բաներ կպատմեին իր ընկերակիցները ու մասնավորաբար կըսեին, թե Աղքատախնամի մեջ ունեցած քննիչի պաշտոնեն օգուտ կքաղեր աղքատ ու գեղանի այրիներուն հետ հարաբերություններ մշակելով ու նույնիսկ իր բարեկամներուն ալ հաճույքի բաժին հանելով։ Չար լեզուները կամբաստանեին նաև, որ Միքայել աղա իր այս տեսակ հաճոյականությունները ձրիաբար չէր շռայլեր, այլ նյութապես կնպաստավորեր։

Գեղանի Շուշանիկին հիշատակին հետ խառն, այս բոլոր խոսքերը Ղուկաս էֆենտիի միտքը կիյնային։

— Այս աղջիկը, այդ թշվառ վիճակին մեջ, երկար ատեն չպիտի կրնար իր պարկեշտությունը պահել, կմտածեր, և ո՞վ գիտե, թե հիմակ իսկ գայթումի ճամփուն մեջ չէր, թեև իր ամոթխած ու վեհերոտ կերպարանքը բոլորովին հակառակը ցույց կուտար.. ամեն պարագային, քանի որ դատապարտված էր մոլորելու, ինչո՞ւ թույլ տա, որ ուրիշը վայելե երախայրիքը...

Եվ Ղուկաս էֆենտի, հետևյալ օրն իսկ, երբ պատահմամբ հանդիպեցավ Միքայել աղային, զայն սրճարան մը տարավ և նստեցուց ու սկսավ հոսկե հոնկե խոսակցիլ։ Աղքատախնամին քննիչին համար ասիկա գերազանց պատիվ մըն էր, և խեղճը նախ չկրցավ կռահել, թե ինչ պատճառավ այդ շնորհին արժանի կըլլար։

Խոսակցության ընթացքին, Ղուկաս էֆենտի Աղքատախնամի

գործերուն, աղքատներու վիճակին ակնարկություններ ըրավ և վերջապես ըսավ.

— Սա երեկվան աղջիկը. Շուշանիկ էր, ինչ էր, բնավ մոքես չելլար կոր, այդ տարիքին մեջ, այդպիսի գեղեցկությամբ թշվառության մեջ ինկած, առանց պաշտպանի, ի՞նչ պիտի ըլլա վիճակը... օր մը չէ նե, օր մը գեշ ճամփու մեջ պիտի իյնա, պիտի կորսվի... գուցե նույնիսկ այդ ճամփուն մեջ է։

— Չէ, այդ մասին կրնաք ապահով ըլլալ, որ սուրբի պես աղջիկ է, ես քիչ հանդիպած եմ այդ աստիճան պարկեշտ ու խելքը գլուխը աղջկան։

— Իրա՞վ կըսես...

— Հարկավ.— հաստատեց Միքայել աղա,— պզտիկութենե կճանչնամ զինքը, հիմակ ալ շատ անգամ տուներնին կհանդիպիմ. երբեմն ձեռագործ կտանիմ, որովհետև շատ աղեկ կար կկարե... վերջապես դուրսեն քանի մը փարա վաստկցնելու համար ձեռքես եկածը կընեմ։

Ղուկաս էֆենտի տեղեկություններ հարցուց պառավներուն մասին և ի վերջո ըսավ.

— Ի՞նչ է այդ խեղճ կնկան հիվանդությունը, լուր մը ունի՞ս։

— Սաթլիճան է եղեր... երեկ ցերեկ դուռնեն հանդիպեցա, անանկ ըսին։

— Սաթլինա՜ն, վախ, վախ, վախ...

Հետո պահ մը լռելե ետքը, Ղուկաս էֆենտին ըսավ.

— Էյ, սրկե կառք մը նստինք ու երթանք սա խեղճերուն այցելություն մը տանք, աչքով տեսած կըլլանք վիճակնին։

Միքայել աղա ամենայն հաճոյակատարությամբ ընդունեց այս առաջարկը և կառք մը նստելով՝ ուղղվեցան Բանկալթի՝ այն տունը, ուր աղքատիկ ընտանիքը պատսպարված էր սենյակի մը մեջ։

Երկու պառավները և մանկամարդ աղջիկը շատ զարմացան և գող ելան հանկարծ, երբ Աղքատախնամի նախագահը տեսան իրենց սենյակին մեջ. բարեբախտաբար Միքայել աղան միասին էր և քննիչը գրեթե տունին մտերիմը ըլլալով, իր ներկայությունը ապահովեց զիրենք։

Ղուկաս էֆենտի քանի մը հարցումներ ըրավ հիվանդ պառավին, հետո պատվիրեց Միքայել աղայի, որ Աղքատախնամին

բժիշկը անմիջապես բերել տա, հրահանգ տվավ, որ դեղերը ձրիաբար շինվին և այլն։

Ղուկաս էֆենտի իր ամբողջ այցելության միջոցին աչքերը չէր հեռացներ մանկամարդ աղջկան վրայեն, որ աթոռի մը վրա նստած, գլխահակ ու ամչկոտ, ձեռագործ մը կբաներ արագարագ։

— Ի՞նչ հրաշալի գույն, ի՞նչ թարմություն, ի՞նչ անբիծ գեղեցկություն, կխորհեր ինքնիրեն, ամբողջ մարմնովը գերագրգռված։

Երբ ոտքի ելավ մեկնելու համար, աղջիկն ալ թողուց ձեռագործը և եկավ դռան քով, բարձրաստիճան հյուրերը սանդուխքին գլուխը առաջնորդելու։

Դռան մեջ, Ղուկաս էֆենտի աղջկան ձեռքը իր ձեռքին մեջ պահելով ու սեղմելով, ըսավ.

— Աղջիկս, քու մասիդ շատ նպաստավոր տեղեկություններ առի Միքայել աղայեն, և վստահ եղիր, որ պիտի ջանամ քեզի գործ հայթայթել և ձեռքես եկած պաշտպանությունն ու օգնությունը չխնայել։

Եվ գրպանեն ոսկի մը հանելով, դրավ Շուշանիկի ձեռքը։

— Մայրդ աղեկ նայի,— պատվիրելով։

Աղջիկը ամչկոտ ու շիկնած.

— Շնորհակալ եմ, էֆենտի,— կմրմնջեր, մինչ երկու պառավները օրհնենքները կտեղացնեին իրենց անկյուններեն։

Այս տեսակցությունը սակայն բոլորովին կրգռած էր Ղուկաս էֆենտիի ցանկասեր կիրքերը և ամբողջ օրը երևակայությունը հեշտամոլ տեսիլներով բորբոքեցավ։

Տիրող սեռուն գաղափար մը եղած էր Շուշանիկի անվրիպելի անկումը։

— Մեկ օրեն մյուսը իր այդ գեղեցկությամբը, հետին թշվառության հետևանքով, այդ աղջիկը գլխե պիտի ելլե, և ով գիտե, որ խաբեբային զոհ երթալով... լավագույն չէ՞, որ ես վայլեմ զինքը, գոնե նյութապես շահ մը կունենա...

Եվ իր այս տրամաբանությամբը, իր մտադրած գարշելի ծրագիրը տեսակ մը բարեբարություն կթվեր իրեն, աղեկ գործ մը, որմե իր խիղճը չպիտի տառապեր երբեք։ Հավանական խաբեբա հրապուրիչին ձեռքեն պիտի փրկեր միամիտ աղջիկ մը և եթե անոր կուսությունը առներ, գոնե ի փոխարեն հնչուն դրամ պիտի վճարեր։

Եվ հետո գործը ոևէ վտանգ մը, ոևէ հեռավոր ապագա գայթակղություն մը հառաջ չպիտի կրնար բերել։ Շուշանիկ ոչ հայր ուներ, ոչ եղբայր, այլ պառավ մայր մը և անդամալույծ մորաքույր մը, որոնք չպիտի կրնային զինքը ոևէ կերպով անհանգիստ ընել կամ շահագործել։ Վերջապես այդ Շուշանիկը անանկնալ բախտ մըն էր, որ կիյնար երկինքեն և որմե չօգտվիլը հիմարություն պիտի ըլլար իրեն պես ապրած ու փորձառու մարդու մը համար։ Գիշերը ըլլար իրեն պես ապրած ու փորձառու մարդու մը համար։ Գիշերը մինչև լույս այս բղջախոհ մտածումները իր միտքը լլկեցին և առտուն գրեթե անհանգիստ զգաց ինքզինքը։ Իր զգայամոլ ու բուռն խառնվածքին համար տանջանք մը եղավ այդ աղջիկը, որուն պատկերը վայրկյան մը չէր կրնար վանել երևակայությենեն։

Ու վերջապես հղացավ այն գարշելի միջոցը, որով պիտի կրնար հագուրդ տալ իր ցանկության մոլուցքին։

Բերայի մեջ սիրո միջնորդուհի մը կճանչնար, որուն տունը հաճախ գացած էր և որ մասնագիտությունը ուներ մանկամարդ աղջիկներ հայթայթելու հարուստ հաճախորդներու համար, թեև իր տունը սովորական հանրատուն մը չէր և առերևույթ պատվավորության դրոշմը կկրեր, մանավանդ որ տանը մեջ երբեք աղջիկներ չէր բնակեցներ, այլ միայն առժամապես կհյուրընկալեր զանոնք, կարգ մը մանրակրկիտ զգուշություններով։

Քառասունհինգ տարեկան, խոշոր, մարմնեղ, պատկառելի երևույթով կին մըն էր Վառվառա հանումը, որ Պոն Մարշեի մոտերը, քովնտի փողոցի մը մեջ կբնակեր։

Ղուկաս էֆենտի բավական ատենե ի վեր չէր այցելած իրեն. ուստի երբ իրիկուն մը ուշ ատեն դուռը զարկավ ու ներս մտավ, զարմացախառն հաճույքով մը ընդունվեցավ։

— Վայ, Ղուկաս էֆենտի, աս ինչպե՞ս եղավ մեզի հիշեցիր,— գոչեց Վառվառան, մինչ վաճառականը կշտապեր բալթոն հանել՝ վեր ելլելու։

Հյուրանոցին մեջ բազմելով, Ղուկաս էֆենտի, նախ քանի մը շիշ գարեջուր ապսպրեց. հետո, քիչ մը ատեն ասկե անկե խոսելե ետքը, վերջապես իր անակնկալ այցելության նպատակը պարզեց։

Քանի մը օրեն աղջիկ մը պիտի գար իր տունը մարդու մը ընկերակցությամբ, տասնրուքը տարեկան, աղվոր աղջիկ մը, Շուշանիկ անուն։ Վառվառ իբրև տանտիրուհի զինքը պիտի ընդուներ, մեկ քանի ձեռագործներ պիտի հանձներ կարելու համար, սակարկություն պիտի ըներ հետը, սակայն առատորեն պիտի

վճարեր և նույնիսկ, կարը փորձելու համար, իր աչքին առջև պիտի աշխատցներ մեկ երկու ժամ. վերջապես ինքզինքը պիտի ներկայացներ իբրև հարուստ ու պատվավոր այրի մը, որ կուզե օգնել իրենց ձեռագործովը ապրող պարկեշտ ու աղքատիկ աղջիկներու։

Այդ միջոցին Ղուկաս էֆենտի այցելության եկած պիտի ըլլար իրեն պատահմամբ։

— Անկե ետքը ընելիքնիս կկարգադրենք,— ըսավ վաճառականը,— միայն թե չըլլա, որ իմ գալես առաջ աղջիկը ձեռքե փախցընես։

Վառվառ, որ խնդիրը հասկցած էր, պատասխանեց.

— Այդ մասին հոգ մի ըներ... միայն թե, Ղուկաս էֆենտի, աղջիկը կո՞ւյս է,

— Կույս է եղեր կամ չէ եղեր, մտմտալիք բան մը չէ... մինակ գլխին աղջիկ մըն է, միայն պառավ մայր մը ունի։

— Աման էֆենտիս, ետքը գլուխնիս չցավի։

— Ես անանկ շյուրյուկ տալի վրա չեմ կոխեր, Վառվառ հանում,— ըսավ Ղուկաս էֆենտի,— դուն բնավ հոգ մի ըներ, եթե վտանգավոր գործ մը ըլլար նե՝ մեջ կմտնայի՞... աղջկան խրթ-լը՞խը կա։

— Ձեզի բան չըլլար, ինչ ըլլա նե՝ մեզի կըլլա,— պատասխանեց Վառվառ, փորձառու կնոջ մը խոհեմությամբ,— դուք հարուստ պատվավոր մարդիկ եք, ինտոր ըլլա նե կազատիք. ամա մենք ոտքի տակ կերթանք...

— Երկար մ'ըներ, Վառվառ հանում, դուն ինծի վստահ եղիր, քեզի ինչ կըսեմ կոր, աղջիկը մարդ մարդասանք չունի... ես ամեն բանը մտածեր եմ։

— Աղեկ ամա, ասանկ պելալը գործի մը համար գոնե ձեռքս շնորհքով բան մը պիտի անցնի՞...

— Հա, իշտե, ատ ըսե,— գոչեց Ղուկաս էֆենտի, որ գիտեր, թե կնոջ հայտնած բոլոր երկյուղները շինծու էին և թե միայն ստանալիք վարձքին քանակությունը ավելցնելու համար մեջտեղ կդրվեին։

Հետո, վճռաբար ըսավ.

— Քեզի կարճ խոսք մը ըսե՞մ, գիտես ա, ես ատանկ բաներու մեջ սակարկություն չեմ սիրեր... հիմա հինգ ոսկի կուտամ քեզի, ու գալ անգամ աղջիկը հոս գտնելուս, քսան ոսկի ալ այն ատեն կհամրեմ... գործիդ կուգա՞, այո՛ կամ ո՛չ։

Գումարը բավականին պատկառելի էր, և կարելի էր այդ գնով հանձնառու ըլլալ գործին. բաց առտի՝ Վառվառ լավ կճանչնար իր հաճախորդը, գիտեր, որ Ղուկաս էֆենտի իր միտքը դրածեն ավելի չպիտի վճարեր երբեք, ուստի ձևի համար, քիչ մը խորհելե ետքը, ըսավ.

— Շիտակը ըսեմ, Ղուկաս էֆենտի, եթե ուրիշ մեկը ըլլար, ես հարյուր ոսկով ալ ասանկ գործի մեջ չէի մտնար. բայց դուն հին հարյուր ոսկով ալ ասանկ գործի մեջ չէի մտնար. բայց դուն հին բարեկամ ես, քու խաթրդի չեմ ուզեր կոտրել ինչ հարմար կը-տեսնաս նե՝ անիկա տուր... միայն թե, ոտքդ պագնեմ, գլուխս փորձանք մը չի գա։

— Հոգ մի ըներ ըսինք ա,— գոչեց վաճառականը և գրպանեն հինգ ոսկի հանելով Վառվառին տվավ։

— Ե՞րբ պիտի գան այդ աղջիկն ու մարդը,— հարցուց ատանտիրուհին։

— Դեռ չեմ գիտեր. գործը կարգադրելեն ետքը քեզի իմաց կուտամ. դուն հիմակուհիմա պատրաստ գտնվե տե՝ կնայինք։

Եվ այս առաջին կարգադրությունը ընելե ետքը, Ղուկաս էֆենտի գոհ սրտով մը մեկնեցավ այդ շիլ բնակարանեն։

Բայց այս գործին առաջին քայլն էր և ամենեն դյուրինը։ Հիմա պետք էր ապահովել նաև Միքայել աղայի աջակցությունը։ Քանի մը օրե ի վեր Ղուկաս էֆենտի մտերմությունը առաջ տարած էր այդ մարդուն հետ, որուն հազիվ բարև տալու կգիջաներ առաջ, և սակայն դարձյալ չէր համարձակեր խոսք բանալ իր եղերական ծրագրի մասին։

Վառվառի հետ իր կարգադրությունեն օր մը ետքը, կիրակի մը, ուր Աղքատախնամի նիստին նախագահած էր, երբ բոլոր անդամները միասին դուրս կելլեին Ս. Երրորդության եկեղեցիեն, Ղուկաս էֆենտի ըսավ իր ապագա մեղսակցին։

— Միքայել աղա, դուն քիչ մը կեցիր, խոսք ունիմ քեզի հետ։

— Շատ աղեկ, էֆենտիս, ձեր հրամանին պատրաստ եմ,— պատասխանեց մյուսը, ծառայական խոնարհությամբ մը։

Ղուկաս էֆենտի լսած էր, որ Միքայել աղա օղիի մեծ սիրահար մըն էր, ուստի ուզեց շահագործել անոր այս տկարությունը և հետը խոսակցելով ճամբա ելավ և դայն տարավ գարնջրատան մը, ուր ընդհանրապես գերմանացիներ կհաճախեին և ուր վստահ էր, թե ծանոթներու չպիտի հանդիպեր։

— Այստեղ,— ըսավ,— թեև՝ գարեջրատուն է, բայց պատվական օղի ու մանավանդ մեզեներ ունի... խողեղեն կսիրես, այնպես չէ՞։

— Ինչպես որ կուզեք,— պատասխանեց մյուսը, որ քանի մը օրե ի վեր իրեն ընծայված բացառիկ պատիվներեն շլացած էր։

Երբ նստեցան և օղին ու աղանդերները եկան, վաճառականը հարցուց.

— Ինչպե՞ս է սա աղջկան մայրը, որուն հիվանդությունի գացինք աղեկցա՞վ բոլորովին, լուր մը ունի՞ս...

— Երեկ հանդիպեցա առուներնին,— պատասխանեց Միքայել աղա,— բժիշկ բերեր են, նոր դեղեր տվեր է, բավական ծանրկեկ սարթինան է, աղեկ նայելու է, ըսեր է։

— Վա՜խ, վա՜խ... իսկ աղջիկը ի՞նչ կընեն կոր, Շուշանի՞կ էր, ի՞նչ էր, ձեռքը գործ մը ունի՞...

— Ոչ, բան մը չունի... արդեն խելքը գլուխը չէ, որ գործի ետևե ըլլա. հիմակուհիմա ձեր մեծության տված դրամովը կապրըվին կոր...

— Քանի ոսկի մը տամ տես իմ կրզմեա նորեն իրենց տուր։

Եվ Ղուկաս էֆենտի դրամը հանեց ու հանձնեց Միքայել աղային, որ խուսափելով անմիջապես առնել առաջ հատկացված տեղը։

Հետո, Ղուկաս էֆենտի, կրկին խոսեցավ այդ դժբախտ ընտանիքին վրա, մանավանդ մանկամարդ աղջկանը մասին, որուն գեղեցկությունը շարունակական վտանգ մըն էր իր առաքինության ու պարկեշտության համար։ Ու վերադարձավ իր սեղանն գաղափարին։

— Օր մը չէ օր մը, խեղճ աղջիկը պիտի իյնա մոլության մեջ, և ո՞վ գիտե որ անխիղճ սրիկային ձեռքով, որ դայն հրապուրելե ետքը, անշուշտ երեսի վրա պիտի թողու...

Օղիի դավաթները կշարունակեին իրարու ետևե, Ղուկաս էֆենտի ինք թեև քիչ կխմեր, բայց իր ընկերակցին անընդհատ կըհրամցներ. Միքայել աղա սկսած էր թեթև մը գինովնալ, զվարթություն մը եկած էր վրան և օղիին ազդեցության տակ, գրեթե մտերմական ձևով մը կխոսեր վաճառականին հետ, զանց ընելով մեծարանքի ու ակնածության ձևակերպումները։

Ղուկաս էֆենտի խոսքը առաջ տանելով ըսավ.

— Գիտե՞ս ինչ կմտածեմ, Միքայել աղա, այս տեսակ աղջիկ-

ները, որոնք արդեն պատրաստված են կորսվելու, լավագույն է, որ գոնե հարուստի մը կողմե հրապուրվին, քան թե անկուտի՝ սրիկայի մը ձեռքով, որ անոր պատիվը պղծելե ետքը, գուցե ուզե զայն ալ ավելի անբարոյականություններու մեջ մղել... ըսածս շիտակ չէ՞...

— Շատ իրավացի է, էֆենտի,— պատասխանեց Միքայել աղա։

— Հարուստ մեկը գոնե խիղճ կունենա աղջիկը երեսի վրա չձդելու... ես հարուստ գիտեմ, որ այսպես աղջիկներ ավրելե ետքը, դրամ տված և ամուսնացուցած են զանոնք։

— Շիտակ է։

— Ու այսպիսի պարագաներու տակ աղջիկ ավրելը ոչ թե մեղք կամ անբարոյականություն է, այլ կրնամ ըսել, որ պարզապես բարերարություն ու առաքինություն է։

— Շատ հիանալի կերպով կխոսիք, ես այդ տեսակ մարդոց ճակատը կհամբուրեմ,— վճռեց Միքայել աղա, իր առջև դրված աղանդերներուն վրա կանոնավոր հարձակում մը գործելով։

— Քեզի բան մը ըսեմ,— շարունակեց վաճառականը,— որ ես միտք ունիմ այդ աղջկան գործ մը գտնել, քանի որ ձեռագործի մեջ վարպետ է եղեր. որովհետև միշտ դրամ տալուն ծայր չի գար, մյուս կողմե ալ այդ խեղճերը երեսի վրա ձգելու չէ, քանի որ պաշտպանություս տակ առի, պետք է որ իրենց հոգ տանիմ...

— Ան ձեր ազնվությունն է,— ընդմիջեց Միքայել աղա՝ բան մը ըսած ըլլալու համար և օղիի գավաթը ի մի ումպ պարպեց։

— Կառսո՛ն, սա օղին լեցուր,— հրամայեց Ղուկաս էֆենտի, հետո դարձավ իր խոսքին։

— Ես պատվավոր կին մը կճանչնամ, որ այդ տեսակ աղջիկներուն գործ կհայթայթե և շատ ալ աղեկ կվճարե, անոր խոսեցա, մեյ մը աղջիկը տեսնամ ըսավ, արդյոք կարելի չէ՞ սա Շուշանիկը անոր ներկայացնել։

— Ինչու չէ, էֆենտիս, ան ալ արդեն աշխատություն կփնտռե։

— Դուն վրադ կառնե՞ս աղջիկը տանել, ես արդեն պետք եղածը խոսած եմ, միայն թե գուցե առանձին չուզե երթալ...

— Ո՞ւր է երթալիք տեղը...

— Վառվառ հանըմ կըսեն, անոր տունը։

Եվ Ղուկաս էֆենտին հաղորդեց տան հասցեն։

Միքայել աղա գիտեր ատ շիլ տունը և Վառվառ հանըմն ալ

կճանչնար։ Անմիջապես ամեն բան կռահեց և զգաց այն պժգալի դերը, զոր վաճառականը կուզեր խաղցնել իրեն։

Մեկեն ի մեկ չպատասխանեց, գլուխը քերեց և առջևը գտնված օղիի գավաթը պարպեց։ Հետո, շեշտակի Ղուկաս էֆենտիի նայելով ըսավ.

— Ատ Վառվառ հանըմը կճանչնամ, տունն ալ գիտեմ...

Եվ այս խոսքերը արտասանեց այնպիսի շեշտով մը, որ կհայտներ, թե թափանցած էր վաճառականին բոլոր մութ խորհուրդներուն։

— Էյ, ավելի աղեկ,— պատասխանեց մյուսը շնականորեն,— քանի որ տունը գիտես ու տանտիրուհին ալ կճանչնաս կոր...

Պահ մը կրկին լռեցին երկուքն ալ։ Ղուկաս էֆենտի օղի և նոր աղանդեր ապնդրեց, մինչ Միքայել աղայի ներսիդին խուլ պայքար մը տեղի կունենար։

Ի՞նչ դիրք պետք էր բռնել այդ հարուստ ու ազդեցիկ էֆենտիին հանդեպ։ Եթե խնդիրը իր հսկողության հանձնված երիտասարդ այրիի մը կամ կնոջ մը վրա ըլլար, անշուշտ չպիտի վարաներ և անմիջապես հանձնառու պիտի ըլլար ձեռքեն եկած բարյացակամ օժանդակությունը նվիրելու Ղուկաս էֆենտին գոհ ձգելու համար։ Բայց Շուշանիկը կույս աղջիկ մըն էր և այս բանը զինքը կշփոթեցներ, կվարանեցներ։ Ոչ այնչափ խղճահարութենե կտանջվեր, որքան հավանական վտանգներե, իր անունը անպատվելու վախեն, որովհետև մինչև այն ատեն ընդհանուրին համար իբրև պատվավոր մեկը ապրած էր, իր ամոթալի մեղսակցությունները շատ սահմանափակ սահմանի մը մեջ ի գործ դրած էր։

Մյուս կողմե, առաջարկված գործը հրապուրիչ էր և անով պիտի կրնար հարուստ վաճառականին մտերմությունը ընդմիշտ ապահովել։ Եղեռնի մը մեջ իր մեղսակցությունը իր ձեռքին մեջ զենք մը պիտի ըլլար, որմե միշտ պիտի կրնար օգտվիլ։ Ղուկաս էֆենտին իր ափին մեջ պիտի առներ վերջապես և Ղուկաս էֆենտիի պես մեկը իր ափին մեջ ունենալը պղտիկ բան մը չէր։

Ու խեղճ Միքայել աղա տատանյալ ու վարանոտ կմնար։

— Միքայել աղա, սա գավաթը չպարպե՞ս,— ըսավ Ղուկաս էֆենտի իր ընկերոջ։

Հետո, անուշ, փաղաքշական ձայնով մը։

— Իս մտիկ ըրե, միտքդ անցածը կգուշակեմ կոր, ինչպես որ դուն ալ իմ դիտավորությունս գուշակեցիր, բայց բոլոր ատոնք

պարապ մտածումներ են, ինչպես ըսի, այդ աղջիկը օր մը չէ նե օր մը փորձանքի մը պիտի գա ու թշվառության մեջ իյնա, մինչդեռ ինծի պես մեկու մը պաշտպանության տակ՝ գոնե նյութապես կօգտվի... եկուր չէ մի ըսեր, Միքայել աղա, դուն պատվավոր մեկը կերևաս կոր, ես քեզ շատ սիրեցի և եթե կներես, քեզի նվեր մը պիտի ընեմ, զոր չպիտի մերժես։

Եվ վաճառականը գրպանեն հինգ ոսկինոց թուղթ մը հանելով, իր խոսակցին ձեռքը սահեցուց, հետո կրկին նորոգել տված օղիները և անտարբեր կերպով մը ըսավ.

— Ե՞րբ աղջիկը կրնաս տանիլ Վառվառին տունը, վաղը կամ երեքշաբթի օրը կըլլա՞...

— Ձինքը չտեսած բան մը չեմ կրնար ըսել, էֆենտիս,— պատասխանեց Միքայել աղա, որ հինգ ոսկինոց թուղթեն շլացած, այլևս լռեցուցած էր ամեն խղճահարություն։

— Ուրեմն հիմա մեյ մը հանդիպե տուներնին, տված ոսկիս իրենց հանձնե և իմացիր, թե ե՞րբ կրնա գալ հետդ այդ տունը. ավելի աղեկ կըլլա, որ երեքշաբթի օրը բերես, որովհետև վաղը փոսթայի օր է, շատ գործ ունիմ... ես վաղը իրիկուն հոս կսպասեմ և քենե որոշ լուր մը կառնեմ։

— Շատ աղեկ, էֆենտիս։

Եվ այս համաձայնության վրա մեյ մեկ գավաթ ևս պարպեցին ու մեկնեցան։

Հետևյալ իրիկուն Միքայել աղա որոշյալ ժամուն եկավ գտավ վաճառականը։

— Երեկ գացի, ոսկին տվի, ձեռագործին համար ալ խոսեցա, շատ աղեկ ըսավ, հետևաբար վաղը կեսօրին մոտ պիտի երթանք Վառվառին տունը... բայց էֆենտի, այս գործը, շիտակը ըսեմ, քիչ մը խղճիս կդպչի կոր...

— Օղի մը խմե,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, ծառան կանչելով ու պետք եղածը ապսպրելով։

— Հիվանդը ինչպե՞ս է,— հարցուց վայրկյան մը լռելե ետքը։

— Երեկ քիչ մը աղեկ էր, երբոր ոսկին իրեն հանձնեցի, շատ շնորհակալ եղավ և երկար բարակ աղոթքներ բրավ։

— Աղջիկը դժվարություն ցուցո՞ւց հետդ գալու համար։

— Այո, ինք չէր ուզեր կոր գալ, բայց երբոր ըսի Ղուկաս էֆենտիին կողմե կառաջարկեմ կոր, այն ատեն մայրը ստիպեց, որ անպատճառ գա ու ինքն ալ հավանեցավ։

Նույն իրիկուն ալ բավական երկար ատեն մնացին գարեջրատան մեջ և վաճառականը լավ մը խմցուց իր նոր բարեկամին, որ արդեն խմելու մասին դժվարահաճություն չէր հայտներ, երբոր առիթը ներկայանար և երբ, մանավանդ, ուրիշներ էին վճարողները։

Հետևյալ օրը, երեքշաբթի, Ղուկաս էֆենտի շատ կանուխ ելավ։ Ամբողջ գիշերը գրեթե չէր քնացած, Շուշանիկի մտածումովը զբաղված. քանի կմոտենար ցանկալի ժամը՝ այնքան կբորբոքեր իր անասնական հեշտամոլ կիրքը, և քունը անընդհատ կկոտտար մանկատի աղջկան մտածումովը։ Խղճահարական ամեն ձայն լռած էր իր մեջ ու միայն զգայական մոլեգնությունն էր, որ կտիրեր իր ամբողջ էությանն։

Շուտով մը հագվեցավ ու դուրս ելավ, բաց օդին մեջ ջիղերը հանդարտեցնելու համար։ Բավական ժամանակ քալեց, հետո գնաց սուրճ մը խմելու, փորձեց առտվան թերթերը կարդալ, սակայն անկարելի եղավ, միտքը միակ մտածումով մը լարված ըլլալով։

Վերջապես որոշեց գրասենյակ երթալ, օրվան գործերը կարգադրել, պետք եղած հրահանգները տալ։ Պաշտոնյաները չէին եկած տակավին, որովհետև էֆենտին երբեք կանուխ չէր գտնվեր իր գործին գլուխը։ Ուրիշ օր գուցե պիտի բարկանար, կրակ կտրեր իր պաշտոնյաներուն այս ծուլությանը համար, սակայն այս վայրկյանին այնքան հեշտալի տրամադրության մը մեջ էր, որ բնավ դիտողություն չըրավ։ Ընդհակառակը՝ երբ որ ավագ գրագիրը եկավ, սիրալիր ընդունելություն մը ըրավ անոր, նույնիսկ հետը կատակաբանեց.

— Գիշերը հովարտայության գացիր, ի՞նչ ըրիր, որ ասանկ ուշ մնացիր ես,— ըսավ ժպտելով։

Պաշտոնյան շվարած՝ էֆենտին այդ ժամուն հոն գտնալեն, չէր գիտեր ինչ պատասխանելը։

— Հանցանքը իմս է, որ այս առտու կանուխ եկա,— ըսավ Ղուկաս էֆենտի միշտ ժպտերես...— արդեն այսօր մեծ գործ մը չի կա կարծեմ...

— Չէ,— փութաց պատասխանել պաշտոնյան։

— Ինչ որ է, մեզի մեյ մեկ սուրճ ապսպրե, որովհետև ես կեսօրեն առաջ պիտի երթամ և հավանորեն ալ չեմ ի գար։

Պաշտոնյան դուրս ելավ սուրճը ապսպրելու համար։

— Ի՞նչ ունի այսօր մեր էֆենտին,— կմտածեր ինքնիրեն զարմացած,— երբեք այսքան անուշ տեսած չէի զինքը... ես ուշ մնալուս համար խիստ հանդիմանություն մը կսպասեի, և ահա ինք, սովորականեն բոլորովին տարբեր անուշությամբ մը կընդունե զիս։

Քանի մը նամակներու ընթերցումը, անոնց տրվելիք պատասխաններուն պատրաստությունը ժամի մը չափ զբաղեցուց Ղուկաս էֆենտին։

Հետո հյուր մը ընդունեց, ծանոթ վաճառական մը, որ եկած էր կարևոր գործ մը առաջարկելու։ Խոսակցության միջոցին, երբ գործին կարգադրությունը հետևյալ օրվան ձգվեցավ և սկսան տարբեր նյութերու վրա խոսակցիլ, վաճառականը հայտնեց Ղուկաս էֆենտիի, որ քանի մը օրեն անդրանիկ զավակը պիտի նշաներ։

— Կեցցե՛, շատ աղեկ կընես,— գոչեց Ղուկաս էֆենտի խանդավառ կերպով.— քանի՞ տարեկան է որ...

— Քսաներեքը նոր լմնցուց,— պատասխանեց մյուսը։

— Օ՜խ, տեսա՞ր մի, աֆերիմ, մանչերը այդպես պզտիկ կարգելը շատ աղեկ բան է, աչքերնին դուրս չվարժված, բարոյականին չավրված։

— Ես ալ ճիշտ այդպես կմտածեմ և ասոր համար շատ բարակը չնայեցա, առիթը ներկայանալուն պես նշանտուքին որոշումը տվի։

— Շատ խելացի վարվեր ես, հիմակ Բերայի կյանքը այնքան ապականված է, որ երիտասարդները միշտ վտանգի մեջ են իրենց բարոյականին համար։

Եվ Ղուկաս էֆենտի նորեն սկսավ իր սովորական բարոյախոսությունը։ Ընտանեկան սրբությունը նվիրական պետք է մնա, մարդս բարոյականով կապրի, պատիվով կապրի։ Ամուսնացյալ մարդու մը բարոյականը մանավանդ անսղարտ ըլլալու է։ Ի՞նչ կսպասես այն էրիկեն, որ իր հարազատ, օրինավոր պսակյալ կինը երեսի վրա կթողու և կերթա ուրիշի կիներու աչք կտնկե, մի՞թե այդպիսի էրկան մը կինն ալ իրավունք չունի՝ ի փոխարեն ինքն ալ ապօրեն հարաբերություններ ունենալ ուրիշ էրիկմարդոց հետ... և այն ատեն ի՞նչ կըլլա ընտանիքը, պատիվը բարոյականը։

— Մարդուս համար հարստություն, պաշտոն, փառք ու մեծություն կուտ մը արժեք չունին, բարոյական ունենալու է, էֆենտիմ, բարոյական...

Ղուկաս էֆենտի անմիջապես ժամացույցին նայեցավ, կեսօրին կես ժամ կար։

Անմիջապես ոտքի ելավ.

— Կներեք, էֆենտիս, ժամադրություն ունիմ, ուշ մնացի, վաղը կրկին հրամմեցեք ու այդ գործին համար երկարորեն տեսակցինք։

Ու Ղուկաս էֆենտի փութաց դուրս ելլելու, իրեն հետ քաշել տանելով բարեկամը։

Փողոցը անմիջապես կառք մը ցատկեց և գոչեց.

— Պեյ օղլու, Պոն Մարշե։

Կեսօրին մոտ, Ղուկաս էֆենտի Պոն Մարշեի առջև կառքեն իջավ և արագ քայլերով ուղղվեցավ Վառվառի տունը։

— Արդյոք եկա՞ծ է աղջիկը,— կմտածեր սրտատրոփ։

Վերջապես դռան առջև հասնելով՝ զանգակը հնչեցուց։

Պառավ կին մը, Վառվառի սպասուհին ու միանգամայն խորհրդականը, եկավ դուռը բանալու։

— Ո՞վ կա վերը,— հարցուց վաճառականը, որուն ձայնը հուզումեն կդողար։

— Աղջիկը հոս է,— պատասխանեց պառավը կամաց ձայնով մը։

— Ո՞ր սենյակն է։

— Վերը, սալոնը, կար կկարե կոր...

— Վառվառ հանրմը վար կանչե,— ըսավ Ղուկաս էֆենտի, գետնահարկը գտնված մութ սենյակ մը երթալով։

Երկու վայրկյան ետքը տանտիրուհին եկավ վաճառականին քով։

— Այս ի՜նչ լուսնկայի պես աղջիկ է,— եղավ իր առաջին խոսքը,— ի՜նչ աչքեր, ի՜նչ գույն, ի՜նչ մազեր... իրավցնե փրոլանքի մը...

— Շատո՞նց է հոս է։

— Ժամ մը եղավ...

— Հետը եկող մարդը հո՞ս է...

— Չէ, անիկա ճամփու դրի, ըսի որ աճելե՛ կար մը ունիմ, մինչև իրիկուն աղջիկը վար պիտի դնեմ, թող իրիկվան դեմ գա առնե... ասիկա իրեն ալ գործին եկավ, ելավ գնաց... բայց կարծեմ ալ գալու միտք չունի։

— Էյ, աղջիկը բան մը չլսա՞վ։

— Չէ, իրեն ըսի, որ եթե գործը ատենին լմնցնե, իրեն երեսուն դրուշ պիտի տամ, ասոր վրա, գլուխը կախեց, կարել սկսավ։

Ղուկաս էֆենտի գրպանեն ոսկի մը հանեց և Վառվառին տալով.

— Շնորհքով թերակուր մը բերել տուր մեզի, քանի մը շիշ ալ աղեկ գինի ու գարեջուր,— ըսավ։

Տանտիրուհին դրամը առավ ու գնաց էֆենտիին հրամանները կատարելու։

Վաճառականը շիտակ սանդուխեն վեր ելավ և ուղղվեցավ այն սալոնը, ուր կգտնվեր Շուշանիկը։

Աղջիկը մտազբաղ կար կկարեր, երբոր դուռը բացվեցավ՝ Ղուկաս էֆենտի սեմին վրա երևցավ ժպտուն դեմքով։ Շուշանիկ՝ շփոթած անմիջապես ոտքի ելավ, մինչ վաճառականը փայփայիչ ձայնով մը կըսեր.

— Գործդ նայե, աղջի՛կս, ես օտարական չեմ, ես ալ այս տունեն եմ։

Հետո, քովը մոտենալով հարցուց.

— Մայրիկդ ինչպե՞ս է, աղեկ է իրալլան....

— Շնորհակալ եմ, այսօր երեկվընե աղեկ է։

— Դեղի, ուտեստի պակասություն մը չունի յա...

— Չէ, ձեր մեծության շնորհիվ, բանի մը պետք չունի,— պատասխանեց աղջիկը շիկնելով։

Ղուկաս էֆենտի, աղջկան դեմ, թիկնաթոռի մը մեջ բազմեցավ, տիկարեթի մը վառեց ու սկսավ պիշ-պիշ ծխել իր զոհը, որ գլուխը կախած, լրջորեն իր ձեռագործը կկարեր, համոզված ըլլալով, որ իրավցնե ստիպողական գործ մըն էր իրեն հանձնված։

Շուշանիկ իր այդ դիրքին մեջ իրավամբ պաշտելի էր, ու վաղաշոտ վաճառականն իր աչքերով կլափեր զայն։ Իր գեղեցկությունը թարմ անմեղության հրապույրին հետ ուներ նաև զգլխիչ հմայք մը, իր սև ու վառվռուն աչքերովը։ Լեցուն մարմինը, ճերմակ մորթն ու վարդագույն այտը կարող էին ամենեն անզգա մարդիկն անգամ խռովելու։ Իր առատ ու հոյակապ սև մազերը, որոնք շնորհալի կերպով վեր առած էր, ալ ավելի կկատարելագործեին իր գեղեցկությունը։ Ինչ որ ամենեն ավելի զարմանք ու

հիացում կպատճառեր վաճառականին, Շուշանիկի շնորհալի ձեռները, նիսան ու կացն էր, իբր թե հարուստ ու վայելուչ միջավայրի մը մեջ ապրած ըլլար։

Ղուկաս էֆենտի, առանց կարենալ հանգիստ գտնելու, անընդհատ սիկարեթ կծխեր ու կչանար հանդարտեցնել իր զգայնական ցանկությունը, որ զինքը կդրդեր անասնական թափով մը աղջկան վրա նետվելու...

— Էֆենտիս, քեզի մինակ ձգեցի, կներես,— ըսավ Վառվառ հանքմ, սենյակեն ներս մտնելով։

— Հոգ չէ, հոգ չէ, դուն գործդ նայե,— պատասխանեց վաճառականը,— ի՞նչ ըրիր, կերակուրդ պատրաստեցի՞ր...

— Կես ժամեն պատրաստ կըլլա... եթե կուզես, մինչև ճաշի ատենը մեյ մեկ օղի խմենք։

— Աղեկ կըլլա,— հավանեցավ վաճառականը, որ կուզեր քիչ մը գլուխը տաքցնել։

Վառվառ դուրս ելավ և վայրկյանե մը վերադարձավ ճոխ աղանդերներով զարդարված օղիի ափսեով մը։

— Աղջկան ըսե, որ գործը թող ձգե տե՝ քիչ մը քովերնիս գա,— փսփսաց Ղուկաս էֆենտի տանտիրուհիին։

Վառվառ փութաց գոհացում տալ էֆենտիին փափաքին և ձայնը բարձրացնելով ըսավ Շուշանիկի.

— Աղջիկս, ալ ցորեկ եղավ, շատ գլուխդ կախեցիր ու հոգնեցար, մնացածն ալ կերակուրեն ետքը կկարես, հիմա քիչ մը քովերնիս նստե ու օղի մը խմե, որ բացվիս։

Մանկատի աղջիկը իրավցնե հանգստի պետք ուներ, բայց և այնպես չուզեց անմիջապես տեղի տալ։

— Հոգ չէ, տիկին, դեռ մինչև ճաշի ատեն կշարունակեմ...

— Չըլլար, խոսք մտիկ ըրե,— ըսավ Վառվառ կես հանգիմանական ձայնով մը։

Աղջիկը կարը թողուց։

— Եկուր օղի մը առ...

— Ոչ, տիկին, շնորհակալ եմ։

— Եկուր օղի մը խմե, աղջիկս,— երկրորդեց Ղուկաս էֆենտին։

Շուշանիկ չուզեց իրենց «բարերար»-ին հրավերը մերժել և գնաց Վառվառին քով նստելու։

Շնորհիվ Ղուկաս էֆենտիի և Վառվառի սիրալիր մտերմության,

աղջիկը, որ մինչև այն ատեն շատ ամչկոտ դիրք մը բռնած էր, սիրտ առավ և սկսավ խոսակցության մասնակցիլ, նույնիսկ իրեն եղած ստիպումներուն վրա քանի մը գավաթ ալ օղի խմեց։

Հետո, վերջապես ճաշի վայրկյանը հնչեց. երեքը միասին վարի հարկը իջան և սեղան նստան, արդեն կեսօրը ժամ մը անցած էր ու ամենքն ալ անոթի էին, և Շուշանիկ հաճույքով մասնակցեցավ ճոխ սեղանին։

Քանի մը գավաթ ճերմակ գինի բոլորովին զվարթացուցին զինքը և սկսավ շաղակրատել, ծիծաղել ու կատակել, ինքն ալ զարմանալով իր հանդգնության վրա։

Երկու ժամե ավելի անցուցին սեղանատան մեջ, հետո կրկին վերադարձան սալոն, և աղջիկը ուզեց վերսկսիլ իր ձեռագործը, բայց Վառվառ արգիլեց.

— Կերած խմած էլար կարելը աղեկ չէ, աղջիկս, քիչ մը նստե հանգիստ ըրե։

— Բայց տիկին, ըսիք, որ գործը ստիպողական է...

— Վնաս չունի. քիչ մը ավելի կմնաս հոս ու կլմնցնես... եթե ժամանակը շատ ուշ ըլլա, ես քեզի մեր սպասուհիին հետ կառքով մինչև տունդ ղրկել կուտամ։

— Արդեն Միքայել աղան պիտի գա զիս տանելու,— դիտել տվավ Շուշանիկ։

— Միքայել աղան կամ սպասուհին միևնույն բանն է։

Աղջիկը, որ արդեն չափազանց կերած ու խմած ըլլալով, աշխատելու տրամադրություն չուներ, շատ դժվարություն չհարուցց։

Սակայն ժամ մը հանգիստ ետքը, Ղուկաս էֆենտիի մեկ խորհրդավոր ակնարկին վրա, Վառվառ ըսավ մանկատի աղջկան.

— Աղջիկս, եկուր քեզի դիմացի սենյակը տանիմ ու հոն հանդարտ գլխով կարդ կարե, լմնցուր։

Այն սենյակն, ուր տանտիրուհին առաջնորդեց Շուշանիկը, մութ ու ընդարձակ սրահ մըն էր, թանձր վարագույրներով ծածկված և երկու պատուհաններով, որոնք նեղ լուսամուտի մը վրա կբացվեին։

Սենյակին մեկ անկյունը կար խոշոր անկողին մը, որուն ոտքերուն տակ փռված էր ոչխարի մորթե ծածկույթ մը։ Մեկ քանի թիկնաթոռներ, բազմոց մը և դարակ մը, որուն վրա հայելի մը կբարձրանար՝ ամբողջ կահ կարասին կկազմեին։

Շուշանիկի վրա տխուր ու անախորժ տպավորություն մը ըրավ

այս մութ սենյակը, ուր առարկաները հազիվ իրարմե կորոշվեին։

Պատուհանին քով թիկնաթոռի մը վրա տեղավորվեցավ և սկսավ իր ձեռագործովը զրաղիլ։

Տարտամ երկյուղ մը տիրած էր վրան. այդ անծանոթ կինն ու Ղուկաս էֆենտին, որոնք այնքան հարգանքով ու նույնիսկ գուրգուրանքով կվարվեին հետը, փոխանակ զինքը ապահովցնելու, ավելի կխրտչեցնեին։ Անորոշապես կնսխազգար, որ իրեն դեմ դավ մը կնյութվեր, բայց չէր կրնար գուշակել, թե ինչ էր այն։ Քանի մը անգամ նշմարած էր իրեն բարերարին իր վրա սևեռած հայրատ ու ցանկատոչոր ակնարկը և սարսռած էր անկե, բայց առանց երբեք երևակայելու, թե իր մասին ինչ քստմնելի թակարդ մը կլարվեր։

Սալոնին մեջ, Ղուկաս էֆենտի ու Վառվառ առանձին մնացած կխոսակցեին։

— Ինծի նայե,— կըսեր տանտիրուհին,— ես իմ գործս լմնցուցի, ալ ասկե ետքը բանի մը չեմ խառնվիր, առ աս սենյակին բանալին, գնա դիմաց, ինչ որ կուզես ըրե. ես ժամու մը չափ դուրս պիտի ելլամ, սպասուհին ալ արդեն տեղ մը ղրկեցի, ուստի տանը մեջ աղջիկեն ու քենե զատ մարդ մը չիկա, գիտցած եղիր։

— Բայց «գործ»-ը լմննալե ետքը, ես աղջիկը որո՞ւ թողում երթամ,— կըսեր վաճառականը,— ավելի աղեկ չէ՞, որ հոս մնաս...

— Չէ,— կպնդեր մյուսը,— անկարելի է։ «Գործ»-ին ատենը չեմ ուզեր հոս գտնվիլ... ամեն մարդ իրեն հաշիվը ունի... բայց ետքը կուգամ ոևէ միջոցավ մը աղջիկը մինչև տուն ղրկել կուտամ։

Ղուկաս էֆենտի ստիպվեցավ համակերպիլ տանտիրուհիին կարգադրության. հետո, իր մատուցած և տակավին մատուցանելիք ծառայության փոխարեն քսան ոսկի համրեց իրեն ու հինգ ոսկի ալ հանձնեց, որպեսզի աղջկան տա։

Հետո, վճռաբար, դիմացի սենյակին բանալին գրպանը, ուղղվեցավ Շուշանիկի քով։

Վառվառ, անմիջապես վերը՝ ննջասենյակը գնաց, աճապարանքով հագվեցավ, կոշիկն ու գլխարկը ղրավ ու կամաց վար իջավ։

Խուլ հեծկլտուք մը, աղիողորմ ու խեղդված աղաղակներ կլսվեին այն սենյակեն, ուր մանկատի աղջիկն ու Ղուկաս էֆենտի փակված էին։

Վառվառ, ոտքի ծայրերուն վրա կոխելով, մոտեցավ սենյակի դռան ու ականջ դրավ։

Մաքառում մը տեղի կունենար ներսը. հեգ աղջիկը կդիմադրեր, կուզեր ինքզինք փրկել վայրագ էֆենտիին ճիրաններեն, բայց չէր կրնար, ու հայտնի կերևար, որ վաճառականը աղջկան բերանը բռնի կդոցեր, որպեսզի չաղաղակեր։

— Էֆենտի, թող տուր, կաղաչեմ, կպաղատիմ,— կլսվեր, ու հետո հեծկլտուք մը՝ «մայրիկս, մայրիկս» ճիչերուն խառնված։

Վառվառ արագորեն հեռացավ դռան առջևեն, սանդուխեն վար իջավ ու փողոցին դուռը բանալով՝ ինքզինքը դուրս նետեց։

Ժամ ու կես ետքը Վառվառ վերադարձավ և շիտակ սալոնը գնաց։ Ղուկաս էֆենտի, ջղագրգռված, մեծաքայլ կերթար կուգար սենյակին մեջ։

— Ո՞ւր մնացիր,— գոչեց, իր մեղսակիցը տեսնելով։

— Հոս, մոտերը տեղ մը գացեր էի, խոսքի տալմիշ եղա, քիչ մը ուշ մնացի։

— Ես կերթամ կոր, հինգ ոսկին տուր աղջկանը և տուն դրկե...

— Ո՞ւր է որ աղջիկը...

— Դիմացի սենյակն է, հոս սպասե ու իմ դուրս ելլելես ետքը քովը գնա։

Ու Ղուկաս էֆենտի, ոճրագործի մը պես վար սպրդեցավ սանդուխեն ու ինքզինքը փողոց նետեց։

Վառվառ, հուշիկ մոտեցավ դիմացի սենյակին ու կամաց մը դուռը բացավ։

Խեղճ Շուշանիկ կիսամերկ փռված էր անկողնին վրա ու գլուխը բարձին՝ կհեծկլտար։

Երբ դուռին բացումը լսեց, ահաբեկ գլուխը վեր առավ, կարծելով որ կրկին Ղուկաս էֆենտին էր ներս մտնողը, բայց երբ նշմարեց, որ տանտիրուհին էր եկողը, հանդարտեցավ ու կրկին բարձին վրա ինկավ, ալ ավելի բարձրաձայն լալով։

Վառվառ բոլորովին շվարած դեմք մը առնելով՝ աղջկան քով մոտեցավ և հաթցուց.

— Ի՞նչ կա, ի՞նչ ունիս աղջիկս, այս ի՞նչ վիճակ է... խոսե՛, պատմե՛ տեսնամ, ի՞նչ եղավ։

Հեգ աղջիկը, առանց կարենալ պատասխանելու, կշարունակեր լալ։

— Տեր աստված, տեր աստված,— գոչեց Վառվառ,— բարով խերով դուրս չելլայի... կերևա որ իմ բացակայության ատեն փորձանք մը պատահեր է... Ղուկաս էֆենտի՞ն ուր է. ան ալ մեջտեղ չի կա...

Շուշանիկ վաճառականին անունը լսելով, կրկնապատկեց իր հեծկլտուքը։

Տիկին Վառվառ գնաց քիչ մը օտոքոլոնեյը և ջուր բերավ ու աղջկան խմցուց, հետո, վերջապես ստիպեց զայն, որ գլխուն եկած փորձանքը պատմե, ինքզինք բոլորովին անգիտակ ձևացնելով անցած դարձածին։

Հետո, կատաղի բարկության մեջ ինկավ.

— Իմ տանս մեջ ասանկ խայտառակություն մը ըլլա, վա՛յ անամոթ, վայ չխպնած մարդ, մեղա՜, մեղա՜, աստուծմե՞ ալ չվախնար այդ սրիկան... ասանկ հրեշտակի պես աղջիկ մը գլխե հանել բռնի կերպով... ոտքս կոտրեր ան՝ դուրս ելած չըլլայի... վա՜խ, վա՜խ, վա՜խ։

Ու այնքան լավ կատարեց իր դերը, որ խեղճ աղջիկը իրավամբ հավատաց, որ Վառվառ անմեղ էր իրեն գեմ լարված դավադրության մեջ։

Վառվառ բավական ժամանակ շարունակեց իր ոգբն ու կոծը, իբր թե ինք եղած ըլլար բուն գոհը և ոչ թե հեգ մանկատի աղջիկը. ի վերջո ջանաց նաև մխիթարել Շուշանիկը, որ լռիկ կհեծկլտար։

Իրիկուն եղած էր ու Միքայել աղան չէր երևնար։

— Աղջիկս, քեզի կառք մը դնեմ ու տուն դրկեմ մեր սպասուհիին հետ,— առաջարկեց տանտիրուհին,— խեղճ մայրդ հիմա մտատանջության մեջ կմնա...

Հետո, գրպանեն Ղուկաս էֆենտիի տված հինգ ոսկին հանելով, ավելցուց.

— Ասանկ մեծ դժբախտություն մը իմ տանս մեջ պատահելուն համար չափազանց կցավիմ, բայց վստահ եղիր, թե այդ անօրեն մարդուն ըրածը քովը չպիտի թողում և ճախեն պիտի գամ, հիմակուհիմա սա հինգ ոսկին առ, թող քովդ գտնվի...

Եվ դրամը գրեթե բռնի, աղջկան գրպանը դրավ։ Հետո երեսը լվալ տվավ, մազերն ու վրան գլուխը շտկեց և երբ տեսավ, որ հուզումը բավական հանդարտած է, կառք մը բերել տալով՝ պատավ սպասուհիին հետ աղջիկը իր տունը դրկեց, նախապես պատվիրելով պառավին, որ փողոցին անկյունը կառքը կեցնել տա ու

աղջիկը առանձին տուն ղրկելով՝ ինք առանց տեսնվելու տնեցիներեն, ետ դառնա։

Իր տված հրահանգները կետ առ կետ գործադրվեցան։

Ինը ամիս ետքը Շուշանիկ մանչ մը կծներ։

Իր հղությունն ու տղաբերքը ահռելի հուզումներու մատնած էին, թե խեղճ աղջիկը և թե իր մայրը, որմե մեկ քանի ամիս ամեն բան ծածկած էր, չուզելով հիվանդ վիճակի մեջ զայն նորանոր տագնապներու մատնել։ Սակայն ի վերջո, երբ հղության առաջին նշանները տեսնված էին իր վրա, անկարելի եղած էր գաղտնիքը ծածկել ու լալով ամեն բան պատմած էր մորը։

Ու խեղճ կիները ամիսներով ջանացեր էին իրենց ամոթը ծածկել թաղին մեջ, բայց կամաց-կամաց լուրը տարածված էր ու խեղճերը չէին համարձակեր մեկու մը հետ տեսնվիլ ու քաշված ու լքված կապրեին։ Միքայել աղան կշարունակեր երբեմն այցելել իրենց։ Ինքն ալ Վառվառին պես հաջողած էր ինքզինքը չքմեղացնել, ըսելով, որ բնավ տեղեկություն չուներ ըլլալիքեն։ Տղաբերեքեն ետքը, երբ հետին թշվառության մեջ ինկած էր ընտանիքը, օր մը Շուշանիկի մայրն ստիպեց Միքայել աղան, որպեսզի դիմում ընե Ղուկաս էֆենտիի և նյութական օժանդակություն մը հայցե։

Բայց երբ Միքայել աղա Շուշանիկի զավկին ծնունդը ծանուցանելով, դիմում գրած էր վաճառականին, Ղուկաս էֆենտի սոսկալի բարկության մեջ ինկած, սպառնացեր էր նույնիսկ Աղքատախնամե ստացած նպաստնին կտրել տալ։

Այդ անամոթները ուրեմն կուզեին զինքը շահագործել, զավակ մը մեջտեղ հանել, որպեսզի քիթեն բռնեն ու շարունակ ստակ քաշեն, բայց ինք ատանկ ապուշներեն չէր, ինք ամեն բան կուրանար և աղջիկն ալ ոևէ վկա չուներ եղածին .. ինք չէր ուզեր, որ այդ տեսակ աղտոտ հարաբերություններ ունենա, ուստի կարգիլեր Միքայել աղային՝ անոնց խոսքը անգամ մըն ալ իր առջև արտասանելու։

Ու հետո սպառնալիքը կրկնեց.

— Թող գիտցած ըլլան հա, եթե մեյ մըն ալ համարձակին ինե դրամ ուզելու, նպաստնին կտրել կուտամ...

Միքայել աղա ձեռնունայն վերադարձավ պառավներուն քով և հաղորդեց էֆենտիին ըսածները, իր կողմեն ալ ավելցնելով։

— Ինծի մնա նե՝ իրավցնե ալ մեյ մըն ալ իրեն դիմում չեք ըներ, որովհետև շատ գեշ մարդ է, ամեն բան ընելու կարող է...

հարուստ, ազդեցիկ է ու ձեզի կջախջախե, դուք ի՞նչպես կրնաք անոր հետ գլուխ ելլել...

Իմաստուն խոսքեր էին ասոնք, որոնց հարկ էր ականջ դնել, սակայն քիչ ժամանակ ետքը, օր մը, Շուշանիկի մայրը ուզած էր փորձ մը ևս ընել, այս անգամ ուղղակի, և ելած Ղուկաս էֆենտիի գրասենյակը գացած էր։

Վաճառականը նախատալից խոսքերու տարափով մը վռնտած էր զայն և հետո իր սպառնալիքն ալ ի գործ դրած էր, Աղքատախնամեն անոնց տրված նպաստն ալ դադարեցնելով։

Ահա այս անլուր պատմությունն էր, որ Հաճի Թումիկ և Սերգիս գացեր լսեր էին մանրամասնորեն։

ԳԼՈՒԽ ԺԱ

Գինեպանն ու երիտասարդը երկարորեն խորհրդակցություններ կատարեցին, քանի մը անգամ կրկին գացին եկան Շուշանիկի տունը և շաբաթ իրիկուն մըն ալ, երբ ըստ սովորականին, գինետան մեջ ծանոթ հաճախորդներ օղի կխմեին, Հաճի Թումիկ հաղթական՝ ըսավ իր մարդոց.

— Վաղը առտու Երրորդության ժամը գտնվեցեք, աղվոր սեյիր կա, Ղուկաս էֆենտին իր փառքը պիտի առնե։

Այս խոսքերը, գինեպանին հեղինակավոր բերնին մեջ, մեծ նշանակություն մը կառնեին և բոլոր ներկաները զգացին, թե հետևյալ օր իրավցնե կարևոր դեպք մը պիտի պատահեր։

Ոմանք փորձեցին քիչ մը ավելի տեղեկություն առնել, սակայն Հաճի Թումիկ խորհրդավոր լռություն մը պահեց.

— Վաղը եկեք, որ տեսնեք,— կկրկներ միայն։

Այդ կիրակին հիշտ այն օրն էր, որ Լևոն և Ռոզիկ պիտի երթային եկեղեցի, ըստ Ղուկաս էֆենտիի խորհրդին, որպեսզի շարախոս ու բամբասող բերաններ միանգամայն ընդմիշտ լռեն։

Առտուն կանուխ Ղուկաս էֆենտի արդեն գացած էր նախագահելու Աղքատախնամին։ Բակին մեջ նշմարած էր Հաճի Թումիկ աղան, որ վեր վար կպտտեր, պատերազմի պատրաստվող զորապետի մը տենդոտ քայլվածքով։

— Բարև, էֆենտի,— ըսած էր գինեպանը, երբ վաճառականը իր քովեն անցած էր Աղքատախնամի գրասենյակը ուղղվելու համար։

Ղուկաս էֆենտի, ակամա՝ բարևը առած էր։

Հաճի Թումիկի ներկայությունը, եկեղեցիին շրջափակին մեջ, անհաճո տպավորություն մը ըրած էր Աղքատախնամին նախագահին վրա։

— Ի՞նչու եկեր բակին մեջ կպտտեր այդպես,— խորհած էր ինքնիրեն։

Հետո, հիշած էր Սաթենիկի դեմ եղած հանրագրության պարագան, Սերգիսի ըրած դիմումը, իր տված ու չկատարած խոստումը։ Ու ճիշտ այդ միջոցին նշմարեց ահա Սերգիսն ալ, որ հոն բակը կշրջեր, ինչ որ ավելցուց իր տարտամ կասկածները։

Եվ շուտաքայլ մտավ այն դռնեն, որ կառաջնորդեր Աղքատախնամի սենյակը տանող սանդուխը։

Վերը, սովորական ամբոխը եկած բռնված էր, մթնոլորտը անախորժ հոտով մը ապականելով։ Ղուկաս էֆենտի առանց պատասխանելու իրեն ուղղած հոտընկայս բարևներուն, մտավ սենյակեն ներս, ուր արդեն հավաքված էին Աղքատախնամի անդամները։

— Իշալլահ այսօր շատ գործ չունինք,— ըսավ իր պաշտոնակիցները բարևելով։

— Սովորական ընթացիկ գործեր, էֆենտի,— պատասխանեց անդամներեն մեկը։

— Ինչ որ է շուտով լմնցնենք, որովհետև այսօր ստիպված եմ կանուխ երթալու... փեսացուս՝ Լևոն էֆ. Կոկիկյանը եկավ Փարիզեն, ցերեկը մեզի պիտի ճաշե, հիմակ ալ եկեղեցի պիտի գան աղջիկանս հետ...

Եվ այս լուրը հաղորդելով՝ հաղթական ակնարկ մը պտրտցուց ներկաներուն վրա։

— Օ, աչքերնիդ լույս ուրեմն... հարսնիքը մո՞տ է արդյոք։

— Գալ երկուշաբթի կընենք կլմնցնենք կոր... ես թեև կփափաքեի քիչ մը ատեն երկարաձգել, բայց փեսանիս կաճապարե կոր, որովհետև Փարիզի գործերը չեն ներեր իրեն ավելի երկար ատեն հեռու մնալ... երկուշաբթի պսակը պիտի ընենք և նույն թրիկունը շոգեկառքով պիտի մեկնին...

— Օխ, շատ աղեկ, ուրեմն մեղրալուսինը ճամփորդության մեջ պիտի անցնեն։

— Այնպես պիտի ըլլա։

Հետո խնդալով ավելցուց.

— Ճաճրմ, աս հիմիկվան նշանածները ինչ զարմանալի են, վայրկյան մը իրարմե հեռու չեն կրնար կոր մնալ, մեր ատենը այդպես չէր...

Ղուկաս էֆենտի վստահաբար գիտեր, որ հոն եղողները իմացած էին իր մասին տարածված լուրերը և ասոր համար այդ բացատրությունները հարկ դատած էր տալու։

Հարգելու համար իրենց նախագահին կամքը, ժողովականները սկսան ներկայացող նպաստընկալներու գործը շուտ-շուտ կարգադրել և կնճռոտ հարցերը հաջորդ նիստին թողուլ։

Ղուկաս էֆենտի միջոց մը ժամացույցը նայեցավ և դռնապանը կանչելով ըսավ.

— Գնա նայե արարողությունը լմննալու մո՞տ է։

Դռնապանը վերադարձավ հաստատական պատասխան մը բերելով։

— Ուրեմն, էֆենտիներ, ալ վերջացնենք ու վար իջնանք,— ըսավ վաճառականը։

Իր դիտավորությունն էր՝ հոն, եկեղեցիի բակին մեջ բազմության դուրս ելած միջոցին, դիմավորել աղջիկն ու փեսացուն և ասոնց հետ միասին հաղթապանծ դուրս ելլել, ամենուն աչքին առջև։

Ժողովականները ոտքի ելան ու մեկնելու պատրաստվեցան։

Միքայել աղա պահ մը մոտեցավ Ղուկաս էֆենտիին ու ականջն ի վար կամացուկ մը փսփսաց.

— Էֆենտի, սա պառավին նորեն նպաստ մը կապեինք ու այսօր ալ ձեռքը քանի մը ղրուշ տայինք... քիչ մը առաջ դուրս ելա, վարը եկեր կսպասեր կոր։

— Ո՞ր պառավը,— հարցուց վաճառականը։

— Իշտե սա Շուշանիկին մայրը...

— Քեզի չըսի՞, որ ատոնց խոսքը մեյ մըն ալ չպիտի ընես,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, հոնքերը պոստելով։

Միքայել աղա լռեց։

— Կերթանք կոր, անանկ չէ՞,— գոչեց էֆենտին բարձրաձայն, սենյակեն դուրս ելլելով։

Եվ վեհափառորեն սկսավ վար իջնել սանդուխեն, իր ետևը ձգած մյուս ժողովրդականները։

Բակին մեջ անսովոր բազմություն մը կար։ Հաճի Թումիկի գինետան բոլոր հաճախորդները ամբողջությամբ հոն էին, շրջա-

պատած իրենց պետը, որ բանկալին մոտերը կեցած էր, իր քով ունենալով Սերգիս Սմբատյանն ու Շուշանիկի մայրը։

Ժողովուրդը արդեն սկսած էր դուրս ելնել եկեղեցիեն։

Հանկարծ ստենտորյան ձայն մը հնչեց բակին մեջ։

— Էֆենտի, ինչո՞ւ սա կնկան ամսականը կտրեցիք...

Հաճի Թումիկն էր, որ Ղուկաս էֆենտիի կուղղեր այս խոսքերը։

Վաճառականը արհամարհական նայվածք մը ուղղեց գինեպանին և ըսավ.

— Ժողովը լմնցավ, եթե ըսելիք մը ունիս գալ շաբթու հոն ներկայացիր և ըսե։

Եվ ուզեց ճամփան շարունակել, սակայն Հաճի Թումիկ կեցուց զայն։

— Ինծի նայե, էֆենտի,— գոչեց,— մենք անանկ ժողով մողով չենք ճանչնար, սա խեղճ կնկան ամսականը ինչո՞ւ կտրեցիք, անոր պատասխան տվեք։

Մյուս ժողովականներն ուզեցին միջամտել։

— Ճանրմ, հոս տեղը չէ, կիրակի օր մը եկեք, բողոք մը ունիք նե՝ կնայինք...

Բայց արդեն ուրիշ կողմերե ալ ձայներ կբարձրանային, նախատական ու սպառնալից։

Նույն միջոցին եկեղեցիին դռան մեջ երևցան Լևոն ու Ռոզիկը, որոնք այդ ամբոխին կնայեին, առանց անցած դարձածը հասկնալու։ Հոն էր նաև տիկին Անթառամ, որ ինչպես գիտեք, եկած էր Տ. Միքիասի հետ խորհրդակցելու և հետևյալ օրվան համար զայն հրավիրելու պանդոկ։

Ղուկաս էֆենտի, շփոթված ու շլմորած, ակնարկը ժուռ ածեց չորս բոլորտիքը, տեսավ իր աղջիկն ու փեսացուն, ինչպես նաև Անթառամ հանրմը, որուն դեմքը կարծես տարօրինակ խնդությամբ մը կճառագայթեր։

Այն ատեն հուզումի ու բարկության կեղծ թափով մը գոչեց.

— Ի՞նչ խայտառակություն է աս, տեֆ ըրեք սա անամոթ մարդիկը, գինո՞վ են ինչ են... ծո՛, Կարապե՛տ, բոլիս մը կանչե՞ս...

— Անամոթ խայտառակը դուն ես,— գոռաց կրկին գինեպանին ձայնը,— եթե մարդոցմե չես ամչնար, աստուծմե ալ չե՞ս վախնար... ի՞նչպես այս խեղճ կնկան տասնրութը տարեկան աղջիկը

ավրեցիր ու հիմակ ալ անոթի կձգես զիրենք. թո՜ւ անամո՜թ, անխի՛ղճ մարդ, քու տեղդ Աղքատախնամին ժողովքը չէ... փոանկան է, փոանկան...

Նույն միջոցին, Շուշանիկին մայրն ալ իր կարգին Միքայել աղան մատնանիշ ընելով կգոչեր.

— Իշտե, աղջկան արունը մտնողներեն մեկն ալ աս է, ինք խաբելով աղջիկս առավ տարավ ու աս մարդուն ձեռքը թեալիմ ըրավ...

Ներկաները ափ ի բերան կդիտեին այս տեսարանը, առանց միջամտելու, այնքան անակնկալ շվարումի մը մատնված էին։

— Խայտառակներ...

— Անբարոյականներ...

— Անամոթներ...

— Դուրս նետեցեք այս սրիկաները...

Կոռնար ամբոխը սպառնալից։

Նույն միջոցին ճիչ մը լսվեցավ։

Տիկին Անթառամն էր, որ ձեռքերը բարձրացուցած կաղաղակեր, խոսքը Լևոնին ուղղելով՝ որ քարացած մնացեր էր Ռոզիկի հետ թև թևի։

— Տեսա՞ր հիմա, խոսքս ելա՞վ, մազ մնաց, որ ասանկ անբարոյական մարդու մը աղջիկը պիտի առնեիր... պատիվնիս փարայի մը պիտի ըլլար։

— Վա՜խ, աղջի՜կս, հեմ պատիվնիս ավրեց, հեմ ալ մեզի անոթի թողուց,— կշարունակեր պոռալ Շուշանիկի մայրը։

— Հապա սուտ տեղը պարկեշտ կնոջ մը անունը ավրել ուզողը և աս ու ան խաբելով հանրագրություն ստորագրել տվողը, Ղուկաս էֆենտի կոչվող աս սրիկան չէ,— միջամտեց նաև Սերգիս իր ձայնը բարձրացնելով։

Շուշանիկի մայրը Միքայել աղայի օձիքին կառչած էր։

— Ի՞նչպես վարդի պես սուրբ աղջիկս ասանկ կրակներու մեջ էրեցիր,— կաղաղակեր։

Մինչ նույն միջոցին շառաչուն ապտակ մը կիջներ մարդուն երեսին,

Միքայել աղա այդ խոսքերուն ու ապտակին ազդեցության տակ, սկսավ թոթովել։

— Թող տվեք զիս, ես անմեղ եմ... ինծի խաբեց, չըսավ, որ ատանկ գեշ միտք մը ուներ... ես չէի գիտեր։

Այս խոսքերը, որոնք կհաստատեին վաճառականին հանցապարտությունը, ավելի գրգռեցին հոն հավաքվողները։

— Ո՞վ կխաբես կոր, ծո՛, խայտառա՛կ, ո՞վ չգիտեր քու ինչ ըլլալդ...— պոռաց մեկը, որ տեղյակ էր Միքայելի սիրային միջնորդություններուն։

— Խայտառակ մարդ, աստուծմե եղավ, որ այս բաները orքան ելան տե՛ս ամեն մարդ հասկցավ անբարոյական, անպատիվ մարդ ըլլալդ...

Ղուկաս էֆենտի գլուխը վեր վերցուց և տեսավ, թե տիկին Անթառամն էր, որ իրեն մոտեցած, այդ խոսքերը կնետեր երեսին։ Այն ատեն, ծայրահեղ գրգռության մը մեջ, պաղարյունությունը կորսնցնելով, ինքն ալ պոռաց Անթառամի երեսին.

— Հելե դուն սուս եղիր, Թոփ Գափուցի Պայրախտար Սուրբիկին աղջիկը չե՞ս մի... որ սիրականեդ ունեցած փիճդ իրրև հարազատ կլլեցնել կուզես... անպատիվ անբարոյականը դուն ես, խալթա՛խ...

Անթառամի երակներուն մեջ հանկարծ սկսավ եռալ Պայրախտար Սուրբիկի արյունը, մեկ կողմ նետեց կեղծ համեստությունն ու հանդիմությունը և բարկութենե գողահար ձայնով մը պատասխանեց.

— Այդ խալթախին փիճին աղջիկդ տալու համար չէ՞ր քի կտոր-կտոր եղար, ամեն խաղ, ամեն խաբեբայություն ըրիր... հա, հրամմեր ես, Թոփ Գափուցի Պայրախտար Սուրբիկին աղջիկն եմ... ատիկա ասոր չիմացար, ամա թեք աղջիկդ տղուս գլուխը փաթթելու համար, պետք ըլլար նե... ալ պիտի պագնեիր...

Եվ ահա, փոխն ի փոխ, լուտանքներու հեղեղ մը սկսան թափել իրարու գլխին, մինչ բազմությունը, որուն մեջ եկեղեցիեն ելնող ծանոթ ընտանիքներ ալ կային, ապշահար հանդիսատես կըլլար այս խաղքության։

— Ամենուդ ալ աստված պելան տա,— լսվեցավ Հաճի Թումիկի գոռացող ձայնը,— ամեն խաղքություն, ամեն անպատվություն, ամեն գեշություն կընեք, անկե ալ նորեն ինքզինքնիդ պատվավոր ծախել կուզեք, որովհետև փարա ունիք, հա՞... թո՛ւ ձեր երեսին, մենք աղքատ մարդիկ ենք, բայց ատանկ խաղքություններ չունենինք մեջերնիս, մեյ մըն ալ ելեր ազգին մեծերը եղեր ես, աս ու ան

կդատեք, բարոյականի, պատիվի խոսք կընեք... է՛ն առաջ դուք ձեր պատիվը, ձեր բարոյականը շտկեցեք, անկեց վերջը ուրիշները դատելու ելեք...

Գինեպանը լռեց, մինչ ներկաները կգոչեին.

— Ձենք ուզեր Ղուկաս էֆենտին և Միքայել աղան, ատ աղտոտ մարդիկը այսօրվնե դուրս պիտի նետվին ժամեն, մենք աղջիկ ավրող ու միջնորդություն ընող մարդ չենք կրնար ընդունիլ... դուրս թող ելլան այդ անխիղճ մարդիկը։

Եվ քանի մը բռունցքի հարվածներ խլան Ղուկաս էֆենտիի և Միքայել աղայի գլխուն։ Բայց Թումիկ ալ բավ դատած էր այս դասը, թողուց իր զոհին օձիքը և իր մարդոց դառնալով հրամայեց.

— Ճամփա բացեք, թող դուրս կորսվին։

Ամենքը ճամփա բացին և Ղուկաս էֆենտին ու Միքայել աղա, գլխիկոր, ամոթահար ու կապարագույն, ելան գացին ընդհանուր հայհոյանքներու միջև, մինչ տիկին Անթառամ, մարած վիճակի մեջ թաղ. նորհրդարանը փոխադրված էր, ուր իրեն դարմաններ կընեին՝ խելքը գլուխը բերելու համար։

Բազմությունը կամաց-կամաց ցրվեցավ։

Ժամ մը ետքը այս դայթակղական դեպքը լսված էր ամբողջ Քեքալի մեջ ու բոլոր տուներն ու սրճարանները անոր վրա կըխոսեին։

Մանավանդ Ղուկաս էֆենտիի ու տիկին Անթառամի ընդհարումն էր, որ կշահադրգռեր ամենքը։ Փոխանակված խոսքերն ու լուտանքները բերնե բերան կկրկնվեին, հաճախ չափազանցվելով։ Երբեք Կելկիթյանենց պատիվը այսպիսի առհելի հարված մը չէր կրած։ Երեսուն տարվան պատիվի, բարոյականի, ընտանիքի ամբակուռ շենքն էր, որ վայրկյանի մը մեջ հիմնահատակ կկործանվեր։

Ղուկաս էֆենտի սոսկալիորեն ընկճված ու սրտաբեկ՝ տուն վերադարձավ։ Վերի սրահին մեջ տիկին Թագուհի կսպասեր։

— Ո՞ւր են Ռոզիկն ու Լևոնը, միասին չէի՞ք,— հարցուց, տեսնելով որ էրիկը առանձին էր։

— Դեռ չեկա՞ն,— հարցուց իր կարգին վաճառականը։

— Չէ...

— Աստ գործը կարծեմ չպիտի ըլլա,— ըսավ Ղուկաս էֆենտի։

— Ո՞ր գործը։

— Ռոզիկի ամուսնությունը Լևոնի հետ։

— Ի՞նչ կըսես, նորեն ի՞նչ կա որ,— գոչեց տիկին Թագուհի դող ելած։

— Քիչ մը առաջ ժամուն բակը ըլլայիր նե՝ եղածը կտեսնայիր։

— Բայց ի՞նչ եղավ, չխոսի՞ս,— պնդեց կինը, ալ ավելի դող ելած։

— Ի՞նչ պիտի ըլլա, ատ Անթառամ ըսված խալթախը աղեկ մը լվացի, բակին orբա տեղը։

— Մեղա, մեղա,— գոչեց խեղճ տիկին Թագուհին։

Ղուկաս էֆենտի, իր կնոջ ստիպումներուն վրա վերջապես իրողությունը պատմեց, թեև շատ խեղաթյուրումներով։ Նախ բոլորովին լռությամբ անցավ Շուշանիկի գայթակղության վրայեն և միայն իր ու Անթառամի միջև տեղի ունեցած միջադեպի վրա ծանրացավ։ Բնականաբար այնպես ցույց տվավ, թե վերջնական հաղթանակը ինք տարած էր, և թե տիկին Անթառամ՝ խայտառակված մեկներ էր եկեղեցիեն։ Բայց ինչ որ ալ ըլլար, անդարմանելի նախատինքներ փոխանակված էին հրապարակով և ալ այդ խոսքերեն ետքը անկարելի էր Կոկիկյաններու հետը խնամիանալ։ Նույն օրն իսկ պետք էր խոսքկապը ետ ղրկել և ամեն հարաբերություն խզել։ Տիկին Թագուհի, թեև խիստ վշտակրած, բոլորովին համամիտ էր իր ամուսնուն, այդ գայթակղութենեն ետքը ալ խնամություն չէր կըրնար ըլլալ մեջերնին։

Պահ մը լռութենե ետքը՝ տիկին Թագուհի հարցուց։

— Այդ խաղքություններուն ատեն աղջիկս ու Լևոնը ո՞ւր էին, իցիվ թե հոն գտնված չըլլային, խեղճ Ռոզիկս...

— Կարծեմ հոն էին, եկեղեցիին դուռը կեցած էին, աչքիս զարկին, բայց ետքը ալ չտեսա։

Կեսօր եղած էր և տակավին ոչ Ռոզիկ, ոչ ալ Լևոն երևան կելլեին։

— Գուցե տեղ մը նստած են,— խորհեցավ տիկին Թագուհի։

Եվ սակայն վայրկյանները կանցնեին և ո՛չ ոք երևան կելլար։ Թե Ղուկաս էֆենտի և թե տիկին Թագուհի կսկսեին մտատանջվիլ այդ անբացատրելի բացակայութենեն։

— Արդյոք օթելը մեկը դրկե՞նք, գուցե հոն գացած են,— ըսավ տիկին Թագուհի։

Բայց ատիկա անկարելի ենթադրություն մըն էր. եթե Լևոն գացած իսկ ըլլար, Ռոզիկ չպիտի ընկերանար անշուշտ իրեն, բայց և այնպես սպասավորը ղրկեցին, որպեսզի պանդոկի դռնապանեն տեղեկություն մը քաղե։

Քառորդ մը ետքը սպասավորը եկավ և ըսավ, թե տիկին Անթառամեն զատ ոչ ոք գացած էր հոն։

Հիմակ ալ ավելի կրկնապատկվեցավ մտատանջությունները։

Սպասելե հուսահատ՝ արդեն ճաշերնին ըրած էին առանձին՝ տխուր ու մռայլ ճաշ մը, մինչ զվարթ ճաշ մը ըլլալու սահմանված էր։

Ու այսպես, վերի սրահին մեջ, էրիկ կնիկ, անխոս ու մտածկոտ, դեմ դիմաց սպասեցին մինչև իրիկուն և սակայն Ռոզիկ մեջտեղ չելավ։

Պրիսթոլ պանդոկը, տիկին Անթառամ գլուխ գլխի կխորհրդակցեր Տ. Միքիասի հետ, որ գայթակղման տեսարանին ներկա գտնվելեն ետքը վազած էր տիկին Կոկիկյանի քով, հաղթական և ուրախ դեմքով մը։

— Ալ այս անգամ, կասկած չիկա, նշանը ետ եղավ գնաց և դուն ալ մուրատիդ հասար,— ըսավ Անթառամին։

— Ինծի ալ այնպես կուգա, բարեբախտաբար Լևոնն ալ հոն էր, ամեն բան տեսավ ու լսեց և չեմ կարծեր, որ ասկե ետքը նորեն պնդե աղջիկը առնելու համար։

— Նույնիսկ եթե ինքն ալ ուզե, Ղուկաս էֆենտի չի տա... բայց ո՞ւր է զավակդ, մեջտեղ չի կա։

— Իրավ որ չեմ գիտեր, ցերեկը անոնց տունը պիտի ճաշեր, բայց այս եղածներեն ետքը հոն գացած ըլլալու չէ։

— Հիմա, տիկին Անթառամ, առանց ժամանակ կորսնցնելու տղադ Սմսարյանենց աղջկան կնշանես, շուտով մըն ալ հարսնիքը կընեք, կլմնցնեք և կելլաք տեղերնիդ կերթաք։

— Բայց այս օրվան պատահածեն ետքը կկարծե՞ս որ աղջիկնին տալ ուզեն... ան ինչ չլսված բաներ ըսավ ինծի համար։

— Ճանըմ, ատանկ բաներու կարևորություն մի տար, դուն գործը ինծի ձգե. ես ամեն բան կկարգադրեմ... միայն թե իմ աշխատությունս պարապը հանելու չես, ասիկա սովորական խլավուզություն չնմանիր... ինե զատ մեկը չիկա, որ կարենա այս տեսակ միջնորդություն մը հաջողցնել։

— Թող գործը կարգադրվի տե՝ վստահ եղիր, որ քեզ գոհ

կձգենք... ասկե զատ մենակ մենե չպիտի առնիս յա, հարկավ անոնք ալ բան մը պիտի տան։

— Բնականաբար, բայց միշտ մանչուն կողմն է, որ ավելի կուտա, երբ մանավանդ մեծ դրամօժիտով աղջիկ մըն է առածը։

Եվ երկար սակարկութենե մը վերջը, որոշվեցավ, որ Տ. Միքիաս քահանա, եթե գործը կարենար հաջողցնել, հիսուն ոսկի ստանար իբրև միջնորդչեք։

Հաջորդ օրը, երկուշաբթի, հուզումը տիրած էր Ղուկաս էֆենտիի տան մեջ, ուր Ռոզիկ չէր երևցած։ Լևոն նմանապես երևան չէր ելած և տիկին Անթառամ սոսկալի սրտմաշուքի մը մատնված՝ չէր կարող բացատրել իր զավակին այս անակնկալ անհետացումը։

Ղուկաս էֆենտի, առջի իրիկվընե ի վեր ամեն կողմ փնտռտուքի ելած էր, սակայն իր բոլոր խուզարկությունները ապարդյուն մնացեր էին, և խեղճ տիկին Թագուհի անհնարին մտատանջություններու մատնված, կարտասվեր մինչև ետքը, վախնալով, որ հուսահատական արարքի մը դիմած էին երկու նշանածները, տեսնելով, որ իրենց միությունը անկարելի կըլլար։

Այս կրկնակ անհետացումը տակավին ծածուկ կպահեին, հուսալով, որ Ռոզիկ ու Լևոն մեջտեղ կելլեն և նոր գայթակղության առաջը կառնվի։

Եվ սակայն, երկուշաբթի մինչև երեկո, ոչ ոք մեջտեղ ելավ, միայն ուշ ատեն՝ ծառան՝ պահարանի մեջ՝ տիկին Թագուհիի բերավ հանձնեց սա երկտողը, զոր անծանոթ մը դոնեն ձգած ու գացած էր։

«Սիրելի մայրիկս,

Իմ մասին չըլլա որ մտատանջ ըլլաս, ողջ առողջ և երջանիկ եմ։ Քիչ օրեն երկար տեղեկություններ կուտամ։ Առայժմ այսչափ։ Ես ու Լևոն սիրով կհամբուրենք քեզ։

Աղջիկդ՝ Ռոզիկ»

Այս նամակը անշուշտ քիչ մը սիրտ տվավ խեղճ կնոջ և զինքը ապահովցուց այն չարաշուք ենթադրություններեն, որոնք միտքը պաշարած էին Ռոզիկի անհետացումեն ի վեր։

Ղուկաս էֆենտի, երբ տուն գալով կարդաց նամակը, ուրախության ճիչ մը արձակեց։

— Ողջ առողջ ու միասին են եղեր, ալ հանդարտեցեք։

— Բայց ո՞ւր են, ինչո՞ւ կծածկվին,— դիտել տվավ տիկին Թագուհի,— ինչո՞ւ քիչ մը ավելի տեղեկություն չէ տվեր։

— Ո՞ւր պիտի ըլլան, տղա չեն, որ կորսվին, առանց դրամի ալ չեն, որ անոթի մնան, հավանորեն հեռացած են Պոլսեն, քանի մը օր համբերե ու ամեն բան կիմանանք, հիմա խնդիրը այն է, որ աղջիկնիս ողջ առողջ է եղեր...

Եվ Ղուկաս էֆենտի, ուրախ զվարթ, դրպանեն սիկարեթ մը հանեց և սկսավ ծխել։

— Նորեն չորս ոտքի վրա ինկա,— կմտածեր ինքնիրեն.— հավանորեն տեղ մը պիտի երթան պսակվին ու ամեն բան լմննա... ես ալ դրամօժիտեն ու հարսնիքի ծախքերեն ազատ պիտի մնամ, երեք հազար ոսկին գասայես չպիտի ելլե։ Անթառամին ալ նախեն եկած պիտի ըլլամ... բայց այս ու ան միսերնիս պիտի ուտեն եղեր, քանի մը շաբաթ վրանիս պիտի խոսին եղեր, թող ուզածնուն չափ հաչեն... աչքես քանի մը հարյուր ոսկի հանելուս պես, սանկ հիվանդանոցի, որբանոցի, աղքատախնամի նվեր և այլն. քանի մը ոսկի ալ թերթերուն, նորեն կըլլամ ալ ավելի պատվավոր Ղուկաս էֆենտի մը։

Այս սփոփարար խորհրդածություններեն ետքը, Ղուկաս էֆենտի սեղան նստավ և կուշտ ու կուռ փառավոր ճաշ մը ըրավ։

— Կնիկ,— կկրկներ ատեն-ատեն տիկին Թագուհիի ուղղելով, որ միշտ մտահոգ երևույթ մը ուներ,— նստած տեղերնիս երեք հազար ոսկի շահեցանք, հարսնիքի ծախքերն ալ զատ...

Սակայն դառնանք Ռոզիկի ու Լևոնի քով։

Ինչպես ըսինք, Ս. Երրորդության բակին մեջ տեղի ունեցած դայթակղական տեսարանին ատեն, Լևոն և Ռոզիկ եկեղեցիին դռան առջև կեցած էին։ Հոնկե հանդիսատես եղած էին ամբողջ խաղքությանը, Ղուկաս էֆենտիի և տիկին Անթառամին ընդհարումին, իրարու երես նետած անլուր նախատինքներուն ու պժգալի հայտնություններուն, և երկունքն ալ միևնույն զգայությունը ունեցած էին, այսինքն թե՝ նույն բոպեին իրենց երջանկությունն էր, որ կխորտակվեր, իրենց միությունը՝ որ անկարելի կդառնար...

Ու երիտասարդը հանկարծ գերագույն որոշում մը տված էր։

Բազմության և իրարանցումին մեջ քաշքշելով դուրս հանած էր Ռոզիկը. կառք մը գրած և գոչած էր կառավարին.

— Շուտ Սիրքեճիի կայարանը...

Ռոզիկ դողահար, հուզված, գրեթե ուշակորույս, լուռ ու մունջ ինկած էր կառքին անկյունը, մինչ Լևոն, որ կառքին վարագույրները իջեցուցած էր, անոր ձեռքերը կհամբուրեր և զգլխիչ խոսքեր կփսփսար ականջին։

Խեղճ աղջիկը, կամաց-կամաց ինքզինքին եկած էր, իր սիրահարին համբույրներովն ու անուշ խոսքերովը կազդուրված։ Քիչ առաջվա ահռելի մղձավանջը երազ մը կթվեր իրեն, նշանածը քովն էր, իրենն էր միշտ, և այս ստուգությունը մոռցնել կուտար իրեն ամեն վիշտ։

Սակայն ո՞ւր կերթային այսպես. կառքը Ղալաթիայեն անցած էր ու հիմա կամուրջին վրա կթավալեր։ Ռոզիկ չէր համարձակեր այս մասին հարցում մը ընել Լևոնին և երիտասարդն ալ, իր կողմե բացատրություն տալու հարկ չէր տեսնար։

Վերջապես կանգ առին Սիրքեճիի կայարանին դիմաց։

Լևոն կառքին վարձքը վճարեց ու կառապանը ճամփեց։

Հետո ըսավ Ռոզիկի.

— Երթանք սա դիմացի գարեջրատունը և ճաշենք, որովհետև գրեթե կեսօր է։

— Բայց ճաշը մեր տունը չպիտի ընեի՞նք,— առարկեց աղջիկը։

— Ատիկա հին պատմություն է,— պատասխանեց երիտասարդը խնդալով, և նշանածին թևը մտած, առանց ուրիշ բացատրության, զայն առաջնորդեց դեմի պարտեզը, որուն մեջ կգտնվեր ճաշարանը։

Երբ սեղանի մը առջև տեղավորեցան՝ Լևոն ըսավ նշանածին.

— Ի՞նչ պիտի ընենք այս օրվան զայթակղութենեն ետքը, միթե կկարծե՞ս, որ կարելի պիտի ըլլար այդ անորակալի խաղությունը մոռնալ...

Աղջիկը չպատասխանեց։

— Ես,— շարունակեց երիտասարդը,— այնպես համոզված եմ, որ այլևս ոևէ մերձեցում կամ հաշտություն չկրնար ըլլար մորս և քու հորդ միջև, հետևաբար մեր ամուսնությունն ալ այնպես, ինչպես կարգադրած էինք, չկրնար տեղի ունենալ, հետևաբար կամ այն է, որ պետք է խզենք մեր նշանը և կամ ուրիշ կերպով մեր գլխին ճարը նայինք։ Այսինքն պետք է, որ մեր երջանկությունը զոհենք

ուրիշներու գործած հանցանքներուն համար և կամ զոհենք հայր ու մայր, միանանք իրարու։

Եվ երիտասարդը պարզեց իր ծրագիրը։

Նույն իրիկունն իսկ պայմանագրական շոգեկառքով պիտի մեկնեին Փարիզ, ուր հասնելուն պես քաղաքային ամուսնություն մը պիտի կնքեին իրենց բնակած թաղի քաղաքատան առջև, և հետո պիտի կատարեին նաև եկեղեցական պսակը, երբոր այդ մասին պետք եղած պաշտոնաթուղթերը ունենային։

— Ահա միակ միջոցը այս անել կացութենեն դուրս ելլելու, առանց մեր երջանկությունը վրա տալու,— եզրակացուց Լևոն։

Եվ իրավամբ երիտասարդին առաջարկած միջոցեն տարբեր բան մը կարելի չէր խորհիլ։ Ռոզիկ, եկեղեցիին մեջ, երբ լսած ու տեսած էր հանկարծակի պայթած ամբողջ խաղությունը, իրեն այնպես թված էր, թե ալ ամեն բան վերջացած, ջախջախված, անէացած էր իրեն համար և ուրիշ բան չէր մնար ընելիք, այլ հավիտյան ծածկվիլ տեղ մը և ողբալ իր կորսված երջանկությանը վրա, բայց ահա Լևոն փրկության լախտ մի կկարկառեր իրեն, նորեն իրեն կվերընծայեր այն երջանկությունը, որ երազած՝ որով ապրած էր շաբաթներն ի վեր։ Եվ զգաց, թե իրավունք ուներ նշանածը, թե իրենք պարտավոր չէին զոհվիլ մոլորություններու, որ իրենք գործած չէին, թե իրենց մաքուր ու անապական սերը պետք չէր, որ փշրվեր ուրիշներու ապականությանը իբրև հատուցում, և անվերապահ ու անկեղծ շեշտով մը ըսավ իր նշանածին,

— Ես քուկդ եմ, ըրե ինչպես որ կուզես։

Եվ սակայն հիշեց մայրը, որ անշուշտ, անմեղ տեղը պիտի տառապեր ու պիտի չարչարվեր իր աներևույթ եղած աղջկան համար։

— Գոնե մայրիկիս իմացունենք մեր մեկնումը,— ըսավ Լևոնին,— որովհետև կրնա ըլլալ, որ սրտին ցավեն ու մտատանջութենեն դժբախտություն մը պատահի, և ես այն ատեն չպիտի կրնամ խղճիս ձայնը լռեցնել։

Լևոն խոստացավ ամեն միջոց գործադրել, որպեսզի տիկին Թագուհի երկար ատեն մտատանջության մեջ չմնար. միայն թե իրենց ապահովությանը համար որոշեց, որ մեկնելեն ետքը լուր տային իրենց մասին։

Ճաշը ավարտելեն ետքը երկու սիրահարները, կասկածելով, որ զիրենք կհետապնդեն, հանցավորներու պես գացին պահվտիլ

Միրքեճիի կողմը, աղտոտ սրճարանի մը անկյունը։ Հոն Ռոզիկ դրեց այն երկտողը, զոր հետևյալ օրը տիկին Թագուհի պիտի ընդուներ և զոր Լևոն հանձն առավ մեկու մը ձեռքով ղրկել Ղուկաս էֆենտիի տունը, իրենց ճամփա ելլելեն ետքը։

Իրիկվան դեմ վերադարձավ կայարան և որպեսզի իրենց հետքը կորսցնել տան, նախ Մաքրիգյուղի համար մեկ մեկ տոմսակ առին, ուր կհանդիպեր պայմանագրական շոգեկառքը, որպեսզի անկե շարունակեն իրենց ճամփորդությունը։

Բոլոր այս նախազգուշությունները ավելորդ էին, քանզի, ինչպես դիտենք, իրենց ետևեն հետապնդող չի կար, սակայն խեղճ սիրահարները այնքան վախ ունեին իրենց երջանկության սպառնացող վտանգներուն դեմ, որ ամենափոքր զգուշություններն անգամ անտես չէին առներ։

Վերջապես, երբ մութը կոխած էր, պայմանագրական կառախումբը եկավ կեցավ Մաքրիգյուղի կայարանը և մեր երկու փախստականները նստեցան առաջին կարգի վագոն մը, որուն տոմսակը Սիրքեճիեն գնած էր Լևոն։

Ու երբ վայրաշարժը սուլեց, կառքերը սկսան թավալիլ, այն ատեն Ռոզիկ ու Լևոն, օրվան ահռելի հուզմունքներեն ետքը, առաջին անգամ ըլլալով իրարու գիրկընդխառնվեցան, անակնկալ ազատի մը մեջեն իրենց երջանկությունը փրկած ըլլալու գիտակցուն երանությամբ։

Եվ ամբողջ ճամփորդությունը, մինչև Փարիզ, հիանալի մեղրալուսին մը եղավ։ Երրորդությունն եկեղեցիին ահռելի մղձավանջը այլևս գոյություն չուներ իրենց համար, միայն իրենց փոխադարձ սերը կար, որ կուավառներ իրենց գլխուն վրա և կմաքրագործեր ամեն բան, բոլոր այն աղտոտությունները, զորս իրենց ծնողքները գործած էին և որոնց մաղ մնացեր էր, որ զոհվեր իրենց երջանկությունը։

Միջոց մը Ռոզիկ խղճահարություն ունեցավ, հիշեց թե հայրը դրամօժիտ մը պիտի տար իր փեսին և ուզեց այս մասին խոսք մը բանալ Լևոնին, բայց առաջին բառեն իսկ երիտասարդը լռեցուց զինքը. նվ այս անշահախնդրությունը ալ ավելի ամրապնդեց իրենց խանդավառ գարգուրանքը իրարու վրա, այն աստիճան, որ երիտասարդը ատեն-ատեն կկրկներ.

— Շատ ուրախ եղավ, այս ամենքը, բոլոր այդ գայթակղությունը, մեր փախուստը, մեր գլուխ գլխի ամուսնությունը. ասով բոլորովին մաքրագործվեցավ մեր սերը, այնպես որ ալ ոչինչ կրնա ապարտել ու ապականել զայն։

Փարիզ հասնելուն հետևյալ օրն իսկ քաղաքական ամուսնությունը կատարեցին և նույն իրիկունը Ռոզիկ այս նամակը ուղղեց իր մաք.

«Սիրելի մայրիկ.

«Այս ցերեկ Ցրուո փողոցի քաղաքատան մեջ Լևոնը և ես մեր քաղաքական ամուսնությունը կատարեցինք, երկու վկաներու ներկայությամբ։ Կհուսամ, որ այս լուրը ուրախությամբ պիտի ընդունիս։ Պոլսեն մեկնած օրերնիս երկտող մը գրած էի, որպեսզի սիրտդ հանգիստ ըլլա իմ մասիս, անշուշտ ժամանակին ստացար։

«Մեր հանկարծական փախուստը գուցե տարօրինակ երևցավ ձեզի և զիս մեղադրեցիք այդպիսի վարմունք մը ունենալուս համար. սակայն կարելի չէր ուրիշ կերպ ընել։ Եկեղեցիին մեջ տեղի ունեցած դեպքը, զոր հարկավ իմացար, այնքան տակնուվրա ըրավ մեզ, որ հապիկ կրցանք կառք մը նստիլ և փախչիլ։ Ու երբ քիչ մը հանդարտեցանք, ես ու Լևոն լրջորեն խորհրդակցեցինք և տեսանք, որ մեր երջանկությունը ապահովելու համար Պոլսեն հեռանալե ուրիշ միջոց չի կար։

«Մեր փախուստը բնականաբար նորանոր բամբասանքներու տեղի տվավ և օրերով ամբողջ Թերայի ընտանիքները մեզմով զբաղվեցան, սակայն կհուսամ, որ ամեն բան շուտով կմոռցվի երբոր մեր ամուսնության լուրը իմացվի։ Քանի մը օրեն տպված քարթով մը մեր վիճությունը պիտի ծանուցանենք աղգականներուն և բարեկամներուն. գալով եկեղեցական պսակին՝ այն ալ մոտ օրեն կկատարենք, երբ որ այս տեղի քահանան պետք եղած պաշտոնաթուղթերը ստանա, այդ մասին բոլորովին վստահ եղիր։

«Հաճոյալի ու հանգիստ ճամփորդություն մը ետքը հասանք Փարիզ ու գացինք տեղավորվեցանք մեր բնակարանը, որ գեղեցիկ արարքման մըն է, խիստ լավ կերպով կահավորված։

«Ձես կրնալ երևակայել թե որքան երջանիկ եմ. Լևոն հիանալի ամուսին մըն է, և բոլոր հոգիովը կսիրե զիս։ Վերջին դեպքին առթիվ իր ցույց տված ընթացքը արդեն ապացույց մըն է իմ վրա ունեցած անսահման սիրույն։

«Այսպես ուրեմն, բոլորովին անհոգ եղիր իմ մասին։ Քիչ օրեն

դարձյալ կգրեմ, հիմա ստիպված եմ նամակս վերջացնելու. որովհետև Լևոնը կսպասե քովս, որպեսզի երթանք ճաշելու, անկե ալ թատրոն երթալու համար։

Սիրով կհամբուրենք ամենքդ ալ։

Ռոզիկ»

Երբ տիկին Թագուհի այս նամակը ստացավ, անհուն խնդություն մը զգաց, մանավանդ աղջկանը ամուսնության լուրը առնելով։ Ինչպես Ռոզիկ իր նամակին մեջ կգուշակեր, երկու նշանածներուն անհետացումը մեծ գայթակղություն հառաջ բերած էր Բեյրայի մեջ և գրեթե մոռցվեր էր եկեղեցիին խաղքությունը։ Ամեն մարդ մեյ մեկ մեկնություն կուտար, դատապարտելով թե՛ աղջիկը և թե՛ երիտասարդը, ինչպես նաև ծնողքները։

Իրիկունը, երբ Ղուկաս էֆենտի տուն եկավ ու նամակը կարդաց, ինքն ալ մեծ շունչ մը առավ.

— Օ՜խ, քանի որ ալ ամուսնացեր են, ալ խոսք խորաթան մեջտեղեն կվերնա... ես վաղը թերթերուն մեջ այդ ամուսնությունը փառավոր կերպով ծանուցանել կուտամ, թող ամեն մարդ իմանա և լեզուն քաշե։

Վաճառականը քանի օրե ի վեր երկյուղ մը ուներ, զոր կնոջը չէր հայտներ։ Կվախնար որ Լևոն աղջիկը ձեռքին մեջ զենք մը ընելով՝ իրմե մեծկակ դրամօժիտ մը պահանջեր, հետը ամուսնանալու համար։ Ինք անշուշտ տրամադիր էր խոստացված գումարը՝ երեք հազար ոսկի, թեև ակամա՝ վճարելու, սակայն եթե ավելի պահանջեր, ի՞նչ պիտի ըներ, գայթակղության առաջքը առնելու համար պիտի ստիպվեր վճարելու։

Բայց հիմա ահա բոլորովին հակառակը տեղի կունենար։ Ամուսնությունը եղած կատարված էր և նամակին մեջ բնավ դրամօժիտի խոսք չի կար։ Ասկե ետքը, նույնիսկ երիտասարդը դրամ պահանջեր, բացարձակապես կրնար մերժել։

— Քաղաքական ամուսնություն հե՞,— կըսեր ուրախությամբ իր կնոջ,— եկեղեցական պսակեն ավելի ամուր է և ավելի օրինական...

— Միայն թե ես կուզեի, որ եկեղեցական պսակն ալ ըլլար։

— Հոգ մի ըներ, ան ալ կըլլա, խնդիրը այն է, որ այսօր, օրենքին առջև ամուսնացած կհամարվին։

Ու Ղուկաս էֆենտի կվերադառնար կրկին իր սիրելի գաղափարին։

— Երեք հազար ոսկին գրպանս մնաց, աղջիկն ալ կարդեցինք...

— Գոնե պատրաստած հագուստներն ու ճերմակեղենները ղրկեինք,— դիտել տվավ տիկին Թագուհի։

— Ուզեն նե՝ կղրկես,— պատասխանեց Ղուկաս էֆենտի,— իսկ եթե ձայն չհանեն՝ կպահենք մեր մյուս աղջիկնուս համար... ճեհեզը հիմակվընե պատրաստ կըլլա։

Մյուս օրը վաճառականը լուր ղրկեց, կանչել տվավ օրաթերթի մը խմբագիրը և տասը ոսկիի փոխարեն հետևյալ տողերը հրատարակել տվավ։

«Մեծ ուրախությամբ կլսենք թե անցյալ շաբթու Փարիզի մեջ կատարված է Կ. Պոլսո հրապարակին ծանոթ վաճառականներեն ազնվաշուք Ղուկաս էֆենտի Կելկիթյանի դստեր, օր. Ռոզիկի ամուսնությունը՝ Փարիզ հաստատյալ մեծահարուստ դոհարավաճառ ազնվաշուք Լևոն էֆենտի Կոկիկյանի հետ։

«Համեստափայլ տիկին Ռոզիկ, Հոմ Սքուլի փայլուն շրջանավարտներեն մին է և իր ստացած բարձր կրթությամբը, գեղեցկությամբը և շնորհալի ձիրքերովը պատիվ կբերե հայ իգական սեռին, որուն մեկ փայլուն ներկայացուցիչը պիտի ըլլա ֆրանսական ոստանին մեջ, բարձրացնելով մեր ազգային արժանիքը օտարներու քով։

«Իսկ ազնվաշուք Լևոն էֆենտի Կոկիկյան մեծ զարգացումի տեր, գործունյա, ձեռներեց երիտասարդ մըն է, որ հաջողած է կարճ ժամանակի մը մեջ ամենափայլուն դիրք մը ստեղծել իրեն համար, Փարիզի մեջ, ուր այսօր առաջնակարգ դիրք մը գրաված է։

«Այս բարեպատեհ ամուսնության առթիվ հարսին հայրը, ազնվաշուք Ղուկաս էֆենտի Կելկիթյան, որուն բարեսրտությունը ծանոթ է, երկու հարյուր ոսկի նվիրած է Ազգ. Հիվանդանոցին և հիսուն ոսկի ալ Գալֆայան որբանոցին։

«Խմբագրությունս իր ջերմ շնորհակալությունները կներկայացնե Կելկիթյան և Կոկիկյան գերդաստաններուն և երջանկություն կմաղթե նորապսակ ամոլին»։

Այս լուրը անակնկալ մը եղավ ամենուն համար։ Շատերը եկան շնորհավորելու Ղուկաս էֆենտին, որ ուրախ զվարթ ընդունեց

հյուրերը և նույնիսկ այնպես մը ցույց տվավ, որ իր դիտակցությամբը եղած էր ամեն բան։

— Էֆենտիմ,— կբացատրեր,— կիրակի օր մը, հարսնիքեն շաբաթ մը առաջ, հեռագիր մը եկավ փեսիս, որով իրեն անմիջապես Փարիզ երթալը անհրաժեշտ կդառնար, ամենակարևոր գործի մը համար։ Մտածեցինք որ, եթե նորեն մեկներ ու հարսնիքը հետաձգվեր, կարդ մը անհիմն տարաձայնություններու տեղի պիտի տրվեր. ուստի ըսինք, որ թող հարսնիքը Փարիզ կատարվի լմննա երթա, և երկուքը մեկեն կիրակի օր ճամփու դրինք... հիմա ասդին խոսք են հաներ, թե իբր թե մենն գաղտուկ փախեր են, մենք լուր չունինք եղեր, սանկ է եղեր, նանկ է եղեր. սխալ, էֆենտիմ, ամեն բան մեր կամքով, մեր որոշումով եղավ... արդեն փախչելու ի՞նչ կար, քանի որ շաբաթե մը պիտի ամուսնանային. միայն թե անակնկալ հեռագրին վրա պարտավորվեցանք այդպես ընել... ես մտածեցի, որ աղջկանս հարսանիքին ծախսելիք դրամս ազգին որբերուն ու աղքատներուն կուտամ, թող անոնք ալ քիչ մը խնդան։

— Շատ ազնիվ մտածեր եք, Ղուկաս էֆենտի,— կպատասխաներ բարեկամներեն մեկը,— երբ որ թերթին մեջ կարդացի ըրած նվիրատվությունդ «կեցցե Ղուկաս էֆենտի», ըսի մտքես... ամեն կարդացողներն ալ ինծի պես ծափ զարկին։

— Պարտականությունիս է էֆենտիմ, ունեցողը չունեցողին տալու է, ավետարանը այնպես կպատվիրե... պատիվը, բարոյականը, ճանաչող մարդը պետք չէ որ այս տեսակ բաներու մեջ պարտազանց գտնվի։

Եվ այսպես, Ղուկաս էֆենտի նորեն կհաղթանակեր ու կվերահաստատվեր իր «պատվավորության» մեջ։

Իրավ, կային մեկ քանիներ, որոնք եկեղեցիին բակը տեղի ունեցած գայթակղությունը իբրև անջնջելի անպատվություն մը կհամարեին վաճառականին համար, մանավանդ Շուշանիկի բռնաբարման անհերքելի իրողությունը, սակայն մեծամասնությունը ներողամիտ էր։

— Ճանըմ, իրար անցնելիք բան չկա,— կըսեին,— եղածը ինչ է, կար կարող աղջիկ մը ավրեր է, ի՞նչ կըլլա եղեր, ճանչցված մեկու մը, աղնվականի աղջիկ չէ յա... ան չավրեր նե՝ ուրիշը պիտի ավրեր... ասկե զատ նայինք իրա՞վ է, կարելի է գրպարտություն կընեն կոր։

— Ըստ իս, Ղուկաս էֆենտին դատապարտելի է, աղջիկը երեսի վրա ձգելուն համար, ըսենք որ խենթություն մը ըրեր, գլխե հաներ է, գոնե թող նյութապես օգներ, որ գործը ծածուկ մնար և ոչ թե անոթի ձգեր։

— Ես չեմ կարծեր, որ Ղուկաս էֆենտին այդպես երեսի վրա ձգած է աղջիկը, չկարդացի՞ք, մարդը հարյուր հիսուն ոսկին մեկեն նվիրեր է հիվանդանոցին, ատանկ առատաձեռն մարդը միթե այդ աղջիկը անոթի կձգե՞...

Ու այսպես, պակաս չէին փաստաբաններ, որոնք կճգնեին արդարացնել վաճառականը և անոր վարկը կրկին բարձրացնել։

Եթե կար մեկը, որ իրեն կատաղի հակառակորդը մնացած էր, այն ալ Տ. Միքիաս քահանան էր։ Երբ թերթին մեջ կարդացեր էր Ռոզիկի և Լևոնի ամուսնության լուրը, սարսափելի բարկության մը մեջ ինկած էր։

— Վայ, շունշանորդի,— գոչեր էր ինքն իրեն,— նորեն հաջողցուց...

Ու իրեն անհավատալի կթվեր ասիկա։ Ալ ինք կատարելապես վստահ էր թե ոևէ միություն անկարելի էր երկու երիտասարդներու միջև և նույնիսկ Սմսարյաններց հետ սկսած էր բանակցել, տիկին Անթառամի հետ ծրագրած խորհուրդը հաջողցնելու համար, որմե նյութական մեծ շահ մը ալ կակնկալեր։ Եվ իրողությունը այն էր, որ Սմսարյաններ տրամադիր երևցած էին իրենց աղջիկը տալու Լևոնին, որուն հարստությանն ու փայլուն դիրքին մասին իրենք ալ հատկապես տեղեկություններ ստացած էին։ Միայն թե՝ երիտասարդը մեջտեղ չի կար և այս բանը մտատանջության կմատներ քահանան։ Գիտեր, որ տիկին Անթառամ իր զավակեն երկտող մը առած էր, որով ողջ և առողջ ըլլալը և անակնկալ կերպով Պոլսեն մեկնելը կծանուցաներ, սակայն այդ տեղեկությունը շատ անբավական էր։

Ու կսպասեր ավելի լրացուցիչ լուսաբանության մը։ Մինչ Ռոզիկ իր մոր ուղղած երկտողին մեջ Լևոնին հետ ըլլալը գրած էր, երիտասարդը իր մորը գրած նամակին մեջ ոևէ ակնարկություն մը չէր ըրած նշանածին մասին, հետևաբար չէին դիտեր թե Ռոզիկ կընկերանա՞ր Լևոնին։

Ու. Տ. Միքիաս և տիկին Անթառամ իրենք իրենց՝ լավատես ենթադրության մը հանգած էին։

Կերևա որ, խորհած էին, Լևոն կիրակի օրվան տեղի ունեցած

խաղքութենեն խորապես հուզված՝ ամոթահար և սրտաբեկ՝ ձգած հեռացած էր Պոլսեն, ուզելով այս կերպով վերջ մը դնել իր ամուսնության խորհուրդին և անշուշտ մեկ քանի օրեն դրավոր կերպով իր որոշումը պիտի հայտներ աղջկան ծնողքին։

— Խեղճ զավակս,— կըսեր Անթառամ,— սիրտը տված էր այդ անշնորհք աղջկան և կերևա որ չուզեց հոս մնալով նշանտուքը ետ ընել ու առավ քալեց, վախնալով, որ եթե հոս մնա, խզելու քաջությունը չպիտի ունենա։

Նույն ենթադրությունը կըներ նաև Տ. Միքիաս քահանան։ Եվ երկուքն ալ անհամբեր կսպասեին բացատրական նամակի մը, լրջորեն վերսկսելու համար իրենց բանակցությունները Սմսարյաններց հետ։

Եվ ահա հանկարծ՝ քահանան՝ առտու մը ամուսնության լուրը կարդաց թերթին մեջ։

Ասիկա շանթի հարված մը եղավ իրեն համար։

— Վայ շունշանորդի,— կկրկներ,— նորեն հաջողեցավ։

Բայց մտածում մը ունեցավ.

— Գուցե,— ըսավ,— սուտ է այդ լուրը, Ղուկաս էֆենտիի կողմեն հնարված ոևէ թաքուն նպատակով մը։

Եվ որոշեց երթալ անմիջապես տիկին Անթառամը տեսնել, իմանալու համար թե տեղեկություն մը ունե՞ր լրագրին հաղորդած լուրեն։

— Լրագիրը կարդացի՞ր,— հարցուց, հազիվ թե սենյակեն ներս մտած էր ու զայն ողջունած։

— Ի՞նչ լրագիր, ես լրագիր չեմ կարդար,— պատասխանեց Անթառամ։

— Ուրեմն ես կարդամ և դուն մտիկ ըրե։

Եվ Տ. Միքիաս կարդաց Լևոնի ու Ռոզիկի ամուսնությունը ծանուցնող տողերը։

Երբ ընթերցումը լմնցուց.

— Ի՞նչ կըսես աստոր,— գոչեց,— ինծի այնպես կուգա, որ ծայրե ծայր սուտ է ու նորեն Ղուկաս էֆենտիի մեկ խաղն է։

— Սուտ չէ, ծայրե ի ծայր շիտակ է,— պատասխանեց Անթառամ ընկճված կերպարանքով մը։

— Ինչպե՞ս, դուն ալ մասնավոր լուր ունի՞ս,— գոչեց Տ. Միքիաս։

— Այո՛, երեկ իրիկուն նամակ առի զավակես, առ կարդա և գլխուս եկած փորձանքը իմացիր։

Ու Անթառամ թաշկինակը հանելով աչքերը սրբեց։ Քահանան առավ նամակը և բարձրաձայն կարդալ սկսավ.

«Սիրելի մայր,

Այս նամակս գուցե շատ ցավ պիտի պատճառե քեզի, բայց պետք է գիտնաս, որ եթե դեպքերը այս ընթացքը առին՝ մեծագույն պատասխանատուն դուն ես այս մասին։ Եթե քիչ մը լրջորեն մտածես, պիտի համոզվիս, որ ըսածս բացարձակ ճշմարտություն մըն է։ Եթե այն անհարկի ու անիմաստ հակառակությունը չունենայիր նշանածիս հետ, եթե էնթրիկան քահանայի մը միանալով, մեքենայություններ լարելու ետևե չըլլայիր, և եթե անօգուտ տեղը հակառակություններ չստեղծեիր Ղուկաս էֆենտիի հետ, այսօր մեր ամուսնությունը ամենայն կանոնավորությամբ և վայելչությամբ կատարված կըլլար։

«Սակայն դժբախտաբար այդպես չեղավ և ահա վրա հասավ Բերայի եկեղեցիին անորակելի խաղքությունը, որուն մեջ երկու ընտանիքներուն խայտառակության բաժինը հավասար էր իրարու, այնպես որ ոչ ես կրնայի Ռոզիկը դատապարտելի համարել, ոչ Ռոզիկը՝ զիս։

«Միայն թե հարկ էր այդ անել կացութենեն դուրս ելլել և ասոր համար երկու միջոց կար։ Մին՝ խզել մեր կապերը, մեր սերն ու երջանկությունը զոհել ուրիշներուն գործած հանցանքներուն, և կամ միասին հեռանալ մեր փոխադարձ սիրո վրա հիմնելով նոր կյանք մը, ջանալով մոռնալ ինչ որ դիպվածով լսած ու տեսած էինք։

«Եվ մենք այս վերջին միջոցը ընտրեցինք, որովհետև զիրար անկեղծորեն կսիրեինք և չէինք կրնար մեր սիրտերը փշրել ուրիշներու գործած մոլություններուն համար, որքան որ այդ ուրիշները մեր ծնողքները ըլլային։

«Ուստի ես և Ռոզիկ խույս տվինք Պոլսեն, ուր մեր միությունը անկարելի էր առանց նորանոր գայթակղություններու, Եկանք Փարիզ և երեկ իսկ մեր քաղաքային ամուսնությունը կնքեցինք օրինավորապես։ Այնպես որ Ռոզիկ այսօր իմ հարազատ կինս է և ոչ ոք կրնա մեզ բաժնել, և արդեն մոռցած ենք բոլոր այն տխուր բաները, որոնք մեզ հարկադրեցին այս վճռական միջոցին դիմելու։

«Հիմա կմնա վերջնական կարգադրություն մը ընել քու մասիդ, և այս կետն է, որ զիս նեղ դրության մը մեջ կդնե ու մտատանջության կմատնե։ Երկար մտածումներե ետքը ասս եզրակացության կհանգիմ, որ, թե քու և թե մեր երջանկությանը համար պետք է իրարմե հեռու ապրինք այլևս, ինչպես կուզեմ որ կինս ալ այլևս հեռու մնա իր հորմեն։

«Այս որոշումը տալով միտքս քեզի երեսի վրա թողուլ չէ բնավ, փառք աստուծո, նյութական հոգսեր չունինք մեր բարոյական տանջանքներուն հետ։ Ուստի ինչ որ քու ապրուստիդ համար պետք կտեսնես, պատրաստ եմ լի ու լի վճարելու, բացի ասկե, նամակիս հետ 2 հազար ֆրանքի չեք մը ալ կղրկեմ, որովհետև որոշապես չեմ գիտեր, թե քովդ դրամ մնացա՞ծ է թե ոչ։

«Ըստ իս, կարծեմ լավ կընես, որ տակավին ժամանակ մը մընաս Պոլիս, իսկ եթե չես ուզեր հոդ մնալ, կրնաս ուրիշ տեղ մը ընտրել հաստատվելու համար, նույնիսկ Փարիզ, եթե այդպես կփափաքիս, միայն թե պայմանով, որ զատ ապրինք, գոնե ժամանակ մը։

«Հուսալով, որ այս գրածներս լուրջ նկատողության կառնես և անոր համեմատ կպատասխանես, նամակս կվերջացնեմ։ Սիրալիր համբույրներով»։

Տ. Միքիաս քահանա երբ նամակին ընթերցումը ավարտեց, երկար փառավոր մորուքը շոյեց անգամ մը. հետո տիկին Անթառամի դառնալով հարցուց.

— Էյ, հիմա ի՞նչ պիտի ընես...

— Իրավ որ ես ալ չեմ գիտեր ընելիքս,— պատասխանեց Լևոնի մայրը,— ես ինչ կմտածեի և ինչ եղավ, ես տունս շենցնելու խորհուրդ ունեի, հիմա տունս քանդվեցավ, և ես ալ ասանկ պատին երեսին մնացի...

— Ուրեմն այսպես, Ղուկաս էֆենտի դրամօժիտ տալեն ալ ազատվեցավ— դիտել տվավ քահանան, առանց նկատողության առնելու Անթառամի տրտունջները.— վա՛յ անօրեն մարդ, վա՛յ բախտը այդ տեսակ մարդերու կօգնե միշտ, մինչդեռ մեզի պես պարկեշտ մարդիկը միշտ ձախորդությանց կմատնվին։

Եվ սակայն Տ. Միքիաս քահանա շուտով պարտություն խոստովանող մարդ չէր և հակառակ իրեն դեմ ցցված անհաջողություններուն՝ չէր ուզեր հուսահատիլ։

— Այդ քաղաքական ամուսնություն ըսածը,— շարունակեց,— ձաքս Հայաստանյաց Եկեղեցվո, բնավ կարևորություն չունի, և այս Ղուկաս էֆենտիի աղջիկը պարզապես Լևոն էֆենտիի հարճը կնկատվի։

— Եղածը եղած է, ատոնք ալ ասկե ետքը պարապ խոսքեր են,— պատասխանեց տիկին Անթառամ։

— Ինչ ըսել է պարապ խոսք,— պնդեց Տ. Միքիաս քահանան, որ իր մասնավոր նկատումները ուներ և կուզեր վերջին զենք մը ընել այդ քաղաքական ամուսնությունը։

— Ես այն գիտեմ, որ զավակս ձեռքես գնաց։

Հետո, հիշեց Լևոնին գրած նամակը, որուն մեջ ակնարկություններ կային Տ. Միքիասի մասին։

— Տեր հայր,— ըսավ դառնացած շեշտով մը,— այս եղածներուն մեջ դուն ալ բաժին ունիս... եթե ինծի այնչափ չզրգռեիր, գործը այստեղվանքը չպիտի հասներ։

— Վայ, հիմա ես եղա հանցավորը...— գոչեց քահանան,— բայց, տիկին Անթառամ, դեռ իրար դատապարտելու ժամանակը չէ, ամեն բան եղած լմնցած չէ... տակավին մեջտեղ ամուսնություն չի կա։

— Ճանրմ, դուն ալ, ասկե ետքը եթե ուզեն եկեղեցական պսակն ալ կրնան կատարել, Փարիզի մեջ մատուռ չի կա՞, քահանա չի կա՞...

— Ահա ճիշտ հոդ է խնդիրը,— գոչեց Տ. Միքիաս հաղթական կերպարանքով,— Փարիզի մեջ մատուռ ալ կա, քահանա ալ կա, սակայն ատոնք բավական չեն պսակը կատարելու համար...

— Իրավ որ, տեր հայր, միտքդ չեմ հասկնար կոր։

— Հիմա պիտի բացատրեմ, որպեսզի Փարիզի քահանան կարենա պսակը կատարել, պետք է, որ Պատրիարքարանեն արտոնվի, այսինքն հոսկե պաշտոնապես հաղորդե թե, աղջիկն ու մանչը ամուրի են և որովհետև ես ալ Կրոնական Ժողովի անդամ եմ ու Պատրիարքարանի մեջ բավական ազդեցություն ունիմ, արտոնության դեմ կրնամ շատ դժվարություններ հարուցանել և գործը ձգձգել...

— Ատոր արդյունքը ի՞նչ կըլլա։

— Ատոր օգուտը այն կըլլա, որ ժամանակ կշահինք... խնդիրը այդ ժամանակ օգտակարապես գործածվելուն վրա է։ Տես, տիկին Անթառամ, ես ինչ կխորհիմ. դուն հիմա զավկիդ նամակ մը

կգրես, կըսես, որ իր ըրածներուն կհամակերպիս, բայց իրմե հեռու չես կրնար ապրիլ, թե իր մեկնումեն ի վեր հիվանդ ես, թե ապահովաբար եթե այսպես բաժնված մնաս, քիչ ատենեն գերեզման պիտի իջնես։ Ուստի, կըսես, որ միտքդ դրած ես Փարիզ երթալ ու հաստատվիլ, քանի որ այդ մասին ինքն ալ չհակառակիր և իրմե կխնդրես, որ գոնե շաբաթը քանի մը անգամ գա քեզի տեսնելու... վերջապես հուզիչ նամակ մը կգրես, այնպես որ ինքն ալ կարդացած ատեն սիրտը տակնուվրա ըլլա։

— Արդեն ես ալ միտք չունիմ հոս մնալու, որովհետև անկարելի պիտի ըլլա այստեղ ապրիլս, բայց նորեն չեմ կրնար կոր ըմբռնել, որ իմ հոն երթալով ի՞նչպես պիտի կրնամ պսակը արգիլել։

— Խնդիրը ժամանակ շահելուն վրա է, տիկին Անթառամ, դուն մեյ մը հոն գնա, զավկիդ հետ մեղմորեն հարաբերություն հաստատե, հետը անուշ վարվե, վերջապես նորեն սիրտը շահե։ Այդ միջոցին, ես, ինչպես ըսի, ամեն բան կընեմ, որպեսզի եկեղեցական ամուսնությունը հապաղի, այդ մասին կրնաս վստահ ըլլալ։

— Բայց քանի որ Ռոզիկի հետ միասին կապրին, լավագույն չէ՞ որ օրինավորապես պսակվին քահանային ձեռքով։

— Չէ, տիկին, այնչափ ատեն, որ անպսակ մնան, ինչպես ըսի, ըստ Հայաստանյաց Եկեղեցվո, Ռոզիկ անոր հարճը կսեպվի, ուստի ուզած ատենը կրնա ձգել, մանավանդ որ քաղաքական ամուսնությունը կարելի է դյուրավ խզել, քանի որ Ֆրանսայի մեջ ամուսնալուծությունը ընդունված է...

— Բայց ի՞նչպես կուզես, որ ձգե, քանի որ այնքան կսիրե կոր և այս եղած խաղքություններեն ետքը, կրկին չկրցավ անկե բաժնվիլ ու ամեն բան անոր համար զոհեց։

— Սերը մշտապես բան մը չէ, ի՞նչ իրար պաշտող սիրահարներ քիչ ատենեն իրար ձգած են, միթե օրինակներ չի կա՞ն... մանավանդ, ընդհանրապես ասանկ սիրահարներ են, որ շուտով իրարմե կպաղին...

Ու Տ. Միքիաս քահանան ամբողջ ժամ մը խոսեցավ, դեպքեր և իրողություններ հիշեց, ըսավ թե ինչպես այնինչ երիտասարդը, որ սաստիկ սիրահարված էր այսինչ աղջկան հետ, իր ամուսնությենեն քանի մը ամիս ետքը, կինը երեսի վրա թողած ու փախած էր, ուրիշի մը հետ ամուսնանալու համար։ Թե ինչպես այնինչ

ընտանիքին աղջիկը, որ նույնպես հակառակ իր ծնողքին կամքին երիտասարդի մը սիրահարած ու հետը փախած էր, ամիս մը ետքը իր էրիկը լքելով՝ վերադարձած էր ծնողքին գիրկը և որ այժմ ամուսնալուծում մը կպահանջեր Պատրիարքարանի միջոցով։

Վերջապես հիշեց Կրոնական Ժողովի ու Դասաստանական Խորհուրդի առջև տեսնված դատեր, որոնց ամենքն ալ իր ըսածները կապացուցանեին։

Տիկին Անթառամ, կամաց-կամաց, տեղի տվավ։ Ընդունեց, որ կարելի էր Տ. Միքիասի ենթադրությունները. նույնիսկ կերպով մը մխիթարվեցավ, մտածելով որ գուցե պիտի կրնար նորեն տիրանալ իր զավկին և զայն գուցե կրկին ամուսնացնել իր բաղձանքին համեմատ։

Տեր Միքիաս քահանա տեսնելով որ Անթառամ կսկսեր համոզվիլ իր խոսքերուն, ալ ավելի ուժով սկսավ փաստաբանել, նորեն դիմեց շատ մը օրինակներու, կարգ մը ընտանեկան դաղտնիքներ պարզեց, անուններ ու թվականներ հիշեց, և վերջապես եզրակացուց՝ ըսելով.

— Ես հարյուրին հարյուր վստահ եմ, որ այս գործը պիտի կրնանք հաջողցնել ու կրկին մեր նպատակին հասնիլ, միայն թե ատոր գլխավոր պայմանը քու և զավկիդ մեջ սերտ հարաբերություն հաստատելն է։ Ես վաղը առտու կրկին կուգամ և միասին պետք եղած նամակը կգրենք ու կղրկենք, անկե ետքը սպասենք ու նպաստավոր պատասխան մը առնելուդ պես՝ շոգեկառք կնստիս ու Փարիզ կերթաս. ալ անկե ետքը մեր գործերու հատակագիծը կպատրաստենք։ Ես ան Ղուկաս էֆենտիին խաղ մը խաղամ, որ ինքն ալ մատ խածնե ու տեսնե թե՝ ինչ մարդ է Տ. Միքիաս քահանան։

Եվ այս սպառնալիքը ընելե ետքը, տեր հայրը մնաս բարով ըսավ ու մեկնեցավ հետևյալ առտու գալու խոստումով։

ԳԼՈՒԽ ԺԲ

Տ. Միքիասի և տիկին Անթառամի տեսակցութենեն ետքը երկու ամիս անցած էր։ Լևոնի մայրը արդեն իսկ վերադարձած էր Փարիզ և հաստատված առանձին տան մը մեջ, ուր երբեմն կընդուներ իր զավկին այցելությունը։

Բերայի մեջ այլևս չէր խոսվեր Ս Երրորդության եկեղեցիի

բակին մեջ տեղի ունեցած գայթակղության, և Ռոզիկի ու Լևոնի փախուստին և ամուսնության մասին։ Նոր դեպքեր ու գայթակղություններ մոռցնել տվեր էին ամենքը և գրեթե ոչ ոք կզբաղեր Կելկիթյանենց հետ։

Եվ ասիկա շատ գոհ կթողուր Ղուկաս էֆենտին, որ ինքնիրեն կմտածեր. «վերջապես բամբասանքն ազատվեցանք ու ալ ասոր անոր բերնին ծամոց չենք ըլլար»։

Այժմ միակ հոգ մը ուներ, այն է Ռոզիկի և Լևոնի մասին Փարիզեն ուղված պաշտոնաթղթերը առնել և ղրկել իր փեսին, որպեսզի կարելի ըլլար կատարել նաև եկեղեցական պսակը։ Այդ գործին համար Ղուկաս էֆենտի իր գրագիրներեն մեկը սահմանած էր, որ շաբաթը քանի մը անգամ Պատրիարքարան կերթար, կուգար, առանց պետք եղած թուղթերը ձեռք ձգելու։

Ամեն անգամ մեյ մեկ նոր դժվարություն, նոր ձևակերպումներ եբեան կելլեին, որ գործը կհապաղեցներ։ Առաջին մեկ քանի շաբաթները Ղուկաս էֆենտի համբերեց, հետո սկսավ բարկանալ և իր գրագրին ծանր հանդիմանություններ ուղղեց, զայն իբրև ծույլ, անկարող ամբաստանելով։

Խեղճ գրագիրը չէր գիտեր ինչպես ելլեր գործին միջեն։ Ինքն ալ իր կարգին բարկացավ, սկսավ խստորեն խոսիլ Պատրիարքարանի պաշտոնյաներուն հետ, որոնք հապաղման պատասխանատվությունը իրարու վրա կբեռնեին։

— Էֆենտիմ, արձանագրության դիվանը պետք է, որ նախ՝ թուղթը վավերացնե։

— Արձանագրության դիվանը մինչև որ ծննդյան վկայագիրը ձեռք չունենա, բան մը չկրնար ընել։

— Բայց վկայագիրը բերինք։

— Այո, սակայն մխթարը չէր կնքած։

— Թաղական Խորհուրդը վավերացուց։

— Այդ բավական չէ։

— Աղջկան ամուսնացած չըլլալուն վկայագիրը ո՞ւր է։

— Այդ վկայագիրը հղված է ուր որ անկ է։

— Ո՞ւր...

— Այդ մեր գիտնալիք բանը չէ, Փոխանորդության դիմեցեք։

— Եղբայր, քառասուն անգամ, գացի եկա, որոշ պատասխան մը չտվավ։

— Ի՞նչ կրնեն կոր։

— Պարտ ու պատշաճը տնօրիներ են եղեր։

— Ալ ի՞նչ կուզես։

Ու այսպես գրագիրը կերթար կուգար, առանց գործն ավարտելու։

Օր մը սակայն տիկին Թագուհի ստիպողական նամակ մը ստացավ Ռոզիկեն, որով կրկին ու կրկին կխնդրեր պ. շտոնաթուղթերը անմիջապես իրենց ղրկել, որովհետև Լևոն և ինք ամիսի մը չափ զբոսական ուղևորություն մը պիտի ընեին և Փարիզեն բացակա պիտի մնային և Լևոն կուզեր, որ մեկնելե առաջ պսակը կատարվեր լմննար։

«Մինչև շաբաթ մը անպատճառ թուղթերը ղրկեցեք», կավելցներ Ռոզիկ իր նամակին մեջ։

Տիկին Թագուհի Ղուկաս էֆենտիի ցույց տվավ աղջկանը նամակը, որ վճռաբար ըսավ.

— Վաղը անպատճառ ես երթամ, որ այս գործը լմննա, մեր գրագիր օլաճախ ավանակը չպիտի կրնա ընել...

Եվ իրավ ալ հաջորդ օրը անձամբ գնաց Պատրիարքարան և ուզեց Փոխանորդ հայրը տեսնել։

Ղուկաս էֆենտիին այս անակնկալ այցելությունը իրարանցում մը առաջ բերավ բարապաններուն մեջ, որոնք փութացին զինք առաջնորդել Փոխանորդարան։

Փոխանորդ հայրն ալ զարմացած շփոթված ոտքի ելավ, երբոր տեսավ հարուստ վաճառականին իր սենյակը մտնելը։

— Հրամմեցեք, Ղուկաս էֆենտի, այս ի՞նչ պատիվ է, որ մեզի կրնեք։

Հետո դռնապանին դառնալով.

— Սուրճ բերեք,— հրամայեց։

— Էֆենտիմ, գործ մը ունինք տե, անոր համար եկա,— բացատրեց Ղուկաս էֆենտի։

— Հրաման ըրեք, կատարենք անմիջապես,— ըսավ փոխանորդը։

— Ճանրմ, երկու ամիս է աղջկանս ու Լևոն Կոկիկյանի մասին վկայագիր պիտի տրվի, որ նախապես ամուսնացած չեն և ասոր համար գրագիրս քառասուն անգամ եկավ գնաց, տակավին չտվիք, սա ի՞նչ խաղություն է...

— Կներեք, էֆենտիս, կհիշեմ, որ այդպիսի գործողություն մը

կատարեցինք և կզարմանամ, որ տակավին թուղթը ձեզի չէ հասած, կեցեք, հիմա կհասկնանք։

Եվ զանգակը հնչեցուց։

Բարապան մը երևցավ։

— Պարոն Տիրանը հոս կանչե,— ըսավ փոխանորդը։

Քիչ մը ետքը երիտասարդ գրագիր մը երևցավ.

— Ի՞նչ եղավ օրիորդ Ռոզիկ Կելկիթյանի վկայագիրը,— հարցուց փոխանորդը։

— Արձանագրվեցավ, և հետո պարոն Միհրանին հանձնեցի... չեմ գիտեր թե ինչ ըրավ։

— Լավ, պարոն Միհրանին ըսե, որ հոս գա։

Քիչ հետո եկավ Միհրանը, որ հայտնեց թե թուղթը ընդօրինակվելե ետքը, տրված էր պարոն Սիմոնին։ Հարկ եղավ պարոն Սիմոնը կանչել, որ պատասխանեց, թե վկայագիրը կնքվելե ետքը, մատուցված էր բարապան Սեպուհ աղային, և այսպես քննությունը առաջ տանելով, վերջապես ստուգվեցավ, որ պաշտոնաթուղթերը Կրոնական Ժողովի քարտուղարին քովն են։

— Հոս կանչեցեք սա Ատոմ վարդապետը,— հրամայեց կրկին փոխանորդ հայրը։

Կրոնական Ժողովի քարտուղար Ատոմ Վարդապետը ներկայացավ փոխանորդին։

— Վարդապե՛տ,— գոչեց փոխանորդը,— ինչո՞ւ համար Ղուկաս էֆ. Կելկիթյանի վերաբերյալ վավերաթուղթերը շաբաթներե ի վեր քովդ կպահես ու տեղը չես հանձներ, շուտով գնա առ բեր։

Կրոնական Ժողովի քարտուղարը ամենայն պաղարյունով պատասխանեց.

— Անկարելի է, հայր սուրբ։

— Ինչպե՞ս անկարելի է։

— Որովհետև Տ. Միքիաս քահանան բոլոր թուղթերը առավ քովես, ըսելով, որ կատարված գործողություններուն մեջ կարգ մը թերություններ կան, որոնք հարկ է ուղղել։

— Տ. Միքիաս քահանա՞ն,— գոչեց Ղուկաս էֆենտի, նստած տեղեն վեր ցատկելով։

— Այո, բուն իսկ տաներեցը,— պատասխանեց քարտուղարը։

— Ո՞րչափ ժամանակ է, որ թուղթերը առած է...

Քարտուղար վարդապետը պահ մը մտածեց և հետո ըսավ.

— Երեք շաբաթ մը կա, գուցե ամիս մը։

— Վա՜յ սոսկալի արարած, դեռ իր մեքենայություններեն վազ չէ անցեր,— մոմոաց Ղուկաս էֆենտի, բարկութենեն դողահար շրթունքներով։

Փոխանորդ հայրը ինքն ալ գայթակղած երևույթ մը առավ։

— Զարմանալի բան. Կրոնական Ժողովի անդամ մը ի՞նչ պետք ունի այդ տեսակ պաշտոնաթուղթերու խառնվելու, նույնիսկ ի՞նչպես կըլլա, որ այդ թուղթերը քու ձեռքդ կգտնվին։

— Տեր Միքիաս ըսավ, որ այդ պաշտոնաթուղթերը փնտռեմ, գտնեմ և իրեն հանձնեմ... եթե ուրիշ մը ըլլար ուզողը, կարելի է դիմադրեի, բայց ի՞նչպես կրնայի Տ. Միքիաս հոր ըսածը չկատարել։

— Էյ, հիմա ի՞նչ պիտի ընենք,— հարցուց Ղուկաս էֆենտի, հետզհետե ավելի բորբոքած։

— Վաղը Կրոնական Ժողովը նիստ պիտի գումարե, հետևաբար Տ. Միքիաս ալ հոն կըլլա և իրմե բացատրություն մը կուզենք։

— Ճանըմ, բացատրություն չէ իմ ուզածս, ես թուղթերը կուզեմ ուրիշ խոսք չեմ հասկնար, վաղը պետք է, որ թուղթերը ինձի հանձնվին, եթե ոչ տակնուվրա կընեմ ամեն բան, գիտցած ըլլաք...

— Մի բարկանաք, Ղուկաս էֆենտի, վաղը ամեն բան կկարգադրենք ապահով եղեք...

— Ես վաղը կրկին գրագիրս պիտի ղրկեմ և եթե առանց պաշտոնաթուղթերը բերելու վերադառնա, ալ դուք գիտեք...

Եվ այս անորոշ սպառնալիքին տակ թողլով փոխանորդն ու Կրոնական Ժողովի քարտուղարը, վաճառականը ոտքի ելավ և բարկաճայթ դնացքով մը առավ քալեց։

Հետևյալ օրը, երբ Տ. Միքիաս քահանան Պատրիարքարան եկավ, փոխանորդը զայն իր քով հրավիրեց և պատմեց Ղուկաս էֆենտիի այցելությունը և անոր բուռն պահանջը՝ թուղթերը նույն օրն իսկ ստանալու մասին։

— Դեռ վեց ամիս ալ կրնա երթալ գալ,— պատասխանեց Տ. Միքիաս հանդարտությամբ,— և ասոր համար բարկանալու տեղի չկա։ Այդ տեսակ գործերը բարկությամբ չեն ըլլար, այլ օրինավորությամբ։

— Բայց կարծեմ այդ գործը ձեզի չի վերաբերիր։

— Քանի որ ապօրինություն կա, իմ պարտքս է զայն մատնանիշ ընել, ուր որ անկ է։

— Սակայն ես խոստացա անպատճառ այսօր հանձնել թուղթերը։

— Սիրալ եղ ըրեր, հայր սուրբ, նախ որ թուղթերը քովս չեն, ապրեր զատ, նույնիսկ եթե քովս ըլլային՝ ձեզի չէի կրնար հանձնել։ Այդ մասին արդեն հատկապես պիտի խոսիմ Սրբազան Պատրիարք Հոր հետ։

— Բայց ես ի՞նչ պատասխան տամ հիմա, երբոր Ղուկաս էֆենտիի գրագիրը գա...

— Կրսեք, որ տակավին պետք է սպասեն, որովհետև կարգ մը անհրաժեշտ գործողություններ կան կատարվելիք։

Եվ Տ. Միքիաս քահանան իր փառավոր մորուքը հաղթականորեն շոյելով, ուրքի ելավ ու մեկնեցավ։

Ինչպես առաջուց կարգադրված էր, իր ու Անթառամի միջև հաղորդակցությունները կանոնավորապես կշարունակվեին։ Գրեթե ամեն շաբաթ Տ. Միքիաս նամակ կստանար Լևոնի մորմեն և ինքն ալ կանոնավորապես կպատասխաներ։

Տիկին Անթառամի նամակները թեև շատ հուսատու չէին, այսուհանդերձ քահանան չէր հուսահատված տակավին և միշտ անակնկալ պատահարի մը կսպասեր, որպեսզի հաղթանակը տանի։

— Խնդիրը ժամանակ շահելուն վրա է,— կհեղհեղեր ինքնիրեն։

Բայց Փարիզեն ընդունած վերջին նամակը քիչ մը ավելի խոստմնալից էր։

Տիկին Անթառամ կգրեր, թե զավակը ավելի մտերմություն ցույց կուտար։ Թե պսակի մասին ոչ ակնարկություն չէր ըրած իրեն և այդ մասին անտարբեր կթվեր։

Բոլոր ասոնք, որքան ալ անորոշ ըլլային, մեծ կարևորություն կտային Տ. Միքիասի աչքին, որ մեկ բառ մը ամբողջ հոդեբանություն մը գուշակելու չափ խորամտություն ուներ։

Եվ տիկին Անթառամի այդ անորոշապես հուսատու նամակեն քաջալերված՝ Տ. Միքիաս միտքը դրած էր, ամեն գնով, պաշտոնաթուղթերը պահել իր քովը։

Երբ Ղուկաս էֆենտիի գրագիրը իրիկվան դեմ ներկայացավ Փոխանորդին, այս վերջինը հուսահատ շարժումով մը ըսավ.

— Տղաս, այդ թուղթերը տակավին չպիտի կրնանք տալ, եթե կուզես մեյ մը Տ. Միքիասին դնա, անկե ուզե, անոր քովն են, ես ուզեցի, թեև, բայց չկրցա առնել։

— Սակայն խոստացեր եք այսօր անպատճառ հանձնելու...

— Խոստացա, այո, բայց, խոստումս չեմ կրնար գործադրել, ահա ճշմարտությունը. ինչ որ կուզես ան ըրե.

— Բայց Փոխանորդ հայր...

— Գնա՛, Տ. Միքիասը տես։

Գրագիրը հուսահատ դուրս ելավ և գնաց Տ. Միքիասի քով, որ տակավին Պատրիարքարան կգտնվեր։

— Տեր հայր,— ըսավ,— սա թուղթերը շնորհ ընեիք։

— Ո՞ր թուղթերը,— հարցուց քահանան խստորեն։

— Սա օրիորդ Կելկիթյանի և Լևոն էֆենտի Կոգիկյանի ամուսնացած չըլլալուն վերաբերյալ պաշտոնաթուղթերը։

— Անոնք դեռ պիտի քննվին։

— Ե՞րբ կլմննա այդ քննությունը։

— Ո՞վ գիտե, ամիսե մը, գուցե վեց ամիսեն։

— Բայց Ղուկաս էֆենտի այսօր անպատճառ կպահանջե կոր այդ թուղթերը, ես հիմա ի՞նչ ըսեմ իրեն։

— Ղուկաս էֆենտիի պահանջումովը գործը չի լմննար, ամեն բան օրենքով ու կանոնով կըլլա... Ղուկաս էֆենտի կրնա պահանջել և մենք ալ կրնանք չի տալ, մինչև որ ամեն ինչ օրինավորության սահմանին մեջ կատարվի. ահա տղաս, ասանկ կրսես։

Խեղճ գրագիրը ճարահատ վերադարձավ գրասենյակ և իր էֆենտիին հաղորդեց Տ. Միքիասի խոսքերը։

Վաճառականը աննկարագրելի բարկության մը մեջ ինկավ, հայհոյեց իր գրագիրին երեսն ի վեր ու զայն դուրս վռնտեց սենյակեն։ Հետո, սկսավ գրասենյակին մեջ վեր վար շրջիլ, գերագրգռված վիճակի մեջ։

— Վայ շունշանորդի,— կրսեր կատաղիորեն, ակռաները կրճտելով,— վայ շունշանորդի մարդ, ինքն է բոլոր այս հապաղումին պատճառը, ինքն է, որ երկու ամիսե ի վեր այսպես մեզ կխաղցնե կոր... բայց ինչո՞ւ համար, ի՞նչ է իր նպատակը, պարզապես գեշությո՞ւն ընելու, վրե՞ժ լուծելու համար։ Չէ՛, Տ. Միքիասը որքան ալ ոխակալ ու քինախնդիր, միմիայն չարության համար սանկ բան չըներ։ Գործին մեջ անպատճառ հաշիվ մը, մութ մեքենայություն մը կա...

Եվ որովհետև, ինչպես գիտենք Ղուկաս էֆենտի նեղ պարագաներու մեջ չէր վարաներ վճռական որոշում մը տալու, ինքնիրեն ըսավ.

— Այս իրիկուն կելլամ իր տունը կերթամ և երես երեսի կտեսնվիմ, նայիմ ի՞նչ է սրվոր միտքը։

Այս որոշումով հանդարտած, վաճառականը սկսավ գործերով զբաղիլ։

Իրիկունը ուշ ատեն թյունելեն կառք մը նստավ և ուղղակի Ս. Երրորդություն եկեղեցին երթալով՝ բարապանը առավ հոնկե, որպեսզի զինքը քահանային տունը առաջնորդե, քանզի առաջին անգամ էր, որ իր տաներեցին կայցելեր ու չէր գիտեր տունին ուր գտնվիլը։

Տ. Միքիաս արդեն վերադարձած, հագված ու երկար մուշտակ մը հագած, գրասեղանին առջև կաշխատեր, երբոր երեցկինը եկավ և իմաց տվավ, որ Ղուկաս էֆենտին եկած էր ու զինքը տեսնել կուզեր։

— Հոս հրամեցեք,— ըսավ Տ. Միքիաս առանց տեղեն շարժելու, հետո գլուխը ծռեց թերթի մը վրա և սկսավ կարդալ, խիստ զբաղյալ երևույթ մը առնելով։

Ղուկաս էֆենտին ներս մտավ սենյակեն, մինչ քահանան, առանց գլուխը վեր առնելու, կշարունակեր գրել կեղծել։

— Բարև տեր հայր,— ըսավ վաճառականը։

Տ. Միքիաս գուխը վեր առավ, ոտքի ելավ և պատասխանեց։

— Բարի եկաք, Ղուկաս էֆենտի, այս ի՞նչ անակնկալ պատիվ է, որ կնեք մեզի, հրամմեցեք և թիկնաթոռին մեջ նստեցեք։

Եվ ցույց տվավ գրասեղանին քով դրված թիկնաթոռ մը, հետո երեցկինին դառնալով, որ դռան մեջ կեցած էր, ըսավ.

— Մեզի երկու հատ աղվոր սուրճ եփել տուր և ղրկե։

Երբ առանձին մնացին՝ Ղուկաս էֆենտի սիկարեթի տուփը հանեց, հատ մը քահանային տվավ, հատ մըն ալ ինքը վառեց և ըսավ.

— Տեր հայր, ժամանակե մը ի վեր աս քու բռնած ընթացքդ բան մը չեմ հասկնար կոր...

— Ո՞ր ժամանակեն ի վեր,— հարցուց Տեր Միքիաս միամիտ դեմքով մը։

— Ճանըմ, աս մեր Ռոզիկին նշանվելու, կարգվելու խնդիրներեն ի վեր։

— Ի՞նչ տարօրինակ բան տեսաք իմ ընթացքիս մեջ, Ղուկաս էֆենտի։

— Ես կսպասեի, որ իբրև մեր տաներեցը, դուն ալ քու կողմեդ ձեռքեդ եկածը պիտի ընեիր գործը դյուրացնելու համար, մինչդեռ առաջին օրեն սկսար մեքենայություններ ընել և նույնիսկ այդ նշանտուքեն ի վեր այցելություններդ ալ դադրեցուցիր, անջուշտ մեզի գալու երես չունենալուդ համար։

— Այդ ի՞նչ խոսք է, Ղուկաս էֆենտի, դուք էիք, որ առաջին օրեն ուզեցիք զիս հեռու պահել Ռոզիկի ու Լևոն էֆենտիի ամուսնության գործեն, ես ալ տեսնելով, որ դուք հեռու կփախչիք, պետք համարեցի չմոտենալ, որովհետև ես մյուս քահանաներու պես չեմ, արժանապատվություն ունիմ, և երբ կտեսնեմ, որ զիս չեն ուզեր, ինքզինքս բռնի ընդունիլ չեմ աշխատիր։ Այս բնությունս ճանչցած ըլլալու էիք, քանի որ այնքան տարիներե ի վեր ձեր տաներեցն եմ։

— Ինչ որ է, ենթադրենք որ մենք ալ պակասություններ ունեցանք, բայց դուն իբրև եկեղեցվո պաշտոնյա, իբրև քահանա, պետք էր որ ներողամիտ ըլլայիր և ոչ թե վրեժ լուծելու ետևե իյնայիր։

— Քավ լիցի,— գոչեց Տ. Միքիաս,— ես երբեք վրեժ լուծելու ետևե չեմ եղած և արդեն վրեժ լուծելիք ալ բան չի կա, ընդհակառակը ներողամիտ գտնված եմ և եղածներն ալ արդեն մոռցած եմ։

— Ուրեմն ինչո՞ւ այս վերջին դժվարությունները կհարուցանես...

— Ի՞նչ դժվարություն...

— Ճանըմ, աս պաշտոնական թուղթերը ինչո՞ւ ամիս մըն է քովդ պահեր, չես ի տար որ տեղը ղրկենք։

— Ես այդ մասին դժվարություն հարուցանե՞մ. բնա՛վ երբեք, սրբազան պատրիարքն է, որ հարկ տեսած է նոր քննություն մը կատարել տալ մյուսյու Լևոն Կոկիկյանի մասին, և ասիկա ձեր օգտին համար։

— Ի՞նչ քննություն, ի՞նչ օգուտ,— հարցուց Ղուկաս էֆենտի, զարմացած։

— Կեցեք որ բացատրեմ,— շարունակեց Տ. Միքիաս քահա-

նան։— Նախ պետք տեսնվեցավ գրել Գաղղիո կառավարության, որպեսզի մեզ իմացնե թե հիշյալ Լևոն Կոկիկյանը Փարիզի կամ Ֆրանսայի որևէ մեկ քաղաքին մեջ նախապես ուրիշի մը հետ քաղաքական օրենքով ամուսնացա՞ծ է թե ոչ։ Երկրորդ, ուրիշ ծանրակշիռ խնդիր մը կա։ Կհիշե՞ք որ Ս. Երրորդություն եկեղեցիի բակին մեջ տիկին Անթառամի հետ ունեցած բանավեճին միջոցին, բարկության վայրկյանի մը մեջ շատ ծանր հայտնություն մը բրիք...

— Ի՞նչ հայտնություն...

— Ըսիք թե մյուսյու Լևոնը Անթառամի ամուսնուն հարազատ զավակը չէր, այլ ապօրինի հարաբերության մը ծնունդը..

— Ճանքմ, բարկության մեջ պոշ խոսք մըն էր բերնես փախավ... Անթառամը ինծի նախատեց նե՝ ես ալ անոր անվայել խոսքեր ըսի...

— Ճի՛շտ ես ալ նույն օրը այդպես խորհեցա ու բնավ կարևորություն չտվի փոխանակված խոսքերուն, միայն թե դժբախտաբար, ձեր ըսածները ճիշտ են եղեր...

— Ճշմարի՞տ են եղեր,— գոչեց Ղուկաս էֆենտի, գույնը թեթևապես նետած,— ատ ո՞վ կըսե կոր։

— Դիպվածով իմացանք, հանգուցյալ ոսկերիչ Նիկողոս աղայի մտերիմներեն, մասնավորապես Հակոբ աղա կըսեն՝ ծերուկ մը կա, անիկա մանրամասն պատմեց։

Վաճառականը հետզհետե շփոթած՝ Տ. Միքիսի երեսը նայեցավ։ Քահանան չէր ստեր, միայն թե դիպվածով չէր իմացած, այլ անձամբ մանրակրկիտ քննություն մը բացած էր, խիստ գաղտնապահորեն, և կրցած էր մեկ քանի ծեր ոսկերիչներ ու մանավանդ Հակոբ աղան խոսեցնելով տեղեկություններ քաղել։

— Ես այն օրը կարծեցի թե,— շարունակեց Տ. Միքիսս,— դուք պարզապես կզրպարտեիք տիկին Անթառամը և շիտակը շատ ցավ զգացի ձեր ըրածին և անվայել գտա այնպիսի արարք մը ձեզ նման անձնավորության մը կոդմե, բայց, հետո, ափսոս, տեսա, որ իրավունք ունիք եղեր և ձեր ըրածը ոչ թե զրպարտություն, այլ բացարձակ ճշմարտություն է։

— Բայց ատոնք կարևորություն չունին, անցած գացած բաներ են, տե՛ր հայր. նույնիսկ եթե ճշմարիտ ալ ըլլա, ի՞նչ կարեվորություն ունի, քանի որ այսօր Լևոն Կոկիկյանը իրրև Նիկողոս աղայի հարազատ զավակը ճանչված է ու անշուշտ այդպես ալ արձանագրված է։

— Ճիշտ նույնը դիտել տվի ես ալ, սակայն այդ կետին մեջ կսխալիք։ Կերևա, որ հանգուցյալ Նիկողոս աղան այնքան վստահ է եղեր այդ զավակը իրմե չըլլալուն և իր պատվույն ալ այնքան նախանձախնդիր, որ երբեք չէ ուզած իբրև իր զավակը ճանչնալ, և աղան ծնելեն ետքը բաժնված է կնոջմեն և քիչ հետո սրտին ցավեն մեռած, իսկ կինը՝ Անթառամ՝ զավակը առած ու Փարիզ, իր սիրականին, այսինքն տղուն բուն հորը քով գացած հաստատված է։ Այնպես որ Լևոն Կոկիկյանի ծննդյան և մկրտության արձանագիրը անկարելի եղավ գտնել։ Եվ այժմ պատրիարքարանը չկրնար ապօրինի կերպով վկայել Լևոնի համար թե՝ Նիկողոս Կոկիկյանի որդին է, քանի որ այդ մասին ոևէ պաշտոնական արձանագրություն չի կա, կտեսնե՞ք, թե ի՞նչ պելալը գործ մըն է այս... Ես մինչև հիմա ձեր արժանապատվության համար խնդիրը ծածկեցի, բայց եթե անպատճառ թուղթերը պահանջելու ելլեք, հավանորեն ամեն բան մեջտեղ պիտի ելլա։

Քահանան կստեր, երբ կհաստատեր թե Լևոնի ծննդյան և մկրտության արձանագրությունը չէր գտնված և թե Նիկողոս աղա զայն չէր ուզած իբրև իր հարազատ զավակը ճանչնալ։

Սակայն Ղուկաս էֆենտի հավատաց իր տաներեցին խոսքերուն, այնքան բնականորեն պատմած էր եղելությունները, և իրապես խռովեցավ։

Մինչև հիմա պատահած դայթակղություններուն վրա այս նոր դայթակղությունը վճռական հարված մը պիտի տար իր համբավին, իր ընտանեկան բարոյական շպարին։ Հետո, զգաց, թե այդ ամենուն մեջ Տ. Միքիսի մատը կար, ան խառնած խառնշտկած էր գործը, ան հետամուտ եղած էր այդ անցյալը պրպտելու և վերջապես երևան հանել իրողություններ, որոնք կրնային ծածուկ մնալ։

Հիմա ինք իր տաներեցին ճանկին մեջն էր. եթե ընդվզեր, եթե ուզեր ճակատ առ ճակատ կռվիլ անոր դեմ, ապահովաբար Տ. Միքիսս մեջտեղ պիտի հաներ ամեն բան և իր անունը անգամ մըն ալ պիտի խայտառակվեր։

Եվ անմիջապես իր բռնելիք ընթացքը որոշեց։ Հարկ էր տեղի տալ։

— Այս իրողությունները ամենքն ալ իմացա՞ն Պատրիարքարանին մեջ,— հարցուց։

— Ընդհակառակը, ոչ ոք գիտե,— պատասխանեց քահանան,— Պատրիարքարանի մեջ, ի բաց առյալ ես ու ինծի հետ ուրիշ քահանա մը, որ այս գործերուն հետամուտ եղավ։

— Ուրեմն կարելի չէ՞ խնդիրը մարել և որևէ կերպով պաշտոնաթուղթերը ձեռք բերել, առանց հին բաները մեջտեղ հանելու։

— Բայց ինչպե՞ս, Ղուկաս էֆենտի։

— Դրամով, տեր հայր, դրամով,— ըսավ վաճառականը բացեի բաց։

Տ. Միքիաս անմիջապես չպատասխանեց, իր փառավոր մորուքը շոյեց պահ մը, և հետո ըսավ.

— Ղուկաս էֆենտի. կտեսնամ որ անել կացության մը մատնված եք, և որչափ ալ մեջերնիս խնդիրներ անցած ըլլան, չեմ ուզեր ձեզ այդ նեղ դրության մեջ թողուլ և ձեռքես եկածը կընեմ, թե իբրև բարեկամ և թե իբր տաներեց...

— Շնորհակալ եմ,— փութաց պատասխանել վաճառականը։

— Բայց համբերություն պետք է, այդ տեսակ գործերը մեկ օրեն մյուսը կարելի չէ գլուխ հանել, բավական սպասեցիք, քիչ մըն ալ սպասելու եք, մանավանդ շատ աղմուկ հանելու չեք, Պատրիարքարան, Փոխանորդարան իրար անցնելու չեք... միայն թե կարծեմ, նույնիսկ դրամ տալով մեկ քանի մարդոց դյուրավ չպիտի կրնաք հաջողիլ... տարբեր բան, եթե կարենանք զիրենք լի ու լի գոհացնել։

Ղուկաս էֆենտի կռահեց Տ. Միքիասի միտքը և պատասխանեց.

— Տեր հայր, կարճ խոսք մը ըսե՞մ, քեզի տասնհինգ օր ժամանակ և երկու հարյուր ոսկի, ատ թուղթերը քու ձեռքովդ պատրաստել տուր և ինծի բեր. հարյուր ոսկին, վաղը գրասենյակ հանդիպե, տամ, մնացած հարյուր ոսկին ալ թուղթերը բերած օրդ կառնես, եղա՞վ, համաձայնեցա՞նք։

Հաղթական նշույլ մը շողաց քահանային աչքերուն մեջ։ Փառավոր մորուքը կրկին շոյեց պահ մը և ըսավ.

— Լավ, այս ծառայությունը պիտի մատուցանեմ քեզի, ցույց տալու համար, որ ինձ հետ թշնամաբար վարվողին ես ալ բարեկամությամբ կփոխարինեմ։

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, ալ անցածը մոռնանք և

նոր բարեկամ ըլլանք իրարու,— պատասխանեց Ղուկաս էֆենտի ոտքի ելլելով։

— Ես միշտ բարեկամ եմ ձեզի։

— Վաղը չմոռնաս գալու։

— Անհոգ եղիր, անպատճառ կուգամ։

— Թուղթերն ալ ջանա, որ մինչև երկու շաբաթ անպայման պատրաստ ըլլան։

— Ձեռքես եկածը չեմ խնայեր։

Ղուկաս էֆենտի քահանային ընկերակցությամբ դուրս ելավ սենյակեն։ Սանդուխին գլուխը վերջին անգամ մըն ալ ողջունեցին զիրար խիստ սիրալիր կերպով, հետո Տ. Միքիաս վերադարձավ իր սենյակը, որ թե իբր ննջարան և թե իբր աշխատանոց կծառայեր իրեն։

— Վերջապես նախեն եկա,— մտածեց ինքնիրեն հաղթական ժպիտով մը,— մեկ կողմեն երկու հարյուր ոսկի բրցուցի իրմե, մյուս կողմե պաշտոնաթուղթերը պահանջելե վազ անցուցի զինքը... հիմա իմ ձեռքս է, կրնամ զինքը մեկ քանի ամիս խաղացնել և մինչև այն ատենն ալ աստված ողորմած է, հիմա նստինք ու տիկին Անթառամի նամակին պատասխանը գրենք։

Եվ անցավ իր գրասեղանին առջև։

Քահանան ուրախ տրամադրության մեջ էր. հետևաբար հուսալից նամակ մը գրեց Լևոնի մորը, զայն վստահացնելով, որ պսակի կատարման համար անհրաժեշտ եղող թուղթերը տակավին պիտի կրնար քանի մը ամիս հապաղեցնել։ Սակայն հարկ էր օգուտ քաղել այդ ժամանակամիջոցեն, որովհետև հավիտյան կարելի չէր երկարաձգել խնդիրը և եթե պսակը կատարվեր, ալ ամեն հույս հարկ էր կտրել.

«Ջանա ժամ առաջ պաղություն մը հառաջ բերել Ռոզիկի ու զավակիդ միջև,— կխրատեր Տ. Միքիաս իր թղթակցին,— քանի որ այժմ պ. Լևոնը սկսած է ավելի հաճախակի այցելել քեզի, ինչ որ ցույց կուտա թե իր վրա ունեցած ազդեցությունը չես կորսնցուցած։ Նույնիսկ այս նպատակին հասնելու համար, եթե պետք ըլլա պզտիկ խաբեբայություններ ալ գործածել, մի վարանիր, քանի որ խնդիրը զավակիդ ու քու երջանկության վրա է։

«Ես հոս ստեպ կերթամ Սմսարյանենց, որոնք միշտ տրամադիր են իրենց աղջիկը տալու, որովհետև հասկցուցի, թե տակա-

վին պսակ չէ եղած և թե լրագրին մեջ հրատարակվածը Ղուկաս էֆենտիին կողմե հնարված սուտ մըն է»։

Խաբեբայությունը, զոր Տ. Միքիաս կխրատեր ի գործ դնելու, որոշապես հայտնի չէր թե ինչ կերպ պետք էր ըլլար։

Այս մասին թեև ինքը ծրագիր մը հղացեր էր, սակայն նամակին մեջ չէր բացատրեր, սպասելով որ նոր տեղեկություն մը ստանա։ Իր խաբեբայական միջոցը իբրև հետին զենք կուզեր գործածել, երբ ամեն միջոց սպառեր տիկին Անթառամի կողմե։ Այսուհանդերձ այժմեն իսկ պարտք կզգար հողը պատրաստելու, որպեսզի վճռական վայրկյանին Լևոնի մայրը տկարություն ցույց չտա։

Հետևյալ առտու, ցերեկվան մոտ, Տ. Միքիաս փութաց Ղուկաս էֆենտիի քով, որ իր խոստումին հավատարիմ, առանց դժվարության հանձնեց հարյուր ոսկին։

— Միայն թե, տեր հայր,— ավելցուց դրամը համբելու միջոցին,— չըլլա որ հետս ցյինի ելլաս, ետքը դեշ մարդ կըլլանք իրարու հետ, հա...

— Ինչպես ըսի, ձեռքես եկածը պիտի ընեմ,— պատասխանեց քահանան, ոսկիները գրպանելով։

— «Ձեռքես եկածը պիտի ընեմ» ըսելը բավական չէ, որոշ խոսք պետք է տաս,— պնդեց Ղուկաս էֆենտի, որ երբեք չէր ուզեր այնքան դրամ իզուր վատնել։

— Վստահ եղիր, պաշտոնաթուղթերը քիչ ատենեն պիտի ունենաք, Ղուկաս էֆենտի,— պատասխանեց Տ. Միքիաս, օձիքը ազատելու համար։

— Այսինքն առ առավելն մինչև երկու շաբաթ։

— Պայմանաժամ չեմ կրնար որոշել, գործը ինձմե կախյալ չէ։

Տ. Միքիասի մեկնելեն ետքը Ղուկաս էֆենտի իր գործին զբաղված էր, երբ ծառան լուր բերավ, որ Պատրիարքարանի քարտուղարներեն պ. Սիսակ Մինասյան կուզեր վայրկյան մը տեսնվել հետը։

— Թող ներս գա,— ըսավ վաճառականը։

Պ. Սիսակ Մինասյանի անունը ծանոթ էր Ղուկաս էֆենտիի, քանզի, բացի Պատրիարքարանի քարտուղարութենեն, պ. Սիսակ մեկ քանի հանձնաժողովներու և խորհուրդներու ալ քարտուղարություն ըրած էր, որոնց մեջ գտնված էր ինքը։ Գիտեր որ աչքը բաց երիտասարդ մըն էր, վարպետորդի և անխղճահար։

Պ. Սիսակ ժպտուն, ակնածալի դեմքով ներս մտավ և խորին հարգանքով բարևեց վաճառականը։

— Ի՞նչ կա,— հարցուց վաճառականը երիտասարդին, որ ակնոցը կշտկեր։

— Էֆենտիս, կներեք եթե համարձակեցա ձեզ անհանգիստ ընել, բայց...

— Հոգ չէ, նստե տեսնենք, ի՞նչ է ըսելիքդ։

Քարտուղարը կրկին խորին բարև մը տվավ և աթոռի մը ծայրը կծկվեցավ, փեշը փեշին վրա գոցած և երկու սրունքները քով քովի սեղմած, սուտուտ կեցող պզտիկ շունի մը տագնապալից դիրքովը։

Ղուկաս էֆենտի սպասեց, որ քարտուղարը բացատրեր իր այցելության շարժառիթը, բայց մյուսը, առանց բառ մը արտասանելու, քարացած էր իր ակնածական դիրքին մեջ։

— Էյ, ի՞նչ է ըսելիքդ նայինք,— գոչեց Ղուկաս էֆենտի անհամբեր։

— Էֆենտիս, իմացա որ մեկ երկու պաշտոնաթուղթերու պետք ունիք եղեր, որոնց մասին դժվարության հանդիպեր եք, գործին անծանոթ մարդոց պատճառով, մինչդեռ այս տեսակ վավերաթուղթերը մեկ երկու օրվան մեջ կարելի է պատրաստել...

— Այո, անանկ բան մը կա,— պատասխանեց վաճառականը,— աղջկանս և Լևոն Կոկիկյանի ծննդյան և ամուսնացած չըլլալուն վկայականներուն պետք ունեցա...

— Գիտեմ, էֆենտիս, բոլոր մանրամասնությունները գիտեմ... եթե մինչև հիմա գործը չէ վերջացած և եթե պետք ունիք, ես երկու երեք օրեն բոլոր թուղթերը կրնամ պատրաստել տալ և ձեզ հանձնել։

— Բայց Լևոն Կոկիկյանի ծննդյան արձանագրությունը չէ գտնվեր եղեր տակավին։

— Սխալ, էֆենտիս, բոլորովին սխալ, բոլորովին սխալ. Նուռը Գարուի եկեղեցին մկրտված է ու հոն տեղն ի տեղոք արձանագրված։

— Ի՞նչ կըսես,— գոչեց Ղուկաս էֆենտի ճառագայթող դեմքով մը։ Հետո, ակռաներուն մեջեն մոլտաց։

— Վա՜յ շունշանորդի։

— Ուրեմն, էֆենտիս,— շարունակեց քարտուղարը,— եթե հրամայեք, բոլոր թուղթերը պատրաստեմ և քանի մը օրեն բերեմ։

— Աղեկ, աղեկ, քեզ տեսնեմ, եթե այդ գործը քանի մը օրեն ընես, քեզի աղվոր նվեր մը կուտամ։

— Շնորհակալ եմ, էֆենտիս, ողջ եղիք։

Եվ Սիսակ գետնամած խոնարհություն մը ընելով՝ դուրս ելավ։

— Ա՜խ,— գոչեց վաճառականը, երբ առանձին մնաց,— ժամ մը առաջ գալու էր, հարյուր ոսկին ավանակի պես չէի համբեր։

Եվ սակայն չափազանց գոհ էր Պատրիարքարանի քարտուղարին այս անակնկալ այցելությենեն։ Ինչ գեղեցիկ վրեժ մը պիտի կրնար լուծել Տ. Միքիաասեն, եթե պ. Սիսակ իր խոստումին հակառակ, քանի մը օրեն թուղթերը կարենար բերել։ Ասկե զատ խոստացած հարյուր ոսկիի երկրորդ վճարումեն պիտի ազատեր։

Ու Ղուկաս էֆենտի այս հաջողությենեն զվարթացած՝ գնաց ախորժակով ճաշ մը ընելու։

Պ. Սիսակ երկու օր ետքը եկավ և հանձնեց բոլոր պաշտոնական թղթերը, զորս նույն օրն իսկ վաճառականը ղրկեց Փարիզ։

Իսկ քարտուղարին իբրև նվեր հինգ ոսկի տվավ, բացի արձանագրությանց համար եղած ծախքերեն։

— Հիմա թող գա նայինք Տ. Միքիասը,— կմտածեր ինքնիրեն Ղուկաս էֆենտի։

Սակայն քահանան մեջտեղ չիկար։ Հարյուր ոսկին գրպանելե ետքը շաբաթ մը մնացած էր Պոլիս և հետո գացեր էր գյուղը, ուր տուն և այգի ուներ, և տարին քանի մը անգամ կերթար մեկ երկու շաբաթ մնալու։

Քահանան Պոլսեն քիչ մը ժամանակ հեռանալով, կուզեր, խուսափիլ Ղուկաս էֆենտիի հետապնդումներեն և ժամանակ շահիլ։

Այս բացակայության միջոցին էր, որ Ղուկաս էֆենտի նամակ մը ստացավ իր աղջիկեն, որուն մեջ ուրախությամբ կծանուցաներ պաշտոնաթուղթերուն հասնիլը և կավելացներ.

«Թուղթերը առնելուս հետևյալ օրը Վիլիեն փողոցի հայ մատուռին մեջ կրոնական պսակը կատարեցինք, Պարոնյան վարդապետի նախագահությամբ և ադամանդի ծանոթ վաճառական պ. Սիսակ Մարտիրոսյանի կնքահայրությամբ։ Ամբողջ մատուռը

լեցված էր Փարիզ բնակող ծանոթ հայերով։ Պսակի արարողությենեն ետքը Լևոնը փառավոր սեղան մը տվավ Մեզոն տ'Օրի մեջ։ Տիկին Անթառամ չկրցավ պսակին ներկա գտնվիլ, որովհետև շաբաթե մը ի վեր հիվանդ պառկած է, թեև վտանգավոր բան մը չունի։ Մեկ քանի օրեն Լևոնին հետ դեպի Իտալիա զբոսական պտույտ մը պիտի ընենք և ամիսի մը չափ բացակա պիտի գտնվինք Փարիզեն»։

— Վերջապես,— գոչեց վաճառականը հաղթականորեն, և անմիջապես լուր ղրկեց Տ. Միքիաս քահանային, որ անպատճառ իր գրասենյակը հանդիպի հետևյալ օրը։ Սակայն քահանան դեռ չէր վերադարձեր գեղեն և հաղիվ շաբաթե մը ետքը, առտու մը կանուխ, եկավ գտավ Ղուկաս էֆենտիին։

— Ի՞նչ լուր, տեր հայր, թուղթերը ի՞նչ ըրիր, արդյոք գյուղ պացիր արձանագրությունները փնտռելո՞ւ,— ըսավ վաճառականը, կեղծ ծաղրածու շեշտով մը։

— Անակնկալ դեպք մը ստիպեց զիս անմիջապես գյուղ երթալու,— պատասխանեց Տ. Միքիաս,— եղբայրս հանկարծ հիվանդացեր էր ծանրապես, նամակ առի ու անմիջապես ճամփա ելա, բարեբախտաբար այժմ բավական լավ է և ես ալ կրցա վերադառնալ։ Հավատացեք, որ շատ կցավիմ այս մասին, սակայն կրնաք վստահ ըլլալ, որ քիչ օրեն, այսինքն մեկ երկու շաբաթեն, թուղթերը կպատրաստվին ու ձեզ կհանձնվին։

— Տեր հայր, քեզ բան մը ըսե՞մ, դուն վազ անցիր այդ թուղթերեն և հարյուր ոսկիս ետ տուր...

— Ինչո՞ւ, ինչպե՞ս,— կմկմաց քահանան դող ելած։

— Թուղթերը ես առի, Փարիզ ղրկեցի, պսակն ալ եղավ լմնցավ,— պատասխանեց վաճառականը։

Տեր Միքիաս՝ շանթահար՝ պահ մը ափ ի բերան մնաց։ Հարվածը այնքան ուժգին էր, որ զինքը սահմռկեցուցած էր։

— Այսպես ուրեմն,— շարունակեց վաճառականը անողոքաբար,— սա հարյուր ոսկին շնորհ ընեիր ետ տալու։

— Հարյուր ոսկին, բայց այդ դրամին մեծ մասը արդեն ծախսեցի,— կմկմաց Տ. Միքիաս։

— Որո՞ւ տվիր,— գոչեց Ղուկաս էֆենտի, ձայնը բարձրացնելով։

— Զանազան անձերու, գործը հաջողցնելու համար։

— Սուտ կխոսիս, անօրեն մարդ,— պոռաց վաճառականը ոտքի ելլելով,— պարզապես խաբեբա, ավազակ մըն ես, որ դիս կողոպտելու ելեր ես։ Նախ՝ սուտ խոսեցար ըսելով, որ Լեոնի ծննդյան արձանագրությունը չի կա. մինչդեռ կա եղեր, իբրև հարազատ զավակ Նիկողոս աղա Կոկիկյանի... Նաոլը Գաբուի եկեղեցիին մեջ և արդեն բոլոր թուղթերը վավերացված քու քովդ են եղեր երկու ամիսե ի վեր ու դիս այդպես կխաղցընես, միմիայն ինե դրամ քաշելու համար... կամ հիմա հարյուր ոսկիս կուտաս և կամ կերթամ ամեն բան կպատմեմ պատրիարքին։

Տ. Միքիաս այս սպառնալիքին հանդեպ պահ մը շփոթած մնաց, բայց շուտով իր պաղարյունությունը գտնելով՝ պատասխանեց։

— Հարյուր ոսկին թեև ծախսեցի այդ թուղթերու համար, այնուհանդերձ եթե անպատճառ պահանջեք, ձեզ կվերադարձնեմ մաս առ մաս, երբոր դրամ ունենամ։ Գալով պատրիարքին ամեն բան պատմելու խնդրին, եթե կուզեք, կրնաք ուզածնիդ երթալ իրեն ըսել։ Ես խղճիս վրա ոչ բեռ չունիմ և ճակատաբաց պատրաստ եմ բացատրություն տալու, որու որ ըլլա։ Միայն թե ես ալ հավանորեն իմ պատմելիքներս կունենամ և չեմ գիտեր թե երկուքին որո՞ւն պատմությունը ավելի շահեկան պիտի ըլլա։

Այս անորոշ ակնարկությունները մեղմեցին Ղուկաս էֆենտիի բարկությունը, որ խնդիրը անուշ տեղը կապելու համար ըսավ.

— Տեր հայր, ինծի նայե, ես ալ ձանձրացա ու զզվեցա այս խնդիրներեն, հիմակ ալ ամեն բան լմնցավ, կարգադրվեցավ, հետևաբար այլևս չեմ ուզեր կրկին խնդիրներ ստեղծել։ Հիմա տեսար, որ ինծի հետ գլուխ ելլելը դյուրին չէ, ուստի ալ նայե որ ինծի հակառակ ընթացքներու մեջ չգտնվիս և ես ալ ի փոխարեն կխոստանամ հարյուր ոսկիեն վազ անցնիլ ու ալ քեզմով չզբաղվիլ։ Այս կարգադրությունը գործիդ կուգա՞։

— Ինչ կարգադրություն, որ հանուն հաշտության և խաղաղության կըլլա, ինծի համար ընդունելի է,— պատասխանեց Տ. Միքիաս քահանա քրիստոնավայել խոնարհությամբ մը և վաճառականը ոգջունելով դուրս ելավ։

— Էֆ՞, վերջապես ամեն ինչ կարգադրվեցավ և պիտի կրնամ հանգստություն գտնել,— ըսավ ինքնիրեն Ղուկաս էֆենտի, երբ որ առանձին մնաց։

ԳԼՈՒԽ ԺԳ

Այս հանգստությունը, զոր Ղուկաս էֆենտի կերազեր, շատ երկար չտևեց։

Հորմեհետե Ս. Երրորդություն եկեղեցիի գայթակղական միջադեպին հետևանքով հրաժարած էր Աղքատախնամի նախագահությենեն, ոչ տեղեկություն չէր ունեցած Շուշանիկի մասին, որ ինչպես հայտնի է, այդ գայթակղության գլխավոր պատճառը եղած էր, հակառակ իր կամքին։

Կիրակիի դեպքին հետևյալ ու հաջորդ օրերը, ամբողջ Ֆերիգյուղ այդ եղելությամբ զբաղեր էր։ Հաճի Թումիկի ազդեցությունն ու ժողովրդականությունը նոր փայլ մը ստացած էր այդ արարքովը, որուն գլխավոր ներշնչողն ու դերակատարը եղած էր ինքը և իր գինեատան մեջ օրերով խոսվեր էր կատարված քաջագործության վրա։

Կատարյալ հաղթանակ մը եղած էր Ղուկաս էֆենտիի խայտառակումը, և երբ իմացվեցավ թե Աղքատախնամին նախագահությենեն հրաժարած է, ա՛լ ավելի մեծցավ իրենց արարքին նշանակությունը։

— Իշտե՛, ասանկ մենք մարդը դուրս կենետենք,— պոռացեր էր գինեպանը, այդ հրաժարականին լուրը առնելով։

Եվ սակայն բոլոր ասոնք դրական արդյունքի մը չէին հանգած։ Շուշանիկ և իր զավակը անոթի կմնային, տիկ. Սաթենիկ ևս ավուր հացի կարոտ էր, այնպես որ տարված հաղթանակը ոչ օգուտ մը չէր բրած անխիղճ վաճառականին զոհերուն։

Սերգիս, որ ինչպես դիտենք, եկեղեցիի ցույցին գլխավոր կազմակերպիչներեն մին էր՝ Հաճի Թումիկի հետ, այս բանը դիտել տվավ գինեպանին, երբ այս վերջինը անգամ մըն ալ կհոխորտաբ իրենց հաղթությանը վրա։

— Այո, մարդը խայտառակեցինք, բայց ասդիի խեղճերը նորեն անոթի են,— ըսավ երիտասարդը։

— Աստված ողորմած է,— պատասխանեց գինեպանը։

— Եթե գործը միայն աստուծո ողորմությանը մնա, կարծեմ խեղճերը դեռ շատ կշարշարվին. մինչև հիմա այդ ողորմությունը իր զորությունը ցույց տալու միտք չունի... ավելի ազեկ է, որ մենք ճար մը մտածենք։

— Ի՞նչ կրնանք ընել, մենք մեր ձեռքեն եկածը ըրինք, մարդը

աղվոր մը խայտառակեցինք, Աղքատախնամեն ալ դուրս նետել տվինք։

— Պետք է որ Ղուկաս էֆենտին Շուշանիկի ու զավկին հոգը վրան առնե, իմ խելքս ասոր կհասնի,— պատասխանեց Սերգիս վճռաբար,— և քանի որ ճամփա ելանք, կես ճամփան մնալու չենք, պետք է որ այդ գործը գլուխ հանենք։

Երիտասարդը ապահովաբար ծրագիր մը ուներ, զոր չէր ուզեր անմիջապես պարզել, այլ նախ կփափաքեր գինեպանին տրամադրությունը իմանալ։

— Ինչպես կրնանք բռնի ստիպել, որ դրամ տա,— ըսավ գինեպանը, տարտամ կերպարանքով մը։

— Այդ մասին կարելի է միջոց մը խորհիլ, միայն թե դուն տրամադի՞ր ես ինծի օգնելու... այդ տեսակ մարդիկը բարոյապես խայտառակվելով պատժված չեն ըլլար, անոնց նյութականին դիպչելու է, որ զգացվին։

— Եթե ձեռքես բան մը կուգա, գլխուս վրա,— ըսավ գինեպանը,— ես ալ կուզեմ, որ մեր այդքան աշխատանքներեն գոնե պզտիկ օգուտ մը ըլլա այս խեղճերուն։

— Ուրեմն համաձայնինք,— պատասխանեց Սերգիս ուրախությամբ,— կրնա՞մ պետք եղած ատեն քու վրադ վստահիլ։

— Ձեռքես եկածը կընեմ,— կրկնեց Հաճի Թումիկ վճռաբար։

Օրերե ի վեր Սերգիս իր մտքին մեջ կորոճար այն միջոցը, որով կհուսար Ղուկաս էֆենտիեն նյութական նպաստ մը ձեռք ձգել Շուշանիկի և անոր նորածին զավկին համար։ Այդ միջոցը ինքնին շատ պարզ էր ու հաճախ ի գործ դրված նմանօրինակ պարագաներուն՝ այն է փոքրիկ մանուկը, բացատրական նամակով մը կողովի մը մեջ դնել և գիշեր ատեն զայն զետեղել վաճառականին դռան առջև։

Միայն թե այս խորհուրդը իրագործելու մասին դժվարություն մը կներկայանար. այն է Շուշանիկի ընդդիմությունը։

Թշվառ աղջիկը, հակառակ իր նյութական անձուկ վիճակին, չէր ուզեր վայրկյան մը իսկ բաժնվիլ իր զավկեն, զոր խենթի պես կսիրեր։ Բայց Սերգիս, որ միտքը դրած խորհուրդեն չէր հրաժարեր դյուրավ, գինեպանին աջակցությունը ապահովելե ետքը, եկավ գտավ Շուշանիկն ու իր մայրը և կրկին պնդեց, որ տղան տանին

Ղուկաս էֆենտիի տունը, զայն ստիպելու համար, որ դրամական կարևոր նպաստ մը տա։

— Գոնե հինգ հարյուր ոսկի կրնանք բրցնել իրմե,— կըվստահեցներ երիտասարդը։

Այդ ահագին գումարը,— հինգ հարյուր ոսկի— հեղաշրջեց Շուշանիկի մայրը, որ սկսավ Սերգիսի առաջարկին ուժ տալ։

Մինչ Շուշանիկ կկրկներ։

— Չէ՛, չէ՛, վայրկյան մը չեմ բաժնվիր զավկես. այդ անխիղճ մարդը կարող է մեռցնել զայն, ավելի աղեկ է, որ մուրալով ապրեցնեմ զավակս, քան թե այդպիսի վտանգներու ենթարկեմ զինքը։— Իզուր երիտասարդը ամեն ապահովություն կուտար աղջկան, ըսելով, որ ինք ու ուրիշները անձամբ պիտի հսկեն, որ մանուկը ոնէ կերպով անհանգիստ չըլլար, թե իրենց ըրածը պարզ ցույց մըն էր, տեսակ մը ներելի շանթած՝ այդ անօրեն մարդուն դաս մը տալու և իր ըրած գեշությունը փոխարինելու ու միանգամայն իրենց ապագան ապահովելու համար։

— Ձեմ ուզեր,— կպնդեր Շուշանիկ,— թող ըրած գեշությունը աստուծմե գտնա, ես իմ զավակս քովես չեմ հեռացներ։

Համոզելու համար ամեն միջոց սպառելե ետքը, երիտասարդը երբ տեսավ, որ ա՛լ անկարելի պիտի ըլլա խոսք հասկցնել մանկամարդ մորը, տարբեր հնարք մը խորհեցավ։

— Ղուկաս էֆենտի իր զավակը չճանչնար,— մտածեց ինքնիրեն,— ուրիշ տեղե նորածին մը կգտնեմ ու կտանիմ և նորեն գործը կհաջողցնեմ։

Այս միջոցը, որքան որ պարզ կթվեր մեր երիտասարդին՝ իր կարծածին չափ դյուրին չեղավ։ Բավական օրեր ասդին անդին ինկավ գտնելու համար ծնողք մը՝ իր զավակը հանձնելու համար իրեն։

Եվ սակայն ի վերջո հաջողեցավ իր փնտռածը գտնել Թաթավլայի կողմը։

Հույն բազմածին ու աղքատիկ ծնողք մը հավանեցավ իր եռամսյա մանչ զավակը, գրեթե մեկ քանի օր տարբերությամբ հասակակից Շուշանիկի մանչուն, իրեն հանձնել, կամ մանավանդ իրեն վարձել, օրական մեկ ոսկիի փոխարեն։

Նորածինը գտնելե ետքը Սերգիս պատրաստեց այն զամբյուղը, որ իբրև առժամյա օրորոց պիտի ծառայեր մանուկին և իրիկուն մը ներկայացավ նույն ընտանիքին տունը, Հաճի Թումիկի ըն-

կերակցությամբ, որուն պարզած էր իր ծրագիրը և որ խանգավառությամբ իր օժանդակությունը նվիրած էր այդ գործին։

մեջը տեղավորեցին և կառք մը բերել տալով, ուղղվեցան Ղուկաս էֆենտիին,— ըսելով։

Զամբյուղը բարձով ու վերմակով պատելե ետքը նորածինը մեջը տեղավորեցին և կառք մը բերել տալով, ուղղվեցան Ղուկաս էֆենտիի բնակարանը։

Կես-գիշերին մոտ էր, երբ հասան այն փողոցը, ուր կգտնվեր վաճառականին տունը։ Փողոցին ծայրը կառքեն իջան ու կառապանը ճամփեցին, հետո Հանճի Թումիկ իր թևին տակ առավ զամբյուղը և արագ քայլերով դիմեց դեպի Ղուկաս էֆենտիի տան դուռը։ Բարեբախտաբար նույն միջոցին փողոցը ամայի էր և նորածինն ալ խորունկ կը նանար։

Երիտասարդը նախապես մանկիկին ճիտեն կախած էր նամակը, Ղուկաս էֆենտիին ուղղված, որուն մեջ կբացատրեր նորածինին ով ըլլալը։

Գինեպանը վայրկենապես դռան ուռնակեն կախեց զամբյուղը և զայն պինդ մը կապեց, հետո շուտաքայլ եկավ Սերգիսի քով։

— Հիմա ի՞նչ պիտի ընենք,— հարցուց։

— Առանց ինքզինքնիս նշմարել տալու հոս պիտի սպասենք, մինչև որ Ղուկաս էֆենտին ու իր կինը վերադառնան։

— Ինչպես, տունը չե՞ն։

— Ոչ,— պատասխանեց Սերգիս,— առջի իրիկվընե եկա ու ժամերով հսկողություն ըրի, ինչպես որ արդեն մի քանի օրե ի վեր կընեի, սպասելով որ գիշեր մը դուրս ելլեն այցելության երթալու համար ու նույն իրիկունը բերենք մանուկը, որովհետև կուզեմ, որ Ղուկաս էֆենտին ու կինը միասին տեսնեն զամբյուղը։ Այս գիշեր ճաշեն ետքը, մոտակա տուն մը գացին և հավանորեն քիչ ետքը կվերադառնան։ Մենք հիմա այստեղվանքը զատ-զատ կսլքտանք, մինչև որ գան, որպեսզի աչքովնիս տեսնենք, թե ինչ պիտի ըլլա արդյունքը։

— Շատ աղվոր մտածեր ես,— պատասխանեց գինեպանը, որ մեծ հավատք ունենալ սկսած էր իր երիտասարդ բարեկամին հնարամտության վրա,— բայց ասանկ պտտելով կրնանք վրանիս կասկած հրավիրել։ Եկուր սա փողոցի ծայրը գտնվող սրճարանը նստինք, հոնկե անոնց գալը կտեսնենք ու անմիջապես դուրս կելլենք։

Այս առաջարկը շատ բանավոր էր, և Սերգիս անմիջապես ընդունեց, մանավանդ որ այդ սրճարանին առջևեն պիտի անցնեին վաճառականը ու իր կինը։

Կես ժամեն ավելի էր հոն նստած էին ու ակնդետ կդիտեին փողոցեն անցնողները, երբ հանկարծ Սերգիս գոչեց.

— Ահավասիկ թե թևի կերթան կոր, ծառան ալ ետևնուն։

Անմիջապես հաշիվնին մաքրեցին և իրենք ալ դուրս ելան ու հեռվեն հետևեցին վաճառականին ու կնոջը, որոնք արդեն փողոցը դարձած էին։

Հանկարծ ճիչ մը լսվեցավ։

Տիկին Թագուհին էր, որ զամբյուղը նշմարած էր։ Ծառան, որ քանի մը քայլ հեռվեն կհետևեր իր տերերուն, այդ ազազակը լսելով՝ առաջ անցավ և ուռնակի վրայեն վար առավ զամբյուղը, որուն մեջ մանկիկը կշարունակեր հանդարտիկ քնանալ։

Սերգիս հեռվեն կդիտեր Ղուկաս էֆենտին, որ բորբոքած, բաներ մը կսեր կնոջն ու ծառային։

Վերջապես տան դուռը բացվեցավ և երեքը մեկ ներս մտան, զամբյուղը հետերնին։

Երիտասարդը և գինեպանը բավական ժամանակ սպասեցին, տեսնելու համար, թե դուռը կրկին պիտի բացվե՞ր։

Բայց ոչ, դուռը փակ կմնար։

— Ա՛լ երթանք ու վաղվան սպասենք,— ըսավ Սերգիս իր ընկերակցին և երկուքը մեկեն ուղղվեցան դեպի Թաքսիմ։

Տան դուռը գոցվելե ետքը, Ղուկաս էֆենտի սոսկալի բարկության մեջ ինկավ.

— Սա ի՞նչ խաղքություն է, ո՞վ բերեր կախեր է աս փիճը. հիմա բռնեցեք դուրս նետեցեք,— կգոչեր իր կնոջն ու ծառային, որոնք առանց շարժելու զամբյուղին կնայեին, որու մեջ մանկիկը կշարունակեր հանգարտիկ ննջել։

— Զարմանալի բան,— կշարունակեր պռռալ վաճառականը,— բնավ հանգիստ չի պիտի կրնանք մնալ, ամեն օր մեյ մեկ «պե՞լա» պիտի բանան գլուխնուս... Ո՜ւ, Հակոբ, չե՞ս լսեր կոր, դուրս նետե սա «զեմպիլը», շուտով առ տար, փողոցին անկյունը տեղ մի դիր, եկուր։

Ծառան վաթանոտ մոտեցավ զամբյուղին։

Բայց տիկին Թագուհին միջամտեց.

— Մեղա՜,— ըսավ,— շունի ձա՞գ է սա, որ գիշերանց փողոց

նետենք, աս օդին, թող հոս մնա, վաղը առտու կանուխ եկեղեցի կղրկենք։

Ղուկաս էֆենտի կդուշակեր, թե այս անհարկի ու խափանարար նվերը ո՞ւրկե կիյնար իր գլխուն, կենթադրեր, որ զամբյուղին մեջ եղողը հավանորեն բուն իսկ իր զավակն էր, Շուշանիկեն ունեցած, ու այս ենթադրությունը ա՛լ ավելի կկատղեցներ զինքը, իր աչքին ավելի ատելի կդարձներ զամբյուղին մեջ հանգչող նորածինը։ Եթե վստահ ըլլար, թե օտարին մանուկն էր ան, թե ոևէ արենական կապ չուներ իրեն հետ, հավանորեն նվազ պիտի բարկանար։ Բայց այդ տղան, որ իրավունքով մը կուգար իր տունը, ղինքը կկատղեցներ։

— Չըլլար, չեմ ուզեր, որ վայրկյան մը հոս մնա, շո՛ւտ դուրս նետեցեք,— պոռաց կրկին, դեպի ծառան դառնալով.

— Ծ՛ո, ի՞նչ ավանակի պես երեսս կնայիս, խոսք չե՞ս հասկընար կսը, չառնե՞ս, չտանիս։

Ծառան կրկին մոտեցավ զամբյուղին, բայց նույն բուլեին մանկիկը արթնցած էր և սկսավ բարձրաձայն լալ։

— Աս տղան աս ժամուն փողոց չի ձգվիր,— գոչեց տիկին Թագուհի վճռաբար,— ես այդպիսի անխղճություն չեմ կրնար ընել... Վաղը առտու կբռնենք եկեղեցի կղրկենք ու ամեն բան կլմենա։ Դուն գնա պառկե, ես անիկա կխնամեմ։

Եվ մոտեցավ զամբյուղին՝ տղան հանդարտեցնելու և լացը դադրեցնելու համար։

Վաճառականը չպնդեց և տեղի տվավ իր կնոջը, ավելցնելով.

— Աղեկ, ինչ կուզես ան ըրե, միայն թե վաղը արթննալուս արդեն տղան գացած ըլլալու է հոսկե, ես ատանկ խայտառակությունները չեմ սիրեր... կլսե՞ս կոր։ Ծո՛, Հակոբ, վաղը առտու մութը ու լուսուն տղան կառնես կտանիս, ժամկոչին կուտաս, ես ետքը եկեղեցի կհանդիպեմ, պետք եղածը կկարգադրեմ... նայե որ դուռ ու դրացի չտեսնան տղան դուրս հանելդ... նորեն պարապ տեղը ասոր անոր բերանը բանալ չի տանք։

Եվ վաճառականը սանդուխեն վեր ելավ առանց ետին նայելու։ Տիկին Թագուհի տղան իր ննջասենյակը տանել տվավ Հակոբին, հետո զայն զամբյուղեն հանեց ու հոն առաջին անգամ տեսավ նամակ մը, որ նորածինին վիզեն բարակ թելով մը կախված էր։ Մանկիկը անկողնին մեջը կրկին քնացնելե ետքը, տիկին Թագուհի նամակը բերավ և կարդաց հետևյալը.

«Մեծապատիվ Ղուկաս էֆ. Կելկիթյան.

«Այս փոքրիկ նորածինը, որ զամբյուղի մը մեջ դրած ձեր տան դռան առջև կթողունք, ձեր հարազատ զավակն է և պտուղը այն բռնաբարության, զոր անցյալ ձմեռ, խաբեբայական միջոցներով, ի գործ դրիք հեգ անմեղ կույսի մը, Շուշանիկի վրա, Վառվառ անուն վատահամբավ կնոջ մը տանը մեջ։ Այդ անլուր արարքը, զոր հաջողցուցիք Միքայել աղա կոչված անպատիվ անձի մը մեղսակցությամբ, անշուշտ տակավին չեք մոռցած, քանի որ այդ պատճառով հրապարակով խայտառակվեցաք Ս. Երրորդության եկեղեցիին բակը։ Ասկե ի վեր կհուսայինք, որ պիտի խղճահարվեիք այդ թշվառ աղջկան և իր անմեղ զավկին մասին ու պիտի փութայիք գոնե նյութական օգնությամբ մը դարմանելու ձեր գործած անլուր չարիքը։ Բայց մեր հույսը պարապ ելավ։ Ամիսներ անցան այդ գայթակղական դեպքեն ի վեր և ոևէ կենդանության նշան ցույց չտվիք։

«Ձեր այդ անխիղճ ընթացքին հանդեպ որոշած ենք ամեն բան աչք առնել և վկաներով ու ապացույցներով երևան հանել ձեք կատարած անարգ գործը և ի լուր աշխարհի հռչակել ձեր անբարոյականությունը, եթե չփութաք անմիջապես նյութական կարևոր օժանդակությամբ մը օգնության հասնիլ թշվառ մորն ու հեգ զավկին, որոնք ձեր պատճառով այսօր ամենահետին չքավորության մատնված են։

«Եթե ոևէ միջոցավ, ձեր դռան առջև թողնված մանուկը անհետացնելու փորձ ընեք, ամեն միջոց ձեռք առած ենք այդպիսի ոճիր մը արգիլելու համար։

«Մինչև վաղն իրիկուն կսպասենք ձեր պատասխանին»։

Նամակը հոս կվերջանար, առանց ոևէ ստորագրության։

Տիկին Թագուհի տակնուվրա եղած՝ կրկին կարդաց նամակը։ Հայտնի կերևար, որ պատմված իրողությունը, մտացածին բան մը չէր. անուններով, մանրամասնորեն էր ամեն բան։ Հիմա կվերհիշեր եկեղեցիին բակը տեղի ունեցած գայթակղությունը, որու մասին միայն վեր ի վերո տեղեկություններ տված էր ամուսինը և ուրիշներն ալ զգուշացած էին խոսելու։

Ուրեմն այսպես, ամուսինը վատ թշվառական մ՚ըն էր, որ չէր վարանած նույնիսկ կույս աղջիկ մը պղծելու բռնի կերպով ու հետո զայն իր զավկին հետ երեսի վրա թողուլ։

Մինչև առտու տիկին Թագուհի հսկեց մանկիկին քով, առանց

կարենալ քունը տանելու։ Անշուշտ մեծ հավատք ու հիացում մը չուներ իր ամուսնության առաքինության վրա, բայց չէր կարծեր, թե այդ ատիճան վատություններ գործելու կարող էր և այս հայտնությունը գինքը խորապես կհուզեր։

Կնայեր քնացող մանուկին և նմանություններ կերևակայեր գտնել անոր ու Ղուկաս էֆենտիի դիմագծերուն միջև, առանց մըտքեն անցնելու, որ նորածինը անծանոթ հույնի մը որդի էր։

Երբ լույսը տիրեց, Ղուկաս էֆենտիի հրամանին համեմատ, ծառան եկավ տղան առնել եկեղեցի տանելու համար։

Բայց տիկին Թագուհի գինքը ճամփեց։

— Դեռ կանուխ է, թող էֆենտին ելլե, անկե ետքը կտանիս,— ըսավ ծառային։

Երբ Ղուկաս էֆենտի անկողնեն ելավ, առաջին գործը եղավ կինը իր սենյակը կանչել տալ։

— Տղան եկեղեցի ղրկել տվի՞ր,— հարցուց առանց ուրիշ ոևէ նախաբանի։

— Չէ, հոս է,— պատասխանեց տիկին Թագուհի։

— Հո՞ս է մի, աս ժամուս դեռ հոս վա՞ր եք դրեր,— գոչեց վաճառականը ձայնը բարձրացնելով,— ես ձեզի չըսի՞, որ լուսնալուն պես ղրկեք...

— Տղուն վզեն կախված նամակ մը կար,— շարունակեց տիկին Թագուհի ամենայն հանդարտությամբ,— այդ նամակը երբոր կարդացի, հարմար տեսա, որ դուն ալ կարդաս ու անկե ետքը որոշես, թե ի՞նչ պիտի ընես այդ տղուն։

— Ի՞նչ նամակ. նորեն ի՞նչ նոր խնդիր կբանան գլխուս,— պոռաց կրկին Ղուկաս էֆենտի բարկությամբ,— տուր նայիմ շուտով, ի՞նչ է այդ նամակ ըսածդ։

— Ահավասիկ,— պատասխանեց կինը, մանկիկին քով գտած թուղթը իր ամուսնուն հանձնելով։

Վաճառականը ուժգին շարժումով մը նամակը առավ, պատուհանին մոտեցավ և սկսավ կարդալ։ Տիկին Թագուհի ուշի ուշով կդիտեր իր էրիկը և կջանար անոր դեմքին վրայեն գուշակել այդ ընթերցումին առաջ բերած տպավորությունը։

Ղուկաս էֆենտիի ճակատը մթագնեցավ, գույնը թեթևապես նետեց, հոնքերը պռստեց և ներքին հուզում մը նկատվեցավ կերպարանքին վրա, սակայն շուտով ինքզինքը զսպեց ու նամակը մեկ կողմ նետելով՝ գոչեց.

— Վա՜յ անամոթ շունշանորդիներ, ասանկ խայտառակություն՞ն կըլլա, ան ալ ինծի պես մարդու մը. թող լեռը ելլան բացե ի բաց մարդ կողոպտեն ավազակները... ինձ ո՞վ կկարծեն այդ սրիկաները... ատանկ սուտերով աչքս պիտի վախցնեն տե՛ փարա՞ս պիտի առնեն, շունշանորդիներ, կեցիր, ես անոնց հասկցնեմ ով ըլլալս. մեյ մը ձեռքս անցնին այդ խաբեբայությունը գործողները... ամենքն ալ ճափիսը չյուրյուտմիշ պիտի ընել տամ, ա՛լ չափը կանցնի կոր...

Եվ Ղուկաս էֆենտի սկսավ վեր վար պտտիլ սենյակին մեջ։ Տիկին Թագուհի շփոթած՝ իր ամուսնուն կնայեր։ Արդյոք ի՞նչ ցած ղրպարտության մը զոհ էր։

— Վա՜յ շունշանորդիներ, ասանկ ալ սուտ, տեսնվա՞ծ բան է. հիմա պիտի երթամ ոստիկանության իմաց տամ,— կմռլտար վաճառականը միշտ վեր վար շրջելով։

— Բայց,— համարձակվեցավ դիտել տալ կինը,— նամակի մեջ տեղն ի տեղոք հիշված է ամեն բան...

— Վա՜յ, ըսել է դուն ալ հավատացեր այս զրվածքին,— գոչեց Ղուկաս էֆենտի՝ կնոջը դառնալով։— Աս էր պակաս... Քա՜, ծայրե ի ծայր սուտ է, սուտ, չե՞ս հասկնար կոր, ասանկ օյինով մը աչքս վախցնել ու փարա քաշել կուզեն կոր ինե, բայց իրենց գիտցած ապուշներեն չեմ, ես մարդը բանտարկել կուտամ...

— Սակայն ո՞վ ըրած պիտի ըլլա այս խաղը, ասկե զատ տղան մեջտեղն է...

— Տղան մեջտե՞ղն է մի, միթե փի՞ճ կպակսի. ո՞վ գիտե որո՞ւն փիճն է, բերեր հոս կախեր են... կեցիր նայինք, ամեն բան մեջտեղ կելլե, ես մեյ մը լուր տամ ոստիկանության, թո՞ղ քննություն մը բանա տե կտեսնանք, վա՜յ շունշանորդինե՛ր...

Եվ Ղուկաս էֆենտի սկսավ հապճեպով հագվիլ, հետո կնոջը դառնալով հրամայեց.

— Հիմա, անմիջապես տղան գեմպիլին մեջը դիր ու եկեղեցի ղրկե, թող քահանային ալ ըսե, որ ես պիտի երթամ հետը տեսնըվիմ... շուտ ղրկել տուր, քանի հոս պահենք, վրանիս բեռ կընեն... հայտե, մի տնտնար, դո՞ւն ալ գլուխս պելա բանալ կուզես։

Տիկին Թագուհի ստիպվեցավ իր ամուսնուն հրամանը կատարելու համար դուրս ելլել, մանավանդ որ ինքն ալ կսկսեր կասկածիլ անոր անմեղության մասին։

Իրավցնե, գուցե հանցանք մը չուներ և պարապ տեղը թշնա-

մության կամ դրամաշորթական ձեռնարկի մը զոհ կերթար և այս պարագային իր պարտականությունն էր օգնել անոր։

Երբ վաճառականը առանձին մնաց, նամակը, զոր գետին նետած էր, գետնեն առավ և գրպանը դրավ. հետո սկսավ արագորեն հագվիլ։

— Առ քեզի նոր պելա մը,— կմտածեր ինքն իրեն.— բայց կարծեմ հաջողեցա կինս խաբել ու համոզել, որ ես անմեղ եմ, հիմա կմնա սուսիկ փուսիկ կարգադրել, առանց ձայն դուրս հանելու։

Սենյակեն դուրս ելլալով վաճառականը ուղղվեցավ իր կնոջ մոտ, ստուգելու համար թե իր հրամանը կատարվա՞ծ էր։

— Այո, հիմա ղրկեցի,— պատասխանեց կինը։

— Ուրեմն ես ալ երթամ ու սա թշվառականներուն հախեն դամ,— ըսավ Ղուկաս էֆենտի ու վար իջավ սանդուխներեն։

Երբ Ս. Երրորդություն եկեղեցիեն ներս մտավ, տակավին հոն էր իրենց սպասավոր Հակոբը, որ տղան բանկալը ձգելե ետքը, կայատրաստվեր տուն վերադառնալ։

— Ծո՛, ի՞նչ ըրիր փիճը,— հարցուց վաճառականը իր ծառային։

— Էֆենտի, հոն՝ բանկալը, ժամկոչին քովն է։

— Քահանաներեն ո՞վ կա։

— Տ. Կիրակոսը։

***

Տ. Կիրակոս մութ սանդուխե մը վեր ելավ և մտավ փոքրիկ խուց մը, ուր նստած էին Շուշանիկ և իր մայրը, որոնք ոտքի ելան հյուրը ընդունելու համար։

Սերգիս, որ քահանային հետևած էր, նշանացի հասկցուց մանկամարդ աղջկան թե ինքը դուրսը պիտի սպասեր։

— Ողջույն ձեզ,— ըսավ քահանան։

— Օրհնեցեք, տեր հայր։

— Աստված օրհնե։

— Հրամմեցեք բազմոցին անկյունը։

— Շնորհակալ եմ։

Եվ Տ. Կիրակոս անցավ ցույց տրված տեղը. մինչ Շուշանիկ գամբյուղեն դուրս կհաներ նորածինը և գգվելու ու համբուրելու ձևեր կըներ, ինչպես իրեն պատվիրած էր Սերգիս։

— Գիտեք, որ Ղուկաս էֆենտիին կողմեն կուգամ կոր,— ըսավ քահանան։

— Բարով եկաք,— պատասխանեց էլպիս հանըմ, Շուշանիկի մայրը։

— Էֆենտին շատ բարկացավ այս ձեր ըրած անվայել գործին,— շարունակեց Տ. Կիրակոս,— և շատ մը փորձանքներ պիտի բերեր ձեր գլխուն, բարեբախտաբար ես միջամտեցի, աղաչեցի, պաղատեցա, վերջապես սիրտը առի, եթե ոչ հիմա երկուքդ ալ բանտ գացած էիք։

— Ողջ ըլլաս,— ըսավ էլպիս հանըմ։

— Օրհնած, ճիշ ասանկ բան մը կըլլա՞, անիկա ի՞նչ մարդ է չե՞ք գիտեր կոր, անանկ մեծ մարդու այնպիսի զրպարտություններ ընել, տղան տանիլ դռնեն կախել, նամակ գրել, սպառնալ... խենթացա՞ք, ի՞նչ եղաք, ատոր ծայրը թիարան կա, թիարան...

— Բայց մենք զրպարտություն չըրինք, տեր հայր,— ընդմիջեց Շուշանիկ,— իրավցնե այս պզտիկը իր զավակն էր, ինք աղեկ գիտե։

— Սո՛ւս, այդպես խոսքեր ըսելը մեղք է,— գոչեց քահանան,— նույնիսկ եթե իրավ ալ ըլլա, պետք է որ լռեք, ձայներնիդ քաշեք, դուք ո՞վ, ան ո՞վ. ձեզի կաթիլ մը ջուրի մեջ կխեղդե, դուք անոր պես մեծ մարդու մը հետ գլուխ կրնա՞ք ելլել, մեղա՜, մեղա՜։

— Բայց,— բողոքեց Շուշանիկ,— եթե ան իր զորությանը կապավինի ինծի պես խեղճ աղջիկ մը բռնաբարելու և հետո երեսի վրա անոթի ձգելու համար, մենք ալ մեր պաշտպանության համար աստծո կապավինինք ու մեր իրավունքները կպահանջենք։

— Աղեկ, աղջիկս, բայց ձեր իրավունքը պահանջելու համար, նույնիսկ ենթադրելով, որ իրավունք ունեցած ըլլաք, այդ ձեր ընտրած ճամփան շատ սխալ է։ Փոխանակ տղան այսպես իր տունը ղրկելու, սպառնական նամակներ գրելու, միջնորդ մը գտնելու էիք, որ երթար աղաչեր, պաղատեր, բարեխոսեր և վերջապես էֆենտիին սիրտը հուզելով՝ ձեզի համար նյութական օգնություն հասցներ... Ղուկաս էֆենտի խղճմտանք ունեցող, բարեսիրտ, բարերար, պատվական մարդ մըն է, միայն հետը վարվելու է, իր կամքին հակառակ երթալու չէ։

— Շատ աղաչեցինք, օգուտ չըրավ, տեր հայր,— ըսավ էլպիս հանըմ, դառնացած շեշտով մը։

— Ընդհակառակը, ես կըսեմ, որ պետք եղածին պես չեք աղաչած, տեսեք՝ ես ալ իր բարկությունը իջեցնելու համար անուշանուշ խոսեցա, աղաչեցի և վերջապես հաջողեցա ոչ միայն ձեզի փորձանքեն ազատել, այլ նաև ձեզի ըլլալիք նյութական օգնության խոստում մըն ալ առնել իրմե։

— Արդեն ատիկա իր պարտքն է,— պատասխանեց Շուշանիկ, որ իր բռնելիք ընթացքին մասին լի ու լի հրահանգ ստացած էր Սերգիսեն։

— Ատանկ խոսքեր մի ըներ, աղջիկս,— շարունակեց քահանան.— նախ՝ ձեզի սա ըսեմ, որ Ղուկաս էֆենտի բնավ երբեք չընդունիր, որ ձեզի հետ ոևէ հարաբերություն ունեցած է ու իրմե զավակ ունեցած ես... աս բանը երբեք ընդունելի չէ, գիտցած ըլլաք, և եթե այս տեսակ հայտարարություններ կկրկնեք, դլխնուդ մեծ փորձանք կբանաք հա, ու տասը փարա չանցնիր ձեռքերնիդ։

— Եթե անիկա իրեն զավակը չընդունիր կոր նե՝ ինչո՞ւ համար մեզի դրամ տալ կուզե,— առարկեց աղջկան մայրը։

— Միմիայն բարեսրտաբար, տիկին, միմիայն բարեսրտաբար,— գոչեց Տ. Կիրակոս,— իմ աղաչանքներուս վրա և ոչ թե ուրիշ բանի համար... արդեն տալիքն ալ այնքան մեծ բան մը չէ, գիտցած ըլլաք, քանի մը ոսկի, որպեսզի կարի մը մեքենա առնեք ու ապրվիք, անկե զատ ձեր մեկ քանի ամսվան սպրուստը, ան ալ շատ դժվարությամբ համոզեցի, սանկ 20—30 ոսկի մը, որ շատ մեծ բան է ձեզի համար... Միայն թե մեկ պայմանով կուտա կոր այս գումարը. ես թուղթ մը պիտի պատրաստեմ, դուք ալ պիտի ստորագրեք թե երբեք Շուշանիկը Ղուկաս էֆենտիի հետ հարաբերություն չէ ունեցած, ոչ ալ անկե զավակ ունեցած է, այլ ատ խոսքերը զուտ զրպարտություն են... առանց այդ թուղթին մեկ փարա չի տալե զատ, ձեզի դեմ ալ դատ պիտի բանա իբրև զրպարտիչ։ ալ դուք մտածեցեք, որոշումնիդ տվեք...

— Ես ոչ թուղթ կստորագրեմ, ոչ ալ 30, 50, 100 ոսկիով իրավունքես կհրաժարիմ, թող ինչ կուզե ընե, դատ բանա, բանտ դնե... արդեն ես կյանքես զզվեր եմ,— ըսավ Շուշանիկ վճռաբար։

— Ինչ հիմար խոսքեր են ատոնք,— շարունակեց քահանան.— ես ձեզ առանց ճանչնալու բարիք մը ընել կուզեմ և դուք փոխանակ շնորհակալությամբ և երախտագիտությամբ ընդունելու, մերժել կուզեք ու անվայել խոսքեր կընեք։

— Ես կուզեմ, որ այդ անխիղճ մարդը իր զավակին ապագան ապահովե և ոչ թե քանի մը ոսկի իբրև ողորմություն մեր երեսին նետե,— պատասխանեց Շուշանիկ։

— Աղջիկս, 30 ոսկին քի՞չ փարա է միթե, ասկե զատ եթե խնդիրը միմիայն դրամին վրա է, բան մը կընենք, ես կրկին կբարեխոսիմ էֆենտիին քով, թող 30-ին տեղ 40 տա, ատոր ըսելիք ունի՞ք։

Մայր ու աղջիկ անմիջապես չպատասխանեցին և պահ մը լռություն տիրեց փոքրիկ սենյակին մեջ։ Քահանան այնպես կարծեց, թե համաձայնության վայրկյանը հասնելու վրա էր և ներքին անպատում հրճվանք մը զգաց այսքան հաջողությամբ գործը գլուխ հանելուն համար։ «Եթե հիսունով լմնցնեմ նորեն շատ աղեկ,— կխորհեր,— քանի որ էֆենտին մինչև 150 ոսկի տալու տրամադիր է։ Հարյուր ոսկին իրեն վաստակցուցած կըլլամ, և անշուշտ այդ հարյուր ոսկիեն ինձի մեծկակ բաժին մը կհանե»։

Եվ այս մտածմունքով ուզեց անոնց հետին վարանումներուն առաջքը առնել։

— Այդպես ահա. ես իբրև ձեր բարեկամը կխոսիմ և ոչ թե Ղուկաս էֆենտիի կողմե։ Այսինքն իբրև աղքատներու դատին պաշտպան և ոչ թե հարուստներու փաստաբան։ Իրավ է, որ էֆենտին բացարձակապես ըսավ, թե 30 ոսկիեն ավելի դրամ չուզեր տալ, սակայն ես հանձն կառնեմ զինքը համոզելու, աղաչելու, պաղատելու, և եթե պետք ըլլա, ոտքերը իյնալու, որպեսզի այդ գումարը բարձրացնե մինչև 40-ի և գուցե 50 ոսկիի. ալ ասոր ըսելիք չմնար, 50 ոսկին փառավոր դրամօժիտ մըն է, այդքան գումարով կրնաս նույնիսկ պարկեշտ արհեստավորի մը հետ ամուսնանալ, տուն ալ կազմել, պատվով ապրիլ, ես ձեզի կխոստանամ նույնիսկ հարմար մեկը գտնել, որ հավանի զավակդ ալ ընդունելու... շատ իրավունք ունիք 30 ոսկիով չգոհանալու, հարուստ մարդ է, թող քիչ մը ավելի տա, եթե բարիք ընել կուզե... դուք անհոգ եղեք, ես ամեն բան կընեմ։ Անկե 50 ոսկի կբրցնեմ։ Հիմա, աղջիկս, թուղթ, գրիչ ու մելան բեր ու աս գրելիքնիս գրենք ու դուն ալ ստորագրե, լմընցնենք, որովհետև կվախնամ, որ էֆենտին միտքը կփոխե, պետք է բարի տրամադրությունեն օգուտ քաղել։ Հայտե, աղջիկս, սա թուղթ գրիչը բեր, որովհետև շատ ժամանակ չունիմ, ուրիշ գործեր ալ կան տեսնելիք...

— Ուրեմն պարապ տեղը հոս ժամավաճառ մի ըլլաք,— պա-

տասխանեց Շուշանիկ հանդարտությամբ,— որովհետև ես ոչ թուղթ մը կստորագրեմ և ոչ ալ այդպիսի շնչին գումարներ կընդունիմ։

— Ի՞նչ կըսես, աղջիկս, նորե՞ն խելքիդ եկավ,— գոչեց քահանան։

— Առնվազն հինգ հարյուր ոսկի կվճարե քու Ղուկաս էֆենտիդ, եթե կուզե որ մեր դատեն հրաժարինք,— ըսավ Շուշանիկ.— ատկե մեկ ոսկի մը պակաս չեմ ընդունիր։

— Կտեսնամ, որ դու խոսածդ չես գիտեր կոր, կերևա որ շարամիտ մարդիկ ձեզի գեշ խրատներ տվեր են, մեղք որ այսչափ ատեն պարապ տեղը ձեզի հորդոր կարդացի։

— Չարամիտ, բարեմիտ մարդ չկա մեջտեղը, բռնաբարյալ աղջիկ մը կա, որ իր իրավունքը կպահանջե և հինգ հարյուր ոսկին ալ իմ խեղճ զավակիս արդար իրավունքն է։

Շուշանիկ այս խոսքերը արտասանելով՝ ոտքի ելավ, մանկիկը առավ և սենյակեն դուրս ելավ։

Տ. Կիրակոս, որ այնքան վստահ էր իր հաջողության վրա, սկսավ շփոթիլ։ Այս ինչ համառ ու տարօրինակ մարդոց հանդիպած էր, 50 ոսկի պիտի առնեին ու տակավին գոհ չէին ըլլար։ Ու քահանան հուսահատորեն գլուխը կօրորեր։

— Ծիկին, գոնե դուք խոսք հասկցուցեք ձեր աղջկան,— ըսավ Տ. Կիրակոս, երբ առանձին մնաց էլպիս հանըմին հետ.— ձեր աղջիկը դեռ երիտասարդ է, խելքը չհասնիր կոր, գացեք, խրատեցեք որ խենթություն չընե, ասիկա անակնկալ բախտ մըն է, որ երկինքեն կիյնա կոր. եթե 50 ոսկին չընդունիք ու ելլեք նորեն խնդիրներ հարուցանեք, ետքը շատ գեշ հետևանքներ կունենա...

— Ես չեմ խառնվիր այս գործին,— պատասխանեց էլպիս,— հիմակվան աղջիկները իրենց մոր խելքով չեն կառավարվիր և խոսք ալ մտիկ չեն ըներ, ինչ որ ըսեմ՝ պարապ է։

Նույն միջոցին դուռը բացվեցավ և Սերգիս ներս մտավ։ Տ. Կիրակոս մտատանջությամբ նորեկին նայեցավ և իսկույն ճանչցավ, որ դուռը բացող երիտասարդն էր։

— Տեր պապա, քիչ մըն ալ ինծի հետ տեսնվե նայինք,— ըսավ Սերգիս. աթոռ մը առնելով ու նստելով։

— Դուն ո՞վ ես...

— Ես տիկինին եղբայրը և Շուշանիկին ալ մորեղբայրն եմ։

Քահանան այս անակնկալ միջամտութենեն բնավ չսխորժեցավ։ Կիներուն հետ գոնե համաձայնություն մը գոյացնելու հույս ուներ, սակայն այս երիտասարդը, որ հանկարծ երևան կելլար, բնավ հուսատու երևույթ մը չուներ, այսուհանդերձ ուզեց սիրալիր կերպով ընդունիլ զայն։

— Օ՜, շատ լավ ուրեմն,— ըսավ,— ավելի աղեկ, հիմա կըրնանք էրիկմարդճա տեսնվիլ և գուցե իրարու խոսք ավելի դյուրավ հասկնալ։

— Ես ալ ճիշտ անոր համար եկա,— պատասխանեց Սերգիս։

Տ. Կիրակոս ծխախոտի տուփը հանեց, սիկարեթ մը պլորեց և սկսավ երկարորեն կրկնել, ինչ որ քիչ մը առաջ ըսած էր երկու կիներուն, այսինքն թե՝ Ղուկաս էֆենտի հարուստ և զորավոր մարդ մըն էր, որուն հետ կարելի չէր գլուխ ելլել, թե լավագույն միջոց է հետը անուշ երթալ և կարելի եղածին չափ մեծկակ գումար մը բրցնել և թե այդ գումարն ալ 50 ոսկիեն ավելի չէր կրնար ըլլալ։

— Բայց վերջին ծառայություն մըն ալ կրնամ ընել անձնվիրաբար,— հայտարարեց քահանան իր երկար բացատրությունները տալե ետքը.— այն է՝ ամեն ճիգս կթափեմ տասը ոսկի մըն ալ ավելի բրցնելու, այսինքն՝ 60 ոսկի, ալ ասոր ըսելիք չմնար։

— Պարապ հոգնություն հանձն մի առնեք,— պատասխանեց Սերգիս,— հասկցանք, որ անկարելի է համաձայնիլ, մենք մեր գիտցածը կընենք, թող Ղուկաս էֆենտին ալ իր գիտցածը ընե։

— Բայց, զավակս, քու խելքդ չի հասնիր կոր, դուն դեռ անփորձ երիտասարդ մըն ես, հեռուն չես տեսնար կոր,— գոչեց քահանան հուսահատ ճիգով մը, տեսնելով որ ակնկալած վարձատրությունը ձեռքեն փախչելու վրա է։

— Երկար խոսք չեմ ուզեր ու կաղաչեմ որ դուրս ելլես ու մեզ հանգիստ թողուս. թող Ղուկաս էֆենտիդ չկարծե որ խեղճ, անօգնական աղջկան մը հետ է գործը, այլ ամեն բան աչքը առած մարդոց հետ. ահա ասանկ բարև ըրե քու էֆենտիդ։

— Բայց օրհնած, ի՞նչ է ձեր պահանջը, գոնե ան ըսեք, որ ես ալ վերջնական խոսք մը տանիմ... ես այս գործին մեջ պարզ միջնորդ մըն եմ, ինչո՞ւ ինծի ծանր խոսքեր կընեք. ես միայն ձեր բարիքը կմտածեմ։

— Լավ ուրեմն,— Ղուկաս էֆենտիին կըսես, որ հինգ հարյուր ոսկիեն ոսկի մը պակաս չեն ընդունիր կոր, հասկցա՞ր...

Տ. Կիրակոս երկու ձեռքերը դեպի վեր բարձրացուց և գլուխը հուսահատորեն ճոճեց, տեսնելով, որ ուրիշ ճար չի կար, ոտքի ելավ ու «մնաք բարև» ըսելով մեկնեցավ։

Գլխիկոր ուղղվեցավ դեպի թռամվայի ճամփան։

Ինչ հույսերով եկած էր այդ տունը և ինչ սրտաբեկ կվերադառնար հոնկն։ Ոսկեզօծ երազը, զոր պահ մը ունեցեր էր էլպիս հանրմի փոքրիկ խուցին մեջ՝ հանկարծ կցնդեր, գործը չէր կրցած հաստատել և լիաբուռն ոսկիները, զոր կկարծեր ձեռք ձգել, խույս տված էին իրմե։ Ասկե զատ, խնդիրը Ղուկաս էֆենտիին փափաքածին պես կարգադրելով՝ Տ. Կիրակոս ոչ թե միայն կհոտաար նյութական կարևոր նվեր մը ստանալ, այլ միանգամայն մեծ էֆենտիի մը աչքը մտնել, անոր կերպով մը գաղտնեկիցը ըլլալ, ինչ որ ապագային համար իրեն կրնար նորանոր բարիքներ ընձեռել։

— Եթե Ղուկաս էֆենտիի պես պաշտպան մը ունենայի ետևես, ա՛լ ի՞նչ բանե պիտի վախնայի,— կմտածեր հիմա տխրորեն։

Ինք, խեղճ ողորմելի քահանա մը, միշտ կկեղծվեր, կհարստահարվեր մյուս քահանաներեն, որոնք մեջ մեկ հզոր պաշտպաններ ունեին ու հարուստ ննջեցյալներե, կնունքներե և հարսանիքներե եկած դրամները առատորեն կերթային ավագերեցին և ուրիշ քահանաներու գրպանները, հազիվ թե կտոր մը փշրանք իրեն բաժին մնալով։ Ու հիմա որ փոխարինության ժամը վերջապես հնչած կենթադրեր, ահա նորեն կիյնար անպաշտպան ու արհամարհված քահանայի իր խեղճության մեջ։

— Իրիկունը ի՞նչ երեսով պիտի ներկայանամ էֆենտիին,— կխորհեր ինքնիրեն Թաքսիմի զորանոցն ի վար քալելով, որովհետև չէր ուզած նոյնիսկ հանրակառք նստիր, իր կրած ձախողանքեն ետք։

Եվ սակայն իրիկունը ճամփա ելավ դեպի էֆենտիին տունը։ Խոստացած էր երթալ իր բանակցությանց արդյունքը հաղորդելու և կվախնար, որ երեսը ծածկելով իր վրա կհրավիրեր վաճառականին բարկությունը։

— Էֆենտին հոս է,— ըսավ ծառան քահանային, դուռը բանալով։

Եվ մինչ Տ. Կիրակոս կհառաջանար դեպի սանդուխ, ծառան գոչեց ետևեն.

— Տե՛ր պապա, խսիրը չե՞ս տեսնար կոր, ոտքերդ չորքե՞ս, ատ ոտքերո՞վ վեր պիտի ելլաս։

Տ. Կիրակոս ետ դարձավ. խոնարհ և ամչկոտ, ու ծառային հրամանը կատարեց։ Հետո վեր ելավ գորգապատ սանդուխեն, զգուշավոր կերպով կոխելով աստիճաններուն վրա, ավելի պատկառոտ՝ քան երբ խորանին վրա կելլեր պատարագ մատուցանելու համար։

Վերջապես հասավ մեծ սրահին դռան առջև, ուր առաջնորդած էր զինքը ծառան՝ որ դուռը բացավ և ըսավ.

— Ներս մտիր։

Քահանան՝ վեհերոտ մտավ սենյակեն ներս, ուր Ղուկաս էֆենտի թիկնաթոռի մը վրա նստած լրագիր կկարդար, սիկարեթ մը ծխելով։

Վաճառականը քահանան տեսնելով ժպտուն և ուրախ դեմք մը առավ և գոչեց.

— Վա՜յ, դուն ես, տեր պապա, եկուր նայինք, ես ալ քեզի կսպասեի կոր։— Հետո ծառային դառնալով.

— Հակոբ,— ըսավ,— մեզի երկու հատ խահվե բեր։

Քահանան այս սիրալիր ընդունելութենեն ա՛լ ավելի շփոթած. ոտքի վրա կեցեր էր, չհամարձակվելով նստիլ։

— Եկուր, սանկ քովս նստե տեսնենք, տեր պապա,— շարունակեց վաճառականն ուրախ դեմքով։

Տ. Կիրակոս վերջապես թիկնաթոռի մը մեջ տեղավորվեցավ։ Ղուկաս էֆենտի գրպանեն սիկարեթի տուփը հանեց և հատ մը երկարեց իր հյուրին։

— Իշալլահ տղան տարիր տեղը տվիր,— ըսավ։

— Այո՛, էֆենտիս, տարի մորը հանձնեցի,— պատասխանեց քահանան։

— Աղեկ, աղեկ, շատ շնորհակալ եմ, դուն շենք շնորհք, քանի-բուն, խելացի քահանայի մը կնմանիս կոր. շատո՞նց է, որ մեր եկեղեցին կգտնվիս։

— Քանի մը տարի կա, էֆենտիս։

— Զարմանալի բան, մինչև հիմա ուշադրություն չէի դրած, անունդ ի՞նչ էր...

— Կիրակոս...

— Շատ աղեկ, քեզի պես համեստ ու պարկեշտ քահանաները կսիրեմ։

— Շատ ապրիք, էֆենտիս, շնորհակալ եմ։

— Ըսածներս տեղն ի տեղոք կատարեցի՞ր... սակարկությունը քանիի՞ կապեցիր, եթե հարյուրեն պակաս է, քեզի ազվոր նվեր մը կա։

Քահանան՝ գլուխը ծռած՝ չէր համարձակեր պատասխանել։

— Խոսե տեսնանք, Տեր պապա,— պնդեց վաճառականը,— քանի՞ կապեցիր։

— Էֆենտի,— կակազեց մարդը,— անոնց միտքը շատ վերեն է...

— Ինչ, հարյուր հիսուն ոսկիին չե՞ն հավնիր կոր։

— Հինգ հարյուր ոսկի կուզեն կոր...

— Հի՞նգ հարյուր ոսկի, հի՞նգ հարյուր ոսկի,— մռնչեց Ղուկաս Էֆենտի, տեղեն վեր ցատկելով,— վա՜յ թշվառականներ, ըսի՞ր որ ամենուն ալ խերը կանիծեմ, եթե զիս բարկացնելու ելլեն։

— Ըսի, Էֆենտիս, շատ խոսեցա, շատ խրատեցի, օգուտ չըրավ։

— Մա՞յրն էր չհավնողը, չէ նե աղջիկը,— հարցուց վաճառականը։

— Երկուքն ալ, Էֆենտիս, բայց մանավանդ աղջիկը բնա՞վ տեղի տալու միտք չունի, մայրն ալ շատ չխառնվիր կոր, ասկե զատ պինդ գլուխ երիտասարդ մըն ալ կա, որ բնավ խոսք չհասկնար կոր։

— Երիտասա՞րդ մը, այդ երիտասարդը ո՞վ է — հարցուց Ղուկաս Էֆենտի, որ կկարծեր, թե գործը միմիայն կիներու հետ է։

— Շուշանիկի մորեղբայրն է եղեր,— պատասխանեց քահանան։

— Մորեղբա՞յր մի, ատ ո՞ւրկե մեջտեղ ելավ։

— Իրավ որ, Էֆենտիս, ես չեմ գիտեր, առաջին անգամն է, որ այդ տունը կերթայի, միայն թե այդ երիտասարդը համառ մեկու մը տպավորությունը ըրավ վրաս, նույնիսկ սպառնացավ, թե ինք ամեն բան պիտի ընե իր քրոջ աղջկան շահը պաշտպանելու համար։

Վաճառականը սկսավ մտածել, սակարկության անհաջողությունը, նոր դերակատարներու, մանավանդ էրիկմարդ մեջտեղ ելլելը, վերջապես առկախ մնացած այդ գայթակղությունը զինքը չափազանց կնեղեին։

Ու հանկարծ իր բարկությունը թափեց խեղճ քահանային գլխուն։

— Ինչ անճարակ մարդ ես եղեր պե,— գոչեց մեկեն,— սա պզտիկ գործը չկրցար հաջողեցնել, արդեն քահանա չե՞ք մի, ամենքդ ալ ոչինչ մարդիկ եք, խելացի մարդը արդեն քահանա չըլլար որ...

Տ. Կիրակոս, առանց պատասխանելու, հանցավորի պես առջին կնայեր։

— Ատ մորեղբայրը ո՞ւրկե բուսավ, ատոնք տուներնին էրիկմարդ չունեին, քեզի իրաղ մը ըրած չըլլան տե՝ դուն ալ շաշխրեի պես հավատաս։

— Իրավ որ, Էֆենտիս, ես տեղեկություն չունիմ, ինք ըսավ որ Շուշանիկի մորեղբայրն եմ, ես ալ հավատացի, ալ իրավցնե՞ մորեղբայրն է, սո՞ւտ խոսեցավ, չեմ գիտեր։

— Էյ, ի՞նչ ըսավ այդ մորեղբայր օլաճախը, սանկ խոսքերը աղեկ մը միտքդ բեր տեսնիմ։

— Էֆենտիս, երբ մինչև 150 ոսկիի կապել ուզեցի խնդիրը, «պարապ, հոգնություն հանձն մի առներ, ըսավ այդ երիտասարդը, մենք մեր գիտցածը կընենք, թող Ղուկաս Էֆենտին ալ իր գիտցածը ընե»։ Հետո, երբ ես նորեն համոզել փորձեցի, ավելցուց. «թող Ղուկաս Էֆենտին չկարծե, որ խեղճ, անօգնական աղջկան մը հետ է գործը, այլ ամեն բան աչքը առած մարդոց հետ, ահա ասանկ բարև ըրե անոր»։ Ահավասիկ, Էֆենտիս, իր ըսած խոսքերը, գրեթե բառ առ բառ։ Երբ տեսա, որ համոզվելու միտք չունին, ես ալ մընաք բարով ըսի ու առի քալեցի։

Ղուկաս Էֆենտի մտիկ ընելով հանդերձ Տ. Կիրակոսի բացատրությունները, կշարունակեր սենյակին մեջ վեր վար պտտիլ, ինչպես կըներ միշտ, երբ մտատանջության մը մատնված ըլլար։ Վերջապես որոշում մը տվավ։

— Ինծի նայե, տեր պապա,— ըսավ,— դուն նորեն վաղը առտու կանուխ այդ կնիկներուն տունը կերթաս, մորեղբայր ըսածդ կտեսնաս և իրեն կըսես, որ գա իմ գրասենյակս հանդիպի։ Մեյ մը ես Փետը տեսնվիմ, նայիմ միտքը ի՞նչ է։

— Շատ աղեկ, Էֆենտիս,— պատասխանեց քահանան։

Հետո, տեսնելով որ գործը վերջնականապես ձեռքեն կփախչի, վերջին փորձ մը ընել ուզեց։

— Եթե կրարեհաճիք և եթե անպատեհություն մը չեք տեսնար,— ավելցուց,— ձեր կողմեն նոր բանակցություն մը ընեմ, գուցե կհաջողիմ զիրենք համոզել, եթե հավանիք ձեր ըսած գումարեն քիչ մը ավելի բան վճարելու, օրինակի համար սանկ երկու հարյուր ոսկի մը...

— Չէ՛, չէ՛,— ընդմիջեց Էֆենտին սրտնեղ ձևով մը,— հասկցա որ քու ընելիք գործդ չէ ասիկա։ Փոխանակ խնդիրը կարգադրելու, կելլաս ավելի կխանգարես, դուն միմիայն գնա ատ երիտասարդը գտիր և ըսե, որ անպատճառ գա զիս գտնա, բայց ոչ թե տունս,

այլ Պոլիս, գրասենյակս, հասկցա՞ր... քու կողմեդ պարապ խոսքեր չավելցնես, հա։

— Անհոգ եղիր, ձեր հրամանները կետ առ կետ կկատարեմ,— պատասխանեց ամենայն խոհեմությամբ։

Եվ ոտքի ելլելով՝ ակնածանքով բարևեց էֆենտին և դուրս ելավ սենյակին։

Հետևյալ առտու կանուխ փութաց էլպիս հանըմի տունը, սակայն իրեն ըսին, որ «մոլեղբայրը» դուրս ելած է։

— Գալուն պես ըսեք իրեն, որ երթա Ղուկաս էֆենտին տեսնա, Պոլիս, իր գրասենյակը,— պատվիրեց քահանան։

— Շատ աղեկ, հիմա ուր է նե կուգա,— պատասխանեց Շուշանիկի մայրը։

— Ես երեկ երկար բարակ էֆենտիին հետ խոսեցա,— ավելցուց Տ. Կիրակոս,— կակղեցուցի, ձեր վիճակը պատմեցի, վերջապես ձեռքես եկածը ըրի, որպեսզի պետք եղած օգնությունը չխնայե ձեզի, ինքն ալ խոստացավ և վստահ եմ, որ երբոր ձեր եղբայրը երթա հետը տեսնվի, շուտով պիտի համաձայնին և խնդիրը ձեր ուզածին պես լմննա, միայն թե հարկավ զիս չեք մոռնար և իմ աշխատությունս ու հոգնությունս կվարձատրեք... Ձեր գործը հաջողցնելու համար պարզապես կռիվ ըրի Ղուկաս էֆենտիի հետ, գիտցած ըլլաք։

— Հոգ մի ըներ, տեր հայր, մենք աղքատ ենք, բայց խիղճ ունինք, թող ըսածիդ պես խնդիրը կարգադրվի և մենք մեր պարտականությունը կկատարենք։

Ինչպես հայտնի է, քահանան անպատկառորեն կատեր իր մատուցած երեսակայական ծառայության պատմությամբը, բայց ինչ ըներ խեղճ մարդը, Ղուկաս էֆենտիեն բոլորովին հույսը կտրած՝ գոնե ասդիի կողմեն նյութական վարձք մը ձեռք ձգել։

— Ցմոռնամ ըսելու, որ,— շարունակեց,— ձեր եղբորը հատկապես խրատ ավեք էֆենտիին հետ խիստ չխոսելու, որպեսզի գործը չխանգարվի, թող կրցածին չափ անոր ջուրին երթա և շատ ալ խստապահանջ չըլլա։

— Իրավ որ իմ խելքս ատանկ բաներու չհասնիր,— պատասխանեց էլպիս հանըմ,— ուղբարս անանկ մեկն է, որ իր գլխուն համեմատ կգործե, մարդու խոսք մտիկ չըներ։

— Գեշ բան, գեշ բան,— մրմնջեց Տ. Կիրակոս,— Ղուկաս էֆենտիի պես մեծ մարդոց հետ աղեկ երթալու է...

Հետո, որոշեց սպասել, որպեսզի ինք անձամբ պետք եղած խորհուրդները տա երիտասարդին։

Կես ժամ ետքը Սերգիս եկավ։

— Նորե՞ն եկեր ես, տեր պապա,— գոչեց՝ քահանան տեսնելով։

— Այո, օրհնած, եկա ավետիս մը տալու։

— Ի՞նչ կա որ...

— Ղուկաս էֆենտին այսօր անպատճառ ձեզ տեսնել կուզե կոր, Պոլիս, իր գրասենյակը։

— Զիս ի՞նչ պիտի ընե։

— Կերևա, որ սա խնդրին կարգադրությանը համար պիտի համաձայնի, թեև ինք ատանկ բան մը չըսավ, բայց ես իր խոսքերեն այնպես հասկցա։

— Աղեկ, աղեկ, կերթանք, կտեսնվինք,— պատասխանեց երիտասարդը խոժոռ դեմքով մը։

— Միայն թե, զավակս,— վրա բերավ քահանան,— կրցածիդ չափ անույշ վարվե հետը և նայե, որ վեր վար բանի մը կապես ու գործը կարգադրես լմննա, որովհետև այդ մարդը բարկացնելու չի զար։

— Ես գիտեմ ինչպես վարվելու է այդ տեսակ թշվառական սրիկաներուն հետ, դուն բնավ հոգ մի ըներ,— գոչեց Սերգիս, որ Ղուկաս էֆենտիի այս հրավերեն գուշակած էր վաճառականին տադնապը։

— Ատ ի՞նչ խոսքեր են, օրհնած,— գոչեց Տ. Կիրակոս դողահար,— միթե կարելի՞ բան է Ղուկաս էֆենտիի պես հարուստ, ազդեցիկ, պատվավոր վաճառականի մը մասին ատանկ նախատական խոսքեր ընել։

— Պատվավոր մարդը անմեղ աղջիկներ չբռնաբարեր ու ետքն ալ զավակովը միասին երեսի վրա չձգեր,— պատասխանեց Սերգիս խստությամբ։

Քահանան տեսնելով, որ հաշտարար խորհուրդները ոևէ ազդեցություն չպիտի ունենային, անօգուտ համարեց խոսքը ավելի երկարել և մեկնեցավ։

Երիտասարդը չափազանց ուրախ էր Ղուկաս էֆենտիի կողմե եկած հրավերին համար։

— Այս մարդը կվախնա կոր,— մտածեց ինքնիրեն,— քանի որ 150 ոսկին տվավ՝ 500-ն ալ պիտի տա, միայն թե խնդիրը մը

կա։ Գարեգինի ու Սաթենիկի մասին անգամ մը գացի հետը տեսնելվեցա. անշուշտ զիս տեսնելուն պիտի հիշե այդ այցելությունս և գուցե ինքնությանս մասին կասկածի, հարկ է խոհեմությամբ շարժիլ...

Խոհեմությունը սակայն Սերգիսի գլխավոր առաքինությունը չէր, ընդհակառակը հախուռն ու համարձակ գործունեությունն էր իր սովորական վարվելակերպը։

Ինքզինք ծանրեն ծախելու համար, անմիջապես չգնաց Ղուկաս էֆենտիի քով, նախ իր գործատեղին հանդիպեցավ և մինչև կեսօր հոն մնաց։ Կեսօրեն ետք միայն անցավ Պոլիս և ուղղվեցավ մեր վաճառականին գրասենյակը։

— Էֆենտին հո՞ս է,— հարցուց գրասենյակին ծառային։

— Այո։

— Ըսեք իրեն, որ Փանկալթիեն մեկը եկած է, զինքը տեսնել կուզե։

— Շատ աղեկ, հոս սպասեցեք քիչ մը։

Վայրկյանե մը ծառան վերադարձավ։

— Հրամմեցեք, էֆենտին ձեզի կսպասե,— ըսավ։

Սերգիս ծառային ընկերությամբ մտավ այն գրասենյակը, ուր Ղուկաս էֆենտի իր սեղանին առջև նստած կսպասեր։

— Բարև ձեզ,— ըսավ երիտասարդը հնչուն շեշտով մը։

— Բարև,— պատասխանեց վաճառականը, գլուխը վեր առնելով ու պիշ պիշ նայելով նորեկին։

Առաջին ակնարկեն իսկ ճանչցավ զայն և անմիջապես ըսավ.

— Մյուսյու, կարծեմ թե սխալմունք մը կա, ես Փանկալթիեն եկող մարդուն համար ըսի որ ներս հրամցնեն։

Եվ ծառային դառնալով գոչեց.

— Ծո՛, ես քեզի ի՞նչ ըսի։

Բայց Սերգիս, առանց ծառային խոսք ձգելու միջամտեց.

— Ղուկաս էֆենտի, սխալմունք չկա, Փանկալթիեն եկող մարդը ես էի, ծառային հետ ձեզի լուր ղրկեցի։

— Բայց իմ սպասածս ուրիշ մարդ էր,— պնդեց վաճառականը, որ խիստ լավ կհիշեր թե այդ երիտասարդը իրեն ներկայացած էր իբրև Գարեգինի և Սաթենիկի բարեկամը, բայց ոչ երբեք Շուշանիկի ազգականը։

— Շուշանիկի մորեղբայրը չէի՞ք սպասեր,— ըսավ Սերգիս թեթև ժպիտով մը։

— Է, դուք անոր մորեղբա՞յրն եք։

— Այսինքն ես այն մարդն եմ, զոր ուզած էիք տեսնել և լուր ղրկած էիք Տ. Կիրակոսի հետ։

— Այդ տեսակ մեջեմեջ խոսքերեն բան չեմ հասկնար, կամ բացե ի բաց բացատրե քու ով ըլլալդ և կամ քաշվե գնա, հոս գործատեղի է և պարապ խոսքերու չեմ կրնար ժամավաճառ ըլլալ։

— Ես ալ արդեն պարապ խոսքերով ժամանակ անցնել չեմ սիրեր, որովհետև անգլիացիներու մեջ մեծցած եմ,— պատասխանեց Սերգիս և առանց հրավերի սպասելու, աթոռ մը առնելով նըստավ, հետո իր խոսքը շարունակեց։

— Հետևաբար Ղուկաս էֆենտի, մեկ քանի բառով բացատրեմ ամեն բան։ Տ. Կիրակոս, երբոր եկավ տիկին Էլպիսի քով և ձեր կողմեն առաջարկեց 150 ոսկի վճարելու իր բռնաբարած աղջկան ու զավակին, ես ալ հոն էի և որովհետև այդ խեղճ ընտանիքին մեկ պաշտպանն եմ, ուզեցի միջամտել և ասոր քահանայի «մորեղբայր» կոչածը բուն իսկ ես եմ...

— Այսինքն կեղծ եղբայր մը,— պատասխանեց Ղուկաս էֆենտի.— արդեն կկասկածեի կոր։

— Կեղծ կամ ոչ, մենք որոշած ենք այդ ընտանիքին պաշտպան կանգնիլ ու թող չտալ որ զոհ երթան։

— Դո՞ւք, ուրեմն մեկ քանի հատ «մորեղբայր» կան մեջտեղ,— ըսավ վաճառականը ծաղրածու ձևով մը։

— Ղուկաս էֆենտի,— ըսավ երիտասարդը դաժան կերպով մը,— մեջտեղ երեսի վրա մնացած ծեր կին մը, բռնաբարված ու լքված մանկամարդ աղջիկ մը և խեղճ նորածին մը կան և խնդիրը այդ թշվառներու շուրջը կդառնա, թշվառներ, որոնց պատասխանատուն դուք եք, հետևաբար կխնդրեմ, որ փոխանակ ծաղրական կերպով խոսելու, խիստ լրջությամբ տեսնվիք հետս։

Ղուկաս էֆենտի, որ ա՛լ հասկցած էր, թե երիտասարդը ոևէ ազգականական կապ չուներ Շուշանիկի հետ, բնավ չհուզվեցավ Սերգիսի այս կշտամբանքներեն և նույն ծաղրածու ձևով շարունակեց.

— Բարեկամ, կերևա որ դուն բան գործ չունիս ու այսպես հոս ու հոն՝ մարդիկ կփնտռես, անոնց պաշտպան կանգնելու համար։ Գիտե՞ս, ուրիշ մարդ մը և կին մը պաշտպանելու համար... և բերնիդ փայն ալ առիր, բայց կերևա, որ ատիկա բավական դաս մը չէ եղեր քեզի ու նորեն վազ չես անցեր այդ պաշտպանի դերեդ...

գոնե ծայրը շահ մը կա՞... եկուր քեզի ուրիշ գործ մը գտնանք տե, ատանկ պարապ գործերեն հրաժարե...

Երիտասարդը վաճառականին այս խոսքերեն թեև բարկացավ, սակայն կրցավ ինքզինքը զսպել և ամենայն պաղարյունությամբ պատասխանեց.

— Շնորհակալ եմ, Ղուկաս էֆենտի, ես ձեր կարծածին պես անգործ չեմ, շատ լավ պաշտոն մը ունիմ և այնպիսի հաստատության մը մեջ, որ դուք ոևէ կերպով չեք կրնար վնասել ինծի։ Եթե այդ կիներուն վիճակովը կհետաքրքրվիմ, պարզապես կարեկցութենե մղված ըլլալուս համար է, որովհետև մոտեն կճանչնամ իրենց վիճակը, ուստի նորեն կկրկնեմ՝ մեկ կողմ դնենք ունայն խոսքերը և իբրև լուրջ մարդիկ իրարու հետ տեսնվինք։

— Բայց դուն ոևէ հանգամանք չունիս այդ խնդրին խառնվելու... արդեն խնդիր ալ չկա,— փութաց ճշտելու Ղուկաս էֆենտի,— խեղճ տղա մը բերեր մեր դռան առջև ձգեր էին, հետը նամակով մը, իմ ալ խղճիս դիպավ, ուզեցի դրամական օգնություն ընել, պարզապես բարեգործություն մը, և ասոր համար քահանան իրենց տունը ղրկեցի, բայց հիմա կտեսնամ կոր, որ պարզապես քիթես բռնել կուզեք կոր, այնպես մը ցույց տալով, որ իբր թե այդ նորածինը իմ հարազատ զավակս է, թե մայրը ես գլխե հանած եմ և այլն։ Ասոնք անվայել բաներ են, բարեկամ, և այդ տեսակ դրամաշորթություններ ընողներուն համար մասնավոր պատիժներ ալ կան և բավական ծանր, ուստի ատոնք քեզի հասկցնելե ետքը, հիմա ահավասիկ իմ վերջին խոսքը. եթե իբրև զուտ ողորմություն կընդունին, լավ, իսկ եթե կշարունակեն իբրև իրենց իրավունքը պահանջներ ընել, տասը փարա չեմ տար, թող գիտցած ըլլան, թե իրենք և թե իրենց պաշտպանները...

Երիտասարդը վաճառականին բոլոր այս մարտահրավեր խոսքերը մտիկ ըրավ անայլայլ, հետո ըսավ.

— Ղուկաս էֆենտի, ես իբրև բարեկամ եկած եմ ձեր մոտ և կուզեմ որ իբրև բարեկամ մեկնիմ, որովհետև եթե խնդիրը հակառակության հանդի, այն ատեն ես տեղի տալու միտք չունիմ բնավ և ինծի հետ եղողներն ալ նույնպես որոշած են ամեն զոհողություն ընել այդ թշվառ աղջկան պաշտպանության համար, և որովհետև դուք ալ համառ մեկը կերևաք կոր, շատ բնական է, որ մեր այս հակառակությունը շատ ծանր հետևանքներ կրնա ունենալ. ուստի նորեն կկրկնեմ, երկուքնուս շահուն համար, լավ է որ խնդիրը խաղաղությամբ կարգադրենք։

— Ինծի նայե, կարգադրելիք խնդիր չի կա մեջտեղը,— ըսավ Ղուկաս էֆենտի կտրուկ շեշտով մը,— բարեգործություն մը ընել ուզեցի և գլխուս պելա կբանաք կոր. ես ի՞նչ պետք ունիմ մեկուն մեկալին փիճը նայելու... եթե քիչ մը դրամ տալ ուզեցի նե՝ ան ալ պարզապես խղճիս դիպավ, անոր համար էր. արդեն եթե ինծի մնար, գուցե չէի ըներ, բայց կինս շատ պնդեց, ես ալ չդիմացա, ահա եղելությունը, ուստի կաղաչեմ, խոսքը կարճ կապենք, հոս գործի տեղ է, և ամեն մարդ զբաղում ունի, դուն ալ, քանի որ կըսես թե գործի տեր ես, ել գործիդ գնա ու ա՛լ չխոսինք ասոր վրա։

— Նախ ըսեմ, որ ես ինքնաբերաբար չեկա, այլ դուք տերտերը ղրկեցիք ու խնդրեցիք, որ գամ։ Հետո, Ղուկաս էֆենտի, լավ մտիկ ըրեք, մենք թեթևորեն ճամփա չենք ելած և ըրածնիս գիտենք։ Դուք որչափ ալ ուրանաք թե այդ զավակը ձերը չէ, մենք կրնանք այդ մասին վկաներ հանել ձեր դեմը. նախ՝ կա աղջկան վկայությունը, հետո Միքայել աղան, զոր խոստովանցուցած և իր խոստովանանքն ալ քանի մը անձերու ներկայության ստորագրել տված ենք. հետո կա նաև Վառվառին վկայությունը, որուն տունը կատարած եք ձեր բռնաբարումը. ասկե զատ նույնիսկ փնտռեցինք գտանք այն կառապանը, որ ձեզի մինչև Պոն Մառշեի քով առաջնորդած է այդ երեքշաբթի օրը. կտեսնաք, որ ամեն բան տեղն ի տեղոք գիտեմ կոր, և պետք եղած ատենն ալ կրնամ ապացուցանել, որովհետև բոլոր վկաները ձեռքիս մեջն են...

Սերգիս լռեց։ Վաճառականը այս անակնկալ հայտնություններեն շփոթած էր։ Հայտնի կերևար, որ երիտասարդը չէր ստեր, քանի որ իր ամեն ըսածները բացարձակ ճշմարտություններ էին և այդ պարագային վաճառականին դիրքը շատ կխախտեր. ուստի խոհեմություն համարեց լեզուն փոխել։

— Աղեկ,— ըսավ,— ենթադրենք որ հաջողած եք ինծի գեմ այդպես սուտ ու սխալ վկաներ ճարել և ես ալ իբրև ընտանիքի տեր, պատվավոր մարդ, չուզելով գայթակղության տեղի տալ, ձեզի հետ պիտի համաձայնիմ։ Ի՞նչ է ձեր պահանջումը...

— Տ. Կիրակոսը արդեն ձեզի իմացուցած ըլլալու է էլպիս հանրմի և օր. Շուշանիկի ըսածները,— պատասխանեց Երիտասարդը։

— Ի՞նչ, հինգ հարյուր ոսկի՞ կուզեք որ տամ, ո՞ւր տեսնված է ատանկ բան, զարմանալի բան...

— Կարծեմ թե, խեղճերուն պահանջումը չափազանց չէ, պետք

է մտածել, որ այդ գումարով թե մայրը պիտի ապրի և թե զավակը մեծնա ու կրթվի։

— Ինծի ի՞նչ...

— Ատիկա Վառվառին տունը երթալե առաջ մտածելու էիք։

Վաճառականը խոժոռ նայվածք մը ուղղեց երիտասարդին. իր հարուստի ու ազդեցիկ մարդու դիրքին հասնելեն ի վեր առաջին անգամն էր, որ մեկը կհամարձակեր իրեն դեմ այսպես անվերապահորեն խոսելու և Սերգիսի հանդգնությունը զինքը կշփոթեր այն աստիճան, որ չէր կրնար պետք եղածին պես իր խոսակցին բերնին չափը տալ։

Սերգիս զգաց իր դիմացինին հոգեկան վիճակը, վարանումը, որ գրեթե երկյուղի կհասներ։

— Ինծի նայե, Ղուկաս էֆենտի,— գոչեց ձայնը բարձրացնելով,— կամ այդ անմեղ աղջկան գոհացում կուտաս և կամ, վստահ եղիր, որ քու արժանավոր պատիժդ կստանաս։

— Կամաց խոսե, տղաս, քովի սենյակը մարդ կա, կիմանա,— ըսավ վաճառականը։

— Ես մեկե մը քաշվելու բան չունիմ, արդար դատ մը կպաշտպանեմ, հետևաբար կրնամ բարձրաձայն պոռալ,— գոչեց Սերգիս։

Ղուկաս էֆենտի ոտքի ելավ. սիկարեթ մը վառեց և սկսավ սենյակին մեջ վեր վար շրջիլ։ Ինչպես գիտենք, ամեն անգամ որ մտատանջություն մը ունենար կամ վերջնական որոշում մը տալու հարկին ներքև գտնվեր, այս էր բնական շարժումը։

Սերգիս իր աթոռին վրա, լռին սպասեց այդ երթևեկության արդյունքին։ Վերջապես կանգ առավ։

— Ինծի նայե,— ըսավ,— ես պատվավոր մարդ մըն եմ և մինչև հիմակ ալ միմիայն իմ պատվիս համար ապրած եմ և ասկե ետքն ալ չեմ ուզեր, ոևէ արատ մը գա անունիս, ուստի աս խնդիրը մեջտեղեն վերնալու է, կհասկընա՞ս...

— Ճիշտ ես ալ ձեզի պես կմտածեմ,— պատասխանեց երիտասարդը։

— Ուրեմն, քանի որ դուն իբրև այդ ընտանիքին պաշտպանը կմիջնորդես կոր, քեզի վերջին խոսք մը ունիմ... երեք հարյուր ոսկի կուտամ։

— Հինգ հարյուր,— պատասխանեց երիտասարդը։

— Փարա մը ավելի չի կա։

— Ուրեմն մնաք բարով։

Եվ Սերգիս ոտքի ելավ։

— Չորս հարյուր ոսկի,— գոչեց վաճառականը։

— Հինգ հարյուր,— ըսավ մյուսը անդրդվելի կերպով, միշտ մեկնելու դիրքին մեջ։

— Վաղը աղջիկը առ հոս եկուր,— պատասխանեց Ղուկաս էֆենտի։

— Շատ աղեկ,— ըսավ Սերգիս,— արդեն վստահ էի, որ ի վերջո պիտի համոզվեիք։

Հետևյալ առտու երիտասարդը վերադարձավ գրասենյակ, Շուշանիկի ընկերակցությամբ։

Բռնաբարման օրեն ի վեր Ղուկաս էֆենտի չէր տեսած իր զոհը և պահ մը հիացումով դիտեց մանկամարդ աղջիկը, որ ավելի թարմ ու գեղեցիկ կթվեր իրեն։ Սակայն Շուշանիկ շատ պաղ ու չոր վերաբերում մը ցույց տվավ իրեն հանդեպ։ Հազիվ գլխու շարժումով մը բարևած էր վաճառականը և նստած էր աթոռի մը վրա, առանց խոսք մը արտասանելու։

— Հիմա,— ըսավ Ղուկաս էֆենտի, խոսքը Սերգիսի ուղղելով,— օրիորդը ինծի թուղթ մը կստորագրե, հայտարարելով, որ ինք ոևէ հարաբերություն մը չէ ունեցած ինծի հետ և թե զավակը ուրիշ անձե մը ունեցած է և ես ալ իրեն հինգ հարյուր ոսկին կը հանձնեմ։

Երիտասարդն արդեն գուշակած էր վաճառականին կողմե ըլլալիք առաջարկը, մանավանդ որ նույն պահանջը ըրած էր Տ. Կիրակոս իր այցելության միջոցին. ուստի անմիջապես պատասխանեց.

— Թեև այդպիսի հայտարարություն բացարձակ ստություն մըն է, այսուհանդերձ խնդիրը միանգամ ընդմիշտ փակելու համար օրիորդը հանձն կառնե ստորագրել։

— Ուրեմն թուղթ պատրաստենք,— ըսավ Ղուկաս էֆենտի, որ ժամ առաջ կուզեր օձիքը ազատել։

Թուղթը շուտով պատրաստվեցավ և ստորագրվեցավ, և Ղուկաս էֆենտի համրեց հինգ հարյուր ոսկին։

— Այս դրամը,— ըսավ, այս անգամ խոսքը Շուշանիկի ուղղելով,— կհուսամ որ այլևս քու զավակիդ ապագան կապահովե և քեզի ալ միջոց կուտա պատվավոր կերպով ապրելու։

Աղջիկը չպատասխանեց, բայց ատելությամբ լի ակնարկ մը ուղղեց վաճառականին։

Երբ երիտասարդն ու մանկամարդ աղջիկը հեռացան, Ղուկաս էֆենտի հառաչ մը արձակեց։

— Հինգ հարյուր ոսկի, շատ չէ՞ ի փոխարեն տրված հաճույքին համար,— խորհեցավ ինքնիրեն։

Բայց մեծ մտատանջություն մը ազատած էր և ասիկա գինքը մխիթարեց։

Երկու ամիս ետքը, իրիկունը, երբ տունը նստած լրագիր կկարդար, լուր մը իր ուշադրությունը գրավեց.

«Առջի օր, Ֆերիգյուղի եկեղեցիի մեջ տեղի ունեցավ Սերգիս էֆենտի Սմբատյանի ամուսնությունը օր. Շուշանիկ Սահակյանի հետ։ Սերգիս էֆենտի պարկեշտ ու գործունյա երիտասարդ մըն էր, որ ինքնօգնությամբ հառաջացած է և այսօր փայլուն դիրք մը կգրավե անգլիական կարևոր հաստատության մը մեջ, իսկ օր. Շուշանիկ Սահակյան գեղեցիկ ձիրքերով օժտված շնորհալի օրիորդ մըն է, որ պատիվ կբերե իր սեռին։ Մեր շնորհավորությունները կմատուցանենք նորապսակ ամոլին»։

— Փարաները համրած ատենս այս բանը մտքես անցավ,— ըսավ ինքնիրեն Ղուկաս էֆենտի։

ԳԼՈՒԽ Ծ Դ

Թերթը մոռցած էր հիշատակել պարագա մը, այսինքն թե Սերգիսի և Շուշանիկի կնքահայրը եղած էր Գարեգին, որ Սերգիսի ջանքերուն և դիմումներուն վրա, քանի մը ամսե ի վեր ընդունված էր այն հաստատության մեջ, ուր ինք կաշխատեր։

Անգլիացի տնօրենը գինքը ընդունելով՝ ըսած է։

— Հազիվ քանի մը ամիս պիտի մնաս Պոլիս, մինչև որ մեր գործերուն քիչ մը ծանոթանաս, հետո քեզ պիտի զրկենք Պեյրութ, ուր իբր տնօրեն քանի մը տարի պիտի անցնես։

Գարեգին այս պայմանը սիրով ընդունած էր, մանավանդ որ Սերգիս ըսած էր իրեն թե դուրս զրկվելու ատեն ամսականի կարևոր հավելում մը պիտի ունենա։

Շնորհիվ իր բնական ճարպիկության ու Սերգիսի փորձառու խորհուրդներուն, քանի մը ամիս ետքը այնքան վարժվեցավ իր գործին մեջ, որ իրիկուն մը տնօրենը գինքը կանչելով՝ հայտարարեց.

— Թեև մեր դիտավորությունը ձեզ քանի մը ամիս ևս մեր քով պահելն էր, որպեսզի կատարելապես ծանոթություններ ստանաք

մեր գործառնության մասին, սակայն կտեսնենք, որ դուք այսօրվընե իսկ կարող եք մեզի օգտակար ըլլալ Պեյրութի մեջ, ուստի որոշեցինք, որ տասնհինգ օրեն ձեզի հոն զրկենք իբրև մեր տան ներկայացուցիչը. ուստի ձեր պատրաստությունները տեսեք։

— Շատ ապեկ,— պատասխանեց Գարեգին, դուրս ելլելով։

Տնօրենին որոշումը թե գինք ուրախացուցած և թե միանգամայն տրամեցուցած էր։ Ուրախ էր, մտածելով որ իր մեծերը գոհ են իրմե և քիչ ժամանակի մեջ գինքը կառաջացնեին գործին մեջ, սակայն Պոլսեն մեկնումը և երթալը օտար ու անծանոթ քաղաքի մը մեջ հաստատվիլը դժվարին կուգար իրեն։

Իրիկունը երբ պաշտոնատեղին մեկնեցավ Սերգիսի հետ, երիտասարդը իր բարեկամին հաղորդեց տնօրենի ըսածները։

— Ուրեմն աչքդ լույս,— գոչեց Սերգիս,— քանի մը տարի կմնաս հոն ու անկե ետքը բոլորովին կհաստատվիս այս ընկերության մեջ։

— Այո, բայց այդ անծանոթ քաղաքի մեջ առանձին քիչ մը դժվար պիտի ըլլա ապրիլը։

— Իրավ է որ պիտի նեղվիս, բայց հոգ չէ, կվարժվիս, տես՝ ես ինչպես վարժվեցա, մանավանդ որ Պեյրութ գեղեցիկ քաղաք մըն է և օդն ալ շատ առողջ։

Երկու բարեկամները խոսակցելով մտան գարեջրատուն մը։

Սերգիս տեղեկություններ տվավ Պեյրութի վրա և այնտեղի կյանքը նկարագրեց։

— Եթե ամուսնացած ըլլայիր, շատ հաճելի կերպով կրնայիր ապրիլ, բայց ամուրիի մը համար բնականաբար քիչ մը նեղացուցիչ է,— եզրակացուց։

Հետո հանկարծ գոչեց։

— Եթե ես քու տեղդ ըլլամ, տասնհինգ օրվան մեջ կամուսնանամ ու կնոջս հետ կմեկնիմ... շատ իմաստուն գործ մը բրած կըլլաս։

— Ամուսնանալ, բայց որո՞ւ հետ։

— Սաթենիկին հետ,— պատասխանեց Սերգիս։

Գարեգին բարեկամին երեսը նայեցավ ու կարմրեցավ։

— Ինչ խենթ խոսքեր կընես,— մռմռաց քթին տակեն։

— Խենթ մի, ընդհակառակը, շատ խելացի խոսք է և կարծեմ դուն ալ չպիտի մերժես, եթե մեկը այդ մասին բարեկամաբար միջնորդե, և այդ միջնորդությունը ընելու ես պատրաստ եմ։

Գարեգին իր բարեկամին խոսքերեն հայտնապես հուզված էր։ Այդ ամուսնական խորհուրդը ու հանկարծական առաջարկությունը գինքը վեր ի վար շրջած էր...

Ֆերիգյուղի ծանոթ գայթակղութենեն ի վեր Գարեգին այլևս Սաթենիկի հետ չէր բնակեր։ Խեղճ կինը իր փոքրիկ աղջկան հետ այրի կնոջ մը տունը տեղավորված էր, սենյակին մը մեջ, որուն վարձքը Գարեգին ու Սերգիս կես առ կես կվճարեին։ Գարեգին երբեմն կերթար այցելել իրեն և կրցած ձեռնտվությունը կշարունակեին ընել անոր։

Սաթենիկի բաժնվելեն ի վեր Գարեգին հույն ընտանիքի մը տունը սենյակ վարձած էր, սակայն այդ բաժանումը շատ ծանր եկած էր իրեն և ան ատեն հասկցած էր, թե այրի կնոջ մասին տածած զգացումը զուտ բարեկամական չէր, այլ սիրտն ալ իր բաժինն ուներ։ Սակայն ասիկա, որ իրեն համար գրեթե հայտնություն մը եղած էր, ջանացած էր ծածկել իր ներսիդին։

Երբեք այդ մասին ակնարկություն մը անգամ չէր ըրած իր մտերիմին և ասոր համար հանկարծ շփոթեցավ, երբ որ Սերգիս Սաթենիկի հետ ամուսնության խոսքը նետեց մեջտեղ։

Երիտասարդը թեթևորեն չէր, որ այդ առաջարկը ըրած էր։ Հակառակ Գարեգինի գաղտնապահության, կռահած էր իր բարեկամին հոգեկան վիճակը և հարմար առիթի մը կսպասեր՝ խոսք բանալու համար։ Եվ ահա այս ճամփորդությունը վրա գալով, ուզած էր օգտվիլ այդ պարագայեն՝ ուժ տալու համար խորհուրդի մը, որուն իրագործումը, համոզված էր, թե երջանկաբեր պիտի ըլլար, թե Գարեգինի և թե մանկամարդ այրիին համար։

— Այսպես ուրեմն,— շարունակեց իր խոսքը,— անմիջապես այդ խնդիրը կկարգադրենք, պարզ պսակ մը կընենք, առանց ավելորդ ծախքերու, հետո շոգենավ նստելնուդ պես կելլեք կերթաք և այն ատեն կրնաս վստահ ըլլալ, որ երջանիկ կյանք մը պիտի կըրնաս անցնել Պեյրութի մեջ։

Գարեգին չպատասխանեց, իր առջև գտնված գարեջուրի գավաթը պարպեց, պահ մը մտախոհ մնաց և հետո հարցուց.

— Լրջորե՞ն կխոսիս, թե կատակ կընես կոր։

— Ի՞նչպես կրնաս ենթադրել, որ թեթևորեն խոսիմ տիկին Սաթենիկի պես կնոջ մը մասին, ինչ որ կըսեմ՝ կատարելապես լուրջ է և վստահ եմ, որ այս առաջարկս ալ քեզի ներքնապես գոհունակություն կպատճառե։

— Ինչե՞ն գիտես,— ըսավ Գարեգին, թեթև ժպտելով։

— Քիչ մը հոգեբան եմ,— պատասխանեց Սերգիս,— մանավանդ բարեկամներուս մասին։

Եվ երիտասարդը սկսավ թվել բոլոր այն առավելությունները, որոնք առաջ պիտի գային այսպիսի ամուսնութենե մը։ Նախ՝ Գարեգին կսիրեր Սաթենիկը, ասիկա չէր կրնար ուրանալ և իրավ ալ Գարեգին չուրացավ— և հավանորեն Սաթենիկ ալ անտարբեր չէր երիտասարդին մասին։ Բավական ատեն իրարու հետ ապրած ըլլալով, զիրար լավ ճանչցած ու իրարու հատկությունները գնահատած էին, այնպես որ իրենց ամուսնության մեջ հուսախաբ ըլլալու երկյուղը չունեին։ Ու, հետո, տիկին Սաթենիկ կատարյալ տանտիկին մըն էր, որ ոչ թե բեռ մը պիտի ըլլար իր ամուսնույն, այլ անոր համար խնայողության միջոց մը... Վերջապես Սերգիս իր բոլոր պերճախոսությունը թափեց, համոզելու համար Գարեգինի, որ արդեն, ինչպես ըսինք, սրտին խորեն հակառակ չէր ամուսնական ծրագրի մը։

— Եվ սակայն միջոցը շատ սուղ է,— առարկեց իր բարեկամին,— ինչպե՞ս երկու շաբաթվա մեջ կրնանք պատրաստվիլ, ամուսնանալ և մեկնիլ։

— Այդ մասին անհոգ եղիր,— պատասխանեց Սերգիս,— ես կտեսնվիմ տնօրենին հետ և հրաման կառնեմ շաբաթ մը հետաձգելու ճամփորդությունդ, նույնիսկ ամուսնական բացառիկ ծախքերուդ համար կրնանք ամսականներուդ ի հաշիվ գումար մըն ալ ուզել, զոր հոժարակամ կվճարեն։ Նույնիսկ եթե պետք ըլլա, ես քեզի փոխատվություն մը կընեմ։

Գարեգին երախտագիտությամբ իր բարեկամին նայեցավ։

— Շնորհակալ եմ քու պատրաստակամութենեդ,— ըսավ,— միայն թե նույնիսկ եթե վայրկյան մը լրջորեն նկատողության առնենք այս ամուսնության խորհուրդը, դարձյալ միայն խնդիրը մեզնով չմննար, պետք է նաև, որ Սաթենիկի հավանությունն ալ ունենանք։

— Ատիկա ինծի թող, ես կկարգադրեմ, նախ դուն քու որոշումդ տուր, վերջնական, անդառնալի որոշումդ։

Եվ Սերգիս կրկին սկսավ իր բարեկամը համոզել, որպեսզի անմիջապես իր որոշումը տա։ Ի վերջո՝ Գարեգին՝ հաղթահարյալ՝ գոչեց.

— Լավ, քեզի լիազոր իշխանություն կուտամ երթալ տիկին Սաթենիկը տեսնել և հարկ եղածը խոսիլ։

— Վաղն առտու իսկ անոր տունն եմ,— հայտարարեց Սերգիս։

Հետո, վախնալով որ գուցե Գարեգին մինակ մնալով միտքը կփոխե, ստիպեց ու զայն միասին տուն տարավ։

Շուշանիկի հետ ամուսնանալեն ի վեր Սերգիս Բերայի մեջ փոքրիկ տուն մը վարձած ու կահավորած էր, ուր երջանիկ կյանք մը կվարեր իր մանկամարդ կնոջ հետ, որուն նորածին զավակն ալ որդեգրած էր։ Հինգ հարյուր ոսկին, զոր առած էր Ղուկաս էֆենտիեն, ամբողջովին եվրոպական դրամատուն մը դրած էր մանուկին անունին, որպեսզի իր չափահասությանը իրեն տրվի, տոկոսովը միասին։ Գարեգին հաճախ կերթար իրենց տունը, ուր իբրև ամենամտերիմ բարեկամ կընդունվեր։

Այդ իրիկունը մանավանդ Շուշանիկ շատ սիրալիր ընդունելություն մը ըրավ, երբ իր ամուսինեն լսեց Գարեգինի տված որոշումը։ Սաթենիկի պատմությունը լսած էր ինք, նույնիսկ մեկ քանի անգամ ալ այցելություն տված էր այրի կնոջ, որուն ձեռագործ աշխատություններ կհայթայթեր իր նախկին հաճախորդներուն հանձնարարելով զայն։

Ինքնաբերաբար ուզեց, որ ինքն ալ ընկերանա Սերգիսի, երթալ տիկին Սաթենիկի ձեռքը ուզելու Գարեգինին համար։

— Այս տեսակ դիմում մը էրիկ մարդ մը առանձին չի՛ կրնար ընել, երբոր ամուսնացած է,— դիտել տվավ։

Գարեգին շնորհակալությամբ ընդունեց իրեն ընծայված այս ծառայությունը։

Երիտասարդը կես-գիշերին մոտ մեկնեցավ իր բարեկամին տունեն, հետևյալ օրվան ժամադիր ըլլալով։

Ինչպես արդեն գրեթե վստահ էր Սերգիս, տիկին Սաթենիկ առանց դժվարության ընդունեց իրեն եղած առաջարկը։ Երեք շաբաթվան մեջ ամուսնական բոլոր պատրաստությունները տեսնվեցան և հինգշաբթի առտու մը Գարեգին Երրորդության եկեղեցիին մեջ պսակվեցավ այրի տիկին Սաթենիկ Ամասյանի հետ և նույն երեկոյին Մեսաժեռի շոգենավով մեկնեցավ Պեյրութ, հետը տանելով նաև Սաթենիկի փոքրիկ աղջկան՝ Սիրվարդ, որ բոլորովին ապաքինված՝ գունագեղ աղվոր աղջիկ մըն էր հիմակ։

Գարեգին պարտք համարած էր իր ամուսնության առթիվ հրավիրագիր ղրկելու նաև իր նախկին վարպետին՝ Քերովբե էֆենտիի

և անձամբ ալ ներկայանալով՝ իր նոր պաշտոնը ծանուցած և միևնդամայն տեղեկություններ տված էր Սաթենիկի մասին, խնդրելով, որ անպատճառ պսակին ներկա գտնվի։

Քերովբե էֆենտի գոհունակությամբ ընդունած էր իր նախկին պաշտոնյային հրավերը, նույնիսկ հարսանիքի օրը ծանրագին մատանի մը նվիրած էր հարսին, ուզելով այսպես ամոքել այն խղճի խայթը, զոր սակավին կզգար, Ղուկաս էֆենտիի դրդումովը հավատարիմ պաշտոնյա մը ճամփու դնելուն համար։

Նույն իրիկունն իսկ հանդիպեցավ վաճառականին՝ Թոքաթլյանի սրճարանը և գնաց պահ մը քովը նստելու, անոր հրավերին վրա։

Ղուկաս էֆենտի զվարթ տրամադրության մեջ էր։

— Եկուր, Քերովբե էֆենտի, քեզի հետ այս իրիկուն մեյ մեկ օղի խմենք,— ըսավ, քովի պարապ աթոռը ցույց տալով։

— Ամենայն հաճույքով։

— Այս ցերեկ քեզ տեսնել ուզեցի, մարդ ղրկեցի գրասենյակը՝ բերին՝ որ գործի չես իջեր...

— Այո, էֆենտիս, այսօր հարսանիք մը ունեինք։

— Ի՞նչ հարսանիք։

— Էֆենտիս, մեր նախկին պաշտոնյաներեն եբիտասարդ մը, սա կհիշեք՝ ուր է մեկը կար քովս և ձեր պատվերին վրա ճամփեցի... Գարեգինը։

— Էյ, հա, միտքս ինկավ, սա Ֆերիգեղ գեշ կնիկ մը առած նստած էր, սա սրիկան...

— Կներեք, Ղուկաս էֆենտի, բայց ես այդ տղուն վրա մինչև հիմա սրիկայություն մը չեմ տեսած։

— Ինչ որ է, հիմա ատիկա խնդիր չէ, ի՞նչ է եղեր այդ էտեպսիզը։

— Քանի մը օր առաջ եկավ զիս գտավ, անգլիական հաստատության մը մեջ կարևոր պաշտոն մը առեր է, Պեյրութ պիտի երթա հաստատվի եղեր քանի մը տարի։

— Երթա բարով։

— Միայն թե երթալեն առաջ ուզեր է ամուսնանալ...

— Ատանկ անբարոյական մարդուն ո՞վ աղջիկ կուտա։

— Վերջապես չերկնցնեմ, զիս անպատճառ հարսանիքի հրավիրեց, չկրցա մերժել, մանավանդ որ չորս տարի ալ քովս աշխատած և միշտ գոհ էր թողուցած զիս... պսակը ցերեկը կատարվեցավ

երրորդության եկեղեցին, կեսօրեն ետքն ալ շոգենավ գացին ու մեկնեցան։

— Որո՞ւն աղջիկն է առածը,— հարցուց Ղուկաս էֆենտի անտարբեր ձևով մը։

— Որբևայրի մըն է, շատ շնորհքով երիտասարդուհի մը կերևա կոր։ Սաթենիկ Ամասյան է եղեր անունը, յոթը տարեկան ալ հրեշտակի պես աղջիկ մը ունի։

— Հասկցա, հասկցա,— գոչեց Ղուկաս էֆենտի ուժգնորեն,— բայց ամուսնանալու ի՞նչ պետք ուներ, քանի որ առած նստած էր այդ բոզը...

Քերովբե էֆենտի հայտնապես նեղացավ իր խոսակցին այս նախատալից խոսքերեն և զղջաց այդ ամուսնության խոսքը բացած ըլլալուն համար ու ալ խոսքը առաջ չտարավ։

Ղուկաս էֆենտի եզրակացնելու համար ըսավ.

— Ինչ որ է, իրար աղեկ գտեր են, թենեիրե յուվարլանմբրը բափաղրնը պուլմուշ։

Եվ սակայն այս ամուսնությունը կտրտմեցներ զինքը, իրեն դեմ ցույց մը կնկատեր զայն և այդ միության պատճառավ ինքզինք կերպով մը պարտված կնկատեր։

Ինչպե՞ս կարելի է որ իր հալածած անձերը կարենային հաջողիլ ու ապրիլ, միթե ասիկա պզտիկություն մը չէ՞ իրեն համար։

— Այսպես ուրեմն, այդ տեսակ բարի ծաղիկները կհովանավորես ու կպաշտպանես, Քերովբե էֆենտի,— ըսավ իր բարեկամին դառնալով։

Խեղճ Քերովբե էֆենտի պարտավորվեցավ իր «հանցանքը» թեթևցնելու համար մեղմացուցիչ պարագաներ փնտռել՝ չբորբոքելու համար վաճառականին բարկությունը, որուն միշտ տալիքվոր էր։ Բայց, ինչպես ըսինք, նույն օրը Ղուկաս էֆենտի զվարթ տրամադրության մեջ էր, հետևաբար ներողամիտ գտնվեցավ և իր կծու ակնարկությունները դադարեցնելով, սկսավ ուրիշ նյութերու վրա խոսիլ։

Առջի օրվընե ի վեր ամուրիի կյանք մը սկսած էր ապրիլ։ Տիկ. Թագուհի մեկնած էր Փարիզ իր աղջկան՝ Ռոզիկի քով, որ իր հղիությունը հայտնելով խնդրած էր մորմեն երթալ իր մոտ անցնել վերջին մի քանի ամիսները։ Իսկ փոքր աղջիկն ու մանչը՝ մին Հոմ Սքուլ, մյուսն ալ Ռոպերթ Քոլեճ կգտնվեին։ Այս առանձնությունն էր ահա, որ զինքը կզվարթացներ, քանզի որոշած էր օգուտ քաղել

ներ ազատութենեն, շռայլ կյանք մը վարելու համար, գոնե ժամանակ մը։ Նույնիսկ այնպես կարգադրած էր, որ իրիկվան կերակուրն ալ դուրսը ուտե, ավելի ազատ մնալու և ծառաներուն անհարկի հսկողութենեն խուսափելու համար։

Ղուկաս էֆենտի լսած էր, որ իր բարեկամը, Քերովբե էֆենտի, կարգ մը անխոստովանելի մոլություններ ուներ ու հիմակ, զայն իր քովը կանչելով, կհուսար զայն իրեն գործակից ընել իր մտադրած հաճույքի և ցոփության արշավանքին։

— Այս գիշեր եկուր, կերակուրը միասին այստեղ ուտենք,— առաջարկեց՝ երկու օղի ևս ապսպրելով։

— Բայց, էֆենտի, տունը չե՞ն սպասեր...

— Տունը մարդ չիկա, հիմա ամուրի կսեպվիմ,— պատասխանեց վաճառականը և իր բարեկամին պատմեց կնոջ մեկնումը։

Այս բացատրության վրա, Քերովբե էֆենտի հոժարակամ ընդունեց ճաշի հրավերը։

Վաճառականը կամաց-կամաց, զբոսնելու, իր ազատութենեն օգտվելու թաքուն խորհուրդները պարզեց և կարգ մը քողարկյալ ակնարկություններ ըրավ Քերովբե էֆենտիին, որ խնդալով ու կատակելով պատասխանեց։

Առատ գինիով ճաշե մը ետք երկու բարեկամները ալ բոլորովին բացված էին իրարու և որոշեցին նույն իրիկունը միասին անցնել, աղեկ քեֆ մը ընելու համար։

Այդ գիշերը Ղուկաս էֆենտի տուն չվերադարձավ. առտուն միայն եկավ մեկ երկու ժամ հանգստանալու և հետո գործին գնաց։ Քերովբե էֆենտի իրմե սպասված պաշտոնը մեծ հաջողությամբ կատարած էր, արժանանալով վաճառականին բարյացակամ գնահատության։

Հետևյալ օրը կրկին իրար գտան նոր արշավանքներ կազմակերպելու համար ու այսպես, ամիս մը, Ղուկաս էֆենտի սանձարձակ շվայտության կյանք մը վարեց։ Քերովբե էֆենտի իրեն անբաժան խորհրդակիցն ու գաղտնակիցը եղած էր, ալ պատկառանքն ու ակնածանքը վերցած էր իրենց միջև և իրենց հարաբերությունները բացարձակորեն մտերմական հանգամանք մը առած էին։

Ղուկաս էֆենտիի հաճոյակատար առաջնորդը ուզեց օգտվիլ այս նորահաստատ մտերմութենեն և բավական մեծակ գումար մը հաջողեցավ բրցնել վաճառականեն, իբրև փոխառություն։

Եվ սակայն օր մըն ալ Ղուկաս էֆենտի, ալ հափրացած այդ

կյանքեն, կամաց-կամաց խույս տվավ իր բարեկամին ընկերակցութենեն։

Մոռցված կիրք մը վերստին վառել կսկսեր իր ներսիդին։

Առտու մը, երբ գրասենյակը նստած ընթացիկ գործերով կրզբաղվեր, քենին ներս մտավ իր փոքրիկ աղջկան հետ։

— Բարև, Ղուկաս էֆենտի,— ըսավ նստարանին վրա տեղավորվելով, մինչ աղջիկը կփութար ձեռք համբուրելու։

— Աստծո բարին, բարի եկար,— գոչեց վաճառականը զվարթ դեմքով,— աս ո՞ւր է, մեջտեղ չի կաս այսչափ ատեն...

— Ինչ ընեմ, քույրս տունը չէ որ գամ,— պատասխանեց կինը ժպտելով։

Ղուկաս էֆենտի վավաշոտ աչքերով սկսավ դիտել իր քենին, որ գրեթե երեք ամիսե ի վեր չէր տեսած և որ տարօրինուպես գեղեցիկ ու գրավիչ կթվեր իրեն այդ միջոցին։

— Այս որչափ փոխվեր ես,— ըսավ։

— Ի՞նչ եմ եղեր...

— Գերցեր, վրա ես եկեր, գույնդ աղվորցեր է...

Հետո, հանկարծ արհամարհական շեշտով մը հարցուց։

— Մարդդ ի՞նչ կընե կոր, գործերը ի՞նչ ջուրի մեջ են։

— Ամա՜ն, Ղուկաս էֆենտի, մի հարցներ, շատ փորձանքներու մեջ ենք նորեն, արդեն շիտակը անոր համար եկա քեզ տեսնելու։

— Ի՞նչ եղավ որ,— հարցուց վաճառականը հոնքերը պռստելով։

— Ճանըմ, պզտիկ գործ մը ուներ, ինչ է նե՝ գեշ աղեկ կերթայինք կոր, հույն մը ելավ դեմը, ընկեր ըլլալ ուզեց, իբր թե գործը ընդարձակելու համար, վերջապես՝ ըրավ-չըրավ համոզեց, գործի սկսան, մեյնե խաբեբա ավազակին մեկն է եղեր, թե գործը կործանեց և թե եղած քիչ մը դրամն ալ առավ փախավ...

— Էյ, ըսել է հիմա գործը դադրեցուցա՞ծ է...

— Հապա, սասնհինգ օր է տունը նստած է, ըսի որ գա քեզի տեսնա, չհամարձակվեցավ, խեղճը երես չունի որ գա։

— Շիտակը իրավունք ալ ունի երես չունենալու,— պատասխանեց վաճառականը։

— Հիմա, Ղուկաս էֆենտի, նորեն հույսս քու վրա մնաց, քենե զատ մեկը չունիմ, դուն մեզ պիտի փրկես այս վիճակեն։

— Ի՞նչ, կրկին քանի մը հարյուր ոսկի տանք, որ մեկուն մեկալին գողցնե՞։

— Չէ, չէ, ես ալ աղեկ մը համոզված եմ, որ ինքն իր գլխին գործ կառավարելու կարող չէ... իրեն համար ամենեն հարմար է ամսականով պաշտոն մը, վաճառականի մը քով կամ ընկերության մը մեջ։ Իսկ եթե ուզես, կարող ես ատանկ գործ մը գտնել, այնչափ մարդ կճանչնաս, այնչափ ազդեցություն ունիս հրապարակին վրա։

Եվ խեղճ կինը իր գեղեցիկ աչքերը հառեց վաճառականին, աղաչավոր ձևով մը։

«Որչափ գեղեցիկ է,— կմտածեր ինքնիրեն Ղուկաս էֆենտի,— և ես ինչ հիմարություն ըրի մեկ երկու աղտոտ կիներու ետևեն վազելով, երբ ձեռքիս տակ ասանկ ապրանք մը կար»։

Հետո հանկարծ, դիվային ծրագիր մը հղացավ, որ սակայն չուզեց մեկեն հայտնի ընել։

— Ճանըմ,— ըսավ ողոքիչ ձայնով մը,— ի՞նչ գործ կրնա ընել էրիկդ, ոչ ուսմունք ունի, ոչ օտար լեզու գիտե, գոնե ֆրանսերեն, անգլիերեն, գերմաներեն գիտնար, աղեկ տետրակ բռներ, աչքը բաց ըլլար, բան մը կընեինք, բայց ատոնցմե ոչ մեկը գիտե, ես ի՞նչպես կրնամ զինքը մեկու մը հանձնարարել...

— Ղուկաս էֆենտի, դուն ուզես նե՝ բան մը կընես, մեր փընտռած գործը մեծ բան մը չէ, ապրելու չափ ամսական մը ըլլա՝ կբավի, էրիկս ալ այսչափ տարի է հրապարակին վրա է, քիչ շատ խելքը գործի կհասնի... իրմե պակաս բան գիտցողները այսօր աղվոր գործերու մեջ են, պաշտպաններու շնորհիվ։

— Կեցիր նայինք, բան մը մտածենք. շիտակը ըսե՞մ, ես այդ ուղուրուզ մարդուն բնավ բան մըն ալ ընել չեմ ուզեր, բայց ի՞նչ ընեմ, որ դուն կաս մեջտեղը և քեզի համար ամեն զոհողություն հանձն կառնեմ կոր։

— Շնորհակալ եմ, ես ալ այդպես ըլլալը գիտնալուս համար եկա։

Ղուկաս էֆենտի մտածկոտ կերպարանք մը առավ, իբրև թե փրկության ճամփա մը գտնելու համար, հետո ըսավ.

— Պոլսո մեջ դժվար պիտի ըլլա գործ մը գտնել, հոս թե դրամը քիչ կվճարեն և թե շատ խստապահանջ են, ասկե զատ չեմ ուզեր որ իմ ծանոթներուս քով պզտիկ մնամ...

Հետո՝ կրկին մտածումի մեջ ինկածի պես,— էրիկդ դուրս տեղ մը ըլլա նե՝ կերթա՞... սանկ մոտիկ տեղ մը։

— Աղեկ ամա, Ղուկաս էֆենտի, այն ատեն մենք ալ միասին երթալու ենք տունով տեղով։

— Ճանրմ, դուն հիմակուհիմա հոս կմնաս, ան թող մինակ երթա, հինգ վեց ամիս մնա, գործին մեջ հաստատվի, ետքը դուն աղջիկդ կառնես կերթաս։

— Իրավ որ, ես վերջնական բան մը չեմ կրնար ըսել. պետք է որ իրեն իմաց տամ, բայց կհուսամ, որ կընդունի, եթե ամսականը շնորհքով բան մը ըլլա։

— Ինչո՞ւ չպիտի ընդունի եղեր, մարդ ապրուստ ճարելու համար մինչև Ամերիկա կերթա կոր... ասկե զատ իրեն կհասկցնես, որ Պոլսո մեջ գործ չեմ կրնար գտնել, ասիկա թող գլխուն մեջ դնե. եթե դուրս տեղ մը երթալ ուզե, գուցե կհաջողիմ բան մը ընել, բայց խոսք չեմ տար, ձեռքես եկածը կընեմ։

— Լավ,— պատասխանեց քենին՝ ճարահատ,— այս իրիկուն իրեն հետ կխոսիմ և վաղը պատասխանը կբերեմ։

— Ես ալ քու խաթերդ համար ձեռքես եկածը կընեմ և անպատճառ կջանամ աղեկ գործ մը գտնալ մոտ տեղ մը։

Ղուկաս էֆենտի հետո սկսավ կատակաբանել իր քենիին հետ, զայն կրկին շողոքորթել իր գիրության ու գեղեցկության համար, մինչ խեղճ կինը կջանար վերջ մը դնել այդ խոսքերուն, իր ակնարկովը ցույց տալով փոքրիկ աղջիկը, որ արթուն ու չարաճճի, մտիկ կըներ փոխանակած խոսքերուն։

Սակայն վաճառականը հետզհետե զրգռված, չէր կարող զսպել ինքզինքը, ոտքի ելած էր և կնոջ առջևը կանգնած՝ ձեռքերովը կջանար անոր կուրծքն ու թևերը շոշափել, իբրև թե հագուստին վրա եղած փոշիները վար տալու համար։

Կինը ոտքի ելավ մեկնելու համար, բայց Ղուկաս էֆենտի ստիպեց, որ մնա։

— Կեցիր, ցերեկվան ճաշը միասին ընենք,— առաջարկեց,— արդեն ժամը տասներկուքին մոտեցավ։

Հրավերը կարելի չէր մերժել, կրնար էֆենտին բարկանալ. և այդ միջոցին, ուր անոր բարյացակամությանը պետք ուներ, պետք չէր ոևէ կերպով անհաճո ըլլալ իրեն, ուստի խեղճ կինը պարտավորվեցավ կրկին նստիլ և աչք գոցել վաճառականին հայրատ խոսքերուն ու շարժումներուն։

Կեսօրին գացին ճաշելու և հետո քենին մեկնեցավ, հետևյալ օրը գալու խոստումով։

Ղուկաս էֆենտի զայն ճամփու դնելե ետքը ինքիրեն կմտածեր։

— Այդ ճերիֆը տեղ մը կդրկենք, քանի մը ամիս հոս ժամանակ կանցնենք, մինչև մերինին Փարիզեն գալը... ինչպե՞ս առաջ այս խելքը չբրի։

Գալով գործի մասին, Ղուկաս էֆենտի շուտով այդ խնդիրն ալ կարգադրեց։ Ուղղակի գնաց իր բարեկամին՝ Քերովբե էֆենտիի գրասենյակը և ըսավ.

— Դուն կարծեմ Սամսոնի մեջ գործ մը հաստատած ես...

— Այո,— պատասխանեց Քերովբե էֆ.,— գործակալ մը ունիմ, որուն միջոցավ ապրանք կառնենք ու կծախենք։

— Գո՞հ ես իրմե։

— Այո, քանի մը տարի է գործիս մեջն է և միշտ հավատարիմ գտնված է։

— Օգնականի պետք չունի՞։

— Ղուկաս էֆենտի, օգնականը ի՞նչ պիտի ընե, արդեն եղած գործը ի՞նչ է որ...

— Չէ, ես ձեռքիս տակ մեկը ունիմ տե՝ անպատճառ գործի մը դնել կուզեմ կոր, սանկ 8—10 ոսկի ամսականով։

— Ութը տաս ոսկի՞,— գոչեց Քերովբե էֆենտի,— այդչափ դրամ ո՞վ կրնա տալ։

— Դուն ատ ըսած մարդուս գործ մը ստեղծե տե՝ դրամի խընդիրը դյուրին է։

— Եթե երկու երեք ոսկի ամսականով գոհ ըլլա, ինչ որ է, ձեր խաթերը համար՝ ղրկենք... թեև ավելորդ մարդու պետք չունիմ։

— Լավ, լավ, դուն երեք ոսկին տուր, յոթը ոսկին ալ ես կուտամ, կլմննա։

— Ատոր ըսելիք չի կա։

— Ուրեմն համաձայնեցանք, այնպես չէ՞։

— Կարելի՞ է, որ ձեր փափաքը չկատարվի,— ըսավ Քերովբե էֆենտի, շողոմական ձայնով մը։

— Բայց,— շարունակեց Ղուկաս էֆենտի,— չըլլա որ մարդը կասկածի թե ես եմ ամսականը տվողը, դուն պիտի ըլլաս զինքը ղրկողը և միմիայն քու պաշտոնյադ պիտի համարվի։

— Հասկցա, հասկցա,— ըսավ Քերովբե էֆենտի, սակայն բան մը չէր հասկցած։

Ղուկաս էֆենտի այսպես գործը կարգադրելե ետքը, կվերադառնար սենյակ։

Հետևյալ առտու քենին նորեն կուգա։

— Ի՞նչ լուր,— կհարցնե վաճառականը։

— Ըսածներդ հաղորդեցի էրկանս, համոզվեցավ, պատրաստ է դուրս տեղ մը երթալու, միայն թե շատ հեռու չըլլա, օդը լավ ըլլա և ամսականն ալ ոչինչ բան մը չըլլա։

— Այդ որքա՞ն պահանջում,— գոչեց Ղուկաս էֆենտի խնդալով,— ամեն մարդուն իր կարողությանը չափ կվճարեն...

— Անանկ է, բայց վերջապես պետք է որ ապրվինք, մուրացկանի պես չենք կրնար ապրիլ, վերջապես էրիկս ալ քու քենակալդ է, մեր պատիվը ձեր պատիվը ըսել է...

— Այդ ճշմարիտ է,— պատասխանեց Ղուկաս էֆենտի,— արդեն այդ պատիվը բարձր պահելու համար չէ՞, որ մինչև հիմա այնքան զոհողություններ ըրինք...

— Մենք ալ ատոր համար միշտ երախտապարտ ենք ձեզի։

— Ինչ որ է, հիմա այդ խնդիրները մեկ կողմ դնենք, ես երեկ շատ մը բարեկամներու դիմեցի, բերան ծռեցի, ասդին ինկա, անդին ինկա, վերջապես հաջողեցա մեկե մը խոստում մը առնել գործի մը մասին... բայց ամսականը շատ մեծ բան մը չէ, թեև էրկանդ պես մեկու մը համար նույնիսկ չափազանց է։

— Քանի՞ ոսկի է,— հարցուց քենին հետաքրքիր աչքերով։

— Հիմակ ու հիմա տասը ոսկի։

— Տասը ոսկի՞ միայն,— գոչեց կինը հուսախաբ երևույթով մը,— բայց ինչպե՞ս կուզես որ ապրվինք այդ դումարով, մանավանդ որ ինք ուրիշ տեղ, մենք այստեղ պիտի ըլլանք և երկու ծախք պիտի ընե... եթե հոս գործ մը ըլլար, այդ ամսականով գոնե կրնայինք ապրվիլ։

— Հոս գործ չկա, ատկե հույսդ կտրե,— պատասխանեց Ղուկաս էֆենտի վճռաբար,— այս գործն ալ արդեն շատ դժվարավ գտա և ղրկողը միմիայն իմ խաթերս համար այդքան ամսական կվճարե կոր, եթե ոչ ընելիք գործը 4—5 ոսկի ամսականով բան մըն է...

Քենին չպատասխանեց այս խոսքերուն, տխուր երևույթ մը առավ, «օֆ» մը արձակեց սրտին խորեն և թաշկինակովը աչքերը սրբեց, որոնք սակայն թրջված չէին։

Վաճառականը ոտքի ելավ։ Մոտեցավ այն սև կաշվե բազմոցին, որուն վրա նստած էր կինը, ինքն ալ անոր քովը նստավ և ձեռքերը իր ձեռքերուն մեջ առնելով, ըսավ.

— Անուշիկս, ինչո՞ւ պարապ տեղը կտխրիս ու երեսդ կկախես... դուն նյութականին մասին բնավ հոգ ընելու պետք չունիս, թող էրիկդ մեյ մը ելլե գործի երթա, անկե ետքը եթե այդ ամսականը չի բավե, ես քեզի պետք եղածը կուտամ, այդ մասին ես ամեն բան կարգադրած եմ...

— Ո՞ր կողմն է գործը,— հարցուց կինը առանց վաճառականին խոսքերուն պատասխանելու։

— Հոս, մոտ տեղ մը, Սամսոն, մեկ օրվան ճամփա է, ծովեզերյա, օդը աղվոր, աղեկ քաղաք մը... որչափ մարդիկ կան, որ հոգի կուտան գործ մը ձեռք ձգելու համար։

Քենին կրկին չպատասխանեց և պահ մը մտախոհ մնաց. այժմ հայտնի կտեսներ իր քեռայրին ծրագիրը... ամուսինը հեռացնել, զինքը ձեռք ձգելու և քանի մը ամիս վայելելու համար, մինչև քրոջը՝ տիկին Թագուհիի վերադարձը։ Եվ այդ առժամյա հարճի դերը զինքը կընդվզեցուներ, թեև առաջին անգամ չէր, որ տեղի պիտի տար իր քեռայրին տուփական հետապնդումներուն։

— Քեզի Սարը 3ար աղվոր տուն մը կբռնեմ, ամսուը հոն կանցնես, ես ալ շաբաթը քանի մը անգամ հյուր կըլլամ... թեև ամառը անցնելու վրա է, բայց վնաս չունի, մինչև հոկտեմբերի վերջը կրնանք նստիլ։

— Աս ըսածներդ կվայելե՞. մեջտեղ ելլա նե՝ ամեն մարդ ի՞նչ պիտի ըսե...

— Քա խենթ դուն ալ,— պատասխանեց Ղուկաս էֆենտի,— մինչև հիմա մեջտեղ ելա՞վ, որ ասկե ետքը ելելուն կվախնաս կոր։

Հետո վերջ մը տալու համար կնոջ վարանումներուն, հանկարծ ըսավ.

— Հա, աղեկ միտքս ինկավ, այդ Սամսոնի գործը տիպողական է. պետք է, որ էրիկդ այսօր վաղը գա, վաճառականին հետ համաձայնի ու անմիջապես մեկնի, որովհետև գործը երեսի վրա թեացած է եղեր. եթե չպիտի երթա, վաղը իմաց տալու եք, որ մարդուն քով պզտիկ չմնամ և իր ալ գործերը չվնասվին։

Քենին լավ կզգար, որ բոլորովին Ղուկաս էֆենտիի ճանկին մեջն էր և թե հարկ էր համակերպիլ անոր քմահաճույքներուն։

— Շատ աղեկ,— պատասխանեց,— հիմա կերթամ զինքը կըտեսնեմ և ըսածներդ կհաղորդեմ։

— Մանավանդ ջանա, որ զինքը համոզես. ասիկա պարզապես բախտ մըն է, որ դեմը ելավ. եթե մերժե, ալ ես չեմ կարծեր, որ այդպիսի գործ մը կրնանք նորեն գտնել։

— Պետք եղածը կխոսիմ իրեն։

— Մեյ մը սա պոշ հերիֆը սրկե ճամփենք, ալ անկե ետքը դուն իմ աչքս նայե,— գոչեց վաճառականը և առանց ուշադրություն ընելու իր քենիին ընդդիմությանը՝ զայն թևերուն մեջ առավ և սկսավ համբուրել կատաղի տոփանքով մը։

Խեղճ կինը հազիվ կրցավ ինքզինքը փրկել այդ գիրկընդխառնումեն և վրան գլուխը շտկոտելով ինքզինքը դուրս նետեց գրասենյակեն։

Քանի մը ժամ ետքը, իրիկվան դեմ վաճառականին քենակալը եկավ, ներկայացավ Ղուկաս էֆենտիի, որ արդեն վստահորեն անոր կսպասեր։

Խեղճ մարդը ճարահատ կհավաներ Սամսոն երթալու։

Վաճառականը կարգ մը խրատներ ու խորհուրդներ տալե ետքը, նամակով մը զայն հանձնարարեց Քերովբե էֆենտիի, որ Ղուկաս էֆենտիեն ընդունած հրահանգին համեմատ ստիպեց Երանիկի ամուսինը, որ անմիջապես մեկնի Սամսոն, ուր իբր թե իր ներկայությունը անհրաժեշտ էր։

— Երկու օրեն պատրաստություններս կտեսնամ ու կմեկնիմ,— պատասխանեց մարդը։

— Երկու օրը չանցնի հա,— պնդեց Քերովբե էֆենտի և իբրև փոխադրության ու ճամփու ծախք հանեց տասը ոսկի տվավ։

Արդարև երկու օրեն ետք վաճառականին քենակալը շոգենավ մտավ ու մեկնեցավ։

Ղուկաս էֆենտի հասած էր իր նպատակին։

Անմիջապես փոքրիկ տուն մը վարձեց Սարը Յար և հոն փոխադրեց քենին՝ Երանիկ, անոր փոքրիկ աղջկան՝ Պերճուհիի հետ, որ տասնըմեկ տարեկան աղվոր աղջիկ մըն էր, մոր պես սև ու գեղեցիկ աչքերով։

Ալ անկե ետքը, շաբաթը գրեթե երեք գիշեր Ղուկաս էֆենտի Սարը Յար Երանիկի հետ կանցներ։

Առաջին օրերը հոմանիի այս կենցաղը ամոթ ու միանգամայն պժգանք կպատճառեր տիկին Թագուհիի քրոջ, որ ներքնապես չէր սիրեր Ղուկաս էֆենտին և տարփական հարաբերությունները կկրեր իբրև ապրուստի անհրաժեշտ միջոց մը։ Բայց կամաց-կամաց վարժվեցավ իր տարփածուի դերին, մանավանդ, որ քեռայրն ալ ամեն միջոց գործ կդներ հաճելի դարձնելու համար այդ նոր կյանքը։

Ղուկաս էֆենտի, որ ընդհանրապես ազահ ու արծաթասիրաշտ էր, տոփական հաճույքներուն համար շատ առատաձեռն կդառնար

և երբեք դրամը չէր խնայեր։ Այսպես, Երանիկ անսովոր պերճությամբ կյանք մը կվարեր Սարը Յարի մեջ։ Խոհարար մը և սպասուհի մը ուներ իր հրամանին տակ և ամեն անգամ, որ վաճառականը կուգար, ճշմարիտ խնջույքներ կսարքվեին տան մեջ։ Իր արդուզարդին համար ուզածին չափ դրամ կստանար քեռայրեն։ Բոլոր այս պերճանքը, որուն ախը կքաշեր տարիներե ի վեր, ամեն անգամ որ կուգար իր քրոջ տունը մնալու, տեսակ մը գինովություն կուտար իրեն ու այդ գինովության մեջ կմոռնար իր արարքին տգեղությունը։ Ղուկաս էֆենտի հետզհետե իր քենիին հետ կիսաշխարհիկ կնոջ մը պես սկսավ վարվիլ, օղիի ու գինիի գործածության վարժեցնելով զայն, նույնիսկ ստիպեց, որ թրքական երգեր երգե, որովհետև Երանիկ գեղեցիկ ձայն մը ուներ։

Իրիկուն մըն ալ Ղուկաս էֆենտի Սարը Յար եկավ Քերովբե էֆենտիի ընկերակցությամբ։

Երանիկ, երբ այդ անծանոթը տեսավ իր քեռայրին հետ՝ շփոթեցավ ու դժգոհ կերպարանք մը առավ, սակայն վաճառականը մեկուսի ըսավ իրեն.

— Քա էրկանդ շորպաճին է, հարուստ վաճառական է, հետը աղեկ վարվե, դիտմամբ բերի, որ քիչ մը զինքը շոյենք ու ամսականը ավելցնել տանք։

Եվ սակայն Ղուկաս էֆենտի բացարձակապես կստեր, քանզի Քերովբե էֆենտին հոն բերած էր իբրև իր հոմանիին տունը։

Երանիկ ստիպվեցավ համակերպիլ։

Երկու բարեկամները օղիին ափսեն բերել ուվին և սկսան խմել, հրավիրելով նաև տանտիրուհին, որ իրենց հետ խմե.

Հետո վաճառականը խնդրեց իր քենիեն, որ երգ մը երգե։ Երանիկ ընդդիմացավ և բացարձակապես մերժեց։

— Քա, ի՞նչ կքաշվիս կոր, Քերովբե էֆենտին դուրսեն մարդ չէ, իմ ամեն օրվան բարեկամս է,— գոչեց Ղուկաս էֆենտի, որ արդեն օղիին ազդեցության տակ կգտնվեր։

— Տիկինը շատ ամչկոտ կերևա կոր,— ըսավ Քերովբե էֆենտի ծաղրածու ձևով մը,— զինքը քաջալերելու համար՝ կեցիր ես նախ բան մը երգեմ։

— Կեցցես, Քերովբե էֆենտի, դուն նախ երգե, տիկինն ալ այն առեն կստիպվի երգել։

Օղիի գավաթները կրկին լեցվեցան։ Քերովբե էֆենտի սկսավ

տաճկերեն երգ մը երգել, մինչ վաճառականը, Երանիկի քով նստած, անընդհատ կստիպեր զայն օղիի գավաթը պարպելու։

— Հայտե նայինք, հիմա կարգը քուկինդ է,— ըսավ Քերովբե էֆենտի, երգը լմնցնելով։

Երանիկ նորեն վարանեցավ, առարկեց թե հարբուխ եղած է, անհանգիստ է, երգելու տրամադրություն չունի։

— Բան մըն ալ չունիս. պարզապես նազ կընես կոր,— գոչեց Ղուկաս էֆենտի, սրտնեղած դեմքով մը ոտքի ելլելով։

Քերովբե էֆենտի, ինքն ալ դանդաղելով ոտքի ելավ, Երանիկի քով եկավ և օղիի գավաթը լեցնելով անոր տվավ։

— Տիկին, օղի մըն ալ խմեցեք ու այն ատեն անհանգստությունդ բոլորովին կանցնի,— պնդեց գավաթը երկարելով։

— Շնորհակալ եմ, շատ խմեցի։

— Չէ, անպատճառ պիտի խմես, իմ ձեռքես տակավին չխմեցիր... հոգ մի ըներ, Ղուկաս էֆենտին չնախանձիր, անանկ չէ՞։

Եվ Քերովբե էֆենտի իր բարեկամին նայեցավ։

— Ես չեմ խառնվիր, կուզե խմե, կուզե չխմե,— պատասխանեց վաճառականը նույն սրտնեղած դեմքովը,— արդեն այս իրիկուն չեմ գիտեր ինչ է եղեր, կարծես դիտմամբ կընե կոր, որ մեր ֆեյֆը հարամ ըլլա։

— Եթե ինծի համար է ձեր բռնած այս ընթացքը, ես ահա կերթամ,— ըսավ Քերովբե՝ Երանիկի դառնալով։

Երանիկ՝ նեղված՝ օղիին գավաթը առավ և մի ումպ պարպեց։

— Կեցցես,— գոչեց Քերովբե էֆենտի ուրախությամբ,— տեսա՞ր մի, հիմա հաշտվեցանք։

Հետո, Ղուկաս էֆենտիին դառնալով՝ որ միշտ հեռու կկենար քեն ըրածի դեմքով, շարունակեց։

— Հիմա դուն ալ եկուր, քովերնիս նստե, մեյ մեկ հատ ալ երեքս միասին ճնկենք, որպեսզի հաշտությունը կատարյալ ըլլա։

Վաճառականը մոտեցավ, գավաթները կրկին լեցան և ի նշան կնքված հաշտության՝ իրարու զարնելե ետքը պարպվեցան։

— Կարծեմ կերակուրին ատենը եկավ, եթե կուզեք, սեղան նստինք,— ըսավ Երանիկ վերջ մը տալու համար օղիին։

Բայց Քերովբե էֆենտի համառեցավ։

— Մինչև որ երգ մը չերգես, սկե հունա չեմ երթար,— հայտարարեց բազմոցին վրա փռվելով։

— Դուն ալ այս իրիկուն ամմա նազ ըրիր, հա,— ըսավ վաճառականը քենիին,— հյուրին խոսքը քիչ մը մտիկ կընեն, բան մը երգե լմնա երթա։

Ճար չի կար, պետք էր հպատակիլ։ Երանիկ սկսավ երգել և օղիները շարունակվեցան պարպվիլ։ Ինքն ալ այլևս գինովցած էր և առաջվան պես չէր դժկամակեր խմելու։

Առաջին երգին ուրիշ երգեր ալ հաջորդեցին և գրեթե կես-գիշերին մոտ էր, երբ սեղան նստան։

Առատն սակայն Երանիկ իր սրտմտությունը հայտնեց Ղուկաս էֆենտիի։

— Մեյ մըն ալ չեմ ուզեր, որ հետդ ուրիշ մարդ բերես այստեղ,— հայտարարեց։

— Ի՞նչ կա, ի՞նչ եղավ որ,— գոչեց վաճառականը,— Քերովբե էֆենտին շատ պատվավոր, շատ շնորհքով մարդ է, եկավ տե՛ ի՞նչ ըրավ, բանի մը օղի խմեց, քիչ մը զվարթացավ, մե՞ղք գործեց ատոր համար։ Այսչափ դրամ կխարճեմ կոր տե՛ քիչ մը քեյֆ ընելու իրավունք չունի՞մ, զարմանալի բան։

— Հոս հանրատուն չէ, թող իր տունը նստի քեյֆ ընե։

— Քա, տունդ եկավ տե՛ ի՞նչ ըրավ, ծոցդ չմտավ ա...

— Ատ էր պակաս։

Վաճառականը ուսերը թոթվելով դուրս ելավ սենյակեն ու վար իջավ, ուր Քերովբե էֆենտի իրեն կսպասեր և միասին նավամատույց ուղղվեցան Պոլիս իջնելու համար։

— Աղվոր պատառ մը գտեր ես, կշնորհավորեմ,— ըսավ ճամփան Քերովբե էֆենտի իր բարեկամին։

— Անանկ չէ՞,— պատասխանեց վաճառականը սնապարծ հպարտությամբ մը։

— Ո՞ւրկե ձեռքդ ձգեցիր։

— Ատիկա գաղտնիք է։

— Բայց ամուսնացած կերևա կոր, ատ պզտիկ աղջիկը իրե՞նն է։

— Այո՛, իրն է, ամուսնացած է, բայց էրիկը հոս չէ։

Այս խոսքերը հանկարծ լուսաբանեցին Քերովբե էֆենտին։

— Հիմա հասկցա,— գոչեց,— սա Սամսոն ղրկած մարդուդ կիները ըլլալու է, ի՞նչ ապուշ եմ եղեր, որ մինչև հիմա չհասկցա։ Ես ալ զարմացեր էի, որ ինչո՛ւ համար այդ մարդուն բացեն ամսական մը կապիր ես... գործին մեջ գործ կա եղեր, վա՛յ թշվառականս։

Ղուկաս էֆենտի չպատասխանեց։ Զգաց, որ արդեն պետք եղածեն ավելի խոսած էր և ուզեց խոսքը փոխել։

— Աճապարենք, շոգենավը պիտի փախցնենք,— ըսավ։

Բայց շոգենավին մեջ Քերովբե էֆենտի նորեն խոսքը Երանիկի վրա դարձուց.

— Ան ի՞նչ սև ու աղվոր աչքեր, շատ տաքարյուն կնիկ էր... աղջիկն ալ ճիշտ իրեն կնմանի, մեծնա նե՝ խըյախ բան պիտի ըլլա։ Խեղճ էրիկն ալ խելքովը կկարծե թե իրեն արժանիքին համար տասը ոսկի ամսական կառնե կոր։

— Լուր մը ունի՞ս իրմե, գործին մեջ ի՞նչպես է եղեր, բանի մը յաւա՞ր է գոնե,— հարցուց վաճառականը՝ խոսքը Երանիկի վրայեն հեռացնելու համար։

— Գեշ չէ, գեղերը ղրկեր են ապրանք գնելու, արդեն ընելիքը ի՞նչ է որ... բայց այս աղվոր կնիկը ինչպես այդ պոշ մարդուն տըվեր են, կերևա որ ամուսնացած ատենը հարուստ է եղեր։

— Անանկ կերևա։

— Շիտակը երեկ իրիկուն շատ աղվոր ժամանակ անցուցինք... բայց գիտցած եղիր, օձիքդ թող չեմ ի տար, այս օրերս իրիկուն մը նորեն միասին պիտի գանք... եթե ոչ, գիտցած ըլլաս հա, էրիկը Սամսոնեն բերել կուտամ։

Եվ Քերովբե էֆենտի այս սպառնալիքը ընելով, սկսավ քահ-քահ խնդալ։

Տանը մեջ Երանիկ տակավին չէր հանդարտած, մանավանդ Ղուկաս էֆենտիի խոսքերը ալ ավելի գրգռած էին զինքը։ Կտեսնար, որ այդ մարդը հետզհետե տարբեր վարմունք մը կունենար իրեն հանդեպ, կատարյալ հոմանիի մը, հանրակինի մը տեղ դնելով զինքը ու այս բանը կկատղեցներ հեգ կինը։

Ուրիշ բան մը նույնպես անհանգիստ կըներ զինքը։

Դյուղին մեջ սկսած էին կասկածոտ աչքով մը նայիլ իրեն, հասկցած էին, թե այդ մարդը, որ շաբաթը քանի մը իրիկուն կուգար մնալու, իր ամուսինը չէր։ Ու հետո, տանը մեջ եղած քեյֆերը, երգելու ձայնը, տիրող շռայլությունը շատերուն ուշադրությունը գրաված էին։

Քանի մը անգամ՝ փողոցը, երիտասարդներ խոսք նետեր էին Երանիկի, ետևեն հետապնդեր, մինչև տան դիմացը եկեր էին, որով Երանիկ շատ չէր համարձակեր առանձին դուրս ելլել և տանը մեջ փակված կանցըներ ժամանակը։

Անշուշտ, վայրկյան մը չպիտի հանդուրժեր այս կյանքին ու պիտի առներ քալեր, եթե նյութական միջոցներ ունենար։ Նույնիսկ հոժարակամ պիտի երթար Սամսոն՝ էրկանը քով, ուր տասը ոսկի ամսականով կրնար ապրիլ, սակայն ինք գիտեր, որ այդ դրամը միմիայն էրիկեն բաժնելու համար կտրվեր իրեն և թե կրնար Ղուկաս էֆենտի, իր ազդեցությամբը, զայն գործեն հանել ուալ։ Երանիկ չէր գիտեր բուն իրականությունը, այսինքն թե՝ իր էրկանը ամսականին մեծ մասը Ղուկաս էֆենտիի կողմե վճարվիլը։

— Ինչ որ ալ ըլլա,— խորհեցավ ինքնիրեն,— պետք է այս վիճակեն դուրս ելլել, քանզի անկարելի է այսպես շարունակել։

Երկու օր ետքը Ղուկաս էֆենտի կրկին եկավ, այս անգամ առանձին։ Երանիկ սովորականեն տարբեր, պաղ ընդունելություն մը ըրավ իրեն, մերժելով վաճառականին հայրատ գգվանքները։

— Ի՞նչ ես եղեր այսօր,— հարցուց այս վերջինը, զարմացած երևույթով մը։

— Երկու օրե ի վեր անհանգիստ եմ,— պատասխանեց Երանիկ։

Հետո ավելցուց լրջորեն.

— Ղուկաս էֆենտի, քեզի խոսք մը ունիմ։

— Ըսե տեսնենք,— պատասխանեց վաճառականը անտարբեր։

— Այս վիճակը այսպես չեմ կրնար շարունակել, գեղին մեջ ամենուն բերանը ինկած եմ, դուրս ելլելու կամենամ կոր։

— Ամեն դուն ալ, ասոր անոր խոսքին ի՞նչ կարևորություն կուտաս, դուն քիչ քեյֆիդ նայե. այդ բամբասողները քեզ կարոտության մեջ տեսնան նե, տասը փարա կուտա՞ն։

— Ատոնք պարապ խոսքեր են, մարդ միմիայն փարայի համար չապրիր, քիչ մըն ալ պատիվը գիտնալու է։

— Էյ, աղեկ, ի՞նչ ընել որոշեցիր նայինք,—հարցուց էֆենտին հեգնական շեշտով մը։

— Ի՞նչ պիտի որոշեմ, ամենեն պարզ ու բնական բանը, կելլամ Սամսոն, էրկանս քով կերթամ, հոն տասը ոսկիով շատ աղեկ կրնանք ապրվիլ։

— Խելքդ սիրեմ, որ Պոլիս պիտի թողուս ու երթաս Սամսոնի պես քաղաքի մը մեջ փակվիս մնաս։

— Քանի որ էրիկս հոն է, ես ալ կրնամ երթալ։

— Կերևա որ մեկեն ի մեկ էրիկդ կարոտցար,— ըսավ Ղուկաս էֆենտի խնդալով։

— Կաղաչեմ, Ղուկաս էֆենտի, կատակելու ատեն չէ, շատ լուրջ կերպով կխոսիմ կոր։

— Սա օղիին ափսեն բերել տուր,— ըսավ էֆենտին, իբրև պատասխան։

Երանիկ դուրս ելավ՝ հրամանը կատարելու, բայց երբ վերադարձավ՝ ըսավ.

— Ես այս իրիկուն չպիտի խմեմ, գիտցած ըլլաս, շատ վնաս կուտա կոր...

— Քանի որ վնաս կուտա կոր, մի խմեր, քեզի ո՞վ կստիպե... էյ, ե՞րբ ճամփա կելլաս կոր նայինք, Սամսոն երթալու համար։

— Ղուկաս էֆենտի, կաղաչեմ, այդպես ծաղրական կերպով մի խոսիր հետս, չես գիտեր երկու օրե ի վեր ի՞նչ սոսկալի տանջանքներու մեջ եմ,— պատասխանեց կինը պաղատագին ձայնով...

— Ինչո՞ւ ծաղրեմ, շատ լրջորեն կխոսիմ կոր, քանի որ Սամսոն երթալու խոսք ըրիր, ես ալ երթալդ հարցուցի, ասոր մեջ ծաղրական ինչ կա... ասկե զատ, շատ աղեկ կընես երթալով, երբ կին մը անանկ աննման էրիկ մը ունի, հարկավ չկրնար երկար ատեն բաժնված մնալ, գործն ալ հիմա շատ աղեկ է, կրակի պես կաշխատի կոր եղեր, անանկ որ Քերովբե էֆենտին միտք ունի ամսականը ավելցնելու, «գործիս մտնելեն ի վեր զիս էնյա ըրավ» կըսե կոր...

Ու Ղուկաս էֆենտի որոտընդոստ քահ-քահ մը ձգեց։

Երանիկ՝ հուսահատ խոսքը կարճ կապեց ու լռեց։ Երբ օղիի ափսեն բերին՝ Ղուկաս էֆենտի երկու գավաթները լեցուց և մին իր քենիին երկարելով՝ ըսավ.

— Խմե նայինք ասիկա, քիչ մը բացվիս, որովհետև շատ տրխուր կերևաս կոր։

— Բայց ըսի, որ ես չպիտի խմեմ այս գիշեր...

— Ես ալ կըսեմ, որ պիտի խմես։

— Վնաս կուտա կոր...

— Պարապ խոսք մտիկ չեմ ըներ, խմե տեսնեմ... խմե, որ հիմակ ալ իս մտիկ ընես, որովհետև ես ալ շատ լրջորեն պիտի խոսիմ։

Երանիկ ստիպվեցավ պարպել գավաթը։

— Հիմա նստե,— ըսավ էֆենտին, իրավցնե լուրջ դեմքով մը— Նախ՝ սա ըսեմ, որ Սամսոն երթալու գաղափարդ մտքեդ հանե։

— Ինչո՞ւ համար...

— Որովհետև էրիկդ հոն գործ չունի...

— Ինչպե՞ս գործ չունի, հապա ո՞ւր է իր գործը, ինչո՞ւ տասը ոսկի ամսական կառնե կոր...

— Էրկանդ գործը և այդ գործին համար առած տասը ոսկի ամսականը մինակ քենե հեռու ըլլալն է հիմա, հասկցա՞ր... այն օրը, որ միասին ըլլաք, գործն ալ կդադարի...

Եվ վաճառականը, այս խոսքին վրա, քիթեն տակեն խնդալով օղիի գավաթը պարպեց, հետո կրկին գավաթները լեցուց և մին Երանիկին հրամցուց։

— Ձեմ հասկնար կոր ըսածդ,— պատասխանեց Երանիկ գավաթը առնելով և իրավ ալ Ղուկաս էֆենտիի խոսքերը տարօրինակ կթվեին իրեն։

— Ի՞նչ կա չհասկնալիք...

— Բայց ինչո՞ւ գործը պիտի լմննա կամ ամսականը դադրի իմ երթալովս, ատիկա ի՞նչ կարևորություն ունի Քերովբե էֆենտիի համար...

— Կտեսնամ, որ շատ միամիտ ես եղեր,— պատասխանեց վաճառականը,— ես քեզի ավելի խուռնազ կկարծեի, ուրեմն կըկարծես, որ Քերովբե էֆենտին իրավցնե պե՞տք ունենալու համար էրիկդ Սամսոն ղրկեց ու տասը ոսկի ամսական կապեց... քա պարզապես իմ խաթերս համար ատանկ ձևացուց... անիկա ոչ մարդու պետք ունի, ոչ ալ ատանկ գործի մը համար տասը ոսկի կուտար, այսչափ չկրցա՞ր հասկնալ...

Երանիկ այս հայտնութենեն շփոթեցավ, բայց հանկարծ կասկած մը ծագեցավ մտքին մեջ։ Գուցե Ղուկաս էֆենտի դիտմամբ այդպես կըսեր զինքը իր դիտավորութենեն ետ կեցնելու համար, որովհետև գիտեր թե իր քեռայրը ընդունակ էր, իր նպատակին հասնելու համար, ամեն տեսակ միջոցներ գործածելու։ Բայց իր կասկածը հայտնի չըրավ և այնպես մը ձևացուց թե կատարելապես հավատացած էր վաճառականին խոսքերուն և համակերպիլ ձևացուց իր ճակատագրին։

— Ըսել է, որ եթե Սամսոն երթալու ըլլամ, գործն ալ, ամսականն ալ պիտի դադրին...

— Կարծեմ թե Երանիկ հանըմը իր էրկանը հետ ֆեյֆ պիտի ընե տեյի՝ Ղուկաս էֆենտին տասը ոսկի ամսական վճարելու պետք չունի,— պատասխանեց վաճառականը ամենայն կոպտությամբ։

Երանիկ բարկութենեն շառագունեցավ, բայց չկրցավ պատասխան մը գտնել և գլուխը ծռեց։

Հետեւյալ առտուն, վաճառականին մեկնելեն ետքը, Երանիկ դարձավ իր սեռուն գաղափարին։

— Այս մարդը գուցե կստե,— մտածեց ինքնիրեն,— և էրկանս համար ըսածները ճշմարիտ չեն, այլ միայն զիս խաբելու համար հնարած. պետք է որ ես առանձին խոսիմ Քերովբե էֆենտիին հետ և ամեն բան հասկնամ... այն ատեն կրնամ ընելիքս որոշել։

Ղուկաս էֆենտի առտուն մեկնած ատեն իմաց տված էր, որ հառաջիկա անգամ գալուն հավանորեն իր հետ պիտի բերեր Քերովբե էֆենտին և պատվիրած էր Երանիկի սիրալիր ընդունելություն մը ընելու և նախորդ անգամվան ընթացքը չի բռնելու։ Երանիկ, որ արդեն իսկ որոշած էր դիմում ընելու Քերովբե էֆենտիի, առանց դժվարության հավանություն հայտնեց, ըսելով.

— Քանի որ բարեկամդ է և դուն ալ կփափաքիս, որ լավ ընդունելություն ընենք իրեն, ես ալ ձեռքես եկածը պիտի ընեմ։

Այս համակերպությունը քիչ մը զարմացուցած էր վաճառականը, որ ընդհակառակը ընդդիմություն կսպասեր քենիին կողմե, բայց հետո ինքնիրեն բացատրեր էր այդ համամտությունը։

— Կերևա որ մտածեր է, էրկանը մասին ըսածներս իրենց ազդեցությունը ըրեր են և զգացեր է, որ ըմբոստությամբ գործ չտեսնվիր։

Երբ երկու օր ետքը վաճառականն ու Քերովբե էֆենտի եկան Սարը Յար, Երանիկ՝ իր խոստումին հավատարիմ, շատ սիրալիր ընդունելություն մը ըրավ իր քեռայրին բարեկամին, որ հիացած մնաց կնոջ իր նկատմամբ ցույց տված այդ համակրանքներեն, որոնք չէին համապատասխաներ նախորդ այցելության միջոցին անոր բռնած վերապահ դիրքին։

Նույնիսկ օղի խմելու կամ երգ երգելու համար այս գիշեր Երանիկ դժվարություն չհայտնեց։ Անտրտունջ կրեց Քերովբե էֆենտիի շվայտ ակնարկությունները և թույլ տվավ, որ անշնորհք կատակներ ընե իրեն հետ։

Ղուկաս էֆենտի աչք կգոցեր այդ անցուդարձեն և բնավ նախանձ զգալու երևույթը չուներ։ Ան ալ իր մասնավոր ծրագիրը ուներ և այդ ծրագրին իրագործմանը համար նպաստավոր կհամարեր իր քենիին ու բարեկամին միջև գոյացած համակրական հարաբերությունները։

Իր կինը, տիկին Թագուհի, հավանորեն քիչ ատենեն պիտի վերադառնար։ Ռոզիկ արդեն իսկ մանչ մը ծնած էր և մայրը՝ մեկնելու համար կսպասեր իր աղջկան անկողնեն ելլելուն, այնպես որ մեկ երկու շաբաթեն Ղուկաս էֆենտիի ամուրի կյանքը վերջ պիտի գտներ։ Արդ, այս հեռապատկերին հանդեպ վաճառականը կուզեր այժմեն իր պատրաստությունները տեսնել։ Իր նպատակն էր քենին Քերովբե էֆենտիին գլուխը փաթթել և միևնույն ատեն զայն ուզած ատեն գործածել իր հաճույքին։ Ահա ասոր համար հաշտ աչքով կնայեր իր քենիին ու բարեկամին սիրալիր վերաբերումին։

Միջոց մը, երբ Քերովբե էֆենտին ու Երանիկ առանձին մնացին, այս վերջինը ըսավ.

— էֆենտի, ձեզի հետ լուրջ ու կարևոր խնդրի մը համար տեսակցիլ կուզեմ։

— Ամենայն հաճույքով, երբ որ ուզես,— պատասխանեց մյուսը,— խնդիրը ի՞նչ բանի վրա է։

— Ծառայություն մը պիտի խնդրեմ։

— Ուրեմն կրնաս վստահ ըլլալ, որ հիմակվանե խնդրանքդ ընդունված ու կատարված է։

— Շնորհակալ եմ, միայն թե այս մասին Ղուկաս էֆենտին բան մը գիտնալու չէ։

— Անոր համար ալ կրնաս ապահով ըլլալ։

— Ես վաղը կուգամ ձեր գրասենյակը և հոն առանձին կտեսնվինք։

Եվ Երանիկ Քերովբե էֆենտիի գործատեղիին հասցեն ուզեց, զոր այս վերջինը անմիջապես հաղորդեց։

— Ե՞րբ պիտի գաս, ըսե, որ ըստ այնմ պատրաստ ըլլամ և պետք եղած կարգադրությունները ընեմ, որպեսզի առանձին գտնըվինք։

— Կեսօրեն ետքը, ժամը երեքին միջոցները,— պատասխանեց Երանիկ,— միայն թե՝ կկրկնեմ, չըլլա, որ այս մասին Ղուկաս էֆենտին բան մը իմանա։

— Անհոգ եղիր...

Քերովբե էֆենտի կուզեր ավելի մանրամասնություններ հասկընալ այս անակնկալ ու խորհրդավոր այցելության մասին և ասոր համար կպատրաստվեր հարցումներ ուղղել, երբ Ղուկաս էֆենտի ներս մտնելով, հարկ եղավ վերջ դնել այս խոսակցության։

Երբ Ղուկաս էֆենտի իր քենիին հետ առանձնացավ ննջասեն-

յակը, իր գոհունակությունը հայտնեց անոր նույն իրիկվան ընթացքին համար և ըսավ.

— Կտեսնամ, որ անհանգստությունդ բոլորովին անցեր է ու նորեն հին զվարթությունդ գտեր ես... երկու օր առաջ շիտակը զիս դող հանեցիր քու տխուր կերպարանքովդ և խենթ ու խելառ խորհուրդներովդ...

— Ի՞նչ խորհուրդ,— հարցուց Երանիկ բուռն ժպիտով մը։

— Ես ինչ գիտնամ՝ հիմարական բաներ, Սամսոն երթամ կըսեիր, ինչ կըսեիր։

— Այո, այդ օրը խելքիս այնպես փչեց, բայց հետո մոռացեցի, որ ըլլալիք բան չէր։

— Աֆերիմ, կտեսնամ, որ խելքդ գլուխդ եկեր է։

Ղուկաս էֆենտի հետո խոսեցավ իր կնոջ՝ տիկին Թագուհիի մոռալուտ գալուստի մասին և ավելցուց.

— Բայց դուն անհոգ եղիր, քու մասիդ ամեն բան պիտի կարգադրեմ և նորեն պիտի կրնանք մեր հարաբերությունները շարունակել ապահով ու ծածուկ կերպով։

Հետո այս խորհրդավոր խոսքերը ըսավ, որոնց իմաստը լավ չկրցավ ըմբռնել Երանիկ։

— Միայն թե ջանա Քերովբե էֆենտիի հետ անուշ երթալ... այս իրիկվան ընթացքդ շատ աղեկ էր։

Երանիկ ուզեց ավելի բացատրություն մը ուզել այս անորոշ ակնարկության մասին, ուստի ըսավ.

— Ինչո՞ւ համար կուզես, որ անպատճառ անուշ երթամ Քերովբե էֆենտիին հետ, ասիկա բացատրե ինծի։

Ղուկաս էֆենտի իր քենիին ձեռքը բռնեց փաղաքշական ձևով մը և ըսավ.

— Ինծի նայե, ինչպես ըսի, ծրագիր մը ունիմ քու ապագայիդ համար և այս պատճառով պետք ունինք Քերովբե էֆենտիի աջակցության... Թագուհին քիչ օրեն պիտի գա և գալեն ետքը բնականաբար մեր այս կյանքը չենք կրնար շարունակել, դուն Սարը Յար չես կրնար նստիլ ձմեռը, և նույնիսկ, եթե նստիս, ես այսպես շաբաթը երեք անգամ չեմ կրնար գալ և գիշերը հոս անցնել, ուստի պետք է որ դուն ալ գաս, Բերա, տուն մը նստիս, որպեսզի կարենանք մեր հարաբերությունները շարունակել, և ասոր համար, ահա, հարկավոր է որ Քերովբե էֆենտի մեզի աջակցի. հիմա հասկցա՞ր։

— Շիտակը, նորեն չկրցա հասկնալ,— պատասխանեց Երանիկ միամտորեն։

— Առ այժմ դուն ըսածիս պես վարվե, հետո կհասկնաս ամեն բան,— հարեց Ղուկաս էֆենտի խոսքը կարճ կապելով։

Հետևյալ օրը, առտուն կանուխ, երկու բարեկամները մեկնեցան։ Դուրս ելլելե առաջ, բոպե մը, Քերովբե էֆենտի հաջողեցավ առանձին մնալ Երանիկի հետ և ըսավ.

— Կհուսամ, որ խոստումդ չես մոռնար և այսօր կուգաս զիս տեսնելու։

— Այս, այո, անպատճառ պիտի գամ և շատ շնորհակալ ու երախտագետ պիտի ըլլամ, եթե ըսելիք խնդիրքս չմերժես։

— Եթե հրամանդ անկարելի բան մը չէ, արդեն հիմակվանե կատարված կրնաս նկատել,— պատասխանեց կնահաճո վաճառականը։

— Ոչ թե անկարելի՝ այլ շատ դյուրին բան մըն է ձեզի համար, գրեթե շատ ոչինչ բան մը, որ սակայն մեծ կարևորություն ունի ինծի համար։

— Ուրեմն ժամը երեքին կսպասեմ։

Երանիկ ճշտապահ գտնվեցավ և ժամը երեքին ներկայացավ Քերովբե էֆենտիի գրասենյակը։

Վաճառականը, որ անհամբեր կսպասեր իր գեղեցիկ այցելուհին, ամեն միջոց նախապես ձեռք առած էր, որպեսզի իրենց տեսակցության միջոցին ոևէ անակնկալ այցելություն մը վրա չհասներ, և խստիվ պատվիրած էր, որ թե գործի և թե ոևէ պատրվակով չգային զիրենք անհանգիստ ընել։

Քերովբե էֆենտի շատ հետաքրքիր էր իրեն ըլլալիք առաջարկը կամ խնդրանքը իմանալու և այս մասին իզուր կջանար ինքնիրեն գուշակություն մը ընել, բայց Երանիկի առաջին խոսքերեն հասկցավ թե խնդիրը ինչի՞ վրա է։

— Նախ հարցում մը ունիմ քեզի,— ըսավ Երանիկ, բարևուքի սովորական ձևակերպություններեն ետքը—և կուզեմ, որ անկեղծորեն պատասխանես։

— Խոսե տեսնենք։

— Էրիկս, որ Սամսոն կգտնվի, քու կուզմե՞դ զրկված է։

Քերովբե էֆենտի թեթևապես ժպտեցավ։ Խորհրդավոր գաղտնիքին կծիկը կսկսեր քանդվիլ։

— Այո,— պատասխանեց։

— Ամսականը դո՞ւն կվճարես։

— Բնականաբար։

— Գո՞հ ես իր գործեն։

— Մինչև հիմա դժգոհության պատճառ մը չունեցա։

— Պիտի շարունակե՞ս քու գործիդ մեջ պահել զինքը։

— Անշուշտ, եթե գանգատի տեղի չի տա։ Բայց ինչո՞ւ համար այս հարցաքննությունները։

— Ըրովհետև ես ալ, Սամսոն, իր քով երթալ հաստատվելու միտք ունիմ,— պատասխանեց Երանիկ։

Այս խոսքերը մեկեն ի մեկ զարմացուցին ու շփոթեցուցին Քերովբե էֆենտին։ Երբեք այսպիսի եզրակացության մը չէր սպասեր։

— Ինչպե՞ս,— գոչեց,— Սամսոն պիտի երթա՞ս, հապա Ղուկաս էֆենտին...

— Ալ բավական է Ղուկաս էֆենտիին հետ վարած կյանքս, պետք է, որ էրկանս քով երթամ,— պատասխանեց Երանիկ վճռաբար։

— Այս դիտավորությունդ հայտնեցի՞ր իրեն։

— Այո։

— Էյ, ընդդիմություն չըրա՞վ։

— Ըրավ, բայց ստիպված չեմ անպատճառ իրեն հնազանդելու, էրիկ մը ունիմ, որ ազատ գործի տեր է, իրմե կախում չունի և կրնա զիս ապրեցնել, հետևաբար ուզածիս պես կրնամ շարժիլ։

— Բայց ուրեմն չե՞ս սիրեր Ղուկաս էֆենտին։

— Ե՞ս, երբեք,— գոչեց Երանիկ անկեղծ պոռթկումով մը։

Այս խոստովանությունը գաղտնի հաճույք մը պատճառեց Քերովբե էֆենտիի։

— Հիմա գանք մեր խնդրին,— շարունակեց Երանիկ։— Ղուկաս էֆենտի զիս իր ձեռքին տակ ունենալու համար ուզեց այնպես հավատացնել տալ թե ինք ղրկած է ամուսինս Սամսոն, թե ինքն է ամսականը վճարողը և հետևաբար մենք ալ իրմե կախում ունինք։ Ես ալ ճիշտ այդ կետը լուսաբանելու համար ուզեցի գալ ձեզ տեսնել և շատ ուրախ եմ, որ այդպես չէ եղեր և թե մեր ապրուստը իրմե կախված չէ...

— Այսինքն,— կմկմաց վաճառականը,— թեև ձեր ամուսինը իմ գործիս մեջն է, բայց Ղուկաս էֆենտիի հանձնարարությամբը և անոր խաթեր համար առած եմ։

— Այո, բայց հիմա գոհ եք իր աշխատութենեն և պետք չունիք զինքը գործեն հանելու՝ Ղուկաս էֆենտիին հաճույք պատճառելու համար...

Վաճառականը հայտնապես կնեղվեր խոսակցության առած այս ձևեն և ուզեց շեղում մը ընել։

— Ինծի նայե, տիկին,— ըսավ,— ըստ իս Սամսոն երթալու դիտավորությունդ շատ պարապ բան է, քեզի պես տիկին մը Սամսոնի մեջ չկրնար ապրիլ, եկուր ուրիշ կարգադրություն մը ընենք։

— Ի՞նչ կարգադրություն,— հարցուց Երանիկ զարմացած։

Քերովբե էֆենտի, առանց անմիջապես պատասխանելու, եկավ կնոջ քով, ձեռքերը բռնեց և ողոքիչ ձայնով մը ըսավ.

— Ավելի աղեկ չէ՞, որ հոս մեր քովը մնաս, քեզի աղվոր պզտիկ տուն մը կբռնենք, մեջը կտեղավորենք, ազատ հանգիստ կապրիս, քեյֆդ կնայիս...

Այս անպատկառ առաջարկությունը ընդվզեցուց հեգ կինը, որ ետ քաշվելով գոչեց.

— Դո՞ւն ալ ուրեմն, Քերովբե էֆենտի, ես քեզի դիմեցի պաշտպանություն գտնելու համար և ահա դուն ալ կջանաս Ղուկաս էֆ-ի ընթացքը բռնել ինծի հանդեպ։

Վաճառականը զգաց թե խրտչեցուցած էր իր խոսակիցը, ուստի ուզեց սխալը դարմանել։

— Կներեք, տիկին,— ըսավ,— ես ձեզ վիրավորել չուզեցի, միայն թե իմ անկեղծ կարծիքս էր, որ հայտնեցի, բայց քանի որ դուք տարբեր կերպով կխորհիք և անպատճառ Սամսոն ձեր ամուսնույն քով երթալ կուզեք, ատոր ըսելիք չի կա, թող ձեր ուզածին պես ըլլա։

— Այո, ես կուզեմ էրկանս քով երթալ,— պնդեց Երանիկ,— և ասոր համար ձենե մեկ բան կխնդրեմ, այն է՝ ինծի վստահեցնել, որ էրիկս միշտ իր գործին վրա պիտի մնա, հոն երթալես վերջն ալ։

— Ատիկա ինե և ձենե միայն կախում ունի,— պատասխանեց Քերովբե էֆենտի, որ այս գլուխ գլխի տեսակցութենեն արդեն չափազանց գրգռված էր, և չէր կարող սանձել իր զգայարանքները։

— Ինչպե՞ս ձենե և ինե կախում ունի,— հարցուց Երանիկ։

— Անշուշտ, ես ձեզի կխոստանամ ձեր ամուսինը մինչև ետքը իր պաշտոնին գլուխը պահել. այս չէ՞ ձեր փափաքը...

— Այո՛։

— Լավ, բայց մենք, վաճառականներս, գործի մարդիկ ենք։

այսինքն առուտուրի մարդիկ, կհասկնա՞ք... Ես այս ծառայությունը պիտի մատուցանեմ ձեզի, քանի որ կխնդրեք, բայց փոխարենն ալ Ես ձենե բան մը պիտի խնդրեմ... միթե արդարությունը այնպես չէ՞ աշխարհի մեջ. ամեն բան փոխանակությամբ կըլլա, միայն ասված է, որ կուտա, առանց փոխարեն բան մը առնել...

— Բայց ես ինչպե՞ս կրնամ փոխարինել ձեր ընելիքը։

Քերովբե էֆենտի կրկին իր ձեռքերուն մեջ առավ Երանիկի ձեռքերը, անոր ականջն ի վար քանի մը խոսքեր մրմնջաց, հետո առանց ականջ կախելու թեթև ընդդիմության մը, զայն իր թևերուն մեջ առավ...

* * *

Երանիկ, ընկճված ու տխուր, դուրս եկավ Քերովբե էֆենտիի գրասենյակեն և ուղղվեցավ կամուրջը, Սարը Յարի շոգենավը մտնելու համար։

— Թող ասիկա վերջին զոհողությունն ըլլա,— կմտածեր ինքնիրեն, տխուր համակերպությամբ մը,— գոնե ասով իրմե խոստում առի թե Սամսոնի մեջ պիտի կրնամ ապրիլ էրկանս քով։ Քանի մը օրեն պատրաստությունս կտեսնամ ու կմեկնիմ, տակավին քույրս Փարիզեն չվերադարձած, ու ալ ամեն բան վերջացած կըլլա...

Նույն իրիկունը, Քերովբե էֆենտի հաղթական ու ծաղրածու, գնաց գտավ իր բարեկամը՝ Ղուկաս էֆենտին։ Նախ կուզեր իր հաջողությունը պատմել անոր, հետո Երանիկի ամուսնույն խնդիրը կարգադրել։ Իրավ է թե իր ցանկության հագուրդ տալու համար խեղճ կնոջ խոստացած էր իրենց ապագան ապահովել, բայց այս խոստումը չէր կարող գործադրել, առանց Ղուկաս էֆենտիի հավանության և ասոր համար կուզեր փորձ մը ընել, թեև շատ կկասկածեր իր հաջողության մասին։

— Ձես ըսեր, այսօր գլխուս եկածը,— ըսավ Ղուկաս էֆենտիի գրասենյակեն ներս մտնելով, մինչ վաճառականը, իր գործերը ավարտած, կպատրաստվեր դուրս ելլել։

— Խեր ըլլա, ի՞նչ կա։

— Խելքե մտքե չանցած այցելություն մը ընդունեցի։

— Ի՞նչ այցելություն, ըսե՛ տեսնենք։

— Տիկին Երանիկը ինծի եկավ։

— Վայ, ի՞նչ բանի համար։

— Սամսոն պիտի երթա տե՛ այդ մասին եկավ հետս տեսնվելու և հասկնալու համար, որ էրիկը իր պաշտոնին մեջ հաստատ պիտի մնա՞։

— Էյ, դու ի՞նչ ըսիր։

— Ըսի որ, խնդիրը իմ կամքես կախում ունի, քանի որ իմ պաշտոնյաս է...

— Էյ, ե՞տքը,— հարցուց Ղուկաս էֆենտի ծիծաղելով։

— Վերջապես երկար բարակ տեսակցութենե ետքը, խոսք տվի, որ էրիկը իր պաշտոնին վրա պիտի մնա միայն թե ինքն ալ իր փոխարեն իմ խնդիրքս չպիտի մերժե...

— Է, գոնե այդ մասին համաձայնեցա՞ք։

— Քիչ մը դժվարություն ըրավ, բայց վերջը համաձայնեցավ, արդեն ուրիշ կերպ չէր կրնար ընել, մեյ մը թակարդը ինկած էր,— ըսավ Քերովբե էֆ. քահ-քահ մը ձգելով։

— Լավ, բայց հիմա խոստումդ ի՞նչպես պիտի պահես,— պատասխանեց Ղուկաս էֆենտի.— տասը ոսկին դուն գրպանե՞դ պիտի տաս...

— Ճիշտ ատոր համար ուզեցի քեզ տեսնել, որպեսզի ինծի խելք մը սորվեցնես այդ դժվարության մեջեն ելլելու համար, մանավանդ որ, եթե իր խոսքին նայինք, այսօր վաղը ճամփա ելլելու միտք ունի... բայց խոսքը մեջերնիս, աղվոր պատառ է եղեր, ըսելիք չի կա, մեղք պիտի ըլլա, եթե ձեռքե փախցնենք։

— Այդ մասին անհոգ եղիր, տեղ մըն ալ չկրնար երթալ անիկա։

— Բայց իմ խոստո՞ւմս...

— Թող քու խոստումիդ վրայեն ջուր մը խմե։

— Ղուկաս էֆենտի, եկուր սա կնկա փափաքը կատարենք, թող ելլա Սամսոն երթա, քանի մը ամիս մնա, արդեն անկեց ավելի չկրնար մնալ հոն, ետքը ուզե չուզե նորեն հոս պիտի գա, գոնե ես պզտիկ մնացած չեմ ըլլա։

— Թող երթա էֆենտիմ, ո՞վ արգելք կըլլա իրեն, դուն ալ փարա շատ ունիս նե՛ էրկանը ամսականները վճարե, նույնիսկ եթե կուզես, հավելում մըն ալ ըրե, քու գիտնալիք բանդ է։ Ես ձեռքերս կլվամ ու կքաշվիմ։

Քերովբե էֆենտի զգաց թե անկարելի պիտի ըլլա Ղուկաս էֆենտիին համոզել, ուստի խոսքը փոխեց։

— Ճանըմ, հիմա վազ անցիր այս խոսքերեն, հիմակուհիմա քիչ մը ատեն ալ զինքը կխաղցնենք, այսօր վաղը կըսենք, նայինք ինչ կըլլա։

— Աղեկ, աղեկ,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, որ արդեն իր ծրագիրը պատրաստած էր մտքին մեջ։

Հետևյալ իրիկուն իսկ վաճառականը գնաց Սարը Ցար, իր քենիին տունը։

— Սնտուկներդ կապեցի՞ր, թեղքերեդ շնել տվի՞ր,— հարցուց երբ առանձնացան։

— Ղուկաս էֆենտի, հազար անգամ աղաչեցի, որ այդ մասին հետս կատակ չընես, և եթե զիս չես հարգեր, գոնե քրոջս համար, թող որ միտքս դրածը գործադրեմ, որովհետև այս կյանքը անկարելի է շարունակել...— աղաչեց խեղճ կինը՝ պաղատագին շեշտով մը։

Բայց վաճառականը այդ տեսակ խոսքերե հուզվող մարդ չէր և պաղարյունությամբ պատասխանեց.

— Կատակ չեմ ըներ կոր, միայն թե քիչ մը ցավ զգացի, որ վերջնական որոշումը տալեդ ետքը, փոխանակ ինծի հայտնելու, գացեր Քերովբե էֆենտիին հայտներ ես... բայց ասոր համար ալ բեզի դեմ քեն չեմ պահեր... արդեն իրավունք ունիս այդպես ընելու, քանի որ Քերովբե էֆենտի երկանդ շորոպանին է...

— Ի՞նչ, մեր տեսակցության մասին քեզի խո՞սք բացավ,— հարցուց Երանիկ թեթևորեն կարմրելով։

— Հապա, երեկ խեղճ մարդն խելքը գլխեն թոցուցեր է վազելով վրաս եկավ ամեն բան պատմեց, բերնին ջուրերը վազցուցեր ես...

Եվ Ղուկաս էֆենտի շարաճճի ակնարկ մը ուղղեց իր քենիին, որ շփոթությունը ծածկելու համար գլուխը մեկ կողմ դարձուց. հետո տեսնելով որ լռությունը իրեն հանցավորի մը երևույթ պիտի տար, ըսավ.

— Այո, գացի Քերովբե էֆենտիին տեսա, բայց խելքը գլխեն թոցնելու, բերնին ջուրերը վազցնելու բան չիկա, պարզապես ուզեցի հասկնալ, որ երիկս որո՞ւ պաշտոնյան է, ամսականը ուրկե՞ կառնե. ան ալ պատասխանեց, որ իր պաշտոնյան է, թե գործեն գոհ է և թե ամսականը ինք կվճարե։ Մինչդեռ դուն ուրիշ կերպով պատմեցիր գործը։

— Կներես, քեզի խաբեցի,— պատասխանեց վաճառականը,—

ի՞նչ ընեմ, քեզի այնչափ կսիրեմ, որ երբոր Սամսոն երթալու դիտավորություն հայտնեցիր, խելքս գլխես գնաց, բերնիս եկածը ըսի։ Հիմա քեզի ավետիս մը տա՞մ...

— Ի՞նչ ավետիս,— հարցուց Երանիկ կասկածոտ շեշտով մը։

— Սամսոն երթալուդ պես, երկանդ ամսականը կավելնա կոր, գիտցած ըլլաս, երեկ Քերովբե էֆենտին այնպես ըսավ... երկու ոսկի հավելում պիտի ընե եղեր։ Կարծեմ եթե այցելություն մըն ալ տաս, փոխանակ երկուքի՝ չորս ոսկի հավելում կըլլա ամսականին վրա։

Վաճառականին այս վերջին խոսքերը բոլորովին խռովեցին Երանիկը, որ սկսավ վախնալ, թե իր ու Քերովբե էֆենտիի միջև անցած բոլոր մանրամասնություններուն տեղյակ էր քեռայրը։ Եվ սակայն ուզեց ամեն բան հասկնալ և սարսիպել Ղուկաս էֆենտիին, որ իր բոլոր գիտցածները ըսեր, ուստի պատասխանեց.

— Չեմ գիտեր ի՞նչ ըսել կուզես, լեզվիդ տակը բան մը կա, զոր բացե ի բաց չես ուզեր կոր հայտնել... եթե ըրած այցելությանս մասին է, արդեն բացատրեցի թե ինչու համար գացեր էի Քերովբե էֆենտիի գրասենյակը, և, կարծեմ, ըրածիս մեջ անվայել բան մը չկար։

— Բնավ երբեք, ո՞վ ըսավ թե անվայել բան է ըրածդ, գացեր երկանդ ամսականը ապահովեր ես... հիմա դուն ե՞րբ ճամփա ելլելու միտք ունիս, ինծի ան ըսե։

— Եթե հրաման տաս, Ղուկաս էֆենտի,— պատասխանեց Երանիկ ձայնը անուշցնելով,— ես կուզեմ, որ քույրս հոս չեկած մեկնիմ, լավագույնը այս կըլլա, թե ինծի և թե քեզի համար, կխնդրեմ այս մասին մի հակառակիր ինծի, մտածե, որ աղջիկ զավակ մը ունիմ, որուն անունը պետք չէ արատավորվի օր մը իր մոր պատճառով... քո աղջիկներուդ սիրույն թող տուր, ես երթամ։

Խեղճ կինը սկսավ արտասվել։ Իրավցնե խղճի խայթ մը, ամոթ մը կզգար իր վիճակեն և կուզեր որ ժամ առաջ վերջ տար իր վարած կյանքին և ճիշտ ասոր համար, առջի օր Քերովբե էֆենտիի գրասենյակին մեջ, հանձն առած էր վերջին զոհողություն մը ընել, անձնատուր ըլլալով անոր քմահաճույքին։ Հիմա սոսկումով կմտածեր, որ գուցե այդ մարդն ալ, հակառակ իր խոսքերուն, չարաչար խաբած էր զինքը կարգ մը խոստումներով։

— Ձգեցեք, որ երթամ, ձգեցեք որ երթամ,— կհեկեկար, ձեռքերը՝ աղաչավոր՝ դեպի Ղուկաս էֆենտին ուղղելով։

Վաճառականը, որչափ ալ քարասիրտ, չկրցավ երկար ատեն անտարբեր մնալ իր առջև պարզվող տեսարանին։

— Շատ աղեկ, Երանիկ, թող ուզածիդ պես ըլլա, վաղվընե պատրաստություններդ տես, և ուզած օրդ ալ ճամփա ելիր, միայն թե հանդարտե ու պարապ տեղը ինքզինքդ այդպես մի հուզեր։

— Իրա՞վ կըսես, այլ երթալուս չպիտի հակառակի՞ս,— գոչեց կինը։

— Ինչո՞ւ հակառակիմ, միթե սերը բռնի կրնա՞ ըլլալ, քանի որ էրկանդ քով երթալ կուզես կոր, թող կամքդ ըլլա, նույնիսկ Հիսուսանամ ճամփու ծախքդ ալ վճարել...

— Շնորհակալ եմ, Ղուկաս էֆենտի,— ըսավ Երանիկ երախտագետ ձայնով մը։

Հետևյալ առտու, Երանիկ կրկին խոսք բացավ իր մեկնումին մասին և ուրախությամբ տեսավ, որ քեռայրը նույն տրամադրության մեջ էր միշտ, այսինքն ոևէ առարկություն չէր ըներ իր Սամսոն երթալուն ընդհակառակը զայն քաջալերեր կթվեր։

— Կերևա, որ քրոջս մոտ օրեն գալու պատճառավ, ինքն համոզված է, որ իմ երթալս անհրաժեշտ է,— մտածեց ինքնիրեն։

Եվ ուրախ եղավ, որ խնդիրը այս կերպով իր փափաքածին պես կլուծվեր։

— Ուրեմն այսպես,— ըսավ Ղուկաս էֆենտի, տունեն մեկնելու միջոցին,— քանի որ որոշած ես և կուզես, որ Սամսոն՝ էրկանդ քով երթաս, շատ աղեկ, պատրաստություններդ տես, որ քեզ ճամփա դնենք։

Ու այս բարի տրամադրությամբ ճամփա ելավ։

ԳԼՈՒԽ ԺԵ

Երկու օր վերջը Ղուկաս էֆ. իր կնոջմեն, տիկին Թագուհիե նամակ մը ստացավ։

«Գալ երկուշաբթի ճամփա կելլամ արևելյան ճեպընթացով, Գոլիս վերադառնալու համար, ուր կհասնիմ երկուշաբթի առտու,— կծանուցաներ կինը նամակին մեջ,— կհուսամ, որ մինչև կայարան կուգաս զիս դիմավորելու»։

Հետո, տիկին Թագուհի տեղեկություններ կուտար իր աղջկան ու փեսին վրա, որոնք միշտ իրարմով երջանիկ էին և միևնույն ատեն կծանուցաներ, որ աղջկան տղաքերքը խիստ հաջող կերպով

տեղի ունեցած էր և մանչ զավակ մը ծնած էր և թե այս առթիվ տիկին Անթառամ բոլորովին հաշտված էր իր զավկին ու հարսին հետ։

Բոլոր այս տեղեկությունները ուրախացուցին վաճառականը, միայն իր կնոջ հանկարծակի գալուստը դինքը շփոթեցուց։ Ինք այնպես կհնթադրեր, որ տակավին ամիսի մը չափ պիտի հապաղեր գալը և ըստ այնըմ իր կարգադրությունները ըրած էր։

— Այսօր հինգշաբթի,— մտածեց ինքնիրեն,— հետևաբար գալ այսօրս հոս պիտի ըլլա, այսինքն ութը օրեն... ասիկա բնավ գործիս չի գար...

Եվ վաճառականը մտատանջ՝ սկսավ սենյակին մեջ երթևեկել։ Հետո որոշում մը տվավ.

— Երթամ մեյ մը Քերովբե էֆենտին տեսնեմ, կարելի է ան խելք մը կսորվեցնե։

Ղուկաս էֆենտի որքան որ իր քենիին համամտություն ցույց տված էր, քաջալերելով զայն Սամսոն երթալու խորհուրդին համար, այսուհանդերձ ներքնապես որոշած էր այդ ճամփորդությունը արգիլել և Երանիկը միշտ իրեն մոտ պահել, իբրև հաճույքի պատրաստ առարկա մը։ Եվ ասոր համար հույսը դրած էր, ինչպես արդեն տեսանք, Քերովբե էֆենտիի վրա։

Իրիկունը, երբ իր բարեկամին քովը գնաց, այս վերջինը կպատրաստվեր մեկնելու գրասենյակեն։

— Աղեկ որ եկար,— ըսավ, վաճառականը տեսնելով,— նոր բաներ ունիմ քեզի ըսելիք Երանիկի մասին։

— Ես ալ նույնպես,— պատասխանեց Ղուկաս էֆենտի։

— Ուրեմն երթանք տեղ մը նստինք ու հանդարտորեն խոսակցինք։

Եվ ուղղվեցան Ղալաթիա, ծանոթ գարեջրատուն մը։

— Այսօր կրկին տիկին Երանիկի այցելությունը ընդունելու պատիվը ունեցա,— ըսավ Քերովբե էֆենտի գոհ ու զվարթ դեմքով մը։

— Վայ,— գոչեց վաճառականը.— էյ, ինչպես նորեն առաջվան այցելության չափ հաջողություն ունեցա՞ր...

— Կարծեմ թե,— պատասխանեց հաղթականորեն Քերովբե էֆենտի,— միայն թե այս անգամ քիչ մը ավելի դժվարությամբ և մեծ զոհողություններով։

— Ի՞նչ զոհողություն։

— Նախ ստիպվեցա խոսք տալ, որ էրիկը առնվազն երկու տարի իր պաշտոնին մեջ պիտի պահեմ, հետո ամսականին վրա երկու ոսկի հավելում մը պիտի ընեմ... ի՞նչ կըսես ասոր։

— Եվ դուն ալ խոստացա՞ր...

— Կարելի՞ է մերժել... քանի որ առանց այս խոստումներուն չպիտի կրնայի իրեն մոտենալ,— շարունակեց Քերովբե էֆենտի խնդալով։

Հետո գարեջուրի գավաթը պարպելով, խոսքը առաջ տարավ։

— Այս ամենը աղեկ, միայն թե թոշունը ձեռքերնուս կփախչի կոր... լուր չունի՞ս ասկե... գալ շաբթու ճամփա կելլա կոր Սամսոն երթալու համար, արդեն իսկ պատրաստությունները տեսնելու սկսեր է։

— Ճիշտ ես ալ ատոր համար ուզեցի քեզ տեսնել, պետք է որ մինչև քանի մը օր ինչ որ պիտի ընենք՝ ընենք լմնցնենք, որովհետև ես ալ այսօր Փարիզեն նամակ մը առի, մերինը գալ շաբթու հոս պիտի ըլլա և անոր հասնելեն ետքը շատ դժվար է ազատորեն գործ տեսնիլը։

— Լավ, ի՞նչ է քու դիտավորությունդ, ծրագիր մը պատրաստա՞ծ ես։

— Նախ և առաջ ամենեն գլխավոր բանն է Երանիկը վաղ անցնել Սամսոն երթալու խորհուրդեն...

— Բայց ինչպես ըսի, ընդհակառակը, անիկա պատրաստություն տեսնելու վրա է։

— Այո, որովհետև քենե խոստում առած է իր էրկանը մասին և անոր ապավինելով է, որ ճամփա ելլելու կպատրաստվի։ Այն օրը, ուր համոզվի, թե զինքը կխաբես կոր և թե էրկանը գործը քենե կախված չէ, ապահովաբար Սամսոն երթալու խորհուրդեն պիտի հրաժարի։

— Ատ այդպես է։

— Լավ, ուրեմն, իրեն պետք է հասկցնես, թե քու բոլոր խոստումներդ ոևէ կարևորություն չունին և թե ինք Սամսոն երթալուն պես ամուսինն ալ գործեն պիտի դադրի։

— Բայց այնքան խոստումներե ետքը, ի՞նչպես կրնամ ըսել, թե զինքը խաբած եմ և բոլոր ըսածներս սուտ էին... շիտակը շատ հաստ կաշի մը ունենալու է ասոր համար։

— Եթե բերանացի չես կրնար ըսել, գոնե նամակով մը կարելի է իրեն իմացնել... ամեն պարագայի մեջ ասիկա անհրաժեշտ է։

Քերովբե էֆենտի նույնիսկ չուզեց հանձն առնել այդպիսի նամակ մը գրելու, իրեն պզտիկություն համարելով, սակայն վաճառականը կրցավ զգացնել իր բարեկամին, թե պարտավոր էր հպատակելու իր ըսածներուն և ի վերջո խեղճ մարդուկը ստիպվեցավ տեղի տալ։

— Այդ գրելիք նամակդ մինչև շաբաթ Երանիկի ձեռքը հասցնելու ես...

— Վաղը կգրեմ ու մեկու մը հետ կղրկեմ։

— Դուն վաղը մեր գրասենյակը հանդիպե, հոն միասին կորոշենք գրելիքդ, հետո ես մեկու մը հետ ձեռքը կհասցնեմ,— պատասխանեց Ղուկաս էֆենտի, որ կուզեր գործը ապահով կերպով տեսնել...

Երկու բարեկամները համաձայնեցան և որոշեցին, որ նամակին հառաջ բերելիք ազդեցությունը մեղմելու համար, Քերովբե էֆենտի կերպով մը հայտներ Երանիկի, որ ինք հանձն պիտի առնե իր ապրուստը հոգալ Պոլսո մեջ, եթե վերջնականապես հրաժարեր Սամսոն երթալու խորհուրդեն։

Այս տեսակցությենեն երկու օր ետքը, շաբաթ ցերեկին, երբ Երանիկ իր Սարը Ցարի տան մեջ ճամփու պատրաստություններով զբաղած էր, սպասուհին իրեն հանձնեց նամակ մը, զոր նավամատույցի կոշիկ ներկողներեն մին բերած էր։

Երանիկ անփույթ կերպով մը առավ նամակը, պահարանը պատռեց և նախ ակնարկ մը նետեց ստորագրության վրա։

— Քերովբե էֆենտիեն է, արդյոք ի՞նչ գրած է,— ըսավ ինքնիրեն և սկսավ կարդալ։

Ահավասիկ նամակին պարունակությունը.

«Ազնվափայլ տիկին Երանիկ Ամասյան.

«Ապագա անհաճո անակնկալներու առաջքը առնելու համար, պետք կզգամ այս նամակովս միանդամ ընդմիշտ հայտարարել, թե ձեր ամուսնույն պաշտոնին մեջ հաստատ մնալուն և ամսականի հավելման մասին տված խոստումներս երբեք չպիտի կրնամ կատարել, որովհետև ձեր ամուսինը ոևէ օգտակարություն չունի իր գործին մեջ և եթե Սամսոն ղրկված է մեր կողմե, պարզապես ձեզ ծանոթ անձին ստիպումներուն վրա է. բաց աստի, արդեն նույն անձն է, որ կվճարե ձեր ամուսնույն ամսականին մեծ մասը, իսկ ես միմիայն երեք ոսկի կուտամ մեր սնտուկեն։

«Այս ճշմարտությունը արդեն դուք իմացած էիք և զայն ստու-

գելու համար ինծի ալ դիմում ըրած։ Շիտակը հանցավոր կըզգամ ինքզինքս ձեր առաջին այցելության միջոցին՝ ճշմարտությունը ձեզ ծածկելու և ձեզ խաբեական հույսեր տալուս համար։ Եթե այս մտսին արդարացում մը ունիմ՝ այն ալ ձեր վրա ունեցած սերս ու համակրանքս է և այդ օրն ալ պարզապես ձեր հրապույրեն չզրկվելու համար էր, որ այդպես շարաշար ստեցի...

«Եվ ճիշտ այսօր ալ այդ հրապույրեն չզրկվելու համար կուզամ այս անկեղծ հայտարարությունները ընելու և միանգամայն հորդորելու ձեզ, որ հրաժարիք Սամսոն երթալու խորհուրդեն։ Քանի որ խիստ հավանորեն հոն հասնելուդ պես կամ նույնիսկ անկեղծ ձեր ամուսինը իր գործեն պիտի դադրեցուցվի։ Ուրեմն փոխանակ դուք ձեր ձեռքով ձեր հանգիստը խռովելու, լավագույն բան մը ըրած կըլլաք հոս մնալով՝ ուր կրնաք վստահ ըլլալ, որ ձեր կյանքը հաճելի դարձնելու համար ամեն զոհողություն ընելու պատրաստ բարեկամներ չպիտի պակսին։ Ասով ձեր ամուսինն ալ հանգիստ իր գործը կրնա շարունակել։

«Ահա ինչ որ կփափաքեի բերանացի կերպով ըսել ձեզի. սակայն չհամարձակեցա, քանի որ ձեզ շարաշար խաբած ըլլալու խղճահարությենեն կտառապեի։ Կհուսամ, որ այս տողերը կարդալե ետքը, ներողամիտ պիտի ըլլաք իմ մասիս և ձեր շնորհներեն չպիտի զրկիք զիս»։

Երանիկ կատաղի ատելությամբ մը կարդաց այս նամակը. հետո բարկությամբ պատառ-պատառ ըրավ զայն ու հուսահատ ինկավ թիկնաթոռին վրա։

Այսպես, ուրեմն, իր ամբողջ երազն էր, որ կքայքայվեր, կրկին կիյնար իբրև ստրուկ հարճ մը իր հալածիչներուն ձեռքը, ճիշտ այն միջոցին, ուր փրկված ըլլալ կկարծեր։ Ու մանավանդ կկատղեր, խորհելով որ անձնատուր եղած էր Քերովբե էֆենտիի՝ պարզապես անոր խոստումներեն խաբվելով։

Հանկարծ ոտքի ելավ.

— Ինչ որ ալ ըլլա, պիտի երթամ,— ըսավ վճռաբար ինքնիրեն,— ալ չեմ կրնար, վայրկյան մը իսկ հանդուրժել այս կյանքին. աղջիկս կառնեմ կերթամ, ինչ կուզե թող ան ըլլա։

Եվ այս որոշումով քիչ մը հանդարտած՝ սկսավ կրկին ճամփու պատրաստություններ տեսնել։

— Բավական մանր մունր գոհարեղեններ ունիմ, անոնք կծախեմ,— կխորհեր,— ավելորդ կարասիներս ալ կծախեմ և այդ գումարով թե կրնամ ճամփորդել և թե քանի մը ամիս ապրվիլ, եթե երբեք ամուսինս գործեն հանեն... այդ քանի մը ամսվան մեջ աստված ողորմած է, եթե պետք ըլլա՝ ես ալ կաշխատիմ, վերջապես ամեն բան աչքս կառնեմ, բայց ոչ երբեք հոս մնալ ու այս ազտոտ կյանքը շարունակել...

Մինչև իրիկուն այս մտածումով անցուց։

— Երկուշաբթի առտու կերթամ գոհարեղեններս կծախեմ, շոգենավին տոմսակն ալ կառնեմ, կլմնցնեմ,— որոշեց։

Իրիկունը, ուշ ատեն, Ղուկաս էֆենտի եկավ, ժպտուն ու հաղթական դեմքով մը, ջանալով նամակին ազդեցությունը կարդալ Երանիկի դեմքին վրա, բայց այս վերջինը բոլորովին գտած էր իր պաղարյունությունը և ուզեց իր քեռայրեն ծածկել ստացած նամակը և իր տված որոշումները։

— Այս իրիկուն տխուր կերևաս կոր,— ըսավ վաճառականը։

— Ոչ տխուր, ոչ ալ ուրախ՝ այլ սովորականին պես եմ,— պատասխանեց քենին։

— Ես ընդհակառակը ուրախ եմ և շատ ուրախ։

— Դեմքեդ կերևա կոր...

— Պատճառը չե՞ս հարցներ։

— Ի՞նչ է տեսնենք պատճառը,— ըսավ բռնի ժպիտով մը։

— Էֆենտիմ, աղվոր-աղվոր լուրեր առի. նախ՝ մեծ հայր եղեր եմ, աղջիկս մանչ զավակ մը բերեր է։

— Օ, ուրեմն աչքդ լույս։

— Ասկե զատ, քույրդ ալ հինգշաբթի օր կուգա կոր։

— Ուրեմն դարձյալ աչքդ լույս։

— Այսպես, քանի մը օրեն ամուրիի կյանքս վերջ պիտի գըտնե,— ըսավ վաճառականը, որ այս վերջին բառերը քիչ մը մելամաղձությամբ արտասանեց։

— Շիտակը այդ տված լուրերեդ ես ալ շատ ուրախացա... Ոզիկը ի՞նչպես է եղեր, դյուրա՞վ բերեր է զավակը։

— Այո, շատ հանգիստ կերպով։

— Ալ հինգշաբթի իրիկուն անշուշտ մեզի կուգաս՝ քույրդ տեսնելու համար։

— Տեսնենք, եթե մինչև այն ատեն հոս ըլլամ,— պատասխանեց Երանիկ, անտարբեր ձայնով մը։

— Իրավ, մոռցա, որ Սամսոն կերթաս կոր... կարծեցի թե արդեն վազ անցար այդ խորհուրդեդ։

— Սամսոն պիտի երթամ թե ուրիշ տեղ, չեմ գիտեր, միայն թե սա գիտեմ, որ ասկե պիտի երթամ։

— Կերևա, որ Քերովբե էֆենտիին հետ գործը սաղի կապած ես... աստված տա։

Երանիկ այս հեգնական խոսքերուն վրա իր պաղարյունությունը, որ արդեն մեծ ճիգով մը կպահեր Ղուկաս էֆենտիի գալեն ի վեր՝ կորսնցուց և ոտքի ելլելով գոչեց.

— Դուն ալ, Քերովբե էֆենտին ալ գետնին տակը անցնիք, որ զիս այս վիճակին հասցուցիք... բայց մի կարծեք, որ ձեր ձեռքին մեջ եմ, գիտեմ որ էրիկիս ամսականը տվողը դուն ես, գիտեմ որ հոն երթալուս պես զինքը գործեն պիտի հանեք, գիտեմ, որ ամեն գեշություն ընելու կարող եք, զիս բոզ մը դարձնելու և ձեր հաճույքին ծառայեցնելու համար, բայց ես ալ կըսեմ, որ ձեր մուրատին չպիտի կրնաք հասնիլ և ցույց տալու համար, որ ալ ասկե ետքը քենե կախում չունիմ, կհրամայեմ, որ անմիջապես տունես դուրս կորսվիս...

Ղուկաս էֆենտի զարմացած ու շփոթված, լսեց այս խոսքերու տարափը. ինք բոլորովին տարբեր արդյունք մը կըսպասեր այն նամակեն, զոր իր բարեկամին հետ համախորհուրդ՝ պատրաստած ու գրած էին։ Ու հիմա Երանիկի այս պոռթկումին հանդեպ ափ ի բերան մնաց։

Պահ մը լռություն տիրեց սենյակին մեջ։ Վաճառականը իր հուզումը ծածկելու և հանդարտությունը գտնելու համար սիկարեթի տուփը հանեց և հատ մը վառեց, մինչ Երանիկ վեր վար կպտտեր տենդոտ քալվածքով մը։ Տեսնելով, որ իր քեռայրը լուռ կմնա և մեկնելու ոևէ շարժում չըներ, եկավ կեցավ անոր դեմը և թևը կուրծքին վրա ծալլած, պոռաց.

— Չլսեցի՞ր ըսածս, դուրս ելիր տունես, հիմա անմիջապես, եթե ոչ բոնի դուրս հանել կուտամ։

Վաճառականը փորձեց մեղմել կնոջ բարկությունը։

— Խենթացա՞ր, ինչ եղար, Երանիկ,— ըսավ անոր ցած ձայնով,— ինչո՞ւ այսպես կպոռաս, ձայնդ փողոցեն կլսվի... իմացողը ի՞նչ կըսե. հանդարտե տեսնենք, ի՞նչ է եղածը։

— Հիմա դուրս պիտի ելլես,— կգոչեր կինը, ոտքերը գետին զարնելով։

Սպասուհին դուրսեն աղմուկը լսելով, դուռը բացավ և սեմին վրա երևցավ։

Ղուկաս էֆենտի, որ այդ տեսակ գործերու մեջ օտար ու նեղացուցիչ վկաներե կխուսափեր, իսկույն ոտքի ելավ և սպասուհիին կամաց մը հրամայեց, որ հեռանա, հետո սենյակին դուռը գոցեց և մոտեցավ Երանիկի։

— Ինծի նայե,— ըսավ ձայնը մեղմացնելով,— այս ատեն ո՞ւր կուզես որ երթամ. եթե շոգենավ ըլլար՝ Բերա կվերադառնայի. բայց վերջին շոգենավը արդեն գնաց, ձգե այս գիշեր ալ հոս մնամ ու վաղը առտուն կանուխ կելլամ կերթամ։

Բայց մյուսը տրամադիր չէր։

— Չէ, հիմա պիտի երթաս,— կպոռար,— եթե շոգենավ չի կա, կրնաս Պեոյուք Տերե պանդոկ մը երթալ և գիշերը հոն անցնել. ինչ որ ալ ըլլա, չեմ ուզեր, որ վայրկյան մը հոս մնաս...

Վաճառականը տեսավ, որ անկարելի էր խոսք հասկցնել և եթե ավելի երկար ատեն ընդդիմանար, գուցե գայթակղության մը տեղի տված ըլլար, որովհետև քենին հայտնապես գրգռված էր, ուստի խոհեմություն համարեց տեղի տալ։

— Լավ, լավ, հանդարտե, ահա կերթամ կոր, միայն թե վըստահ եղիր, որ եթե պաղարյունով մտածես ըրածիդ վրա, դուն ալ պիտի հասկնաս, որ շատ անվայել ու խենթ գործ մըն է ասանկ գիշերով զիս դուրս վռնտելը և գուցե պիտի զղջաս։

— Դուրս ելիր,— գոչեց Երանիկ, իբրև պատասխան այս խոսքերուն։

Ղուկաս էֆենտի, «օխ» մը արձակեց, հուսահատաբար գլուխը օրորեց, ֆեսը դրավ և դուրս ելավ։

Երանիկ անոր տան դուռը գոցելը և դուրս ելլելը լսելով, հառաչ մը արձակեց և բազմոցին վրա իյնալով՝ սկսավ հեծկլտալ։

Իսկ վաճառականը գլխիկոր ճամփան շարունակելով, մինչև նավամատույց եկավ. հոնկե նավակ մը նստեցավ և Պեոյուք Տերե ուղղվեցավ։

— Տարօրինակ բան,— կմտածեր ինքնիրեն.— ի՞նչ եղավ այս կինը մեկեն ի մեկ, շատ աղվոր կապրեր կոր հոս. Սամսոն երթալ մը մեջտեղ հանեց, կարծես թե հոն էրիկը ոսկիներու մեջ կլողա կոր... թող երթա ու պոյը կտեսնա։

Եվ այս միտքն ի վար սպառնալիքով վաճառականը իր սիրտը զովացուց։

Պեոյուք Տերե հասնելով, գնաց նավամատույցի սրճարանը, ուր միս մինակ քանի մը գավաթ օղի խմեց, հետո գնաց կերակուր

ուտելու և վերջապես պանդոկի մը մեջ գիշերը առանձին անցնելե ետքը, հետևյալ առտու դուրս ելավ, Պոլիս դառնալու մտադրությամբ։

Սակայն շոգենավի սպասելու համար ուղղվեցավ սրճարանը, ուր տաճկական նվագ մը կար և բազմությունը հոն խռնված էր։

Հոն նստած սուրճ կխմեր, երբ ծանոթ մը մոտեցավ իրեն.

— Վայ, Ղուկաս էֆենտի, կիրակի առտվնով ի՞նչ բան ունիս հոս առանձին,— ըսավ իրեն մոտենալով։

— Երեկ մեկը տեսնելու համար հոս եկած էի, շոգենավը փախցնելով ստիպվեցա հոս մնալ գիշերը,— պատասխանեց վաճառականը,— բայց հիմա նորեն վար պիտի իջնեմ։

— Ասանկ գեղեցիկ օդով ու կիրակի օրով ի՞նչ պիտի ընես վար իջնես, ի՞նչ կա Պոլիս։ Նստե գոնե մինչև ցերեկ, միասին ժամանակ անցնենք։

Ղուկաս էֆենտի, որ իրավամբ հմայված էր օդին գեղեցկությենեն և ոևէ գործ մըն ալ չուներ վար իջնելու համար, ընդունեց իր բարեկամին հրավերը և որոշեց ցերեկեն ետքը, իրիկվան դեմ վերադառնալ տուն։

Երկու բարեկամները բավական նստելե ետքը ծովեզերյա սրճարանը, Ղուկաս էֆենտի ըսավ.

— Սանկ շնորհքով տեղ մը կա՞ այս կողմերը, ուր կարենանք մեզելենմիշ ըլլալով քանի մը օղի խմել։

— Ինչպե՞ս չի կա, ուզածիդ չափ,— պատասխանեց մյուսը,— ուզածդ այդ ըլլա։

— Ուրեմն քալե հոն երթանք։

Բարեկամը Ղուկաս էֆենտի առաջնորդեց ծովեզերյա ու ծառազարդ գեղեցիկ զբոսավայր մը, ուր տաճկական նվագ մըն ալ կար։

Հոն երկու բարեկամները մինչև կեսօր մնացին ու բավական օղի խմեցին, հետո կրկին միասին վերադարձան ճաշարան մը։

Ճաշեն հետո բարեկամը կարևոր գործ մը պատրվակ բռնելով մեկնեցավ, մինչ Ղուկաս էֆենտին ալ մտադրություն կհայտներ Պոլիս վերադառնալու։

Սակայն երբ առանձին մնաց, հանկարծ միտքը փոխեց. օդիեն ու գինիեն բավական զվարթացեր էր, գրեթե թեթևապես գինովնալով ու հիմա հանկարծ միտքը ինկած էր Երանիկը և անդիմադրելի փափաք մը կրզգար երթալ զայն տեսնելու։ Հիշեց նախորդ իրիկվան դեպքը, իր քենիին համառ բարկությունը և զինքը գրեթե բռնի

տուներեն դուրս նետելը, բայց բոլոր այդ վերհիշումները փոխանակ իր բարկությունն ու ատելությունը գրգռելու, ընդհակառակը ավելի բորբոքեցին իր ցանկությունը։ Հետո ինքնիրեն խորհեցավ.— Երեկ իրիկվընե ի վեր անշուշտ բարկությունը անցած ու հանդարտած է և գուցե ըրածեն ալ զղջացած, ուստի հիմա կելլեմ իրեն կերթամ և միասին կառք մը նստելով Հյունքյար Սույի աղվոր քեյֆ մը կընենք։

Եվ այս հաճելի հեռապատկերեն շլացած վաճառականը իր հաշիվը մաքրեց, նավակ մը նստավ և դեպի Սարը Յար ճամփա ելավ։

Եվ սակայն անակնկալ մը կսպասեր իրեն։

Տիկին Երանիկ ու իր աղջիկը առտուն կանուխ Պոլիս իջած էին և մեկնած պահուն տիկինը լուր տված էր սպասուհիին, որ իրիկունը չպիտի վերադառնար։

Վաճառականը ասիկա իմանալով՝ սաստիկ բարկություն մը զգաց, այնքան վստահորեն եկած էր իր քենիին զղջումին հանդիսատես ըլլալու և անոր հետ անգամ մըն ալ իր հրայրքը հագեցնելու։

— Ո՞ւր գացած կրնա ըլլալ, այսպես, կիրակի օրով,— խորհեցավ ինքնիրեն, սակայն չկրցավ բացատրություն մը գտնել։ Պահ մը գնդրեցավ փողոցը, իր ընելիքը շվարած մարդու մը պես, հետո նավամատույցին մոտ նշմարելով որ շոգենավը ճամփա ելլելու վրա էր, անմիջապես տոմսակ մը առավ և ներս մտավ։

Վաճառականը ամբողջ մեկ ու կես ժամ շոգենավին մեջ, իր քենիին այս հանկարծական մեկնումին վրա ենթադրություններ ընելով անցուց, առանց կարենալ որոշ բացատրություն մը գտնելու։

Կամուրջ հասնելուն՝ կառք մը մտավ և ուղղակի տուն գնաց։

Տարտամ նախազգացում մը ուներ։

— Կարելի է մեզի եկած է, ինե ներում խնդրելու համար,— կմտածեր։

Սակայն ոչ ոք եկած էր տուն։ Ղուկաս էֆենտի սրտնեղած դուրս ելավ, ծանոթի մը հանդիպելու և ժամանակ անցունելու հույսով։ Շիտակ ճամփան հանդիպեցավ Քերովբե էֆենտիի։

— Վայ, աղեկ որ իրարու հանդիպեցանք,— գոչեց այս վերջինը իր բարեկամը նշմարելով,— ես ալ առանձին կնեղանայի կոր, երեկ իրիկուն գյուղ ելար և ըսիր, որ երկուշաբթի առտու վար պիտի իջնես։

— Խորհուրդ մարդկան՝ կամք Երանիկ հանըմի,— պատասխանեց վաճառականը, որ իր զվարթությունը գտած էր խորհրդակից մտերիմը տեսնելով։

— Ի՞նչ. նոր բան կա՞...

— Այո, շատ նոր բաներ։

— Նամակը առե՞ր է, ի՞նչ ազդեցություն ըրեր է... ինծի դեմ կատղած ըլլալու է խեղճ կինը։

— Մեր հուսացածեն բոլորովին տարբեր ազդեցություն ըրավ նամակը, իցիվ թե գրած չըլլայինք, գործը բոլորովին խանգարեցինք։

— Ի՞նչ կըսես, Ղուկաս էֆենտի, զիս դող կհանես կոր։

— Այդ նամակին համար, երեկ իրիկուն զիս պարզապես տունեն դուրս նետեց և գիշերը ստիպվեցա Պեոյուք Տերե օթել մը անցնելու։

Քերովբե էֆենտի զարմացած ակնարկ մը ուղղեց իր բարեկամին, ակնարկ մը, որ միանգամայն տարակույս կհայտներ։

— Բացե ի բաց եղածը կըսեմ,— շարունակեց վաճառականը,— բայց ամենը այդ չէ։ Ինչ որ է, երեկ գիշեր պանդոկը անցուցի, առտուն ելա, բարեկամի մը հետ բավական խմելե ու ճաշելե ետք, ենթադրելով, որ մեր Երանիկին բարկությունը անցած ըլլալու է, նավակ մը նստա և Սարը Յար գացի... ի՞նչ տեսնամ աղեկ, Երանիկը այս առտու, աղջիկը առեր, Պոլիս իջեր է և ըսեր է, որ իրիկունն ալ չպիտի գա... ի՞նչ կըսես ասոր։

— Զարմանալի բան,— բացականչեց Քերովբե էֆենտի, որ իրապես անմեկնելի կգտներ այդ անակնկալ անհայտացումը։

Հետո քիչ մը ետքը, հարցուց իր բարեկամին։

— Հիմա ի՞նչ պիտի ընես, չպիտի՞ փնտռես զինքը։

— Առայժմ պետք է սպասել,— պատասխանեց վաճառականը,— վաղը իրիկունը կրկին Սարը Յար պիտի երթամ և եթե դարձյալ տունը չգտնեմ զինքը, այն ատեն կխորհինք թե ինչ ընելու ենք... ամեն պարագայի կարծեմ այդ նամակը գրելու չէինք։

Իր ըսածին համեմատ, Ղուկաս էֆենտի, հետևյալ իրիկուն կրկին Սարը Յար իր քենիին տունը գնաց, բայց դարձյալ ոչ ոք կար հոն, սպասուհիեն զատ։

— Հանըմըս մեջտեղ չելավ,— բացատրեց այս վերջինը,— թեև ըսած էր, որ այսօր պիտի վերադառնար։

Ի զուր վաճառականը երկարորեն ուզեց հարցուփորձել սպասուհին, որ ճշմարտապես բան մը չէր գիտեր, որովհետև Երանիկ հարկ չէր տեսած անոր բացատրություններ տալու իր բացակայությանը մասին։

Գիշերը հոն մնաց Ղուկաս էֆենտի և գրեթե մինչև առավոտ չկրցավ աչքերը փակել։ Այս հանկարծական անհայտացումը ոևէ կերպով չէր կրնար մեկնել և տարտամորեն կնախազգար թե աղետավոր փորձանք մը կպատրաստվեր իր գլխուն։

— Բարով խերով սա նամակը գրած չըլլայինք,— կկրկներ ինքնիրեն,— Երանիկի այս ընթացքը նամակին արդյունքն է... Բայց ո՞ւր գացած կրնա ըլլալ...

Մինչ վաճառականը այսպես երկու օրե ի վեր իր քենիին անակընկալ բացակայությամբը կմտատանջեր, Երանիկ իր աղջկան հետ գացած էր Կետիք Փաշա իրեն ու իր ամուսնույն ծանոթ ընտանիքի մը տունը, ուր մտադիր էր մնալ մինչև Սամսոն երթալիք օրը։

Ինք գուշակած էր, որ վաճառականը անպատճառ պիտի վերադառնար իր քով ու կրկին պիտի ջանար հաշտություն գոյացնել ու հարաբերությունը վերահաստատել և մանավանդ զինքը՝ ետ կեցնել ամուսնույն քով երթալու որոշումեն։ Եվ այս բանը կսոսկացներ խեղճ կինը և իր արիությունը չկորսնցնելու համար, այսպես երեսը կծածկեր։ Իր քեռայրին ու Քերովբե էֆենտիի իր մասին ցույց տված վարմունքը զինք բոլորովին կատղեցուցած էր և վճռաբար որոշած էր այլևս իր միտքը դրածեն չշեղիլ ոևէ ազդեցության տակ։

Իր ապրած մեկ քանի ամսվան կյանքը այժմ այնքան զզվելի ու ամոթալի կթվեր իրեն, որ կուզեր անոր հիշատակը իսպառ վանել միտքեն։ Հիմա ամբողջ մտածումն ու գուրգուրանքը կենդրոնացուցած էր իր աղջկան՝ Մաննիկի վրա, որուն համար մանավանդ պետք զգացած էր միանգամ ընդմիշտ վերջ մը դնելու իր անկարգ կյանքին և կրկին ամուսնական հարկին տակ մտնելու, նույնիսկ ամենածանր նյութական զրկանքներ աչք առնելով։

Այն ընտանիքը, որուն տունը ապաստանած էր Երանիկ, հինավուրց բարեկամ ընտանիք մըն էր, որ ամեն կերպով պատրաստակամություն հայտնեց զինքն ու աղջիկը հյուրընկալելու և պետք եղած ձեռնտվությունը ընելու։ Տանտերը, Աբրահամ աղա, շուկան ոսկերիչ էր և բավական կարողության տեր. տիկին Երանիկ անոր հանձնեց իր ունեցած բոլոր մանր մունր գոհարեղենները զորս հետը առած էր և որոնց մեկ քանին Ղուկաս էֆենտին նվիրած էր

և խնդրեց, որ անմիջապես վաճառե զանոնք, առանց զինին մտորին դժվարություններ հարուցանելու։

— Հինգ ոսկի վեր, հինգ վար, այսօր անպատճառ ամենքն ալ ծախե ու իրիկունը դրամները բեր,— ըսավ Աբրահամ աղայի, երկուշաբթի առտու բոլորն ալ անոր հանձնելով։

Ոսկերիչը խոստացավ տիկնոջ խնդիրը կատարելու և իրավ ալ նույն իրիկունը վերադարձավ հետը բերելով 42 ոսկի ու զանոնք հանձնեց Երանիկի՝ ըսելով.

— Եթե այսպես շաբաթներեր ու քանի մը օր միջոց տայիր ինծի, գուցե այդ գոհարեղենները 50 ոսկի ալ բանել կուտայի, այսուհանդերձ նորեն շատ չխաբվեցար։

Երանիկ ուրախությամբ ոսկիները գրպանեց և շնորհակալություն հայտնեց։

Հիմա կմնա տան կարապիները ծախելու գործը, խորհեցավ։ Բայց ասիկա ավելի դժվար էր, մանավանդ որ հարկ էր Սարը Յար երթալ և գոնե մեկ քանի օր հոն մնալ այդ գործը գլուխ հանելու համար և սոսկումով կխորհեր, թե հավանորեն հոն Ղուկաս էֆենտիի հետ դեմ առ դեմ գալու և միասին բացատրություն մը ունենալու պիտի ստիպվեր, ու այս բանը անհանդուժելի կթվեր իրեն։ Եվ սակայն հարկ եղավ, որ ամեն բան աչքը առնելով՝ վերադառնա Սարը Յար։

Երեքշաբթի օր, դրամները Աբրահամ աղայի քով պահ տալե ետքը, Մանանիկի հետ դարձավ գյուղ, խոստանալով գործերը մինչև հինգշաբթի լմնցնել և նույն օրը կամ ուրբաթ կրկին Վետիկ Փաշա գալ։

Սպասուհին մեծ ուրախությամբ ընդունեց զինքը։

— Հանրմրս, աս ո՞ւր մնացիր, երեկվընեն ի վեր մտմտուքի մեջ ինկանք,— գոչեց դուռը բանալով.— Ղուկաս էֆենտի երկու անգամ է կուգա, քեզ կփնտռե, երեկ իրիկուն ալ հոս մնաց և այս առտու գացած ատենը պատվիրեց, որ գալուդ պես իմացունես, որովհետև մտատանջության մեջ մնացեր է երեր։

Երանիկ պաղությամբ կտրեց սպասուհին խոսքը, հետո խոհարարուհին կանչելով հաշիվը տեսավ ու ճամփեց, ըսելով որ քանի մը օրեն պիտի մեկներ Պոլիսեն, հետևաբար պետք չուներ իրեն այլևս։

Հետևյալ առտու կանուխ ժողովեց բոլոր այն անհրաժեշտ առարկաները, որոնց պետք պիտի ունենար ինք և նավ դնել տարով

Պոլիս իջեցուց, որ նախապես եղած կարգադրության մը համեմատ Աբրահամ աղա զանոնք պիտի փոխադրեր իր տունը։ Մինչև իրիկուն այսպես տենդային գործունեության մը մեջ անցնելե ետքը, տիկին Երանիկ իր աղջկան հետ դուրս ելավ քիչ մը օդ առնելու համար։

— Ալ հիմա գործին դժվարին մասը լմնցավ,— կմտածեր զոհունակությամբ ժուռ գալով ծովեզերքը,— տան մեջ մնացած ավելորդ կարասիներն ալ վաղը կծախեմ կլմնցնեմ և, եթե հաջողիմ, հինգշաբթի օր շոգենավ կնստիմ կերթամ։

Երկու օրե ի վեր իր ըրած վճռական կարգադրությունները տեսակ մը հոգեկան թեթևություն ու զվարթություն տված էին իրեն և այլևս անցած էր մեկ քանի օր առաջվան ջղագրգիռ վիճակը։

Նավամատույցին մոտ հասնելով, փափաք զգաց ծովեզերյա զբոսարանը նստելու և գարեջուր մը խմելու։ Վերջին օրերը կզգուշանար գեղեն դուրս ելլելու և այդպիսի վայրեր նստելու առանձին, որովհետև ժամանակե ի վեր մեկ քանի անձեր իր ետևեն կհետապնդեին, կռահած ըլլալով, որ առանց ամուսնի կին մըն էր, որ տանը մեջ բարեկամներ կընդուներ ու անոնց հետ կզվարճանար։ Բայց այլևս պետք չզգաց ինքզինք ծածկելու։

— Վաղը պիտի ձգեմ երթամ, ալ ով որի,— ըսավ ինքնիրեն, մեյ մըն ալ գուցե Սարը Յարի երեսը տեսնելիք չունիմ։

Ու Մանանիկի հետ գնաց նստավ զբոսարանը։

Կամուրջեն եկող շոգենավը, երբ մոտեցավ նավամատույցին, Երանիկ սկսավ դիտել դուրս ելլողները։

Հանկարծ նշմարեց Ղուկաս էֆենտիին, որ կամաց-կամաց ու մտատանջ երևույթով կհառաջանար։

Այս երևումը ոչէ շփոթություն կամ հուզում չպատճառեց իրեն. արդեն առտուվնե խորհած էր, որ գուցե քեռայրը կրկին գար և աչքը առած էր վերջնական տեսակցություն մը ունենալու հետը, ուստի ամենայն հանդարտությամբ ըսավ աղջկանը.

— Մանանիկ, ահա Ղուկաս էֆենտին, որ շոգենավեն ելավ ու անշուշտ մեզի կերթա կոր, վազե ետևեն և ըսե, որ ես հոս նստած եմ, թող հոս գա։

Աղջիկը փութաց մորը հրամանը կատարելու։

Քիչ հետո վաճառականը ուրախ և ժպտուն երևցավ, Մանանիկի ձեռքեն բռնած։

— Վերջապես մեջտեղ ելար,— գոչեց Երանիկի քով գալով,— աս ինչ մտմտուքի մեջ ձգեցիր մեզի քանի օրե ի վեր։

— Իրար անցնելու ի՞նչ կա որ.— պատասխանեց Երանիկ թեթև ժպիտով,— մի՞թե ազատ մեկը չե՞մ, ուզած կողմս չե՞մ կրնար երթալ... արդյոք վախցար ոչ կորսվա՞ծ եմ։

— Չէ, բայց գոնե գացած տեղդ կրնայիր իմացնել։

— Պետք չտեսա։

— Ինչ որ է, հիմա մեջտեղ ելար, անկե աղեկը չի կա... վախցա, որ այս իրիկուն ալ եկած չես ըլլար ու նորեն օթելը պառկելու կստիպվիմ։

— Դժբախտաբար կարծեմ նորեն պետք պիտի ըլլա այնպես ընել։

— Ինչո՞ւ համար,-- հարցուց Ղուկաս էֆենտի զարմացած երևույթով մը։

— Որովհետև տանը մեջ միայն մեկ անկողին կա, ուր ես ու աղջիկս միասին պիտի պառկինք։

— Մյուս անկողինները ի՞նչ ըրիր։

— Անոնք այսօր բեռցուցի ու Պոլիս ղրկեցի։

Վաճառականը նախ չուզեց հավատալ։

— Կատա՞կ կընես կոր,— ըսավ խնդալով։

— Կատակի բան չի կա, ըսածս բացարձակ ճշմարտություն է, եթե չես հավատար, կրնաս տուն գալ և աչքովդ տեսնել։

— Արդեն բնականաբար տուն պիտի գամ, կերակուր ունիս հարկավ... և եթե անկողին չկա, ետքը կմտածենք, թե ինչ ընենք։

— Անշուշտ տանը մեջ ուտելիք բան մը կգտնենք, միայն թե ուրիշ անգամներու պես շենք շնորհք ճաշ մը չպիտի կրնամ ընել։

— Վա՞յ, ինչո՞ւ...

— Որովհետև խոհարարուհին այսօր ճամփեցի։

— Ի՞նչ ըրավ որ։

— Բան մըն ալ չըրավ, միայն թե այլևս պետք չունեի իրեն, քանի որ մեկ-երկու օրեն կմեկնիմ։

Ղուկաս էֆենտի զգաց, որ քենիին ըսածները կատակ չէին և թե խիստ լրջորեն կխոսեր և պզտիկ սրտնեղություն մը զգաց, սակայն ինքզինքը զսպեց ու հայտնի ընել չուզեց։

— Ինչ որ է,— ըսավ փիլիսոփայաբար,— ինչ որ գտնանք, ան կուտենք... կհուսամ, որ տաք կերակուր մը պատրաստել տված ես և սպասուհին ալ չես ճամփած խոհարարուհիին հետ։

— Չէ, սպասուհին տակավին մեկ երկու օր պիտի պահեմ։

Պահ մը լռեցին երկուքն ալ. Ղուկաս էֆենտի ծառան կանչեց և գարեջուրի նոր շիշ մը ապսպրեց։ Իր քենիին այդ պաղարյուն բացատրությունները թունավոր սլաքներու պես իր սիրտը կմխրճվեին և մտքին մեջ հազար ու մեկ հնարքներ կորոճար, կերպով մը վրեժ լուծելու համար այդ կնոջմեն, որ այսպես վճռաբար կուզեր խուսափիլ իր ձեռքեն։ Բաց աստի, օրերե ի վեր իր զսպված կիրքը գրգռված էր ու չէր կարող հաշտվիլ այդ իրիկունն ալ Երանիկեն հեռու մնալու գաղափարեն ու միտքին մեջ միջոց մը կորոճար, իր դեմ ցցված դժվարությունները հարթելու համար։

— Ի՞նչ պետք ունեիր այսօր անկողինները ղրկելու,— ըսավ սրտնեղած դեմքով մը։

— Բայց հատկապես անոր համար եկա արդեն,— պատասխանեց կինը։

— Ո՞ւր գացեր էիր քանի մը օրե ի վեր,— հարցուց Ղուկաս էֆենտի։

— Բարեկամ ընտանիքի մը տունը։

— Անուն չո՞ւնի այդ ընտանիքը։

— Քու ճանչցած ընտանիքդ չէ։

— Ըսե տեսնիմ անունը...

Երանիկ, որ միշտ երկյուղ ուներ իր քեռայրին մեքենայություններեն, չուզեց Աբրահամ աղայի անունը տալ, բայց որպեսզի կասկած չհարուցանե, անմիջապես պատասխանեց։

— Էրկանս մեկ հեռավոր ազգականները կան Ետի Գուլե... Մարկոսյան կըսվին, անոնց տունը գացի, արդեն երկար ատենե ի վեր հրավիրած էին։

Վաճառականը թեև շատ հավատք չընծայեց այս բացատրության՝ սակայն ստիպվեցավ գոհանալ անով։

Հետո, քիչ մըն ալ զբոսարանը մնալե ետքը, հանկարծ ոտքի ելավ և ըսավ.

— Ալ տուն երթանք։

— Շատ աղեկ,— պատասխանեց Երանիկ,— բայց նորեն կկրկնեմ, պառկելու տեղ չկա, գիտցած ըլլաս, եթե կուզես այս տեղվանքը պանդոկի մը մեջ սենյակ մը վարձե։

— Չէ, պետք չկա, եթե նեղը մնամ Պեոյուք Տերե կերթամ։

— Դուն գիտես։

Տուն հասնելով՝ Ղուկաս էֆենտի բոլորովին համոզվեցավ, որ

իր քեռին ճշմարիտ խոսած էր։ Սենյակները գրեթե դատարկված էին և միայն ավելորդ կարասիներ մնացած. սպասուհին՝ իր տիրուհին պատվերին համեմատ՝ միայն տեսակ մը կերակուր պատրաստեր էր։ Հարկ եղավ անով ու քիչ մը պանիրով գոհանալ։ Ճաշեն ետքը Երանիկ իր օրվան մեջ շափազանց հոգնած ըլլալը պատրվակելով, ըսավ թե ննջելու պիտի երթար և աղջիկը թևը առնելով՝ վերի սենյակը գնաց։

Ղուկաս էֆենտի հարաճուն կատաղությամբ մը կրեց այս ամենը, հետո տեսնելով որ ճար չի կար, ինքն ալ ֆեսը դրավ և ելավ կրկին Պեոյուք Տերե պանդոկ մը գնաց, բայց արդեն իր ծրագիրը շինած էր և ճամփան քանի մը անգամ ինքնիրեն կրկնեց.

— Կեցիր, քեզի վաղը կհասկցնեմ այս բոնած ընթացքդ։

Հետևյալ առտու, Պոլիս հասնելով, առաջին գործը եղավ երթալ Քերովբե էֆենտին գտնալ իր վաճառատան մեջ։

— Անմիջապես հեռագիր մը պիտի քաշես Սամսոն,— ըսավ։

— Ի՞նչ հեռագիր,— հարցուց բարեկամը զարմացած։

— Ամասյանին ուղղված հեռագիր մը, սա իմաստով. «Անմիջապես ճամփա ելիր ու Պոլիս վերադարձիր, այսօր իսկ, և ճամփա ելլելդ հեռագրով տեղեկացուր ինծի»։

— Բայց ի՞նչ կա որ...

— Բացատրություն տալու ժամանակ չունիմ, ինչ որ կըսեմ, ան ըրե ու հիմա աչքիս առջև հեռագիրը գրե։

— Շատ աղեկ, էֆենտիս, գլխուս վրա,— պատասխանեց մյուսը։

Ու նույն վայրկյանին Ղուկաս էֆենտիին հրամանը կատարեց։

— Կարելի է մինչև իրիկուն պատասխանը կուգա,— ավելցուց վաճառականը,— հեռագիրը առնելուդ պես ինծի զրկե։

— Անհոգ եղիր այդ մասին։

Ու վաճառականը գնաց իր գրասենյակը։

Իրիկունը, ուշ ատեն, Երանիկի ամուսինը հետևյալ հեռագիրը կզրկեր.

«Այսօր ճամփա կելլեմ ավստրիական շոգենավով Պոլիս գալու համար»։

Քերովբե էֆենտի, իր ընդունած հրահանգին համեմատ, հեռագիրը պահարանի մը մեջ դրավ ու զրկեց Ղուկաս էֆենտիին։

Վաճառականը, որ անհամբեր կսպասեր այս պատասխանին,

հեռագիրը գրպանը դրավ և հաղթական դեմքով մը ինքնիրեն գոչեց.

— Հիմա քեզի հետ կտեսնվինք։

Եվ գրասենյակի գործերը անուշ տեղը կապելով՝ աճապարեց կամուրջ ու նստեցավ վերին Ոսփոր գացող շոգենավին մեջ։

— Տեսնենք այս հեռագիրը կարդալով ի՞նչ պիտի ընե մեր Երանիկը,— կխորհեր։

Մինչ Ղուկաս էֆենտի առտրվնե ի վեր այս անախորժ անակնկալը կպատրաստեր իր քեռիին, այս վերջինը տենդային գործունեությամբ մը կշտանար իր ճամփու պատրաստությունները տեսնել։ Առտուն կանուխ, շնորհիվ գյուղին մեջ ունեցած մեկ քանի ծանոթներուն, հաջողած էր ավելորդ կարասիներուն վաճառման ձեռնարկել և մինչև իրիկուն անոնց մեծ մասը ծախած էր. նույնիսկ խոհանոցի անոթները և սեղանները, այնպես որ նույն իրիկուն որոշած էր երթալ ծովեզերյա պանդոկը ճաշել և ննջելու համար տուն գալ։

Կհուսար որ հետևյալ առտու մնացած քանի մը կտոր կարասիներն ալ ծախելով պիտի կրնար Աբրահամ աղայի երթալ իրիկունը, և հաջորդ օրն ալ, եթե շոգենավը հարմարեր, մեկնիլ Սամսոն։

Մեկնումի վճռական որոշումը տալեն ի վեր, Երանիկ անօրինակ կորով մը ու կամքի զորություն մը կզգար իր մեջ և իրեն այնպես կթվեր, թե աշխարհի մեջ ոչ մեկ բան կրնար այլևս զինքը կասեցնել իր դիտավորությենեն։

Այսպես ուրեմն, իրիկունը, ուշ ատեն, երբ կարասիները գընորդներու կողմե դուրս հանվեցան տունեն, Երանիկ, աղջիկը հետը առած եկավ կրկին ծովեզերյա զբոսարանը։

Ղուկաս էֆենտի շոգենավեն ելլելուն պես նշմարեց իր քեռին ու աղջիկը, որ սեղանի մը շուրջ նստած ծովը կդիտեին ու անմիջապես դեպի իրենց դիմեց...

— Ահավասիկ նորեն եկա ձեզ գտա,— ըսավ զվարթորեն Երանիկի։

Երանիկ այս այցելության չէր սպասեր, առջի օրվան իր ըրած ընդունելությենեն ետքը, այսուհանդերձ ամենայն հանդարտությամբ ընդունեց քեռայրը։

— Կերևա որ պանդոկին մեջ շատ հանգիստ անցուցիր երեկ գիշեր, քանի որ այսօր կրկին գալ ուզեր ես,— ըսավ ծաղրածու ձևով մը։

— Այս իրիկուն կրկին գալու պատճառը ուրիշ բան է,— պատասխանեց վաճառականը խորհրդավոր կերպարանքով մը։

— Ի՞նչ է տեսնենք։

— Երբ որ տուն երթանք այն ատեն կբացատրեմ։

— Եթե այդպես է, բացատրություն չպիտի կրնամ իմանալ,— պատասխանեց Երանիկ։

— Ի՞նչու։

— Որովհետև այս իրիկուն տուն երթալու միտք չունինք, կամ ավելի ճիշտը, միայն պառկելու համար հոն պիտի երթանք։

— Ի՞նչ, նոր բա՞ն կա դարձյալ,— հարցուց Ղուկաս էֆենտի զարմանեղած։

— Եղածն այն է, որ տան մնացորդ կարասիները այսօր ծախեցի. ինչպես նաև խոհանոցի անոթներն ու սեղանի սպասները, այնպես որ պարտավորված ենք ճաշերնիս այս իրիկուն դուրսը ուտելու։

— Ուրեմն այդպես, որոշումիդ վրա հաստատ մնացա՞ծ ես և Սամսոն պիտի երթա՞ս։

— Այո, հավանորեն վաղը չէ մյուս օր ճամփա կելլեմ, եթե շոգենավ ըլլա և անակնկալ մը չպատահի։

— Էրկանդ միանալո՞ւ համար։

— Բնականաբար։

— Եթե էրկանդ միանալու համար է, կարծեմ մինչև Սամսոն երթալու պետք չպիտի ունենաս,— պատասխանեց վաճառականը շար ժպիտով մը։

Երանիկ ցնցվեցավ։

Բավական ատեն լուռ մնալե հետո, Ղուկաս էֆ. վերստին սկսավ խոսիլ իր քենիին հետ, իբր թե տարհամոզելու համար զինքը։

Երանիկ, գերագրգռված վիճակ մը ուներ, ոչ մեկ պատասխան տվավ Ղուկաս էֆենտիի խոսքերուն։ Ղուկաս էֆենտի, նկատելով, որ իր խոսքերը ոևէ ազդեցություն չեն ըներ և նույնիսկ Երանիկ անտարբեր և լուռ կմնա, բարկացկոտ երևույթով մեկնեցավ սրճարանեն, ըսելով։

— Այլևս քեզի կմնա որոշումդ տալ. այս համառ ընթացքովդ շատ պիտի վնասես քեզի։

Ղուկաս էֆենտի ճաշելու համար մտավ Սարը Ցար ծովեզերյա մեկ ճաշարանը, որ միևնույն ատեն զբոսարան ալ էր։

Երանիկ Ղուկաս էֆենտիի մեկնումեն քիչ հետո տուն գնաց։ Նույն գիշերվան համար ոևէ ճաշ պատրաստած չըլլալով, իր հետ առավ նաև սպասուհին ու երեքը միասին ճաշելու համար մըտան այն ճաշարանը, ուր կգտնվեր Ղուկաս էֆենտի։

Ղուկաս էֆենտի ճաշը լմնցնելե ետքը կպատրաստվեր մեկնիլ և երթալ Պեոյուք Տերե, երբ հանկարծ նշմարեց, որ Երանիկ իր աղջկան հետ զբոսարան մտավ, որ ինչպես ըսինք, միևնույն ատեն ճաշարան ալ էր, և գնաց սեղանի մը քով նստեցավ, առանց նշմարելու իր քեռայրը։

— Քիչ մը սպասեմ, տեսնենք ինչ կըլլա,— մտածեց ինքնիրեն Ղուկաս էֆենտի,— հիմա քիչ մը հանդարտած կերևա կոր, կարելի է ճաշեն ետքը, երբ որ փորն ալ կշտացնե, ավելի դյուրին կըլլա խոսք հասկցնել։

Եվ այս հուսալից ենթադրության վրա, գրպանեն սիկարեթ մը հանեց և ծխել սկսավ։

Իրավցնե Երանիկ այլևս գրգռված կերպարանք չուներ, հանդարտիկ կխոսեր իր աղջկան և սպասուհիին հետ, և նույնիսկ ատեն-ատեն կժպտեր։

Երբ ճաշը ավարտեց, վաճառականը ոտքի ելավ և մոտեցավ այն սեղանին, որուն շուրջը նստած էին երկու կիներն ու աղջիկը։

Երանիկ իր քեռայրը տեսածին պես զարմացական շարժում մը ունեցավ։

— Դող մի ելլար. քիչ ետքը պիտի երթամ,— փութաց ըսել վաճառականը,— ես ալ ձեզի պես ճաշելու եկա, բայց երբ ճաշս ավարտելով կպատրաստվեի դուրս ելլել, ձեր գալը տեսա և սպասեցի, որ ճաշդ լմնցնես, որպեսզի քովդ գամ և քիչ մը միասին տեսնվինք։

— Բայց արդեն ուշ է. տուն պիտի վերադառնանք,— պատասխանեց Երանիկ։

— Դեռ կարելի է նստիլ, տակավին ժամը երկուքն է։

— Մաննիկին քունը եկած է և ննջելու ատենն է։

— Ուրեմն թող անիկա սպասուհիին հետ տուն երթա, մենք քիչ մը նստինք,— պնդեց Ղուկաս էֆենտի.— անպատճառ պետք է որ քիչ մը խոսիմ քեզի հետ...

Երանիկ, որուն բարկությունը անցած էր, չկրցավ ալ ավելի դիմադրել և սպասուհիին ըսավ, որ աղջիկը տուն դառնա և ավելցուց.

— Ես ալ քիչ ետքը կուգամ։

— Մինչև տուն քեզի կատնեմ, կձգեմ,— հարեց վաճառականը։

Երբ երկուքը առանձին մնացին՝ պահ մը լռութիւն տիրեց, հետո, վերջապես Ղուկաս էֆենտի խոսել սկսաւ։

— Գիտես որ վաղը քույրդ Թագուհին կուգա կոր, և անշուշտ զինքը դիմավորելու համար կայարան պիտի գաս կամ իրիկվան մեր տունը պիտի գաս այս մասին որոշում ա՞ռած եաւ

— Ոչ, պիտի գամ քույրս տեսնելու, այս մասին վստահ եղիր,— պատասխանեց Երանիկ հաստատ շեշտով մը։

— Ուրեմն ճիշտ ասոր համար,— շարունակեց վաճառականը,— պետք է անանկ ընթացք մը բռնենք, որ Թագուհի բանե մը չկասկածի, որովհետև մեր պատիվը և ընտանեկան բարոյականը այդպես կպահանջեն... եթե նորեն այս իրիկվան պես գրգռվիս ու իմ մասին խոսքեր կամ ակնարկութիւններ ընես, կրնա ձանր հետևանքներ ունենալ։

— Սպառնալի՞ք կրնես կոր,— հարցուց Երանիկ։

— Չէ, միայն թե բարեկամաբար խորհուրդ կուտամ կոր, որովհետև քիչ մը առաջ, բարկութիւնդ մեջ, կարգ մը խոսքեր ըրիր, որոնց նպատակը չիրցա հասկնալ։

— Ի՞նչ խոսք։

— Սանչ ծածուկ սպառնալիքի խոսքերը

— Չեմ հիշեր կոր թե ինչ ծածուկ խոսք ըսի, այնքան հոգված էի, որ գուցե առանց գիտնալու բաներ ըսած եմ։

Այս բացատրութիւնը գոհացուցիչ երևաց Ղուկաս էֆենտիի և զայն համոզեց իրրև վերջնական հաշտութիւն մը նախաքայլը։

— Ես ալ ճիշտ այդպես մտածեցի, որ առանց խորհելու կըսեիր այդ խոսքերը և ատոր համար ուզեցի կրկին քեզ տեսնել և քու բերնեդ լսել թե ակամա այդ տեսակ սպառնալիքները ըրած եաւ

— Ուրեմն հիմա զո՞հ ես տված բացատրութիւնեաւ

— Այո։

— Լավ, անանկ է նե երթանք, ժամանակը ուշ է։

Վաճառականը փորձեց խոսակցութիւնը շարունակել, օգուտ քաղելով Երանիկի հաշտարար տրամադրութենեն և կրկին զայն իրեն դարձնել, սակայն տեսաւ, որ անկարելի էր այդ և թե խզումը այս անգամ վերջնական է, ուստի հուսահատաբար ոտքի ելաւ, իր քենին տարաւ մինչև տունը, հետո առանձին վերադարձաւ նավամատույց նավակով Պեոյուք Տերե երթալու համար։

ԳԼՈՒԽ ԺԶ

Ամբողջ դիշեր Երանիկ գրեթե անքուն անցուց։ Ամուսինն ելաւ՝ հեռագիրը, այդ վերջին խաղը, որ կխաղային իրեն, ահռելի բան մը կթվեր իրեն։ Այսպես ուրեմն իր կորուստն էր, որ վճռած էր Ղուկաս էֆենտի, պարզապես կուզեր զինքը անոթության մատնել, որպեսզի ստիպվի իր ճանկին մեջ իյնալու և իր հաճույքին ծառայելու ստրուկի մը պես... Ու ասոր համար ոչ թե միայն իր քենին կզոհեր, այլ նաև անոր ամուսինն ու աղջիկն ալ։

— Այս ինչ սոսկալի, ինչ հրեշ մարդ մըն է ինքը,— կմտածեր, կատաղութենեն խելահեղ։

Ու մտքին մեջ սոսկալի վրեժխնդրութիւններ կերկներ այդ մարդուն դեմ, որուն հաճույքին առարկան եղած էր երկար ատեն։

Իսկ գալով Ղուկաս էֆենտիի, ան թեև բոլոր այս անցած դարձածեն դժգոհ էր, սակայն կմխիթարվեր, խորհելով որ ի վերջո քենին տեղի պիտի տար։

— Հիմակուհիմա կերևա, որ քովը քանի մը տակի ունի և անոր ապավինելով, գլուխ կբռնե կոր, բայց այդ դրամը շուտով ի՞հատնի և այն ատեն կրկին կստիպվի ինծի գիմել. խնդիրը սպասելու վրա է, համբերությամբ ամեն բանի կրնանք հաղթել։

— Ես կվախնայի, որ խենթ բան մը կրնե ու մեր հարաբերությունը կհայտնե Թագուհիին ու պատճառ կըլլա նոր դայթակղության մը, բայց կերևա, որ առանկ դիտավորություն մը չունի։

Ահա ինչ որ կմտածեր վաճառականը նավակով Պեոյուք Տերե դացած միջոցին։

Առտուն կանուխ իջավ Պոլիս իր գրասենյակը, տրպեսզի գործերը կարգի դնե ու երթա Սիրքեճիի կայարանը, իր կինը դիմավորելու, որ առտվան ճեպընթացով կհասներ։

Քերովբե էֆենտի իրեն կսպասեր անհամբեր։

— Ինչ եղավ հեռագրին ազդեցությունը,— հարցուց, երբ երկու բարեկամները առանձին մնացին։

— Մի հարցներ, կրակ կտրեցավ ու հետս գալիս ըրավ, ըսելով որ ես եմ բոլոր այս եղածին պատասխանատուն։

— Այդ մասին չէ՞ փփայած բնավ։

— Սակայն ես բոլորովին ուրացա։

— Ինչ գիս հանդգնավոր ցույց տվիր։

— Ինչ որ է, խնդիրը այդ չէ... հիմա կարելի՞ չէ իրեն խոսք

հասկցնել, որովհետև սարսափելի բարկացած է թե ինծի և թե քեզի դեմ. պետք է որ օձիքը թողունք, մինչև որ ինք ստիպվի կրկին մոտենալու։

— Բայց էրիկը ի՞նչ պիտի ընենք. վաղը առտու շոգենավը կհասնի եղեր։

— Բնականաբար շոգենավեն ելլելուն պես ուղղակի քեզի պիտի գա բացատրություն ուզելու. դուն ալ պաղ ընդունելություն մը կընես ու զինքը ճամփու կդնես, ըսելով, որ այլևս իրեն պետք չունիս... թող քիթերնին գետին քսվի, որ երթան սորվին իմ կամքիս դեմ գործ տեսնելը։

Քերովբե էֆենտի մեկնեցավ և վաճառականը մեկ քանի նամակներ գրել տալե ետքը ժամացույցը նայեցավ և տեսավ, որ կառախումբին հասնելու ատենը եկած էր, ուստի աճապարանքով ուղղվեցավ Սիրքեճիի կայարանը, ուր արդեն քարափին վրա բազմություն խռնված էր, ճեպընթացին սպասելով։

Հանկարծ կառախումբին ժամանումի սուլումը լսվեցավ և կառքերու հոյակապ շարքը եկավ կեցավ քարափին եզրը։ Տիկին Թագուհի, որ գլուխը պատուհանեն դուրս հանած էր, անմիջապես նշմարեց իր ամուսինը, որ անծանոթի մը հետ կխոսակցեր անտարբեր։

— Ղուկաս էֆենտի, Ղուկաս էֆենտի,— պոռաց։

Վաճառականը անմիջապես գլուխը դարձուց ձայնին եկած կողմը և կեղծ ուրախության աղաղակ մը արձակեց։

Վայրկյան մը ետքը Թագուհի հանըմ վար իջած էր վակոնեն ու կհամբուրվեր ամուսնույն հետ։

Թագուհի հանըմին առաջին գործը եղավ տեղեկություններ հարցնել իր պզտիկ աղջկան մասին, որ գիշերօթիկ դպրոց կգտնըվեր։

— Շատ աղեկ է, տեսնելուդ գիրացած պիտի գտնես,— պատասխանեց Ղուկաս էֆենտի,— աղվոր, աղվոր դասերուն կաշխատի կոր... քու գալդ իմաց չտվի, որովհետև շաբաթ արձակուրդ ունին։ Եթե իմանար, անպատճառ գալ պիտի ուզեր ու դասերեն ետ պիտի մնար։

— Թող աղեկ ըլլա տե՛ երկու օր վերջը կտեսնանք, վնաս չունի,— պատասխանեց Թագուհի զվարթորեն։

Հետո, կարգը եկավ Ղուկաս էֆենտիին տեղեկություններ հարցնելու իր աղջկան՝ Ռոզիկի ու փեսին վրա։

— Շատ հանգիստ, շատ աղեկ ու երջանիկ են,— հավաստեց կինը,— չես կրնար երևակայել, թե իրարու ինչպես կսիրեն։

Ղուկաս էֆենտի ուզեց իմանալ մանավանդ իր փեսին գործերուն վիճակը, նյութական կարողությունը։ Թագուհին այս մասին ալ խիստ գոհացուցիչ տեղեկություններ տվավ և ըսավ, թե փեսային իրենց կարծածեն կամ հուսացածեն շատ ավելի փայլուն դիրք մը ուներ։

Ետքը կառքին մեջ, երբ Բերա կերթային, Թագուհին հարցուց.

— Քույրս՝ Երանիկը ի՞նչպես է։

— Աղեկ է,— պատասխանեց Ղուկաս էֆենտի վարանոտ ձևով մը,— այսինքն՝ աղեկ ըլլալու է, որովհետև բավական ժամանակ կա՝ տեսած չունիմ։ Երթալեդ ի վեր կարծեմ երկու երեք անգամ տեսա միայն, երկու անգամ գրասենյակ եկավ, անգամ մըն ալ փողոցը հանդիպեցա... բայց երեկ մարդ ղրկեցի և գալդ իմացուցի։ հավանական է, որ այսօր վաղը տուն կուգա։

— Էրիկը ի՞նչ ջուրի մեջ է։

— Անոր ալ աշխատանք գտանք, բարեկամի մը քով գործի դրինք, Սամսոն գնաց, կերևա որ չէ կրցեր օգտակար ըլլալ, որովհետև երկու օր առաջ այդ բարեկամս տեսա, ըսավ որ Պոլիս կանչեր է և թե այլևս իրեն պետք չունի եղեր։

— Ըսել է նորեն պարապ պիտի մնա։

— Աստված ողորմած է, հարկավ դարձյալ գործ մը կճարենք իրեն, հիմա ատոր վրա մտածելիք ատեն չէ։

Եվ Ղուկաս էֆենտի, որ այդ բացատրություններեն կնեղվեր, խոսքը փոխեց։

— Երանիկին հետ ալ չկրցանք համաձայնիլ, որպեսզի երկուքնուս խոսքը իրարու բռնե,— խորհեցավ ինքնիրեն,— եթե ինքն ալ գա և ուրիշ կերպ պատմե, գործ ունինք։

Բայց նույն օրը Երանիկ մեջտեղ չեկավ և Ղուկաս էֆենտի մտատանջության պատճառ չունեցավ։

Շաբաթ օրը միայն, ցերեկեն ետքը, Երանիկ եկավ իր քույրը տեսնելու։

— Ա՜ս ո՞ւր մնացիր, երկու օրե ի վեր քեզի կսպասեմ, Ղուկաս էֆենտին ըսավ, որ գալուստս իմացնելու համար մարդ ղրկած է քեզի, սակայն երևան չելար, անհանգի՞ստ էիր,— հարցուց Թագուհի հանդիմանական շեշտով մը։

— Չէ, միայն թե չափազանց զբաղված էի, էրիկս Սամսոնեն

վերադարձավ երեկ իրիկուն և որովհետև քանի մը օրեն Պոլսեն հեռանալու որոշում տվինք, շատ իրարանցումի մեջ ենք,— պատասխանեց քույրը։

— Ինչո՞ւ Պոլսեն կհեռանաք կոր։

— Այսպես պետք է, ամենուս հանգստության համար։

— Չեմ գիտեր ինչ ըսել կուզես. Ղուկաս էֆենտին ըսավ, որ էրիկդ իր պաշտոնեն հաներ են, բայց միևնույն ատեն հույս հայտնեց, որ գործ մը պիտի ճարե իրեն, անոր չհարցուցած ինչպե՞ս կըլլա կոր, որ ձեր գլխուն որոշում կուտաք։

— Ալ ասկե ետքը մենք մեր գլխուն ճարը մեր ձեռքովը պիտի տեսնենք,— պատասխանեց Երանիկ հուզված կերպարանքով։

Տիկին Թագուհին, որ չէր գիտեր իր քրոջ հոգեկան վիճակը, կարծեց թե Ղուկաս էֆենտիի ու Երանիկի մեջ միջադեպ մը տեղի ունեցած է և ըսավ.

— Կերևա որ նորեն խնդիր մը ունեցաք մեր էֆենտիին հետ, անոր ալ մեկ նեղ վայրկյանին հանդիպած և խոսք մը ըսած ըլլալու է և ասոր համար այդպես Բենիայի խոսքեր կընես կոր, բայց ես նորեն կկրկնեմ. եկած օրս կառքին մեջ ձեր խոսքը բացվեցավ և ինք իր կողմն ըսավ, որ ատված ողորմած է, նորեն գործ մը կգտնանք։

Երանիկ փոխանակ իր քրոջ պատասխանելու, հանկարծ սկսավ արտասվել։ Տիկին Թագուհի փութաց անոր քով ու ջանաց հանդարտեցնել։

— Ի՞նչ ունիս, քույրիկս, խոսե տեսնեմ, պատմե ամեն բան, կերևա կոր ծանր բան մը անցեր է մեջերնիդ և ես տեղեկություն չունիմ...

Խեղճ կինը առանց պատասխանելու կշարունակեր հեծկլտալ, հետզհետե ավելի հուզված։

Վերջապես սկսավ խոսիլ ու ամոթեն, խղճահարությունեն ու վրեժխնդրական զգացումեն տարված, ամեն բան պատմեց իր քրոջը, խիղճը հանդարտեցնելու և միանգամայն իր վրեժը լուծելու անգիմադրելի պետքե մը մղված։

Պատմեց թե ինչպես, առաջին անգամ անձնատուր եղած էր իր քեռայրին, թե ինչպես իրենց մեղապարտ հարաբերությունները շարունակած էին, նույնիսկ Ղուկաս էֆենտիի ընտանեկան հարկին տակ, վերջապես իրենց հարաբերության վերջին դրվագը, Ծարը Ցարի մեջ վարած կյանքերնին, ամուսնույն Սամսոն դրկվիլը,

Քելովբե էֆենտիի մեղսակցությունը և ի վերջո զինքը Պոլիս պահելու համար Ղուկաս էֆենտիի գործածած միջոցները։ Վերջապես ամեն բան, առանց նույնիսկ մոռանալու Քերովբե էֆենտիի հետ ունեցած հարաբերությունները, միանգամ ընդմիշտ փրկվելու համար Ղուկաս էֆենտիի ճիրաններեն, մանրամասնորեն պատմեց իր քրոջը, անհուն զղջումի արցունքներուն մեջ։ Եվ, ի վերջո, ծունկի եկած, ներում խնդրեց իր քրոջմեն, իր ակամա ու գրեթե բռնի գործած հանցանքներուն համար։

Տիկին Թագուհի այս հայտնություններեն սահմռկած, ինքն ալ Երանիկի հետ կարտասվեր, չկրնալով ըմբռնել իր էրկան այս ամոթապարտ ընթացքը։

Անշուշտ մեծ հավատք մը ունեցած չէր մինչև այն ատեն իր ամուսնույն առաքինությանց մասին, գիտեր թե ընտանիքի, պատիվի ու բարոյականի մասին իր առերևույթ պահանջկոտության հակառակ, ինչ անպատիվ ու անբարոյական արարած մըն էր, որ հաճախ ստիպված էր իր խաղքությունները ծածկել դրամի կամ ազդեցության ուժովը։ Բայց երբեք չէր կրնար երևակայել, որ այդ մարդը անարգության այն աստիճանին իջած է, ուր կերևար այժմ իր քրոջ պատմություններեն ետքը։ Այս հայտնությունը շանթի մը հարվածը եղավ իրեն համար ու այն աստիճան ցնցվեցավ, որ Երանիկ ստիպվեցավ իր կարգին զայն հանդարտեցնել, զղջալով իր խոստովանությունները։

Երկու քույրերը, երկար ատեն, գլուխ գլխի լացին իրենց դժբախտությունը։ Թագուհի հարցուց.

— Ի՞նչ պիտի ընես հիմա, քանի որ ամուսինդ ալ պարապ է և չես կրնար հույս դնել այլևս Ղուկաս էֆենտիի վրա։

— Ունեցածս չունեցածս ծախեցի, քանի մը ոսկի հավաքեցի,— պատասխանեց Երանիկ,— այդ գումարով էրկանս հետ պիտի ջանանք գործ մը ճարել և ապրվիլ կամ հոս կամ գավառները... վերջապես ամեն բան պիտի ընենք գլխներուս ճարը նայելու համար, առանց Ղուկաս էֆենտիի գիմում ընելու։

— Իսկ ես ի՞նչ պիտի ընեմ այս բաներեն ետքը, ինչպե՞ս պիտի ենայիմ այդ մարդուն երեսը,— պատասխանեց Թագուհի՝ հուսահատ շեշտով մը,— ալ ասկե ետքը անկարելի պիտի ըլլա ինձի այդ հրեշին հետ ապրիլ...

Իրիկվան դեմ, Երանիկ ելավ գնաց, իր խոստովանությամբ

թեթևցած, մինչ տիկին Թագուհի հետզհետե կսրտմտեր, իր իմացածները վերհիշելով։

Երբ Ղուկաս էֆենտի եկավ, Թագուհի իր սենյակը քաշված էր, սպասուհիին ըսելով թե անհանգիստ է։ Վաճառականը պահ մը հանգստանալե ետքը հարկ համարեց երթալ իր կինը տեսնելու։

Թագուհի չկրնալով ինքզինք զսպել, իր ներսիդին կուտակված ամբողջ դառնությունը պոռթկաց իր էրկանը երեսին։

Քսան տարվան ընտանեկան կյանքի մը հաշվեհարդարությունն էր, որ կկատարվեր։ Բոլոր մոռցված, ծածկված ու ներված ամոթալի դեպքերն ու իրողություններն էին, որոնք կրկին երևվան կելլեին մեկիկ-մեկիկ և ի վերջո, հանկարծ պայթեցավ վերջին գայթակղությունը՝ Ղուկաս էֆենտիի հարաբերությունը իր քենիին հետ ամբողջ ամոթալի մանրամասնություններովը, առանց ոևէ նահանջի կամ մոռացումի կարելիության։

Շվարած, շլմորած, մտիկ ըրավ իր կնոջ բարկաճայթ խոսքերուն, գլխուն տեղացած նախատինքներուն, հետո վերջապես չկրնալով համբերել, կամ մանավանդ ուզելով անպատկառության մը հաղթանակը տանիլ գոչեց.

— Ես ի՞նչ հանցանք ունիմ, եթե քուրդ բոզ մըն է... ինք եթե պոչ չի խաղցուներ, ես ալ ետևեն չէի իյնար, ինք է մեղավորը։

Այս խոսքերը ալ ավելի զրգռեցին տիկին Թագուհին, որ կրկին սկսավ իր նախատինքներուն տարափը։

Վերջապես, Ղուկաս էֆենտի, տեսնելով, որ չպիտի կրնա այս պայքարեն հաղթական դուրս ելլել, ելավ կնոջ սենյակեն, բարկությամբ վար իջավ և դուրս ելավ տունեն, առանձնությամբ քիչ մը մտքի հանգարտությունը գտնելու համար։

Երբևք մտքեն չէր կրնար անցնել թե իր քենին այսպես պիտի գար ամեն բան պատմելու իր կնոջը և այս անակնկալը սոսկալի հարվածի մը պես կիջներ իր գլխուն։

— Փոսքալը,— կմտածեր ինքնիրեն,— վրեժ լուծելու համար գրած է... Կերևա որ այս էր սպառնալիքը, հիմա կհասկնամ կոր։

Ժամերով Ղուկաս էֆենտի առանձին շրջեցավ, առանց ճաշելու, խոր մտածումի մեջ ընկղմած։ Կզգար, որ իր ընտանիքն էր, որ կքայքայվեր այս անգամ անդառնալի կերպով ու այս մտածումը սիրտը կճմլեր։

Այս էր գլխավոր մտատանջությունը...

— Եթե այս բաները իմացվին, ինչ պիտի ըսեն ամեն մարդ։

— Պատիվս փարայի մը պիտի ըլլա,— կհեղեղեր ինքնիրեն։

Վերջապես, կես-գիշերին մոտ, տուն վերադարձավ և գնաց ուղղակի իր սենյակը ննջելու։

Հետևյալ առտու կանուխ արթնցավ ու առանց իր կնոջ երեսը տեսնելու կպատրաստվեր դուրս ելլել, երբ սպասուհին եկավ իմաց տալու, որ տիկինը հիվանդ էր։

— Մարդ ղրկեցեք թող մեր բժիշկը կանչեն,— հրամայեց էֆենտին և դուրս ելավ տունեն։

Խեղճ տիկին Թագուհի իր կրած ծանր հուզումեն հիվանդ ինկած էր. բժիշկը եկավ և հայտարարեց, թե հիվանդը ջղային մեծ տագնապի մը ենթարկված էր և հարկ էր զայն մեծ զգուշությամբ խնամել։ Բարեբախտաբար աղջիկը, Նոյեմի՝ նույն օրը եկավ դպրոցեն և անոր ներկայությունը բավական ներգործեց մորը վրա, բայց և այնպես քանի մը շաբաթ հարկ եղավ, որ անկողին մնա։

Ղուկաս էֆենտի անգամ մը փորձած էր երթալ կինը տեսնելու, բայց տիկին Թագուհի զայն սեմին վրա տեսնելուն պես, դուրս վռնտած էր, կրկին ջղային տագնապի մը մատնվելով։ Վաճառականը ալ անկե ետք չէր գացած կնոջ քով։ Իրիկունները հանցավորի մը պես տուն կուգար, առանձին ճաշը կըներ ու կրկին դուրս կելլեր և ուշ ատեն կվերադառնար։

— Բայց ասոր վերջը ի՞նչ պիտի ըլլա,— կմտածեր ինքնիրեն,— այս կինը մինչև ետքը սրդողա՞ծ պիտի մնա հետս, այն ատեն շիտակը անտանելի պիտի ըլլա այս կյանքը, պետք է ոևէ միջոցով վերջ տալ ասոր։

Եվ իզուր միջոցներ կորոճար իր մտքին մեջ։

Երանիկեն այլևս լուր չուներ և կենթադրեր, որ Պոլսեն մեկնած ըլլալու էր իր ամուսնույն և աղջկան հետ։ Հիմա տեսակ մը ատելությամբ լեցված էր անոր դեմ։

— Ինքն է բոլոր այս փորձանքին պատճառը,— եթե քիչ մը խելք ունենար, այս ընթացքը չէր բռներ և այս փորձանքները չէր բանար, թե մեր և թե իրենց գլխուն։

Շաբաթներ ետքը վերջապես տիկին Թագուհի իր կրած բուռն հուզումեն հանդարտած, կրցավ ոտքի ելլել։

Իր հիվանդության միջոցին երկար նամակ մը գրած էր Փարիզ՝ իր աղջկան, որուն մեջ կհայտներ, թե այլևս չպիտի կրնար միևնույն հարկին տակ ապրիլ իր ամուսնույն հետ և փափաք կհայտներ իր աղջիկը առնելով երթալ Փարիզ հաստատվելու։

Տիկին Թագուհի չէր ուզած ամբողջ եղելությունը հայտնել Ռոզիկի, այսուհանդերձ ծածուկ բառերով շատ բան ըսած էր և վերջապես ավելցուցած էր, որ իր որոշումն անդառնալի է և թե, նույնիսկ եթե Փարիզ չերթա, անպատճառ պիտի քաժնվի իր ամուսինեն։

Ռոզիկ այս նամակը ընդունելով, ինքն ալ մեծ հուզում մը կրեց և գուշակեց, որ անդարմանալի բան մը պատահած էր։ Նամակը ցույց տվավ իր ամուսնույն, որպեսզի անոր հետ խորհրդակցությամբ որոշում մը տան։ Լևոն երկար մտածելու պետք չունեցավ, անմիջապես վճռեց, որ հարկ է պատասխան մը գրել և անմիջապես ստիպել իր զոքանչը, որ քենիի հետ կրկին Փարիզ վերադառնա։ Նույնիսկ ուզեց, որ այդ նամակը երկուքնուն կողմե ստորագրվի, որպեսզի տիկին Թագուհի ոևէ խղճահարություն կամ կասկած չունենա։

Երբ այս պատասխանը հասավ տիկին Թագուհիի ձեռքը, մեծ ուրախությամբ կարդաց զայն և գրեթե բոլորովին գտավ իր հանդարտությունը և մտքի անդորրությունը։

Եվ սակայն հարկ էր վերջնական տեսակցություն մը ունենալ Ղուկաս էֆենտիի հետ՝ ու այս բանը զինքը կխրտչեցներ։ Նշանավոր վեհեն ի վեր, ուրկե ետքը հիվանդ ինկած էր, տիկին Թագուհի խոսք մը չէր փոխանակած իր ամուսնույն հետ և նույնիսկ զգուշացած էր անոր հետ դեմ առ դեմ գտնվելե։ Վաճառականն ալ, իր կարգին, վարժված էր այս նոր ապրելակերպին և մոտենալու ոևէ փորձ չէր ըներ։

Տան մտերիմները անորոշապես գիտեին, որ երկու ամուսիններու միջև պաղություն մը կտիրեր, սակայն ոչ ոք կրցած էր բուն պատճառը գիտնալ և զանազան ենթադրություններ կընեին միայն, բնավ չէին մոտենար իրականության։

Փարիզեն նամակ ստացած իրիկունը, տիկին Թագուհի որոշեց վերջապես իր ամուսինին հետ վճռական տեսակցություն մը ունենալ։ Սպասուհիին հետ լուր ղրկեց Ղուկաս էֆենտիի, թե կփափաքեր զինքը տեսնել։ Այդ հրավերը շատ զարմացուց վաճառականը, որ այլևս չեր սպասեր իր կնոջ հետ այսպիսի գլուխ գլխի տեսակցություն մը ունենալ։

— Արդյոք նոր բա՞ն մը կա,— խորհեցավ։ Հետո սպասուհիին դառնալով.

— Շատ աղեկ,— ըսավ,— ճաշեն ետքը անմիջապես իր սենյակը կերթամ։

Վաճառականը տեսակ մը հուզում կզգար այդ անակնկալ հրավերեն։

— Խե՞ր է արդյոք,— մտածեց.— գուցե այս անտանելի կացության վերջ մը տալու համար կուզե հետս հաշտվիլ... ինչ որ է, քիչ ետքը կիմանանք իր նպատակը...

Ճաշին վրա սովորականեն ավելի գինի խմեց. կովի պատրաստվող զորականի մը պես, հետո սուրճն ու սիկարեթը խմելե ետքը, հաստատ քայլերով ուղղվեցավ կնոջը սենյակը։

Տիկին Թագուհի խիստ պաղ ու դաժան ընդունելություն մը ըրավ ամուսնույն, որ զվարթադեմ իրեն մոտեցած էր, ըսելով.

— Ի՞նչ կա նայինք, զիս ուզեր ես։

— Այո, շատ կարևոր խոսք մը ունիմ, և կուզեմ, որ լրջորեն զիս մտիկ ընես։

— Խոսե տեսնենք։

— Վերջին անգամ մեր մեջ անցած դարձածեն ետքը, ալ ինծի համար անկարելի պիտի ըլլա քեզի հետ միևնույն տանը մեջ բնակիլ, ուստի պետք է, որ ալ իրարմե հեռու ապրինք, առանց անօգուտ տեղը դայթակղություններ հարուցանելու և վրանիս դարձյալ խոսեցնելու...

— Բաժնվի՞նք մի,— գոչեց Ղուկաս էֆենտի,— բայց մեր մեջը բաժանում չկա...

— Ըսել կուզեմ, որ իրարմե պետք է հեռու ապրինք,— պատասխանեց Թագուհի...

— Բայց այն ատեն ինչպե՞ս կուզես, որ վրանիս խոսեցնել չի տանք։

— Ասոր ճարը ես մտածեցի։

— Ըսե տեսնենք։

— Ես Նոյեմիս կառնեմ Փարիզ կերթամ, աղջկանս քով, իրբև թե Նոյեմին զպրոց դնելու և անոր վրա հսկելու համար, և հոն կըմնանք ժամանակ մը. ասով ոչ ոք կրնա մեր մասին բամբասանք մը ընել։

— Տեսնենք Փարիզեն ձեզ կուզե՞ն կոր,— հարցուց Ղուկաս էֆենտի դաղրածու շեշտով մը։

— Այդ մասին անհոգ եղիր։

— Վայ, ուրեմն ամեն բան առաջուց պատրաստեր ես։

— Այսինքն աղջկանս գրած եմ տված որոշումս։

— Ի՞նչ,— գոչեց վաճառականը դող ելած,— մեր մեջ անցած դարձածը անո՞նց ալ գրեցիր։

— Չէ, չէ, մի հուզվիր, ըրած խաղքություններդ չպատմեցի, միայն թե քիչ մը ատեն Փարիզ երթալս իմացուցի և անոնք ալ, թե աղջիկս և թե փեսաս, անմիջապես նամակ գրեր ու մեզ հրավիրեր են... նա, առ նամակը կարդա։

Եվ տիկին Թագուհի նամակը իր ամուսնույն երկարեց. վաճառականը արագ ակնարկ մը նետեց թուղթին վրա. հետո ըսավ.

— Բոլոր ատոնք պարապ բաներ են, անցած դարձած խնդրի մը այսչափ կարևորություն տալ չարժեր... զարմանալի բան, ամեն ընտանիքի մեջ ասանկ բաներ կպատահին, բայց չեն առներ անցնիր... ընտանեկան պատիվը, բարոյականը պահպանելու համար, այս տեսակ խնդիրը անուշ տեղը կկապեն, դուն ընդհակառակը այս տեսակ խնդիրը անուշ տեղը կկապեն, դուն ընդհակառակը անանկ ընթացք մը բռնել կուզես, որ աշխարհ արար եղածը իմանա և պատիվնիս փարայի մը ընե։

— Դո՞ւն ես, որ տակավին կհամարձակիս ընտանիքի, պատիվի, բարոյականի խոսք ընել,— գոչեց տիկին Թագուհի բորբոքած։

Ու ահա անգամ մըն ալ կռիվը պայթեցավ երկու ամուսիններու միջև, կրկին իրենց քսան տարվան ամուսնական կյանքի հաշվեհարդարությունն սկսավ, բոլոր հին խնդիրները մեջտեղ հանելով ու այս անգամ տիկին Թագուհի անխնա կերպով հարձակեցավ ամուսնույն վրա, ամբողջ անոր նախատելի կյանքը երեսին զարնելով, այն աստիճան, որ ի վերջո վաճառականը ստիպվեցավ կորագլուխ՝ գրեթե խույս տալ սենյակեն ու բարկությամբ դռները շառաչել տալով, ինքզինք փողոց նետեց, առանձնության մեջ հանդարտությունը գտնելու համար։

— Թող ճեհեննեմ ըլլան երթան,— կոռնար ինքնիրեն փողոցին մեջ,— բարով խերով Փարիզեն չվերադառնար, գալեն ի վեր դժոխք դարձավ տունս։

Հետո հայհոյություններու տարափ մը սկսավ տեղալ Երանիկի գլխուն, զոր իր բոլոր դժբախտության միակ պատճառը կհամարեր։

Էրիկ կնկան միջև անցած այդ վերջնական կռիվեն երկու շաբաթ ետքը արդեն տիկին Թագուհի իր բոլոր պատրաստությունները տեսած էր, մեկ քանի օրեն մեկնելու համար Փարիզ։ Աղջիկը՝ Նոյեմի՝ դպրոցեն հանած էր և տունը կմնար, քանի որ որոշած էր միասին տանելու։

Ղուկաս էֆենտի վերջ ի վերջո համոզվեր էր, թե իրեն համար լավագույն լուծումը պիտի ըլլար այս բաժանումը, քանի որ ալ բոլորովին անկարելի էր ասկե ետքը միասին ապրիլ, առանց ընտանեկան նորանոր բախումներու և կռիվներու։ Եվ այն աստիճան վարժվեր էր այդ կարգադրության, որ հիմակ անհամբեր կսպասեր այդ մեկնումին, իրեն համար նոր կյանք մը վերսկսելու նպատակով։

Արդեն իսկ առանց սպասելու, որ տիկին Թագուհի ու իր աղջիկը երթան հաստատվին Փարիզ, ինք արդեն իսկ սկսած էր ապրիլ իբրև ամուրի մը, գրեթե շատ գիշերներ տուն չգալով ճաշի։ Նույնիսկ մեկ քանի անգամ պառկելու ալ չէր եկած, գիշերը անցնելով իր բարեկամին՝ Քերովբե էֆենտիին հետ, որ դարձյալ իր ամենօրյա խորհրդատու մտերիմը և շուտով կյանքին ուղեցույցը եղած էր։

Եվ կարծես թե վրեժ լուծելու համար իր կնոջմեն և անոր ցույց տալու թե՝ այս բաժանումը ոևէ կարևորություն չուներ իրեն համար, քանի մեկնումի օրերը կմոտենային, այնքան տունեն բացակա կմնար։

Իրիկուն մը դարձյալ գնաց գտավ Քերովբե էֆենտին և առաջարկեց, որ Միասին ատեն անցնեն։

— Ալ այս իրիկուն վերջին գիշերնիս է, վաղը մեր Թագուհին տեֆ կըլլա, կերթա կոր, բոլորովին պիտի ազատիմ,— ըսավ իր բարեկամին։

— Ուրեմն պետք է, որ տունը գտնվիս, այս վերջին իրիկունը։

— Ընդհակառակը, ճաշի չպիտի երթամ և նույնիսկ գիշերն ալ տուն չպիտի վերադառնամ, որ երթա հասկնա,— գոչեց Ղուկաս էֆենտի։

Վաճառականը ոևէ գաղտնիք չուներ Քերովբե էֆենտիեն և իր ընտանեկան բոլոր խնդիրները պարզած էր անոր, մանավանդ որ ան ալ կերպով մը իրեն մեղսակիցը կհամարվեր, ուստի այդ խոսքերը չզարմացուցին զինքը։

— Լավ, թող ըսածիդ պես ըլլա, միայն թե ինչպե՞ս ժամանակ պիտի անցնենք, առաջուց որոշում մը տվա՞ծ ես...

— Նախ կերթանք քիչ մը կխմենք, հետո աղեկ ճաշ մը կընենք, ալ անկե ետքը աստված ողորմած է։

Եվ երկու բարեկամները գացին իրենց ծրագրի առաջին մասը գործադրելու։

Ապա, ճաշեն ետքը, Քերովբե էֆենտիի խորհուրդին վրա, սպղվեցան Շիշլիի կողմը ամայի վայր մը, ուր շվայտությանն նոր տրշ մը գտած էր Ղուկաս էֆենտիի հանձնակատար բարեկամը։

***

Արշալույսին դեմ կառք մը եկավ կեցավ վանառականին դռան առջև։

Քերովբե էֆենտի կառքեն իջավ և դուռը զարկավ, տակավին ոչ ոք արթնցած էր տանը մեջ և հարկ եղավ մեկ քանի անգամ զանգակը հնչեցնել, մինչև որ ծառան եկավ դուռը բանալու։

Այն ատեն Քերովբե էֆենտի մոտեցավ կառքին և գանակը բանալով՝ վար իջեցուց Ղուկաս էֆենտին, որ տժգույն և դողդոջուն, հազիվ կրնար իր ոտքերուն վրա կենալ, և անոր թևը մտնելով, կամաց-կամաց տան դուռնեն ներս մտցուց, մինչ ծառան, այդ տեսարանեն ապուշ կտրած, աչքերը խոշոր-խոշոր բացած կնայեր, առանց կարենալ բան մը հասկնալու։

Ծառան թևը մտած, խիստ դժվարությամբ Ղուկաս էֆենտին առաջնորդեց իր ննջասենյակը, ուր հեռասպառ վիճակի մեջ երկարեցավ անկողնին վրա։ Քերովբե էֆենտին Ղուկաս էֆենտին տուն ձգելե ետքը, անմիջապես վազած էր բժիշկին և հանձնարարած էր, որ փութով Ղուկաս էֆենտիի տունը երթա, ավելցնելով թե գաշույնի վերք մը ստացած է քսակահատներու կողմե, որոնք ուզած էին զինքը կողոպտել, դիշերը ուշ ատեն վերադարձած միջոցին։

Ավելորդ է ըսել, թե Քերովբե էֆենտի կիսեզաթյուրեր գնպքը, որովհետև Ղուկաս էֆենտի ոչ թե քսակահատներու կողմե, այլ իրենց այցելած գաղտնի հանրատան մեջ էր, որ դաշույնով վիրավորված էր նախանձոտ մրցակցի մը կողմե։

Քերովբե էֆենտի բժիշկին լուր տալե հետո իր տունը գնաց։ Բժիշկը անհրաժեշտ պետքերը առնելով փութաց Ղուկաս էֆենտիի մոտ և նախնական դարմանները ըրավ վերքին։

Քերովբե էֆենտի իր տունը հանգիստանալե հետո, առանց ծերկար մնալու վերադարձավ Ղուկաս էֆենտիի մոտ, ուրկե բժիշկը դեռ չէր մեկնած։

Բժիշկը վերքը մաքրելե և զայն փաթթելե հետո պատվիրեց,

որ կարելի եղածին չափ քիչ մը զգույշ շարժի անկողնին մեջ։ Դեղագիր մը գրելե և ուտելիքի մասին ալ կարգ մը հանձնարարություններ ընելե ետքը, բժիշկը մեկնեցավ՝ երկին հանդիպելու խոստումով։

Քերովբե էֆենտի, որ բժշկին ներկայության աթոռի մը վրա նստած էր, անոր մեկնումեն անմիջապես հետո ոտքի ելավ ու քրտնեց լաթերը և տեսավ, որ իրավ արյունոտ էին, ինչպես նաև ձերմակեղենները, զորս բժշկին գալեն հետո փոխած էր։ Լաթերուն գրպանները պրպտեց և ձերմակեղենները հետ բռազդի մը մեջ ծրարեց և տարավ դարակի մը խորը պահեց։

Նույն միջոցին դուռը զարնվեցավ կամաց մը։

— Մտեր,— ըսավ Քերովբե էֆենտի։

Սպասուհին էր եկողը։

— Թագուհի հանըմ խմացավ, որ էֆենտիին համար բժիշկ եկեր է և կուզե ինչպես ըլլալը հասկնալ, ըսավ։

— Աղեկ է, կընանա կոր,— պատասխանեց Քերովբե էֆենտի։

Սպասուհին նույն միջոցին վանառականը աչքերը բացավ։

— Ի՞նչ է եկողը,— հարցուց։

— Տիկինը ձեր մասին տեղեկություն ուզեր է։

— Հանըմը կուզե ինչպես ըլլալիդ իմանալ,— երկնեց սպասուհին։

— Հիմա քիչ մը աղեկ եմ,— պատասխանեց Ղուկաս էֆենտի հեգնեն։

Բայց իր տժգունությունը, խոսելու դժվարությունը այնքան խոր տպավորություն ըրավ սպասուհիին վրա, որ վազեց իր տիրուհին մոտ, ըսելով.

— Հանըմ, էֆենտիին վիճակը շատ ծանր է, խոսելու կարողություն չունի, գույնը ըսես մոմի գույն դարձեր է...

Տիկին Թագուհի անմիջապես փութաց ամուսնույն սենյակը. ինք այնպես ենթադրած էր, որ Ղուկաս էֆենտի թեթև տկարություն մը ունեցած էր, միայն պարզ պաղառություն մը, առանց ոևէ ծանր հանգամանքի, բայց սպասուհիին խոսքերը զինքը շփոթեցին։

Սենյակեն ներս մտնելով՝ զարմացավ, երբ հոն տեսավ Քերովբե էֆենտիին։

— Դո՞ւք ալ հոս եք եղեր,— ըսավ։

— Այո,— պատասխանեց վանառականին բարեկամը,— պա-

տահմամբ եկա Ղուկաս էֆենտին տեսնելու գործի մը համար և ահա տեսա, որ հիվանդ պառկած է։

— Բայց ի՞նչ եղավ մեկեն ի մեկ,— հարցուց Թագուհի հանքմ, աչքերը ամուսնույն վրա ուղղած։

— Իրավ որ, տիկին, բժիշկը տակավին որոշ բան մը չկրցավ ըսել... այս իրիկուն կրկին պիտի գա և այն ատեն գուցե հիվանդության ի՞նչ ըլլալը հայտնվի։ Առ այժմ քանի մը դեղեր տվավ և պատվիրեց, որ անկողնին մեջ հանդարտ մնա ու քիչ խոսի...

Տիկին Թագուհի անկողնին մոտեցավ, ձեռքը Ղուկաս էֆ-ին ճակատին դրավ և ըսավ.

— Բավական տաքություն ունի։

Հետո, հիվանդին դառնալով ավելցուց.

— Մեկ տեղդ կցավի կո՞ր։

— Չէ, միայն թե մեծ տկարություն մը կզգամ կոր։

Պահ մը անխոս դիտեցին իրար, հետո Ղուկաս էֆենտի դողդոջուն ձայնով մը հարցուց.

— Ի՞նչ պիտի ընես այսօր, իրիկունը պիտի մեկնեիր...

— Այս վիճակիդ մեջ չեմ կրնար քեզ թողուլ և երթալ... թող շաբաթ մը ետքը ըլլա։

— Կաղաչեմ, շատ մի խոսեցնեք,— միջամտեց Քերովբե էֆենտի, որովհետև բժիշկը կատարյալ հանգիստ պատվիրեց։

Տիկին Թագուհի հեռացավ անկողնին քովեն։

Այդ հանկարծական հիվանդությունը շատ տարօրինակ կթվեր իրեն ու չէր կրնար բացատրություն մը տալ։

— Արդյոք երեկ գիշեր ո՞ւր գացած էր,— հարցուց Քերովբե էֆենտիի,— ճաշի ալ տուն չեկավ։

— Իրավ որ, տիկին, բնավ տեղեկություն չունիմ, առջի իրիկվընե գրասենյակը զինքը տեսա գործի մը համար և ինք պատվիրեց, որ առտուն հոս գամ հետը տեսնվելու, ճիշտ ատոր համար եկած էի, երբ զարմանքով տեսա, որ հիվանդ պառկած է և բժիշկ մը կա քովը։

Քերովբե էֆենտի այնքան բնական շեշտով մը այս սուտերը կպատմեր, որ տիկին Թագուհի անոնց անկեղծության մասին ոեէ կասկած չունեցավ։ Հետո քիչ մըն ալ սենյակին մեջ մնալե ետքը, դուրս ելավ։

— Զարմանալի բան, այս ի՞նչ փորձանք է, որ գլխուս եկավ, ճիշտ մեկնելու օրս,— մրմնջելով ինքնիրեն։

Եվ սակայն ժամանակը կանցներ։ Քերովբե էֆենտի ժամացույցը նայեցավ. «Օ, որչափ ուշ մնացեր եմ» ըսավ ինքնիրեն, հետո մոտեցավ անկողնին.

— Ղուկաս էֆենտի, կներեք, ես պիտի մեկնիմ, ժամանակը ուշ է, եթե հրաման մը ունիք կամ ղրկելիք լուր մը՝ ըսեք... իրիկունը նորեն կուգամ ձեր վրա տեղեկություններ առնելու համար։

— Կաղաչե՛մ, մեր գրասենյակը հանդիպե և լուր տուր, որ հիվանդ եմ ու չպիտի կրնամ այսօր վաղը գործի երթալ։ Եթե կարևոր բան մը ըլլա, թող իրենք տուն գան։

— Շատ աղեկ, հիմա անմիջապես կերթամ լուր կուտամ։

Եվ Քերովբե էֆենտի դուրս ելավ սենյակեն։

Մինչև իրիկուն տիկին Թագուհի քանի մը անգամ եկավ ամուսնույն քով։ Վիճակը փոփոխություն մը չուներ, միայն թե իրիկվան դեմ տաքությունը ավելի սաստկացավ և հարկ եղավ ծառան ղրկել բժիշկը կանչելու համար։

Տիկին Թագուհիի մտատանջությունը ավելցած էր և հիվանդին անկողնին քով թիկնաթոռի մը մեջ ընկղմած, կդիտեր իր ամուսինը, որ անդադար կհևար։

Բժիշկը ներս մտավ։

— Տոքթոր... այս որչափ ուշացաք,— գոչեց տիկին Թագուհի՝ ոտքի ելլելով,— տաքությունը առտրվնե ի վեր շատ ավելցած է...

— Վերքը ինչպե՞ս է,— հարցուց բժիշկը։

— Վե՞րքը... ի՞նչ վերք,— ըսավ Թագուհի զարմացած։

Բժիշկը հանկարծ զգաց, որ սխալ մը գործած էր և թե առտուն այնպես որոշված էր, թե Ղուկաս էֆենտիի վիրավորված ըլլալը բոլորովին գաղտնի պիտի պահվեր, նույնիսկ կնոջմեն։ Բայց այլևս անկարելի էր ընկրկիլ։

— Ի՞նչ վերք, տոքթոր... մի՞թե վիրավորված է, խոսեցեք տեսնեմ,— կպնդեր տիկին Թագուհին, բժիշկը սենյակին մեկ անկյունը տարած։

Տոքթորը երկու բառով իրողությունը բացատրեց տիկնոջ, քանզի անկարելի էր ուրիշ կերպով օձիքը ազատել, հետո ավելցուց.

— Գիտեք, որ խոստացած էի այս վերքը ծածուկ պահել ձեր ամուսնույն պատիվին համար, և այժմ տանը մեջ ձենե զատ մեկը չի կա այս գաղտնիքը գիտցող, ուստի կխնդրեմ, որ դուք ալ ոչ ոքի խոսք մը ըսեք։

— Բայց մի՞թե վտանգավոր է այդ վերքը։

— Դեռ բան մը չեմ կրնար ըսել, պետք է որ այժմ կրկին քննեմ, եթե տաքութիւնը ավելցած է, լավ նշան չէ։

Այս բացատրութիւններեն ետքը, բժիշկը մոտեցաւ հիվանդին, վերքը քակեց, երկարօրեն քննեց ու մաքրելե և վրան հականեխականներ դնելե ետքը կրկին պատեց։

Մեկնած միջոցին՝ տիկին Թագուհի ետևեն գնաց և դուրսի սրահը դարձյալ հարցուփորձեց զինքը։

— Դաշույնը շատ խորը մխված է դժբախտաբար,— ըսաւ բժիշկը,— և ներքին գործարանները վնասված են... ինչ որ մոտանջութիւն կուտա ինծի, տաքութեան սաստկանալն է... տեսնենք, մինչև քանի մը օր որոշ բան մը չեմ կրնար ըսել, առայժմ վիճակը բավական վտանգավոր կգտնամ։

Տիկին Թագուհի դարձաւ հիվանդին սենեակը։ Ղուկաս էֆենտիի գլխուն եկած այս փորձանքը զինքը չէր հուզեր բնաւ, բայց սրտնեղութիւն կուտար, մանավանդ որ այս պատճառով ստիպված էր հետաձգել իր մեկնումը։

Հիմա արգահատանքի նայվածքով մը կնայեր անկողնին մեջ անշարժ երկնցած այդ մարդուն, որու կենակիցը եղած էր տարիներե ի վեր։

Բժիշկին տված բացատրութիւնները զինքը չէին լուսաբանած բոլորովին, իմացեր էր միայն, որ ամուսինը վիրավորված էր ծանրապես, բայց ի՞նչ պարագաներու տակ։

Բժիշկը այս մասին բան մը չէր ըսած, որովհետև ինքն ալ չէր գիտեր կամ գուցե չէր ուզած ըսել։

Տիկին Թագուհի կզգար, որ խնդրուն տակ աղտոտ պատմութիւն մը ծածկված էր, և ասոր համար լավագույն կհամարեր չգիտնալ։

— Բավական է մինչև հիմա իր մասին գիտցածներս ու իմացածներս,— կխորհեր,— լավագույն է, որ այս վերջին խաղքութիւնը չմնանամ։

Պահ մը Ղուկաս էֆենտի աչքերը բացաւ, ինքզինք բավական կաղդուրված զգաց և ուզեց կնոջը հետ խոսիլ։

— Թագուհի,— ըսաւ ցած ձայնով մը,— ես կուզեի, որ վիրավորված ըլլալս չիմացվի և նույնիսկ քեզե ալ գաղտուկ պիտի պահեինք, բայց անգաղտնապահութեանը պատճառով իմացար։ Արդեն դժվար պիտի ըլլար մինչև ետքը ծածկելը, բայց գոնե քեզ

զատ մարդ չիմանա... մեր ընտանեկան պատիվը այնպես կպահանջե... կհասկնա՞ս...

— Այո, այո... ընտանեկան պատիվը, գիտեմ,— պատասխանեց Թագուհի, տեսակ մը զզվանքով,— անհոգ եղիր, գաղտնիքը կպահենք և մեր ընտանեկան պատիվն ալ մաքուր կմնա։

. . . . . .

Օրերով Ղուկաս էֆենտի անկողնին մեջ պառկած մնաց, առանց բարելավութեան նշան մը ցույց տալու։ Բժիշկը ամեն օր երկու անգամ կուգար զինքը խնամելու, առանց կարենալ որոշ ապահովութիւն մը տալու։ Գիշեր մըն ալ հանկարծ վիճակը ծանրացաւ, տաքութիւնը սաստկացաւ, հարկ եղաւ երթալ բժիշկը անկողնեն հանել ու բերել։

— Վիճակը շատ գեշ է,— հայտարարեց բժիշկը,— և ես չեմ ուզեր պատասխանատվութիւն ստանձնել, հարկ է, որ մեկ քանի բժիշկներով խորհրդակցութիւն մը կատարենք։

Արդեն մի քանի անգամներ բժիշկը այդ խորհրդակցությունը պահանջած էր, սակայն Ղուկաս էֆենտի ընդդիմացած էր, չուզելով իր վերքը ուրիշներուն ալ հայտնել։

Ամենուն այնպես հավատացուցած էին, որ էֆենտին կողացավե կտառապեր, սաստիկ պաղ առած ըլլալով։ Ինք կուզեր, որ այդ սուտը երևան չելլա։ Սակայն այս անգամ ալ իր կամքը չհարցուցին, այլ անմիջապես հրավիրեցին երկու ծանոթ վիրաբույժներ։

Խորհրդակցության արդյունքը շատ աննպաստ էր, վաճառականին վիճակը հուսահատական համարվեցավ և երկու օր ետքը ուրբաթ առտու մը, ահռելի տագնապներու և զառանցանքի մեջ, Ղուկաս էֆենտի մեռավ, տասներկու ժամ ինքզինքը կորսնցնելե ետքը։

Այս մահը մեծ հուզում առաջ բերավ Բերայի բարձր դասին մեջ. հետևյալ օրը բոլոր հայ թերթերը այս բոթը գուժեցին հայ հասարակության։ Ահավասիկ այդ թերթերեն մեկեն քաղվածք մը։

«Մեծ և անդարմանելի կորուստ մը խոր սուգի մեջ կընկղմեր Բերայի բարձր դասու հայ ընտանիքները։ Կ. Պոլսո առևտրական հրապարակին վրա մեծ համբավ վայելող ծանոթ վաճառական Ղուկաս էֆենտի Կելկիթյան անագորույն մահվան ճիրաններուն զոհ գացած է երեկ առավոտ, կարճ հիվանդութենե ետքը, անմխիթար թողլով իր այրին և երկու աղջիկները, ինչպես նաև բոլոր ազգականներն ու բարեկամները։

«Մեծանուն հանգուցյալը, որ իր պարկեշտությամբը, բարձր իմացականությամբը և ուղղամտությամբը ծանոթ էր, կրցած է առևտրական հրապարակին վրա մեծ դիրքի մը տիրանալ և պատկառելի դառնալ ոչ միայն իր ազգակիցներուն, այլ նաև օտար շրջանակներու մեջ։

«Ղուկաս էֆենտի, բաց աստի, օրինակելի ամուսին մը և տիպար հայր մը եղած է և իր աղջիկներուն տված է կատարյալ դաստիարակություն մը, զանոնք մեյ մեկ չքնաղ զարդեր ընելով հայության համար։

«Իբրև պարտաճանաչ հայ, հանգուցյալը երկար տարիներ վարած է ազգային պաշտոններ, իր առատաձեռնությամբ օգնած է բարեգործական ձեռնարկներու։

«Ղուկաս էֆենտի Կելկիթյանի հուղարկավորության տխուր արարողությունը պիտի կատարվի վաղը, կիրակի առավոտ, Բերայի Ս. Երրորդության եկեղեցին»։

Կիրակի առտու ամբողջ եկեղեցին լուսավորված էր հարյուրավոր մոմերով ու կանթեղներով, ամենքն ալ սև շղարշներով պատած։

Եկեղեցիին մեջտեղը կբարձրանար մեծաշուք ընկուզենիե դագաղ մը, խոշոր պսակներու տակ ծածկված։ Ամենեն շքեղը տիկին Թաղուհիի պսակն էր՝ «իր սիրեցյալ ամուսնույն», հետո Ռոզիկի և Լևոնի կողմե պսակ մը «իրենց պաշտեցյալ հոր»-ը, Նոյեմիին պսակը «իր ամենասիրելի հոր»-ը, վերջապես պսակներ Բերայի Ազգատախնամին, Թաղ. Խորհրդի, Կալվածոց Հոգեբարձության, Եսայան վարժարանի, Ազգ. Հիվանդանոցի և ուրիշ բարեգործական հաստատություններու կողմե։

Ասկե զատ կային նաև ուրիշ շատ պսակներ, որոնց մեջ աչքի կզարներ Քերովբե էֆենտիի կողմե ղրկված փառավոր պսակը։

Որոշյալ ժամուն բազմությունն արդեն խռնված էր եկեղեցիին մեջ. «հոծ և ընտրյալ» բազմություն մը, ինչպես սովորություն է ըսել։ Բոլոր ծանոթ վաճառականները և դրամատերերը հոն էին, ինչպես նաև առևտրական հրապարակին վրա կարևոր դիրք ունեցող օտարականներ։

Հանդեսին կնախագահեր Պատրիարքը, իր շուրջը ունենալով վեց եպիսկոպոս, տասնչորս վարդապետ և երեսուներկու քահանա։

Դամբանականը խոսեցավ Ս. Պատրիարքը՝ բնաբան առնելով Ս. Դրոց սա խոսքը «Այր ըստ սրտին Աստուծո»։

Նախ՝ ներկայացուց Ղուկաս էֆենտին իր պատանեկության հասակին, ուշիմ, գործունյա, պարկեշտ, ուղղամիտ, բարոյալից ու բարեպաշտ պատանի մը, որ իր այս չքնաղ ու աստվածատուր ձիրքերուն շնորհիվ հետզհետե կհառաջադիմե ու ինքնօգնությամբ փայլուն դիրքի մը կտիրանա՝ ամենուն համակրանքն ու հարգանքը վայելելով։ Իր ուղղամտությունն ու պարկեշտությունը, որոնք առածի կարգ անցած էին, զինքը ա՛լ ավելի կբարձրացնեն հաջողության ճամփուն մեջ։

Հետո ցույց տվավ Ղուկաս էֆենտին իբրև ընտանեսեր ամուսին ու տիպար հայր մը, հայկական բնատուր բարոյականով շաղված։ «Իր մտածումը, ըսավ բեմբասացը, միշտ սևեռած էր ընտանեկան հարկին վրա, որ իրեն համար խորան մըն էր և որուն սրբությունը անկեղծ պահեց մինչև իր վերջին շունչը»։

Քերովբե էֆենտի, որ դասը կեցած էր, հուզված մտիկ կըներ իր բարեկամին ուղղված այս ներբողները, անընդհատ արցունքները կսրբեր և իր լացը արգիլելու համար, թաշկինակով քիթը կսեղմեր։

«Այն պատվական հայրը, որ այս դագաղին մեջ կհանգչի, շարունակեց նորին սրբազնությունը, երեք բանի համար միայն կապրեր, այդ երեք բաներն էին՝ «ընտանիք, պատիվ և բարոյական»։ Իր ներողամիտ ոգին այն ատեն միայն կընդվզեր, երբ ան ընտանիքի, պատիվի կամ բարոյականի դեմ արարքի մը հանդիսատես կամ ականջալուր կըլլար։ Իր առատաձեռն բարեգործությանց մեջ իսկ, տեսակ մը զանազանություն կդներ, պատիվի կամ բարոյականի անցագիրը կհարցներ իրեն դիմողներուն և երբ իմանար, որ խնդրարկուն ոևէ արատ մը կկրե ընտանիքի, պատիվի կամ բարոյականի վերաբերմամբ, անողոքաբար դուռը երեսին կգոցեր»։

Պատրիարք Հայրը տիպար վաճառականը, տիպար ամուսինը, տիպար հայրը և տիպար բարերարը ներկայացնելե ետքը անցավ տիպար ընտանեկան մարդուն։ Ղուկաս էֆենտի Կելկիթյան, ըսավ, իր բարեկամներուն և ծանոթներուն համար իմաստուն Մենտոր մը, լուսատու փարոս մը և փրկարար ուղեցույց մը եղած էր միշտ։ Իր ամենօրյա տեսակցությանց մեջ կրցած էր իրեն մոտեցողներուն միշտ պատկառանք ու ակնածություն ներշնչել և իր այս ազդեցությունը գործածած է իրեն մոտեցողները պատիվի և բարոյականի շավիղին մեջ մղելու համար։

Բավական էր իրեն հետ կարճ շփում մը ունենալ մոլորու-

թյուններն հրաժարելու և ուղղության ու առաքինության ճամփուն մեջ մտնելու համար։ Ղուկաս էֆենտի Կելկիթյան բարոյացուցիչ ոգի մըն էր, գերմարդկային ոգի մը, բարոյականության խորհրդանշանը։ Իր ամենեն սովորական խոսակցության միջոցին առիթ կգտնար ընտանեկան սրբությունը պանծացնելու և փառավորելու, պատիվի ու բարոյականի դաս տալու։

Դամբանախոս սրբազանն այն աստիճան պերճախոսաբար կպատկերացներ Ղուկաս էֆենտին, որ խեղճ Քերովբե էֆենտի, հակառակ իր թաշկինակով քիթը սեղմելուն՝ չէր կրնար հեծկլտուքը զսպել։

«Այսպես ուրեմն, ոչ ևս է Ղուկաս էֆենտին, գոչեց նորին սրբազանությունը, այդ առաքինի մարդը, ընտանեկան սրբության այդ բուրվառը, բարոյականության և պատիվի այդ երկնառաք ոգին, բարերարության այդ անմահ հրեշտակը... «Այր ըստ սրտին Աստուծո», էր նա, ինչպես էր Դավիթ արքան և երբեք իր կյանքին մեջ չգործեց արարք մը, զոր նախախնամությունը վավերացուցած չլլար։ Իր կորուստը անջնջելի պիտի մնա, իր թողած պարապը կարելի չպիտի ըլլա լեցնել։ Թող լա իր անմխիթար այրին, որ այսպիսի անզուգական ամուսին մը կկորսնցնե, թող լան իր դստերքը, որ հայրերուն պատվականագույնը չունին այլևս, թըշվառները թող իրենց պաշտպան հրեշտակը ողբան և իր բարեկամները թող հեծեն, զի ոչ ևս է իրենց խրատատու պատգամը և հայ ազգը հպմորեն թող սուգ զգենու զի իր զավակներուն ընտրելագույնն է, որ էթռչի երկինս, հավիտենական փառաց մեջ, իր առաքինի կենաց արժանավոր վարձը վայելելու, ամեն»։

Այս պերճախոս դամբանականեն ետքը կրկին մեռելական աղոթքներ կարդացվեցան, ծանր ու դանդաղ կերպով արարողությունը կարելի եղածին չափ երկարելու համար։

Վերջապես դագաղը դուրս հանվեցավ և դրվեցավ քառաձի շքեղ կառքի մը մեջ։

Ժամուն բակը, իբրև սգակիր, կեցած էին տիկ. Ծրանիկի ամուսինը և ուրիշ սևազգեստ մարդ մը, զոր ոչ ոք կճանչնար և որ նույնիսկ հանգուցյալ Ղուկաս էֆենտիի եղբայրն էր, անծանոթ մոռցված եղբայր մը, որ Քարթալի մեջ ածխավաճառ էր և որ այս մահվան առթիվ երևան ելած էր իր տեղը դրավելու համար։

Հուղարկավորները մինչև Թաքսիմ հետիոտն հետևեցան դագաղակիր կառքին, որուն ծոպերեն ալ Քերովբե էֆենտի բռնած էր։

Հետևյալ օրը, բոլոր հայ թերթերը հինգ վեց սյունակներով կպատմեին այդ արտաքո կարգի հուղարկավորությունը։ Կենսագրական ծանոթություններ տալով «մեծ բարերար»-ի մասին։

Թերթերեն ոմանք կրսեին, թե Ղուկաս էֆենտի մասնավոր կտակով մը կարևոր գումար մը ձգած էր ազգին, բայց այդ տեղեկությունը երբեք չստուգվեցավ։

Իրավցնե իր ձեռագիրներուն մեջ կտակ մը գտնվեցավ, սակայն բոլորովին անհատական հանգամանք ունեցող։ Այդ կտակով Ղուկաս էֆենտի 800 ոսկի կսահմաներ իր հողակույտին վրա դամբարան մը շինվելու պայմանով։

«Դամբարանը կարելի եղածին չափ պարզ, բայց խոշոր և հաստատուն կուզեմ որ ըլլա, կգրեր, քառակուսի ձևով, որուն ճակատին վրա անունս, մականունս և ծննդյան և մահվան թվականներս պետք է նշանակել, իսկ մյուս երեք կողմերուն ամեն մեկին վրա սա երեք բառերը կուզեմ որ քանդակվին.—«Ընտանիք, պատիվ, բարոյական»։

ՎԵՐՋԱԲԱՆ

Ղուկաս էֆենտիի եղերական մահվանե քանի մը ամիս ետքը, տիկին Թագուհի իր աղջկան հետ կմեկներ Փարիզ, վերջնականապես հոն հաստատվելու համար։ Իր քեռայրը, Ծրանիկի էրիկը, կրցած էր վերջապես Պոլսո մեջ համեստ գործ մը գտնել, բայց տիկին Թագուհի, որ բավական մեծկակ հարստություն մը ժառանգած էր, ինքն ալ իր կողմե ամսական վեց ոսկի կապած էր քրոջը, անոնց ապրուստը ապահովելու համար։

Քերովբե էֆենտի անմխիթար էր իր բարեկամը կորսնցուցած ըլլալուն համար։ Հազիվ թե անոր մտերմությունը սկսած էր շահագործել, ահա անողոք մահը եկեր էր զայն իր ձեռքեն հափշտակելու, և սակայն, մյուս կողմե, այդ մահը մաքրած էր կարգ մը փոխառություններ ու առկախ հաշիվներ, այնպես որ Քերովբե էֆենտի որոշապես չէր կրցած վճռել, թե Ղուկաս էֆենտիի մահվան վրա լա՞ւ թե ուրախանալու էր։

Տեր Միքիսա հայրը, իբրև տաներեց քահանա, զգեստավորյալ և սգակիր ներկա գտնված էր հուղարկավորության հանդեսին, հաճախ խորին հառաչանքներ արձակելով սրտեն, ինչ որ ցույց կուտար իր ծուխին վրա ունեցած ջերմ համակրանքը։

Դամբարանի շինության համար՝ տիկին Թագուհիի կողմե՝ ինք կարգված էր կտակարար և խղճի մտոք կաշխատեր իր վրա դրված պաշտոնը կատարելու։ Անմխիթար այրին փափաքած էր, որ ոտանավոր արձանագրություն մըն ալ ըլլա շիրիմին վրա և Տեր Միքիաս գրած էր հետևյալ տապանագիրը, որուն համար քսան ոսկի վճարված էր իրեն։

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՂՈՒԿԱՍ ԷՖԵՆՏԻ ԿԵԼԿԻԹՅԱՆ,
ԱՄՈՒՍԻՆ ՁՔՆԱՂ, ՀԱՅՐ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ,
ԸՆՏԱՆԻ ՀԱՐԿԻՆ ՍԻՐՈՂ ԱՆՆԸՄԱՆ,
ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԵՂԵՎ ՋԵՐՄ ՊԱՇՏՊԱՆ,
ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ ՊԱՏՎՈ ՍՐԲՈՒԹՅԱՆ,
ԱՅԼՈՅ ՕՐԻՆԱԿ ԲԱՐԵՊԱՇՏԱՒԹՅԱՆ
ԲՈԼՈՐԵՑ ԿՅԱՆՔԻ ԻՐ ՄԱՔՈՒՐ ՇՐՋԱՆ։

Աղքատախնամի իր նախկին ընկերները հաճախ կհիշեին զինքը։

— Խիստ մարդ էր, բայց սիրտը մաքուր էր...

— Բարոյական, պատիվ կըսեր, ուրիշ խոսք մտիկ չէր ըներ...

— Վարդապետ ըլլալիք մարդ էր։

— Աստված ողորմի հոգուն. անոր պես բարոյականի տեր մարդ քիչ կգտնվի։

Ահա այսպես հիշատակ մը ձգած էր մեր Ղուկաս էֆենտի Կելկիթյանը, որուն շիրիմը այսօր կբարձրանա Շիշլիի գերեզմանոցին մեջ, պարզ, բայց պատկառազդու վեհությամբ մը, իբրև Ընտանիքի, Պատիվի ու Բարոյականի անջնջելի կոթող մը։

ԹԱՂԱԿԱՆԻՆ ԿՆԻԿԸ

Վեպ պոլսահայ կյանքե

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս վեպը, ժամանակակից ազգային կյանքե քաղված, առաջին անգամ իբրև թերթոն հրատարակված է «Ժամանակ» օրաթերթի մեջ։ Հիվանդության պատճառով պահ մը ընդհատվելե ետքը, կրկին շարունակված է և երկրորդ անգամ ընդհատված է 1915 ապրիլ 11, ձերբակալություններե ետքը, երբ ստիպվեցա ամիսի մը չափ ծածկված մնալ, հետո վերստին շարունակված է մինչև բանտարկության և աքսորիս օրը և այսպես մնացած է անավարտ։

Թաղականին կնիկը մեծ հետաքրքրությամբ կարդացված է և վստահ եմ, որ ընթերցողները նույն շահեկանությամբ պիտի կարդան զայն ամբողջացած ձևին մեջ։

Վեպին մեջ նկարագրված տիպարներեն շատերը ծանոթ ազգային գործիչներ են, մեծ մասով նահատակված, ափսո՜ս, որոնց իսկությունը ուշիմ ընթերցողը շուտով պիտի կրնա գուշակել։

Ջմոռնամ ըսել, որ Թաղականին կնիկը հրապարակ կելլե խընամքով սրբագրված վիճակի մեջ։

(Առաջարան 1921 թ. հրատարակություն)
Կ. Պոլիս

Հեղինակը

Ա

Այն կիրակի առտուն Մարգար էֆենտի գիշերնոցով՝ ոտքերը բոբիկ, բազմոցին վրա երկնցած, թերթ կկարդար, ատեն-ատեն ձախ ձեռքով իր կսկլոր փորը շփելով։ Այս գործողությունը ստամոքսային ոևէ անհանգստության նշան չէր, ինչպես թերևս պիտի ենթադրե բարեմիտ ընթերցողը, այլ Մարգար էֆենտիին մեկ սիրական ունակությունը, ամեն անգամ որ գիշերնոց կկրեր։

Այդ շփումը գգվանք մըն էր իր փորին շոայլված, խանդաղատանքի ցույց մը, ինչպես հայր մը պիտի ըներ իր տղուն գլուխը շոյելով։

Ներքին լուրերու զգլխիչ հեշտություններուն մեջ թաղված էր Մարգար էֆենտին, երբ հանկարծ դուռը բացվեցավ և երիտասարդ կին մը ներս մտավ ջղագրգռված կերպարանքով մը։

Մարդը գլուխը դարձուց և զարմացական շեշտով մը հարցուց նորեկին.

— Ի՞նչ, ժամը ասանկ կանո՞ւխ վերջացավ։

— Դեռ նոր պատարագ մտան,— պատասխանեց կինը չոր կերպով։

Եվ թեթևորեն դողահար ձեռքով մը գլխարկը հանեց ու սեղանին վրա դրավ։

— Ինչո՞ւ չկեցար պատարագին, եռաձայն պիտի երգվեր...

— Եռաձայնն ալ տեղը կենա, քառաձայնն ալ,— գոչեց կինը,— բերանս բանալ մի տար։

Մարգար էֆենտի ըմբռնեց կացության լրջությունը, լրագիրը մեկ կողմ դրավ, բազմոցին վրա նստավ, սիկարեթ մը վառեց և ըսավ.

— Ի՞նչ կա նորեն...

— Բան մըն ալ չի կա։

— Բարկացած կերևաս կոր։

— Դուն իմ տեղս եղիր տե՛ մի բարկանար նայիմ։

— Ճանըմ սա եղածը պատմե՛ նայինք։

— Մեյ մըն ալ սա ժամը ոտք չպիտի դնեմ... Աղոթք ընելու տեղ մեղքի մեջ կիյնամ կոր։

Մարգար էֆենտի չպատասխանեց. հասկցավ, որ կինը ինքնաբերաբար խոսիլ պիտի սկսեր և ավելորդ էր նորանոր հարցումներով անոր զրգռությունը ավելցնել։

Արդարև երիտասարդուհին շարունակեց.

— Աժեմին չաժեմին կնկանը պատիվներ ընեն, տեղ բանան, տեղ ցուցնեն, ժամկոչը աթոռ վազցնե՝ ասդին ես ժամերով ոտքի վրա մնամ... բայց անոնք հանցանք չունին, հանցանքը քուկդ է, քեզի պես էրիկինն է... հոս նստե՛ անտարբեր, լրագիր կարդա, անդին կնիկդ խաղք ըլլա ժամուն մեջը...

— Դեռ չեմ հասկնար կոր, թե եղածը ի՞նչ է։

— Ժամ գացի, որ ասեղ ձգելիք տեղ չի կա... հրելով, հրմըշտկելով, արյուն քրտինք մտնելով, առաջ անցա... բոլոր նստարանները բռնված, տեղ չէ մնացեր, ինչ որ է, դասին ետևը ոտքի վրա կեցա։

— Վերնատուն թող ելլեիր։

— Ջամաշրճի Եղիսաբեթը չեմ, ոչ ալ խոֆած պառավ, քի վերնատունը երթամ... ինծի բարկացնելո՞ւ համար կըսես կոր ատ խոսքը։

— Չէ՛, ճանըմ, բան մըն էր ըսի, դուն խոսքդ շարունակե։

— Խաչս հանեցի, «Հայր մեր» մը ըսի, կեցեր ժամերգություն մտիկ կընեմ կոր, մեյ մըն ալ պահարանին մեջեն տերտեր մը գուրս ինկավ, «տեղ բացեք, ճամփա բացեք» պոռալով, ամենքը իրարու վրա ելլելով ճամփա բացին... տերտերին ետևեն ժամկոչը ձեռքը աթոռ մը բռնած, ժամկոչին ետևեն ալ ո՞վ ըլլա կհավնիս...

— Ո՞վ,— հարցուց Մարգար էֆենտին, առանց շահագրգռության։

— Տիկին Շազիկը... մեյեր աս բոլոր իրարանցումը իրեն համար է եղեր։ Ես ալ մեկ կողմ քաշվեցա, կարծեցի, որ առջևես պիտի անցնին, կորսվին էրթան... մեյ մըն ալ կուզե՞ս քի ժամկոչը աթոռը բերե իմ կեցած տեղս տնկե, Շազիկ օլաճախն ալ գա անոր վրա տոտորոզվի. բարկութենես արունս գլուխս ցատկեց, աչքերս խամաշմիշ եղան, բոլոր մարմինովս դողալ սկսա... տերտերին մորուքեն բռնել կ'ետտելս եկավ... ալ չկրցա կենալ, ինքզինքս ժամեն գուրս նետեցի... բակը ժամկոչը դեմս ելավ, աղվոր մը լվացի...

— Ճանըմ, տիկին Շազիկն ալ թաղականի կնիկ է, հարկավ քիչ մը ավելի պատիվ կընեն անոր, ասիկա բնական բան մըն է, այդ չափ իրարանցումի պետք չի կա...

— Թաղականի կնիկ է եղեր... անոր էրկանը պես քանի մը հատ գրագիր կբանեցնես կոր քովդ... թող այսչափ վերեն չթռչի։ Բայց նորեն կըսեմ, նորեն կըսեմ, հանցանքը քուկդ է... ո՛չ տերտերը հանցանք ունի, ո՛չ ժամկոչը, ո՛չ ալ Շազիկը։

— Անուշիկս, ես հոս նստած տեղս մա՞տս կհոտվտամ, որ հասկնամ ժամուն մեջ անցած դարձածը։

— Պարա՞պ խոսք... իմ ըսածս շատ ազեկ կհասկնաս. բայց գործիդ չի գար... դուն այսօր ուզես նե՝ թաղական չե՞ս կրնար ըլլալ, եղողները ո՞վ են որ, բաբուճդ չարժող մարդիկ... թաղին մեջ ամենեն հարուստը մենք ըլլանք, անկե ետքն ալ ասանկ խաղք ընեն մեզի... Ջատկին, Ծնունդին փարա ժողվելու կարգը գա նե, ամե-

նեն առաջ մեր տան դուռը ձեռք կառնեն... մեղք որ դիրքդ պահել, ինքզինքդ հարգել տալ չես գիտեր ու ասանկ ամենուն առջև խաղք կըլլանք։

— Ամմա դուն ալ գործը կմեծցնես։

— Պզտի՞կ բան էր եղածը, գետնե գետին անցա... ես, Սասանյան Մարգար էֆ-ին կինը, ասանկ Շազիկի մը պես փոստալի մը համար նախատինք կրեմ ժամուն մեջ, ամենուն առջև, ան չլթիկին պիտի հասկցնեմ իմ ով ըլլալս...

— Ճանըմ, ան խեղճ կնիկը ի՞նչ մեղք ունի...

— Հիմա ալ դուն ելիր Շազիկ պաշտպանե, թող ամեն բան թամամ ըլլա... անոր ինչ ըլլալը գիտե՞ս անապա... բերանս բանալ մի՛ տար։

— Պաշտպանելու մտքով չըսի,—պատասխանեց Մարգար էֆ., որ կուզեր խնդիրը անուշ տեղը կապել,— միայն թե հանցավորը ժամկոչն է, որ բերեր աթոռը քու կեցած տեղդ դրեր է։

— Ժամկոչներուն քով անգամ հարգ ու պատիվնիս չի մնաց։

— Տգետ, անկիրթ մարդիկներ են, անոցմի տարբեր բան չըսպասվիր։

— Քու տեղդ ուրիշ էրիկ մը ըլլար նե՝ գիտեր ընելիքը... բայց դու մարդ չես որ, հա՛ կնիկդ, հա՛ պեսլեմեն, քեզի համար ամենքը մեկ է։

— Ի՞նչ կուզես որ ընեմ...

— Հիչ բան մը չես կրնար նե՝ ժամկո՞չն ալ չես կրնար ճամփել տալ։

— Ասանկ պզտիկ հանցանքին համար մարդ կճամփվի՞...

— Պզտիկ հանցա՞նք... հապա ի՞նչ ընելու էր, աթոռը գլխո՞ւս իջեցնելու էր, մեծ հանցանք գործած ըլլար... քեզի հետ արդեն խոսիլը, քենե օգնություն սպասելը պարապ բան է... էօ՜ֆ, այնքան հուզվեցա, որ գլուխս ցավ մտավ...

Եվ տիկինը սեղանին վրայեն բարկությամբ գլխարկը առավ և դուրս ելավ սենյակեն։

Մարգար էֆ. կրկին երկնցավ բազմոցին վրա և սկսավ թերթը կարդալ, մինչ ատեն-ատեն ձախ ձեռքով իր փորը կշփեր։

Քառասունհինգ տարեկան, գիրուկ, թավ պեխերով մարդ մըն էր Մարգար էֆ.։ Նախնական ուսմունք մը առնելե ետքը, տասնըհինգ տարեկան հասակեն նետված էր գործի ասպարեզը, հորմեն ժառանգած փոքրիկ դրամագլխով մը։

Մահմուտ փաշա կերպասեղենի համեստ խանութ մը բացած էր և հաջողած էր հետզհետե գործը ընդարձակելու, վստահություն ներշնչելու և վարկ ունենալու, այնպես որ քսան տարվա մեջ առաջնակարգ վաճառական մը եղած էր հրապարակին վրա, երբ դեռ տարիքը հազիվ 36-ին հասած էր։

Այն ատեն խորհեցավ ամուսնանալ, մանավանդ որ ամեն կողմե փայլուն առաջարկություններ կըլլային իրեն։

— Աղեկ ընտանիքե ըլլա, գեղեցիկ ըլլա, թող օժիտ չունենա։

Այս էր Մարգար էֆ-ի սկզբունքը և այս սկզբունքին համեմատ ամուսնացավ միջակ կարողության տեր խանութպանի մը աղջկա հետ, որ արդարև գեղեցիկ էր և հազիվ 21—22 տարեկան։

Երջանիկ միություն մը եղավ այս, մանավանդ ամուսնության առաջին տարիները։

Վաճառականը գոհ էր մանկամարդ գեղանի կին մը ունենալուն և աղջիկն ալ գոհ էր հարուստ վաճառական ամուսին մը ունենալուն։

Մանչ մը և աղջիկ մը ծնած էին այս միութենեն։ Մեր պատմությունը սկսած ատեն մանչը ինը տարեկան էր և աղջիկը յոթը տարեկան։

Տիկին Սաթեն, այս էր Մարգար էֆ-ի կնոջ անունը, թաղային վարժարանե մը շրջանավարտ, միջակ իմացականություն մը ուներ։ Գորովալից մայր ու շնորհքով տանտիկին, իր այս երկու հատկություններն ալ բավ էին իր ամուսնույն համար, որ դրական ոգիի տեր, շատ բարակը չէր նայեր։ Միայն թե Սաթեն փառամոլ մըն էր ու իր այս փառամոլությունը հետզհետե կաճեր, քանի իր ամուսնույն հարստությունը կավելնար։

Չմոռնամ ըսելու, որ տիկին Սաթենի փառամոլությունը հայու կնկան տափակ ու հասարակ փառամոլությունն էր, զոհարեղեններով զարդարվիլ, սուղ լաթեր հագնիլ, մեծ տուն նստիլ, սալոնի մեջ առաջին տեղը գրաւիլ, և այլն։

Մարգար էֆ-ի նյութական վիճակը կներեր իր կնոջ այդ փառամոլության գոհացում տալու և ասոր համար իրենց ամուսնությունը երջանիկ եղած էր։ Էրիկ կնկան կռիվներ չէին ունեցած միասին, կամ պատահածները շատ աննշան բաներ էին, մանավանդ որ Մարգար էֆ. հաշտարար ու խաղաղասեր տրամադրություններով մարդ մըն էր։

Քիչ մը առաջվան միջադեպը անսովոր բան մը չէր։ Մարգար

էֆ. հաճախ տեսած էր կինը այդ ջղագրգիռ վիճակին մեջ և միշտ նմանօրինակ առիթներով։

Ամեն անգամ, որ Սաթեն եկեղեցի երթար, անպատճառ բարկանալու առիթ մը կստեղծեր, միշտ արժանապատվությունը վիրավորված զգալու պատրվակ մը կգտներ։

Մարգար էֆ. իր թերթը նոր ավարտած էր, Երբ կինը վերադարձավ շրջազգեստը փոխելե ետքը։

— Ե՛լ, հագվե՛,— գոչեց ամուսնույն,—կիրակի օրով ատանկ չկեցվիր, կարելի է հյուր մը կուգա...

Հետո՝ մեկեն իր սեռուն գաղափարին դառնալով՝ պոռաց.

— Ատ մարդուն հախեն գալու է, կհասկնա՞ս կոր, ասանկ չըկըրնար տեսել։

— Ո՞ր մարդուն,— հարցուց Մարգար էֆ. միամտորեն։

— Ժամկոչին...

— Դեռ չմոռցա՞ր, իմ մտքես էլեր էր։ Այդչափ կարևորություն տալու չէ։

— Անանկ է... խաղք եղողը դուն չես ա... կարևորություն տալու չէ... բայց երբոր ես խաղք ըլլամ՝ ինծի հետ դուն ալ խաղք կըլլաս, քանի որ քու անունդ կկրեմ։

— Երթամ հագվիմ,— ըսավ Մարգար էֆ. սենյակեն դուրս գալով։

Խոսքը կարճ կապելու ասկե լավագույն միջոցը չէր գտած։

Կես օրվան մոտ այր ու կին իրենց տան վերնագավիթը նստած էին։ Տիկինը գտած կթվեր իր հանգստությունը, և Մարգար էֆ. առտվան անախորժ միջադեպը բոլորովին մոռացության մատնելու համար իրիկվան դեմ կատարելիք պտույտի մը ծրագիրը կպարզեր։

— Բարի լույս, տիկին Սաթեն, բարի լույս, Մարգար էֆ.։

— Աստծու բարին, հրամմեցե՛ք։

— Ուշ չէ՞... կերակուրին ատենը կմոտենա կոր։

— Դեռ կերակուրի շատ ժամանակ կա։ Եկեք սանկ քիչ մը նստեցեք, մեր այս թերացան շատ զով է։

Տոսախյան Միհրանիկ էֆ. ու իր կինը՝ տիկին Նվարդն էին, որոնք եկեղեցիեն կվերադառնային։

Առանց կրկնել տալու հրավերը, իսկույն վեր ելան ու տեղավորվեցան եղեգնյա թիկնաթոռներու վրա։

— Իրա՛վ, ի՜նչ աղվոր զով է եղեր այստեղ,— ըսավ Նվարդ զվարթորեն։

— Մինչև ցերեկ հիանալի է,— պատասխանեց Սաթեն,— հետո դժբախտաբար արև կուգա... բայց այս կողմերը ի՞նչ բան ունեիք, մեզի՞ կուգայիք կոր...

— Չէ՛, միայն թե Միհրանիկ էֆ-ին ըսի որ հոսկե անցնինք, քու մասիդ տեղեկություն առնելու համար, շիտակը մտատանջության մեջ մնացի... պատարագը նոր մտած էինք, հանկարծ թողուցիր հեռացար եկեղեցիեն, գույնդ ալ մեկեն ի մեկ ավրվեցավ... արդյոք հիվա՞նդ եղավ՝ մտածեցի... ինչ որ է, կերևա որ բան մը չէ։

— Շատ գեշ կերպով ջիղերս թունդ ելան,— պատասխանեց Սաթեն,— դուն քիչ մը ետևս նստած էիր, հարկավ տեսար եղածը։

— Շիտակը բաներ մը դարձավ ամա, աղեկ մը չհասկցա։

— Տիկին Շազիկին գալը տե՝ աթոռը իմ կեցած տեղս դնել տալ ու նստիլը չտեսա՞ր...

— Մտքես անցավ, որ անոր համար մեկեն ի մեկ բարկացար. ճամփան էրկանս ալ ըսի, անանկ չէ՞, Միհրանի՛կ էֆենտի։

— Այնպե՛ս է,— հաստատեց ամուսինը։

— Իրավունք ունիս, տիկին Սաթեն, շատ իրավունք բարկանալու։ Ես ալ քու տեղդ ըլլայի՝ կբարկանայի... Թաղականի կնիկ է եղեր տեսի՝ թող այդչափ ալ վերերեն չթռչի...

— Մինակ Թաղականի կնիկ չէ, Թաղական Խորհրդի ատենապետին կնիկն է,— ճշտեց Միհրանիկ։

— Հանցանքը ժամկոչինն է, որ աթոռը բերավ հոն դրավ,— գոչեց Սաթեն, որ չափազանց գոհ էր այս խնդիրը կրկին արծարծվելուն։

— Արդեն այդ ժամկոչը ավանակին մեկն է,—վճռեց Միհրանիկ։

— Անոր աղվոր դաս մը տրվի նե՝ մարդ կըլլա։

— Հարկավ Մարգար էֆ. պետք եղածը պիտի ընե,— դիտել տվավ Նվարդ։

Մարգար էֆ. դժգոհ՝ իրեն ուղղված այս հրավերեն, ձեռքով անորոշ շարժում մը ըրավ։

— Մարգար էֆ-ին հոգն անգամ չէ, որ իր կնիկը ժամերուն մեջ խաղք ու խայտառակ ըլլա,— գոչեց Սաթեն իր աթոռին վրա բարկությամբ շարժվելով։

— Ճանը՛մ, եղածը մեծ բան մը չերևար կոր ինծի,— արդարացուց ինքզինք խեղճ ամուսինը։

— Չէ՛, Մարգար էֆ., ատանկ մի ըսեր,— բողոքեց Նվարդ,— եղածը շատ ծանր բան է... ժամուն մեջ ամենուն ալ ուշադրությունը գրավեց։

— Իրավունք ունիս բան է,— հաստատեց Միհրանիկ էֆենտին ալ։

— Դուն եթե իմ տեղս ըլլայիր, ի՞նչ պիտի ընեիր,— հարցուց Մարգար էֆ. իր բարեկամին։

— Էն առաջ, մեյ մը այդ ժամկոչը ճամփել կուտայի։

— Կեցցե՛ս,— գոչեց տիկին Սաթեն։

— Բայց ես ոչ թաղական եմ, ոչ ալ եկեղեցիին գործերուն կը խառնվիմ։

— Ի՞նչ ըսել է, էֆենտիմ, այսօրվան օրս թաղին երևելիներեն ես, ժամկոչ մը ճամփելու չա՞փ ալ ազդեցություն չես կրնար ունենալ... գնա՛, թաղականները գտի՛ր, եղածը պատմե՛, ոտք կոխե ու ժամկոչը անմիջապես ճամփել տուր... Հեմ տաքը տաքին ընելու է, որ աղվոր դաս մը ըլլա։

— Եթե այդ ժամկոչը հոս մնա՝ ես այս թաղեն կելլեմ,— գոչեց Սաթեն դողահար ձայնով մը,— ալ ի՞նչ երեսով փողոց պիտի ելլեմ պտտիմ...

— Խենթ խոսքեր մի ըներ,— ըսավ ամուսինը,— ժամկոչի մը համար թաղերնի՞ս պիտի փոխենք, տուներնիս տեղերնի՞ս պիտի ձգենք։

— Խենթը խելոքը աս է...

— Մի հուզվիք, տիկին,— միջամտեց Միհրանիկ,— Մարգար էֆ. կկարգադրե։

— Անոր մնա նե, բան մըն ալ չըներ։

— Միհրանիկ էֆենտի, միասին երթաք թաղականներուն խոսիք նե՝ չըլլա՞ր,— առաջարկեց Նվարդ։

— Հարկավ կըլլա, ես պատրաստ եմ անմիջապես երթալու,— պատասխանեց ամուսինը։

— Ճիշտ ատենն է, դեռ թաղականները ժամը ըլլալու են, գացեք, Եկեք, մենք հոս ձեզի կսպասենք։

— Ճաշը միասին կընենք,— ըսավ Սաթեն,— որ չափազանց զոհ էր այս կարգադրութենեն։

— Ե՛լ էրթանք,— ըսավ Միհրանիկ իր բարեկամին։

Մարգար էֆ. դժգոհ, սրտնեղած ոտքի ելավ և հետևեցավ մյուսին։

Եկեղեցին շատ հեռու չէր, և երկու բարեկամները տասը վայրկյան հետո մտան խորհրդարանը, ուր մի քանի թաղականներ՝ ավագերեցին հետ՝ պնակներու և գանձանակի հաշիվները կկարգադրեին։

Բարետուքի արարողություններեն ետքը, Միհրանիկ հարցուց.

— Պողոս էֆ-ն ո՞ւր է...

Պողոս էֆ. Թաղ. խորհրդի ատենապետն էր, տիկին Շազիկի ամուսինը։

— Հոս էր քիչ մը առաջ։ Տիկնոջը հետ մեկնեցավ,— պատասխանեց ավագերեցը,— անպատճառ կուզեի՞ք տեսնել զինքը։

— Չէ՛, մեր ըսելիքը ձեզի ալ կրնանք ըսել,— պատասխանեց Միհրանիկ։

— Հրամա՞ն մը ունիք։

— Քավ լիցի, Մարգար էֆենտին բողոք մը ունի...

Թաղականները երկյուղախառն զարմացումի շարժում մը ըրին։ Մարգար էֆ. թաղին ջոջերեն էր, հարուստ վաճառական։ Իր բողոքը ծանրակշիռ բան մը ըլլալու էր անշուշտ։

— Մարգար էֆենտի, արդյոք ի՞նչ եղած է որ,— հարցուց թաղականներեն մին, շփոթած կերպարանքով մը։

— Եղածը մեծ բան մը չէ, բայց շատ անվայել է,— ըսավ վաճառականը։

— Կաղաչեմ, խնդիրը բացատրեցեք։

— Էֆենտիմ,— միջամտեց Միհրանիկ,— Մարգար էֆ-ի տիկինը այս առտու եկեղեցի կուգա...

Եվ մանրամասնորեն պատմեց ամբողջ իրողությունը, որ ծանոթ է արդեն մեզի։

Երբ պատմությունը ավարտեց, թաղականներեն մին հուզված ձայնով մը ըսավ.

— Ցավալի բան, շատ ցավալի, իրավունք ունիք բարկանալու, բողոքելու։

— Բոլոր հանցանքը ժամկոչինն է,— գոչեց ուրիշ թաղական մը։

— Անկիրթ ավանակին մեկն է...

— Ապուշը այսչափ ժամանակ հոս է, դեռ մարդիկը չճանչնար։

— Տե՛ր հայր, այս մարդը ո՞ւրկե մեր գլուխը հանեցիր,— գոչեց ուրիշ թաղական մը ավագերեցին դառնալով։

— Էֆենտիս, այդ մարդը ես չբերի, Պողոս էֆ-ին հանձնարարությամբ առնվեցավ,— պատասխանեց ավագերեցը։

— Հիմա խնդիրը այդ չէ,— միջամտեց Միհրանիկ,— մենք եկած ենք պահանջելու, որ այդ ժամկոչը պատժվի։

— Ատիկա մեր պարտականությունն է,— ըսավ Թաղականներեն մին,— բնականաբար իրեն խիստ պատիժ մը պիտի տանք։

— Մեկ ամսականը կտրելու վար դնելու է,— առաջարկեց ուրիշ մը։

— Ամենեն կարճ ճամփան՝ կվոնտենք կերթա։ Արդեն իրմե ալ շատ գոհ չենք, առաջին անգամը չէ, որ իրեն մասին բողոքներ կըլլան կոր...

— Այո՛, ես ալ կպահանջեմ, որ այդ մարդը անմիջապես ճամփըվի,— գոչեց Մարգար էֆ.։

— Ծո՛, սա Վարդան աղբարը հոս կանչե,— գոչեց Թաղականներեն մին, խոսքը ուղղելով դուրսը կեցող տիրացուի մը։

Տղան վազելով հեռացավ։

Վայրկյան մը Ետքը Վարդան մտավ խորհրդարանեն ներս և խոնարհաբար բարև մը տալե ետքը, երկու ձեռքը փորի վրա, գլուխը կախ, կեցավ։ Հետո երկյուղածորեն աչք մը պտտցուց ներկաներուն վրա, տեսավ անոնց անժպիտ ու դաժան դեմքերը և զգաց, թե փոթորիկ մը կպատրաստվեր իր գլխուն։

— Ծո՛, ասօր ի՞նչ ես ըրեր,— պայթեցավ հանկարծ Թաղականներեն մեկուն ձայնը։

— Ի՞նչ եմ ըրեր, աղա՛,— հարցուց Վարդան սարսափահար...

— Ծո՛, դուն մարդ չպիտի՞ ըլլաս, ասանկ է՞շ պիտի մնաս։

— Աղա՛, ի՞նչ է հանցանքս,— կմկմաց ժամկոչը։

— Էֆենտի, թողեք ես հարցուփորձեմ,— միջամտեց ավագերեցը և հետո Վարդանին դառնալով՝ հարցուց.

— Այս առտու տիկին Շազիկին աթոռ դո՞ւն տարիր։

— Հրամանք է, տե՛ր հայր։

— Չտեսա՞ր թե աթոռը ուր կդնես կոր։

— Տեսա...

— Ո՞վ կեցեր էր հոն։

— Սաթին հանըմը կեցեր էր...

— Կտեսնե՞ք, չճանչնալով չէ ըրեր,— դիտել տվավ Միհրանիկ։

— Ծո՛, ավանա՛կ, ուրիշ տեղ չկա՞ր աթոռը դնելու և գացիր տիկին Սաթենին կեցած տեղը դրիր։

— Աղա՛, ես ի՞նչ հանցանք ունիմ, տիկին Շազիկ ըսավ, որ այնտեղ դնեմ։

— Ա՞ն մի ըսավ...

— Հրամանք է...

— Հիշ տիկին Շազիկը անանկ բան կըսե՞... սուտ կխոսիս կոր, անամո՛թ...

— Խաչ վկա, որ տիկին Շազիկ ըսավ,— պնդեց Վարդան հաստատ շեշտով մը։

— Դո՛ւրս կորսվե սրտեղեն,— գոչեց Թաղականներեն մին, ոտքի ելլելով։

— Աղա՛, ես...— կմկմաց խեղճ ժամկոչը։

— Դո՛ւրս, կըսեմ կոր քեզի,— պոռաց մյուսը ձայնը ավելի բարձրացնելով ու թող չտալով, որ հանցավորը նոր բացատրություններ տա։

Վարդան՝ շփոթված շլմորած՝ ետ-ետ նահանջեց ու դուրս ելավ խորհրդարանեն։

— Անկի՛րթ, անամո՛թ, հեռացո՛ւք, ավանա՛կ...—շարունակեց Թաղականը, մինչ արդեն այն՝ որուն ուղղված էին այդ փաղաքշական խոսքերը՝ աներևույթ եղած էր։

Հետո դառնալով Մարգար էֆ-ին, որուն դեմքը հաղթականորեն կճառագայթեր, ըսավ.

— Մեր կողմե ներում խնդրեցեք տիկինեն այս եղած անպատեհության համար և ըսեք, որ վաղը առտըվնե այդ ժամկոչը ճամփված է։

— Շնորհակա՛լ եմ,— պատասխանեց Մարգար էֆ. ոտքի ելլելով։

Եվ երկու բարեկամները մեկնեցան, տուն վերադառնալու համար։

— Կտեսնա՞ս,— ըսավ ճամփան Միհրանիկ իր բարեկամին,— ժամկոչը բնավ հանցանք չունի, տիկին Շազիկը ըսեր է, որ աթոռը հոն դնե, խեղճ մարդն ալ հնազանդեր է։

— Կխնդրեմ այդ կետը բնավ մի ըսեր կնոջս, նորանոր խնդիրներ կծագին,— պատասխանեց Մարգար էֆ., ժամկոչը թող ճամփեն, խնդիրը գոցվի։

— Իրավունք ունիս, տիկին Սաթենին բան մը ըսելու չէ...

Երբ տուն հասան, նոր դեպք մը կրկին հուզումի մատնած էր Մարգար էֆ-ի կինը։

Նվարդ քանի մը բառով պատմեց եղելությունը։

Հազիվ իրենք եկեղեցի Ելթալու համար ճամփա ելած էին՝ ահա Պողոս էֆ. և տիկին Շազիկ իրենց տան առջևեն անցնելով կանգ առեր են։

— Տիկին Սաթեն, ինչո՞ւ այսօր ժամեն շուտ մը փախաք,— հարցուցեր է Շազիկ։

— Անհանգիստ եղա,— պատասխաներ էր մյուսը։

— Այո՛, ոտքի վրա մնացեր էիք,— պատասխաներ է Շազիկ,— ինծի ըսեյիք նե՝ ձեզի աթոռ մը բերել կուտայի...։

Այս վերջին բառերը հորդեցուցեր են արդեն լեցուն բաժակը, և տիկին Սաթեն քանի մը կծու ակնարկություններ ըրեր է և ի վերջո Պողոս էֆ. և իր կինը ճամփանին շարունակեր են սրտնեղած։

— Դիտմամբ մենե անցան, որ այս խոսքերը ընե չլթիկը,— ըսավ Սաթեն բարկաճայթ,— իս պզտիկ ձգելու համար... բայց թող առնելիքը ըլլա։

— Մենք արդեն ամեն բան կարգադրեցինք,— պատասխանեց Միհրանիկ։

— Ի՞նչ ըրիք...

— Թաղականները տեսանք, խոսեցանք, ժամկոչը կանչել տըվինք, աղեկ մը լվացինք...

— Ի՞նչ կելլա ատկե,— գոչեց տիկինը դժգոհ կերպով։

— Վաղն առտու ալ պիտի ճամփեն,— ավելցուց Մարգար էֆ.— ալ ի՞նչ կուզես, մարդը չէինք կրնար կամուրջին գլուխը կախել տալ։

— Հարկավ, մենք չըսած՝ իրենք որոշում տվին։

Ժամկոչ Վարդանի ճամփվելու պարագան բավական մեծ և բարերար ազդեցություն մը ըրավ տիկին Սասանյանի վրա։ Իր վիրավորված արժանապատվության համար ատիկա ամոքիչ սպեղանի մը նկատեց, բայց վերքը կկոտտար կոր տակավին։

— Թող ճամփվի, անոթի մնա, որ պոյը տեսնա,— մոլտաց քթին տակեն։

Հետո ամենքը միասին սեղան նստան։

Բ

Երեք թաղականները իրենց գործը ավարտելե ետքը մեկնեցան խորհրդարանեն։

— Երթանք տեղ մը նստինք բան մը խմենք,— առաջարկեց իրենցմե մին, երբ փողոց ելան։

— Ատենը ուշ է,— դիտել տվավ ուրիշ մը, իր ժամացույցը նայելով,— կեսօր եղել է, տունը կսպասեն, մանավանդ որ հյուր ալ ունինք։

— Եթե հյուր ունիս, ատոր ըսելիք չկա, ուրեմն մենք երկուքս կերթանք, չըլլա՞ր, Ռափի՛կ աղա։

Այն, որուն Ռափիկ աղա անունը տված էր իր ընկերը, հիսուն տարեկանի մոտ, գիրուկ, թավ պեխերով ու խոշոր կլոր քիթով անձ մըն էր։ Ոսկերիչ էր և համեստ դիրքի տեր։

Երկու թաղականները իրենց ընկերեն բաժնվելով՝ ճամփանին շարունակեցին, և շուկային մեջ գտնված մեծ ֆազիոն մը մտան, ուր արդեն հավաքված էին թաղեցիները իրենց կիրակնօրյա հանգիստը վայելելու համար։

— Մանո՛ւկ աղա, սանկ անկյունը նստի՞նք։ Սեղանը պարապ է,— առաջարկեց Ռափիկ իր ընկերոջ։

— Աղեկ կըլլա։

Մանուկ աղա ավելի երիտասարդ քան Ռափիկ, հազիվ քառասուն տարեկան, չոր, երկայնահասակ ու ջղուտ մարդ մըն էր, որ կորովի նկարագրի տեր կկարծվեր։

— Մեզի շիշ մը տյուղ բեր,— հրամայեց Ռափիկ իր հրամանները ընդունելու եկող սպասավորին,— բայց մեզեները տաք ըլլան։

Հետո իր ընկերոջ դառնալով՝ ըսավ.

— Սա ժամկոչին խնդիրը իս կնեղացնե կոր... Ո՞ւրկե մեջտեղ ելավ։

— Նեղանալիք բան մը չկա, վաղը առտու կերթանք հաշիվը կտեսնանք, 55 ղուրուշ առնելիք ունի՝ կուտանք ու կճամփենք, պըրծավ գնաց,— պատասխանեց Մանուկ վճռաբար։

— Աղե՛կ, բայց մարդը հանցավոր չերևար կոր։

— Հանցավոր ըլլա, չըլլա, չենք կրնար Մարգար էֆ-ի պես մեկուն խաթրը կոտրել ժամկոչի մը համար։

— Ասկե զատ՝ ուրիշ խնդիր մըն ալ կա։

— Ի՞նչ խնդիր։

— Եթե Պողոս էֆ-ն իմանա ու դիտողություն ընե... չի լսեցի՞ր, ավագերեցը ըսավ, որ անոր հրամանով առնվեր է Վարդանը։

— Պողոս էֆ-ն եթե իմանա, որ Սասանյան էֆ-ին դիմումին վրա ժամկոչը ճամփեր ենք, բնավ դիտողություն չըներ։

— Վերջապես ինքն ալ Թաղական Խորհրդին ատենապետն է, պետք է որ նախապես գիտնա մեր տված որոշումը։

— Էյ, ինչպե՞ս ընենք։

— Ինծի մնա նե՝ իրիկվան դեմ կերթանք Պողոս էֆենտիին խնդիրը կբացատրենք, իր հավանությունը կառնենք, անկե ետքը ինչ որ պիտի ընենք, կընենք։

— Ես վստահ եմ, որ անիկա չպիտի հակառակի, քանի որ Մարգար էֆ-ն կա խնդրին մեջ։

— Մենք գործը օրինավոր կտեսնենք, ավելի լավ չըլլա՞ր։

Մանուկ աղա համոզվեցավ այս բանավոր առարկության և որոշեցին կեսօրեն ետքը ժամադիր ըլլալ և երթալ իրենց ատենապետը տեսնել, իրերու կացությունը պարզելու համար։

Ռափիկ աղա այնքան լավատես չէր, որքան Մանուկ աղան, Պողոս էֆ-ի բռնելիք դիրքի մասին. Կկասկածեր, որ ընդդիմության մը պիտի բաղխեին և ատոլ կացությունը ծանրակշիռ հանգամանք մը պիտի ստանար։

— Մենք,— դիտել տվավ պաշտոնակցին,— անմիջապես հանձնառություն ստանձնելու չէինք վաղը առտու Վարդան աղբարը ճամփելու համար։

— Ուրիշ ճար չկար,— պատասխանեց Մանուկ կտրուկ կերպով։— Ես ժամկոչի մը համար չեմ ուզեր Մարգար էֆ-ին ու Միհրանիկ էֆ-ին հետ գեշ մարդ ըլլալ, հետևարար լավագույն է խոսակցությունը ուրիշ նյութի վրա բերել։

— Այս առտուն թերթերը կարդացի՞ր,— հարցուց։

— Աչքե անցուցի,— պատասխանեց Մանուկ՝ օդիի դավաթը պարպելով։

— Նոր բան մը կա՞։

— Վարչությունը նոր պատվիրակ մը պիտի ղրկե եղեր Երուսաղեմ և...

— Ճանը՛մ, վազ անցիր սա Երուսաղեմին խնդրեն, ալ համը փախավ,— գոչեց Ռափիկ,— քաղաքական բան մը կա՞, ան նայինք...

— Ինկիլիզը նորեն ֆյուլան մը ճազըբ կընե կոր ամմա, նայինք որո՞ւն գլուխը պիտի անցնե։

Ինկիլիզին անունը լսելուն պես Ռափիկ աղային դեմքը ճառագայթեց, ոգևորվեցավ։

Ինկիլիզը իր սիրական կուռքն էր, իր պաշտամունքին միակ առարկան։ Ինկիլիզը ինչ ըսե նե՝ ան կըլլա, կպատգամեր, ամեն անգամ, որ քաղաքական կնճռոտ կացության մը առթիվ խոսք բացվեր։ Ոսկերիչներու շուկային քաղաքական երկու մեծ բաժանումներուն — ինկիլիզյան և մոսկոֆյան — առաջնույն պարագլուխներեն մեկն էր Ռափիկ աղա, և այս պատճառով հաճախ բուռն վիճաբանություններ կունենար մոսկոֆյաններուն հետ։

— Էյ, ի՞նչ է եղեր, պատմե՛ նայինք,— հարցուց հետաքրքիր իր բարեկամին։

— Սըր Էտուարտ Կրեյ հայտարարեր է, որ եթե Մերձավոր Արևելքի արդի կացության մեջ փոփոխություններ մտցնելու հարկը շեշտվի և արտաքին միջամտություններ ի հայտ գան՝ Անգլիա հավատարիմ իր դարավոր քաղաքականության, իր ուղղությունը պիտի որոշե դեպքերու առնելիք հավանական ընթացքին համապատասխան կերպով։

Ռափիկ աղա հակառակ Սըր Էտուարտ Կրեյի մասին ունեցած անսահման սքանչացումին, չկրցավ որոշակի ըմբռնել հայտարարության իմաստը։

— Սա լրագիրը քո՞վդ է նե՝ ինծի տուր,— ըսավ Մանուկ աղային, որ փութաց բարեկամին խնդիրքը կատարելու։

— Շունչանորդին անանկ լաստիկլի խոսք մը ըրեր է որ,— ըսավ,— մեջեն չելլվիր կոր։

— Ես ալ աղեկ մը չկրցա հասկնալ,— խոստովանեցավ Մանուկ աղա։

— Քար մը կա, ամմա որո՞ւն է...

Եվ Ռափիկ աղա մխրճվեցավ քաղաքականության խորը և իջավ մինչև Խրիմի պատերազմը։

— Ա՛լ երթանք,— ընդմիջեց Մանուկ աղա, ոտքի ելլելով,— ժամը մեկն է...

— Վա՞յ, այդչափ եղե՞ր է։

Երկու թաղականները ժամադիր ըլլալով՝ իրիկվան դեմ կրկին միացան ու գացին Պողոս էֆ-ին բնակարանը, առտվան միջադեպը բացատրելու։

Թաղական խորհրդի ատենապետը կպատրաստվեր կնոջը հետ պտույտի երթալու, այսուհանդերձ հյուրերը ընդունեց, մանավանդ, որ այս վերջինները հայտարարեցին թե՝ քանի մը վայրկյան պիտի մնային։

— Վաղը առտու ժամկոչ Վարդանը պիտի ճամփենք,— ըսավ Մանուկ աղա։

— Ինչո՞ւ, ի՞նչ կա որ,— հարցուց ատենապետը։

— Ատանկ պետք եղավ... քու մեկնելեդ ետքը Սասանյան

էֆենտին ու Միհրանիկ էֆ-ին եկան, և իրեն դեմ բողոքներ ըրին։

— Բայց խնդիրն ի՞նչ է...

Մանուկ էֆ. մանրամասնորեն պատմեց առտվան այցելությունը։

Պողոս էֆ. ինքն ալ գայթակղեցավ պատահածին համար, մանավանդ շատ ցավ զգաց, որ անուղղակի կերպով վշտացուցած էին Մարգար էֆ-ին։ Ատանկ հարուստ և հրապարակին վրա կարևոր դիրք մը գրավող անձ մը վշտացնել արդարև աններելի էր։

— Իրավունք ունիք,— ըսավ,— անմիջապես ճամփելու է այդ ժամկոչը և Մարգար էֆ-են ալ ներում խնդրելու է եղածին համար։

— Մենք արդեն ներում խնդրեցինք։

— Ես ալ պետք է զինքը տեսնեմ ու ներում խնդրեմ։

— Աղեկ կըլլա... ուրեմն այսպես որոշում տրվեցավ։ Ես արդեն վստահ էի, որ դուն ալ Վարդանի ճամփվելուն չպիտի հակառակիր, այսուհանդերձ չուզեցինք առանց քու գիտությանդ բան մը ընել... ուրեմն ձեր պտույտին արգելքը չըլլանք, մնաք բարով։

Շազիկ, որ մինչև այն ատեն լուռ ունկնդիր եղած էր այս խոսակցության, հանկարծ ոտքի ելավ ու իր ամուսնույն դառնալով, գոչեց.

— Ժամկոչը տեղ մըն ալ չպիտի երթա, հո՞ն պիտի մնա...

— Ինչո՞ւ համար,— հարցուց Պողոս էֆ.։

— Որովհետև ինք բնավ հանցանք չունի, ես ըսի, որ աթոռը հոն դնե ու ան ալ հնազանդեցավ։

— Ճիշտ ինքն ալ այնպես պատմեց,— ըսավ Ռափիկ աղա, որ մինչև այն ատեն խոսքի չէր խառնված,— բայց Մանուկ աղան քաշվեցավ ըսելու։

— Քաշվելու բան չկա,— պատասխանեց Շազիկ,— ճշմարտությունը այս է...

— Ինչ որ է, հիմա այդ խնդիրը մեջտեղ չհանենք, խնդիրը ավելի կմեծնա,— դիտել տվավ Պողոս էֆ.,— Վարդանը կճամփենք, գործը անուշ տեղ կկապենք։

— Իս ալ խաղք ու խայտառակ մեջտեղ կձգեք,— պոռաց Շազիկ բարկությենեն կաս-կարմիր կտրած։

— Դուն ինչո՞ւ իրար կանցնիս, քեզի համար ի՞նչ կա,— ըսավ Պողոս էֆ.։

— Ի՞նչ ըսել է, անոնց այդ բողոքները իս պզտիկ ձգելու համար է... կերևա թե հանըմը բարկացեր է, որ ինք ոտքի վրա մը-

նացեր ու ես աթոռի վրա նստեր եմ... Թաղ այդչափ խուռուբուռ չըլլա, անոր երիկը հարուստ վաճառական է նե՝ իմ երիկս ալ այստեղի Թաղ. խորհրդին ատենապետն է, հարկավ ժամուն մեջ ինձ՝ ավելի պատիվ պիտի ընեն...

— Ճանը՛մ, դուն ալ ինչո՞ւ համար աթոռդ ճիշտ անոր կեցած տեղը դնել տվեր ես։

— Քեյֆս ուր ուզե նե՝ հոնտեղ դնել կուտամ, ո՞վ կրնա խանըվիլ...

— Պարապ տեղը ասանկ խնդիրներ հանեցիր մեջտեղ....

— Խնդիրի բան չկա, դուք եք, որ կարևորություն կուտաք կոր։

— Ինչ որ է, կա՛րճ կապենք,— գոչեց Պողոս էֆ. գրգռված կերպարանքով մը,— վաղը հաշիվը տեսեք, ճամփեցեք այդ ժամկոչը։

— Կմոռնաս, որ Վարդան աղբարը դուն ձեռքով բերիր եկեղեցին դրիր,— ըսավ Շազիկ։

— Ի՞նչ ընեմ, դուն գլխուս փաթթեցիր այդ մարդը։

— Վարդանը իմ ոչ աղբարս է և ոչ ալ ազգականս, եկավ աղաչեց, ոտքերս ինկավ, ես ալ բարիք մը ընելու համար քեզի ըսի, որ եկեղեցին ժամկոչ ըրե, քանի որ այն ատեն հին ժամկոչն ալ հայրենիք գացած էր... խեղճ մարդը շատ շնորհքով իր գործը կըտեսնա կոր... տիկին Սաթենը եթե մեր ժամեն գոհ չէ՝ թող ուրիշ ժամ մը երթա, ժամուն խբբլբխը չկա յա...

Պողոս էֆ. տեսավ, որ վիճաբանությունը շատ պիտի երկարի, ուստի իր պաշտոնակիցներուն դարձավ և ըսավ.

— Դուք վաղը առտու խորհրդարան գտնվեցեք, ես ալ կու գամ ու խնդիրը կկարգադրենք։

Թաղականները մեկնեցան։

Ալ անկե ետքը տիկին Շազիկի սեռեռուն գաղափարը եղավ ժամկոչ Վարդանին խնդիրը։

Պտույտի միջոցին, իրիկվան կերակուրին, կերակուրեն ետքը, անկողնին մեջ, հետևյալ առտու կանուխ, վերջապես անընդհատ իր ամուսնուն գլուխը տարավ։ Հետզհետե ժամկոչին ճամփվիլը ահագին համեմատություններ կառներ իր աչքին։ Իրեն այնպես կթվեր, որ բոլոր թաղին մեջ խաղք ու խայտառակ պիտի ըլլար, թե իր Թաղ. խորհրդի ատենապետի կնոջ դիրքը պիտի կործաներ և ինչ որ ամենեն սարսափելին էր, ծաղր ու ծանակ պիտի ըլլար տիկին Սաթենի առջև։

Իզուր ամուսինը կջանար համոզել, թե ժամկոչին արտաքսու-

մը ոչ կերպով չէր կրնար արատավորել զինքը և թե մյուս կողմե իր անձնական շահերը կպահանջեն չվշտացնել Մարգար էֆ-ին պես մեկը, որ առևտրական հրապարակին վրա կարևոր դիրք մը կգրաւ էր։

Տիկին Շազիկ անդրդվելի կմնար իր համառության մեջ ու տեղի չէր տար ամուսնույն պատճառաբանություններուն։

Առտուն մինչև Պողոս էֆ. կհագվեր նախ եկեղեցի ու ապա գործին երթալու համար, կինը կհամոզեր զայն, որպեսզի ժամկոչ Վարդանին ճամփել չտա։

— Չըլլար, էֆենտիմ, չըլլար, գոնե քիչ ժամանակի համար հեռացնելու ենք ժամեն...

— Եթե իմանամ, որ ճամփեր եք, կձգեմ մորս տունը կերթամ։ Ալ մեյ մըն ալ ոտքս այստեղ չեմ դներ,— գոչեց Շազիկ զրգռուած ծայրագույն աստիճանին հասած։

— Չըլլա նե՝ Վարդանը ղրկենք, թող երթա ներում խնդրե տիկին Սաթենեն,— ըսավ Պողոս էֆ. իբրև խնդիրը անուշությամբ վերջացնելու միջոց մը։

Բայց այդ ալ անընդունելի դատվեցավ կնոջը կողմեն։

— Վարդանը իմ հրամանովս աթոռը հոն դրավ, ուստի պետք չունի ներում խնդրելու, եթե ներում խնդրե՝ իր բերնով ես ներում խնդրած պիտի ըլլամ... կմեռնիմ, ատանկ բան մը չեմ ըներ։

— Ճանը՛մ, սա քուկին խոսքդ վերցուր մեջտեղեն, մի ըսեր, որ հրամանովդ ըրեր է, ուրիշն ալ կիմանա ու ետքը անոնց ականջը կհասնի...

— Թող հասնի, ի՞նչ կըլլա եղեր... կկարծես որ այդ ԱԹիկեն կվախնա՞մ... քեզի պես։

Վիճաբանությունը շարունակվեցավ այսպես, մինչև որ տիկին Շազիկ հուզումեն, ջղագրգռութենեն սկսավ լալ։

Պողոս էֆ. ջանաց հանգստացնել զայն ողոքիչ խոսքերով, անորոշ հանձնառություններով ու խոստումներով։ Կինը լացը դադարեցուց և վճռական շեշտով մը ըսավ.

— Հիմա պիտի հագվիմ ու եռևեղ ժամ պիտի գամ և եթե տեսնեմ, որ Վարդան աղբարը ճամփվեր է, գպրոց պիտի հանդիպիմ, աղջիկս առնեմ ու մոբս տունը պիտի երթամ... ա՛լ ինչ կուզես նե՝ ան ըրե։

Եվ տիկին Շազիկ շառաչմամբ դուռը գոցելով, գուրս ելավ ննյակեն։

— Խենթ խոսքեր,— մռլտաց ամուսինը քթին տակեն, նեղացած կերպարանքով մը։

Քանի մը վայրկյան ետքը Պողոս էֆ. տունեն կմեկներ եկեղեցի։

Ժամկոչի այս խնդիրը չափազանց կնեղացներ զինքը։ Անշուշտ եթե կնոջը ընդդիմությունը չըլլար, շատ դյուրավ խնդիրը կգոցվեր Վարդանը ճամփելով. բայց ահա հիմա այդ տեսակ կարգադրություն մը ամբողջ իր ընտանեկան հարկին խաղաղությունը պիտի վրդովեր։ Պողոս էֆ. գիտեր իր կնոջ համառ բնությունը և այս բանն էր, որ երկյուղ կպատճառեր իրեն։ «Եթե ճամփենք ալ տարին տասներկու ամիս Վարդան աղբոր խոսքը պիտի լսենք տանը մեջ», կմտմտար փողոցը քալած միջոցին։

Պողոս էֆ. շատ կարևորություն չէր տար Շազիկի՝ մորը տունը երթալու սպառնալիքին և կղզար, թե պարզապես պլըֆ մըն էր ատիկա, բայց կերևակայեր այն տեսարանները, որոնք պիտի պարզվեին Վարդան աղբոր ճամփվելեն ետքը իր և կնոջ միջև և այդ հեռապատկերը կսարսափեցներ զինքը։

Հոգեկան այս խռովքներուն մեջ Պողոս էֆ. մտավ խորհրդարան, ուր արդեն իրեն կսպասեին Մանուկ և Ռափիկ աղաները։

— Արդյոք ո՞ւշ մնացի,— ըսավ ինքզինք չքմեղացնելու ձևով մը։

— Չէ՛,— փութաց պատասխանել Ռափիկ աղա,— մենք ալ հիմա եկանք։

Մանուկ ժամացույցը նայեցավ ու ըսավ.

— Ատենը ուշ է, ամենքս ալ մեր գբաղմունքները ունինք, շուտով մը սա գործը լմնցնենք ու երթանք... Վարդանին հաշիվը նայեցանք, 55 դրշ. առնելիք ունի եղեր, դրամը տանք ու ճամփենք։

Պողոս էֆ. մտածկոտ՝ չպատասխանեց։

— Կանչե՞նք Վարդանը,— հարցուց Մանուկ։

— Կեցի՛ր, նախ խորհրդակցինք,— ըսավ Պողոս էֆ.,— աճապարանքով գործ չտեսնենք...

— Կարծեմ խորհրդակցությունը էրեկվընե կատարեցինք։

— Այո՛, բայց մեր մյուս ընկերներուն կարծիքը չառնվեցավ,— գիտել տվավ Պողոս էֆենտի։

— Ի՞նչ հարկ, Պողոս էֆ., թաղական խորհուրդը արդեն հինգ անգամներե կբաղկանա, քանի որ երկուքը հրաժարած են, հետևաբար մեր երեքին տված որոշումը մեծամասնության որոշումն է։

— Այնպես է, բայց... թերես հետո մեր ընկերները դիտողություն կընեն։

— Իրավունք չունին։

— Անշուշտ, իրավունք չունին, բայց ինչո՞ւ հետո խոսքի տեղի տանք, մեյ մըն ալ իրենց կարծիքն ալ առնենք։

— Գոնե էրեկ ընեիք այդ դիտողությունը, որպեսզի կարենային իրենց իմաց տալ։

— Երեկ չմտածեցի։

— Հիմա ապահովաբար տունը չեն, գործի գացած ըլլալու են...

— Վնաս չունի, թող քանի մը օր ետ մնա,— ըսավ Պողոս էֆենտի։

— Բայց ի՞նչ կըսեք, խոսք տվինք Մարգար էֆ-ին... անոր քովը պղտի՞կ մնանք։

— Ես այսօր Մարգար էֆ-ին կտեսնամ, հետը կխոսիմ, դուք հոգ մի՛ ընեք։

Մանուկ աղա հասկցավ, որ ավելորդ էր ավելի երկար ընդդիմանալ։

— Քու կարծիքդ ի՞նչ է,— հարցուց Ռափիկ աղային։

— Կարծես Պողոս էֆ. իրավունք ունի,— պատասխանեց ոսկերիչը։

— Ուրեմն թող անոր ըսածը ըլլա։

Պողոս էֆ. իր զբաղմունքները պատրվակելով հեռացավ խորհրդարանեն։ Երբ փողոց ելավ, լայնկեկ շունչ մը առավ, կարծես ծանր բեռ մը ազատված ըլլար։ Անմիջական վտանգը անցուցած էր։

Իսկ Մանուկ աղա շատ դժգոհ մնաց իր ատենապետին բռնած ընթացքեն։

— Տեսա՞ր մի հիմա եղածը,— գոչեց Ռափիկ աղային,— ի՞նչ պատասխան պիտի տանք Մարգար էֆ-ին...

— Բայց Պողոս էֆ-ն ալ քիչ մը իրավունք ունի, մյուս ընկերներուն ալ մեյ մը կարծիքը առնենք։

— Պարապ խոսք, էֆենտիմ, էրեկ իր տունը գացինք նե՝ մեզի բոլորովին համամիտ էր. բայց ես գիտեմ բուն խնդիրը ինչ է... իր կնկանը խոսքերուն համոզվեր է ու այսպես կուզե կոր մեզ խաղցնել... էրեկ չի տեսա՞ր տիկին Շազիկը ինչպես ժամկոչը կըպաշտպաներ կոր... ասանկ խաղություն կըլլա՞, թաղ. խորհուրդը տիկին Շազիկին կամքովը գո՞րծ պիտի ընե։ Արդեն այս Պողոս էֆ-ն ալ, խոսքը մեջերնիս, մամածակ մարդուն մեկն է. կնոջը խելքովը կկառավարվի։

— Ճանը՛մ, ի՞նչ սիրտ կհատցնես, մենք մեջը բան մը չունինք ա։

— Ի՞նչ ըսել է, խոսք տվինք, որ այս առտու Վարդանը պիտի ճամփենք։

— Հիմակ ալ կըսենք, որ Պողոս էֆ-ն տարբեր որոշում տվավ։

— Եթե ես ժամկոչ մը ճամփելու ազդեցություն չունիմ նե՝ ինչո՞ւ իբրև թաղական գամ այստեղ նստիմ... եղբա՛յր, գործին մեջը արժանապատվության խնդիր կա, դուն չես ըմբռներ կոր։

Երկու թաղականները այսպես խոսակցելով՝ իրենք ալ ճամփա ելան իրենց գործին երթալու համար։

Ժամ մը ետքը տիկին Շազիկ եկեղեցի կուգա։ Որչափ ալ վըստահ էր իր ամուսնույն վրա ունեցած ազդեցությանը, այսուհանդերձ կասկածած էր, որ թերևս Պողոս էֆ. ազդվեր իր պաշտոնակիցներուն խոսքերեն ու ճամփեր ժամկոչը, ինչ որ իրեն համար գրեթե մահու և կենաց խնդիր մը դարձած էր։ Ուստի չկրնալով տարտամության մեջ անցնել ամբողջ օրը, ելեր, հագվեր ու եկեր էր անձամբ ստուգելու ամեն բան։

— Ժամկոչ աղբարը ո՞ւր է,— հարցուց բանկալը նստող պաշտոնյային։

— Հոս ըլլալու է, տիկի՛ն,— պատասխանեց մարդը,— արդյոք պետք ունի՞ք իրեն։

— Կուզեի մեյ մը տեսնել։

— Խորհրդարան հրամմեցեք, երթամ զինքը կանչեմ։

Տիկին Շազիկ մտավ խորհրդարանը և բազմեցավ իր ամուսնույն ատենապետական թիկնաթոռին վրա։

Վայրկյան մը ետքը Վարդան աղբար ներս կմտներ։

— Օ՜, Վարդան,— ըսավ տիկին Շազիկ քմծիծաղով մը,— երեկ քեզի հանդիմանե՞ր են...

— Հրամանք է, հանըմ,— պատասխանեց ժամկոչը,— աթոռին համար աղաները բարկացան։

— Էյ, դուն ի՞նչ ըսիր...

— Ըսի, որ ձեր հրամանովը աթոռը Սաթեն խանումին կեցած տեղը դրի։

— Ապրի՛ս, շատ աղեկ ըրեր ես... ճշմարտությունը խոսեր ես։

— Այո՛, բայց կվախնամ, որ գլխիս փորձանք մը բերեն։ Մարգար էֆ-ն եկած էր, շատ բարկացած կերևար։

— Բարկացած է հե՞, թող չիչ մը քացախ խմե,— ըսավ Շազիկ,

հեղնական ժպիտով մը, այս առտու Պողոս էֆենտին հոս եկա՞վ։

— Եկավ, քիչ մը կեցավ, գնաց։

— Քեզի բան մը ըսա՞վ...

— Չէ՛, հանըմ, բան չըսավ։

Գոհունակության հաղթական ժպիտ մը երևցավ տիկին Շազիկի դեմքին վրա։

Բայց ժամկոչը այս հարցումներեն մտատանջության մատնված էր։

— Ոտքդ պագնեմ, Շազի՛կ խանում, աղաները ինծի բա՞ն մը պիտի ընեն,— հարցուց ողորմուկ ձայնով մը։

— Մի վախնար, ծո՛, քու մազիդ թելին դպչող չըլլար, ես հոս կէ՛ցեր եմ։

— Ո՛ղջ ըլլաս...

— Մարգար էֆ. ուզեր է, որ քեզ ճամփեն, բայց ես դեմ կեցա, թող չտվի։

— Աստված կյանք տա ձեզի, Պողոս էֆ-ին...

Ու ժամկոչ Վարդան սկսավ փառաբանություններ ընել իր պաշտպանուհիին։

Իր ալ ականջը հասեր էր, որ զինքը պիտի ճամփեն ու առտը-վընե ի վեր սրտագողի մատնված էր, տիկնոջ խոսքերը զինքը հանդարտեցուցած էին։

— Քեզի բան մը ըսեմ, աղեկ մտիկ ըրե,— ըսավ տիկին Շազիկ,— կարելի է, որ քեզի խորհուրդ տան, որ երթաս տիկին Սաթենեն ներում խնդրես երեկվան եղածին համար...

— Եթե պետք է կխնդրեմ,— ընդմիջեց ժամկոչը,— ոտքը ձեռքը կիյնամ։

— Ընդհակառակը,— գոչեց Շազիկ,—չըլլա որ ատանկ բան մը ընես. եթե լսեմ, որ գացեր ներում խնդրեր ես անմիջապես քեզ ճամփել կուտամ, գիտցած ըլլաս, արդեն Պողոս էֆ-ին ու մյուս թաղականներուն մնար նե՝ դուն հիմա ճամփված պիտի ըլլայիր։

— Բայց, հանը՛մ, եթե աղաները ըսեն, ես ի՞նչպես իրենց խոսքեն դուրս կրնամ ելլել։

— Դուն իմ խոսքս մտիկ պիտի ընես, հասկըցա՞ր, եթե ատանկ բան մը ընեն՝ անմիջապես ելիր ինծի եկուր...

— Գլխո՛ւս վրա։

— Նորեն կկրկնեմ կոր, եթե խոսքս մտիկ չընես, ետքը գել կըլլա, չեմ խառնվիր։

— Վերը աստված՝ վարը դուն, Շազիկ հանըմ, ինչ որ ըսես, ան պիտի ընեմ։

— Այն ատեն բնավ մի վախնար, քեզի դպչող չըլլար, ես կեցեր եմ...

Տիկին Շազիկ այս խոսքերը արտասանելե ետք մեկնեցավ եկեղեցիեն։ Կինը ուրախությենեն կտրոփեր. իր տարած հաղթությունը զինքը գինովցուցած էր ու կարող չէր հանդարտ մնալ։ Ուզեց երթալ իր բարեկամներուն հաղորդել եղելությունը, պարծենալ, հպարտանալ։

Մյուս կողմե տիկին Սաթեն ալ վստահ էր, թե ժամկոչը ճամփված է, այցելություններ կուտար թաղին մեջ և իր հաղթությունը կհռչակեր։

— Տեսա՞ք եկեղեցիին մեջ երեկ առտվան եղածը,— կհարցներ իր բարեկամուհիներուն։

Ոմանք տեսած էին և ուրիշներն ալ լսած, այնպես որ ամենքն ալ ծանոթ էին խնդրին։

— Շատ անվայել բան է տիկին Շազիկին ըրածը,— կպատասխանեին իրեն։

— Ըրա՛վ, բայց հետո ինքը խաղք եղավ...

— Ի՞նչպես...

— Էրիկս գնաց այս առտու իսկ վռնտել տվավ ժամկոչը։

— Իրա՞վ կըսես։

— Հապա՞... այդ չըլթիկին դասը չպիտի՞ տայի...

— Է՛յ, ապրի՛ս, տիկին Սաթեն, շատ աղեկ ըրեր ես, թող էրթա սորվի տե, ուրիշ ատեն նորեն չընե։

Այսպես մինչև իրիկուն ամբողջ թաղին մեջ տարածվեցավ ժամկոչ Վարդանի խնդիրը. միայն թե իրողությունը երկու տեսակ կըպատմվեր։ Ըստ ոմանց՝ Վարդան մնացեր էր իր պաշտոնին մեջ, ըստ ուրիշներուն՝ ճամփված էր։

Մեկ քանիները իրողությունը ճշտելու համար եկեղեցի գացած էին ու տեղվույն վրա քննություն մը կատարած։

Իրիկունը, երբ Մարգար էֆ. տուն դարձավ, շատ ուրախ տրամադրության մեջ գտավ իր կինը։ Տիկին Սաթեն այլևս իր արժանապատվությունը վերահաստատված կհամարեր։

— Այս փոթորիկն ալ անցուցինք,—մտածեց Մարգար էֆենտին։

Կերակուրեն ետք Միհրանիկ էֆ. և կինը այցելության եկան։

Հազիվ թե նստած էին՝ տիկին Նվարդ ըսավ.

— Ժամկոչը չէ ճամփվեր...

— Հե՞,— գոչեց տիկին Սաթեն, նստած տեղեն վեր ցատկելով...— անկարելի բան է։ Ո՞ւրկե իմացար։

— Միհրանիկ էֆ. պատմեց։

— Սխալ ըլլալու է,— միջամտեց Մարգար էֆենտի, անպատճառ ճամփած են... խոսք տվին նե։

— Միհրանիկ էֆ. դուք ո՞ւրկե լսեցիք, որ չէ ճամփվեր,— հարցուց Սաթեն։

— Իրիկունը Ռափիկ աղան տեսա, ան ըսավ։

— Ուրեմն լուրը շիտակ է,— դիտել տվավ Սաթեն, հուզումեն դողդողար ձայնով մը։

— Էֆենտի՛մ,— բացատրեց Միհրանիկ,— այս առտու Մանուկ աղան և Ռափիկ աղան ժամ գացեր են Վարդանը ճամփելու, ինչպես որ որոշած էին և իրենց որոշումը Պողոս էֆ-ի ալ հաղորդած ու անոր հավանությունը առած. բայց ահա Պողոս էֆ. կուգա և կըսե, որ պետք է մյուս թաղականներուն ալ հավանությունը առնել։ Թեև Մանուկ աղա կպնդե, որ ժամկոչը անմիջապես ճամփվի, սակայն անկարելի կըլլա Պողոս էֆ. համոզել և խնդիրը կմնա հառաջիկա կիրակի օրվան...

— Ես ալ արդեն նույն բանը ուրիշ տեղ ալ լսեցի, թեև տարբեր կերպով,— ըսավ Նվարդ։

— Դուք ի՞նչպես լսեցիր,— հարցուց Սաթեն, որուն հուզումը հետզհետե կավելնար։

— Թագուկ հանըմը տեսա, ան պատմեց, որ Շազիկը այսօր իրենց գացեր և ըսեր է, որ թեև ժամկոչը պիտի ճամփեն եղեր, բայց ինքը ոտք կոխեր, թող չէ տվեր... ես քանի որ կեցած եմ, այդ ժամկոչը չճամփվիր, ըսեր է...

Այս հայտնությունները բոլորովին կատղեցուցին տիկին Սաթենին, որը կաս-կարմիր կտրած իր ամուսնույն վրա գնաց պոռալով։

— Հիմա ի՞նչ պիտի ընես...

Մարգար՝ շվարած, շփոթված՝ չէր գիտեր ինչ պատասխաներ կնոջը։

— Ջիսոսի՞ս,— գոչեց այս վերջինը։

— Ճանը՛մ, կեցի՛ր, իրար մի՛ անցիր, խնդիրը աղեկ մը քննենք, հասկնանք...

— Ալ քննելիք, հասկնալիք տեղը մնա՞ց,— գոչեց Սաթեն,— ես հիմա ի՞նչ երեսով թաղին մեջ պիտի պտտիմ... ապուշի պես ալ այսօր ելա քանի մը տեղ այցելություն տվի և ըսի, որ ժամկոչը այս առտու ճամփված է։ Հիմա որ չէ ճամփվեր, մարդիկ ի՞նչ պիտի ըսեն, պարզապես վրաս պիտի խնդան։ Եկեղեցիին մեջ եղածը չէր բավեր, մեյ մըն ալ այս խաղքությունը...

— Ճանը՛մ, թո՛ղ առտու ըլլա տե՝ բան մը կընենք։

— Ի՞նչ պիտի ընես...

— Ես ուղղակի Պողոս էֆենտին կտեսնեմ, ժամկոչը ճամփել կուտամ, դուն հոգ մի՛ ըներ,— ըսավ Մարգար էֆենտին վճռաբար։

— Եվ եթե ճամփել չուզե՞...

— Անիկա իմ խոսքես դուրս չի կրնար էլլել։

— Աղեկ գիտեմ, որ բան մըն ալ չպիտի կրնաս ընել, դարձյալ պզտիկ պիտի մնաս, ես ալ քեզի հետ խաղք ու խայտառակ պիտի ըլլամ։

Եվ տիկին Սաթեն սկսավ իր հավիտենական տրտունջները իր ամուսնույն թույլ բնավորության, անկարողության դեմ։

Միհրանիկ և Նվարդ ջանացին համոզել, հանդարտեցնել զինքը։

Երկու հյուրերը մեկնելե ետքը, Սաթեն դարձյալ փորձեց վիճաբանիլ ամուսնույն հետ, բայց այս վերջինը իսկույն անկողին մըտավ և քնանալ կեղծեց, մինչ կինը, ջղագրգռված, ժամերով չկրցավ աչքերը փակել։

Գ

Մեր վերը, նախընթաց երկու գլուխներուն մեջ պատմած դեպքերուն վրա շաբաթ մը անցած էր։

Սթոռի միջադեպին հաջորդ կիրակին էր։

Ութ օրը բավական եղած էր ժամկոչին խնդիրը օրվան հրատապ հարցը դարձնելու համար թաղին մեջ։

Հակառակ Մարգար էֆենտիի դիմումին՝ Պողոս էֆենտի՝ համառեր էր Վարդան աղբարը իր պաշտոնին մեջ պահելու, անձնական շահի նկատումները զոհելով ընտանեկան խաղաղության։

— Պետք է թաղական խորհուրդը ամբողջությամբ գումարի և ժամկոչին մասին իր որոշումը տա,— ըսած էր Պողոս էֆենտի։

Եվ այդ ամբողջական գումարումը տեղի պիտի ունենար այդ կիրակի օրը։

Թաղին երկու երևելիներուն միջև ծագած պայքարը բնականաբար ընդհանուր խոսակցության նյութ դարձած էր և նույնիսկ երկու որոշ հոսանքներ առաջ եկած էին։ Մարգարյան հոսանք և հակամարգարյան հոսանք։

Թաղին մեջ կուսակցական երիտասարդություն մը կար, որ իր հատուկ խմբատեղին ուներ «Պայքար Լսարան» անունով։ Այս լսարանի անդամներեն մին, ընկեր Կայծունի, ժամկոչին խնդիրը սեղանին վրա դրած էր։

— Դիրքերնիս ճշտենք,— ըսելով։

Ըստ ընկեր Կայծունիի, հարցը հասարակական հանգամանք ուներ։ Մենծ աղայական կամայականությունն էր, որ իր ամենազոր բազուկով կուզեր ջախջախել ընչազուրկ դասակարգի ներկայացուցիչներեն մին։

Իհարկե, Վարդան աղբոր անձը ոևէ նշանակություն չուներ, բայց այս պարագային Վարդան կներկայացներ պրոլետարիան, որուն դեմ կցցվեր դրամագլուխը՝ հանձին Մարգար էֆենտիի։ Պետք որուն դեմ կցցվեր դրամագլուխը՝ հանձին Մարգար էֆենտիի։ Պետք չէր թույլատրել, որ ժամկոչը զոհ երթար հարուստի մը քմահաճույքին։

Ընկեր Կայծունի, որ զուրկ չէր ամբոխավար պերճախոսութենե մը, շատ դյուրավ կրցավ համոզել իր ընկերները, որոնք իսկույն որոշեցին գործոն կերպով միջամտել խնդրին։

— «Պայքար Լսարանը» արտահայտված է ի նպաստ ժամկոչ Վարդանի և որոշ դիրք պիտի բռնե։

Երբ այս բանը իմացվեցավ Թաղին մեջ՝ բավական հուզում առաջ բերավ։

Ուրիշ կուսակցություն մըն ալ Ակումբ մը ուներ Թաղին մեջ՝ «Շանթ Ակումբ»-ը, որուն անդամները բնականաբար կատաղի հակառակորդներ էին «Պայքար Լսարան»-ին։

«Շանթ Ակումբի» վարիչ ույժը կնկատվեր ընկեր Սուսերյանց։ Այս վերջինը երբ իմացավ հակառակորդ կողմին տրամադրությունը, առանց վարանելու վճռեց։

— Մենք պետք է Մարգար էֆենտին պաշտպանենք։

— Բայց մեր սկզբունքնե՞ր,— դիտել տվավ վեհերոտ անդամը։

— Մեր սկզբունքները կրնանք համաձայնեցնել մեր ընթացքին։

Եվ ընկեր Սուսերյանց իսկույն Ակումբին անդամները արտասովոր նիստի մը հրավիրելով՝ պարզեց իր տեսությունը։

Ժամկոչ Վարդան կներկայացներ կղերականությունը միացած բռնապետության՝ Պողոս էֆ-ի միջոցով։

Մարգար էֆենտին ընդհակառակը ազատական ոգին էր, որ կկռվեր սկզբունքային գաղափարի մը համար։ Հարցը շատ լուրջ էր և Թաղին ճակատագիրն էր, որ պիտի որոշվեր այս պայքարով։

Ամեն գնով հարկ էր կռվիլ և հաղթանակը տանիլ, մանավանդ որ ասով մեծ հարված մը տված պիտի ըլլային հակառակ կուսակցության։

Սուսերյանցի տեսությունը ջախջախիչ մեծամասնությամբ ընդունվեցավ։

«Պայքար Լսարանը» և «Շանթ Ակումբը» եռանդով գործի սկըսան։ Ամեն մեկը մեյմեկ թռուցիկ հրատարակեց և ցրվեց Թաղին մեջ։

— Կիրակի օրը մեծ ցույց պիտի ըլլա,— կփսփսային երկու կուսակցություններու անդամները։

Առտուն, սրճարաններու մեջ, ընդհանուր խոսակցությունը ժամկոչ Վարդանի խնդիրն էր։

Կըսվեր թե Թաղականները իրարու մեջ համաձայն չէին և թե անոնք ալ երկու խմբի բաժնված էին։

Այս ընդհանուր իրարանցումին մեջ երկու հոգի կային, որոնք չափազանց դժգոհ էին խնդրին առած այս երևույթեն. ասոնցմե մին Պողոս էֆենտին էր և մյուսը՝ Մարգար էֆենտին։

Երբեք մտքերեն չէին անցներ մեկ օրեն մյուսը այսպես երկու ընդդիմամարտ խմբակներու պարագլուխները ըլլալ Թաղին մեջ. և սակայն այս բանը պատահած էր և հիմա ճար չկար ընկրկելու, հարկ էր, որ իրարու դեմ պայքար մղեին։

Թաղին կիներն ալ բնականաբար շահագրգռված էին ժամկոչական խնդրով և անոնք ալ զանազան խմբակցություններու բաժնված, որոնց գլխավորներն էին Շազիկյան և Սաթենյան խմբակները։

Այսպես ուրեմն, կիրակի առտու, մինչ Թաղական խորհուրդը գումարված նիստ կըներ, անսովոր ոգևորություն մը կար եկեղեցին շրջակա սրճարաններու մեջ։

— Պարոն Թորգոմ, ի՞նչ նոր լուր ունիս...

Այս բառով ողջունվեցավ ակնոցավոր եիտասարդ մը, որ աճապարանքով սրճարան մտած՝ աչքը չորսդին շուռ կածեր, մեկը փընտռելու ձևով։

Պարոն Թորգոմը Թաղին ազգային վարժարանի ուսուցիչներեն

էր և մեծ եռանդով կհետևեր ներկա պայքարին, իբրև ջերմ Պողոսյան մը։

— Ցույց պիտի ըլլա, ցույց,— գոչեց ուսուցիչը իրմե լուր հարցնողին։

— Ի՞նչ ցույց...

— «Պայքար Լսարանի կողմե մեծ ցույց մը կազմակերպված է... բայց ընկեր Կայծունին ո՞ւր է։

— Քիչ մը առաջ հոս էր, հիմա դուրս ելավ,— պատասխանեց ներկաներեն մեկը։

Այս պատասխանին վրա ուսուցիչը մեկնեցավ։

— Ելլենք եկեղեցի երթանք, սա ցույցը տեսնենք,— ըսավ հետաքրքիր մը։

— Ավելի աղեկ է հեռու մնանք այդ տեսակ խնդիրներե... մեզի ի՞նչ։

Եվ սակայն փորձությունը շատ մեծ էր և ամեն մարդ եկեղեցին բակը կհավաքվեր։

Դպրոցականներ, երիտասարդներ ու փոքրիկ մանուկներ լցված էին արդեն, երբ հանկարծ ներս մտավ ընկեր Կայծունի, մեկ քանի բարեկամներե շրջապատված։

Իր մուտքը հետաքրքրությամբ ողջունվեցավ։ «Պայքար Լսարանի» ներկայացուցիչը առաջ անցավ և բակին մեկ կողմը գտնված հորի մը կափարիչին վրա ընկավ։ Բազմությունը իր շուրջը բոլորակ մը կազմեց։

— Թաղեցինե՛ր,— գոչեց Կայծունի,— հանուն երիտասարդության է որ խոսք կառնեմ և կհուսամ, որ պիտի հաճիք լուրջ ուշադրությամբ մտիկ ընելու ինծի։

«Թաղս շաբաթ մը ի վեր հուզող խնդիրը ծանոթ է ամենուդ։ Մենք ժողովրդի զավակներ, չենք կրնար անտարբեր հանդիսականներ մնալ, չենք կրնար թույլատրել, որ ժողովրդի զավակ, համեստ պաշտոնյա մը զոհվեր մենծաղայության քմահաճույքին։

Մենք կուգանք այժմ հանուն ժողովրդին բողոքելու»։

— Իրավունք չունիս ժողովրդյան անունով խոսելու,— ընդմիջեց երիտասարդ մը, գավազանը ճոճելով։

«Շանթ Ակումբի» անդամներեն մեկն էր։

— Դուն լռե՛,— ըսին իրեն։

— Ինչո՞ւ պիտի լռե,— մեջ մտավ ուրիշ մը,— մենք ալ ժողովուրդ ենք...

— Դուք ժողովուրդ չեք, դուք միմիայն «Շանթ ակումբը» կներկայացնեք, իրավունք չունիք հանուն ժողովրդին խոսելու։

Վեճը հետզհետե մեծցավ, թաղականները դուրս ելան խորհրդարանեն և ջանացին ամբոխը հանդարտեցնել։

— Եղբայրնե՛ր, գացե՛ք, ցրվեցե՛ք, թողեք որ նիստը շարունակենք և որոշումնիս տանք,— ըսավ Պողոս էֆենտի։

— Չէ՛, չպիտի երթանք, հոս պիտի սպասենք,— գոչեց ընկեր Սուսերյանց։

— Ի՞նչ բանի համար։

— Ժողովուրդին շահերը պաշտպանելու համար։

— Լավ, սպասեցե՛ք, բայց աղմուկ մի հանեք,— գոչեց ընկեր Կայծունի,— միևնույն ատեն կազդարարեմ Թաղական Խորհրդին, որ ժողովուրդին կամքը հարգե, ծանր դեպքերու տեղի չտալու համար...

— Ո՞ր ժողովուրդին կամքը պիտի հարգեն,— գոռաց Սուսերյանց։

— Բուն ժողովրդին կամքը։

— Բուն ժողովուրդը մե՛նք ենք։

— Լռեցե՛ք...

Կրկին աղմուկը մեծցավ։

Մանուկ աղա, որ մյուս թաղականներու հետ եկած էր կարդապահությունը հաստատելու՝ դարձավ ցուցարարներուն և գոչեց.

— Պարոննե՛ր, հաճեցեք հեռանալ բակեն, Եկեղեցական արարողությունը ավարտած է ու ալ գործ չունիք այստեղ, թողուցե՛ք, որ հանդարտ միտքով մեր ժողովը կատարենք։

— Իրավունք չունիս այստեղեն վռնտելու, եկեղեցին ազգին կպատկանի... եկեղեցին ժողովուրդինն է,— պոռաց տաքգլուխ մը։

— Այն ատեն մենք կցրվինք ուրեմն,— ըսավ Մանուկ աղա,— որովհետև ճնշման ներքև չենք կրնար որոշում տալ։

Արդարև ամենեն կարճ ճամփան այդ էր, խնդրին վերջ տալու համար։

Թաղականները, իրենց գլուխը ունենալով Պողոս էֆենտին, դուրս ելան եկեղեցիեն, մինչ ցուցարարները կպոռային.

— Կեցցե՛ ժողովուրդը, կեցցե՛ աշխատավոր դասակարգը, անկցի՛ բռնակալությունը և այլն։

— Տղա՛ք, ալ երթանք,— գոչեց ընկեր Կայծունի իր շուրջիններուն դառնալով, և հաղթական պատերազմե մը դարձող զորավարի մը պես ուղղվեցավ դեպի «Պայքար Լսարանը», մինչ ընկեր Սու

սերյանց իր խմբովը, ո՛չ նվազ հաղթականորեն, կերթար դեպի «Շանթ ակումբը»։

Երկու խումբերը հաղթանակ տարած ըլլալու անուշ պատրանքը ունեին, թեև իրականության մեջ այդ պատրանքը արդարացնող բան մը չէր պատահած։ Թաղականները մեկնած էին առանց որոշում մը տալու։

Անհամաձայնությունը ծայր տված էր Թաղական Խորհուրդին մեջ։ Մանուկ աղա և ուրիշ թաղական մը՝ Սարգիս էֆենտի՝ կպահանջեին, որ ժամկոչը անմիջապես ճամփվեր և զոհացում տրվեր Մարգար էֆենտիին։

Իսկ Պողոս էֆ. և ուրիշ թաղական մը կընդդիմանային ու պաշտպան կկանգնեին Վարդան աղբոր։ Ռափիկ աղա բացարձակ չեզոքություն կպահեր։

Մարգար էֆ. երբ իմացավ Թաղական Խորհրդի ապարդյուն նիստը, սաստիկ զայրացավ։ Ինքը կսպասեր, որ նույն օրը որոշումը տրվեր ու խնդիրը լմննար ժամկոչին ճամփվելով։

Տիկին Սաթենն գրեթե հիվանդ եղած էր իր կրած հուզումներեն, և երկու օրե ի վեր իր մոր տունը գացած էր։ Մարգար էֆ. դիտավորություն ուներ Իրիկվան դեմ Երթալու և կինը տուն բերելու։

Բայց ահա ժամկոչին խնդիրը առկախ մնալուն համար խեղճ մարդը չէր համարձակեր երթալ իր կինը բերելու։ Վստահ էր, որ Սաթենի առաջին հարցումը պիտի ըլլար...

— Ժամկոչը ճամփվեցա՞վ։

Եվ եթե ինք «ոչ տակավին» պատասխաներ, սոսկումով կերևվակայեր առաջ գալիք փոթորիկը։

Մարգար էֆենտի կմտածեր, թե այս կացությունը չէր կարելի տևել, հարկ էր վճռական բան մը ընել, արմատական միջոցներու դիմել։

Մարդ ղրկեց և իր տունը հրավիրեց Մանուկ աղան, որուն վրա վստահություն ուներ և գիտեր, թե Թաղական Խորհուրդին մեջ անկեղծորեն իր դատը կպաշտպաներ։

— Ա՜ս ժամկոչին խնդիրը տակավին պիտի տևե՞,— հարցուց։

— Էֆենտիս, ի՞նչ գիտնամ,— պատասխանեց Թաղականը,— պզտիկ խնդիր մը պարապ տեղը այսքան մեծցուցին և ձեր ալ սիրտը կոտրեցին...

— Բայց վերջապես ինչո՞ւ համար Պողոս էֆենտին այսչափ ընդդիմություն ցույց կուտա կոր...

— Իր կնկանը ձեռքը գործիք եղած է. անոր խոսքեն դուրս չի կրնար կոր էլլել։

— Ամոթ չէ՞ իրեն... էրիկ մարդու մը կվայելե՞ իր կնոջ խելքովը կառավարվիլ։

Մարգար էֆենտի այս խոսքերը կըսեր առանց անդրադառնալու, որ ինքն ալ գրեթե նույն կերպով կվարվեր այս խնդրին մեջ։

Պահ մը լռելե ետքը հանկարծ գոչեց.

— Ենթադրենք, որ Պողոս էֆենտի իր կնոջ դրդումով այսպես կվարվի, իսկ դո՞ւք... դուք ալ անոր հրամաններուն կենազանդիք։

— Մարգար էֆենտի, դուք լավ գիտեք, որ ես առաջին օրեն ժամկոչը ճամփելու կողմն էի և մինչև հիմակ ալ այնպես եմ ու ասոր համար բավական մեծկակ վեճեր ալ ունեցանք Խորհրդարանին մեջ, բայց ես առանձին ի՞նչ կրնամ ընել...

— Լսեցի, որ ուրիշ թաղական մըն ալ քեզի համակարծիք է եղեր...

— Այո՛, բայց թաղականին մեկն ալ Պողոս էֆենտիի կողմն է և որովհետև Ռափիկ աղան ալ բոլորովին չեզոք կմնա կոր, կարելի չէ բացարձակ մեծամասնություն կազմել։

— Ո՞վ է տեսնեմ, սա Պողոս էֆ-ին կողմը բռնողը։

— Էֆենտիմ, մյուսյու Գարեգինը... Գարեգին Կրիկյան։

— Նենի՞ է այդ մարդը։

— Սամիկյան վաճառատան առաջին դրագիրն է։

— Սամիկյան Հաճի Հակո՞բ էֆ-ին,— գոչեց Մարգար էֆենտին։

— Հրամմե՛ր եք...

— Առաջուց չըսեի՞ր ուրեմն,— գոչեց Մարգար էֆենտի գոհունակությամբ,— հիմա խնդիրը դյուրացավ։

— Մյուսյու Գարեգինը կճանչնա՞ք ուրեմն։

— Չէ, զինքը ճանչնալու պետք չունիմ,— պատասխանեց Մարգար էֆենտի արհամարհոտ ձայնով մը,— բայց Սամիկյան էֆենտին մտերիմ բարեկամս է, միասին ալ գործ ունինք, մեկ խոսքս կբավե, որպեսզի այդ Գարեգինին ականջեն քիչ մը քաշե։

— Այդ տարբեր բան,— ըսավ Մանուկ աղա,— միայն թե, մյուսյու Գարեգինը քիչ մը տարօրինակ երիտասարդ է, ամեն խնդրի մեջ սկզբունքով կվարվի և շատ դյուրավ տեղի չի տար, մանավանդ որ արժանապատվության զգացումն ալ շատ զորավոր է իր մեջ... ուղղամիտ և պարկեշտ անձ մըն է, այս խնդրին մեջ

թեև համակարծիք չեմ, բայց շիտակը խոսելու համար շատ կհարգեմ զինքը, որովհետև վստահ եմ, որ ամեն խնդրի մեջ անկեղծ համոզումով կվարվի։

Հակառակորդի մը — մանավանդ դիրքով ու նյութական կարողությամբ իրմե շատ ստորին հակառակորդի մը — տրված այս գովեստները անհաճո թվեցան Մարգար էֆենտիի, որ հայտնի սրտնեղությամբ պատասխանեց։

— Կտեսնենք, թե այդ անկեղծ համոզումները քանի փարա կարժեն... գալով Ռափիկ աղային՝ ինե բարև ըրե՝ և ըսե, որ իր բռնած ընթացքը շատ տարօրինակ կգտնեմ... երբ Միհրանիկ էֆենտիին հետ եկանք խորհրդարան եղածին դեմ բողոքելու, մեզի համակարծիք երևցավ և ինքն ալ քեզի հետ խոստացավ հետևյալ առտու ժամկոչը ճամփել։

— Ռափիկ աղան թանաֆ մարդ մըն է,— պատասխանեց թաղականը,— մեկու մը հետ ավրվիլ չուզեր, անոր համար այս տեսակ խնդիրներու մեջ որոշ դիրք մը չբռներ։

— Բայց այդ ընթացքով թե՛ դիս և թե՛ Պողոս էֆենտիին դրժգոհ կձգե։

— Իրավունք ունիք։

— Մինչդեռ եթե երկուքես մեկու կողմը բռնե, գոնե անոր բարեկամությունը կշահի։

— Շատ իրավացի է ձեր դիտողությունը։

— Ու եթե ինքը քիչ մը խելք ունի՝ պետք է որ իմ կողմս բռնե, որովհետև իմ բարեկամությունս ավելի օգտակար կրնար ըլլալ իրեն, քան թե Պողոս էֆ-ինը։

— Շատ շիտակ է։

— Ասոնք իրեն հասկցուր. Ռափիկ աղա կարծեմ ոսկերիչ է։

— Այո՛,— պատասխանեց Մանուկ աղա։

— Կարողություն ունի՞...

— Մեծ բան մը չէ. օրե կվաստկի, օրե կուտե։

— Ապրանք չունի՞...

— Չէ՛, բայց պետք եղած ատեն ինչ ապրանք որ պետք ըլլա՝ կգտնե։

— Այսինքն միջնորդությո՞ւն կընե։

— Այո՛, իր քովը գտնված քարերը չնչին բաներ են։ Բայց Մարգար էֆենտի, ինչո՞ւ այդչափ կհետաքրքրվիս այդ բաներով, արդյոք բանի մը պե՞տք ունիք...

— Այո՛, կփափաքեի կնոջս համար մատնի մը առնել, սանկ շնորհքով բան մը... Ռափիկ աղային վրա կարելի՞ է վստահիլ։

— Կատարելապես, գործի մեջ շատ պարկեշտ է ու երբեք իր հաճախորդները չի խաբեր։

— Ուրեմն եթե ձեզի ձանձրություն չըլլար, անգամ մը զինքը հոս ղրկե... բայց նախ ըսածներս չմոռնաս իրեն կրկնելու։

— Գլխուս վրա։

Տեսակցությունը այլևս վերջացած էր և Մանուկ աղա մեկնեցավ Մարգար էֆենտիի քովեն։

Վաճառականը որ զուտ կնոջական խնդիր մը նկատած էր Վարդան աղբոր պարագան և մեծ կարևորություն մը չէր տված անոր ու տեսակ մը չկամությամբ միջամտած էր, հիմա ընդհակառակը, բոլոր հոգով փարած էր այս գործին, որ զուտ արժանապատվության խնդիր մը դարձած էր իրեն համար։

— Ժամկոչ մը չկրնամ ճամփել տալ,—կխորհեր ինքնին,— ես, Մարգար էֆ. Սասանյանս, ասկե ավելի մեծ պզտիկություն, ասկե ավելի նախատինք միթե կրնա՞ ըլլալ... եթե պետք ըլլա, հազար ոսկի պիտի ծախսեմ՝ այդ ժամկոչը չպիտի թողում։

Ինչ որ ամենեն ավելի կհուզեր Մարգար էֆենտին՝ սա պարագան էր, որ խնդիրը աներևակայելի համեմատություն մը առած էր թաղին մեջ, օրվան հարցը դարձած էր և ամեն մարդ հետաքրքիր կսպասեր տեսնելու համար, թե այս պայքարին մեջեն ո՞վ հաղթական պիտի ելլար։ Պարտվողը հայտնի է, որ յուր ամբողջ համբավը, պատիվն ու ազդեցությունը պիտի կորսնցներ թաղին մեջ։

Մարգար էֆենտի բոլոր ասոնք մտքին առջև բերավ, կշռեց, դատեց և վճռեց վճռականորեն նետվիլ կռվին մեջ։

Միայն թե, խոհեմ ու դրական մարդ, ուզեց իր կողմը ունենալ հաղթության բոլոր միջոցները։ Մանուկ աղայի հետ տեսակցած ատեն, տեսանք, թե ինչ միջոցներ կխորհեր Ռափիկ աղան իր կողմը շահելու և մյուսյու Գարեգինը չեզոքացնելու համար։ Բայց այսքանը բավական չէր։ Դեռ ձեռք առնելիք միջոցներ կային։

— Արդյոք ուղղակի Պատրիարքին երթա՞մ,—մտածեց,— և պահանջեմ, որ ժամկոչը ճամփվի, բայց եթե Պատրիարքը առարկե, որ ինքը չի կրնար ատանկ խնդրի մը միջամտել, ես պզտիկ կմնամ պարապ տեղը։

Հանկարծ հիշեց, որ Քաղաքական ժողովի անդամներեն մին,

իրեն պես ջոջ վաճառական մը, իր մտերիմ բարեկամն էր և որոշեց անոր մոտ դիմում մը ընել։

— Թերթերուն մեջ ալ բան մը գրել տալու է,— խորհեցավ,— վաղը Նշանիկը բերել տամ և ըսեմ, որ սանկ ակնարկություն մը գլտորցնե...

Նշանիկ թերթի մը լրաբեր խմբագիրն էր և ծանոթ Մարգար էֆ-ին, որուն հետ հեռավոր ազգականություն մըն ալ ուներ. ազգականություն՝ զոր վաճառականը անգիտանալ կձևացներ և զոր Նշանիկ ամեն առթիվ կհիշեր։

Հետևյալ օրն իսկ վաճառականը ուղղվեցավ իր բարեկամին՝ Քերովբե էֆ. Քյություկյանի գրասենյակը։

— Վա՜յ, Մարգար էֆ., այս ի՞նչ հով փչեց,— գոչեց Քերովբե,— ոտքի ելնելով ու իր հյուրին թիկնաթոռ մը հրամցնելով։

— Ասկե կանցնեի, մեյ մը վեր ելլամ, Քերովբե էֆ-ին տեսնեմ, միասին մեյ մեկ սուրճ խմենք՝ ըսի...

— Շատ աղեկ ըրիր։

— Զբաղած ե՞ս... գործիդ արգելք չըլլամ։

— Չէ՛, ճանը՛մ, պարապ նստեր էի, սիրտս կնեղնար — աղեկ որ եկար։

Եվ վաճառականը նստած տեղեն պոռաց դուրսը գտնվող ծառային։

— Արթի՛ն, Երկու հատ աղվոր սուրճ ըսե մեզի, հետը թող պաղ ջուր ալ բերեն։

Երկու բարեկամները բավական տեսակցելե ետքը, օրվան քաղաքականության և առևտրական հրապարակին մասին, Մարգար էֆ. հանկարծ ըսավ.

— Աղեկ միտքս ինկավ, Քերովբե էֆենտի, քեզի խնդիրք մը ունիմ։

— Հրաման ըրե՛, էֆենտիս։

— Դուն Քաղաքական ժողովին անդամ ես, անանկ չէ՞...

— Անարժանաբար... ի՞նչ կա որ։

— Կեցի՛ր պատմեմ։

Եվ Մարգար էֆենտին մանրամասնորեն պատմեց ժամկոչ Վարդանի խնդիրը և անոր առած ահագին համեմատությունը թաղին մեջ։

— Եթե գործը այս հանգամանքը չառներ, հոգս անգամ չէ,— եզրակացուց Մարգար էֆենտի,— բայց հիմա ալ արժանապատվության խնդիր դարձած է ինծի համար... այդ ժամկոչը հող չի կըրնար մնալ...

— Այսպես է,— հաստատեց Քերովբե էֆենտի։

— Դուն ալ եթե իմ տեղս ըլլայիր, այդպես չպիտի՞ վարվեիր։

— Բնականաբար։

— Հիմա դուն իբրև Վարչության անդամ չե՞ս կրնար այդ ժամկոչը հոնկե վռնդել տալ։

Քերովբե էֆենտի պահ մը մտածեց, ճակատը շփեց և ըսավ.

— Ինչպե՞ս կարելի է միջամտել, երբ խնդիրը Վարչության սեղանին վրա չէ։

— Ճանը՛մ, բերնե-բերան իմացած կըլլաք և թաղին մեջ տիրող հուզումը հանգստացնելու համար թաղական խորհրդին հրաման կընեք, որ Վարդան աղբարը ճամփվի։

— Չըլլա՛ր։ Մարգար էֆենտի, չըլլա՛ր, մենք մեր կողմե չենք կրնար միջամտել, ուրիշ ճամփա մը գտնելու է...

— Մտածե տեսնենք, դուն ասանկ գործերու մեջ ավելի փորձառություն ունիս։

Քերովբե էֆենտի սիկարեթ մը վառեց, մուխը դեպի ձեղունը արձակեց ու ըսավ.

— Թաղեցիներուն տրամադրությունն ի՞նչ է ժամկոչին ու թաղական խորհուրդին հանդեպ։

— Ամենքն ալ այս եղած խաղքությունը կդատապարտեն կոր...

— Նույնիսկ կարծեմ ըսիք, որ Թաղական խորհրդին մեջ ալ երկու անդամ ժամկոչին հակառակ են։

— Այո՛,— հաստատեց Մարգար էֆենտի,— Մանուկ աղան և մեյ մըն ալ ուրիշ մը։

— Այն ատեն տեսեք ինչ կընեք. թաղեցիները թող բողոքագիր մը մատուցանեն մեզի. մյուս կողմե ալ երկու թաղականները պատճառաբանյալ հրաժարական մը տան, այն ատեն Վարչությունը իրավունք կունենա միջամտելու, քննություն կատարելու և պարտ ու պատշաճը տնօրինելու։

— Բայց ատով խնդիրը որչափ մեծցուցած պիտի ըլլանք։

— Ի՞նչ ընենք, ուրիշ կերպ մենք չենք կրնար միջամտել։

Երկու բարեկամները քիչ մը ևս շարունակեցին իրենց խոսակցությունը, և Մարգար էֆենտի հրաժեշտ առնելով մեկնեցավ։

— Զըլլա նե անանկ ընենք,— կխորհեր Ճամփան,— հանրագրություն մը պատրաստենք, ստորագրել տանք, հարկավ քանի մը հարյուր ստորագրություն կրնանք հավաքել...

Ճամփան նշմարեց իր ազգական խմբագիրը, որ սճապարանքով կերթար և իսկույն հիշեց, որ անոր ալ խոսելիք ուներ։

— Նշանի՜կ, Նշանի՜կ,— պոռաց։

Խմբագիրը կեցավ, տեսավ Մարգար էֆենտին ու վազեց եկավ ժպտերես։

— Ի՞նչ ասանկ կվազես կոր,— ըսավ վաճառականը։

— Խմբագրատուն կերթայի կոր... ուշ մնացի։

— Սա մեր թաղին վրա բան մը չգրե՞ս...

— Ի՞նչ կա որ ձեր թաղին մեջ։

— Զարմանալի բան, այս ի՞նչ տեսակ խմբագիր ես, ամբողջ թաղը տակնուվրա եղած է և դուն լուր չունիս։

— Հավատացեք, որ բան մը չեմ իմացած, պատմեցեք տեսնեմ։

Մարգար էֆենտի իրողությունը քանի մը բառով բացատրեց և ավելցուց.

— Վաղվան թերթին մեջ պզտիկ աղվոր բան մը գրե։

— Շա՛տ աղեկ, Մարգա՛ր էֆենտի։

— Բայց չմոռնաս, անպատճառ գրես, կհասկնա՞ս կոր...

— Ինչո՞ւ պիտի մոռնամ, քանի որ այսչափ կփափաքիք, կըգրեմ, ես կուզե՞մ ձեզ վշտացնել... ազգական ենք նե...

Մարգար էֆենտի ժիլեյին գրպանը խառնեց, ոսկի մը հանեց, տվավ Նշանիկին և ըսավ.

— Վաղն առտու թերթին մեջ տեսնելու եմ հա...

— Վստահ եղեք, հիմա կգրեմ, կհանձնեմ։

— Սանկ զորլու, կծու բան մը։

— Փափաքածեդ ավելի ավելի, այդ մասին բնավ հոգ մի լնեք։

Եվ խմբագիրը հեռացավ գոհ ու զվարթ տպավորության ներքև։

Այս գործն ալ տեսանք, մտածեց։

Դ

Երկուշաբթի առտու, կեսօրին մոտ, Ք. թաղին փոքրիկ հրապարակի սրճարանը լեցված էր անգործ թաղեցիներով, որոնցմե ոմանք թուղթ և ուրիշներ նարտ կխաղային և մեկ քանիներ ալ սիկարեթ ծխելով օրվան քաղաքականությունը կվերլուծեին, երբ ներս

մտավ վարժարանին երիտասարդ ուսուցիչը, պարոն Թորգոմ, ձեռքը թերթ մը բռնած, հուզված, բարկացած կերպարանքով մը։

— Աս ի՞նչ խաղքություն է,— գոչեց սրճարանին մեջտեղ կանգ առնելով ու լրագիրը ցույց տալով։

— Ի՞նչ կա,— հարցուցին մեկ քանի հետաքրքիրներ։

— Չկարդացի՞ք,— պոռաց ուսուցիչը։

— Մյուսյու, կարդա նայինք, մտիկ ընենք,— ձայնեց մեկը։— Մեր թաղին համար բա՞ն մը գրված է։

— Ժամկոչին խնդիրը գրեր են, իրողությունը բոլորովին խեղաթյուրելով,— գոչեց Թորգոմ, որուն ձայնը հուզումեն կդողդղար։

— Բարձրաձայն կարդա՛, մտիկ ընենք։

— Անմիջապես բողոքելու է այս գրվածքին դեմ,— շարունակեց ուսուցիչը, թերթը բանալով։

Եվ սկսավ բարձրաձայն կարդալ.

«Ք. թաղին մեջ այս միջոցիս մեծ հուզում մը կտիրե ժամկոչի խնդիրի մը առթիվ։ Տեղվույն եկեղեցիին ժամկոչը՝ կոշտ ու անկիրթ մարդ մը, իր անքաղաքավար վարմունքով վշտացուցած է տեղվույն ծանոթ ընտանիքները, որոնք այլևս եկեղեցի չեն հաճախեր քանի մը շաբաթե ի վեր։ Մյուս կողմե՝ պատվավոր թաղեցիներ դիմում ըրած են Թաղական Խորհրդին ու պահանջած ժամկոչին արտաքսումը։ Բայց Թաղական Խորհրդի ատենապետը և իր մեկ քանի արբանյակները, չի գիտցվիր ինչ մութ ու թաքուն հաշիվներով, կհամառին ոտնակոխ ընել ժողովրդին կամքը և ժամկոչը պահել իր պաշտոնին վրա, հուզումի մատնելով թաղը։ Կլսենք, թե Թաղական Խորհրդի մեկ քանի անդամները իրենց ատենապետին ընթացքեն զզվելով հրաժարական տված են։ Կըսվի նաև, որ թաղեցիները հանրագրություն կպատրաստեն, մատուցանելու համար»։

— Ասանկ սուտ կգրվի՞,— պոռաց Թորգոմ, ընթերցումը ավարտելով։

— Գրվածքը բեք սուտ չէ,— դիտել տվավ ներկաներեն մին, որ ապահովաբար Մարգարյան կուսակցության կպատկաներ։

— Ո՞ր թաղականները հրաժարական տված են, ո՞վ է հանրագրություն պատրաստողը,— պոռաց ուսուցիչը հետզհետե բորբոքվելով։

— Ես այս առտու Մանուկ աղան տեսա, ըսավ որ պիտի հրաժարի եթե ժամկոչը չճամփվի։

— Պիտին ուրիշ՝ հրաժարեցավը ուրիշ...

— Ճանը՛մ, ըլլալիքը առաջվեն գրեր է, մի երկնցներ։

— Ի՞նչ իրավունք ունի Պողոս էֆենտիի նման անձի մը մասին ասանկ ծանր ու նախատական ակնարկություններ ընելու։

— Ան ալ թազ տեղը ծանր նստի... շատ աղեկ կրնար ժամկոչը ճամփել։

— Ինչո՞ւ պիտի ճամփե, քանի որ մարդը անմեղ է։

Եվ ահա ամբողջ սրճարանը մասնակցեցավ վիճաբանության, վիճաբանություն, որ հետզհետե սաստկացավ կռվի փոխվելու աստիճան։

Բարեբախտաբար կերակուրի ժամը հասավ և ամեն մարդ անութենե խթանված մեկնեցավ, ստամոքսի հրամայողական պահանջին զոհելով ժամկոչ Վարդանին խնդիրը։

Եվ սակայն լրագրին հոդվածը սրճարանական այս փոքրիկ հուզումին մեջ չսահմանափակվեցավ, այլ ընդհանուր իրարանցում պատճառեց թաղին մեջ և ընդդիմագիր հոսանքները ավելի լարեց իրարու դեմ։

Պողոս էֆ. երբ կարդաց թերթը, սարսափելի բարկություն մը զգաց։ Սպառնաչավ թերթին դեմ գատ բանալու, գրողը պատժել տալու և այլն։ Բայց հետո իր բարեկամներուն խորհրդով հրաժարեցավ ծայրահեղ միջոցներեն և որոշեց գոհանալ հերքումով մը։

Մարգար էֆ. շատ գոհ մնաց գրվածքեն ու դեմը ելլողին ըսավ.

— Տեսա՞ք, ինչ աղեկ մը լվացեր են Պողոս էֆենտին... ես գրրել տվի և տակավին գրել պիտի տամ, ամենքը պիտի խայտառակեմ, որ երթան սովրին... որ տեսնեն, թե ինծի հետ իյնալը ինչ կընշանակե... «հեր գուշուն էրի եմմեզ»։

Բայց վաճառականին հաղթանակը երկար չտևեց, որովհետև նույն թերթը մյուս օր, իր ազգային լուրերուն մեջ կգրեր.

«Երեկ Ք. թաղի ժամկոչի խնդրին մասին գրած էինք, բայց այժմ արժանահավատ աղբյուրե կիմանանք, թե մեզ տրված տեղեկությունները դիտմամբ չափազանցված և խեղաթյուրված են։ Ժամկոչը պարտաճանաչ և պարկեշտ անձ մըն է, որ իր հեղահամբույր բնավորությամբ սիրելի դարձած է թաղեցիներուն, որոնք այս խնդրին մեջ բացարձակապես համաձայն են Թաղ. խորհրդին հետ, որուն անդամներեն ոչ ոք հրաժարված է մինչև ցարդ։ Կերևա, որ խնդիրը ծագում առած է թաղին չոչ աղաներեն մեկուն բռնած կամայական ընթացքեն»։

Այս հերքումը երկու ոսկի արժած էր Պողոս էֆենտիին, բայց ազդեցությունը շանթահարիչ եղավ։

Մարգար էֆենտի զգաց, որ իր ու հակառակորդին միջև կռիվը սոսկալի պիտի ըլլար և թե այլևս համաձայնության ամեն միջոցները սպառված էին։

Իր առևտրական գործերը գրեթե երեսի վրա թողած՝ իր ամբողջ ուշադրությունը նվիրեց թաղային պայքարին։

Նախ՝ լուր ղրկեց ու իր տունը բերել տվավ Ռափիկ աղան, որուն մեկ քանի գոհարեղեններ հանձնարարեց, մոտավորապես 150—160 ոսկիի ապրանք, որոնցմե ոսկերիչը առնվազն 20—30 ոսկի կհուսար շահիլ։

— Մոտերս ազգական մը ունինք, պիտի ամուսնացնենք,— ըսավ վաճառականը.— եթե զիս գոհ ձգես՝ փոխանակ ուրիշի դիմելու, պետք եղածները քեզե կառնենք։

Վաճառականը բնավ ակնարկություն չէր ըրած ժամկոչի խնդրին, սակայն Ռափիկ աղա կռահեց, թե այս հանկարծական բարեկամության ծայրը ուր կնայի։

Մարգար էֆենտի հետո գնաց գտավ Սամիկյան հաճի Հակոբ աղան, թաղական խորհրդի անդամ մյուսյու Գարեգինին էֆենտին։

— Գիտես հաճի աղա, շատ վշտացած եմ քեզի դեմ,— ըսավ։

Մյուսը, որ երբեք չէր հիշեր ոևէ կերպով վիրավորած ըլլա Մարգար էֆենտին, այս խոսքերուն համար իր զարմանքը հայտնեց։

— Կվայելե՞ սա գրագիրիդ ըրածը,— գոչեց վաճառականը սրտմտած շեշտով մը։

— Ո՞ր գրագիրիս...

— Մյուսյու Գարեգին է, ի՞նչ է...

— Զարմանալի բան, Գարեգինը ի՞նչ կրնա ընել ձեզի դեմ, անիկա պարկեշտ, հավատարիմ, ազնիվ բնությամբ պաշտոնյա մըն է. տասը տարի է քովս է ու օր մը դժգոհության տեղիք չէ տված։ Սխալած ըլլալու եք, Մարգար էֆենտի։

— Սխալած չեմ, ես քսածս գիտեմ, սա Գարեգինը մեր Թաղ. խորհրդին անդամ է, մեր գեղը կընստի։

— Այո՛, գիտեմ, որ Ք. թաղը կնստի, բայց թաղական ըլլալը չէի գիտեր. էյ, ի՞նչ կըլլա թաղական ըլլալով...

— Ի՞նչ պիտի ըլլա, ինծի դեմ կդավե կոր, թշնամիներուս հետ մեկ է եղեր. ես անպատվելու, նախատելու ելեր է, բայց ամենուն ալ պիտի հասկցնեմ իմ ով ըլլալս...

— Տեր ողորմյա,— գոչեց հաճի Հակոբ աղա թևերը վեր բարձրացնելով.— բայց սա խնդիրը բացատրե տեսնեմ։

Մարգար աղա ստիպվեցավ ժամկոչ Վարդանի միջադեպը և անոր հաջորդող իրողությունները պատմել։

Հետո ավելցուց.

— Կվայելե՞, որ քու պաշտոնյադ ինծի հանդեպ այսպիսի ընթացք մը բռնե. եթե իմ պաշտոնյաներես մեկը ատանկ բան մը ըրած ըլլար քեզի հանդեպ, վայրկյան մը քովս չէի պահեր, կվռնտեի, նույնիսկ աչքիս լույսը ըլլար։ Չէ, շիտակը, հաճի աղա, շափազանց սիրտս ցաված է քեզի դեմ։

— Բայց Մարգա՛ր էֆենտի, ես բանե մը տեղեկություն չունեի, հիմա դուն պատմեցիր նե՝ այն ատեն իմացա, ես ի՞նչ հանցանք ունիմ գործին մեջ։

— Աղեկ, հիմա իմացա՞ր ա,— գոչեց վաճառականը,— ինչ պետք է ընել նե՝ ըրե։

Ծերունին քիչ մը մտածեց և ըսավ.

— Ի՞նչ կուզես, որ ընեմ։

— Չեմ գիտեր. իմ պատիվս փրկելու համար ինչ որ պետք է, ան պիտի ընես։

— Գարեգինը, ինչպես ըսի, իմ տասը տարվան պաշտոնյաս է և շատ գոհ եմ իրմե, ինչպե՞ս կրնամ ատանկ խնդրի մը համար զինքը ճամփել։

— Ճամփելու պետք չի կա. կկանչես, ականջեն կքաշես, կհասկըցնես, որ ինծի հետ «օղրաշմիշ» չըլլա։ Ինք ո՞վ է, որ ինծի գըլուխ կբռնե կոր... իրեն պես թաղականները ես իմ քովս «ուշաղ» տեյի կգործածեմ։

— Քեզի բան մը ըսե՞մ,— պատասխանեց հաճի Հակոբ աղա,— մեկ միջոց կա այս խնդիրը վերջացնելու։ Գարեգինը կկանչեմ ու կըսեմ, որ թաղականութենեն հրաժարականը տա, քաշվի։

— Կամ թող քաշվի և կամ թող Պողոս էֆենտիին հետ չմիանա։ Ինչո՞ւ փոխանակ Մանուկ աղային կողմը բռնելու— կելլե Պողոս էֆենտիին հետ կըլլա։

— Լավ, անհոգ եղիր, այս մասին ես հիմա իրեն կխոսիմ։

Մարգար էֆենտի իր նպատակին հասած էր, ինք ալ արդեն անկե ավելի բան մը չէր պահանջեր հաճի աղայեն, ուստի ոտքի ելավ և զոհունակ դեմքով մեկնեցավ։

Ծերունի վաճառականը մինակ մնալուն պես իր քով կանչեց Գարեգինը։

— Նստե՛, քեզի խոսելիք ունիմ,— ըսավ լուրջ դեմքով մը իր պաշտոնյային։

Գարեգին, որ իմացած էր Մարգար էֆենտիին այցելությունը՝ նախազգացում ունեցավ, թե խնդիրը ժամկոչ Վարդանին միջադեպին շուրջը կդառնար։

— Դուն թաղակա՞ն ես եղեր,— հարցուց ծերուկը։

— Այո՛,— պատասխանեց Գարեգին ժպտալով։

— Ուրիշ «տեբտ» չունի՞ս, գացեր այդ տեսակ գործերուն մեջ մտեր ես։

— Ի՞նչ ընեմ, թաղեցին բացարձակ մեծամասնությամբ զիս թաղական ընտրեց, չէի կրնար մերժել։

— Քեզի խորհուրդ մը պիտի տամ՝ չէ՛ պիտի չըսես։

— Հրամմեցե՞ք։

— Ատ թաղականութենեն պիտի հրաժարիս։

— Ինչո՞ւ համար,— գոչեց Գարեգին թեթև մը կարմրելով։

— Խաթերս համար,— ըսավ վաճառականը։

— Ձեր խաթերը համար պատրաստ եմ ամեն բան ընելու,— պատասխանեց պաշտոնյան,— բայց չեմ կրնար արժանապատվությունս զոհել։

— Արժանապատվությունդ զոհելու ի՞նչ կա ասոր մեջ։

— Որովհետև գիտեմ, որ ձեր խաթերը համար հրաժարած չըպիտի ըլլամ թաղականութենե, այլ Մարգար էֆ. Սասանյանի պահանջումին վրա։

— Վա՞յ, գուշակեցիր, թե ինչու համար հրաժարե կըսեմ կոր։

— Մարգար էֆենտիին մեկնելեն անմիջապես ետքը զիս կանչել ու այս առաջարկությունդ ընելեդ գուշակեցի։

— Գիտե՞ս, որ քեզի դեմ շատ բարկացած է։

— Գիտե՛մ,— պատասխանեց Գարեգին պաղարյամբ։

— Ատանկ մարդու մը թշնամությունը իր վրա հրավիրելը աղեկ բան չէ։

— Ես իրեն դեմ ոչէ հակառակություն չունիմ։ Անմեղ մարդ մը կա, զոր ճամփել կուզեն գործի մը համար, որուն մեջ հանցանք մը չունի։ Այս կետը քննած, ստուգած եմ... իմ խիղճս չներեր ատանկ անիրավություն մը ընել։

— Աղեկ ա,— գոչեց ծերունկը,— քանի որ խիղճդ չներեր, հրաժարե՛, քաշվե՛ գործին մեջեն։

— Այդ վատութիւնն ալ չեմ կրնար ընել։

— Ուրեմն ի՞նչ ընել որոշած ես։

— Թաղական պիտի մնամ և մինչև ետքը պիտի աշխատիմ ժամկոչը պաշտպանելու,— ըսավ Գարեգին վճռաբար։

— Բայց տղաս, դուն աղեկ գիտես, որ ես ինչ հարաբերութիւններ ունիմ Մարգար էֆ-ին հետ և թե չեմ ուզեր իրեն հետ ավրվիլ։

— Զարմանալի բան, դուք խնդրին մեջ բնավ բաժին չունիք, ինչո՞ւ համար ձեզի դեմ բարկանա։

— Ինք այդպես չըսեր կոր, ընդհակառակը, ըսավ, որ վշտացած է ինծի դեմ իմ պաշտոնյայիս ինծի հանդեպ բռնած թշնամական ընթացքին համար։ Նույնիսկ հասկցուց, որ գոհ պիտի մնար, եթե քեզ ճամփու դնեի։

— Դուք ի՞նչ պատասխանեցիք։

— Ըսի, որ քենե դժգոհանալու բան մը չեմ ունեցած տասը տարիե ի վեր, հետևաբար ատանկ խնդրի մը համար չեմ կրնար քենե բաժնվիլ։

— Շնորհակալ եմ,— պատասխանեց Գարեգին։

— Բայց ի փոխարեն խոստացա քեզի խորհուրդ տալ, որ կամ թաղականութենե հրաժարիս և կամ գոնե Մարգար էֆ-ի կամքը կատարես։

— Այսինքն՝ խղճիս դե՞մ գործեմ։

— Հրաժարե՛, էֆենտիմ։

— Եթե այս խնդիրը չըլլար, ձեզի հաճույք մը պատճառելու համար կհրաժարեի, բայց հիմա անկարելի է, արժանապատվություն չներեր, որ հրաժարիմ։

— Ուրեմն կմերժե՞ս իմ խորհրդիս հետևիլ։

— Ցավոք սրտի, ուրիշ կերպ չեմ կրնար ընել։

— Այն ատեն ես ի՞նչ պատասխան պիտի տամ Մարգար էֆ-ին... ինծի շատ դժվար կացության մը մեջ կդնես կոր։

— Կցավիմ, որ ուրիշ կերպ չպիտի կրնամ վարվիլ։ Ես միշտ պատիվս ու արժանապատվությունս ամեն բանե վեր դասած եմ։

— Մյուսյու Գարեգին, դուն սա բռնած ընթացքիդ հետևանքներուն վրա չես մտածեր կոր։

— Չեմ գիտեր, թե ի՞նչ ըսել կուզեք... բայց անկեղծորեն ձեզի հայտնեմ, որ եթե այնքան կվախնաք Մարգար էֆենտիի բարկությունեն, կրնաք իր կամքը կատարել և ես ոևէ արտունչ չպիտի հայտնեմ։

— Ի՞նչ ըսել կուզես...

— Ըսել ուզեմ, որ կրնաք զիս ճամփու դնել։

Վաճառականը դժգոհ դեմքով մը սիկարեթ մը վառեց և սկըսավ ծխել. պահ մը երկու խոսակիցներու միջև լռություն տիրեց։

Երկուքն ալ հուզված էին փոխանակված խոսքերեն։ Հաճի Հակոբ աղա երբեք այս աստիճան ընդդիմություն մը չէր սպասեր իր պաշտոնյային կողմե, իսկ Գարեգին միտքեն չէր անցուցած, որ Մարգար էֆենտիի այցելությունը այս աստիճան ծայրահեղության պիտի մղեր խնդիրը։

Ի վերջո ծերունին ըսավ.

— Հիմակուհիմա գնա գործիդ նայե... այս միջոցիս հուզված կերևաս կոր, իրարու խոսք չենք հասկնար կոր։ Լրջորեն ու պաղարյունով մտածե, այն ատեն թերևս գաղափարդ փոխես։

Գարեգին ոտքի ելավ և մեկնեցավ։

Հազիվ երեսունըչորս տարեկան, նիհար, երկայնահասակ ու խարտյաշ երիտասարդ մըն էր հաճի Հակոբ աղային գրագիրը։ Կեդրոնական վարժարանի մեջ ուսմունքը ավարտած՝ բավական զարգացում ուներ, մանավանդ, որ դպրոցը ձգելե ետքն ալ ինքնին ուզած էր կատարելագործել սորվածները։

Աղքատ ընտանիքի զավակ, դպրոցեն ելլելեն ետքը կորսնցուցած էր ծնողքը և ստիպված էր տակավին պատանի, իր օրվան հացը ճարելու աշխատիլ։

Շուտով համեստ գործ մը գտած էր հանձնակատարի մը քով, որ քանի մը տարի զինք աշխատցուցած էր շնչին ամսականով մը։

Ի վերջո Գարեգին հաջողած էր մտնել հաճի Հակոբ աղայի առևտրատունը, ուր իր պարկեշտության, ուշիմության ու աշխատասիրության շնորհիվ կամաց-կամաց հառաջացեր էր ու այժմ 18 ոսկի ամսական կստանար, ինչ որ նախանձելի դիրք մը ըսել էր հայ վաճառականի մը քով։

Երիտասարդ գրագիրը իր նյութական կացությունը այսպես բարվոքելե ետքը, ուզած էր ամուսնանալ, տուն տեղ կազմել, մանավանդ, որ ծնողքներ չէին պակսեր ատանկ «շնորհքով» երիտասարդի մը աղջիկ տալու համար։

Գարեգին շուտով գտավ իր փնտռածը զարգացած մանկամարդ ու գեղանի աղջիկ մը, որուն հայրը ոսկերիչ էր։

Մեր պատմությունը սկսած ատեն Գարեգին նշանված էր երեք ամիսե ի վեր ու քանի մը ամիսեն հարսանիքը պիտի կատարվեր։

Երկու նշանածները անկեղծ սիրով մը կապված էին իրարու հետ ու երիտասարդ պաշտոնյան շաբաթը քանի մը անգամ կերթար իր նշանածը տեսնելու, որ Գատը-գյուղ կբնակեր։

Երիտասարդը, իր էֆենտիին քովեն մեկնելով՝ երբոր վերադարձավ իր սեղանին գլուխը՝ սարսափելի կերպով գրգռված էր։ Մարգար էֆ-ի կատարած դիմումը հրեշային բան մը կթվեր իրեն։

— Ի՞նչ կխորհեր, հացի՞ս սպառնալ, որպեսզի խղճիս հակառակ գործեմ, ասկե ավելի անարգ բան մը կարելի՞ է մտածել։ Որովհետև ինք հարուստ է, պետք է, որ իր կամքը կատարվի ոչ թե միայն իր տանը կամ գրասենյակին մեջ, այլ նաև իր բնակած թաղին մեջ... Ի՜նչ մեծամտություն, ի՜նչ ծայրահեղ ամբարտավանություն։ Բայց իրեն ցույց պիտի տամ, որ ես իրմե չեմ վախնար և թե պետք չեմ զգար իրեն ոսկիներուն առջև խոնարհվելու։ Այդ մարդը կերևա, որ պնակալեզ շողոքորթներե շրջապատված է ու ամեն մարդ անոնց վրայեն կդատե...

Գարեգին ջանաց իր գործին պարապիլ, գրիչը ձեռք առավ առևտրական նամակի մը պատասխանելու համար, բայց հազիվ թե տող մը գրած՝ տեսավ, որ չպիտի կրնար շարունակել. հուզումը տակավին չէր հանդարտած։ Միտքը հակառակ իր կամքին՝ Մարգար էֆենտիով կզբաղեր։ Կխորհեր ավելի բուռն թափով մը նետվիլ պայքարին մեջ։ Մինչև հիմա ժամկոչին խնդիրը նկատած էր անկարևոր դեպք մը և եթե Պողոս էֆենտիին ձայնակցած էր և ընդդիմացած Վարդանի ճամփվելուն՝ պարզապես աղքատ ու անմեղ մարդ մը հարուստին քմահաճույքին չզոհելու համար։ Բայց հիմա խնդիրը կփոխվեր, գրեթե անձնական կդառնար։ Ուղղակի զինքը կդրգռեին, անլուր ստորացուցիչ պահանջումներ ընելով։

— Ո՛չ պիտի հրաժարիմ և ո՛չ ալ տեղի պիտի տամ,— վճռեց,— այլ ընդհակառակը, մինչև վերջը պիտի պաշտպանեմ Վարդան աղբարը, նույնիսկ եթե Պողոս էֆենտին տեղի տա. պիտի պաշտպանեմ թե՛ Թաղ. Խորհրդի մեջ և թե՛ անկե դուրս, ինչ միջոցներով որ կրնամ...

Այս որոշումը զինքը հանդարտեցուց, անցավ գրասեղանին առջև և մեկ քանի նամակներ գրեց։

Իրիկվան դեմ եկան իրեն իմացուցին, թե էֆենտին զինքը տեսնել կուզեր։

Գարեգին փութաց իր մեծավորին քովը։

— Խոսածներուս մասին մտածեցի՞ր, ի՞նչ որոշում տվիր,— հարցուց Հաճի աղան։

— Այո՛, երկարորեն մտածեցի,— պատասխանեց գրագիրը։

— Հրաժարական կուտա՞ս կոր։

— Չէ՛։

— Ուրեմն թաղական պիտի մնաս և Մարգար էֆ-ին կո՞ղմը պիտի բռնես։

— Չէ՛,— պատասխանեց Գարեգին, բայց հաստատ ձայնով մը։

— Ուրեմն ի՞նչ է միտքդ։

— Թաղական պիտի մնամ և ժամկոչը պիտի պաշտպանեմ։

Ծերունին իր պաշտոնյային երեսը նայեցավ հանդիմանական ձևով մը։

— Կցավիմ որ,— ըսավ,— այս պզտիկ խնդիրքս կմերժես։

— Ձեզի համար թերևս պզտիկ ըլլա, բայց ինծի համար շատ մեծ է։ Եվ հետո ձեր խնդիրքը չէ, որ կմերժեմ կոր, այլ Մարգար էֆ-ի հրամանը։

— Ուղածիդ պես ըրե,— գոչեց ծերունին սրտնեղած և գավազանը առնելով հեռացավ գրասենյակեն։

Գարեգին տխրությամբ նայեցավ վաճառականին ետևեն, որ կհեռանար։

— Մարդը վշտացուցի,— մտածեց և այս մտածումը սրտի սեղմում պատճառեց իրեն։

Արդարև երիտասարդը անկեղծորեն կապված էր իր մեծավորին որ միշտ բարյացակամություն ցույց տված էր իրեն հանդեպ։ Տասը տարիե ի վեր չէր պատահած երբեք, որ իրարու հետ անհամաձայնություն մը ունենային կամ իրարմե դժգոհ մնալու պատճառ մը ըլլար։

Ինք կանոնավորությամբ ու հավատարմությամբ իր գործը կը-կատարեր և Հաճի Հակոբ աղան ալ զինքը առատորեն կվարձատրեր։ Մեծավորը նույնիսկ խոստացած էր Գարեգինի կնքահայրը ըլլալ և ամուսնությանը առթիվ կարևոր հավելում մը ընել անոր ամսականին վրա։

Բոլոր այս պարագաները վերհիշելով՝ երիտասարդը հոգեկան տառապանքի մը կմատնվեր և կշանար միջոց մը գտնել ծերունիին սիրտը առնելու համար։

Հետևյալ և հաջորդ օրերը վաճառականը ոչէ նոր ակնարկու-

թյուն չըրավ Գարեգինին, միայն թե երիտասարդին այնպես թվեցավ, որ իր մեծավորը առաջվան սիրալիր մտերմությունը ցույց չէր տար իրեն հանդեպ։ Ինքն ալ չուզեց խոսք բանալ և թողուց, որ դեպքերը իրենց բնական ընթացքին հետևին։

Թաղին մեջ իրարանցումը կշարունակվեր, մանավանդ «Պայքար Լսարան»-ի և «Շանթ Ակումբ»-ի անդամները գործի վրա էին։

Մարգար էֆ. ընկեր Կայծունին տուն հրավիրած էր, գոված էր թաղին մտավորական երիտասարդության ջանքերը և իր համակրությունը հայտնած էր «Պայքար Լսարանին»։ Հետո անոր նյութական վիճակի մասին տեղեկություններ հարցուցած էր։

— Նյութական վիճակնիս փայլուն չէ,— հաստատած էր ընկեր Կայծունի,— դժբախտաբար մեր հասույթները ծախքերուն չեն բավեր կոր։

— Էյ, ինչպե՞ս կընեք կոր։

— Ինչ ընենք, պարտք կընենք կոր հիմակուհիմա։

— Որչափ պարտք ունիք։

— Վեր ի վերո քսանըհինգ ոսկիի չափ։

— Բավական բան է... ճար մը չե՞ք գտներ կոր այդ պարտքը վճարելու համար։

— Վիճակահանություն մը կազմակերպելու միտք ունինք։

— Վիճակահանությունը երկար բան է, թատերական ներկայացում մը կազմակերպեցեք, մեկ անգամեն մեծկակ գումար մը ձեռքերնիդ կանցնի։

— Աղե՛կ, բայց տոմսակներ տեղավորել շատ դժվար է։

— Դուք ներկայացումը կազմակերպեցեք, տոմսակները սպառելու հոգը ես վրաս կառնեմ։

— Այն ատեն գործը կդյուրանա և անմիջապես կրնանք ներկայացման պատրաստության անցնիլ։

Կայծունի խորին շնորհակալություն հայտներ էր Մարգար էֆ-ին իրենց հանդեպ ցույց տված համակրության համար։

— Ես ձեր կուսակցությունը շատ կսիրեմ,— ըսավ,— լուրջ բանիրուն մարդիկներ շատ կան ձեր մեջ... հոս ուրիշ կուսակցություն մըն ալ կա, «Շանթ Ակումբ» է, ի՞նչ է, անոնք զյուպպե մարդիկներ են։

— Մենք դրանց հետ մեր հարաբերությունները խզած ենք,— հայտարարեց ընկեր Կայծունի խորին արհամարհության շեշտով մը։

Ընկեր Կայծունի՝ թեև Պոլսեցի՝ բայց կուսակցական ըլլալեն ի վեր ռուսահայ ասացվածքներ կգործածեր հաճախ իր ուզզափառությունը շեշտելու համար։

— Իրավունք ունիք, բոլորն ալ դատարկապորտներ են, երես տալիք մարդիկ չեն... ատոնց գլուխն Սուսերյանցն է եղեր։

— Երևի այդպես է։

— Ինդո՞ր մարդ է։

— Մի բախտախնդիր արարած, մի խաչագող...

— Բայց լեզուն բերանին մեջ կդառնա կոր։

— Մեկ քանի խոսքեր գոց ըրած է, միշտ անոնք կկրկնե. հռետորական կարողություն չունի։

— Այդ ապուշները ինծի դե՞մ են ելեր։

— Ի՞նչ կարևորություն ունի... նրանք կփորձեն պղտոր ջուրի մեջ ձուկ որսալ...

— Դո՞ւք ավելի բազմաթիվ եք, թե անոնք։

— Իհարկե մենք, թաղին ամբողջ մտավորականությունը մեր կողմն է։

— Ինծի ալ անանկ կուգա կոր։ Դուք ժամ առաջ սա թատերական ներկայացումը կազմակերպեցեք, ես հանձն կառնեմ տոմսակները սպառելու և առնվազն 40—50 ոսկի ձեզի զուտ շահ մը ապահովելու։

Այս հեռապատկերը բոլորովին շլացուց ընկեր Կայծունին, որ չէր գիտեր ինչպես հայտներ իր շնորհակալիքը։

— Դուք սա ժամկոչի խնդրին մեջ ինծի միացեք,— հայտարարեց Մարգար էֆ.,— ատով լավագույն շնորհակալությունը հայտնած կըլլաք։ Ասկե զատ, միայն թատերական ներկայացումով գոհ չպիտի ըլլամ, դեռ ուրիշ դիտավորություններ ալ ունիմ ձեր լսարանի մասին, բայց հետո... նախ ժամկոչին խնդիրը լմննա, թաղը հանդարտի, այն ատեն երկարորեն կտեսնվինք։

— Ժամկոչի հարցը մեզի համար սկզբունքային խնդիր է և պետք է պայքար մղենք մինչև ետքը...

— Պրավո՛,— գոչեց Մարգար էֆենտի,— շատ շիտակ կխոսիս, ճիշտ ինծի համար ալ սկզբունքի խնդիր է ասիկա և անոր համար մեջ մտած եմ. եթե ոչ ո՞վ կզբաղի խմպրլ ժամկոչով մը, ոչ իմ դիրքս, ոչ ալ իմ ժամանակս կներե։

Մինչ Մարգար էֆենտի այսպես «Պայքար Լսարանը» իրեն կա-

պահովեր, անդին Պողոս էֆենտի ճաշի կհրավիրեր «Շանթ Ակումբի» նախագահ Սուսերյանցը։

— Շատ հավնեցա կիրակի օրը ձեր բռնած դիրքին,— ըսավ Շազիկի ամուսինը Ակումբի նախագահին՝ գինիի գավաթը լցնելով։— Շիտակը ըսեմ, ես դեռ մոտեն գաղափար չունեի ձեր կուսակցության վրա, այս ակումբը շատո՞նց կազմած է։

— Մոտավորապես երեք տարիե ի վեր,— պատասխանեց Սուսերյանց։

— Բայց տեղերնիդ շատ պզտիկ է կարծեմ։

— Ի՞նչ ընենք, մեր նյութական պայմանները չեն ներեր ավելի մեծ տեղ մը վարձելու։

— Սա մեր մեծ սրճարանը չվարձե՞ք։

— Ո՞ր մեծ սրճարանը, Պողոս էֆենտի։

— Ճանը՛մ եկեղեցապատկան սրճարանը։

— Բայց անիկա բռնված է։

— Քանի մը օրեն պայմանաժամը կլրանա, եթե կուզեք, պայմանագրությունը չենք նորոգեր և ձեզի կուտանք, ատիկա խընդիր չէ։

— Այո՛, բայց անոր վարձքը սուղ ըլլալու է։

— Ամսական տասներկու մեճիտ։

— Մենք այդքան գումար չենք կրնար վճարել, մեր հիմակվան տեղին վեց մեճիտ կուտանք կոր։

— Ճանը՛մ, դուք բռնեցեք տե՝ աստված ողորմած է, բան մը կընենք։

— Արդեն Ակումբը պարտք ունի, ասանկ ծանր բեռան մը ներքև չկրնար մտնել։

— Ո՞րչափ պարտք ունի։

— Տասնըհինգ ոսկիի չափ։

— Մեծ բան մը չէ,— ըսավ Պողոս էֆենտի։

— Մեզի համար շատ մեծ բան է,— պատասխանեց Սուսերյանց։

— Ես ձեզ ի նպաստ վիճակահանություն մը կկազմակերպեմ և ոչ թե միայն պարտքերնիդ կվճարեմ, այլ սրճարանին տալիք մեկ տարեկան վարձքերնիդ ալ կհանեմ։

— Պողոս էֆենտի, եթե այդպիսի բան մը ընեք, մեր Ակումբին պատվո անդամ կարձանագրենք ձեզի։

— Ես ինչ որ կըսեմ, կընեմ. ես արդեն շատ համակրած եմ

ձեր կուսակցության, որովհետև կտեսնեմ, որ ամենքդ ալ շնորհքով մարդիկ եք։

— Թաղին ամբողջ մտավոր երիտասարդությունը մեր շուրջը բոլորած է,— պատասխանեց Սուսերյանց համեստորեն։

— Ա՛յ մյուսները պարզապես սրիկաներ են... «Պայքար Լսարան» է՞, ի՞նչ է։

— Մենք երբեք կապակցություն չունինք անոնց հետ և չենք ալ ուզեր ունենալ։

— Շատ աղեկ կընեք։

— Անոնք արդեն գոյության իրավունք չունին։

— Շատ ճիշտ է։ Խըմպըլները ելեր Թաղ. Խորհրդին դեմ կկըռվին... իրենց պիտի հասկըցնեմ։

— Ջարժեր այդ մարդոց հետ զբաղիլ,— ըսավ ընկեր Սուսերյանց արհամարհոտ շեշտով մը։

— Դուք տեսնեք ինչ լավ դիրք բռնեցիք այս ժամկոչի խնդրին մեջ։

— Մենք սկզբունքով կգործենք միշտ, մինչդեռ անոնք անձնական շահերե կտարվին,— բացատրեց Սուսերյանց։

Պողոս էֆենտի կրկին խոսք բացավ վիճակահանության մասին և հանձնարարեց, որ իսկույն գործի սկսին։ Հետո խոստացավ սրճարանի վարձակալին հետ պայմանագրությունը չվերանորոգել և չենքը ամսական 200 ղրշ-ի տալ «Շանթ Ակումբին»։

Ի փոխարեն ընկեր Սուսերյանց խոստացավ թև ու թիկունք ըլլալ Պողոս էֆենտիի, իր բոլոր գործոն շարքերով։

— Մենք ձեր կողքին կեցած ենք, մի՛ վախնաք,— ըսավ։

— Կեցցե՛ք,— գոչեց վաճառականը ուրախությամբ։

Ե

— Հոս նստելուդ՝ գնա մեյ մը նայե, ինչ կանցնի կդառնա կոր։

Այս խոսքերը կուղղեր տիկին Սաթեն իր ամուսնուն կիրակի առտու, մինչ Մարգար էֆենտի, իր սովորության համեմատ, բազմոցին վրա երկնցած, առտվան թերթ մը կկարդար։

Իր կնոջ այսպես հանդիմանական հրավերին պատասխանեց ամենայն հանդարտությամբ։

— Ես երթալ նայելու պետք չունիմ, իմ տեղս հոն չէ։

— Կվախնաս կոր, անոր համար ծակը մտեր նստեր ես։

— Ես իմ բոլոր պատրաստություններս տեսած եմ, հիմա հան-

դարտությամբ արդյունքին կսպասեմ... զորավարները պատերազմին մեջ չեն մտներ, հեռուն կկառավարեն։

— Քեզի պես զորավար ըլլալն ետքը՝ հալերնիս յաման է,— պատասխանեց կինը արհամարհական ժպիտով մը։

— Քիչ մըն ալ համբերե, կիմանաս...

— Նստած տեղերնիս ի՞նչ պիտի իմանանք։

— Ճանը՛մ, երկար մի ըներ, ես ամեն բան կարգադրած եմ, Միհրանիկ էֆենտին ու Մանուկ աղան պիտի գան, լուր պիտի բերեն։ Քիչ մը համբերե։

— Երկու շաբաթ է կհամբերեմ կոր, ալ բավական չէ՞... ամեն մարդ վրանիս կխնդա կոր, խապա՞ր ես, աճապա:

— Մենք ալ ետքը ամենուն վրա աղեկ պիտի խնդանք...

Տիկին Սաթեն առանց պատասխանելու բարկության շարժումով մը դուրս եկավ սենյակեն։

Մարգար էֆենտի թեթևացումի հառաչանք մը արձակեց և սկսավ շարունակել իր ընթերցումը։

Իր հաղթանակին վրա վստահ էր։ Ռափիկ աղան շահած էին իրենց կողմը, Գարեգին ապահովաբար չեզոք պիտի մնար կամ թերևս հրաժարվեր իսկ։ Այսպես ուրեմն, Պոզոս էֆ. առանձին կմնար երեք թաղականներու դեմ, որոնք նույն օրը պիտի պահանջեին արտաքսումը։

Մյուս կողմե «Պայքար Լսարանը» հսկա ցույց մը պիտի ըներ և ի հարկին բռնի միջոցներու ալ պիտի դիմեր՝ ճնշելու համար Թաչ. խորհրդի ատենապետին վրա։

Բոլոր այս մանրամասնությունները ծանոթ էին տիկին Սաթեին և ինքն ալ իր ամուսնույն չափ հավատք ուներ հաղթության մասին։ Բայց և այնպես կաշխատեր մտրակելու իր ամուսնույն արժանապատվությունը, որպեսզի անոր եռանդը միշտ վառ մնա։ Կվախնար մանավանդ, որ վերջին վայրկյանին իրենց մարդիկը կտկարանան և սխալ մը կգործեն, և ճիշտ ասոր համար կուզեր, որ Մարգար էֆենտի անձամբ հսկե տեղի ունենալիք գործողություններուն։

— Ճանը՛մ, հերիք կարդացիր, գնա նայե ի՞նչ կընեն կոր մերիները։

Վաճառականը ստիպվեցավ երկարորեն բացատրել այն անպատեհությունները, որոնք կրնային հառաջ գալ մարտիկ խումբերուն մեջ իր ներկայությենե։

Ինք այդպիսի կերպով կարգադրած էր, որ խնդիրը հանրային կերպարանք մը ստանար, ժողովուրդը և թաղականները ըլլային ժամկոչին վտարումը պահանջողները և ոչ թե Մարգար Սասանյանը։ Որովհետև իրեն դիրքը ունեցող մարդու մը չէր վայելեր այդ տեսակ ընչին խնդիրներով զբաղիլ։ Եթե դուրս ելլեր, բնականաբար պիտի գային զինքը շրջապատեին և ինքը հայտնի պարագլուխը պիտի ըլլար մղված պայքարին և եթե երբեք անհաճո դեպքեր ալ պատահեին՝ պատասխանատվությունը իր վրա պիտի ծանրանար։ Ասոնցմե զատ, կրնար ըլլալ, որ հակառակ կողմեն իրեն նախատինք մը ընեին, ինչ որ ծանրակշիռ հետևանքներ կրնար ունենալ։

Այս բոլոր պատճառաբանությունները իրավացի թվեցան տիկին Սաթենի, որ մեղմ ու հաշտարար շեշտով մը ըսավ.

— Իրավունք ունիս, տեղդ նստե։

Քիչ մը ետքը տիկին Նվարդ եկավ այցելության, հուզված, շըփոթված կերպարանքով մը։

— Ինչո՞ւ ասանկ հուզվեր ես, ո՞ւրկե կուգաս,— հարցուց տիկին Սաթեն զայն դիմավորելով։

— Եկեղեցի գացի հոնկե կուգամ,— պատասխանեց Նվարդ գլխարկը հանելով։

— Պատարագը լմնցա՞վ...

— Չէ՛, արդեն ներս չմտա որ...

— Ինչո՞ւ համար։

— Էրիկս դեմս ելավ բակին մեջ, ըսավ, որ հոս մի կենար, ել գնա... իրարանցում պիտի ըլլա եղեր։

— Չէի՞ր գիտեր։

— Գիտեի, բայց կկարծեի, որ թաղականները իրենց մեջ խընդիր պիտի ունենան, մինչդեռ հիմա ժողովուրդն ալ մեջ մտեր է։ Ամբողջ բակը լեցված էր... աճապա, էրկանս գլխուն փորձանք մը կուգա՞, ի՞նչ կըսես, Մարգար էֆ...

— Մի վախնա՛ր, բան չիկա, ամենքն ալ մեր մարդիկն են,— պատասխանեց Մարգար էֆենտի խորհրդավոր ժպիտով մը։

— Ուզեցի հետս բերել, չեկավ,—շարունակեց տիկին Նվարդ,— դուն գնա Մարգար էֆենտիենց նստե, ես հոն կուգամ, քեզի կառնեմ, ըսավ։

— Շատ աղեկ ըրեր ես, մենք ալ միս մինակ սրտերնիս կնեղանար,— պատասխանեց տիկին Սաթեն։

— Ժամեն դուրս ելած ատենս ո՞վ դեմս ելլե աղեկ...

— Ո՞վ,— հարցուց տիկին Սաթեն։

— Գետինն անցնելիք Շազիկը... սա ամեն իրարանցումներուն պատճառը... ուշախը ետևը ձգած ժամ մտավ։

— Ի՞նչ կըսես, ծառա՞ն ալ մեկտեղ բերեր է, ինչո՞ւ համար։

— Ո՞վ գիտե, շալըմի համար ըլլալու է... անանկ ալ քալվածք մը քի կարծես իշխանուհի մըն է...

— Է՜հ, հարկավ, Թաղ. Խորհրդի ատենապետին կինն է։ Բարևեցի՞ք իրար։

— Սանկ գլխովս բարև մը տվի անցա, անիկա կենալու պես ըրավ, բայց ես չտեսնալու զարկի։

— Աֆերի՜մ, բեք աղեկ ըրեր ես,— գոչեց տիկին Սաթեն ուրախությամբ։— Այսօր թող աղվոր մը խաղք ըլլա, որ երթա սորվի։

— Իրենց կերպարանքին նայիս նե՝ ինքզինքնուն վրա շատ վստահ կպտահին կոր,— միջամտեց Մարգար էֆենտի։

— Դուն ալ մեծ-մեծ մի ջարդեր նստած տեղդ,— գոչեց Սաթեն։

— Քիչ մը ետքը խապարները կառնես։

— Ի՞նչ պիտի ըլլա որ,— հարցուց տիկին Նվարդ հետաքրքիր,— ինծի ալ պատմեցեք։

— Ի՞նչ պիտի ըլլա, Պողոս էֆենտին առոք փառոք դուրս պիտի նետեն Թաղ. Խորհուրդեն,— պատասխանեց Մարգար էֆենտի հաղթականորեն։

— Իրա՞վ կըսես, էյ բռնի կրնա՞ն ատանկ բան ընել։

— Եթե մեծամասնության խոսքին ականջ չկախե, բնականաբար կընեն։

— Բայց անիկա ալ իր կուսակիցներն ունի հարկավ։

— Թող ունենա, ասդիի կողմը ավելի զորավոր է։

— Վա՜յ, կվախնամ, որ կռիվ մը ըլլա։

— Քեզի՞ ինչ, կուզեն նե թող իրարու գլուխ պատռեն։

— Հապա էրի՞կս, ես անիկա կմտածեմ կոր։

— Անիկա խոհեմ է, ծեծին ատենը գալուն պես՝ կծիկը կդնե,— պատասխանեց Մարգար էֆ. խնդալով։

Տիկին Նվարդ կես ժամե ի վեր հոն էր, երբ Միհրանիկ էֆենտի եկավ։ Առաջին ակնարկով Մարգար էֆենտի նշմարեց, որ իր բարեկամը հաղթական երևույթ մը չուներ։

— Ի՞նչ լուր,— հարցուց սրտատրոփ անձկությամբ մը, մինչև երկու կիներն ալ նորեկին շուրթերեն կախված էին։

— Ի՞նչ պիտի ըլլա, խաղքություն, էֆենտիմ, խաղքություն,— գոչեց Միհրանիկ բարկացած շեշտով մը։

— Պատմե՛ տեսնենք։

— Թաղին մեջ որչափ դատարկապորտ սրիկաներ կան նե՝ ժողվեր բերեր են... դեռ երեկվան լակոտը ելեր գործի կխառնվի... մեկ քանիին աղեկ փայերնին տվի յա...

Բոլոր այս կցկտուր խոսքերը որոշ բան մը չէին հայտներ, բայց ցույց կուտային, թե դեպքերը Միհրանիկ էֆ-ին հաճելի կերպով մը չէին տեղի ունեցած։

— Շենք շնորհք պատմե տեսնենք եղածը,— ըսավ տիկին Սաթեն։

— Էֆենտիմ,— շարունակեց Միհրանիկ,— բակը բազմությունը լեցված էր, երբ ընկեր Կայծունի աթոռի մը վրա ելլելով սկսավ խոսիլ։ Հոն գտնվողները շուրջը հավաքվեցան։

— Դուն շատ չմոտենայիր,— միջամտեց տիկին Նվարդ։

— Չէ՜, ես հեռուն մտիկ կընեի կոր։ Մարդը շատ աղեկ, շատ շնորհքով կերպով կխոսեր կոր, խրատներ կուտար կոր, երբ մեյ մըն ալ քանի մը հատ գլխուն զարկին, իրարանցում մըն էր փրթավ բակին մեջ...

— Դուն դուրս ելլայիր,— միջամտեց տիկին Նվարդ։

— Ճանը՛մ, ես հեռուն կեցած էի։

— Ծեծողները որո՞նք էին,— հարցուց Մարգար էֆենտի։

— Որոնք պիտի ըլլան, «Շանթ Ակումբին» խլեզները, ուրիշ վարդ մը անճանաչ մարդիկ... էտեպսիզ ալայի։

— Էյ, ասդիի կողմեն մարդ չի՞ կար։

— Կար, բայց անոնք շատվոր էին... ասդիները կամաց մը կծիկը դրին։

Բոլոր այս հարց ու փորձերուն միջոցին տիկին Սաթեն շանթահարիչ նայվածքներ կուղղեր իր էրկան, որ սարսափահար կջանար ընայիլ իր կնոջ երեսը։

— Հետո,— շարունակեց Միհրանիկ,— Սուսերյանց աթոռի մը վրա ելավ ափեղցփեղ բաներ մը խոսեցավ ու ետքը թուղթ մը ստորագրել տվավ ներկաներուն ու այդ թուղթը առավ տարավ Խորհրդարան՝ Թաղ. Խորհրդին հանձնելու համար։

— Հասկցա՞ր ինչ է եղեր այդ թուղթը։

— Էֆենտիմ, հանուն թաղեցիներուն կպահանջեին կոր ժամկոչ Վարդան իր պաշտոնին վրա մնա և միևնույն ատեն իրենց

շնորհակալությունը Հայաստանին Պողոս էֆենտիին այս խնդրին մեջ բռնած ընթացքին համար...

— Այդ թուղթը կարևորություն չունի ալ,— ըսավ Մարգար էֆենտի,— իրենք ո՞վ են, որ հանուն թաղեցիներուն կխոսին կոր... բուն թաղեցին իրեն կամքը հանրագրությամբ մը պիտի հայտնե։

— Չեմ գիտեր, ես եղածը կպատմեմ։

— Է՛յ, թաղականները ի՞նչ ըրին։

— Անոնք ներսը ժողով կընեն կոր մինչև հիմա, լսեցի, որ բավական վեճ ունեցեր են, բայց որոշ բան մը չիմացա։

— Հիմա Մանուկ աղան կուգա, անկե կիմանանք, ատանկ տըղայական ցույցերը կարևորություն չունին, Թաղ. Խորհրդի մեծամասնությունը ինչ որոշե, ան կըլլա։

Վերջին փրկության տախտակն էր այս, որուն կկառչեր Մարգար էֆենտի իր կնոջ նայվածքներուն դիմադրելու համար։

Միհրանիկ աղա իր պատմությունը շատ մեղմացնելով պատմած էր։ Իրողությունը ավելի ծանր էր։ Ժողովուրդը հայտնապես Պողոս էֆենտիի կողմը բռնած էր և նույնիսկ ցույցեր ըրած էր Մարգար էֆենտիի դեմ։

— Անկցի՛ Մարգար էֆենտին, անկցին կամայականության պաշտպանները, և այլն,— պոռացած էին և եթե վաճառականը խոհեմաբար տունը մնացած չըլլար ու եկեղեցիին մոտերը երևնար, հավանորեն ծեծ մըն ալ պիտի ուտեր։ Ցերեկվան մոտ Մանուկ աղան ալ եկավ տխուր, ընկճված դեմքով։

— Լուրը Մանուկ աղային քովն է,— գոչեց վաճառականը,— հրամմե, նստե՛ ու պատմե՛ տեսնենք։

— Լսեցի՞ք եղած խաղքությունը,— գոչեց թաղականը սրտմըտած դեմքով մը։

— Սա բակին միշի ցո՞ւյցը,—հարցուց Մարգար էֆենտի։

— Այո՛...

— Մեր Միհրանիկ աղան հոն է եղեր, պատմեց,— ըսավ վաճառականը,— բայց հիմա թողունք ատիկա... ատոնք կարևորություն չունին, դուք ի՞նչ ըրիք տեսնենք, ի՞նչ որոշում տվիք։

— Ես հրաժարականս տվի, ելա մեջեն,— գոչեց Մանուկ աղա,— ուրիշ ճար չկա։

— Է՛յ, մյուս թաղականները։

— Ինչ կուզեն թող ընեն...

— Ռափիկ աղան ի՞նչ ըրավ։

— Անիկա եկած չէր, տունը լուր ղրկեցի, ըսեր էին, որ հիվանդ է եղեր... կերևա, որ դիտմամբ չէր եկած։

— Գարեգինը ի՞նչ դիրք բռնեց,—հարցուց Մարգար էֆենտի։

— Ան էր արդեն գործը ավրողը,— գոչեց Մանուկ,— եթե ան չըլլար՝ Պողոս էֆենտիին պիտի համոզեինք թերևս, բայց ինք այնքան համառորեն պաշտպանեց ժամկոչը, որ կարելի չեղավ բան մը ընել։

— Վա՞յ, այսպես հա՞,— ըսավ վաճառականը,— Գարեգինը ժամկոչ Վարդանի կո՞ղմը բռնեց։

— Եվ անանկ եռանդով մը, որ շիտակը զարմացա։ Երբեք այսչափ բուռն ընդդիմություն մը չէի սպասեր իր կողմե. թեև գիտեի, որ նախապես Պողոս էֆ-ին կուսակից էր այդ խնդրին մեջ։

— Իսկ մյո՞ւս թաղականը, որ քեզի հետ էր...

— Սեղբո՞ս էֆենտին։

— Այո՛։

— Ան խեղճ մարդը միշտ ինծի հետ է, բայց ի՞նչ կրնա ընել։

— Բայց, վերջապես, ի՞նչ որոշում տվիք տեսնենք։

— Ոչի՛նչ, բացարձակապես ոչի՛նչ։

— Ըսել է Վարդանը պիտի մնա,— ըսավ տիկին Սաթեն, կատաղութենե թրթռուն ձայնով մը։

— Անանկ կերևա...

Մարգար էֆենտի, ոտքի ելած, սենյակին մեջ վեր-վար կքալեր, անընդհատ սիկարեթ ծխելով։ Հայտնի էր, որ վրեժխնդրական ծրագիրներ կորոճար իր մտքին մեջ։ Այս նոր ու անակնկալ պարտությունը սարսափելի կերպով ազդած էր իր վրա ու ալ կարողություն չուներ պաղարյունությունը պահելու։

Տիկին Սաթեն նույնպես սաստիկ հուզված էր. կատաղի նայվածքներ կարձակեր աջ ու ձախ և չէր կրնար խոսք մը գտնել ըսելու։ Տիկին Նվարդ նշմարեց իր բարեկամուհիին վիճակը և քովը երթալով՝ ըսավ.

— Եկուր քիչ մը վերը սենյակդ երթանք հանգստանաս, շատ անհանգիստ կերևաս կոր, ջիղերդ ոտքի ելած են։

— Դուն իմ տեղս ըլլայիր չպիտի՞ հուզվեիր,— գոչեց տիկին Սաթեն ոտքի ելնելով ու իր բարեկամուհիին հետևելով,— այս ի՞նչ խաղքություն, ի՞նչ նախատինք, ի՞նչ ամոթ... այս գեղը ձգել փախչելու է, ուրիշ ճար չի կա։

Երբ երկու կիները մեկնեցան, Մարգար էֆենտի, որ ինչպես ը-

սինք, անընդհատ ժուռ կուգար սենյակին մեջ, կեցավ ու երկու մարդոց դառնալով՝ ըսավ.

— Այս խնդիրը ասանկ չկրնար լմննալ...

— Ինծի ալ անանկ կուգա,— պատասխանեց Մանուկ աղա։

— Պարզապես ամենքն ալ մեզի խաբեցին ու այսպես մեջտեղ ձգեցին... Ռափիկ աղային ըրածը կվայելե՞... ասանկ սուտ հիվանդ ըլլալ։

— Ո՞վ գիտե, թերևս իրավցնե հիվանդ է,— պատասխանեց Մանուկ աղա, ուզելով ոսկերիչը պաշտպանել։

— Հապա այդ «Պայքար Լսարանին» մարդիկը... իբր թե թաղին բոլոր երիտասարդությունը իրենց ձեռքին մեջն էր...

— Պարապ խոսք, էֆենտի, պարապ խոսք, քանի մը հոգի էին, անոնք ալ ձգեցին փախան։

Եվ այսպես երեք անձերը դեմ դիմաց անցած իրենց պարտության վրա կողբային, գանգատելով ամենեն։

Նույն միջոցին, ընդհակառակը, Պողոս էֆենտիի տան մեջ ցնծությամբ կտոնվեր մեծ հաղթանակը։

Զ

— Քա՜, Նարդիկը ո՞ւր է, առտըվնե ի վեր մեջտեղ չի կա, սա ելեկիս կոճակը բրդեր է, կարել պիտի տայի։

Հիսուն տարեկանի մոտ գեր ու կարճահասակ մարդ մըն էր, որ այս խոսքերը կուղղեր իր կնոջ, կիրակի առտու մը։

— Տուր ես կարեմ,— պատասխանեց կինը,— այսօր Նարդիկն խեր չկա։

— Ինչո՞ւ համար։

— Ճանը՛մ, չե՞ս գիտեր, կիրակի է, նշանածը պիտի գա, հագվելու վրա է։

— Այս մեկ հագվիլը քանի՞ ժամ կտևե։

Գասը-գյուղը, Մեռհյուրտարի կողմերը, փոքրիկ փայտաշեն տան մը մեջ կբնակեր ոսկերիչ Սահակ աղան իր կնոջ՝ Փեմպե հանըմին և աղջկանը՝ Նարդիկին հետ։ Այս վերջինը հազիվ քսան տարեկան, սև աչքերով, նրբակազմ, թուխ ու գեղանի աղջիկ մըն էր։ Սրամյան վարժարանի մեջ իր շրջանը ավարտելե ետքը երկու տարի չափ հաճախած էր նաև մայրապետներու դպրոցը, ֆրանսերեն և դաշնակը կատարելագործելու համար։

Ոսկերիչը, թեև համեստ վիճակի տեր, չէր ուզած իր մի հատիկ աղջկան կրթության համար բան մը խնայել, մանավանդ, որ Նարդիկ շատ ընդունակություն ուներ և միշտ առաջինը կհանդիսանար իր ընկերուհիներուն մեջ։

Այր ու կին հոգի կուտային իրենց աղջկա վրա, և անոր գեղեցկությամբն ու խելքովը կփառավորվեին։

Նարդիկ արդարև շնորհալի աղջիկ մըն էր, ոչ թե միայն ֆիզիկապես, այլ նաև բարոյապես։ Անստգյուտ վարք ու բարք մը ուներ և հակառակ իր մանկատի տարիքին՝ կատարյալ տանտիկին մըն էր։

Իր այս հատկությունները ծանոթ էին զինքը ճանչցողներուն և հազիվ դպրոցեն ելած, շատ երիտասարդներ իր ձեռքը խնդրած էին։

Սակայն Սահակ աղա և իր կինը քիչ մը դժվարահաճ էին։ Կուզեին, որ իրենց ըրած զոհողություններուն փոխարեն՝ գոնե քիչ մը փայլուն դիրք մը ապահովեն իրենց աղջկան։ Անշուշտ մեծ հավակնություններ չունեին, բայց վերջապես կփափաքեին, որ Նարդիկ ընկերական սանդուխքին վրա իրենցմե աստիճան մը վեր տեղ մը գրավեր։

Քանի մը ամիսներե ի վեր իրենց այս փափաքը գրեթե իրագործված էր։ Աղջիկնին նշնած էին շնորհքով երիտասարդի մը՝ Գարեգինին՝ որ մեծ վաճառականի մը քով փայլուն դիրք մը ուներ և որ տակավին կրնար առաջ երթալ։

Նարդիկ ալ իր ծնողքին չափ գոհ ու երջանիկ էր այս միութենեն։

Գարեգին ոչ միայն վայելուչ ու գեղադեմ երիտասարդ մըն էր, այլ նաև զարգացած մտքի տեր, խելացի մարդ մը։ Իր խրոխտ ու անկեղծ նկարագիրը մանավանդ հմայած էր մանկատի աղջիկը։

Նարդիկ ճշմարիտ հպարտություն մը կզգար, երբ կիրակի իրիկունները իր նշանածին թևը մտած կերթար պտտելու։ Մոտայի ժողովեզերքը։

Գարեգին սովորություն ուներ ամեն կիրակի այցելության գալու և գիշերը Սահակ աղային մնալու։

Միայն թե հաճախ կեսօրեն ետքը կուգար, որովհետև առտուն ստիպված կըլլար Թաղական Խորհուրդի նիստերուն ներկա գտնվելու։

Վերջին անգամ սակայն Նարդիկ ստիպած էր զինքը, որ հաջորդ կիրակիին կանուխ գա, զոհելով Թաղ. Խորհրդի նիստը. Գա-

բեգին խոստացած էր և մանկամարդ աղջիկը վստահ էր, որ իր խոսքը պիտի հարգեր։

Արդարև առավան ժամը տասն էր, երբ տան դուռը զարնվեցավ և Գարեգին ներս մտավ։

Սահակ աղա դիմավորեց իր փեսացուն։

Երիտասարդը լուրջ ու մտածկոտ կերպարանք մը ուներ, որ անուշադիր չանցավ ոսկերիչին աչքերեն։

— Անհանգի՞ստ ես,— հարցուց,— վրադ սանկ նեղություն մը կա։

— Քիչ մը գլուխս կցավի կոր,— պատասխանեց Գարեգին։

— Ան է նե՝ բան մը չէ,— ըսավ Սահակ աղա,— կերևա, որ գիշերը աղեկ չես քնացեր։

— Անանկ կերևա։

Քանի մը կարևոր խոսքեր փոխանակելե ետքը Նարդիկ ներս մտավ և ինքն ալ շուտով նշմարեց նշանածին մտածկոտ կերպարանքը և սկսավ հարցուփորձել, բայց երիտասարդը խուսափողական պատասխաններ տվավ։

Մանկամարդ աղջիկը մտատանջության մատնված էր, չէր ուզեր իր հարցումներով նեղացնել նշանածը, բայց և այնպես անսովոր կգտներ անոր այս կերպարանքը։

Գարեգին միշտ ուրախ և զվարթ կըլլար, երբ նշանածին կայցելեր և այսօր առաջին անգամն էր, որ իր սովորական զվարթությունը կորսնցուցած էր։

Ծաղկատի աղջկան մտատանջությունը ավելի սաստկացավ, երբ Գարեգին Սահակ աղային դառնալով՝ ըսավ.

— Քեզի հետ քիչ մը առանձին խոսիլ կուզեմ։

— Շատ աղեկ,— պատասխանեց ոսկերիչը։

— Եթե կուզես սանկ Մեհյուրտարի պարտեզը երթանք, թե՛ օդ կառնենք, և թե՛ կխոսակցինք։

— Աղեկ կըլլա։

— Հապա ե՞ս,— ըսավ Նարդիկ դժգոհ կերպարանքով մը։

— Դուն ալ կես ժամեն եկուր մեզի հոն գտիր,— պատասխանեց Գարեգին,— մինչև այն ատեն խոսքերնիս լմնցուցած կըլլանք։

Երբ Գարեգին Սահակ աղային հետ տունեն դուրս ելավ ու քիչ մը հեռացավ, ըսավ.

— Քեզի ծանրակշիռ բան մը պիտի ըսեմ։

— Խոսե տեսնենք,— ըսավ ոսկերիչը մտատանջ դեմքով մը։

— Կարծես գործս ձգելու պիտի ստիպվիմ...

— Հե՞,— ըսավ Սահակ աղան շփոթած։

— Այո՛, Հաճի Հակոբ աղային քով ունեցած պաշտոնս պիտի թողում,— շարունակեց Գարեգին ամենայն հանդարտությամբ։

— Լավագույն գո՞րծ մը գտար։

— Չէ՛,— պատասխանեց Գարեգին,— միայն թե խնդիրը այն է, որ ալ չպիտի կրնամ այդ մարդուն քով պաշտոն վարել։

— Հետը խնդի՞ր մը ունեցար,— հարցուց Սահակ աղա։

— Այո՛, բավական ծանրկեկ խնդիր մը։

Եվ Գարեգին պատմեց իրողությունը։

Իր մեծավորը առջի օր զինքը կանչեր և պարզապես հանդիմաներ էր Մարգար էֆենտիի հանդեպ բռնած ընթացքին համար, երիտասարդ գրագիրը չկրնալով հանդուրժել իրեն եղած խոսքերուն՝ ինքն ալ քիչ մը ձայնը բարձրացուցեր ու մեկ քանի անախորժ խոսքեր ըսեր էր։

Ի վերջո գրեթե սրդողած ձգեր հեռացեր էր սենյակեն։

Ոսկերիչը մտիկ ըրավ այս պատմությանն։ Արդեն ուրիշ անգամ մըն ալ Գարեգին խոսած էր իրենց թաղին մեջ ծագած խընդրին վրա և ըսած էր, թե ինք, իբրև թաղական՝ պայքար կմղեր Մարգար էֆենտիի դեմ, հակառակ իր մեծավորին կամքին։

— Ատանկ մարդոց հետ իյնալը աղեկ բան չէ, ըսած էր, հարբստություն ունին, ազդեցություն ունին, ամեն բան կրնան ընել։

Հիմա իր փեսացուին պատմությունը լսելե ետքը, կրկին նույն խոսքերը կրկնեց.

— Ջավակս, ատանկ մարդոց հետ իյնալը աղեկ բան չէ...

— Ես արժանապատվություն ունիմ,— պատասխանեց Գարեգին,— չեմ կրնար հանդուրժել, որ խղճիս վրա բռնանան։

— Իրավունք ունիս, բայց ի՞նչ օգուտ, որ այդ մարդոց կապված ենք ապրելու համար։

— Ճիշտ այդ բանն է ահա, որ զիս կկատղեցնե։

Հասան Մեհյուրտարի պարտեզը, և խոշոր ծառի մը հովանիի ներքև նստեցան։

— Է՛յ, հիմա ի՞նչ պիտի ընես,— հարցուց ոսկերիչը,— վաղը առտու գործիդ չպիտի՞ երթաս։

— Շվարեր մնացեր եմ,— պատասխանեց Գարեգին,— երեկվան պատահածեն ետքը քիչ մը դժվար պիտի ըլլա երթալ, իբրև թե բան մը չեղածի պես, երթալ գործս շարունակել։

— Հաճի Հակոբ աղան քեզ ճամփու դնելու խո՞սք ըրավ։

— Չէ՛, բնավ երբեք, միայն իր դժգոհությունը հայտնեց բուն բառերով, բան մը, որ տասը տարիե ի վեր երբեք չէր ըրած։

— Ճանը՛մ, հորդ տեղ մարդ է,— պատասխանեց Սահակ աղա,— անոր ծանր խոսքերեն պետք չէ, որ վիրավորվիս, անանկ մարդիկ վայրկենապես կբարկանան և ըսածնին չեն գիտեր. հետո բարկությունը անցնելե ետքը իրենք ալ կզղջան։

— Եթե իմ պաշտոնիս մեջ գործած մեկ պակասությանս համար այդ խոսքերը ըսած ըլլար, չպիտի բարկանայի և խիստ կերպով չպիտի պատասխանեի,— դիտել տվավ Գարեգին։

— Ես եթե քու տեղդ ըլլամ՝ վաղը կերթամ գործիս գլուխը կանցնիմ, տեսնենք ի՞նչ դիրք պիտի բռնե։

— Ատիկա անկարելի է,— պատասխանեց Գարեգին։

— Ուրեմն ի՞նչ ընելու միտք ունիս։

— Հրաժարական տալու։

— Հրաժարակա՞ն տալու, երբ քեզի գնա ըսող չկա,— գոչեց Սահակ աղա,— պարզապես տղայություն է ատիկա։

— Ես ուրիշ միջոց չեմ տեսնար կոր։ Հիմա կուզեմ բան մը հասկնալ, և ճիշտ անոր համար է, որ այդ խոսքերը բացի քեզի, այն պարագային, որ Սամիկյան Հակոբ աղայի մոտ ունեցած պաշտոնես հրաժարիմ, դուն ի՞նչ պիտի ընես։

Սահակ աղա խորհուրդ տված էր հրաժարելու անհաշտ ընթացքե մը, որ կրնար ի վերջո ծանր հետևանքներ ունենալ։

— Ես ի՞նչ կուզես, որ ընեմ,— գոչեց ոսկերիչը զարմացած։

— Այսինքն՝ ըսել կուզեմ, որ աղջիկդ դարձյալ ինծի պիտի տա՞ս։

Այս հարցումը անակնկալորեն մեջտեղ նետված՝ շվարեցուց Սահակ աղան։

— Իրավ որ,— կմկմաց,— չեմ գիտեր ինչ պատասխանեմ, բայց կկրկնեմ՝ տղայություն պիտի ըլլա, եթե այդպիսի բան մը ընես։ Հետո ի՞նչ պիտի ընես հրաժարական տալե ետքը։

— Աստված ողորմած է, ինծի պես մեկը պարապ չմնար։

— Այո՛, բայց տարիներ պետք են, որ կարենաս այս օրվան դիրքդ ձեռք բերել։

— Ատոնք երկրորդական խնդիրներ են, այժմ դուն իմ հարցումիս ուղղակի պատասխան մը տուր։

— Բայց դու չես հրաժարած,— դիտել տվավ ոսկերիչը։

— Հրաժարականը գրված՝ գրպանս է, վաղը պիտի տամ, ասոր կրնաս վստահ ըլլալ։

— Մինչև վաղը առտու կրնաս միտքդ փոխել։

— Կերևա, որ տակավին զիս լավ չես ճանչցած,— պատասխանեց երիտասարդը,— ես երբոր որոշում մը տամ, ալ անիկա չեմ փոխեր։

— Քեզի ուրիշ բան մը ըսեմ,— ըսավ ոսկերիչը, որ կշանար խուսափիլ երիտասարդին հարցումին պատասխանելե։

— Ի՞նչ պիտի ըսես։

— Կուզե՞ս, որ վաղը առտու երթամ Հաճի Հակոբ աղան տեսնեմ ու մեյ մը հետը խոսիմ։ Կարելի է անուշությամբ խնդիրը կկարգադրենք։

— Երբեք,— գոչեց երիտասարդը,— չըլլա, որ ատանկ բան մտքե անցունես։

— Լավ, լավ, մի՛ բարկանար,— ըսավ Սահակ աղա երիտասարդին հուզումը տեսնելով,— ես անանկ բան մըն էր ըսի։

— Այսպես ուրեմն, ենթադրե, որ հրաժարականը տված եմ և անոր համեմատ հարցումիս պատասխանե։

Ոսկերիչը տեսավ, որ ալ փախուստի ճամփա չի կա, ուստի պահ մը մտածեց և ըսավ.

— Ես առանձին բան մը չեմ կրնար ըսել, պետք է Փեմպե հանրմին ու աղջկանս կարծիքն ալ առնեմ։

— Իրավունք ունիս, միայն կխնդրեմ, որ իմ մեկնելես ետքը իրենց խոսք բանաս ու պատասխանը վաղը հաղորդես ինծի։

— Անանկ կընենք։

Սահակ աղա չափազանց հուզված էր բոլոր այս խոսակցութենեն։ Իրեն համար աղետ մը պիտի ըլլար ետ ընել, որովհետև դժվար էր Գարեգինի պես փեսա մը գտնել։ Ասկե զատ, գիտեր, որ աղջիկը սրտանց կսիրեր երիտասարդը և այսպիսի խզում մը սոսկալի հարված մը պիտի ըլլար անոր համար։

Բայց եթե երիտասարդը կորսնցներ իր պաշտոնը, ի՞նչ պիտի ըլլար իր վիճակը։ Անշուշտ պիտի հաջողեր գործ մը գտնել, բայց ի՞նչ պիտի ըլլար այդ գործը։ Ինք դժբախտաբար շատ համեստ ապրուստ մը ուներ և երբեք չէր կրնար օգնության հասնիլ իր փեսային։

Բոլոր այս մտահոգությունները ցցվեցան խեղճ ոսկերիչին աչքին։

— Ինչ հիմարություն,— կմտածեր ինքնին,— արժանապատվության համար փայլուն, նախանձելի դիրք մը զոհել։ Իրեն համար ավելի շահավոր չպիտի՞ ըլլար Մարգար էֆենտիի կողմը բռնել, նույնիսկ եթե այդ վերջինը անիրավ ալ ըլլար։ Հարուստ, ազդեցիկ մարդ էր, միշտ կարելի էր օգտվիլ անոր բարեկամությենեն։ Իսկ թշնամությունը ամեն ատեն կրնար վնասարար ըլլալ։

— Եկուր վազ անցիր սա հրաժարականեդ և քու ու մեր գլխուն փորձանք մի բանար,— աղաչեց, խոսքը երիտասարդին ուղղելով։

Բայց Գարեգին համառորեն գլուխը շարժեց և ըսավ.

— Որոշումս տրված է։

— Ահա Նարդիկը կուգա կոր,— ըսավ Սահակ ձեռքով ցույց տալով։

Երիտասարդը գլուխը դարձուց և տեսավ իր նշանածը, որ հեռվեն կուգար։

— Աման, այս խոսքը գոցենք,— ըսավ ոսկերիչին ու ոտքի ելավ, ուրախ դեմքով մը գնաց մանկամարդ աղջիկը դիմավորելու։

Նարդիկ, որ իր նշանածին մտահոգ կերպարանքեն ազդված էր, այս անգամ խաբվեցավ Գարեգինի կեղծ զվարթությենեն և այնպես ենթադրեց, որ եղածը անցողիկ բան մըն էր առանց կարևորության և ինքն ալ զվարթորեն սկսավ տեսակցիլ նշանածին հետ։

Սակայն՝ Սահակ աղան չէր կրնար անտարբեր մնալ իրեն եղած հայտնություններեն ետքը։ Պատրվակ մը գտնելով երկու երիտասարդները թողուց և ինք տուն վերադարձավ, ուր կացությունը պարզեց իր կնոջ՝ Փեմպե հանըմին։

Խեղճ կինը իր ամուսնույն չափ այլայլեցավ։

— Ատանկ գործ մը մարդ կթողո՞ւ կեցած տեղը, խե՞նթ է, ի՞նչ է այդ երիտասարդը,— կկրկներ չհավատալով իր լսածներուն։

— Ես ալ անանկ ըսի, շատ բան խոսեցա, բայց օգուտ չըրավ։ Գարեգինը շատ աղեկ տղա է, բայց պակասություն մը ունի, համառ է և անգամ մը միտքը բան մը դնե՝ ալ անկարելի է զինքը ետ կեցնել։

Բայց իր ձեռքով իր տունը կքանդե կոր...

— Բայց հիմա մենք ի՞նչ պիտի ընենք, ան որոշենք,— ըսավ ոսկերիչը,— ինչպես քեզի ըսի, վաղը որոշ պատասխան մը կուգեր մենե։

— Նարդիկին չհարցուցած, բան մը չենք կրնար ընել։

— Ուրեմն այս իրիկուն երեքս գլուխ գլխի տանք և ընելիքներս որոշենք։

Մինչև իրիկուն երկու նշանածները հաճելի ժամանակ մը անցուցին։

Գարեգին բոլորովին մոռցած կթվեր իր ունեցած վեճը վաճառականին հետ, կամ գոնե առժամապես չէր մտածեր անոր վրա։

Ընդհանրապես, երբ կիրակի օրերը այցելության գար, գիշերը հոն կմնար, բայց այս անգամ ստիպողական գործ մը պատրվակելով չուզեց մնալ, հակառակ Նարդիկի և իր մոր ստիպումներուն։

Գարեգին անգամ մը որ բաժնվեցավ նշանածեն ու նավամատույցի ճամփան ձեռք առավ, կորսնցուց իր զվարթությունը և կըրկին ինկավ մտահոգության մեջ։ Իր տված որոշումին ծանր հետևանքները հետզհետե կցցվեին իր աչքի առջև։ Ինքնավստահությունը կամաց-կամաց խույս կուտար իրմե և ապագայի անորոշությունը զինքը կտագնապեցներ։

Հետո, եթե Սահակ աղա և իր կինը չուզեին իրեն աղջիկ տալ ու խզեին նշանը, ի՞նչ պիտի ըլլար իր ու Նարդիկին վիճակը, որովհետև Գարեգին գիտեր, որ մանկամարդ աղջիկը բուռն ու անկեղծ սիրով կապված էր իրեն։

Ցերեկը, երբ առանձին մնացեր էին, մեկ քանի անգամներ մտքեն անցուցած էր իրողությունը պարզել նշանածին, բայց չէր համարձակած, չէր ուզած Նարդիկին զվարթությունը տխրության փոխելու։

— Եթե խոսք բանայի, կմտածեր հիմա՝ շոգենավին վերնահարկը նստած, վստահ եմ, որ Նարդիկ ինչ որ ալ ըլլար իմ նյութական վիճակս, չպիտի ուզեր նշանը խզել։ Սխալ մը գործեցի իրողությունը իրեն չպարզելով։ Պետք էր ամեն բան ըսել ու միևնույն ատեն հուսադրել զինքը։ Հիմա որ հորմե պիտի իմանա ամեն բան և թերևս իր ծնողքին ճնշումին ներքև տեղի տա և վաղը Սահակ աղա խոսք-կապի մատնին ինձ վերադարձնե...

Այս հավանականությունն ալ ավելի սաստկացուց երիտասարդին հոգեկան տագնապը։

Ինքնաբերաբար ձեռքը տարավ այն գրպանը, ուր կգտնվեր հրաժարականը, պահարանի մը մեջ դրած, կապմ ու պատրաստ, զոր հետևյալ առտու կանուխ պիտի տաներ հանձներ վաճառականին։

Պահարանը առավ, նամակը հանեց ու կարդաց, թեև անոր պարունակությունը գոց գիտեր արդեն։

Այդ թուղթն էր իր մտահոգություններուն միակ պատճառը։ Եվ այդ թուղթը ինքն իր ձեռքով, իր հոժար կամքով գրած, պատրաստած էր։ Կրնար պատռել, նետել ու այսպիսով վերջ դնել զինքը հուզող տագնապին։

Իրեն այնպես թվեցավ, որ անուշ ու սիրական պատկեր մը, Նարդիկի հրեշտակային դեմքը, աղաչավոր ու արտասվալից՝ այդ զոհողությունը կաղերսեր իրմե։

Վարանումը տիրեց անոր վրա։

— Պատռեմ լմննա, Սահակ աղան իրավունք ունի, խենթություն է ըրածս, արժանապատվության վիրավորանքի մը համար չարժեր ամբողջ երջանկություն մը խորտակել, և մանավանդ ինծի հետ ուրիշ մըն ալ դժբախտ ընել, ուրիշ մը, որ բոլորովին անմեղ է...

Բայց այդ վարանումը երկար չտևեց։ Վիրավորված արժանապատվության ձայնը ավելի բարձր և զորավոր հնչեց սրտի մեջ և լռեցուց մյուս զգացումները. նամակը կրկին գրպանը դրավ ու ոտքի ելավ։

— Չէ, մտածեց, պետք չէ տկարանալ, որոշումս որոշում է...

Է

Ք. Թաղին մեջ հուզումը հետզհետե կասատկանար։ Ժամկոչի խնդիրը հիմա բոլորովին մոռցված էր, ալ ոչ ոք կզբաղեր անով։

Մարգար էֆենտի իր կուսակիցներով հիմա ուղղակի պայքար կմղեր Թաղ. Խորհուրդի դեմ։

Պողոս էֆենտիի ամենափոքր արարքները իսկ կատաղի քննադատության տեղի կուտային, թերթերու մեջ կձաղկվեին։

Ամենածանր ամբաստանություններ մեջտեղ նետված էին։

— Գանձարանը բան չէ ձգեր, ամենքն ալ ծախսեր է...

— Հաշիվներուն մեջ սարսափելի զեղծումներ կան։

— Եկեղեցիին հասույթները ո՞ւր կերթան կոր...

— Ամսական քսան ոսկի բաց կա, եթե այսպես շարունակվի, դպրոցն ալ, եկեղեցին ալ աճուրդի պիտի հանեն։

— Ավազակներու ձեռք մնացեր է Թաղական Խորհուրդը։

— Քանի մը հոգի ուզածնուն պես կդարձնեն կոր, հարցնող փնտռող չի կա։

— Օձիքնեն բռնելու դուրս նետելու է։

— Վարդապետը ինչո՞ւ կարգադրություն մը չըներ կոր։

Ահա այս տեսակ խոսքեր կլսվեին ամեն կողմ։

Մանուկ աղային հրաժարականը, որուն հաջորդած էր նաև Ռափիկ աղայինը, որ ի վերջո չէր կրցած իր շեզոքությունը պահել, խախտած էր Պողոս էֆ-ի դիրքը։

— Տեսեք, պարկեշտ մարդիկ,—կըսեին Մարգար էֆ-ի կուսակիցները Մանուկ և Ռափիկ աղաներու հրաժարականին ակնարկելով,— տեղի ունեցած խաղքությունները տեսան՝ քաշվեցան մեկ կողմ։

— Մարդ էին նե՝ թող կենային՝ զեղծումները երևան հանեին,— կպատասխանեին Պողոսյաններն ալ։

Հիմա Թաղ. Խորհրդին մեջ մնացած էին Պողոս էֆ., Գարեգին և Մկրտիչ աղան։ Այս վերջինը լուռ ու համակերպող մարդ մըն էր, որ միշտ իր պաշտոնակիցներուն ազդեցության կենթարկվեր։ Այնքան ատեն որ Մանուկ Թաղական էր, Մկրտիչ անոր համակարծիք գտնված էր, իսկ երբ Մանուկ աղա քաշված էր Թաղականութենե՝ ինքն ալ կարծիքը փոխած ու Պողոս էֆենտիի միացած էր, այնպես որ այժմ Թաղական Խորհրդի մեջ երկպառակություն չկար։

Բայց ամբողջ Թաղը, ինչպես ըսինք, երկու թշնամի բանակներու փոխված էր։ Նույնիսկ կռիվներ տեղի կունենային հաճախ, որոնք երբեմն ալ ծեծով կվերջանային։

«Պայքար Լսարանի» անդամները մանավանդ կատղած էին իրենց պարտութենեն ի վեր և առիթ կփնտռեին վրեժ լուծելու։ Ընկեր Կայծունի հուր ու բոց կտեղար օրն ի բուն և կջանար շարքերը ամրացնել՝ վճռական պատերազմի մը համար։

Կիներու մեջ ալ պայքարն ու հակառակությունը ոչ նվազ բուռն էր։ Տիկին Սաթեն իր բարեկամուհիներով հալածանք մը սկսած էր տիկին Շազիկի դեմ, որուն վրա ամենեն անլուր ամբաստանությունները կտեղային։ Տիկին Շազիկ ալ ձեռքերը ծալած չէր նստեր և ինքն ալ իր կուսակիցներով բամբասանքներ կտեղար Մարգար էֆենտիի կնոջ գլխուն։

Մարգար էֆենտիի կուսակիցները պոյքոթ հռչակած էին եկեղեցիին ու դպրոցին դեմ և ասկե բավական կտուժեր Թաղ. Խորհուրդը, որուն հասույթները զգալապես կպակսեին։ Վարժարանի

ուսուցիչը՝ պարոն Թորգոմ այս պոյքոթեն թե՛ նյութապես և թե՛ բարոյապես կտուժեր և այս պատճառով ավելի բուռն հակամարդարյան եղած էր։

Սրճարանները, տուներու մեջ, վարժարանը, վերջապես՝ ամեն կողմ կքննադատեր, կդատափետեր Մարգար էֆենտին՝ ամենակծու բառերով։ Վաճառականը ի վերջո չկրցավ համբերել։

— Սա նայեցեք, այդ խրմպըլ վարժապետն ալ ինծի դեմ ելեր է,— գոչեց մտերիմներուն,— ինչի՞ն կյուվենմիշ կըլլա կոր ինծի պես մեկուն դեմ խոսելու համար...

— Եվ ի՜նչ խոսքեր, ի՜նչ անվայել ակնարկություններ, ի՜նչ զրպարտություններ,— դիտել տվավ Մանուկ աղա։

— Ի՞նչ կըսե կոր նայիմ...

— Բերան առնվելիք բաներ չեն։

— Դուն ականջովդ լսեցի՞ր։

— Հապա, երեկ իրիկուն սրճարանը, բազմության մեջ, ճառ խոսելու պես կպոռար կոր։

— Ճանըմ, ըսե նայինք ի՞նչ ըսավ։

— Էֆենտիս, ի՞նչ ըսավ որ... պատիվի դիպչելու խոսքեր։

— Էյ, դուն ալ բերնին չափը չտվի՞ր։

— Քանի մը խոսք ըսի, պապանձվեցավ։

— Ես ալ անցած օր բերնին չափը տվի,— միջամտեց Միհրանիկ էֆենտի,— անամոթը ելեր ձեր ընտանեկան պատվին հետ կխաղար կոր։

— Ընտանեկան պատվիս հե՜տ,— գոչեց Մարգար էֆ. դողահար ձայնով մը։

— Այո՛,— շարունակեց Միհրանիկ,— տիկին Սաթենի մասին կարգ մը անճոռնի խոսքեր կրներ կոր, իբր թե Պողոս էֆենտիի կնոջմե լսեր է։

— Ի՞նչ խոսք,— հարցուց Մարգար էֆ. հուզված։

— Չըսվելիք բաներ։

— Հելե՛, հելե՛,— պնդեց վաճառականը։

— Ճանըմ, խենթ խոսքեր... իբր թե տիկին Սաթենը անհավատարիմ է եղեր, և այլն, և այլն։

— Ականջովդ լսեցի՞ր այդ խոսքերը,— գոչեց վաճառականը, որուն հուզումը հետզհետե կավելնար։

— Հապա՛, լսեցի՛,— հաստատեց Միհրանիկ։

— Հուզվելիք բան չկա,— միջամտեց Մանուկ աղա,— ամենքս

ալ գիտենք, որ ատոնք սուտ, թշնամական խոսքեր են... սրճարանին մեջ ալ ճիշտ այդ բաները կըսեր կոր։

— Սրճարանին մեջ կնկանս համար անհավատարի՞մ է ըսեր,— պոռաց Մարգար էֆենտի։

— Ամեն տեղ կըսե կոր խայտառակը։

— Եվ մանրամասնություններով,— դիտել տվավ Միհրանիկ։

— Ի՞նչ մանրամասնություն։

— Իբր թե Բերա, օթելի մը մեջ ճանչցվեր է, թե դրամ տվեր է, որ գործը մեջտեղ չելլա և թե բուն տեսնողեն իմացեր է եղեր տիկին Շազիկը և պատմեր է իրեն։

Բոլոր այս բացատրությունները ծայրագույն աստիճանի հասցուցին վաճառականի զայրույթը։

Եթե իրեն աստիճանը ունեցող հարուստ, դիրքի տեր մեկը այդպիսի զրպարտություն մը ըրած ըլլար՝ Մարգար էֆ. թերևս այդքան չպիտի բարկանար, բայց վարժապետ մը, երեք հարյուր ղուռուշ ամսականով չնչին մարդ մը, որ կհամարձակեր իր պատվույն հետ խաղալ, ահա այդ հանդգնությունն էր, որ չէր կրնար ըմբռնել։

Եվ երկու բարեկամները ջանացին զինքը հանդարտեցնել, ըսելով, որ չէր արժեր վարժապետի խոսքերուն կարևորություն տալ։

— Արդեն այդ Թորգոմ ըսվածը փախուկին մեկն է,— դիտել տվավ Միհրանիկ։

— Ապուշ ավանակ մըն է,— ավելցուց Մանուկ։

— Թող առնելիքը ըլլա,— գոչեց Մարգար էֆ. սպառնական շեշտով մը։

Վարժապետին այդ միջադեպը ավելի հրահրեց Մարգար էֆենտիի մարտական եռանդը։ Հետևյալ օրն իսկ Թաղ. Խորհուրդին դեմ ծանր ամբաստանություններով հանրագրություն մը պատրաստել տվավ և Մանուկ աղային հանձնեց, որ թաղեցիներուն ստորագրել տա, որպեսզի վարչության մատուցվի։

— Աղե՛կ, բայց տեսնենք ամենքն ալ պիտի ուզե՞ն ստորագրել,— դիտել տվավ Մանուկ աղա։

— Ամենքը թող չստորագրեն, բավ է, որ քանի մը հարյուր ստորագրություն հավաքենք։

— Ատոր ալ կկասկածիմ, մեր թաղեցիները զարմանալի մարդիկ են, սրճարաններու մեջ կպոռան, կկանչեն, բայց երբ կարգը գա գործելու, մեկ կողմ կքաշվին։

— Քիչ մը սանկ դրամ խաղցնենք նե՝ օգուտ չընե՞ր,— հարցուց վաճառականը։

— Ատ տարբեր բան,— պատասխանեց Մանուկ,— ատոր ըսելիք չունիմ, դրամով ամեն բան կարելի է։

Վաճառականը գրպանը խառնեց, երկու հատ հինգ ոսկինոց պանքնոտ հանեց Մանուկ աղային տվավ և ըսավ.

— Հիմակուհիմա սրվոնք առ, Թող քովդ գտնվին, պետք եղած տեղը գործածե, հետո եթե հարկ ըլլա, նորեն բան մը կընենք։

Նախկին թաղականը պանքնոթները գրպանեց հանրագրությունը խնամքով թերթի մը մեջ ծարեց ու մեկնեցավ, խոստանալով իսկույն գործի սկսիլ։

— Քանի՞ օրեն կվերադարձնես,— հարցուց Մարգար էֆենտի։

— Է՜հ, առնվազն երեք չորս օր պետք է,— պատասխանեց Մանուկ։

— Քեզ տեսնեմ, սա գործը հաջողությամբ գլուխ հանե։

— Ձեռքես եկածը պիտի ընեմ, այդ մասին կատարելապես ապահով եղիր,— պատասխանեց Մանուկ։

Եվ արդարև եռանդով գործի սկսավ։ Բայց իր երկյուղը հիմնավոր էր։ Թաղեցիներեն շատերը բացարձակ չեզոքություն պահել կուզեին։

— Սրտեղ ստորագրություն մը նետե,— կառաջարկեր Մանուկ աղա թաղեցիի մը՝ հանրագրությունը երկարելով։

— Ի՞նչ է սա, Մանուկ աղա։

— Ճանըմ, մեր Թաղ. խորհրդին դեմ բողոք մըն է, ալ համը փախցուցին, ասանկ թողուլ չըլլար, կարդա՛, նայե՛, խնդիրը շատ աղեկ կերպով բացատրված է։

— Ինծի ինչ, ես ատանկ բաներով չեմ զբաղիր։

— Թռնաֆ բան, դուն Թաղեցի չե՞ս։

— Թաղեցի եմ, բայց չեզոք մնալ կուզեմ։

— Ատանկ անտարբերություն կըլլա՞... ատ Պողոս էֆենտին պարզապես եկեղեցին կթալնե կոր, զինքը դուրս նետելու է և շնորհքով մարդիկ նստեցնելու է։

— Շնորհքով մարդ ո՞ւր է։

— Ի՞նչ ըսել է, զարմանալի բան, թաղին մեջ շնորհքով մարդ չկա՞... Մարգար էֆենտին կբերենք ատենապետ կընենք, ազգասեր, հարուստ, պատվավոր մարդ, Պողոս էֆենտիին չնմանիր։

— Պողոս էֆենտիին ալ, Մարգար էֆենտիին ալ խերն անիծեմ... հացի փարա հանելու նայինք։

Մանուկ աղա այս տեսակ ընդդիմություններե չէր հուսահատեր. մարդը կառներ, սրճարան մը կտաներ, քանի մը շիշ օղի կհրամցներ, ժամերով կխոսեր և երբեմն կհաջողեր ստորագրություն մը կորզել։

Ուրիշ կարգ մը դատարկապորտներ 10 կամ 20 ղուռուշի փոխարեն իրենց ստորագրությունը կդնեին հանրագրության ներքև։

Մեկ քանիները, ավելի խստապահանջ—ոսկի մը կպահանջեին և Մանուկ աղա իրենց ստորագրության համեմատ սակարկության կմտներ հետերնին։

Բայց տասը ոսկին շուտով ավարտեցավ, մինչ հանրագրության ներքև հազիվ 40—45 ստորագրություններ հավաքված էին։

Մանուկ աղա երկու օր ետքը ափ առավ Մարգար էֆենտիի տան դուռը։

— Ի՞նչ լուր,— հարցուց վաճառականը։

— Բավական ստորագրություն հավաքեցի։

— Ո՞րչափ...

— Հիսունի չափ։

— Չօգտեր, էֆենտիմ, չօգտեր։

— Ես ալ գիտեմ, որ չօգտեր,— պատասխանեց Մանուկ աղա,— բայց ի՞նչ ընենք, կամաց-կամաց... ասկե զատ՝ դրամն ալ սպառեցավ և դրամը այս տեսակ պայքարներու ջիղն է։

— Ճանըմ, դուն ալ պոլ-պոլ չբաժնեիր։

— Թռնաֆ ես, Մարգար էֆենտի, տասը ոսկիեն ի՞նչ կելլա,— պատասխանեց Մանուկ աղա սրտմտած դեմքով մը,— հիսուն հոգիի մեջ տասը բաժնես նե՝ ամեն մեկուն ի՞նչ կիյնա, վրայե վրա մեյ մեկ մեճիտիե։ Հաշիվը մեջտեղն է։

— Ասոնք ամենքն ալ դրամո՞վ ստորագրեցին...

— Չէ, բայց մարդ կա, որուն ստորագրությունը առնելու համար հարկ եղավ ոսկի մը տալ, ուրիշի մը քսան ղուռուշի պիտի խմցնեի, ուրիշի մը մեխանեճիի ունեցած պարտքը մաքրեի և այլն, և այլն։

Մանուկ աղայի հաշվետվությունը թերևս կետ առ կետ ճիշտ չէր և հավանական է, որ նախկին թաղականը 3—4 ոսկիի չափ ինք գրպանած էր։ Վաճառականը կռահեց այս բանը, բայց ձայն չհանեց։

— Իրավունք ունիս,— ըսավ քթին տակեն ու տասը ոսկի ևս հանձնեց, խնդրելով, որ այդ գումարով ալ գործը լմնցնե։

— Կհուսամ, որ ասիկա կբավե,— պատասխանեց Մանուկ աղա։

Արդարև երկու օր ետքը հանրագրությունը երկու հարյուրե ավելի ստորագրություններով ծածկված էր, շնորհիվ «Պայքար Լարանի» անդամներուն օժանդակության, որոնք ոգի ի բոին օգնեցին Մանուկ աղային։

Սուսերյանց թեև փորձած էր հանրագրությունը ձեռք անցնել ու պատռել, սակայն չէր հաջողած։ Այս ձախողանքեն կատղած ինքն ալ ուրիշ հանրագրություն պատրաստած էր ի նպաստ Պողոս էֆենտիի, որուն Թաղական Խորհուրդի ատենապետ մնալուն անհրաժեշտության վրա կշեշտեր, զգացնել տալով, որ հակառակ պարագային «խիստ ցավալի ու ծանրակշիռ դեպքեր կրնային պատահիլ, որոնց պատասխանատվությունը իրենց վրա չէին ուզեր առնել սույն հանրագրությունը ստորագրողները, որոնք կներկայացնեին թաղին մտավորական և գիտակից ստվար մեծամասնությունը»։

Այս հանրագրությունն ալ քանի մը օրվան մեջ երկու հարյուրե ավելի ստորագրություններով ծածկվեցավ։

Շատ մը թաղեցիներ, հիանալի անկողմնապահությամբ, երկու հանրագրություններն ալ ստորագրած էին միևնույն ատեն։

Այն թաղեցիները, բնականաբար, միակողմանի անձերու կողմե քննադատության առարկա կըլլային։

— Միրիճան աղա, ասանկ բան կըլլա՞, երկուքին տակն ալ ստորագրեր ես։

— Ի՞նչ ընեմ, ես Պողոս էֆենտին կսիրեմ ու կհարգեմ, ես ադ մարդուն վրա վստահություն ունիմ։

— Ուրեմն թող մյուս հանրագրությունը չստորագրեիր...

— Ճանը՛մ, Մանուկ աղան բերավ, ստիպեց, հիմա իրեն խոսքը կոտրեի՞, ամեն օր միասին կտեսնվինք, կնստինք, կելլենք։

Ուրիշ մը ինքզինքը արդարացնելու համար կըսեր.

— Ես ուրիշի խաթրը կոտրել չեմ ուզեր, ան ալ կստորագրեմ, եթե կուզես, դուն ալ բան մը գրե, բե՛ր, ատ ալ ստորագրեմ։

Երրորդ մը ինքզինքը կմեղմացներ սա կերպով.

— Ճանը՛մ, թավլուին գլուխը նստեր Սերոբե աղային հետ թավլու կխաղայի կոր, մեր մյուսյու Թորգոմը թուղթ մը բերավ «սրվիկա կարդա և ստորագրե» ակնոցս քովս չէր, ես ալ «թավլուի» զբաղած՝ «ի՞նչ է» հարցուցի. «գեշ բան չէ» պատասխանեց, ստորագրեցի, որ իր ձեռքեն ազատիմ։ Քիչ մը ետքը ընկեր Կայծունին եկավ, ան ալ թուղթ մը հանեց «ստորագրե»՝ ըսավ.— «ես մեյ մը ստորագրած եմ» ըսի.— Մեյ մըն ալ ստորագրե՛, պատասխանեց։ Նայեցա, որ խոսքը պիտի երկարի, ստորագրություն մըն ալ հոն դրի... փարայով չէ ա՞, զարմանալի բան, թեև հետո իմացա, որ ուրիշներ փարա առեր ու անանկ ստորագրեր են, մենք ապուշ գտնվեցանք։

Պատգամավորություն մը հակապողոսյան հանրագրությունը տարավ Վարչության ներկայացուց ուրբաթ օր մը։ Ժամ մը ետքը ուրիշ պատգամավորություն մը ի նպաստ Պողոս էֆենտիի հանրագրություն կտաներ Վարչություն։

Քանի մը օր ետքը թերթերը կծանուցանեին.

«Ինչպես գրած էինք, Ք. թաղեն երկու հանրագրություններ ներկայացված են Վարչության, մին՝ ներկա Թաղ. Խորհրդի լուծումը և նորի մը ընտրությունը պահանջող, մյուսը՝ Թաղական Խորհրդի պաշտոնի վրա մնալը խնդրող։

«Քաղաքական ժողովը իր երեկի նիստին մեջ նկատի առավ այս երկու հանրագրությունները և չկրնալով եզրակացության մը հանգիլ, որոշեց իր անդամներեն երկուքին պաշտոն հանձնել երթալ տեղվույն վրա քննություն մը կատարելու և հաղորդելու պատկառելի Վարչության, որպեսզի պարտ ու պատշաճ տնօրինություն մը ըլլա։ Վարչության կողմե ընտրված պատգամավորներն են Սափորյան և Ծրարյան էֆենտիները, որոնք վաղն իսկ, կիրակի, հիշյալ թաղն երթալով, իրենց պաշտոնին պիտի ձեռնարկեն»։

Երբ Վարչության այս որոշումը կարդաց՝ Մարգար էֆենտի ուրախությամբ ձեռքերը շփեց։

— Եթե գործը Սափորյան էֆ-ին հանձնվեր է,— մտածեց,— ամեն բան հաջող է։

Արդարև փաստաբան Սափորյան էֆենտի վաճառականին հին ծանոթներեն էր և հաճախ անոր դատերը վարած։

Մարգար էֆ. որոշեց հետևյալ ցերեկ ճաշի հրավիրել Վարչության երկու անդամները։

— Թեև Ծրարյան էֆենտին չեմ ճանչնար,— ըսավ իր կնոջ,— բայց վնաս չունի, Սափորյան էֆենտին մեր հին լավագույն բարեկամներեն է, և անոր միջոցավ Ծրարյանի հետ ալ կծանոթանանք։

Թերթերուն տված լուրը ոչ նվազ ուրախացուց Պողոս էֆենտին։

— Եթե քննությունը տոքթ. Ծրարյանին հանձնված է, այժմեն կրնամ ապահով ըլլալ, որ վճիռը ի նպաստ ինծի պիտի տրվի։

Պողոս էֆ-ի այս վստահությունը կհենվեր սա պարագային վրա, թե՝ տոքթորը իր կնոջ մեկ հիվանդությունը խնամած էր երկար ատեն և այս առթիվ մտերմական հարաբերություններ մշակած էին իրարու հետ։

— Վաղը ցերեկ պետք է, որ անպատճառ զինքը կերակուրի հրավիրենք,— ըսավ իր կնոջ։

— Առանձին չենք կրնար հրավիրել, պաղ կփախչի, Սափորյան էֆ-ն ալ հրավիրելու է։

— Անանկ ընենք։

Վարչական երկու պատվիրակներու գալուստը բնականաբար նոր ոգևորություն մը առաջ բերավ ամբողջ թաղին մեջ։ Ամեն մարդ անհամբեր կսպասեր կիրակի օրվան։

— Վճռական ժամը վերջապես հնչեց. անմիջական արդարությունը իր ձայնը պիտի լսեցնե,— կըսեր մյուսյու Թորգոմ, վարժարանի ուսուցիչը, որ կզգար, թե իր պաշտոնի վրա մնալ կամ չմնալը այս պայքարի լուծումեն կախում ուներ։

— Սեղմենք մեր շարքերը և ամեն պատահականության հանդեպ պատրաստ գտնվինք,— կխրատեր ընկեր Կայծունին «Պայքար Լսարանի» անդամներուն։

— Վառոդնիս չոր պահենք կիրակի օրվան համար,— կհրամայեր ընկեր Սուսերյանց «Շանթ Ակումբի» անդամներուն։

Կարծես մեծ ճակատամարտի նախընդօրին մեջ կապրեին ամբողջ թաղեցիները։

Հասավ վերջապես կիրակի օրը։ Առտուն կանուխ եկեղեցին խռնված էր հետաքրքիրներու բազմությամբ։

Ամեն մարդ կուզեր տեսնել երկու Վարչական պատվիրակները, և եթե կարելի է, ազդել անոնց վրա։

Պողոս էֆենտի, Գարեգին և Մկրտիչ աղա սովորականեն ավելի կանուխ բազմած էին խորհրդարանը։

Կեսօրին մոտ շշնկոց մը լսվեցավ։ «Կուգան կոր, եկան»։ Արդարև Վարչական պատվիրակներն էին, Սափորյան և Ծրարյան էֆենտիները. առաջինը նիհար, երկայնահասակ, լուրջ դեմքով մարդ մը, որ կարծես օրենքը կխորհրդանշեր իր բովանդակ խրոստության մեջ, երկրորդը, ընդհակառակը, կարճահասակ, կսկլոր մարդ մըն էր՝ ժպտուն դեմքով։

Արագ քայլով մը մտան եկեղեցիին բակը և ուղղվեցան դեպի խորհրդարան։

— Կեցցե՛ Թաղ. խորհուրդը,— գոչեցին քանի մը ձայներ, որոնց անմիջապես ուրիշ ձայներ պատասխանեցին։

— Կեցցե՛ն Վարչության պատվիրակները, կեցցե՛ արդարությունը,— գոչեցին մեկ քանիներ ալ։

Երկու պատվիրակները առանց մեծ կարևորություն մը ընծայելու այդ ցույցերուն՝ մտան խորհրդարան։

Հոն ժամու մը չափ մնացին և այդ միջոցին հետզհետե լսեցին ժամկոչ Վարդանը, ընկեր Կայծունին, ընկեր Սուսերյանցը, Մանուկ աղա, վերջապես բոլոր անոնք, որոնք հեռվեն կամ մոտեն մասնակից էին տեղի ունեցած պայքարին։

Ժամը մեկին կմոտենար և տակավին ուրիշ վկաներ ալ կային լսելիք, որովհետև ամեն թաղեցի կուզեր իր տեսակետը պարզել։

— Ասիկա շուտով լմննալիք գործ մը չէ,— ըսավ Պողոս էֆենտի երկու պատվիրակներուն,— եթե կուզեք՝ քննությունը դադարեցուցեք և երկու ժամ ետքը կրկին շարունակեցեք... թող երթա ամեն մարդ իր ճաշը ընե։

— Էֆենտին իրավունք ունի, դադար մը ընելու է,— վճռեց Սափորյան էֆենտի։

— Մանավանդ, որ մեր ալ փորը անոթեցավ։

— Այս տեղվանքը ճաշարան մը կրնա՞ք գտնել,— հարցուց Սափորյան։

— Ի՞նչ ընելու համար,— ըսավ Պողոս էֆենտի։

— Զարմանալի բան, ճաշելու համար։

— Այդ ի՞նչ խոսք է, կվայելե՞, որ երթաք ճաշարանը կերակուր ուտեք, մեզի պիտի հրամմեք։ Տոքթ. Ծրարյան էֆենտին մեր հին ու պատվական բարեկամն է, անանկ չէ՞ տոքթո՛ր։

— Այնպես է,— պատասխանեց Ծրարյան։

— Ուրեմն թող տոքթորը ձեզի գա, ես ալ կերթամ տեղ մը փորս կկշտացնեմ։

— Անանկ բան չըլլար,— պնդեց Պողոս էֆենտի,— երկուքդ ալ իմ հյուրս եք, արդեն ամեն պատրաստություն տեսնված է։

— Մեկտեղ Պողոս էֆենտիին կերթանք,— ըսավ Ծրարյան իր պաշտոնակցին դառնալով,— եթե ոչ ես ալ ճաշարան կուգամ։

— Ատիկա միտքերնեդ հանեցեք,— գոչեց Պողոս էֆենտի։

— Լա՛վ, լա՛վ, ձեզի կերթանք,— վճռեց Սափորյան։

Նույն միջոցին դուռը բացվեցավ, Միհրանիկ էֆենտին ներս մտնելով Սափորյանի ականջին բաներ մը փսփսաց, որուն վրա փաստաբանը ոտքի ելավ և՝

— Վայրկյան մը սպասեցեք, ես հիմա կուգամ ըսելով՝ Միհրանիկի հետ դուրս ելավ։

Արդարև քիչ մը ետքը վերադարձավ ըսավ.

— Պողոս էֆենտի, կներե՛ք, ես չպիտի կրնամ գալ...

— Ինչո՞ւ համար,— գոչեց Պողոս էֆենտի, որ ամեն բան զուշակած էր։

— Որովհետև Մարգար էֆենտին եկած է զիս տուն տանելու համար, դուրսը կսպասե կոր։

— Անկարելի է, ինծի խոսք տվիր,— գոչեց Պողոս էֆ. որ այլայլած էր տեսնելով, որ որսը ձեռքեն կհափշտակեն։

— Կներեք, ես խոսք չտվի,— պատասխանեց Սափորյան էֆենտի,— այլ պարզապես ձեր որոշումներուն վրա համակերպվեցա, բայց հիմա, որ Մարգար էֆենտին հատկապես եկած է զիս հրավիրելու, չեմ կրնար իր հրավերը մերժել։ Ինչպես որ տոքթ. Ծրարյան ձեր վաղեմի բարեկամն է, նույնպես Մարգար էֆենտին ալ իմ վաղեմի բարեկամն է։ Ուրեմն ցտեսություն, ժամը երեքին կրկին այստեղ կգտնվինք ու մեր քննությունը կշարունակենք։

Եվ փաստաբանը բարևելով դուրս եկավ։

— Տեսա՞ր սա անպիտանին խաղացած խաղը,— գոչեց Պողոս էֆենտի Ծրարյանին դառնալով։

— Ասանկ ավելի աղեկ եղավ,— պատասխանեց մյուսը,— եթե երկուքս ալ ձեր տունը գայինք ճաշելու, կրնար այլընդայլոց մեկնություններու տեղի տալ։

— Էֆենտին իրավունք ունի,— միջամտեց Գարեգին,— լավ է, որ պատվիրակները կատարյալ անաչառությամբ գործեն։

Եվ սակայն Պողոս էֆ. դժգոհ էր։

Ինք կհուսար մեծամեծ օգուտներ քաղել իր պատրաստած սեղանեն, որուն հրավիրած էր ոչ միայն իր երկու պաշտոնակիցները, Գարեգինն ու Մկրտիչը, այլ նաև իրենց կուսակից մեկ քանի թաղեցիներ, որոնք իբրև թե բոլորովին չեզոք՝ իր դատը պիտի պաշտպանեին։

Չմոռնանք ըսել, որ Մարգար էֆենտին ալ, բացի պատվիրակներեն, ուրիշ 5—6 թաղեցիներ ալ հրավիրած էր նույն նպատակով։

Սափորյան էֆենտի, Մարգար և Միհրանիկ էֆենտիներեն շրջապատված, առաջնորդվեցավ տուն, մինչ Մանուկ աղա քանի մը վայրկյան ետքը եկավ միացավ իրենց։

Մի քանի քաղաքավարական բանաձևերե ետքը, բնականաբար խոսք բացվեցավ օրվան հրատապ խնդրին վրա։

— Ձեր քննության արդյունքը ի՞նչ եղավ, գաղափար մը կազմեցի՞ք խնդրին վրա,— հարցուց Մարգար էֆենտին փաստաբանին։

— Դեռ բոլոր վկաները չլսեցինք։

— Բայց գլխավորները մտիկ ըրիք։

— Այո՛, մեկ քանի հոգի հարցափորձեցինք,— պատասխանեց փաստաբանը, որ խուսափիլ կուզեր կարծիք հայտնելե։

— Է՛յ, վեր ի վերո ի՞նչ եղավ ձեր տպավորությունը։

— Էֆենտիմ, կնճռոտ է խնդիրը, շատ կնճռոտ, լուսաբանության կարոտ է...

— Ամեն պարագայի հարկավ ալ համոզվեցաք, որ Պողոս էֆենտին Թաղ. խորհրդի գլուխ չկրնար կենալ...

— Այսինքն՝ ինչպես ըսի՝ դեռ եզրակացության մը չենք հասած։

— Տոքթ. Ծրարյան էֆ-ն ի՞նչ կըսեր կոր։

— Կարծիքի փոխանակություն չունեցանք։

Եվ այսպես փաստաբանը խույս կուտար Մարգար էֆ-ի հետապնդումներեն։

Մանուկ աղա միջամտեց խոսակցության։

— Էֆենտիմ,— ըսավ,— այս խնդրին մեջ չորս գլխավոր կետ կա...

Հետո այդ ամեն մի գլխավոր կետերն ալ շատ մը երկրորդական կետերու բաժնեց և ճաշի ամբողջ տևողության միջոցին խոսեցավ առանց կարենալ բան մը հերքելու կամ հաստատելու։ Ապա հարկ տեսավ խնդրին պատմականը ընելու։

— Պողոս պատրիարքին օրով, դեռ սահմանադրությունը չհաստատված, այս մեր թաղը...

Ք. թաղի ազգային կեսդարյան պատմությունն էր, որ կպատմեր և որ հանգեցավ մինչև ժամկոչ Վարդանի միջադեպը։

Տիկին Սաթեն բնականաբար ինքն ալ խոսքի խառնվեցավ և չկրնալով իր պաղարյունությունը զսպել՝ քանի մը ծանր ակնարկություններ ըրավ տիկին Շաղիկի հասցեին։

— Ան չըլթիկը, ան անամոթը... ինք պատճառ եղավ, որ բոլոր

թաղը տակնուվրա ըլլա... բայց ուրիշ բան մը չէր սպասվեր արդեն այդպիսի վարնոց կնիկե մը, որուն մայրը ժամանակին խոսված է եղեր, որուն մորաքույրը երեք անգամ ամուսնացած է, որուն մեկ եղբայրը հույն աղջիկ մը փախուցեր է, և այլն, և այլն։

Իզուր փաստաբանը զայն հանգստացնելու համար կկրկներ.

— Բայց, տիկին, այդ բաները կապ չունին մեզ զբաղեցնող խնդրին հետ, ատոնք ընտանեկան ներքին խնդիրներ են, որոնցով հետաքրքրվելու պետք չունինք։

— Ի՞նչ ըսել է, անիկա ինծի համար այնքան խոսքեր կըսե կոր, ես իրեն համար չպիտի՞ ըսեմ։

— Ըսե՛ք, տիկին, ինչ որ կուզեք, միայն թե Թաղական խորհրդի խնդրույն հետ կապակցություն չունին։

Տիկին Սաթեն գերագրգռված գոչեց.

— Սափորյան էֆենտի, աֆ կընես ամա կարծեմ անպատճառ Շազիկը պաշտպանել կուզես կոր... կերևա, որ աչքդ խածեր է... խերը տեսնես։

Փաստաբանը չպատասխանեց, բայց հայտնի կտեսնվեր, որ դժգոհ մնացած էր տանտիրուհին այդ ակնարկություններեն։

Վաճառականը զգաց, որ կնոջ այս հարձակողական ընթացքը կրնար վնասակար հետևանքներ ունենալ իր դատին համար և ստիպեց կինը, որ լռե։

— Պարապ խոսքեր են ատոնք,— գոչեց,— և նույնիսկ անվայել, խնդիրը Շազիկին վրա չէ բնավ, գործը պետք չէ, որ պըզտիկցնենք ու անձնականի տանինք...

Հետո խոսակցության նյութը փոխեց, առևտրական և դատական խոսքեր բացավ և միջոց մը ըսավ Սափորյան էֆենտիի։

— Աղեկ միտքս ինկավ, ձեզի հետ առանձին տեսնվել կուզեի..

— Այս թաղականի՞ն խնդրույն համար,— հարցուց փաստաբանը։

— Չէ՛, ճանըմ, անձնական գործի մը համար, վաղը արդեն ձեզի լուր պիտի ղրկեի կամ ես անձամբ գրասենյակ պիտի գայի, բայց քանի որ հիմա եկած եք և ժամանակ ունինք, կրնանք խոսիլ։

— Շատ աղե՛կ,— պատասխանեց մյուսը։

Եվ երկուքը միասին առանձնացան մեծ սալոնին քով գտնված փոքրիկ խուցը, մյուս հյուրերը պահ մը առանձին ձգելով։

Հոն վաճառականը բացատրեց խնդիրը։

Բավական կարևոր դատ մը ուներ ընկերովի ծախու առնված ընդարձակ հողի մը առթիվ, որովհետև ընկերը դժվարություններ կհարուցաներ և կուզեր հողին լավագույն մասերը իրեն սեփականել։

— Անուշությամբ գործը լմնցնել կուզեի, բայց անկարելի եղավ,— հայտարարեց Մարգար էֆենտի,— մանավանդ, որ 8—10 ոսկիի գործ մըն է։ Կուզեմ այս գործը ձեզի հանձնել, քանի որ ամեն անգամ գործ ունեցած ատենս ձեզի դիմած և գոհ մնացած եմ։

— Շնորհակալ եմ ձեր այդ խոսքերուն համար,— ըսավ փաստաբանը։

— Ես ճշմարտությունը կխոսիմ և ձեր երեսին ալ կըսեմ, որ փաստաբաններուն մեջ ձեզի չափ անկեղծ, պարկեշտ, արդարասեր մարդ քիչ տեսած եմ... ես շողոքորթություն չեմ սիրեր, բայց ճշմարտությունն ալ չեմ ուզեր ծածկել։

— Գործին վերաբերյալ թուղթերը հո՞ս են,— հարցուց փաստաբանը առանց չափազանց կարևորություն տալու իրեն շռայլած գովեստներուն և ուղղակի կենսականին դիմելով։

— Չէ՛, գրասենյակս են,— պատասխանեց վաճառականը, վաղը առտու եկեք, ամենքն ալ ձեզի հանձնեմ։

— Շատ աղեկ։

Եվ Սափորյան էֆենտի ժամացույցը նայեցավ, ոտքի ելավ և ըսավ.

— Է՛, ատենը հասեր է, երթանք սա քննությունը ավարտենք, տոքթորը թերևս ինծի կսպասե։

— Դուն իմ վրաս վստահություն ունի՞ս, ինչպես որ ես քու վրադ ունիմ,— հարցուց Մարգար էֆենտի։

— Ի՞նչ ըսել է, բնականաբար,— փութաց պատասխանել փաստաբանը։

— Չիս իբրև պարկեշտ, անկողմնակալ, ուղղամիտ և խելացի մարդ կընդունի՞ս։

— Հարկավ...

— Լավ ուրեմն գիտցած եղիր, որ թաղականի այս խնդրին մեջ երկու գլխավոր հանցավորներ կան, մեյ մը Պողոս էֆենտին, մեյ մըն ալ ան զյուպպե մյուսյու Գարեգինը, ես մոտեն քննած, ուսումնասիրած եմ ամեն բան և անաչառորեն կխոսիմ, որովհետև ես չեզոք եմ։

— Ինծի ալ քիչ մը անանկ կերևա կոր,— պատասխանեց փաստաբանը, հողային դատին վրա մտածելով։

— Արդեն այդ համոզումը գոյացուցի՞ր,— գոչեց վաճառականը ուրախությամբ։

— Այսինքն՝ տպավորությունս այն է, որ Պողոս էֆ. պետք է քաշվի, որպեսզի թաղը հանդարտի։

— Պրավո՛, շատ աղվոր դատեր ես կացությունը, եթե այդ մարդը պաշտոնի վրա մնա, հավատացե՛ք արյուն պիտի թափի։

— Ի՞նչ կըսեք, Մարգար էֆենտի, խնդիրը այդքան ալ մի չափազանցնք։

— Արդեն քանի մը անգամ կռիվ ու ծեծկվուքներ եղան թաղին մեջ և պայքարը հետզհետե սուր հանգամանք մը կառնե կոր։

— Ուրեմն ժամ առաջ վերջ տալու է խնդրին,— պատասխանեց փաստաբանը։

— Ատիկա ձեր ձեռքն է, ամեն բան ձեր տալիք տեղեկագրին կախում ունի։

— Այնպես է, բայց տեղեկագիրը ես առանձին չպիտի պատրաստեմ, ընկեր ունիմ հետս։

— Այո՛, գիտեմ, տոքթ. Մրարյանը, որ փոխանակ մեզի գալու, դժբախտաբար Պողոս էֆենտիին տունը ճաշի գնաց... ո՞վ գիտե ինչ սուտերով գլուխը լեցուցած են։

— Ես ալ ճիշտ այդ վախը ունիմ։

— Բայց վերջապես ճշմարտությունը կարելի չէ ծածկել... այդ տոքթորը ես չեմ ճանչնար, ինչպե՞ս է արհեստի մեջ։

— Շատ փորձառություն ունի կըսեն։

— Մեր տիկինը քիչ մը ջղային է և լուրջ խնամքի պետք ունի, արդյոք մեյ մը անոր ցույց տա՞նք, ի՞նչ կըսես։

— Աղեկ կըլլա։

— Ինչ որ է, վաղը երբոր տեսնվինք, այս մասին ալ կխորհրդակցինք... դուն իր տրամադրությունները իմացիր և ինծի հաղորդե։

Մարգար էֆենտի և իր հյուրը վերադարձան սալոն ու Վարչության պատվիրակը իր հարգանքները մատուցանելե ետքը տիկին Սաթեն մեկնեցավ դեպի եկեղեցի՝ քննությունները առալ տանելու համար։

Տոքթ. Մրարյան և Պողոս էֆենտի, ինչպես նաև մյուսյու Գարեգին հոն արդեն իրեն կսպասեին։

Թաղեցիներու խուռն բազմություն մը լեցված էր բակը։

Ամեն մարդ կուզեր, որ լսվի իր կարծիքը և իր տեսությունները պարզե։ Եթե այդ պահանջին գոհացում տալ ուզին երկու վարչական պատվիրակները, հարկ էր, որ առնվազն ամիս մը քննություն տային։

Մեկ քանի անհրաժեշտ վկաներ լսելե ետքը, որոշեցին քննությունը փակված հայտարարել և մեկնիլ։

Բայց ահա այդ որոշումը դուրսը իմացվեցավ և բուռն իրարանցում առաջ բերավ։

— Ժողովուրդն ալ լսեցե՛ք,— կպոռային բակեն,— միակողմանի քննություն չըլլար։

— Կբողոքենք, ժողովրդի ձայնը խեղդել կուզեք։

— Մեզի ալ պիտի լսե՛ք, մենք ալ ըսելիք ունինք։

Այս տեսակ աղաղակներ կբարձրանային ամեն կողմե։

Երկու պատվիրակներ տեսան, որ կարելի չէր այդ ամբոխին ձեռքեն աղատիլ։ Սափորյան էֆենտի որոշեց դուրս ելլել ու խոսիլ բազմության։

— Պարոննե՛ր,— ըսավ,— Վարչության պատվիրակները ամենայն անկողմնապահությամբ լսեցին պետք եղած բոլոր վկաները և իրենց կարծիքը շինեցին, զոր տեղեկագրով մը պիտի մատուցանեն Վարչության, և վստահ եղեք, որ ազգային իշխանությունը արդարությամբ պիտի կարգադրե խնդիրը, ուստի հանուն Վարչության կխնդրենք, որ հանդարտությամբ ձեր տեղերը վերադառնաք և սպասեք մեր որոշումին։

— Մեզի ալ պետք է, որ լսեք, ժողովրդին ձայնը չեք կրնար ոտնակոխ ընել,— գոչեցին քանի մը ձայներ։

— Բայց անկարելի է, որ մեկիկ-մեկիկ կրնանք ձեզի մտիկ ընել։

— Պետք է, որ ընեք, եթե ոչ, թող չենք տար, որ դուրս ելլեք։

Եվ իրենցմե տաքգլուխ մը դռան քով կեցողներուն դառնալով՝ գոչեց.

— Տղա՛ք, եկեղեցիին դուռը գոցեցե՛ք։

Հրամանը իսկույն գործադրվեցավ։

— Բայց ասիկա պարզապես ճնշում բանեցնել ըսել է ազգային իշխանության վրա,— գոչեց փաստաբանը բարկությամբ։

— Ժողովուրդը ազգային իշխանությենեն բարձր է,— պատասխանեց «Պայքար Լսարանի» անդամներեն մեկը։

Սափորյան էֆենտի տեսավ, որ ճար չի կար, հարկ էր հաշտարար միջոց մը գտնել։

— Պարոննե՛ր,— ըսավ,— շատ լավ, ձեզ մտիկ կընենք, բայց ոչ ամենքդ ալ մեկիկ-մեկիկ, որովհետև նյութապես անկարելի է այդ բանը։

— Ի՞նչպես ուրեմն,— գոչեցին մի քանի դժգոհ ձայներ։

— Ձեր մեջեն երկու հոգի ընտրեցեք, որոնք թող գան և հանուն ձեզի հայտնեն ըսելիքնին։

Մեկ քանիներ այս առաջարկը ընդունեցին, ուրիշներ բողոքեցին։

— Երկու հոգի քիչ է,— կպոռային շատերը։

Վերջապես կարելի եղավ համաձայնություն գոյացնել։ Բազմության մեջեն հինգ հոգի պիտի ներկայանային և իրենց բողոքները կամ դիտողությունները պիտի պարզեին պատվիրակներուն։

Սափորյան և Ծրարյան էֆենտիները համբերությամբ լսեցին նաև ժողովրդի հինգ ներկայացուցիչները, թեև ասով ավելի լուսաբանվեցան։

Հետո, հրաժեշտ առնելով, մեկնեցան, անորոշ տպավորություն մը թողելով թաղեցիներուն վրա։

Ը

Ընթերցողները կհիշեն անշուշտ, որ Սամիկյան Հաճի Հակոբ աղայի գրագիրը՝ պարոն Գարեգին կիրակի օր մը թողուցինք Գատը-գյուղի շոգենավին մեջ, հոգեկան խռովյալ վիճակի մը մեջ։

Այժմ թողլով Վարչության երկու պատվիրակները, որ իրենց տեղեկագիրը պատրաստեն հանդարտ մտքով, դառնանք մեր երիտասարդին և տեսնենք, թե ինչ եղավ իր կացությունը։

Գարեգին հետևյալ օրը, երկուշաբթի, առտուն կանուխ գնաց իր գրասենյակը։

Տակավին ո՛չ մեծավորը եկած էր և ո՛չ մյուս պաշտոնյաները։

Գրասենյակի սպասավորը կար միայն, որ սենյակը կմաքրեր։

— Այս ատեն ի՞նչ բան ունիք, մյուսյու Գարեգին,— հարցուց սպասավորը՝ երիտասարդը տեսնելով։

— Այսօր անակնկալ գործ մը պատահեցավ, պիտի ստիպվիմ բացակա ըլլալ, անոր համար եկա, որ իմաց տամ։

— Խեր է, ինշալլահ,— հարցուց սպասավորը։

Գարեգին առանց այս հարցումին պատասխանելու, գրպանը խառնեց և նամակ մը հանելով տվավ սպասավորին և ըսավ.

— Այս նամակը էֆենտիին գալուն պես իրեն հանձնե։

— Շատ աղեկ,— պատասխանեց մյուսը,— ըսե՞մ որ այսօր չպիտի կրնաս գալ։

— Պետք չկա ըսելու, արդեն նամակիս մեջ գրած եմ։

— Լա՛վ, գալուն պես կուտամ։

Գարեգին մեկնեցավ, մինչ սպասավորը ինքնին կըսեր.

— Ի՞նչ ունի մյուսյու Գարեգինը, իրարանցումի մեջ կերևա...

Արդարև երիտասարդը, հակառակ իր ջանքերուն, չէր կրնար պաղարյունությունը պահել։

Հազիվ կեսօրին գրասենյակ եկավ Հակոբ էֆենտին և իսկույն սպասավորին ըսավ.

— Մյուսյու Գարեգինին ըսե, որ գա։

— Մյուսյու Գարեգին այսօր հոս չէ,— պատասխանեց սպասավորը։

— Ի՞նչպես,— գոչեց վաճառականը զարմացած։

— Առտուն կանուխ եկավ և ըսավ, որ անակնկալ գործի մը պատճառով այսօր բացակա պիտի ըլլա և այս նամակը տվավ, որ ձեզի հանձնեմ։

Այս ըսելով սպասավորը սեղանին վրա դրավ երիտասարդին տված նամակը և դուրս ելավ սենյակեն։

Վաճառականը դժգոհ կերպարանքով մը նամակը առավ, պահարանը պատռեց և թուղթը բանալով հետևյալը կարդաց.

«Ազն. Հակոբ էֆ. Սամիկյան,

«Մեր շաբաթ օրվան տեսակցությենեն ետքը, դժբախտաբար այլևս անկարելի պիտի ըլլա ինծի համար ձեր քով պաշտոնավարել։

«Ձեր հավակնությունը՝ որով կուզեք իմ ձեր մոտ ունեցած պաշտոնես դուրս միջամտել իմ անհատական համոզումներուս և հանրային գործունեությանս վրա, անընդունելի է ու չեմ կարող այսպիսի քմահաճույքի մը գլուխ ծռել, որովհետև միշտ անձնական արժանապատվությունս ավելի բարձր նկատած եմ, քան հացի խնդիրը։

«Պետք չունիմ ըսելու, թե որքան հարգած եմ ձեզ մինչև ետքը։ Իմ տասնամյա հավատարիմ ծառայությունս մեծագույն և

անժխտելի ապացույցն է, բայց և այնպես չեմ կրնար հանդուրժել այն անիրավ կշտամբանքներուն, որոնք ուղղեցիք ինձ շաբաթ օրը։

«Գիտեմ թե ինչ դրդումներու հպատակելով վարվեցաք այդպես, բայց ասիկա, ոչ թե արդարացում մըն է ձեզի համար, այլ ընդհակառակը ալ ավելի կդատապարտե ձեր ընթացքը։

Հաճեցեք ընդունիլ խորին հարգանքներս։

Գարեգին»

— Խե՜նթ է, ինչ է այս տղան,— մոլտաց Հակոբ էֆենտին, երբ նամակին ընթերցումը ավարտեց,— ասանկ պարապ բանի համար մարդ տասը տարվան պաշտոնը կթողու և կառնե կքալե՞։

Երիտասարդին այս հանկարծական մեկնումը շատ նեղացուց վաճառականը։ Ինչ պիտի ըներ հիմա, մեկ օրեն մյուսը կարելի չէր անոր պես մեկը գտնել։ Ու հետո տասը տարիե ի վեր Գարեգին մեծ փորձառություն ստացած էր վաճառատան մեջ, տեղյակ էր ամեն գործառնությանց և գրեթե ինքն էր, որ կվարեր ամեն բան, այնպես որ վաճառականը կրնար հաճախ բացակայիլ իր վաճառատունեն՝ վստահ ըլլալով, որ ամեն բան կանոնավորապես պիտի ընթանար։ Եվ ահա հիմա ամեն բան վեր ի վայր կշրջեր։

— Թերևս բարկության վայրկյանին բան մը ըրեր է,— մտածեց,— ինքն ալ պիտի զղջա հարկավ և պիտի ելլե գա... մեկ-երկու օր համբերենք։

Այս մտածումներուն մեջ էր, երբ սպասավորը եկավ և ըսավ թե Մարգար էֆենտին զինքը տեսնել կուզեր։

— Թող ներս հրամմե,— ըսավ Հակոբ էֆենտի։

Վաճառականը ներս մտավ ժպտուն դեմքով մը, թեև այս ժպիտին տակ ներքին մտահոգություն մը ծածկված էր։

— Հրամմեցե՛ք, բարի եկաք,— ըսավ Հակոբ էֆենտի ոտքի ելլելով ու իր հյուրին թիկնաթոռ մը ցույց տալով։

Հետո ավելցուց.

— Առտուն կանուխ, այսպես, խեր է ինշալլահ։

— Հոսկե կանցնեի կոր մեյ մը հանդիպիմ, ըսի,— պատասխանեց Մարգար էֆենտի,— շատ հույս չունեի ձեզ այս ժամուս հոս գտնելու։

— Մեկ քանի կարևոր գործեր ունեի՝. անոր համար այսօր սովորականեն կանուխ եկա։

— Թող գործ ըլլա տե, վնաս չունի կանուխ գալը։

Երկու վաճառականները սկսան հրապարակի կացության մասին խոսիլ, դժգոհություն հայտնելով գործերու վիճակեն։

Սակայն Մարգար էֆենտի առևտրական տեսություն մը ընելու կամ լսելու համար չէր եկած մինչև հոն։

Իր նպատակն էր հասկնալ, թե ի՞նչ եղած է Գարեգինի խնդիրը. թե բարեկամը վերջապես գոհացում տվա՞ծ է իրեն երիտասարդը ճամփելով։

Միայն թե չէր ուզեր այս մասին առաջին անգամ խոսք բանալ, որպեսզի խնդրույն շատ կարևորություն ընծայած չըլլա։ Իսկ ծերունի վաճառականն ալ լավ կռահած էր Մարգար էֆենտիի այս այցելության շարժառիթը և դիտմամբ կզգուշանար իր պաշտոնյային խոսքը ընելու։

Այս կերպով խոսակցությունը կսպառնար անվերջանալի դառնալ, երբ Մարգար էֆենտի ստիպվեցավ խոսքը փոխել և անուղղակի ճամփով մը իր նպատակին հասնիլ։

— Իմացա՞ք, Վարչությունը երկու քննիչ ղրկեց մեր թաղը,— ըսավ։

— Ի՞նչ բանի համար։

— Ճանրմ, Թաղ. խորհրդին զեղծումները քննելու համար... ալ չափը անցուցին։

— Լուր չունիմ։

— Զարմանալի բան, բոլոր թերթերը գրած էին։

— Աչքիս չէ հանդիպեր։

— Կերևա որ քուկինդ ալ գործին մեջ մատ ունի։

— Իմի՞նս ով է։

— Գրագիրդ՝ Գարեգինը, անխելք տղան, եթե ժամանակին հրաժարվեր, այս փորձանքները չէր ի գար գլխուն և ինքն ալ Պողոս էֆենտիի չէր զոհվեր։

— Պողոս էֆենտի՞ն է զեղծում գործողը։

— Չեմ գիտեր, անանկ կըսեն կոր, քննիչները դեռ իրենց տեղեկագիրը չեն տված։

— Ես այդ մարդեն չեմ հուսար ատանկ բան մը... մեջտեղը ապացույցներ կա՞ն։

— Շիտակը ես մոտեն տեղեկություն չունիմ... կա՛ն, կըսեն կոր, թաղիս մեջ անանկ բաներ կպատմեն կոր որ...

— Ամեն պարագային Գարեգինը այդ զեղծումներուն մեջ

բաժին ունենալու չէ,— ըսավ ծերունի վաճառականը,— անոր պարկեշտությանը ես երաշխավոր եմ, տասը տարիե ի վեր փորձած եմ զինքը։

— Քեզի չըներ՝ ուրիշին կընե. քանի որ այդ թաղականի պաշտոնին թուրխալի պես փակեր է, ըսել է շահ մը ունի։

— Ուրիշները չեմ գիտեր, բայց Գարեգին անանկ տղա չէ։

— Դուն ալ զարմանալի ես,— գոչեց Մարգար էֆենտի սրբտնեղած,— քու պաշտոնյադ ըլլալուն համար անպատճառ պետք է, որ զինքը պաշտպանես։

— Ես ճշմարտությունը կըսեմ... ասկե զատ Գարեգինը ալ իմ պաշտոնյաս չէ։

— Ինչպե՞ս, ճամփեցի՞ր զինքը,— գոչեց վաճառականը ուրախությամբ։

— Չէ՛, ինքը հրաժարական տվեր է։ Ա՛ռ կարդա։ Ու ծերունին գրասեղանին վրայեն Գարեգինի նամակը առնելով Մարգար էֆենտիի երկարեց։

Վաճառականը ուշի ուշով կարդաց զայն, վերադարձուց և ըսավ.

— Ապերախտը ասանկ նամակ կգրե՞... մարդկություն չունի եղեր բնավ, պարզապես ծայրե ի ծայր նախատինք... ուրիշին մի ցուցներ, պատռե՛, նետե՛...

— Ասոնց բոլոր պատճառը դուն ես,— պատասխանեց մյուսը։

— Ե՞ս, ես ի՞նչ բան ունիմ ասոնց մեջ, դուն պաշտոնյայիդ դիտողություն ես ըրեր, ան ալ բարկացեր հրաժարեր է... հիմակվան երիտասարդները անանկ են, քիչ մը երես տալուդ պես՝ գլխուդ վրա էլլել նստիլ կուզեն, փոքր դիտողություն անգամ չեն կրնար մարսել։

— Եղբա՛յր, դուն չէի՞ր, որ եկար ըսիր որ կամ թաղականութենե թող հրաժարի կամ զինքը ճամփու դիր։

— Ճանըմ, իբրև մտերիմ բարեկամ, քեզի խորհուրդ մը տվի, միմիայն իր աղեկության համար, եթե ոչ ինծի ի՞նչ թաղական եղեր է կամ ոչ... ես իմ արժանապատվությանս չեմ թողուր ատանկ չնչին մարդոց հետ զբաղվիլ։

— Ինչ որ է, եղածը եղած է, ես ան գիտեմ, որ դժվարավ իրեն պես մեկը պիտի կրնամ գտնել։

— Պարապ խոսք, եթե կուզես տասը հատ գտնեմ քեզի, և Գարեգինեն շատ ավելի կարող, եփուն, գործունյա մարդիկ, որոնք

անոր մեծամտությունն ալ չունին... սա գրած նամակը նայե մեյ մը... անամոթը... եթե իր երեսեն հարյուր հազար ոսկի վաստկելս գիտնամ նե՝ ոտքը վաճառատանս սեմեն ներս չեմ մտցներ... ինչ որ է, առայժմ մնաք բարով, նորեն կտեսնվինք... կուզե՞ս որ մեկ քանի պարկեշտ երիտասարդ ղրկեմ, որպեսզի հարմարագույնը ընտրես, Գարեգինի տեղը։

— Առայժմ մեկ-երկու օր թող անցնի։

— Վա՛յ անպիտան, ասանկ նամակ կգրվի՞... որչափ բարկանաս իրավունք ունիս... եթե այս նամակը ինծի գրած ըլլար՝ դատ կբանայի իրեն դեմ... սա խլեզը նայե, Հակոբ էֆենտիի պես պատկառելի անձնավորության մը ասանկ բաներ գրե...

Եվ Մարգար էֆենտի ծերունիի մոտեն հեռացավ գայթակղած դեմքով մը։

Փողոցը ճամփան շարունակեց զվարթ տրամադրության մը ներքև։

— Վերջապես,— մտածեց գոհունակությամբ,— այդ սրիկան վռնտել տվի, թող հիմա անգործ պտտի ու հասկնա, թե ինչ ըսել է Մարգար էֆենտիին դեմ գործել... թող աշխատի՞ ուրիշ վաճառականի մը քով գործ գտնելու։

Եվ վաճառականը ինքնիրեն որոշեց ամեն միջոց ձեռք առնելու, որպեսզի երիտասարդը ուրիշ տեղ մը չկրնա տեղավորվիլ։

— Ասանկները անոթի ձգելու է, որ մարդ ըլլան,— կմտածեր։

Վրեժխնդրական այս տրամադրություններով առաջ կերթար և էմինեոնյուի հրապարակը հասած էր, երբ ետևեն ձայն մը հնչեց։

— Բարև՛, Մարգա՛ր էֆենտի, ո՞ւր այսպես։

Վաճառականը ետին դարձավ։ Փաստաբան Սափորյան էֆենտին էր, սև, խոշոր պարուրա մը թևին ներքև։

— Տեղ մը գացեր էի տե՝ հիմա գրասենյակ կդառնամ կոր,— պատասխանեց վաճառականը։

— Աղեկ հանդիպեցանք, ես ալ ձեզի տեսնել կուզեի,— ըսավ փաստաբանը։

— Ի՞նչ բանի համար։

— Տեղեկագիրը տվի Վարչության։

— Իրա՞վ կըսես, ի՞նչ շուտ։

— Ես անանկ եմ, ինծի հանձնված գործը շուտ մը կտեսնեմ... բնությունս այսպես է։

— Ե՞րբ տվիր։

— Հիմա, այս առտու, գրագրիս հետ ղրկեցի... աղվոր բան մը եղավ, շատ պիտի հավնիս։

— Իրա՞վ կըսես։

— Թաղ. Խորհրդին խերը անիծեցի։

— Մեյ մը չե՞մ կրնար տեսնել, գոնե օրինակը։

— Դժբախտաբար օրինակը չպահեցի քովս, ասկե զատ, Մարգար էֆենտի, սովորություն չէ այս տեսակ թուղթերը նախապես ուրիշներու ցույց տալ, հետո ծանր պատասխանատվություն կուգա վրաս։

— Իրավունք ունիս։

— Բայց կկրկնեմ. ուղածեդ ավելին է։

Վաճառականը մեծ ուրախությամբ լսեց այս ավետիսը, միայն թե կփափաքեր տեղեկագրին մանրամասնությունները իմանալ։

— Եթե ժամանակ ունիք՝ քիչ մը մեր գրասենյակը հանդիպինք,— առաջարկեց փաստաբանին։

Այս վերջինը ժամացույցը նայեցավ, պահ մը մտածեց, գրպանեն փոքրիկ տետրակ մը հանեց, թղթատեց և ի վերջո ըսավ.

— Երեսունըհինգ վայրկյանի չափ կրնամ տրամադրել ձեզի։

Միասին ուղղվեցան Մարգար էֆենտիի գրասենյակը, ուր փաստաբանը կարգ մը մանվածապատ խոսքերե ետքը հայտնեց, թե քանի մը օրվան համար տասը ոսկիի անհրաժեշտ պետք ուներ։ Վաճառականը փութաց այդ փոխառությունը կնքելու։

— Մինչև հինգ օր անպատճառ կվերադարձնեմ,— ըսավ Սափորյան էֆենտի, ոսկիները գրպանելով։

Եվ փոխարինելու համար վաճառականին ցույց տված հաճոյակատարությունը՝ մանրամասն պատմեց տեղեկագրին իմաստը։

— Ի նպաստ Պողոս էֆենտիի եղած վկայությունները ամենքն ալ կասկածելի ցույց տրված են,— ըսավ,— իսկ ընդհակառակը՝ ընդդեմ վկայություններուն մեծ կարևորություն ընծայված է։

— Արդեն ճշմարտությունն ալ այդ է,— հաստատեց վաճառականը։

— Թաղին մեջ տիրող հուզումը պատմված է և անոր ամբողջ պատասխանատվությունը ծանրացուցված է Թաղ. Խորհրդին վրա։

— Բուն իրողությունն է։

— Ժամկոչ Վարդանին խնդիրն ալ շոշափած եմ ու եկեղեցիին մեջ եղած աթոռի դեպքը որակած եմ «իշխանության չարաշար վնղծում»։

— Ճիշտ բառը գտեր եք։

— Տեղեկագիրը խստորեն կպահանջե ժամկոչին անմիջական հեռացումը։

— Թաղը խաղաղցնելու համար ուրիշ ճար չկա։

— Թաղ. Խորհրդի հրաժարեցումը...

— Ատ արդեն ամենեն կենսականն է։

— Եվ առժամյա Թաղ. Խորհրդի մը կազմությունը, մինչև որ միտքերը հանդարտին և հնարավոր ըլլա կանոնավոր ընտրություն կատարել։

— Կեցցե՛ք, շատ անկողմնակալ կերպով ներկայացուցեր եք ամեն բան։

— Ես արդեն անկողմնակալ և անաչառ մարդ մըն եմ, հայրս կամ եղբայրս հանցավոր ըլլան՝ չեմ քաշվիր ըսելու... բնությունս, նկարագիրս այսպես է ու այս նկարագրիս երեսեն շատ անգամ վնասած եմ, բայց ինչ ընեմ, ձեռքս չէ։

Վաճառականը չափազանց գոհ էր իր ստացած տեղեկություններեն։ Կխորհեր, որ այս տեղեկագրին վրա Վարչությունը ուրիշ բան չէր կրնար ընել, այլ եթե անոր մեջ ներկայացված պահանջները գործադրել։ Վերջապես հաղթության ժամը կհնչեր։

Ժամեն ավելի էր, որ փաստաբանը վաճառականին գրասենյակը կգտնվեր, երբ ոտքի ելավ մեկնելու համար։

— Սափորյան էֆենտի, ճաշի ժամը կմոտենա կոր, երթանք միասին ճաշենք,— առաջարկեց վաճառականը։

— Կըլլա՞ մի յա...

— Ինչո՞ւ չէ։

Փաստաբանը ժամացույցը նայեցավ, փոքրիկ տետրակը կրկին հանեց գրպանեն ու քննեց և ըսավ.

— Լավ, կրնամ ժամ մը տրամադրել ձեզի։

— Ճաշելու համար բավական է արդեն։

Երկու բարեկամները գնացին լավագույն ճաշարանը, ուր փաստաբանը անսովոր պերճախոսությամբ ախորժակ մը ցույց տվավ։

Ճաշեն հետո բաժնվեցան իրարմե։

Վաճառականը այդ իրիկուն հաղթականորեն դարձավ իր թաղը։

— Տեղեկագիրը գացեր է Վարչության, հիմա պոյերնին պիտի տեսնան,— կըսեր դեմը ելլողին։

Մեծ ավետիսը հաղորդեց նաև իր կնոջ՝ Սաթեն հանըմին։

— Օ՛խ,— գոչեց այս վերջինը,— թող աղվոր մը խաղք ըլլան, որ երթան սորվին։

— Շատ շնորհքով մարդ կերևա կոր Սափորյան էֆենտին,— դիտել տվավ Մարգար էֆենտի։

— Անգամ մը զինքը դարձյալ ճաշի հրավիրենք,—ըսավ տիկին Սաթեն։

— Աղեկ կըլլա՛։

Վաճառականը մարդ ղրկեց ու իր տունը հրավիրեց Մանուկ աղան և ընկեր Կայծունին, որոնց հաղորդեց ուրախալի լուրը։ մանրամասն պատմելով տեղեկագրին պարունակությունը։

— Պողոս էֆենտին երբ որ իմանա, տամլա պիտի իջեցնե,— ըսավ Մանուկ աղա ձեռքերը շփշփելով։

— Թերևս իմացած է արդեն։

— Չեմ կարծեր, այս իրիկուն իրեն հանդիպեցա, ուրախ դվարթ կխոսեր կոր պարոն Գարեգինին հետ։

— Գիտե՞ս որ այդ սրիկան վռնտեր են իր պաշտոնեն,—ըսավ վաճառականը։

— Իրա՞վ կըսես, ինչո՞ւ համար։

— Ո՞վ գիտե, զեղծում ըրած է, ատանկ մարդիկներեն ամեն բան կհուսացվի։

Ընկեր Կայծունի նույնպես չափազանց ուրախ էր։ Ըստ իրեն ասիկա փայլուն հաղթանակ մը պիտի ըլլա «Պայքար Լսարանը»-ին համար և անոր ազդեցությունը պիտի կրկնապատկեր։

— Ժողովրդային մասսայի բնորոշ հաղթությունն է այս օլիգարխիայի ճնշող զորության դեմ,— հայտարարեց։

— Հիմա աշխատելու ենք, որ առժամյա Թաղ. խորհուրդը մեր մարդոցմեն կազմվի,— ըսավ վաճառականը։

— Ժողովրդի քվեն պիտի որոշե ամեն բան,—վճռեց Կայծունի։

Բայց Մարգար էֆենտի բացատրեց, թե՝ առժամյա Թաղ. խորհուրդը քվեարկությամբ չընտրվիր, այլ Վարչությունը իր հարմար տեսած անձերեն կկազմե զայն։

— Միայն թե,— ըսավ,— Վարչության մեջ բարեկամներ ունիմ, կրնանք անոնց վրա ազդել։

— «Պայքար Լսարանը» պետք է իր ներկայացուցիչը ունենա Թաղական խորհուրդին մեջ,— պատգամեց ընկեր Կայծունին։

— Քեզ կդնենք,— ըսավ վաճառականը։

— Ես կամ ուրիշ ընկեր մը՝ կարևորություն չունի։ Անձի խնդիր չկա մեզի համար, այլ լոկ սկզբունքային խնդիր, հասարակական շահերու տեսակետ...

Վաճառականը իր երկու ընկերներուն հետ, ափհափ ցանկ մը պատրաստեց ու գրպանը դրավ, որպեսզի հետևյալ օրը Վարչության անդամ Քերովբե էֆենտիին ներկայացնե։

Ընկեր Կայծունի և Մանուկ աղա, բնականաբար այս ցանկին մեջ կերևային։

Հետևյալ օրը Մարգար էֆենտի գնաց իր բարեկամ Վարչության անդամին գրասենյակը և հոսկե, հոնկե քիչ մը խոսակցելե ետքը ըսավ.

— Իմացա, որ քննիչները իրենց տեղեկագիրը տվեր են Վարչության։

— Այո՛, տվին,— պատասխանեց Քերովբե էֆ.։

— Էյ, ի՞նչ որոշում տվիք։

— Դեռ բան մը չորոշեցինք։

— Ինչո՞ւ համար... լսածիս համաձայն տեղեկագիրը բացարձակապես կդատապարտե կոր եղեր Թաղ. խորհուրդը շատ մը փաստացի ապացույցներով։

— Այո՛, մեկ հատը այնպես է։

— Ինչպես մեկ հատը,— գոչեց վաճառականը։

— Երկու տեղեկագիր ղրկված է Վարչության,—պատասխանեց Քերովբե էֆենտի հանդարտությամբ։

— Այդպես բան կըլլա՞։

— Էֆենտիմ, երկու քննիչներ իրարու մեջ չեն կրցած համաձայնիլ, Սափորյան էֆենտիի պատրաստած տեղեկագրին ներքև տոքթ. Ծրարյան էֆենտին չէր ուզած ստորագրել և ինքն ալ իր կարգին ուրիշ տեղեկագիր մը պատրաստած է։

— Ծրարյան էֆենտին ի՞նչ կըսե կոր իր տեղեկագրին մեջ...

— Սափորյան էֆենտիին ըսածներուն բոլորովին հակառակը... այսինքն Թաղ. խորհուրդը բացարձակապես կարդարացնե կոր։

— Էյ, հիմա՞...

Քերովբե էֆենտի իբրև պատասխան, երկու ձեռքը բացավ, գլխու տարտամ շարժումով մը, ինչ որ թերևս կնշանակեր։

— «Ենկուր տե՝ գործին մեջեն ելիր»։

— Սա ի՞նչ խաղքություն է,—գոչեց Մարգար էֆենտի գայրա-

ցած, այդ տոքթ. Ծրարյան ի՞նչ իրավունք ունի չստորագրելու իր պաշտոնակցին տեղեկագրին ներքև... պարզապես կերևա որ կաշտուած է։

— Չեմ կարծեր,— պատասխանեց Վարչության անդամը հանդարտությամբ,— տոքթ. Ծրարյան անանկ մարդ չէ...

— Ան ատեն զինքը խաբած են։

— Միևնույն վկայությունները լսած են երկուքն ալ, միայն թե բոլորովին տարբեր եզրակացություններու հասած։

— Արդեն գիտեի, որ այդպես պիտի ըլլա, երբ Պողոս էֆ-ն բռնի իր տունը կերակուրի տարավ Ծրարյան էֆ-ն։

— Չեմ գիտեր ինչ անցած դարձած է,— պատասխանեց Քերովբե էֆենտի,— միայն սա գիտեմ, որ այս խնդրույն մասին Վարչության սեղանին վրա երկու տեղեկագիրներ կան, որոնք զիրար կհակասեն։

— Լավ, բայց վերջապես դուք ի՞նչ պիտի ընեք։

— Նախ պիտի աշխատինք, որ երկու քննիչները իրարու հետ համաձայնին և եթե ասիկա կարելի չըլլա՝ այն ատեն նոր քննիչ մը պիտի կարգենք, լիազոր իշխանությամբ, որպեսզի առանձին քննություն մը կատարե և տեղեկագիր մը պատրաստե։

— Ատ քու ըսածդ ամիսներ կտևե։

— Իրավ է, բայց ուրիշ ճար չկա։ Չենք կրնար տեղեկագիրներեն մեն մյուսեն գերադաս համարել...

— Եվ թող պիտի տաք, որ թաղին մեջ երկպառակությունը այսպես շարունակվի՞...

— Ի՞նչ կուզեք, որ ընենք։

— Թաղեցիները իրարու գլո՞ւխ պատռեն, արյո՞ւն թափի...

— Համբերությո՛ւն, Մարգար էֆենտի, համբերությո՛ւն, ազգային գործերը անանկ դյուրավ չեն կարգադրվիր, կարգ, կանոն կա, օրենք կա, անոնց համեմատ պետք է վարվինք։

Վաճառականը սրտնեղած սկսավ քննադատել Վարչությունը, որ խնդիրները կձգձգեր առանց վերջնական որոշում մը տալու, որ անձերուն արժեքն ու տարբերությունը ըմբռնելու անկարող էր, որ ժամկոչ մը կամ վարժապետ մը հավասար կբռներ վաճառականի մը և այլն, և այլն։

Քերովբե էֆ. թույլ տվավ իր բարեկամին, որ ուզածը ըսե, հետո պատասխանեց։

— Արդեն մեր շրջանը կլրանա կոր, քանի մը ամիսեն պիտի

քաշվինք երթանք, ինչալլահ մենե կարողները կուգան և ավելի աղեկ կգործեն։

— Ճանըմ, ես քեզի համար չեմ ըսեր, ընդհանուր առմամբ կխոսիմ,— դիտել տվավ վաճառականը, որ չէր ուզեր վշտացնել Վարչության անդամը.— իցիվ թե Վարչության բոլոր անդամները քու կարողությունդ ու ուղղամտությունդ ունենային։

— Քավ լիցի,— պատասխանեց մյուսը։

Վաճառականը մեկնեցավ Քերովբե էֆ-ի գրասենյակեն չափազանց սրտմտած։

Անգամ մըն ալ իր հույսը ի դերև կելլեր վերջին վայրկյանին։

Հանկարծ հիշեց փաստաբան Սափորյան էֆենտին։

— Վա՛յ շունչանորդի,— մտածեց,— այսպես ուրեմն երեկ քթիս խնդաց, ամեն բան եղած լմնցած ցույց տալով ու տասը ոսկի ալ առավ, կերակուրս կերավ, ես ալ ապուշի պես խաբվեցա իրմե... երթամ մեյ մը աչքին երևամ... թող զիս տիմար, ապուշի տեղ չդնե։

Եվ ուղղակի դիմեց Սափորյան էֆ-ի գրասենյակը. փաստաբանն իր գրասեղանին առջև բազմած՝ թրքերեն թուղթ մը գրելու զբաղած էր։

— Վա՛յ, հրամմեցե՛ք, Մարգար էֆենտի,— գոչեց, վաճառականը տեսնելուն պես ոտքի ելավ, սա ո՞ր հովը փչեց. նստեցեք տեսնենք, սուրճ մը կառնես հարկավ։

Վաճառականը պաղ կերպով ձեռքովը բարևեց, թիկնաթոռի մը վրա նստավ և առանց առաջաբանի ըսավ.

— Ես իրիկուն ըսածներդ ի՞նչ էին։

— Ի՞նչ բանի մասին,— հարցուց փաստաբանը միամտորեն։

— Տեղեկագրին մասին...

— Էյ, ի՞նչ է եղեր... իրողությունը ըսի պարզապես։

— Երկու տեղեկագիր տրվեր է։

— Ես իմ տեղեկագիրս տվի, որուն պարունակությունն ալ ձեզի ըսի և դուք ալ չափազանց գոհ մնացիք։

— Այո՛, բայց տոքթ. Ծրարյանը չէր ստորագրեր այդ տեղեկագիրը։

— Չէի կրնար ստիպել, որ անպայման ստորագրե։

— Եվ ինքն ալ իր կողմե ուրիշ տեղեկագիր մը տվեր է։

— Ինքն ալ իրավունք ուներ տեղեկագիր մը տալու, որքան ես, քանի որ համահավասար քննիչներ էինք։

— Այո՛, բայց քու տեղեկագրիդ բոլորովին հակառակ է եղեր իր գրածը։

— Կարծիքները ազատ են... ես ոչէ իրավունք չունեի իր խորհելակերպին վրա ճնշում բանեցնելու։

— Որով քու տեղեկագիրդ իր արժեքը կորսնցուցեր է բոլորովին։

— Նույն բանը կարելի է ըսել նաև տոքթ. Սրարյանի տեղեկագրի համար։

— Էյ, ի՞նչ հասկցաք ասկեց։

— Վարչությունը զիս քննիչ կարգեց, ընդունեցի պաշտոնը, գնացի, քննություն կատարեցի և տեղեկագիրս տվի, որով իմ պարտականությունս լիովին կատարած եղա, խիղճս հանդարտ է, ալ գործը ինե ելած է։ Բայց նորեն կկրկնեմ, ամեն բան կարգին է, միայն թե պետք է համբերել։

— Կարելի չէ՞, որ Սրարյանին հետ համաձայնության մը գալ... ես Վարչության մեկ անդամը տեսա, ըսավ, որ նոր քննություն մը կատարելե առաջ պիտի ջանան, որ երկու տեղեկագիրները իրարու հետ համաձայնեցնեն։

— Ատ անկարելի է,— պատասխանեց փաստաբանը,— տոքթ. Սրարյանը լավ կճանչնամ, սարսափելի համառ մարդ մըն է... ես արդեն շատ աշխատեցա զինքը համոզելու, բայց իզուր...

— Ան ատեն ես ալ ուրիշ միջոցի կդիմեմ,— ըսավ վաճառականը ոտքի ելլելով։

Այս խոսքերուն ներքև թեև սպառնալիք մը պահած էր, բայց փաստաբանը չհասկնալու զարկավ։

Վաճառականը մնաս բարով ըսելով հեռացավ Սափորյանի քովեն։

Սրտմտությունը չէր անցած՝ այլ ընդհակառակը հետզհետե կբորբոքեր։

— Երթամ Պատրիարքը տեսնեմ,— մտածեց ինքն իրեն,— և անոր ձեռքով գործը հաջողցնեմ։

Պատրիարքին հետ մտերմություն չուներ թեև, բայց ծանոթ էր։ Ասկե զատ վստահ էր, որ ինք իբրև ջոջ վաճառական մը, սիրալիր ընդունելություն մը պիտի գտներ։

Իսկույն ուղղվեցավ Սիրքեճիի կայարանը և կառախումբով գնաց Գում-Գաբու։ Մարգար էֆ. շատ քիչ անգամ առիթ ունեցած էր Պատրիարքարան երթալու, ուստի իր ներկայությունը բավական

զարմանք պատճառեց բարապաններուն, որոնք փութացին իր հովանոցը և բարտրույն առնել ու ակնածանքով զանոնք պահել։

— Սրբազանը հո՞ս է,— հարցուց վաճառականը։

— Այո՛, հոս է,— պատասխանեց թավ պեխերով բարապան մը,— հրամմեցե՛ք։

Վաճառականը վեր ելավ և ուղղակի Պատրիարքին սենյակը դիմեց, որուն դռան քով ուրիշ բարապան մը կեցած էր։ Այս վերջինը՝ հավանորեն նորեկ մը, չճանչցավ զինք։

— Սրբազանը առանձի՞ն է,— հարցուց Մարգար էֆենտին։

— Այո՛,— պատասխանեց բարապանը։

Այս պատասխանին վրա վաճառականը ուզեց դուռը բանալ և ներս մտնել, բայց մյուսը կեցուց զինքը։

— Սպասե որ իմաց տամ,— ըսավ։

— Հարկ չկա,— գոչեց Մարգար էֆ.։

— Ի՞նչպես հարկ չկա, կանոնը ասանկ է։

— Այդ կանոնը ինձի համար չէ։

— Կանոնը ամենուն համար է։ Ձեր անունը տվեք, որ Սրբազանին հաղորդեմ։

— Զիս չե՞ս ճանչնար կոր,— գոչեց վաճառականը զարմացած ու բարկացած։

— Չէ՛։

— Կերևա որ նոր եկեր ես այստեղ։

— Այո՛, նոր եկած եմ։

— Լավ ուրեմն, ըսե Սրբազանին, որ Սասանյան Մարգար էֆենտին զինքը տեսնել կուզե... հասկցա՞ր։

— Շատ աղեկ, սպասե քիչ մը այստեղ։

Եվ բարապանը ներս մտավ։

— Այս ավանակը ուրկե՞ դեմս ելավ,— մտածեց ինքնին Մարգար էֆենտի։ Բարապանը իսկույն վերադարձավ և այս անգամ խիստ քաղաքավարի ձևով մը ըսավ.

— Սասանյան էֆենտի, հաճեցեք ներս հրամմել։

Վաճառականը ներս մտավ և մոտեցավ Պատրիարքին, որ ոտքի ելավ զայն ընդունելու համար։

— Բարի եկաք, Մարգար էֆենտի, ինչպե՞ս եք, աղե՞կ եք։

— Շնորհակալ եմ, Սրբազան։

— Տիկինը ի՞նչպես է։

— Ձեռքերնիդ կհամբուրե։

— Ողջ ըլլա։

Այս պայմանագրական հառաջաբանեն ետքը, Մարգար էֆենտի անհամբեր՝ իսկույն ուզեց իր այցելության շարժառիթին գալ։

— Ձեր գլուխը քիչ մը ցավցնելու եկած եմ, Սրբազա՛ն,— ըսավ։

— Քավ լիցի, խե՞ր է։

— Մեր թաղին խնդիրներուն վրա կուզեմ խոսիլ։

— Ձեր թաղին մեջ խնդի՞ր ունիք,— հարցուց Պատրիարքը անտարբեր դեմքով մը։

— Ճանըմ, Սրբազան, չե՞ք գիտեր։ Ամիսներե ի վեր Թաղական Խորհրդին պատճառավ թաղը տակնուվրա կըլլա կոր...

— Դուք ո՞ր թաղը կբնակիք։

— Ք. Թաղը չե՞մ, Սրբազան։

— Հա, հո՞ն եք, չէի գիտեր։

Վաճառականը դժգոհության աննշմարելի շարժում մը ըրավ։ Պատրիարքին՝ իր նստած տեղը չգիտնալը տեսակ մը արժանապատվության վիրավորանք էր իրեն համար։

— Էյ, ի՞նչ է այդ թաղականի խնդիր ըսածդ,—հարցուց վաճառականին։

— Խնդիրը Վարչության սեղանին վրա դրված է, անշուշտ գիտնալու եք,— ըսավ Մարգար էֆ. որ հետզհետե կբորբոքեր տեսնելով իր խոսակցին պաղարյուն անտարբերությունը։

— Վարչության սեղանին վրա այնքան խնդիրներ կան որ... կրնա՞մ ամենքն ալ մի առ մի հիշել... փառք աստծո, ամեն թաղ իր խնդիրը ունի... ձերինը քանի՞ տարվան բան է։

— Սրբազան, մեկ երկու ամսվան խնդիր է։

— Հա՞, դեռ շատ նոր է եղեր,— գոչեց Պատրիարքը թեթև ծիծաղով մը, մենք Վարչության սեղանին վրա թաղային անանկ խնդիրներ ունինք, որ տարիներե ի վեր կծեծվին ու տակավին լուծում չեն ստացած։

— Բայց, Սրբազան, մեր խնդիրը անպատճառ հիշելու եք, որովհետև Վարչությունը քանիցս զբաղեցավ անով։

— Իրա՞վ կըսես։

— Որովհետև մեր թաղեցիներեն բազմաթիվ ստորագրությամբ հանրագրություն մը մատուցվեցավ Վարչության՝ Թաղական Խորհրդի կարգ մը արարքներուն դեմ բողոք։

— Բողոքի այդ հանրագրություններն ալ շատ սովորական են... ամեն թաղեն կուգան։

— Այս հանրագրությունը սակայն Վարչությունը նկատի առավ և երկու քննիչ ղրկեց, որպեսզի խնդիրը ուսումնասիրեն և տեղեկագիր մը պատրաստեն։

— Հիմա հիշեցի,— ըսավ Պատրիարքը,— Սափորյան էֆ-ն, տոքթ. Ծրարյանը ղրկեցինք։

— Վերջապես,—գոչեց Մարգար էֆենտի գոհունակությամբ,— միտքերնիդ եկավ։

— Այդ քննիչները իրենց պաշտոնը ավարտած և տեղեկագիրներն ալ ղրկած են, ուրեմն ալ ի՞նչ կուզեք։

— Բայց Սրբազան, կերևա, որ տոքթ. Ծրարյանը ինչ-ինչ թաքուն նպատակներով, չէ ուզեր ստորագրել Սափորյան էֆենտիի տեղեկագիրը և ինք ուրիշ մը գրեր է։

— Խնդրին մեջ թաքուն նպատակ չի կա, տոքթ. Ծրարյան իմ բարեկամս է ու մոտեն կճանչնամ, պարկեշտ, պարտաճանաչ մարդ մըն է, որ ամեն գործի մեջ ուղղամտությամբ կվարվի։ Խնդին համեմատ քննություն մը կատարեր ու արդյունքը ղրկեր է։

— Կարծես Սափորյան էֆ-ն ալ նույնքան պարկեշտ և ուղղամիտ անձ մըն է,— ըսավ վաճառականը։

— Կրնա ըլլալ, զինքը մոտեն չեմ ճանչընար։

— Բայց և այնպես իր տեղեկագիրը բոլորովին հակառակ է եղեր տոքթ. Ծրարյանի տեղեկագրին եզրակացության։

— Այո՛, Վարչությունը նկատողության առավ այդ կետը։

— Եվ ի՞նչ որոշեց։

— Դեռ կարծեմ վերջնական որոշում մը չտվավ, սեղանին վրա այնքան խնդիրներ կան, որ...

— Բայց մեր խնդիրը կարևոր է...

— Անկեց շատ ավելի կարևոր ու կենսական խնդիրներ ունինք... ձեր խնդիրը թերևս ձեզի համար կարևոր է միայն։

— Թաղը տակնուվրա եղած է...

— Բայց մենք ի՞նչ կուզեք, որ ընենք, բողոքագիր տվիք, նկատողության առինք և քննիչներ ղրկեցինք, քննիչները իրենց պաշտոնը կատարեցին ու տեղեկագիր տվին, ալ ի՞նչ կուզեք... քննիչները իրար հետ չեն կրցեր համաձայնիլ, միթե հանցանքը մե՞րն է։ Եթե ուրիշ միջոց մը գիտեք խնդիրը կարգադրելու, ըսեք, ընենք։

— Այո՛, գիտեմ,— պատասխանեց Մարգար էֆ.։

— Ո՞րն է...

— Անմիջապես պաշտոնե դադարեցնել ներկա Թաղ. Խորհուրդը։

— Ի՞նչ հիման վրա... Թաղական Խորհրդի դեմ որոշ ամբաստանություններ չկան։

— Սափորյան էֆ-ի տեղեկագիրը։

— Տոքթ. Ծրարյան բոլորովին հակառակը կըսե։

— Սրբազան,— գոչեց վաճառականը համբերությունը սպառած,— ատ Պողոս էֆենտին պետք է քաշվի Թաղ. Խորհուրդեն, ես աս գիտեմ։

— Կերևա, որ ան ալ իր կուսակիցները ունի։

— Կարգ մը սրիկաներ...

— Եվ սակայն...

— Սրբազան, եթե դուք անմիջապես կարգադրություն մը չընեք՝ խնդիրը տարբեր հանգամանք պիտի առնե։

— Ի՞նչ ըսել կուզեք։

— Թաղեցին բռնի դուրս պիտի նետե այդ մարդիկը։

— Իրավունք չունի։

— Ունի թե չունի, սա ասանկ է։ Գիտցած եղեք, որ ցավալի դեպքեր տեղի պիտի ունենան և անոնց պատասխանատվությունն ալ Ձեր Սրբազանության վրա պիտի ծանրանա։

Մարգար էֆենտիի այս սպառնական խոսքերը իրենց ազդեցությունը ըրին։ Պատրիարքը պահ մը խորհեցավ, հետո ըսավ.

— Մեկ միջոց մը կա, թերևս հաջողինք այդ կերպով խաղաղորեն խնդիրը լուծել։

— Ի՞նչպես։

— Պողոս էֆենտին կանչել տամ և հորդորեմ, որ ինքնաբերաբար հրաժարի։

— Այդ մարդը ինքնաբերաբար չհրաժարիր։

— Ես զինքը կհամոզեմ։

— Լա՛վ, փորձեցեք ուրեմն։ Միայն թե շուտով պետք է ըլա ամեն բան։

— Վաղն իսկ զինքը Ղալաթիո Խորհրդարանը կհրավիրեմ, ուր ժողով ունինք և իրեն հետ կտեսնվիմ։

Այս ըսելով Պատրիարքը գրասեղանին վրա դրած զանգը հնչեցուց։

Բարապանը երևցավ։

— Մուշտակյան էֆ-ն կանչե,— հրամայեց Սրբազանը։

Մուշտակյանը իսկույն փութաց Պատրիարքին։

— Անմիջապես իմ կողմես նամակ մը գրե,— հրամայեց Պատրիարքը,— Ք. Գյուղի Թաղ. Խորհրդի ատենապետ Պողոս էֆենտիին և ըսե, թե կարևոր խնդրի մը մասին իրեն հետ տեսակցիլ կուզեմ վաղը Ղալաթիո Խորհրդարանը։

— Շատ աղեկ, Սրբազան։

Եվ քարտուղարը անհետևույթ եղավ։

— Դուն հոգ մի ըներ, ես անիկա կհամոզեմ,— ըսավ Սրբազանը Մարգար էֆենտիին,— և հրաժարական մը գրել կուտամ։

— Հոգ ընելու բան մը չի կա,— պատասխանեց վաճառականը,— իմ փափաքս այն է, որ պարապ տեղը խռովություն չըլլա... եթե ոչ, ես ատանկ բաներու չեմ խառնվիր... ոչ իմ դիրքս, ոչ իմ ազդեցությունս և ոչ ալ արժանապատվությունս կներեն, որ Պողոս էֆենտիի պես մարդոց հետ զբաղվիմ... Ուրեմն, Սրբազան Հայր, մնաք բարով։

— Երթաք բարով, Մարգար էֆենտի։

Վաճառականը սենյակեն դուրս եկավ։ Բարապանը այս անգամ ակնածանքով բարևի կեցած էր։ Մարգար էֆ. գրպանեն մեծիտիե մը հանեց, անոր տվավ և,

— Ծո՛, ավանա՛կ,— ըսավ,— ասկե ետքը նայե, որ Պատրիարքին քով եկող գացողները ճանչնաս և ինծի պես անձնավորության մը հետ վարվելու կերպը սորվիս։

— Կներեք, էֆենտի,— կմկմաց մյուսը,— չէի գիտեր... դեռ նոր եկած եմ։

Թ

— Վայ, Մյուսյու Թորգոմ, բարի եկաք, հրամմեցե՛ք, դուք ալ ընկեր Սուսերյանց, ներս հրամմեցեք։

Թաղականին կնիկը՝ տիկին Շազիկն էր, որ իր հյուրերը կպատվասիրեր, որոնք իր անվան տոնախմբությունը շնորհավորելու եկած էին։

Մատարյան, Տոսախյան, Միհրանիկ ու իր կին Նվարդ, խմբագիր պարոն Նշանիկ իր մորը հետ, թաղական Մկրտիչ աղա ու իր կինը, տիկին Շազիկի մեկ քանի ազգականուհիներն ու ազգականները, որոնք հեռավոր թաղերե եկած էին, և այլն։ Հոն էր նաև մանկապարտեզի վարժուհին, օրիորդ Շուշանիկ, զոր հատկապես

հրավիրած էին որպեսզի դաշնակ զարնեն։ Պողոս էֆենտի ժամկոչ Վարդանն ու վարժարանին տնտեսն ու տնտեսուհին ալ բերել տված էր։ Առաջինը վարը դռան քով կեցուցած էին իբրև դռնապան, իսկ մյուս երկուքը սպասուհիին օգնելու համար կանչված էին։

Տիկին Շազիկ ճոխ արդուզարդով մը կճառագայթեր։ Շատ ուրախ կերևար ու հաղթական կերպարանք մը ուներ։

Պողոս էֆենտի, իր բարեկամներեն շրջապատված՝ առևտրական կացության վրա կճառեր, երբ պարոն Թորգոմ և ընկեր Սուսերյանց ներս մտան և եկան բարևելու զինքը։

Հազիվ թե Պողոս էֆենտիի հրավերին վրա ուսուցիչը և «Շանթ Ակումբի» անդամը բազմած էին մեյ մեկ աթոռի վրա, պարոն Թորգոմ ըսավ.

— Պողոս էֆենտի, իրա՞վ է, որ երկու վարչական քննիչներու տեղեկագիրը Թաղական Խորհրդին համար աննպաստ է եղեր...

— Ո՞վ ըսավ,— հարցուց Պողոս էֆենտի։

— Ամենուն բերանն է...

— Ատանկ բան չի կա... նախ քննիչները իրար հետ չեն համաձայներ ու զատ-զատ տեղեկագիր տվեր են։

— Բայց ես հավաստի տեղե իմացա,— պնդեց ուսուցիչը,— ճշմարիտը շատ զարմանք զգացի։ Ինծի ըսողը Մարգար էֆենտիեն իմացեր է և տեղեկագիրը կարդացած է եղեր։

— Ատիկա կերևա որ Սափորյան էֆենտիի տեղեկագիրը կարդացեր է, թող մեյ մըն ալ տոքթ. Ծրարյանինը կարդա, այն ատեն կհասկնա։ Բայց խնդիրն այդ չէ, տեղեկագիրները կարևորություն չունին և նոր քննություն պիտի ըլլա։ Բուն նորությունը չեք գիտեր դուք։

— Ի՞նչ կա որ,— հետաքրքրվեցավ Սուսերյանց։

— Պատրիարքը այսօր զիս հրավիրած էր Ղալաթիո Խորհրդարանը։

— Ի՞նչ բանի համար։

— Այս Թաղական Խորհրդի խնդրույն համար խոսելու։

— Չպետք է երթալ,— վճռեց Սուսերյանց։

— Գացի՞ք,— հարցուց ուսուցիչը։

— Բնականաբար գացի։

— Չպետք է տեղի տալ,— պնդեց ընկեր Սուսերյանց։

— Պատրիարքը շատ լավ ընդունելություն մը ըրավ ինծի,—

շարունակեց Պողոս էֆենտի,— և խնդիրը մանրամասն պատմել տալե ետքը՝ ինձ խորհուրդ տվավ հրաժարելու։

— Չպետք է հրաժարիլ,— գոչեց Սուսերյանց,— դա կլինի դավաճանություն հասարակական շահերի դեմ։

— Եվ դասալքություն,— ավելցուց պարոն Թորգոմ։

— Արդեն ես ալ չհրաժարեցա ու մերժեցի իր առաջարկը։

— Շատ աղեկ ըրեր եք։

— Եվ նոր քննություն պահանջեցի։

— Այո՛, պետք է նոր քննություն կատարել, ատիկա անհրաժեշտ է,— դիտել տվավ ուսուցիչը։

— Եվ ժողովրդին ուղղակի հսկողության ներքև պետք է կատարվի քննությունը,— ավելցուց Սուսերյանց։

— Բայց ինչպե՞ս կարելի է ատիկա,— դիտել տվավ ներկաներեն մին։

— Քննիչին քով ներկայացուցիչներ կարգելով ժողովրդին կողմե։

— Դժվար բան է այդ...

Թողունք, որ պարոն Թորգոմ, ընկեր Սուսերյանց և Պողոս էֆենտին հարթեն այդ դժվարությունները իրենց ըմբռնած ձևով և մենք քիչ մը երթանք տիկիններու կողմը, որոնք, ըստ արևելյան սովորության, էրիկ մարդերեն անջատված, խումբ մը կազմեր և ոգևորությամբ կխոսակցեին։

— Կերդնում, որ ճիշտ է ըսածս,— կըսեր տիկին Շազիկ,— ես ալ չուզեցի հավատալ, բայց ի վերջո հավատացի։

— Ո՞վ ըսավ։

— Բուն իսկ աչքովը տեսնողը պատմեց։

— Ես եթե աչքովս ալ տեսնեմ, չեմ հավատար,— հայտարարեց տիկին Նվարդ։

— Այդ տարբեր բան, տիկին Սաթենը քու բարեկամուհիդ է, քեզի այդպես ըսել կիյնա,— պատասխանեց Շազիկ,— բայց ես իմ ըսածիս վրա կպնդեմ։

— Բարեկամուհիս է, այո՛, և գիտեմ, որ շատ պարկեշտ կին մըն է։

— Ան պարկեշտ երևացողներեն վախնալու է ամենեն ավելի։

— Առանց ապացույցի, ամուսնացած կնոջ մը մասին այդ տեսակ խոսքեր ընելը պարզապես մեղք է։

— Ապացո՞ւյց, դեռ ի՞նչ ապացույց կուզես,— գոչեց տիկին Շազիկ,— աչքովը տեսնողը պատմեց կըսեմ կոր...

— Չեմ հավատար։

Տիկին Նվարդի այս խոսքերուն վրա Շազիկ իր մոտը կանչեց տասը տարեկան աղջկան մը, որ աչքերը խոշոր բացած ու ականջները սրած՝ մտիկ կըներ այս կանացի խոսակցության։

— Աղջիկս,— ըսավ անոր,— սա մյուսյու Նշանիկը քիչ մը հոս կանչե։

Փոքրիկը վազելով հեռացավ։

— Մյուսյու Նշանի՞կն է ականատես վկան,— հարցուց Նվարդ թերահավատ դեմքով մը։

— Հրամմեր ես, կարծեմ անիկա ալ ինծի պես մասնավոր հակառակություն մը չունի տիկին Սաթենի հետ։

— Չեմ գիտեր, բայց ամեն պարագային կուզեմ տեսնել, թե ի՞նչ պիտի պատմե...

Նույն միջոցին երիտասարդ խմբագիրը ներս մտավ և գլխովը ողջունեց ներկա տիկինները։

— Հոս մոտս եկուր,— ըսավ Շազիկ նորեկին,— սանկ, նստե, քեզ հարցնելիք ունիմ։

— Շատ աղեկ, տիկին,— պատասխանեց Նշանիկը չափազանց զոհ մնալով իրեն ընծայած կարևորությենեն։

Եվ բազմեցավ թաղականին կնոջ քով։

— Բայց նախ խոսք տուր որ բան մը չպիտի ծածկես,— ըսավ Շազիկ։

— Ըսեք թե ի՞նչ է խնդիրը։

— Առաջ խոսք տուր։

— Շատ աղեկ, կխոստանամ,— կմկմաց խմբագիրը։

— Լավ, հիմա մեկիկ-մեկիկ, ըսե ինչ որ ինծի պատմեցիր տիկին Սաթենի մասին։

Նշանիկ վարանեցավ։ Զգաց, որ անախորժ դիրքի մը մեջ կդնեին զինքը և զղջաց անգիտակցաբար խոսք տված ըլլալուն համար, սակայն ուշ էր։

— Բայց կարծեմ կարևոր բան մը չըսի,— պատասխանեց։

— Կրկնե, ինչ որ պատմեցիր,— պնդեց Շազիկ։

— Նշանակություն ունեցող բան մը չէ։

— Ինծի համար մեծ նշանակություն ունի, քանի որ հոս չհավատացողներ ու զիս խաբեբա ստախոսի մը տեղ դնողներ կան։

— Ես ատանկ բան չըսի,— բողոքեց տիկին Նվարդ։

— Ըսիր, բայց ատիկա հասկցնել կուզեիր... ինչ որ է, պատմե տեսնենք, ո՞ւր հանդիպեցար անցած շաբաթ, կեսօրեն ետքը տիկին Սաթենի։

— Բերա Շիտակ ճամփուն վրա... սակայն ի՞նչ նշանակություն ունի։

— Առանձի՞ն էր։

— Այո՛, առանձին էր։

— Շիտակ ճամփուն ո՞ւր տեղը տեսար։

— Բայց, տիկին, զիս պարզապես հարցաքննիչ դատավորի մը պես կհարցուփորձեք կոր,— պատասխանեց խմբագիրը խնդալով ու ջանալով խնդիրը կատակի դարձնել։

— Կաղաչեմ, լրջորեն պատասխանե, այս տիկինները բոլորն ալ քեզ մտիկ կընեն անհամբեր։

— Շնորհակալ եմ ինծի եղած այս պատվին համար, բայց արժանի չեմ ատոր, որովհետև արտաքո կարգի բան մը չունիմ պատմելիք։

— Լավ կհիշեմ, որ ըսիր թե՝ Պոն Մարշեի կողմերը հանդիպեր ես իրեն,— ըսավ Շազիկ,— հիմա կուրանա՞ս։

— Քավ լիցի, ինչո՞ւ պիտի ուրանամ, այո, այդ տեղվանքը տեսա տիկին Սաթենը։

— Հետո՞...

— Շարունակությունը վաղվան թվով,— պատասխանեց խմբագիրը,— որ միշտ կաշխատեր լուրջ գույն մը չի տալ իր խոսքերուն։

— Կաղաչեմ կատակ մի ըներ, մյուսյու Նշանիկ, հետո տիկին Սաթեն ո՞ւր մտավ։

— Պոն Մարշեի դեմ գտնված շաքարավաճառի խանութ մը։

— Ի՞նչ է խանութին անունը։

— Անունը կարևորություն չունի։

— Ընդհակառակը շատ կարևոր է։

— Բայց, տիկին, ինչո՞ւ կստիպեք զիս, որ ձրի բեքլամ մը ընեմ օտար շաքարավաճառի մը։ Մենք խմբագիրներս, այդ տեսակ բեքլամներու համար մասնավոր սակագին ունինք։

— Ուրեմն ես ըսեմ անունը,— գոչեց Շազիկ,— Թուլամիեյի Փաթիսըռին մտեր է։ Ըսե՛, այնպես չէ՞, Նշա՛ն էֆ.։

Խմբագիրը տեսավ որ հանկարծ պարոն Նշանիկը Նշան էֆեն-

տիի փոխվեցավ և այս փոփոխությունը հաճո թվեցավ իրեն ու գլխու հաստատակամ շարժումով մը ըսավ.

— Այո՛, հոն մտավ։

— Տեսա՞ք հիմա,— գոչեց տիկին Շազիկ հաղթականորեն նայվածքը ուղղելով Նվարդին։

— Սակայն ի՞նչ կելլա ատկե,— պատասխանեց մյուսը։

— Կերևա, որ դու չես գիտեր Թուլամիեյին ինչպես տեղ ըլլալը։

— Կխոստովանիմ, որ չեմ գիտեր։

— Պարզապես ժամադրավայր մըն է։

— Կրնա ըլլալ, բայց ատիկա բան մը չապացուցաներ։

— Դեռ պատմության շարունակությունը մտիկ ըրե,— պատասխանեց Շազիկ,— շարունակե՛, Նշան էֆենտի։

— Կարծեմ լմնցավ,— պատասխանեց երիտասարդը, որ այժմ կսկսեր հայտնապես նեղվիլ այս հարցաքննութենեն։

— Տիկին Սաթենին ետևեն ո՞վ մտավ խանութ։

— Երիտասարդ մը...

— Ինչպե՞ս էր այդ երիտասարդը։

— Բայց... ամեն մի երիտասարդի պես։

— Առաջին անգամ պատմած ատենդ ըսիր որ շիք երիտասարդ մըն էր։

— Այո՛, շիք երիտասարդ մը,— հաստատեց խմբագիրը։

— Որո՞ւ կնմաներ...

— Հավանականաբար կամ հորը, կամ մորը և կամ կնքահորը,— պատասխանեց խմբագիրը խնդալով, ես արդեն փողոցին մյուս կողմն էի և մոտեն չտեսա զինքը։

— Ըսիր, որ մեկուն նմանցուցեր ես։

— Այսինքն... այո... անորոշաբար... ասանկ մեկու մը նմանցուցի, բայց վստահ չեմ... եթե գիտնայի, որ այսպես խիստ հարցաքննության մը պիտի ենթարկվեի, թերևս ավելի ուշադրությամբ կդիտեի ամեն բան։

— Որո՞ւն նմանցուցիր,— պնդեց տիկին Շազիկ։

— Հեռվեն ինծի անանկ երևցավ, որ Խոսրով էֆենտին էր... Քանասարյան Խոսրով էֆենտին,— պատասխանեց խմբագիրը։

— Չեմ ճանչնար այդ Խոսրով էֆենտին,— ըսավ տիկին Նվարդ,— ո՞վ է որ...

— Վարչության մը մեջ բարձր պաշտոն մը ունի, շատ շնորհքով մարդ մըն է, Բերա կնստի,— բացատրեց պարոն Նշանիկ։

— Ամուսնացած, չոլուխ չոճուխ-ի տեր մարդ է,— գոչեց Շազիկ,— կվայելե՞ իրեն...

— Փաստա՞ ուտել,— հարցուց խմբագիրը խնդալով։

— Ալ չեմ գիտեր ինչ ուտելը։

— Թուլամիեյին գացողը ընդհանրապես կամ փաստա կուտե կամ շոքոլա ու թեյ կխմե,— պատասխանեց Նշանիկ։

— Եվ կամ սիրային ժամադրություններ կկարգադրե,— ավելացուց տիկին Շազիկ։

— Ալ կարծեմ հարցաքննությունս վերջացավ,— ըսավ երիտասարդը ոտքի ելլելով։

— Դեռ վերջը չբերիր...

— Ուրիշ ի՞նչ մնաց որ...

— Ըսիր թե, քիչ մը ետքն էր նորեն նույն տեղեն կանցներիր, տեսար, որ Խոսրով էֆենտին դուրս կելլեր...

— Ճիշտ է։

Ու վայրկյան մը ետքը տիկին Սաթենն ալ դուրս կելլեր։

— Այդ ալ ճիշտ է։

— Երկուքն ալ միևնույն կո՞ղմն ուղղվեցան,— հարցուց տիկին Նվարդ ծաղրական խնդվածքով մը։

— Չէ՛,— պատասխանեց խմբագիրը,— Խոսրով էֆենտի աջ կողմեն գնաց, իսկ տիկին Սաթեն ձախ կողմեն։

— Ասոր ի՞նչ բացատրություն կուտաս,— հարցուց տիկին Նվարդ թաղականին կնոջ դառնալով։

— Ատոր բացատրությունը շատ պարզ է... այնչափ հիմար չեն, որ փողոցն ալ իրարու քով քալեն ու նշմարվին։

— Պատմությունը հոս կվերջանա՞...

— Մնացածը դուն ալ կրնաս երևակայել,— պատասխանեց Շազիկ։

— Ես այս ամենուն մեջ բնավ բան մը չեմ տեսնար կոր, որ կարենա իբրև ամբաստանություն ծառայել տիկին Սասանյանի դեմ,— պատասխանեց Նվարդ։— Սաթենը Բերա ելեր է, շաքարավաճառի մը խանութին առջևեն անցած ատենը ներս մտեր, հավանորեն քիչ մը շաքար առեր կամ շոքոլա մը կերեր ու դուրս եկեր գացեր է, ի՞նչ կըլլա եղեր...

— Ամբողջ Բերայի Շիտակին վրա միայն այդ Թուլամիյնՙն շաքար կծախե,— ըսավ Թաղականին կնիկը։

— Ճանըմ, անկե անցած ատենը դիպվածով ներս մտեր է...

— Ճիշտ այդ միջոցին Խոսրով էֆենտիՙն ալ դիպվածով ներս մտեր է, հա՞,— հարցուց Շազիկ քմծիծաղով մը։

— Չըլլալիք բան չէ...

— Դիպվածով իրարու հետ խոսեր են, դիպվածով դուրս եկեր և դիպվածով իրարմե բաժնվեր են... շիտակը գեշ չէ, դիպվածով ասանկ ամեն բան կբացատրվի։

Խմբագիրն իր պաշտոնը ավարտած համարելով կամաց մը հեռացավ տիկիններու քովեն, վախնալով, որ կոտիպվի խոսակցության խառնվիլ և ակամա մասնակից ըլլալ կանացի բամբասանքներուն։

Եվ սակայն տիկինները շարունակեցին իրենց խոսակցությունը։ Ի զուր Նվարդ կջանար պաշտպանել իր բարեկամուհին, ցույց տալ Թե պատմված իրողությունը ոևէ կերպով չէր կրնար արատավորել տիկին Սասանյանը, Թե աննշան դեպք մը մատը փաթթելով պետք չէր ծանր ամբաստանություններ ընել ամուսնացած պարկեշտ կնոջ մը դեմ։ Այդ պաշտպանողականը ավելի կկատղեցներ Թաղականին կինը, որ նորանոր ենթադրություններ կըստեղծեր իր հակառակորդը վարկաբեկելու համար։ Ըստ իրեն, տիկին Սաթենն արդեն իսկ իր աղջկութենեն «խոսված էր», Թե դեմը ելլող երիտասարդին հետ սիրահարություն կըներ, Թե «անանկ բաներ» կպատմվեին իր մասին, որ կարելի չէ բերան առնել։ Իսկ գալով վերջին իրողության, անոր մասին տարակույս չի կար։ Սաթենն գլխե հանած էր ամուսնացած, զավակներու տեր, պարկեշտ մարդ մը, այդ Խոսրով էֆենտին, որու մասին մինչև այդ օրը աղեկ կխոսվիր։ Այսպես Սաթենն իր շռայլ ու մոլի ընթացքով ամբողջ ընտանիք մը կկործաներ, անմեղ կնոջ մը դժբախտության պատճառ կդառնար։

Մյուս տիկինները ընդհանրապես Շազիկի կողմը կբռնեին, կհամոզվեին անոր խոսքերուն, փաստացի կհամարեին շաքարավաճառին իրողությունը։

Հանկարծ շիք երիտասարդ մը ներս մտավ և խոսքը տիկիններուն ու օրիորդներուն ուղղելով գոչեց.

— Ի՞նչ է սա... խոսակցելո՞վ պիտի լուսացնենք, կտեսնամ,

որ օրիորդները հայտնապես կնեղանան և պարել կուզեն կոր... ո՞ւր է տեսնենք օրիորդ Շուշանիկը։

— Հոս եմ, մյուսյու Արամ,— ըսավ նրբակազմ աղջիկ մը,— ի՞նչ կփափաքիք։

— Պիտի խնդրեի, որ դաշնակին գլուխը անցնիք։

— Ամենայն սիրով։

— Ու վալս մը նվագեք։

— Շատ աղեկ, անմիջապես։

Արամ իսկույն դաշնակը բացավ, աթոռ մը բերավ, դրավ առաջին, մոմերը վառեց, նոթաներու մեջեն վալսի եղանակ մը ընտրեց, հետո գնաց քավալիեներ ճարելու։

Շնորհիվ իր փութկոտ գործողության պարերը սկսան, որոնց մասնակցեցավ նաև տիկին Շազիկ ու այս կերպով խփեց իր բերանը առժամապես։

Տիկին Նվարդ չուզեց պարել, հակառակ եղած ստիպումներուն։ Եղած խոսակցութենեն ջղագրգռված էր և ինքզինքը անհանգիստ կզգար։ Հիմա զղջացած էր այս տոնախմբության գալուն՝ մանավանդ որ մտերիմ հարաբերություն չուներ Պողոս էֆենտիենց հետ, բայց մասնավորաբար եկած էր այս երեկույթին տիկին Սաթենի դրդումով։

— Գնա նայինք իրենց տունը ինչ կխոսվի կոր, մեզի լուր կբերես,— ըսած էր Մարգար էֆենտիի կինը։

Ու այսպես տիկին Նվարդ թշնամիին դիրքը հետազոտելու պաշտոն ունեցող լրտեսի մը պես եկած էր երեկույթին։ Ինք, տիկին Սաթենի խոսքերեն անանկ կենթադրեր, որ տկարացած թշնամի մը պիտի տեսներ, մինչդեռ իր դիրքերուն վրա զորեղապես ամրացած կգտներ տիկին Շազիկը։

Ամուսինը նշմարելով իր կնոջ տխուր կերպարանքը, մոտեցավ անոր։

— Ի՞նչ ունիս, Նվա՛րդ,— հարցուց։

— Ոչի՛նչ, քիչ մը գլուխս կցավի կոր։

— Տխուր կերպարանք մը առեր ես։

— Գլխուս ցավեն է... ասկե զատ սենյակը շատ տաք է, կնեղվիմ կոր։

— Եթե կուզես տուն դառնանք։

— Աղեկ կըլլա...

Քիչ մը ետքը արդարև Միհրանիկ ու իր կինը կմեկնեին հակառակ տիկին Շազիկի առերևույթ ստիպումներուն։

— Գլխու ցավը սուտ է, բան մըն ալ չուներ,— կըսեր թաղականին կինը անոնց երթալեն ետքը,— մ'այն թե ամոթեն չկրցավ կենալ երբոր իր սիրական Սաթենին խաղքությունները իմացավ... չամչցածը, տեսա՞ք ինտոր... ինե աղեկ գիտե ամեն բան, բայց գործին չի գար խոստովանիլ։

Երբ իրենց ննջասենյակը առանձնացան՝ Նվարդ իր էրկանը պատմեց մի առ մի Շազիկի ըսածները Սաթենի մասին։

Հետևյալ օր Միհրանիկ, Ղալաթիո կողմը ճաշարանի մը մեջ հանդիպեցավ Մարգար էֆենտիին, որ սեղանի մը առջև նստած, առանձին կճաշեր։ Ինք ալ գնաց անոր քով տեղավորվեցավ։

— Երեկ գիշեր Պողոս էֆենտիե՞նց եք եղեր,— հարցուց վաճառականը։

— Այո՛, ո՞վ ըսավ,— հարցուց Միհրանիկ։

— Մկրտիչ աղան այս առտու ըսավ, ինքն ալ հոն է եղեր։

— Գացինք, բայց շատ չնստեցանք, կանուխ դարձանք, Նվարդին գլխուն ցավը բռնեց... բարով խերով չերթայինք։

— Ի՞նչ եղավ որ...

— Կինս պարապ տեղը հուզվեցավ, անհանգիստ եղավ։

— Բան մը պատահեցա՞վ...

— Ճանըմ, կարևորություն տալիք բան չէ... արդեն Նվարդին ալ ըսի, որ տիկին Սաթենին բան մը չըսե, պարապ տեղը ան ալ չբարկանա...

— Բայց եղածը ըսե նայիմ,— պնդեց վաճառականը, որ զգաց թե խնդիրը իրենց շուրջը կդառնար։

— Տիկին Շազիկին էտեպսիզությունը, ինչ պիտի ըլլա...

— Հելե, հելե, պատմե տեսնենք։

— Իրավ որ խենթ բան է եղածը, չարժեր խոսիլ... ատանկ մարդոց խոսքին կարևորություն տալու չէ... արդեն գիտենք, թե ինչու համար ասանկ թշնամացած են ձեզի հետ։

— Արդեն ո՞վ կարևորություն կուտա... բայց պատմե նայինք, ժամանակ կանցնի։

— Միայն թե խնդրեմ, որ տիկնոջդ բան մը չըսես, որովհետև մենք որչափ ըլլա էրիկ մարդ ենք, ամեն բան պաղարյունով կլսենք, բայց կնիկները անանկ չեն, պզտիկ բանե մը խնդիր կհանեն, կմեծցնեն, կհուզվին... տես իմ կինս, խնդիրը իր վրա չըլլալով հանդերձ, այնքան հուզվեր էր, որ գիշերը քունը չտարավ։

— Ճանըմ, ես Սաթենին բան մը չեմ ըսեր, դուն պատմե,— պնդեց Մարգար էֆենտի, որ հետզհետե կհետաքրքրվեր։

— Իբր թե,— սկսավ Միհրանիկ,— անցած շաբաթ օր տիկին Սաթենը Բերա կերթա...

— Ճի՛շտ է, գնաց,— ընդմիջեց վաճառականը։

— Հոն Շիտակ ճամփուն վրա Թուլամիյե Փաթիսըրին կմըտնա...

— Այո՛, գացեր էր ու քանի մը կաթո առեր էր... է՛յ, ի՞նչ կելլա ատկե։

— Ոչինչ, իբր թե այդ խանութը լավ համբավ չունի եղեր, իբր թե ժամադրության տեղ է եղեր և այլն։

— Ատ ալ կրնա շիտակ ըլլալ՝ բայց նորեն կարծեմ անպատեհություն մը չկա հոն մտնել, քանի մը կաթո առնել և դուրս ելլելուն մեջ, ոչ ալ նստել թեյ խմելու համար... որովհետև կհիշեմ, որ Սաթենը ըսավ թե՝ թեյ մը խմած էր այդ խանութը։

— Իբր թե,— շարունակեց Միհրանիկ,— իր ետևեն անմիջապես մարդ մը մտեր է այդ խանութը։

— Ի՞նչ մարդ։

— Ճանըմ, պատվավոր, շնորհքով, ծանոթ մարդ մը... կասկածելի բան մը չի կա գործին մեջ։

— Այս մարդուն անունը տվե՞ր է Շազիկը։

— Այո՛...

— Ո՞վ է եղեր...

— Խոսրով էֆենտի Քանասարյանը։

Հազիվ թե Միհրանիկ այս անունը արտասանեց՝ վաճառականին դեմքը այլայլեցավ, ձեռքը թեթև մը դողաց ու պատառաքաղը գետին ձգեց, բայց իսկույն ինքզինքը ժողվեց հուզումը ցույց չի տալու համար, թեև Միհրանիկ արդեն բան մը նշմարած չէր։

— Էյ, հետո՞,— հարցուց իր սեղանակցին։

— Հետո, իբր թե բավական հոն մնալե ետքը դուրս են եկեր։

— Միասի՞ն...

— Չէ, ճանըմ, զատ-զատ։

Վաճառականը այնքան հուզված էր, որ պահ մը լուռ մնաց ինքզինքը չմատնելու համար։

— Ահա՝ այս խենթ ու խելառ, մանավանդ անիմաստ պատմությունն է, որ մեր Նվարդը բարկացուցած էր։

— Շազիկը անկեց ի՞նչ հետևցուցեր է։

— Իբր թե ժամադրություն մը տալու համար հոն մտեր են եղեր,— պատասխանեց Միհրանիկ խնդալով։

— Վա՜յ, անամոթ,—ըսավ վաճառականը ակռաներուն մեջեն։

— Սուտ մը պիտի շինեին նե՝ գոնե քիչ մը հարմարեցնեին, անանկ մեկու մը համար ըսեին, որ բարեկամ կամ ծանոթ ըլլար, մինչդեռ կարծեմ խոսրով էֆենտիին հետ ոևէ հարաբերություն չունիք և թերևս ձեր տիկինը անունն անգամ լսած չէ։

— Այնպե՛ս է,—պատասխանեց վաճառականը,—Շազիկը ինք աչքով տեսե՞ր է այդ ամենը։

— Չէ՛, ճանըմ, իրեն ալ պատմեր են, պատմողն ալ ո՞վ է գիտես, սանկ երիտասարդ մը կա, թերթերուն լուր կուտա... դուն ալ կճանչնաս, խմբագիր է։

— Նշանի՞կը։

— Հա՛, Նշանիկը։

— Շունշանորդին մեր ազգականն ալ չըլլա պարեմ,— դոչեց վաճառականը։

— Վա՜յ, ձեզի ազգակա՞ն է։

— Հեռուեն հեռու։

— Բայց կերևա, որ անիկա հանցանք չունի, միամտաբար բան մը պատմեր է առանց մտքեն գեշություն անցնելու... Շազիկն է, որ այդ պատմութենեն արտառոց մեկնություններ հաներ է...

Մարգար էֆենտի ա՛լ չէր հետաքրքրվեր իր բարեկամին խոսքերեն, կարծես ուրիշ բանի վրա կմտածեր։ Միհրանիկ նշմարեց ասիկա և ըսավ.

— Կտեսնե՞ս, որ կարևորություն տալիք բան մը չէ։ Հիմարական բամբասանքներ ամենքն ալ։

— Ճի՛շտ է... հիմար խոսքեր։

Ճաշեն հետո վաճառականը կարևոր գործ մը պատրվակելով իսկույն հեռացավ և գնաց իր գրասենյակը, ուր ետևե ետև մի քանի սիկարեթ ծխեց, սենյակին մեջ ժուռ գալով ու խոր մտածումի մը մեջ ընկղմած։

Հետո հանկարծ իր գրագիրներեն մին կանչեց և ըսավ.

— Սա մեր խմբագիր Նշանիկը ո՞ւր կարելի է գտնել հիմա։

— Եթե Ղալաթիո խորհրդարանը ժողով կա, հոն ըլլալու է։

— Մեյ մը գնա հանդիպե և եթե հոն է՝ ըսե որ գա անպատճառ զիս տեսնե։

Գրագիրը հեռացավ ինքնիրեն հարցնելով թե իր մեծավորը ինչո՞ւ այսքան մտածկոտ կերպարանք մը ուներ։

— Ի՞նչ զարմանալի մարդիկ են այս մարդիկը,— կըսեր մտովի,— դրամ ունին, աղվոր կնիկ ունին, առողջություն ունին և դեռ մտմտուքեն չեն ազատիր...

Արդարև Նշանիկ, ուրիշ մեկ քանի լրաբերներու հետ, Ազգային Ժողովի սրահը կսպասեր, որ Խառն Ժողովը իր նիստը ավարտե ու տեղեկություններ հաղորդե։

— Մարգար էֆենտին քեզ տեսնել կուզե անպատճառ,—ըսավ գրագիրը խմբագրին մոտենալով։

— Ի՞նչ կա, խե՞ր է,— հարցուց այս վերջինը։

— Իրավ որ չեմ գիտեր, միայն թե ըսավ, որ անպատճառ գրասենյակ գաս զինքը տեսնելու։

— Բայց, եղբայր, ես այս միջոցիս գործ ունիմ,—պատասխանեց Նշանիկ, ինքզինքը ծանրեն ծախելով։

— Ե՞րբ կավարտես գործդ։

— Երբոր Խառն Ժողովը լմննա...

— Կարծեմ լմննալու մոտ է,— ըսավ մոտը կեցող բարապան մը,— Սրբազանը արդեն մեկնեցավ...

— Այն ատեն թերևս ժամե մը կրնամ գալ,— պատասխանեց խմբագիրը։

— Լա՛վ, բայց Մարգար էֆենտին չսպասեցնես...

— Թող սպասե, էֆենտիմ, ես իրեն պետք չունիմ, ինք ինծի պետք ունի եղեր...

Գրագիրը մեկնեցավ։

— Նորեն գործդ եղավ,— ըսավ ուրիշ լրաբեր մը Նշանիկին դառնալով։

— Ի՞նչ գործ... այդ մարդեն խեր չի կա... ո՞վ գիտե ինչ գլխու ցավ է։

— Գլխու ցավեր կան, որոնք հասութաբեր են ու ատով կդադրին գլխու ցավ ըլլալե... ես վստահ եմ, որ Մարգար էֆենտին նորեն Թաղ. Խորհրդին դեմ գրելիք մը ունի ու ասոր համար քեզի կկանչե կոր... նայե, որ մեծկակ բան մը բրցնես։

— Չեմ կարծեր, որ ատոր համար կանչած ըլլա,—պատասխանեց Նշանիկ, թեև առաջին վայրկյանեն նույն բանը խորհած էր ինքն ալ և արդեն իսկ կմտածեր թե ինչ միջոցավ կարելի է ավելի բան մը բրցնել իր հարուստ ազգականեն։

Երիտասարդը բնավ մտքեն չանցուց, որ բոլորովին տարբեր բանի մը համար կկանչվեր վաճառականին գրասենյակը։ Նախորդ գիշերվան պատմությունը մոռցած էր և կամ չէր կարծեր, որ արձագանքը հասած կըլլա արդեն Մարգար էֆենտիի ականջը։

Խառն ժողովի տեղեկատվությունը երկար չէր. «Ժողովը հարաբերական ինչ-ինչ խնդիրներու մասին խորհրդակցած և պարտ ու պատշաճ տնօրինած էր»։ Պարոն Նշանիկ երեք ժամ սպասելե ետքը այդ երկու տող ազգային լուրը գրպանեց ու թեթև քայլով մը ուղղվեցավ վաճառականին գրասենյակը։

Մարգար էֆենտի, միշտ գրգռված վիճակի մը մեջ գրասեղանին առջև նստած կջանար ընթացիկ գործերով զբաղիլ ու չէր հաջողիր։ Երբ խմբագիրը տեսավ, ուրախության ճիչ մը արձակեց։

— Հա, եկա՞ր,— գոչեց։

— Ավելի շուտ կուզեի գալ, բայց Խառն ժողովին նիստը երկար տևեց, ստիպվեցա սպասել... կկարծեինք որ այսօր Ք. գյուղի Թաղական Խորհրդի խնդրով ալ պիտի զբաղեր ժողովը, սակայն չզբաղեցավ, որովհետև հարաբերական խիստ կարևոր խնդիրներ կան եղեր սեղանին վրա։ Այսուհանդերձ իմացա, որ հաջորդ նիստին խնդիրը անպատճառ ձեռք պիտի առնվի...

Բան մըն ալ իմացած չէր թեև, բայց թաղականին խնդիրը մեջտեղ նետելով կուզեր անմիջապես Մարգար էֆենտիի դիմումին շարժառիթը իմանալ. մեծ եղավ զարմանքը, երբ վաճառականը պատասխանեց սրտնեղությամբ.

— Տեֆ բրե հիմա սա թաղականին խնդիրը, աստված պելան տա ամենուն ալ...

— Կկարծեի, որ այս խնդրով կշահագրգռվեիք... սա տոքթ. Շրարյանին բրածը կվայելե՞... այդ մարդուն վրա շատ գրելիք կա, բայց...

— Ճանրմ, գոցե՛ սա խոսքը,— գոչեց Մարգար էֆենտին անհամբերությամբ։

— Ենթադրեցի, որ զիս անոր համար կանչած էիք... թերևս թերթին մեջ բան մը գրելիք ունիք...

— Ես քեզի ուրիշ բանի համար կանչեցի,— ըսավ Մարգար էֆենտի։

— Հրամա՞ն ունիք արդյոք։

— Քա՛վ լիցի, միայն թե կուզեի բան մը հարցնել։

— Զեզ մտիկ կընեմ։

— Բայց նախ և առաջ երդում բրե, որ բացարձակ ճշմարտությունը պիտի խոսիս...

Հազիվ այս բառերը արտասանված՝ խմբագիրը ըմբռնեց թե ինչ բանի շուրջ կդառնար խնդիրը։

— Զեմ գիտեր, թե ինչ է ձեր հարցունելիքը,— պատասխանեց,— այսուհանդերձ կխոստանամ ճշմարտությունը ըսել։

— Խոստանալը բավական չէ, երդում բրե։

— Լա՛վ, կերդնում, որ ճշմարտությունը պիտի ըսեմ։

— Երեկ գիշեր Պողոս էֆենտիին տունը բաներ մը ըսեր ես մեր տիկինին մասին...

— Ճանրմ, Մարգար էֆենտի, կարևորություն տալիք բան չէ,— գոչեց Երիտասարդը,—հազար անգամ զղջացի արդեն բերնես խոսք մը հանելուս, կխնդրեմ նորեն նոր խնդիր մի հանեք...

— Ես ալ արդեն կարևորություն տված չունիմ, բայց ինչպե՞ս կըլլա, որ կեցած տեղդ կելլաս երկար բարակ այդ բաները կպատմես ու լսողներն ալ կկարծեն, թե գործին մեջ ուրիշ բան մը կա։

— Ես բան մըն ալ չպատմեցի,— հայտարարեց խմբագիրը,— ահա թե ինչպես եղավ։ Պողոս էֆենտիենց գացած էի, երբ տիկին Շազիկ հարցուց, թե տիկին Սաթենը տեսած ունի՞մ։ «Բավական ժամանակ է չեմ գացած իրենց» պատասխանեցի.—«Իմացա, որ հիվանդ է եղեր» ըսավ.— «Զեմ կարծեր, շաբաթ օր, Շիտակ ճամփուն վրա իրեն հանդիպեցա» պատասխանեցի։ Ասիկա բավ եղավ որպեսզի խիստ հարցաքննության մը ենթարկվիմ։ Ո՞ւր հանդիպեցար, ե՞րբ հանդիպեցար, ի՞նչ կըներ կոր ճամփան և այլն, և այլն։ Ես ալ տեսածս պատմեցի։ Քանի որ ոչէ անպատեհություն մը չիկար ատոր մեջ։ Բայց այդ տիկին Շազիկը զանազան ենթադրություններ հաներ է իմ պատմածներես... ես ի՞նչ հանցանք ունիմ...

— Հանցանքի խնդիր չի կա,— ըսավ վաճառականը,— և ես ալ քեզ չեմ դատապարտեր ըսածներուդ համար, միայն կետ մը կուզեմ ճշտել... իրա՞վ է, որ Խոսրով էֆենտին ալ նույն խանութը մտեր է տիկին Սաթենին ետևեն։

— Այսինքն քիչ մը ետքը...

— Եվ հոն իրարու հետ տեսնվեր են։

— Ես անանկ բան չըսի... դիմացի կողմը կեցեր էի ու չէի կրնար խանութին մեջ անցած դարձածը տեսնել։

— Դուրս ելլելնին տեսեր ես սակայն։

— Այո՛, մինչև Կալաթա Սերայ գացի ու վերադարձա և այդ միջոցին տեսա, որ տիկին Սաթենը դուրս կելլե խանութեն։

— Առանձի՞ն...

— Այո՛, առանձին։ Քիչ մը ետքն ալ Խոսրով էֆենտին դուրս ելավ, տիկինը դեպի Թյունել ուղղվեցավ, իսկ Խոսրով էֆենտին դեպի Կալաթա Սերայ... ահա եղելությունը։

Վաճառականը հասկցավ, որ երիտասարդը իր ամբողջ գիտցածը պատմած էր և թե ավելի բան մը կարելի չէր քաղել անկե։ Խոսքը փոխեց, քանի մը անկարևոր հարցումներ ըրավ, հետո ճամփու դրավ զայն։

Նշանիկ երբ ինքզինքը փողոցը գտավ՝ մեծ շունչ մը առավ։

— Էֆ՛, — գոչեց, — այս անգամ կարծեմ ազատեցա այս փորձանքեն... ասկե ետքը կիներու հետ խոսած ատենս աչքս պիտի բանամ և մանավանդ բերանս պիտի գոցեմ...

Ժ

Խմբագիրը մեկնելե ետքը Մարգար էֆենտի կրկին ինկավ խոր մտածմունքի մեջ։

Հին հիշատակ մըն էր, որ այսպես կխռովեր վաճառականը և կասկածի թույնով կթունավորեր անոր երևակայությունը։

Երբ տարիներ առաջ Սաթենի հանդիպելով հրապուրված էր անոր գեղեցկութենեն ու միտքը դրած հետը ամուսնանալ, իրեն ըսած էին, որ մանկամարդ աղջիկը արդեն իսկ նշանվելու վրա էր երիտասարդի մը հետ։ Այդ երիտասարդն էր Խոսրով Քանասարյան, այն ատեն համեստ ամսականով պաշտոնյա մը, որուն համար կըսեին սակայն, թե փայլուն ապագա ունի։ Ինք, Մարգար էֆենտի, արդեն իսկ կլորիկ հարստության մը տեր էր ու հրապարակին վրա դիրք գրաված։

Երբ Սաթենի ձեռքը խնդրեց, այս վերջնույն ծնողքը բնավ չվարանեցան Խոսրովը զոհելու վաճառականին, իրենց աղջկան համար բախտ մը կհամարեին Մարգար էֆենտիի պես ամուսին մը։ Մանկամարդ աղջիկը սակայն շատ դյուրավ տեղի չտվավ. Խոսրով ու Սաթեն փոխադարձ անկեղծ սիրով մը կապված էին իրարու և նյութական նկատումները չէին կրնար ազդել Սաթենի վրա։ Վաճառականը աղջկան հորն ու մորը հետ դաշնակցած, ստիպվեցավ

բավական մաքառել մինչև որ հաջողեցավ Սաթենի հետ ամուսնանալ։

Բնականաբար ալ անկե ետքը Խոսրովի ու Սաթենի հարաբերությունները դադրեցան, թեև վաճառականը առաջին ամիսները, կասկածե ու նախանձե դրդված, խիստ հսկողություն մը կկատարեր իր կնոջ շուրջը։ Տարի մը վերջը Խոսրով ալ իր կարգին կամուսնանար։ Այս պարագան բոլորովին հանդարտեցուց վաճառականը, որ ալ չմտածեց իր նախկին հակառակորդի վրա։ Տարիներե ի վեր անոր գոյությունն իսկ մոռցած էր, քանի որ հետը տեսակցելու առիթը չէր ունեցած։

Եվ ահա հիմա հանկարծ Խոսրով էֆենտի իր դեմը կցցվեր, իր հանգիստը խռովելու համար։

Անշուշտ, դեռ ոչ մի փաստացի ապացույց ուներ իր կնոջ դեմ։ Կրնար ըլլալ, որ շաքարավաճառի խանութին մեջ այդ հանդիպումը բոլորովին դիպվածական էր, բայց հակառակն ալ հավանական էր, որ թերևս Շազիկի ենթադրությունները ճիշտ էին... Այս մտածումը ահա ժամերե ի վեր կտանջեր Մարգար էֆենտին։ Ինչպե՞ս կարելի էր հասկնալ ճշմարտությունը...

Մինչև իրիկուն վաճառականը այս մտատանջություններուն մեջ տապլտկեցավ։ Փոքրիկ անհանգստություն մը պատրվակելով՝ սովորականեն ալ կանուխ մեկնեցավ գրասենյակեն և ուղղակի տուն գնաց։ Կինը դուրս ելած էր։ Այս պարագան ավելի սաստկացուց իր դժկամությունը։ Սպասուհին հարցուփորձեց հասկնալու համար թե ո՞ւր կրնար գացած ըլլալ։

— Չեմ գիտեր, հանրմս բան մը չըսավ, — պատասխանեց այս վերջինը։

— Ամեն բան գիտե, բայց պատվեր ստացած է բան մը չըսելու, — մտածեց Մարգար էֆենտի։

Ժամ մը ետքը տիկին Սաթեն եկավ։

— Ո՞ւր էիր մինչև հիմա, — գոչեց ամուսինը։

— Մեկ երկու այցելություն ըրի։

— Որո՞նց...

— Տիկին Նվարդին, տիկին Մաքրուհիին... ի՞նչ կա որ... դուն ինչո՞ւ կանուխ եկեր ես։

— Զարմանալի բան, իրավունք չունի՞մ ուզած ատենս տուն գալու, — գոչեց վաճառականը բարկությամբ։

— Այդ ըսել չուզեցի, միայն թե սովորականեն կանուխ գալուդ համար հարցուցի... անհանգի՞ստ ես։

— Բան մըն ալ չունիմ,— պատասխանեց վաճառականը։

Տիկին Սաթեն տեսավ, որ ամուսինը սրտնեղած կերպարանք մը ուներ ու այդ բանը վերագրեց անհաջող գործառնության մը և խոսքը կարճ կապեց։

Մարգար էֆենտի միշտ գրգռված դրության մեջ ժուռ կուգար սենյակը, մինչ կինը գացած էր իր հագուստը փոխելու։

Ժամ մը այսպես առանձին մնաց, անդադար ծխելով ու հազար տեսակ ծրագիրներ կազմելով իր մտքին մեջ։

Կասկածը հետզհետե կասատկանար ու կկրծեր իր բովանդակությունը։

Իր մտքին մեջ անդադար կվերլուծեր իրողությունն ու չէր կրնար որոշ եզրակացության մը հանգիլ։ Եթե փոխանակ Խոսրով էֆենտիի ուրիշ անուն մը տված ըլլային՝ վաճառականը բնավ կարևորություն չպիտի ընծայեր, բայց այդ անունը զինքը կխռովեր։ Իր կնոջ թեկնածուն եղած էր այս մարդը և գիտեր, որ կինը սիրած էր զայն...

Տիկին Սաթեն ներս մտավ և իրեն այնպես թվաց, որ ամուսնույն սրտմտությունը անցած էր, վաճառականն ալ արդեն կջանար իր ներքին խռովությունը ծածկելու։

— Շազիկենց երեկույթը շատ խայտառակ բան է եղեր,— ըսավ Սաթեն՝ խոսակցություն մը բանալու համար իր ամուսնույն հետ։

— Ո՞վ ըսավ,— հարցուց վաճառականը։

— Նվարդը գացեր էր, ան պատմեց, այնքան նեղացեր է, որ մինչև ետքը չէ մնացեր, կանուխ մը վերադարձեր է գլխու ցավ մը պատրվակելով։

— Ի՞նչ խոսակցություն անցեր է մեջերնին։

— Այդ մասին բան մը չըսավ։

— Նորեն մեզի չե՞ն բամբասեր։

— Չեմ կարծեր... եթե մեր վրա խոսք անցներ, Նվարդը կըսեր։

— Թերևս անանկ բաներ ըսած են, որ չէ համարձակած քեզի կրկնելու։

— Ի՞նչ կրնան ըսած ըլլալ։

— Ես ի՞նչ գիտնամ, քի՞չ խոսքեր ըսին մինչև հիմա։

— Այդ չնչին ըսածներուն ո՞վ կարևորություն կուտա, թող ուզածին չափ հաչե ետևես։

— Դուն կարևորություն չես տար թերևս, բայց ուրիշները կուտան և նույնիսկ հավատք ալ կընծայեն։

— Ամեն մարդ գիտե անոր ով ըլլալը։

— Ինչ որ ալ ըլլա քիչ մը ուշադրություն ընելու է և տեղի տալու չէ բամբասանքի։

— Ինչ զարմանալի խոսքեր կընես, ես ե՞րբ տեղի տվեր եմ բամբասանքի։

— Ես իմ ըսածս գիտեմ։

— Չեմ հասկնար կոր միտքդ, քիչ մը բաց խոսե տեսնենք... այսօր տարօրինակ բան մը եղեր ես։

— Տունը մնացած չունիս, մինչև ետքը դուրսերն ես, չգիտցողն ալ բնականաբար բան մը կկարծե ու կսկսի բամբասել։

— Ուրիշներուն անհիմն բամբասանքներուն համար տունը բանտարկվելու չեմ։

— Ինչ որ կուզես, ա՛ն ըրե,— պատասխանեց վաճառականը սրտնեղած։

Պահ մը լռություն տիրեց։

Ամուսինը գրպանեն թուղթ մը հանեց ու սկսավ կարդալ։

— Ինծի քիչ մը դրամ պիտի տաս,— ըսավ տիկինը։

— Ի՞նչ բանի համար,— հարցուց Մարգար էֆենտի ընթերցումը ընդհատելով։

— Վաղը Բերա պիտի ելլեմ, մեկ քանի այցելություններ ունիմ տալիք, հետո կոշիկ մը ապսպրած եմ, անոր դրամը պիտի վճարեմ, մեկ քանի մանր մունր բաներ պիտի առնեմ...

— Բերա՞ պիտի ելլաս,— գոչեց վաճառականը։

— Այո, ի՞նչ կա որ...

— Դեռ շաբաթ օրը գացիր։

— Անկեց ի վեր տասը օր անցավ։

— Վաղ անցիր վաղը Բերա երթալեն։

— Չըլլար, անպատճառ պիտի երթամ...

— Անպատճառ,— գոչեց վաճառականը, թերթը մեկ կողմ դնելով,— անպատճառ, ի՞նչ կնշանակե անպատճառ պիտի երթամ... չերթաս նե ի՞նչ կըլլա եղեր։

— Էյ, երթամ նե՝ ի՞նչ կըլլա,— պոռաց Սաթեն, որուն համբերությունը սպառած էր ամուսնույն այս նորօրինակ ընթացքեն։

— Մի երթար կըսեմ կոր, պետք չէ որ երթաս...

— Պատճա՞ռը...

— Պատճառ չի կա։

— Խոսք տված եմ, պետք է երթամ։

— Որո՞ւ խոսք տվիր,— գոչեց Մարգար էֆենտի։

— Գոհարիկ հանըմին, ինծի պիտի սպասե, միասին Մաննի-կենց պիտի երթանք...

— Ուրիշ օր մը կերթաս։

— Վաղվան համար խոսք ըրած ենք։ Բայց ինչո՞ւ չես ուզեր կոր, որ երթամ, անիկա բացատրե...

— Քիչ մը առաջ ըսի պատճառը, պարապ տեղը ասոր անոր բերնին ծամոց կըլլանք կոր։

— Բերա երթալո՞վս։

— Հրամմեր ես, Բերա երթալովդ։

— Դուն այսօր տարօրինակ բան մը եղեր ես, խելքս չհասնիր կոր։

Եվ տիկին Սաթեն բարկությամբ ոտքի ելավ ու հեռացավ սենյակեն։

Վաճառականը թերթը ձեռքը առավ, բայց չկրցավ ընթերցումը շարունակել։

— Արդյոք ժամադրությո՞ւն մը ունի Խոսրով էֆ-ին հետ,— կմտածեր,— որ այսքան կպնդե Բերա երթալու։

Այս կասկածը իր մտատանջությունը կավելցներ։

— Սխալ ըրի,— մտածեց,— այսպես վարվելով, լավագույնն էր ձայն չհանել ու թույլ տալ, որ երթա, հետո ծածկաբար զինքը հետապնդել, այս կերպով միայն կարելի է ճշմարտությունը հասկընալ։ Այո՛, ջանանք խնդիրը անուշ տեղը կապելու... ասանկ բաներու մեջ վարպետությամբ պետք է գործել։

Վաճառականը այս խորհրդակցությունները ընելե ետքը, սպասեց, որ կինը գա, որպեսզի իր սխալը դարմանե։

Բայց տիկին Սաթեն չերևցավ և Մարգար էֆ. զայն ճաշի ատեն միայն տեսավ։

Ճաշեն հետո, երբ սենյակը առանձնացան, վաճառականը գրպանեն երեք ոսկի հանելով՝ կնոջը տվավ և ըսավ.

— Կբավե՞։

— Բավական է,— պատասխանեց կինը պաղ կերպով մը։

— Առտո՞ւն պիտի երթաս Բերա, թե կեսօրեն ետքը։

— Ճաշեն հետո։

Մարգար էֆենտի այս կերպով միջադեպը փակված նկատեց ու սիկարեթ մը վառելով՝ սկսավ թերթը կարդալ։

Բայց տիկին Սաթեն գոհ չէր եղած հաշտության այս ձևեն։ Կուզեր բացատրություն մը ունենալ էրկանը հետ քաջալերված մանավանդ անոր հաշտարար ընթացքեն։

— Քիչ մը առաջ ի՞նչ էր այդ դիտողություններդ վաղը Բերա երթալուս մասին,— հարցուց հարձակողական շեշտով մը։

— Կներես,— պատասխանեց վաճառականը,— ուրիշ բանի մը բարկացած էի ու այդ պատճառով գրգռված...

— Ի՞նչ բանի։

— Ճանըմ գործի մասին...

— Գեշ չէ... դուրսը բարկանաս՝ տունդ գաս կնկանդ հետ անիրավ տեղը կռիվ փնտռես։

— Կներես ըսինք ա...

— Ըրե, եղիր, անկեց վերջն ալ կներես... առաջին անգամը չէ, որ ասանկ վարմունք մը կունենաս, մանավանդ այս վերջին ատեններս...

— Էյ, ի՞նչ ընենք, բնավ դիտողություն չընե՞նք։

— Արդարացի դիտողություն մը ունիս նե՝ ըրե, ո՞վ բան կըսե։

— Դուն արդարացի դիտողությունն ալ չես ընդունիր։

— Ո՞վ է ըսեր...

— Անցած օր դիտողություն մը պիտի ընեի և շատ ալ արդարացի, բայց բերանս չբացի, որովհետև բնությունդ գիտեմ։

— Ի՞նչ դիտողություն, ըսե տեսնենք,— գոչեց տիկին Սաթեն։

— Տեսա՞ր, դեռ չլսած արդեն կբորբոքիս կոր...

— Պարապ խոսքեր չեմ ուզեր, սա դիտողությունդ ըսե նայինք։

— Ըսելիքս այն է, որ ուրիշ անգամ եթե թեյ խմել կամ կաթո ու շաքար առնել ուզես՝ Թուլամիեն չերթաս։

— Ինչո՞ւ համար...

— Որովհետև աղեկ անուն չունի այդ խանութը։

— Առաջին անգամ է, որ կլսեմ կոր ատիկա։

— Կրնա ըլլալ, բայց աս ասանկ է... այդտեղ ժամադրավայր է եղեր անհավատարիմ ամուսիններու...

— Ի՞նչ խենթ խոսք։

— Ամեն տեսակ կիներ կերթան այդ խանութը։

— Տիկին Գոհարիկին հետ առաջին անգամ գացի այդ խանութը և շատ գոհ մնացի։

— Ճանրմ, Բերայի մեջ ուրիշ խանութ չի կա չէ յա, զարմանալի բան, ուրիշ տեղ մը գնա թեյ խմե։

— Անցած շաբաթ օր գացի նե՝ շատ շնորհքով կնիկներ ու մարդիկ նստած էին։

— Ճանչվոր մեկը տեսա՞ր,— հարցուց ամուսինը։

— Հապա, խոս...

Տիկին Սաթեն հանկարծ կեցավ ու խոսքը չավարտեց. զգաց, որ խոսքով էֆենտիի հիշատակությունը փոխանակ արդարացումը ըլլալու, ավելի պիտի կնճռոտե խնդիրը։ Մարգար էֆենտի տեսավ կնոջ վարանումը և ըսավ.

— Ո՞վ տեսար, ըսիր...

— Ճանրմ, մեյ մըն ալ ոտքս չեմ կոխեր այդ խանութը, լմնցավ, գնաց, ատոր համար խոսիլ շարժեր,— պատասխանեց տիկին Սաթեն, այս կերպով խույս տալով ուղղակի էրկանը հարցումին պատասխանելու փորձությենեն։

Բայց վաճառականը չգոհացավ այս պատասխանով։

— Ծանոթներ կային ըսիր, ո՞րոնք էին,— պնդեց։

— Ես ատանկ բան չըսի... մեյ մըն ալ չեմ երթար ըսի, արդեն անցած օր ալ դիպվածով հոն մտա... ես միտքս դրեր էի Թոքաթլյանին երթալու, տալմիշ եղեր անցեր էի, չուզեցի վերադառնալ մինչև հոն... Ալ գոցե՛ սա խոսքերը, սընբրիս կդպչի կոր... թերթին մեջ բան մը կա՞։

— Բան չի կա,— պատասխանեց Մարգար էֆենտի, որ տեսավ, թե չպիտի կրնար կինը իր ուզած կերպովը խոսեցունել։

Բայց Սաթենի վարանումը ճիշտ այն բոպեին, ուր անուն մը պիտի արտասաներ, ալ ավելի սաստկացուց իր կասկածները։ Իր ներքին հուզումը ծածկելու համար կրկին առավ թերթը և կարդալ կեղծեց։

Ժամեն ավելի մնաց այսպես թերթը ձեռքին մեջ, մինչև որ կինը «գիշեր բարի» ըսավ ու ննջասենյակ քաշվեցավ։

Վաճառականը երկար ատեն ժուռ եկավ սենյակին մեջ, անընդհատ ծխելով։ Անհամբեր կսպասեր հետևյալ օրվան, որպեսզի իր կինը հետապնդեր։ Միջոցներ խորհեցավ այդ հետապնդումը աննշմար կերպով ու հաջող պայմաններու մեջ կատարելու համար ու վերջապես, կես-գիշերեն ետքը, գնաց հանգստանալու։

Հետևյալ առտու կանուխ վաճառականը եկավ գրասենյակ, ընթացիկ գործերը կարգի դրավ, պետք եղած հրահանգները տվավ գրագրին, ըսավ, որ թերևս մինչև իրիկուն բացակա պիտի մնար ու ժամը տասնմեկին միջոցները ելավ Բերա։

Գիտեր, որ կինը թյունելով Բերա պիտի ելլեր և ըստ այնմ պատրաստած էր իր հետապնդումին ծրագիրը։

Գործը հաջողությամբ գլուխ հանելու համար Մարգար էֆենտի որոշած էր օգնական մը առնել հետը։

Այդ փափուկ պաշտոնին անձը արդեն մտովի ընտրած էր ու հիմա կերթար զայն գտնելու։

Այս օգնականը իր երախտավորյալն էր, գավառեն եկած հեռավոր ազգական մը, զոր Մարգար էֆ. նախնական դպրոց մը դրած էր ու հետո բարեկամ վաճառականի մը քով տեղավորած, համեստ ամսականով մը։ Հազիվ 20—22 տարեկան, ուշիմ, սմսեղուկ ու վարպետորդի երիտասարդ մըն էր այդ գավառացին։

Պաշտամունքի մոտեցող խորին հարգանք մը ուներ Մարգար էֆենտիի հանդեպ, զոր իր պաշտպան սուրբը կնկատեր։

Մարգար էֆենտի առտվան գացած էր այն վաճառատունը, ուր Աբգար— այս էր երիտասարդին անունը— կպաշտոնավարեր։

Իրեն ըսեր էին, որ Աբգար մեկ քանի գանձումներ ընելու համար Բերա ելած էր և թե հայտնի չէր, որ ե՞րբ պիտի վերադառնա։

— Կուզեի անպատճառ զինքը տեսնել կեսօրեն առաջ,— ըսած էր վաճառականը։

— Տասնըմեկին միջոցները Քրետի Լիոնեյի մասնաճյուղին պիտի հանդիպի, թերևս հոն գտնեք զինք,— պատասխանած էին։

Մարգար էֆենտի Բերա ելնելուն պես ուղղվեցավ իրեն տրված հասցեին և արդարև Աբգարը գտավ կիշեի մը առջև զբաղած։

— Քեզի հետ քիչ մը տեսնվիլ կուզեմ,— ըսավ վաճառականը իր պաշտպանյալին։

— Վայրկյանե մը ձեր տրամադրության ներքև եմ,— պատասխանեց երիտասարդը։

— Դուն գործդ նայե, ես դռան առջև կսպասեմ։

Երիտասարդը արդարև անմիջապես եկավ իր պաշտպանը գտնելու։

— Եկու՛ր, երթանք հոս մոտերը տեղ մը նստինք քեզ հետ,— ըսավ վաճառականը։

Գարեջրատուն մը մտան, ուր Մարգար էֆ. երկու գավաթ գարեջուր ապսպրեց։

Աբգար, շվարած, շփոթած, չէր գիտեր ի՞նչ դիրք բռնել իր պաշտպանին դիմաց։ Առաջին անգամն էր, որ վաճառականը այսպիսի մտերմություն մը ցույց կուտար իրեն։ Երկար ատենե ի վեր, տարիեն ավելի էր, որ երբեք առիթ ունեցած չէր Մարգար էֆենտիին հետ խոսելու։ Վաճառականը զայն տեղավորելե ետքը ալ չէր զբաղած անով, նույնիսկ կարծես ջանացած էր հեռու մնալ անկե և երիտասարդն ալ չէր համարձակած երբեք, ոևէ պատրվակով մոտենալ անոր։ Նույնիսկ Ծնունդի ու Զատկի առթիվ այցելած չէր և գոհացած էր նամակով իր շնորհակալությունները մատուցանելու և հավիտենական երախտագիտությունը հայտնելու։

— Դեռ շատ գործ ունի՞ս,— հարցուց վաճառականը։

— Տակավին գանձումն ալ ունիմ ընելիք։

— Գնա՛, լմնցո՛ւր ուրեմն։

— Անգամ մը գացի՝ կեսօրեն ետքը եկո՛ւր, ըսին։

— Վաղը երթաս նե՞ չըլլա՞ր։

— Ինչո՞ւ չէ, կըլլա։

— Որովհետև կեսօրեն ետքը մինչև իրիկուն քեզի պետք ունիմ։

— Ձեր տրամադրության ներքև եմ։

Վաճառականը պահ մը լռեց։ Դժնդակ բացատրություններու վայրկյանը հասեր էր ու չէր գիտեր ինչպես խոսք բանար։

— Աբգար,— ըսավ մեղմ ու մտերիմ շեշտով մը,— գիտես որ ես քեզ մարդ ըրած եմ ու այսօրվան դիրքդ ինծի պարտական ես։

— Երբեք չեմ կրնար մոռնալ ատիկա և հավիտյան երախտապարտ եմ ձեր մեծության,— պատասխանեց երիտասարդը։

— Տարիներով հոգացած եմ քու ապրուստդ ու դպրոցական ծախքերդ։

— Այնպես է. իմ միակ պաշտպան բարերարս եք։

— Եթե հաշիվ ընեմ, կարելի է, 2—300 ոսկի ծախք ըրած եմ քեզի համար։

— Թերևս ավելի, Մարգար էֆ.։

— Այդ նյութական զոհողություններեն ետքը, քեզի գործ ալ գտած եմ։

— Ամենատորին վատ մը կըլլամ, եթե ուրանամ այս ամենքը։

— Գարրիել էֆենտիին քով եթե մինչև այսօր կպաշտոնավարես ու անոր վստահությունը կվայելես, պատճառն այն է, որ ես քեզի համար երաշխավոր եղած եմ։

— Գիտեմ այդպես ըլլալը։

— Եթե ոչ, այդ մարդը քեզի պես անծանոթ գավառացիի մը կհանձնե՞ր իր գանձումները։

— Երբեք,— պատասխանեց երիտասարդը, որ տակավին չէր կարող գուշակել թե վաճառականը ո՞ւր կապել կուզե խոսքը։

— Ես այս ամենքը ըրած եմ,— շարունակեց Մարգար էֆ.,— առանց ոևէ ակնկալության։

— Այո՛։

— Հիմա իս մտիկ ըրե, այսօր ատենը եկած է, որ իմ ըրած բարիքներուս փոխարեն հատուցանես ինծի։

— Եթե կարելի ըլլար ատիկա, աշխարհի ամենեն երջանիկ մարդը պիտի համարեի ինքզինքս։

— Շատ կարելի է։

— Ի՞նչ կերպով, Մարգար էֆենտի։

— Ինծի ծառայություն մը մատուցանելով։

— Հրամայեցե՛ք, և ամեն բան ընելու պատրաստ եմ, բավ է, որ կարողությանս սահմաններուն մեջ ըլլա։

— Շատ դյուրին բան է առաջարկելիքս։

— Հրաման ըրեք ուրեմն։

— Կինս կճանչնա՞ս։

— Այո՛, մեկ քանի անգամ տեսած եմ,— կմկմաց երիտասարդը այս անակնկալ հարցումեն բոլորովին շփոթած։

— Իսկ ինք քեզի կճանչնա՞...

— Չեմ կարծեր, երբեք հետը խոսելու պատիվը չեմ ունեցած։

— Այն ատեն գործը կարգին է ուրեմն։ Խմե՛ տեսնենք սա գարեջուրը և ուրիշ մը ապսպրենք։— Աբգար երկյուղածությամբ գավաթը շրթունքին տարավ, խմեց ու բերանը թաշկինակով սրբեց։

— Այսօր կինս Բերա պիտի գա, և մեկ քանի այցելություններ պիտի տա։ Կուզեմ, որ առանց նշմարվելու իր ետևեն երթաս...

— Այսինքն զինքը լրտեսե՞մ,— հարցուց երիտասարդը։

Պահ մը լռություն տիրեց։ Թե՛ վաճառականը և թե՛ երիտասարդը ինքզինքնին նեղված կզգային։

— Կըլլա՞,— հարցուց վաճառականը վերջապես։

— Քանի որ կհրամայիք, պատրաստ եմ ձեր կամքը կատարելու...

— Որ տունը որ մտնե, որ խանութը որ մտնե, մանրամասնորեն կդրես թուղթի մը վրա, անկե զատ եթե մեկու մը հետ խոսիլ ան ալ կնշանակես։

— Բայց եթե այդ անձը անծանոթ ըլլա ինծի՞։

— Դեմքը, հագուստը, հասակը և այլն կնշանակես։

— Լա՜վ, այդ կերպով գործը կդյուրանա։

— Բայց կետ առ կետ պիտի կատարես ըսածս։

— Վստահ եղիր այդ մասին։

— Սա ալ ըսեմ, որ մեկ անգամեն չպիտի լմննա այս գործը։ Թերևս շաբաթե մը կամ երկու շաբաթեն կրկին հարկ ըլլա նույնը ընել։

— Երբ որ հրամայեք՝ պատրաստ եմ։

— Ասով ինծի անանկ ծառայություն մը մատուցած պիտի ըլլաս, որ քեզի ըրած բարիքներս փոխարինած պիտի ըլլաս։

— Երբեք չեմ կրնար փոխարինել ձեր բարիքները։

— Եվ ես քեզ երախտապարտ պիտի ըլլամ։

— Քավ լիցի, Մարգար էֆենտի, ի՞նչ կըսեք։

— Ընտանեկան պատիվս քեզի կվստահիմ կոր։

— Երախտապարտ եմ ձեր ցույց տված վստահության համար։

— Պետք չունիմ ըսելու, որ ո՛չ ոք պիտի իմանա այս բանը։

— Բնականաբար... այդ մասին ապահով եղեք։

Վաճառականը ժամացույցը նայեցավ։ Կեսօր եղած էր արդեն։

— Քեզի հետ մեկ ճաշ մը ընենք այստեղ,— ըսավ երիտասարդին։

— Ինչպես որ կհաճիք։

Ճաշի միջոցին վաճառականը նոր խոսակցություններու մեջ մտավ։ Ըսավ, թե իր կնոջ հավատարմության մասին թեև կասկած չուներ, բայց հեռուեն հեռու բաներ մը լսած էր և կուզեր ատոնց որ աստիճան հիմնավոր ըլլալը ստուգել։ Երիտասարդը իր պաշտպանին ընտանեկան այդ գաղտնիքները լսեց նախ զարմանքով, հետո հաճույքով ու գոհունակությամբ։

Կզգար թե իր կատարելիք գործը շատ պատվավոր բան մը չէր, բայց անհունորեն շահաբեր պիտի ըլլար իրեն համար։ Մարգար էֆ.-ի պես մեկու մը մտերիմ խորհրդականը, անոր գաղտնիկիցը

դառնալ երազ մըն էր, որ երբեք չէր կրնար անցնիլ երիտասարդին մտքեն։

Ժամը մեկն էր, երբ վաճառականն ու երիտասարդը դուրս ելան գարեջրատունեն ու ուղղվեցան դեպի Թյունել։

Ճամփան Մարգար էֆենտի մեկ քանի նոր հրահանգներ տվավ և միևնույն ատեն երիտասարդին զգացուց, որ իր մատուցանելիք ծառայությունը առանց վարձատրության չպիտի թողվեր, միայն թե հարկ էր, որ հավատարմությամբ ու գաղտնապահությամբ գործեր։

— Հիմա ի՞նչ ամսական կառնես կոր Գաբրիել էֆենտիին քով,— հարցուց։

— Վեց ոսկի (ոսկեղրամ),— պատասխանեց Աբգար։

— Եվ բոլոր գանձումները դո՞ն կկատարես։

— Գրեթե։

— Քիչ կուտա կոր եղեր... ես կկարծեի, որ գոնե ութը ոսկի կառնես։

— Անցած տարի ամսականս ոսկի մը ավելցուց, անկե ի վեր հավելում չունեցա։

— Բայց քենե շատ գոհ է կարծեմ։

— Այո՜, դժգոհության տեղի չեմ տված բնավ։

— Այս օրերս իրեն կխոսիմ տե՛ թող ամսականդ քիչ մը ավելցրնե. անիկա իմ խոսքս չի կոտրեր։

— Շատ շնորհակալ եմ, Մարգար էֆենտի, աստված երկար կյանք շնորհե ձեզի...

— Ես քեզի շատ կսիրեմ, տղաս, գիտեմ որ խելացի, պարկեշտ, գործունյա մեկն ես։ Միայն թե սա քեզի հանձնարարած գործս ուշադրությամբ կատարե, խնդիրը իմ ընտանեկան պատվիս վրա է... իմ պատիվս քու ալ պատիվդ է, քանի որ ազգական կհամարվինք։

— Ձեռքես եկածը պիտի ընեմ, Մարգար էֆ.։

Հասած էին Թյունելին առջև։ Մարգար էֆ. ուղղվեցավ դիմացի Բասաժին մեջ և հոն երիտասարդին հետ դարանակալ սպասեց։

Կես ժամեն ավելի էր, որ հոն եկած՝ Թյունելեն ելլողները կդիտեին՝ երբ Մարգար էֆենտի հանկարծ գոչեց.

— Ահա՜ կինս։

— Տեսա,— պատասխանեց Աբգար։

— Քովինը տիկին Նվարդն է, իր բարեկամուհին,— ավելցուց վաճառականը,— շուտ ետևեն գնա ու հետքերնին մի կորսնցներ... Պատվերներս չմոռնաս... իրիկունը գրասենյակը քեզի կսպասեմ։

— Բնավ հոգ մի ընեք, ամեն բան տեղն ի տեղոք պիտի կատարեմ,— ըսավ երիտասարդը և հեռացավ։

Երբ Սաթեն, Նվարդ և Աբգար աներևույթ եղան՝ վաճառականը Թյունել ուղղվեցավ ու Ղալաթիա իջնելով՝ իր գրասենյակը գնաց։

— Սա Աբգարը աղեկ միտքս եկավ,— կմտածեր,— իրմե զատ մեկու մը չէի կրնար բացվիլ, այս տղան շատ պես հավատարիմ է ինծի, ասկե զատ աչքը բաց ու ճարպիկ ալ է։

Հակառակ իր այս գյուտին՝ վաճառականը իր հանգիստը չէր գտած և մինչև իրիկուն ջղագրգիռ վիճակի մը մատնված էր։

Ի՞նչ պիտի իմանար արդյոք, երբոր Աբգարը իր տեղեկատվությունը ըներ։ Սաթենի անհավատարմությունը պիտի ապացուցվե՞ր, թե անմեղությունը երևան պիտի գար։

— Բայց եթե նույնիսկ այսօր Աբգար կասկածելի բան մը չտեսնե, նորեն ապահով չեմ կրնար ըլլալ,— կմտածեր վաճառականը, որովհետև կրնա ըլլալ, որ ժամադրությունը,— եթե երբեք ժամադրություն մը կա խոսրով էֆ.-ի հետ — ուրիշ օրվան համար է... այն ատեն հսկողությունը պետք է վերսկսիլ, հետապնդումը շարունակել, բայց մինչև ե՞րբ...

Այս անորոշությունը զինքը կխռովեր ամենեն ավելի։

ԺԱ.

— Ինչպե՞ս ժամանակ անցուցիր տեսնենք Բերա,— հարցուց Մարգար էֆենտի իր կնոջը, երբ իրիկվան կերակուրեն ետք, վերի սենյակը սուրճ կխմեին։

— Աղեկ... քանի մը այցելություն տվի, հետո կոշկակարիս գացի, մեկ երկու մանր գնումներ ըրի ու արդեն իրիկուն եղավ։

— Գոհարիկ հանըմին գացի՞ր...

— Այո՛, հետո միասին տիկին Մաննիկին գացինք...

— Ինչպե՞ս է, աղե՞կ է տիկին Մաննիկը։

— Շատ աղեկ է...

— Անկե՞ ետքը կոշկակարիդ գացիր։

— Այո՛, կրնա՞մ այս հարցաքննության պատճառը հարցնել։

— Հարցաքննության բան չկա... խոսք է կընենք կոր, ժամանակ անցնելու համար։

— Այդ տարբեր...

— Ըսել է, որ Գոհարիկ հանըմը Մաննիկենց մնաց և դուն առանձին դուրս եկար։

— Այո՛...

— Ի՞նչ աղվոր բաներ գնեցիր տեսնենք։

— Ոչինչ... մանր-մունր բաներ։

— Պոն-Մառշեե՞ն։

— Հոն ալ հանդիպեցի, այո՛... բայց ինչո՞ւ այդքան կհետաքրքրվիս կոր։

— Թոչամիեին ալ հանդիպեցա՞ր։

— Չէ՛, քանի որ կասկածելի է եղեր այդ տեղը, ալ ոտքս չեմ կոխեր։

Մարգար էֆ. պահ մը լռեց։ Խոսակցությունը իր փափաքած ձևով առաջ չէր երթար և կվախնար, որ եթե այսպես շարունակվեր, կինը ի վերջո պիտի բարկանար և անախորժ միջադեպեր պիտի պատահեր։

Իր պաշտպանյալը՝ Աբգար, շատ մանրակրկիտ կերպով կատարած էր իրեն հանձնարարված փափուկ պաշտոնը և իրիկունը մանրամասնորեն տեղեկություններ բերած էր տիկին Սաթենի բոլոր շարժումներու մասին, այնպես, որ վաճառականը վայրկյանը վայրկյանին գիտեր թե ինչպե՞ս ժամանակ անցուցած էր իր կինը Թյունելեն ելլելեն մինչև տուն վերադառնալը։

Այդ տեղեկությունները մտատանջություն պատճառող բան մը չէին, միայն կետ մը կար, զոր վաճառականը կուզեր լուսաբանել։

Տիկին Սաթեն պահ մը մտած էր կանացի նորություններու մեծ վաճառատուն մը «Հոֆման» անուն, որուն վերնահարկը իբրև թեյարան կծառայե, հոն թեյ խմած ու հետո դուրս ելած միջոցին վայրկյան մը տեսնված էր մեկու մը հետ, որ ներս կմտներ։ Աբգարի նկարագրության նայելով այդ անձը կնմաներ խոսրով էֆենտիի։ Երիտասարդը չէր կրցած լսել փոխանակված խոսքերը, միայն թե գիտցած էր, որ մարդը շատ սիրալիր կերպով կխոսակցեր։

Ո՞վ էր այդ անձը, ահա խնդիրը, զոր այժմ կաշխատեր լուծել Մարգար էֆենտի։ Սիկարեթ մը վառելե ու մեկ քանի անգամ քաշելե ետքը ըսավ.

— Ի՞նչ հիանալի գործ կընե կոր սա Հոֆման վաճառատու-

նը, առտուն Բերա ելած էի, այդ ժամուն իսկ լեցուն հաճախորդ կար։

— Այնպես է,— պատասխանեց տիկին Սաթեն։

— Կերևա որ ապրանքները թե աժան են և թե լավ տեսակեն։ Դուն ընդհանրապես հոնկե՞ առուտուր կընես։

— Քիչ անգամ...

— Այսօր գացի՞ր։

— Գացի, բայց բան մը չգնեցի...

— Վերի հարկն ալ շնորհքով թեյարան մը ունի։

— Այո՛ միայն թեյարան չէ... անուշեղեններ, նվագ ալ կա եղեր։ Ես ալ թեյ մը խմեցի այսօր...

— Բազմություն կա՞ր։

— Չէ՛, այդ ժամուն բազմություն չըլլար, ընդհանրապես ժամը հինգեն ետքը կուգան եղեր։

— Ըսել է ծանոթի չհանդիպեցար։

— Չէ՛,— պատասխանեց տիկին Սաթեն։

— Բնավ մեկու մը հետ չխոսեցա՞ր։

— Որո՞ւ հետ կուզես որ խոսիմ։

— Կրնա ըլլալ, որ ներս մտած կամ դուրս ելած ատենդ ծանոթի մը հանդիպած ըլլաս...

— Զարմանալի խոսքեր։

— Զարմանալի խոսքե՞ր կերևան կոր քեզի,— գոչեց վաճառականը հանկարծ իր շեշտը փոխելով։

— Բայց միտքդ ի՞նչ է, բացե ի բաց խոսե,— ըսավ տիկին Սաթեն, ինքն ալ ձայնը բարձրացնելով։

— Ոևէ միտք չունիմ, միայն սա գիտեմ, որ սուտ կխոսիս կոր...

— Ի՞նչ ըսիր։

— Սուտ կխոսիս կոր,— կրկնեց վաճառականը բարկութենեն դողդողացող ձայնով մը։

Տիկին Սաթեն հանկարծ շառագունեցավ։ Զգաց, թե փոթորիկը պիտի պայթեր, բայց տակավին որոշապես չէր գիտեր անոր պատճառը, միայն տարտամ կասկած մը ծայր կուտար մտքին մեջ։

— Կաղաչեմ, որ բացե ի բաց խոսիս և բացատրես, թե ինչ բանի մեջ սուտ խոսած եմ,— ըսավ զսպված բարկությամբ մը։

Մարգար էֆենտի ինքն ալ հուզված ոտքի ելավ։

— Երկու անգամ սուտ խոսեցար,— գոչեց,— մեյ մը այսօր և մեյ մըն ալ անցած օր։

— Չեմ հասկնար, թե ի՞նչ ըսել կուզես, ավելի որոշ խոսե տեսնենք։

— Հիմա ամեն բան պիտի բացատրեմ... որովհետև այս վիճակը չկրնար տևել... ամենուն քով խաղք չեմ կրնար ըլլալ։ Պարապ խոսքեր,— գոչեց վաճառականը, հետզհետե բորբոքելով,— պարապ խոսքեր... ամբողջ թաղին մեջ բերնի ծամոն եղած ենք։

— Նորեն այդ չլթիկին ըսածներն է... մեղք, որ գիտնալով հանդերձ, թե բոլորն ալ սուտ զրպարտություններ են՝ դարձյալ կարևորություն կուտաս։

— Դժբախտաբար կտեսնեմ, որ զրպարտություն չէ եղեր...

— Վա՜յ,— գոչեց տիկին Սաթեն հեգնական ձայնով մը,— կերևա, որ վավերական տեղեկություններ ստացած ես Շաղիկեն՝ իմ անհավատարմություններուս մասին։

— Կխնդրեմ, խնդրին մեջ Շաղիկ չի կա, կատակը մեկդի, լրջորեն խոսինք։

— Իմ ալ փափաքս այդ է, միայն թե օդային խոսքերե զատ ուրիշ բան չլսեցի մինչև հիմա։

— Ըսի որ երկու անգամ սուտ խոսեցար, հիմա ատոր ապացույցը պիտի տամ։

— Անհամբեր կսպասեմ կոր։

— Առաջին անգամ անցած շաբթու, երբոր քեզ հարցուփորձեցի, ըսիր, որ Թուլամիեի խանութին մեջ ոևէ ծանոթի չես հանդիպած... ասանկ չըսի՞ր...

— Այո՛, թերևս... էյ, ի՞նչ կհետևի ատկե։

— Սա կհետևի, որ սուտ խոսեցար, որովհետև քու ետևեդ այդ խանութը մտած է մարդ մը, որ շատ ծանոթ է քեզի...

— Անունը տուր տեսնենք։

— Քանասարյան Խոսրով էֆենտին,— գոչեց վաճառականը շեշտակի նայելով իր կնոջ երեսին։

Սակայն Սաթենի դեմքին վրա ոևէ այլայլություն չնշմարվեցավ։

— Ճի՛շտ է.— ըսավ հանդարտ ձայնով մը,— հետո՞.

— Ոչինչ...

— Ինչպե՞ս։

— Ինչպե՞ս ոչինչ,—գոչեց Մարգար էֆենտի,—դարձյալ կփորձես ստել։

— Եվ ոչ իսկ բառ մը փոխանակեցինք իրարու հետ,—շարունակեց Սաթեն ամենայն հանդարտությամբ։ Գլխով բարև մը, այսչափ... արդեն ան ներս մտնելեն անմիջապես ետքը ես դուրս ելա։

— Ան ալ ետևեդ...

— Տեղեկություն չունիմ, կրնա ըլլալ...

— Ի՞նչ խոսեցաք խանութին մեջ,— գոչեց Մարգար էֆ. այլայլված ձայնով մը։

— Բառ մը չփոխանակեցինք,— կրկնեց կինը։

— Ընդհակառակը այսօրվան համար իրարու ժամադիր եղաք Հոֆմանի վաճառատան վերնահարկը,— ըսավ վաճառականը։

Տիկին Սաթեն իբրև պատասխան, քահ-քահ խնդաց։

Այս հեգնական ձևը ալ ավելի կատղեցուց վաճառականը, որ սպառնական ձայնով մը պոռաց.

— Ըսածներուս խնդալով պատասխան չտրվիր։

— Ընդհակառակը ուրիշ պատասխան չի կա տալիք... կկրկնեմ, բառ մը անգամ չփոխանակեցինք իրարու հետ... քանի որ, ինչպես կերևա, լրտեսներ դրած ես ետևես, որոնք ամեն շարժումներուս կհետևին և քեզի լուր կբերեն, գիտցած ըլլալու ես նաև, որ Թուլամիեին խանութին մեջ խոսք չփոխանակեցի Խոսրով էֆենտիի հետ, եթե ասոր հակառակը ըսող կա, թող դեմս ելլե...

Վաճառականը իսկույն չպատասխանեց։ Արդարև ապուցույց մը չուներ, թե իր կինը շաքարավաճառին խանութին մեջ խոսած էր Խոսրով էֆենտիին հետ։ Պարզ ենթադրության՝ կասկածի վրա հիմնված էր ամեն բան։ Կրնար ըլլալ, որ Սաթեն ճշմարտությունը կխոսեր և այն ատեն իր բոլոր այս իրարանցումները ծիծաղելի կդառնային։ Կնոջ ընթացքը այս հրատապ խոսակցության սկիզբեն ի վեր, իր պահած անայլայլ պաղարյունությունը, ինքնավստահությունը և հեգնական շեշտը, որով իր երկան բարկաճայթ խոսքերուն կպատասխաներ, և նպաստ իրեն փաստեր էին։

Տիկին Սաթեն տեսավ ամուսնույն վարանոտ կերպարանքը և հասկցավ, որ հաղթական դուրս պիտի գար այս պայքարեն։

— Կպահանջեմ, որ լրտեսդ երևան հանես ու միասին երեսվինք,— ըսավ,— չեմ ուզեր որ այս տեսակ սուտ զրպարտություններ հորինվին շուրջս...

— Լրտես չի կա գործին մեջ,— փութաց պատասխանելու վաճառականը։

— Ուրեմն ո՞վ պատմեց այդ սուտերը քեզի, ո՞վ ըսավ, թե Խոսրով էֆենտիին հետ խոսեր, այսօրվան համար ժամադիր եղեր եմ, անշուշտ այդ ամենքը քու երևակայությանդ մեջ չի ծնավ։

— Ճանըմ, Թուլամիեին խանութը մտնելդ ու դուրս ելլելդ ինչպես նաև Խոսրով էֆենտիին հոն գալը մեր Նշանիկը տեսեր ու պատմեր է։

— Սա խմբագիր ազգական մը ունիս նե, անիկա՞,— ըսավ Սաթեն արհամարհական ձևով մը։

— Հեռուեն հեռու ազգական,— ճշտեց իսկույն վաճառականը։

— Ջամշնա՞ր կոր այդ տեսակ խոսքեր ըսելու։

— Ճանըմ, անիկա գեշ մտքով չէ ըսեր, միամտորեն պատմեր է։ Միայն թե գեշը ան է, որ պետք չեղած տեղ մը պատմեր է։

— Ո՞ւր,— հարցուց տիկին Սաթեն։

— Շազիկին անունին գիշերը հոն եղեր, այնտեղ պատմեր է...

— Զարմանալի բան, Նվարդը բան մը չըսավ։

— Կերևա որ այդ միջոցին հոն չէ եղեր, կամ չի ուզեր քեզի ըսել, որպեսզի չբարկանաս...

— Ամբողջ այս խնդիրները այդ լակոտին պատմության վրա՞ հիմնված են... ամո՛թ քեզի, ավելի խելահաս և լուրջ մեկը կկարծեի... է՛յ, այդ Նշանիկը ըսավ, որ Խոսրով էֆենտիին հետ խոսեր ու ժամադի՞ր եղեր եմ...

— Չէ՛, տղան խանութ չի մտեր, միայն թե փողոցի կողմեն տեսեր է քու հոն մտնելդ։

— Եվ վազեր Շազիկին պատմեր է... դուն ալ այդ խայտառակներուն խոսքին կարևորություն տալով՝ կելլես զիս ժամերով կհարցուփորձես։ Վարպետությամբ բերնես բան իմանալ կուզես... շիտակը ծիծաղելի բան... Նվարդին պատմեմ նե՝ շատ պիտի խընդա վրադ։

— Բայց դեռ ամեն բան չլմնցավ,— գոչեց վաճառականը, որ կտեսներ թե կինը պաշտպանողականեն հարձակողականի կսկսեր։

— Ուրիշ ի՞նչ կա տեսնենք...

— Այսօրվանը... Հոֆմանի վերնահարկը, թեյ խմելեդ հետո...

— է՛յ, շարունակե՛։

— Դուրս ելած միջոցիդ մեկու մը հետ խոսեր ես։

— Ճիշտ է... դարձյալ Նշանի՞կն է տեսնողը։

— Ան կամ ուրիշը, ատիկա կարևորություն չունի... ո՞վ է այդ մարդը։

— Խոսրով էֆենտի Քանասարյանը,— պատասխանեց տիկին Սաթեն ամենայն հանդարտությամբ։

Վաճառականը հանկարծ տժգունեցավ։ Հազիվ թե իր հանդարտությունը գտնել կսկսեր և ահա այդ մեջտեղ նետված անունը ամեն բան տակնուվրա կդարձներ։

— Վերջապես կիսոստովանիս,— գոչեց այլայլված ձայնով մը։

— Ի՞նչ բան...

— Այդ մարդուն հետ ունեցած հարաբերությունդ...

— Խենթեցա՞ր... ի՞նչ հարաբերություն։ Պատահմամբ հանկարծ դեմս ելավ, բարև մը տալով պիտի անցնեի երթայի, երբոր ինք որպիսությունս հարցուց, ստիպվեցա քաղաքավարական խոսք մը ընել... ոճի՞ր գործեցի։

— Չէ՛, բայց...

— Բայց ի՞նչ։

— Ուրիշ ոևէ անձի հետ բնական է խնդիրը կարևորություն չուներ, բայց Խոսրով էֆենտիին հետ... քու նախկին...

Վաճառականը խոսքը չավարտեց։

— Հետո ես ի՞նչ հանցանք ունիմ, ինք հետս խոսեցավ, ստիպված էի պատասխանել, զարմանալի բան։

— Ուրիշ ավելի զարմանալի բան մը սակայն...

— Ո՞րն է տեսնենք։

— Թուլամիեին կերթաս ու Խոսրով էֆենտին հոն կուգա դիպվածով, Հոֆմանին կերթաս և դարձյալ Խոսրով էֆենտին հոն կուգա։

— Ինչ կրնանք հետևցնել ասկե։

— Հետևությունը դուն հանե։

— Ես ատոր մեջ զարմանալի բան մը չեմ տեսնար կոր...

— Իսկ ես առնվազն սա կտեսնեմ, որ այդ մարդը քեզի կհետապնդե, եթե դուն զինքը չես հետապնդեր։

— Պարապ խոսք... արդեն ինք բացատրեց թե ինչու Հոֆմանին վաճառատունը կգտնվեր։

— Ինչո՞ւ համար...

— Կնոջը հետ եկեր է և կինը վարը գնումներու զբաղած ըլլալով, ինք վեր ելեր է անոր սպասելու համար։

— Դուն ալ հավատացի՞ր այդ բսածին։

— Անշուշտ հավատացի... մանավանդ որ վար իջնելուս արդարև տեսա իր կինը։

Սաթենի տված այս բացատրությունն ալ շատ ճշմարտանման էր։ Վաճառականը այլևս նոր զենք մը չուներ գործածելիք, միայն թե տակավին կկասկածեր կնոջը անկեղծության մասին։

— Ենթադրենք, որ բոլոր ըսածներդ ճշմարիտ են,— ըսավ,— այն ատեն ինչո՞ւ համար քիչ մը առաջ իրողությունը ծածկեցիք և ըսիր, թե Հոֆմանի վաճառատան մեջ ոչ մեկ ծանոթի հանդիպած էիր...

— Ատոր բացատրությունն ալ շատ պարզ է,— պատասխանեց կինը, եթե Խոսրով էֆենտիի տեղ ուրիշ անձ մը ըլլար՝ անմիջապես պիտի ըսեի, բայց գիտեի, որ այդ անունը տալով անտեղի կասկածներ պիտի հարուցանեի մտքիդ մեջ, անոր համար զգուշացա... բայց հետո խորհեցա, որ լավագույն էր ամեն բան անկեղծորեն ըսել, քանի որ դատապարտելի ոչ մեկ բան ըրած չէի։

— Ուրիշ անգամ չեմ ուզեր, որ այդ մարդուն հետ խոսք փոխանակես,— գոչեց վաճառականը։

— Արդեն զինքը տեսնելու առիթ չեմ ունենար երբեք։

— Երկու շաբթուն մեջ երկու անգամ տեսեր ես սակայն։

— Դիպվածը անանկ բերավ։

— Այդ դիպվածին իմ խելքս չի հասներ կոր...

— Ի՞նչ, տակավին կկասկածի՞ս խոսքերուս ճշմարտությանը վրա,— գոչեց կինը ինքն ալ այս անգամ բարկանալով,— կկարծե՞ս որ քեզ կխաբեմ կոր... մեղապարտ հարաբերություններ՞ ունիմ Խոսրով էֆ-ի հետ... ըսե, այդ կասկածը ունի՞ս։

— Ես ատանկ բան չըսի։

— Ուրեմն ի՞նչ ըսել կուզես։

— Իմ փափաքս և ուզածս այն է, որ ուրիշներուն բերանը չիյնանք, ահա...

— Ոչ մեկուն բերանը ինկած ենք, ատ քու ենթադրությունդ է։

— Մեյ մը Շազիկին խոսքերը մտիկ ըրե։

— Այդ չլթիկին խոսքերո՞վը պիտի շարժինք։

Էրիկ կնիկ դեռ բավական շարունակեցին իրենց վեճը, միայն թե ոչ նույն սաստկությամբ։ Վաճառականը կտեսներ, որ իր ձեռքը եղած փաստերը շատ աննշան էին և անոնցմով կարելի չէր լրջորեն դատապարտել իր կինը։ Միայն թե կասկածը չէր փարատած։

— Պետք է հսկողությունը շարունակեմ,— կխորհեր,— մինչև որ բոլորովին համոզվիմ կնոջս անմեղության մասին, միայն թե հիմա որ կասկածներս իրեն հայտնեցի, շատ ավելի դժվար պիտի ըլլա այդ հսկողությունը, որովհետև իր զգուշությունները պիտի կրկնապատկե... իցիվ թե բան մը ըսած չըլլայի և սպասեի լավագույն առիթի մը։

Իսկ տիկին Սաթեն, իր կողմե, վրեժխնդրական ծրագիրներ կպատրաստեր Շազիկի դեմ, որ այլևս իր մահացու թշնամին դարձած էր։

— Իրեն պետք է հասկցնեմ, թե ի՞նչ ըսել է պատվավոր կնոջ մը պատվին հետ խաղալ,— կմտածեր։

Ամբողջ գիշերը երկու ամուսինները գրեթե անքուն անցուցին, այնքան ազդված էին փոխանակված խոսքերեն։

Տիկին Սաթեն օրերով տունեն դուրս չելավ, կրկնելով, որ չուզեր անհիմն կասկածներու տեղի տալ։

Ի վերջո ամուսինը ինք ստիպեց կնոջը, որ վերջ մը դնե այդ արգելափակ կյանքին, որ կրնար վնասել իր առողջության։

ԺԲ

Հինգշաբթի օր մը, կեսօրին, երբ Պողոս էֆենտի իր գրասենյակեն դուրս կելլեր ճաշի երթալու համար, խանին խահվեճին իրեն հանձնեց նամակ մը, ըսելով.

— Էֆենտի, հիմա բերին այս նամակը։

— Ո՞վ էր բերողը,— հարցուց Պողոս էֆենտին անտարբեր ձևով մը։

— Տղա մըն էր... ձգեց գնաց, պատվիրելով, որ ձեզի տամ անմիջապես, վեր պիտի բերեի, երբ դուք վար իջաք։

Պողոս էֆենտի նամակը առանց բանալու գրպանը դրավ։

— Ճաշարանը կկարդամ,— ըսելով մտովի։

Սակայն ճաշարանը մեկ քանի բարեկամներու հանդիպեցավ, որոնց սեղանակից եղավ ու հետերնին խոսակցության բռնվեցավ։

Երբ անոնք կերակուրը ավարտելով մեկնեցան ու ինք առանձին մնաց, հիշեց իրեն հանձնված նամակը, զայն գրպանեն հանեց, անփութորեն պահարանը պատռեց և սկսավ կարդալ։ Առաջին տողերեն իսկ խորին հուզում մը նկարվեցավ դեմքին վրա, գույնը նետեց ու ձեռքը թեթևորեն դողալ սկսավ։ Քանի ընթերցումը առաջ տարավ, հուզումը այնքան սաստկացավ։ Բարեբախտաբար շուրջի սեղաններուն քով ճաշողները մեկնած էին և ոչ ոք նշմարեց իր այս ներքին խռովքը։ Ընթերցումը ավարտելե ետքը, բարկությամբ նամակը ծալեց ու գրպանը դրավ, ձեռագիրը պահ մը քննելե ետքը։

Ահավասիկ նամակին պարունակությունը։

«Ազնվաշուք Պողոս էֆենտի,

«Իբրև անկեղծ բարեկամ և ձեր ընտանեկան պատիվին նախանձախնդիր անձ մը, հարկ կզգամ ձեզ իմացնելու, որ ձեր կինը անհավատարմության ճամփուն մեջ է։ Երբեք չպիտի ուզեի պարզ կասկածի մը վրա այսպիսի ամբաստանություն մը ընել. բայց ափսո՜ս, իրողությունը բացարձակ ճշմարտություն է և կրնամ ըսել, թե ես աչքովս իսկ տեսած եմ զայն։ Եթե դուք ալ կուզեք ականատես ըլլալ ձեր կնոջ անհավատարմական ընթացքին՝ այսօր, հինգշաբթի, ժամը երկուքին, գացեք Բերա Ասմալը Մեսճիտ փողոցը գտնվող Ք. Բասաժը և հոն 5 թիվ դուռը զարկեք և պարոն Աբգարը հարցուցեք։

«Վստահ եղեք, որ այս կերպով ամեն բան պիտի իմանաք և միևնույն ատեն թերևս միջոց մը պիտի գտնեք ձեր ընտանեկան պատիվը փրկելու։

«Զմոռնամ ըսելու, որ տակավին ոչ ոք գիտե ձեր գլխուն եկած փորձանքը, սակայն եթե այսպես շարունակվի՝ օր մը անշուշտ ամեն բան երևան պիտի ելլե և այն ատեն ձեր պատիվը բոլորովին արատավորվի։

«Ձեզ սիրող և հարգող բարեկամ մը, որ ստիպված է իր անունը առայժմ ծածկել, այդ դառն իրողությունը պետք տեսած է հաղորդել ձեզի»։

Նամակը ոևէ ստորագրություն չէր կրեր և ոչ իսկ կեղծ անուն մը։ Պողոս էֆենտի իզուր նամակը կրկին գրպանեն հանեց և մանրակրկիտ կերպով գիրը զննեց, չկրցավ բան մը հասկնալ։

— Խա՞ղ մըն էր արդյոք,— մտածեց,— թշնամական բա՞ն մը, առանց ոևէ հիման, պարզապես զիս գրգռելու համար...

Այս մտածումը զինքը պահ մը հանդարտեցուց։ Պողոս էֆենտի, մինչև այդ օր պատճառ չէր ունեցած կասկածելու իր կնոջ անհավատարմության մասին։ Բայց իր հանդարտությունը երկար չտևեց։

— Նամակը շատ որոշ գրված էր,— մտածեց,— նույնիսկ ցույց

տված էր տեղ մը, ուրկէ պիտի կրնամ ամէն բան իմանալ... բայց ո՞վ է այս պարոն Աբգարը, որուն խոսքը կա նամակին մէջ։

— Այս ամէնուն մէջ մեքենայութիւն մը կա,— մտածեց,— զոր պէտք է երևան հանել... բայց ի՞նչ կերպով։

Երրորդ անգամը ըլլալով նամակը կարդաց։

— Այո՛, շատ որոշ գրված է,— խորհեցաւ,— գուցէ իրավունք անկեղծ բարեկամ մըն է, որ ուզած է աչքս բանալ...

Լավագոյն միջոցն է ցույց տրված տեղը երթալ։

Ժամացույցը նայեցաւ։ Արդէն մէկ ու կէսն էր։

— Մինչև որ երթամ՝ ժամը երկուք կհասնի,— մտածեց։

Եվ ուղղվեցաւ դեպի Թյունել։ Այս անակնկալ նամակը վրդոված էր իր ամբողջ էութիւնը և հետզհետե կարծես հուզումը կավելնար։

— Արդյոք իրա՞վ է,— կխորհեր,— Շազիկը ասանկ պատվի՞ս հետ կխաղա և ես ալ ապուշի պես բանե մը տեղեկութիւն չունիմ...

Մտքին մէջ սկսաւ փնտռել թե ո՞վ կրնար ըլլալ իր կնոջ սիրահարը։ Իր ծանոթներուն ոչ մեկուն վրա կասկած ուներ, մանավանդ որ Շազիկ իր ընթացքովը ամենափոքր կասկածանքի մը տեղի չէր տված։

— Եթե հակառակորդներս իմանան՝ ի՞նչ պիտի ըլլա վիճակս...

Ամենեն ավելի այս գաղափարը իր միտքը կշարշարեր։

— Նամակը թեև կհաստատե, որ տակավին մարդ չգիտեր, բայց տեսնենք ճի՞շտ է,— մտածեց։

Վերջապես՝ բոլոր այս մտատանջութիւններով տոգորված Պողոս էֆենտի հասաւ նամակին ցույց տված հասցեին։ Տան դուռը բախելե առաջ ժամացույցը նայեցաւ։

— Երկուքը տասն անցեր է,— ըսաւ,— արդյոք ո՞ւշ մնացի։

Եվ զարկաւ զանգակը։ Դուռը իսկույն բացվեցաւ։

— Ո՞վ կուզեք,— հարցուց հույն կինը իր մայրենի լեզվով։

— Մյուսյու Աբգարը,— պատասխանեց Պողոս էֆենտի դողահար ձայնով մը։

— Առաջին հարկը, սանդուխին ձախ կողմի սենյակը կբնակի։

— Հիմա վե՞րն է։

— Այո՛, վերը սենյակն է։

Պողոս էֆենտի կամաց-կամաց վեր ելաւ սանդուխեն։ Քանի կմոտենար իր նպատակին՝ այնքան հուզումը կսաստկանար։

Սենյակին դռան առջև հասնելով, թեթև մի հարվածեց։

— Մտեք,— ըսաւ ներսեն ձայն մը։

Պողոս էֆենտի դուռը բացաւ և ներս մտաւ։ Աբգար ոտքի վրա կեցած էր։

— Հրամմեցե՛ք, Պողոս էֆենտի,— ըսաւ վաճառականին։

Այս վերջինս ուշադիր զննեց երիտասարդը, հետո վարանոտ շեշտով մը ըսաւ.

— Ներեցեք, ձեզ չեմ ճանչնար...

— Պարոն Աբգարն եմ,— պատասխանեց երիտասարդը։

— Այսինքն...

— Նամակի մեջ հիշված անձը։

— Նամակը դո՞ւք գրած եք։

— Ո՛չ, բայց այդ խնդիրը կարևորություն չունի,— փութաց պատասխանելու երիտասարդը,— ավելի կարևորը նայինք և մանավանդ ժամանակ չկորսնցունենք։

— Ի՞նչ ըսել կուզեք,— հարցուց Պողոս էֆենտի։

— Ձեր տիկինը այս ժամուս հոս է...

— Հո՞ս է մի,— գոչեց Պողոս էֆենտի բարկութենեն դողացող բարձր ձայնով մը։

— Կաղաչեմ, մի պոռաք, կրնան ձեր ձայնը լսել...

— Ո՞վ պիտի լսե,— հարցուց Պողոս էֆենտի ձայնը քիչ մը ցածցնելով։

— Նախ տիկին Շազիկ և հետո մյուսը... Այսինքն... իր բարեկամը, ձեր...

— Ո՞ւր են, ըսե՛ տեսնեմ, շուտ...

— Կաղաչեմ, հանդարտեցեք,— ըսաւ երիտասարդը,— ասանկ ծանր պարագաներու մեջ պաղարյունությունը կորսնցնելու չէ։

— Բայց գիտես որ ինչ սարսափելի բան մըն է ըրածդ։

— Ափսո՛ս, գիտեմ,— պատասխանեց երիտասարդը, բայց...

— Եվ եթե սուտ կամ սխալ ըլլա ըսածներդ, ինչպե՞ս պիտի ազատիս ձեռքես։

— Այդ մասին տարակույս չունիմ... զուտ ճշմարտությունն է խոսածս,— պատասխանեց երիտասարդը ամենայն հանդարտությամբ։

— Ի՞նչ,— գոչեց Պողոս էֆենտի,— տակավին կհամարձակի՞ս ըսել, թե կինս կգտնվի իր սիրահարին հետ։ Սուտ կխոսիս...

— Բացարձակապես ճիշտ է ըսածս։

Պողոս էֆենտի բարկութենեն դողահար, դեպի դուռը վազեց, բացավ, դուրս սլացավ և գնաց դիմացի սենյակին դռան առջև և սկսեց ուժգնապես հարվածել զայն, մինչ Աբգար իր սենյակին դուռը կիսաբաց թողած՝ կդիտեր այս եղերական տեսարանը։

— Ո՞վ է ան,— լսվեցավ ներսեն առնական ձայն մը։

Պողոս էֆենտի ամբողջ մարմնով սարսռաց, ճանչցած էր ձայնը։

— Տիրա՛նն է,— ըսավ մտովի։— Տիրանը՝ իմ գրագիրս...

Հետո պոռաց.

— Բացեք դուռը...

— Ո՞վ է դուռը զարկողը,— կրկնեց ձայնը ներսեն։

— Բացեք։

Ոչ ոք մոտեցավ դռան։ Այն ատեն Պողոս էֆ. կատղած, բորբոքած, ուսովը սոսկալի հարված մը տվավ դռան և դուռը ճարճատմամբ բացվեցավ։

Տեսարանը, որ հանկարծ բացվեցավ խաբված ամուսնույն առջև՝ այնքան տպավորիչ էր, որ խեղճ մարդը ափիբերան մնաց։

Իր կինը, Շազիկը, կիսամերկ, բազմոցի մը վրա շփոթված ու շվարած վիճակի մը մեջ, տենդահար ձեռքով մը իր գուլպաները կհագներ, մինչ պարոն Տիրան, նույնպես հագուստները հանած, կշտապեր բանթալոնը հագնելու։

Պողոս էֆենտի այս տեսարանին հանդեպ բոպե մը լուռ մնաց, առանց կարենալ բառ մը արտասանելու։ Հետո խեղդուկ ձայնով մը պոռաց.

— Ի՞նչ է այս խաղքությունը...

Տիրան ու Շազիկ, առանց պատասխանելու, կշարունակեին հագնվիլ։

Պողոս էֆենտին, որ դուռը գոցած էր ու քայլ մը հառաջացած սենյակին մեջ՝

— Անամոթնե՛ր, խայտառակնե՛ր, պատիվս փարայի մը ըրիք,— կոռնար սպառնական ձևով ձեռքը բարձրացուցած։

Տիրան արդեն իսկ բանթալոնը հագած՝ վզնոցը կկապեր, հայելիին դիմաց անցած, իսկ Շազիկ կոշիկին կոճակները դնելու զբաղած էր։

— Քա՛, հիմա ի՞նչ երեսով մարդու երես պիտի նայինք,— գոչեց Պողոս էֆենտին, քայլ մըն ալ առաջ երթալով դեպի Շազիկի նստած բազմոցը։

Կինը առանց պատասխանելու այս նեղացուցիչ հարցումին՝ ոտքի ելավ և դիմեց դեպի աթոռ մը, որուն վրա դրված էր շրջազգեստը։

— Խո՞ւլ ես, քեզի կխոսիմ կոր,— պոռաց ամուսինը դողահար ձայնով մը։

— Ատանկ մի պոռար, հիմա տունիններդ ոտքի կելլան,— պատասխանեց կինը տարօրինակ հանդարտությամբ մը։

— Խերն անիծեմ տունիններուն...

— Ես քու պատվիդ համար կըսեմ կոր,— պատասխանեց Շազիկ,— ուզածիդ չափ պոռա, դուն խաղք կըլլաս...

Այս խոսքերը, զարմանալի բան, իրենց ազդեցությունը ունեցան։ Պողոս էֆենտի ձայնը ցածցուց և ավելի մեղմորեն ըսավ.

— Քա՛, սա ի՞նչ փորձանք էր գլխուս բերիր, սա ի՞նչ խաղքություն է... հիմա լսողները ի՞նչ պիտի ըսեն... քառասուն տարվան պատիվս մեկ փարայի ըրիր...

Հանկարծ նշմարեց Տիրանը, որ տենդային աճապարանքով մը իր ժաքեթը կհագներ։

— Ծո՛, ապերախտ,— գոչեց,— ասա՞նկ պիտի ընեիր ինծի...

— Էֆենտի, ի՞նչ ըրի որ,— կմկմաց Տիրանը։

— Տաճա ի՞նչ պիտի ընեիր, խայտառա՛կ, սրիկա՛... կորսվե՛ աչքիս առջևեն, մեյ մըն ալ երեսդ չտեսնեմ...

Տիրան արդեն հագված էր։ Շուրջը նայեցավ ֆեսը գտնելու համար և զայն նշմարեց դարակի մի վրա։ Հանդարտաքայլ գնաց դեպի դարակը, ֆեսը առավ, վրայի փոշիները թոթվեց ձեռքով, գլուխը դրավ և դեպի դուռը ուղղվեցավ։

— Ո՞ւր կերթաս,— պոռաց Պողոս էֆենտի։

— Հրաման մը ունի՞ք,— կմկմաց մյուսը։

— Դո՛ւրս կորսվե...

Տիրան դուռը բացավ և անհետացավ։ Երբ այր ու կին առանձին մնացին, Շազիկ իր ամուսնույն դարձավ և հանդիմանական շեշտով մը ըսավ.

— Հավնեցա՞ր ըրածիդ։

— Հե՞,— գոչեց խեղճ մարդը շփոթած՝ իր կնոջ այս անակնկալ հարցումեն։

— Հավնեցա՞ր ըրածիդ,— կրկնեց Շազիկ նույն շեշտով։

— Ի՞նչ ըրի որ...

— Դեռ ի՞նչ պիտի ընես, տունը տակնուվրա դարձուցիր։

— Ո՞ր տունը...

— Այս օտարականներուն մեջ կվայելե՞ր, որ գայիր պոռայիր, կանչեիր... ո՞վ գիտե ներս մտած ատենդ ալ ինչեր ըսիր...

— Բան մըն ալ չըսի,— պատասխանեց Պողոս էֆ.,— իմ ըսելուս պետք չէ մնացեր արդեն...

— Այստեղ ոչ ոք կճանչնա ինծի...

— Դուն անանկ գիտես,— պատասխանեց Պողոս էֆ., որ կամաց-կամաց իր հանդարտությունը գտնել վերսկսած էր։

— Ես իմ ըսածս գիտեմ...

— Մեյ մըն ալ դեմի սենյակը եղող մարդուն հարցուր տեսնենք...

— Դեմի սենյակը ո՞վ է որ...

— Չեմ գիտեր, երիտասարդ մը կար, ան ըսավ ինծի, որ դուն ու Տիրան օլաճախը այս սենյակը կգտնվիք։

— Անունս տվա՞վ...

— Հրամմեր ես, անունդ տվավ, փոսթա՛լ,— գոչեց Պողոս էֆենտի հանկարծ կրկին բարկանալով։

Շաղիկ դողահար ձեռքով մը իր արդուզարդը ավարտեց ու հայելիին դիմացը անցնելով գլխարկը դրավ։

— Քա հիմա սա եղածը մեր գեղին մեջ իմացվի նե, ի՞նչ պիտի ընենք. գոնե ասիկա ալ չմտածեցի՞ր,— գոչեց Պողոս էֆենտի,— ինտոր պիտի ազատինք Սաթենին բերնեն։

— Դուն գործն ասանկ վելվելեի չի տաս նե՝ անիկա ո՞ւրկե պիտի իմանա եղածը...

Երկու ամուսիններուն միջև պահ մը լռություն տիրեց։ Կինը իր արդուզարդը ավարտած, ոտքի վրա կեցած էր, մինչ Պողոս էֆենտի խոշոր քայլերով սենյակը կշափչփեր խոր մտածումի մը մեջ թաղված։

Հայտնի էր, որ ծանր, վճռական որոշում մը տալու վրա էր։ Հանկարծ կեցավ ու շեշտակի կնոջը նայելով ըսավ.

— Հիմա ասկե պիտի ելլաս շիտակ մորդ տունը պիտի երթաս...

— Ի՞նչ,— թոթովեց Շաղիկ սարսափած։

— Մորդ տունը պիտի երթաս, մեյ մըն ալ ոտքդ իմ տունս չպիտի դնես... հասկցա՞ր։

Եվ սպառնական կերպով ձեռը բարձրացուցած՝ ավելցուց.

— Շուտ կորսվե՛, եթե ոչ, ձեռքես գեշություն մը պիտի ելլա։

Եվ սակայն Շաղիկ տեղեն չշարժվեցավ։ Հուզված, այլայլված սկսավ արտասվել։

— Կորսվե,— ոռնաց ամուսինը։

— Ներե՛,— գոչեց կինը, ծունկի գալով ու իր էրկան ոտքերուն փարվելով, բայց մյուսը բրտորեն ոտքի հարվածով մը զայն հեռուն հրեց։

Այն ատեն Շաղիկ, գետնամած, սկսավ ավելի դառն հեծեծանք մը արձակել։

Պողոս էֆենտի նորեն սկսավ ման գալ սենյակին մեջ, առանց բառ մը արտասանելու։

Հետո կեցավ կնոջ դեմ և ակռաներուն մեջեն մոլտաց.

— Իմ ուշախի՞ս, Տիրանի հետ, անամո՛թ... քա՛, այդ ապուրը պիտի ուտեիր նե՝ գոնե ինե մեծ, ինե հարուստ մեկու մը հետ ուտեիր...

Սկիզբեն ի վեր Պողոս էֆենտին տանջող մտածումը այս էր։ Եթե իր կինը գտնար «շնորհքով» մարդու մը հետ, հարուստ վաճառականի մը հետ, գուցե շատ չպիտի զգացվեր։

— Քա՛, ալ մարդ չգտար, այդ «յաղըճիի» կտորի՞ն աչք տընկեցիր,— գոչեց բռունցքը բարձրացուցած,— քա՛, բնավ արժանապատվություն չունի՞ս դուն... լսողը ի՞նչ պիտի ըսե հիմա... Պողոս էֆենտիին կնիկը իրենց գրագիրը կսիրե եղեր... թո՛ւ անամո՛թ...

— Ներե՛, Պողոս էֆենտի,— կաղերսեր կինը, միշտ գետնամած։

— Ներելիք տեղ թողուցե՞ր ես... շուտ կորսվե, մորդ տունը դարձի՛ր... աչքս չտեսնա քեզի։

— Սրկե հունա չեմ երթար,— պատասխանեց Շաղիկ հանկարծ ոտքի ելլելով ու իր պաղարյունությունը գտած։

— Ինչ հրամմեցի՞ր...

— Սրկե հունա չեմ երթար...

— Քու գլուխդ կջախջախեմ հիմա։

— Ինչ կուզես ըրե, ծեծե, մեռցուր, տեղ մըն ալ չեմ երթար, ես իմ պատիվս ոտնակոխ չեմ ըներ։

— Սրվոր նայեցեք,— գոչեց Պողոս էֆ. սրտմտած,— դեռ պատվի խոսք կընե կոր...

— Հարկավ կընեմ, ես քեզի պես չեմ, որ իմ պատիվս ամենուն բերնին ծամոց ընել տամ...

— Քա ես ի՞նչ ըրած ունիմ, փոսթա՛լ...

— Տահա ի՞նչ պիտի ընես...

— Ամեն բան իմանալես ետքը ձայն չհանեի՞, տեղս նստեի՞։

— Թող ձայն հանեիր, բայց ոչ այս կերպով, պարապ տեղը խաղք եղար Տիրանին քովը... Ան եղածը մարդ չէր գիտեր՝ ամենուն իմացուցիր կամ կուզես կոր իմացնել։ Ըսենք որ խոսքդ մտիկ ըրի ու մորս քով դարձա, ամեն մարդ պիտի իմանա, որ քեզի կխաբեմ եղեր, Տիրանը կսիրեմ եղեր, և այլն, ի՞նչ պիտի շահիս ատկե... ձայն չհանես նե՝ ամեն բան ծածուկ կմնա, քու պատիվդ ալ չվնասվիր... ասանկ բաներ շատ ընտանիքներու մեջ կպատահին, բայց ձայնը դուրս չելլար... ատանկ փաթոտը հանելով գործ չտեսնվիր։

Պողոս էֆենտի առանց պատասխանելու մտիկ կրներ իր կնոջ պերճախոսության։ Կզգար, թե ճշմարտություններ կային ըրած դիտողություններուն մեջ և թերևս կարելի պիտի ըլլա ամեն բան ծածուկ պահել ու իր պատվին արատ մը չբերել։ Շազիկ տեսնելով իր ամուսինը լուռ կմնա՝ հասկցավ, որ խոսքերը ազդեցություն ընել կսկսին ու ատկե քաջալերված՝ շարունակեց.

— Կխոստովանիմ, որ խալթ մըն էր ըրածս, հանցավոր եմ և թե անկեղծորեն ներում կխնդրեմ ու կխոստանամ մեյ մըն ալ ասանկ բան չընել... մյուս կողմե խիղճս հանդարտ է սակայն, որովհետև մինչև այսօր պատիվդ միշտ բարձր բռնած եմ...

— Տիրանին պես մեկու մը հետ։

— Որու հետ ըլլա՛, ըլլա՛, խնդիրը ան է, որ մարդ չէ իմացած։

— Չէ իմացած մի՛... չէ իմացած մի՛,— գոչեց Պողոս էֆենտի գողահար ձայնով մը,— հապա ասիկա ի՞նչ է...

Ու գրպանեն անստորագիր նամակը առնելով նետեց իր կնոջը։

Շազիկ նամակը բացավ, կարդաց ու չկրնալով ուրիշ խոսք մը գտնել, քթին տակեն փսփսաց.

— Թշնամիի գործ է սա...

Հետո հանկարծ ավելցուց.

— Արգարը ո՞վ է...

— Ես ի՞նչ գիտնամ, երիտասարդ մը... դիմացի սենյակը կնստի կոր ու ամեն բան տեղն ի տեղոք գիտե կոր... անոր բերանը ինչպե՞ս պիտի գոցենք։

— Նամակն ալ ան գրած ըլլալու է,— ըսավ Շազիկ,— հիմա ամեն բան կհասկցվի կոր... կերևա թե այդ երիտասարդը մեզ տեսեր ու ճանչցեր է ու ելեր քեզի իմաց տվեր է...

— Կրնա ըլլալ,— պատասխանեց Պողոս էֆենտի,— բայց ի՞նչ հետևցնես ատկե։

— Պարզապես սա պիտի ըսեմ, որ պետք է երիտասարդին բերանը գոցել... այն ատեն խնդիրը կլմննա։

— Ինչպե՞ս...

— Չեմ գիտեր... թերևս դրամով։

Հիմա Պողոս էֆենտիին բարկությունը գրեթե բոլորովին անցած էր։ Կացությունը կդատեր չեզոք անձի մը պես, իբր թե խնդիրը իր վրա չդառնար։ Ամենեն շատ զինքը նեղացնող բանն էր հրապարակային գայթակղությունը, որ կրնար թե նյութապես և թե բարոյապես վնասել իրեն։ Եթե վստահ ըլլար, որ ամեն բան ծածուկ պիտի մնար, թերևս նույնիսկ ներեր իր կնոջը և մոռնար այդ դժնդակ իրողությունը։

— Վա՜յ, եթե Մարգար էֆենտիենց բերանը իյնանք,— ըսավ, դառնալով իր սևեռուն գաղափարին։

— Ուրկե՞ ուր պիտի իմանան,— պատասխանեց Շազիկ։

— Արդ, Տիրանը պիտի երթա ամեն բան պատմե։

— Երբեք, շատ ստորին արարած մը ըլլալու է, որ անանկ բան մը ընե։

— Զինքը վռնտելուս համար գուցե վրեժ լուծե։

— Բարկության միջոցին քիչ մը խիստ վարվեցար հետը, բայց վնաս չունի, անոր բերանը գոցելը դյուրին է, դուն ան գործը ինծի ձգե։

— Իսկ դեմի երիտասա՞րդը...

— Ահա՛ բուն խնդիրը։

— Արդյոք հիմա երթամ անմիջապես զինքը տեսնե՞մ...

— Կարծեմ լավագույն միջոցը այդ է։

Պողոս էֆենտի փոքրիկ վարանումե մը ետքը ըսավ իր կնոջը.

— Դուն մեյ մը ել տուն դարձիր տեսնեմ...

Շազիկ չափազանց գոհ՝ այսքան ածան ազատվելուն՝ անմիջապես սենյակեն դուրս ելավ և դեպի սանդուխը ուղղվեցավ։

Ամուսինը վայրկյան մը սպասեց. մինչև որ լսեց տան դռան բացվիլը և իր կնոջ հեռանալը. հետո սիկարեթ մը վառեց, քանի մը անգամ քաշեց և սենյակեն դուրս ելելով գնաց Արգարին սենյակին դուռը բախելու։

Բայց պատասխան չստացավ։ Կրկին բախեց, սակայն իզուր։ Դուռը բանալ փորձեց, կողպված էր։

— Մեկներ է, կերևա որ,— մտածեց։

Նույն միջոցին նշմարեց հույն կինը, որ զինքը առաջին անգամ ընդունած էր։

— Մյուսյու Աբգարը իր սենյակը չէ՞,— հարցուց։

— Ո՛չ, դուրս ելավ,— պատասխանեց կինը։

— Շատո՞նց ի վեր է...

— Քառորդ ժամ մը կա։

Պողոս էֆ. ուզեց հարցուփորձել կինը, բայց նախ հարկ սեպեց ինքզինք ներկայացնելու։

— Գիտե՞ք ես ով եմ,— հարցուց։

— Չէ՛,— պատասխանեց մյուսը,— առաջին անգամն է, որ ձեզ կտեսնեմ։

— Այս տեղեն դուրս ելլող կնոջ ամուսինն եմ։

— Գուշակեցի,— պատասխանեց կինը թեթև մը ժպտելով։

Հետո լուրջ կերպարանք մը առնելով, հարեց.

— Եթե գիտնայինք, որ գործերնիս ամուսնացած կնոջ հետ էր, երբեք սենյակը չէինք տրամադրեր իրեն, որովհետև այստեղ պատվավոր տուն մըն է և մեր տան տիրուհին չախորժիր, որ իր տանը մեջ անվայել բաներ պատահին։

— Այս սենյակը ո՞վ վարձած էր,— հարցուց Պողոս էֆ. հույն կնոջ հետ դառնալով այն սենյակը, ուր Շազիկ ու Տիրան գտնված էին։

— Ձեր տիկինը,— պատասխանեց մյուսը։

— Ի՞նչ կվճարեր վարձքը։

— Այո,— կմկմաց կինը, որ կսկսեր նեղվիլ այս հարցաքննութենեն։

— Որչափ ատենե ի վեր սենյակը բռնած էր։

— Չեմ գիտեր... ես ատանկ խնդիրներու մեջ խառնվիլ չեմ ուզեր։

Պողոս էֆենտի տեսավ կնոջ խոսելու մասին ցույց տված դժկամությունը և անոր լեզուն բանալու համար գիմեց ամենեն գործնական միջոցին։

— Առ սա ոսկին և տեղն ի տեղոջ պատասխանե քեզի ընելիք հարցումներուս,— ըսավ՝ ոսկի մը սահեցնելով կնոջ ձեռքը, մի վախնար, ինչ որ ըսես իմ քովս պիտի մնա... միայն թե կուզեմ մի քանի տեղեկություններ ստանալ։

Ոսկին իր հրաշալի ազդեցությունը գործած էր արդեն։

— Իբրև ամուսին իրավունքնիդ է ամեն բան հասկնալ, եթե ուրիշ մեկը ըլլար՝ ոչ թե մեկ ոսկիով, այլ նույնիսկ տասը ոսկիով ալ բերանս չէի բանար, ու խոսք մը չէի ըսեր, բայց քանի որ դուք կնոջ ամուսինն եք, ձեր իրավունքն է ամեն բան գիտնալ... ես ամեն բանին շիտակը կխոսիմ։

— Շատ շնորհակալ եմ, նախ ըսե թե որչափ ատենե ի վեր այս սենյակը վարձած է կինս։

— Վեց յոթը ամիս կա,— պատասխանեց կինը մտովի հաշիվ մը ընելով։

— Շաբաթը քանի՞ անգամ կինս կուգար հոս։

— Մեկ անգամ... հինգշաբթի օրերը։

— Միշտ միևնո՞ւյն մարդուն հետ։

— Այո՛...

— Միասի՞ն կուգային։

— Չէ՛, ընդհանրապես ձեր կինը առաջ կուգար և քիչ ետքն ալ մյուսը... շիտակը ըսելու համար մեծ զգուշությամբ կվարվեին... երբեք միասին դուրս չէին ելլար... այլ զատ-զատ, կպարմանամ, որ հակառակ այս զգուշություններուն դուք կրցեր եք ամեն բան իմանալ։

— Իսկ դիմացի սենյակը բնակող երիտասարդը ո՞վ է...

— Մյուսյու Աբգար է անունը։

— Գիտեմ, ի՞նչ գործ կընե։

— Կարծեմ վաճառականի քով գրագիր է...

— Ո՞ր վաճառականին քով։

— Չեմ գիտեր... արդեն դեռ նոր եկած է հոս, հազիվ ամիս մը կա։

— Ինք տեղեկություն ունե՞ր կնոջս ընթացքին մասին...

— Այո՛,— պատասխանեց կինը,— նույնիսկ անունով կճանչնար թե ձեր կինը և թե երիտասարդը և ինք մեզի ըսավ անոնց բուն անունը, անկե առաջ մենք տիկինը կճանչնայինք իբրև մատամ Մառի։ Զմոռնամ ըսելու, որ Աբգարը շատ կհետաքրքրվեր ձեր կնոջ և իր սիրահարին մասին... և ամեն հինգշաբթի ցերեկը իր սենյակը կմնար, անշուշտ զանոնք լրտեսելու համար... այդ երիտասարդը ինծի քիչ մը կասկածելի կերևա։

— Ինծի ալ այնպես,— պատասխանեց Պողոս էֆ.։

— Բայց դուք ի՞նչպես իմացաք ձեր կնոջ այս տան մեջ գտնվիլը։

— Անստորագիր նամակ մը...

— Անպատճառ մյուսյու Աբգարը գրած ըլլալու է։

— Ատանկ կերևա... ասկե զատ ինք ընդունեց զիս սենյակը և ըսավ, թե կինս իր սիրահարին հետ դիմացի սենյակն է։

— Վա՛յ անպիտան... կվայելե՞ աս ըրածը։ Պարապ տեղ ձեր հանգիստը խռովեց այսպես։

— Կփափաքեի անգամ մը այդ երիտասարդին հետ տեսնվիլ։

— Չեմ կարծեր, որ կես-գիշերին առաջ վերադառնա։

— Իսկ առտուները մինչև քանի՞ այստեղ է։

— Առտուները շատ կանուխ կմեկնի։ Եթե կուզեք, ձեր հասցեն ձգեցեք հոս, թող ինք գա ձեզ տեսնա։

Այս առաջարկը շատ լավ թվեցավ Պողոս էֆենտիին, որ թուղթի մը վրա իր հասցեն գրեց և հույն կնոջ հանձնեց։

Թաղական Խորհրդի ատենապետը այլևս գործ մը չուներ այս տան մեջ, ուստի մնաս բարով ըսելով մեկնեցավ և ուղղակի գնաց իր գրասենյակը։ Քանի մը ժամե ի վեր իր կրած հուզումները այնքան վրդոված էին զինքը, որ կարողություն չուներ գործերով զբաղելու։ Շազիկի արարքը միշտ կցցվեր իր երևակայության առջև՝ բոլոր անախորժ հետևանքներովը։

— Եթե գործը իմացվի՝ պատիվս փարայի մը պիտի ըլլա,— կմտածեր,— թաղին մեջ չպիտի կրնամ մնալ...

Այս պատահականությունն էր, որ ամենեն ավելի կխռովեր զինքը։

Եթե վստահ ըլլար, որ գործը բացարձակապես գաղտնի պիտի մնար՝ շատ հոգ չպիտի ըներ իր գլխուն եկած փորձանքին համար։

Պողոս էֆենտի, շատերու պես, անանկ համոզված էր, թե մարդուս պատիվը անարատ կմնա այնքան ատեն, որ հանրային կարծիքը առիթ չունենար զայն քննադատելու։

Ժամերով, գրասենյակին մեջ խորհեցավ գործը գաղտնի պահելու միջոցներուն վրա։

Շատ վախ չուներ հույն կնոջմե, որ իբրև օտարական անշուշտ չէր կրնար հետաքրքրվիլ իրմով և կամ պատմությունը տարածել հոս ու հոն։ Խնդիրը Աբգարն ու Տիրանը լռեցնելուն վրա էր։ Առաջինը թերևս կարենար դրամի ուժով իր կողմը շահիլ, իսկ Տիրա՞նը...

Ահավասիկ խնդիրը, իրավ է, որ Շազիկ հավատացած էր, որ իր սիրահարը լուռ պիտի մնար, բայց այս հավաստումը կատարելապես չէր վստահեցներ Պողոս էֆ-ի։

Մեկ միջոց մը կա Տիրանին լեզուն բերանը գոցելու, կմտածեր, այն է՝ զինքը դարձյալ իր պաշտոնին մեջ պահել։

Այս բանը անշուշտ շատ ծանր կուգար իրեն, և նախ՝ իբրև անկարելի նկատեց, բայց հետո կամաց-կամաց ընտելացավ այս գաղափարին։

Եթե զինքը ճամփեմ, առանց իր գործին մեջ որոշ հանցանք մը ըլլալու, խորհեցավ, ամենուն և մանավանդ իմ մյուս պաշտոնյաներուս ուշադրությունը պիտի գրավե և ով գիտե ինչ մեկնություններ պիտի տան։

Մյուս կողմե Տիրան, որպեսզի իր հավատարմության մասին կասկածներ չըլլան, թերևս պիտի ուզե բուն իրողությունը ըսել, ցույց տալու համար, թե բոլորովին տարբեր պատճառով մը ճամփված է քովեն...

Այս մտածումներով տոգորված Պողոս էֆ. մեկնեցավ գրասենյակեն և դեպի տուն դիմեց։

Երբ հասավ իր բնակարանը, առաջին անգամ կինը հարցուց իր սպասուհիին։

— Հանրմս քիչ մը անհանգիստ էր, պառկեցավ,— պատասխանեց սպասուհին,— և ըսավ, որ կերակուր չպիտի ուտե։

— Ի՞նչ ունի,— հարցուց Պողոս էֆ.։

— Գլուխը կցավի կոր...

Արդարև Շազիկ իր կրած հուզումներեն քիչ մը հիվանդացած էր և տուն հասնելեն ետքը սենյակը քաշված ու անկողին մտած էր։

Պողոս էֆենտի գոհ եղավ կնոջը այս անհանգստութենեն։ Անոր հետ երես առ երես գտնվիլը շատ ախորժելի չպիտի ըլլար այս միջոցիս։ Մանավանդ որ կվախնար թե՝ իր պաղարյունությունը չպիտի կրնար պահել ու անախորժ տեսարաններ պիտի պատահեին տան մեջ։

Առանձին ճաշեց և հետո, իր սովորության համեմատ, սկսավ օրվա թերթը աչքե անցունել։

Այս ընթերցումի մեջ թաղված էր, երբ սենյակին դուռը բացվեցավ և ներս մտավ Մկրտիչ աղա, Թաղական Խորհրդի իր պաշտոնակիցը։ Պողոս էֆենտի թերթը մեկ կողմ դրավ իր բարեկամը ողջունելու համար։

— Բարի եկաք, հրամմեցե՛ք, նստեցե՛ք,— ըսավ թիկնաթոռ մը ցույց տալով։

Մկրտիչ աղա նստավ։ Զափաղանց հուզված ու այլայլված դեմք մը ուներ, զոր վաճառականը չնշմարեց։

— Առանձի՞ն եք,— հարցուց։

— Այո,— պատասխանեց Պողոս էֆ.։

— Տիկինը հոս չէ՞։

— Հոս է, բայց քիչ մը անհանգիստ է...

Երկու բարեկամներուն միջև պահ մը լռություն տիրեց։ Մկրտիչ աղա նեղված կերպարանք մը ուներ և հետզհետե իր հուզումը կաղվելնար։ Պողոս էֆենտի նշմարեց ասիկա...

— Ի՞նչ կա,— հարցուց,— վրանիդ տարօրինակ վիճակ մը կտեսնեմ կոր...

— Այսինքն, այո՛, քիչ մը հուզված եմ,— կմկմաց։

— Ինչո՞ւ համար, մեկու մը հետ խնդի՞ր մը ունեցաք...

— Չէ՛, միայն թե... քիչ մը առաջ...

Եվ թաղականը լռեց, առանց խոսքը ամբողջացնելու։

— Ի՞նչ կա, խոսե՛ տեսնենք,— պնդեց Պողոս էֆենտի, որ չէր հասկնար իր բարեկամին վարանոտ ընթացքին պատճառը։

— Շիտակը, Պողոս էֆենտի, չեմ համարձակիր կոր...

— Ի՞նչ բանի վրա է խնդիրը։

— Խնդիրը ձեր անձին վրա է... թեև չէի ուզեր առանկ գործերու խառնվիլ, բայց մյուս կողմեն լռելն ալ անկարելի է, մանավանդ որ խոսքը ամենուն բերանն է և կզարմանամ, որ դեռ ձեր ականջը չէ հասած։

— Աստծու սիրույն, ի՞նչ է աս, խոսե՛, մենք ալ հասկնանք։

— Ճանըմ, պարզապես զրպարտություն մը, ով գիտե որ սրիկան մեջտեղ նետեր է... բայց անանկ մանրամասնություններով կպատմվի կոր...

Պողոս էֆենտի հանկարծ թեթև մը տժգունեցավ։ Զգաց թե խնդիրը ինչ բանի շուրջը կդառնա և դողահար ձայնով մը հարցուց.

— Իմ ընտանեկան պատիվի՞ս վերաբերյալ բան մըն է։

— Այո՛... ճիշտ գուշակեցիք,— պատասխանեց մյուսը։

— Պատմե տեսնենք... դարձյալ Մարգար էֆենտիի փեշին տակեն ելած բան մը պիտի ըլլա։

— Ինձի ալ անանկ կուգա,— պատասխանեց Մկրտիչ աղա։

Պողոս էֆենտի սիկարեթ մը վառեց, հատ մըն ալ իր բարեկամին տվավ և իր պաղարյունությունը պահելու համար հզոր ճիգ մը ընելով հարցուց.

— Պատմե նայինք սա լսածներդ։

— Պողոս էֆենտի, գիտցած ըլլաս, որ ես այդ ըսածներուն բնավ չհավատացի։

— Ճանըմ, ես գիտեմ ատանկ ըլլալը... դուն պատմե տեսնենք։

— Այսօր ձեր տիկինը Բերա գնա՞ց,— հարցուց Մկրտիչ աղա։

— Այո՛, գնաց,— կմկմաց Պողոս էֆենտի,— էյ ատկե ի՞նչ կելլա։

— Իբրև թե տուն մըն է եղեր, դուք ալ վրա հասեր եք... հոն ձեր պաշտոնյան կա եղեր... անունն ալ ըսին, մյուսյու Տիրան...

Պողոս էֆենտի ամբողջ մարմնով սարսռաց։ Գերմարդկային ճիգ մը ըրավ իր պաղարյունությունը պահելու համար, հետո դողահար ձայնով մը հարցուց.

— Ուրիշ ի՞նչ լսեցիր։

— Ճանըմ, կարգ մը մանրամասնություններ... իբր թե դուն նամակ մը առեր ես եղեր, ատկե իմացեր ես, թե տիկինն այսինչ տունն է մյուսյու Տիրանին հետ, հոն գացեր ես, հոն երիտասարդ մը կա եղեր Աբգար անունով, անիկա քեզ ընդուներ է և ցույց տվեր է այն սենյակը՝ ուրտեղ... տեսակ-տեսակ խոսքեր, էֆենտիմ, որ մեկը ըսեմ... նորեն կկրկնեմ, ես բնավ չհավատացի, բայց ուզեցի որ ձեզի ըսեմ, որպեսզի գիտնաք... թաղին մեջ ամենուն բերանն է։

— Բայց ո՞վ է այս բաները ըսողը։

— Ես ընկեր Կայծունիին իմացա... բայց ուրիշներն ալ նույն բանը պատմեր են... կերևա, որ խոսքը Մարգար էֆենտիին տունեն ելեր է... Այդ Աբգար ըսված երիտասարդը հոն եղեր է։

— Ո՞ւր է եղեր,— գոչեց Պողոս էֆենտի։

— Մարգար էֆենտիի տունը։ Դուն ատանկ երիտասարդ մը կճանչնա՞ս։

— Չէ՛, չեմ գիտեր կոր,— պատասխանեց Պողոս էֆենտի։

— Ես արդեն ըսի, որ ծայրե ի ծայր սուտ ըլլալու է։

— Այդ Աբգարը դուն տեսա՞ր։

— Չէ՛, բայց Կայծունին ըսավ, որ անկե լսեր է պատմությունը։ Այս աստիճան ալ սուտ կըլլա՞։

Պողոս էֆենտի ոտքի ելավ, սենյակին մեջ պահ մը շրջեցավ, սիկարեթ մը վառեց և հետո հարցուց.

— Այդ Աբգարը ի՞նչ գործ ունի եղեր Մարգար էֆենտիին տունը։

— Կարծեմ իրեն մեկ հեռավոր ազգականն է եղեր։

— Հե՞,— գոչեց Պողոս էֆենտի, այս նոր հայտնութենեն սարսափած։

— Կայծունին այնպես ըսավ... բայց տեսնենք իրա՞վ է, դուն ատանկ մարդ չես ճանչնար եղեր, ուրեմն բոլոր այս պատմությունը ոևէ հիմք չունի։

— Ա՜... չեմ ճանչնար,— պատասխանեց Պողոս էֆենտի,— բայց...

— Կտեսնեմ, որ պարապ տեղը ձեզի իրար անցուցի, եթե գիտնայի, որ այսքան պիտի հուզվիք՝ բնավ խոսք չէի բանար,— ըսավ Մկրտիչ աղա։

— Այդ Աբգարը անգամ մը չե՞նք կրնար տեսնել,— ըսավ Պողոս էֆենտի առանց իր բարեկամին խոսքերուն ուշադրություն դարձնելու։

— Իրով որ չեմ գիտեր, թե ինչպես կարելի է... բայց ի՞նչ օգուտ այդ երիտասարդը տեսնելեն։

— Այսինքն կուզեի հասկնալ, թե ի՞նչ նպատակի համար այս խոսքերը կտարածե կոր։

— Ատիկա շատ պարզ է, պարզապես թշնամության համար։

— Բայց ես այդ տղուն հետ բան մը չունիմ։

— Ըսի ձեզի, որ Մարգար էֆենտիի ազգականն է եղեր, ասիկա բավական է ամեն բան բացատրելու։

Պողոս էֆենտի չպատասխանեց։ Խորին մտածումի մեջ թաղված կթվեր։ Մկրտիչ աղա զղջացած էր գալուն և այդ խոսքերը բանալուն։ Ինք կենթադրեր, թե ըսվածները զրպարտություններ էին և թե Պողոս էֆենտի պիտի կրնար զանոնք մեկ բառով հերքել։ Իսկ հիմա կտեսներ թե, ընդհակառակը, իր բարեկամը ոչ թե կարող էր եղածը հերքելու, այլ նույնիսկ գրեթե պատմության ճշմարտությունը կհաստատեր իր հուզված ու շփոթված կերպարանքովը։

— Կերևա, որ բոլոր իմացածներս ճիշտ են,— խորհեցավ Մկրտիչ աղա և այս մտածումը զինքը խորապես վրդովեց։

Կամաց մը ոտքի ելավ և մեկնելու պատրաստվեցավ, սակայն Պողոս էֆենտի ձեռքի շարժումով մը կեցուց զինքը։

— Նստե՛, կաղաչեմ։

Թաղա՛նը նստավ։

— Կներես, շատ հուզված եմ,— ըսավ Պողոս էֆենտի,— անոր համար թերևս էվել պակաս խոսքեր ըսեմ, ուստի կխնդրեմ, որ իբրև մտերիմ և ճշմարիտ բարեկամ մեր փոխանակած խոսքերը բոլորովին ծածուկ մնան։

— Այդ մասին կատարելապես վստահ կրնաս ըլլալ իմ մասին։

— Այս միջոցիս քեզ իբրև եղբայր նկատելով է, որ կխոսիմ։

— Շնորհակալ եմ ձեր ցույց տված վստահութենեն։

— Հիմա ինծի մտիկ ըրե,— ըսավ Պողոս էֆենտի դողահար ձայնով մը,— քիչ մը առաջ ինչ որ պատմեցիր, ամենքն ալ կետ առ կետ ճիշտ են...

— Ի՞նչ կըսեք, Պողոս էֆենտի,— գոչեց Մկրտիչ աղա այս հայտնութենեն այլայլած։

— Այո՛, բարեկամ, ճիշտ են... ի՞նչ հարկ կա ուրանալու, քանի որ ամեն բան երևան ելած է արդեն։

— Երբեք չէի կրնար հավատալ, որ տիկինը...

— Ես ալ այնպես, բայց իրողությունը այս է։ Հիմա կենա դարման մը խորհիլ, գայթակղության առաջքը առնելու համար։ Իբրև անկեղծ բարեկամ ի՞նչ խորհուրդ կուտաս ինծի։

Մկրտիչ աղա անմիջապես չպատասխանեց, պահ մը խորհեցավ, հետո ըսավ.

— Խնդիրը այնքան ծանրակշիռ է, որ կարելի չէ թեթևորեն վճիռ մը տալ։

— Ես ալ նույն բանը կխորհիմ, բայց վերջապես այս վիճակին դարման մը պետք է գտնել։

— Դուք հարկավ դարման մը խորհեցաք... նախ ի՞նչ կարգադրություն պիտի ընեք ձեր կնոջ մասին։

— Մինչև հիմա այդ մասին բան մը չեմ որոշած,— պատասխանեց Պողոս էֆենտի միամտորեն։

— Արդարև դժվար կացություն,— ըսավ Մկրտիչ աղա, որ ինքն ալ կարող չէր ոևէ միջոց մը գտնել իր բարեկամը փրկելու համար այս փորձանքեն։

— Ես կուզեի խնդիրը ծածկել, բայց հիմա կտեսնամ, որ կարելի չէ այդ բանը... հազիվ քանի ժամ անցած արդեն ամեն բան իմացվեր է թաղին մեջ։

— Այո, և ասոր համար կարծեմ առաջուց կարգադրություն եղած է... ինծի անանկ կուգա, որ Աբգարը և Մարգար էֆենտին միասին պատրաստած են այս ամենը։

— Անա՞նկ կկարծես։

— Անոր տարակույս չունիմ։

— Այն ատեն անկարելի է գործը ծածկել։

— Քեզի սաչափը ըսեմ, որ Կայծունիին քով տեսա քեզի գրված նամակին օրինակը։

— Վա՜յ, շունշանորդի,— գոչեց Պողոս էֆ.,— վա՜յ, շունշանորդի, այս ի՞նչ ծուղակի մեջ ձգեցին ինծի։

— Ինծի անանկ կուգա, որ այս խնդիրը անուշ տեղը կապելու մեկ միջոց մը կա,— ըսավ Մկրտիչ աղա։

— Ո՞րն է...

— Սա Թաղական Խորհրդի պաշտոնեն ինքնաբերաբար քաշվելու ես։

— Ատիկա ի՞նչ հարաբերություն ունի այս խնդրին հետ։

— Ընդհակառակը, ամեն բան ասկե ծագում առած է,— պատասխանեց Մկրտիչ աղա, ես վստահ եմ, որ եթե այս թաղականի խնդիրը չըլլար՝ հիմա այս խոսքերը մեջտեղ չպիտի գային...

— Թերևս իրավունք ունիս,— ըսավ Պողոս էֆ.,— այս խնդրին համար Մարգար էֆ-ն ինծի թշնամի ըրի։

— Ու ասկե առաջ եկան բոլոր մյուս խնդիրները...

— Բայց եթե ես հիմա կեցած տեղս հրաժարական տամ՝ ամեն ըսվածները ընդունած պիտի ըլլամ, ատ ալ պատվիս արատ կբերե։

— Անանկ է, Պողոս էֆենտի։ Կրնաս պատրվակ մը գտնել և հրաժարիլ...

— Ինչպե՞ս։

— Օրինակի համար՝ ուրիշ թաղ մի կփոխադրվիս, այն ատեն, արդեն ըստ օրինի չես կրնար այս թաղին մեջ Թաղական Խորհրդի անդամ ըլլալ և բնականաբար կստիպվիս հրաժարական տալու։

— Ըսածդ շատ իրավացի է, բայց պետք է, որ դեռ մտածեմ այդ մասին,— պատասխանեց Պողոս էֆենտի։

Հետո երկու բարեկամները ընդ երկար խոսեցան տակավին խնդիրը կարելի եղածին չափ ի նպաստ իրենց կարգադրելու կարևորության մասին։ Կես գիշերին մոտ Մկրտիչ աղա հրաժեշտ տվավ և մեկնեցավ կրկին խոստանալով, որ կատարյալ գաղտնապահությամբ պիտի վարվի։

— Մկրտիչ աղա,— ըսավ Պողոս էֆենտի իր բարեկամը ճամփու դնելով, անձնական պատիվս է, որ ձեզի կվստահիմ կոր...

Այս տեսակ դժվարին պարագաներու մեջ է, որ ճշմարիտ բարեկամներ կճանչցվին։

— Անանկ է, Պողոս էֆենտի։

ԺԳ

Կարպիս Նիզակ էֆենտի իր տեղեկագիրը ավարտած և մատուցած էր Վարչության։ Ք. թաղի խնդիրը բավական հետաքրքրություն շարժած ըլլալով՝ թերթերու լրաբերները իրար անցած էին այդ կարևոր վավերաթուղթը ձեռք անցնելու և իրենց թերթերուն հաղորդելու համար։ Եվ սակայն տեղեկագիրը որոշված էր չհաղորդել թերթերուն մինչև «ցնոր տնօրինություն»։

Պարոն Նշանիկ, որ իմացած էր տեղեկագրին Վարչության մատուցվիլը, ուղղակի դիմեց նախ Խառն Ժողովի քարտուղարին։

— Ք. թաղի խնդրին մասին Կարպիս էֆ. Նիզակի տեղեկագիրը ընդունա՞ծ եք,— հարցուց։

— Այո՛, Վարչությունը ընդունած է,— պատասխանեց քարտուղարը։

— Մեկ օրինակը չպիտի՞ հաղորդեք մամուլին։

— Չէ՛, ժողովը որոշեց թերթերուն չհաղորդել։

— Դուք տեղեկագիրը կարդացի՞ք։

— Բնականաբար... ես չկարդամ ո՞վ պիտի կարդա։

— Գոնե իմաստը ըսեք ինծի։

— Անկարելի է... բառ մը չեմ կրնար ըսել։

— Գոնե եզրակացությունը...

— Բառ մը չեմ կրնար ըսել։

— Երկու խոսքով բացատրեցեք, գրելու համար չէ, միայն թե ես գիտնամ, պարզ հետաքրքրություն մը։

— Չըլլար, էֆենտիմ, չըլլար, բացարձակ գաղտնիք է,— պատասխանեց քարտուղարը, պարագային պահանջածեն ավելի լուրջ կերպարանք մը առնելով։

Նշանիկ հասկցավ, որ անկարելի էր ավելի պնդել, ուստի թողուց քարտուղարը և հեռացավ ժողովասրահեն։

Նրբանցքին մեջ հանդիպեցավ Գաբիկ Մուպաշիրյանի, որ բալթոյին գրպաններուն մեջ թղթերու ծրար մը լեցուցած կհառաջանար։

— Բարև, Գաբիկ էֆ.,— ըսավ պարոն Նշանիկ մոտենալով Ազգային Ժողովի քարտուղարին,— ինչպե՞ս եք։

— Աղե՛կ,— պատասխանեց Գաբիկ փոքրիկ բարև մը տալով։

— Տերեկագիրը եկե՞ր է։

— Ի՞նչ տեղեկագիր,— հարցուց Մուպաշիրյան, որ արդեն հասկցած էր թե խնդիրը ինչ բանի համար է։

— Ճանըմ, Կարպիս էֆ. Նիզակի տեղեկագիրը, Ք. թաղի խնդրի վրա...

— Այո՛, տեղեկագիրը եկած է Վարչության և Վարչությունը նկատողության առած է զայն։

— Գիտեմ, ամեն բան իմացա, միայն թե դժբախտաբար չուզեցի հանձնել մամուլին...

— Բնականաբար, սովորությունը այն է, որ այս տեղեկագիրները չեն հանձնվիր մինչև որ խնդրո առարկա եղող մարմիններուն չի հաղորդվի։

— Բայց ես արդեն իմացա տեղեկագրին եզրակացությունը։

— Կրնա ըլլալ...

— Դուն ալ իմացած ես անշուշտ։

— Սանկ մեյ մը աչքե անցուցի։

— Կերևա, որ Թաղական Խորհուրդը հանցավոր կհանե կոր...

— Վա՞յ,— հարցուց Գաբիկ Մուպաշիրյան թեթև ժպիտով մը։

— Դուն ալ այնպես չդատեցի՞ր։

— Ես շիտակը հարևանցի կերպով կարդացի... բայց դուն կերևա, որ ավելի ուշադրությամբ կարդացած ես,— պատասխանեց Ազգային Ժողովի քարտուղարը աննշմարելիորեն հեգնական շեշտով մը։

— Տեղեկագիրը չտեսա, միայն լսեցի, որ տրվեր է,— խոստովանեցավ խմբագիրը,— գոնե եզրակացությունը ըսե...

— Եզրակացությունը սա է, որ խնդիրը պարզապես թյուրիմացության մը արդյունք է։

— Ո՞ր կողմն է հանցավորը...

— Ուշադրությամբ չկարդացի,— պատասխանեց Մուպաշիրյան,— ես այդ տեսակ չնչին խնդիրներով չեմ հետաքրքրվիր... քանի մը օր սպասե, անշուշտ տեղեկագիրը մամուլին պիտի հաղորդվի, այն ատեն ամեն բան կիմանաս... մնա՛ս բարով, Մազարյան էֆենտին զիս ուզեր է, հոն պիտի երթամ։

Եվ Ազգային Ժողովի քարտուղարը հեռացավ իր երկար հասակը մեկ կողմ ծռած, Բիզայի ծանոթ աշտարակին պես։

Նշանիկ քթին տակեն մոլտաց.

— Ամեն բան գիտե, բայց ըսել չուզեր, որպեսզի վաղը իրիկուն իր թերթին մեջ առաջին անգամ ինքը տա լուրը...

Արդարև Գաբիկ էֆենտի կաշխատակցեր երեկոյան թերթի մը, որուն ազգային լուրերը կխմբագրեր։

Այն մտածումը, թե տեղեկագրին պարունակությունը ուրիշ թերթ մը առաջին անգամ պիտի տար՝ ավելի կատղեցուց «Հանրային Կարծիք»-ի խմբագիրը։

— Այս տեղեկագիրը անպատճառ պետք է ձեռք ձգեմ,— խորհեցավ։

Բայց ի՞նչպես... ահա խնդիրը։ Կրկին վերադարձավ Խորհրդարան։ Վարչության անդամները արդեն մեկնած էին, միայն քարտուղարը մնացած էր, որ թուղթերը կարգի կդներ ու մեկիկ-մեկիկ կտեղավորեր խոշոր պայուսակի մը մեջ։ Դողունի քայլերով կամաց մը մոտեցավ անոր առանց նշմարվելու։

Քարտուղարը՝ գետնին ծռած կջանար խոշոր տետրակ մը տեղավորելու պայուսակին մեջ։

Խմբագիրը, հանկարծ, սեղանին վրա նշմարեց Կարպիս էֆենտի Նիզակի տեղեկագիրը։

Սադայելական ժպիտ մը նկատվեցավ դեմքին վրա։ Շունչը կտրած և ոտքին մատերուն վրա կոխելով՝ քայլ մը առավ դեպի սեղանը և ձեռքը երկարելով տեղեկագիրը վերցուց և աճապարական ճարպիկությամբ մը սահեցուց գրպանին մեջ։ Հետո կամաց դեպի դուռ ուղղվեցավ և անհայտ եղավ։

Այս ամեն գործողությունները հազիվ երկու վայրկյան տևած էին։ Վարչության քարտուղարը բան մը չէր նկատած։

Նշանիկ հաղթականորեն անցավ նրբանցքեն, սանդուխներեն արագ-արագ վար սահեցավ և ինքվինքը եկեղեցիին բակը նետեց։

Վայրկյան մը ետքը արդեն թրամվայի ճամփան հասած էր և գրեթե վազելով կամուրջը կդիմեր։

Երբ խմբագրատուն հասավ, դեմքը կճառագայթեր ուրախությամբ։ Շիտակ գնաց իր տնօրենին մոտ, որ սեղանի մը առջև նստած՝ դրամ համրելու վրա էր։

— Նշանավոր բան մը ձեռք ձգեցի,— ըսավ թուրքերեն լեզվով։

— Ի՞նչ է, տեսնենք,— հարցուց մյուսը առանց իրար անցնելու։

— Տեղեկագիր մը, որ գաղտուկ կպահեին կոր և որու մասին չուզեցին բան մը հաղորդել մամուլին։

— Ի՞նչ տեղեկագիր է...

— Ճանըմ, Ք. Թաղի խնդրին վրա Կարպիս Նիզակ էֆ-ի տեղեկագիրը...

— Ատ է նե՝ բան մը չէ, ես ալ կարևոր բան մը կարծեցի,— պատասխանեց տնօրենը,— ինչ կարևորություն ունի Ք. Թաղի խնդիրը։

— Էֆենտի, ի՞նչ կըսես, օրվան ազգային հարցն է, մյուս թերթերուն խմբագիրները այնչափ աշխատեցան ձեռք ձգելու համար, չհաջողեցան, բայց ես կամաց մը Վարչության սեղանին վրայեն գողցա... քարտուղարին քթին տակ։

— Այդ տեսակ տեղեկագիրները փոր չեն կշտացներ,— պատասխանեց մյուսը, փաւայա պագալըմ...

— Վաղը մենք միայն լուրը պիտի տանք ամենեն առաջ։

— Կկարծե՞ս, որ թերթը ատոր համար հազար օրինակ ավելի պիտի ծախվի...

Նշանիկ տեսնելով, որ իր արարքը պետք եղածին չափ չգնահատվիր իր տնօրենին կողմե՝ դժգոհությամբ մեկնեցավ ու վեր՝ խմբագիրներուն սենյակը գնաց։

— Տղա՛ք,— գոչեց,— Կարպիս Նիզակին տեղեկագիրը ձեռք անցուցի, վաղը առաջին անգամ մենք պիտի հաղորդենք անոր պարունակությունը։

Եվ մանրամասնորեն պատմեց, թե ինչպես հաջողած էր այդ ծածուկ սահմանված վավերաթուղթը ձեռք ձգել։

— Գաբիկ Մուպաշիրյանին գլխուն պաղ ջուր մը պիտի իջնա, երբոր վաղը առտու մեր թերթին մեջ կարդա Նիզակ էֆենտիի տեղեկագիրը։

— Ինչո՞ւ համար,— հարցուց խմբագիրներեն մին։

— Որովհետև ինք գիտեր կոր անոր պարունակությունը և չուզեց ինծի հայտնել, որպեսզի վաղը իրիկուն ինք հաղորդե ամենեն առաջ։

Եվ Նշանիկ զվարթորեն տեղեկագիրը բացավ և սկսավ ուշի ուշով կարդալ։

— Ծայրե ի ծայր հրատարակելու է ասիկա,— վճռեց,— շատ կարևոր է...

— Որչա՞փ տեղ կբռնե,— հարցուց գլխավոր խմբագիրը, որուն հանձնված էր թերթին պարունակության հսկելու պաշտոնը։

— Երեք սյունակի չափ կըլլա։

— Անկարելի է ուրեմն, մեկ տեղեկագրի համար այնքան տեղ չենք կրնար զոհել։

— Բայց շատ կարևոր է։

— Չըլլա՛ր,— վճռեց մյուսը, համառորեն,— միայն իմաստը գրե, ազգային լուրերու մեջ, քսան-քսանըհինգ տողով։

Նշանիկ պնդեց, որ տեղեկագիրը ամբողջովին հրատարակվի, բայց անկարելի եղավ մյուս խմբագիրը համոզել։

Թերթին մեծ մասը շարված էր արդեն և տակավին շատ մը կարևոր լուրեր կային, որոնք անպատճառ պետք է հրատարակվեին։

Խեղճ լրաբերը ստիպվեցավ տեղի տալ այս նյութական դժվարություններուն հանդեպ և գոհացավ համառոտելով իր թանկագին տեղեկագիրը։

Հետևյալ առտու «Հանրային Կարծիք»-ի ազգային լուրերու գլուխը կկարդացվեր հետևյալը։

Ք. ԹԱՂԻՆ ԽՆԴԻՐԸ

«Ք. Թաղին ծանոթ խնդրին մասին Կարպիս Նիզակ էֆ-ի պատրաստած տեղեկագիրը երեկ մատուցվեցավ Վարչության։ Թեև կատարված քննության արդյունքը որոշված էր խիստ ծածուկ պահել մինչև խնդրին վերջնական կարգադրությունը և մամուլին ոչէ լուր չի հաղորդել Նիզակ էֆ-ի տեղեկագրին մասին՝ այսուհանդերձ մենք հաջողեցանք սույն գաղտնի տեղեկագիրը ձեռք անցնել, որով թերթերուն մեջ առաջինն ըլլալով կրնանք մեր ընթերցողներուն ծանոթություններ տալ Նիզակ էֆ-ի քննության արդյունքի նկատմամբ։

«Կարպիս Նիզակ էֆ. նախ խնդրին պատմականը ընելով դատապարտելի կգտնե ժամկոչ Վարդանը ,որ տիկին Շազիկի աթոռը բերած դրած էր եկեղեցիին մեջ, ճիշտ տիկին Սասանյանի կեցած տեղը՝ ինչ որ քաղաքավարության տարրական կանոններուն դեմ էր, այսուհանդերձ կարդարացնե ժամկոչը, քանի որ անիկա շարժած էր տիկին Շազիկի հրամանով և ոչ թե ինքնաբերաբար։ Հետո լիազոր քննիչը ձեռք կառնե այս միջադեպին հետևանքով թաղին

մեջ ծագած և հետզհետե արծարծված հակառակությունները և սա եզրակացության կհասնի թե՝ Թաղական խորհրդի ատենապետ Պողոս էֆենտի իր պաշտոնի կիրառման մեջ ոևէ թերություն չունենալով հանդերձ, իր բռնած քիչ մը կամայական ընթացքովը դժգոհություններ հարուցած է թաղին մեջ, որոնց ո՛ր աստիճան արդարացի ըլլալը չքններ Նիզակ էֆենտի, այսպիսի քննություն մը իր իրավասության սահմանեն դուրս նկատելով։ Վկայության մասին Վարչության տեղեկաբերը կըսե թե՝ ինչ-ինչ կետերու մեջ վկաները համաձայն են թեև՝ բայց ինչ-ինչ կետերու մեջ ալ իրարու կհակասեն, որով իրենց վկայութենեն բաղձալի լուսաբանություն մը կարելի չէ քաղել։ Մյուս կողմե երկու գլխավոր հոսանքները,— թաղականական և հակաթաղականական — այնքան լարված են իրարու դեմ, որ կարելի չէ ավելի երկար ատեն խնդիրը այս վիճակի մեջ թողուլ, որով Կարպիս Նիզակ էֆենտի կհրավիրե Վարչությանը, որ անհապաղ պարտ ու պատշաճը տնօրինե»։

Ք. Թաղին մեջ երբ Կարպիս Նիզակ էֆենտիի տեղեկագրին այս վերլուծումը կարդացվեցավ, ընդհանուր գոհունակություն պատճառեց։ Ամեն մարդ իր ուզածին պես կմեկներ զայն և ի նպաստ իր դատին տրված վճիռ մը կնկատեր։

— Շատ արդարացի և անաչառ կերպով դատեր է ամեն բան,— ըսավ ուսուցիչ պարոն Թորգոմ, ընկեր Սուսերյանցի, թերթը ցույց տալով։

Այս վերջինը սակայն շատ գոհ չմնաց։

— Եզրակացությունը բացորոշ չէ,— առաջարկեց։

— Եղբայր, քիչ մը դիվանագիտական լեզվով գրված է, բայց երբոր ուշադրությամբ կարդաս՝ կտեսնես, որ բոլորովին մեր կողմը բռնած է։

— Ես կփափաքեի ջախջախիչ եզրակացություն մը...

Մյուս կողմե ընկեր Կայծունի, ինքն ալ թերթը ձեռքը բռնած՝ դեմ ելլողին կըսեր.

— Կարդացի՞ք Նիզակ էֆենտիի տեղեկագիրը։

— Այո՛, կարդացի։

— Թաղական խորհուրդին խերը անիծեր է։

— Այսինքն շատ բացահայտ չէ... սակայն այո՛, կարելի է ըսել, որ կդատապարտե կոր Պողոս էֆ-ն։

— Պաշտոնական անձ մը ուրիշ կերպ չէր կրնար գրել... ստիպված է պաշտոնական լեզու գործածել։

Իրիկունը սրճարանին մեջ, ուր երկու կուսակցությանց անդամները կհավաքվեին, կրկին ընդհանուր խոսակցության առարկա եղավ Նիզակ էֆ-ի տեղեկագիրը։

Երկու կողմեն վիճաբանություններ տեղի ունեցան գրվածքին զանազան մութ կետերուն մասին։

— Եղբա՛յր, անանկ ըսել չուզեր կոր, ասանկ ըսել կուզեր կոր...

— Չէ՛, դուն սխալ կհասկնաս կոր, պարզապես ըսել կուզե կոր թե...

— Քիչ մը վարը կարդա, տես ի՞նչ կըսե կոր։

— Դուն վարինը ձգե, վերը կարդա...

— Ապուշ արարած, կարդացածդ հասկնալու կարողություն չունիս։

— Ապուշը դուն ես, ավանա՛կ, այնտեղ «ոչ թե ինքնաբերաբար» մը կա, որ շատ բան կհասկցնե կոր։

— «Իր պաշտոնին կիրառման մեջ թերություն չունի». կըսե կոր մարդը։

— Աղե՛կ, բայց «կամայական ընթացքով դժգոհություն հարուցած է» կըսե կոր...

Ու այսպես ժամերով վիճաբանությունը շարունակվեցավ։ Հանկարծ ներս մտավ պարոն Թորգոմը, շվարած՝ շփոթված կերպարանքով։ Հետազոտիչ ակնարկ մը պատցուց շուրջը, դտավ իր փնտռածը, որ ընկեր Սուսերյանցն էր և խուժեց անոր վրա ու ականջին բաներ մը փսփսաց։

— Անկարելի բան,— գոչեց «Պայքար Ակումբի» վարիչը։

— Ճիշտ է ըսածս,— պնդեց ուսուցիչը։

— Սարսափելի բան,— ավելցուց մյուսը,— պետք չէ, որ ըլլա...

— Եվ սակայն եղածը լմնցած է...

— Պետք է առաջքը առնել։

— Ալ ատենն ուշ է։

— Պետք է անկարելին փորձել... գնա՛նք դուրս։

Եվ երկուքը մեկեն դուրս ելան սրճարանեն։ Արդարև ծանրակշիռ լուր բերած էր ուսուցիչը։ Պողոս էֆենտի, Մկրտիչ աղա և Գարեգին իրենց հրաժարականը մատուցած էին թաղականի պաշտոնեն. ասիկա կերևա, որ առնչություն չուներ Նիզակ էֆենտիի տեղեկագրին հետ, քանի որ առջի օրը ղրկած էին հրաժարականները։

— Բայց դավաճանություն է ասիկա,— կպոռար Սուսերյանց դողահար ձայնով մը,— միթե կարելի՞ է այս դասալքությունը...

— Ամբողջ պատճառը կարծեմ այդ կնոջ խնդիրն է...

— Մի ստոր զրպարտության համար միթե կարելի՞ է այսպես տեղի տալ։ Եվ հետո մյուսնե՞րը... անոնք ալ կնոջ խնդի՞ր ունին։

— Չէ՛, բայց երբ ատենապետը հրաժարի, բնական է, որ մյուս երկուքը այլևս չենք կրնար պաշտոնի վրա մնալ։

— Չպետք է հրաժարվել,— գոչեց Սուսերյանց բոունցքը շարժելով։

— Եղածը լմնցած է...

— Պետք է ետ առնել այդ հրաժարականը։

— Կարելի՞ բան է։

— Կարելի կամ անկարելի՝ պետք է ետ առնել... շուտ գնանք Պողոս էֆենտիի մոտ։

Երկու թաղականները ուղղվեցան Թաղական խորհրդի ատենապետին տունը և դուռը զարկին։

Ծառա մը եկավ բանալու։

— Հիմա անպատճառ պետք է Պողոս էֆենտին տեսնենք, գնա իմաց տուր։

— Անկարելի է,— պատասխանեց ծառան պաղարյունով։

— Ի՞նչպես անկարելի է...

— Էֆենտին հոս չէ։

— Ո՞ւր գնաց։

— Տիկինին հետ այս առտու գացին և ըսին, որ քանի մը օր չպիտի գան...

Շանթի հարված մը էր այս, որ կիջնար երկու բարեկամներու գլխուն։

— Չպետք է գացած ըլլան,— գոչեց Սուսերյանց։

— Զարմանալի բան. ձեզի սո՞ւտ պիտի խոսիմ,— պատասխանեց ծառան։

— Անպայման պետք է որ զինքը տեսնենք այս րոպեին...

Ծառան այլևս չպատասխանեց։

— Քանի որ հոս չէ, ճար չկա... երթանք,— դիտել տվավ ուսուցիչը։

— Պողոս էֆենտի հրաժարվե՞ր է Թաղական խորհուրդի պաշտոնեն,— հարցուց Սուսերյանց ծառային։

— Լուր չունիմ,— պատասխանեց այս վերջինը։

Սուսերյանց սրտմտած հեռացավ պարոն Թորգոմին հետ։

— Գնանք Մկրտիչ աղայի քով,— ըսավ։

Այս վերջինը բարեբախտաբար տունն էր և երկու բարեկամները ընդունեց սիրալիր կերպով։

— Հրաժարվե՞լ եք,— գոչեց Սուսերյանց հազիվ բազմոցին վրա տեղավորված։

— Այո՛, հրաժարեցանք, փորձանքեն ազատեցանք,— պատասխանեց նախկին թաղականը գոհունակ դեմքով մը։

— Չպիտի լինի այդ բանը։

— Եղավ լմնցավ արդեն, հրաժարականները հիմա Պատրիարքին ձեռքը հասած ըլլալու են, վաղը թերևս թերթերու մեջ կարդաք։

— Պետք է ետ առնել անմիջապես։

— Տղայական խոսքեր մի՛ ընեք։

— Ինչպես տղայական խոսք,— գոչեց Սուսերյանց...

— Պողոս էֆենտի անդառնալիորեն հրաժարած է, հետևաբար մենք ալ պաշտոնի վրա չենք կրնար մնալ։

— Ի՞նչ է այս անակնկալ հրաժարականին պատճառը,— հարցուց ուսուցիչը։

— Չեմ գիտեր... կարծեմ թե Պողոս էֆենտի ուրիշ թաղ մը պիտի փոխադրվի, անանկ բան մը ըսավ երեկ առտու։

— Տիկին Շաղիկի մասին եղած տարաձայնություններուն հետևանքն է։

— Տեղեկություն չունիմ... ինչ որ գիտեմ, սա է թե՝ Պողոս էֆենտիի հրաժարականը անդառնալի է... և որպեսզի Պատրիարքը զայն չմերժե, ինքը անձամբ իր հրաժարականը պիտի տաներ և ընդունել պիտի տար։

— Բայց դասալքություն է դա,— գոչեց Սուսերյանց։

— Կրնա ըլլալ, սակայն այս այսպես է։

— Կբողոքենք հանուն թաղեցիներուն։

— Այդ ձեր գիտնալիք բանն է։

— Եվ կպահանջենք, որ հրաժարականը մերժվի։

— Չեմ կարծեր, որ այդ բանը կարելի ըլլա։

— Հանուն ժողովրդին կխոսիմ։

— Գիտեմ, սիրելիս, բայց անօգուտ է։

— Քանի որ Պողոս էֆենտի թաղին մեջ կուսակցության մը

պետ հանդիսացավ, քանի որ մինչև հիմա պայքար մղեց՝ չի կրնար հրաժարիլ առանց նախապես մեր կամքը առնելու...

— Եվ սակայն հրաժարեցավ։

— Մենք չեղյալ կնկատենք թե անոր և թե ձեր հրաժարականը։

— Շնորհակալ եմ ձեր մեզ հանդեպ ցույց տված համակրութենեն, բայց...

— Հանուն ժողովրդին կպահանջենք, որ վաղն իսկ ձեր պաշտոնը շարունակեք։

— Ատիկա չըլլար...

— Հակառակ պարագային ձեզ բռնի պիտի տանինք Խորհրդարան...

— Կխնդրեմ, պարոն Սուսերյանց, տղայական խոսքեր մի ընեք։

— Ժողովրդին կամքը հարգեցեք...

— Մեր հրաժարականները անդառնալի են, ալ չխոսինք այդ մասին։

Հակառակ այս բացորոշ հայտարարության՝ ընկեր Սուսերյանց շարունակեց իր բողոքներն ու պահանջները հանուն ժողովրդին, հասարակական շահերուն, պրոլետարիատ դասակարգին, և այլն։ Մկրտիչ աղա անդրդվելի մնաց։

— Վաղը կտեսնվինք,— ըսավ վերջապես ընկեր Սուսերյանց ոտքի ելլելով։

Հետևյալ առտու «Հանրային Կարծիք»-ը սա լուրը կուտար.

«Առջի օր Ք. Թաղի Թաղ. Խորհրդի ատենապետ Պողոս էֆենտի Ս. Պատրիարք Հոր ներկայանալով անձամբ իր հրաժարականը մատույց ատենապետի պաշտոնին։ Խորհուրդի երկու մյուս անդամներն ալ իրենց գրավոր հրաժարականը ղրկած էին։

«Կլսենք թե սույն հրաժարականները պիտի ընդունվին և անմիջապես Նոր Թաղական Խորհուրդի ընտրության հրահանգ պիտի տրվի։ Այս կերպով կարելի պիտի ըլլա վերջ մը դնել Ք. Թաղի խնդրին, որ բավական ժամանակ է վեր կզբաղեցնե Վարչությունը»։

Այս անգամ Մարգար էֆ-ի հաղթանակը վճռական էր և իր կուսակիցներուն ուրախությունը չափ չուներ։ Ընկեր Կայծոնի պահ մը խորհեցավ գիշերը լուսազարդել Շանթ լսարանը, բայց լսարանին նյութական անձկությունը չթույլատրեց այդպիսի շռայլություն մը։

Մյուս կողմե հակառակ կուսակցությունը զինաթափ չէր եղած, ընդհակառակը այս ձախողանքը նոր կրակով մը զինած էր զինքը։

— Նոր ընտրություն,— կգոչեր ընկեր Սուսերյանց,— թող կատարվի նոր ընտրությունը և պիտի տեսնենք թե ո՞ր կողմն է զորավորը... ջախջախիչ մեծամասնությամբ պիտի վերընտրենք Պողոս էֆենտին։

— Այս անգամ Մարգար էֆենտի ու իր մարդիկը պիտի ընտրենք,— կպատասխանեին հակառակ կողմեն, Պողոս էֆենտիին պես խաղք եղած մարդ մը թաղական չկրնար ըլլալ, ատիկա պատիվ չբերեր մեր թաղին։

Պարոն Թորգոմ թեև ինքն ալ կհոխորտար, բայց խեղճը սկսած էր մտմտալ։

Այս պայքարին մեջ շատ որոշ դիրք մը բռնած էր Պողոս էֆ-ի կողքին ու Մարգար էֆենտիի դեմ։ Եթե երբեք վաճառականը թաղական ընտրվեր՝ բանը բուրդ էր, որովհետև վստահ էր, որ Մարգար էֆ. երբեք չպիտի ներեր ու առաջին գործը պիտի ըլլար զինքը դուրս նետել դպրոցեն, ուր տարիներե ի վեր կպաշտոնավարեր։

ԺԴ

— Եղբա՛յր, Պողոս էֆենտիին անունը ձեր ցանկեն վերցուցեք,— պոռաց Մանուկ աղա ուսուցչին՝ երբ այս վերջինը տասներորդ անգամն ըլլալով եկած էր անոր թեկնածությունը պաշտպանելու։

— Ինչո՞ւ համար...

— Որովհետև ընտրելի չկրնար ըլլալ։

— Պատճառն ի՞նչ է։

— Մեր թաղեն հեռացած է՝ անոր համար։

— Անանկ բան չի կա. մարդը պարզապես օդափոխության գացած է, մեկ երկու ամիսեն պիտի վերադառնա...

— Տունը վարձու տվեր է,— դիտել տվավ Մանուկ աղա,— վերադառնալու միտք ունեցող մարդը իր անձնական տունը վարձու կուտա՞։

Այս անակնկալ հայտարարությունը շփոթեց Թորգոմը։

— Սխալ ըլլալու է,— կմկմաց։

— Այս առտու թելլալ Հակոբ աղայեն իմացա... հինգ օրե

ի վեր պայմանագրությունը կնքեր է արդեն... Հույն վաճառական մրն է բռնողը։

Այս մանրամասնությունները ալ ավելի շփոթեցին խեղճ ուսուցիչը։

Եթե լուր տարածվեր, թաղին մեջ շատ գեշ ազդեցություն հառաջ պիտի բերեր։

Եվ ցավալին այն է, որ թելլալ Հակոբ աղա ընդդիմադիր կուսակցության կապտկաներ։

— Քանի որ այս թաղին մեջ տուն ունի՝ Պողոս էֆ. միշտ թաղեցի կհամարվի և հետևաբար ընտրելի է,— առարկեց Թորգոմ։

— Անանկ չէ՛, էֆենտի,— պատասխանեց Մանուկ աղա,— մարդ զանազան թաղերու մեջ տուներ կրնա ունենալ, այդ ամեն թաղին թաղեցի՞ն կըլլա... բնականաբար ոչ. թաղեցի ըլլալու համար այդ թաղին մեջ բնակելու է... Սահմանադրությունը բացորոշ է այդ մասին։ Դուն տակավին երիտասարդ ես, այս բաներուն խելքդ չհասնիր, բայց ես այս գործերուն մեջ ծերացեր եմ, պարապ տեղը Պողոս էֆենտիին քվե մի տաք, նույնիսկ եթե ընտրվի՝ կարելի չէ որ թաղական ըլլա...

Ուսուցիչը մտածկոտ կերպարանքով մը հեռացավ և գնաց ընկեր Սուսերյանցը գտնելու։

Այս վերջինը, ուրիշ սրճարանի մը մեջ, ոտքի ելած կճառեր.

— Պարոննե՛ր,— կպոռար,— այս թաղային ընտրությունը սովորական ընտրություն մը չէ, այլ դասակարգային պայքար մը իշխող օլիկարխիայի և ժողովրդական մասսաներու միջև... կապիտալիզմի և պրոլետարիատի միջև։ Մեկ կողմեն կտեսնենք Մարգար էֆենտի Սասանյանը ոսկիներու դեզին կոթնած՝ որ կփորձե ոտնակոխ ընել ժողովրդի իրավունքը, մյուս կողմե, Պողոսը, որ հանակառակ իր բուրժուազիական կուսակցության, գիտակից երիտասարդության՝ ընչազուրկ դասակարգին շահերը կպաշտպանե։ Վարանում կարելի չէ, ամեն գիտակից թաղեցի պետք է իր քվեն տա մեր ցանկին, որուն մեջ գտնվող անունները կներկայացնեն բուն ժողովրդական տարրը...

— Քու անունդ ալ ցանկին մեջ է, անոր համար այդքան իրար անցեր ես,— պոռաց ներկաներեն մին։

— Մենք Թաղական Խորհուրդին մեջ կուսակցական մարդ չենք ուզեր,— գոչեց ուրիշ մը։

— Լռեցե՛ք, թողե՛ք ընկեր Սուսերյանցը խոսի,— ըսավ ուրիշ մը,— հետո եթե դիտողություն ունիս, կպատասխանես։

Այս ընդհանուր խառնաշփոթության մեջ ընկեր Սուսերյանց իր խոսքը առաջ տարավ, մերթ ընդմիջվելով, մերթ ծափահարվելով։

Հազիվ թե խոսքը ավարտած էր՝ պարոն Թորգոմ բազմությունը ճեղքելով մոտեցավ ճառախոսին քով և կամաց մը ըսավ ականջին։

— Դուրս ելնենք, կարևոր խոսք ունիմ։

— Ի՞նչ կա,— հարցուց մյուսը։

— Շատ կարևոր տեղեկություն մը...

Երկուսը միասին փողոց ելան։

— Դարձյալ ի՞նչ պատահեցավ,— հարցուց ընկեր Սուսերյանց ուսուցչին շփոթած կերպարանքը դիտելով։

— Սոսկալի բան մը...

— Ի՞նչ, խոսիր շուտ։

— Կարելի չէ Պողոս էֆենտիին քվե տալ։

— Ինչպե՞ս,— գոչեց Սուսերյանց աչքերը խոշոր-խոշոր բանալով,— ի՞նչ ըսիր...

— Կըսեմ թե անօգուտ է Պողոս էֆենտիին համար քվե հավաքել։

— Ի՞նչ պատճառավ, խնդրեմ...

— Որովհետև ընտրելի չկրնար ըլլալ։

— Հիմարացա՞ր հանկարծ,— գոչեց Սուսերյանց իր բարեկամին երեսը նայելով,— կատա՞կ կընես...

— Շատ լուրջ կխոսիմ...

Եվ ուսուցիչը հևիհև, ընկերոջ հաղորդեց ինչ որ լսած էր Մանուկ աղայեն։

— Չպետք է լինի այդ բանը,— վճռեց Սուսերյանց ըստ իր սովորության։

— Ի՞նչ բան պետք չէ ըլլա,— հարցուց Թորգոմ զարմացած։

— Չպետք է որ Պողոս էֆենտին հեռանա թաղեն...

— Բայց վերջապես չենք կրնար ստիպել զինքը, որ անպատճառ այս թաղին մեջ բնակի։

— Ինչպե՞ս չենք կրնար ստիպել... իհարկե կստիպենք և ինք պետք է որ հպատակի իր ընտրողներու պահանջմունքին։

— Քանի որ տունը ուրիշին վարձու տված է, այդ կնշանակե որ հաստատապես որոշած է հեռանալ մեր թաղեն։

— Դա անհնար բան է... գնանք լսարան, մեր ընկերներուն հետ խորհրդակցելու...

Մինչ ընկեր Սուսերյանց և պարոն Թորգոմ այս անակնկալ դժվարությունը հարթելու կաշխատեին, անդին Մարգար էֆենտիի կուսակիցները մեծ եռանդով կգործեին՝ իրենց ընտրելիներու հաջողության համար։

Վաճառականը բացեիբաց կաշխատեր իր թեկնածությունը հաջողեցնելու և ասոր համար նույնիսկ նյութական զոհողություններե խույս չէր տար։

Միայն թե պայման դրած էր, որ իր անունը բնավ չհիշվեր և ինքն ալ արտաքուստ այնպես ցույց կուտար՝ թե ինք միտքը դրած է թաղականի պաշտոն չընդունելու։

— Տղաքը շատ ետևես ինկած են, բայց ես չեմ ուզեր թաղական ըլլալ,— կըսեր իր ծանոթներուն։

— Ինչո՞ւ համար, Մարգար էֆենտի՛։

— Ճանըմ, ես անձնական այնքան գործեր ունիմ, որ ատանկ բաներով չեմ կրնար զբաղիլ։

— Իբրև ազգ պետք չէ որ մերժես։

— Ես իմ պարտականությունս ուրիշ կերպով կկատարեմ կոր արդեն։

Այս խոսքերը սակայն ոչ ոք կարող էր համոզել։

— Մենք ատանկ բան մտիկ չենք ըներ, մենք մեր քվեները քեզի պիտի տանք,— կըսեին իր կուսակիցները։

— Շնորհակալ եմ, բայց...

— Բայց մայց չի կա, քեզի թե՛ թաղական, թե՛ ատենապետ պիտի ընենք։

Մարգար էֆենտի միայն իր ընտրության չէր աշխատեր, այլ նաև ինք որոշած էր բոլոր թեկնածուները, որոնց մեջ էին նախ Միհրանիկ էֆ-ն, հետո Մանուկ աղան, պարոն Կայծունի և Մելիտոս էֆենտի։

Այս վերջինը ճարպարապետ մըն էր և մեկ քանի անգամ արդեն վարած էր թաղականի պաշտոնը։ Քիչ մը շահամոլ և անվստահելի մեկը կհամարվեր և թաղին մեջ լավ համբավ մը չուներ, բայց Մարգար էֆ. անպատճառ ուզած էր, որ անոր անունն ալ ցանկին մեջ գտնվի, որովհետև Մելիտոս էֆ. մտերիմ բարեկամն էր վաճառականին ու անոր հանապազօրյա խնկարկուն։

Մարգար էֆ. հեռվեն կհսկեր պայքարին վրա և ուղղություն կուտար անոր։

Շաբաթը մեկ քանի գիշեր ընտրական պայքարին գլխավոր գործիչները իր բնակարանը կհավաքվեին և իրենց գործունեության արդյունքը իրարու կհաղորդեին։

Մինչև հիմա ձեռք բերված արդյունքեն այնպես կերևար, որ Մարգար էֆ. ջախջախիչ մեծամասնությամբ մը պիտի ընտրվեր, բայց վերջին ժամու անակնկալե մը կվախեր, որովհետև հակառակորդ կուսակցությունն ալ իր հաջողության վրա բացարձակ ապահովություն ունենալ կթվեր։

Այս պատճառավ ահա երբ Մանուկ աղա Պողոս էֆ-ին թաղեն հեռանալու լուրը բերավ Մարգար էֆ-ին՝ այս վերջնույն դեմքը ուրախությամբ ճառագայթեց։

— Այս լուրը շատ կարևոր է,— գոչեց։

— Ես ալ անանկ կկարծեմ,— ըսավ Մանուկ աղա։

— Պետք է ամեն կողմ տարածել։

— Ես արդեն դեմս ելլողին ըսի։

— Ատիկա բավական չէ, թռուցիկ մը հանելու և թաղին մեջ ցրվելու է,— դիտել տվավ Մարգար էֆենտի։

— Ատիկա շատ աղեկ խելք ըրիր,— գոչեց Մելիտոս էֆենտի։

— Անմիջապես պետք է որ ընենք ասիկա,— ըսավ վաճառականը։

— Ընդհակառակը,— պատասխանեց Մանուկ աղա,— թռուցիկները պատրաստելու՝ բայց անմիջապես մեջտեղ հանելու չէ, այլ ընտրութենեն մեկ երկու օր առաջ, որպեսզի մյուսները ժամանակ չունենան այդ անակնկալ արգելքին դեմ խորհելու...

— Բայց արդեն լուրը տարածվեր է։

— Այո՛, սակայն բերնեբերան խոսված է միայն, մինչդեռ եթե թռուցիկի ձևով տարածվի, ավելի կարևորություն կառնե։

Մանուկ աղա ազգային գործերու հմուտ՝ փորձառու մարդու համբավ մը ուներ, ուստի իր այս դիտողությունը լուրջ նկատողության առնվեցավ։

— Իրավունք ունիս, անանկ ընելու է,— հաստատեց Մարգար էֆենտի։

— Այո՛, այո՛, անանկ ընելու է,— կրկնեց Մելիտոս էֆ. ձայնակցած ըլլալու համար վաճառականին։

— Թերթերու մեջ եթե մեր թեկնածուներուն համար բան մը գրել տանք, լավ կըլլա,— ըսավ Մանուկ աղա։

— Ատիկա ինծի ձգեցեք, ես ընել կուտամ,— պատասխանեց վաճառականը։

Եվ արդարև հետևյալ օրը լուր ղրկելով իր գրասենյակը հրավիրեց պարոն Նշանիկը։ Երիտասարդ խմբագիրը արդեն անհամբեր կսպասեր այս հրավերին։ Գիտեր, որ Ք. թաղի ընտրական պայքարեն հաց պիտի ելլե իրեն։ Անմիջապես փութաց իր հարուստ աղգականին գրասենյակը, ուր Մարգար էֆ. սիրալիր ընդունելություն մը ըրավ իրեն։

— Վա՜յ, Նշանիկ, եկուր նայինք, ինտո՞ր ես, աղե՞կ ես,— գոչեց իր մոտը աթոռ մը ցույց տալով,— նստե տեսնենք... ինչո՞ւ մեզի չես գար կոր...

— Մարգար էֆենտի, այս միջոցիս շատ զբաղած եմ, թերթին ամեն գործերը իմ վրաս մնացած են։

— Գիշերը գործ չունիս ա...

— Գիշերային աշխատանք ալ ունիմ։

— Ըսել է հիմա շատ դրամ կշահիս կոր... գոնե քիչ մը խնայողություն ըրե, վաստակածդ անմիջապես մի ծախսեր, եթե դուն չես կրնար պահել նե՝ ինծի բեր, ես կպահեմ։

— Էֆենտի, ի՞նչ կըսեք, մեր շահածը ի՞նչ է, որ ինչ պիտի ավելցնեմ, առածս հազիվհազ կբավե կոր ապրելու, ան ալ հազար դժվարությամբ... եթե երբեմն բացեն շահ մը չընենք՝ բոլորովին անտանելի պիտի ըլլա վիճակնիս։

Այս հուսախաբությենեն ետքը վաճառականը ըսավ.

— Գիտե՞ս քեզ ինչու համար կանչել տվի։

— Չեմ գիտեր,— պատասխանեց խմբագիրը, թեև կատարելապես գուշակած էր խնդիրը։

— Մեկ քանի բարեկամներ կուզեն կոր որ սա մեր թաղին թաղական ընտրության վրա բաներ մը գրվի... ես ատանկ բաներու չեմ խառնվիր, բայց որովհետև գիտեն թե քեզ կճանչնամ՝ ատոր համար ինծի հանձնեցին այս գործը...

— Ի՞նչ է գրվելիքը։

— Ճաներմ, կարգ մը ոչինչ մարդիկ իբրև ընտրելի մեջտեղ եչեր են, իրենց համար կուսակիցներ ալ գտեր են, պարապ տեղը թաղը տակնուվրա կդարձնեն կոր... ես ատանկ բաներու չեմ խառնվիր, բայց նույն թաղին մեջ կգտնվիմ։

— Ասկե զատ կարծեմ դուք ալ ընտրելի եք...

— Այո՛, հակառակ կամքիս իմ անունս ալ դրեր են ցանկին մեջ, բայց այդ ցանկը տարբեր, մեր ցանկը շնորհքով է...

— Մյուս ցանկին մեջ որո՞նք կան...

— Պողոս էֆենտին բռներ դրեր են... նախորդ ատենապետը, մարդը գիտես ա, խայտառակությամբ ստիպվեցավ հրաժարելու...

— Գիտեմ, տիկին Շաղիկին պատմության կակնարկեք։

— Արդեն չգիտցող չմնա՞ց... անանկ մարդը կրնա՞ նորեն թաղական ըլլալ թաղին մեջ... հետո բռներ ցանկին մեջ դրեր են նաև Գարեգինը, սա վռնտված գրագիրը...

— Գիտեմ, կճանչնամ,— ընդմիջեց խմբագիրը։

— Անկե ետքը Սուսերյանցը... եղբայր, Սուսերյանցին պես մարդը թաղական կրնա՞ ըլլալ, մարդը կատարյալ խենթ է... թաղական խորհուրդը հիմարանո՞ց է, ի՞նչ է...

— Իրավունք ունիք,— ըսավ խմբագիրը,— այդ տեսակ կուսակցականներ պետք չէ, որ թաղական խորհրդի անդամ ըլլան...

— Ճանրմ, պարոն Կայծունին ալ կուսակցական է, բայց շնորհքով տղա է, մյուսին պես փախուկ չէ...

— Կարծեմ ձեր ցանկին մեջ կգտնվի։

— Այո՛, դրեր են, ես շատ համամիտ չէի, բայց ինչ որ է... ասկե զատ Կայծունին խելոք տղա է, օգտակար կրնա ըլլալ, աշխատող է, ուղղամիտ է, պարկեշտ է, աղեկ ալ ուսմունք ունի։ Հիմա խնդիրը անոր վրա չէ, սա մյուսներու մասին բան մը գրելու է...

— Ի՞նչ տեսակ բան,— հարցուց խմբագիրը։

— Իրենց ինչ տեսակ մարդ ըլլալնին հասկցնելու է և ըսելու է, որ բոլոր թաղեցիները դեմ են այդ մարդոց ընտրվելուն...

— Շատ աղեկ, բայց խնդիր մը կա,— կմկմաց խմբագիրը,— ձեզի հաճույք կամ ծառայություն մատուցանելու համար պատրաստ եմ գրելու ինչ որ ուզեք, միայն թե Պողոս էֆենտի մեր թերթին տիրոջ բարեկամ է, ատոր համար կվախնամ, որ դժվարություն հարուցանե... կամ թե բան մը պահանջե...

— Բնական է, որ բան մը պիտի վճարենք, ատիկա խնդիր չէ,— ընդմիջեց վաճառականը։

— Այն ատեն գործը կդյուրանա։

— Հիմակ ու հիմա առ սա երկու ոսկին հետո եթե պետք ըլլա, կրկին կուտանք։

Պարոն Նշանիկ փութաց ոսկիները գրպանելու։

— Միայն թե չեմ ուզեր, որ ոչ ոք իմանա, թե ինչ դրամ առած եք,— ըսավ Մարգար էֆենտի,— ատիկա բոլորովին ծածուկ մնալու է։

— Այդ մասին բացարձակապես ապահով եղեք, մարդ չիմանար։

— Վաղը առտուն ինչալլահ կկարդանք գրվածքը։

— Անշուշտ, հիմա խմբագրատուն երթալուս պես պիտի գրեմ։

— Աղվոր բան մը ըլլա...

— Ձեր փափաքածեն ավելի պիտի ըլլա։

— Ջորավոր բան մը։

— Վաղը առտու պիտի տեսնաք։

— Հարվածներդ մի՛ խնայեր։

Եվ վաճառականը ճամփու դրավ խմբագիրը՝ ըսելով.

— Ատեն-ատեն հանդիպե՛ ինծի։

Պարոն Նշանիկ երբ գրասենյակեն դուրս ելավ, մատները բնազդաբար գրպանը տարավ և շոշափեց երկու ոսկիները, կարծես կվախնար, որ անհայտ եղած ըլլային։ Այդ ապահովիչ շոշափումը զվարթացուց իր դեմքն ու միանգամայն մտածումները։

Ահա գեղեցիկ օր մը, խորհեցավ, որ կխոստանա գեղեցիկ գիշերով մը ավարտելու։

Հետևյալ առտու վաճառականը երբ «Հանրային Կարծիք»-ը ձեռք առավ՝ անոր մեջ գոհունակությամբ կարդաց հետևյալը։

«Այս կիրակի Ք. թաղին մեջ տեղի կունենա Թաղական խորհրդի ընտրությունը։ Ընտրողներու ստվար մեծամասնությունը արդեն իսկ պատրաստած է իր ընտրելիներուն ցանկը, որուն գլուխը կգտնվի ծանոթ վաճառական և դրամատեր Մարգար էֆ. Սասանյան, որ թեև նախապես մերժած է այդպիսի թեկնածություն մը, բայց ի վերջո տեղի տված է թաղեցիներու թախանձագին ստիպումներուն վրա։ Մյուս ընտրելիներն են՝ Մանուկ էֆ. Ճելեպյան՝ նախորդ Թաղ. խորհրդի անդամ, իր փորձառությամբը և պատվավորությամբը թաղեցիներուն համակրությունը գրաված, Տոսախյան Միհրանիկ էֆ.՝ առևտրական հրապարակին վրա ծանոթ, զարգացյալ երիտասարդ մը, ճարտարապետ Մելիտոս էֆենտի, ոսկերիչ Գարեգին էֆենտի Սոմալյան, ժողովրդական սիրված դեմք մը, «Պայքար Լսարանի» հիմնադիր պարոն Կայծունի, և նախորդ Թաղ. խորհրդի անդամներեն Ռափիկ էֆ.։ Թաղին մեկ անն-

նշան փոքրամասնությունն ալ ընտրելիներու ցանկ մը պատրաստած է, որուն հաջողության համար շատ ջանքեր կթափե։ Այս ցանկին մեջ դրված է նախորդ Թաղ. խորհրդի ատենապետ Պողոս էֆենտի Ծորակյանի անունը, մինչ հիշյալը, ինչպես հայտնի է, իր կամայական պաշտոնավարությամբ թաղը երկարատև հուզումներու մատնած է, և ի վերջո ստիպված է հրաժարիլ, կարգ մը ներքին ու անձնական պատճառներով, որոնց վրա չենք ուզեր ծանրանալ։ Բաց աստի, Պողոս էֆ. այժմ իր բնակությունը հաստատած է ուրիշ թաղի մը մեջ, որով չկրնար ընտրելի ըլլալ Ք. թաղի Թաղ. խորհրդին։ Փոքրամասնության մյուս ընտրելիները թաղեցիներուն վստահություն և հարգանք ներշնչելե զուրկ են և հաջողության ոևէ հավանականություն չեն ներկայացներ»։

Կարելի՞ է երևակայել այս գրության առաջ բերած փոթորիկը Ք. թաղին մեջ։ Երբ պարոն Թորգոմ սարսափած, սասանած, մեկ քանի ընկերներու հետ «Շանթ Ակումբը» եկավ, այս վերջինը միակ խոսք մը արտասանեց.

— Պետք է շարժիլ...

Շեշտը, որով այս խոսքը ըսավ՝ ցույց կուտար, թե շատ մեծ էր անոր նշանակությունը։

— Տրամադրելի բոլոր ուժերը պետք է իրիկունը հավաքվին այստեղ,— հրամայեց իր շուրջիններուն։

Հետո դառնալով ուսուցչին՝ ավելցուց։

— Մենք գնանք Պողոս էֆ-ի մոտ... մեր թշնամիների այս նոր փրովոքացիան չպետք է անպատիժ մնա։

Այս կարճ՝ բայց ազդու խոսքերը սրտապնդեցին ընկերներուն։ Ուսուցիչը հիացմունքով կդիտեր Սուսերյանցը, որ ամենեն դժընդակ պարագաներուն մեջ իսկ իր պաղարյունությունը կպահեր ու կորովը չէր կորսնցներ։

Սուսերյանց իսկույն գործադրության դրավ Պողոս էֆ-ին տեսնելու իր խորհուրդը և պարոն Թորգոմի հետ գնաց անոր գրասենյակը։

Վաճառականը զիրենք ընդունեց քաղաքավար, բայց պաղ կերպով։ Իր անունին շուրջ մղված պայքարը անհաճո դառնալ սկսած էր իրեն։

— Կարդացի՞ք այս օրվան «Հանրային Կարծիք»-ը,— հարցուց Սուսերյանց երբ աթոռին վրա տեղավորվեցավ։

— Այո՛, կարդացի,— պատասխանեց Պողոս էֆենտի չոր կերպով։

— Ի՞նչ կխորհիք այս մասին...

— Կխորհիմ, թե հանցանքը ձերինն է։

— Մերի՞նը,— գոչեց Սուսերյանց զարմացած։

— Բնականաբար, եթե դուք իմ անունս մեջտեղ չդնեիք, այս բանը չէր գրվեր... ես թողուցի հեռացա թաղեն, որպեսզի գլուխս հանգիստ ըլլա՝ դուք տակավին օձիքս թող չեք տար։

— Իբրև կուսակցության գլուխ՝ պետք է մնաք պատնեշին վրա...

— Ո՞ր պատնեշը, ի՞նչ պատնեշ,— գոչեց Պողոս էֆենտի անհամբեր։

— Ընտրական պայքարի պատնեշին վրա,— որոշեց Սուսերյանց։

Վաճառականը սրտմտած ոտքի ելավ ու պոռաց.

— Աղբար, չեմ ուզեր, ես թաղական չպիտի ըլլամ... աստծու սիրուն հանգիստ թողուցեք ինծի, ալ կօգտե ինչ որ քաշեցի... գիտցած եղեք, որ եթե ընտրվիմ՝ անմիջապես պիտի հրաժարիմ... ես ալ քաշվեցա այդ տեսակ գործերեն, Թաղական խորհրդին ալ խերը անիծեմ, ապրին ալ... ես հայ չեմ... հասկցա՞ք... զարմանալի բան, պայքար պիտի մղեք՝ մղեցեք, բայց գիս մեջը մի խառնեք... Պողոսեն զատ թաղին մեջ ուրիշ մարդ չկա՞...

— Մեզի համար ձեր անձը բնավ նշանակություն չունի,— բացատրեց Սուսերյանց,— մենք անձնականությամբ չենք շահագրգռվիր, մեր պայքարը զուտ սկզբունքային, գաղափարական է։

— Ավելի լավ, ուրեմն օձիքս ձգեցե՛ք...

— Երբեք մենք ձեր օձիքը չենք բռնած։

— Հապա ի՞նչ է այս ըրածնիդ։

— Մենք սկզբունքային հողի վրա կկռվինք, և որովհետև պարագաներու բերումով ձեր անձը այդ սկզբունքը կներկայացնի, մենք պետք ունինք ձեր անձին— ոչ թե իբր Պողոս էֆենտի Սորակյան, այլ իբրև սկզբունքային էություն, իբրև «անթիթե»...

— Անթիթե մանթիթե չեմ գիտեր, իմ խելքս ատանկ բաներու չհասնիր,— պոռաց վաճառականը,— իմ անունս մեջ մի խառնեք «վեհսելամ»... չեմ ուզեր, չեմ ուզեր, չեմ ուզեր...

— Կրնաք ուզել կամ չուզել, դա նշանակություն չունի,— պատասխանեց Սուսերյանց պաղարյունով,— ձեր մեջ մենք կտեսնենք

երկու որոշ անձ, անհատական մարդը, որ մեզ բնավ չի շահագրգռեր և հանրային հասարակական մարդը։ Անհատական մարդը կրնա իր որոշ հայացքը ունենալ, մենք կհարգենք կարծիքի ու գաղափարի ազատությունը, բայց հանրային մարդը իր կուսակցությանը կպատկանի, նա որպես հավաքական մարմնի մասնիկ՝ չի կրնար իր կուսակցության հայեցակետը չունենալ...

— Ես կուսակցական չեմ, ատ ուրկե՞ հանեցիր... ի՞նչ կուսակցություն է ըսածդ...

— Ինչ որ է, Պողոս էֆենտի, մենք ձեզ կուսակցական կնկատենք և ասոր համար կուզենք ձեր պատիվը բարձր պահել։ Այս նպատակով ահա հոդված մը պատրաստած ենք, որ անպատճառ թերթի մեջ հրատարակել պիտի տանք։

— Ո՞ր թերթին մեջ պիտի տպեք ձեր պատասխանը,— հարցուց։

— Դեռ չենք որոշած,— պատասխանեց Սուսերյանց,— նախ պետք է որ թերթին տրվելիք գումարը ապահովենք։

— Ատիկա դյուրին է,— պատասխանեց Պողոս էֆենտի,— ես պետք եղածը կվճարեմ, պայմանավ, որ բնավ մեկը չիմանա... չեմ ուզեր, որ ասկե ետք իմ անունս խառնվի այդ թեսակ թաղական խնդիրներու... իսկ դրամը տալուս պատճառը այն է, որ այդ անամոթները չկարծեն, թե իրենց պատասխան տվող չկա...

Պողոս էֆենտի ժիլետին գրպանը խառնեց, երեք ոսկի հանեց, Սուսերյանցին տվավ և ըսավ.

— Կարծեմ ասիկա բավական է։

— Անպայման,— պատասխանեց մյուսը։

— Սանկ զորավոր բան մը գրել տվեք։

— Ջախջախիչ... միայն թե այսչափով խնդիրը չի լմննար, մենք ուրիշ «միսիա»-ով մը եկած ենք հոս...

— Ինչո՞վ եկած եք,— հարցուց Պողոս էֆ., չկրնալով հասկընալ Սուսերյանցի ըսածը։

— Այսինքն մասնավոր պաշտոնով մը,— թարգմանեց պարոն Թորգոմ։

— Ի՞նչ պաշտոն է այդ...

— Հանուն թաղեցիներուն եկած ենք պահանջելու, որ վերադառնաք ձեր թաղը,— ըսավ Սուսերյանց։

— Այդ անկարելի է...

— Անպայման պետք է վերադառնաք։

— Պարապ տեղը մի հոգնիք, երդում ըրած եմ այդ թաղը ոտք չկոխել։ Ասկե զատ բժիշկն ալ արգիլած է արդեն, Ք. թաղին օդը կնոջս կվնասե կոր։

— Ջպետք է մերժեք մեր հրավերը։

— Բացարձակապես կմերժեմ։

— Մենք այստեղեն չենք հեռանար, մինչև որ ձեր համաձայնությունը չառնենք։

— Կաղաչեմ, մի ստիպեք, պարապ տեղը զիս կբարկացնեք, կոր, անկարելի է կըսեմ կոր, ա՜ պապամ, խոսք հասկցե՛ք։

Սուսերյանց տեսավ, որ կարելի չէ վաճառականը համոզել, ուստի ըսավ.

— Գոնե մեզի արտոնեցեք, որ ձեր անունով հայտարարենք թե վերջնականապես չեք հեռացած Ք. թաղեն։

— Այդ ալ չեմ կրնար ընել։

— Բայց մենք ստիպված ենք այդպիսի հայտարարություն մը ընել։

— Ըրե՛ք, ինչ որ կուզեք, բայց ոչ իմ անունովս։

— Դո՛ւք, Պողոս էֆենտի, Ք. թաղին ազատական հոսանքի ներկայացուցիչն եք և ամեն հոսանք մեյ մեկ կուսակցություն է...

— Պարապ խոսք, ես ալ բան մըն ալ չեմ։

— Մեզի համար այդպես չէ և մենք պիտի շարունակենք մեր պայքարը ձեր անունին շուրջը։

— Ինչ որ կուզեք ըրե՛ք, բայց զիս հանգիստ թողուցեք,— պոռաց Պողոս էֆենտի տեսնելով, որ անկարելի էր խոսք հասկցնել այդ մարդուն։

— Ձեր հանգիստը ո՛չ մի կերպ չի խռովիր, ապահով եղեք։

— Հապա սա գրվա՞ծները։

— Դա ոչինչ, ընտրական պայքարներու միջոցին այդպես հարձակումներ կըլլան իրարու դեմ, մենք ալ կարող ենք մի ուրիշ թերթի մեջ հարձակիլ մեր հակառակորդներուն վրա։

— Գոնե այդ բանը ըրեք։

— Իհարկե պիտի ընենք, միայն թե ատոր համար դրամ հարկավոր է, մեր հակառակորդները իրենց գլուխ ունին Մարդար էֆենտիի պես մարդ մը, որ դրամը չի խնայեր, մինչդեռ մենք մեր սեպհական ուժերով կկռվինք...

Պողոս էֆ. զգաց, թե խոսակցությունը ինչ ուղղության մեջ մտած էր և ուր պիտի հանգեր։ Ուզեց կարճ կապել և ճամփու դնել երկու այցելուներուն։

Բայց հանկարծ ուրիշ գաղափար մը հղացավ, վրեժխնդրական խորհուրդ մը։

«Հանրային Կարծիք»-ի գրածը ծանրապես վիրավորած էր իր անձնավորությունը, թերևս Սուսերյանցի ձեռքով կրնար դարմանել զայն, ի փոխարեն նյութական փոքրիկ զոհողության։

— Քանիո՞վ կգրվի այդ տեսակ հոդված մը,— հարցուց երկու այցելուներուն։

— Քանի մը ոսկիով կըլլա,— պատասխանեց Սուսերյանց։

— Առե՛ք ձեզի հինգ ոսկի։

Սուսերյանց կրկնել չտվավ։ Դրամը գրպանեց և ըսավ.

— Հիմա ամեն բան կարգադրվեցավ։

— Ուրեմն գացեք և ըրեք ինչ որ հարկավոր է։

Եվ հրաժեշտ առնելով՝ մեկնեցավ քովեն։

— Գնանք «Արշալույս»-ի խմբագրատունը,— ըսավ Սուսերյանց, երբ փողոց ելան։

— Երթանք,— պատասխանեց Թորգոմ։

Խմբագրատան մեջ համակրական ընդունելություն մը գտան, մանավանդ երբ հասկցուցին, թե վճարումի փոխարեն բան մը գրել տալու եկած են։

Երիտասարդ խմբագիր մը, որ Ք. թաղի իրադարձություններուն տեղյակ կթվեր, խոստացավ պետք եղածը գրել։

Սուսերյանց թեև ուզեց որ ինք իր ձեռքով շարադրե գրությունը, բայց այդ առաջարկը մերժվեցավ։

— Մենք հոդված չպիտի գրենք, այլ ազգային լուրերու մեջ փոքրիկ ծանոթություն մը միայն պիտի տանք,— դիտել տվավ խմբագիրը։

— Բայց կուզենք որ ջախջախիչ բան մը ըլլա։

— Ինչ որ բերանացի հայտնեցիք՝ ամենքն ալ պիտի գրենք։

— Բայց խիստ ոճով մը...

— Ապահով եղեք այդ մասին։

Խնբագիրը անկեղծորեն կխոսեր։ Արդարև հաջորդ օր «Արշալույս»-ի մեջ հետևյալ գրվածքը կերևար.

«Այս կիրակի Ք. թաղին մեջ տեղի կունենա տեղվույն Թաղ. խորհրդի ընտրությունը։ Թաղեցիները ուրիշ անգամներեն ավելի ոգևորություն մը ցույց կուտան այս ընտրության առթիվ և երկու որոշ հոսանքներ կջանան իրենց թեկնածուներուն ընտրությունը հաջողեցնել։

Մեր քաղաք տեղեկություններուն համեմատ՝ թաղեցիներուն մեծամասնությունը կփափաքի վերընտրել հրաժարյալ Թաղ. խորհրդի ատենապետ Պողոս էֆենտի Սորակյանը, որ իր խիստ օգտակար պաշտոնավարությամբ ամբողջ թաղեցիներուն համակրանքը շահած է։ Հակառակորդ կողմը սույն ընտրությունը անհաջողության մատնելու համար լուր տարածած է թե՝ Պողոս էֆ. հեռացած է Ք. թաղեն և իր բնակությունը ուրիշ տեղ հաստատած, բայց մենք հավաստի աղբյուրե իմացանք, որ Պողոս էֆ. պարզապես օդափոխության գացած է Վոսփորի գյուղերեն մին և թե մոտերս պիտի վերադառնա իր թաղը։ Այս տեսակ մեքենայությունները անշուշտ անազդեցիկ պիտի մնան»։

«Արշալույս»-ի այս տողերը իրենց ազդեցությունը գործեցին։ Մարգար էֆենտի իսկույն իր մոտ կանչեց Նշանիկ և անուղղակի պատասխան մը գրել տվավ «Արշալույս»-ի գրածին։ Պողոս էֆենտի նույնպես անուղղակի պատասխան մը գրել տվավ «Արշալույս»-ի մեջ՝ Մարգար էֆենտիի գրել տվածին և այսպես շարունակվեցավ մինչև առտու, ընտրության օրը։

Այս ընդդիմամարտ գրվածները մեկ կողմե թաղին մեջ ոգևորությունը և եռուզեռը իր ծայրագույն աստիճանին հասցուցած էին։

Ընկեր Սուսերյանց շաբաթե մը ի վեր այնքան խոսած՝ այնքան պոռացած էր, որ կիրակի առտու ձայնը մարած էր և կոկորդը բորբոքած։

Հակառակ ասոր, առտուն շատ կանուխ գնաց «Շանթ Ակումբ»-ը, ուր ժամադիր եղած էր իր ընկերներուն։ Դեռ ոչ ոք եկած էր։

— Ծույլերը,— մռլտաց քթին տակեն։

Ամենեն առաջ պարոն Թորգոմ երևցավ, չափազանց հուզված կերպարանքով։

— Տեսա՞ր այս խաղքությունը,— ըսավ թուղթ մը երկարելով Սուսերյանցին։

Այս վերջինը առավ թուղթը և կարդաց։

«Ձեր քվեները մի տաք Պողոս էֆենտի Սորակյանի, որովհետև զուրկ է ընտրելիի հանգամանքեն։

«Ըստ սահմանադրության՝ թաղականները կընտրվին թաղին բնակիչներեն։

«Պողոս էֆենտի այլևս Ք. թաղի բնակիչ չէ։ Վերջնականապես մեկնած է մեր թաղեն և իր բնակարանն ալ վարձած է հույն վաճառական մը։

«Բաց աստի՝ Պողոս էֆենտի վարկաբեկ եղած է կարգ մը պատճառներով, որոնց մասին լռությամբ կանցնինք, չգայթակղեցնելու համար մեր պատվարժան թաղեցիները։

«Ձեր քվեները տվեք Մարգար էֆենտի Սասանյանի և անոր կուսակիցներուն, որոնք ամենքն ալ ծանոթ ու պատվավոր անձեր են»։

— Սրիկանե՛ր, անամոթնե՛ր,— գոչեց Սուսերյանց խեղդուկ ձայնով մը։

— Մենք ալ պետք է անմիջապես բան մը պատասխանենք,— դիտել տվավ ուսուցիչը։

— Ժամանակ չունինք,— ըսավ Սուսերյանց,— տես այս անպիտանները նախապես պատրաստեր, տպել տվեր են...

— Մենք ալ խմորատիպ հայտարարություն մը մեջտեղ կհանենք։

— Սքանչելի գաղափար,— գոչեց Սուսերյանց,— Ակումբը արդեն խմորատիպ մը ունի։

Հետզհետե հասան ուրիշ մեկ քանի ընկերներ և իսկույն գործի ձեռնարկեցին։

Խմորատիպ հայտարարությունը երկու ժամվա մեջ պատրաստվեցավ։ Այս հայտարարությունը սա ձևով խմբագրված կոչ մըն էր.

«Ընտրողնե՛ր,

«Մեր հակառակորդները՝ հուսահատության մատնված՝ ամեն տեսակ խաբեբայական միջոցներու կդիմեն ժողովրդին ձայնը խեղդելու և կղերա-հետադիմա-պահպանողական թեկնածուներու հաջողությունը ապահովելու համար։

«Իրենց ետին ժամու հնարքն էր այս առտվան տպյալ հայտարարությունը, որով կծանուցվի թե Պողոս էֆ. Սորակյան հեռացած է մեր թաղեն և ուրիշ տեղ հաստատած է իր բնակությունը, որով կորսնցուցած է իր ընտրելիի իրավունքը։

«Ասիկա բացարձակ սուտ մըն է։ Պողոս էֆենտի պաշտոնապես հայտարարած է մեր Ակումբի ներկայացուցիչներուն՝ որ մոտ օրերս պիտի վերադառնա Ք. թաղը, հետևաբար կհրավիրենք ընտրողները, որ առանց կարևորություն տալու այդ սուտ զրույցներուն՝ իրենց քվեները կեդրոնացնեն մեր ցանկին վրա։

«Մեր թեկնածուները կներկայացնեն ժողովրդական-ազատական տարրը, որուն շնորհիվ միայն մեր թաղը պիտի կրնա վերածնվիլ և հառաջադիմել։

«Ընտրողնե՛ր, փութացեք սեղմ շարքերով, քվեատուփին քով։

Շանթ Ակումբ»

Ակումբին անդամները քանի մը տասնյակ այս կոչերեն առնելով՝ գացին թաղին մեջ բաժնելու զանոնք։

Քվեհավաքությունը պիտի սկսեր ժամը 1-ին, եկեղեցիին մեջ, բայց արդեն կեսօրին եկեղեցիին բակը լեցված էր երկու ընդդիմադիր կուսակցություններու ներկայացուցիչներով։ Ցեզոքներու փոքրաթիվ խումբ մըն ալ թեև գոյություն ուներ, բայց անոնց կարևորություն տվող չկար, որովհետև հաջողության ոևէ հույս չէին ներկայացներ։

«Շանթ Ակումբ»-ին կոչը բավական հուզում հառաջ բերած էր հակառակ կուսակցության մեջ։

— Ձե՞ք ամչնար, ասանկ բաներ կգրեք,— պոռաց ընկեր Կայծունի պարոն Թորգոմին, որ իր մոտեն կանցներ։

— Ի՞նչ կա, ի՞նչ գրեր ենք։

— Այս խմորատիպ հայտարարությունը...

— Ձերինին պատասխանն է։

— Բայց մերինը իրականություն է, մինչդեռ ասիկա բացարձակ ստություն է։

— Ստախոսները դո՛ւք եք... Ի՞նչ իրավունք ունիք մարդուն ներքին կյանքին ակնարկություն ընելու։

— Սխա՞լ է ըսածներս..

— Իրավունք չունիք անձնական պատվին դիպչելու...

— Թող թաղականության քանտիտատ չըլլա։ Թաղական ըսածդ մաքուր անցյալ ունենալու է։

— Ձեր Մարգար էֆ-ն մաքո՞ւր է։

— Հրամմեր ես... քիչ մը ետքը պիտի տեսնես, երբ որ քվեարկության արդյունքը իմացվի։

— Ջախջախիչ մեծամասնություն ունինք։

— Վրաս գրե՛... թե հարյուր քվե հավաքեք, պեխերս կածիլեմ։

— Եթե դուք շահիք, եկեղեցիին դուռը, շաբաթ մը ալանակի պես կդնամ...

— Խայտառա՛կ, դուն ալ։

— Խայտառակը դո՛ւն ես, խոսքդ ետ ա՛ռ...

— Ինչո՞ւ պիտի ետ առնեմ՝ խայտառակ ես, խայտառակին ալ մեծը։

Ընկեր Կայծունի բարկացած, բորբոքած, բազուկ վերցուց զարնելու ձևով մը։

Ուսուցիչը ինքն ալ պատրաստվեցավ կռվիլ, բայց ներկաները միջամտեցին ու բաժնեցին երկու ոսոխները։

Նմանօրինակ տեսարաններ տեղի կունենային հոս ու հոն։ Հետզհետե գլուխները կտաքնային, գրգռությունները կավելնային։ Սուսերյանց պահ մը Թորգոմին մոտեցավ և ականջին փսփսաց.

— Մեր տղոց ըսե՝ մեյ մեկ գավազան ճարեն, պետք է պատրաստ ըլլանք ամեն պատահականության հանդեպ։

— Իրավունք ունիս,— պատասխանեց ուսուցիչը և փութաց հրամանատարին հրահանգը գործադրելու։

Հետզհետե հասան ընտրական ժողովի անդամները և ուղղվեցան եկեղեցի։ Հոն մեջտեղը դրած էր խոշոր սեղան մը, շուրջը աթոռներ շարած։

Սեղանին մեջտեղը կերևար տուփ մը՝ ժողովրդի իրավունքներուն խորհրդանշանը...

— Սկսի՞նք գործողության,— հարցուց ժողովի անդամներեն մին։

— Դեռ կանուխ է։

— Ժողովուրդը եկած է, կարող ենք սկսիլ։

— Բայց նախագահը մեջտեղ չի կա։

— Իր խուցը ըլլալու է, թող ժամկոչը երթա կանչե։

— Վարդան աղբա՛ր,— գոչեց ժողովականներեն մին։

Ժամկոչը, որ քիչ մը անդին կեցած էր, վեհերոտ, տատամսոտ քայլերով մոտեցավ։ Խեղճը առտվնե ի վեր սարսափելի տագնապներու մեջ կապրեր, կզգար, որ այս կիրակին վճռակոն դեր մը պիտի կատարեր իր կյանքին մեջ և այն մտածումը զինքը կտանջեր։

— Վարդան աղբա՛ր, գնա ավագերեցը կանչե,— հրամայեց նստողներեն մին։

— Գլխուս վրա,— պատասխանեց ժամկոչը խոնարհությամբ և բարևելով հեռացավ։

Քանի մը վայրկյան ետքը ավագերեցը մտավ եկեղեցի, իրեն

կհետևեին բակը գտնվող բազմաթիվ անձեր, իրենց գլուխը ունենալով ընկեր Սուսերյանց ու Կայծունին։

— Ժողովուրդը դուրս հանեցեք, դեռ քվեարկությունը չէ սկսված,— պոռաց ժողովականներեն մին, որ հաղթանդամ ու հզոր ձայնով անձ մըն էր։

Հայտնի չէր, թե այս հրամանը որու կուղղվեր՝ քանի որ ընտրական ժողովի անդամներեն զատ ոչ ոք կար եկեղեցիին մեջ։

Ավագերեցը կհառաջանար իր ետևեն բերելով բազմությունը։

— Ժողովուրդը դուրս հանեցե՛ք,— պոռաց դարձյալ ժողովականը ոտքի ելած։

— Ժողովուրդը դուրս չելլար,— պատասխանեց ընկեր Կայծունի։

— Չպետք է դուրս ելլե,— ավելցուց Սուսերյանց խեղդուկ ձայնով մը։

— Քվեարկուները երկերկու ներս մտնան,— դիտել տվավ ուրիշ ժողովական մը։

— Ժողովրդական քոնթրոլ կպահանջենք,— հնչեց Կայծունիի ձայնը։

Ավագերեցը հասած էր սեղանին քով և բազմեց իր նախագահական աթոռին վրա։

— Տեր հա՛յր, դուն խոսք հասկցուր այս մարդոց,— ըսավ նախագահին քով նստած անձ մը ցած ձայնով։

— Կխնդրեմ, դավակներս, աղմուկ մի հանեք,— ըսավ ավագերեցը հաշտարար ձայնով մը,— թողե՛ք, որ կարգապահությամբ և հանդարտությամբ գործ տեսնենք...

— Քոնթրոլ կպահանջենք,— գոչեցին մեկ քանի ձայներ։

— Ի՞նչ քոնթրոլ,— պոռաց հաղթանդամ ժողովականը,— ընտրական ժողովը արդեն քոնթրոլի համար նստած է հոս...

— Մենք ժողովրդական քոնթրոլ կուզենք... ժողովուրդը պետք է իր ներկայացուցիչները ունենա այստեղ։

— Մենք արդեն ժողովրդին ներկայացուցիչներն ենք...

— Չէ՛, անանկ բան չըլլար, մեր կողմեն մարդ գտնվելու է քվեատուփին քով։

Ընտրական ժողովի անդամները այս անօգուտ բանավեճին վերջ տալու համար իրարու հետ խորհրդակցեցին և ըսին բազմությանը, որ իրենց մեջեն մեկը ընտրեն, որպեսզի գա, հսկե սեղանին քով։

— Հոս երկու որոշ հոսանք կա,— առարկեց Սուսերյանց,— պետք է որ երկու հոսանքներն ալ իրենց զատ զատ ներկայացուցիչներն ունենան։

— Անոր ալ բե՛ք աղեկ,— ըսավ ավագերեցը,— երկու հոգի ընտրեցեք, բայց նախ դուրս եկեք եկեղեցիեն։

— Թող անոնք ելլեն, մենք ալ կելլենք,— ըսավ Սուսերյանց, մատնանիշ ընելով հակառակորդ կողմը։

— Առաջ դուք ելեք,— պատասխանեց Կայծունի։

— Ինչո՞ւ համար։

— Որովհետև առաջ դուք մտաք եկեղեցի։

— Տղերք, չպետք է տեղերնեդ շարժվիք,— հրամայեց Սուսերյանց իր մարդոց դառնալով։

— Ուրեմն մենք ալ հոս կմնանք...

Այս նոր միջադեպը կսպառնար հետզհետե մեծանալու։

Ավագերեցը կրկին միջամտեց և համաձայնության եզր մը գտավ։ Ընկեր Սուսերյանց և ընկեր Կայծունի քով քովի և միևնույն ժամանակ եկեղեցիին դռնեն դուրս պիտի ելլեին։ Այսպես փակվեցավ վեճը։

Քիչ ետքը երկու ներկայացուցիչները ընտրված էին։

«Պայքար Լսարանի» կողմե՝ պարոն Աշոտ, եռանդուն ու կրթվազան երիտասարդ մը, իսկ «Շանթ Ակումբի» կողմե՝ պարոն Թորգոմ։

— Հիմա գործի կրնանք սկսիլ,— վճռեց նախագահը, երբ ժողովրդի ներկայացուցիչները իրենց տեղը գրավեցին։

Քվեարկուները խումբ-խումբ ներս հրավիրվեցան և գործողության առաջին մասը բավական հանդարտությամբ կատարվեցավ։

Հետո կարգը եկավ քվեները համրելու և կարդալու։

Նախագահը հայտարարեց՝ 640 քվե բաժնված էր և 520 քվե բերված։

Այս թվերը ցույց կուտային, թե թաղը ինչ խանդավառությամբ մասնակցած էր Թաղական խորհրդի ընտրության։

Ընտրական ժողովի հաղթանդամ ժողովականը, որ ինչպես ըսինք, զորավոր ձայն մը ուներ, սկսավ քվեները կարդալ։

Առաջին մեկ քանի քվեները Պողոս էֆ-ի և իր կուսակիցներուն անունները կպարունակեր։

Այս պարագան խնդությամբ լեցուց ուսուցչին սիրտը, որ սկսեց հաղթական ակնարկներ արձակել աջ ու ձախ։

Բայց իր ուրախությունը երկար չտևեց։ Հակառակորդ կուսակցության ցանկերը հետզհետե կբազմապատկվեին։

Պարոն Թորգոմ տենդահար ձեռքով մը, թուղթի մը վրա կնշանակեր քվեահամարի արդյունքը։ Դեռ տարբերությունը մեծ չէր Պողոս և Մարգար էֆենտիներու միջև։

Առաջինը 45 քվե ստացած էր, մինչդեռ երկրորդը՝ 56։

Բայց նոր քվեները ընդհանրապես Մարգար էֆ-ի անունը կկրեին։

Կես ժամ ետքը ուսուցիչը կրկին հաշվեկշիռ մը ըրավ։

Պողոս էֆ. 82 քվե շահած էր, մինչդեռ Մարգար էֆ. 112 քվե։ Անջրպետը կլայնար երկուքին միջև։

Պարոն Թորգոմ հարաճուն անձկությամբ կհետևեր գործողության։

Իրիկուն եղած էր արդեն, և շատերը մեկնած էին։ Հիմա միայն «Պայքար Լսարան»ի և «Շանթ Ակումբի» անդամները մնացած էին իրենց դիրքերուն վրա։

Չորրորդ անգամ, երբ պարոն Թորգոմ հաշիվը նայեցավ, սոսկաց. Պողոս էֆ. 112 ուներ միայն, իսկ Մարգար էֆ.՝ 218 քվե։

Ու հիմա գրեթե շարունակաբար, Մարգար էֆ. և իր կուսակիցներուն անունն էր, որ կհնչեր եկեղեցիին կամարներուն ներքև։

Ուսուցիչը անգամ մըն ալ իր ձեռքի թուղթին վրա նայեցավ, հապճեպով հաշիվ մը ըրավ և թողլով իր տեղը՝ դուրս սլացավ, դեմը ելլողին հարցնելով.

— Ո՞ւր է ընկեր Սուսերյանցը։

Այս վերջինը իր սպայակույտով շրջապատված ժուռ կուգար եկեղեցիի բակին մեջ։

— Պարտվեցանք,— գոչեց պարոն Թորգոմ իր ընկերոջ քով վազելով։

— Չպետք է պարտվիլ,—պատասխանեց մյուսը պաղարյունով։

— Եվ սակայն հաշիվը մեջտեղն է։

— Քվեհամարը վերջացա՞վ...

— Ոչ տակավին, բայց արդեն Մարգար էֆ. և իր կուսակիցները 264 ձայն շահած են, իսկ մենք միայն 131... եթե մնացած բոլոր քվեներն ալ Պողոս էֆ. շահի, ինչ որ անկարելի է, դարձյալ

մեծամասնությունը Մարգար էֆ-ի կողմն է, քանի որ 261 ձայնը բացարձակ մեծամասնություն կկազմե։

Թվաբանական այս պարզ ցուցմունքը խոր տպավորություն առաջ բերավ։

— Դավաճանեցին ուրեմն մեզի դեմ,— պոռաց «Շանթ Ակումբի» անդամներեն մին։

— Լռի՛ր,— հրամայեց Սուսերյանց։

Հետո ձեռքը ճակատին տարավ վճռական որոշում մը տալու ձևով և գոչեց.

— Տղե՛րք, առաջ անցե՛ք, պետք է բեկանել այս ընտրությունը։

Եվ դավազանը ճոճելով մտավ եկեղեցիեն ներս։ Մութը այժմ պատած էր ամեն կողմ և եկեղեցին լուսավորված էր մեջտեղի սեղանին վրա դրված մեկ քանի մոմերով։

Երբ մոտեցավ սեղանին քով՝ խեղդուկ ձայնով մը գոչեց.

— Դադրեցուցեք գործողությունը...

— Ինչո՞ւ համար,— հարցուց հաղթանդամ մարդը։

— Ապօրեն է այս ընտրությունը։

— Ի՞նչ պատճառավ...

— Այո՛, ապօրեն է, չենք ընդունիր,—գոչեցին շատ մը ձայներ։

— Ընդհակառակը, շատ օրինական կերպով կատարվեցավ ամեն բան,— դիտել տվավ ավագերեցը։

— Չեղծում կա, չըլլար, բեկանում,— գոչեցին մի քանի ձայներ։

— Ժողովրդի իրավունքները ոտնակոխ եղած են...

— Ժողովուրդի ձայնը խեղդված է...

— Շատ մը թաղեցիներու քվե չէ դացած...

— Բեկանում, բեկանում...

— Կորսնցուցիք, անոր համար խնդիր կհանեք,—պոռաց ընկեր Կայծունի,— քվեարկությունը պիտի շարունակվի։

— Ժողովուրդը այսպես կպահանջե, պարո՛ն, կարդացեք քվեները։

— Ժողովուրդը կպահանջե, որ ընտրությունը չեղյալ նրկատվի։

— Դուք ժողովրդի անունով խոսելու իրավունք չունիք։

— Մենք ենք ժողովրդի հարազատ ներկայացուցիչները...

— Տղե՛րք, խորտակեցեք տուփը,— հրամայեց Սուսերյանց։

Քանի մը երիտասարդներ առաջ նետվեցան տուփը առնելու համար, բայց մյուս կողմեն ուրիշ երիտասարդներ զայն գրավեցին։

Այն ատեն «Շանթ»-ի անդամները հարձակեցան «Պայքար»-ի անդամներուն վրա և սարսափելի խառնիճաղանջ տիրեց եկեղեցիին մեջ։

— Ոստիկան, ոստիկան բերե՛ք,— պոռացին մեկ քանի ձայներ, բայց ոչ ոք ուշադրություն ըրավ։

Ավագերեցը խառնակության միջոցին քանի մը բռունցքի հարված ընդունեց և ճյուպպեն պատռվեցավ։ Ընտրական ժողովի անդամները կամաց մը կծիկը դրին։

Սուսերյանցի մեկ հրամանին վրա երիտասարդ մը սկսավ պատռել սեղանին վրա մոռցված քվեները և թուղթերը։

Բայց ամենեն կատաղի կռիվը կմղվեր քվեատուփին շուրջը։ Վերջապես «Շանթի» անդամները կրցան զայն ձեռք անցնել և ոտքի հարվածով մը կոտրել և միջի քվեները ջնջել։ Հաղթանակը «Շանթ Ակումբ»-ին մնացած էր...

Երբ թաղին մեջ իմացվեցավ եկեղեցիին մեջ տեղի ունեցած դեպքերը, մեծ իրարանցում տեղի ունեցավ։ Մարգար էֆ-ի կուսակցությունը զայրացած՝ սպառնալիքներ սկսան տեղալ «Շանթ Ակումբ»-ին դեմ։

Ջեղոքները, որ մինչև այդ օր հեռվեն դիտողներ եղած էին, իրենք ալ իրենց չեղոքութենեն ելլելով՝ միացան Մարգարյաններուն և բուռն կերպով բողոքեցին տեղի ունեցած բռնաբարության դեմ։

Հետևյալ օր, թերթերը երկարորեն կպատմեին Ք. թաղին մեջ տեղի ունեցած քվեարկությունը և այս առթիվ պատահած ցավալի դեպքերը և վարչության ուշադրությունը կհրավիրեին։

Մարգար էֆենտի երբ լսեց եղածները, ուրախացավ։

— Թող ինչ որ կրնան ընեն, որպեսզի աղվոր մը խաղք ելլան,— ըսավ։

Երեք օր ետքը, չորեքշաբթի, Վարչությունը իր սովորական նիստը կգումարեր և կզբաղվեր Ք. թաղի ընտրության խնդրով։

Պատրիարքը, որ կնախագահեր ժողովին՝ սա կարծիքը հայտնեց։

— Էֆենտիմ, քանի որ թաղին մեջ երկու հակառակ կուսակցություններ կան՝ պետք է երկուքին ալ գոհացում տալ, վեսսալամ։

— Այդ ի՞նչպես կելլա, սրբազան,— հարցուց ժողովականներեն մին։

— Առժամյա Թաղ. խորհուրդ մը կազմենք, մեջը երկու կուսակցություններեն ալ մարդիկ դնենք, լմնցավ դնաց։

— Սրբազան, այն ատեն խնդիրը ավելի կկնճռոտի։

— Ընդհակառակը, մեր մեջ խնդիրները այս կերպով կկարգադրվին։

— Ես կառաջարկեմ, որ նոր ընտրություն տեղի ունենա,— ըսավ ուրիշ ժողովական մը։

— Միտքերը շատ գրգռված են՝ նոր ընտրություն կատարել դժվար է,— դիտել տվավ ուրիշ մը։

— Իմ ըսածիս պես ըրե՛ք,— պնդեց Պատրիարքը,— խառն Թաղական խորհուրդ մը ընտրեք առժամյա հանգամանքով։

— Ըստ իս,— ըսավ Կարպիս Նիզակ էֆենտի,— պետք է նկատի առնել թաղին մեծամասնության կամքը, առանց զանց ընելու փոքրամասնությունն ալ, որովհետև ըստ Սահմանադրության փոքրամասնության ձայնն ալ իր կշիռը ունենալու է։

— Շատ իրավացի է,— հաստատեց ժողովական մը։

— Եղրակացուցե՛ք,— ըսավ ատենապետը։

— Ես կառաջարկեմ որ,— շարունակեց Կարպիս Նիզակ էֆենտին,— երկու կողմերուն ալ գոհացում տրվի, առանց օրինական տրամադրություններուն հակասելու։

— Աղեկ, օղլում, բայց ի՞նտոր,— հարցուց Պատրիարքը։

— Շրջահայեցությամբ գործելու է...

— Կտրուկ որոշում մը տանք, լմննա,— ըսավ ուրիշ ժողովական մը։

— «Ալ օն փարալրք տա պունտան»,— բացականչեց Պատրիարքը խնդալով։

— Սրբազան ի՞նչ ըսիք,— գոչեց ժողովականը բարկացած։

— Ճանրմ, շախա բան մը ըսի, դուն ալ ի՞նչ իրար կանցնիս,— պատասխանեց Պատրիարքը,— բռնաֆ բան, քիչ մը եյլեն-միշ ելլալը մե՞ղք է...

Այս կերպով փակվեցավ այդ փոքրիկ միջադեպը։

Ժողովը հետո շարունակեց իր խորհրդակցությունը Ք. թաղին

ընտրական խնդրույն մասին և ի վերջո որոշեց. առաջիկա նիստին մեջ լուրջ նկատողության առնել խնդիրը և պարտ ու պատշաճ տնօրինել։

ԺԵ

Պողոս էֆենտի և իր կինը հիմա բոլորովին քաշված կյանք մը կանցընեին։ Գրեթե մարդու հետ չէին տեսնվեր և տիկին Շաղիկ տունեն դուրս չէր ելլեր։ Տանը մեջ ալ այր ու կին օտարականներու պես կվարվեին իրարու հետ և հազիվ անհրաժեշտ պարագաներու մեջ իրարու խոսք կուղղեին։

Պողոս էֆենտի առ երեսս ներած էր կնոջը և չէր ուզած որ գայթակղություն հարուցանե, բայց ներքնապես չէր մարսած եղածը։ Իրավ է, որ Տիրանը դարձյալ իր քով առած էր կասկածի տեղի չտալու համար, բայց միայն գործի մասին ատեն-ատեն խոսք կուղղեր անոր։

Իր այս հոգեկան կացության մեջ Պողոս էֆենտի մինակ մտածում մը ուներ, այն էր վրեժ լուծել Մարգար էֆենտիեն։

Մանրակրկիտ քննութենե մը ետք հասկցած էր, որ իր հակառակորդը լրտեսել տված էր իր կինը և այդ կերպով կրցած էր հասկնալ անոր հարաբերությունները Տիրանի հետ ու հետո նամակով մը խնդիրը իմացուցած էր իրեն։

Հիմա իր միակ մտածումն էր նույն խաղը խաղալ Մարգար էֆ-ին, լրտեսել իր կինը և զայն հանցանքին մեջ բռնել, բայց ասոր համար անձնվեր օգնականի մը պետք ուներ ու այդ օգնականն էր, որ կպակսեր իրեն։

— Ա՜խ,— կհառաչեր,— եթե սա շունշանորդի Աբգարին պես մեկը ունենայի ձեռքի տակ...

Իզուր միտքը կշարշարեր այս տեսակ անձնվեր մարդ մը ձեռք ձգելու համար։

Եվ հետո, ուրիշ կետ մըն ալ կար։

— Արդյոք տիկին Սաթեն սիրահար մը ունե՞ր...

Նախ հարկ էր այս կետը լուսաբանել։ Գիտեր, որ իր կինը ամբաստանած էր տիկին Սասանյանը իբրև անհավատարիմ, բայց այս ամբաստանությունը ոևէ որոշ ապացույցի վրա հիմնված չէր և ասոր համար ազդեցություն չէր գործած։

Պողոս էֆենտի խորհեցավ իր կնոջ հետ տեսակցություն մը

ունենալ այս մասին և հասկնալ, թե ամբաստանությունները տիկին Սաթենի մասին որքա՞ն հիմնավոր էին։

Գիշեր մը, երբ ճաշեն հետո, այր ու կին առանձին նստած էին իրենց սենյակը, Պողոս էֆենտի հանկարծ ըսավ.

— Հիմա կհասկնամ կոր, թե ինչո՞ւ համար խեղճ տիկին Սաթենին վրա խենթ ու խելառ ամբաստանություններ ըրիր...

— Ինչո՞ւ համար,— հարցուց Շաղիկ կովարար շեշտով մը։

— Պարզապես քու խաղքություններդ ծածկելու համար...

— Վա՜յ, ատիկա ե՞րբ հասկցար...

— Ե՞րբ պիտի հասկնամ, հիմա հասկցա, երբոր մենք ասանկ ամենուն մոտ խաղք եղանք, մինչդեռ տիկին Սաթեն իր պատիվը կապրի կոր։

— Սաթենը պատիվովը կապրի կոր,— գոչեց Շաղիկ բարկությամբ,— վա՜յ գլխուս, բոզանոցին կիները անկե ավելի պատիվ ունին։

— Ատոնք պարապ խոսքեր են, փաստ պետք է, փաստ։

— Ո՞ր մեկը ըսեմ... բերանս բանալ մի տար։

— Ընդհակառակը, եթե բան մը գիտես, ըսե՛ տեսնենք,— գոչեց Պողոս էֆենտի,— բայց ըսելիք մը չունիս որ... ամենքն ալ պարապ խոսքեր են։

— Անանկ է, երբ խնդիրը քու կնոջդ վրա ըլլա՝ ճիշտ կըլլա ամեն բան, իսկ երբ ուրիշին համար է՝ սուտ է անպատճառ... մինակ ես հանցավոր եմ, մյուսները ամենքն ալ մեյ մեկ սուրբեր, աստվածածիններ են...

— Քա՛, քու անհավատարմությունդ տեսա,— գոչեց Պողոս էֆ. սրտմտած։

— Անոր ալ ետևեն իյնաս, լրտեսել տաս նե՝ անորն ալ աչքովդ կտեսնաս...

— Բան մը գիտես նե՝ լրջորեն ըսե՛, ատանկ անորոշ խոսքերե բան չըլլար։

— Ո՞ր մեկ գիտցածս ըսեմ..

— Մեկ հատը բավական է... հիմա կըսես կոր թե՝ տիկին Սաթեն սիրո՞ղ ունի։

— Հարկավ կըսեմ, ինչո՞ւ չպիտի ըսեմ, ոյմե՞ պիտի վախնամ,— պոռաց Շաղիկ բորբոքելով։

— Ո՞վ է, անունը ի՞նչ է տեսնանք։

— Ո՞ր մեկը ըսեմ... մեկ հատ, երկու հատ չէ որ... անամոթը... արդեն ամենուն բերանն է...

— Ես երբեք, քենե զատ, մեկե մը անոր մասին բան մը չեմ իմացած։

— Դուն արդեն անանկ ես, ուրիշներուն մասին խոսվածներուն խուզ կըլլաս, իմ վրաս բան մը ըլլա նե՝ ականջներդ կբացվին։

— Հիմա դուն Սաթենին սիրահարներեն մեկուն անունը կըրնա՞ս տալ, ան նայինք։

— Ինչո՞ւ չպիտի կրնամ տալ, հարկավ կուտամ...

— Ըսե՛ տեսնենք...

— Հեռուն երթալու պետք չի կա, մեկ հատը մեջտեղն է...

— Ո՞վ է տեսնենք։

— Ո՞վ պիտի ըլլա իշլբե Միհրանիկը... Նվարդին էրիկը։

— Տոսախյան Միհրանիկ է՞ֆ-ն,— հարցուց Պողոս էֆ. հետաքրքրված։

— Հրամմե՛ր ես, Միհրանիկ էֆենտին...

— Առաջին անգամն է, որ ասանկ բան մը կլսեմ կոր։

— Ուրիշեն լսելու պետք չի կա, գործը մեջտեղն է... Սաթենին փեշեն զատված չունի, ամեն օր տուներնին է։

— Ճանըմ, ատկե ի՞նչ կելլա, բարեկամ են, կտեսնվին։

— Ամեն բանին չափ կա... առտու իրիկուն քիթ քիթի են, իրարմե բաժնված չունին։

— Այդ քու ըսածդ պարզ ենթադրություն մըն է։

— Ես ըսածս գիտեմ... ձեռքս կրակը կդնեմ, որ ըսածիս պես է...

— Ես փաստ կուզեմ, փա՛ստ,— գոչեց Պողոս էֆենտի, տեսնելով, որ իր կնոջ խոսքերը ոևէ հաստատուն հիմն չունին։

— Փաստ կուզես նե՝ իրենց ծառաները խոսեցնել տուր մեյ մը։

— Դուն խոսեցնել տվե՞ր ես։

— Կըսեմ կոր նե՝ հարկավ բան մը գիտեմ... մեյ մը Սուրբիկը խոսեցնել տուր տե կիմանաս։

— Ո՞ր Սուրբիկը, Սուրբիկը ով է,— հարցուց ամուսինը։

— Սասանյանենց սպասուհին, որ հիմա քովերնեն ելած է։

— Ինչո՞ւ ելեր է։

— Ես ի՞նչ գիտնամ, հանըմին գործին չէ եկեր ճամփեր ես կերևա, որ իր խաղերուն գործիք ըլլալ չէ ուզեր խեղճ աղջիկը։

— Էյ դուն ո՞ւր տեսար տե խոսեցուցիր այդ Սուրբիկը։

— Հիմա Փութուրյանենց քով մտած է՝ հոն տեսա։

Փութուրյանենք իրենց ծանոթ ընտանիք մըն էին, որոնք օդափոխության եկած էին վերին Վոսփորի այն գյուղը, ուր կգտնվեին այս միջոցիս։

— Սա ծաղկահար աղջիկ մը տեսանք նե անցած օր տուներնին՝ ա՞ն է,— հարցուց Պողոս էֆ.։

— Ճիշտ ան է, Մարգար էֆենտիենց տունն ալ տեսած ըլլալու ես։

— Չեմ հիշեր կոր։

Պողոս էֆենտի պահ մը լռեց և սկսավ մտածել։ Այդ Սուրբիկը իբրև Սասանյաններու ներքին կյանքեն մոտեն տեղյակ մեկը, թերևս կրնար օգտակար ըլլալ։ Իր կնոջ մինչև հիմա ըրած անորոշ ակնարկություններուն մեջ Սուրբիկ միակ լուրջ հենակետը կներկայացներ, միակ աղբյուրը, ուրկե կարելի էր որոշ բան մը քաղել։

Միայն թե Շազիկ ո՞ր աստիճան ճշմարիտ կխոսեր ճամփված սպասուհիին բերանը ամբաստանություններ դնելով։ Այս կետը հարկ էր լուսաբանել։

— Դուն Սուրբիկը երկար բարակ խոսեցուցի՞ր,— հարցուց կնոջը։

— Խոսեցնելու պետք չի կա, արդեն ինք կպատմե կոր,— պատասխանեց Շազիկ,— խեղճին սիրտը այնքա՛ն էրեր է, որ...

— Անիկա՞ պատմեց Սաթենին Միհրանիկի հետ ունեցած հարաբերությունները։

— Ան ալ ըսավ, ուրիշ բան ալ ըսավ, որ մեկը միտքս պահեմ... կուզես նե՝ օր մը հոս կանչենք, խոսեցնել տուր, ականջովդ լսե, քանի որ իմ խոսքիս չես ուզեր կոր հավատալ։

Այս առաջարկը ամենեն բանավորը թվեցավ Պողոս էֆենտիի։ Արդարև իր կնոջ անկեղծության վրա շատ վստահություն չուներ, կրնար իրողությունները խեղաթյուրել կամ չափազանցել։ Իր կողմե կատարված հարցափորձ մը կրնար ավելի որոշ արդյունք մը տալ։

— Իրավունք ունիս, օր մը կանչել տուր տե՝ հետը մեյ մը տեսնվիմ, միայն թե հատկապես ատոր համար կանչվածի ձև չառնե...

— Վաղվընե թեզը չի կա, ես անիկա հոս բերել կուտամ։

— Բայց ինք կասկածի երթալու չէ, որ հատկապես զինք հարցուփորձել կուզենք։

— Անհոգ եղի՛ր, ես ամեն բան կկարգադրեմ... առդեն Սուրբիկը միամիտ աղջիկ մըն է, խուռնազություն չունի։

Այր ու կին այսպես համաձայնություն գոյացնելե ետքը տիկին Շազիկ հարցուց.

— Ան չէ ամմա՝ այս գործին ետևեն իյնալուդ նպատակը ի՞նչ է։

— Ինչ պիտի ըլլա, պատիվս վերահաստատել,— գոչեց Պողոս էֆենտի։

— Սաթենին սիրող ունենալ կամ չունենալը քու պատիվդ հետ ի՞նչ հարաբերություն ունի։

— Ի՞նչ ըսել է, ինչպես անոնք իմ ետևես իյնալով զիս խաղք ըրին, ես ալ հիմա իրենց խաղքությունը մեջտեղ կհանեմ, կերթան կսորվին... թող ամեն մարդ ալ տեսնա, որ ինքն ալ մենե վար չի մնար... արժանապատվության խնդիր է այս։

— Իրավունք ունիս,— պատասխանեց կինը,— մեյ մը խաղք ըլլան նե՝ ալ անկե ետքը լեզունին իրենց կքաշեն։

— Դուն ադ Սուրբիկը վաղը բերել տուր։

— Իրիկունը գաս նե՝ հոս կգտնաս, ապահով եղիր։

Այս կարգադրութենեն ետքը այր ու կին առանձնացան իրենց խուցերը։

Տիկին Շազիկ ուրախ էր, որ առիթ մը ստեղծված էր իր ամուսնույն հետ հարաբերություններ մշակելու։ Գայթակղական ծանոթ դեպքեն ի վեր առաջին անգամն էր, որ Պողոս էֆ. այսքան երկար և գրեթե մտերմական տեսակցություն մը ունեցած էր իրեն հետ։ Ամուսնույն ունեցած վրեժխնդրական ծրագիրը իրեն ալ կժպտեր և անշուշտ իր ձեռքեն եկածը չպիտի խնայեր անոր հաջողությանը համար։ Միայն թե, ափսո՛ս, զորավոր զենք մը չուներ ձեռքը։ Սուրբիկի շատախոսությունները ճամփված սպասուհիի մը սրտմտութենեն ծնած բամբասանքներ էին պարզապես, առանց որոշ ու փաստացի իրողություններու։

— Թերևս ամեն բան չէ ըսած,— մտածեց Շազիկ,— վաղը առտու զինքը բերել տամ ու աղեկ մը խոստովանեցնեմ, և հետո էրկանս դեմ հանեմ։

Առտուն ամուսինը մեկնելե ետքը, Շազիկ սպասավորը ղրկեց ու Սուրբիկը բերել տվավ։

Երեսուն տարեկան, նիհար, ծաղկահար, տգեղ ազգեկ մըն էր Սուրբիկ, ծածկամիտ ու շատախոս բնավորությամբ։

Շազիկ չուզեց, որ անմիջապես հայտնե, թե ինչո՞ւ համար բերել տված էր Սուրբիկը, այլ ուզեց անզգալաբար խոսքը դարձնել տիկին Սաթենի վրա։

— Անցած օր ձեր տունը բեվանի մը կերա, շատ համով էր, տիկինին հարցուցի նե՝ ըսավ որ դուն եփած ես, անա՞նկ է,— հարցուց։

— Հրամմե՛ր եք,— պատասխանեց Սուրբիկ։

— Մեր Թագուկը կերակուր աղեկ կեփե, բայց անուշեղեն շատ աղեկ չիյտե շինել, չե՞ս կրնար անգամ մը իրեն սորվեցնել։

— Շատ աղեկ, երբ որ կուզեք, ի՞նչ պիտի եփենք։

— Առաջ մեյ մը բեվանին սորվեցուր։

— Արդեն մեծ բան մը չէ, բարիֆ ընեմ նե՝ ինքնիրեն կրնա շինել։

— Չէ՛, ես կուզեմ, որ դուն ձեռքովդ եփես անգամ մը, անանկ բարիֆով միտքը չմնար։

— Ինչպես հրաման կընեք նե՝ անանկ կընենք։

— Կերևա որ այդ տեսակ անուշեղենները տիկին Սաթենին տունը սորված ես,— ըսավ Շազիկ քմծիծաղով մը։

— Հոն չգացած արդեն գիտեի...

— Բայց տիկին Սաթենին համար կըսեն, որ շատ վարպետ է անուշեղեն շինելու համար։

— Չեմ գիտեր, ես բնավ անոր անուշ եփելը չեմ տեսած։

— Քանի անգամ որ տունը անուշ կերած ու հավնած եմ՝ «ես եփած եմ» ըսած է։

— Ատանկ սուտ պարծանքները կսիրե,— պատասխանեց Սուրբիկ,— նայինք հիշ ոտքը խոհանոց դրա՞ծ է...

— Կրնա՞ ըլլալ, որ տանտիկին մը ոտքը խոհանոց չդնե։

— Անանկ բաներու նայած չուներ...

— Ինչո՞ւ համար, ատեն չէ՞ր գտներ,— հարցուց Շազիկ ժրպտալով։

— Ես ի՞նչ գիտնամ, անոր գործերուն իմ խելքս չհասնիր։

— Ան չէ ամմա, ինչո՞ւ քեզ ճամփեցին...

— Անոնք չճամփեցին՝ ես ելա,— պատասխանեց Սուրբիկ նեղացած դեմքով մը։

— Իրենք անանկ չեն ըսեր կոր։

— Ի՞նչ կըսեն կոր, նայինք։

— Ճանըմ տեսակ-տեսակ բաներ, իբր թե շատ ծույլ ես եղեր, աղտոտ ես եղեր, անկիրթ ես եղեր... տունեն բաներ պակսեր է, քենե կասկածեր են, ես ի՞նչ գիտնամ, ասանկ խոսքեր։

Տիկին Շազիկ անպատկառորեն կստեր։ Բնավ Սուրբիկի մասին բան մը չէր լսած, բայց իր նպատակն էր պարզապես սպասուհին գրգռել իր նախկին տերերուն դեմ ու անոր լեզուն բանալ։ Իր այս հնարքը հաջողեցավ։ Սպասուհին բարկաճայթ գոչեց։

— Վայ ստախոսներ, ամոթ չէ՞ իրենց, որ ասանկ մուր քսել կուզեն վրաս... եթե ես ալ իմ գիտցածներս ըսեմ, այն ատեն պոյերնին կտեսնան։

— Ինչ ունին, որ ինչ պիտի ըսես, ատոնք պարապ խոսքեր են։

— Ես իմ բաածս գիտեմ, Շազիկ հանըմ։

— Տիկին Սաթենը ես ալ ճանչցած եմ, իր վրա երբեք պակասություն մը չեմ տեսած...

— Դուք ի՞նչ կրնաք տեսնել... դուրսեն հարկավ բան մը հայտնի չըլլար... մեյ մըն ալ ինծի հարցուր անոր ինչ կնիկ ըլլալը... բայց ինչուս պետք է, ես իրենց պես չեմ, լեզուս կքաշեմ կնստիմ, բամբասանքեն չեմ ախորժիր։

— Անցածները սակայն բաներ մը կպատմեիր կոր հանըմիդ մասին, միտքեդ ելա՞վ։

— Ի՞նչ բան,— հարցուց Սուրբիկ։

— Միհրանիկ էֆ-ին խոսք կընեիր կոր...

— Սուտ չէի խոսեր կոր ա, ամեն օր տուներնին էր։

— Ատկե ինչ կելլա, բարեկամ են, իրարու հետ կտեսնվին...

— Տեսնվիլ կա, տեսնվիլ ալ կա... ես կույր չեմ, ամեն բան կտեսնամ։

— Ասկե զատ Միհրանիկ էֆենտի միշտ իր կնկանը հետ կուգար հարկավ։

— Անանկ է, միասին կուգային,— հաստատեց Սուրբիկ։

— Էյ ուրեմն, ինչ կրնա ըլլալ։ Տեսա՞ր որ ըսածներդ ալ պարապ խոսքեր են եղեր։

— Հիմա կուզե՞ս որ ամեն բան ըսեմ,— գոչեց սպասուհին,— որուն համբերությունը կսկսեր սպառիլ Շազիկի բռնած ընթացքեն։

— Կրնա՞ս նայիմ ինծի համոզել, որ տիկին Սաթենե Միհրանիկ էֆենտիի հետ ծածուկ բան մը ուներ, այն ատեն կհամոզվիմ, որ ճշմարիտ կխոսիս կոր և անոնք են ստախոսները։

— Ես աս գիտեմ, Միհրանիկ էֆենտի անանկ պարզ բարեկամի պես չէր տեսնվեր տիկին Սաթենին հետ, մանավանդ որ մինակ մնային։

— Մինակ կմնայի՞ն,— հարցուց Շազիկ հետաքրքրությամբ։

— Թոհաֆ բան, Շազիկ հանըմ, չըլլա՞ր որ երբեմն մինակ ըլլան,— ըսավ Սուրբիկ։

— Բայց դուն ըսիր, որ միշտ Նվարդին հետ կուգար այցելության։

— Այո՛, բայց կպատահեր, որ տիկին Նվարդ Մարգար էֆենտիին հետ զբաղած կըլլար և տիկին Սաթենն ալ Միհրանիկ էֆ-ի հետ առանձին կմնային։

— Է՛յ, առանձին մնացած ատեննին ի՞նչ կընեին...

— Ալ բերանս բանալ մի տար։

— Հելե՛, հելե՛, ըսե նայինք։

— Չեմ գիտեր,— պատասխանեց Սուրբիկ, իբր թե ամոթահար՝ ձեռքով երեսը ծածկելով։

Տիկին Շազիկ հասկցավ, որ այդ ճամփուն մեջ ավելի բան մը չպիտի քաղեր, սպասուհին ըսածները պարզ բամբասանքներ էին՝ առանց որոշ փաստերու։

— Էյ, Միհրանիկ էֆենտիեն զատ ուրիշներու հետ ալ ատանկ հարաբերություններ ունե՞ր տիկին Սաթեն,— հարցուց։

— Հարկավ,— պատասխանեց սպասուհին հաստատ շեշտով մը։

— Որո՞ւ հետ տեսնենք... արդյոք իմ էրիկս ալ կա՞ անոնց մեջ,— և տիկին Շազիկ քահ-քահ խնդաց։

— Մեղա՜, ատ ի՞նչ խոսք է,— գոչեց Սուրբիկ,— Պողոս էֆենտին ատանկ մարդ չէ։

— Ես կատակ ըրի, էրկանս վրա կասկած չունիմ, միայն թե սա մյուսներու անունները տուր։

— Ո՞ր մեկը ըսեմ։

— Վայ, այդչափ շա՞տ են։ Ինչ որ է, մեկ հատին անունը տուր գոնե։

— Եթե ատանկ գործեր չունենա նե՝ ինչո՞ւ շաբաթը քանի մը անգամ պիտի ձգե Բերա երթա։

— Բերա երթալեն բան չըլլար, դուն ուրիշ բան գիտես նե՝ ըսե՛։

— Դեռ ի՞նչ ասեմ, այս պատմածներս բավական չե՞ն,— գոչեց Սուրբիկ։

— Բան մը չըսիր որ... սա մյուս մարդոց անունը ըսե տեսնենք։

— Ես չեմ գիտեր, Սահակ աղբարը աղեկ գիտե,— պատասխանեց Սուրբիկ։

— Սահակ աղբարը ո՞վ է...

— Մարգար էֆենտիենց ծառան... Հիմա ան ալ ձգեց ելավ քովերենն... անիկա կըսեր, որ հանըմը միշտ Բերա կվազե նե՝ ըսել է ատոր տակը բան մը կա։

— Դուն աչքովդ բան մը տեսա՞ծ ես,— գոչեց Շազիկ, որուն համբերությունը կսպառեր։

— Չէ՛,— պատասխանեց Սուրբիկ,— ես ի՞նչ կրնամ տեսնալ, մեկտեղ չէի երթար դուրս ելած ատեն։

— Էյ, Սահակը տեսա՞ծ է...

— Ան ալ աչքովը չէ տեսած... բայց...

— Բայց ի՞նչ։

— Ճանըմ, հանըմ, ինչո՞ւ ասանկ կըսես, մարդս անպատճառ աչքո՞վը տեսնալու է, որ հավատա, ես ձեռքս կրակը կդնեմ, որ անանկ ատեն-ատեն Բերա վազելուն մեջ անպատճառ բան մը կա... պատվավոր կնիկները տուներնին կնստին, կամ դուրս ալ ելլան նե՝ իրենց էրկանը, կամ եղբորը հետ կելլան։ Դուն ինչո՞ւ շարաթը քանի մը անգամ Բերա չես երթար կոր։

— Ես ուրիշ,— պատասխանեց Շազիկ։

— Ես պատվավոր ընտանիքներ ալ տեսած եմ, անպատիվներ ալ,— շարունակեց Սուրբիկ,— ամիս մը տուն մը կենամ նե՝ ամենուն ալ ինչ ըլլալը կհասկնամ։

Բոլոր այս խոսքերը չէին կրնար գոհացնել Շազիկը, որ դրական ապացույցներու պետք ուներ։ Իզուր իր հարցուփորձը առալ տարավ հաստատ հենակետ մը գտնելու հույսով։

Սուրբիկի ամբաստանությունները հետզհետե տարտամ ու անորոշ կդառնային։ Հայտնի կերևար, որ սպասուհին բան մը չէր տեսած, այլ ճամփու դրվելեն զգացած սրտմտութենեն էր, որ իրեն շարախոսությունները ընել կուտար։

Շազիկ հուսախաբ եղած էր։ Եվ սակայն չէր ուզեր անոր օձիքը թողուլ։

Անպատճառ պետք ուներ Սուրբիկի՝ իր ամուսնույն հետ հաշտվելու համար։

Սատանայական հնարք մը խորհեցավ։

Ձայնը ցածցուց և ըսավ Սուրբիկին.

— Կուզե՞ս դրամ շահիլ։

— Դրամ շահիլ ո՞վ չուզեր, հանըմ,— պատասխանեց սպասուհին, որուն աչքերը հույսի նշանով մը շողացին։

— Եթե խոսքս աղեկ մտիկ ընես և ըսածներս կետ առ կետ կատարես, քեզի աղվոր դրամ կշահեցնեմ։

— Ի՞նչ պիտի ընեմ, ձեռքես գալի՞ք բան է...

Տիկին Շազիկ պահ մը հեռացավ սենյակեն, հետո վերադարձավ և երեք մեճիտիե դնելով Սուրբիկի ձեռքը, ըսավ.

— Կարծեմ գեղը պզտիկ տղա մը ունիս։

— Այո՛, Շազիկ հանըմ, վեց տարեկան մանչ մը ունիմ։

— Այս դրամը ղրկե, թող իրեն հագուստ շինեն... կամ դուն աստեղեն առ, ղրկե։

— Շատ շնորհակալ եմ, աստված կյանք տա ձեզի,— գոչեց սպասուհին հուզված շեշտով մը,— աստված Պողոս էֆենտիին վաստակը ավելցնե...

— Եթե իմ խոսքս մտիկ ընես՝ դեռ ասոր պես շատ դրամներ ձեռքդ կանցնի,— ըսավ Շազիկ չարաճճի նայվածքով մը։

— Հրաման ըրե, հանըմս, ձեռքես ինչ որ գա՝ ընեմ,— պատասխանեց Սուրբիկ։

— Այս գիշեր գործդ լմնցնելե ետքը կրնա՞ս հոս գալ։

— Ինչո՞ւ չէ, կուգամ, էֆենտին ու հանըմը կերակուրը ուտելեն ետքը ալ ինծի գործ չմնար որ...

— Միայն թե առաջուց գործը կարգադրենք... հոս գաս նե՝ քեզ Պողոս էֆենտիին պիտի ներկայացնեմ և անոր պիտի պատմես քիչ մը առաջ ըսածներդ։

— Կպատմեմ, հանըմ, բայց ետքը գլուխս փորձանք մը չգա։

— Խե՜նթ ես, ի՞նչ փորձանք, մենե խոսք դուրս չելլեր, ասկե զատ ինչ ալ որ ըլլա, քու անունդ գաղտուկ կպահենք, անոր համար վստահ եղիր... մեր միտքը բոլորովին ուրիշ է։

— Կհասկնամ,— պատասխանեց Սուրբիկ նրբորեն։

Արդարև սպասուհին արդեն իսկ կռահած էր այս մանրակրկիտ հարցուփորձին շարժառիթը։ Գիտեր թե ինչեր խոսվեր էր տիկին Շազիկի մասին, գիտեր նաև, թե ո՞րոնք եղած էին պատճառը

գայթակղության երևան եկելուն։ Հիմա փոխադարձ վրեժխնդրությունն էր, որ կպատրաստվեր ու զինքն ալ կուզեին գործիք ընել։ Այս դերը խաղալու պատրաստակամությունը չէր, որ կպակսեր իր քով, քանի որ ինքն ալ իր պզտիկ վրեժը ուներ և կուզեր գոհացում տալ անոր, միայն թե հետևանքներեն կվախնար։ Այդ հարուստները կրնային ջրին երես ելլալ, մինչդեռ իրեն պես աղքատ սպասուհի մը անոնց դեմ պայքարելով, կրնար գլխին անակնկալ փորձանքներ բերել։

Տիկին Շազիկ նշմարեց Սուրբիկի վարանումները և սիրտ տալու համար անոր ըսավ.

— Դուն մեզի հետ եղիր՝ նայե՝ ինչ օգուտներ կքաղես, մենք քեզի պարապ չենք հաներ։

— Գիտե՛մ, հանըմ, գիտե՛մ, բայց եթե գիս ետքը օրթան ձդեք, ի՞նչ կըլլա վիճակս, Մարգար էֆենտի անանկ մարդ մըն է, որ ամեն գեշություն կրնա ընել.... ես անոր հետ գլուխ կրնա՞մ ելլել։

— Ճանըմ դուն ալ, խենթը, ի՞նչ կրնա ընել քեզի։

— Ես ի՞նչ գիտնամ, էֆենտիիս խոսք մը ընելուն պես, ես հացես կելլամ։

— Եթե անանկ բան մը ըլլա նե՝ հոս տեղդ պատրաստ է... կուզես նե ըլլալուն ալ մի սպասեր, այսօրվընե եկուր...

Այս ապահովությունը արդարև սրտապնդեց սպասուհին։

— Դուք այսպես խոսք տալերնեդ ետքը, ալ սիրտս հանդարտ է,— հայտարարեց։

— Հիմա դառնանք մեր գործին,— ըսավ Շազիկ։— Այսպես բոլոր գիտցածներդ մեկիկ-մեկիկ պիտի պատմես մեր էֆենտիին։

— Ինչ որ քեզի ըսի՝ պատրաստ եմ անոր ալ կրկնելու, արդեն իմ խոսքերուս մեջ սուտ չի կա, ես ուրիշ սպասուհիներու պես չեմ։

— Գիտեմ այդպես ըլլալը, միայն թե ատիկա բավական չէ...

— Ուրիշ ի՞նչ կուզեք, որ ընեմ։

— Ինծի պատմածներուդ մեջ կարևոր բան մը չկա։ Ես կուզեմ, որ խնդիրը ուրիշ կերպով պատմես Պողոս էֆենտիին։

— Շազիկ հանըմ, միտքդ չեմ հասկնար կոր։

— Կեցիր բացատրեմ։ Միհրանիկ էֆենտիին ու Սաթենին հարաբերություններուն մասին որոշ բաներ ըսելու ես։

— Ի՞նչ բան...

— Թրինուկի համար իբր թե, օր մը առանձին գտնված ատենն բան մը փնտռելու համար իրենց սենյակին դուռը կբանաս և կտեսնես, որ Միհրանիկ էֆ. հանըմիդ ճիտը կհամբուրեր կոր, ուրիշ օր մըն ալ վրա կհասնիս ճիշտ այն միջոցին, որ տիկին Սաթեն Միհրանիկի ծունկին վրա նստած էր...

— Բայց Շազիկ հանըմ, անանկ բան չէ եղած նե...

— Ճանըմ, զարմանալի բան, քիչ մըն ալ քովեդ կավելցնես։

— Սո՞ւտ խոսիմ։

— Սուտի ի՞նչ կա, ինչե՞ն գիտես, որ ատանկ բաներ չեն ըրած... ի՞նչ պարզամիտ աղջիկ ես, գյուղացի ըլլալդ հայտնի ըրիր, մարդ ամեն բան աչքովը չտեսնար. երբեմն ալ մտքով կգուշակե... կրնա՞ս երդում ընել, որ ըսածներս չեն ըրած։

— Չէ՛, ինչպես կրնամ չգիտցած բանիս համար երդում ընել։

— Անանկ է նե՝ երկար մի ըներ, ես ինչ կըսեմ կոր նե՝ մտիկ ըրե... հիմա աս ասանկ կպատմես Պողոս էֆենտիին։

— Սեպե, որ պատմեցինք, հետո՞...

— Հետո, ուրիշ սիրահարներու խոսքը ըրիր, Սահակ աղբորմե լսած ես եղեր։

— Այո՛, Սահակ աղբարը կըսեր, որ հանըմը անպատճառ բան մը ունենալու է, որ շաբաթը քանի մը անգամ Բերա կերթա։

— Ատանկ անորոշ խոսք չըլլար, դուն Պողոս էֆենտիին կըսես, որ Սահակ աղբարը օր մը դիպվածով տեսեր է, որ տիկին Սաթեն Խոսրով էֆենտիին հետ Պոն Մարշեի դեմը գտնվող փասատահին խանութը մտեր ու երկար ատեն հոն մնացեր են...

— Խոսրով էֆենտին ո՞վ է,— հարցուց Սուրբիկ զարմացած։

— Ճանըմ, ո՞վ պիտի ըլլա, Քանասարյան Խոսրով էֆ-ն, տիկին Սաթենին հին սիրահարը։

— Այդ անունը բնավ չէի լսած։

— Հարկավ լսած չպիտի ըլլաս, աղջիկնության սիրահարներեն է...

— Մեղա՜, ինչե՞ր կլսեմ կոր։

— Ինչ որ է, ըսածներս ազեկ միտք պահեցի՞ր, չելլես սխալ խոսք մը ընես։

— Այո՛, բայց Սահակ աղբարը ատանկ բաներ չէ ըսած ինծի։

— Ճանը՛մ, ով որի, երթալու Սահակ աղբարը փնտռելու, հարցաքննելու չեն ա, դուն քո գործդ նայե։

— Ախ հանըմ, կվախնամ, որ այդ գործեն պելա մը գա գըլխուս։

— Տղա մի ըլլար, քա՛ աղջիկ, պելայի մելայի բան չի կա... այս գործեն քեզի պոլ-պոլ փարա պիտի գա, ըլլալիքը սա է։ Այս իրիկուն եթե ըսածիս պես Պողոս էֆ-ին պատմես, ոսկի մը ինե գիտցիր, էֆ-ենն առնելիքդ ալ զատ։

Այս հեռապատկերը ցրեց սպասուհիին բոլոր վարանումները։

— Իրիկունը գործս լմնցնելուս պես կուգամ,— ըսավ։

— Ըսածներս աղեկ միտքդ պահե։

— Մեկիկ-մեկիկ միտքս են,— հաստատեց Սուրբիկ և կրկին խոստանալով հավատարմաբար կատարել ստացած հրահանգները, մեկնեցավ տիկին Շազիկի քովեն։

Պողոս էֆ. իրիկունը երբ վերադարձավ, առաջին գործը եղավ կնոջը հարցնել։

— Սուրբիկին լուր ղրկեցի՞ր։

— Ղրկեցի՛,— պատասխանեց Շազիկ,— գործը լմնցնելե ետքը պիտի գա եղեր։

— Դուն զինքը մեյ մը չտեսա՞ր։

— Չէ՛, ի՞նչ տեսնեմ, քանի որ իրիկունը պիտի գա... ես արդեն ատանկ սպասուհիները դեմս առնել խոսեցնելը չեմ սիրեր։

Պողոս էֆ. գոհ մնաց, որ կինը նախապես չէր տեսնված Սուրբիկին հետ, կկարծեր, որ թերևս անոր թելադրանքներ ըներ ու Սուրբիկ անոնց ազդեցության ներքև ճշմարտությունը խեղաթյուրեր։ Շազիկի ամուսինը առտըվնե մինչև իրիկուն իր վրեժխնդրական ծրագիրներուն վրա մտածած էր։ Եթե կարենար փաստացի ապացույց մը ձեռք բերել Սաթենի կամ Մարգար էֆ-ի դեմ, իր վրեժը լուծած պիտի ըլլար, և անոր հետ մեկտեղ իր անունին վրա բերած արատը մաքրած, գոնե ինքը այսպես կհավատար։ Եթե Մարգար էֆ. ճիշտ իր վիճակին ենթարկվեր՝ այլևս իրարմե տարբերություն չպիտի ունենային և ասոր մեջ կգտներ իր արժանապատվության գոհացումը։

Իր խոստման հավատարիմ՝ Սուրբիկ գիշերը եկավ։ Շազիկ միջոցը դտավ բոպե մը առանձին գտնվելու սպասուհիին հետ և անոր ականջին փսփսաց.

— Էրկանս մի ըսեր, որ ցերեկը մեյ մը եկար ու միասին տեսնվեցանք... ըսածներս չի մոռնաս։

Եվ միևնույն ատեն ոսկի մը սահեցուց Սուրբիկի ձեռքը։

Երբ սպասուհին ներկայացավ Պողոս էֆենտիին, այս վերջինս գժնդակ կացության մը մատնվեցավ։ Չէր գիտեր ինչպե՞ս հարցուփորձը սկսեր։ Բացորոշաբար կզգար իր կատարելիք դերին պժգալի հանգամանքը և այս պատճառավ համարձակությունը կպակսեր։

— Գիտե՞ս քեզ ինչու համար հոս կանչեցի,— ըսավ Պողոս էֆենտի։

— Ի՞նչ գիտնամ, էֆենտի,— պատասխանեց Սուրբիկ սմսեղուկ դեմքով մը։

— Թող տիկինը բացատրե,— ըսավ Պողոս էֆենտի Շազիկը ցույց տալով։

— Ես ի՞նչ պիտի բացատրեմ, դուն ըսե ըսելիքդ,— պատասխանեց այս վերջինը։

— Դուն ավելի աղեկ գիտես ըսելիքդ, քանի որ արդեն խնդիրը բացեր ես ուրիշ անգամ...

Շազիկ ավելի հանդուգն, քան իր ամուսինը, Սուրբիկին դարձավ ու ըսավ.

— Աղջիկս, քեզ բերել տվինք, որպեսզի սա Մարգար էֆենտիին ու տիկին Սաթենին վրա գիտցածներդ ըսես։ Անցածները բաներ մը կպատմեիր կոր, աղեկ մը միտքս չմնաց, հիմա սանկ տեղն ի տեղոք պատմե տեսնանք։ Եթե ուզածիս պես պատմես՝ Պողոս էֆենտի քեզ աղվոր նվեր մը պիտի տա... անանկ չէ՞, Պողո՛ս էֆենտի։

— Արդեն պատրաստեր եմ,— պատասխանեց վաճառականը գրպանեն ոսկի մը հանելով ու քովը գտնված սեղանին վրա դնելով։

Սուրբիկի աչքերը շողշողացին, առտվընե ի վեր արդեն նվերներ ընդունած էր ու ահա հիմա երրորդ անգամ ըլլալով ոսկի մըն ալ պիտի առներ։

— Գիտցածս մեծ բան մը չէ, բայց պատմեմ,— ըսավ։

— Միայն թե ճիշտ ու ճիշտ պատմես ամեն բան, առանց քովեդ բաներ ավելցնելու,— դիտել տվավ Պողոս էֆենտի։

— Ավելի աղեկ կըլլա, որ ես հարցնեմ, դուն պատասխանես ու Պողոս էֆենտին ալ մտիկ ընե,— առաջարկեց Շազիկ։

Հարցուփորձը սկսավ և Սուրբիկ կետ առ կետ կրկնեց ինչ որ ցերեկը իրեն տոն տված էր Շազիկ։

Պողոս էֆենտի աչք ու ականջ կտրած կհետևեր Սուրբիկի խոսքերուն ու չէր կրնար իր ուրախությունը զսպել։

Վերջապես Սաթենի անհավատարմության ապացույցները կերևային որոշ, գրեթե անհերքելի։

Միայն թե գլխավոր վկան, Սահակ աղբարը մեջտեղ չկար։

— Ո՞ւր է հիմա այդ Սահակը,— հարցուց Պողոս էֆենտի, երբ Սուրբիկ իր խոստովանությունը ավարտեց։

— Իրավ է որ, էֆենտի, չեմ գիտեր, բայց ուրիշ տուն ծառայության մտած է։

— Ո՞ւր տեղացի է, գիտե՞ս...

— Վանեցի։ Եթե ուզեք, ես հասկնամ ուր ըլլալը և ձեզի իմաց տամ...

— Շատ շնորհակալ կըլլամ։

— Գլխուս վրա, էֆենտի՛։

— Միայն թե ատեն անցնելու չէ, այսօր վաղը հասկնալու է։

— Հոս վանեցի մեկ-երկու ծառաներ կան, անոնցմե կրնամ տեղեկություն առնել։

— Քեզ տեսնեմ, աղջիկս, առ հիմա սա ոսկին, երբ Սահակին ո՞ւր գտնվելուն մասին ալ ճիշտ տեղեկություն մը բերես, քեզի ոսկի մըն ալ պիտի տամ։

— Շատ ապրիք. էֆ., աստված երկար կյանք տա ձեզի։

Եվ Սուրբիկ հեռացավ իր գրպանը տեղացող այս նվերներեն գինովցած։

Երբ այր ու կին առանձին մնացին, Շազիկ հաղթականորեն ու անպատկառ շեշտով մը գոչեց.

— Տեսա՞ր հիմա...

Այս կարճ խոսքը շատ բան կպարունակեր իր մեջ։ Հանդիմանություն մըն էր իր ամուսնույն ուղղված՝ անոր անհաղկի իրարանցումներուն, հուզումներուն, սրտմտության դեմ։ Շազիկ ըսել կուզեր, թե ինք միակ խաբված ամուսինը չէր, և թե ուրիշ կիներ ալ նույն բանը կրնեն ավելի ընդարձակ սահմանի մը մեջ, թե իրավունք չուներ ատանկ սովորական բանի մը համար այնքան խնդիրներ հարուցանելու։

Պողոս էֆ. շատ լավ ըմբռնեց այդ «տեսա՞ր հիմա»-ին իմաստը և լռեց հանցավորի մը պես։

Շազիկ չգոհացավ այդ փոքրիկ հաղթանակով։

Ծանոթ գայթակղական դեպքեն ի վեր առաջին անգամ ըլլալով հարձակողականի անցավ։

— Հիմա համոզվեցա՞ր Սաթենին ինչ տեսակ կնիկ ըլլալուն,— շարունակեց,— հիմա տեսա՞ր Մարգար էֆենտիին պատիվը քանի փարա արժելը... և այդ խայտառակներուն պատճառավ զիս ոտքի տակ առիր, ամենուն քով խաղք ըրիր...

— Բայց,— կմկմաց Պողոս էֆենտի,— իրողություն մը կար մեջտեղ...

— Ճանըմ, դուն ալ, իրողություն կա եղեր. . ի՞նչ պարապ խոսքեր, գործը վերվերեի տվիր մեծցուցիր... բայց դուն հանցանք չունիս, հանցանքը ան Մարգար էֆենտիինն է, որ քեզի անստորագիր նամակով մը ծուղակը ձգեց և իր գործը հաջողցուց...

Շազիկի այս խոսքերը զայրացուցին Պողոս էֆենտիին, որ գոչեց.

— Դուն խելոք կեցած ըլլայիր նե՝ անստորագիր նամակը ի՞նչ ազդեցություն կրնար ունենալ։

— Ես նորեն ըսածս կըսեմ... պարզապես խաղի եկար, ուրիշ կերպ կրնայիր վարվիլ...

— Ի՞նչ ընելու էի։

— Պարզապես ինձ առանձին բացատրություն ուզելու էիր, փոխանակ հրապարակային գայթակղություն հարուցանելու և պատիվնիս փարայի մը ընելու... ամեն մարդու կնիկ ալ ատանկ բաներ կընե, բայց ամեն էրիկ քեզ պես չի վարվիր...

— Թերևս իրավունք ունիս,— ըսավ Պողոս էֆենտի, այս անհաճո վիճաբանության վերջ տալու համար։

Հետո ավելցուց.

— Հիմա ալ կարգը Մարգար էֆենտիին եկավ... Նայինք ան ինչո՞ր պիտի վարվի, երբ իր կնոջը ըրածները իմանա։

— Վստահ եմ, որ անիկա քենե ավելի խելացի կերպով պիտի վարվի,— պատասխանեց Շազիկ հարձակողական շեշտով մը։

Բոլոր այս վիճաբանությունը գերազանցորեն կնեպացներ Պողոս էֆենտին, որուն ամբողջ մտածումը այս միջոցին իր ապագա վրեժխնդրության կերթար։ Սուրբիկին տված տեղեկությունները կվերլուծեր մտքին մեջ և անոնցմե օգտվելու հնարքներ կփորձեր։ Նզգար, որ իր կնոջ օժանդակությունը անհրաժեշտ էր իրեն գործը հաջողությամբ գլուխ տանելու համար։ Վաճառականը միշտ գնահատած էր Շազիկի խելքն ու ճարտարամտությունը և ինքիրեներ սարքելու համար անոր ունեցած մասնավոր հարմարությունը, ուստի գործը անուշ տեղը կապելու, վերջացնելու համար դրավ։

— Հիմա անցած, գացած խնդիրները ձգենք և զուր տեղը կրակը չհրահրենք... միասին աշխատինք սա Մարգար էֆենտիին ու Սաթենին հախեն գալու, և այն օրը, երբ հաջողինք, կխոստանամ քու ըրածներդ ներելու։

Երկրորդ անգամ հաղթանակը կտաներ Շազիկ, բայց ասով ալ չգոհացավ։

— Ո՞վ որու պիտի ներե,— գոչեց,— դո՞ւն ինձի մի, ես քեզի...

— Ճանը՛մ, դուն ինձի ներե՝ ես քեզի ներեմ, լմնցունենք,— պոռաց Պողոս էֆենտի համբերությունը սպառած։

Շազիկ վերջապես տեղի տվավ։ Թողուց իր հարձակողական շեշտը և սկսավ ավելի մեղմ կերպով խոսակցիլ ամուսնույն հետ։

— Սուրբիկը թերևս ուրիշ բաներ ալ գիտե և չուզեց ըսել,— գիտել տվավ Պողոս էֆ.,— դուն նորեն սղեկ մը խոստովանցուր զինքը։

— Ես անիկա վաղը կկանչեմ, նորեն, խոսեցնել կուտամ, դուն բնավ հոգ մի ըներ։

Այդ իրիկունը «դեպք»-են ի վեր առաջին անգամ ըլլալով՝ այր ու կին գիշեր բարի ըսելով բաժնվեցան իրարմե։

ԺԶ

Մեր պատմության հերոսներեն մին՝ Պարոն Գարեգին Մարգարյան, բավական ատենե ի վեր աչքե հեռու թողուցինք։ Ընթերցողները կհիշեն անշուշտ, որ երիտասարդ գրագիրը ստիպված էր հեռանալ հաճի Հակոբ Սամիկյանի քովեն, Մարգար էֆենտիի հալածանքներուն հետևանքով, կհիշեն նաև, որ Գարեգին նշանված էր ոսկերիչ Սահակ աղայի աղջկան՝ Նարդիկի հետ։

Գարեգին պարկեշտ ու պատվախնդիր երիտասարդ էր, չէր ուզեր իր համոզումները զոհել Մարգար էֆենտիի քմահաճույքներուն և միշտ պայքարած էր անոր դեմ։ Իր այս ընթացքը բնականաբար զինքը դասել տված էր Պողոս էֆենտիի կուսակիցներու շարքին մեջ, թեև ներքնապես Գարեգին ջերմ պաշտպան մը չէր եղած Թաղական Խորհրդի նախկին ատենապետին։ Ք. Թաղին մեջ, ուր երկու կուսակցություններ իրարու դեմ լարված էին, Գարեգին կշարունակեր ընդհանուր համակրանք վայելել, ոչովհետև իր հակառակորդներն ալ չէին կրնար ուրանալ անոր ուղղամտությունը։

Երբ «Շանթ Ակումբ»-ի անդամներուն ձեռքով ընտրական գործողությունը խանգարվեցավ և թաղային ընտրությունը ապարդյուն մնաց՝ թաղեցիներու չեզոք մասը, տեղի ունեցած արարքներեն գայթակղած, ուզեց միջամտել և վերջ տալ տիրող խառնակություններուն և ասոր համար դիմում ըրավ Գարեգինի, որ Մարգար էֆենտիի հակառակորդ մը ըլլալով հանդերձ՝ երբեք ապօրեն միջոցներու դիմած չէր իր մղած պայքարը հաջողցնելու համար։

Երիտասարդը չմերժեց իրմե խնդրված ծառայությունը և խոստացավ ձեռքեն եկածը ընել։

Քանի մը թաղեցիներ իրեն առաջնորդությամբ գացին ներկայացան Վարչության և կացությունը պարզեցին։

— Վարչությունը որոշած է հարգել տալ Սահմանադրությունը,— ըսավ ատենապետը։

— Ինչ կերպով,— հարցուց Գարեգին։

— Կրկին քվեարկություն կատարել տալով։

— Բայց դարձյալ խռովություններ կրնան ծագիլ։

— Ազգային իշխանությունը պետք չէ որ ոտնակոխ ըլլա։

— Մենք ալ համամիտ ենք ատոր։

— Ընբոստները խստորեն պիտի պատժվին,— շարունակեց ատենապետը։

— Միջոցներ ունի՞ք ատոր համար։

— Պետք եղած միջոցները պիտի խորհինք։

— Լավագույնն է միջին ճամփա մը գտնել,— առաջարկեց Գարեգին։

Քվեարկությունը խանգարված ըլլալով հանդերձ ցույց տվավ թե թաղին մեծամասնությունը Մարգար էֆենտիի և իր կուսակիցներուն հետ է։

— Այդ մասին տարակույս չի կա,— հաստատեց Գարեգին ամենայն անկեղծությամբ։

— Ուրեմն փոքրամասնությունը պիտի տեղի տա։

— Մենք ալ նույն կարծիքը ունինք, բայց դժբախտաբար այդ փոքրամասնությունը չպիտի ուզե տեղի տալ, երբ ընտրության մը ձեռնարկվի և հավանորեն կրկին ծայրահեղ միջոցներու պիտի դիմե, ուստի մենք եկած ենք խնդրելու, որ առայժմ ընտրությունը հետաձգվի, մինչև որ միտքերը հանդարտին։

— Բայց թաղային գործերը ո՞վ պիտի վարե...

— Վարչությունը թող իր կողմե առժամյա Թաղ. Խորհուրդ մը ընտրե,— առաջարկեց Գարեգին։

— Էֆենտիին ըսածը գործնական գաղափար է,— դիտել տրվավ Կարպիս Նիղակ էֆ.։

— Բայց մեծամասնությունը պիտի բողոքե այդ ժամանակ։

— Մեծամասնությունը չբողոքեր, եթե առժամյային մեջ իր թեկնածուներեն մեկ քանին առնվին։

— Այն ատեն փոքրամասնությունն ալ պիտի բողոքե։

— Կարելի է փոքրամասնությենեն ալ մեկ-երկու հոգի առնել։

Ատենապետը Պատրիարքին դարձավ և հարցուց։

— Ի՞նչ կըսեք, սրբազան։

— Մեկ-երկու հոգի ալ չեզոքներեն կդնենք, աղվոր թարխանա շուրպասի մը կըլլա,— պատասխանեց նորին սրբազնությունը։

Եվ քովը նստող ժողովականին ցած ձայնով հարցուց.

— Ան չէ՞ սմմա, աղեկ թարխանա ո՞ւր կծախեն։

— Իրավ որ չեմ գիտեր,— պատասխանեց ժողովականը։

Գարեգին կրկին իր ընկերներով պնդեց առժամյա Թաղական խորհրդի մը կազմության մասին և ի վերջո քաղաքական ժողովը խոստացավ առաջարկը նկատողության առնել։

— Կխնդրենք միայն, որ ձեր որոշումը շուտով տաք,—ըսավ Գարեգին։

— Ժողովս այսօր իսկ այդ մասին պիտի խորհրդակցի,— հաստատեց ատենապետը։

Թաղեցիները իրենց մուրատին հասած էին, ուստի շնորհակալություն հայտնելով մեկնեցան ժողովասրահեն։

Հետևյալ օր, թերթերը խառն ժողովի որոշումներու շարքին մեջ կծանուցանեին հետևյալը.

«Ժողովը նկատի առավ Ք. Թաղի Թաղական խորհրդի խնդիրը և լսելե հետո Թաղեցիներու կողմե ներկայացած պատգամավորություն մը, հարմար չդատեց ներկա պարագաներուն մեջ նոր ընտրության մը հրահանգ տալ և որոշեց առժամյա Թաղական խորհուրդ մը կազմել, վարելու համար ընթացիկ գործերը մինչև ցնոր տնօրինություն։

«Առժամյա Թաղական խորհրդի անդամ նշանակվեցավ Մարգար էֆ. Սասանյան, նախկին Թաղական խորհրդի անդամներ Մանուկ և Գարեգին էֆենտիները, Միհրանիկ էֆ. և Մելիտոս էֆ.»։

Այդ կարգադրությամբ Մարգար էֆենտիի կուսակցությունն էր, որ կհաղթանակեր, քանի որ հակառակ կուսակցությենեն միայն Գարեգին էֆենտին կար։

Ընկեր Սուսերյանց և պարոն Թորգոմ արամատությամբ կարգացին այս լուրը, մանավանդ ուսուցիչը հուսահատորեն գոչեց

— Կործանեցա՜... հացես եղա։

Խեղճը իզուր օգնություն մը կապասեր Սուսերյանցեն, այս վերջինը, ափսո՜ս, ոևէ հույս չէր ներշնչեր իրեն։

— Ինչ կուզես, որ ընենք։

— Պիտի ընդունի՞ք այս ապօրեն առժամյա խորհուրդը,— դարձեց Թորգոմ իր ընկերոջ։

— Պետք է պահանջել, որ օրինական ընտրությամբ ատենադրական Թաղ. խորհուրդ մը ընտրվի։

— Եվ եթե մեր պահանջքին գոհացում տա՞ն...

— Ընտրություն կկատարենք։

— Եվ դարձյալ մեծամասնությունը անոնք կշահին... վերջին քվեարկությունը ցույց տվավ, որ մենք փոքրամասնություն ենք, և երբ երկրորդ անգամ քվեարկության ձեռնարկվի՝ վստահ եղիր, ալ ավելի քիչ քվե պիտի կրնանք ունենալ... լավագույն է թողուլ, որ այսպես ըլլա, գոնե մեր հակառակորդները չեն կրնար պարծենալ թե օրինավորապես հաղթեցին մեզի և մենք միշտ կրնանք առժամյա Թաղական խորհրդի ընտրությունը քննադատել։

— Ուրեմն պայքարեն պիտի հրաժարի՞նք։

— Բնավ երբեք, ընդհակառակը, պիտի պատրաստվինք ապագա նոր պայքարին, պիտի աշխատինք մեր կուսակցությունը զորացնել, մեզի հող պատրաստել... ահագին գործ կա ընելիք, դուն անհոգ եղիր։

— Այո՛, բայց առժամյայի առաջին գործը պիտի ըլլա գիս վարժարանեն դուրս նետել։

— Դա ոչինչ...

— Ինչպե՞ս դա ոչինչ։

— Անհատական շահերը նկատի չեն առնվիր, երբ հասարակական շահեր կան մեջտեղ։

Ուսուցիչը հասկցավ, որ անօգուտ էր խոսակցությունը ավելի երկարել և հեռացավ Սուսերյանցի քովեն՝ տխուր տպավորությամբ ներքև։

Ամբողջ գիշերը գրեթե անքուն անցուց։

Հիմա ճշմարտապես կզղջար այդ պայքարին մասնակցած ըլլալուն համար։

— Ինչի՞ համար, որ թաղական խնդիրներու մեջ մտա,— կմտա-

ծեր,— կուզե Մարգար էֆենտին թաղական ըլլա, կուզե Պողոս էֆենտին, երկուքին ալ խերն անիծեմ... ես իբրև ուսուցիչ իմ գործիս նայելու էի... ա՜խ, այդ «Շանթ Ակումբ»-ի անդամակցությունս է, որ զիս շվարեցուց և այսպես պայքարի մեջ մտցուց... Սուսերյանցի խոսքերը միտքս խանգարեցին։ Ես առաջ ատանկ բաներով չէի զբաղեր, միմիայն գործս կնայեի, թաղականը ո.վ կուզե թող ան ալ ըլլար, բավ է, որ ամսականս կանոնավոր կվճարվեր...

Այս մտածումները հետզհետե կբորբոքեին զինքը։ Կամաց-կամաց սկսեց ատելություն մը զգալ իր երեկի գործակիցներուն հանդեպ։

— Մեյ մըն ալ ոտքս «Շանթ Ակումբ»-ը չպիտի դնեմ,— վճռեց։

Բայց այսչափով ալ չգոհացավ։

— Անդամակցութենե պիտի հրաժարիմ,— ըսավ ինքնին։

Այս որոշումը զինքը սփոփեց քիչ մը։

— Անմիջապես հրաժարականս գրեմ,— մտածեց և իսկույն թուղթ գրիչ առնելով, մտածումը գործադրեց։

Հետո հրաժարագիրը պահարանի մեջ դրավ, վրան Սուսերյանցի անունը գրեց, ու գրպանը դնելով դուրս ելավ։

— Ընկեր Սուսերյանց ինչ պիտի ընե արդյոք, երբ նամակը կարդա,— կմտածեր,— երկինքեն ընկածի պես պիտի ըլլա...

«Շանթ Ակումբ»-ը հասնելով նամակը հանձնեց հոն գտնվող մանչու մը և հեռացավ։

Երբ փողոց ելավ, բոլորովին թեթևացած զգաց ինքը։

Կարծես կապանքե մը ազատած էր։

— Հիմա ինքզինքս գտա... հիմա անկախ մարդ մըն եմ, իմ գլխովս կրնամ մտածել,— խորհեցավ։

Կիրակի օր մըն էր և թաղը սովորականեն ավելի ոգևորյալ կերպարանք մը առած էր։ Սրճարանները լեցուն էին ու ամեն մարդ օրվան մեծ դեպքին՝ Առժամյա Թաղ. Խորհրդի կազմության վրա կխոսեր։

Հա՞րկ է ըսել, որ մեծամասնությունը գոհ մնացած էր Վարչության որոշումեն։

Ուսուցիչը սրճարան մը մտավ։ Իր մուտքը հեգնական ողջույններով ընդունվեցավ։

— Աչքդ լո՜ւյս,— գոչեց մեկը։

— Առի՞ք մի հիմա,— ըսավ ուրիշ մը։

— «Շանթ Ակումբ»-ը ի՞նչ ջուրի մեջ է,— հարցուց երրորդ մը։

Ուսուցիչը մոտեցավ իրեն խոսք նետողներուն։

— Ես «Շանթ Ակումբ»-ին հետ կապակցություն չունիմ,— ըսավ։

— Վա՞յ, երբե՜ն ի վեր...

— Հրաժարականս տված եմ։

— Սուտ կըսես։

— Սուտ ինչո՞ւ պիտի ըսեմ, հրաժարեցա, ես ալ ատանկ խնդիրներու չպիտի խառնվիմ, պարապ տեղը ժամանակս չեմ ուզեր վատնել ու ասոր անոր ձեռքը գործիք ըլլալ։

— Հիմա՞ խելքդ գլուխդ եկավ։

— Ուսուցիչ ըսածդ պետք չէ որ թաղային գործերով զբաղի, կուսակցական ըլլա, ուսուցիչը այդ տեսակ պայքարներեն դուրս մնալու է, անիկա բարձրեն նայելու է ամեն բանի վրա... ուսուցչին պաշտոնը վսեմ պաշտոն մըն է։

Ներկաները զարմանքով կլսեին պարոն Թորգոմի այս նոր դավանությունը, բայց ինք կշարունակեր պարզել իր տեսությունը ուսուցչի բարձր դերի մասին։

Հետո հեռացավ հոնկե և ուրիշ սրճարան մը մտավ ու դարձյալ ծանուց «Շանթ Ակումբ»-ին անդամակցութենե հրաժարիլը։

— Բայց քանի որ հեռացած ես անոնցմե՝ ինչո՞ւ Մարգար էֆ-ի չես մոտենար,— թելադրեց մեկը։

— Մոտենամ ի՞նչ բանի համար,— հարցուց Թորգոմ։

— Պաշտոնդ պահելու համար։

— Պարկեշտ և կարող ուսուցիչ մը միշտ գործ կրնա գտնել։

Պարոն Թորգոմ այս խոսքերը արտասանելե ետքը, խրոխտաբար հեռացավ, բայց քիչ ետքը հիշեց այդ խոսակցությունը և ինքնիրեն սա խորհրդակցությունն ըրավ.

— Մարդը թերևս իրավունք ունի, քանի որ հիմա հարաբերություններս խզած եմ մյուսներուն հետ, ի՞նչ արգելք կա, որ մոտենամ Մարգար էֆ.-ի... իրարու հետ անձնական խնդիր մը չենք ունեցած բնավ, իմ մղած պայքարս լոկ գաղափարական էր։ Հիմա որ ամեն բան լմնցավ, ինչ պետք ունիմ թշնամական ենթացք մը բռնելու իրեն հանդեպ, Մարգար էֆ.-ն ալ շատ շնորհքով մարդ է, ան ալ այնքան իրավունք ունի Թաղ. Խորհրդի ատենապետ ըլլալու, որքան Պողոս էֆ.-ն... գուցե անկեց ավելի իրավունք ունի։ Պողոս էֆենտին ո՞վ է որ... խելացությունը խնդիրը անուշ տեղը կապելն է. իմ պաշտոնս այնպես կպահանջե, որ վարժարանեն դուրս ուրիշ բանով չզբաղիմ։

Այս մտածումներով տոգորված էր, երբ փողոցը հանդիպեցավ Ռափիկ աղային, նախկին Թաղ. Խորհրդի անդամ։

— Բարև վարժապետ,— ըսավ այս վերջինը,— ո՞ւր այդպես։

— Կպտտիմ կոր,— պատասխանեց Թորգոմ։

— Վարչության որոշումին ի՞նչ ըսիր։

— Խնդիրը վերջացուցեր է, անկե աղեկը չի կա։

— Բայց ասիկա աղվոր հարված մըն է ձեզի համար։

— Մեզի ըսելով ի՞նչ կհասկնաս...

— Այսինքն ձեր կուսակցության... «Շանթ Ակումբ» է, ի՞նչ է...

— Ես անոնց հետ կապ չունիմ,— գոչեց ուսուցիչը։

— Թոհաֆ բան, դուն ի նոցանե չե՞ս...

— Չէ, եղբայր, ես հրաժարականս տված եմ։ Արդեն շատոնց միտքս դրած էի, բայց առիթի մը կսպասեի կոր...

— Ըսել է հիմա «Շանթ Ակումբ»-են չե՞ս։

— Բնավ երբեք։

— Անանկ է նե՝ եկո՛ւր միասին երթանք...

— Ո՞ւր...

— Շնորհավորության։

— Չեմ հասկնար կոր, ինչ ըսել կուզես,— ըսավ ուսուցիչը։

— Ես Մարգար էֆ-ին կերթամ կոր իր պաշտոնը շնորհավորելու, եկուր քեզ միասին տանիմ։

— Եղբա՛յր, կըլլա՞...

— Ինչո՞ւ չէ, Թոհաֆ բան, դուն ալ Թաղեցի չե՞ս... մանավանդ որ դպրոցին ալ տեսուչն ես, պարտականությունդ է երթալ նոր Թաղականները շնորհավորել... հիմա քու յուլարդ անոնց ձեռքն է։

Այս նմանությունը թեև շատ հաճո չթվեցավ պարոն Թորգոմին, այնուամենայնիվ զգաց, թե Ռափիկ աղա իրավունք ուներ։

— Բայց ես մինչև հիմա իբրև Մարգար էֆ-ի հակառակորդը ճանաչված եմ,— առարկեց։

— Ճանըմ, քանի որ «Շանթ Ակումբ»-են հրաժարեր ես, ըսել է որ ալ հակառակորդ չես, ասկե զատ Մարգար էֆ-ն անանկ մարդ չէ, մարդու դեմ ոխ չի պահեր... ներողամիտ մարդ է։ Քալե՛ երթանք։

Ուսուցիչը պահ մը վարանեցավ։ Ներքնապես թեև գոհ էր իրեն եղած այս առաջարկությենեն, բայց մյուս կողմե հետևանքներեն կվախնար։ Եթե երթեք Սուսերյանց և իր ընկերները իմանային այս այցելությունը...

— Սուսերյանց դիս իբրև մատնիչ, դավաճան մը պիտի ամբաստանե,— կմտածեր։

Ռափիկ աղա նշմարեց ուսուցչին վարանումը և ըսավ.

— Քալե՛ աղբար, ես փորձառու մարդ եմ, իմ խոսքերուս մտիկ ընելու ես, հարուստ մարդուն բարեկամությենեն միշտ կօգտվիս... ասկե զատ մարդը վաղը Թաղական Խորհրդի ատենապետ պիտի ըլլա, դուն ալ վարժարանին տեսուչ ես... դպրոցը հիմա գոց է, նոր տարեշրջանը պիտի սկսի, Թաղական Խորհուրդը պիտի որոշե դասատուները, կհասկնա՞ս ինչ ըսել կուզեմ կոր, երկար մի ըներ, քալե՛ տեսնենք։

— Երթա՛նք,— ըսավ պարոն Թորգոմ, ինքն իր վրա ճիգ մը ընելով։ Բայց ճամփան կրկին Սուսերյանցի ուրվականը ցցվեց իր երևակայության առջև։

— Վատ, վատ, վատ,— կըսեր ուրվականը,— հացիդ համար սեղբունքդ ոտնակոխ կընես, գաղափարային պայքարը կծախես պնակ մը կերակուրի համար, ինչպես Եսավը իր անդրանկության իրավունքը ծախեց ոսպե ապուրի մը համար... անարժան արարած։

Հասած էին արդեն Մարգար էֆենտիի տան դռան առջև։

— Ես չգամ, ավելի աղեկ կըլլա,— ըսավ Թորգոմ։

— Տղա մի ըլլար, ծո՛,— գոչեց Ռափիկ աղա։

— Ուրիշ օր մը կերթամ շնորհավորելու։

— Մինչև հոս գալեդ ետքը ե՞տ պիտի դառնաս։

— Եղբայր, թերևս Մարգար էֆենտին դժգոհ մնա այցելությենես։

— Ես հետդ եմ, մի՛ վախնար։

Տան դուռը բացված էր արդեն։ Այլևս հնար չէր ընկրկիլ։ Ուսուցիչը մտավ ներս և երկուքը միասին սանդուխեն վեր ելան, ընդունելության սենյակը երթալու համար։

Պարոն Թորգոմի սիրտը ուժգին կբաբախեր։

— Սուսերյանց եթե իմանա,— կմտածեր անդադար։

Եվ ինքզինքին ուժ տալու համար մտովի կկրկներ.

— Ի՞նչ իրավունք ունի բան մը ըսելու։ Ես հրաժարականս տված եմ, ալ «Շանթ Ակումբ»-ին անդամ չեմ, ազատ անկախ մարդ մըն եմ...

Հասան ընդունելության սրահին դռան առջև Ներսեն խոսակցության ձայներ մը կլսվեին։ Կերևար թե արդեն ուրիշ թաղեցիներ փութացած էին իրենց շնորհավորությունները բերելու նոր թաղական խորհրդի ատենապետին։ Ուսուցիչը իր ժաքետը կոճկեց, ֆեսը շտկեց ու Ռափիկ աղային ետևեն մտավ սրահ։

Հանկարծ ափ ի բերան գամվեցավ դռան քով, աչքերը խոշոր-խոշոր բացած, գերագույն զարմացումով... ընկեր Սուսերյանց, ոտքի վրա կխոսեր Մարգար էֆ-ի հետ, որ բազմած էր թիկնաթոռի մը մեջ։

— Չպետք է թաղը իր նախկին անկերպարանք վիճակին մեջ թողուլ,— կրսեր «Շանթ Ակումբ»-ի հերոսը,— դուք որպես ֆինանսական և մտավորական ուժ, որպես գիտակից գաղափարի, պետք է հետաքրքրվեք կրթական հարցով... թաղին մեջ էվոլյուցիան պետք է սկսի վարժարանեն։

Երկու նորեկներուն մուտքը պահ մը ընդհատեց ընկեր Սուսերյանցի խոսքերը։

Վաճառականը նշմարած էր ներս մտնողները և նստած տեղին ողջունեց զանոնք։

— Հրամմեցե՛ք Ռափիկ էֆենտի... եկո՛ւր նայինք, մյուսյու Թորգոմ։

Միհրանիկ էֆենտի, Մանուկ աղա, պր. Նշանիկ, Մելիտոս էֆ. նույնպես ձեռքով բարևեցին երկու հյուրերը։

Ռափիկ աղա մոտեցավ վաճառականին, ձեռքը թոթվեց ու ըսավ։

— Մարգար էֆ. այսօր մեզ ամենուս համար ուրախության օր մըն է, սրտանց կշնորհավորեմ ձեր պաշտոնը։

— Նայինք, դեռ վերջնական բան մը չկա,— պատասխանեց Մարգար էֆենտի։

— Ինչպե՞ս,— գոչեց Ռափիկ աղա,— Վարչության որոշումը պաշտոնական էր...

— Այո՛, անոնք ընտրեր են, բայց տեսնենք ես պիտի ընդունի՞մ...

— Չպետք է մերժել,— գոչեց Սուսերյանց։

Պարոն Թորգոմ ալ ավելի ապշահար, նայեցավ այս խոսքերը արտասանողին երեսը։

— Արդյոք սխա՞լ կտեսնամ, սխա՞լ կլսեմ կոր,— մտածեց ինքն իրեն։

— Գոնե թաղեցիներուն խաթերը համար պետք չէ որ մերժեք,— ըսավ Ռափիկ աղա։

— Աղեկ—ամմա զբաղումներս չեն ներեր... թաղականությունը պարապ մարդոց գործն է... ես արդեն առաջին օրեն ըսած էի, որ չեմ ուզեր թաղական ըլլալ... Գոնե մինակ թաղական ըլլայի նե՝ ինչ որ է, բայց գիտեմ, որ զիս բոնի ատենապետ պիտի ընեն, ամեն գործ իմ վրաս պիտի մնա...

— Կարելի է քեզ ատենապետ չենք ըներ,— ըսավ Մանուկ աղա խնդալով։

— Եթե խոսք տաք, որ զիս ատենապետ չեք ըներ, այն ատեն կարելի է կընդունիմ։

— Չպետք է խոսք տալ,— գոչեց Սուսերյանց՝ Մանուկ աղայի դառնալով։

— Ճանը՛մ, Մարգար էֆենտի՛, թաղականությունը այդչափ ծանր գործ մը չէ,— դիտել տվավ Ռափիկ աղա,— ամենքս ալ վարած ենք այդ պաշտոնը, շաբաթ օր մը, կիրակի օրերը, քանի մը ժամ զոհես նե՝ բավական է... արդեն առանձին ալ չպիտի ըլլաս, ընկերներ ունիս հետդ... ամենքն ալ գործունյա մարդիկ, փորձառու մարդիկ...

Պրն. Թորգոմ կամաց-կամաց մոտեցավ Մարգար էֆենտիի քով և կշանար ինքն ալ իր կարգին խոսք մը տեղավորել։

— Թաղեցիներուս փափաքն է,— ըսավ,— մեր թաղային մատակարարության ղեկը ձեր ձեռքերուն մեջ տեսնել։

— Իրա՞վ կրսես, մյուսյու,— հարցուց վաճառականը հեգնական շեշտով մը։

— Հանուն ազգային վարժարանի ուսուցչական մարմնույն և պաշտոնեության, այս փափաքը ներկայացնելու պաշտոն ունիմ ձեր ազնվության։

— Բայց դուն առաջ Պողոս էֆ.-ին կուսակիցներեն չէ՞իր,— ըսավ Մարգար էֆ. ժպտալով։

— Այսինքն,— ըսավ պրն. Թորգոմ թեթև շիկնելով,— խընդիրը տեսեք ինչ էր... այսինքն «Շանթ Ակումբ»-ը...

— Մեր պրն. Թորգոմը ալ «Շանթ Ակումբ»-ին մեջ չէ,— ընդմիջեց Ռափիկ աղա։

— Այսինքն այս առտու նամակս անոնց ձեռքը հասավ... բայց խնդիրը այն չէ, մեր բուն նպատակն էր թաղը օժտել կարող թաղական խորհրդով մը, որ իր մեջ միացներ բոլոր անհրաժեշտ

տարրերը և միանգամայն կարենար կապ մը ըլլալ թաղեցիներուն և հանրային կարծիքին միջև... կրցա՞ միտքս բացատրել։

— «Պեն պու լաֆլարտան պիր շեյ աղնամատքմ»,— ըսավ անդիեն Մելիտոս էֆենտին։

— Այսինքն՝ բացատրեմ...

— Վազ անցի՛ր, մյուսյու,— ընդմիջեց Մարգար էֆ.,— անցած գացած բաներու վրա չխոսինք։

— Կեցցե՛ս, Մարգար էֆ.,— գոչեց Ռափիկ աղա,— մարդս ներողամիտ ըլլալու է, վեհանձնությունը անանկ կպահանջե... մեր պրն. Թորգոմն ալ եթե պակասություններ գործեր է... աչք փակելու է կըսե Դավիթ Մարգարե։

— Խնդիրը ատոր վրա չէ,— պատասխանեց Մարգար էֆենտի,— կընդունիմ պայքար մղել, բայց ազնվությունը ձեռքե ձգելու չէ և հակառակորդին վնասելու համար ստորին զրպարտություններ մեջտեղ նետելու չէ։

— Անպայմա՛ն,— գոչեց Սուսերյանց,— ամեն պայքար պետք է ըլլա սկզբունքային և ոչ թե անձնական։

— Դժբախտաբար մեր մյուսյուն ափեղ ցփեղ խոսքեր ըրած է ասդին անդին, որոնք ոչ իրեն պատիվ կբերեն, ոչ ալ իր վարած պաշտոնին... ինծի համար կարևորություն չունին, բայց իրեն չեն վայելցներ...

— Մարգար էֆ., կարծեմ թյուրիմացություն մը կա...— կակազեց ուսուցիչը,— չեմ գիտեր թե ինչ բանի կակնարկեք կամ թերևս զրպարտության մը զոհ կըլլամ։

— Ընդհակառակը, շատ լավ գիտես, թե ինչ ըսել կուզեմ,— պատասխանեց վաճառականը չոր ձայնով մը։

— Հավատացեք որ...

— Հանցանքդ ճանչցիր, ասիկա բավական է։

— Կճանչնա, էֆենտիմ, կճանչնա,— միջամտեց Ռափիկ աղա,— պարոն Թորգոմը գեշ տղա մը չէ, միայն թե դյուրավ ուրիշներու խոսքին ույմիշ կըլլա...

— Անձնական դատողություն չունի մեր մյուսյունը, պակասը ատ է,— ավելցուց Մանուկ աղա։

— Պուտալա տբր, տեյինիզ շունա,— ըսավ Մելիտոս էֆենտի։

Խեղճ պարոն Թորգոմ հիմա զղջացած էր այցելությունը ընելուն՝ բայց կաբելի չէր այլևս ընկրկիլ, հարկ էր դառնության բաժակը պարպել ցմբուր։

— Պարոն Թորգոմին տկար նկարագրին մի որոշ ապացույցն է,— մեջ մտավ Սուսերյանց,— իր այս առտվան հրաժարականը «Շանթ Ակումբ»-ի անդամակցությենեն։

— Կներեք, պարոն,— բողոքեց ուսուցիչը,— ես շատոնց միտքս դրած էի քաշվիլ հանրային գործունեությենե, որովհետև համոզված եմ, որ ուսուցիչ մը պետք է միմիայն վարժարանով զբաղի։

— Այդ համոզումը երևի նոր ծնվեր է քո մեջ,— պատասխանեց Սուսերյանց հեգնաբար,— գոնե երեկ, մինչև ցերեկ մի այդպիսի համոզումի նշույլ չէր նշմարվեր քո վրա...

Սրահին դուռը բացվեցավ և ներս մտավ ոսկերիչ Սահակ աղան։

— Վա՜յ, Սահակ աղա, բարի եկաք,— գոչեցին մի քանի ձայներ։

— Բարի տեսանք,— պատասխանեց ոսկերիչը։

— Մարգար էֆ.-ն շնորհավորելո՞ւ եկար,— հարցուց Մանուկ աղա։

— Բնականաբար...

— Մենք ալ անոր համար եկած ենք...

Սահակ աղային գալուստը փրկեց ուսուցիչը իր նեղ կացությենեն։ Ամենքը իրենց ուշադրությունը նվիրեցին ոսկերիչին, որ վաճառականին մոտենալով ըսավ.

— Ինշալլահ, Մարգար էֆ. ձեր շնորհիվ թաղերնիս խաղաղության երես պիտի տեսնա, շիտակը, երեկ առտու, լրագրին մեջ Վարչության տված որոշումը կարդացի նե՝ շատ քեյֆս եկավ... էլ աշկ օլսուն ըսի, ֆեոբեկ օլտֆլարնտան պերի պիր ավ բուրտայար...

— Շնորհակալ եմ, Սահակ աղա,— պատասխանեց վաճառականը։

Հետզհետե նոր հյուրեր կհասնեին։

Ուսուցիչը կսպասեր Սուսերյանցի մեկնելուն, որպեսզի միասին դուրս ելլե ու հետը բանակցություն մը ունենա։ Անոր ներկայությունը վաճառականին տան մեջ անբացատրելի կմնար իրեն և կուզեր այդ մասին լուսաբանություն պահանջել։

— Ան ալ բնականաբար ինե բացատրություն պիտի պահանջե, բայց իմ պարագաս բոլորովին տարբեր է, ես Ակումբեն հրաժարած եմ, հետևաբար կրնամ առանց անպատեհության գալ հոս։

Ուրիշ բան մը կզարմացներ զինքը, այն է վաճառականին

Սուսերյանցի հանդեպ ցույց տված սիրալիր վարմունքը, մինչդեռ հակառակը իրեն հետ խստորեն խոսած էր։

— Եթե ես հանցավոր եմ թաղային ընտրության մեջ բռնած քնթացքիս համար,— կխորհեր,— Սուսերյանց ա՛լ ավելի հանցավոր է, քանի որ ինքն է պարագլուխը։

Ուսուցչին միտքը այս մտածումներով տոգորված էր, երբ տեսավ, որ Սուսերյանց ոտքի կելներ և դեպի Մարգար էֆ.-ին կուղղվեր հրաժեշտ առնելու համար, ինքն ալ անոր օրինակին հետևեցավ։

— Մարգար էֆենտի, ինձ կթույլատրե՞ք գնալ...

— Չէ՛, ընկեր Սուսերյանց,— ըսավ վաճառականը,— ո՞ւր պիտի երթաս... նստե, կերակուրը միասին պիտի ուտենք։

— Շատ շնորհակալ եմ, բայց...

— Նստե կըսեմ կոր, խոսելիք ունիմ քեզի։

— Շատ լավ ուրեմն,— ըսավ Սուսերյանց, իր տեղը վերադառնալով։

Ուսուցիչը ինքն ալ մոտեցած էր վաճառականին և կհուսար նույն պատվին արժանանալու։

— Մարգար էֆ., ամենախորին հարգանքներս կմատուցանեմ տիկնոջ,— ըսավ։

— Երթաս բարև, մյուսյու,— պատասխանեց վաճառականը։

Ուսուցիչը ընկճված, ջախջախված դուրս ելավ, պահ մը քայլամոլոր թափառեցավ փողոցին մեջ, առանց ընելիքը գիտնալու։

— Երթամ,— մտածեց,— դիմակազերծ ընեմ Սուսերյանցը իր ընկերներուն։

Երեք երիտասարդներ, Սեդրակ, Ատոմ, Արշակ նստած էին ընթերցման սրահը ու թերթերը աչքե կանցնեին։ Ուսուցիչը բարևեց զանոնք։

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա,— հարցուց։

— Օրվան մեծ եղելությունը կա,— ըսավ Ատոմ խնդալով։

— Ի՞նչ եղելություն...

— Զարմանալի բան, չես գիտեր... մանավանդ դուն ես հերոսն ալ։

— Չեմ հասկնար, թե ինչ ըսել կուզեք,— պատասխանեց ուսուցիչը նեղացած դեմքով մը։

— Օրվան մեծ եղելությունը, որ ամբողջ թաղը դղրդեց,— շարունակեց Ատոմ, այսինքն պարոն Թորգոմի հրաժարականը «Շանթ Ակումբ»-են...

— Ի՞նչ կա ծաղրելու... ազատ չե՞մ հրաժարելու։

— Ո՞վ հակառակը կպնդե... բայց ճիշտ այս միջոցին այդ հրաժարականը շատ նշանակալից է։

— Կրնա ըլլալ,— գոչեց Թորգոմ,— բայց խնդիրը ատոր վրա չէ. խնդիրը ձեր Սուսերյանցի վրա է, որ այսպես ամենքդ ձեռքին մեջ առած քիթներուդ կխնդա։

— Ի՞նչ է ըրեր որ,— հարցուց Սեդրակ։

— Ի՞նչ պիտի ընե, պարզապես ձեզի դեմ կդավաճանե կոր...

— Օ՜, օ՜, շատ խոշոր բառ գործածեցիր,— գոչեց Ատոմ խնդալով։

— Բուն բառն է,— պատասխանեց ուսուցիչը։

— Նախ՝ այդ տեսակ խոսք մը ըսելու համար ապացույցներ ունենալու է մարդ։

— Հրամմեր եք, ապացույցներ ունիմ։

— Որո՞շ,— հարցուց Սեդրակ։

— Աչքովս ու ականջովս տեսա, լսեցի։

— Սուսերյանցի դավաճանությո՞ւնը...

— Այո՛, Սուսերյանցի դավաճանությունը,— շեշտեց ուսուցիչը։— Գիտեք որ այս միջոցին ո՞ւր է ընկեր Սուսերյանցը. «Շանթ Ակումբ»-ի նախագահը...

— Ո՞ւր է,— հարցուց Ատոմ։

— Մարգար էֆ.-ի տունը և ճաշի ալ վար դրված է այնտեղ։

— Իրա՞վ կըսես,— հարցուց Ատոմ խնդալով։

— Աչքովս տեսա...

— Ուրեմն դո՞ւն ալ հոն էիր։

— Այո՛, ես ալ գացի։

— Եթե Մարգար էֆ.-ի տունը երթալը դավաճանություն մըն է՝ դուն ինչո՞ւ գացիր։

— Ես տարբեր, ես չեզոք մարդ մըն եմ, հրաժարած եմ Ակումբեն։

— Լավ ուրեմն, ընկեր Սուսերյանցն ալ առանց հրաժարելու գացած է...

— Հետևաբար դավաճանած է ձեզի դեմ,— եզրակացուց ուսուցիչը։

— Դավաճանած պիտի ըլլար, եթե չերթար,— պատասխանեց Ատոմ։

Պարոն Թորգոմ ափ ի բերան մնաց այս խոսքերը լսելով.

— Հե՞, ի՞նչ ըսիր,— կակազեց։

— Մենք պաշտոն հանձնեցինք պրն. Սուսերյանցի՝ Մարգար էֆ-ի տունը երթալու և մեր Ակումբին որոշմնագիրը իրեն հաղորդելու,— պատասխանեց Ատոմ։

— Ի՞նչ որոշմնագիր...

— Դուն թեև այլևս Ակումբի անդամ չես, բայց իբրև նախկին անդամ, կրնանք քեզի հաղորդել, մանավանդ որ ծածուկ բան մը չէ և թաղեցիներուն ալ պիտի ծանուցվի։

Այս ըսելով Ատոմ ոտքի ելավ, դարակի մը մոտեցավ, բացավ և Ակումբի արձանագրության տետրակը առնելով բերավ ուսուցչին և ըսավ.

— Կարդա՛, մեր վերջին, այսինքն երեկ գիշերվան նիստին արձանագրությունը։

Պարոն Թորգոմ դողահար ձեռքով տետրակը բացավ և հետևյալը կարդաց.

«Ժողովը իր այս գիշերվան նիստին մեջ նկատի առավ թաղային խնդիրը և Վարչության տված որոշումը՝ Առժամյա Թաղական խորհրդի մը կազմության մասին։

«Ակումբի անդամները թեր ու դեմ վիճաբանութենե մը ետքը մեծամասնությամբ սա եզրակացության հանգեցան թե՝ թաղեցիները վերջին քվեարկության ատեն չափաչափիչ մեծամասնությամբ արտահայտված էին ի նպաստ Մարգար էֆենտիի և իր կուսակիցներուն, մյուս կողմե Պողոս էֆ. իսպառ հեռացած էր թաղեն, որով կորսնցուցած էր իր ընտրելիի հանգամանքը։ Այս պայմաններուն ներքև պայքարին շարունակությունը ամուլ և աննպատակ պիտի ըլլար և Ակումբին փրեստիժը կոտրելե ուրիշ բանի չպիտի ծառայեր։ Թաղը մշտատև հուզումի մեջ պահելով ուրիշ արդյունք առաջ չպիտի գար, եթե ոչ վնասել կուլտուրական գործին։ Ուստի «Շանթ Ակումբը» կորոշե բոլորվիլ նոր առժամյա Թաղական խորհրդին շուրջը, օժանդակել անոր, ուժ տալու համար կուլտուրական գործին։ Միևնույն ատեն ժողովը պաշտոն կհանձնե իր նախագահին սույն որոշումը հաղորդելու առժամյա Թաղական խորհրդի անդամներուն և հայտարարելու թե՝ «Շանթ Ակումբը» ոևէ կերպով խոչընդոտ չպիտի ըլլա իրենց գործունեության, պայմանավ, որ

առժամյա Թաղ. խորհուրդը լրջորեն ձեռնարկե կուլտուրական բարենորոգումներուն և Ազգային Վարժարանը հասցնե փափաքելի բարձրության մը, կարող ուսուցչախումբի մը կազմությամբ»։

«Շանթ Ակումբ»ին այն որոշմնագիրը, նախագահին, ատենապետին և ատենադպիրին ստորագրություններով վավերացված, խոր տպավորություն մը գործեց պրն. Թորգոմին վրա։

Անակնկալ մըն էր, որուն չէր սպասեր բնավ։ Իր հուզումը փրցածին չափ զսպեց և քանի մը վայրկյան ևս մնալե հետո իր նախկին ընկերներու քով, մնաք բարով ըսավ և մեկնեցավ։

Մեծ պետք մը կզգար առանձին մնալու և ինքնիրեն խորհրդածելու համար։

Անգամ մը որ փողոց ելավ՝ անձնատուր եղավ իր մտածումներուն։

— Վա՛յ, շունշանորդի,— խորհեցավ,— այսպես մեկեն ի մեկ իրենց ուղղությունը կփոխեն ու փոխանակ Մարգար էֆ.-ի դեմ պայքարը շարունակելու՝ անոր կողմը կհակին... ըսելիք չկա, շատ վարպետությամբ գործ տեսած են, միայն այս ամենքը իմ գլխուս փորձանք բերավ։ Եթե գիտնայի, որ այսպիսի որոշմնագիր պիտի տրվի՝ ես կմնայի Ակումբին մեջ, փոխանակ հրաժարելու...

Այս մտածումը ամենեն ավելի կտառապեցներ, զինքը։

Ճիշտ այն միջոցին, ուր օգուտ պիտի քաղեի «Շանթ Ակումբ»-ի անդամակցութենեն՝ ձգեցի հեռացա, կմտածեր։

Ցրտում տխուր իր տունը գնաց, ուր բավական ժամանակ անցուց մտատանջության մեջ։ Ի վերջո որոշե՛ց երթալ տեղեկանալ, թե ի՞նչ անցած դարձած էր Մարգար էֆ.-ի տան մեջ, իր մեկնումեն ետքը։

Այս մասին իրեն որոշ տեղեկություններ կրնար տալ Թափիկ աղան, որ առտուն այնքան բարյացակամ վերաբերմունք մը ունեցած էր իրեն հանդեպ։

Նախկին Թաղական խորհրդի անդամը սիրալիր կերպով ընդունեց զինքը։

— Եկուր նայինք, մյուսյու Թորգոմ, ինչո՞ւ առտուն անանկ ձգեցիր փախար Մարգար էֆենտիի տունեն։

— Փախչելու բան չկար,— պատասխանեց ուսուցիչը,— միայն թե դուն ալ տեսար, որ ինչ պաղ ընդունելություն ըրավ ինծի։

— Ճանըմ, կենայիր նե՝ գործը անուշ տեղը կկապեինք։

— Ի՞նչ ընեի, Սուսերյանցի հետ ոտքի ելանք մեկնելու հա-

մար... Մարգար էֆենտին անիկա ճաշի վրա դրավ, իսկ ինծի կես բերան «կեցի՛ր» չըսավ, ի՞նչ կրնայի ընել... բռնի կերակուրի՞ կենայի...

— Տեսա՞ր մի այդ Սուսերյանցը, ինչպես ջուրին երեսք ելավ... անոր չափ վարպետություն ալ չունիս եղեր...

— Ես պարկեշտ և ուղղամիտ մարդ մըն եմ... անանկ մեկ օրեն մյուսը դիմակ չեմ կրնար փոխել։

— Ճանըմ, ատոնք պարապ խոսքեր են... գործնական մարդու խոսքեր չեն, մարդս այս աշխարհիս մեջ ապրելու համար քիչ մը ամենուն հետ վարվիլ գիտնալու է։ Նայե՛, Սուսերյանցը ինտոր անմիջապես Մարգար էֆենտիին թաբթաբը մտավ... տեսնելու էիր, թե ինչ սիրով կխոսակցեին իրարու հետ։

Արդարև Ռափիկ աղա իրավունք ուներ, վաճառականը բացառիկ պատիվներ ընծայած էր Սուսերյանցի, երբ այս վերջինը իրեն հաղորդած էր «Շանթ Ակումբ»-ի որոշումը։ Մարգար էֆենտի որքան ալ սրտանց փափաքեր թաղական ըլլալու՝ միևնույն ատեն կերկնչեր «Շանթ Ակումբ»-են, որ թաղին մեջ միակ ընդդիմադիր տարրն էր և որուն անդամները իրենց ծայրահեղություններով, որոնց փորձերը տրված էին հաճախ, կրնային իրարանցումներ առաջ բերել և խոշընդոտ հանդիսանալ իրեն պաշտոնավարության։ Ահա ասոր համար անոնց օժանդակությունը մեծ գորավիգ մըն էր, Առժամյա նոր Թաղական Խորհրդին համար, և վաճառականը պարտավոր էր ձեռքեն եկած ամեն զոհողությունները ընելու, որպեսզի Սուսերյանց և իր ընկերները իրեն հյուր ըլլան։

— Դուն ալ ամմա ապուշ ես եղեր,— ըսավ Ռափիկ աղա,— ճիշտ այն միջոցին, ուր «Շանթ Ակումբ»-ին մեջ մնալու էիր՝ հրաժարական տվեր ես...

— Ի՞նչ ընեմ, դիպվածը այնպես բերավ. ես տեղեկություն չունեի թե Ակումբը իր քաղաքականությունը փոխած է։

— Ես ալ գիտեմ ատանկ ըլլալը, բայց ամեն մարդ այդպես չխորհիր... գիտե՞ս հիմա քեզի համար ի՞նչ կըսեն կոր։

— Ի՞նչ,— հարցուց ուսուցիչը դող ելած։

— Իբր թե դուն «Շանթ Ակումբ»-են հրաժարեր ես, որովհետև Ակումբը որոշել է աջակցել Մարգար էֆ.-ին, այնպես որ հիմա թաղին մեջ դուն առանձին միակ հակառակորդը կըլլաս կոր Առժամյա Թաղ. Խորհրդին։

— Սո՛ւտ է, սխա՛լ է,— գոչեց ուսուցիչը բորբոքված,— ես հրաժարականս տված ատենս տեղեկություն չունեի Ակումբին տրված որոշումեն... այսօր միայն իմացա։

— Ես ալ գիտեմ ատանկ ըլլալը, բայց ի՞նչ ընենք, չգիտցողը ատանկ կկարծե... երևույթները քեզի դեմ են։

— Բայց ո՞վ ըսավ ատիկա...

— Իրավ որ չեմ գիտեր, Մելիտոս էֆ.-ն էր, ով էր, ճաշին վրա խոսք բացվեցավ տե՝ մեկը անանկ ըսավ մյուսներն ալ իրավունք տվին։

— Գոնե մեկը չգտնվեցա՞վ, որ զիս պաշտպաներ,— հարցուց ուսուցիչը։

— Նորեն ես էի, որ պաշտպանեցի, մեր մյուսյու Թորգոմը աղեկ տղա է, ըսի, քիչ մը միամիտ է, ուրիշին խելքով կկառավարվի, բայց սիրտը մաքուր է՝ ըսի... դժբախտաբար քու թշնամիդ միայն Մարգար էֆ.-ն չէ... անիկա վեհանձն մարդ է, ներողամիտ է, անոր խոսք կրնանք հասկցնել, բայց...

— Ուրիշ ո՞վ կա որ ինծի թշնամի...

— Քու էն մեծ թշնամիդ տիկ. Սաթենն է,— ըսավ Ռափիկ աղա, ձայնը ցածցնելով. իբր թե վաճառականին կինը իրենց սենյակը գտնվեր այդ միջոցին։

— Տիկին Սաթենը ի՞նչ ունի ինծի դեմ,— հարցուց ուսուցիչը զարմացած դեմքով մը։

— Չե՞ս դիտեր և ինծի՞ կհարցնես կոր,— ըսավ Ռափիկ աղա հեգնական ժպիտով մը։

— Իրավ, որ չեմ հիշեր թե...

— Զարմանալի բան, դուն չէիր, որ հոս ու հոն կարգ մը խոսքեր կընեիր անոր համար... պատիվի դիպչելիք բաներ...

— Բայց ես ի՞նչ հանցանք ունիմ, Պողոս էֆենտիին տուներ լսեցի այդ ըսածները և ես ալ դուրսը կրկնեցի...

— Աղեկ, ամմա հիմա Պողոս էֆենտին քաշվեցավ, գործին մեջեն ելավ, դուն մնացիր մեջտեղը։ Ինչո՞ւ պետք քեզի չվերաբերած բաներուն մեջ քիթդ կխոթես... ես ան ատենն ալ քեզի ըսի, բայց մտիկ չըրիր։

— Տիկին Սաթենը մասնավորապես բան մը ըսա՞վ ինծի համար։

— Ըսավ, հապա...

— Ի՞նչ ըսավ,— հարցուց Թորգոմ հուզված շեշտով մը։

— «Էն առաջ ան մարդը դպրոցեն դուրս նետելու է», և զարմանալին այն է, որ քու բարեկամդ պարոն Սուսերյանցը ոչ թե միայն քեզ չպաշտպանեց, այլ նույնիսկ տիկին Սաթենին գրեթե իրավունք տվավ։

— Իրավո՞ւնք տվավ մի,— գոչեց ուսուցիչը դողահար ձայնավ մը։

— Այսինքն ըսավ, որ նկարագրե դուրս մարդ մըն ես...

— Վա՜յ թշվառական...

— Ինչ որ է, հիմա ատոր համար խնդիր մի՛ հաներ...

— Բայց ի՞նչ խորհուրդ կուտաս ինծի,— գոչեց Թորգոմ,— ի՞նչ ընթացք բռնելու եմ այսչափ թշնամիներուս մեջ։

— Քեզի բան մը ըսե՞մ խոհեմությունը ձեռքե մի թողուր, համբերե՛, խելոք կեցի՛ր, տեսնանք ի՞նչ կըլլա։

— Բայց դիտել տվավ ուսուցիչը,— Մարգար էֆենտի այնչափ շատ տրամադիր չէր արդեն իրեն առաջարկված պաշտոնը ընդունելու։

— Տղա՞ ես, ի՞նչ ես դուն, անոր խոսքերուն կհավատա՞ս, ան դիտմամբ անանկ բաներ կըսեր... «չեմ ուզեր գրպանս դիր»-ի գրությունն է ատիկա։

— Վստա՞հ ես, որ թաղականին պաշտոնը պիտի ընդունի։

— Ընդունեց լմնցավ,— պատասխանեց Ռափիկ աղա,— արդեն ինք մերժելու ալ ըլլա, կինը թող չտար։

Ուսուցիչը քիչ մըն ալ նստելեն ետքը մեկնեցավ Ռափիկ աղային տունեն՝ ընկճված վիճակի մեջ։

Ժ Է

Մեր վերի պատմած դեպքերուն վրայեն երկու շաբաթներ անցած էին։ Ս. Պատրիարքը պաշտոնագրով մը հրավիրած էր Առժամյա Թաղ. Խորհուրդը, որ իսկույն պաշտոնի ձեռնարկե, իր «ազգասիրական պարտականությունը» կատարելու համար։

Նոր թաղականները իրենց առաջին գումարումը ըրած էին վաճառականին տան մեջ և դիվանը կազմած։

Միաձայնությամբ ատենապետ ընտրված էր Մարգար էֆ.-ն, իսկ ատենադպիր՝ պարոն Գարեգինը։ Տոսախյան Միհրանի էֆենտիին հանձնված էր գանձապետի պաշտոնը։

Առժամյա Թաղ. Խորհուրդը այսպես կազմվելե ետքը, կիրակի առտու մը հանդիսավորապես գացած էր եկեղեցի և խորհրդարանը բացված։

Թաղեցիները ընդհանրապես համակիր ընդունելություն մը ըրած էին, մանավանդ ընդդիմադիր տարրը, «Շանթ Ակումբը», ինչպես տեսանք, դաշնակցած էր նորակազմ մարմնուն հետ։

— Մարգար էֆենտին խելոք մարդ է,— կըսեր Սուսերյանց իր բարեկամներուն,— ես մոտեն չէի ճանչնար զինքը, բայց հիմա առիթ ունեցա ուսումնասիրելու, լավ խմոր է, միայն թե պետք է առաջնորդել զինքը, ղեկավարվելու պետք ունի։

Սուսերյանց իր մտածումը բանաձևած էր հետևյալ կերպով. «Ղեկավարիչ ուժը միացնել կապիտալիստական զորության և այդ երկուքը ի նպաստ դնել կուլտուրական զարգացումին»։

Թոլոր իր տենդոտ գործունեությունը, Առժամյա Թաղ. Խորհուրդը կազմելե ի վեր, նվիրված էր այս բանաձևին տարածման։ «Շանթ Ակումբ»-ի անդամները իրենց դասը աղեկ սերտած աշակերտներու պես, իրենց դեմ ելնողներուն կկրկնեին.

— Եղբայր, Մարգար էֆենտին կներկայացնե կապիտալիստական զորություն, մինչդեռ մենք գիտակից երիտասարդներս, ղեկավարիչ ուժ ենք, եթե կրնանք այս երկու ուժերը իրարու միացնել, այն ատեն կուլտուրական գործը մեծ զարկ մը կստանա թաղին մեջ։

Այս բրոբականտը սակայն շատ գործին չէր գար «Պայքար Լարան»-ին։ Այս վերջինը, ինչպես հայտնի է, թաղային պայքարի միջոցին կեցած էր Մարգար էֆենտիի և իր կուսակիցներու կողքին, և ճիշտ այն միջոցին, ուր կհուսար իր աշխատության վարձը քաղել, ահա, «Շանթ Ակումբը» մեջտեղ նետված էր իր բանաձևով և ժողովին տված որոշումով, և կսպառնար ինք քաղել հաղթության դափնիները։

Ընկեր Կայծունի, թեև առաջին վայրկյանեն փութացած էր Մարգար էֆենտիի քով և շնորհավորած զայն իր տարած հաղթության համար, զգացնելով միանգամայն, որ վաճառականը իր հաջողության մեծ մասը կպարտեր «Պայքար Լարան»-ի անձնվեր գործունեության, բայց Մարգար էֆենտի շատ խանդավառ ընդունելություն մը չէր ըրած զինակիցներուն, հակառակը, իր համակրանքը ուղղված էր դեպի Սուսերյանցը։

Սակայն քանը շատ վշտացուցած էր ընկեր Կայծունին, որ չէր

կրցած ինքզինքը զսպել և դժգոհություն հայտնած էր Մանուկ աղային։

— Դուն ավետարան չե՞ս կարդացեր,— ըսավ Առժամյային նորընտիր անդամը։

— Կարդացեր եմ մանկությանս,— պատասխանեց ընկեր Կայծունի։

— Անառակ որդիին առակը չե՞ս գիտեր... մարդը իր անառակ որդիին դարձը տոնելու համար լավագույն ոչխարը կկտրե... ահա, ճիշտ անանկ ալ Մարգար էֆենտի, Սուսերյանցի դարձի գալուն շատ ավելի ուրախացած է, քան թե ձեր փորձված անձնվիրութենեն։

— Բայց այդ պարագային մենք խաբված կըլլանք կոր...

— Հետո,— շարունակեց Մանուկ աղա, որ կուզեր ցույց տալ իր ավետարանական հմտությունը,— կորսված ոչխարին առակը չե՞ս հիշեր։ Հովիվը իր 99 ոչխարը երեսի վրա ձգեր ու մեկ մոլորված ոչխարին ետևեն գացեր է, և երբ այդ մոլորվածը գտեր է, ուրախությամբ գրկեր և մյուս ոչխարներուն քով դարձեր է, ճիշտ Մարգար էֆենտին ալ այդպես ըրավ, Սուսերյանց «կորուսյալ էր և գտավ», ասոր համար ահա ամեն պատիվ կընծայե անոր։

Ավետարանական այս օրինակները շատ չմխիթարեցին ընկեր Կայծունին, որ մեկնեցավ Մանուկ աղային քովեն, առանց իր դժգոհությունը ծածկելու։

Բայց դառնանք մեր նորընտիր թաղականներուն։

Ինչպես ըսինք, կիրակի օր Մարգար էֆ. ընկերներով եկավ եկեղեցի և անմիջապես ուղղվեցավ խորհրդարան՝ աջ ու ձախ բարևներ շռայլելով։

Բակը լեցված էր հետաքրքիր թաղեցիներով, որոնք համակրական ընդունելություն մը ըրին իրենց նոր թաղականներուն։

Մարգար էֆենտի ուրախությենեն կճառագայթեր։ Վերջապես հաջողած էր իր մղած պայքարին մեջ։

Վաճառականին ուրախությունը անխառն պիտի ըլլար, եթե Գարեգին մասնակցած չըլլար իրենց ժողովին։ Ընթերցողները գիտեն, թե Մարգար էֆենտին ինչ ատելությամբ լեցված էր երիտասարդ հաշվակալին դեմ, բայց և այնպես չուզեց խնդիր հարուցանել։

— Մեկի դեմ չորս հոգի ենք,— դիտել տված էր Մանուկ

էֆենտի,— հետևաբար անոր ներկայությունը ոևէ նշանակություն չկրնար ունենալ։

Հազիվ թե Մարգար էֆենտի բազմեցավ իր ատենապետի աթոռին վրա՝

— Սա ժամկոչը կանչեցեք,— գոչեց։

Վայրկյան մը ետքը Վարդան աղբար դողահար մահապարտի մը պես տժգույն ներս մտավ խորհրդարանեն։

— Դուն ա՛լ այստեղ գործ չունիս,— ըսավ վաճառականը բրդիդ ժողվե գնա...

Հետո խորհրդարանին գրագիրին դառնալով հարցուց.

— Սա մարդը հաշիվ ունի՞։

— Յոթանասունրհինգ ղուռուշ առնելիք մը ունի։

— Մելիտոս էֆենտի, հաշիվը անմիջապես մաքրե,— ըսավ Մարգար էֆ.՝ նորընտիր գանձապետին դառնալով։

Բոլոր այս խոսակցության միջոցին ժամկոչ Վարդանը բերանը չէր բացած։

— Ճի՞շտ է, 75 ղուռուշ առնելի՞ք ունիս,— հարցուց վաճառականը։

— Չեմ գիտեր,— պատասխանեց խեղճ մարդը։

— Ի՞նչպես, դուն քո հաշիվդ չե՞ս գիտեր։

— Տետրակին մեջ գրված է...

Հետո մոտեցավ նոր ատենապետին ու աղաչավոր ձայնով մը.

— Էֆենտի, ոտքդ պաղնեմ,— կակաղեց,— չոլուխ չոճուխի տեր եմ, անոնց ողորմեցե՛ք։

— Թաղական խորհուրդը իր որոշումը տված է այլևս,— պատասխանեց վաճառականը չոր ձայնով։

— Աղանե՛ր, դուք բարեխոսեցե՛ք,— աղաչեց ժամկոչը մյուս թաղականներուն դառնալով։

Ժամկոչին վիճակը այնքան արգահատելի էր, որ թաղականներուն գութը շարժեց։

Գանձապահը զայն կամաց մը քովը կանչեց, 75 ղուռուշը տվավ, և ցած ձայնով մը ըսավ։

— Դուն դուրս ելիր, մենք քեզի համար պետք եղածը կխոսինք։

Վարդան իր աղաչավոր նայվածքովը շնորհակալություն հայտնելով Մելիտոս էֆենտիի, խորհրդարանեն դուրս սպրդեցավ։

Երբ բակեն կանցներ, հանկարծ կանգ առավ ու արձանացած մնաց։

Տիկին Սաթենը ներս կմտներ տիկին Նվարդի ընկերակցությամբ...

Աթոռի միջադեպեն ի վեր Մարգար էֆենտիի կինը ոտքը եկեղեցի չէր դրած, հիմա վճռական հաղթութենե ետքը կուգար աշխարհակալի մը պես։

Ժամկոչը սահմռկած կդիտեր Մարգար էֆենտիի կինը, շվարած ու շփոթված, առանց ընելիքը գիտնալու. կզգար, որ այդ կնոջ ձեռքն էր իր ճակատագիրը, թե անոր մեկ բառը բավական էր զինքը իր պաշտոնին մեջ պահելու համար, և սակայն այդ բառը արտասանել տալու միջոցը չէր կրնար գտնել։

Մտածեց հոն բակը Սաթենի ոտքերուն նետվիլ, և ներում հայցել, բայց այդ համարձակությունը պակսեցավ իրեն։

Արդեն երկու կիները անցած էին և պահարանի կողմը կդիմեին։

Վարդան մեկեն վազեց բանկալը, երկու աթոռ հափշտակեց, ու վազն ի վազ գնաց դեպի պահարանը։

Հաջողեցավ հասնիլ երկու կիներու ետևեն, ճիշտ այն միջոցին, ուր անոնք պահարանի դռնեն դեպի դուրս կուղղվեին։

— Ճամփա բացե՛ք, մեկ կողմ քաշվեցե՛ք,— պոռաց Վարդան հոն խմբված կիներուն,— չե՞ք տեսնար ով կուգա կոր...

Կիները այդ ձայնին ազդեցութենեն մեքենաբար մեկ կողմ քաշվեցան՝ ճամփա բանալով։

Տիկին Սաթեն և տիկին Նվարդ կոկոզավիզ անցան հպարտ և ժպտուն։

— Նոր թաղականներուն ընտանիքներն են,— կփսփսային մյուս կիները իրարու։

Ժամկոչը ճիշտ խորանին դեմը, լավագույն տեղը զետեղեց աթոռները և հարգալից կերպարանքով մը կեցավ։

Տիկին Սաթեն աթոռի վրա բազմելե առաջ ետին դարձավ և ցած ու չոր ձայնով մը ըսավ Վարդանին.

— Հիմա խելքդ գլուխդ եկա՞վ...

Ժամկոչը անհասկանալի բաներ մը մրմնջաց ու ետ-ետ երթալով հեռացավ։

Խորհրդարանին մեջ նոր թաղականները թաղին «երևելի»-ներուն այցելությունը կընդունեին, որոնք կուգային իրենց շնորհավորությունները մատուցանելու։

Մարգար էֆենտի իր ատենապետի աթոռին մեջ բազմած, հյուրերը կընդուներ ժպտուն դեմքով մը։

— Էֆենտի,— ըսավ միջոց մը շուրջիններուն դառնալով,— շիտակը ես բնավ դիտավորություն չունեի այս պաշտոնը ընդունելու և միտքս դրած էի հրաժարիլ։ Բայց բարեկամներս այնքան ստիպեցին, այնքան վրաս ինկան, որ չկրցա հրաժարիլ։

— Շատ աղեկ ըրիք, Մարգար էֆենտի, մեր թաղին գլուխը ձեզի պես անձնավորություն մը պետք էր,— պատասխանեց ներկաներեն մին։

— Մեր թաղը եթե կարող մարդոց ձեռքով կառավարվի, շատ կհառաջադիմե,— դիտել տվավ ուրիշ մը։

— Շատ գործ կա ընելիք,— ըսավ երիտասարդ մը։

— Մեր գլխավոր ջանքը պիտի ըլլա,— բացատրեց Մարգար էֆ.—նախ վարժարանը բարեկարգել, հետո եկեղեցիին հասույթները ավելցնել, մատակարարությունը կանոնավորել, կարելի եղածին չափ խնայողություններ ընել...

— Մեզի էն առաջ շնորհքով քարոզիչ մը պետք է,— ըսավ Սահակ աղա,— սա հիմակվան քարոզիչին ձայնը բնավ չի լսվիր կոր, ասկե զատ խոսածներուն մեջ ալ իմաստ մը չկա, ինձի պես պամպարակին մեկն է։

— Քարոզիչեն առաջ վարժարանը կարևոր է,— պատասխանեց ուրիշ մը։

Ընկեր Կայծունի, որ նույնպես եկած էր շնորհավորական այցելության, խոսակցության մեջ մտավ։

— Վարժարանի խնդիրը ամենեն կենսականն է, անոր վրա պետք է սևեռել ամբողջ մեր ուշադրությունը։ Մենք մտավորականներս այս պայքարը մղեցինք ու հաղթանակը տարինք, նկատի ունենալով միմիայն վարժարանը... մինչդեռ մեր թշնամիները լոկ անձնական նկատառումներով պայքար կմղեին։

Կայծունի կակնարկեր «Շանթ Ակումբ»-ին։

— Հիմա թշնամի չմնաց թաղին մեջ,— փութաց դիտել տալ Մարգար էֆենտի,— ամենքն ալ մեր շուրջը համախմբված են։

— Այո՛, առ երեսս այնպես է,— պատասխանեց Կայծունի՝ սրտմտած,— կարկանդակեն բաժին մը ձեռք բերելու համար...

Հետո հանկարծ ըսավ։

— Իրա՞վ է, Մարգա՜ր էֆենտի, որ Սուսերյանցը վարժարանի տեսուչ պիտի ընեք։

— Ո՞վ ըսավ,— գոչեց վաճառականը։

— Ամենուն բերանն է։

— Զարմանալի բան, դեռ այսօր գործի սկսանք, ու վարժարանով զբաղելու ժամանակ չունեցանք։

— Ես ալ երբ լսեցի, շատ զարմացա ու բնավ չհավատացի... ալ թաղին մեջ մարդ չմնա՞ց, որ Սուսերյանցի պես խառնակիչ մը բերենք վարժարանի տեսուչ ընենք... Ես արդեն ըսի, որ Մարգար էֆենտին երբեք այդպիսի հիմար բան չըներ...

— Երբոր վարժարանի խնդրով զբաղելու ատենը գա, այն ժամանակ կորոշենք, թե ինչ պետք է ընել,— պատասխանեց վաճառականը չոր ձայնով մը։

Բայց ընկեր Կայծունի այս պատասխանով չգոհացավ։

— Ինչ որոշում ալ տաք, կարելի չէ, որ Սուսերյանցը վարժարանին մեջ պաշտոնավարե,— ըսավ։

— Ի՞նչ հրամմեցիր,— հարցուց Մարգար էֆենտի հեգնաբար։

— Այսինքն, ես անհատապես չեմ խոսիր այստեղ,— ըսավ Կայծունի քիչ մը շփոթված,— այլ հանրային կարծիքը կներկայացնեմ։

— Թաղական խորհուրդը իր ընելիքը գիտե, պետք չունի ուրիշներու խրատին ու խորհրդին։

— Վարժարանը ամենուս կպատկանի։

— Կաղաչեմ, պարոն Կայծունի, չերկարեք այս վիճաբանությունը, հիմա ոչ ատենն է, և ոչ ալ տեղն է այս տեսակ խոսքերուն, իրար անցնելու պետք չունիք, ձեզի ըսինք, որ դեռ վարժարանի մասին ոևէ կարգադրություն չէ եղած... բայց հիմակվնե գիտցեք, որ ինչ որ հարմար գտնենք, այն պիտի ընենք... հասկըցա՞ր մի, պարոն Կայծունի։

«Պայքար Լսարանի» նախագահը, տեսավ, որ եթե վիճաբանությունը շարունակեր՝ բոլորովին իրեն դեմ պիտի հաներ Մարգար էֆ.-ն, ինչ որ բնավ գործին չէր գար, իր դիտավորությունն էր միայն իրենց կորսնցուցած ազդեցությունը ձեռք բերել, և անով հակակշռել «Շանթ Ակումբ»-ին, որ կսկսեր գերակշիռ դիրք մը առնել։ Բայց դժբախտաբար չկրցավ հաջողիլ այդ դիտավորության մեջ, և ընդհակառակը վաճառականը իրենց դեմ գրգռեց։

Ներկաները, որոնք հետևած էին այս վիճաբանության, բնականաբար Մարգար էֆենտիին կողմը բռնեցին։

— Կերևա որ մյուսյուն ֆյուլան մը խափմիշ ընել կուզե կոր, և ասոր համար վարժարանին խնդիրը մեջտեղ նետեց,— դիտել տվավ ոսկերիչ Սահակ աղա։

— Թաղերնիս հազիվ քիչ մը հանդարտեցավ, նորեն իրա՞ր անցնելու կաշխատիք կոր,— ըսավ Մանուկ աղա։

— Եղբայր, մեր միտքը սխալ հասկցվեցավ,— բողոքեց Կայծունի։

— Մենք ձեր միտքը շատ աղեկ կհասկնանք,— պատասխանեց Մելիտոս էֆենտի՝ նշանակալից կերպով գլուխը շարժելով։

Ընկեր Կայծունի ոտքի ելավ։

— Առայժմ անօգուտ է խոսիլ,— ըսավ,— ապագան պիտի պարզե ամեն բան, և այն ատեն պիտի համոզվիք, թե որքան իրավունք ունիմ եղեր...

Ու բարևելով դուրս եկավ։

Շնորհավորական այցելությունները կշարունակվեին և թաղականները նույն օրը չկրցան բնավ գործով զբաղելու։

Ժամերգությունը ավարտելե հետո, վաճառականը Միհրանիկ էֆենտիին հետ բակը ելավ, իրենց կիներուն սպասելու համար։

Բակին մեջն ալ շնորհավորություններ կըլլային ծանոթ և անծանոթ թաղեցիներու կողմե, որոնց ամենուն ալ վաճառականը կպատասխաներ ժպտուն դեմքով մը։

Տիկին Սաթեն երևցավ, միշտ տիկին Նվարդին ընկերակցությամբ։

— Գործերնիդ լմնցուցի՞ք,— հարցուց Սաթեն իր ամուսնույն մոտենալով։

— Այսօր գործ չտեսանք որ,— պատասխանեց Մարգար էֆենտի։

— Ինչո՞ւ համար...

— Մինչև ետքը հյուր ընդունեցինք, բոլոր թաղեցիները եկան շնորհավորելու... մտքես չէր անցեր, որ այսչափ ժողովրդականություն ունիմ եղեր։ Եկեղեցին շատ բազմություն կա՞ր։

— Լեփլեցուն էր։

— Զնեղվեցա՞ք ա։

— Չէ՛, մեղի աղեկ տեղ մը տվին...

— Տեսա՞ր թաղականության օգուտները քաղել սկսաք,— ըսավ Միհրանիկ էֆ. խնդալով։

— Սա եկեղեցիին խսիրը փոխել տալու է, պատատ բդիկ եղեր է...

— Պիտի ընենք, տիկի՛ն, պիտի ընենք, շատ բաներ ընելու միտք ունինք։

— Մեյ մըն ալ քովի պզտիկ խորանին վարագույրը շատ հին երևցավ աչքիս։

— Ան ալ ինշալլահ կնորոգենք։

— Տիկին Նվարդին հետ որոշեցինք, որ մենք մեր քովեն նոր վարագույր մը շինել տանք։

— Շատ աղեկ կըլլա։

Այս խոսակցությունը, որ բարձրաձայն տեղի կունենար, կլսվեր բակը կեցող թաղեցիներու կողմե։

— Թաղական եղողը քիչ մըն ալ գրպանեն ծախսելու է,— պոռաց Մարգար էֆ,— անանկ «ես թաղական եմ» ըսել հրամայելը՝ փարա չըներ...

Նույն միջոցին ավագերեցն ալ մոտեցավ խումբին։

— Ողջույն, Մարգար էֆենտի, ըսավ, ձեզ եկեղեցին չտեսա, կերեա որ զբաղած էիք։ Աստված կարողություն շնորհեսցե... ձեր վսեմության։

— Շնորհակալ եմ։

— Շիտակը մեծ երջանկություն զգացի, երբ իմացա, որ դուք անցեր եք Թաղ. խորհրդին գլուխը և աստված ձեզի պես անձերը անպակաս արասցե։

— Շնորհակալ եմ, Տեր Հայր։

— Աստված հաջողություն և առողջություն պարգևեսցե։

— Ամենուս ալ։

— Մեր խոսքը չըլլար, Մարգար էֆ., մենք եղեր ենք, չենք եղեր, կարևորություն չունի, ձեզի պես անձնավորություններով է, որ ազգերնիս կշեննա, փառք ու պատիվ կստանա...

— Քավ լիցի, Տեր Հայր։

— Երթա՛նք,— ըսավ տիկին Սաթեն, տեսնելով որ ավագերեցին մաղթանքները վերջ չունին։

Բայց այս վերջինը թողեց Մարգար էֆենտին և տիկինին կառչեցավ։

— Շատ սիրտս հատավ, որ անհանգիստ եղաք եկեղեցիին մեջ,— ըսավ։

— Չէ՛, հանգիստ էինք։

— Մեր եկեղեցին պզտիկ է, բազմությունն ալ շատ, երիրալու տեղ չկա։

— Մեր տեղը շատ աղեկ էր։

— Ասկե զատ մեր ժողովուրդը անկիրթ է,— շարունակեց ավագերեցը,— մեծը, պզտիկը չի զանազաներ... ձեր շուրջը կարգ մը կիներ կեցած էին, շիտակը սիրտս շատ նեղացավ, պիտի գալի մի քանի խոսք ընեի։

— Կարևորություն չունի, Տեր Հայր, մենք ուշադրություն անգամ չըրինք։

— Դուք չըրիք, բայց ես ըրի, ի՞նչ ըսել է, որ պարզ խանութպանի մը կամ արհեստավորի մը կնիկը գա Մարգար էֆ-ին կնոջ քովը կենա... ամեն բանի մեջ պատշաճություն պետք է։ Եթե ես ձեր տեղը ըլլամ, Մարգար էֆ., եկեղեցին կարգ կարգի կբաժնեմ, ինչպես որ շոգենավերն ու շոգեկառքերը կընեն, Ա. կարգ, Բ. կարգ, Գ. կարգ։

— Եկեղեցիին մեջ այդպես բաժանումներ կըլլա՞ն մի յա,— ըսավ Միհրանիկ էֆ. խնդալով։

— Ինչո՞ւ չպիտի ըլլա,— գոչեց ավագերեցը,— երկնքին մեջ անգամ հրեշտակները զատ-զատ դասերու բաժնված են։

— Երթա՛նք, ուշ մնացինք, կերակուրի ատեն է,— դիտել տըվավ վաճառականը։

Փոքրիկ խումբը պատրաստվեցավ մեկնելու։

— Բարի ախորժակ,— գոչեց ավագերեցը ետևեն,— աստված ձեր սեղանը միշտ ճոխ և առատ պահեսցե, տերն մեր հաջողություն պարգևեսցե.

— Տեր հայրը ճաշի հրավիրելու էիր,— դիտել տվավ տիկին Սաթեն իր էրկանը, երբ փողոց ելան։

— Այդ մարդոց շատ երես տալու չի գար,— պատասխանեց վաճառականը,— մեյ մը հրավիրենք նե՝ ալ ամեն օր կվազեն կուգան։

Մարգար էֆենտիի և իր թաղականության առաջին օրը այսպես անցավ։

Ժ Ը

— Հրամմեցե՛ք, Գարեգին էֆենտի, բարի եկար... հրավերի՞ կապասեիր կոր հոս գալու համար։

Այս խոսքերով ընդունեց Պողոս էֆենտի երիտասարդը, որուն լուր ղրկած էր իր գրասենյակը հանդիպելու։

Մյուսը քիչ մը շփոթված պատասխանեց.

— Իրավունք ունիք Պողոս էֆ., քիչ մը հանցավոր եմ այս մասին, բայց ի՞նչ ընեմ, դեպքերը այսպես բերին։

— Չէ նե մի հիմա մեծ մարդոց հետ հարաբերություն հաստատեցիր ու մեզի մոռցար։

— Այդ ի՞նչ խոսք է, Պողոս էֆենտի, մեծ մարդիկը ո՞վ են։

— Աղնվաշուք Մարգար էֆենտի Սասանյանը,— պատասխանեց Պողոս էֆենտի խնդալով,— ձեր Թաղ. Խորհրդի նոր ատենապետը։

— Դուք շատ լավ գիտեք, թե անոր հետ ի՞նչ եղած են մեր հարաբերությունները... ձեռքեն եկած գեշությունը ըրած է ինծի, ինչպե՞ս կրնամ հետը բարեկամ ըլլալ։

— Եվ սակայն միասին կպաշտոնավարեք կոր։

— Այդ տարբեր բան, Վարչությունը զիս անարժանաբար թաղական նշանակած էր, չուզեցի մերժել։

— Ինչ որ է, խնդիրը այդ չէ... ես քեզ ուրիշ բանի համար հոս հրավիրեցի։ Կարծեմ թե Սամիկյան Հակոբ էֆենտիին քովեն ելլելեդ ի վեր գործ մը չունիս։

— Այսինքն հաստատ գործ մը չունիմ, բայց քանի մը տեղ իբրև այցելու համարակալ, պզտիկ գործեր գտած եմ...

— Ատոնց խոսքը չըլլար, ատոնք փոր չեն կշտացներ, այսօր կան— վաղը չկան։

— Ճշմարիտ է, բայց ի՞նչ ընենք. այս միջոցին հրապարակի վրա ինծի հարմար պաշտոն մը դժվար է գտնել։

— Ես քեզի պաշտոն մը պիտի առաջարկեմ և կարծեմ գոհ պիտի մնաս։

— Եթե հարմար գործ մըն է, շնորհակալությամբ կընդունիմ։

— Մեր Տիրանին պաշտոնը,— ըսավ Պողոս էֆ.

— Տիրան էֆ.-ն ելա՞ծ է ձեր քովեն,— հարցուց Գարեգին։

— Այսինքն օտար հաստատության մը կողմե պաշտոն մը գտեր է, Պեյրութ պիտի երթա... կերևա, որ լավագույն կերպով կվարձատրեն կոր անոնք։ Ինչպե՞ս, գործիդ կուգա՞ այս առաջարկությունը։

— Ինչո՞ւ չէ, Պողոս էֆ., շնորհակալությամբ։

— Ուրեմն կրնաս անմիջապես գործի սկսիլ... Տիրանը այսօր

կթողու կոր գործը, քիչ մը ետքը պիտի գա, հոս գտնվե, որպեսզի տեսրակները քեզի հանձնե և միևնույն ատեն ընթացիկ գործերու վրա ալ ծանոթություն տա։

— Շատ աղեկ, հոս կսպասեմ։

— Պայմաններու վրա խոսելու պետք չկա, քու կարողությունդ և արժանիքդ գիտեմ, հետևաբար ըստ այնմ պիտի վարձատրվիս։

— Շնորհակալ եմ։

Այսպես գործը կարգադրելե ետքը, Պողոս էֆ. երկու սուրճ ապսպրեց, հետո սիկարեթ մը հրամցուց իր նոր պաշտոնյային, հատ մըն ալ ինքը վառեց և սկսավ.

— Էյ, ուրեմն ասանկ, հիմա Մարգար էֆ-ն մուրատին հասավ. վերջապես հապար էնթրիկներով հաջողեցավ Թաղ. Խորհրդի ատենապետ ըլլալ, թեև ապօրեն ձևով մը և առանց Թաղեցիներու քվեին։

— Այո՛, հիմակվանը առժամյա մարմին մըն է։

— Թաղեցիները գո՞հ են այդ կարգադրութենեն։

— Մեկ մասը գոհ է, մեկ մասն ալ դժգոհ, իսկ մեծամասնությունը անտարբեր։

— Միհրանիկ էֆենտին ալ թաղական է, հա՞...

— Այո՛, գանձապետն է։

— Օ՛խ, օ՛խ, շատ աղվոր, Մարգար էֆենտին ատենապետ, Միհրանիկ էֆենտի ալ գանձապետ, թամամ ընտանեկան Թաղ. Խորհուրդ մը։

— Միհրան էֆենտին ազգակա՞ն է Մարգար էֆենտիին,— հարցուց Գարեգինը, որ չէր ըմբռնած վաճառականին վերջին ակնարկությունը։

— Այսինքն անոր պես բան մը,— պատասխանեց Պողոս էֆենտի խնդալով։

— Չէի գիտեր,— պատասխանեց Գարեգին։

— Ես ալ չէի գիտեր, նոր իմացա,— շարունակեց վաճառականը,— մարդ քանի ապրի, նորանոր բաներ կիմանա, խելքե, միտքե չանցած բաներ...

— Ի՞նչ տեսակ բաներ...

— Զըսվելիք բաներ, ես ուրիշներուն պես անանկ բամբասանքներ, մեկուն մեկալին պատվուն հետ խաղալ չեմ սիրեր, ամեն մարդ բնություն մը ունի։ Ես մինչև որ բանի մը վրա ապահով չըլլամ, չեմ խոսիր։

— Իրավունք ունիք, չարախոսությունը գեղջ բան է,— պատասխանեց Գարեգին։

— Այս չափն ալ ըսի նե՝ քեզի սիրելուս համար է, որովհետև գիտեմ, որ դուն պարկեշտ ու պատվավոր երիտասարդ մըն ես, ու չես ուզեր անպատիվ մարդոց հետ հաբաբերություն ունենալ։

— Շնորհակալ եմ ձեր գնահատութենեն, միայն թե ես ի՞նչ գեր ունիմ այս գործին մեջ։

— Չէ՞ մի որ Թաղական խորհուրդին մեջ քով քովի կնստիս կոր Մարգար էֆենտիին ու Միհրանիկ էֆենտիին հետ։

— Ատո՞վ ինքզինքս անպատված կըլլամ կոր։

— Ճանըմ, հիմա ինչ որ ըսեմ՝ անօգուտ է... օր մը ամեն բան կիմանաս, գեռ ուրիշ շատ բաներ այ։

— Շիտակը հետաքրքրությունս կշարժեք կոր,— ըսավ երիտասարդը,— կերևա, որ ծանրակշիռ բաներ իմացած եք Մարգար էֆ.-ի մասին։

— Շատ ծանրակշիռ...

— Ապահո՞վ աղբյուրե։

— Աչքովը տեսնողը պատմած է... ասկե ապահովը կըլլա՞... բայց գոցենք այս խոսքերը, դուն հիմա Մարգար էֆենտիին կուսակիցը կհամարվիս, թերևս չես ուզեր, որ աննպաստ բաներ ըսեն անոր համար։

— Կազաշեմ, Պողոս էֆենտի, ինծի այդ տեսակ զգացումներ մի վերագրեք, կկրկնեմ, ես Մարգար էֆենտիի կուսակիցը չեմ կրնար ըլլալ, ես պարզապես անոր պաշտոնակիցն եմ Թաղ. խորհուրդին մեջ, ուրիշ ոչինչ։

— Ան չէ, ամմա բնավ Մարգար էֆենտիին տունը գացի՞ր։

— Անգամ մը միայն... դիվանը կազմելու համար նախնական գումարում մը ունեցանք իր տունը։

— Միհրանիկ էֆ.-ն ալ հո՞ն էր...

— Այո, հոն էր։

— Տիկին Սաթե՞ն ալ ներկա էր այդ գումարումին։

— Չէ, տիկին Սաթենը ներկա չէր։

— Բնավ զինքը չտեսա՞ք։

— Հետո, գործերնիս լմնցնելե ետքը մեծ սալոնը գացինք թեյ խմելու, այն ատեն տեսանք տիկին Սասանյանը, որ տիկին Նվարդին հետ էր։

— Էյ, բան մը չնշմարեցի՞ր բնավ։

— Ի՞նչ կուզեիք, որ նշմարեի,— հարցուց Գարեգին, որ կակուղ նեղություն զգալ հարցաքննութենեն։

— Միհրանիկին և տիկին Սաթենին միջև, սանկ չափազանց մտերմություն մը, թեքլիֆզություն մը...

— Չէ՛, բնավ, ատանկ բան մը աչքիս չի զարկավ,— պատասխանեց երիտասարդը չոր կերպով մը։

— Հոշ ամենուն քով ընելու չեն ա,— ըսավ Պողոս էֆենտի...— պատահեցա՞վ, որ Միհրանիկ ու տիկին Սաթեն բացակա ըլլան սալոնեն։

— Ուշադրություն չըրի, բայց չեմ կարծեր... Կրնա՞մ հարցնել, թե ի՞նչ է այս հարցուփորձի նպատակը։

— Ոչինչ, ատեն անցնելու խոսք մըն է կընենք կոր... այդ տիկին Սաթենին համար անանկ բաներ լսեցինք որ...

— Ամեն լսածնուդ կարևորություն տալու չենք, մանավանդ երբ խնդիրը այդ տեսակ փափուկ բանի վրա է։

— Իրավունք ունիս, ես ալ շատ բծախնդիր եմ այդ մասին, և անանկ անհիմն խոսքերու, ըսի ըսվներու, կամ լսեցիներու ականջ չեմ կախեր, բայց երբ աչքովը տեսնողը կպատմե, այն ատեն խնդիրը կփոխվի, մարդ ուզե չուզե կստիպվի հավատալ։

— Նույնիսկ ենթադրելով որ այնպես ըլլա, դարձյալ ի՞նչ պետք ունիք այդ տեսակ խոսքերը տարածելու կամ հրապարակ հանելու։

— Այս որչափ շերմ պաշտպան դարձեր ես Մարգար էֆ.-ի պատվին,— գոչեց վաճառականը հեգնաբար։

— Խնդիրը Մարգար էֆ.-ին վրա չէ,— պատասխանեց Գարեգին սրտնեղությամբ,— խնդիրը ոևէ ընտանիքի մը նեքքին կյանքին վրա է, և մենք իրավունք չունինք այդ տեսակ բաներու մեջ մըտնելու...

— Բայց երբ ուրիշները կմտնեն, անոր ի՞նչ պիտի ըսես։

— Անոնք ալ հանցանք կգործեն։

— Ինչ որ է, քանի որ դուն անպատճառ Մարգար էֆ.-ին պաշտպանել կուզես, լավագույն է, որ այս խոսքը կարճ կապենք։

— Չէ՛, ընդհակառակը, կուզեմ որ խոսքը շարունակենք, և հասկնամ թե ինչո՞ւ համար իմ արժանապատվությունս վնաս պիտի կրե պաշտոնավարելով Մարգար էֆ.-ի հետ, Թաղ. խորհուրդի մեջ։

— Ես անանկ բան մը չըսի,— բողոքեց Պողոս էֆ.։

— Ժամե մը ի վեր այդ բանը հասկցնել կուզեք...

— Ես այս ըսել կուզեմ որ՝ եթե քու տեղդ ըլլայի վայրկյան մը չէի կենար այդ Առժամյա Թաղական Խորհուրդին մեջ։

— Ի՞նչ պատճառավ։

— Որովհետև անպատիվ մարդու հետ պաշտոն վարող մարդը ինքն ալ անպատիվ կըլլա,— պատասխանեց Պողոս էֆենտի, շեշտելով իր արտասանած վերջին խոսքերու վրա։

— Բայց մինչև հիմա որոշապես չըսիք, թե ի՞նչ բանի մեջ կկայանա Մարգար էֆ.-ի անպատիվ ըլլալը։

— Վա՞յ, մինչև հիմա ըսածներես բան մը չկըրցա՞ր հասկնալ, շիտակը, շատ միամիտ ես եղեր, ես քեզի ավելի խելացի կկարծեի։

— Այսինքն իր կնոջ մասին ակնարկություններ ըրիք և անանկ մը ցույց տալ ուզեցիք որ՝ տիկին Սաթենը անհավատարիմ է իր ամուսնույն և թե մեղապարտ հարաբերություններ ունի Միհրանիկ էֆ.-ի հետ, գոնե ես ձեր ըսածներեն այսչափ մը կրցա հասկնալ։

— Ես ատանկ բան չըսի,— բողոքեց Պողոս էֆ.,— բայց եթե դուն ատանկ հասկցեր ես, ատիկա իմ հանցանքս չէ...

— Հապա ի՞նչ ըսիք,— հարցուց Գարեգին անհամբեր կերպով մը։

— Ես պարզապես իմ լսածներս պատմեցի։

— Ինչ որ է, հիմա եզրակացնենք... ի՞նչ է ձեր դիտավորությունը, զիս կդատապարտե՞ք, որովհետև Մարգար էֆենտիի հետ իբրև Թաղական Խորհուրդի անդամ կպաշտոնավարեմ։

— Քավ լիցի, ես ի՞նչ իրավունք ունիմ դատապարտելու քեզի, ես միմիայն իմ կարծիքս կհայտնեմ. դուն ազատ մարդ մըն ես, կրնաս ուզածդ ընել, մարդ իրավունք չունի քու գործիդ խառնըվելու։

— Պողոս էֆենտի, այս միջոցիս ծանր ամբաստանություն մը կընես կոր կնոջ մը մասին, արդ, կրնա՞ս ըսածներդ ապացուցանել։

— Եվ եթե ապացուցանեմ...

— Այն ատեն պիտի խոստովանեմ, որ սուտ զրպարտիչ մը չես։

— Ըսել է մինչև հիմա կկասկածեի՞ր կոր այս մասին։

— Չէ՛, բայց վերջապես մինչև հիմա պարզ ենթադրություններու վրա էր ձեր խոսքը։

— Ենթադրությո՞ւն մի,— գոչեց Պողոս էֆենտի,— քեզ ըսի, որ տեսնողը պատմեց, տեսնողը... աչքովը տեսնողը։

— Ի՞նչ տեսած է,— հարցուց Գարեգին թեթև ժպիտով մը։

— Ճանըմ, հիմա ամեն բան տեղն ի տեղ պատմե՞լ պիտի տաս ինծի, ինչ որ կըսեն նե՝ ճիշտ է... բայց արդեն ես ասանկ բամբասանքներե չեմ ախորժիր...

— Այո՛, բայց քանի որ այսքանը խոսեցաք՝ կրնաք քիչ մը ավելին ալ պատմել։

— Է՛յ, շատ աղեկ, միայն թե խոսքը ինե ելած չըլլա...

— Այդ մասին վստահ եղեք, ինչ որ ըսեք ինծի պիտի մնա, մեկու մը բան չեմ ըսեր։

— Չէ՛, եթե կուզես, ըսե՛, հոգս անգամ չէ, սուտ չեմ խոսիր կոր ա, միայն թե իմ անունս թող չլսվի... էֆենտիմ, Մարգար էֆ.-ին տունը ծառայող կնիկ մը մեզի էր եկեր դիպվածով, ինչպես կըլլա՝ խոսք կբացվի տիկին Սաթենի վրա, կըսե որ այդ կինը շատ անկանոն կյանք մը կվարե եղեր... նախ Միհրանիկ էֆ.-ին հետ սիրաբանությունը ինք աչքովը տեսեր է։

— Շիտակը ես ալ հավատք չեմ կրնար ընծայել ծառաներու խոսքերուն և ձեզի ալ խորհուրդ կուտամ, որ դուք ալ նույնպես կարևորություն չտաք ըսի ըսավներուն։

— Զարմանալի բան,— գոչեց Պողոս էֆ. սրտնեղած,— մասնավոր նպատակ մը ունիս կարծես Մարգար էֆենտիին պաշտպանելու...

— Երբեք...

— Առաջին վայրկյանեն նշմարեցի այդ բանը։

— Ուրեմն առաջին վայրկյանեն սխալած եք։

— Ինչ որ է, խնդիրը այդ չէ, հիմա փակենք այդ խնդիրը և մեր գործին նայինք... այսպես ուրեմն, այսօրվընե Տիրանին տեղը պիտի անցնիս մեր վաճառատան մեջ... Գիտես որ Տիրանը բավական տարիներե ի վեր իմ պաշտոնյաս եղած էր և միշտ գոհ մնացած եմ իր պաշտոնավարութենեն, գրեթե բոլոր գործս իրեն հանձնած էի և անսահման վստահություն ունեի իր վրա... ուրիշ կերպով արդեն կարելի չէր, որ հոս մնար։ Իմ քովս աշխատողը պետք է, որ սրտով աշխատի, այդ կերպով միայն կարելի է, որ իրարու հարմարինք... արդ, հիմա կհուսամ, որ քեզի հետ ալ պիտի կըրնանք վարվիլ։

— Պիտի ջանամ ձեզ ամեն մասով գոհացնել,— պատասխանեց Գարեգին։

— Այդ մասին տարակույս չունիմ, միայն մեկ կետ մը կա, որ գլխ քիչ մը կվրդովե։

— Ի՞նչ կետ է այդ։

— Հիմա թերևս վրաս պիտի խնդաս, սակայն ես ամեն բան անկեղծորեն կխոսիմ... ես սիրտիս մեջ եղածը չեմ կրնար ծածկել։

— Ավելի լավ, անկեղծությունը միշտ գովելի է։

— Ուրեմն խոսք տուր, որ ըսելիքես չպիտի բարկանաս կամ վշտանաս։

— Նախ պետք է գիտնամ, թե ինչ է ձեր ըսելիքը։

— Եթե կուզես, որ իմ քովս պաշտոնավարես՝ պետք է հրաժարիս Ք. թաղի Թաղ. Խորհուրդի անդամակցությենեն։

— Ինչո՞ւ համար,— գոչեց Գարեգին հուզված շեշտով մը։

— Որովհետև չեմ ուզեր, որ իմ պաշտոնյաս հարաբերություն ունենա Մարգար էֆենտի պես մեկու մը հետ։

— Ես ձեր պաշտոնյան եմ՝ այնքան ատեն, որ ձեր գրասենյակը կղտնվիմ՝ բայց հոսկե դուրս ելլելես ետքը կարծեմ այլևս ոչ իրավունք չունիք իմ գործերուս խառնվելու։

— Ես պաշտոնյայի մը պարտականությունը այնպես չեմ ըմբռներ,— պատասխանեց Պողոս էֆենտի,— ինծի համար պաշտոնյան իր բաթրոնին հետ նույնացած պետք է ըլլա ոչ թե միայն գործին մեջ, այլ նաև դուրս։

Նույն միջոցին դուռը բացվեցավ և Տիրան ներս մտավ։

Նորեկը սիրալիր բարև մը տվավ Գարեգինին և նստավ աթոռի մը վրա։

— Ի՞նչ լուր,— հարցուց Պողոս էֆենտի։

— Գործերս կարգադրեցի,— պատասխանեց Տիրան, վաղ ժամը չորսին շոգենավը պիտի մեկնի։

— Վա՞յ,— գոչեց վաճառականը,— ես կկարծեի թե տակավին շաբաթի մը չափ պիտի մնաս։

— Ես ալ անանկ գիտեի, բայց այս առտու ըսին, որ փոքր վան շոգենավով պիտի մեկնիմ եղեր, որովհետև գործերը քիչ ատիպողական են եղել։

— Ինչ որ է, երբ որ ուզես, կրնաս մեկնիլ, մանավանդ որ քու հաջորդդ ալ գտանք։

— Եթե չեմ սխալիր Գարեգին էֆ.-ին է,— ըսավ Տիրան դեպի երիտասարդը դառնալով։

— Այո՛,— ըսավ Պողոս էֆենտին,— մեր մյուսյու Գարեգինը պիտի հաջորդե քեզի։

— Առկե լավագույն ընտրություն մը չէիք կրնար ընել։

— Հիմա քենե կխնդրեմ, որ տետրակները և թուղթերը իրեն հանձնես և միևնույն ատեն ընթացիկ գործերուն մասին սեփական եղած տեղեկություններն ալ տաս։

— Գլխուս վրա,— պատասխանեց Տիրան։

Հետո դեպի Գարեգինը դառնալով՝ հարցուց.

— Եթե կհաճիք, քովի սենյակը երթանք և տետրակները հանձնեմ, արդեն դուք այնքան վարժ եք գործերուն, որ մեծ բան մը չունինք ընելիք, կես ժամեն կվմնցնենք։

— Ավելորդ է ձեր հանձն առնելիք հոգնությունը,— ըսավ Գարեգին, ոտքի ելնելով։

— Ինչո՞ւ համար,— հարցուց Տիրան զարմացած։

— Որովհետև ես չպիտի կրնամ ընդունիլ Պողոս էֆ.-ի առաջարկած պաշտոնը։

— Բայց ընդունեցիր արդեն,— գոչեց վաճառականը։

— Իրավ է, որ քիչ մը առաջ չմերժեցի ձեր առաջարկությունը,— պատասխանեց Գարեգին,— բայց հիմա միտքս փոխեցի։

— Ի՞նչ պատճառով,— հարցուց Պողոս էֆ.։

— Քիչ մը առաջ ձեր ըրած դիտողություններուն համար։

— Մարգար էֆ.-ի մասին ըրածներո՞ւս կակնարկես,— հարցուց վաճառականը ժպտելով։

— Այո՛,— պատասխանեց Գարեգին,— խնդիրը սակայն Մարգար էֆենտիին վրա չէ, խնդիրը այն է, որ ինծի պաշտոն մը պառաջարկեք՝ պարզապես գլխ գործիք ընելու համար ձեզի և այս բանն է, որ չեմ կրնար ընդունիլ։

— Կտեսնեմ, որ հավատակ համբավիդ, փնավ գործնական մարդ չես եղեր։

— Թերևս այնպես ըլլա։

— Ուրեմն կնախընտրես քու ապագդ գոհե՞լ Մարգար էֆ.-ի պես անպատիվ մարդու մը համար, փոխանակ ինծի հետ հաճանձայնելու։

— Մինչև այս ապրած եմ առանց իմ հաճոյությունները ու փրզմ-

մրտանքս վաճառելու, և ասկե ետքն ալ միտքս դրած եմ այնպես ընել...

Այս ըսելով երիտասարդը ոտքի ելավ, քաղաքավարիորեն բարևեց Պողոս էֆենտիին ու Տիրանին և հեռացավ գրասենյակեն։

Գարեգինի այս ընթացքը այնքան մեծ անակնկալ մը երևցավ Պողոս էֆենտիի համար, որ շվարած մնաց պահ մը՝ առանց կարենալ բառ մը արտասանելու։

Քանի մը րոպե անցնելեն ետքը միայն ըսավ ինքնիրեն խոսելու պես։

— Աս տղան խե՞նթ է, ի՞նչ է։

— Պարոն Գարեգին շատ պարկեշտ ու կարող երիտասարդ մըն է, բայց բնավորությունը քիչ մը տարօրինակ է,— պատասխանեց Տիրան։

— Աղբա՜ր, սա ըրածը վայելե՞ց... իրեն շենք շնորհք գործ մը կառաջարկենք կոր ու ոչինչ խնդիրի մը համար կմերժե կոր...

— Վնաս չունի Պողոս էֆենտի, ուրիշ մեկը կգտնես հարկավ։

— Խնդիրը ատոր վրա չէ, միայն թե խենթությանը վրա կզարմանամ։

Վաճառականը զարմանալե ավելի կցավեր այս եղածին վրա։ Գարեգինի մեկժամով ջուր կիյնար ամբողջ հատուկագիծ մը, որ խնամքով պատրաստած էր։ Պողոս էֆ. կհուսար երիտասարդը իր վաճառատան մեջ առնելով նախ փորձառու, պարկեշտ ու կարող պաշտոնյա մը ունենալ իր ձեռքին տակ և հետո Գարեգինի միջոցավ «թշնամիին բերդը ներսեն առնել», ինչպես ինքը կխորհեր։

Մարգար էֆ-ի թաղականությունը, անոր հաջող սկզբնավորությունը, հակառակորդ կուսակցության միացումը, վերջապես Ք. թաղին մեջ անցած բոլոր իրողությունները, որոնց մոտեն հետևած էր Պողոս էֆենտի ծածկաբար, զինքը չափազանց գրգռած էին։ Մյուս կողմե, իր հակառակորդին ընտանեկան կյանքին նկատմամբ կատարած հետազոտությունները ոևէ դրական արդյունքի մը չէին հանգած։ Սպասուհի Սուրբիկը չէր կրցած գտնել այն խոհարարին հետքը, որմե լրացուցիչ տեղեկություններ կհուսար քաղել։

Այս անհաջողությունները նոր գժտություն մը հառաջ բերած էին Պողոս էֆ.-ի և Շազիկի արդեն իսկ ձգտյալ հարաբերության միջև։

Վաճառականը, Գարեգինին մեկնելեն ետքը բոլոր այս իրողությունները աչքի առաջ բերավ ու վերլուծեց կացությունը, ջանալով ուղղության նոր շավիղ մը գծել իրեն։ Այս մտային աշխատության մեջ էր, երբ Սափորյան էֆ. ներս մտավ և ողջունեց զինքը։

Տիրան փաստաբանին գալեն անմիջապես ետքը մեկնեցավ, խոստանալով քիչ ետքը վերադառնալ։

— Սափորյան էֆենտի, սա ի՞նչ հով փչեց,— գոչեց Պողոս էֆենտի։

— Հոսկե կանցնեի կոր, սանկ մեյ մը հանդիպիմ՝ ըսի։

— Շատ աղեկ ըրիք, սուրճ մը կառնեք հարկավ։

— Շնորհակալությամբ։ Ի՞նչ կա չկա տեսնենք, գործերը ի՞նչ վիճակի մեջ են. . հրապարակը կարծեմ այս միջոցին քիչ մը կայուն է...

Այսպես մեկ քանի պայմանադրական խոսքեր ընելե ետքը, Սափորյան ըսավ.

— Վերջապես Մարգար էֆենտին ալ մուրատին հասավ։

— Ի՞նչ կերպով,— հարցուց Պողոս էֆենտի կեղծ անգիտությամբ։

— Թաղ. խորհուրդի ատենապետ եղավ... ձեզ տապալեց և ձեր տեղը անցավ... խեղճ մարդը ատոր համար շատ աշխատեցավ շիտակը։

— Չիս տապալե՞ց մի,— գոչեց Պողոս էֆ.,—ատ ուրկե՞ հանեցիր...

— Այսինքն ձեզ ստիպեց հրաժարելու։

— Բնավ երբեք, ես իմ հոժար կամքովս հրաժարեցա, որովհետև գեղին օդը չէր իգար կոր մեզի և բժշկին խորհուրդովը ստիպված էինք հեռանալ անկե։

— Ինչ որ է նե, խնդիրը այն է, որ այսօր Մարգար էֆենտին բազմած է Թաղական խորհուրդի ատենապետի աթոռին վրա։

— Ձեր շնորհիվ,— դիտել տվավ վաճառականը։

— Վարչությունը մանրակրկիտ քննութենե մը ետքը իր որոշումը տվավ. հետևաբար իրավունք չունիք մեզ դատապարտելու,— պատասխանեց վարչության անդամը։

— Շիտակը աղվոր որոշում... ճիշտ այն մարդը, որ թաղը իրար անցնելու պատճառ եղավ, բռնեցիք թաղական ըրիք։

— Բայց, Պողո՜ս էֆենտի, թաղեցիները շատ գոհ են մեր կարգադրութենե և այսօր թաղը բոլորովին հանդարտած է, նույ-

նիսկ հրեկվան հակառակորդները Մարգար էֆ.-ի շուրջը բոլորած են։ Ան մորուքով տաքգլուխ մարդ մը կա նե՝ կուսակցական է, ի՞նչ է, որ հակառակ էր Մարգար էֆենտիին...

— Սուսերյա՞նցը...

— Հա՛, աղեկ ըսիր, Սուսերյանցը, այսօր Մարգար էֆ.-ին ջերմ պաշտպանը դարձած է։

— Սկզբունք չունեցող խայտառակին մեկն է,— գոչեց Պողոս էֆ. բարկությամբ։

— Կրնա ըլլալ, բայց խնդիրը ասոր վրա չէ, խնդիրը այն է, որ այսօր Սուսերյանց Մարգար էֆ.-ի հարած է... և ո՛չ թե միայն ինք, այլ նաև իր ամբողջ խումբը։

— Է՛յ, հիմա այդ խոսքերեն ի՞նչ պիտի հետևցնես,— հարցուց վաճառականը անհամբերությամբ։

— Ի՞նչ կուզես, որ հետևցնեմ, խոսք է կընենք կոր... միայն թե Պողոս էֆենտի, ես շիտակը շատ կզլմանամ քու բռնած ընթացքիդ վրա։

— Ի՞նչ ընթացք...

— Իրավցնե փիլիսոփա ես եղեր, բայց այս աստիճան փիլիսոփայությունն ալ աղեկ չէ։

— Չեմ հասկնար, թե ի՞նչ ըսել կուզես։

— Ասոր ես փիլիսոփայություն չեմ ըսեր, անզգայություն կըսեմ՝ ավելի ծանր բառ մը չըսելու համար։

— Հավատա, որ դեռ բան մը չհասկցա այդ ամբողջ խոսքերեդ։

— Ճանըմ, ինտոր կըլլա, որ այս եղածները կկլլես, ձայնդ կքաշես, ինստիս։

— Ո՞ր եղածները,— հարցուց վաճառականը՝ քիչ մը հասկնալով փաստաբանին ակնարկություններուն իմաստը։

— Սա Թաղական Խորհուրդի խնդիրը, եղբայր, մի՞թե կարելի բան էր սա եղածներուն հանդուրժել... մարդս վերջապես արժանապատվության համար կապրի։

— Ի՞նչ նշանակություն ունի Ք. Թաղին Թաղ. Խորհուրդը, ոչինչ, տղայական բաներ են ատոնք... Մարգար էֆենտիին պես ապուշներն են, որ կարևորություն կուտան ատանկ գործերու։

— Չէ՛, Պողոս էֆ., այդպես մի ըսեր,— գոչեց Սափորյան շուրջ դեմք մը առնելով,— խնդիրը պաշտոնի կամ գործին կարևորության վրա չէ, խնդիրը պատվի, արժանապատվության վրա է։

Ի՞նչ ըսել է, որ զիս Թաղական Խորհուրդեն դուրս նետեն ու իմ տեղս անցնեն...

— Ատանկ բան չէ եղած,— դիտել տվավ Պողոս էֆենտին։

— Պարապ խոսք չեմ ուզեր, ես ըրածս գիտեմ,— պատասխանեց Սափորյան էֆ.,— իբրև Վարչության անդամ մոտեն հետևած եմ բոլոր իրադարձություններուն... գիտեմ թե ինչո՞ւ ստիպվեցար հրաժարիլ։

Իրեն հրաժարականին մասին այս անորոշ ակնարկությունները վրդովեցին վաճառականը։ Ինք այնպես կկարծեր, որ ընտանեկան գայթակղությունը, որուն զոհ գացած էր, միմիայն Ք. Թաղի անձուկ շրջանակին մեջ ծանոթ էր ու ավելի հեռուները չէր տարածված։

— Անցած գացած բաներ են ատոնք, ալ չարժեր վրաները խոսիլ,— ըսավ,— մանավանդ որ շատ զոհ եմ այդ թաղական գործերեն քաշվելուս համար... ժամանակն ու նյութական կորուստն ուրիշ բանի չծառայեր մեր մեջ ազգային գործերու խառնվիլը։ Բայց չմոռնամ սրվիկա հիշեցնելու ձեզի, թե դուք ալ իբրև Վարչության կողմե եկած քննիչ, այն ատեն Մարգար էֆենտիի կողմը բռնեցիք և պատճառ եղաք, որ խնդիրը ավելի կնճռոտի...

— Կսպասեի այդ դիտողության,— պատասխանեց Սափորյան։

— Խոսքին կարգը եկավ տե՝ անոր համար կըսեմ կոր, եթե ոչ ինծի համար խնդիրը բոլորովին փակված է ու ալ չեմ ուզեր ատով զբաղիլ։

— Քեզի շիտակը խոստովանի՞մ... հիմա շատ ցաված եմ այդպես վարվելուս։

— Ցավելու բան չկա, դուք այդպես վճռեր էիք և ըստ այնմ ալ ձեր տեղեկագիրը պատրաստած։

— Ետքեն համոզվեցա, որ խնդիրը հարևանցի կերպով ուսումնասիրած էի... ատոր պատճառն ալ այն է, որ Մարգար էֆ.-ի խոսքերուն պետք եղածեն ավելի կարևորություն ընծայեցի։

— Գոհ եմ, որ հիմա ձեր սխալը զգացած եք,— պատասխանեց Պողոս էֆ. ժպտալով։

— Էֆենտիմ, մենք այն ատեն Մարգար էֆենտի Սասանյանը մարդ կարծեցինք... ահա անկե խաբվեցանք...

— Չեմ գիտեր, թե ի՞նչ ըսել կուզեք։

— Ճանըմ, պարզապես զիս շողոքորթեց, սուտ ու փուտ պատմություններ հնարեց, իրողությունը խեղաթյուրեց, դեպքերը

չափազանցեց, վերջապես ամեն միջոց գործածեց... քեզի ավելի զարմանալին պատմեմ... ալ միամտաբար ընդունեցի, բնական է, որ իր մեկ քանի դատերը ինծի հանձնեց, ես փաստաբան եմ, երբոր գործ մը հանձնեն, չեմ կրնար մերժել։ Ազգային պաշտոնս տարբեր, անհատական գործս տարբեր, մեկը մյուսին չեմ կրնար զոհել։ Այսպես ուրեմն, մեկ կողմե Թաղ. Խորհուրդի խնդրին մեջ Մարգար էֆենտիի դատավորը եղա, մյուս կողմե իր անձնական գործերուն համար իր փաստաբանը... կացությունս քիչ մը փափուկ էր։

— Բնականաբար։

— Բայց ես նորեն ուղղամտությամբ շարժեցա։

— Ատոր ո՞վ կտարակուսի,— ըսավ Պողոս էֆ. հեգնական ծիծաղով մը, զոր փաստաբանը չնշմարել ձևացուց։

— Ես իմ տեղեկագիրս պատրաստեցի խղճի ձայնիս անսալով, առանց ուրիշի ոևէ նեղության։

— Այո՛,— ըսավ վաճառականը չոր ձայնով մը։

— Բայց ինք նույն ուղղությունը ցույց չտվավ ինծի հանդեպ։

— Ինչպե՞ս. ի՞նչ եղավ որ...

— Ի՞նչ պիտի ըլլա, թաղական ըլլալուն պես ինծի հանձնած գործերը առավ և ուրիշ փաստաբանի հանձնեց, իր հին փաստաբանին։

— Վայ, սարսափելի՜,— գոչեց Պողոս էֆ. այս պատմութենեն հաճույք զգալով։

— Այնպես որ,— շարունակեց փաստաբանը,— հիմա հայտնի եղավ, թե գործերը ինծի հանձնելը կարողությանս համար չէր, այլ պարզապես զիս կաշառելու փորձ մը։

— Ատոր բնավ տարակույս չկա։

— Ասանկ խաղքություն կըլլա՞։

— Պատվով մարդ մը ատանկ բան չըներ։

— Իմ տեղս եթե դուք ըլլաք, ի՞նչ ընթացք կբռնեք հիմա։

— Իրավ որ չեմ գիտեր՝ բայց կենթադրեմ, որ սարսափելի կերպով կբարկանամ եղածին համար։ Ի՞նչ զարմանալի մարդ է եղեր այս Մարգար էֆենտին... թող գոնե քիչ մը սպասեր երևույթները փրկելու համար։

— Ինծի պես փաստաբան մը ասանկ խաղի գա, ատանկ վաճառականե մը... չլսված բան...

— Արդարև մեծ պզտիկություն է ձեզի համար։

— Բայց թող առնելիք ըլլա, ես ալ հարկավ անոր գլխին խաղ մը կբանամ։

— Ինչ որ ընեք, իրավունք ունիք, բայց խնդիրը այն է, որ բան մը կրնա՞ք ընել։ Դատերը իրենն են՝ իրավունք ունի ուզած փաստաբանին հանձնելու, մյուս կողմն հիմա կեդրոնական Վարչության որոշումով բազմած է Թաղ. Խորհուրդի ատենապետի աթոռին վրա և ձենե ոևէ կախում չունի։ Լավագույն է, որ ձայներդ քաշեք նստիք։ Մարգար էֆենտին վարպետորդի մարդ է, հետը գլուխ չեք կրնար ելլել, անիկա ձեզի պես մեկ քանի փաստաբան մատին վրա կխաղցնե։

Պողոս էֆենտի դիտմամբ այս խոսքերը կըներ ավելի գրգռելու համար իր խոսակիցը։

— Ինծի Սափորյան կըսեն, գիտե՞ս,— գոչեց փաստաբանը բորբոքած։

— Անոր ալ Սասանյան կըսեն,—պատասխանեց Պողոս էֆենտի հանդարտությամբ։

— Անիկա թերևս կրնա քու աչքդ վախցնել, բայց իմին...

— Ես ինչո՞ւ պիտի վախնամ իրմե...

— Եթե չվախնայիր, այդպես տեղի չէիր տար և գյուղը ձգելով չէիր փախչիր...

Հիմա կարգը եկած էր փաստաբանին՝ վաճառականը գըրգռելու։

Պողոս էֆենտի լռություն պահեց։ Բայց փաստաբանը շարունակեց։

— Ես եթե քու տեղդ ըլլայի՝ բոլորովին տարբեր ընթացք մը կբռնեի, ես պայքարի մարդ եմ... ասկե զատ իրավունքը քու կողմդ է։

— Ի՞նչ ընեի, քանի որ Վարչությունը ի վերջո Մարգար էֆենտիի կողմը բռնեց։

— Բողոքե՛, էֆենտի՛մ,— գոչեց Սափորյան,— քննություն պահանջե, սպառնացի՛ր, պոռա՛, կանչե՛... իրավունքդ ուզե։

— Հիմա ալ բանը բանեն անցավ,— պատասխանեց Պողոս էֆենտի։

— Ընդհակառակը բուն ժամանակն է։

— Ի՞նչ ընելու համար։

— Մարգար էֆենտիին նետելու համար Թաղ. Խորհուրդին միջեն։

— Ես այդ թաղեն հեռացած եմ։

— Ատոնք պարապ խոսքեր են,— ըսավ փաստաբանը, և միշտ միևնույն բանը կրկնելով,— քու միտքդ ծածկել մի ջանար։ Ես գիտեմ, որ դուն միակ մտածում մը ունիս, այն է՝ վրեժ լուծել Մարգար էֆենտիեն, որ քեզի դեմ հաղթանակ տարավ և քեզի խաղք ըրավ քու թաղիդ մեջ։

— Թաղական խորհուրդեն հոժար կամքով հրաժարիլը խաղք ըլլալ չնշանակեր։

— Ես ըսածս գիտեմ, Պողոս էֆենտի և մի ստիպիր զիս ավելի բաց խոսելու։

Փաստաբանը այս խոսքերը արտասանեց նշանակալի ակնարկ մը ուղղելով վաճառականին։ Այս վերջինը հասկցավ ակնարկը և լռություն պահեց։

— Հիմա, իբրև էրիկ մարդ, լրջորեն խոսինք,— շարունակեց Սափորյան։— Ինչպես ըսի, Մարգար էֆ. ինծի խաղի բերավ, զիս պարզապես իրեն գործիք ըրավ և իր նպատակին հասնելե ետքը կից մը տվավ ու զիս ճամփեց։

— Լավ, ի՞նչ պիտի եզրակացնես ատկե,— հարցուց Պողոս էֆենտի։

— Սա պիտի եզրակացնեմ, որ այս միջոցիս երկուքնուս ալ կացությունը միևնույնն է։

— Այսինքն...

— Այսինքն երկուքս ալ, ես ու դուն թշնամի ենք Մարգար էֆենտիի և անոր հետ հաշիվ մը ունինք կարգադրելիք։

— Կրնա ըլլալ։

— Այս պարագային մեր շահը կպահանջե, որ մեր գործերը միացնենք հասարակաց թշնամիին դեմ։

— Չեմ կրնար հասկնալ, թե ի՞նչ պիտի կրնանք ընել։

— Շատ բաներ... նախ պիտի կրնանք նետել զինքը Թաղ. խորհուրդեն։

— Ի՞նչ միջոցավ։

— Միջոցը դյուրին է։ Զմոռանանք, որ ես Վարչության անդամ եմ։ Բավական կարողություն ունիմ խոսքս քալեցնելու։

— Կհավատամ, որ այդպես ըլլա։

— Մյուս անդամներուն պես կբավորական գեր չեմ կատարեր ժողովին մեջ... կըմբռնե՞ս, ինչ ըսել կուզեմ։

— Կհասկնամ,— պատասխանեց վաճառականը, որ կսկսեր շահագրգռվիլ փաստաբանին խոսքերեն։

— Քանի որ կհասկնաս՝ ուրեմն համաձայնեցանք։

— Բայց մի՛ աճապարեր,— գոչեց վաճառականը խնդալով։

— Ընդհակառակը, պետք է շուտով գործ տեսնենք և պարապ ժամանակ չանցունենք։

— Քանի որ այդքան մեծ ազդեցություն ունիս Վարչության մեջ, ալ ի՞նչ պետք կա աջակցությանս...

— Այո՛, Վարչության մեջ ազդեցությունս մեծ է, արդարև կրնամ պաշտոնակիցներս ուզած ուղղությամբս վարել, բայց ատով գործ չվմենար։ Վարչության սեղանին վրա հիմա Ք. Թաղի խնդիր մը չկա։ Պետք է նախ խնդիրը ստեղծել, և ասոր համար ահա պետք ունիմ քու աջակցությանդ։

— Ի՞նչ կերպով, բացատրե տեսնենք։

— Բայց նախ կուզեմ գիտնալ, թե զուր տեղը կոկորդս չպիտի մաշեցնեմ։

— Եթե ձեռքես բան մը գա, չեմ մերժեր։

— Ուրեմն այս անգամ համաձայնեցանք,— գոչեց փաստաբանը ուրախությամբ։

— Ենթադրենք, որ համաձայնեցանք,— պատասխանեց Պողոս էֆենտի։

— Ենթադրությամբ գործ չի տեսնվիր։

— Կուզե՞ս որ իրարու հետ պայմանադրվինք Մարգար էֆ.-ն տապալելու համար։

— Պայմանադրության պետք չկա, ես ձեր պատվավոր մարդու խոսքին կվստահիմ... կուզեմ, որ խոստանաս այս խնդրին մեջ ինձ աջակցիլ ամեն կարելի միջոցներով։

— Լավ, կխոստանամ,— պատասխանեց վաճառականը ճարահատ,— հիմա բացատրե տեսնենք, թե ի՞նչ ծառայություն կըսպասես ինե։

— Ներկա Առժամյա Թաղ. խորհուրդը ապահովաբար թաղեցիներուն համակրանքը չվայելեր։

— Ես ալ այնպես կկարծեմ։

— Ես այդ մասին վստահ եմ։ Եթե Թաղ. խորհուրդը հինգ տարիներե ալ կազմված ըլլա՝ դարձյալ իր հակառակորդները պիտի ունենար։

— Շատ ճիշտ է։

— Արդ, քու գործդ պիտի ըլլա հակառակորդները գտնել, ժողվել, քով քովի բերել, անոնց մարմին ու կյանք տալ և թաղին մեջ շարժում մը ստեղծել, որուն հետևանքը կըլլա գրավոր բողոք մը Վարչության ուղղված։ Մեյ մը որ խնդիրը հոն գա, դուն ալ գործը ինծի ձգե և ապահով եղիր հաջողության մասին։ Կտեսնես, որ քենե անկարելի ծառայություն չեմ պահանջեր, ոչ ալ նույնիսկ դժվար գործ մը։ Քիչ մը թերևս նյութական զոհողության պետք ըլլա, այդ ալ անշուշտ չպիտի մերժես։

— Ատիկա դյուրին է, միայն թե...

— Ի՞նչ ուրեմն։

— Ես չեմ ուզեր բացե ի բաց այդ գործով զբաղիլ։

— Ծածկաբար գործե՛, էֆենտիմ։ Վստահելի մեկը գտիր թաղին մեջ, անոր հանձնե գործը վարել, և դուն գաղտնաբար հսկե։ Բնական է, որ քեզի հավատարիմ կուսակիցներ ունիս, Թաղ. խորհուրդի նախկին պաշտոնակից և այլն, վերջապես կրնաս մեկը գտնել։

— Հարկավ, կուսակիցներ ունիմ,— գոչեց Պողոս էֆ. հպարտությամբ։

— Այն ատեն գործը շատ կդյուրանա։ Միայն թե ժամանակ մի կորսնցներ... քանի մը ամիսեն մեր պաշտոնավարության շրջանը կավարտի և ալ անկե ետքը բան մը չեմ կրնար ընել, մանավանդ որ Վարչության անդամները վերընտրելի չեն։

— Լավ, լավ, անմիջապես գործի կսկսինք։

— Ես ութը տասը օրեն մեյ մը կուգամ տեղեկություն առնելու համար։

— Հրամմեցե՛ք։

Փաստաբանը շարժում մը ըրավ, ոտքի ելլելու, վաճառականը կեցուց զայն։

— Ուրիշ բան մըն ալ կա,— ըսավ վարանոտ շեշտով մը։

— Ի՞նչ բան։

— Մարգար էֆենտիին դեմ գործածելիք զենք մը։

— Ի՞նչ տեսակ զենք է։

— Գայթակղական բան մը...

— Գայթակղական արա՞րք մը, որուն մասնակից է Մարգար էֆենտին,— գոչեց Սափերյան, որուն աչքերը շողալ սկսան։

— Այսինքն իր կնոջ արարքը, կամ արարքները...

— Ապացուցված իրողություն մը կա՞ մեջտեղ, վկաներով, ականատեսներով հաստատված բան մը...

— Բնականաբար... եթե ոչ թեթևորեն ասանկ բան մը կըսեի՞... ես ուրիշներու չեմ նմանիր, մեկուն մեկալին ընտանեկան պատվին հետ խաղալ չեմ ուզեր... աս ալ իմացա թե՝ դիպվածով, պատահաբար բան մըն էր, գրեթե իմ կամքիս հակառակ։

— Բայց, խոսե՛, պատմե՛, բացատրե՛,— գոչեց փաստաբանը խանդավառված,— ատանկ բան մը ունիս և մինչև հիմա չես ըսեր, ի՞նչ զարմանալի մարդ ես եղեր։

— Ես հակառակորդիս դեմ ատանկ զենքեր գործածել չեմ ուզեր,— պատասխանեց Պողոս էֆ.։

— Պարապ խղճահարություններ են ատոնք, հակառակորդ մը ջախջախելու համար ամեն զենք լավ է։

— Թերևս իրավունք ունիս, բայց իմ բնությունս ալ ատանկ է...

— Հիմա թուղունք ատոնք և բուն խնդրին գանք, պատմե նայինք գիտցածներդ։

— Պայմանավ, որ մեր մեջ մնա։

— Ատոր ապահով եղիր,— պատասխանեց Սափորյան խնդալով, փաստաբանները տեսակ մը խոստովանահայրեր են, իրենցմե գաղտնիք դուրս չելլար։

Վաճառականը սկսավ պատմել ինչ որ մենք արդեն գիտենք տիկին Սաթենի մասին։ Փաստաբանը խորին ուշադրությամբ մտիկ ըրավ, զանազան հարցումներ ուղղեց և ի վերջո ըսավ.

— Աղվոր բան, շատ աղվոր բան... միայն թե ապացուցանելը դժվար, մանավանդ որ գլխավոր վկան՝ այդ խոհարարը, որ բաներ մը տեսեր է, մեջտեղ չի կա։

— Բայց Սուրբիկը մեջտեղն է,— դիտել տվավ Պողոս էֆենտի։

— Այո՛, բայց անոր տեսածները մեծ բան մը չեն ապացուցաներ. ասկե զատ, տեսնենք իրա՞վ են։ Ծառաները երբ տունե մը կճամփվին, ընդհանրապես զրպարտություններ կհորինեն իրենց նախկին տերերուն վրա։

— Սուրբիկը քանի մը անգամ խոսեցուցինք, միշտ նույն բաները կրկնեց։

— Եթե պետք ըլլա մեկ քանի հոգիի քով կկրկնե՞ ըսածները։

— Չեմ գիտեր, բայց կհուսամ... թերևս վարձատրություն մը տալով։

— Ատիկա վտանգավոր միջոց մըն է և... ինչ որ է, այդ մասին կրկին կխորհենք, առայժմ այդ չենք կրնար ուղղակի կերպով շահագործել, բայց անուղղակի կերպով կրնանք շահագործել... դուն ջանա սա մյուս վկային հետքը գտնելու... անիկա թերևս շատ ավելի մանրամասն իրողություններ կարողանա հայտնել։

Վաճառականը պատասխանեց, թե արդեն կհետազոտե անոր հետքը և փաստաբանը մեկնեցավ՝ ըսելով.

— Դուն իմ հրահանգներս ջանա որ լավ մը գործադրես և այն ատեն ամեն բան կդյուրանա... բողոքագիր մը տալու է Վարչության, հասկցա՞ր, հոս է խնդիրը։

Վաճառականը երբ առանձին մնաց, գոհունակությամբ նոր սիկարեթ մը վառեց։ Այս անակնկալ աջակցությունը զինքը կսրտապնդեր։ Սափորյանի պես մեկը արհամարհելի ուժ մը չէր և վարպետորդիի ճշմարիտ համբավ մը կվայելեր։

— Եթե Գարեգին ալ չհամաներ,—մտածեց,—գործերնիս շատ կդյուրանար, բայց այդ ալուն չափազանց պարկեշտությունը վնասաբեր կըլլա կոր։ Ես ալ թերևս շատ պահանջկոտ եղա, երբ առաջարկեցի, որ Թաղ. Խորհրդեն հրաժարական տա իմ քովս կարենալ պաշտոնավարելու համար։ Նույնիսկ սխալ մը էր ըրածս։ Մեղք, որ Սափորյանը Գարեգինեն առաջ չեկավ, այն ատեն խնդիրը բոլորովին տարբեր ձև մը կառներ։

Ծ Թ

— Անիրավություն է, էֆենտիմ, այսչափ տարվան տեսուչը կճամփվի՞ վարժարանեն, հանցանքը ի՞նչ է խեղճին։

— Մեծագույն հանցանքը իր անկարողությունն է։

— Պարապ խոսք, հիմա՞ մեջտեղ ելավ անկարողությունը... շատ ալ ազեկ կկառավարեր կոր վարժարանը։

— Քու խելքդ չի հասնիր հա՞, վախնամ Քեմպրիճի համալսարանեն ելած ես։

— Ինչ որ ալ ըլլա, սա իրավ է, որ Սուսերյանցը շատ ավելի կարողության տեր մարդ է, քան պարոն Թորգոմը։ Մարդը մանկավարժությունը իրեն մասնագիտություն ըրած է։

— Ան քաջավ, դուն ալ հաստատեցիր... անոր մասնագիտությունը պոշպողազությունն է։

— Ասկե զատ պետք չէ որ վարժարանը կուսակցականի մը հանձնվեր։

— Ալ օն փարալրմ տա բուռնան...

— Շատ իրավունք ունի յա, մեր տղաքն անկրո՞ն ընենք։

— Պարապ խոսք, էֆենտիմ, կուսակցականը տնպատճառ անկրոնություն չքարոզեր։

— Ինչ որ ալ ըլլա՝ պարոն Թորգոմը ճամփելու չէին։

— Պարզապես խեղճը Մարգար էֆ.-ին զոհվեցավ։

— Անձնական հակառակություն կվայելե՞։

— Թաղ. Խորհուրդը մեծամասնությամբ որոշում տված է։

— Թաղ. Խորհուրդը վարժարանին ի՞նչ կխառնվի... ատիկա հոգաբարձության գործն է։

— Հոգաբարձություն չունինք։

— Թաղ հոգաբարձություն մը ընտրեն, էֆենտիմ։

— Մարգար էֆենտիին գործին չգար, ինքնիշխան կառավարել կուզե ամեն բան։

— Ոչխարի պես թաղեցիները գտեր են, ուզած խաղերնին կխաղան կոր։

— Ի՞նչ նստեր ես, գնա՝, բողոքե՝, դուն ալ թաղեցի չե՞ս։

— Իմ ինչո՞ւս պետք։

— Ուրեմն մեծ-մեծ մի՛ չարգեր այստեղ։

— Դիտողություն ընելու իրավունք չունի՞մ... զարմանալու բան։

Այսպես խոսակցություն տեղի կունենար Ք. թաղի սրճարաններեն մեկուն մեջ երկուշաբթի իրիկուն մը։

Արդարև նախորդ օր Թաղական Խորհուրդը ճամփու դրած էր պարոն Թորգոմը և անոր տեղ վարժարանին տեսուչ կարդած էր ընկեր Սուսերյանցը։

Նախկին ուսուցիչը հակառակ իր թափած ջանքերուն, չէր կարողացած սպառնացող վտանգին առաջը առնել։ Տիկին Սաթեն պահանջած էր Թորգոմը անպատճառ հեռացնել և վաճառականը չէր կրցած իր կնոջ պահանջումին գոհացում չտալ, մանավանդ որ ինքն ալ կուզեր կերպով մը վարձատրել «Շանթ Ակումբ»-ի վարիչ Սուսերյանցը, որ իր կողմ անցած էր իր ամբողջ խումբով։

Պարոն Թորգոմի համար մահացու հարված մը եղած էր, երբ

Թաղական Խորհուրդը իրեն հայտարարած էր թե պաշտոնեն գաղրած էր։

Թեև կսպասեր այդպիսի տնօրինության մը, բայց մյուս կողմն կհուսար, որ տեղի չպիտի ունենար։

— Պաշտոնիս մեջ երբեք թերացում մը չեմ գործած, ի՞նչպես կրնան զիս ճամփել,— կըսեր ինքնին։

Թաղ. Խորհրդարանին մեջն ալ նույնը ըսավ։

— Կփափաքեի գիտնալ, թե ինչո՞ւ կդադարեցվիմ պաշտոնես, արդյոք անգիտակցաբար թերացո՞ւմ մը գործած եմ։

— Ո՛չ,— պատասխանեց Միհրանիկ էֆենտի,— թերացում չեք գործած։

— Ուրեմն ի՞նչ է ձեր որոշումին թաքուն շարժառիթը։

— Թաքուն շարժառիթ չկա, միայն թե խորհուրդս այնպես որոշեց։

— Եթե հանցանք մը գործած եմ, հայտնեցե՛ք։

— Ամեն տարի վարժարաններու մեջ դասատուներ և տնօրիններ կփոխվին՝ առանց հանցանք մը գործած ըլլալու, միմիայն վարչական պատճառներով։

— Կփափաքեի գիտնալ այդ պատճառները։

— Խորհուրդս ստիպված չէ որոշումներուն բացատրություն տալ։

— Բայց երբ այդ որոշումը մարդու մը ապագան կխորտակի, կարծեմ գոնե այդ մարդը իրավունք ունի բացատրություն ուզելու։

— Ապագա խորտակվելու խնդիր չկա։ Պոլսո մեջ շատ վարժարան, հոս չեղավ, ուրիշ տեղ գործ մը կգտնես։

— Այո՛, բայց երբ հրաժարվելուս պատճառը մութ մնա, ասիկա կրնա կասկածներ հարուցանել և զիս վարկաբեկել։ Երբ որ ինծի հարցնեն, թե ինչո՞ւ ճամփված եմ այս վարժարանեն, ի՞նչ պատասխան տամ։

Այս պնդումները սպառեցին Մարգար էֆենտիի համբերությունը, որ մինչև այն ատեն լուռ կեցած էր։

— Քեզի բան մը ըսե՞մ,—ըսավ,—հարկ դատեցինք քեզ հրաժարեցնել, որովհետև որոշած ենք վարժարանին ուսման մակարդակը բարձրացնել։

— Լավ, ատիկա ի՞նչ առնչություն ունի ինծի հետ։

— Սա առնչությունը ունի, որ այդ մակարդակին համար տնուչի մը պետք ունինք։

— Միթե ես անկարո՞ղ եմ։

— Դուք ալ ձեր սահմանին մեջ կարող եք, բայց մեզի ավելի կարող մեկը պետք է։

— Վա՞յ, անկարո՞ղ եմ Եղեր, հա՞,— գոչեց ուսուցիչը դողահար ձայնով մը։

— Մենք չուզեցինք ատանկ բան մը ըսել, բայց մեզ ստիպեցիր։

— Եվ ո՞ր կարող տեսուչն է, որ պիտի հաջորդե ինծի։

— Ատիկա մեր գիտնալիք բանն է,— պատասխանեց Մարգար էֆ., չոր ձայնով մը։

— Պարոն Սուսերյանցը, այնպես չէ՞։

— Կրնա ըլլալ. մեր գիտնալիք բանն է։

— Երկերե՛ս, կեղծավո՛ր, խաբեբա՛,— մոլտաց ուսուցիչը իր ակռաներուն մեջեն։

— Բայց Սուսերյանցը կարծեմ ձեր սիրելի բարեկամն էր,— դիտել տվավ Մարգար էֆ., ձեր գործակիցը և խորհրդատուն։

— Այո՛, զիս աղվոր խաբեց, հիմա կարգը ձեզի եկավ։

Մարգար էֆենտի հարկ չդատեց ավելի երկարելու այս վիճաբանությունը, ուստի Մանուկ աղային դառնալով՝ ըսավ.

— Գործերնուս նայինք, շատ ժամանակ չունինք։ Եկեղեցապատկան սրճարանին պայմանագրությունը պատրաստեցեք, հիմա նոր վարձակալը պիտի գա ստորագրե ու եռամսյան ալ պիտի վճարե։

— Այո՛, պատրաստ է,— պատասխանեց Մանուկ աղա։

— Թագուկ հանրմին համար հանձնարարական մը պիտի գրվեր Հոգաբարձության՝ որպեսզի հիվանդանոցին մեջ ընդունին զինքը... գրվեցա՞վ։

— Ոչ տակավին։

— Ինչո՞ւ համար։

— Իր նյութական անկարողությունը հաստատող երկու վկաներ չկան... ասկե զատ լսեցինք, որ Թագուկ հանրմ տուն մը ունի Եղեր, ուրկե ամսական 80 ղուռուշ վարձք կառնե։

— Ուրիշներ ալ ըսին, որ բացարձակ սուտ է ատիկա,— միջամտեց Մելիտոս էֆ.։

— Մոտեն գիտցող կա։

— Էյ, հիմա ի՞նչ պիտի ընենք,— հարցուց Մարգար էֆենտի։

— Մանրակրկիտ քննություն մը պիտի կատարենք։

— Բայց այդ պառավը ծանր հիվանդ է եղեր ու քովը մեկը չունի զինքը խնամելու, հիմակուհիմա հանձնարարականը տանք, թո՛ղ երթա, քննությունն ալ ետքը կկատարենք։

— Ինչպես որ հարմար դատեք։

Այս խոսակցության միջոցին ուսուցիչը անշարժ նստած էր իր տեղը և մեկնելու դիտավորություն ցույց չէր տար։

Վաճառականը անհամբեր, դեպի անոր դարձավ և ըսավ.

— Կարող եք երթալ...

— Դեռ ըսելիքներս ունիմ... մեկ քանի դիտողություններ,— կմկմաց պարոն Թորգոմ։

— Բայց մենք ձեր դիտողությունները լսելու համար ձեզ հոս չկանչեցինք, այլ մեր որոշումը հայտնելու համար,— պատասխանեց վաճառականը։

— Իրավունք ունիմ իմ բողոքս ներկայացնելու...

— Ոչ մեզի...

— Հապա որո՞ւ

— Թերևս Ուսում. Խորհրդին,— ըսավ Մարգար էֆ. քմծիծաղով մը,— կարծես երբ ուսուցիչ մը ինքզինքը անիրավված զգա, անոր դիմում կընե։

— Ատիկա արդեն պիտի ընեմ,— գոչեց ուսուցիչը։

— Ուրեմն ավելորդ է մեզի այստեղ ժամավաճառ ընելը։

— Բայց կպահանջեմ, որ իմ բողոքս արձանագրվի հոս։

— Երկար ըրիր...

— Ձեր անձնական վրեժը լուծելու համար է, որ զիս կհրաժարեցնեք։

— Որոշումը միաձայնությամբ տրվեցավ Թաղ. Խորհուրդի կողմե, և որոշումն ալ անդառնալի է, ուստի պարապ տեղ շունչ մի հատցներ, երթաք բարով։

Այս անգամ պարոն Թորգոմ հասկցավ թե իրավցնե անօգուտ էր երկար մնալ Խորհրդարանը, մանավանդ որ Մարգար էֆ. կոկսեր զայրանալ և կրնար ծանր բառեր արտասանել, որոնց ինքն ալ պիտի ստիպվեր պատասխանելու, և անախորժ միջադեպերու տեղիք տալու։

Ուստի կաս-կարմիր կտրած դուրս ելավ «մնաք բարով» մը մռլտալով քթին տակեն։

Ինչպես տեսանք՝ այս եղելությունը Թաղին մեջ հետևյալ օր ընդհանուր խոսակցության նյութ դարձած էր։ Ուսուցիչը ամբողջ

օրը անցուցած էր իր բողոքագիրքը պատրաստելու, ուղղված Ուսում. Խորհրդին։

Եկուշաբթի «Հանրային Կարծիք»-ի ազգային լուրերու բաժնին մեջ կկարդացվեր հետևյալ հոդվածը պրն. Նշանիկի գրչին ելած, Մարգար էֆենտիի թելադրությամբ։

«Վարչության կողմե նշանակված Ք. Թաղի Առժամյա Թաղ. Խորհուրդը շաբաթներե ի վեր գործի ձեռնարկած է և գովելի փութաջանություն մը ցույց կուտա։ Իր ուշադրությունը նախ դարձուցած է վարժարանին անկերպարան վիճակին վրա և հիմնական մաքրագործում մը ձեռնարկած։ Նախկին տեսուչը ճամփու դրված է իբրև անկարող և անոր տեղ նշանակված է համալսարանական մասնագետ մանկավարժ մը։ Խորհուրդը որոշած է Թաղին մտավորական երիտասարդության ներկայացուցիչներեն հոգաբարձություն մը ընտրել և անոր հանձնել վարժարանը, որուն ուսմանց ծրագիրը արմատական փոփոխություններ պիտի կրե և պիտի պատշաճեցվի ժամանակիս ոգույն և պիտույից։ Բնականաբար հարկ պիտի ըլլա այս ստիպիվ վարժարանին պյուճեի վրա կարևոր հավելումներ ընել։ Խորհուրդը պիտի աշխատի բացառիկ հասույթներու աղբյուրներ ստեղծել՝ չծանրաբեռնելու համար Թաղային սընտուկը։ Թաղեցիները ուրախությամբ կտեսնեն իրենց նոր Թաղական Խորհրդին այս եռանդուն գործունեությունը, և մոռնալով իրենց հին ոխերն ու հակառակությունները միասիրտ բոլորված են անոր շուրջը»։

Պողոս էֆենտի կարդալով այս տողերը՝ ինքնիրեն ըսավ.

— Գտանք մեր փնտռած մարդը։

Ուսուցիչ պարոն Թորգոմին կակնարկեր։ Նույն օրն իսկ մեկը զրկեց և հրավիրեց զայն, որ հետևյալ օրը գրասենյակը գա։ Այս հրավերը բավական զարմացուց ուսուցիչը։

— Ի՞նչ կուզե ինե, արդյոք պաշտո՞ն մը պիտի առաջարկե։

Եվ չորեքշաբթի կանուխ փութաց վաճառականի գրասենյակը։

Այս վերջինը դեռ նոր եկած էր ու մեկ քանի նամակներ կարդալու զբաղած։ Չվարթ դեմքով մը ընդունեց իր հյուրը։

— Անցած ըլլա, պարոն Թորգոմ,— գոչեց։

— Ի՞նչ բան, Պողոս էֆենտի,— հարցուց ուսուցիչը քիչ մը շփոթած։

— Երեկ թերթերուն մեջ կարդացի գլխուդ եկածը... արդեն կսպասեի կոր ատոր, Մարգար էֆ.-ին պես մարդ մը ամեն գեշու-

թյուն ընելու կարող է... խեղճ պարոն Թորգոմ, դուն ալ ինծի գոհ գացիր։

— Այդ խոսքերը չեմ ընդունիր, ես իմ ազգային անհատի պարտականությունս կատարեցի միայն, իմ համոզումներուս հպատակելով։

— Գիտեմ, բայց քեզի թշնամիներ ստեղծեցիր։

— Այո՛, կխոստովանիմ։

— Թշնամիներ, որոնք այսօր քեզ նյութապես վնաս կհասցնեն։

— Այդ ալ իրավ է, բայց ես իմ բռնած ընթացքիս համար զղջում չեմ հայտներ, որովհետև համոզումով և ուղղությամբ վարված եմ։

— Ատիկա շատ գեղեցիկ զգացում մըն է, բայց բավական չէ։

— Ի՞նչ ըսել կուզեք։

— Ըսել կուզեմ որ՝ պետք է դուն ալ աշխատիս, որ այդ մարդիկը անպատիժ կերպով այսպես քեզ անիրավաբար չի հարվածեն։

— Այդ մասին արդեն հարկ եղածը ըրած եմ։

— Ի՞նչ ըրիր,— հարցուց վաճառականը հետաքրքրությամբ։

— Անմիջապես բողոքագիր մը գրեցի...

— Կեցցե՛ս, և ղրկեցի՞ր։

— Ո՛չ տակավին։

— Ավելի աղեկ։

— Ինչո՞ւ համար։

— Որովհետև այդ բողոքագրին հանրագրության մը ձև տալու է։

— Հանրագրությո՞ւն մի,— հարցուց ուսուցիչը զարմացած,— անձնական խնդիր մըն է աս, իմ և Թաղական Խորհուրդին միջև, որուն դատավորն է...

— Բնականաբար, Վարչությունը,—ընդմիջեց Պողոս էֆենտի։

— Չէ՛, Ուսում. Խորհուրդը, ան կխառնվի ուսուցիչներուն վեճերուն։

— Իրավունք ունիմ եղեր ըսելու, որ աղեկ ես ըրեր բողոքագիրդ չղրկելով... Ուսում. Խորհուրդը մեկ կողմ դիր, ուղղակի Վարչության դիմե՛։

— Վարչությունը բողոքագիրս ուղղակի Ուսում. Խորհրդին պիտի հղե պարզապես ի նկատառություն։

— Տե՛ֆ ըրե մեյ մը սա բողոքագիր բառը,— գոչեց վաճառականը անհամբեր,— բողոքագի՞րը ինչ է, տղա՞ ես դուն... շնորհքով մարդու պես գործ տեսիր... անիրավ վճիռ մը տրված է քեզի դեմ, անոր համար իրավունքդ պահանջե։ Նույնիսկ քեզի ուրիշ խորհուրդ մը տամ, դուն քու ստորագրությամբդ մի գրեր, այլ թաղեցիներուն ստորագրել տուր։

— Ի՞նչ բան, էֆե՛նտի։

— Ճանըմ, Թաղական Խորհուրդի դեմ հանրագրությունը։

— Բայց հանրագրության խնդիր չկա,— գոչեց ուսուցիչը։

— Ընդհակառակը, ամբողջ խնդիրը այդ է,— պատասխանեց վաճառականը։—Ուսում. Խորհրդին դիմելով բնավ բան մը չես շահիր, գործը տարիներով կձգձգվի... տես, Գատը-Գյուղի ուսուցիչներուն խնդիրը մեջտեղն է։ Ուղղակի Վարչության դիմելու և կարգադրություն պահանջելու է։ Տես լրագրին մեջ ինչ են ըրեր, պատիվդ մեկ փարայի եղած է։ Իր անկարողության համար ճամփված է, կըսե կոր, ալ ասկե ետքը ո՞ր դպրոցին մեջ քեզի պաշտոն կուտան։

— Արդեն այդ «Հանրային Կարծիք»-ին դեմ դատ պիտի բանամ։

— Այդ ալ պարապ բան։ Մինչև որ ասդիի կողմե խնդիրդ չկարգադրես, ի՞նչ օգուտ ունի դատ բանալդ։

— Բնական է, որ Ուսում. Խորհրդեն գոհացում ստանալես ետքը դատ պիտի բանամ։

— Այն ատեն առնվազն տասը տարի պետք է որ սպասես։ Հիմա պարապ խոսքերով ժամանակ չանցնենք, քեզի լուր ղրկեցի և հոս բերել տվի՝ ինչո՞ւ համար, գիտե՞ս։

— Չէ՛, Պողոս էֆենտի, և կսպասեմ, որ հաճիք բացատրել ձեր հրավերին շարժառիթը։

— Լավ ուրեմն, պարզապես քու օգուտիդ համար է։

— Շատ շնորհակալ եմ։

— Կուզեմ քեզի դեմ գործված անլուր անիրավութենեն քեզ փրկել, այսինքն քու պաշտպանությունդ ստանձնել։

— Շատ երախտապարտ եմ։

— Ասոր համար եթե պետք ըլլա, ձեռքես եկած զոհողությունները պիտի ընեմ։ Սա ես ըսեմ, որ Վարչությունը ձեռքիս մեջն է, ուզածս ընել կարող եմ։

— Այն ատեն խնդիրը շատ կդյուրանա։

— Միայն թե դուն ալ պետք է որ գործես, քանի որ քեզի համար է մեր ընելիքը։

— Բնական է, որ ձեռքես եկածը պիտի ընեմ։

— Արդ, թաղին մեջ ներկա առժամյա և ապօրինի Թաղ. Խորհուրդին դեմ եղող անձեր կա՞ն։

— Շատ,— գոչեց ուսուցիչը,— դրեթե մեծամասնությունը հակառակ է, մանավանդ իմ մասիս եղած անիրավությունեն ի վեր։

— Բայց մեզի պետք եղած ծանոթ անձեր են քիչ շատ,— դիտել տվավ Պողոս էֆենտի։

— Անշուշտ, աննշան մարդոց հետ հարաբերություն չունիմ արդեն։ Բայց չեմ կրնար կոր ըմբռնել թե՝ իմ զուտ անձնական պարագաս ի՞նչպես կրնա հանրագրության մը առարկա ըլլալ։

— Դուն այդ կետը ինծի ձգե, հանրագրությունը ես պատրաստել կուտամ, դուն միայն ջանա, որ զայն ստորագրել տաս... հիսուն ստորագրություն մը կրնա՞ս հավաքել։

— 500, հազար ստորագրություն,— գոչեց Թորգոմ,— բոլոր թաղը ինձի հետ է։

— Այն ատեն հաջողեցանք։ Միայն պայման մը... թաղին մեջ ոչ ոք պետք է իմանա, որ ես այս գործերուն կխառնվիմ կորեքը ամեն բան կխանգարվի։

— Այդ մասին վստահ եղեք։

— Ուրեմն ամեն բան կարգին է։ Դուն վաղը առտու եկուր, ես հանրագրությունը պատրաստել տված կըլլամ և իսկույն գործի կսկսինք։

Ուսուցիչը մեկնեցավ ինքնիրեն խորհելով։

— Իրավցնե ազնիվ մարդ է եղեր Պողոս էֆենտին։ Գիտնալով, որ իր պատճառավը այս փորձանքը գլխուս եկավ, կաշխատի կոր դարմանելու... ես առանձին թերևս բան մը չկրնայի ընել, բայց երբ Պողոս էֆ.-ի պես օժանդակ մը ունիմ, կարող եմ հաջողիլ, մանավանդ որ Վարչությունն իր ձեռքին մեջն է եղեր...

Հազիվ թե պարոն Թորգոմ մեկնած էր, վաճառականը իր սպասավորը ղրկեց և կանչել տվավ փաստաբանը։ Այս վերջինը ուշադրությամբ լսեց ամեն բան և գոչեց.

— Հիմա գործերնիս եղավ։

— Բայց հանրագրությունը դուն պիտի պատրաստես։

— Բնականաբար... հիմա, անմիջապես։

Եվ գրասեղանին առջև անցնելով, Սափորյան էֆենտի, հետևյալ գլուխգործոցը արտադրեց.

«Ստորագրյալքս կուգան հանուն Ք. Թաղի ամբողջ հայ բնակչության ուժգնորեն բողոքել տեղվույս նորակազմ Առժամյա Թաղ. Խորհուրդին և մասնավորապես իր ատենապետին ինչ-ինչ արարքներուն դեմ, որոնք կսպառնան վրդովել և նորանոր հուզումներու մատնել ամբողջ Թաղը և անախորժ ծայրահեղությանց մղել Թաղեցիներուս, ծայրահեղություններ, որոնց ամբողջ պատասխանատվությունը այժմեն կթողնենք Թաղական Խորհուրդին և իր ատենապետին վրա։

«Շատ երկար կըլլա մի առ մի թվել բոլոր այն հախուռն, ապօրեն, հակասահմանադրական, անհեռատես ու կամայական արարքները, որոնցմով նորակազմ Առժամյա Թաղ. Խորհուրդը և իր ատենապետը ցույց տվին իրենց գործունեության որակն ու քանակը, ժողովրդային զայրույթը հասցնելով իր գագաթնակետին, և քար գայթակղության ու խնձոր գժտության հանդիսանալով թաղիս մեջ։

«Այդ անլուր արարքներեն առայժմ կհիշենք միայն վերջինը, որ ժողովրդային ցասումը իր ծայր աստիճանին հասցուցած է։ Տեղվույս Ազգ. Վարժարանի բազմարդյուն, ժրաջան, անձնվեր ու գործունյա տեսուչը՝ պարոն Թորգոմ, որ թե՛ վարժարան հաճախող երկսեռ աշակերտներուն և թե՛ անոնց ծնողներուն հարգանքն ու համակրանքը կվայելեր, և որ համեմատապես կարճ ժամանակամիջոցի մը մեջ կրցած էր վարժարանը նախանձելի վիճակի մը հասցընել, հանկարծ կվտարվի իր պաշտոնեն նորակազմ Թաղ. Խորհրդի ատենապետին անձնական թշնամության և վրեժխնդրության զոհ երթալով և իր տեղ տեսուչ կնշանակվի կուսակցամոլ բախտախնդիր մը, զուրկ ոեէ արժանիքե և որուն տեսչության ներքև մեր վարժարանը կսպառնա հոգևոր սպանդանոց մը դառնալ, մեր երկսեռ մանուկներուն համար։ Այդ բախտախնդիր անձին տեսուչ նշանակելուն զրույցն իսկ բավ եղավ, որպեսզի շատ մը ծնողքներ որոշեն իրենց զավակները չղրկել Ազգ. Վարժարան, և օտար հաստատություններու հանձնեն անոնց կրթությունը, զանոնք ուծացնելով մայր եկեղեցիեն և տոհմային նկարագրե, մեկ-մեկ աշխարհաքաղաքացի դարձնելով։ Այս ահեղ վտանգը արդեն բավ է, վեր ի վայր շրջելու ամբողջ թաղս, և՛ արդեն իսկ բողոք, տրտունջ, զայրույթ և բարկություն կտիրեն ամեն կողմ, և եթե պատկառելի

վարչությունդ անմիջական տնօրինությունով մը չփութա մտքերը խաղաղեցնել, ապահով կրնա ըլլալ, թե մոտավոր ապագայի մը մեջ Ք. թաղը նորանոր խռովություններու պիտի մատնվի, որոնց հետևանքը չենք գիտեր թե ուր կրնա հասնիլ։

«Մեր թաղին կացության այս խիստ մեղմացուցիչ վիճակը ներկայացնելով Պատ. Ժողովիդ խորին ուշադրության, կխնդրենք, որ հաճիք պարտ ու պատշաճը տնօրինել, անմիջապես, առանց ժամանակ տալու, որ Առժամյա Թաղ. Խորհուրդը և ատենապետը նորանոր ու անդարմանելի սխալներ գործեն իրենց կործանարար ընթացքովը, և ճշմարիտ աղետք մը դառնան թաղիս մեջ»։

Սափորյան էֆենտի գրությունը վերջացնելով կարդաց զայն վաճառականին։

— Շատ մեղմ գացեր ես,— դիտել տվավ այս վերջինը։

— Հե՞,— գոչեց փաստաբանը,— դեռ ի՞նչ կարելի էր գրել։

— Կրնայիր Առժամյա Թաղային Խորհուրդին պաշտոնե դադարեցուցվիլը պահանջել։

— Ատիկա կարելի չէ, անօգուտ պոռոտախոսություն մը կըլլա... այս հանրագրությունը բավ է մեր նպատակին հասնելու համար։ Թող այս գրությունը Վարչության սեղանին վրա գա, ատիկա բավական է։

— Ի՞նչ կերպով,— հարցուց Պողոս էֆ.։

— Էֆենտիմ, այս բողոքը մատերնիս փաթթելով, Մարգար էֆենտին ու ատենապետը ժողովի կհրավիրենք, որպեսզի բացատրություն տան, և հոն այնպիսի լեզու մը գործածենք, որ իրենց արժանապատվությունը վիրավորվի, առնեն քալեն և հետևյալ օրը հրաժարական տան։

— Իրավունք ունիս,— գոչեց Պողոս էֆենտի...— ուրիշ բան մըն ալ կրնանք ընել։

— Ի՞նչ բան։

— Հանրագրության պատճենը հրատարակել տանք թերթի մը մեջ։

— Այդ ալ գեշ գաղափար չէ, միայն թե ստորագրվելե ու Վարչության մատուցվելե ետքը ընելու է։

— Բնականաբար։ Միայն թե դուն վստա՞հ ես քու պաշտոնակիցներուդ վրա... պիտի կրնա՞ս ամենքն ալ ձեռքիդ մեջ առնել։

— Եթե ոչ ամենքը, գոնե մեծամասնությունը և ատիկա բավական է արդեն։

Փաստաբանը մեկնեցավ և Պողոս էֆենտի հանրագրությունը խոշոր թուղթի մը վրա մաքուրի քաշել տվավ իր գրագիրին։

Հետևյալ առտու ուսուցիչը եկավ։

— Պատրա՞ստ է,— հարցուց, ներս մտնել ու բարևելե ետքը։

— Ահավասիկ, նստե՛, ու անգամ մը կարդա, - ըսավ վաճառականը դարակը բանալով, ու պըլլված թուղթ մը երկարելով ուսուցչին։

Պարոն Թորգոմ երկյուղածությամբ առավ թուղթը, բացավ, և սկսավ կարդալ։ Քանի ընթերցումը առաջ կտաներ դեմքը ուրախությենեն կշողշողար. երբ ավարտեց, խանդավառված էր։

— Սքանչելի՜, հիանալի՜, հրաշալի՜ է,— գոչեց,— ասկե ավելի գեղեցիկ կերպով կարելի չէր խնդիրը պարզել, հոյակապ կերպով գրված է...

Ինչ որ ամենեն ավելի կխանդավառեր ուսուցիչը, այս գրության մեջ իր մասին եղած գնահատությունն էր։

— Բայց ո՞վ գրեց ատիկա,—հարցուց շլացած,—խնդրին մոտեն տեղյակ, կացությունը ուսումնասիրած մեկը ըլլալու է, միանգամայն շատ խելացի ու գրիչ շարժել գիտցող մեկը... սովորական գրություն մը չէ այս։

— Եթե խոստանաս բացարձակապես գաղտնի պահել, կըսեմ թե ով է գրած։

— Պատվույս վրա կերդնում։

— Լավ ուրեմն, Վարչության մեկ անդամը գրեց այս հանրագրությունը...

— Վարչության մեկ անդա՞մը,— գոչեց ուսուցիչը շլմորած։

— Այո՛, որ միանգամայն փաստաբան է և որուն ձեռքին մեջ կգտնվի Քաղաքական ժողովի մեծամասնությունը։ Սափորյան էֆենտին գրեց։ Բայց պետք չէ որ մարդ իմանա։

Ուսուցիչը կատարյալ գաղտնապահություն խոստացավ։

— Հիմա այս հանրագրությունը կառնես ու անմիջապես ստորագրել կսկսիս։

— Ատիկա դյուրին է... քանի՞ ստորագրություն բավական է,— հարցուց Թորգոմ։

— Որչափ շատ ըլլա, այնչափ աղեկ է,— պատասխանեց Պողոս էֆենտի,— բայց առնվազն 50—60 հատ մը ըլլալու է... լավագույն կըլլա, որ աշակերտներու ծնողքները ստորագրեն։

— Ամենքն ալ կստորագրեն, քանի մը ժամվան մէջ կրնամ հավաքել։

— Քեզի շաբաթ մը պայմանաժամ,— ըսավ վաճառականը,— որպեսզի կրցածիդ չափ շատ ստորագրություն հավաքես։

— Շաբաթվան գործ չկա։

— Ինչ որ է, եթե ավելի առաջ լմնցնես, վնաս չունի, միայն թե շաբաթը չանցնի... երկաթը տաք-տաք պետք է ծեծել։ Սուսերյանցի հետ արդեն պայմանավորվեցա՞ն։

— Չեմ գիտեր։

— Ատ ալ նշանակություն չունի, մենք մեր գործը նայինք։ Պահանջք ունի՞ս Թաղ. խորհրդեն։

— Չէ՛, հաշիվս մաքրեցին։

— Ուրեմն առայժմ դրամ կա քովդ։

— Այո,— պատասխանեց ուսուցիչը, այս հարցումեն քիչ մը նեղվելով,— քիչ մը ժամանակի համար ապրուստ ունիմ, և կհուսամ, որ վարժարաններու վերաբացումին պիտի կրնամ պաշտոն մը ձեռք ձգել, արդեն այս մասին դիմումներ ըրած եմ։

— Հիմա ուրիշ գործի ետևե մի՛ ըլլար, դուն պետք է քու հին պաշտոնիդ մէջ վերահաստատվիս, հոգ չէ, եթե քիչ մը ժամանակ անգործ մնաս։ Եթե երբեք դրամի պետք ունենաս, բան մը կընենք, անհոգ եղիր։

— Շնորհակալ ե՛մ, բայց ես ո՛րտեղ բան ըլլալ չեմ ուզեր. ես մինչև հիմա իմ ճակատի քրտինքովս ապրած եմ։

Վաճառականը կրկին հորդորեց ուսուցիչը, որ ուրիշ պաշտոն չփնտռե, որովհետև, ըսավ, այդ կերպով Թաղական խորհուրդի վճիռը ընդունված կըլլա և իր բողոքելու իրավունքը կկորսնցնե։

Պարոն Թորգոմ մեկնեցավ հուսալից։ Իրեն այնպես կթվեր, թե ոչ մեկ թաղեցի պիտի մերժեր ստորագրել այս հանրագրությունը։ Չէ՞ մի որ ամենքն ալ իրենց ցավակցությունը հայտնած էին վարժարանեն հեռանալուն համար ու անիրավ գտած էին Թաղ. խորհուրդի որոշումը։

Գյուղ հասնելով՝ մտածեց անմիջապես գործի սկսիլ։ Աչքի առջև բերավ աշակերտներու ծնողքները և անոնց մեկ ցանկը պատրաստեց։

— Ամենքն ալ զիս կսիրեն,— կմտածեր,— և չեն կրնար մերժել խոսքս։

Առաջին անգամ գնաց Մարտիկ աղային, որ կերպասավաճառ էր և եկեղեցիին պատկանող խանութի մը վարձակալը։ Երեք զավակներու հայր էր և երեքն ալ վարժարան կերթային։ Պարոն Թորգոմ հաճախ ճաշի կերթար այդ տունը և իբրև մտերիմ բարեկամ կընդունվեր։

— Ամենեն առաջ Մարտիկ աղային ստորագրել տամ,— խորհեցավ,— գեղին սիրված ու պատվավոր անձերեն է ու իր ստորագրությունը ուրիշներուն վրա ալ ազդեցություն կընե։

Եվ դեպի կերպասավաճառի տունը ուղղվեցավ։

Դուռը տան աղջիկը բացավ։

— Ջապել, հայրիկդ հո՞ս է,— հարցուց Թորգոմ։

— Այո՛, էֆենտի, հրամմեցեք,— պատասխանեց աղջիկը շիկնելով,— վերն է։

Մարտիկ աղա, ընտանիքի պատվական հայր մըն էր։ Խանութը գոցելուն պես, առանց սրճարան կամ գինետուն հանդիպելու, ուղղակի տուն կուգար, կհանվեր, գիշերազգեստը կհագներ, ձեռքով կշտակեր օդիի ափսեն, և իր կինը կամ բարեկամ մը իր դեմը առնելով՝ մեկ քանի հատ կճնկեր սիկարեթ ծխելով։ Օրվան խոնջենքին դեմ իր դարմանն էր այս, ու միանդամայն հաճույքը։

Երբ ուսուցիչը վեր ելլելով սենյակ մտավ, արդարև Մարտիկ աղան գտավ օդիի ափսեին քովը, իր կնոջ՝ Հռոփիկ հանըմի և դրացի ոսկերիչ Հաջի Ակոբճանի հետ։

— Բարեբախտություն մըն է այս,— մտածեց Թորգոմ,— Ակոբճանն ալ բարեկամ է, անոր ստորագրել կուտանք։

Իր մուտքը ուրախությամբ ողջունվեցավ։

— Վա՜յ, մյուսյու Թորգոմ, բարի եկաք,— գոչեց Մարտիկ աղա, ոտքի ելլելով ու բազմոցին վրա տեղ բանալով,— աս ո՞ւր մնացիր քանի օր է. շաբաթ մըն է երեսդ տեսած չունինք։

Հռոփիկ և Հակոբիկ նույնպես սիրալիր ընդունելություն մը ըրին։

Ուսուցիչը բացատրեց, թե այս օրերս չափազանց զբաղած էր և անոր համար չէր կրցած այցելել իրենց։

— Հատ մը կխմես հարկավ,— ըսավ Մարտիկ աղա, գավաթը լցնելով։

— Շնորհակալությամբ,— պատասխանեց ուսուցիչը։

Բոպե մը լռություն տիրելե ետքը Հռոփիկ ըսավ.

— Ա՛ս բաներ մը լսեցինք նե, իրա՞վ, ճոնը՛մ։

— Ի՞նչ բան, տիկին։

— Իբր թե ձեզի վարժարանեն հաներ են, և ուրիշ տնօրեն մը պիտի բերեն եղեր։

— Իրավ է,— պատասխանեց Թորգոմ շոր ձայնով մը։

— Շիտակը երբ որ մեր տղաքը իմացան, շատ ցավեցան. «Եթե մյուսյու Թորգոմը դպրոցեն ելլե, մենք դպրոց չենք երթար» կըսեն կոր։

— Շատ տեղերե նույն բանը իմացա։

— Քու տեղդ Սուսերյա՞նցը պիտի բերեն եղեր,— հարցուց Ակոբճան։

— Անանկ կըսեն կոր։

— Մարդ չգտան տե, այդ զյուպպե՞ն տնօրեն կընեն կոր։

— Քու վրադ ի՞նչ հանցանք բեռցուցին։

— Հանցանք չկա,— պատասխանեց ուսուցիչը,— պարզապես Մարգար էֆենտիին քեյֆը ատանկ ուզեր է։

— Ասանկ խաղքություն կըլլա՞, նե՞ քեփազելիք տիր պու, կեցած տեղը մարդը գործեն կհանե՞ն, երբ պակասություն մը չէ գործած...

— Ի՞նչ պիտի ընես, կընեն կոր, էֆենտիմ,— պատասխանեց ուսուցիչը գավաթը պարպելով։

— Գտեր են քեզի պես կակուղ մարդը, ուզածնին կընեն կոր,— գոչեց Մարտիկ աղա,— հելե դեմերնին զոռը մեկը ըլլար, նայինք կրնայի՞ն ընել։

— Խաթրդ չմնա, ամմա, դուն ալ բեք պամպակ մարդ ես,— դիտել տվավ Ակոբճան աղա։

— Ի՞նչ ընեմ, բռնի՝ «պիտի մնա՞մ» ըսեմ։

— Բողոքե՛, էֆենտիմ, պոռա՛, կանչե՛, աղմուկ հանե՛... թաղեցիները բոլորը քու կողմդ են, ինչ բանե կվախնաս, ամենքն ալ գժգոհ են Թաղ. խորհուրդի այս որոշումեն,— գոչեց Ակոբճան աղա։

— Ես քեզի խրատ տալու մարդ չեմ, բայց կարծեմ իրավունք ունիմ,— միջամտեց Հոռոփիկ, չլացող տղուն կաթ չեն տար, ատանկ սուսիկ-փուսիկ նստելով բան չըլլար, քանի որ հանցանք մը չես գործած, քանի որ ծնողները և աշակերտները գոհ են քենե, ի՞նչ պատճառավ քեզ դուրս կնետեն կոր վարժարանեն։

— Պարզապես Մարգար էֆենտին իր անձնական վրեժը կլուծե կոր,— պատասխանեց Թորգոմ։

— Ատ ի՞նչ խոսք է,— գոչեց Մարտիկ աղա բարկությամբ,— նայինք վարժարանը ի՞րն է, ի՞նք կուտա կոր ծախքերը. վարժարանը թաղեցիներունն է, անոնց տված փարայովը կապրի կոր, ինք վարժարանին համար տասը փարա տված ունի՞։ Է՞յ, մյուս թաղականնե՞րը... ատոնք ձայն չե՞ն կրնար կոր հանել, խաբո՞ւկ մանտալ են, ի՞նչ են այդտեղ։

— Մարգար էֆենտիեն կքաշվին, խոսքեն դուրս չեն ելլեր, որովհետև հարուստ է, ազդեցիկ է...

— Զարմանալի բան, հարուստ է նե իրեն համար է, հարուստ է տեյի ամեն անիրավություն գործելո՞ւ է։ Ես ըլլալու էի թաղական, որ անոր սորվեցնեի։

— Ես ալ շիտակը թաղական ըլլայի նե, սա անիրավության չէի կրնար համբերել,— ըսավ Ակոբճան աղա,— ամմա, նորեն կըսեմ հանցանքին մեծը քու քովդ է, ինքզինքդ չես կրնար կոր պաշտպանել։

— Գոնե քանի մը բարեկամներու խորհուրդ հարցուր,— խրատեց Մարտիկ աղա,— թաղին մեջ այսչափ պաշտպաններ ունենալե ետքը՝ ալ ի՞նչ ես կեցեր, պարզապես ապուշություն է ըրածդ։

— Սանքիմ վարժապետները քիչ մը տղայամիտ կըլան, կըսեն նե, իրավունք ունին,— ըսավ Ակոբճան աղա։

— Բայց ո՞վ ըսավ, որ ես հանդարտ կեցեր եմ ու ձայն չեմ հաներ կոր,— գոչեց ուսուցիչը, քիչ մը սրտմտած իրեն ուղղված խոսքերեն։

— Ի՞նչ ըրիր, նայինք,— հարցուց Մարտիկ աղա հեգնորեն։

— Ձեր բոլոր ըսածներն ալ ըրի։

— Ինչ ըրիր նե ան ըսե։

— Առժամյա Թաղ. խորհուրդին ու Մարգար էֆ-ին դեմ հանրագրություն մը պատրաստել տվի, զոր վարչության պիտի մատուցանեմ։

— Կեցցե՛ս, աֆերիմ, տեսա՞ր մի,— գոչեց կերպասավաճառը։

— Հա, շեռյլե,— երկրորդեց ոսկերիչը։

— Սքանչելի բան մը եղավ, կարդամ տե մտիկ ըրեք։

— Կարդա յա, կարդա։

Ուսուցիչը թուղթը բացավ և սկսավ կարդալ։

Երկու բարեկամները և Հոռոփիկ հանքմ, գլխու շարժումներով հավանություն կհայտնեին։ Երբ պարոն Թորգոմ ընթերցումը ավարտեց, Մարտիկ աղա գոչեց.

— Շատ աղվոր է, բայց շատ թեթև գացեր ես, ավելի զորավոր բան մը գրելու էիր։

— Էյլե յա, գաֆալարբնա էիճե վուրմալը,— հաստատեց ոսկերիչը։

— Ես ալ այդ պիտի ըսեի, բայց քաշվեցա,— գիտել տվավ Հոռոփիկ հանըմ։

— Ասկե խիստը չգրվիր,— պատասխանեց ուսուցիչը։

— Ինչպե՞ս չգրվիր, անանկ էտեպսիզներուն,— գոչեց Մարտիկ աղա բորբոքած,— բեք ալ աղեկ կգրվի, ես ըլլալու էի քու տեղդ տե՛ անոնց կսորվեցնեի... է՜յ, երբ պիտի տաս թուղթդ. ատեն մի անցներ։

— Պետք է, որ նախ ստորագրվի։

— Ո՞վ պիտի ստորագրե...

— Թաղեցիները։

— Էյլե յա,—հաստատեց Ակոբճան աղա,—ենթամ էյլե պիր:

— Հիմա, ճիշտ ատոր համար եկած եմ հոս,— շարունակեց ուսուցիչը.— աղեկ, որ մեր բարեկամ Ակոբճան աղան ալ հոս գտնվեցավ։

— Ի՞նչ բանի համար,— հարցուց Մարտիկ աղա կասկածոտ դեմքով մը։

— Որպեսզի դուք ալ ստորագրեք։

— Ուրիշ ո՞վ ստորագրեց։

— Դեռ մեկը չէ ստորագրած, ամենեն առաջ ձեզի եկա։

Կերպասավաճառը անմիջապես չպատասխանեց, օդի գավաթը լեցուց, և հետո ըսավ.

— Օղլում, ինե առաջ դեռ թաղին մեջ ինչ մարդիկներ կա՞ն... ես ամենեն վերջը կուգամ։

— Առաջինի վերջինի խնդիր չկա.— դիտել տվավ Թորգոմ, ամենուն ալ պիտի երթամ։

— Թո՛ղ մեյ մը ուրիշները ստորագրեն, ետքը բան մը կընենք։

— Ուրեմն առաջ դուք ստորագրեցեք. Ակոբճան աղա,— առաջարկեց ուսուցիչը՝ ոսկերիչին։

— Պենիմ ագլըմ էյլե շեյլերե երթիշմեզ,— պատասխանեց այս վերջինը։

— Ճանըմ, խելք չհասնելիք բան մը չկա, գրվածքին համամի՞տ եք...

— Համամիտ եմ։

— Ուրեմն ստորագրեցե՛ք։

— Համամիտ ըլլալովս անպատճառ ստորագրելո՞ւ եմ։

— Ինչո՞ւ չեք ուզեր ստորագրել։

— Ճանըմ, թող մեյ մը ուրիշները ստորագրեն... ինչո՞ւ համար ամենեն առաջ ես իմզա դնեմ ատոր տակը։

— Գուն ալ ծեողք չե՞ս, դուն ալ երկու զավակ չունի՞ս վարժարանը։

— Ունիմ ամմա, ես այդ տեսակ գործերու չեմ ուզեր խառնվիլ, պանա նե... հացին փարան հանելը նայինք։

— Բայց ի՞նչ նկատումով չեք ուզեր ստորագրել,— գոչեց Թորգոմ հուզված,— ասոր ներքև ստորագրություն դնելով ի՞նչ վնաս կկրեք։ Դուք կըսեք, որ եղածը անիրավություն է, թե պետք է որ բողոքեմ, թե թաղեցիները ինծի հետ են և այլն, և երբ ձեզի կդիմեմ, կոնակ կդարձնեք, Մարգար էֆ-ենն կվախնաք կոր...

Վախնալու այս ակնարկությունը բարկացուց երկու բարեկամները։

— Վախնալը ի՞նչ պիտի ըլլա,— պոռաց Ակոբճան աղա,— ինչո՞ւ պիտի վախնամ եղեր Մարգար էֆ.-ենն, ա՞ն է իս ապրեցնողը, տղաքս ա՞ն կնայի կոր... Թոհաֆ բան, ասանկ ծանր խոսքեր կընես, մյուսյու, ես իմ քրտինքով ապրող մարդ մըն եմ, իմ վրաս մեկը չէշխեր, և ես ալ մեկե մը բան չեմ սպասեր...

— Ճիշտ այդպես ըլլալը գիտնալուս համար էր, որ ձեր հիմակվան ընթացքին կզարմանամ,— պատասխանեց ուսուցիչը։

— Մենք չենք ստորագրեր չըսինք,— դիտել տվավ Մարտիկ աղա,— մենք ըսինք, որ թող մեյ մը ուրիշները ստորագրեն, ետքը ուրիշ բան մը կընենք։

— Ուրեմն կխոստանա՞ք, որ մյուսները ստորագրելե ետքը դո՛ւք ալ պիտի ստորագրեք։

— Մեյ մը թող ուրիշները ստորագրեն...

— Էրիկս իրավունք ունի,— միջամտեց Հոռոփիկ,— նախ ուրիշներուն ստորագրել տուր, եթե Մարտիկ աղան ստորագրե ամենեն առաջ, աղեկ չփախչիր...

— Ի՞նչ կըլլա որ,— հարցուց ուսուցիչը։

— Բան մը չըլլար, բայց վերջապես բռնած խանութը ժամուն ախարեթն է...

— Է՛յ, Ակորճան աղան ալ ժամուն կալվածքը վարձած չէ՞ յա՛— գոչեց Թորգոմ։

— Ես ալ ինծի համար հարկավ հաշիվ մը ունիմ,— պատասխանեց ոսկերիչը։

Ուսուցիչը տեսավ, որ անկարելի է համոզել այդ երկու մարդիկը։ Թուղթը պլլեց, գրպանին մեջ տեղավորեց և ոտքի ելավ։

— Նստեցե՛ք, կերակուրը միասին ուտենք,— առաջարկեց տիկինը։

— Չէ՛, շնորհակալ եմ,— պատասխանեց ուսուցիչը սրտնեղությամբ,— ուրիշ երթալիք տեղեր ունիմ։

— Կարծեմ մեր մյուսյուն բարկացավ,— ըսավ տանտերը։

— Ի՞նչ իրավունք ունի նեղանալու,— ըսավ Ակորճան աղան,— ասանկ բանը զոռով չըլլար։

— Բարկանալու բան չկա,— ըսավ Թորգոմը և ներկաները բարևելով դուրս ելավ։

Այս առաջին ձախողանքը թեև կատարյալ անակնկալ մըն էր, այսուհանդերձ չհուսահատեցուց ուսուցիչը։

Փողոց ելլելով ինքն իրեն ըսավ.

— Սիմոն աղային երթամ, անիկա առանց դիտողության կատարադրե։

Սիմոն աղա սարաֆ էր, և քիչ մըն ալ վաշխառու, ամուսնացած և չորս զավակներու տեր, որոնք թաղին վարժարանը կըհաճախեին։ Բավական դրամ ուներ և այդ դրամը իրեն տեսակ մը հոխորտ ամբարտավանություն տված էր, ինք որ իր չքավորության օրերուն ջծնող ու սողացող բնություն մը ուներ. իր սիրելագույն զբաղումն էր քննադատել ինչ որ ըլլար թաղին մեջ, միշտ ընդդիմադիր եղած էր օրվան թաղ. խորհուրդին, բայց այդ ընդդիմադրությունը խոսքե անդին չէր անցներ և երբեք գործնական ճամփուն մեջ չէր մտներ։ Մասնավոր համակրանք մը ուներ պարոն Թորգոմին հանդեպ, զայն հովանավորելու ձև մը կառներ հաճախ։ Ասոր փոխարեն կպահանջեր ուսուցիչեն, որ մասնավոր հոգածության առարկա ընե իր զավակները։

Հաճախ ըսած էր պարոն Թորգոմին.

— Եթե բանի մը պետք ունենաս, մի քաշվիր, բացվե ինծի, ես քեզի շատ կսիրեմ, գիտես ա՛։

Ուսուցիչը վստահորեն զարկավ սարաֆին դուռը, կինը եկավ բանալու։

— Էֆենտին հո՞ս է,— հարցուց Թորգոմ։

— Հրամմեցե՛ք, հոս է։

— Վայ դո՞ւ ես, մյուսյու Թորգոմ, աղեկ որ եկար, ես ալ քեզ տեսնել կուզեի,— գոչեց սանդուխին գլխեն Սիմոն աղան։

Հուսալից, Թորգոմ վեր ելավ։

— Աղբար, սա ի՞նչ խայտառակ մարդիկ են եղեր մեր թաղականները,— պոռաց սարաֆը իր հյուրը սենյակ առաջնորդելով, ալ ուրիշ բան չգտա՞ն ընելիք, էն առաջ քեզ ճամփեցին... վա՜յ, անպիտաններ... խաչ որ, երբ լսեցի, խաֆայիս թասը դարձավ, կարծես թե ուղղակի ինծի դեմ բան մը ըրած էին։ Ասիկա պարզապես Մարգար էֆենտիին կերած խալթն էր։

— Այնպես է,— հաստատեց ուսուցիչը։

— Որովհետև իրեն դեմ էիր, վրեժ կլուծե կոր։ Ասանկ խայտառակություն կըլլա՞։

— Կընեն կոր, ի՞նչ պիտի ընես։

— Ինչ պիտի ընեսը ի՞նչ է, անոնց հախեն գալու է. գիտե՞ս եթե ես քու տեղդ ըլլամ նե. ի՛նչ կընեմ։

— Ի՞նչ կընես, Սիմոն աղա։

— Հիմա պիտի ըսեմ, շատ աղեկ ըրիր, որ եկար, եթե չգայիր, լուր պիտի ղրկեի և կանչել տայի, որովհետև ժամանակ կորսընցնելու չէ, անմիջապես գործելու է։ Հիմա իս մտիկ ըրե...

— Խոսեցեք, Սիմո՛ն աղա, մտիկ կընեմ։

— Անմիջապես բողոքագիր մը կգրես կոր, սանկ հանրագրության պես բան մը, ամա զոռլու...

— Է՛յ,— ըսավ ուսուցիչը թեթև մը ժպտելով։

— Անոր մեջ եղածը չեղածը կպատմես, կըսես, որ թաղեցին իր տեսուչեն գոհ է, թե բոլոր եղածը անձնական թշնամության արդյունք է, թե բոլոր թաղը կբողոքե, թե խնդիրը շուտով կարգադրելու է, որպեսզի թաղին մեջ խռովություն չծագի, թե ծնողքները շատ հուզված են, և եթե հին տեսուչը իր պաշտոնին վրա չմնա, իրենց տղաքը օտար դպրոց պիտի ղրկեն և այլն։ Մոռցա ըսելու, որ այդ հանրագրությունը թաղեցիներուն բերնեն գրելու է, և գիրը քու գիրդ ըլլալու չէ։

— Իհարկե, այդպես պետք է,— պատասխանեց Թորգոմ ժպտելով։

— Ինծի նայե, ես փորձառու մարդ եմ, իմ խոսքս մտիկ ըրե, շուտով այդ հանրագրությունը պատրաստե և թաղեցիներուն ստո-

բագրել տուր, հավատա, որ ամենքն ալ կստորագրեն... Քեզի ամենքն ալ կսիրեն, ես աղեկ գիտեմ։ Այսօր ով որ տեսա, ցավ հայտնեց եղածին համար։

— Գիտեմ որ այդպես է։

— Քանի մը հարյուր ստորագրություն հավաքեցի՞ր մի, գործ եղավ ըսել է... այն ատեն հանրագրությունը ուրիշի ձեռքով կը-ղրկես Ուսմ. Խորհուրդին... Չէ՛, չէ՛ ուղղակի Վարչության, ավելի աղեկ կըլլա կոր... մտածեցի այս միջոցը գտա։

— Արդեն ըրի,— պատասխանեց ուսուցիչը։

— Ի՞նչ ըրիր,— հարցուց Սիմոն աղա զարմացած։

— Վարչության ուղղված հանրագրությունը պատրաստեցի։

— Ճիշտ իմ ըսածի՞ս ձևով։

— Ճիշտ այնպես։

— Վա՛յ...

Այս «վայ»-ը տեսակ մը սրտմտություն կհայտներ։ Սիմոն աղա նկարծեր այս գաղափարին մենաշնորհը ունենալ ու զայն մեծանձնությամբ նվիրել պարոն Թորգոմի։ Իր արժանապատվությունը վիրավորված զգաց քիչ մը, բայց հայտնի չըրավ։

— Դո՞ւն մտածեցիր,— հարցուց։

— Ես ալ մտածեցի, ուրիշներն ալ այդ խորհուրդը տվին... ինչ որ է, հանրագրությունը պատրաստ գրպանս է. կարդամ մտիկ ըրեք։

— Կարդա նայինք։

Ուսուցիչը, երկրորդ անգամ ըլլալով հանգիստավորապես բացավ թուղթը և կարդաց։

— Աղեկ է,— ըսավ սարաֆը, երբ ընթերցումը ավարտեց։

— Միայն թե տակավին ստորագրված չէ,— գիտել տվավ ուսուցիչը։

— Ի՞նչ ես կեցեր ուրեմն,— գոչեց Սիմոն աղա,— ստորագրել չտա՞ս... ժամանակ մի անցներ տղաս, շուտ գործդ տես։

— Այսօր պատրաստեցի և անմիջապես գործի սկսա, արդեն ճիշտ ատոր համար հոս եկած եմ։

— Ի՞նչ բանի համար։

— Որպեսզի ձեզ ալ ստորագրել տամ։

— Ի՞նչ բան, հանրագրությո՞ւնը։

— Թնականաբար։

— Չէ՛, պարոն Թորգոմ, ես չեմ ստորագրեր,— ըսավ Սիմոն աղա լուրջ դեմքով մը։

— Ինչո՞ւ համար...

— Սկզբունքիս հակառակ է։

— Ի՞նչ սկզբունք։

— Ճանըմ, ամեն մարդ մեյ մեկ սկզբունք կունենա յա... օր մը օրանց հանրագրության մը տակ ստորագրությունս տեսա՞ծ ես... այդ ձգե, նույնիսկ վիճակահանության համար գրվիմ նե՝ ոմն կդնեմ և անունս չեմ ստորագրեր։

— Բայց կաղաչեմ, Սիմոն աղա, իմ հույսս ձեզի պես բարեկամներու վրա է, եթե դուք ալ չուզեք ստորագրել, ո՞վ պիտի ստորագրե...

— Կցավիմ, բայց անկարելի է, պարապ տեղը մի պնդեր... սկզբունքիս հակառակ է։

— Դխնդրեմ,— կակազեց ուսուցիչը։

— Մի հոգնիր պարապ տեղը, տես ես քեզ կսիրեմ և ձեռքես եկած պաշտպանությունն ալ չեմ զլանար, հանրագրության գաղափարը հղացա ու քեզի հաղորդեցի, բայց դուն արդեն մտածեր ես եղեր, վնաս չունի, միայն թե տեսար որ քեզմով կհետաքրքրվիմ կոր...

— Այո՛, սակայն ինծի ձեր ստորագրությունը պետք է,— պնդեց պարոն Թորգոմ։

— Մեկ հատ մը էվել մեկ հատ մը պակաս՝ կարևորություն չունի, 300 ստորագրության տեղ, թող 299 ըլլա։ Ի՞նչ կըլլա,— պատասխանեց Սիմոն աղա։— Մինչև հիմա քանի՞ ստորագրություն հավաքեցիր։

— Դեռ բան մը չեմ հավաքած։

— Էն առաջ ինե՞ սկսար...

— Այո՛,— կակազեց պարոն Թորգոմ։

— Էյ աշk օլսուն սանա։

— Ի՞նչ կա որ...

— Ըսել է դուն մասնավոր դիտավորություն մը ունեիր իմ գլուխս փորձանքի բերելու։

— Ինչո՞ւ համար։

— Ձե՞ս գիտեր, որ ես երբեք ատանկ բաներու տակ ստորագրություն չեմ դներ։

— Չէի գիտեր։

— Հիմա հասկցա՞ր ա... ինշալլահ, ասկե ետքը միտքդ կմնա։

— Ըսել է որ չպիտի ստորագրեք։

— Չէ՛ ըսինք ա... մեկու մը վրա այսչափ չեն բռնանար։

— Բռնանալու բան չկա, միայն թե...

— Ասկե ավելի ինչպե՞ս բռնություն կրնա ըլլալ, քեզի կըսեմ կոր թե սկզբունքիս հակառակ է, դուն դարձյալ կպնդես... ամեն բան չափ մը ունի։

— Կներեք, Սիմոն աղա։

— Ներելու բան չկա, միայն թե քիչ մը խոսք հասկնանք... ես քու բարեկամդ եմ, քեզ կսիրեմ, ձեռքես եկածին չափ կպաշտպանեմ, ասոր համար հանցա՞նք կգործեմ։

— Չէ՛, ընդհակառակը, շնորհակալ եմ։

— Այն ատեն կարճ կապե այլևս և խոսքը մի երկնցներ։

Ուսուցիչը թուղթը պլորեց, գրպանը դրավ և ոտքի ելավ։

— Մնաք բարով,— ըսավ,— կներեք, որ ձեզ նեղացուցի։

— Բարկացա՞ր, կերթա՞ս կոր։

— Չէ՛, բարկանալու իրավունք չունիմ, միայն թե քանի մը տեղ պիտի հանդիպիմ։

— Հանդիպե յա՛, ամենուն ալ գնա՛, ստորագրել տո՛ւր, ես վստահ եմ, որ ամենքն ալ ուզելով կստորագրեն։ Ինչո՞ւ չպիտի ստորագրեն... փարա չես ուզեր կոր ա, պարզ ստորագրություն մը։

Պարոն Թորգոմ ալ չպատասխանեց, բարևեց ու մեկնեցավ։

Այս երկու ապարդյուն դիմումները զինքը քիչ մը վհատեցուցած էին, որոշեց տուն երթալ և հետևյալ առտու սկսիլ նոր դիմումներու։

Շուկայեն անցած ատեն, սրճարանե մը ծանոթ ձայն մը գոչեց.

— Պարոն Թորգո՛մ, պարոն Թորգո՛մ։

Ուսուցիչը գլուխը դարձուց դեպի ձայնը եկած կողմը, և ճանչցավ իր բարեկամը, պարոն Սիսակը, որ առանձին նըստած էր։

Սիսակ 25 տարեկան երիտասարդ մըն էր և վաճառատան մը մեջ պաշտոնյա, զվարթ, բարեմիտ, հետաքրքիր, ու շատախոս մարդ մը։ Թորգոմ մտավ սրճարանն ներս։

— Եկո՛ւր, նստե՛ սուրճ մը խմե՛,— առաջարկեց Սիսակ։

— Ճաշելու կերթամ,— ըսավ ուսուցիչը։

— Դեռ չե՞ս ճաշած։

— Ոչ։

— Անանկ է նե՝ օդի թող բերեն։

— Աղեկ կըլլա։

— Այս ատեն ի՞նչ կընես կոր փողոցները։ Ճանըմ, քեզ դպրոցն հանե՞ր են... ինչո՞ւ չես բողոքեր կոր... ասանկ անիրավություն կըլլա՞...

Այս բոլոր հարցումներուն իբրև պատասխան ուսուցիչը հանրագրության պատմությունը ըրավ, գրպանեն հանեց, կարդաց զայն և ըսավ։

— Ասիկա ստորագրել տալու համար կպտտիմ կոր։

— Կեցցե՛ս, շատ աղեկ կընես, ամենքն ալ կստորագրեն, վստահ եղիր,— պատասխանեց Սիսակ,— Գրիգորիկ աղային ստորագրել տվի՞ր։

— Ոչ տակավին։

— Անոր տո՛ւր, անպատճառ կստորագրե։

— Պիտի երթամ։

— Ռափիկ աղային տարիր հարկավ։

— Դեռ անոր ալ չգացի։

— Զարմանալի մարդ ես, աչքը գոց կստորագրե, քեզի շատ կսիրե Ռափիկ աղան։

— Գիտեմ, բայց դեռ ժամանակ չունեցա, այսօր պատրաստվեցավ հանրագրությունը։

— Մինչև հիմա որո՞ւ տարիր։

— Մարտիկ աղային, Ակոբճան աղային, Սիմոն աղային։

— Հարկավ ստորագրեցին։

— Խոստացան, պիտի ստորագրեն,— պատասխանեց ուսուցիչը թեթև վարանումով մը։

— Անշուշտ պիտի ստորագրեն,— պատասխանեց Սիսակ,— իրենց պարտականությունն է... է՛յ, Ղուկաս էֆենտիին գացի՞ր, անոր ստորագրությունն ալ պետք է, թաղին երևելիներեն է, և անպատճառ կստորագրե, որովհետև Մարգար էֆենտիին հետ շատ աղեկ չէ։

— Ամենուն ալ պիտի երթամ...

— Ժամագործ Ղուկաս աղան ալ մի մոռնար, ան ալ մենե է, գիտցած ըլլաս...

Սիսակ հետզհետե 20-ի չափ անուններ հիշեց և ստիպեց իր բարեկամը, որ անոնց դիմում ընե անպատճառ։ Ուսուցիչը խոստացավ, հետո իր բարեկամին դառնալով ըսավ.

— Հիմակուհիմա դուն ստորագրե գոնե...

— Ճանըմ, գուն ինծի թող հիմա,— ըսավ Սիսակ։

— Ինչո՞ւ համար, դուն ալ թաղեցի չե՞ս։

— Թաղեցի եմ, բայց խնդրին մեջ ուրիշ բան կա... Թագվոր էֆ-ին ալ գնա, անպատճառ կստորագրե։

— Հարկավ պիտի երթամ... դուն մեյ մը քու ստորագրությունդ դիր տեսնեմ...

— Դուն ինծի ձգե, կըսեմ կոր,— պնդեց Սիսակ։

— Բայց պատճառը բացատրե գոնե։

— Ամեն բան չեմ կրնար ըսել քեզի... իմ ստորագրելս հարմարություն չառներ... Ղահվեճի Մինասին ստորագրել տվի՞ր...

— Չէ՛ տակավին։

— Աղեկ միտքս եկավ, սա մեր Կուռնիկ աղային ստորագրել տանք։ Կուռնիկ աղան տերն էր այն սրճարանին, ուր նստած էին։

— Կուռնիկ աղա, քիչ մը հոս եկո՛ւր,— գոչեց Սիսակ։

Սրճարանատերը 40 տարեկան, թավ պեխերով, հաղթանդամ մարդ մը, մոտեցավ։

— Թուղթդ հանե,— հրամայեց Սիսակ ուսուցչին, որ իսկույն կատարեց հրամանը։

— Սրտեղ ստորագրություն մը Կուռնիկ աղա,— ըսավ երիտասարդը։

— Սոխախը խալտրրըմ շինել տալու համա՞ր է,— հարցուց սրճարանապետը։

— Չէ, ճանըմ։

— Նոր մխթարի՞ն համար։

— Չէ՛, Կուռնիկ աղա, անանկ բան չէ, մեր մյուսյու Թորգոմին համար է։

— Ի՞նչ եղեր է որ...

— Ճանըմ, նոր թաղականները զինքը դպրոցեն հաներ են, մենք ալ հիմա իմզա կժողվենք կոր քի, իլլե անիկա տնօրեն կուզենք... չիմացա՞ր, որ մյուսյու Թորգոմը դպրոցեն հաներ են։

— Իմացա, հելե շատ էլ ցավեցա,— պատասխանեց Կուռնիկ աղան։

— Անանկ է նե իմզադ դիր նայինք։

— Ես գրել կարդալ չեմ գիտեր։

— Մեհյուրդ կոխե։

— Մեհյուրս քուչս չէ։

— Վնաս չունի, թող վաղը ըլլա։

— Պեն էոյլե խամուր իշլերինե գարըշմամ,— պատասխանեց սրճարանապետը, հեռանալով երկու երիտասարդներու քովեն։

— Ես անոր ստորագրել կուտամ,— խոստացավ Սիսակ։

— Եղբա՛յր, փոխանակ ուրիշները համոզելու, նախ դուն ստորագրե,— պնդեց ուսուցիչը։

— Ինծի մի ստիպեր, ես չեմ կրնար ստորագրել, անձնական շահուս կդպչի։

— Ինչո՞ւ համար։

— Որովհետև մեր վաճառատան տերը Մարգար էֆ-ին բարեկամն է, հիմա հասկցա՞ր... ամեն բան ըսել մի տար ինծի։

— Այդ տարբեր բան,— պատասխանեց ուսուցիչը,— քանի որ անձնական նկատումներ ունիս, չեմ ուզեր, որ իմ պատճառովս վնասի ենթարկվիս։

— Ես անանկ բաներու կարևորություն չեմ տար, բայց ի՞նչ ընեմ, ստիպված եմ։

— Չեմ մեղադրեր քեզի։

— Հավատա, որ եթե ուրիշե կախում ունեցող մեկը չըլլայի, ոչ թե միայն կստորագրեի, այլ թուղթը գրպանս կդնեի և ես դուռնե դուռ պտտելով ստորագրություն կհավաքեի։

— Գիտեմ այդպես ըլլալը։

— Ես քեզ եղբոր պես կսիրեմ, կյանքս ուզես՝ կզոհեմ քեզի համար... գնա ծովը նետվե ըսե՛, նետվիմ, բայց դժբախտաբար անկախ չեմ։

— Ինչ որ է, վնաս չունի,— ըսավ ուսուցիչը,— հարկավ թաղին մեջ 40—50 հոգի պիտի գտնեմ, որոնք չպիտի մերժեն ստորագրել, արդեն այդչափը բավական է ինծի։

— 40—50 ստորագրության խո՞սքը կըլլա,— գոչեց Սիսակ,— 400—500 կրնաս հավաքել... Մերիճան աղային գացի՞ր...

— Չէ՛, եղբայր չէ՛, դեռ մարդու չգացի,— գոչեց Թորգոմ անհամբեր դեմքով մը։

— Մի բարկանաք, բարեկամս, ես քեզ սիրելու համար է, որ կհարցնեմ,— ըսավ Սիսակ սրտմտած,— կուզես գնա, կուզես մի

երթար, ինծի համար չպիտի երթաս, այլ քեզի համար... ի՞նչ իրավունք ունիս բարկանալու, քեզի բարեկամաբար բան մը կհարցնեմ կոր։

— Չեմ բարկանար կոր, միայն թե առաջուց ըսի կարծեմ, որ միայն Մարտիկ աղային ու Սիմոն աղային հանդիպեցա,— պատասխանեց Թորգոմ։

— Կներես, մոռցա, ես եմ հանցավորը։

— Այդ ի՞նչ պարապ խոսքեր են, ըսավ ուսուցիչը ոտքի ելլելով,— կարծես դիտմամբ հետս խնդիր հանել կուզես կոր...

Եվ առանց խոսքը երկարելու առավ, քալեց։

Այս անգամ ուղղակի տուն գնաց։ Իր կրած հաշորդական ձախողանքները ալ զինքը վհատեցուցած էին և պետք ուներ հանգըստի և ինքնամփոփումի։

Տունը հաճելի անակնկալ մը իրեն կսպասեր։ Բարեկամ մը իրեն կիմացներ թե՝ մոտակա թաղի մը Ազգ. վարժարանին համար տնօրենի մը պետք կա, թե իր մասին խոսք անցած էր, և թե հոգաբարձուները համամտություն հայտնած էին և ուզած էին անգամ մը իրեն հետ բանակցիլ պայմաններու մասին։ Բարեկամը խորհուրդ կուտար ուսուցչին այս առիթը ձեռքե չփախցնել և անմիջապես երթալ ներկայանալ Հոգաբարձության, մանավանդ որ արձակուրդը 2 շաբաթեն պիտի ավարտեր, և վարժարանները պիտի վերաբացվեին։

— Վաղը առտու կերթամ կներկայանամ և կպայմանավորվինք,— մտածեց ուսուցիչը,— լավագույնը այս է... ո՞վ պիտի զբաղի այս անպիտան մարդոց հետ... ամենքը խոսքով բարեկամ են, բայց երբ գործի կուգա, մեյ մեկ պատճառ կգտնեն փախուստ տալու համար, խերն անիծեմ հանրագրությա՛նն ալ, Մարգար էֆ.-ի՛ն ալ...

Եվ օրվան տվայտանքեն ետքը, պարոն Թորգոմ ուրախ սրտով քնացավ։

Հետևյալ առտու զվարթ տրամադրությամբ ելավ անկողնեն, վարժարանի տեսուչ ըլլալ կերազեր։

Ղալաթիո հրապարակեն անցած ատեն հանկարծ ձայն մը լսեց, որ իրեն անունը կուտար։

— Մյուսյու Թորգոմ, մյուսյու Թորգոմ...

Ուսուցիչը ետին դարձավ, և քիչ մը անդին նշմարեց Պողոս էֆենտին։

— Ո՞ւր կվազես այսպես,— հարցուց վաճառականը իրեն մոտենալով։

— Ստիպողական գործ ունիմ,— պատասխանեց ուսուցիչը,— թաղե մը զիս հրավիրած են... վարժարանի տեսչության պաշտոն մը կառաջարկեն կոր, բանակցելու պիտի երթամ։

— Խենթեցա՞ր,— գոչեց Պողոս էֆ. հանդիմանական շեշտով մը։

— Ինչո՞ւ համար...

— Ինչպե՞ս այդ տեսակ պաշտոն մը կրնաս ընդունիլ։

— Ինչո՞ւ չպիտի կրնամ ընդունիլ։

— Հապա Ք. թաղին վարժարանը...

— Ճանըմ, ստվերին համար իրականությունը չփախցնենք... ինծի գործ մը պետք է, կուզե Ք. թաղին մեջ ըլլա, կուզե ուրիշ թաղի մեջ...

— Հապա պատի՞վդ... հապա արժանապատվությունդ... դուն ասա՞նկ խոստացար ինծի... ի՞նչ ըրիր հանրագրությունը։

— Դեռ անով չզբաղեցա,— պատասխանեց ուսուցիչը, որ չէր ուզեր իր ձախողանքը խոստովանիլ։

— Եղբայր, ասանկ բան կըլլա՞, գոնե քանի մը հոգիի ստորագրել տայիր...

— Նախ սա մյուս գործս կարգադրեմ,— պատասխանեց ուսուցիչը, հետո բան մը կընենք...

— Մյուս գործեդ վազ անցիր... քեզի ըսինք որ՝ հիմա գործի ետևեն պտտելու ատեն չէ։

— Պողոս էֆ, ապրիլ պետք է... վաղը մյուս օր եթե վարժարանները բացվին ու ես բացը մնամ, ի՞նչ պիտի ընեմ։ Հիմակվընե պետք է, որ գլխուս ճարը նայիմ։

— Քեզի ըսինք, որ ապրուստի մասին մտածելու պետք չունիս, ես կեցեր եմ, եթե բանի մը պետք ունենաս, կրնաս ինծի դիմել։

— Բայց ես չեմ վարժված ողորմությունով ապրելու...

— Ատի ի՞նչ խոսք է, ողորմությո՞ւնը ինչ պիտի ըլլա... ուզած ատենդ գործդ պատրաստ է իմ քովս... քեզի գրասենյակս պիտի առնեմ։ Վարժապետությենեն ի՞նչ ես հասկցեր, ես քեզի աղվոր գործ մը տամ, որ գոնե օր մը մարդ ըլլաս։

— Եթե այդպիսի բան մը ընեք, հավիտյան երախտապարտ պիտի մնամ ձեզի։

— Մեր Տիրանը, այսինքն առջի գրագիրս մեկնեցավ քովես, անոր պաշտոնը պարապ մնացած է, եթե երբեք անգործ մնաս, քեզ անոր տեղը կդնեմ՝ լմնցավ գնաց։

Վաճառականին այս խոսքերը շլացուցին պր. Թորգոմը։

— Բայց ինչո՞ւ այսօրվընե այդ պաշտոնին մեջ չհաստատվիմ,— հարցուց,— քանի որ այդքան բարյացակամություն ունիք իմ մասին։

— Նախ սա հանրագրության գործը լմնցուր, հետո դյուրին է։

— Ուրեմն հիմա խորհուրդ կուտաք, որ պաշտոնի համար ուրիշ տեղ դիմում չընե՞մ։

— Ոչ թե խորհուրդ կուտամ,— պատասխանեց Պողոս էֆենտի,— այլ նույնիսկ կտիպեմ, որ հիմա ետ դառնաս և սա հանրագրության գործով զբաղիս։

— Միայն թե չեմ գիտեր, որ պիտի կրնա՞մ հաջողիլ,— ըսավ պր. Թորգոմ վարանումով մը։

— Ինչո՞ւ կկասկածիս այդ մասին։

— Ի՞նչ գիտնամ, մեր թաղեցիները տարօրինակ մարդիկ են։

— Բայց դուն ըսիր, որ քեզի համար քանի մը հարյուր ստորագրություն հավաքելը բան մը չէ։

— Բան մը չէ, բայց աշխատելու է։

— Աշխատե, էֆենտիմ, ուրիշին համար չպիտի աշխատիս, զարմանալի բան, արժանապատվությունդ փրկելու համար պիտի աշխատիս։

— Այնպես է,— խոստովանեցավ ուսուցիչը։

Պողոս էֆենտի քիչ մըն ալ հորդորեց ուսուցիչը և երբ տեսավ, որ բոլորովին իր խոսքերուն համոզված էր, բաժնվեցավ անկե, պատվիրելով, որ քանի մը օրեն գար զինքը տեսներ։

— Եթե կուզեք, հիմակվընե պաշտոնիս սկսիմ,— ըսավ պր. Թորգոմ,— թե գործիս կնայիմ և թե հանրագրությունն ալ ստորագրել կուտամ։

— Չըլա՛ր, էֆենտիմ, չըլլար,— պատասխանեց վաճառականը,— երկու գործ մեկեն չես կրնար ընել... պաշտոնդ չի փախիր կոր, հոն կեցեր է...

— Շնորհակալ եմ։

Ուսուցիչը վերադարձավ իր գյուղը։

— Ավելի լավ է առևտրական ասպարեզին մեջ հաստատ գործ

մը ունենալ, կմտածեր, քան թե ուսուցչական ասպարեզին մեջ չարչարվիլ։ Արդեն, թերևս, չպիտի համաձայնինք Հոգաբարձության հետ, աղեկ եղավ, որ Պողոս էֆ. դեմս ելավ և դիս ետ դարձուց։ Իրեն պես վաճառականի մը քով առաջին գրագիր ըլլալը պատիվ մըն է ինծի համար, ասկե զատ առնվազն 10—12 ոսկի ամսական պիտի տա անշուշտ, մինչև հիմա հազիվ ատոր կեսը կշահիմ կոր։ Ավանակություն պիտի ըլլար իր առաջարկը մերժելը, ասանկ առիթ մարդուս կյանքին մեջ մեկ-երկու անգամ կպատահի։

Միայն թե ուսուցիչը կզգար, որ խոստացած պաշտոնը ձեռք ձգելու համար հարկ էր հանրագրության գործը հաջողցնել և այս բանը քիչ մը մտատանջություն կպատճառեր իրեն։

Նախորդ իրիկվա դիմումներուն անհաջողությունն իր վստահությունը խախտած էր։

— Գոնե 80—100 ստորագրություն կրնամ հավաքել,— կըմտածեր։

Իր թաղը հասնելուն պես գնաց տուն, հանրագրությունը գրպանը դրավ և սկսավ իր այցելությունները։

Չենք ուզեր մի առ մի և մանրամասնորեն պատմել իր կատարած բոլոր դիմումները, որոնք գրեթե կետ առ կետ կնմանեին մյուսներուն։

Ամեն տեղ ուսուցիչը համակիր ընդունելություն գտավ, ամենքն ալ իրենց ցավը հայտնեցին գործված անիրավության համար, ամենքը խորհուրդ տվին բողոքելու համար, բարեկամներու կամ պաշտպաններու դիմելու, բայց ոչ ոք գրիչը ձեռք առավ հանրագրությունը ստորագրելու համար։

Ամեն մեկը պատճառաբանություն մը կգտներ ստորագրելե խուսափելու համար։

— Ես երդում ըրած եմ, որ ասանկ գործերու չխառնվիմ,— կըսեր մին։

— Իմ ստորագրությունս փոխանակ քեզի օգտակար ըլլալու՝ վնասակար կըլլա,— կփաստաբաներ երկրորդ մը,— որովհետև Վարչության բոլոր անդամներն ալ ինծի թշնամի են։

— Կինս զավակներուս վրա երդում ընել տված է, որ թագային գործերու չխառնվիմ,— կհայտարարեր երրորդ մը։

Շատերը կըսեին.

— Ուրիշները թող նախ ստորագրեն, հետո մենք կստորագրենք։

Մեկ քանիներ կհայտարարեին.

— Եղբայր, իմ գործիս չի գար Մարգար էֆենտիին հետ գեղ մարդ ըլլալ, ես հրապարակի մարդ եմ, հետո հացիս կդպչի... զավակներու տեր մարդը ամեն բան մտածելու է։

Ուրիշները հանդիմանական շեշտով մը կգոչեին.

— Եղբայր, հազիվ թաղը քիչ մը հանդարտեցավ՝ նորե՞ն խնդիր հանել կուզեք կոր։

— Բայց դուք ալ կխոստովանիք, որ եղածը անիրավություն է...

— Իրավացի կամ անիրավ, եղածը եղած է, խնդիր հանելու չէ... փոխանակ այս հանրագրության աշխատելու՝ նայե, որ ուրիշ վարժարանի մը մեջ պաշտոն մը ձեռք բերես։

Ուրիշները բացեիբաց կըսեին.

— Ես համամիտ եմ Թաղ. Խորհուրդին։

— Ինչո՞ւ համար։

— Որովհետև վարժարանը բարեկարգության պետք ունի և Սուսերյանցը քենե ավելի կարող է։

Հանրագրության լուրը բնականաբար թաղին մեջ շուտով տարածվեցավ և Մարգար էֆ-ին ականջն ալ հասավ։ Ասոր անմիջական արդյունքը եղավ պայմանագրություն կնքել ընկեր Սուսերյանցի հետ և այս իրողությունը ավելի դժվարացուց պր. Թորգոմի գործը։

— Եթե քանի մը օր առաջ բերեիր, կստորագրեի,— կառարկեին հիմա,— բայց պայմանագրությունը կնքեր, լմնցուցեր են, ալ ի՞նչ օգուտ ունի մեր ընելիք բողոքը, պարապ տեղը խնդիր հարուցած պիտի ըլլանք... ասանկ բանը ժամանակին կընեն, եղբայր, այսչափ օր է խելքդ ո՞ւր էր, կքնանայի՞ր կոր...

— Պայմանագրությունը ի՞նչ նշանակություն ունի,— կպատասխաներ Թորգոմ,— Թաղ. Խորհուրդը իյնալուն պես իր կնքած պայմանն ալ ջուրը կիյնա։

— Կկարծե՞ս որ այս հանրագրության վրա Թաղ. Խորհուրդը պաշտոնանկ պիտի ընեն։

— Ինչո՞ւ չէ, Վարչությունը մեր կողմն է։

— Պարապ խոսք մի ըներ... երա՞զ կտեսնես կոր։

Շաբաթ մը աշխատելե ետքը՝ ուսուցիչը վերջապես հաջողած

էր իր հանրագրության ներքև ստորագրություն մը դնել տալ։ Ձկնավաճառ Հաճի Համբիկի ստորագրությունն էր այդ։

— Պունուն ալթընտա տա իմզամ պուլունսուն,— ըսած էր ձկնավաճառը։

Ասիկա մեծ հաղթանակ մը և մխիթարանք մը եղավ ուսուցչին համար։

— Վերջապես,— գոչեց,— բախտը ժպտիլ սկսավ։

Նույն իրիկունն իսկ, երբ ուսուցիչը տունը կգտնվեր՝ հյուր մը ընդունեց։ Թաղեցի մըն էր, որ ամենուն ծանոթ էր Մեռոնսըզ Ճանիկ անունով։ 40—45 տարեկան մարդ մըն էր, առանց որոշ զբաղումի մը։ Ճարպիկ ու խելացի մարդ մը, որ իր խելքն ու ճարպիկությունը կգործածեր շիլ ու աղտոտ գործերու մեջ և ընդհանրապես խաղամոլությամբ կանցներ ժամանակը։ Իր մասնագիտությունն էր պարապ քսակով միամիտներ գտնել և բախտախաղի մեջ զանոնք սոթտել։ Թաղային գործերու ալ կմիջամտեր, երբ հոտ առներ թե նյութական շահ մը պիտի ելլեր իրեն։ Փորձառությամբ բավական օրինական ծանոթություններ ամբարած էր և իհարկին կրնար ոստիկանության և դատարանի ճիրաններեն իր օձիքը ազատել։ Թաղին մեջ ամենուն հետ բարեկամ էր և հաճախ պատվավոր անձեր՝ սրճարաններու մեջ զինքը սեղանակից կընեին իրենց, օղի հրամցնելով։ Այսպես ուրեմն Մեռոնսըզ Ճանիկ շատ ժողովրդական տիպար մըն էր, թեև ոչ հանձնարարելի։

Ուսուցիչը առաջին անգամ զայն իր տան մեջը կտեսներ և այս անակնկալ այցելությունը քիչ մը զարմացուց զինքը։

— Բարի եկաք, Ճանիկ աղա,— ըսավ սիկարեթ մը հրամցնելով։

— Բարի տեսանք, ի՞նչ ջուրի մեջ ես, վարժապետ։

— Փառք աստծո, ողջ առողջ եմ։

— Գիտե՞ս այս իրիկուն ինչու քեզի եկա։

— Շիտակը չեմ կրնար կոր գուշակել,— պատասխանեց պր. Թորգոմ վարանումով մը։

— Քու օգուտիդ համար եկա։

— Շնորհակալ եմ։

— Ես քեզի կսիրեմ,— ըսավ Մեռոնսըզ Ճանիկ։

— Գիտեմ, որ այնպես է,— պատասխանեց ուսուցիչը, այս համակրական հայտարարությենեն թեթև հաճույք մը զգալով։

— Մարդուն բուն բարեկամը ձախողության մեջ հայտնի կըլլա։

— Շատ ճիշտ է։

— Հաջողության ատեն ամեն մարդ բարեկամ է քեզի։

— Շատ ճշմարիտ կիսոսիս կոր, Ճանիկ աղա։

— Ես կարդացած մարդ չեմ՝ բայց փորձառություն ունիմ։ Հիմա քեզի անկեղծորեն խոսի՞մ...

— Խոսեցե՛ք։

— Բայց չպիտի բարկանաս... խոսք տուր, որ չպիտի բարկանաս։

— Ի՞նչ կա բարկանալու, խոսեցե՛ք տեսնենք։

— Կարելի է պիտի ըսես, որ այս մարդը ինչո՞ւ իմ գործիս կխառնվի կոր, բայց առաջվընե ըսի, ես քեզ կսիրեմ. և մարդս երբ սիրած մարդը նեղության մեջ տեսնա, ձեռքը չէ, կուզե որ բան մը ընե... ես հարուստ չեմ, դրամ չունիմ, որ դրամով օգնեմ, բայց ես ալ ուրիշ կերպով կրնամ օգնել և քանի որ ձեռքես կուգա, ինչո՞ւ չընեմ...

— Այնպես է,— պատասխանեց պր. Թորգոմ, առանց ըմբռնելու այս խոսքերուն թաքուն իմաստը։

— Հիմա գանք բուն խնդրին,— ըսավ Մեռոնսըզ Ճանիկ,— վարժապետ, դուն այդ գործը չպիտի կրնաս հաջողցնել։

— Ո՞ր գործը,— հարցուց ուսուցիչը։

— Սա թուղթ մը կպատրաստես կոր նե, հանրագրությո՞ւն է, ի՞նչ է։

— Այո՛, այսինքն, թաղեցիներուն կողմե բողոքագիր մը Վարչության ուղղված...

— Գիտեմ, ճանրմ, գիտեմ ինչ ըլլալը... մինչև հիմա քանի՞ ստորագրություն ժողվեցիր։

— Դեռ նոր սկսանք...

— Տաս օր է կպատրիս կոր, վարժապե՛տ, ինե բան մի ծածկեր, ես ամեն բան գիտեմ, քանի՞ իմզա ժողվեցիր։

— Բավական եղավ,— կմկմաց Թորգոմ։

— Բան մըն ալ չեղավ,— գոչեց Մեռոնսըզ Ճանիկ,— միայն Համբիկը ստորագրած է։

— Ճիշտ է,— խոստովանեցավ ուսուցիչը։

— Տեսա՞ր, որ ամեն բանե տեղեկություն ունիմ։

— Աշխատես ալ նե, անօգուտ,— վճռեց մյուսը,— ասիկա բ

գործդ չէ... դուն դպրոցին մեջ աղվոր դաս կուտաս։ Ասկե զատ, մարդ իրեն ի նպաստ ստորագրություն չկրնար հավաքել, և հավաքելու ալ չէ, որը վեր կքաշե, որը՝ վար...

— Ձեր դիտողությունը իրավացի է։

— Արդեն սկսած են ետևեդ խոսքեր ըսել։

— Ի՞նչ խոսք,— գոչեց ուսուցիչը վրդովված։

— Ճանրմ, ամենուն բերանը կրնա՞ս գոցել, կըսեն...

— Բայց ինծի դեմ ի՞նչ կրնան ըսել... ամենքն ալ ինծի իրավունք կուտան կոր, և Թաղական Խորհուրդը կդատապարտեն կոր։

— Այդ խոսքերուն շատ ականջ մի կախեր, անոնք երեսանց անանկ կըսեն, ետևեդ ալ տարբեր լեզու կգործածեն... հիմա գիտցած եղիր, որ թշնամիներ ունիս թաղին մեջ, ամեն մարդ բարեկամ մի կարծեր։

— Գիտեմ, որ քանի մը հակառակորդներ ունիմ։

— Ինչ որ է, խնդիրը այդ չէ, հիմա քեզի բան մը պիտի ըսեմ, ուշադրություն ըրե։

— Խոսեցե՛ք։

— Կուզե՞ս, որ այդ հանրագրության տակ գոնե 80—100 ստորագրություն ըլլա։

— Ճիշտ այդչափը բավական է։

— Լավ, ատիկա ես միայն կրնամ ընել...

— Դո՞ւն,— գոչեց Թորգոմ,— այդ ծառայությունը կուզես մատուցանել ինծի։

— Ինչո՞ւ չէ, ըսի քեզի, որ քեզ կսիրեմ... ասկե զատ ընելիքս ծառայություն չէ, այլ գործ մը։

— Ի՞նչ գործ,— հարցուց ուսուցիչը զարմացած։

— Քեզի 100 ստորագրություն պետք է, այնպես չէ՞։

— Այո՛, քիչ մը պակաս, քիչ մը ավել նշանակություն չունի։

— Ես քեզի պիտի բերեմ այդ ստորագրությունները։

— Շնորհակալ եմ։

— Շնորհակալության բան մը չկա, գործ մըն է, կընենք կոր... միայն թե, բաց խոսիմ, ի՞նչ պիտի տաս ինծի այդ 100 ստորագրություններու փոխարեն։

— Այսինքն իբրև փոխարինություն դրա՞մ կպահանջեք,— կմկմաց ուսուցիչը։

— Բնականաբար,— պատասխանեց Մեռոնսըզ Ճանիկ,— ես

բանս, գործս պիտի ձգեմ օրերով այս հանրագրության ետևեն պիտի իյնամ... ասիկա կես ժամեն ընելիք բան մը չէ... սրճարանե-սրճարան, տունե-տուն պտտելու, մարդ տեսնելու, բերան հոգնեցնելու, համոզելու, մեկուն անուշ, մեկուն կծու խոսքեր ըսելու է... վերջապես ծանր գործ մըն է...

— Իրավունք ունիս, բայց դժբախտաբար ես դրամ չունիմ։

— Այդ տարբեր բան, այն ատեն խոսքը գոցենք, իբր թե իրարու բան մը չըսինք, և Ճանիկ ոտքի ելլելու շարժում մը ըրավ։ Ասիկա ուսուցչին գործին չեկավ։ Հազիվ իրեն պետք եղած մարդը գտած էր, և ահա, անիկա խույս տալու կպատրաստվեր։

— Նստե՛, եղբայր,— ըսավ,— քիչ մըն ալ խոսինք։

— Ավելորդ խոսքերեն օգուտ մը չկա,— պատասխանեց մյուսը,— ժամավաճառություն է...

— Թերևս համաձայնության մը կրնանք գալ։

— Առանց դրամի համաձայնություն կարելի չէ, այս գործը խաթեր համար ըլլալիք բան չէ... խաթեր համար եթե կուզես իմ ստորագրությունս դնեմ հանրագրության ներքև։

— Ըսե տեսնենք, ի՞նչ կպահանջես կոր...

— Ատիկա գործին տևողութենեն կախում ունի։

— Ինչպե՞ս,— հարցուց ուսուցիչը։

— Բացեիբաց խոսի՞մ, օրական երեք մեճիտիե կառնեմ, եթե 6 օրեն լմննա 360 ղուրուշ կուտաս, եթե տասը օրեն լմննա 600 ղուրուշ։

— Շատ չէ՞, Ճանիկ աղա։

— Իմ օրականս այս է, ատկե պակաս գնով չեմ կրնար աշխատիլ... աս ալ քեզի համար։ Եթե ուրիշ մեկը ըլլար, կրկինը կպահանջեի։

— Բայց ես այդչափ դրամ չունիմ քովս։

— Այն ատեն պարապ տեղը կխոսինք կոր։

— Թերևս կարենամ տեղե մը ճարել։

— Այդ քու գիտնալիք բանդ է։

— Դրամը՝ ստորագրությունները հավաքելե ետքը պիտի վճարեմ անշուշտ։

— Իբրև կանխավճար 300 ղուրուշ պիտի տաս։

Ուսուցիչը պահ մը մտածեց։ Իրավ, իր քովը կար քանի մը հարյուր ղուրուշ, բայց եթե այդ գումարը Ճանիկի ձեռքը տար, ինք բոլորովին բացը պիտի մնար։

— Պողոս էֆենտիին պետք է դիմել,— մտածեց,— հարկավ կվճարե, մանավանդ որ ուզած գումարը բան մը չէ...

Հետո բարձր ձայնով ըսավ։

— Վաղը քեզի վերջնական պատասխան մը կուտամ։

— Թող վաղը ըլլա,— պատասխանեց Ճանիկ։— Օր մը առաջ, օր մը ետքը կարևորություն չունի։

— Վաղը հույս ունիմ պետք եղած գումարը վճարել, այսինքն 300 ղուրուշը։

— 600,— շեշտեց մյուսը։

— Մնացածը հետո պիտի վճարենք,— դիտել տվավ Թորգոմ։

— Այո՛, բայց քովդ պատրաստ գտնվելու է... ասկե զատ, բացառիկ ծախքերու համար ալ օրական մեճիտիե մը պիտի տաս։

— Ի՞նչ բացառիկ ծախք,— գոչեց ուսուցիչը։

— Եղբայր, ստորագրություն հավաքելը դյուրի՞ն բան կկարծես կոր, ահա դուն քանի՞ օր է կաշխատիս կոր, հազիվ մեկ ստորագրություն մը կրցար դնել տալ, ան ալ ո՞վ է, պալըխճի Համբիկը, ըլլա նե՝ ավելի աղեկ։ Պետք է հոս ու հոն երթալ, սրճարանը պտտիլ, խոսիլ, համոզել, մեկուն սուրճ մը հրամցնել, մյուսին նարկիլե մը խմցնել, ուրիշներուն օղի բերել տալ, ձեռքիդ մեկը միշտ գրպանդ պիտի ըլլա, ես օրական մեճիտիե մը ըսի թեև, բայց այդ ալ քիչ է... ինչ որ է, վստահ եմ, որ ես գրպանես վրա պիտի տամ, բայց կարևորություն չունի, բավ է, որ սա գործդ հաջողցնենք, քեզ պաշտոնիդ մեջ հաստատենք, թաղականներուն քիթը ճզմենք։ Միայն թե կրկին կըսեմ, իբրև բացառիկ ծախք օրական մեճիտիե մը կառնեմ, գործիդ կուգա նե... ես բոնի գործ չեմ տեսնար։

— Այդ բացառիկ ծա՞խքն ալ կանխիկ պիտի վճարվի,— հարցուց ուսուցիչը։

— Կարճ խոսք մը ըսե՞մ,— պատասխանեց Մեռոնսրդ Ճանիկ,— կանխիկ 400 ղուրուշ կուտաս, գործի կսկսինք։

— Լավ, վաղը իրիկուն ես կուգամ քեզի կտեսնեմ։

— Բայց առանց դրամի մի գար, որովհետև օգուտ չունի։

— Դրամը պիտի բերեմ, միայն դուն ալ խոստացիր, որ գործը պիտի հաջողցնես։

— Ինձի Ճանիկ կըսեն, երբոր գործ մը վրաս առնեմ, կկատարեմ, ասկե զատ ձեռքես չեկած բանին մեջ չեմ մտնար։

— Գիտեմ, որ այս տեսակ գործերու համար շատ ճարպիկ ես,— պատասխանեց ուսուցիչը,— միայն թե...

Բայց խոսքը չուզեց շարունակել, վախենալով, որ կվիրավորե դիմացինը։

— Միայն թե ի՞նչ,— հարցուց մյուսը։

— Ոչինչ...

— Չէ, լեզվիդ տակ բան մը կա, ըսե՛ տեսնենք... ես կուզեմ, որ անկեղծորեն խոսինք իրարու հետ։

— Ըսել կուզեի, որ թերևս հակառակորդ կողմեն խնդիրը կիմացվի, և քեզի առաջարկություններ կըլլան...

— Այսինքն զիս կկաշառե՞ն, ըսել կուզես,— գոչեց Ճանիկ բարկացած ձայնով մը։

— Ոչ թե կաշառել, բայց թերևս քեզ կհամոզեն, որ վազ անցնիս այդ գործեն...

— Եվ ի փոխարեն դրամ կուտան, այնպես չէ՞։

— Ոչ թե դրամ կուտան, այլ ուրիշ կերպով կշանան քեզ գոհացնել...

— Ինծի նայե, մյուսյու Թորգոմ, կերևա, որ դուն տակավին իմին ինչ մարդ ըլլալս չես գիտեր կոր, ես թեև հարուստ չեմ, բայց սիրտ ունիմ, պատիվ ունիմ, անանկ փարայի համար արժանապատվությունս չեմ զոհեր։

— Կներես, ես այդ ըսել չուզեցի։

— Ես շատ աղեկ կհասկնամ, ինչ որ ըսել ուզեցիր, բայց երբոր գործի սկսինք, այն ատեն պիտի տեսնաս ու հասկնաս իմին ինչ մարդ ըլլալս։

Ուսուցիչը զղջացած էր անխոհեմ խոսք մը բերնեն փախցուցած ըլլալուն, և ջանաց իր գործած սխալանքը դարմանելու, և Ճանիկի սիրտը առնելե ետքը զայն ճամփու դրավ։

— Այս մարդը եթե ուզե, շատ աղեկ կրնա հաջողցնել,— կըմտածեր,— ամեն տեղ կերթա, ամեն մարդ կճանչնա, և լեզուն ալ բերնին մեջ կդառնա...

Հետևյալ առտու ուղղվեցավ Պողոս էֆենտիի գրասենյակը խնդիրը բացատրելու և հարկ եղած դրամը առնելու համար։

— Այս հանրագրությունը մոտավորապես 10 ոսկի պիտի նստի,— կմտածեր,— բայց առայժմ հինգ ոսկի կուզեմ Պողոս էֆ-են և հետո, երբ ստորագրությունները հավաքվին, վստահ եմ, որ մնացած հինգ ոսկին ալ գոհունակությամբ կվճարե։

Վաճառականը նույն առտուն լավ տրամադրության մեջ էր և շատ սիրալիր ընդունելություն մը ըրավ պր. Թորգոմին։

— Վստահ եմ որ,— գոչեց,— հանրագրությունը բերիր, ամբողջ թաղեցիներուն ստորագրությամբ ծածկված։

— Ոչ, տակավին,— կրկնեց ուսուցիչը։

— Հիսո՞ւն...

— Կաշխատինք կոր, Պողոս էֆենտի, միայն թե ժամանակի կարոտ է։

— Հանրագրությունը քո՞վդ է, տուր տեսնեմ, քանի՞ ստորագրություն հավաքած ես մինչև այսօր։

— Հանրագրությունը քովս չէ... ուրիշի քովն է,— պատասխանեց ուսուցիչը,— թաղեցիի մը տվի, որպեսզի ստորագրություն հավաքե։

— Բայց մինչև հիմա քանի՞ հատավ ստորագրություններու թիվը։

— Շիտակը չեմ համրած, բայց բավական կա... կարծեմ երեսունը անցած է,— կմկմաց պր. Թորգոմ, ներքնապես ամոթ զգալով իր խոսած սուտեն։

— Երեսո՞ւն,— ըսավ Պողոս էֆենտի— ինչ որ է, բավական բան է...

— Բայց հիմա վստահ եմ, որ շատ ավելի պիտի կրնանք հավաքել, քանի մը հոգի հանձն առին աշխատելու։

— Կեցցե՛ս, ահա այսպես գործը կհաջողի, արդեն առջի օրեն ուրիշներու ձեռքով ընելու էիր։

— Այնպես է, միայն թե ուրիշներու ձեռքով ընել տալն ալ իր անպատեհությունն ունի։

— Ի՞նչ անպատեհություն...

— Վերջապես, ուրիշները երբոր աշխատին, փոխարինություն մը կպահանջեն... Օրինակի համար, հիմա մեկը գտած եմ, որ բոլոր թաղը պիտի շրջի, խոսի՛, համոզե՛, ամբողջ ժամանակը ատոր պիտի զոհե՛, սակայն ատոր փոխարեն ալ բան մը կպահանջե կոր։

— Ի՞նչ բան, տեսնենք իր պահանջումը։

— Մեծ բան մը չէ, Պողոս էֆ. միայն թե ես դժբախտաբար

ի վիճակի չեմ վճարելու... եթե դրամ ունենայի, ձեզի բնավ խոսքն անգամ չէի ըներ։

— Գիտեմ այդպես ըլլալը, ի՞նչ պիտի տրվի ան ըսե՞...

— Առ այժմ հինգ ոսկի,— կմկմաց ուսուցիչը։

— Առ այժմ,— գոչեց Պողոս էֆ,— ի՞նչ կնշանակե ատիկա...

— Այսինքն գործը լմնցնելե ետքն ալ պզտիկ վճարում պիտի ընենք...

— Բայց այդ գումարը շատ չէ՞...

— Ես ալ նույն դիտողությունն ըրի, բայց հետո համոզվեցա, որ շատ չէ, որովհետև բացառիկ ծախքեր ալ կան ըլլալիք։

— Ի՞նչ բացառիկ ծախք։

Ուսուցիչը բացատրեց, ինչ որ ըսած էր Ճանիկ։

— Անանկ է յա,— հավանություն տվավ Պողոս էֆ,— միայն թե նորեն շատ դրամ է 10 ոսկին, գործի մը համար, որուն հաջողությանը ապահով չենք։

— Այդ մասին բնավ կասկած մի ունենաք, հանրագրությունը պիտի ստորագրվի,— հավաստեց պր. Թորգոմ։

— Դուն կերաշխավորե՞ս։

— Անշուշտ, ասկե զատ ձեր տալիք դրամը պարզ փոխառություն մը պիտի ըլլա։

— Ինչպե՞ս...

— Այդ գումարը ես ձեզի պիտի վերադարձնեմ մաս առ մաս, երբոր պաշտոնս սկսիմ ձեր քով։ Օրինակի համար ամսականիս քառորդը ատոր կհատկացնենք։

— Ատիկա դյուրին է, միայն թե գործը հաջողեր։

Եվ վաճառականը քովը դրված դրամարկղը բացավ և հինգ ոսկինոց պանքնոտ մը տվավ ուսուցչին։

— Նայե, որ գործը հաստատ հիման վրա դնես,— խրատեց,— ես քու տեղդ ըլլամ ամբողջ դրամը այդ մարդուն չեմ հանձներ... առ այժմ ոսկի մը կուտամ, թող 10—12 ստորագրություն հավաքե, անկե ետքը դարձյալ ոսկի մը կառնե։

— Կջանամ ձեր ըսածին պես ընել,— պատասխանեց ուսուցիչը։

— Քանի՞ օրեն կխոստանաս կոր գործը լմնցնելու։

— Առ առավելն 10 օրեն։

— Եթե երկու շաբաթը անցնի՝ ալ բանի մը օգուտ չըներ։

— Ես գլխուն վրա պիտի հսկեմ։

— Երթաս բարով ուրեմն։

Ուսուցիչը մեկնեցավ գոհ ու զվարթ։ Չէր կարծեր, թե այդքան դյուրավ վաճառականը դրամներ պիտի համարեր։

— Հիմա պիտի կրնամ բաց ճակատով երթալ Ճանիկի հետ բանակցիլ,— կմտածեր։

Պանքնոտը մեճիտիեի վերածեց և շիտակ իր թաղը վերադարձավ, կեսօրեն առաջ։

Ճանիկի հետ ժամադրությունը իրիկունն էր, հետևաբար տակավին շատ ժամանակ ուներ։

Դուրս ելավ բարեկամի մը հանդիպելու հույսով։

Եվ ահա ընկեր Սուսերյանցը իր դեմը ելավ։ Իրենց բաժանումեն ի վեր առաջին անգամն էր, որ կտեսներ զայն։ Մինչև այն ատեն երկուքն ալ խուսափած էին իրարու հանդիպել։

— Բարև, պարոն Թորգոմ,— ըսավ Սուսերյանց առաջին անգամ ինք մոտենալով ուսուցչին։

— Աստծու բարին,— պատասխանեց մյուսը չոր շեշտով մը, զոր ջանաց կարելի եղածին չափ թշնամական լինել։

— Ո՞ւր ես, չես երևար,— ըսավ Սուսերյանը։

— Միշտ հոս եմ, միայն թե այս միջոցին չափազանց զբաղված եմ։

— Ի՞նչ կընես...

— Ոչինչ... մեկ քանի պաշտոններ առաջարկած են ինծի, անոնց մասին ընտրություն մը պիտի ընեմ, տակավին չկցրա որոշում մը տալ։

— Ուրեմն լավ պատահեցանք իրարու,— ըսավ Սուսերյանց,— ես ալ ճիշտ պաշտոն մը կուզեի առաջարկել ձեզի։

— Ինծի՞ պաշտոն,— գոչեց Թորգոմ։

— Այո, ինչո՞ւ այդքան կզարմանաս։

— Չեմ կրնար հասկնալ, թե ինչ տեսակ պաշտոն կառաջարկես։

— Վարժարանի մեջ պաշտոն...

— Ինծի պետք չէ պաշտոնը,— պատասխանեց վսեմ շեշտով մը։

— Պարոն Թորգոմ, իրավունք չունիք այսպիսի առաջարկություն մը այդ տեսակ պատասխան տալու,— ըսավ Սուսերյանց։

— Ես հիմա ուսուցչական ասպարեզը թողած եմ։

— Ինչո՞վ կզբաղիս կոր ուրեմն։

— Առևտրական ասպարեզը ընդգրկեցի։

— Կշնորհավորեմ, բայց միանգամայն կդատապարտեմ։

— Ինչո՞ւ համար։

— Որովհետև գաղափարական ասպարեզ մը չէ։

— Այդ տեսակ խոսքերեն շատ խաբվեցանք,— պատասխանեց Թորգոմ, դառնացած շեշտով մը։

— Բայց եթե իրավցնե հրաժարած ես ուսուցչական ասպարեզեն, ուրեմն ինչո՞ւ կաշխատիս հին պաշտոնդ ձեռք ձգելու...

— Ե՞ս,— գոչեց Թորգոմ զարմացած դեմքով մը։

— Այո, դուն,— ըսավ Սուսերյանց։

— Կսխալիս, չարաչար կսխալիս...

— Հապա հանրագրությո՞ւնը...

— Այդ տարբեր բան, ես ատոր մեջ բաժին չունիմ, Թաղեցի համակիրներ ատանկ բան մը կընեն կոր, բնական է, որ չեմ կրնար արգիլել։

Սուսերյանց թերահավատ դեմքով մը ժպտեցավ։ Հետո ըսավ.

— Պարապ խոսքերը թողունք և լրջորեն խոսինք... երկու շաբաթե վարժարանը պիտի բացվի բոլորովին բարեփոխված ծրագրով մը։ Դասարանները պիտի ավելնան և միևնույն ատեն ուսուցիչներու թիվն ալ պիտի ավելնա... ինչպես նաև վարժարանին պյուտճեն, որ դրեթե կրկնապատկված է։

— Շատ լավ, շատ ուրախ եմ։

— Ներկա Թաղ. խորհուրդը մեծ եռանդ ցույց կուտա դպրոցին համար և հանձն առած է ամեն զոհողություն ընելու։

— Կրնա ըլլալ, բայց բոլոր ատոնք զիս չեն հետաքրքրեր։

— Ընդհակառակը, պետք է որ հետաքրքրվիս... մնայուն կառավարիչի մը պետք ունինք, որ միանգամայն վարի դասարաններուն մեկ քանի դասեր ալ տա... շաբաթը 12 ժամ միայն։

— Թեկնածուներ շատ ըլլալու են այդ պաշտոնին համար։

— Այս կառավարիչը պիտի ստանա ամսական յոթը ոսկի,— շարունակեց Սուսերյանց։

— Չափավոր վարձատրություն մըն է։

— Այսինքն իբրև տեսուչ քու ստացած ամսականիդ չափ։

— Այո, այնպես է,— հաստատեց Թորգոմ։

— Եվ նվազ աշխատության փոխարեն։ Ահա այս պաշտոնը կուզենք քեզի հանձնել։

— Տեսուչեն իջնել կառավարիչի, շնորհակալ եմ։

— Ամսականը նույնն է։

— Խնդիրը դրամին վրա չէ, այլ արժանապատվության։

— Արժանապատվությունը դեր չունի գործիս մեջ։

— Թերևս քեզի համար չունի, բայց ինծի համար ունի... ամեն նկարագիր մեկ չէ։

— Եթե «կառավարիչ» բառն է, որ քեզ կխրտչեցնե՝ կրնանք փոխել, օրինակի համար կրսենք տեր-տնօրեն։

— Ինչ որ ալ ըլլա, ինծի համար չէ։

— Կմերժե՞ս ուրեմն առաջարկությունս։

— Բացարձակապես։

— Ահա տարօրինակ համառություն մը։

— Կարծեմ ըսի ձեզի, որ առևտրական ասպարեզին մեջ գործ գտած եմ, գործ մը, որ շատ ավելի վարձատրված է, քան վարժարանի տնօրինության պաշտոնը։

— Ըսիր, այո, բայց ես շատ կարևորություն չտվի, որովհետև ճշմարիտ չթվեցավ։

— Սուտ խոսելու սովորություն չունիմ,

— Դուն ոչ, բայց ուրիշները կրնան սուտ խոսած ըլլալ։

— Ջեմ հասկնար, թե ի՞նչ ըսել կուզես։

— Ըսել կուզեմ, որ քեզ խոստացած կըլլան պաշտոն մը, գոր տալու դիտավորություն չունին։

— Պաշտոնիս գրեթե սկսած եմ։

— Այն ատեն տարբեր բան... միայն թե սա հանրագրությունը կա, որ կերպով մը կհերքե ըսածդ։

— Հանրագրությունը համակիրներուս գործն է... բայց ինչո՞ւ այսչափ կարևորություն կուտաս այդ հանրագրության,— հարցուց Թորգոմ հեգնորեն,— մանավանդ որ քեզի դեմ չէ, այլ Առժամյա Թաղ. խորհուրդի դեմ։

— Կարևորություն չեմ տար, միայն թե վնասակար կնկատիմ։

— Ձե՞ր շահերուն...

— Իբրև մարդ՝ նյութական շահը բնավ նշանակություն չունի ինծի համար. ասիկա դուն ալ գիտես... վնասակար կնկատեմ այդ հանրագրությունը հասարակական տեսակետով։ Թաղը հանդարտության պետք ունի, զարգանալու համար...

— Քու համոզումդ կրնա այդպես ըլլալ։

— Ոչ թե միայն իմ համոզումս է այդ, այլ բոլոր մեր ընկերներու և բոլոր ողջամիտ Թաղեցիներու համոզումը։

— Թերևս,— ըսավ ուսուցիչը ժպտելով։

— Եվ որովհետև վնասակար կնկատենք այդ բանը, մեզի պարտականություն համարած ենք պայքարիլ անոր դեմ։

— Պայքարի՞լ,— գոչեց Թորգոմ,— ինչպե՞ս կրնաք արգիլել թաղեցիները ստորագրելու հանրագրություն մը, որուն համամիտ են։

— Երբեք արգիլելու դիտավորություն չունինք, միայն թե կրնանք մենք ալ մեր օրինավոր զենքերովը կռվիլ ձեզի դեմ... օրինակի համար դուն հանրագրություն մը ստորագրել կուտաս Թաղ. խորհուրդին դեմ...

— Ոչ թե ես, այլ համակիր թաղեցիները,— ճշտել տվավ Թորգոմ։

— Թող այդպես ըլլա... արդ, մենք ալ կրնանք ուրիշ հանրագրություն ստորագրել տալ ի նպաստ Թաղական խորհուրդին... սհա իմ ըսած պայքարս... դուն թերևս հ.սջողիս 40—50 ստորագրություն հավաքելու, մենք ալ պիտի ջանանք 4—500 ստորագրություն հավաքելու... հետևանքը քեզի կթողում գուշակել։

Պր. Թորգոմ ցնցվեցավ։ Այս պատահականությունը մտքեն անցած չէր։ Մտածկոտ դեմք մը առավ, ինչ որ չվրիպեցավ Սուսերյանցի աչքեն։ Հարվածը իր նպատակին հասած էր, բայց պետք էր նոր և ավելի զորավոր հարված մը տալ։

— Երեկ իրիկուն,— ըսավ Սուսերյանց,— արտասովոր ժողով մը գումարեցինք և այդ հանրագրության խնդրով զբաղեցանք։ Բոլոր ընկերները համամիտ գտնվեցան ի նպաստ Թաղ. խորհուրդի հանրագրություն մը պատրաստելու և ստորագրել տալու։

— Ազատ եք ընելու,— պատասխանեց Թորգոմ։

— Նույնիսկ հանրագրությունը խմբագրեցին,— շարունակեց Սուսերյանց,— և շատ բուռն ոճով մը։

— Բուռն ո՞ճ, որո՞ւ դեմ,— հարցուց ուսուցիչը։

— Այն վարկաբեկ խմբակին դեմ, որ կարգ մը ստորին արարածներու շահամոլ նպատակներուն գործիք դառնալով՝ կաշխատի թաղին մեջ երկպառակություն սերմանել։ Միևնույն ժամանակ հանրագրությունը իր համակրանքը կհայտնե նոր Թաղ. խորհուրդին, որ կարճ ժամանակի մը մեջ կրցած է օգտակար հանդիսանալ թաղին և վարժարանը իր անկյալ վիճակեն հանելով զայն տիպար հաստատության վերածել։

— Անկյալ վիճակ,— գոչեց Թորգոմ այլայլված։

— Հանրագրությունը մեր ընկերները խմբագրեցին,— շարունակեց Սուսերյանց,— այո՛, անկյալ վիճակ, շատ լավ կհիշեմ այդ բառերը, ես քիչ մը չափազանցված գտա այդ բացատրությունը բայց ինչ ընեմ, մեծամասնությունը պնդեց, որ այդպես գրվի... գիտես, որ մեր մեջ որոշումները մեծամասնությամբ կտրվին։

— Ինծի համար ուղղակի ակնարկություն մը կա՞,— հարցուց Թորգոմ, որուն մտահոգությունը հետզհետե կավելնար։

— Դժբախտաբար,— պատասխանեց Սուսերյանց։

— Բայց ի՞նչ իրավունք ունին անհատականության դպչելու։

— Ճիշտ ես ալ նույն դիտողությունը ըրի։ Բայց մեծամասնությունը դիտել տվավ, որ ձեր հանրագրության մեջ ալ անհատականության դպած էիք։

— Ո՞վ ըսավ...

— Ինծի դեմ բաներ մը գրված է եղեր, մեր ընկերներեն մեկը կարդացեր է հանրագրությունը։

— Երբե՛ք, ձեր ընկերներեն ոչ ոք տեսած է հանրագրությունը,— գոչեց Թորգոմ։

— Տեսեր և կարդացեր է,— պնդեց Սուսերյանց։

— Անկարելի է...

— Ինչո՞ւ այդպես կըսես և մանավանդ ինչե՞ն գիտես, որ անկարելի է։

— Որովհետև ես երբեք հանրագրությունը ցույց չեմ տված ձեր ակումբին։

— Թերևս ուրիշները ցույց տվին։

— Ուրիշնե՞ր... ինչպես կարելի է։ Հանրագրությունը իմ քովը է։

— Իրա՞վ կըսես։

— Անշուշտ,— պնդեց պրն. Թորգոմ։

— Բայց քիչ մը առաջ դուն ըսիր, որ այդ գործով չես զբաղիր և թե հանրագրությունը թաղեցի համակիրներն են, որ ստորագրել կուտան։

— Այսինքն,— կմկմաց ուսուցիչը,— անոնք խորհուրդ տվին, որ ասանկ բան մը ընենք և խոստացան, որ պիտի աշխատին ամբողջ թաղեցիներուն ստորագրել տալու համար։

— Ինչ որ է, խնդիրը այն է, որ դուն կամ ուրիշները հանրագրությունը կարդացեր եք մեկ քանի մարդոց, անոնք ալ մեջը գրվածները պատմեր են ուրիշներուն։

— Ատիկա կրնա ըլլալ։

— Ինծի դեմ մասնավորապես ծանր բառեր կան եղեր,— շեշտեց Սուսերյանց։

— Ոչ այնքան ծանր։

— Այո՛, այո՛, նախատական խոսքեր... մեր ընկերները լսեր և շատ բարկացեր են, ասիկա ուղղակի Ակումբին դեմ թշնամանք կնկատեն կոր։

— Ակումբի խնդիր չկա բնավ։

— Երբոր անոր նախագահը կնախատվի, բնականաբար, Ակումբն ալ նախատված կ՚ըլլա։ Չերկարեմ, ասիկա խնդիր ըրին երեկի ժողովին մեջ և անոր ազդեցության տակ խմբագրեցին հանրագրությունը, ի փոխարեն քեզի համար շատ աննպաստ ակնարկություններ ընելով։

— Հանրագրությունը սկսա՞ծ են ստորագրել տալ,— հարցուց ուսուցիչը, որ չափազանց զգացված էր Սուսերյանցի այս հայտնություններեն։

— Երեկ գիշեր անդամները ստորագրություն հավաքեցին 30—35-ի չափ։ Այսօր ալ պիտի շարունակեն։ Մարգար էֆենտին խոստացած է ինք առանձին 100 ստորագրություն հավաքելու։

Պարոն Թորգոմի մտածմունքը ավելցավ։ Եթե Սուսերյանց ճշմարիտ կխոսեր, կացությունը արդարև ծանրակշիռ էր իրեն համար։ Մինչդեռ ինք դեռ մեկ ստորագրություն կրցած էր հավաքել, իր հակառակորդները 35 հատ հավաքած էին։ Ուսուցիչը կզգար, որ եթե նմանօրինակ մրցում մը ընեին, ինքն էր, որ պիտի պարտվեր։

— Այդ Ակումբին հետ գլուխ ելլելը շատ դժվար է,— մտածեց։

Բայց չանաց իր վրդովումը ծածկելու։

— Հաջողություն կմաղթեմ,— ըսավ,— բայց բողոքելու իրավունքս կվերապահեմ։

— Ի՞նչ բողոք,— հարցուց Սուսերյանց։

— Եթե հանրագրության մեջ պատիվս դպչելիք բան մը կա՝ գիտցած եղեք, որ դատարանի կդիմեմ։

— Ես շատ աշխատեցա, որ մեղմ գրեն, բայց ընկերներեքը մտիկ չըրին,— ըսավ Սուսերյանց,— թեև ի վերջո քանի՛ մը փոփոխություններ հաջողեցա մտցնել մեջը։ Բայց կրնանք, եթե ուզես, այդ խնդիրը անուշությամբ կարգադրել։

— Ինչպե՞ս,— հարցուց պրն. Թորգոմ։

— Նախ, քեզի առաջարկված պաշտոնը կընդունիս և հետո այդ հանրագրությունդ կպատռես, այն ատեն ես ալ կհամոզեմ մեր ընկերները, որ իրենց հանրագրությունը պատռեն և խնդիրը մեջտեղեն վերնա։

— Ես արդեն չէի ուզեր այս տեսակ խնդիրներ հարուցանել, բայց դուք տեղի տվիք, այսինքն Թաղական Խորհուրդը։

— Թաղական Խորհուրդը իր իրավունքին մեջն էր... իր փափաքն էր պարզապես թաղին վարժարանը բարեկարգել։ Հիմա դուն ինծի ըսե, որ առաջարկությունս կընդունի՞ս։

— Պետք է խորհիմ այդ մասին, կամ մանավանդ բարեկամներու կարծիքը առնեմ,— պատասխանեց Թորգոմ խուսափողական ձայնով մը։

— Լավ, քանի որ ինքզինքիդ տեր չես և ուրիշներուն խորհուրդով ստիպված ես շարժելու,— ըսավ Սուսերյանց հեգնորեն, քեզի երկու օր պայմանաժամ կուտամ։

Այս խոսքերը քիչ մը վշտացուցին ուսուցիչը, բայց չանաց հայտնի չընել։

— Կխորհինք այդ մասին,— ըսավ և հեռացավ իր նախկին ընկերոջ քովեն։

Այս հանդիպումը և իրեն ըրած անակնկալ առաջարկը խռովեցին Թորգոմի միտքը։

— Արդյոք առաջարկված պաշտոնը ընդունիմ և վե՞րջ տամ պայքարին,— մտածեց։

Իրեն այնպես կթվեր, թե իր ներկայությունը վարժարանին մեջ անհրաժեշտ դատված էր և այս բանը կգգվեր իր ինքնասիրությունը։

— Կերևա, որ հասկցեր են, թե առանց ինծի կարելի չէ դպրոցը վարել...

Մինչև իրիկուն Թորգոմ այս անուշ երազովը օրորվեցավ։ Հանկարծ միտքը եկավ Ճանիկի հետ ըրած ժամադրությունը։

Ճանիկ արդարև անհամբեր իրեն կսպասեր և երբ ուսուցիչը տեսավ, ուրախությամբ գոչեց։

— Վերջապես եկար... ո՞ւր մնացիր մինչև հիմա։

— Կարծեմ շատ ուշ մնացի։

— Չէ՛, բայց ես վախցա, որ չես գար։ Ի՞նչ ըրիր տեսնենք, դրամ ճարեցի՞ր։

— Դրամը դյուրին է,— ըսավ Թորգոմ հպարտ ձևով մը,— դրամ կա... միայն թե...

— Եթե դրամ կա, ալ ի՞նչ կմնա անդին։ Գործդ տեսնված է ուրեմն։

— Շիտակը ես կկասկածիմ կոր քիչ մը։

— Կասկածիլ,— գոչեց Ճանիկ,— երբ ես եմ գործը վրաս առնողը... իրավ որ տարօրինակ մարդ ես եղեր։

Ուսուցիչը միշտ վարանոտ ընթացք մը ուներ։ Ի՞նչ պետք կար հանրագրության՝ եթե Սուսերյանցի առաջարկը պիտի ընդուներ ու վարժարանին մեջ պաշտոնի կոչվեր։ Միայն թե իրավունք ունե՞ր այդպիսի պաշտոն մը ընդունելու, երբ հանձնառություններ առած էր հանդեպ Պողոս էֆ-ի և նույնիսկ դրամ ալ ընդունած էր անկե։ Անշուշտ դրամը կրնար իսկույն վերադարձնել, բայց դասալքություն մը չպի՞տի ըլլար ասիկա և զինքը չպի՞տի վարկաբեկեր վաճառականին աչքին։ Բոլոր այս մտածումները իր միտքը կշարշարեին այս վայրկյանին։ Ճանիկ նշմարեց, որ իր խոսակիցը հոգեկան տագնապի մը մատնված է և ըսավ.

— Մտմտուք մը ունիս կարծեմ, շատ մտածկոտ ու շվարած կերևաս կոր։

— Այո՛,— խոստովանեցավ Թորգոմ։

— Դրամ չկրցա՞ր ճարել։

— Ընդհակառակը, դրամի խնդիրը կարգադրված է... դրամը հոս պատրաստ է։

Եվ ուսուցիչը ձեռքը գրպանին զարկավ, ուրկե մեճիտիեներու քաղցր ձայն մը լսվեցավ։ Ճանիկի դեմքը ճառագայթեց։

— Ուրեմն վարանումդ ի՞նչ է,— գոչեց։

— Կմտածեմ, որ թերևս անօգուտ ըլլա այդ հանրագրությունը,— պատասխանեց Թորգոմ։

— Ինչո՞ւ համար։

— Որովհետև մյուսները տեղի տալու տրամադիր չեն։

— Ի՞նչ կերպով։

— Կերևա, որ համոզում գոյացուցած են թե՝ առանց ինծի կարելի չէ վարժարանը վարել։

— Ո՞ւրկե իմացար։

— Նույն ինք Սուսերյանցը ըսավ։

— Զարգապես քու քթիդ խնդացեր է։

— Չէ՛, եղբայր, լրջորեն խոսեցավ և ինծի պաշտոն տալ ուզեց վարժարանին մեջ։

— Եվ դուն ալ այդ նվաստությունը հանձն առի՞ր։

— Տակավին վերջնական որոշում չտվի... բայց ինչո՞ւ նվաստություն ըլլա ուսուցչի մը համար պաշտոն ընդունիլ վարժարանի մը մեջ։

— Ատկե ավելի ստորություն կարելի չէ երևակայել,— շարունակեց Ճանիկ։

— Բայց պատճառը բացատրե՛ տեսնեմ։

— Քեզի խայտառակաբար դպրոցեն դուրս նետող ու տեղդ անցնող մարդուն հրամանին տակ պաշտոնավարել... ասկե ավելի ի՞նչ ստորություն կրնա ըլլալ։ Մարդ անոթի կմնա, ասանկ բան հանձն չառներ։ Հավատա, որ պարո՛ն Թորգոմ, եթե ասանկ բան մը ընես, պատիվդ փարայի մը կըլլա թաղին մեջ և բոլոր համակիրներդ քեզի դեմ կդառնան։ Ամենեն առաջ ես բարևս կկտրեմ...

— Իրա՞վ կըսես։

— Բնականաբար,— գոչեց Ճանիկ,— պատվո զգացում չունի՞ս բնավ։

— Բայց ես այդ առաջարկությունը ինծի համար պատվաբեր կնկատեմ... քու ըսածդ ճիշտ կըլլար, եթե դիմումը ես կատարեի, բայց քանի որ անոնց կողմե կուգա կոր, կարծեմ ինծի համար անպատվաբեր չէ...

— Պարապ խոսք, էֆենտիմ,— գոչեց Ճանիկ,— ասկե զատ վստահ եղիր, որ ատիկա պարզապես խաղ մըն է...

— Ի՞նչ խաղ։

— Այս տեսակ խոստումներով կամ առաջարկություններով Սուսերյանց կուզե քեզ խաբել և հանրագրության առաջը առնել։

— Կկարծե՞ս...

— Այդ մասին ապահով եմ, Քեզի պես միամիտը գտեր է, ուզածին պես կխաղցնե կոր... Ասկե զատ, քեզի ուրիշ բան մը ըսե՞մ...

— Ըսե՛ տեսնենք...

— Նույնիսկ եթե տրամադրություն ունիս վարժարանին մեջ պաշտոն ընդունելու, դարձյալ դուն հանրագրությունը ստորագրել տալու ես... անիկա ճիշտ ձեռքդ զենք մըն է։ Տես, հանրագրության խոսքը միայն բավական եղավ, որ ատանկ առաջարկ մը ընեն, երբոր հանրագրությունը ստորագրվի, այն ատեն ավելի իրար պիտի

անցնին և լավագույն պայմաններով պիտի ստիպվին քեզի պաշտոնի կանչել և այն ատեն պատիվոդ պիտի մտնես վարժարանեն ներս և ոչ ոք պիտի իրավունք ունենա դիտողություն մը ընելու կամ քեզ դատապարտելու։

Ճանիկի այս խոսքերը վերջապես վճռական ազդեցություն մը գործեցին Թորգոմի վրա և անոր վարանումները ցրվեցին։

— Իրավունք ունիս,— գոչեց,— հանրագրությունը պետք է ստորագրվի։

— Նույնիսկ այս իրիկվընե գործի սկսելու է։

— Ատիկա դուն վրադ պիտի առնես։

— Անշուշտ, հոգ մի ըներ. հիմա, անմիջապես կսկսիմ, միայն թե գրամական խնդիրը կարգադրենք։

— Առհաշիվ 200 ղրուշ պիտի վճարեմ անմիջապես,— ըսավ Թորգոմ։

— Քիչ է, սիրելիս։

— Կարծեմ թե մեր պայմանը այնպես էր,— պատասխանեց Թորգոմ։

— Այո, բայց քովս որչափ ավելի դրամ գտնվի, գործը այնչափ արագ կլմննա։

— Երբ որ այս 200 ղրուշը ծախսես և արդյունքը ցույց տաս, անմիջապես դարձյալ նոր վճարում մը կընեմ։

Ճանիկ ավելի չի պնդեց. ուրախությամբ մեճիտիեները գրպանեց և ըսավ.

— Գործը եղածեն սեպե, ո՞ւր է հանրագրությունը։

— Տունն է,— պատասխանեց ուսուցիչը։

— Ուրեմն երթանք առնենք։

Միասին ճամփա ելան։ Ճանիկ այնքան վստահորեն կխոսեր իր հաջողության մասին, որ ուսուցիչին տարակույսները բոլորովին փարատեցան։

— Աղեկ ըրինք այս մարդը ձեռք ձգեցինք,— մտածեց,— թաղին մեջ այս գործին հարմար միակ անձն է։

Հանրագրությունը Ճանիկին հանձնելով հարցուց.

— Ե՞րբ տեղեկություն մը կրնամ առնել։

— Ի՞նչ տեղեկություն...

— Հանրագրության մասին։

— Ես երկու օրեն կուգամ քեզի կտեսնեմ... անհոգ եղիր։ Գործը կատարված համարե...

— Երկու օրեն անպատճառ կսպասեմ։

Եվ երկու բարեկամները իրարմե բաժնվեցան։

Պարոն Թորգոմ այդ երկու օրը անձկության մեջ անցուց։ Մեկ կողմե անհամբեր կսպասեր Թաղ. Խորհուրդի կողմե իրեն ըլլալիք պաշտոնական դիմումին, որպեսզի բարեհաճի վարժարանին մեջ պաշտոն ընդունելու, մյուս կողմե Ճանիկի գործունեության արդյունքին։

Միտքը դրած էր շատ դյուրավ տեղի չտալու և խիստ պայմաններով կրկին վարժարան մտնելու։

Հաջորդ օրը մինչև իրիկուն տունը մնաց, հուսալով, որ Սուսերյանց պիտի գար իր առաջարկը կրկնելու։

— Լավագույն է, որ դուրսը իրարու չհանդիպինք, և ես զինքը փնտռելու կերպարանք չառնեմ, կմտածեր, եթե անպատճառ ինծի պետք ունին, կրնան տունս գալ ու զիս գտնել։

Եվ սակայն ոչ ոք երևցավ։

Իրիկունը ուշ ատեն, ալ համբերությունը սպառած, պրն. Թորգոմ դուրս ելավ և ուղղվեցավ այն սրճարանը, ուր ընդհանրապես կհավաքվեին թաղեցիները։

Ներս մտնելով նշմարեց Մանուկ աղան և անոր մոտեցավ։

— Նայինք, Թաղ. Խորհուրդին մեջ ի՞նչ որոշում տրվեր է իմ մասին,— ըսավ ինքն իրեն։

Մանուկ աղա, ինչպես միշտ, սիրալիր ընդունելություն մը ըրավ ուսուցչին. որպիսությունը հարցուց և մի քանի խոսքերե ետքը ըսավ.

— Պաշտոն մը գտա՞ր, պրն. Թորգոմ։

— Շիտակը, շատ ետևե ինկած չունիմ,— պատասխանեց մյուսը,— քանի մը գործեր կան, մեկ քանի առաջարկներ եղած են, բայց դեռ վերջնական որոշում մը չեմ տված։

— Շատ լավ, ուրախ եմ ուրեմն։

— Ինծի պես փորձառու ուսուցիչ մը պարապ չմնար, ասկե զատ, ուսուցչական ասպարեզեն դուրսն ալ գործեր ներկայացան։

— Վայ... ավելի աղեկ, ի՞նչ տեսակ գործեր։

— Առևտրական ասպարեզին մեջ... շնորհքով գործեր։

— Կեցցես, տեսա՞ր մի աղեկ գործը, բնավ մի կենար ու ձեռքե

մի փախցներ ատանկ գործ մը,— գոչեց Մանուկ աղա,— վաղ անցիր սա վարժապետութենեն... հրապարակի մարդ եղիր։

— Բայց իմ կոչումս ուսուցչությունն է...

— Կոչում մոչում պարապ խոսքեր են, դուն դրամ վաստակելդ նայե. վարժապետության մեջ ապագա չկա, ահա, աչքերնուս առջևն են վարժապետները... ամենեն աղեկը վերջ ի վերջո կամ անոթի կմնա և կամ հիվանդանոցին մեջ կյանքը կվերջացնե։

Պարոն Թորգոմ գոհ չմնաց Մանուկ աղայի այս տեսութենեն։ Ինք կհուսար, որ թաղականը պիտի ջանար զինքը համոզելու, որպեսզի ուսուցիչ մնա և պիտի աղաչեր, որ վարժարանին մեջ պաշտոն ընդունի։

— Տեսնեմ,— ըսավ,— դեռ մտածելու ատեն ունիմ, ես ուսուցչությունը կսիրեմ և նյութականեն ավելի բարոյական վարձատրություն և գոհունակություն կփնտռեմ... Ես պատրաստ եմ կրկին ուսուցչությամբ ապրելու, բայց պայմանավ...

Մանուկ աղա չհարցուց թե ինչ էր այդ պայմանը, սակայն ուսուցիչը շարունակեց.

— Նախ պետք է, որ կատարյալ գոհացում տրվի ինծի, հետո ամսական հավելում ըլլա և կանոնավոր պայմանագրություն մը կնքվի առնվազն հինգ տարվան համար, որպեսզի այս կամ այն թաղականին կամ հոգաբարձուին քմահաճույքեն կախված չըլլամ։

— Իրավունք ունիս,— պատասխանեց Մանուկ աղա, պրն. Թորգոմի խոսքը անպատասխան չթողնելու համար։

— Հարկավ իրավունք ունիմ,— գոչեց ուսուցիչը ուժ առնելով թաղականին այս հավանութենեն,— քանի որ անհրաժեշտ պետք ունին ինծի, քանի որ իրենք ստիպված են դիմում ընել և խնդրել, որ պաշտոնս ընդունիմ, ուրեմն պետք է, որ իմ պայմաններս ընդունին... այնպես չէ՞։

— Անանկ է, մյուսյու Թորգոմ։

— Ալ հերիք է, որքան որ շահագործեցին իմ բարեկամությունս... նախ պետք է, որ արժանապատվությունս լիովին գոհացում գտնե...

— Բայց խնդիրը ի՞նչ բանի վրա է.— հարցուց Մանուկ աղա միամտորեն, ի՞նչ պաշտոն է ձեզի առաջարկվածը։

— Ինչպե՞ս, դուք լուր չունի՞ք,— գոչեց Թորգոմ զարմացած։

— Չէ՛, քու մասիդ բան չեմ իմացած բնավ։

— Թաղ. խորհուրդին մեջ խնդիր չէ՞ ծեծված։

— Ի՞նչ խնդիր...

— Ճանըմ, ինձ կրկին Ազգային վարժարանին մեջ պաշտոն տալու խնդիրը։

— Բնավ ատանկ խնդիր մը չէ եղած մեր մեջ... դուն ուրկե՞ իմացար։

— Պարոն Սուսերյանցը ըսավ։

— Պարոն Սուսերյանցը ըսավ, որ Թաղ. խորհուրդը որոշած է քեզ պաշտո՞ն տալ Ազգային վարժարանին մեջ...

— Չէ՛, Թաղ. խորհուրդի խոսքը չըրավ,— խոստովանեցավ ուսուցիչը,— միայն թե ըսավ, որ եթե ուզեմ, ինծի պաշտոն պիտի տրվի։

— Բնավ լուր չունիմ, կերևա, որ Սուսերյանց իր կողմե ատանկ բան մը ըսեր է։

— Առանց Թաղ. խորհուրդի հավանության ի՞նչպես կրնա ինծի պաշտոն առաջարկել։

— Բնականաբար չկրնար առաջարկել, և ճիշտ ասոր համար է, որ պարապ խոսք է ըսածը, որովհետև քեզի մտերմաբար ըսեմ, որչափ ատեն որ Մարգար էֆ-ն Թաղ. խորհուրդի ատենապետ մնա՝ կարծեմ քեզի համար շատ հույս չկա մեր վարժարանին մեջ պաշտոն առնելու, և ասոր համար խորհուրդ կուտամ քեզի, որ առանց այդ տեսակ խոսքերու կարևորություն տալու, գլխուդ ճարը նայիս և եթե ուրիշ գործ մը գտած ես, ձեռքե չփախցնես... գիտես ա, ես քեզ կսիրեմ, անոր համար այսպես անկեղծորեն կխոսիմ։

— Շնորհակալ եմ,— պատասխանեց Թորգոմ բոլորովին հուսաբեկ եղած։

Թաղականին խոսքերը պաղ ջուր մը լեցուցած էին իր երազներուն վրա։

— Ես ալ արդեն չպիտի ընդունեի վարժարանին մեջ պաշտոն,— կմկմաց։— Տարբեր բան՝ եթե բոլոր պայմաններս ընդունեին։

— Ինչ որ է,— պատասխանեց Մանուկ աղա,— խնդիրը այն է, որ քեզի պաշտոն առաջարկող չկա առայժմ։

Պահ մը լռություն տիրեց երկու խոսակիցներուն միջև։ Պրն. Թորգոմ իր ընդունած այս նոր հարվածեն ընկճված էր և խոսակցությունը շարունակելու շատ սիրտ չուներ։

Թաղականը կուահեց ուսուցիչին հոգեկան այս տխուր վիճակը և փորձեց մխիթարել։

— Մտածելու բան չկա,— ըսավ,— աստված մեկ դուռը գոցե՝ ուրիշ դուռ մը կբանա... արդեն դուն ալ քիչ մը առաջ ըսիր, որ քանի մը գործեր կան և թե քեզ թողված է ընտրություն մը ընել։

— Այնպես է,— պատասխանեց Թորգոմ։

— Իսկ եթե այդ հույսերդ ի դերև ելնեն, նորեն հուսահատելու բան չկա... թերևս միջոց մը գտնենք կարգադրություն մը ընելու։

— Ի՞նչ կարգադրություն,— հետաքրքրվեց ուսուցիչը։

— Այսինքն կաշխատինք Մարգար էֆենտիին սիրտը առնել...

— Ինչպե՞ս, իրմե ներո՞ւմ խնդրելով արդյոք,— գոչեց Թորգոմ։

— Ինչո՞ւ չէ։

— Երբեք ատանկ բան մը մի սպասեք ինե... կնախընտրեմ անոթի մեռնիլ, քան թե հանձնառու ըլլալ այդպիսի ստորություն մը։

— Այդ ըրածդ պարզապես հիմարություն է։ Եվ անոր փորձանքն է, որ կքաշես կոր հիմա։

— Կրնա ըլլալ,— պատասխանեց Թորգոմ։

Նոր ծանոթներ եկան և սեղանին շուրջը բազմեցան, որով խոսակցությունն ալ վերջ գտավ։

Թորգոմ քիչ հետո մեկնեցավ սրճարանեն և ուղղվեցավ տուն, չուզելով ուրիշներու հետ խոսակցության բռնվիլ։

Առանձնանալու պետք կզգար, միտքը ամփոփել կմտածեր։

— Հիմա կհասկնամ թե ինչու Սուսերյանց պաշտոնի վրա առաջարկություն ըրավ ինծի... պարզապես որպեսզի վազ անցնիմ հանրագրութենեն։ Անպիտանը ուզեց զիս խաբել կրկին և այսքան ետևես ինկած է հանրագրության համար. ըսել է, որ կվախնա կոր անկե... ով գիտե, թերևս Մարգար էֆենտիին հետ խորհած ու այս միջոցը մտածած են զիս պայքարեն ետ կեցնելու համար։ Ատով միայն պիտի կրնամ վրեժս լուծել և հակառակորդներուս աչքը վախցնել։

Այս մտածումը զինքը քիչ մը մխիթարեց և Թորգոմ նույն գիշերը հանգիստ քնացավ այն վստահությամբ, թե վերջնական հաղթանակը իրեն պիտի մնար։

Հետևյալ առտու կանուխ դեռ նոր անկողնեն ելած էր, երբ Ճանիկ երևցավ։

Ձափազանց աճապարյալ կերպարանք մը ուներ։

— Սրկե՛ 150 ղրուշ տուր,— գոչեց Թորգոմին, առանց «բարի լույս» ըսելու։

— Ի՞նչ կա որ,— հարցուց մյուսը շվարած։

— Ճանըմ, տուր սա 150 ղրուշը...

— Տամ, բայց նախ նստե տեսնենք, քիչ մը խոսինք, նայինք ի՞նչ եղավ հանրագրության գործը։

— Աղբար, երկար բարակ խոսելու ատեն չէ, գործ տեսնենք, խոսքով բան չլմննար, ետքը շատ կխոսինք։

— Բավական ստորագրություն հավաքվեցա՞վ,— հարցուց ուսուցիչը։

— Ինծի Ճանիկ կըսեն, աչքիս մեջ աղեկ նայե,— գոչեց մյուսը հպարտորեն։

— Քանի՞ հատ ժողվեցիր մինչև հիմա...

— Ես բան մը վրաս կառնեմ նե՝ կկատարեմ, հեմ ապեկ կկատարեմ։

— Լավ, բայց քիչ մը բացատրություն տուր։

— Նախ սա 150 ղրուշը համրե։

— Քանի՞ ստորագրություն հավաքեցիր։

Ճանիկ խորհրդավոր ձևով մը մոտեցավ Թորգոմի ականջին և փսփսաց.

— 60-ը անցավ...

Ուսուցիչը ուրախությենեն այլայլեցավ։

— Ի՞նչ կըսես,— գոչեց։

— Այո՛, երեսուն ժամվան մեջ 60 ստորագրություն, այսինքն մեկ ժամվան մեջ երկու հատ,— հաստատեց Ճանիկ։

— Անհավատալի բան։

— Եվ սակայն բացարձակ ճշմարտություն է։

— Ո՞ւր է հանրագրությունը, աչքովս տեսնեմ անգամ մը։

— Ուրեմն խոսքիս չե՞ս հավատար։

— Կհավատամ, բայց...

— Ճանիկ սուտ չխոսիր, սա գիտցած եղիր... երկու օրվան ստորագրությունները 150-ի պիտի հասնին... նա՛, սա պատին վրա գրե՝ եթե կուզես։

— Աղեկ, եղբա՛յր, խոսքիդ կհավատամ, բայց անգամ մը տեսնեմ սա հանրագրությունը, նայինք ի՞նչ տեսակ մարդիկ ստորագրած են։

— Ամենքն ալ շնորհքով, պատվավոր մարդիկ, ես իմ գործս չե՞մ գիտեր... քանիներ ստորագրել ուզեցին և ես մերժեցի, անեղան մարդիկ ըլլալնուն համար... սա 150 ղրուշը տուր, ուզ մնացի։

— Հանրագրությունը ցույց տուր տեսնեմ։

— Անկարելի է։

— Ինչո՞ւ համար,— գոչեց Թորգոմ զարմացած։

— Քովս չէ, բարեկամի մը տված եմ, որ խոստացավ ինքն ալ 20—30 ստորագրություն հավաքել։

Այս բացատրությունը թեև ճշմարտանման, բայց չգոհացուց ուսուցիչը, որուն մտքին մեջ թեթև կասկած մը ծագած էր։

— Քեզի բան մը ըսե՞մ,— պատասխանեց,— 150 ղրուշը հոս գրպանս է և քու տրամադրությանդ ներքև, միայն թե այն ատեն պիտի տամ, երբոր հանրագրությունը մեյ մը տեսնեմ... թող վաղը ըլլա, վնաս չունի...

— Հասկըցա,— ըսավ Ճանիկ բարկությամբ ոտքի ելլելով,— մնաք բարով։

— Ինչո՞ւ կբարկանաս, բարեկամ,— հարցուց ուսուցիչը։

— Կբարկանամ, որովհետև իս ստախոս խաբեբայի մը տեղ կդնես կոր։

— Ես անանկ բան չըսի,— բողոքեց Թորգոմ։

— Անանկ ընթացք մը կբռնես կոր, իբր թե ես քու դրամդ առնելու համար խաղ կխաղամ կոր քեզի։

— Քավ լիցի, բայց...

— Պարապ խոսք մտիկ չեմ ըներ, ամեն մարդ պատիվ ունի... մնաս բարով։

— Կեցի՛ր, եղբայր, իրարու խոսք հասկնանք։

— Դուն ինծի երկու հարյուր ղրուշ չտվի՞ր։

— Այո՛,— կմկմաց Թորգոմ։

— Վաղը դրամդ ետ կբերեմ, հանրագրությունն ալ կերթամ կպատռեմ, լմնցավ գնաց... հանցանքը իմս է, որ քեզ պես մարդուն ծառայություն ընել ուզեցի, արյուն քրտինք մտա, հոգնեցա, լեզու թափեցի, աժեմ չաժեմ մարդոց խոսք հասկցնել, համոզել աշխատեցա...

— Եղբա՛յր, այդ խոսքերուն բնավ տեղը չի կա...

— Հանրագրությունը չտեսած բնավ դրամ չի տար եղեր...

սրվոր նայեցեք մեյ մը, գետնին տակն անցնին դրամդ ալ, հանրագրությունդ ալ...

Եվ Ճանիկ բարկաճայթ կերպարանքով մը դեպի դուռը ուղղվեցավ։

Թորգոմ շվարած՝ ետևեն վազեց, իր վերջին գերագույն հույսն էր, որ կսպառնար հեռանալու, Ճանիկի թևեն բռնեց, խնդրեց, աղաչեց, որ ետ դառնա։

— Թևս ձգե,— գոչեց մյուսը։

— Կաղաչեմ, ներե՛, ես քեզ վիրավորել չուզեցի։

— Ավելի աղեկ էր գլուխս բան մը իջեցնեիր, քան թե այդ խոսքը ընեիր։

— Եղբա՛յր, եթե գիտնայի որ պիտի բարկանաս՝ չէի ըսեր. իմ միտքս քեզ վիրավորել չէր, միայն թե հետաքրքիր էի անգամ մը հանրագրությունը տեսնել...

— Ձաթլամիշ չես ըլլար ա...

— Անանկ է, ավելի աղեկ է, որ բոլոր ստորագրությունները հավաքելե ետքը, տեսնեմ, առ սա 150 ղրուշը։

— Չեմ ուզեր, ես այս գործեն վազ անցա,— պոռաց Ճանիկ, միշտ բարկություն կեղծելով։

— Կաղաչեմ,— մրմնջաց ուսուցիչը։

— Չէ՛, ըսինք ա...

— Կխնդրեմ, մի մերժեք, խոսք մըն էր բերնես փախցուցի... ներե՛։

Եվ Թորգոմ հարյուր հիսուն ղրուշը գրեթե բռնությամբ Ճանիկի գրպանը խոթեց։

— Ես ասանկ բան չեմ սիրեր,— ըսավ Ճանիկ,— ինծի հետ գործ ունեցողները պետք է որ վրաս կատարյալ վստահություն ունենան... Ես եթե այդ հանրագրության գործը վրաս առի՝ պարզապես քեզ սիրելուս համար էր և ոչ թե դրամ շահելու... տված դրամդ ամբողջությամբ կծախսեմ կոր ուրիշներու համար, եթե հաշիվ ընենք, թերևս գրպանես ալ վրա տված եմ։ Գուցե չես հավատար ըսածիս, բայց այս այսպես է։

— Կհավատամ, սիրելիս,— փութաց պատասխանել ուսուցիչը, որ չէր ուզեր նոր խնդիր մը ունենալ իր դյուրազգաց բարեկամին հետ։

— Այս 150 ղրուշն ալ որ առի՝ հիմա անմիջապես պիտի հանձնեմ այն մարդուն, որուն քով կգտնվի հանրագրությունը և որ խոս-

տացավ 20—30 ստորագրություն հավաքել։ Եթե չես ուզեր հավատալ հիմա միասին եկուր...

— Կհավատամ,— կրկնեց Թորգոմ։

— Մեղք, որ մինչև հիմա ինձ չես ճանչցեր,— ըսավ Ճանիկ հանդիմանական շեշտով մը։

— Կկրկնեմ, որ խնդրին մեջ թյուրիմացություն կա, ես երբեք քու ուղղամտությանդ մասին կասկած հայտնել չուզեցի... միայն թե դուն մեկեն ի մեկ բռնկեցար։

— Բնականաբար կբռնկիմ, մյուսյու Թորգոմ, ճեր մուշուն էրի ենմեզ, կըսեն, ես իմ պատիվս միշտ բարձր կբռնեմ...

— Շատ իրավունք ունիս այդպես ընելու, պատիվը ամեն բան է մարդուս համար։

Այս ձևով խոսակցությունը քանի մը վայրկյան ևս շարունակվեցավ, որմե ետքը Ճանիկ մեկնեցավ Թորգոմի տունեն, կատարելապես հաշտված անոր հետ և շատ ուրախ տրամադրության ներքև։

— Մեծ փորձանք մը անցուցինք,— խորհեցավ ուսուցիչը, երբ առանձին մնաց։— Մաղ մնաց, որ Ճանիկը պիտի վշտացնեի և ամբողջ գործը խանգարեի... Ճշմարիտը հանցավոր եմ այսպես վարվելուս համար, հայտնի է, որ մարդը մեծ անձնվիրություն ցույց կուտա կոր, դյուրին բան չէ այսքան կարճ ժամանակի մեջ 60 ստորագրություն հավաքել։ Այս հաշողությամբ եթե շարունակե, կարծեմ 300 ստորագրություն պիտի կրնանք ժողվել և այն ատեն տեսնենք ինչ պիտի ըլլա մեր Մարգար էֆ-ն։

Ուսուցիչը վերստին սրտապնդված էր և վստահությամբ կդիտեր ապագան։

Հետևյալ օրը գնաց Պողոս էֆ-ին գտավ և անոր պատմեց գործին հաջող վիճակը։

Վաճառականը իր գոհունակությունը հայտնեց և ավելցուց.

— Քու մարդուդ ըսե, որ եթե ստորագրությունները հարյուր հիսունի հասնին՝ ալ թող հոգևեն չիյնա ու հանրագրությունը քեզի բերե։

— Թերևս մինչև հիմա 150-ի հասած է,— գիտել տվավ Թորգոմ։

— Այն ատեն վաղը հանրագրությունը ա՛ռ և ինծի բե՛ր, որովհետև կորանցնելու ժամանակ չունինք։

— Այս իրիկուն կջանամ զինքը տեսնելու։

— Ստորագրողները ինչպե՞ս մարդիկ են,— հարցուց Պողոս էֆենտի։

— Ամենքն ալ պարկեշտ, պատվավոր, գիտակից թաղեցիներ են,— հավաստեց ուսուցիչը։

— Դուն մեկիկ մեկիկ քննեցի՞ր։

— Գրեթե այսինքն... Ճանիկը այնպես ըսավ։

— Աչքովդ տեսա՞ր։

— Չէ՛, հանրագրությունը ուրիշին հանձնած էր, չկրցի տեսնել, վաղը, մյուս օրը երբ բոլորովին լմնցնե, պիտի բերե հանձնե։

Այս բացատրությունը չգոհացուց վաճառականը, որ գոչեց.

— Կտեսնեմ, որ դեռ բան մը չէ ըրած... և ըլլալիք ալ չունի։

— Ինչպե՞ս,— բողոքեց ուսուցիչը,— բան մը չէ եղած, հապա 60 ստորագրությունները մեկ ու կես օրվան մեջ։

— Դուն տեսա՞ր, համրեցի՞ր...

— Չէ՛, բայց Ճանիկը սուտ չխոսիր։

— Ո՞վ գիտե...

— Բացարձակ վստահություն ունիմ իր վրա։

— Ատիկա բավական չէ։

— Ասկե զատ, Ճանիկը զիս կսիրե և ինձ կպատկառի, թերևս ուրիշները խաբե, բայց ինծի անանկ բան չըներ։

— Ատոնք վարժապետի խոսքեր են։ Դրական մարդու խոսք չեն,— գոչեց վաճառականը։— Ես եթե քու տեղդ ըլլամ, անմիջապես կերթամ այդ Ճանիկ ըսված մարդը կգտնեմ ու անպատճառ հանրագրությունը մեյ մը ձեռք անցնելով ստորագրությունները կքննեմ։

— Ես ատիկա փորձեցի և չհաջողեցա,— խոստովանեցավ Թորգոմ։

— Ինչպե՞ս,— հարցուց Պողոս էֆ։

— Ճանիկ դյուրազգաց մարդ է, իրեն համար անարգանք մը կհամարե կոր հանրագրությունը ցույց տալը, բոլոր ստորագրությունները չհավաքած։

— Ինք այդպես ըսա՞վ։

— Այո՛, նույնիսկ բարկացավ։

— Վա՛յ, վա՛յ։

— Եվ սպառնացավ հանրագրությունը կտոր-կտոր ընել։

— Ի՞նչ կըսես,— գոչեց վաճառականը հեգնական շեշտով մը։

— Հազիվ կարող եղա զինքը հանգստացնել և խնդիրը անուշ տեղը կապել։

— Անշուշտ հազար ներում խնդրելով։

— Ի՞նչ ընեի, ուրիշ ճար չկար։

— Եվ այսպես։ հանրագրությունը չտեսար։

— Ո՛չ, բայց վաղը կամ մյուս օրը անպատճառ պիտի բերե, և իսկույն ես ալ ձեզի կբերեմ։

— Այդ մարդուն մինչև հիմա ո՞րքան դրամ տվիր,— հարցուց վաճառականը։

— Առաջին անգամ 200 ղրուշ և երեկ ալ 150 ղրուշ։

— Քեզի եթե բան մը ըսեմ՝ չես բարկանար ա...

— Ինչո՞ւ բարկանամ։

— Լավ ուրեմն, դդումին մեկն ես եղեր, հիմա հասկցա։

— Ինչպե՞ս,— գոչեց ուսուցիչը հուզված։

— Այդ մարդը պարզապես քեզ կխաբե կոր, դրամ բրցնելու համար։

— Անկարելի բան է։

— Ես գրավ կդնեմ, որ այսպես է։

— Պողոս էֆենտի, հավատացեք որ կսխալիք կոր։

Վաճառականը չպատասխանեց և միայն ձեռքի անորոշ շարժում մը ըրավ, որ շատ գգվիչ չէր ուսուցչին համար, այս վերջինը դժգոհ կերպարանքով մը ոտքի ելավ և մնաք բարև ըսավ վաճառականին։

— Երկու օրեն երբոր հանրագրությունը ստորագրություններով բերեմ, այն ատեն պիտի համոզվիք, որ սխալեր եք,— ըսավ հաստատ շեշտով։

— Ինշալլահ... այն ատեն ըսած խոսքերս ետ կառնեմ, և կխոստանամ բացեն աղվոր նվեր մը ընել այդ քու վարպետորդի ճանիկիդ։

— Պիտի տեսնեք, որ իրավցնե արժանի պիտի ըլլա այդ նվերին։

Եվ Թորգոմ հաղթականորեն դուրս ելավ վաճառականի գրասենյակեն։

Սակայն քիչ մը ետքը մտատանջության մեջ ինկավ։

Կասկածանքը իր սիրտը պաշարեց։

— Արդյոք Պողոս էֆ. իրավունք ունի՞։ Ճանիկը զիս կխաբե՞ կոր,— խորհեցավ։

Եվ այս կասկածը հետզհետե սաստկացավ իր մեջը, մինչև որ իր թաղը հասավ։

— Պետք է որ միանգամ ընդմիշտ լուսաբանեմ այս կետը,— վճռեց։

Ասոր համար հարկ էր Ճանիկը գտնել և զայն ստիպել որոշ բացատրություն մը տալու։

Բավական դժվարին գործ մըն էր այս։ Մի առ մի պտտեցավ բոլոր այն սրճարանները, ուր սովորություն ուներ հաճախել Ճանիկ, բայց իզուր։

Բարեկամներ հարցուփորձեց և վերջապես իմացավ, որ հաճախ կգտնվեր հույն սրճարանի մը ետևի կողմը գտնվող սրահի մը մեջ, որ թղթախաղի հատկացուցած էր։

Դիմեց ցույց տված սրճարանը և արդարև հոն գտավ Ճանիկը, որ քանի մը ծանոթներու հետ թուղթ խաղալու զբաղած էր։

Երկու բարեկամները զիրար բարևեցին և Թորգոմ նստավ Ճանիկին քով։ Այս վերջինը այնքան զբաղած էր խաղով, որ բավական ժամանակ բնավ խոսք չուղղեց ուսուցչին։

Ի վերջո, պահ մը սիկարեթ վառելու համար թուղթերը վար դրավ և Թորգոմին ծռելով անտարբեր ձևով մը հարցուց.

— Ըսելի՞ք մը ունիս ինծի։

— Այո՛, անպատճառ կուզեմ քիչ մը հետդ տեսնվիլ,— պատասխանեց ուսուցիչը։

— Ի՞նչ բանի մասին։

— Սա մեր գործին մասին։

Ճանիկ թուղթերը կրկին ձեռք առավ և խաղը շարունակեց։

— Չե՞ս կրնար թուղթդ թողուլ,— ըսավ Թորգոմ։

— Չէ՛ ընկեր ունիմ,— պատասխանեց Ճանիկ,— եթե խոսելիք մը ունիս, խոսե՛։

— Կուզեի որ առանձին ըլլայինք։

— Վնաս չունի, ասոնք հույն են, հայերեն չեն գիտեր, ազատորեն կրնաս խոսիլ։

— Սա մեր խնդրին վրա տեղեկություն պիտի առնեի...

— Հոգ մի ըներ, կարգին է...

— Այո՛, բայց հանրագրության պետք ունիմ անպատճառ։

— Դեռ մյուսին քովն է։

— Մյուսը չե՞նք կրնար տեսնել. տեղը ո՞ւր է։

— Շիտակը տունը չեմ գիտեր։

Թորգոմ անհամբերության շարժում մը ըրավ, իսկ Ճանիկ անտարբերությամբ խաղը շարունակեց։

— Վա՛յ, շունշանորդի, ինչ գեշ թուղթ կուգա կոր,— մոմոաց պահ մը ետքը դժգոհ դեմքով մը, ամմա ուղուրսզ ոտք ունիս եղեր, քովս գալեդ ի վեր բախտս դարձավ։

— Կարճ կապե՛ ու դուրս ելլենք,— պատասխանեց ուսուցիչը։

— Անանկ է յա, երկու մեճիտիե կորուստ ունիմ, ձգեմ երթա՞մ։

— Սա հանրագրության խնդիրը պարզենք։

— Գետինն անցնի հանրագրությունը...

— Եղբայր, գոնե սա մարդը ով է նե՝ ըսե ես երթամ փնտռեմ։

— Աստված պելան տա այդ մարդուն։

Պարոն Թորգոմ լռեց ու քիչ մըն ալ սպասեց։ Ճանիկ կշարունակեր կորսնցնել և հետզհետե բարկությունը կավելնար։

— Ինչ ուղուրսուզ ես եղեր,— կրկնեց։

— Ես ի՞նչ հանցանք ունիմ,— պատասխանեց Թորգոմը։

— Սանկ քիչ մը քովես ելիր, տեսնենք ինչպես կըլլա, կարելի է բախտս կփոխվի։

Թորգոմ չպատասխանեց և տեղը անշարժ մնաց։

— Վայ շունշանորդի, բոլորն ալ պոշ,— գոչեց Ճանիկ թուղթերը առնելով,— աստծու սիրուն, սըտեղեն ելիր, պե՜ ՀԵՐԻՖ։

Այս անգամ ուսուցիչը ոտքի ելավ։

— Օ՜ֆ,— հառաչեց մյուսը։

— Բայց անպատճառ քեզ տեսնելու պետք ունիմ,— պնդեց Թորգոմ։

— Վաղը առտու ես քեզի կհանդիպիմ։

— Խոսք կուտա՞ս։

— Կուտամ, էֆենտիմ, կուտամ, անհո՛գ եղիր։

— Հատկապես պիտի սպասեմ։

— Սպասե՛, անպատճառ պիտի գամ, հանրագրությունն ալ հետս կբերեմ, դուն ալ կազատիս, ես ալ։

Թորգոմ մեկնեցավ ու վերադարձավ առուն, շատ արտաբեկ վիճակի մեջ։

Ճանիկի ընթացքը իրեն շատ տարօրինակ թված էր։ Ինք այնպես կենթադրեր, որ Ճանիկ ստորագրություն հավաքելու զբաղած էր, մինչդեռ սրճարանը նստած թուղթ կխաղար։

— Գոնե 70—80 ստորագրություն հավաքած ըլլար, ես ալ իմ կողմես 30—40 հատ կհավաքեի ու գործը կլմննար,— մտածեց։

Եվ սակայն հետևյալ առտու Ճանիկ չերևցավ և այս պատճառավ ալ ավելի Թորգոմի մտատանջությունը ավելցավ։

Մինչև իրիկուն թաղին մեջ իզուր փնտռեց զայն։ Ոչ ոք կրցավ տեղեկություն մը տալ իր մասին։

— Ուրիշ տեղ մը գացած ըլլալու է, ըսին մեկ քանիները։

— Թերևս Գարթալ գացած է, երբեմն հոն կերթա, քանի մը շաբաթ կմնա, կարծեմ եղբայր ունի այնտեղ,— հավաստեց մեկը։

— Մագրի գյուղ քրոջը գացած է գուցե,— ըսավ ուրիշ մը։

Բոլոր այս բացատրությունները ուրիշ արդյունք մը չունեցան՝ այլ եթե Թորգոմի մտատանջությունը ավելցնել։

Իրիկունը ուշ ատեն թաղեցի մը եկավ գտավ ուսուցիչը և ըսավ.

— Ճանիկ մեջտեղ ելավ, աչքդ լույս։

— Ո՞ւր է,— գոչեց Թորգոմ ուրախությամբ։

— Միչոյին գինետունը օղի կխմե կոր։

Թորգոմ իսկույն փութաց ցույց տված սրճարանը։ Արդարև Ճանիկ հոն էր, սեղանի մը քով և բարեկամի մը հետ կճնկեր։

Թորգոմ մոտեցավ իրեն։

— Բարև Ճանիկ աղա,— ըսավ ձայնը բարձրացնելով։

Մյուսը գլուխը վեր առավ և ուսուցիչը տեսնելով ըսավ.

— Աղեկ որ եկար, նստե՛ տեսնենք։

Ուսուցիչը տեղավորվեցավ աթոռի մը վրա։

— Երեկ առտու քեզի սպասեցի չեկար,— ըսավ։

— Ինչպես գայի,— գոչեց Ճանիկ,— ինչպես գայի...

— Ի՞նչ եղավ որ,— հարցուց Թորգոմ։

— Քիչ մնաց գլուխս պիտի պատռեր։

— Որո՞ւ գլուխը։

— Կեցիր որ պատմեմ, նախ օղի մը խմե տեսնենք։

— Կխմեմ, շնորհակալ եմ։

— Վա՛յ շունշանորդի, ասանկ բան գլխուս չէր եկած բնավ։

— Ի՞նչ պատահեցավ տեսնենք... բայց նախ սա մեր հանրագրությունը ի՞նչ եղավ։

— Խնդիրը ճիշտ ատոր վրա է։

— Քո՞վդ է։

— Կեցիր, որ պատմեմ, ինչ անհամբեր մարդ ես, սա օղիդ խմե մեյ մը։

Ուսուցիչը ստիպվեցավ գավաթը պարպել, որպեսզի Ճանիկ ժամ մը առաջ իր բացատրությունը սկսի։

— Ը՜, վա՜յ անպիտան մարդ,— գոչեց Ճանիկ,— երբեք մրտքես չէր անցներ, որ ասանկ ապուշություն մը պիտի ընե։

— Որո՞ւ կակնարկես կոր,— հարցուց Թորգոմ։

— Խմե նայինք,— պատասխանեց Ճանիկ,— բարկութենես այս իրիկուն ինքզինքս խմելու տվի։

— Բայց դեռ չհասկցանք, թե խնդիրը ի՞նչ բանի վրա է,— ըսավ ուսուցիչը։

— Յոթը մեճիտիե ալ համրած չըլլամ իրեն,— շարունակեց Ճանիկ։

— Բայց որո՞ւ վրա է խոսքդ։

— Ճանըմ, քեզի չըսի՞ որ հանրագրությունը մեկու մը հանձնած էի, որ 30—40 ստորագրություն հավաքե։

— Այո՛, ըսիր և ճիշտ ատոր համար ալ եկա տեղեկություն առնելու։

— Ատոր համար 142 ղրուշ համրեցինք իրեն։

— Այդ ալ գիտեմ։

— Հարկավ գիտես, քանի որ դրամը դուն տվիր։

— Է՛յ, հետո ի՞նչ եղավ։

— Այս առտու մարդը ելավ եկավ...

— Աղեկ ուրեմն,— ընդմիջեց Թորգոմ,— կհուսամ հանրագրությունը հետը բերավ և քեզի հանձնեց։

— Մտիկ ըրե, եղբայր, բայց նախ սա գավաթը պարպե... այս առտվան պես տակավին կյանքիս մեջ բարկացած չունեի։ Քովս եկավ թե չէ «սա հանրագրությունը տուր նայիմ» պոռացի։ Ի՞նչ պատասխան տա նե կհավնիս...

— «Դեռ չեմ լմնցուցեր ստորագրելու գործողությունը»։

— Իցիվ թե այնպես ըլլար... «հանրագրությունը քովս չէ» չըսե՞ մի... «էյ ի՞նչ եղավ», հարցուցի, «Պատռեցին» պատասխանեց...

— Պատռեցի՞ն մի,— պոռաց Թորգոմ տեղեն ցատկելով։

— Ասիկա լսելուս պես,— շարունակեց Ճանիկ,— ինչ ըլլալը չգիտցա, ականջներուս չուզեցի հավատալ...

— Բայց ինչպե՞ս կպատռեն հանրագրությունը,— գոչեց խեղճ ուսուցիչը, որուն հուզումը հետզհետե կավելնար։

— Մտիկ ըրե։ Մարդը հանրագրությունը կառնե և իր խոստումին համեմատ կսկսի ծանոթներուն ստորագրել տալ և կհաջողի 20 ստորագրություն ևս ավելցնել իմ հավաքած 60 ստորագրություններուս վրա։ Սրճարանի մը մեջ է եղեր և նոր մեկու մըն ալ ստորագրել կուտա կոր եղեր, երբ անծանոթ մարդ մը ներս կմտնե, կուգա հանրագրությունը կառնե «մեյ մըն ալ ես կարդամ» ըսելով և ահա, հանկարծ բարկությամբ կտոր-կտոր կպատռե, կարգ մը հայհոյանքներ ուղղելով քեզի...

— Ո՞վ է եղեր այդ թշվառականը,— գոչեց Թորգոմ։

— Չեմ գիտեր, եղբա՜յր, բայց ետևեն պիտի իյնամ ու պիտի գտնամ... թող առնելիքը ըլլա...

— Ի՞նչ օգուտ հանրագրությունը պատռելե ետքը...

— Գոնե վրեժնիս լուծենք։

Վրեժխնդրական այս ծրագիրը շատ չժպտեցավ պրն. Թորգոմին, որ չէր կրնար մխիթարվիլ այս պատահած փորձանքեն։

— Հատ մըն ալ խմե,— թելադրեց Ճանիկ։

— Այսպե՞ս կկատարես խոստումդ,— ըսավ ուսուցիչը հանդիմանական շեշտով մը,— հույսս քու վրադ դրած էի և ի փոխարեն ինչ դրամ որ ուզեցիր՝ ճարեցի ու հիմակ, ոչ թե ստորագրություններ ձեռք չանցան, այլ հանրագրությունն ալ մեջտեղեն անհայտացավ։

— Ես հանցանք ունի՞մ, հանցանքը այն ավանակինն է, որ թուղթը չճանչցած մարդուն ձեռքը տվեր է։

— Ես թուղթը քեզի հանձնեցի՝ հետևաբար քեզ կճանչնամ, իբրև եղածին պատասխանատու։

— Դուն ալ իրավունք ունիս,— խոստովանեցավ Ճանիկ,— բայց ես գործը ավելի շուտ հաջողցնելու համար հանրագրությունը այդ մարդուն տվի... Ինչ որ է, ալ կարճ կապենք, եղածը եղած է, ճար չի կա։ Հիմա պետք է դարմանին վրա մտածենք։

— Ի՞նչ դարման...

— Ճանըմ, դուն ալ շատ բռնաֆ մարդ ես, հանրագրությունը պատռեր է եղեր, ինչ ընենք, ուրիշ մը կգրես, լմնցավ գնաց, քսան փարայի թղթին վրա է խնդիրը։

Հույսի նշույլ մը փայլեցավ ուսուցչին աչքերուն մեջ։

— Գրելը դյուրին է,— ըսավ, պարունակությունը գրեթե գոց գիտեմ... կես ժամվան գործ է։

— Տեսա՞ր մի,— գոչեց Ճանիկ ուրախությամբ,— ի՞նչ կմտածես կոր... խմե՛ նայինք։

— Միայն թե պիտի կրնա՞ս շուտ մը կրկին ստորագրել տալ։

— Ատ գործը ինծի ձգե... դուն փարայեն խապար տուր։

— Ի՞նչ փարա,— հարցուց Թորգոմ զարմացած։

— Առանց փարայի կրնա՞նք ստորագրություն հավաքել... քեզի ամեն բան բացատրած եմ առաջվնե... զարմանալի մարդ ես, անանկ մը կխոսիս, որ իբր թե բանե մը տեղեկություն չունիս... քեզի մեկիկ մեկիկ չըսի՞, որ ստակ պետք է և թե քու այդ ստակը ինչ բանի պիտի գործածեմ։

— Այո՛, բայց անգամ մը տվինք դրամը։

— Անոնք ալ անգամ մը ստորագրեցին... հիմա քանի որ նորեն պիտի ստորագրեն, պետք է որ իրենց համար նորեն ծախք ընենք, ասիկա շատ բնական բան է։

— Էոյլե յա, էոյլե յա,— հաստատեց Ճանիկի քով նստողը, որ մինչև այն ատեն լուռ նստած էր։

Ճանիկ այդ մարդուն դարձավ և ժպտուն դեմքով մը ըսավ.

— Մեր վարժապետը շատ աղեկ տղա է, ամմա քիչ մը միամիտ է, գործնական ոգի չունի։

— Բայց եղբայր, ես հիմա կրկին 3—400 դրուշ փարա՞ պիտի տամ,— գոչեց Թորգոմ։

— Բնականաբար...

— Քեզի բան մը ըսե՞մ, այդ հանրագրութենեն ես հրաժարեցա...

— Այդ ալ քու գիտնալիք բանդ է։

— Միայն թե եղած վնասը կես առ կես բաժնենք։

— Ի՞նչ ըսել կուզես,— հարցուց Ճանիկ զարմացած։

— Քեզի 350 դրուշ չտվի՞...

— Այո՛, տվիր։

— Այդ գումարին գոնե կեսը ինծի վերադարձուր։

Ճանիկի կողմե մեծաշռինդ քահ-քահ մը պատասխանեց այս խոսքին։

— Ինչո՞ւ կծիծաղիս,— հարցուց ուսուցիչը։

Ճանիկ տակավին կարող չէր իր ծիծաղը զսպել, խնդալով հանդերձ, պոռաց սպասավորին.

— Ալեքո, շու շիշեի տոլտուր։

Հետո երբ հանդարտեցավ՝ Թորգոմին դարձավ և ըսավ։

— Իրավ շատ թոհաֆ մարդ ես եղեր։

— Ինչո՞ւ համար...

— Հիմա ինե 175 դրո՞ւշ կուզես կոր...

— Կարծեմ նույնիսկ ամբողջ գումարը պահանջելու իրավունք ունիմ, քանի որ գործ մը չէ տեսնված։

— Ժամ մըն է քեզի բացատրեցի եղածը... գործը շատ աղեկ տեսնված է, միայն թե հետո անակնկալ կերպով խանգարված է։

— Ատիկա իմ գիտնալիք բանս չէ։

— Կուզես գիտցիր, կուզես մի գիտնար։

— Ես դրամս ետ կպահանջեմ։

— Դուն սրտեղեն մեճիտիե մը կրնա՞ս տալ հիմա։

— Կատակի ժամանակ չէ,— գոչեց Թորգոմ բարկութենեն կարմրած։

— Կատակ չեմ ըներ կոր, լուրջ կխոսիմ։ Սըկե մեճիտիե մը տուր, սա օղիին հաշիվները մաքրենք... ողորմություն չեմ ուզեր կոր, պե՛, վաղը մյուս օր կվերադարձնեմ... Ալեքո, շիշեյի տոլտուր։

Ուսուցիչը հասկցավ, որ անօգուտ էր այդ դժնդակ տեսարանը շարունակել։ Սրտմտած ոտքի ելավ ու առավ քալեց, միտքը դնելով անգամ մըն ալ բարև չտալու Ճանիկին, մինչև այդ վերջինը զվարթ ձայնով մը կպոռար ետևեն։

— Վարժապետ, նորե՛ն տեսնվինք։

Ի

Մեր ընթերցողները բավական երկար ատեն պտտցուցինք տարաբախտ պրն. Թորգոմի հետ և անկեղծորեն ջանացինք, որ իր հանրագրությունը, որուն վրա այնքան հույսեր դրած էր, հաջողությամբ պսակվեր և սակայն Մեռոնսզ Ճանիկի միջամտությունը ամեն բան խանգարեց։

Հարկ է ըսել, որ Ճանիկ և ոչ մեկ ստորագրություն դնել տված էր հանրագրության ներքև և ինքն էր, որ պատռած ու մի կողմ նե-

տած էր զայն միամիտ ուսուցչեն 350 դրուշ շորթելէ ետքը։ Իրավ է, որ այդ դրամը օգուտ մը չէր ըրած իրեն և անոր մեծագույն մասը, եթե ոչ ամբողջությունը, կորսնցուցած էր թղթախաղի մեջ. որուն անդարմանալի մոլին էր այդ բախտախնդիր մարդը։

Հիմա կարծեք ժամանակը հասած է, որ դառնանք մեր իրական պատմության մյուս գլխավոր դերակատարներուն, որոնց հետքը կորսնցուցիք ժամանակ մը ի վեր։

Տիկին Սաթեն, Մարգար էֆ-ի կինը, հորմեհետե ամուսինը Ք. գյուղի Առժամյա Թաղ. Խորհուրդին ատենապետը հռչակված էր, փառքի գագաթնակետը կգտնվեր։

Ոչ միայն եկեղեցիին մեջ առաջին տեղը կգրավեր և ավագերեցեն մինչև հետին տիրացուն իրեն հանդեպ պատկառոտ ակնածանքով մը կվարվեին, այլ նաև թաղի մեջ տեսակ մը հեղինակություն կվայելեր։

Ամեն անոնք, որոնք Թաղ. Խորհուրդի հետ գործ մը ունեին, նախ կփութային իր աջակցության դիմել, որպեսզի բարեխոսե ամուսնույն քով և իրենց խնդրանքը հաջողցնե։

Վարժարանի մեջ պաշտոն փնտռող ուսուցիչներ և վարժուհիներ, հիվանդին ձրիաբար Ազգային Հիվանդանոց և զավակին որբանոց տեղավորելու հետամուտ թաղեցիներ, զավակնին որբանոց դնելու աշխատող սպասուհիներ, Աղքատախնամեն ամսական նպաստ ակնկալող չքավորներ ափ կառնեին Մարգար էֆ-ի տան դուռը և «հաներմը» տեսնել կուզեին։

Տիկին Սաթեն կընդուներ զանոնք կոկոզավիզ հպարտությամբ մը, խոստումներ կշռայլեր և հետո ճամփու կդներ։

Օր մը այսպիսի խնդրարկու մը հազիվ ճամփու դրած էր, երբ իր բարեկամուհի տիկին Նվարդ ներս մտավ։

— Օ՜ֆ,— հառաչեց տիկին Սաթեն,— աղեկ որ եկար, քիչ մը ժամանակ կանցնենք, ժամ մըն է, որ գլուխս տարան։

— Ի՞նչ կա նորեն։

— Սիրելիս, ամեն օր մեյ մեկ հոգի մեջտեղ կելլա, խնդիրք մը կհանե, ալ դիմացվելու բան չէ... բարով խերով Մարգար էֆ-ն Թաղական Խորհուրդի ատենապետ չըլլար...

— Ի՞նչ վնաս ունի, դուն բարիք գործելը կսիրես։

— Այո՛, բայց վերջապես ամեն բանի համար իմ վրաս իյնալու չեն։

— Մասնավոր օր մը որոշե և այդ օրը միայն ընդունե դիմում ընողները։ Այն ատեն գոնե շաբաթը անգամ մը քեզ կձանձրացնեն։

— Իրավունք ունիս, շատ աղեկ մտածեցիր։

— Օրինակի համար՝ երկուշաբթի օրերը։

— Այո՛, երկուշաբթին ամենեն հարմարն է։

— Ուրեմն ես ալ երթամ ու երկուշաբթի օրը դամ,— ըսավ տիկին Նվարդ խնդալով ու մեկնումի կեղծ շարժում մը ընելով։

— Ինչո՞ւ համար,— հարցուց Սաթեն։

— Որովհետև ես ալ այսօր խնդիրքի մը համար եկած եմ քեզ տեսնելու։

— Չեմ հասկնար, ինչ խնդիրքի կակնարկես, բայց ապահովաբար Թաղ. Խորհուրդի հետ կապակցություն չունի։

— Ընդհակառակը, գործս Թաղ. Խորհուրդի ձեռքով կրնա լմննալ։

— Բայց քու էրիկդ ալ թաղական է, ինչո՞ւ անոր չես ըսեր։

— Անանկ բան մըն է, որ անոր չեմ կրնար ըսել, նույնիսկ չեմ ուզեր, որ ինք իմանա բուն իրողությունը... դուն քու կողմեդ պիտի ընես ամեն բան և ես բնավ չպիտի երևամ մեջտեղը։

— Այս ի՜նչ զարմանալի ու խորհրդավոր գործ է,— գոչեց տիկին Սաթեն,— շիտակը զիս կհետաքրքրես կոր... պատմե՛ տեսնենք։

— Նախ խոսք տուր, որ խնդիրս չպիտի մերժես,— ըսավ տիկ. Նվարդ խնդալով։

— Եթե ըլլալիք բան է, ինչո՛ւ մերժեմ։

— Շատ դյուրավ ըլլալիք գործ է, միայն թե պետք է որ Մարգար էֆենտիին հատկապես խոսիս և ստիպես, որ ընե։

— Ըլլալիքը ի՞նչ է...

— Թաղական Խորհուրդին կողմե թուղթ մը պիտի գրվի, աս է ամենքը, կտեսնաս, որ գործը էրկանդ ձեռքով կլմննա։

— Շատ աղեկ, սիրելի՛ս, բացատրե տեսնենք։

— Բայց խոստացիր, որ ամեն ջանք պիտի թափես...

— Կխոստանամ, աղվորս,— պատասխանեց Սաթեն,— ուրիշներուն համար ըրածս քեզի համար պիտի մերժե՞մ։

— Խոսք տուր նաև որ ըսելիքներս մեր մեջ պիտի մնան։

— Աս ինչ խորհրդավոր ձևեր, կխոստանամ, միայն թե շուտ խոսե՛, համբերությունս սպառեցավ։

— Լա՛վ, ահա պատմեմ։ Մորաքույրս կճանչնա՞ս... Էլպիս հանըմը։

— Չեմ հիշեր կոր, ձեզի շատ կուգա՞։

— Ընդհակառակը, բնավ չի գար, խաս գյուղ կնստի։

— Անանկ է նե՝ չեմ տեսած... արդեն առաջին անգամն է կարծեմ, որ մորաքրոջդ խոսքը կլսեմ կոր։

— Իրավունք ունիս, իր մասին խոսելու առիթ չեմ ունեցած մինչև հիմա։ Ինչ որ է, մորաքույր մը ունիմ խաս գյուղ, որ ամուսնացած է... էրիկը անպիտան մարդուն մեկն է, անոր համար հետը հարաբերություն չունինք։ Գիտես ա, երբեմն ընտանիքներու մեջ ասանկ անունի անպատվություն բերող մարդիկ կգտնվին։

— Անանկ է,— հաստատեց Սաթեն,— մենք ալ մեր մեջը անանկ մեկը ունինք։

— Ինչ որ է, չերկնցնեմ, ասկե քանի մը շաբաթ առաջ մարդը հիվանդ կիյնա, փեք աղեկնալու հույս չկա... խեղճ մորաքույրս միս մինակ ինչպե՞ս նայի... վերջապես մայրս և ես մտածեցինք թե հիվանդանոց դնելեն ուրիշ ճար չի կա, միայն թե, խնդիր մը կա...

— Ի՞նչ խնդիր։

— Այսինքն դժվարություն մը... կուզենք, որ ձրիաբար դնենք հիվանդանոց։

— Կարողություն չունի՞։

— Ճանըմ, քիչ մը կարողություն ունի՝ բայց վերջապես անբուժելի հիվանդության մը համար ամիսը 4—5 ոսկի տալը դժվար է, մանավանդ բժիշկը «ասանկ թերևս քանի մը տարի կապրի» կըսե կոր։ Ճիշտ ատոր համար խորհեցանք, որ ձրիաբար դնելու ճարը գտնենք։

— Աղե՛կ, բայց ես ի՞նչ կրնամ ընել, կամ Մարգար էֆ-ն ի՞նչ կրնա ընել, քանի որ մորաքրոջդ ամուսինը խաս գյուղ կնստի, հոն տեղի Թաղ. խորհուրդեն թուղթ մը առնելու է,— դիտել տվավ տիկին Սաթեն։

— Խաս գյուղեն անկարելի է թուղթ առնել,— պատասխանեց տիկին Նվարդ։

— Ինչո՞ւ համար։

— Որովհետև հոնտեղի Թաղ. խորհուրդը չքավորության

վկայագիր չպիտի ուզե տալ, քանի որ իրենց կարողությունը գիտե, գյուղին մեջ քանի մը տուն ունին...

— Էյ, ի՞նչ կուզես, որ ընե Մարգար էֆ-ն։

— Շատ պարզ բան մը,— պատասխանեց Նվարդը,— իբր թե հիվանդը այս թաղեն կըլլա ու այստեղի Թաղ. խորհուրդը կվկայե անոր չքավորությունը։

— Աղե՛կ, բայց եթե գործը երևան ելլե՞...

— Ինչպե՞ս կարելի է, ո՞վ պիտի քննե և ճշմարտությունը երևան հանե... խնդիրը մեյ մը հիվանդը հիվանդանոցին մեջ տեղավորելու վրա է, ալ անկե ետքը ոչ ոք անոր հետ կզբաղի։

— Չեմ գիտեր, բայց շատ կնճռոտ գործ մը կերևա կոր ըսածդը,— պատասխանեց տիկին Սաթեն վարանոտ դեմքով մը։

— Ամեն բան Մարգար էֆենտիին ձեռքն է,— վճռեց տիկին Նվարդ,— Թաղ. խորհուրդի քարտուղարին հրաման ընելուն պես թուղթը կգրե, ինքն ալ իբրև ատենապետ կստորագրե, կկնքե, լմնցավ դնաց։

— Բայց մյուս թաղականները դիտողություն չե՞ն ըներ։

— Անոնք իմանալու պետք չունին, ասիկա վիճաբանության դրվելու խնդիր մը չէ, այլ պարզ գործողություն մը, ես քիչ շատ գիտեմ այդ բաները, սիրելի Սաթեն, ամեն բան քու ձեռքդ է, ես գիտեմ, որ Մարգար էֆ-ն քու խոսքդ չկոտրեր, մանավանդ երբ որ քիչ մը վրա տաս... կաղաչեմ, կպաղատիմ, այս խնդիրքս չպիտի մերժես։

— Սիրելիս, գիտես որ ձեռքես եկած ծառայությունը չեմ մերժեր քեզի... բայց միտքս բան մը ինկավ, տրվելիք վկայագրին տակ ատենադպիրին անունն ալ պիտի գտնվի, և ատենադպիրը քու էրիկդ է, հետևաբար իրողությունը պիտի իմանա, մինչդեռ դուն կըսեիր, թե չես ուզեր, որ Միհրան էֆ-ն իմանա։

— Ճանըմ, վասն ատենադպիրի թող ուրիշ թաղական մը ստորագրե, այդ խնդիր չէ։

— Այս դժվարությունն ալ կարգադրեցիր,— պատասխանեց տիկին Սաթեն խնդալով,— լավ ուրեմն, այս իրիկուն կխոսիմ էրկանս, վստահ եղիր։

— Եվ անպատճառ վկայականը պատրաստել կուտաս։

— Եթե կարելի ըլլա...

— Պետք է որ բոլոր ջանքդ թափես։

— Կխոստանամ, սիրելիս։

— Շնորհակալ եմ, շատ մեծ ծառայություն մը մատուցած պիտի ըլլաս ինծի։

— Բան մը չէ, միայն թե...

— Դեռ ի՞նչ մնաց։

— Միայն թե,— պատասխանեց տիկին Սաթեն,— չեմ գիտեր, որ Մարգար էֆ. պիտի հավնի՞ այսպիսի կեղծ վկայական մը տալ իր ստորագրության ներքև... գիտես, որ թաղին մեջ հակառակորդներ ունի, որոնք առիթի մը կսպասեն իր վրա հարձակվելու համար։

— Կեղծ վկայականի խնդիր չկա մեջտեղը,— դիտել տվավ տիկին Նվարդ։

— Ինչպե՞ս,— գոչեց Սաթեն,— այդ պայմաններու ներքև տրված վկայականը կեղծ չէ՞։

— Ատոր կեղծ ըլլալը ես ու դուն միայն պիտի գիտնանք։

— Ինչպես,— գոչեց տիկին Սաթեն զարմացած,— իրողությունը չպիտի՞ հայտնեմ Մարգար էֆ-ին։

— Պետք չկա, սիրելիս, ինչո՞ւ ըսենք, որ իր տալիք թուղթը կեղծ պիտի ըլլա և պարապ տեղը դժվարություններ ստեղծենք։

— Շիտակը ես չեմ կրնար կոր այս խնդրին մեջեն ելլել,— խոստովանեցավ տիկին Սաթեն։

— Ես ամեն բան նախապես պատրաստած եմ, այնպես մը, որ ոչ ոք կրնա կասկածի երթալ, դուն միայն ճիշտ ու ճիշտ իմ տալիք խորհուրդիս համեմատ շարժե։

— Միտքդ բացատրե տեսնենք։

— Իբր թե այս թաղին մեջ պառավ ու աղքատ կին մը կա եղեր, որ ատենոք ձեր տանը սպասուհի կամ տուտու եղած է, և հիվանդն ալ այդ կնոջ ամուսինն է։ Այդ պառավը եկած քեզի աղաչած կըլլա և դուն ալ հանձն առած կըլլաս իր խնդիրը կատարել։ Այս կերպով Մարգար էֆ. երբեք չկրնար կասկածիլ, թե գործին մեջ կեղծարարություն կա։

— Այս ինչ վարպետություններ մտածեր ես,— գոչեց տիկին Սաթեն իր բարեկամուհիին հնարամտության վրա հիացած։

— Այս հնարքս աղեկ չէ՞։

— Հրաշալի։

— Ուրեմն գործը եղավ։

— Այո՛, այո՛, ապահով եղիր, այս իրիկուն անպատճառ կխոսիմ տուն գալուն պես։

— Եվ վաղը առտու վկայագիրը ստորագրված ու կնքված ինծի կհանձնես։

— Կհուսամ,— պատասխանեց տիկին Սաթեն։

— «Կհուսամը» բավական չէ, ապահով խոսք կուզեմ։

— Սիրելիս, թերևս անակնկալ դժվարություն մը մեջտեղ կելլա... ես ինչ գիտնամ։

— Դուն եթե կամք ընես, կրնաս հաջողցնել, ես վստահ եմ ատոր։

Եվ տիկին Նվարդ այնքան ստիպեց, որ իր բարեկամուհին կրկին ու կրկին խոստացավ ամեն միջոց գործածել իր ամուսինը համոզելու համար։

— Կնոջ անունը Մարթա է, իսկ հիվանդին անունը Գալուստ. Գալուստ Սիսակյան, աղեկ միտքդ պահե։

— Կեցի՛ր, թուղթի մը վրա գրեմ,— ըսավ Սաթեն և այդ երկու անունները նշանակեց։ Հետո գրեց նաև անոնց տարիքը և ուրիշ մեկ քանի անհրաժեշտ ծանոթություններ։

Երբ բոլոր այս գործողությունները լմնցան՝ Մարգար էֆենտիի կինը հարցուց.

— Բայց սիրելիս, ինչո՞ւ գործը կուզես գաղտնի պահել Միհրանիկ էֆ-ենն։

— Որովհետև ինք պիտի հակառակի,— բացատրեց տիկին Նվարդ,— և պիտի ստիպե, որ ամսականով հիվանդանոց դրվի, քանի որ մորաքույրս քիչ շատ կարողություն ունի...

Տիկին Նվարդ մեկնեցավ, հետևյալ օրը անպատճառ գալու պայմանով։

Իրիկունը կերակուրեն ետքը, երբ Մարգար էֆ. և իր կինը առանձնացան իրենց սենյակը, տիկին Սաթեն ըսավ.

— Այսօր սիրտս այնքան գեշ եղավ, որ չեմ կրնար պատմել։

— Ի՞նչ եղավ,— պատասխանեց Մարգար էֆ. անտարբեր շեշտով մը։

— Սեղանին վրա չդիտեցի՞ր, կերակուր ալ չկրցա ուտել, ախորժակ չունեի։

— Չդիտեցի,— պատասխանեց ամուսինը։

— Ջիղերս բոլոր թունդ ելած են, հիվանդի պես բան մըն եմ։

— Բայց ի՞նչ պատահեցավ,— գոչեց Մարգար էֆենտի անհամբեր։

— Շատ հուզվեցա...

— Կռի՞վ ըրիր, մեկու մը դե՞մ բարկացար։

— Չէ՛ ճանըմ, որո՞ւ հետ կռիվ պիտի ընեմ։

— Ուրեմն ի՞նչ եղավ...

— Մարգար էֆ., տեսնա՞ս, ի՞նչ խեղճություն, ի՞նչ թշվառություն, սիրտդ կտոր-կտոր կըլլա։

— Ո՞վ, որո՞ւ համար կլսոսիս...

— Մարթային մասին...

— Մարթան ո՞վ է։

— Չես ճանչնար, կեցի՛ր որ բացատրեմ, Մարթա ըսածս մեր տունը ատենոք սպասուհի էր, իր ձեռքը մեծցած եմ... այս թաղը կնստի եղեր, չէի գիտեր։ Այսօր հանկարծ ելավ, եկավ։

— Էյ, ի՞նչ պատահեր է իրեն։

— Ինչ պիտի ըլլա, էրիկը մեկեն ի մեկ հիվանդ ընկեր է, բժիշկ բերեր են. նայեր, ըսեր է, որ աղեկնալիք բան չէ, բայց չի ալ մեռներիր, կքաշե...

— Ամենուն ալ կրնա պատահիլ ատանկ բաներ։

— Մարթան ըսես, ավուր հացի կարոտ, թշվառության մեջ, ինչ ընելիքը չիյտե կոր, ալ այնչափ լացավ, այնչափ լացավ, որ սիրտս չդիմացավ, շատ գեշ եղա։

— Քիչ մը դրամ տայիր,— ըսավ Մարգար էֆ. միշտ անտարբեր։

— Քանի մը ղուրուշ տվի, բայց ինչ օգուտ ունի, անոր ուզածը ուրիշ բան է... ալ ոտքերս ինկավ, այնքան աղաչեց, որ խոսք տվի խնդիրը կատարելու։

— Կուզե կոր որ Աղքատախնամեն ամսակա՞ն մը կապվի։

— Չէ՛,— պատասխանեց տիկին Սաթեն,— կուզե կոր, որ իր հիվանդ էրիկը հիվանդանոց դրվի։

— Հիմա հասկցա խնդիրը,— պատասխանեց Մարգար էֆենտի,— Թաղական խորհուրդեն իր չքավորությունը հաստատող թուղթի մը պետք ունի։

— Ճիշտ գուշակեցի՛ր... ամեն, այդ թուղթը վաղը առտու պատրաստել տուր, սա կնկանը ձեռքեն ազատիմ, վաղը պիտի գա, խոսք տուր որ անպատճառ կըլլա։

— Ճանըմ, քանի որ աղքատ է՝ վկայական մը կգրենք, կուտանք, այդ դյուրին է, բայց նախ մեկ քանի ձևակերպություններ կան ըլլալիք, ուստի քանի մը օրեն թող գա թուղթը առնելու

— Ի՞նչ ձևակերպություն,— հարցուց տիկին Սաթեն մտահոգ դեմքով մը։

— Մենե մեկը պիտի երթա քննություն կատարե ու իր չքավորությունը հաստատե։

— Ճանըմ, ես կճանչնամ զիրենք, իմ վկայությունս բավական չէ՞...

— Չէ՛,— ըսավ ամուսինը կտրուկ կերպով։

— Է, դուն վկայե, որ աղքատ է, լմնցավ գնաց, քու խոսքդ ո՞վ կասկածի կրնա ենթարկել։

— Օրինավորությունը կպահանջե, որ թաղականներեն մեկը երթա, օրինավոր քննություն կատարե։ Այդչափ աճապարելու պետք չկա, թող քանի մը օր համբերե։ Դուն իրենց հասցեն տուր ինծի, ես վաղը մեկը կղրկեմ... Միհրանիկ էֆ-ին կըսեմ, թող ան երթա։

— Միհրանիկ էֆենտին, անկարելի բան,— գոչեց տիկին Սաթեն հուզված։— Ճանըմ, քննության պետք չկա, ես գիտեմ որ աղքատ է,— պնդեց տիկին Սաթեն...— ասկե զատ հասցեն չեմ գիտեր...

— Ժամեն կհասկնանք...

— Օֆ, Մարգար էֆենտի, նեղություն կուգա կոր վրաս, սա գործը լմնցուր երթա. թող այս անգամ ալ առանց ձևականության ըլլա... կարծես ամեն գործերնիդ շատ օրինավոր է տե՛...

— Բայց չեմ հասկնար, որ ինչու քննության կհակառակիս կոր։

— Պարապ տեղը ժամանակ պիտի անցնի, խեղճ կինը կարողություն չունի... ավուր հացի կարոտ է, կըսեմ կոր... վաղը առտու այս գործը լմննալու է։

— Բայց, կնիկ, հիվանդանոցի հոգաբարձութենեն մեզի խիստ պատվեր եկած է, որ լավ քննությամբ չքավորությունը հաստատելե ետքը վկայագիր տանք...

— Ճանըմ, անոնք ի՞նչ գիտեն թե քննությունը կատարեր եք թե ոչ։

— Ան տեղ Օհան էֆենտի մը կա, որ դյուրավ մանթար չի կլլեր։

— Օհան էֆ-ն ո՞վ է։

— Հոգաբարձու Օհան էֆ. Ներսեսյանը... անիկա մեր թուղ-

թովը չպիտի բավականանա, ինքն ալ իր կողմե քննություն պիտի կատարե և եթե պզտիկ մնանք, ի՞նչ պիտի ընենք։

— Պարապ խոսքեր, մինչ հոս պիտի գար տե քննություն պիտի ըներ... պարզապես խոսքս կոտրելու համար դժվարություններ կստեղծես կոր...

— Ինչո՞ւ խոսքդ կոտրեմ, ե՞րբ բան մը ըսեր ես տե, չեմ կատարեր։ Չեմ ըներ կոր չէ, միայն թե օրինավորության սահմանին մեջ կուզեմ գործել։

— Խեղճ կնկանը քովը պզտիկ պիտի մնամ վաղը։

— Պզտիկ մնալու բան չկա։

— Պատվույս վրա խոսք տվի, որ թուղթը վաղը պատրաստ պիտի ըլլա...

— Երկու օր վերջը թող ըլլա...

— Աղջկանս գլխուն վրա երդում ըրի... արդեն միշտ կնայիս որ ամենուն քովը զիս խաղք ընես... առտրվնե ի վեր կրած հուզումներս բավական չէր, հիմակ ալ դուն կշարշարես կոր զիս...

Եվ տիկին Սաթեն սկսավ լալ, ջղաձգորեն ուսերը թոթվելով։

Մարգար էֆ. ստիպվեցավ խոստանալ իր կնոջ հետևյալ առտու վկայագիրը պատրաստելու՝ առանց քննության, տիկին Սաթեն հանդարտեցավ, արցունքները սրբեց և ըսավ.

— Հեմ կուզեմ, որ այս վկայականին տրվիլը մարդ չիմանա։

— Լրագիրներուն մեջ ծանուցում ընելու չենք ա... փեք-փեք թաղականները պիտի իմանան։

— Չէ՛, անոնք ալ իմանալու չեն։

— Գոնե Միհրանիկ էֆ. իբրև ատենադպիր պիտի իմանա, ինքն ալ պիտի ստորագրե։

— Չէ՛, Միհրանիկ էֆենտին բնավ իմանալու չէ,— գոչեց տիկին Սաթեն։

— Ինչո՞ւ համար,— հարցուց Մարգար էֆենտի զարմացած։

Տիկին Սաթեն անմիջապես չպատասխանեց, համոզիչ պատճառ մը կփնտռեր մտովի, առարկությունը արդարացնելու համար։

— Զարմանալի բան մը եղեր ես այս իրիկուն,— դիտել տվավ

Մարգար էֆ.— ինչո՞ւ չես ուզեր, որ Միհրանիկ էֆ-ն իմանա վկայական մը տրված ըլլալը։

— Պետք չէ որ իմանա, կըսեմ կոր,— պնդեց տիկին Սաթեն։

— Աղեկ, բայց պատճա՞ռը...

— Արժանապատվությանս կդպչի,— գոչեց Սաթեն։

— Առ քեզի նոր այլանդակություն մըն ալ,— պատասխանեց ամուսինը։

— Ոչ թե միայն իմ՝ այլ քու ալ արժանապատվությանդ կդպչի։

Մարգար էֆ. սկսավ քահ-քահ խնդալ։

— Խնդալու բան չկա,— գոչեց տիկին Սաթեն բարկությամբ,— լսի՞ քեզի, որ Մարթան ատենոք մեր տունը սպասուհի եղած էր։

— Ըսի՛ր, է՛յ ատկե ի՞նչ կելլա։

— Չեմ ուզեր, որ իմացվի, թե մեր նախկին սպասուհիին ամուսինը ձրիաբար հիվանդանոց դրեր ենք։

— Միհրանիկ էֆ. ի՞նչ գիտե, որ Մարթան ձեր քովը սպասուհի եղած է։

— Չգիտեր, բայց բերնե բերան կիմացվի։

— Խենթ խոսքեր։

— Եթե Միհրանիկ էֆ-ն անպատճառ պիտի ստորագրե՝ չեմ ուզեր, վազ անցա... արդեն կտեսնեմ կոր ինծի դեմ թշնամություն մը ունիս այս գիշեր...

— Խենթ խոսքեր մի ըներ...

— Արդեն ժամանակ մը ի վեր ընթացք բռնած ես ինծի հանդեպ...

Մարգար էֆ. չպատասխանեց։

— Օտարականի մը պես կվարվիս կոր հետս։

Մարգար էֆ. կրկին լուռ մնաց։

— Շունի չափ արժեք չունիմ աչքիդ առջև։

Մարգար էֆ. լռությունը շարունակեց։

— Պատճառն ալ կգուշակեմ կոր... ուրիշ կնկան խելք տված ես... ինչ դժբախտ կնիկ եմ եղեր...

Եվ տիկին Սաթեն կրկին լալ սկսավ, Մարգար էֆ. անհամբեր կերպով մը սենյակին մեջ ժուռ գալ սկսավ, իր սիկարեթը քաշելով։ Տիկինին հեծկլտուքը հետզհետե կավելնար։

— Տղա մի՛ ըլլար,— գոչեց վաճառականը,— պարապ տեղը ինքզինքդ հիվանդ պիտի ընես։

— Դուն ես պատճառը, եթե հիվանդ ըլլամ,— հեծկլտաց տիկին Սաթեն։

— Սուս եղիր, վազ անցանք, ուզածդ կընենք,— գոչեց ամուսինը։

— Վաղը առտու անպատճառ... Մարդ չպիտի իմանա։

— Չէ՛ մարդ չպիտի իմանա։

— Մանավանդ Միհրանիկ էֆ-ն։

— Մանավանդ Միհրանիկ էֆենտին,— կրկնեց վաճառականը։

Տիկին Սաթեն հանդարտեցավ։ Հաղթանակը տարած էր։

Հետևյալ առտու կանուխ՝ տիկին Սաթեն իր պահանջումը կրկնեց և ըսավ.

— Քեզի խորհուրդ մը տա՞մ, փոխանակ խորհրդարան երթալու և հոն գրելու վկայականը, լուր զրկե և հոս բերել տուր քարտուղարը։

— Ատիկա աղեկ խելք ըրիր,— պատասխանեց Մարգար էֆենտի։

Տիկին Սաթեն այս հավանութենեն քաջալերված՝ իսկույն ծառան զրկեց և տուն կանչել տվավ քարտուղարը, պատվիրելով նաև որ հետը բերե Թաղ. Խորհուրդի պաշտոնական նամակաթուղթը և կնիքը։

Կես ժամ ետքը վկայականը գրված ու կնքված էր։

— Դուն կրնաս երթալ,— ըսավ վաճառականը քարտուղարին։

Հետո իբրև ատենապետ թուղթը ստորագրեց և խոսքը կնոջը ուղղելով, հարցուց.

— Ատենադպիրին ստորագրությունը ի՞նչ պիտի ընենք։

— Ամեն Մարգար էֆ. դուն ալ պարապ բաները խնդիր կընես, ես վասն ատենադպիրի կստորագրեմ։

— Քու անունո՞վդ։

— Չէ, ճանըմ, անճանաչելի անուն մը կդնեմ, լմնցավ գնաց։

— Բայց ատիկա զեղծարարություն կըլլա։

— Զեղծարարության ի՞նչ կա, սուտ պոնո չպիտի շինենք։

փարա չպիտի առնենք ա... պարզապես խեղճ կնոջ մը բարիք պիտի ընենք։

— Աղեկ, բայց լավագույն չըլլա՞ր, որ Միհրանիկ էֆ-ի ստորագրել տանք։

— Անկարելի է, խոսք չե՞ս հասկնար։

— Հա՛, մոռցա, արժանապատվության խնդիրը կա... բայց գոնե ուրիշ թաղականի մը ստորագրել տանք։

— Մինակ քու ստորագրությամբդ զրկենք նե չըլլա՞ր,— հարցուց տիկին Սաթեն։

Մարգար էֆենտի վայրկյան մը խորհեցավ և ըսավ։

— Կարծեմ կըլլա, ավելի աղեկ է անանկ ընել, քան կեղծ միջոցներու դիմել։

Վաճառականը մեկնեցավ, գոհ և ուրախ, որ օձիքը ազատած էր կնոջ ձեռքեն։

Երկու ժամ ետքը տիկին Նվարդ եկավ և անձկությամբ հարցուց, թե ինչ եղած էր իր գործը։

— Ահավասիկ ուզածդ,— պատասխանեց Սաթեն հաղթականորեն վկայականը բարեկամուհին կարկառելով։

— Կեցցե՛ս,— գոչեց մյուսը և Սաթենի վիզը նետվելով այտերը համբուրեց։

— Դյուրի՞ն եղավ,— հարցուց։

— Մեկ խոսքիս վրա, անմիջապես կամքս կատարեց,— պատասխանեց Սաթեն։

— Սքանչելի տիպար ամուսին մը ունիս։

— Ինծի հաճույք պատճառելու համար բան մը չմերժեր։

— Շիտակը ես կվախենայի, որ չպիտի հաջողիս։

— Ես խոսք տված բանս կկատարեմ, որովհետև կարողությունս հասած բանին խոսք կուտամ։

— Ինչ որ է, շատ շնորհակալ եմ, զիս մեծ մտմտուքե մը ազատեցիր, հիմա թուղթը անմիջապես խաս գյուղ պիտի ուղարկեմ, որպեսզի այսօր իսկ հիվանդը տանին հանձնեն։

Այս ըսելով տիկին Նվարդ վկայականը բացավ և կարդաց.

— Ա՜ս ի՞նչ է,— գոչեց,— ատենադպիրի ստորագրություն չկա։

— Ի՞նչ ընենք, ատենադպիրը էրիկդ է և չուզեցիր, որ էրիկդ իմանա։

— Աղեկ, բայց վասն ատենադպիրի ստորագրություն մը դնելու է այստեղ։

— Մարգար էֆենտին ըսավ, որ չկա, իր անունը բավական է։

— Չէ՛, սիրելիս, կելլեն խնդիր կհանեն։

— Էյ հիմա ի՞նչ ընենք։

— Ատ դյուրին է, իբրև ատենադպիր էրկանս անունը կդնեմ, լմնցավ գնաց... գիրս կրնամ անոր գրին նմանցնել։

— Ես ատիկա մտածեցի, Մարգար էֆենտին չուզեց։

— Անոր բան մի ըսեր, թող անիկա նորեն չգիտնա։

— Ետքը փորձանք մը չի բանանք գլխունուս։

— Դուն հոգ մի ըներ։

Եվ Նվարդը գրիչը առնելով, իր որոշումը գործադրեց և հաղթականորեն ըսավ.

— Հիմա ամեն բան կարգի մտավ։

***

Քանի մը օր ետքը, կեսօրե վերջ ժամը 2-ին միջոցները հիվանդանոցի հոգաբարձու Օհան էֆ. Ներսեսյանը Մեծ Նոր Խանի սենյակը կմտներ։

— Էո՜ֆ,— ըսավ, թաշկինակովը ճակատը սրբելով,— բրինձն ու բաթաթեսը այսօր առի ղրկեցի... երկու ամսվան կբավե։

— Երկու օր առաջ հիվանդ մը բերին, ղրկեցինք հիվանդանոց,— ըսավ գրագիրը։

— Ամսականավո՞ր...

— Չէ՛, ձրի։

— Ձրի՞ մի,— գոչեց Օհան էֆենտի բարկաճայթ,— ես չըսի՞ որ ալ ասկե ետքը ձրի հիվանդ չենք կրնար ընդունիլ... ծախքին տակեն չենք կրնար կոր ելլել, եղբա՛յր։

— Ասիկա շատ թշվառ, չքավոր մեկն է եղեր։

— Ինչ կուզե, թող ըլլա։

— Թաղական խորհուրդեն ալ օրինավոր վկայական ունի։

— Խերն անիծեմ Թաղական խորհուրդին ալ, վկայականին ալ։

— Չենք կրնար մերժել։

— Մեյ մը ինծի հարցնելու էիք։

— Ժամանակ չկար, հիվանդը կարելի չէր այստեղ սպասցնել։

— Ո՞ր թաղեն։

— Ք. թաղեն։

— Նայիմ սա վկայականը։

Գրագիրը տետրակին մեջեն հանեց վկայականը և տվավ Օհան էֆ-ին, որ զայն ուշադրությամբ կարդաց երկու անգամ։

Հանկարծ զարմանքի ու սրտմտության ձև մը առավ դեմքը։

— Գալուստ Սիսակյան,— մոլտաց ակռաներուն մեջեն,— Գալուստ Սիսակյան, ծո հա՛, ո տը՛ր... վա՛յ շունշանորդի, չքավոր հե՞... վայ էտեպսիզլեր... ծո քենե զենկին է...

— Կճանչնա՞ս զինքը,— հարցուց գրագիրը։

— Ի՞նչ ըսել է, մեր գյուղեն է,— գոչեց Օհան էֆենտի, որուն բարկությունը հետզհետե կավելնար։

— Գատը գյուղե՞ն...

— Չէ՛, ճանըմ, խաս գյուղեն, իմ բուն ծննդավայրս խաս գյուղն է... ծո քանի մը հատ տուն ունին, ասկե զատ չարշըն ալ երկու խանութ ունին...էլ պու հեպսինի պաստրտը, պու պենտե յոք տը...

— Բայց վկայականը Ք. թաղեն տրված է,— դիտել տվավ գրագիրը։

— Սուտ է, էֆենտիմ, սուտ, մարդը ծնած օրեն խաս գյուղեն չէ հեռացած, ամմա, որովհետև խաս գյուղի Թաղ. խորհուրդեն Գալուստին չքավորության վկայագիր չէին կրնար հանել տալ, Ք. Թաղեն հանել տվեր են... Ծո, ուրամմազտան Միհրան էֆ-ն ալ ստորագրեր է...

— Կարելի է մարդը խաբած են...

— Խաբա՞ծ են մի... խաբեբայությունը ընողը զաբը ատ էտեպսիզն է,— գոչեց Օհան էֆենտի,— ատ Գալուստ ըսածը, Միհրան էֆենտիին կնոջ մորաքրոջ էրիկն է...

— Տեղն ի տեղոք գիտեք կոր...

— Սինսիլենին կճանչնամ...

Եվ այս առթիվ, Օհան էֆ. խոշոր հայհոյանք մը ուղղեց սինսիլեին հասցեին։

Եվ Օհան էֆ. ուժգին շարժումով մը վկայականը առավ, գրպանը դրավ և հետո ժամացույցը նայեցավ։

— Ժամ 3-ը կուգա կոր ճիշտ ժամանակն է, Միհրան էֆ-ն գրասենյակը կըլլա...

Քառորդ ժամ ետքը կմտներ Միհրանիկ էֆ-ի գրասենյակը, մինչ այս վերջինը թիկնաթոռին մեջ ընկղմած, թերթ կարդալու զբաղած էր։

— Բարև՛, Միհրանի՛կ էֆենտի,— ըսավ հոգաբարձուն, մտերմական շեշտով մը։

— Աստծու բարին,— պատասխանեց Միհրան։

— Այսօր ցավակցություններս հայտնելու եկա,— ըսավ Օհան էֆենտին։

— Ի՞նչ բանի համար,— հարցուց վաճառականը զարմացած։

— Խեղճը մեր գյուղացին կսեպվի, որովհետև ես ալ խաս գեղցի եմ, ինչալլահ անցավոր հիվանդություն է...

— Բայց որո՞ւ վրա կխոսիս։

— Ճանըմ, մեր Գալուստ աղային վրա... Սիսակյան Գալուստ աղան... պապա մարդ է...

— Հա, մեկեն ի մեկ հիվանդ ընկեր է, կինս անցած օր կըսեր կոր,— պատասխանեց Միհրան անտարբեր շեշտով մը։— Ողուրուզին մեկն էր արդեն հազիվ տարին քանի մը անգամ երեսը կտեսնեի... շիտակը սիրած մարդս չէր։

— Այո՛, գիտեմ որ իրարու հետ շատ բարեկամ չէիք,— պատասխանեց Օհան էֆենտի,— բայց ինչ որ է, ձեր ազգականն է։ Հիվանդությունը ի՞նչ է։

— Աղեկ մը չեմ գիտեր, անբուժելի է եղեր, բայց բժիշկը ըսեր է, որ դեռ երկար ատեն կրնա ապրիլ։

— Էյ, հոգ չէ,— պատասխանեց Օհան էֆ,— փառք Աստուծո, նյութական կարողությունը տեղն է։

— Այո՛, կարծեմ քանի մը կտոր կալված ունի,— ըսավ Միհրան էֆ.— այսինքն կինն է ունեցողը։

— Կնոջն է եղեր, իրն է եղեր, միևնույն բանը չէ՞...

— Այնպես է։

Միհրան էֆ. հայտնապես նեղություն կզգար այս խոսակցությենեն, որ վերջապես երևույթ չուներ։ Այդ Գալուստը իր բնավորությամբ, վարք ու բարքով անտանելի մեկը եղած էր, և երբեք իր ազգականներուն համակրության չէր արժանացած։

Օհան էֆ. սակայն տակավին չէր ավարտած։ Ծիկարեթ մը վառեց և ըսավ.

— Հիմա ո՞ւր է հիվանդը։

— Չեմ գիտեր... կարծեմ հիվանդանոց մը պիտի դնեին, կինս բաներ մը ըսավ, բայց միտքս չմնաց... շիտակը այդ մարդը ալիս բնավ չհետաքրքրեր։

— Արդյոք ո՞ր հիվանդանոցը դնելու միտք ունին,— հարցուց Օհան էֆենտի։

— Աղբա՛ր, դուն ալ հիվանդանոցիդ համար հաճախո՞ղ ճարելու ելեր ես,— գոչեց Միհրան խնդալով։

— Չէ, հետաքրքրության համար կուզեմ հասկնալ։

— Իրավ որ չեմ գիտեր։

— Չե՞ս գիտեր,— գոչեց Օհան էֆ. զարմացած։

— Չէ՛, չեմ գիտեր,— կրկնեց մյուսը ամենայն հանդարտությամբ։

— Չե՞ս գիտեր, որ արդեն հիվանդը մեր Աղգային հիվանդանոցը ղրկված է...

— Չեմ գիտեր, տեղեկություն չունիմ։

— Չե՞ս գիտեր, որ իբրև չքավոր վկայական մը տրված է ձեր Թաղ. Խորհուրդեն...

— Մեր Թաղ. Խորհուրդը ի՞նչ գործ ունի ատոր մեջ, Գալուստ աղան խաս գյուղ կբնակի...

— Բայց տրված վկայականին տակ, իբրև ատենադպիր քու ստորագրությունդ կա։

— Իմ ստորագրությո՞ւնս,— գոչեց ափ ի բերան մնացած,— անկարելի բան է։

— Քու և ատենապետ Մարգար էֆ-ի ստորագրությունները և Թաղ. Խորհուրդի կնիքը։

— Խենթ բաներ կըսես կոր, Օհան էֆ,— պատասխանեց Միհրանիկ խնդալով։

— Խենթ բաներ մի՞... ա՛ռ նայե։

Եվ հոգաբարձուն անոր երկնցուց վկայագիրը։ Միհրանիկ առավ թուղթը, ուշադրությամբ կարդաց և ըսավ.

— Աս իմ ստորագրությունս կեղծ է, գիրը իմս չէ...

— Հապա Մարգար էֆենտիի՞նը։

— Անոր ստորագրությունը կեղծ չերևար կոր,— խոստովանեցավ Միհրանիկ,— ճիշտ իր գիրն է։

— Հապա կնի՞քը...

— Կնիքը մեր Թաղ. Խորհուրդի կնիքն է, ըսելիք չկա,— հաստատեց Միհրանիկ էֆենտի։

— Ինչպե՞ս կբացատրես այս խնդիրը։

— Իրավ, որ խելքս չի հասնիր կոր... վկայականը ինծի տուր, քննություն մը կատարեմ... ամեն պարագային իմ ստորագրությունս կեղծ է, ես բանե մը խապար չունիմ, այս մասին պատվույս վրա երդում կընեմ...

— Կհավատամ խոսքիդ,— պատասխանեց Օհան էֆ.,— բայց այս խաբեբայությունը ո՞վ է ըրած, ան կուզեմ հասկնալ։

— Թուղթը թող քովս մնա, վաղը հարցուփորձեմ։

— Չէ՛, այս թուղթը պիտի պահեմ առայժմ։

— Ինչպես որ կուզես...

— Մարգար էֆենտին հիմա իր գրասենյակը կգտնվի՞։

— Հավանորեն։

— Երթանք ուրեմն միասին զինքը տեսնենք։

— Սիրով կուգայի, բայց խիստ կարևոր գործի մը համար մեկու մը կսպասեմ կոր, հիմա ուր է կուգա, ժամադիր եղած ենք հոս։ Եվրոպացի մըն է, վաղն առտու ալ պիտի մեկնի։

— Ես առանձին կերթամ ուրեմն,— պատասխանեց Օհան էֆ. ոտքի ելլելով։

Քանի մը վայրկյան ետքը կմտներ Մարգար էֆենտիի գրասենյակը։ Վաճառականը սեղանին առջև անցած՝ գրելու զբաղած էր։ Սովորական բարևտուքեն ետքը թիկնաթոռ մը ցույց տվավ հյուրին՝ և ըսավ։

— Նստեցե՛ք, Օհան էֆենտի, հրաման մը ունի՞ք արդյոք։

— Քավ լիցի,— պատասխանեց հոգաբարձուն,— խնդիր մը կա, կուզեմ լուսաբանել։

— Ի՞նչ խնդիր...

— Այս օրերս ձեր Թաղ. Խորհուրդին կողմե հիվանդի մը համար չքավորությունը հաստատող վկայական մը տվի՞ք։

— Այո՛, տվի,— փութաց պատասխանելու վաճառականը,— շնորհակալ եմ, հիվանդն ալ ընդունվեր է...

— Այդ հիվանդը Գալուստ Սիսակյանն է, այնպես չէ՞։

— Կարծեմ ատանկ անուն մըն էր, աղեկ մը միտքս չէ... կինս ատ մարդուն ամուսինը կճանչնա կոր, Մարթա ըսավ, ինչ ըսավ, ժամանակին իրենց տունը սպասուհի է եղեր, հիմա ավուր հացի կարոտ մնացեր են...

— Նելեր իշիտիեորրզ,— մոլտաց Օհան էֆենտի քթին տակեն, հետո ավելցուց.

— Այդ վկայականը ո՞վ ստորագրած էր։

— Ես,— պատասխանեց վաճառականը։

— Ուրի՞շ...

— Մենակ իմ ստորագրությունս կար, չուզեցի ատենադպիրին ստորագրել տալու համար ժամանակ կորսնցնել... մտածեցի, որ իմ անունս բավական ծանոթ է և կրնա վստահություն ներշնչել։

— Մարգար էֆ, շարաշար խաբեր են ձեզի։

— Ի՞նչ կըսես...

— Բացարձակ իրողությունը այս է... ձեր թաղին մեջ Գալուստ Սիսակյան անունով չքավոր աղքատ չկա։

— Ինչպես չկա,— գոչեց վաճառականը, որուն զարմանքը հետզհետե կավելնար։

— Գալուստ Սիսակյանը խաս գյուղ կնստի և կալվածատեր է։

— Կարծեմ դուն կսխալիս կոր, Օհա՛ն էֆ,— պատասխանեց վաճառականը թեթև ժպիտով մը,— այնքան կասկածոտ ես, որ ամեն տեղ խաբեբայություն կտեսնես։

— Այս գործին մեջ ոչ թե միայն խաբեբայություն կա, այլ նաև կեղծարարություն...

— Կեղծարարություն,— գոչեց վաճառականը հուզված,— ի՞նչ ըսել կուզես, ո՞վ ըրեր է կեղծարարություն։

— Չեմ գիտեր, ատիկա դուք պիտի փնտռեք, գտնեք։

— Բայց նախ կեղծարարության ապացույցը տեսնենք...

— Իշտե ապացույցը,— ըսավ Օհան էֆ. և վկայականը հանձնեց Մարգար էֆ-ին։

Վաճառականը առավ թուղթը, բացավ և զարմացական ճիչ մը արձակեց՝ տեսնելով Միհրան էֆ-ի կեղծ ստորագրությունը։

— Ես թուղթը հանձնած ատենս այս ստորագրությունը չի կար, ետքեն ավելցուցեր են,— գոչեց։

— Հիմա Միհրան էֆ-ի քովեն կուգամ կոր, պատվույն վրա հաստատեց, թե ինք բանե մը տեղեկություն չունի և թե այս ստորագրությունը իրը չէ։

— Ատոր տարակույս չկա...

— Հիմա տեսա՞ք, որ ինչ անպատկառ խաբեբաներու ձեռքը գործիք եղեր եք...

Վաճառականը չպատասխանեց։ Այս հայտնությունը խորին

հուզում մը հառաջ բերած էր իր մեջ, որովհետև կենթադրեր, որ իր կնոջ մատը կար այդ կեղծարարության մեջ։

— Այդ Գալուստ Սիսակյանը ո՞վ հանձնարարեց Թաղ. խորհուրդին,— հարցուց Օհան էֆ, որ կնշմարեր իր դիմացինին հարաճուն հուզումն ու շփոթությունը։

— Թաղ. խորհուրդը բանե մը տեղեկություն չունի,— խոստովանեցավ վաճառականը,— խաբվողը միայն ես եմ, եթե երբեք գործին մեջ խաբեություն կա։

— Դեռ կկասկածի՞ս,— դոշեց հոգաբարձուն։

— Շիտակը հավատալս չի գար կոր։

— Ուրեմն ուղղակի քեզի՞ հանձնարարեցին հիվանդը, ըսելով, որ ձեր թաղը կբնակի և թե շատ աղքատ է։

— Այո՛,— մրմնջաց վաճառականը։

— Ո՞վ էր այդ անծանոթ խաբեբան։

Վաճառականը լուռ մնաց։

— Հետո թուղթը որո՞ւ հանձնեցի՞ր,— հարցուց Օհան էֆենտի։

— Անոր...

— Այսինքն հիվանդին համար միջնորդի՞ն։

— Այո՛...

— Էյ, ձեր կողմե քննություն մը չկատարեցի՞ր։

— Պետք չտեսա, եղբա՛յր, հանձնարարողը այնքան վստահելի մեկն է որ...

— Խայտառակին մեկն է ըսե՛ սրվոր։

— Այս գործին մեջ գաղտնիք մը կա, անպատճառ պետք է լուսաբանել,— պատասխանեց վաճառականը։

— Քանի քանի անգամ հոգաբարձության կողմե գրեցինք Թաղ. խորհուրդներուն, որ ներկայացած մարդուն վկայական չգրեն ու մեր վրա չղրկեն,— պոռաց Օհան էֆ. ոտքի ելլելով,— որո՞ւ կըսես. պելան գլխներնեն տեֆ ընելու համար թուղթ մը կուտան ձեռքերնին, կղրկեն հիվանդանոց... հարցուցած ունի՞ն թե հիվանդանոցը ինչպես կդարձնենք կոր... վազ կնշտիմ պեն պու իշտեն, հրաժարական պիտի տամ, պիտի քաշվիմ, դիմացվելիք բան չէ, հեմ հոգնե, հեմ գործեդ եղիր, անկեց ալ ասանկ խաղերու եկուր... տուներ, խանութներ ունեցող մարդը իբրև չքավոր հիվանդանոցին մեջ... հոշ վար չպիտի գնեմ ա, վաղը դուրս նետել պիտի տամ, ինչ կուզե թող ըլլա...

— Ճանրմ, մեկ երկու օր վար դրեք, մինչև որ խնդիրը լուսաբանենք,— ըսավ վաճառականը,— ես կկարծեմ, որ թյուրիմացություն կա գործին մեջ։

— Գործին մեջ թյուրիմացություն չկա, խաբեբայություն կա, — շեշտեց Օհան էֆենտի,— այդ անձը ով է նե, աղեկ ֆյուլանը անցուցեր է գլուխդ, ինչպես որ դուն ալ ֆյուլանը մեր գլխուն անցուցիր։ Ինչ որ է, ես կերթամ կոր, այսօր վաղը խնդիրը լուսաբանելու է. գիտցած եղեք, որ հիչ չեմ նայիր, դուրս կնետեմ հիվանդնիդ...

Օհան էֆ-ի բաժանումեն քանի մը վայրկյան վերջ վաճառականը ջղագրգիռ դրությամբ մեկնեցավ գրասենյակեն և ուղղակի տուն գնաց։

— Հանըմը հո՞ս է,— հարցուց տան դուռը բացող սպասուհիին։

— Այո՛,— պատասխանեց այս վերջինը։

— Մինա՞կ է։

— Չէ, տիկին Նվարդը հոս է։

Մարգար էֆ. դժգոհության շարժում մը ըրավ։ Ինք կփափաքեր կինը առանձին գտնել և իսկույն բացատրություն պահանջել, հիմա ստիպված էր սպասելու, որ տիկին Նվարդ մեկնի, որովհետև չէր ուզեր, որ Սաթենը ոևէ կերպով պզտիկ մնար իր բարեկամուհիին քով։

Վեր ելավ և ուղղվեցավ երկու կիներուն գտնված սենյակը։

Հազիվ քառորդ մը ետքը Միհրանիկ էֆ-ն ալ եկավ։ Տիկինները բարևելե ետքը՝ վաճառականին դարձավ և այլայլած շեշտով մը հարցուց.

— Ճանրմ, ի՞նչ է այս վկայականին խնդիրը...

— Ի՞նչ վկայական,— ըսավ վաճառականը չգիտնալ ձևացնելով։

— Հիվանդի մը համար չքավորություն հաստատող վկայական մը տրվեր է մեր Թաղ. խորհուրդին կողմե...

Երկու կիները, որոնք ջերմ խոսակցության մը բռնված էին իրարու հետ, հանկարծ լռեցին և ուշադիր հետևեցան երկու մարդոց խոսակցության։

— Ես ալ կուզեմ այս խնդիրը լուսաբանել,— ըսավ վաճառականը։

— Եվ անմիջապես պետք է որ լուսաբանվի, որովհետև գործին մեջ զեղծարարություն կա,— գոչեց Միհրանիկ էֆ,— վկայականին ներքև իմ ստորագրությունս դրեր են, մինչ ես ատանկ թուղթ չեմ ստորագրած, ասանկ խաղություն կըլլա՞...

— Հիմա ամեն բան կհասկնանք,— ըսավ Մարգար էֆ,— ես թեև կուզեի առանձին կերպով այս խնդիրը դնել, բայց վնաս չունի, դուք ալ դուրսեն մարդիկ չեք, մեր մտերիմ բարեկամներն եք, ձենե ծածկելու բան մը չունիմ...

Վաճառականին այս խոսքերը մեծ զարմացում պատճառեցին Միհրանիկ էֆ-ին, որ անոնց իմաստը չկրցավ անմիջապես ըմբռնել և հարցուց.

— Ի՞նչ ըսել կուզես, Մարգար էֆ։

— Ըսել կուզեմ, որ այս գործին մեջ անշուշտ խաբեբայություն մը կա, որուն զոհ գացած եմ ես և ինե առաջ կինս։

— Տիկին Սաթե՞նը,— գոչեց Միհրանիկ զարմացած։

— Այո՛, անիկա ստիպեց զիս, որ վկայականը գրեմ... միայն թե վկայականին տակ միայն ես ստորագրեցի, մինչդեռ այսօր, Օհան էֆ-ին ցույց տված վկայականին ներքև քու ալ անունդ կա։

— Բայց կեղծ գրով,— շեշտեց Միհրանիկ։

— Ճի՛շտ է, հակառակը չեմ պնդեր. հիմա հասկնանք, թե այդ խաբեբայությունը ո՞վ ըրած է։

— Ի՞նչպես պիտի կրնաս հասկնալ...

Բոլոր այս խոսակցության միջոցին երկու կիները բացարձակ լռություն կպահեին և այս լռությունը, մանավանդ իր կնոջ լռությունը, զարմանք կպատճառեր Մարգար էֆենտիին։

— Դուն ի՞նչ կըսես այս եղածին,— հարցուց վերջապես վաճառականը, խոսքը իր կնոջ ուղղելով։

— Էո՞ֆ աման,— գոչեց տիկին Սաթեն,— պարապ բաներ խնդիր կընեք, ժամերով վրան կխոսիք, բան մըն է եղեր լմնցեր է, ալ ի՞նչ պետք կա երկար վրան խոսելու...

— Ճանըմ, ի՞նչ ըսել է, ասիկա պզտիկ խնդիր չէ...

— Հապա շատ մեծ խնդիր է,— պատասխանեց Սաթեն հեգնաբար։

— Հարկա՛վ, արժանապատվության խնդիր է... վաղը զեղծարարությունը իմացվի նե՝ ամեն մարդ մեզի պիտի դատապարտե։

— Ո՞վ պիտի իմանա... դուք եք, որ գործը կմեծցնեք կոր, որո՞ւն հոգն է, որ այդ խնդրով պիտի զբաղի...

— Այսօր գրասենյակ ըլլայիր տե՝ Օհան էֆ-ին իրարանցումը տեսնեիր...

— Ճանըմ, այդ Օհան էֆենտին ալ թող քիթը ամեն բանի մեջ չխոթե,— գոչեց տիկին Սաթեն բարկությամբ։

— Խնդիրը այդ չէ,— պատասխանեց Մարգար էֆ. չոր կերպով,— այլ այն է, որ երբ վկայականը քեզի հանձնեցի միայն իմ ստորագրությունս կար, ետքը ո՞վ Միհրան էֆենտիին ստորագրությունը ավելցուցեր է հոն...

— Ես ի՞նչ գիտնամ,— պատասխանեց տիկին Սաթեն, առերևույթ անտարբեր ձևով մը։

— Բայց թուղթը քեզի հանձնեցի։

— Ես ալ եղածին պես իր տեղը տվի։

— Այսինքն սպասուհի՞ն...

— Այո՛,— պատասխանեց տիկին Սաթեն, հուզումեն դողահար ձայնով մը։

— Ի՞նչ էր այդ գետինն անցնելիք կնկան անունը, Մարթա՞ ըսիր, ի՞նչ ըսիր...

— Այո՛,— պատասխանեց տիկին Սաթեն, որուն հուզումը հետզհետե կավելնար։

— Անանկ է նե, այդ կնիկը վկայականին տակ Միհրան էֆ-ին անունը ավելցուցած ըլլալու է։

— Էո՞ֆ, մեռամս հանեցիր, սա խոսքը մեջտեղեն վերցուր,— գոչեց տիկին Սաթեն,— սինիրներս ոտքի ելան, եղած լմնցած բաներին վրա ալ այսչափ չեն խոսիր...

— Հիմա մեկը ղրկե, ատ Մարթա օլանախը հոս կանչել տուր։

— Ատանկ բան չըլլար,— ըսավ Սաթեն։

— Ինչո՞ւ համար։

— Ես այդ կինը չեմ կրնար գտնել հիմա...

— Այդ ի՞նչ խոսք է, հասցեն չե՞ս գիտեր...

— Չեմ գիտեր...

— Այս գործին իմ խելքս չի հասնիր կոր,— գոչեց վաճառականը զայրացած,— ասոր տակը ինչ կա նե, ըսեք հասկնանք... սա ինչ խորհրդավոր բաներ են...

— Խորհրդավոր բան չկա, վկայական մը գրվեցավ, լմնցավ, ամբողջ եղածը աս է... ալ չեն առնիր անցնիր։

— Ճանըմ, պարապ խոսք մի ըներ, սա կեղծ ստորագրության հարցը պետք է անպատճառ երևան հանել... սա Մարթան հոս կանչել տուր նայիմ։

— Տունը չեմ գիտեր...

— Ես կրնամ փնտռել ու երևան հանել, քանի որ այս թաղին մեջ կբնակի։

— Նայինք դեռ հո՞ս է,— պատասխանեց տիկին Սաթեն։

— Ո՞ւր պիտի ըլլա։

— Ես ի՞նչ գիտնամ, ըսավ որ էրիկը հիվանդանոց դնելե ետքը՝ ինքն ալ ուրիշ տեղ պիտի երթա։

— Սուտ խոսքեր...

— Սուտ իրավ, աս ա՛ս է։

— Շիտակը խոսե՛, այս կեղծ ստորագրությունը ո՞վ դրավ վկայականին տակ,— պոռաց վաճառականը ծայրահեղ բարկությամբ մը։

Տիկին Սաթեն չպատասխանեց։ Բայց տիկին Նվարդ, որ մինչև այն ատեն լուռ մնացած էր, հանդարտ ձայնով մը ըսավ.

— Շիտակը կուզե՞ս, Մարգար էֆենտի, ես դրի այդ ստորագրությունը։

Այս խոսքերը ափ ի բերան թողուցին թե՛ Մարգար և թե՛ Միհրան էֆ-ները։

— Դո՞ւն այդ կեղծ ստորագրությունը դրիր,— գոչեց Միհրանիկ էֆենտի, չուզելով հավատալ իր ականջներուն։

— Կեղծիք չկա մեջը,— պատասխանեց տիկին Նվարդ՝ միամիտ դեմքով մը,— քու անունդ դրի, ուրիշ գոյություն չունեցող մեկու մը անունը չդրի՞ ա... կնիկդ չե՞մ, քու անունդ իմ անունս ըսել չէ՞... ի՞նչ այս աստիճան իրար կանցնիք կոր...

— Բայց ատոր զեղծարարություն կըսեն։

— Ինչ կուզեն թող ըսեն, գողություն չըրի՞ ա, մարդ չի մեռցուցի՞ ա, էրկանս կողմե թուղթ մը ստորագրեցի։

— Բայց ի՞նչ պետք ունեիր ատանկ բան մը ընելու։

— Գալուստ աղա օլաճախը հիվանդանոց տեղավորելու համար...

— Մորաքույրդ չէ՞ր կրնար ամսական մը տալով հիվանդանոց դնել։

— Ալ այդ անպիտան մարդու համար դրամ չտրվիր,— գոչեց տիկին Նվարդ։

— Ճանըմ,— միջամտեց Մարգար էֆ.— ես բնավ չեմ կրնար կոր այս գործին մեջեն ելլել... խնդիրը մեր Սաթենին սպասուհիին վրա է, դուք ինչո՞ւ կստիպվիք կոր գործին մեջ մտնելու, տիկին Նվարդին մորաքույրը ի՞նչ գործ ունի ասոր մեջ։

— Մարգար էֆենտի,— գոչեց Նվարդ,— ձեզի բան մը ըսեմ, ձեր տիկինը բնավ հանցանք չունի, ամբողջ պատասխանատուն ես եմ... հիվանդանոց դրված մարդը՝ մորաքրոջս էրիկն է... ես եկա աղաչեցի տիկին Սաթենին, որ այս պզտիկ ծառայությունը ընե ինծի։

— Հապա նախկին սպասուհի Մարթա՞ն ով է,— հարցուց վաճառականը ապշահար։

— Անանկ կին չկա մեջտեղը, Մարթա հանըմը իմ մորաքույրս է, հիմա հասկցա՞ք։

— Հոս մեր թա՞ղը կբնակի։

— Չէ՛, Խաս գեղ կնստի...

— Խաս գե՞ղ,— գոչեց Մարգար էֆ. այլայլած,— ուրեմն մենք ծայրե ծայր կեղծ վկայական մը տվեր ենք...

— Ճիշտ հոս է խնդրին ծանրությունը,— դիտել տվավ Միհրանիկ էֆ։

— Ամա՛ն, մեռախ ելավ, քիչ մըն ալ ուրիշ խոսք ըրեք,— ըսավ տիկին Սաթեն։

— Ուրիշ խո՞սք մի,— պոռաց վաճառականը,— աս ի՞նչ զարմանալի բան է, չե՞ք ըմբռներ կոր թե ի՞նչ ծանրակշիռ բան մըն է եղածը...

— Ճանըմ, սխալեցանք, բան մը ըրինք, ալ երկար չեն ըներ...

— Սխալեցա՞ք բայց փորձանքը մենք պիտի կրենք։

— Փորձանքի ինչ կա,— պատասխանեց տիկին Նվարդ,— չըլլա նե ամսական մը կուտանք, լմնցավ գնաց խոսքերնին բեֆ-բեֆ փարայի կանցնի։

— Գործը մեջտեղ ելլե նե, ի՞նչ երեսով թաղին մեջ պիտի պտտինք, ինչպե՞ս խորհրդարան պիտի երթանք. մեր ընկերներուն ի՞նչ պատասխան պիտի տանք, երբ մենք բացատրություն ուզեն, մեր հակառակորդներուն բերանը ինչպե՞ս պիտի գոցենք...

— Ո՞վ պիտի իմանա,— ըսավ տիկին Սաթեն,— կարծես ամեն

մարդ գործ չունի տե, ատով պիտի զբաղին, դուք ձայն չհանեք նե, մարդ չիմանար, մի վախնաք։

— Օհան էֆ-ին բերանը ինչպե՞ս պիտի գոցենք։

— Հիվանդանոցին նվեր մը կընենք, կլմննա, կերթա...

Վաճառականը տեսավ, որ անկարելի է երկու կիներուն խոսք հասկցնել, որովհետև իրենց գործած արարքին ծանրության գիտակցությունը չունին։

— Իրավունք ունի, այս խոսքը գոցենք,— ըսավ,— կտեսնեմ, որ իրար չենք հասկնար կոր...

Քիչ հետո երկուքը մեկեն ուղղվեցան սալոնին քով գտնված փոքրիկ խուցը։

Վաճառականը խնամքով գոցեց դուռը և իր բարեկամին մոտենալով, ըսավ.

— Հիմա որ խնդիրը հասկցանք և տեսանք, որ ամբողջ հանցանքը իմ կնոջ և տիկին Նվարդինն է, ի՞նչ պիտի ընենք...

— Գործը ծածկելու միջոց մը խորհելու է։

— Այո՛, բայց ի՞նչ կերպով։

— Նախ կեղծ վկայականը մեջտեղեն վերցնելու է։

— Մեղք որ Օհան էֆ-ին քովեն չառինք,— հառաչեց Մարգար էֆենտի։

— Ես ուզեցի, բայց չտվավ։

— Ինչ որ է, ես կջանամ զինքը համոզելու և վկայականը մեջտեղեն վերցնելու։

— Ատով չլմննար սակայն,— դիտել տվավ Միհրանիկ էֆենտի։

— Դեռ ի՞նչ պետք է ընենք։

— Հիվանդին խնդիրը կմնա... հիմա որ անոր նյութական վիճակը մեջտեղ ելավ, բնականաբար չպիտի ձրի վար դնեն։

— Ատիկա իրենց գիտնալիք բանն է։

— Ինչպե՞ս իրենց գիտնալիք բանն է,— գոչեց Միհրանիկ էֆ,— մարդիկը մեր ստորագրության վստահելով զինքը ընդուներ են։

— Ինչ որ ալ ըլլա, ես ատոր չեմ խառնվիր,— պատասխանեց Մարգար էֆ,— ես վկայականը մեջտեղե վերցնելու գործը վրաս կառնեմ, դուն ալ այդ հիվանդին խնդիրը կարգադրե...

— Կարճ ճամփան ամսական մը կապել տալն է։

— Ինծի ալ այնպես կուգա։

— Իցիվ թե մարդ իմացած չըլլար,— ըսավ Մարգար էֆենտի։

— Մեր ընկերներուն բան մը ըսի՞ր։

— Չէ, բայց վկայականը քարտուղարին գրել տվի, չեմ գիտեր թե անիկա ըսա՞ծ է։

— Այդ կետը ստուգելու է։

— Հիմա մեկը կղրկեմ, քարտուղարը հոս կանչել կուտամ,— ըսավ Մարգար էֆենտի։

— Այո՛, այո՛,— պատասխանեց Միհրանիկ,— այս գործը շուտով կարգավորելու է։

Վաճառականը իսկույն ծառան ղրկեց և բերել տվավ քարտուղարը։

— Պրն. Տիգրան,— ըսավ քարտուղարին,— կհիշե՞ս քանի մը օր առաջ քեզ առտու մը տուն կանչել տվի և վկայական մը գրել տվի։

— Այո՛,— պատասխանեց քարտուղարը,— չքավոր հիվանդի մը համար, որ հիվանդանոց պիտի ղրկվեր։

— Այդ մասին մեր թաղական ընկերներուն խոսք մը ըսի՞ր։

— Չէ՛, բան մը չեմ ըսած, անկե ի վեր Թաղ. Խորհուրդը չէ գումարված։

— Ավելի աղեկ ուրեմն, որովհետև պարզապես խաղի եկած ենք, այդ չքավոր ընտանիքը մեր թաղին մեջ չէ եղեր...

— Արդարև ես ալ զարմացա, որովհետև թաղեցի ըլլալովս պետք է որ ճանչնայի այդ տեսակ չքավոր մը, մանավանդ որ, ինչպես գիտեք, Աղքատախնամին ալ քարտուղարն եմ։

— Բայց ինչո՞ւ այդ առտուն դիտողություն չըրիր։

— Շիտակը Մարգար էֆ՝ չհամարձակեցա...

— Ինչ որ է, մենք խնդիրը երևան հանեցինք ու վկայականն ալ ջնջեցինք։

— Ասանկ բաներ կպատահին երբեմն,— պատասխանեց քարտուղարը փիլիսոփայաբար։

— Հիմա, որ խնդիրը կարգադրվեցավ, չենք ուզեր, որ իմացվի, որպեսզի պարապ խծբծանքներու տեղի չտրվի։

— Իրավունք ունիք։

— Ասոր համար ահա պետք է, որ վկայականին գործը գաղտնի պահվի։

— Անշուշտ... արդեն որո՞ւ կուզեք որ ըսենք, բնականաբար միմիայն թաղականները պիտի գիտնան։

— Նույնիսկ պետք չի կա, որ անոնք ալ իմանան։

— Ատիկա անկարելի է,— պատասխանեց քարտուղարը։

— Ինչո՞ւ համար,— հարցուց Մարգար էֆ. զարմացած։

— Որովհետև վկայականը կգտնվի ընդօրինակության տետրակին մեջ և ընդօրինակության տետրակն ալ միշտ թաղականներուն ձեռքին մեջն է։

— Եղբայր, ինչո՞ւ այդ վկայականին ընդօրինակությունը առիր, ի՞նչ պետք կար, զարմանալի բան։

— Բայց Մարգար էֆենտի, սովորություն է, որ մեր կողմե տրված բոլոր պաշտոնաթուղթերուն ընդօրինակությունը կառնենք։

— Ես չնշմարեցի, որ ընդօրինակեցիր։

— Այդ միջոցին զբաղած էիք։

— Էյ, հիմա ի՞նչ պիտի ընենք։

— Եթե կուզեք տետրակին մեջեն այդ երեսը պատռեմ վերցնեմ։

— Ամենեն կարճ ճամփան այդ է,— ըսավ Միհրանիկ էֆ։

— Այո՛, այո՛, անանկ ընենք, թող խնդիրը փակվի,— կրկնեց Մարգար էֆենտի։

— Ինչպես կփափաքիք, այնպես ընենք,— համակերպեցավ քարտուղարը։

Եվ ուրախ՝ իր պետերուն ծառայություն մը մատուցած ըլլալուն համար՝ գոհ սրտով մեկնեցավ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Մեր այս պատմած իրողությունները կանցնեին տագնապալից շրջանի մը մեջ, այսինքն ընդհանուր պատերազմի առաջին տարին։

Թերևս եկեղեցիին մեջ աթոռի մը համար ծագում առած խնդիրը շատ ավելի մեծ համեմատություններ պիտի առներ և Պողոս ու Մարգար էֆենտիների պայքարը տարիներ պիտի շարունակվեր, գրգռելով մտքեր և հուզելով թաղը, եթե անակնկալ պատահար մը վերջ չդներ այս ամենուն։

Կիրակի առտու մը, 1915 ապրիլ 12-ի աղետալի կիրակին՝ շշնկոց մը տարածվեցավ թաղին մեջ։

— Իմացա՞ր երեկ գիշերվան եղածը։

— Ի՞նչ է եղեր։

— Կես գիշերին եկեր պարոն Սուսերյանցը ձերբակալեր են իր տան մեջ։

— Ինչո՞ւ համար։

— Հայտնի չէ... բայց միայն ատիկա չէ... վարժապետն ալ բռներ են...

— Ո՞ր վարժապետը, Թորգո՞մը։

— Այո՛... հետո նույնիսկ Մարգար էֆենտին։

— Ի՞նչ կըսես, եղբա՛յր...

— Ընկեր Կայծունին ալ բռներ տարեր են...

Այս բոլոր տեղեկությունները, որոնք հետզհետե կհասնեին, ահ ու սարսափ սփռեցին ամբողջ թաղին մեջ։

— «Պայքար Լսարան»-ին մեջն ալ խուզարկություն կատարեր են ու բոլոր թուղթերը ժողվեր տարեր են... անդամներն ալ կըփնտռեն եղեր,— ըսավ նորեկ մը։

— «Շանթ Ակումբ»-ի անդամներն ալ ձերբակալված են,— գուժեց ուրիշ մը։

— Կեդրոնատեղին ալ հսկողության ներքև առնված է, ես հեռվեն տեսա, որ դռան առջև ոստիկան մը կսպասեր։

Նույն օրը այսպես ամբողջ թաղեցիները սոսկումի մեջ անցուցին։ Հետո լսվեցավ, որ ուրիշ թաղերու մեջ ալ նմանօրինակ ձերբակալություններ եղած են։ Եվ պակուցումը տիրեց ամեն կողմ։ Թաղականներեն ո՛չ ոք կհամարձակեր եկեղեցի երթալ, սրճարաններն ալ պարպված էին և ամեն մարդ կանուխ մը իր տունը կքաշվեր՝ սարսափահար։

Քանի մը օր ետքը ձերբակալվեցավ նաև Պողոս էֆ, ինչ որ սարսափը ավելի սաստկացուց։

Կըսվեր, թե բոլոր ձերբակալվածները հեռավոր վայրեր աքսորված էին, նույնիսկ պնդողներ կային, թե իրենցմե մեկ մասը կախված էին կեդրոնական բանտին մեջ։

Տիկին Շազիկ և տիկին Սաթեն, հուսահատության մատնված, ասդին-անդին դիմումներ կընեին՝ իրենց ամուսինները ազատելու համար։

Շնորհիվ ազդու միջամտություններու՝ Պողոս էֆենտի և Մարգար էֆենտի հաջողեցան քանի մը շաբաթեն ազատիլ և վերադառնալ իրենց տունը։

Միայն թե ազատ արձակված ատեն ոստիկանության պաշտոնյան իրենց սա խրատը տված էր։

— Ջըլլա, որ ասկե ետքը ազգին գործերուն խառնվիք մեյ մըն ալ։

Բայց արդեն երկու վաճառականները այդ խրատին պետք չունեին և արդեն իսկ, բանտին մեջ ալ ուխտած էին կարելի եղածին չափ հեռու փախչիլ ազգային շրջանակներե։

Իսկ խեղճ Սուսերյանց, Կայծունի և Թորգոմ չկրցան իրենց օձիքը ազատել և աքսորվեցան դեպի Ջանկըրը, ուր սակայն, հրաշքով մը, հաջողեցան ողջ մնալ և հազար ու մեկ անակնկալ արկածներե ետքը՝ հաջողեցան անցնիլ ռուսական բանակը։

Տարագրության փորձություններուն մեջ, նախկին հակառակորդները մտերիմ բարեկամներ դարձած էին իրարու։

Կովկասյան սահմանին վրա անոնք կողք կողքի կռվեցան ամբողջ պատերազմի ընթացքին։

Իրենց քաջագործությունները կամ բուն բառով հերոսությունները, պատմելու համար պետք է հատորներ լցնել, ուստի այդ հսկա աշխատությունը կձգենք ուրիշներուն։

Իսկ գալով ժամկոչ Վարդան աղբոր, որ սկզբնապատճառը եղած էր Շազիկ-Սաթեն պայքարին, իբրև գավառացի, ինքն ալ բռնեց աքսորի ճամփան և հազար ու մեկ տառապանքներե ետքը հասավ Հալեպ, ուր մնաց մինչև անգղիական գրավումը։ Զինադադարեն ետքը հաջողեցավ անցնիլ Եգիպտոս ու այժմ Ալեքսանդրիո Ազգային վարժարանին մեջ տնտեսի պաշտոն կվարե։

ՎԵՐՋ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԸ

Ա

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՈՐԾԻՉԸ

Ութ տարիե ի վեր ասդին-անդին տեսած ու լսածներովս կըրցած էի քիչ շատ գաղափար կազմել մեր մեջ հեղափոխական շարժումեն ծնած կարգ մը հարանուններու նշանակության մասին։ Այսպես՝ գիտեի, թե ինչ է տեռոր մը, գործիչ մը, հերոս մը, ընկեր մը, խմբապետ մը, հայդուկ մը, ավազակապետ մը, լիազոր ներկայացուցիչ մը և այլն և այլն։ Ինչ որ չէի կրնար ըմբռնել կամ չէի ըմբռնած տակավին, ան ալ «Արտասահմանի գործիչ»-ն էր, և ասիկա բնական է, որովհետև ինչպես անունեն ալ կերևնա, այդ տիպարն անկարելի էր Տաճկաստանի մեջ գտնալ։ Երբ պարագաները զիս դուրս նետեցին Վոսփորի ափերեն, եթե ոչ առաջին՝ գոնե հետին մտածումներես մին եղավ — «Լա՛վ, հիմա պիտի կրնամ վերջապես տեսնել արտասահմանի գործիչ մը»։

Աթենք գտնված միջոցիս հոնտեղի ծանոթներուս հարցուցի.

— Ձեր մեջը բնավ արտասահմանի գործիչ չի կա՞։

— Չէ՛, հատ մը կար, գնաց։

— Ի՞նչպես մարդ է արտասահմանի գործիչը, ի՞նչ կընե,— հարցուցի միամտորեն։

— Մեզի պես մարդ է, քիթ ունի, ականջ ունի, բերան ունի, կոտե, կխմե, կպառկի,— պատասխանեցին խնդալով։

Այս բացատրությունը գոհացուցիչ չէր, ու միշտ անորոշության մեջ մնացած էի արտասահմանի գործիչին մասին։

Ամիսներ ետքը, երբ Եգիպտոս կերթայի, շոգենավին մեջ աղոթքի մը պես կըսեի մտքես. «Ա՜խ, իցի՜վ թե սատանան զիս արտասահմանի գործիչի մը դեմ հաներ»։

Աստուծմե հույսս կտրած ըլլալով, ժամանակ մը ի վեր, երբ խնդիրք մը ունենամ, ուղղակի սատանային կդիմեմ։ Արդ, դուք ալ անանկ ըրեք, որովհետև, երբ Ալեքսանդրիա ելա ու հարցուցի, թե արտասահմանի գործիչ մը կա՞ր քաղքին մեջ՝

— Հապա՜,— պատասխանեցին միաձայն։

— Ո՞վ է։

— Կակայանցը։

— Կովկասցի՞ է։

— Այո՜։

Պարագաներ կան, ուր մարդ որչափ ալ պաղարյունությունը պահել ուզե՝ չի կրնար իր խանդը զսպել։ Գլխարկս օդը նետեցի ու գոչեցի.

— Կեցցե՜ համերաշխ գործունեություն։

Կհասկնաք անշուշտ, որ ուրախությունս չափ չուներ, գտած էի արտասահմանի գործիչ մը և անիկա կովկասցի՜ էր... այսինքն՝ փնտռած տիպարիս կատարելագործյալը։

Գալով արձակած բացագանչությունս՝ կարծեմ անհրաժեշտ է բացատրություն մը տալ, քանզի ընթերցողը կրնա տարօրինակ կամ անհարկի նկատել «կեցցե՜ համերաշխ գործունեություն»-ը։

Նախ ըսեմ, որ հայերու ժամադրավայր եղող սրճարանի մը մեջ կգտնվեի և հետո նույն օրը հասած էի Ալեքսանդրիա, այնպես որ չէի ճանչնար տափավին սեղաններուն շուրջը հավաքված ու նարտ խաղալու զբաղած պատվարժան անձերուն տրամադրություններն ու կարծիքները։ Վախեցա, որ մեծամասնությունը թշնամանած կըլլամ գուցե, եթե «կեցցե՜ հնչակ» կամ «կեցցե՜ Դրոշակ», կամ «կեցցե՜ միություն», կամ «կեցցե՜ հեղափոխություն» պոռամ, մինչդեռ համերաշխ գործունեությունն այն գեղեցիկ, առաձգական ու անիմաստ բառաձևերեն մեկն է, զոր կարելի է գործածել առանց վիրավորանքներե կասկածելու։

«Կեցցե՜ համերաշխ գործունեություն»։

Ահա բացագանչություն մը, զոր կրնաք արձակել ամեն վայրկյան ու ամեն տեղ, հեղափոխականներու կամ պահպանողականներու, վաճառականներու, կամ ավազակներու խմբի մը մեջ հավասարապես։

Արդեն «կեցցե»-իս արդյունքն անմիջական եղավ և անգամ մըն ալ հաստատեց զիս այն համոզումին մեջ, թե անիմաստ խոսք մը միշտ լավագույն ազդեցությունը կընե ամբոխին վրա։ Քանի մը սեղաններե հրավերներ ուղղվեցան ինծի։ Ընդունեցի մոտավորագույն սեղանին հրավերը, որուն քով նստած էին երկու տարիքոտ անձեր։

— Համերաշխ գործունեությո՛ւն,— ըսավ մին, աթոռ մը ցույց տալով ինծի,— այո՛, ճիշտ ասիկա է, որ կպակսի մեզի, մատերնիդ բուն վերքին վրա դրիք։ Նո՞ր եկաք Ալեքսանդրիա։

— Այս առտու։

Խոսակցության սկսանք, մինչ հետզհետե մյուս սեղաններեն մարդիկ անջատվելով կուգային կմիանային մերինին, նոր հասած օտարականի մը հրապուրանքեն բռնված։

— Կակայանցն ո՞ւր է, հոս չի՞ գար,— հարցուցի միջոց մը։

— Կուգա, բայց իրիկունն ուշ ատեն, ցերեկները կքնանա։

— Ի՞նչ գործ կընե հոս։

— Բան մը չըներ. հեղափոխական է։

— Ձգեցե՛ք սա պարապ մարդը,— գոչեց ներկաներեն մին, որուն անմիջապես ուրիշ ձայն մը պատասխանեց.

— Կներես, պարոն Կակայանցը պարապ մարդ չէ։

— Շատախոսին մեկն է։

— Շատ կխոսի, այո՛, բայց տրամաբանությամբ կխոսի։

Ու ահա՛ վիճաբանությունը տաքնալ սկսավ։ Իբրև նորեկ և խնդրի առարկա եղող անձին բոլորովին անծանոթ, բնականաբար իմ դերս բացարձակ չեզոքությենե տարբեր բան չէր կրնար ըլլալ։ Լռեցի և թող տվի, որ կիրքերը խոսին։

— Մարդը շեն-շնորհք համալսարանական է, հինգ տարի ժնև մնացեր է։

— Ան ըսավ, դուն ալ հավատացի՞ր։

— Եղբայր, ալպոմ մը ունի քովը, մեջը բոլոր ժնևի պատկերները կան։

— Ազեկ գործ մը գտանք իրեն, ֆրանսերեն քննություն մը չկրցավ տալ, որ ընդունվեր. ա՞ռ է համալսարանականդ։

— Դուք ի՛նչ հաստատելուս մարդիկ եք, լեզվագիտությունն ուրիշ բան է, անոր սորվածն ուրիշ բան։

— Ի՞նչ է սորվածը, անուն չունի՞։

— Ըսավ անունը, բայց մտքես ելավ. հիմա գա նե՝ կը-հարցնենք։ Լոկի-ով կվերջանա, բայց սկիզբը չեմ գիտեր։

— Ինչպե՞ս կապրի՝ խելք չի հասնիր,— ըսավ ուրիշ մը,— գործ մը չունի ու մենե աղեկ կուտե-կիսմե։

— Քենե դրամ ուզե՞ց։

— Չէ, բայց...

— Ուրեմն լռե՛։

Ու այսպես վեճը տևեց երկու ժամ, մինչև որ մեջերնես մին կոչեց հանկարծ.

— Կուգա կոր, կա՛րճ կապեցեք։

Կակայանցն էր...

***

Եթե ըսեմ, որ կովկասցի հեղափոխական մըն էր ներս մտնողը, կարծեմ պետք չի մնար նկարագրելու իր դեմքը։ Անմիջապես կերևակայեք ջրվեժացյալ մորուքով, գիսախիվ մազերով, լայն-եզր գլխարկով թուխ երիտասարդ մը սևազգեստ ու ձեռքը հաստ գավազան մը բռնած։ Երկու տեսակ կովկասցի չի կա. ամենքն ալ Կակայանց են։ Այդ մարդոց մազն ու մորուքը երբեք չեն զգացած մկրատի շփումը, և եթե ամեն մարդ կովկասցի ծներ աշխարհի երեսը, սափրիչները պիտի ստիպվեին հեղափոխական ըլլալ՝ ապրելու համար։

Երբ սրճարան եկավ՝ ճառագայթում մը կար դեմքին վրա։

— Մի լավ ավետիս,— գոչեց խոսքն ամենուս ուղղելով,— պատերազմ պետք է ծագի հույնին ու թյուրքին մեջ։ Այժմ ժամանակը հասել է գործելու. պետք չէ կորցնել մի րոպե։

Լռեց։ Երկու ձեռքով բռնեց հաստ գավազանը, վրան ծռեցավ քիչ մը, իյնալու ձևով, դեպի փողոց դարձուց գլուխը և երազուն նայվածքով մը շարունակեց իր խոսքը, ավելի ցած ձայնով, իբր թե ինքն իրեն խոսեր.

— Բայց ափսո՞ս, մարդ չունենք... կռիվի մարդ... ջիղ ունեցող, արյուն թափող մարդ։ Կազմակերպյալ խումբեր թեև կան... բայց ոչ բավականաչափ։

Ապա դեպի մեզ դարձավ։

— Ինչ որ է, ես անմիջապես, երբ պատերազմի լուրը բերող հեռագիրը կարդացի՝ գրեցի մեր ընկերներին, հուսամ նկատողության կառնվի իմ գրածները։ Պետք է շարժիլ... պետք է շարժիլ...

— Պարոն Կակայանց, եկուր քեզի հետ երթանք կռվելու,— ըսավ երիտասարդ մը ոտք ելլելով, իբր թե նույն վայրկյանին իսկ մեկնելու պատրաստվեր։

— Հերն եմ անիծել այն ռումանթիզմային, որ զիս գամել է այստեղ, առանց դորան ես այս ռոպեիս պետք էր լինեի Մասիսի գագաթում,— պատասխանեց Կակայանց և աթոռ մը առնելով եկավ նստավ քովերնիս։

Քիչ մը ատեն ալ շարունակեց Կակայանց իր տեսությունները պարզել թյուրք և հունական պատերազմին հետևանքներուն վրա ու հետո խորհրդավոր կերպով մը հաղորդեց մեզի,— խնդրելով, որ խոսքը մեջերնիս մնա,— թե կոմիտեթն արդեն պատրաստություններ ունի ժամանակը եկած ատեն «մի ընդհանուր շարժում առաջ բերելու Թյուրքահայաստանի գավառներում»։

Այս սրտապնդիչ տեղեկությունը մեզի տալե ետքը՝ Կակայանց ավելցուց.

— Է՜, ինձ մի բան չե՞ք հրամցնե։

Գարեջուր մը բերել տվին իրեն։

Հետո անխուսափելի վիճաբանությունը բացվեցավ օրվան խնդրին վրա. միությո՞ւն՝ թե անջատ գործունեություն, կեդրոնացո՞ւմ՝ թե ապակեդրոնացում և այլն։ Կակայանց կխոսեր լիաբերան՝ անընդհատ ծխելով։ Որովհետև տակավին չէի գիտեր ո՛ր կուսակցության պատկանիլը, հետևաբար չկրցա հասկնալ, թե կեդրոնացո՞ւմը կամ ապակեդրոնացումը կպաշտպաներ։

Երբ ընթրիքի ժամը մոտեցավ ու ամեն մարդ կպատրաստվեր մեկնելու՝ Կակայանց կեցուց մեզ՝ ըսելով.

— Պահ մի կացեք, մի բան պիտի ըսեմ ձեզ։

Եվ սկսավ պատմել թե երիտասարդ մը, որ հաճի Մարկոսի կամ Կիրակոսի խմբին մեջ կգործե եղեր, բռնվեր, երկու տարի բանտ մնացեր, հետո փախեր ու Կիպրոս ապաստաներ է, ուր հիվանդ ու չքավոր վիճակի մեջ կգտնվի եղեր։ Կակայանցի բարեկամներեն մին՝ «մի անձնվեր ընկեր», որ Կիպրոս է եղեր «գաղտնի պաշտոնով», հաղորդեր է իրեն այդ «նախկին հերոսի» տխուր վիճակը, մի անմիջական օգնություն խնդրելով։

— Պետք է նրան մի պան վճարեք, որ ղրկեմ վաղվա պոստով, դա անհրաժեշտ է,— ավելցուց Կակայանց իբրև վերջաբան իր պատմության։— Այդ երիտասարդը մի այնպիսի հերոս է, որի նման

եթե մի քիչ ավելի գտնվեր մեր ազգում, փրկության գործը տարբեր հանգամանք էր առնում։

Վեց հոգի հինգական ղուրուշ տվին։ Կակայանց դժգոհ կերպարանքով մը դրամը գրպանեց ու ելավ գնաց։

***

Ամիս մը ետքը, երբ Գահիրե կգտնվեի, հայկական սրճարանի դիմացեն անցած միջոցիս նշմարեցի Կակայանցը, որ հոն նստած կխոսեր, գլուխը խումբ մը մարդ հավաքած։

Որովհետև լավագույն բան մը չունեի ընելիք՝ ներս մտա։

Հարկ չի կա կարծեմ ըսելու, որ Կակայանց կխոսեր միությո՞ւն՝ թե անջատ գործունեություն, կեդրոնացո՞ւմ՝ թե ապակեդրոնացում և այլն խնդիրներու վրա։

Ես ալ մասնակցեցա վիճաբանության, պաշտպանեցի միության գաղափարը, հետո ցույց տվի, որ անջատ գործունեությունը լավագույնն էր, կեդրոնացումին ի նպաստ խոսեցա և վերջացուցի խոսքս ապակեդրոնացումի առավելությունները պարզելով։ Գիշերը վրա հասավ և միաբերան վճռեցինք, թե հարկ չի կար վիճաբանությունը շարունակելու, քանի որ ամենքս ալ համակարծիք էինք և փորերնիս անոթեցած էր։

Մեկնելու մոտ պարոն Կակայանց ըսավ։

— Կացեք մի քիչ, մի կարևոր պան ունեմ ձեզ ասելու։

Եվ պատմեց, թե «մի նախկին տեռոր», որ այժմ Վառնա կգտնվի եղեր, շատ խեղճ վիճակի մեջ, դիմում ըրեր է իրեն, որպեսզի քանի մը ոսկի ճարե ու ղրկե։ Կակայանց իր ժամացույցը — մի լավ ժամացույց Ժենևի լավագույն գործարաններից մեկից— վիճակահանության դրեր է այս նպատակով։

— Պարոննե՛ր, պետք է մի բան վճարել, դա մի հերոս է, որի նման եթե մի քիչ ավելի գտնվեր մեր ազգում, փրկության գործը տարբեր հանգամանք էր առնում։

Եվ գրպանեն հանեց թուղթ մը, ուր արդեն նշանակված էին նվիրատուներու անուններ. Ռումբ՝ չորս ղրուշ, Կայծակ՝ երեք ղրուշ, Պատուհաս՝ մեկ ղրուշ, Սուլթանի թշնամին՝ վեց ղրուշ, Վառող՝ հինգ ղրուշ և այլն։ Մենք ալ ստիպվեցանք մեյմեկ պզտիկ գումար վճարել կեղծանուններով։ Ես չորս ղրուշ տվի և ստորագրեցի «Նիդրո-Կլիսերին»։

— Մեկտեղ ճաշենք այս իրիկուն,— ըսի Կակայանցին, երբ դուրս կելլեինք սրճարանեն։

— Շատ լավ։

Եվ ուղղվեցանք Պապ-էլ-Պահրի ճաշարաններեն մեկը։ Քանի մը գավաթ գինի պարպելե ետքը՝ հանկարծ ըսի իրեն.

— Պարոն Կակայանց, ինչո՞ւ եկած ես Եգիպտոս։

— Ե՞ս, զարմա՞նք, պրոպականտի համար։

— Բայց հոս ի՞նչ օգուտ ունի քո պրոպականդ, արտասահմանի հայերուն մեջ հեղափոխական թերթերը կրնան ազատորեն պրոպականտ ընել, պետք է Թյուրքիա երթալ, հոն ավելի օգտակար է, ավելի կարևոր է։

— Թյուրքիա՞, չեմ կարող այդ բարբարոս թյուրքերի երեսը տեսնել, թե մի հատ հանդիպեմ նրան՝ հենց այն րոպեին պետք է սպանանեմ...

— Լա՛վ, սպանանի՛ր։

— Ինչ հեշտ ես ասում, որ այդ կարելի՞ է։

— Եթե կարելի չէ՝ մի՛ սպանաներ, բայց գնա՛ Թյուրքիա։

— Դուք թրքահայերդ լոկիայով չեք խոսում, ամեն բան թեթևությամբ եք դատում,— պատասխանեց Կակայանց։—Քո ասածի մեջ իմաստ չի կա, այդ սոֆիզմ է։

— Ուրեմն երթանք քիչ մը ժուռ դալ։

***

Անցավ քանի մը շաբաթ։ Առտու մը փողոցին մեջ հանդիպեցա Կակայանցին, որ զիս տեսնելուն պես՝ քովս վազեց։

— Պետք է այս գիշեր ժամը 9-ին գտնվես Ապպասիե, պարոն Վարդանի տանը։ Մի բանախոսություն պիտի անեմ,— ըսավ,— մի քանի կարևոր հարցի մասին։

Գիշերը գացի նշանակված տունը, ուր բավական մեծակ սենյակի մը մեջ հավաքված էին արդեն տեղացի ու փախստական երեսունի չափ հայեր։

Կակայանց երկու ժամ խոսեցավ միությո՞ւն՝ թե անջատ գործունեություն, կեդրոնացո՞ւմ՝ թե ապակեդրոնացումի վրա։ Իր խոսքը լմնցնելե ետքը՝ բանաձև մը ներկայացուց, իբրև եզրակացություն իր ըսածներուն, և ուզեց, որ քվեարկվի, ղրկվելու համար զանազան կուսակցություններու կեդրոններուն։ Անկարելի եղավ։

Հոն գտնվող երեսուն հոգին ալ երեսուն տեսակ հատուկ կարծիքներ ունեին միության, անջատ գործունեության, կեդրոնացումի և ապակեդրոնացումի մասին։ Նորանոր բանաձևեր առաջարկվեցան, որոնք ամենքն ալ մերժվեցան։ Վերջապես, հազիվ կարելի եղավ վեց ձայն հավաքել հետևյալ բանաձևին շուրջը.

«Եգիպտաբնակ հայերը կխնդրեն մեր հեղափոխական կուսակցություններու կեդրոններեն, որ ի սեր ազգային փրկության դատի, հեռի վանեն ամեն անձնական նկատողություն, և անցյալին տխուր փորձերեն խրատված՝ այսուհետև անջատ միությամբ և ապակեդրոնացյալ կեդրոնացման դրությամբ առաջ վարեն Սուրբ Գործը։ Հակառակ պարագային, եգիպտաբնակ հայերը որոշած են, ի սեր միության, բաժնվիլ և որ կուսակցություն մը հիմնել վերոհիշյալ սկզբունքներուն վրա հաստատված»։

Սենյակին մեջ մոմերը սպառելու մոտ էին ու տանտերը՝ Վարդան, կմրափեր։

— Երթա՛նք...

— Խնդրեմ, պարոննե՛ր, կացեք մի րոպե, մի կարևոր պան ունեմ ասելիք,— ըսավ Կակայանց։

— Հասկցանք,— մոմոացին մեկ քանիներ ու սենյակեն դուրս սպրդեցան, իրենց հետ քաշելով ուրիշներ ալ։

— Խնդրե՛մ, կացե՛ք մի րոպե...

— Հոս ենք, կուգանք կոր։

Ո՞վ խենթեցեր է, որ մնա։

Հինգ հոգի հազիվ մնաց, որոնց մեկն ալ կմրափեր, լսելու համար տխուր պատմությունը «մի նախկին հայդուկ»-ի, որուն գնդակը տարիներով «սարսափ էր սփռել քրդերին մեջ» և որ հիմա գրեթե անոթի կթափառեր եղեր Ռուսճուք։

— Պետք է մի պան վճարել նրան, եթե մի քիչ ավելի գտնվեր նրա պես հերոսներ, փրկության գործը տարբեր հանգամանք էր առնում։

Զարմանալին այն էր, որ գտնվեցան դեռ մեր մեջ երեք հոգի, որոնք հինգական ղրուշ տվին, միայն թե ավելցնելով.

— Ալ աս վերջինն է։

Եվ իրավ ալ վերջինը եղավ։

Կակայանց քանի մը օր ետքը անհայտ եղած էր Եգիպտոսեն։

***

Բավական ժամանակ ետքը շրջաբերական մը ցույց տվին ինծի «պաշտոնական կնիքով»։ Այդ շրջաբերականը կհայտներ, որ իմացված էր, թե Կակայանց անունով մարդ մը, Եգիպտոսի մեջ դրամ հավաքած է հեղափոխական նպատակի համար՝ զանազան խաբեբայական միջոցներով, և դրամը չէ ղրկած կեդրոնական սնտուկին, հետևաբար այդ անձն արտաքսված է կուսակցութենեն։

Հիմա հասկցած եմ, թե ինչ է «Արտասահմանի գործիչ» մը։

Բ

ԽՄԲԱԳԻՐԸ

Կարճուկ, շա՜տ կարճուկ մարդը մը։ Քառակուսի։ Կատարելապես քառակուսի դեմքով մը, որուն ճակատը թուշին կմիանա ուղիղ, բացարձակապես ուղիղ գծով մը։ Քիչ մը պեխ, աղտոտ հագուստներ, պզտիկ շուն մը ետևեն, ու ահա նույն ինքն է պարոն Զաքեոս։

Զինքը ճանչցա պալքանյան պետության մը քաղքին, մեղա՜, մայրաքաղաքին մեջ։

Երբ իրեն հետ տեսնվելու պատիվն ունեցա, արդեն խմբագրության սկսած էր և իր թերթին, «Համերաշխություն»-ի, երկրորդ թիվը շարելու վրա էր։ Ա՜խ, այդ գիրերը շարելու գործողությունը, ի՜նչ տանջանքներ տված էր իրեն։ Հազիվ հաջողված էր գտնալ նախկին դերասան մը, որ լուսանկարչություն կրներ այդ քաղքին մեջ, համոզելու համար զինքը, որ իր կոչումը գրաշար ըլլալու է։ Նախկին դերասանը, որ տասներեք անգամ ըլլալով իր անունը փոխած և Փայլակյան հեղափոխաշունչ անունն առած էր, հավաներ էր իր աջակցությունը նվիրել այդ թերթին, որուն իբր թե նպատակն էր միություն առաջ բերել մեր հեղափոխական կուսակցություններուն մեջ։

***

Սեպտեմբերին, իրիկուն մը, պ. Զաքեոս բռնեց օձիքես ու ստիպեց, որ միասին երթանք գարեջուր խմելու առանձին տեղ մը, քաղաքեն դուրս, հեռավոր պարտեզի մը մեջ։

— Քանի՞ տարիե ի վեր հոս ես,— հարցուցի իրեն, երբ կերթայինք ծառազարդ ճամփայե մը դեպի մեր նպատակակետը։

— Տասնըչորս տարիե ի վեր։

— Ինչո՞ւ ձգեցիր Պոլիսը։

— Ա՜խ, իմ պատմությունս երկար է։ Պոլսեն փախա ճիշտ այն միջոցին, ուր զիս տասնըհինգ տարվան տաժանակիր աշխատության պիտի դատապարտեին։ Եվ դատապարտեցին՝ «ի բացակայության»։

— Վատե՞ր,— գոչեցի,— ի՞նչ սուտ ամբաստանությամբ քեզ դատապարտեցին։ Հեղափոխակա՞ն գործի համար։

— Չէ՛,— պատասխանեց պ. Զաքեոս,— չէ՛, այն ատեն դեռ հեղափոխություն չի կար. պարզապես... հրձիգության համար։

— Վատե՞ր, ի՞նչ սոսկալի զրպարտություն։

— Զրպարտություն չէր, անհերքելի վկայություններ կային ինծի դեմ։

Լռեցի։ Դեմինս «անկեղծ» հրձիգ մըն էր։

Լռությունը՝ որ տևեց մեր մեջ՝ պաղ էր, ինչպես հովը, որ կփչեր դեկտեմբերին, Աթենքի մեջ, Հիմեղ լեռան կողմեն։

— Պոլիսեն փախա,— շարունակեց Զաքեոս,— և գացի Թրիեսթե, անկե եկա հոս, ուր կգտնվիմ տասնըչորս տարիե ի վեր։

— Ինչպե՞ս թերթ հրատարակելու գաղափարն ունեցար։

— Մարդ մը, որ կծնի, պետք է ապրի մինչև իր մեռած օրը,— պատասխանեց Զաքեոս վճռաբար։— Եթե հրձիգության փորձս հաջողեր, դիտավորությունս էր Պոլսո մեջ նպարավաճառի խանութ մը բանալ. դժբախտաբար չեղավ։ Երբ հոս եկա, քովս քիչ մը ստակ կար, անով վիմագրատուն մը հաստատեցի և սկսա ապրիլ։ Արդ, վիմագրատունեն խմբագրություն քայլ մը միայն կա և այդ քայլը առի շնորհիվ Խազապբեկյանի։

— Խազապբեկյանի՞։

— Այո՛, Խազապբեկյանի, զոր հոս ճանչցա և որուն «Զանգակ» թերթին հասցեները ես կգրեի։ Այն ատեն տեսա, որ ատ մարդը, ինե ավելի վարպետ, հրձիգութենե շահավետ գործ մը գտած էր՝ հեղափոխական թերթ մը հրատարակելով և կուսակցություն կազմելով։ Բայց Խազապբեկյան տիրած էր հրապարակին և անկարելի էր հետը մրցիլ։ Հիմա կուսակցական երկպառակություններուն

պատճառավ, հարմար ատենն էր մեջտեղ նետվելու և նետվեցայ։

Ինչպես կտեսնաք, պ. Զաքեոս անկեղծ էր իր խոսքերուն, ինչպես հրձիգության մեջ։

***

«Համերաշխություն»-ի երրորդ թիվը հրատարակվեցավ և հետզհետե, ամեն ամիս, կանոնավորապես թերթերը լույս կտեսնեին։ Թերթը հաջողություն կգտներ. աշխարհքի չորս կողմեն «Համերաշխություն» կուզեին և եթե այսպես շարունակվեր, խե՜ղճ Զաքեոս, հագուստներեն ետքը, կոշիկն ու գլխարկն ալ ծախելու պիտի ստիպվեր՝ թերթը հրատարակելու համար, որովհետև «Համերաշխություն»-ը... ձրի կտրվեր և ճամփու ծախքը խմբագրության վրա էր...

Այո, պ. Զաքեոս, որ թեև Ավետարանի իր անվանակցին հասակը ուներ, բայց ոչ անոր հարստությունը, իր հույսը դրած էր նվերներու վրա միայն։ «Թերթը ձրի է. բայց նվեր շնորհակալությամբ կընդունենք», կգրվեր ատեն-ատեն, մինչ «Համերաշխություն»-ի համակիրները թերթը կուզեին... բայց նվեր չէին զրկեր հաճախ։

— Ա՜խ, այդ Խազապբեկյանը, նվերի աղբյուրները բոլոր իրեն կքաշե տակավին,— կգոչեր խեղճ Զաքեոս, երբ ձեռնաթափ կդառնար նամակատունեն, ուր հերոսական անպարտելի հույսով մը կշարունակեր երթալ օրը երկու անգամ, նույնիսկ երբ վստահ էր, թե թղթաբերը եկած չէ։

Ու նվերները, որ կուգային ցանցառ-ցանցառ, չեմ գիտեր ինչ հրաշքով, ճղճիմ բաներ էին։ Երեք ֆրանք Պուլկարիայեն, կես տոլար Ամերիկայեն, հինգ ղուրուշ Եգիպտոսեն, զորս գանձելու համար ամոթով կմոտենար խեղճը՝ դրամ վճարող պաշտոնյային, որ ծաղրական ժպիտ մը շրթունքին վրա կուտար իրեն, ողորմության մը պես, այդ ֆրանքները կամ կես տոլարը, կամ հինգ ղուրուշը։

***

Որո՞ւ պիտի քավեին այդ խղճուկ նվերները, լուսանկաչությունը ձգող նախկին դեբասան գրաշարին պահա՞նջը կաթգա-

դրելու, Քոլոքոթրոնիս փողոցը գտնվող սափրիչին, լեղա՞կ աչքերով կնոջ՝ Ելենիի՝ տարիե մը ի վեր խոստացած գուլպանե՞րը գնելու, ճաշարանին հաշի՞վը մաքրելու, տան վա՞ճքը տալու, շունին ոսկո՞ր գնելու, որո՞ւն պիտի բավեր երեք ֆրանքը, կես տոլարը կամ հինգ ղուրուշը։

Ու Զաքեոս՝ հուսահատ՝ «ապերա՞խտ ազգ» գոչելով թղթատունեն կմեկներ գանձած քիչ մը դրամովը ու շունչը կառներ գինետուն, ըստ խրատու առակողին, թե «օդին կորսվելու վրա եղողին ու գինին դառնահոգիներուն տվեք, որ անոնք խմեն ու իրենց աղքատությունը մոռնան և իրենց նեղությունը մեյ մըն ալ չհիշեն»։ Երբեմն մեզի ալ կհրավիրեր.

— Եկե՛ք, սանկ քանի մը հատ ճնկենք, անանկ ալ կործանեցա, ասանկ ալ։

Ու այս փիլիսոփայական մտածումով զորացած կմտներ գինետուն, ուր բեչինան՝ այդ Հոմերոսեն երգված գինին՝ կմոռցներ պահ մը իր կյանքին տխուր իրականությունները։

Հոն սեղանին առջև, մեծ ու պզտիկ տակառներու դրացությամբ, Զաքեոս կամաց-կամաց կխանդավառեր ու կսկսեր անկեղծ շատախոսությամբ մը դուրս տալ սրտին մեջ եղածները։

Դեկտեմբերի մեջ, ցուրտ ու անձրևոտ իրիկուն մը, երեք բարեկամ նստած էինք նպարավաճառ-գինետան մը անկյունը, երբ Զաքեոս ներս մտավ հաղթական ձևով մը։

— Բեչինա՞ թե ուզո,— գոչեց խոսքը մեզի ուղղելով, երբ տեսավ, որ սեղաննուս վրա տակավին գավաթներ չէին երևցած։

— Բեչինա։

Հարկ եղած հրահանգները տալե վերջ՝ եկավ քովերնիս։

— Թղթատունե՞ն կուգաս կոր,— հարցուցինք։

— Զգեցեք սա թղթատունը,— պոռաց Զաքեոս արհամարհոտ ձևով մը թևը կես մը բարձրացուցած։

— Ուրեմն ինչպե՞ս պիտի խմենք բեչինան։

— Արաբկիրցի հարուստ մը,— շարունակեց Զաքեոս,— որ հոս կգտնվի եղեր, գործ մը ունեցեր է պանքային հետ ու լեզու չգիտնալուն ստիպվեր է գալ վիս փնտռել, որպեսզի մեկտեղ երթանք գործը կարգադրենք։ Գացինք կարգադրեցինք. մարդը հանեց տասը ֆրանք նվեր տվավ։ Ըսի իրեն, որ ես երբեք նվեր չեմ ընդունիր, բայց «Համերաշխություն»-ի համար կընդունիմ։

«Առ տե՛, ինչի համար կուզես առ», ըսավ ու ձգեց գնաց։ Ես ալ ութ ֆրանքը տպագրիչին տվի ու երկուքն ալ մեր Միչոյին պահեցի։

«Մեր Միչոն» գինեպանն էր։

***

Երբ բեչինային առաջին շիշը պարպվեցավ, Զաքեոս գլխարկը դեպի ետև քշեց, քիչ մը ճակատը քերեց, ձեռքը զարկավ սեղանին ու գոչեց.

— Ո՞ւշ հասա, ո՞ւշ։ Եթե վեց-յոթը տարի առաջ գործի սկսեի՝ հիմա դիրքս շինած էի։ Ես ալ եղած էի խազապբեկ մը...

— Նորեն կըլլաս, մի՛ հուսահատիր։

— Չէ՛, ալ լմնցավ, կտեսնամ, որ ժողովրդին աչքը բացվեցավ... ա՛լ առջի միամիտները չեն։ Տեսնելու բան էր խազապբեկին հոս եղած ատենը, երբ միասին Բոսթան կերթայինք, ամեն կողմե անձրևի պես կուգար դրամները, շաբաթը երբեմն հարյո՞ւր ոսկի կըլլար... հարյո՞ւր։ Միչո՛, սա շիշը վերցուր և ուրիշ մը բեր։

Զաքեոս շարունակեց.

— Ա՜խ, այդ տեղատարափ նվերներն էին, որ իմ ալ գլուխս դարձուցին։ Այն օրերեն միտքս դրի ես ալ հեղափոխական թերթ հրատարակել, կուսակցություն կազմել ու այդ նվերներուն գոնե հարյուրին տասը ձեռք անցնել։ Հիմա չափս առի։

— Կամաց-կամաց։

— Է՜հ, եթե քիչ մը դրամագլուխ ունենայի տարի մը դիմանալու չափ, բայց, ա՜խ, չեք գիտեր վիճակս։ Ամեն օր նոր-նոր պարտքեր ընելու վրա եմ, ալ քաղքին մեջ մարդ չպիտի մնա, որ ինծի ապառիկ տա։ Երեկ խանութիս տերը վերջնականապես ըսավ, որ ամսու գլխուն եթե պարտքս չվճարեմ, զիս դուրս պիտի նետե...

— Բե՛ր սա գավաթդ լեցունեմ։

— Աս «Համերաշխություն»-ը խերս անիծեց, մեջքս կոտրեց, եղբայր։ Քանի մը ոսկի խնայողություն ըրած էի, ան գնաց... պարտքի սկսա, և ի՜նչ խայտառակ պարտքեր, հինգ ղուրուշ մեկեն, տասը ղուրուշ մեկալեն... Բեփազե եղանք ամենուն քով։ Ձեռք մը նոր լաթ ունեի՝ ան ալ ծախեցի, «Համերաշխություն»-ը հոս հասցուց ինծի։ Նայեցեք սա բանթալոնիս ու բալթոյիս վի-

ճակը, սա գլխարկս.... Հապա՜ կոշիկներս... ոտքս ջուրերուն մեջն է։ Տարի մը առաջ տեսնալու էիք ինծի, դեռ մարդու շնորհք կար վրաս... հիմա կամշնամ կոր հայելին նայելու... ապերա՜խտ ազգ։ Միշո՛, սա շիշը վերցուր ուրիշ մը բեր։

Ա՛լ լռեց։

Գրգռված էր ու տխրություն մը եկած էր վրան, այն տեսակ մը ծանր տխրություններեն, որոնք երբեմն կիյնան հոգիին վրա ու կճնշեն զայն։ Լռությամբ պարպեց վերջին շիշը։

— Այս իրիկուն բեչինան փոխանակ քեզ զվարթացնելու՝ ավելի տխրեցուց,— ըսի։

— Այո՛,— պատասխանեց վհատ ձայնով մը,— մատնի՛չը... ան ալ զիս լքանել սկսավ։

Ոտքի ելանք։ Դիտարեզային առջև Զաքեոս մաքրեց բեչինաներու հաշիվը, կես ֆրանքի չափ ավելցավ։

— Քոնյաք մը տուր։ Հատ մըն ալ։

Երկու քոնյաքը երբ խմեց, փողոց ելանք։ Զաքեոս սկսած էր սայթաքել։

Դուրսը, տխո՜ւր, անձրևոտ գիշեր մըն էր, ցո՜ւրտ, հուսահատական։

— Գիշեր բարի,— ըսավ Զաքեոս ու մխրճվեցավ՝ գայթ ի գայթ՝ դիմացի փողոցին մեջ, մինչ անձրևը կծեծեր իր աղտոտ գլխարկը ու հին լաթերը։ Իր շունը՝ Գանելան՝ պոչը կծկած ետևեն կերթար...

* * *

Հիմա երկու տարիեն ետքը աչքիս առջևն է տեսարանը։ Դեկտեմբերի այդ անձրևոտ պա՜ղ գիշերը, ու կարճուկ ստվերը Զաքեոսին, որ պատն ի վեր, կազի հարաշարժ լույսին տակ, խոլական ձևեր կառներ, ու այդ չա՜ր անձրևը, որ կարծես անձրևնոց չունեցող գլուխներուն վրա կիջնա՝ հատկապես՝ անդուլ համառությամբ մը, ու անմեղ նահատակ իր տիրոջ փառատենչ անուրջներուն՝ Գանելան, որ գուցե օրն ի բուն ոսկոր չէր գտած կրծելու և հիմակ, ջուրին տակ խխում եղած, կհետևեր՝ ստոյիկ համակերպությամբ մը՝ իր տիրոջ, որ գայթ ի գայթ կերթար պատն ի վեր։

— Խե՜ղճ Զաքեոս,— ըսինք ամենքս միաբերան, երբ ջրաթաթավ ստվերը ալ խառնվեցավ մթության հետ։

Տգետ, անխելք, նյութապես անկարող, ֆիզիքապես անշնորհք, ամենեն արհամարհված, երկչոտ մարդ մը՝ անծանոթ մնալու բոլոր օգուտներով օժտված, որ ինքզինքը հանձնարարելու համար բան մը չունի, որ իր ոչնչության գիտակցությունը ունի և որ սակայն կուզե հանրային դեր մը խաղալ, թե՜րթ հրատարակել, կուսակցություն կազմել, հրամանին տակ մասնաճյուղեր ունենալ, հրահանգներ տալ և... նվերներ առնել, վերջապես, մակաբույծ մը, բայց մեծկա՜կ մակաբույծ մը ըլլալ։ Արդարև, խե՜ղճ մարդ։

Իր անհաջողության պատճառները երբեմն կփնտռեր Զաքեոս.— «Նախ ժողովուրդը առջինը չէ,— կըսեր,— հետո ես գեշ ըրի. գործի սկսելե առաջ՝ պետք էր տարիի մը չափ գավառները երթալ, սանկ, ինչպե՞ս ըսեմ, նախկին գործիչի մը համբավ շինել և ետքեն թերթ հրատարակել։ Հեղափոխական կյանք չունենալս շատ սախտե կուտա կոր ինծի... Ասկե զատ, շիտակը ըսե՞մ, հասակիս կարճությունը և կզակիս ձևը գործը կավրեն կոր. ո՞ւր էր, որ երկայնահասակ մեկը ըլլայի, առատ մազերով, խոշոր մորուքով... Խազապբեկին պես բան մը։ Հետո, հետո... մեյ մը ժնև գացած ըլլալս... ի՞նչ կըլլար, փոխանակ Թրիեսթեն ուղիղ հոս գալու, ժնևի ճամփով դառնայի... ան «սոցիալ-դեմոկրատի»[1] պես բաները տեսա՞ր մի, ահա անոնք են քսակներու բանալիները, անոնք՝ նվեր բերողները...

— Անոնց ալ մոտան անցավ, պարոն Զաքեոս։ Գալով հասակիդ, Հուլիոս կեսար, Նաբոլեոն առաջին, պարոն Թիեռ, անոնք ալ կարճահասակ էին...

— Այրած սրտի մխիթարա՜նք... ես ըսածս գիտեմ։ Տե՛ս անցած օր ի՛նչ պատահեցավ։ Սրճարանը նստած էի, եկան զիս փնտռեցին, ըսելով, որ երկու շնորհքով մարդ «Համերաշխություն»-ի հրատարակիչը տեսնել կուզեն անպատճառ։ Լուրը բերողը ըսավ, որ նվեր տալու խոսք ըրեր են։ Խենթի պես վազեցի խանութս։ Քիչ մը ետքը պիտի գան եղեր, վերջապես եկան։

— Ո՞ւր է պարոն Զաքեոսը, «Համերաշխություն»-ի հրատարակիչը,— հարցուցին ինծի։

— Ե՛ս եմ,— պատասխանեցի։

---

1 Ոտքի ունի հնչակյաններին։ Կազմող։

— Դո՞ւն... դուն թե՞րթ կհրատարակես,— ըսավ մին կես մը խնդալով։

— Այո՛, հրամմեցեք նստեցե՛ք, սուրճ մը առե՛ք։

— Ո՛չ, շնորհակալ ենք, ստիպողական գործ ունինք, մնաք բարով, հաջողություն կմաղթենք։

Ու ելան գացին։

Ետքը իմացա, որ ծանոթներուս մեկուն ըսեր են. «Միտք ունեինք նվեր մը ընելու, բայց, շիտակը, իր կերպարանքին, չհավնեցանք. ատ մարդը ինչպե՞ս խմբագրություն կընե»։

— Կերպարանքիս չե՞ն հավներ, անպիտանն է՞ր, փեսա՞ փնտռելու եկաք, թե նվեր տալու... զարմացեր են, թե ինչպե՞ս խմբագրություն կընեմ... կարճահասակ մարդը խմբագրություն չի՞ կրնար ընել... սանդուխի մը վրա կելլա՞մ ու անանկ կընեմ խմբագրություն... ապերա՞խտ ազգ...

***

Երկու տարի է, որ մեկնած եմ այդ քաղքեն ու չեմ գիտեր, թե «Համերաշխություն»-ը դեռ կհրատարակվի՞։ «Համերաշխություն» չկարդալս անշուշտ զրկանք մը չեմ համարեր ինծի համար, բայց անհուն ձանձրույթի վայրկյաններուն, որ կունենամ երբեմն, կարոտը կքաշեմ Զաքեոսին, որուն տեսքն ու խոսակցությունը հաճախ զվարթություն տված են ինծի։

Բալյաչո մըն է, որ ծերունի հոր դերը խաղալ կուզե. ահա իր սխալը։

Անարդար եղա իրեն նկատմամբ, երբ հեղափոխության մակաբույծներուն մեջ դասեցի զինքը, իր նպատակը շեշտել ուզելով ավելի։ Ստուգապես՝ Զաքեոս հեղափոխության... զոհն է։

Գ

ՈՐ ՄԵՆՔ ՀԵՐՈՍ...

— Զավակ ունի՞ս։

— Այո՛, պարո՛ն, երկու մանչ, բայց մեծը նշանավոր բան է... ճիշտ ինծի կնմանի։

Ալեքսանդրիա, Շերիֆ փաշա փողոցը քալած ժամանակնիս այս

հարցումը կուղղեի ու այս պատասխանը կընդունեի Վարդհոգյանեն, որ նոր հասած էր Ալեքսանդրիա՝ Գահիրե պիտի երթար։

Պանքայի ցույցեն քանի մը ամիս ետքը, կարծեմ հունվարի մեջ էր, երբ իմացանք, որ ընդհանուր ներում եղեր է։ Լուրը տարածվելեն քանի մը օր ետքը՝ ուրիշ լուր մըն ալ տարածվեցավ։

— Իմացա՞ք։

— Ի՞նչ։

— Վարդհոգյանն ալ ազատեր է ու Կիպրոս գացեր է, անկե ալ Ալեքսանդրիա պիտի գա եղեր։

Օր մըն ալ ըսին.

— Կուգա կոր... եկա՞վ։

Ու ահա լայն ու երկայն ցցված ականջներով, խոշոր քիթով, հերկեն դարձող հոգնած եզի տարտամ նայվածքով, գլխուն զարկած մեկը ներկայացուցին մեզի ըսելով.

— Պարոն Վարդհոգյան, մեր անդրանիկ հերոսներեն մեկը։

— Որ մենք հերոս,— ըսելով Վարդհոգյան սկսավ խոսիլ...

Բայց ես արդեն հեռացած էի։

Չէ՛, ա՛լ չէի կրնար համբերել։ Պոլսեն մեկնելես ի վեր այս քսաներկուերորդ հերոսն էր, որ ցույց կուտային ու մինչև կոկորդս լեցած էր հերոսով։

Հերո՞ս...

Հրացանը ուսը զարկած, մեջքը ատրճանակ ու դաշույն, կայտառ մայդ մը, պեխերը մինչև ականջն ի վեր, վառ աչքեր, խիզախ աներկյուղ կերպարանքով, որուն տեսքը հույս մըն է իրեններուն ու սարսա՞փ՝ թշնամիներուն համար։ Լեռները կապրի ան, իրեն պես կտրիճներու հետ։ Սուրհանդակին վրա կհարձակի, բանտերը կկոխե ու անմեղ բանտարկյալները կազատե, չարագործ հարստահարիչները կսպաննե, անզոր գեղացիները կպաշտպանե. ինքը՝ առանձին՝ պատերազմ կմղե իշխանության դեմ։ Զըլլալիք բաներ կպատմըվին իր վրա, չըլլալիք բաներ, որոնք բան մը չեն իր ըրածներուն քով։ Ու իրիկունը, երբ աղջիկները կդառնան դաշտեն, իրենց անուշ ու սիրատարփ նայվածքը ուղղելով դեպի լեռը, ուր կգտնվի ան, սրտատրոփ ու երկյուղած կնային երկայն ու կաղոթեն։ Անիկա չի՛ բռնվիր, չի՛ բանտարկվիր, չի՛ նախատվիր, չի՛ ծեծվիր, չի՛ մեռնիր...

Ահա ինչպես կերևակայեմ Հերոսը։ Ու եղած են այսպեսներ մեր վերջին տարիներու թախծագին պատմության մեջ։

Իսկ այդ քսաներկո՞ւքը որ տեսա... ա՜հ իրենց գյուցազներգությունը։

Հնչակ առած ժամանակներին, Հնչակ կարդացած ժամանակներին, Հնչակ տված ժամանակներին ձերբակալված հերոսներ, կարգ մը մակաբույծներու համար ստակ հավաքած ատենին բռնված հերոսներ, զահվեի մը անկյունը քանի մը գավաթ օղիի ազդեցության տակ անօգուտ շաղակրատություններ ընող հերոսներ, վրտանգավոր թղթեր գրպաններին պտտցնող հերոսներ, որոնք ոստիկանության ճանկը ինկած են։

— Դո՞ւն ալ քոմիթեեն ես, հե՞,

— Ամա՜ն, էֆենտի, ի՜նչ կըսեք, ձեր ոտքին հողը պագնեմ, ես երբեք...

— Տակավին կուրանա՞ս, շո՛ւն, ա՛ռ քեզի։

Ու ապտակները կիջնան շեշտ երեսին։

— Ամա՜ն, մեղա՜, ես բան մը չեմ ըրած, ես սուլթանին հավատարիմ ծառան եմ, ոտքերնիդ պագնեմ։

— Կեցի՛ր, ես քեզի խոսեցնելու կերպը գիտեմ. հիմա չես ուզեր խոսիլ, բայց քանի մը օրեն պուլպուլի պես պիտի խոսիս։

Ու խոսքը բանտապետին ուղղելով.

— Տարեք սա կյավուրը զնտան նետեցեք։

Եվ բանտապետը ապտակելով, հայհոյելով, հարվածելով կգործադրե հրամանը ու կտանի նկուղ, ուր մեր ապագա հերոսը կմնա քանի մը օր։

Ու այսպես հարցաքննություններե, նախատինքներե, ապտակահարություններե ետքը, օր մըն ալ ցկյանս բերդարդելության կդատապարտվի։ Երեք տարի, հինգ տարի կամ յոթը տարի ետքը՝ առտու մը՝ բերդին տնօրենը կկանչե զինքը։

— Շունշանորդի՛, աղոթք ըրե սուլթանին կենացը։

— Էֆենտի՛, ես արդեն ամեն օր աղոթք կընեմ իրեն համար։

— Զեզի ամենուդ ընդհանուր նեղում ըրավ։

— Աստված շատ կյանք տա իրեն, աստված մեկ օրը հազար ընե։

— Բայց մեյ մըն ալ այդ տեսակ սրիկայական գործեր չպիտի ընեք հա՞,

— Ո՛չ, էֆենտիս, ես միշտ սուլթանին հավատարիմ ֆյոլեն եմ, ոչ թե այդ անպիտաններուն չեմ հետևիր, ապա եթե ձեռքես գա— ամենքն ալ կսպաննեմ։

— Աֆերի՜մ, քեզ տեսնամ։

Տնօրենին ձեռքը, փեշը, հողաթափը համբուրելե ետքը՝ դուրս կելլե մեր բանտարկյալը։ Ալ ազատ է։ Շունչը կառնե կամ Հունաստան, կամ Կիպրոս, կամ Եգիպտոս։

Հիմա հերոս մըն է անիկա ու կոթնած իր հերոսության՝ քաղքե քաղաք կպտտի ստակ հավաքելու իրեն համար։

Արդարև մուրացկանության հերո՜ս մը...

Այդ կարգին էր նաև Վարդհոգյանը, ու ատոր համար երբ խոսիլ սկսավ, ես աղեն հեռացած էի։

***

Սակայն քանի մը օր ետքը բարեկամներես մեկը ըսավ ինծի.

— Տեսնվե անգամ մը Վարդհոգյանին հետ, հետաքրքրական տիպար մըն է, որ կարժե ուսումնասիրել։

— Անտանելի է, եղբա՛յր։

— Գիտեմ որ անտանելի է, բայց միմիայն ի սեր արվեստին, ի սեր գրականության ըրե՛ այս բանը,— պնդեց բարեկամս խնդալով.— հավատա՛, որ օգտակար գործ մը ըրած կրլլաս, եթե այդ տեսակ տիպարներ քիչ մը փորձես հասարակության ճանչցնել։ Գիտեմ, որ Վարդհոգյանի հետ ժամ մը տեսնվելով մեծ զոհողություն մը պիտի ընես, բայց հանուն հայրենասիրության, հանուն հեղափոխության ըրե՛ ասիկա։ Ապագա սերունդը քեզի հերոսի տիտղոսը պիտի տա ապահովապես այդ անձնվիրության համար և, ո՞վ գիտե, գուցե Բազեշի կամ Էրզրումի հրապարակներեն մեկուն մեջ արձանդ կանգնե։

Այդ հեռապատկերը շլացուց զիս ու ահա ասոր համար Վարդհոգյանին հետ Շերիֆ փաշայի փողոցեն միասին կերթայինք դեպի կայարան։

— Ի՞նչ պիտի ընես Գահիրե,— հարցուցի իրեն, խոսք մը ըրած ըլլալու համար։

— Որ մենք հերոս, պետք է տեսնենք, քննենք և ուսումնասիրենք ամեն բան մեր աչքով,— պատասխանեց Վարդհոգյան կոշտ ու ինքնավստահ արտասանությամբ մը։— Ասկե զատ,— ավելցուց,— ժողովուրդը պետք ունի քաջալերության, պետք է տեսնա իր հերոսները և քաջալերվի։

— Իրավունք ունիս։

— Իմ կյանքս ժողովրդին նվիրված է, իմ բազուկս հայ ազգին կպատկանի։ Մինչև հիմա արյունս իմ ազգիս համար թափեցի, ասկե ետքն ալ..

— Մի՛ հուզվիր, կաղաչեմ, և մի՛ շարունակեր, ասկե ետքն ալ ազգին համար պիտի թափես, գիտեմ։ Կեցցե՛ս, շատ ապրի՛ս, աստված ձեզպեսները պակաս չընե։

— Ամե՛ն,— գոչեց Վարդհոգյան սրտի խորեն, ու հասանք կայարան։

Դեռ կես ժամ կար կառախումբին մեկնելուն. պետք էր խոսի՛լ տակավին կես ժամ Վարդհոգյանի հետ։ Հանուն հայրենասիրության այդ ալ ըրի, ու ասկե ետքը եթե զիս Հայկ դյուցազնին քով չդասեն՝ հանցանքը իմս չէ։

— Մե՛նք, որ պետք եղածին չափ ուժ չունինք մեր թշնամիին հետ կռվելու համար,— ըսի իրեն, երբ տոմսակը առնելե ետքը կայարանին երկայնքը կպտտեինք։

— Ուժ չունի՞նք. հապա այս բազուկնե՞րը, մի՞թե բավական չեն,— ու հորիզոնական ձևով բարձրացուց իր թևերը։

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ,— աճապարեցի ըսել,— միայն թե գոնե երկու-երեք հատ ալ ըլլար այդ բազուկներեն, այն ատեն բոլորովին ապահով կրնայինք ըլլալ մեր ազատության համար։

— Իրավունք ունիս,— պատասխանեց Վարդհոգյան,— ափսո՛ս, որ ինծի պես քանի մը հոգի չի կա։ Ա՛խ, պարո՛ն, եթե անդրանիկ տղաս քիչ մը ավելի մեծ ըլլա՛ր...

— Ավա՛ղ։

Ու այսպես խոսակցությունը տևեց մինչև որ կառախմբին մեկնելուն ժամը հասավ։

***

Երբ Գահիրե գացի շաբաթ մը ետքը, Վարդհոգյան օրվան մարդն էր հոն, կամ ավելի ճիշտը, ամսվան հերոսը, որովհետև ամեն ամիս իր հերոսն ուներ այդ միջոցին։ Հայկական սրճարանը բաղմած կխոսեր անիկա, առտրվնե մինչև իրիկուն և իրիկվընե մինչև կես-գիշեր։

— Որ մենք հերոս այսպես, որ մենք հերոս այնպես։

Ճշմարտության սիրո համար և ի պատիվ իրենց պետք է

ըսել սակայն, որ իր շուրջը բոլորվողները պանդուրներ չէին, ոչ ալ ապուշ հիացողներ, այլ բավական «հերոս»-ներ ակռանուն զարկած ու անոնց արժեքը ճանչցած մարդիկ, որոնք միմիայն ժամանցի համար խոսեցնել կուտային զինքը։ Ա՛լ իրենց համար հերոս մը տեսակ մը աճպարար էր, որ ձրի ներկայացումներ կուտար հայկական սրճարանին մեջ և երբ նոր հերոսի մը գալուստը իմանային Գահիրեի մեջ, կըսեին իրարու.

— Վաղը ժամը տասնին, հայկական սրճարանը եկեք, հերոսական ներկայացում կա։

Եվ ասիկա այնչափ շահաբեր էր սրճարանին համար, որ սրճարանապետը ձրի սենյակ ու կերակուր կուտար ամեն բանտեն ազատած հերոսի։

Ես ալ գացի այդ «ներկայացում»-ներեն մեկուն։ Վարդհոգյան նստած էր սեղանի մը վերի կողմը, որուն շուրջն ու վրան հավաքված էին ութ գավաթ օղի, ժամկոչ մը, սիսեռի մեզե, ծխավաճառի աշկերտ մը, ցնդած բանաստեղծ մը, խաշած հավկիթ մը, քանի մը հատ ձիթապտուղ ու քանի մը հատ ալ պարապ պտրտող գաղթականներ։

Երբ ներս մտա, Վարդհոգյան արդեն կճառեր.

— ... Այո, սիրելի ընկերներ, միություն և համերաշխություն։ Մենք իբրև հերոս և իբրև ժողովրդի հարազատ ներկայացուցիչ, պետք է ընենք այդ բանը, պետք է միացնենք հեղափոխական կուսակցությունները և հետո միացնենք իրարու հետ նաև եվրոպական տերությունները։ Պետք է երթանք Փարիզ և Լոնտոն, խորհրդակցինք բարձրաստիճան անձերու հետ և այս բանը ընենք։

«Մենք»-ը միմիայն ինքն էր։ Վարդհոգյան երբ կխոսեր, կկարծեր, թե ամբողջ լեգեոնի մը կողմե կխոսի։ Իր ծիծաղաշարժ մեծամտություններուն փոքրագույններեն էր ասս։

Սեղանակիցներեն մեկը, Կեդրոնականի նախկին աշակերտ, որ առիթ չէր փախցներ թեթև ծաղրանքներ ընելու, երբ ձեռքը այս տեսակ հերոս մը իյնար, ոտքի ելավ լուրջ, պաշտոնական, օղիին գավաթը բարձրացուց և ըսավ.

— Պարոն Վարդհոգյան, այսօր մեզի համար նշանավոր օր մըն է. անոր հիշատակը անջնջելի ոսկի տառերով պիտի քանդակվի մեր ամենուս սրտին մեջ, որովհետև մեր աչքերը տեսան հայոց մեծ հերոսը, անդրանիկ հերոսը, ժամանակակից Հայկ

դյուցազնը, որուն քաջագործությունները թեև ծածկված մինչև այսօր, սակայն տիեզերքը կզարմացնեն արդեն։ Կպարպեմ այս գավաթը պարոն Վարդհոդյանի կենաց։

Պարպեց ու նստավ տեղը.— «Դիտմամբ ըրի, որ ինքն ալ ելլա բան մը խոսի»,— փսփսաց ականջիս։

Բաժակաճառին անմիջական արդյունքը եղավ սրճարանը գտնվող ուրիշ տասնի չափ հայերու մեր քով հավաքվիլը, թեև հաճախորդներուն մեծամասնությունը կշարունակեր նարտ խաղալ։

Վարդհոգյան զգաց, որ «ժողովուրդը» զինքը լսել կուզեր։ Կանգնեցավ, երկու ձեռքը սեղանին կոթնցուց, կամաց մը օրորվիլ սկսավ, խիթ ունեցողի մը ձևով, քիչ մը ջուր խմեց, քիթը խնջեց, ու վերջապես համր-համր, բառերը երկնցնելով, հավիտենապես լալկան շեշտով մը խոսիլ սկսավ.

— Սիրելի և անկեղծ ընկերնե՛ր, մենք վստահ ենք, որ քիչ ատենեն պիտի հասնինք մեր ցանկացած ազատության և մեր սիրելի հայրենիքը երթանք։ Այս մասին արդեն խոսած եմ մի քանի բարձրաստիճան անձերու հետ, սիրելի՛ և՛ անկե՛ղծ ընկերներ։ Որ մենք հերոս, պետք է, որ այդ բանը ընենք, սիրելի և անկեղծ ընկերներ։ Ա՜խ, ափսո՜ս, որ այս բազուկները յոթը տարի անգործ մնացին։

Եվ Վարդհոգյան ցույց տվավ այն բազուկները, որոնք արդեն տեսած էի Ալեքսանդրիա, կայարանին մեջ։ Ապա շարունակեց։

— Սիրելի և անկեղծ ընկերնե՛ր, վնաս չունի, այդ կորսված ժամանակը շուտով կշահինք։ Այս բազուկները ձեզի նվիրված են, վստահ եղի՛ք, սիրելի և անկեղծ ընկերներ։

Նորեն բարձրացան Ալեքսանդրիայի մեջ տեսածս բազուկները։

— Կեցցե՛ պարոն Վարդհոգյան։

Եվ օղիները պարպվեցան։

Արտառոց ու ծիծաղաշարժ էր այս ամենը, սակայն, չեմ գիտեր ինչու, սրտի սեղմում մը զգացի դուրս եկած միջոցիս։ Պժգալի ու միանգամայն տխուր տպավորություն մը ըրած էր վրաս ամբողջ այդ «ներկայացումը»։

***

Վարդհոգյան բավական ժամանակ մնաց Գահիրե և մեկ կողմեն հայկական սրճարանը հերոսական ներկայացումներ տալով հանդերձ, մյուս կողմեն քառասուն ոսկիի չափ դրամ հավաքեց հարուստներեն՝ մուրացկանությամբ—«Որ մենք հերոս, պետք է ընենք այդ բանը» ըսելով։

Վարդհոգյան այն տեսակ տիպարներեն էր, որ իրեն հետ քանի մը անգամ ծանոթություն ընողը զզվանքով կհեռանար, ա՛լ մեյ մըն ալ հետը չտեսնվելու հաստատ մտադրությամբ, այնպես որ սրճարանին տերը պատշաճ դատած էր անուշությամբ ճամփու դնել զայն ըսելով.

— Ասկե ետքը ա՛լ չեմ կրնար սենյակ ու կերակուր տալ քեզի, գլխուդ ճարը նայե։

Այդ վերջնագրին՝ Վարդհոգյան պատասխանած էր հանդարտությամբ.

— Ուրեմն որ մենք հերոս, պետք է երթանք Ալեքսանդրիա։

Ու պայուսակը կապելով մեկնած էր այդ «հերոսամերժ» քաղաքեն։

Քիչ ատենեն ետքը, երբ Ալեքսանդրիայի հայերն ալ բավականեն ավելի ճանչցած ու ձանձրացած էին իրմե ու ամեն մարդ սկսած էր մասնավոր փութկոտությամբ մը փախուստ տալ ամեն անգամ, որ «հերոսը» կերևնար Մենշիեի հրապարակին վրա, Վարդհոգյան զգաց, թե ժամանակն է, «որ մենք հերոսը» պայուսակը կապե նորեն, ու մեկնեցավ դեպի Եվրոպա։

— Պետք է երթանք Եվրոպա,— կըսեր մեկնած օրը,— և տեսակցինք բարձրաստիճան անձերու հետ մեր ազգային փրկության մասին։

«Մեր ազգային փրկության մասին տեսակցիլ բարձրաստիճան անձերու հետ»-ը, ըստ Վարդհոգյանի, կնշանակեր երթալ ու իրեն համար դրամ մուրալ։ «Տեսակցություն»-ը 35—40 ոսկի բերավ իրեն։ Ուրախ էր Վարդհոգյան և Փարիզեն կգրեր իր ծանոթներուն. «Անկեղծ ընկերներ, մեծ քաջալերություն կգտնամ այստեղ և կհուսամ, որ ազգային փրկության օրը մեր հուսացածեն շուտ պիտի հասնի։ Եթե իմ լուսանկարներուս վաճառումեն մի շահ գոյացավ, խնդրեմ անմիջապես ղրկեցեք բոսթայով»։

Այս դրամը զինքը բավական ատեն ապրեցուց Եգիպտոսի մեջ՝

ուր վերադարձած էր։ Հետո ժամանակը եկավ նորեն «տեսակցելու բարձրաստիճան անձերու հետ»։ Այս անգամ սակայն քիչ մը հեռու պետք էր երթալ նոր որս գտնելու համար։

— Որ մենք հերոս, պետք է երթանք նաև մեր ռուսահայ անկեղծ ընկերներու մոտ։

Ու ահա Վարդհոգյան կմտնար շոգենավ։

Այդ առաքելությունը հուսացած արդյունքը չտվավ կարծեմ, որովհետև շուտ վերադարձավ։

— Ծո՜, կենե՞ մի եկար...

Այս անգամ այդ բառերով ընդունած էին զինքը, որ տարի ու կես առաջ օրերով պատրաստություն կտեսնեին արժանավայել ընդունելություն մը ընելու համար հայոց «անդրանիկ հերոս»-ին։ Խեղճ Վարդհոգյան, ինք ալ Արտաշեսի պես կրնար գոչել՝ «Ավա՜ղ, փառաց անցավորի»։

***

Վերջին անգամ, երեք ամիս կա, Ալեքսանդրիայի մեջ տեսա զինքը։ Փետուրները թափած էր բոլորովին։ Ամենեն լքված ու արհամարված՝ տրտում, տխուր կթափառեր փողոցները։ Հիմակ Հայաստանը փրկելու համար ծրագիրներ չուներ, ոչ ալ իր բազուկներուն ներբողը կկարդար։ Չէ՛, պարզապես դոնապանության կամ ծառայության պաշտոն մը կփնտռեր հացը ճարելու համար ու չէր գտնար։

Լմնցա՜ծ էր «որ մենք հերոս»-ը։

***

Եվ սակայն ահե՜ղ սպառնալիքի մը պես դեռ ականջիս կհնչեն Շերիֆ փաշա փողոցեն կայարան գացած միջոցնուս Վարդհոգյանի ըրած խոսքերը.

— ...Բայց մեծը հրաշալի բան է, ճիշտ ինծի կնմանի։

Ուրեմն ափսո՜ս, ապագա սերունդն ալ իրեն Վարդհոգյանը պիտի ունենա...

Դ

ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԻՔԸ

— Վա՜յ, հո՞ս ես ընկեր։

Այս բառերով ողջունեցի մեր բարեկամը, Դաշույն Արտունի, զոր տեսած էի արդեն Աթենք ու հետո Եգիպտոս, երբ նորեն իրեն հանդիպեցա Մարսելյ, Քանբպիեռի վրա։

— Այո՛. երկու ամիս է, հոս եմ,— պատասխանեց իրեն հատուկ կեղծ լրջությամբը, բառերուն խորհրդավոր իմաստ մը տալ ճգնելով։ Բախտը զիս հոս նետեց. նայինք սա անիծյալ Համիտը մեզ դեռ ո՞ր տեղվանքը պիտի պտըտցնե։

Հետո՝ մեկեն թեւս մտավ ու անուշ, փաղաքշոտ ձայնով մը, որուն մեջ չեմ գիտեր ինչ պապակյալ բան մը կար։

— Ապսենթ մը կխմցնե՞ս կոր,— հարցուց։

— Քալե նայինք,— ըսի իրեն այն տիրական այլ միանգամայն ներողամիտ շեշտովը, զոր միշտ ունեցած եմ նմանօրինակ պարագաներու մեջ։

***

Պոլիս ճանչցած էի զինքը առաջին անգամ, երբ Պահճե-Քաբու, վաշխառուի մը քով գրագիր էր և Կարպիս կկոչվեր։ Զվարճասեր, թեթևամիտ, մտացի տղա մըն էր, որուն վրա երբեք հայրենասիրական ախտանիշներ չէի նշմարած Պոլսի մեջ։ Օր մը միայն, Հալքի կղզին, երբ օղի կխմեր, հանկարծ ըսավ.

— Ի՜նչ աղեկ կըլլար, եթե հոս հայու սրճարան մը ըլլար, հոն կերթայինք և ստակնիս փոխանակ հույները առնելու՝ հայը կառներ։

Այդ խոսքերուն ուշադրություն չդարձուցի այն ատեն, հետո իմացա որ Կարպիս ժամանակե մը ի վեր սկսած է եղեր «Դրոշակ» կարդալ և հեղափոխականի համբավ մը շինել իրեն համար։ Նույն միջոցին դեսպանները բարենորոգմանց ծրագրովը կպարապեին և ժողովրդի մեծ մասը այնպես կկարծեր, թե այդ ծրագիրը Հայաստան մը պիտի տար մեզի թագավորով, բանակով ու պաշտոնյաներու լեգեոնով մը, այնպես որ հայերուն մեջ պաշտոնաբաշխություններ կըլլային արդեն ամեն մարդուն իր արժանիքին

ու կարողության համեմատ, բնականաբար առաջնություն մը տրվելով հեղափոխականներուն։ Կարպիս ուզած էր պատրաստ գտնվիլ ամեն պատահականության հանդեպ և ասոր համար պատշաճ դատած էր հեղափոխականի գույն մը տալ իր խոսքերուն, մորուքին ու գավազանին։ Խոսքերը կովկասյան հոլովումներ առած էին, մորուքը սրածայր եղած էր ու գավազանին կոթը կիսաբոլոր։ Իր հույսերը, որոնք վերջնականապես օր մը ինծի հայտնեց, չափազանց հավակնոտ չէին։ Կարծեմ Բաղեշի ապագա ազգային դրամատան փոխ-անօրեն կամ Վանա լճին ապագա շոգենավային ընկերության գանձապահ ըլլալ կուզեր։ Ազդեցիկ դաշնակցական մը Կարպիսի անունը նշանակեր էր արդեն տետրակին մեջ և գործը մնացեր էր միայն բարենորոգմանց ծրագրին գործադրության։

— Ա՜խ, մեյ մը աս ծրագիրը ստորագրե՞ր Սուլթանը,— կհառաչեր Կարպիս այն տենդալից օրերուն մեջ, ուր ամբողջ Պոլսո հայությունը հարցական նշանի մը փոխված էր կարծես Ստորագրեց-ին վրա դրված։

— Ստորագրե՞ց...

— Ո՜հ, այո՛, ստորագրե՞ց.— այսինքն՝ կուսակալ եղա՞, կառավարիչ եղա՞, գայմագամ եղա՞, ոստիկանապետ եղա՞, դատավոր եղա՞, տեֆտերտար եղա՞, գանձապահ եղա՞, քննիչ եղա՞, դատախազ եղա՞, մեքթուպճի եղա՞, բան մը եղա՞։

Չէ՛, չստորագրեց, ավա՜ղ, ու օր մը բոլոր այդ հույսերը երիթացած թափթփեցան Պոլսո քարափներուն մոտ կեցած շոգենավներուն մեջ, որոնք փոխադրեցին զիրենք Բաղեշեն ու Վանեն ու Էրզրումեն շատ հեռու տեղվանք։ Կարպիս այդ ընդհանուր ափլափումին մեջ զինքը գտած էր Բանթելենիի շոգենավերեն մեկուն մեջ ու նետված Բիրեյի քարափին վրա։

Հոն հանդիպեցա իրեն, առաջին անգամ Պոլսեն մեկնելես ի վեր։

— Բարև, Կարպի՛ս,— գոչեցի քովը մոտենալով։

Դողահար առաջացավ դեպի ինծի ու ականջս ի վար մրմնջեց պազատագին ձայնով մը.

— Ամա՛ն, տունս կավրես կոր, Կարպիս մի գոչեր զիս... Դաշույն է անունս։

Հետո տարավ զիս հայերու շրջանակեն հեռու, Փաշա Լիմանիի կողմը առանձին սրճարանի մը անկյունը, և երկու սուրճ ապըսպրելե ետքը, ըսավ.

— Հիմա ես Պահչե-Քաբու սարաֆ Պողոս աղային գրագիրը չեմ... ատանկ մարդ չեմ ճանչնար, ավազակ բուրժուաներու հետ գործ չունիմ, ո՛չ ալ անունս Կարպիս է... Հիմակ, բարեկա՛մ, դաշնակցական նախկին գործիչ մըն եմ, Դաշույն Արտունի...

Ու Կարպիս այս վերջին բառերը արտասանեց աչքերը այլանդակորեն դարձուցած, ձայնին չեմ գիտեր ինչ ոմբային հնչունություն մը տալով։ Վառոդի հոտ մը կարծես տարածվեցավ սրճարանին մեջ։

— Ես,— շարունակեց,— պարսկական սահմանագլխեն ներս մտած եմ, հայդուկախումբեր կազմակերպած եմ, քյուրդեր սպանած եմ, բանտարկված ու շղթաներս կոտրելով փախած եմ... Ահա ես ասանկ մարդ մըն եմ հիմա...

— Ինչո՞ւ համար այդ ամենքը,— հարցուցի միամիտ շեշտով մը՝ որուն մեջ սակայն կրցա քիչ մը հեգնություն խառնել։

— Ինչո՞ւ համար... որովհետև սարաֆ Պողոս աղան խանութը գոցեց և ես բացը մնացի ու ալ Պոլիս չէի կրնար ապրիլ։ Գացի գտա մեր դաշնակցական ներկայացուցիչը, ան, որ անունս իր տետրակին մեջ նշանակած էր իբրև անկախ Հայաստանի ապագա պաշտոնյաներեն մեկը, և խնդրեցի, որ օգնություն մը ընե ինծի, որպեսզի կարենամ Պոլիսեն դուրս գլխիս ճարը նայիլ.— «Նյութապես բան մը չեմ կրնար ընել» պատասխանեց, «բայց քեզի նախկին գործիչի լավ վկայական մը կուտամ, անով կրնաս ապրիլ արտասահմանի մեջ։ Առի վկայականը ու եղա նախկին գործիչ մը. բայց դժբախտաբար հոս ալ շատ դաշնակցական չի կա. եղողներն ալ, ինծի պես, կամ նախկին գործիչ են, կամ հայդուկ, կամ տեռոր...

— Գոնե հոս հասնելուդ պես ըսեիր, պանքան մտնողներեն ես։

— Մտածեցի ատիկա, բայց դեպքը շատ նոր է... քիչ մը ատեն անցնելե ետքը՝ ե՛ս ալ պիտի մտնամ պանքան մտնողներուն մեջ... Թեև քիչ մը աճապարելու է, որովհետև արդեն պանքայի հերոսներուն թիվն ալ քառասունը կանցնի կոր։ Հիմակուհիմա յոթանասուններեն եմ...

— Ի՞նչ յոթանասուն։

— Չե՞ս գիտեր, եղբայր, սա մյուս յոթանասուն հերոսները, որոնք մաղ մնացեր է մյուսներուն հետ պանքան պիտի մտնան եղեր, բայց վայրկյան մը ուշ հասեր ու դռները գոցված գտեր են։

***

Կարպիս չկրցավ Աթենք ու Բիրե երկար ատեն շահագործել իր վկայականը և մեկնեցավ Եգիպտոս, ճիշտ այն միջոցին, ուր Ալեքսանդրիա կսպասեին պանքան մտնող երեք վիրավորյալները, որոնք՝ ապաքինած ըլլալով՝ ճամփա պիտի ելլեին Պոլսեն գալու համար։

Մեկնելեն առաջ Աթենքեն Կարպիս նամակով կիմացնե, թե վիրավորյալներեն ետքը տակավին Պոլիս պիտի մնան և մին միայն, որ Աթենք հասած է արդեն, իր նամակին հետ շոգենավ պիտի մտնե դեպի Եգիպտոս։

Այդ նախապատրաստությունեն ետքը, երբ որ Կարպիս կուգա Ալեքսանդրիա, ոչ մեկուն մտքեն կանցնի հարցնե իրեն, թե «Դո՞ւ ես, որ գալոցն ես, եթե այլում ակն կալցուք»։ Եկած վայրկյանեն անվիճելի, անկասկած հերոսներեն մեկը կըլլա։ Կուսակցության լիազոր ներկայացուցիչը, պ. Կակայանց, ցնծության մեջ է։ Երևակայեցեք տոնավաճառի մեջ ցուցանքներ ի տես դնող մեկը, որ վեց ոտքով ու երկու պոչով կով մը ձեռք կձգե։ Ա՛լ Կարպիսին թեն ի վար կախված կշրջի ու կշրջի Ալեքսանդրիայի փողոցները։

— Բանկայի հերոսներեն մին...— կգոչե դեմը ելլողին։

Ու այսպես Կակայանցի հովանիին տակ, Դաշույն Արտունի կներկայանար բոլոր այն շրջանակներուն մեջ, ուր հերոսը կուտե, կխմե, կպատվվի ու նվերներ կստանա, քանի մը քաջագործության պատմության փոխարեն։

Ալեքսանդրիայի եկեղեցիին բակը հանդիպեցի իրեն, օր մը, ճիշտ այն միջոցին, ուր քսան ֆեդայիի հետ քյուրտի գեղ մը արշավելու վրա էր. Ականջ ու աչք կտրած տասնի չափ ունկնդիր բրաբիոն մը կազմած էին շուրջը։ Ինք ներշնչված, քիչ մըն ալ օղիեն գլուխը տաք, կպատմեր ու կպատմեր անընդհատ։

— ...Ճիշտ կես-գիշերին ամենքս ալ նետվեցանք ձիերուն վրա ու Անգո ձորին բարձունքեն իջանք դեպի դաշտ։ Ամբողջ ձորն ու դաշտը լեցված էր թյուրք զինվորներով ու համիտիեներով, որովհետև լուր առած էին, թե ֆեդայիի խումբ մը քրտի գեղերը պիտի կոխե գիշերը։

— Ես կերթայի տղոց առջևեն, մարթինին ձեռքս բռնած, խոշոր դաշույն մը բերանս, ու մեյ մեկ ռևոլվեր ճիզմեներուս մեջ, ետևես կուգային Կարա Սագոն ու Շիլ Բաղոն ու հետո մյուս ֆեդայիները։

— Տղե՛րք,— ըսի,— սուղ ծախվինք... Ես կկարծեի, թե այդ վատ շները պիտի հարձակին մեր վրա, բայց հազիվ թե մեր ձիերուն ոտքին ձայնը առին, սկսան խենթի պես փախչիլ. «Ամա՜ն, ֆեդայիլեր կելիորլար» պոռալով։ Մենք անցանք ձորին մեջեն ու առաջ գացինք դեպի Շեյխ Օսմանին գեղը։

— Տղե՛րք, պատրա՞ստ եք,— պոռացի։

— Կեցցե՛ ֆեդայիները,— գոչեցին ամենքը մեկ բերան, ու հարձակեցանք գեղին վրա...

***

Քանի մը օր ետքը, Կարպիս, Մասիսի սրճարանը պանքայի հարձակումը կպատմեր.

— Տղե՛րք,— գոչեցի, ռումբերը պատրաստ են, և այլն, և այլն։

Ու այսպես օրերով՝ «Տղերք գոչեցի»-ներու շնորհիվ Կարպիս պարարեց իր փորն ու գրպանը, մինչև որ երեք հարազատ հերոսները եկան Պոլսեն ու ինք ստիպվեցավ թողուլ Եգիպտոսը։

Բայց ա՛լ կատարելապես նախկին գործիչ մը եղած էր։ Իր պատմությունները, հետզհետե «սրբագրյալ ու հավելյալ», վավերականության դրոշմը առած էին։ Պատմած ատեն չուներ առաջին օրերու դեղևումը, և խորին համոզումով կխոսեր իր «անցյալ» գործունեության վրա։

Այսպես տեսա զինքը, երբ վերջին անգամ իրեն հանդիպեցա Քանըպիեռի վրա։

Սակայն, ավա՜ղ, Մարսեյլ այն ամուլ հողերեն է, ուր հեղափոխության մակաբույծները չեն կրնար ուռճանալ։ Կարպիսի «Տղերք գոչեցին» չէր թրթռացներ հայ վաճառականներու սրտին թելերը։

— Ժնև չերթա՞ս,— ըսի իրեն, երբ վիճակին դառնությունը պարզեց ինծի։

— Ի՞նչ ընելու,— գոչեց նախկին գործիչը,— հերոսությո՞ւն պատմելու, ես մեկ նետեմ նե՝ անոնք տասը կջարդեն։

— Բայց անշուշտ իբր ընկեր նյութական օգնություն մը չեն զլանար։

— Չէ՛, եղբայր մեր մեջը ապակեղրոնացում կա... ամեն տեղի դրամը այն տեղի մարդոց համար է, անոնք միայն կրնան և իրավունք ունին...

Գլխով հարցական շարժում մը ըրի։

— ... Մատակարարելու,— հառաչեց Կարպիս։

Ե

ԿԵՂԾ ԼՐՏԵՍԸ

— Մյուսյու Ժաքը պակաս է այս գիշեր,— ըսավ տանտիրուհին, երբ թղթախաղին սեղանը սարքվելով՝ տասնի չափ հյուրերը բոլորեցան շուրջը։

— Աս իրիկուն տեսա զինքը Շիտակ ճամփան, երկայն ֆեսով մեկու մը հետ կերթար կոր,— պատասխանեց Մարկոս էֆենտի, թուղթերը խառնելով։

— Երկա՞յն ֆեսով,— շեշտեց մեկը։

— Այո՛, կարծեմ տաճիկ էր։

— Իրա՞վ է, որ խաֆիեները երկար ֆես կդնեն,— հարցուց օրիորդ Զարուհի, ձայնը սովորականեն ավելի ցած հանելով։

— Անանկ կըսեն կոր։

Թուղթերը բաժնվեցան, խաղը սկսավ և սակայն տարտամ մտատանջություն մը կար ամենուն քով։ Երկար ֆեսով մարդը մյուսյու Ժաքին հետ սկսած էր անհանգիստ ընել զիրենք։

— Դեպի վե՞ր կերթային կոր,— հարցուց մին, խոսքը Մարկոս էֆենտիին ուղղելով։

— Չէ՛, դեպի վար։ Ուշ մնացածի պես կքալեին կոր։

Պատասխանը, փոխանակ հանդարտեցնելու, ավելի հուզեց ունկնդիրները։

— Ո՞ւր կերթան դեպի վար,— հարցուց գրեթե ինքնիրեն Յարգիս էֆենտի, կնճռոտ ու անլուծելի հարցի մը դիմաց գտնվողի երկմտությամբ։

Խաղը կշարունակվեր, բայց միտքերը խոռված էին։

— Շիտակ ճամփան ո՞ր կողմը տեսար սա մարդը։

— Ռուսիո. դեսպանատան առջևները։

— Ժամը քանի՞ին։

— Տասներկուքը կար, կազերը վառելու վրա էին։

— Դեպի վա՞ր կերթային կոր։

— Դեպի վար։

Հուսեփիկ աղա հավաքեց բոլոր ստացված ծանոթությունները, լույս մը ծագեցնելու համար անոնց մեջեն։

— Ժամը տասներկուքին, Շիտակ ճամփան, Ռուսիո դեսպանատան առջևները, մյուսյու Ժաք տաճկի նմանող երկար ֆեսով մեկու մը հետ, ուշ մնացողի մը պես քալելով, դեպի վար կերթա...

Պահ մը ամենքը կարծեցին, թե Հուսեփիկ աղա հետևություն մը պիտի հանե իրողություններու այդ կուտակումեն, բայց ոչ։ Երկու ափը բացավ, աչքերը դեպի ձեղունը հառեց, դեմքը ծամածռեց, լուռ կերպով հասկցնելու համար, թե խելքը չի հասնիր կոր։

— Զապթիեն չերթան,— գոչեց տիկինը, իր ըսածեն ինքն ալ սահմրկած։

Նույն միջոցին դուռը զարկին։

— Վո՞ւյ ան է։

— Բարով խերով չի գար։

— Կարճ կապեցեք։

Եկողը փաստաբան Կարապետ էֆենտին էր։

— Վա՞յ, արդեն սեղանը դրեր եք,— գոչեց գոհ ու զվարթ։

Բարևուքի արարողությենեն ետքը, տանտիրուհին լուրջ, հանդիսական ձայնով մը հարցուց նորեկին.

— Կարապետ էֆենտի, քեզի բան մը պիտի հարցնեմ, շիտակը ըսե, սա մյուսյու Ժաքին վրա ի՞նչ կարծիք ունիս։

— Բոքերեն երեք ոսկի տալիք ունի ինծի, դեռ չտվավ, աղեկ կարծիք մը չունիմ վրան։

— Չէ՛, իմ հարցուցածս ան է, որ ինչպե՞ս մարդ է։

— Առավ-փախավին մեկն է։

— Աւ՛իկա ամենուս գիտցած բանն է, բայց կկարծե՞ս որ խաֆիե ըլլա։

— Կրնա ըլլալ, շատ աղեկ կրնա ըլլալ... Ի՞նչ, բա՞ն մը լսեցիք որ...

— Մարկոս էֆենտին տեսեր է այս իրիկուն, Շիտակ ճամփան, երկայն ֆեսով մարդու մը հետ կերթա կոր եղեր։

— Ուշ ատեն, Թյունելի մոտերը, դեպի վար կերթան կոր եղեր,— ավելցուց Հուսեփիկ աղա տաճկերեն լեզվով։

— Շիտակը ըսեմ, տիկի՛ն,— պատասխանեց Կարապետ էֆենտին,— ես արդեն սա մարդեն կկասկածեի կոր քիչ մը։ Ինչո՞ւ, չեմ գիտեր, բա՞ն մը լսած եմ, չեմ լսած, բա՞ն մը տեսած եմ, չեմ տեսած... բայց կկասկածեի կոր։ Զգուշանալու է, էֆենտիմ, զգուշանալու է։ Հիմակ անանկ ատեն մըն է, որ մարդ ինքզինքեն անգամ կկասկածի կոր։

— Մինչև հիմա բան մը չըսի,— խոսք առավ անդիեն ծերունի մը,— բայց քանի որ տեղը եկավ, ես ալ ըսեմ, որ ատ մարդուն վրա բնա՛վ վստահ չէի։

— Իրա՛վ է,— վրա բերավ Մարկոս էֆենտի,— գիտես քի բան մը ունի վրան։

— Երբեմն կամուրջին վրա կտեսնամ, արագ-արագ քալելով կերթա,— ըսավ ուրիշ մը։

— Օր մը Պեյխոզ հանդիպեցի իրեն։

— Պեյխո՞զ... Պեյխոզ ի՞նչ գործ ունի։

— Անոր մայրը արդեն ժամանակին շատ խոսված կնիկ մըն էր։

— Հապա հա՞յրը, երկու անգամ թոփ նետած է։

— Աղբարն ալ վերեմեն մեռավ։

— Շատ երես տալու չէ, վարպետությամբ մը ոտքը կտրել տանք մեր տունեն,— եզրակացուց տանտերը,— հոս ալ գա նե՝ նայեցեք անզգուշությամբ վտանգավոր խոսք մը չփախցնեք բերաննուդ։

Մյուսյու Ժաքին խաֆիե ըլլալը այսպես հաստատվեցավ և վճռվեցավ։

* * *

Ամենեն անվնաս մարդերեն մեկն էր մյուսյու Ժաք։ Երեսուն տարեկան պարապ պտտող Բերացի երիտասարդ մը, որ ցերեկը անկողինը կանցներ իր ժամանակը ու իրիկվան դեմ դուրս կելլեր սրճարան երթալու և քանի մը օղի խմելու համար։ Գիշերն ալ կամ Քոնքորտիայի ու Բալե Քրիսթալի ֆուայեները կսլքտար, կամ ծանոթ ընտանիքներու տունը բոքեր խաղալու կերթար։ Ապրուստի որոշ միջոց մը չունենալով՝ ընդհանրապես փոխառություններով կամ թղթախաղեն շահած դրամովը կապրեր։ Հայկական խնդիրը այնչափ կշահագրգռեր զինքը, որչափ Ջինաստանի երկաթուղիներուն խնդիրը։ Ամեն անգամ, որ սրահի մը մեջ օրվան խնդիրներուն վրա խոսք բացվեր, անդիմադրելի պզտիկ քուն մը կուգար վրան, զոր միայն թղթախաղի սեղանին մեջտեղ բերվիլը կրնար վանել։

Ընտանիքներու մեջ սիրով կընդունեին զինքը, նախ՝ լավ բոքեր խաղացող մը ըլլալուն, երկրորդ՝ միշտ քովը անտիպ բամբասանք մը գտնվելուն համար։ Ամեն անգամ որ տանտիրուհին— «Մյուսյու Ժաք, ի՞նչ նոր լուր» հարցներ, մյուսյու Ժաք պատրաստ ուներ էրիկ-կնկան կոիվ մը, բոքերի առթիվ ծագած վեճ մը, ետ եղած նշանտուք մը կամ ամուսնացած կնոջ մը արկածները իր սիրահարին հետ։

— Ո՞ւր տեղեն ալ կիմանաս,— կըսեին ունկնդիրները հիացմամբ, որուն մյուսյու Ժաք խորհրդավոր ձևով մը կպատասխաներ.

— Խուշը խապար կբերե ինծի։

Արդ, մեր վերը հիշած խոսակցութենեն շաբաթ մը ետքը ամբողջ Բերայի մեջ տարածված էր, թե մյուսյու Ժաք լրտես մըն է, թե ամեն օր Ջապթիե կերթա ու միշտ խաֆիեներու հետ կպտրտի։ Ինք դեռ բան մը չէր իմացած իր վրա պտտած զրույցներեն։ Ծանոթները կշարունակեին ընդունիլ զինքը, բայց առջի մտերմությունը, առջի անփույթ խոսակցությունը չկար իրեն հետ։ Սենյակ մը ներս մտած միջոցին սկսված խոսակցությունները կդադրեին և տանտիկինները լուր չէին հարցներ իրեն։

Իր լրտես ըլլալը առանց դժվարության, առանց քննության, ընդունված էր ամենեն։

— Վա՞յ, ան ալ խաֆիե եղեր է,— ըսեր ու անցեր էին։

Վերջապես, շշուկը հասավ մյուսյու Ժաքին ականջին.— «Ե՞ս, խաֆիե՞...», և խեղճը զարմանքեն ու բարկութենեն ինքզինքը կուտեր։ Գնաց ծանոթներուն տունը, բողոքեց այդ զրպարտության դեմ։ Ամենքն ալ գրեթե միևնույն խոսքերը ըրին իրեն.

— Մյուսյու Ժաք, կարևորություն մի տար, թշնամիդ մեկը բան մըն է ըսեր է։ Մեր ականջն ալ հասավ ատանկ խոսք մը, բայց մենք չե՞նք ճանչնար քեզի։

Ու մեկնելեն ետքը.

— Անամո՞թ, երես ունի տե բողոքելու ելեր է... ա՛լ ասոր վրա աղեկ մը համոզվեցա խաֆիե ըլլալուն։

Մյուսյու Ժաք իր բողոքներուն անզորությունը տեսնալով՝ ուրիշ միջոցի դիմեց։ Սկսավ ազգասիրական հովեր առնել։

— Անպիտան,— ըսին եւեւեն,— ազգասեր կձեւանա կոր բեր-
ներուս խոսք առնելու համար։

Տաճկական կառավարության դեմ խոսեցավ.

— Աներեսը դիտմամբ կըսե, որ նայի թե իրեն իրավունք
պիտի տա՞նք։

Որոշեց բնավ խոսակցության չմասնակցիլ։

— Բիս մարդը բերանը կըկղպե կնստի, որիշներուն ըսածը
մտիկ կընե։

Սուլթանը սկսավ պաշտպանել։

— Ատ էր պակաս, սրիկա՛...

Ցէ, ճար չի կա, ազատում չի կա, ուզե չուզե պետք է, որ
լրտես մնա։

* * *

Այն ատեն մյուսյու Ժաք լուսավոր գաղափար մը ունեցավ։

— Քանի որ,— մտածեց,— անպատճառ իբր լրտես պիտի
նկատվիմ, գոնե ջանամ օգուտ մը քաղել անկե։

Ալ չբողոքեց իրեն տրված ստոր դերին համար։ Հագավ
լրտեսությունը, ծպտվեցավ անով և սկսավ շահագործել զայն։
Գապը Ալիի ցույցին վրա քանի մը ամիս անցեր էր. ձերբակալու-
թյունը, խուզարկությունը և բանտարկությունը ամենուն գլխին վրա
կսավառնեին սպառնալից։ Մյուսյու Ժաք շարունակեց այցելել ծա-
նոթ ընտանիքներու տունը։ Իրավ է, որ առաջվան մտերմությունը
ցույց չէր տրվեր իրեն, բայց ի փոխարեն ավելի հարգանքով կը-
վարվեին հետը։

— Ամա՜ն, գեշ մարդուն հետ գլուխ չելլվիր, հետը աղեկ
երթանք,— կըսեին բոլոր անոնք, որոնք «գեշ մարդ» շինած էին
մյուսյու Ժաքը։

Ինքն ալ հիմա փոխված էր։ Հանդիսական, կարևոր մարդու մը
հովերը ուներ. ա՛լ բամբասանքի լուրեր չէր բերեր, այլ ավելի լուրջ
բաներու վրա կխոսեր.

— Էֆենտիմ, այսօր Զապթիեն էի, նորեն քսան հոգի բերին,
ամենուն ալ թևերը կապված։

— Հանցանքնին ի՞նչ է եղեր, Ժաք էֆենտի։

Մյուսյու Ժաք՝ Ժաք էֆենտի եղած էր։

— Ի՞նչ պիտի ըլլար, էտեպսիզություն, որը նամակ բաժներ

է, որը փաթա ժողվեր է, որը Հնչակ ցրվեր է... փաշան ըսավ,
որ եթե ասանկ երթա, բոլոր տուներն ալ խուզարկել պիտի տա.
մանավանդ Բերա ու Դատը-գյուղ։ Վտանգավոր բան մը ունիք նե՝
մեջտեղը մի ձգե՛ք, վերցուցե՛ք, ջնջեցե՛ք, ետքը մեծ փորձանք
կբացվի գլխներնուդ... չեմ խառնվիր։

Եվ ընդհանուր բողոք մը կբարձրանար.

— Ժաք էֆենտի, ի՞նչ կըսեք, մեր տունը անանկ բան
կգտնվի՞. մենք տերության հավատարիմ մարդիկ ենք։

— Գիտեմ, ճանըմ, գիտեմ, ես արդեն պետք եղածը ըսի փա-
շային։

— Շնորհակալ ենք, գիտենք, որ դուք մեր բարեկամն ե՛ք,
հարկավ ձեր շնորհիվ ապահով կրնանք ըլլալ։

— Մի՛ վախնաք, ես հոս կեցեր եմ, փաշան զիս աչքին
լույսին պես կսիրե կոր, ամեն բան իմ խորհրդովս կընե. ինչ ըլլա
նե՝ «Ժաք էֆենտի, սեն նե՞ տերսին պագալըմ» կհարցնե։

Ու ահա հարգանքն ու պատկառանքը մյուսյու Ժաքի նկատ-
մամբ՝ գրեթե երկյուղածության կհասներ ամենուն քով։

Ընդհանրապես այդ տեսակ խոսակցությանց արդյունքը կըլլար
հետևյալ օրը Ժաքին կողմե եկած նամակ մը, որով քանի մը ոսկի
փոխ կուզեր։ Դրամը կվճարվեր անմիջապես, նույնիսկ տեսակ մը
գոհունակությամբ։ Քանի մը ոսկիի փոխարեն այնչա՜փ ազդեցիկ
պաշտպանություն մը վայելել այդ անստույգ ժամանակին, ան-
շուշտ մեծ բախտ մըն էր։

Կամաց-կամաց մյուսյու Ժաք արվեստի մը կատարելությանը
հասցուց իր կեղծ լրտեսությունը։

Օր մը հուզված՝ վազեց Ղալաթիա, Հուսեփիկ աղային գրա-
սենյակը։

— Դուն հոս անհոգ նստեր ես,— գոչեց,— ու չես գիտեր ինչե՞ր
կդառնա կոր գլխուդ վրա։

— Ի՞նչ,— հարցուց խեղճը շլմորած։

— Ի՞նչ պիտի ըլլա, խաֆիեին մեկը քեզ ժուռնալ է ըրեր,
քոմիթեեն ես եղեր, իրենց փարաները դուն կպահես եղեր։ Ճանըմ,
Հուսեփիկ աղա, ինչո՞ւ ատանկ գործերու մեջ կմտնաս, ինչո՞ւ
պետք, դո՞ւն մնացիր ազգը փրկող, զավակներու տեր, այդ տա-
րիքիդ մեջ... վաղը գան քեզի բռնեն, տունդ-տեղդ խուզարկեն,
սենյակդ գոցեն, քեզ դատապարտեն կախեն նե՝ ի՞նչ պիտի ընես։

Հուսեփիկ աղա, երեսին գույնը նետած, ահ ու դողի մեջ.

— Ի՞նչ կըսեք, ժաք էֆենտի, ի՞նչ կըսեք, ես քոմիթե... իրենց փարաները պահե՞մ... ատ ի՞նչ զրպարտություն...

— Ալ կրնաս նե՝ Հյուսնի պեյին հասկցուր դուն զրպարտություն ըլլալը։

— Է՛յ, ի՞նչ ընեմ հիմա... ամա՛ն ժաք էֆենտի, խելք մը սորվեցուցեք ինծի... ինտո՞ր իմացաք ժուռնալ ըլլալը...

— Զապթիեն էի աս առտու, երբ որ խաֆիեն բերավ ժուռնալը, առի ձեռքեն սանկ աչք մը նետեցի վրան, անունդ տեսածիս պես անմիջապես մարդուն ըսի, որ փաշային չի տա ու քովը պահե, մինչև որ գամ, ու վազեցի քեզի... սըտեղեն քսան ոսկի տուր մարդուն ձեռքը դնենք, ազատիս։

Ոսկիները կհամրվին ու մյուսյու ժաք կմեկնի։

Մեկիկ-մեկիկ, Մարկոս էֆենտի, փաստաբան Կարապետ էֆենտի, Սարգիս էֆենտի կվճարեն իրենց փրկանքը մյուսյու ժաքին, որ ա՛լ ապրուստը ապահոված՝ աղջիկ կինտոռ ամուսնանալու համար։

Զ

ԱՆՎԱՎԵՐ ՀԵՐՈՍՆԵՐ

— Միքոն է՛... հետը տեսնվեցա նե՛... զարմանալի բան։

— Եղբայր, մի՛ բռնկիր, խնդիրը քսան ղրուշին վրա չէ, նա կուզես նե հանեմ տամ, միայն թե հասկնանք, նորեն խաբեբա մը չըլլա։ Ո՞վ է ատ Միքո ըսածդ։

— Հերո՞ս, հերո՞ս... մարդուն վրայեն կվազե կոր հերոսությունը։ Տասը տարի կովեր է, խմբապետ է եղեր։ Պատմեց, տեղնի-տեղոք պատմեց ամեն բան, թվականներով, անուններով։ Ո՛ն, ատանկ մարդու մը քսան ղրուշ պիտի տաս, ու դժվարություն կընե՞ս... ծո՛, պատի՞վ է քեզի համար։

— Անշուշտ, եղբա՛յր, քառասուն տամ, բայց...

— Բայց մայց չի կա. ես ապուշ չեմ, ատ մարդը հերոս է կըսեմ կոր, լմնցավ։

— Է՛յ, ի՞նչ ըրած է նայինք ատ հերոսդ։

— Ինծի նայե, չեմ ուզեր, որ ատանկ ծաղրական խոսիս իրեն նկատմամբ. վազ անցանք քսան ղրուշեդ։ Մնաս բարով։

— Տղայություն մի ըներ, նայե։ Գիտես որ ես ալ քիչ շատ հայրենասեր եմ ու ձեռքես եկածը չեմ խնայեր։ Շիտակը կըսեմ, հրացանը չեմ կրնար առնել ու կռվիլ, բայց կռվողներն ալ կհարգեմ, և երբ պետք ըլլա, կրցած օգնությունս կընեմ։

— Ես ալ անոր համար քեզի դիմեցի։

— Պատմե, նայինք, ուրեմն, ինտո՞ր ատ մարդը Ալեքսանդրիա ինկեր է։

— Զարմանալի՛ է ասոր պատմությունը։ Վանի կողմերը երեք հոգիով անցած տարի կռվեր է չորս օր երկու հարյուր զինվորի դեմ, հետո ութը հարյուր քյուրտ եկեր պաշարեր են զիրենք. տեսեր է, որ ճար չի կա, անցեր է Պարսկաստան։ Հոն ութ հոգիե նոր խումբ մը կազմեր ու նորեն հարձակեր է Մուշի կողմերը։ Նորեն օրերով պատերազմ։ Այս անգամ Երզնկայեն բանակ մը ղրկեր են իրեն դեմ. գիշեր մը բանակին մեջեն անցնելով հաջողեր է փախչիլ ու Ռուսաստան անցնիլ։ Հոնկե նորեն 12 հոգինոց խումբով մը եկեր է Ալաշկերտի վրա հարձակելու։ Ռուս կառավարությունն իմացեր ու անմիջապես բանակ մը ղրկեր է զանոնք արգիլելու համար. մյուս կողմեն՝ թյուրքերը, երկու հազարի չափ, եկեր են արշավանքը արգիլելու։ Այսպես խեղճը երկու սուրի մեջ մնացեր է ու ամիս մը անընդհատ կռվելե ետքը հաջողեր է ծպտյալ ինքզինք նետել Տրապիզոն ու հոնկե ֆրանսական շոգենավով մը փախչիլ։

— Ընկերները ո՞վ են եղեր։

— Անունները տվավ ամենուն ալ, գլխավորները՝ Վազգեն ու Արշակ կկոչվին։

— Վազգեն ու Արշա՛կ, ինքն ալ Միքո՛... ես ատ անունները տեղ մը կարդացի, կարծեմ «Դրոշակ»-ի վերջին թիվին մեջ։ Կեցիր նայիմ։

Ու ոտք ելավ, գնաց սրճարանին անկյունը դրված սեղանին վրա փնտռեց ու գտավ «Դրոշակ»-ի 31 մարտ 1899-ի թիվը և հաղթական վերադարձավ։

— Նա, քու հերոսը Գուրուպաշի նահատակներեն է, տարի մը առաջ մեռեր է։

Մյուսը առավ թերթը, երեք հերոսներուն պատկերը դիտեց. հետո կարդաց անոնց հիշատակին նվիրված հոդվածը։

— Ո՛ն, վա՛յ, անօրեն, ըսել է ատ մարդը իս խաբեբա է՝ Միքոն եմ ըսելով, վա՛յ խաբեբա, վա՛յ աներես...

***

Այո՛ խաբված էր խե՜ղճ Սիսակ Անկախյանը, հեղափոխականներու այդ բոցեռանդ, անձնվեր, միամիտ հիացողը։ Եվ առաջին անգամը չէր, ոչ ալ վերջինը պիտի ըլլար, ավա՜ղ։

Ալեքսանդրիա, Աթթարինի մեջ ունեցած իր ծխախոտի պզտիկ խանութեն անցած էին ամբողջ անվավեր Արխանյանները, Աշոտ Թաթուլները, Սուրենները, Արտաշեսները, Զավենները, Կարոները։ Իր գլխուն թափած էին բոլոր կեղծ Շանթերը, Կայծակները, Փայլակներն ու ամենուն ալ հասած ու ամենուն ալ օգնած էր։ Իր տան մեջ երեք ամիս պահած ու կերակրած էր հերոս մը, որ պարզապես դրամանենգության համար ութ տարի Աքյայի բանտը մնալե ետքը հաջողած էր փախչիլ Եգիպտոս։ Խելքը միտքը տված հերոսներուն, երեսի վրա թողած էր գործը, որ գրեթե ա՛լ չէր քալեր։ Սիկարեթները անպտշաբեր կսպառեին կրակի ու մուխի սիրահար հերոսներու շրթունքին վրա, որոնք կատաղորեն կքաշեին անոնց ծուխը, զանոնք մեկ անգամեն բնաջինջ, բնաբարձ ընելու թափով մը, և իրենց քիթեն բերնեն մուխը կժայթքեցնեին անլուր հայհոյանքի, կատաղի սպառնալիքի տարափով մը, թուքերու խառնված, անոնց սուլթանին, անոնց Մուհամմետին, անոնց կրոնքին դեմ։

— Ձեռքս անցնեին, հրացանս դնեի կուրծքերնուն, քաշեի, գետին փռեի այդ շան զավակները... անպիտաննե՜ր։

Ու հերոսը գետին կնետեր սիկարեթին ծայրը ու ոտքովը կտրորեր, կճզմեր, կտափակցներ զայն։

— Աղբա՜ր, բան մը չէ, հազար հոգի ըլլանք, թո՛ղ հազար հոգի տան ինծի, նայե ինչե՜ր կընեմ։ Մե՜կ հատ մը ձեռքես չազատիր...

Ու կերկննար, անողոք, անդիմադրելի, աննահանջելի բազուկը դեպի սիկարեթին տուփը։

— Մարդ, զենք և դրամ, ահա մեզ պետք եղածը, ուրիշ բանի պետք չունինք... սա լուցկին հոս կանցնե՞ս։

— Ծո՛, աղբա՛ր, չես գիտեր ինչե՜ր պիտի ընեինք, ինչպես կարգադրեր էինք ամեն բան... բայց ի՞նչ ըսեմ, աստուծո կրակին գան արգելք եղողները։ Նորեն ըրինք, չըրինք չէ, այդ շուներուն մարը լացուցինք, միայն թե պետք եղածին պես չեղավ... օ՜ֆ, օ՜ֆ։

Սիկարեթը արդեն լմնցած է և ուրիշ մը կհաջորդե անոր։ Սիկարե՞թ կդիմանա ասանկ խոսակցության, ասանկ հերոսին։

Բերանը բաց, ականջը տնկած, հիացիկ, Սիսակ Անկախյան երկու-երեք տարիե ի վեր մտիկ կըներ բոլոր այդ խոսքերը, որոնք իրարու կնմանեին՝ այծյամի մը երկվորյակ ուլերուն պես։

***

Հիմա դառնանք մեր պատմության։ Սիսակ երբ համոզվեցավ, «Ժոռշակ»-ի ընթերցումեն ետքը, որ դարձյալ անվավեր հերոսի մը գոհ գացած է, բարկությամբ դարձավ իր խանութը, ուր ժամացույր էր Միքոյի, անոր հանձնելու համար բարեկամեն առնելիք ստակը։

— Ասանկ խաբեբայություն չըլլար, պետք է, որ բացատրություն մը ուզեմ իրմե. հերիք քթիս խնդաց երկու շաբաթե ի վեր...

Միքոն երևցավ խանութին առջև, որոշյալ ժամեն քառորդ մը առաջ։

— Ի՞նչ լուր, սիկարա մը տուր նայինք, սա լուցկին ալ անցուր, խահվե մը չե՞ս ապսպրեր։ Օ՜ֆ. հոգներ եմ պե. ի՜նչ տաք կընե կոր այստեղ։ Դուն ալ խանութիդ մեջը կփակվիս կմնաս կոր, աղբար. ո՞ւր է, ըսիր որ ծովին եզերքը տեղ մը կա եղեր, հոն պիտի երթայինք... պաքո՞ս է, մաքո՞ս է, ինչ խառնախսի է... Ես աս տաքերուն չեմ դիմանար կոր... չեմ վարժված։ Սա աթոռը տուր։

Միքոն նստավ և շարունակեց խոսքը.

— Ի՞նչ ըրիր. գացիր տեսա՞ր մարդդ, ստակը տվա՞վ. չէ նե մի գայլու ավետարան կարդաց։ Ի՞նչ այդչափ դժվարություն կընե կոր երկվընե ի վեր... իբր թե մեծ բան մը ըլլար տալիքը։ Թող չի տա պե. թող չի տա, վազ անցանք, աստված ողորմած է, անոթի չենք մնար... տվա՞վ։

— Չէ՛, չտվավ,— պատասխանեց Սիսակ չոր, կտրուկ ձայնով մը։

— Չտվա՞վ ..

— Դուն ինծի չըսի՞ր, որ Շատախցի Միքո խմբապետն ես, Վանեցի Արշակին ու Վազգենի ընկերը։

— Է՛յ, հա՛, ըսի։

— Աղեկ. բարեկամս «Դեռշակ»-ին նոր թիվը ցուցուց, որուն մեջ երեք հերոսներուն ալ պատկերը կար։ Շատախցի Միքոն անցած տարի մեռեր է։

— Վախ զավալլը, մեռե՞ր է հե...— բացագանչեց կեղծ Միքոն, նոր սիկարեթ մը առնելով...— ան ալ գնաց, օ տա կիտտի...

— Եղբայր,— գոչեց վերջապես Սիսակ իր խոսակցին աներեսութենեն կատղած,— ինչո՞ւ ինծի ասանկ խաբեցիր և ըսիր, որ դուն ես Միքոն, ես ալ պարապ տեղը մարդուն քովը խաղք եղա...

— Վայ կիտի ասլան Միքո,— կաշխարեր մյուսը, գլուխը ճոճելով,— մեռե՞ր է հե... ինտո՞ր մեռեր է ատ լեռան պես մարդը։ Ծո՛, քեզի բոներ՝ ջուրդ կհաներ։ Ան իմ ճանչցած Միքոն է նե՝ անպատճառ տասը հատ թյուրք գետին փռելեն ետքը ինկած է... «Դեռշակ»-ը ի՞նչ կգրե կոր նայինք։

— Չեմ գիտեր,— պատասխանեց Սիսակ, որուն սրտմտությունը հետզհետե կավելնար.— խնդիրը անոր ինչպես մեռնելուն վրա չէ... սա դուն ինչո՞ւ իս խաբեցիր։

— Խաբելու ի՞նչ կա... ատ Միքո ըսածդ իմ քեռիս կսեպվի... մեր գեղը Շատախեն օրվան մը ճամփա է. քանի անգամ սուրբ Կարապետին վանքը ճիրիտ խաղացեր ենք մեկտեղ։ Դեռ երկու տարի առաջ անոր հարը պապուս արտը ծախու պիտի առներ. նա, կուզես նե՝ հարցուր վանեցի Կիրակոս աղբոր, որ հոս ժամն է և մեզի աղեկ կճանչնա... Խաբել, ատ ի՞նչ խոսք է, զարմանալի բան, քեզի ինչո՞ւ պիտի խաբեմ, ես ալ հայ չե՞մ։ Խրիմյան Հայրիկը Վարագա վանքը եղած ատեն իմ պապս վանքին խորուճին էր... մենք ալ հերոս կսեպվինք։

— Ինչ որ է, մարդը դրամ չտվավ։ Բարեկամս, գլխուդ ճարը նայե. ես ալ ավելի բան չեմ կրնար ընել. այսչափ օր է ձեռքես եկածը ըրի։ Իմ ալ կարողությունս հայտնի է, կտեսնաս կոր, կաղաչեմ ինե բան մը մի սպասեր։

— Չես կրնար նե, աղեկ,— գոչեց անվավեր հերոսը՝ բարկությամբ ոտք ելլելով...— բայց ատանկ խոսելու իրավունք չունիս. քենե բռնությամբ բան չուզեցինք, կոկորդդ չխմեցինք, փորդ դանակ չխոթեցինք... չես կրնար, լմնցավ։ Պարզապես կըսես, որ չեմ կրնար... բայց երկար չեն ըներ։ Տե՛ր աստված, ի՞նչ մարդերու մնացինք։ Բարով խերով չիյնայինք աս անիծած քաղաքը։ Մնաս բարով։

— Ազատեցանք ձեռքեն,— մտածեց Սիսակ ցնծագին։

Չէ՛, դեռ չէր ազատած...

Միքոն քանի մը քայլ առնելեն ետքը հանկարծ դարձավ դեպի խանութ։

— Սրկե՛ քանի մը սիկարա տուր,— ըսավ անպատկառ արհամարհանքի շեշտով մը։

— Ա՛ռ։

Այս անգամ «հերոսը» աներևույթ եղավ վերջնականապես։

* * *

Հազիվ ամիս մը անցեր էր։

Սիսակ Անկախյան առտու մը խանութին առջև, աթոռի մը վրա նստած, թերթ կկարդար, երբ քառասուն տարեկանի մոտ, չոր ու երկայնահասակ մարդ մը դիմացը կեցավ և հարցուց.

— Պարո՛ն, դուն Հա՞յ ես։

— Այո՛,— պատասխանեց ծխավաճառը։

— Ո՞ւր է սա մարդուն տեղը, ժամ մըն է կփնտռեմ կոր,— շարունակեց մյուսը, պզտիկ թուղթ մը երկնցնելով։

Սիսակ առավ թուղթը, որուն վրա իր անունն ու հասցեն գրված էր։

— Ես եմ փնտռած մարդդ։ Ո՞վ տվավ սա թուղթը։

— Աստեղացի հայերուն տեղերը իմանալ ուզեցի, Մասիսի սրճարանեն տվին։

— Ի՞նչ կա, ըսելիք մը ունի՞ք։

— Ի՞նչ պիտի ըլլա, հայ չե՞նք, օտար երկիր ինկեր ենք, հարկավ իրար պիտի փնտռենք։

— Անանկ է... նստեցե՛ք։

Ու Սիսակ աթոռ մը տվավ իր խոսակցին։

— Նո՞ր եկած եք Ալեքսանդրիա։

— Քանի մը օր կա։

— Ո՞ր կողմեն։

— Հիմա խնդիրը իմ ուր տեղեն գալուս վրա չէ... հոս ի՞նչ պիտի ընեմ, ասոր վրա մտածե։ Դուն օտարական չես, հայ ես, քեզի շիտկե շիտակ ամեն բան կըսեմ... վրաս երկու ղրուշ ունիմ միայն։

— Ձեր անունը ի՞նչ է։

— Մարկոս, Կիրակոս, Թորոս, ինչ կուզե ըլլա... ինծի սենյակ մը պետք է։

— Տաճկաստանե՞ն կուգաք կոր,— հարցուց Սիսակ, որ իր խոսակցին խորհրդավոր ձևերեն սկսած էր հետաքրքրվիլ ու նշանավոր հերոսի մը հոտը առնել։

— Տաճկաստանեն կուգամ, Ռուսաստանեն կուգամ, Հինտիստանեն կուգամ, տեղե մը կուգամ կոր հարկավ։ Երկինքեն չինկա...

— Այո՛, բայց գիտեք,— պատասխանեց Սիսակ ձեռքերը շփելով,— վերջապես, պետք է, որ ձեր անունը գիտնամ գոնե, որպեսզի ըստ այնմ, եթե կարելի է, աշխատիմ օգտակար ըլլալու։ Ձեր խոսքերեն դատելով ինծի այնպես կթվի, թե փախստական հեղափոխական եք... չեմ գիտեր, բայց իմ վրաս այդ տպավորությունը ըրիք։

— Հեղափոխական,— ըսավ մարդը գլուխը օրորելով ու ձեռքը շարժելով,— է՛հ, եղանք, ըրինք, զարկինք, զարնվեցանք... բայց ի՞նչ օգուտ, դրամ չի կա, մարդ չի կա, զենք չի կա։

Սիսակ անծանոթին կնայեր աճեցուն հետաքրքրությամբ, որուն կսկսեր տեսակ մը հիացում խառնվիլ.— «Թերևս Սամսոնցի Մինաս Օղլուն է»,— կմտածեր, որու մասին լսած էր, թե նույն օրերը Ալեքսանդրիա պիտի գար։ Ապահով ըլլալու համար հարցուց հանկարծ.

— Սամսոնի կողմե՞րն էիք։

— Աղբա՛ր, քենե բան մը պիտի չկրնամ ծածկել, հասկցա,— գոչեց մյուսը...— ես Մինաս Օղլուն եմ։

— Ջրսե՛ս, եղբա՛յր,— գոչեց Սիսակ տեղեն ցատկելով ու մարդուն վիզը պլլվելով։

Երբ որ հուզումը քիչ մը հանդարտեցավ, տակավին դողահար ձեռքերով՝ Սիսակ սիկարեթին տուփը առավ և հրամցուց «Մինաս Օղլուին»։ Բայց հանկարծ ետ քաշեց տուփը.

— Չէ՛, կեցե՛ք, ձեզի ձեր երկրին՝ Սամսոնի ծխախոտեն տամ. հոստեղ Լմբերիալ կըսեն ասոր. ամենեն բարձր տեսակն է, Խրտիվին ու Լորտ Քրոմբրին խմած տեսակեն է։

Ու նոր տուփ մը ներկայացուց։

Մարդը առավ սիկարեթը, վառեց և քաշել սկսավ։

— Է՞, ինտո՞ր է... ասոր հազարը երկու հարյուր հիսուն դրուշի կծախենք։

Մյուսը երեսը ծամածռեց և քմծիծաղով մը պատասխանեց.

— Ասիկա թյություն չէ, սաման է։

Ու շարունակեց ծխել։

Սիսակ թեև բավական նեղացավ իր ապրանքին դեմ ցույց տրված արհամարհանքեն, բայց ձայն չհանեց։ Մինաս Օղլուի պես հերոսի մը ներելի էր քիչ մը դժվարահաճություն։

Նույն իրիկունը նորեկը տեղավորվեցավ Սիսակի տան մեջ։

— Ամա՛ն,— ըսած էր Սիսակին,— չըլլա որ անունս մեջտեղ հանես.. թերևս նորեն Տաճկաստան դառնամ։

Բայց Սիսակի սնափառությունը կարող չէր այդչափ խոշոր գաղտնիք մը երկար ատեն ծածուկ պահել, և երեք օր չանցած ամեն մարդ իմացավ, որ հռչակավոր Մինաս Օղլուն Անկախյանին տունը հյուր է։

***

Քանի մը օր ետքը, Սիսակի բարեկամներեն մին հևիհև խանութը եկավ։

— Ը՞ռ, ատ քու մարդդ Մինաս Օղլուն չէ եղեր։

— Ի՞նչ կըսես։

— Բուն Մինաս Օղլուն առջի օրը եկեր է. հիմա հոս եկած ատենս ալ Մանշեի հրապարակը նստած էր։

Սիսակ ֆեսը դրավ ու դուրս նետվեցավ,— «Երթանք սա մարդը տեսնանք» գոչելով։

Փողոցին ծայրը հանդիպեցավ կեղծ Մինաս Օղլուին, որ խանութ կուգար։

— Աղեկ դեմս ելար. եկուր միասին,— ըսավ անոր։

Երեքը մեկ, քսան վայրկյան ետքը, հասան Մանշեի հրապարակը, ուր խումբ մը հայեր նստած էին։

Մոտեցան խմբին։

— Վա՜յ, պարոն Սիսակ, եկուր նայինք,— գոչեց նստողներեն մին,— եկուր նայե, քեզի ով պիտի ներկայացնենք։

Ու իրենցմե մեկը ցույց տալով ըսավ.

— Մինաս Օղլուն է, Սամսոնցի Մինաս Օղլուն։

— Կսխալիս, բարեկամս,— գոչեց Սիսակ,— Մինաս Օղլուն՝ ահավասիկ։

Ու իր մարդը ներկայացուց։

Երկու Մինաս Օղլուները ապուշ-ապուշ իրար նայեցան։

— Աս ի՞նչ բան է,— հարցուց խմբեն մեկը դեպի իրենց Մինաս Օղլուին դառնալով։

— Ան ո՞ւր տեղեն Մինաս Օղլու կըլլա կոր. Աթինա, հայկական ճաշարանը աշճի էր,— պատասխանեց մարդը։

— Է՛յ, դո՞ւն երբեն ի վեր Մինաս Օղլու եղար,— գոչեց մյուսը իր հակառակորդին.— ծո՛, դուն Աղորան խուրու խահվեճիությունն ընող Քեմախցի Մովսեսը չե՞ս։

— Է՛հ, ասիկա շատ թոհաֆ բան է,— գոչեցին նստողները կոկորդալիր քահքահ մը ձգելով։

* * *

— Ի՞նչ ընեմ, եղբա՛յր, ի՞նչ ընեմ,— կգոչեր քանի մը օր ետքը Սիսակ Անկախյան, երբ բարեկամներեն մեկը անվավեր հերոսներուն մասին իր չափազանց դյուրահավանությունը կըծաղրեր։— Ինչպե՞ս զանազանեմ ճշմարիտը կեղծեն, ի՞նչ միջոց կա ասոր, չեմ գիտեր։ Նայե՛, ծխախոտին համար փորձագետներ կան. մարդիկը տերևը տեսնելուն պես՝ պաֆրա, սամսոն կամ պոխ-ճա ըլլալը կըսեն։ Քարերու համար անանկ. մարդը խոշորացույցը կհանե, կնայի ու քեզի կըսե կե՞ղծ, թե ճշմարիտ ադամանդ ըլլալը։ Գինին, նույնպես, պուտ մը կառնե, քիմքին կքսե, լեզուն կդարձնե բերնին մեջ ու կըսե՝ «Ասիկա խաղողի գինի չէ». իսկ հարազատ հերոսը անվավերին որոշելու համար ի՞նչ փորձի դիմելու է...

— Տես, ինչ կընես,— պատասխանեց բարեկամը,— երբ որ չորս, վեց տասը տարի լեռները կոիվ ըրած հերոս մը ներկայանա քեզի, ձեռքը հրացան մը կուտաս և կառաջարկես, որ զայն լեցնե ու պարպե։ Եթե կրցավ ընել՝ ըսել է հարազատ է, եթե ոչ՝ անվավեր... Թեև ավա՜ղ, հերոսներ կճանչնամ, երիցս հարազատ հերոսներ, որոնք այդ գործողությունը պիտի չկրնային ընել։ Գալով նշան առնելու ու նշանին զարնելու, անշուշտ այդչափ պահանջկոտ պետք չէ ըլլալ... արդեն ատիկա մեր խնդրեն բոլորովին դուրս է։

Է.

ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

Խորագիրս տեսնելով գուցե քիչ մը զարմանաք, թե ինչպես հակահեղափոխական մը դրած եմ հեղափոխության մակաբույծներու շարքին մեջ։ Ընդհակառակը՝ շատ բնական է կարծեմ հեղափոխության մակաբույծները նկատել այն տեսակ մը տիպարները, որոնք 96-են ի վեր մեջտեղ ելած են և որոնք հեղափոխությունը ջատագովելով զայն շահագործելե ետքը, հիմակ սկսած են հեղափոխության հակառակորդ ձևանալով ապրիլ, տեսնելով, որ այդ միջոցը ավելի շահաբեր է։ Արդ, առանց հեղափոխական շարժման գոյության՝ այդ մարդիկը չպիտի կրնային իրենց դերը խաղալ և մտնել այն մարդոց աչքերը, որոնց գրպանեն որոշած են ապրիլ մինչև ետքը։ Կփափաքիմ այդ կարգի մակաբույծներեն ձեզ ներկայացնել նմուշ մը միայն։

* * *

Նախկին վարժապետ մըն է պ. Միսաք, որ Եվրոպա կապրի իր նախկին աշակերտներու ծնողներուն, որոնք վաճառական են՝ ողորմությամբը։

Հայերենի ուսուցիչ՝ այնչափ միտքը խճողած է լեզվաբանական նրբություններով, որ ա՛լ կարծես քերականական օրենքները ազդած են իր նկարագրի վրա։ Բայի մը պես կեղանակավորվի ժամանակներու համեմատ, գոյականի մը պես կհոլովվի, տեր-բային հետ համաձայն է՝ երբ տեր-բային վաճառական մըն է, միշտ ներկա ընդունելություն է, երբ դրամ տալու երթան իրեն և բացասական մասնիկ՝ երբ դրամ խնդրեն իրմե։ Ասկե զատ, հայելիե մարդ մըն է, որ կցոլացնե միայն իր վաճառականներուն գաղափարներն ու համոզումները,— հարուստ վաճառականի մը սալոնին հղկուն, մաքուր, անարատ հայելին, որուն վրա փոշի մը չես կրնար գտնել, որ բիծ մը չունի։ Երբեք հակասության մեջ չէ իր դեմը կեցող վաճառականին հետ, ճիշտ անոր մորուքը, անոր հագուստները, անոր ձևերը կպատկերացնե, ստրուկ հավատարմությամբ մը։

Իր միակ անձնական սկզբունքը կրնանք բանաձևել սա կերպով.

«Ամեն բանի ժամանակ կա, հեղափոխական ըլլալու ժամանակ և հակահեղափոխական ըլլալու ժամանակ. սողալու ժամանակ և խայթելու ժամանակ. ճառ խոսելու ժամանակ և հանգանակություն ընելու ժամանակ. Մանչեստր երթալու ժամանակ և Մանչեստրեն ետ դառնալու ժամանակ. նախատինքներ ընդունելու ժամանակ և նախատինքները մարսելու ժամանակ. ստակ մուրալու ժամանակ և ստակը պանքան դնելու ժամանակ. նավթի վաճառականները խնկարկելու ժամանակ և մանիֆաթուրայի վաճառականները փառաբանելու ժամանակ»։

Ու հավատարիմ իր սկզբունքներուն ու իր կոչումին, տարիներե ի վեր նարդոսի ու քրքումի պես կվառի անիկա՝ անուշաբույր՝ այն կուռքերուն առջև, որոնց պատվանգանն են մանիֆաթուրայի կապոցները։

Ամիրաներու ժամանակին պատվելին է ան տիրացուի, հացկատակի, սպասավորի ու վարժապետի վարնոց խառնուրդ մը, որ աղային շուպուխը կվառե, տղոցը այբուբեն կսորվեցնե, ծառաներուն հետ կերակուր կուտե ու սեխին կնոջը կքծնի։ Աղային տոնախմբության ուզերձ կգրե, երբ որ զավակը ամուսնացնե՝ հարսներգ կգրե, երբ որ զավակը մեռնի՝ ողբերգ կգրե, ու այսպես կապրի։

Պ. Միսաք, ինչպես ըսի, անմիջական շարունակությունն է այդ տիպարին. նույն մարդը՝ տարբեր՝ եվրոպականացած տարազով։ Անարգ հոգի մը, որուն համար ամեն հարուստ՝ «պերճաշուք իշխան» ու «անզուգական բարերար» կամ «մարդասեր» մըն է, որուն համար ամեն հարուստի կին՝ «չնաշխարհիկ ձիրքերով օժտված՝ զարգացյալ ու գեղանի հայուհի» մըն է, որուն համար ամեն հարուստի զավակ «խոստումնալից ու հանճարեղ պատանի» մըն է, որուն համար ամեն հարուստի սպասավոր՝ «հավատարիմ ու անձնվեր ծառա» մըն է, որուն համար ամեն հարուստի ձի «գեղաբաշ, փրփրերախ, ու քաջալավազ երիվար» մըն է, որուն համար ամեն հարուստի կոշիկ՝ «ներբահյուս, վայելչաձև ու կակղամորթ ոտնաման» մըն է։

* * *

97-ին էր, երբ պ. Միսաք չեմ գիտեր քանիերորդ առաքելությունն ըրավ Մանչեստր։ Հազիվ քաղաք հասած՝ սկսավ իր այցելությունները վաճառականներու գրասենյակը։ Պ. Միսաք տասնըմեկ տարիե ի վեր վարժեցուցած էր զանոնք տարին մեկ-մեկ ոսկի վճարելու իրեն, ի փոխարեն այն գովեստներու, զորն պարբերաբար կըներ անոնց, առնվազն ամիսը անգամ մը։ Սակայն վաճառականները ատով չէին գոհանար և իրենց վճարած այցագինին փոխարեն իրավունք ունենալ կկարծեին նաև հսկելու իրենց պաշտպանյալին խոսքերուն ու գործերուն վրա, այնպես որ պ. Միսաք, ոսկին փրցնելե առաջ, պարտավոր էր իր մեկ տարվան խոսքերուն ու գործունեության հաշվեհամարը իրենց հավանությանը ներկայացնել։ Արդ, 97-ի առաքելությունը բավական փշոտ էր իրեն համար, որովհետև նախորդ տարին հեղափոխության ջատագովը ելած էր ընդհանուր հոսանքին հետևելով ու քիչ մըն ալ քաջալերվելով նույն այդ վաճառականներեն։

Հետևինք իրեն իր մեկ քանի այցելություններուն։

Պ. Միսաք կմտնե գրասենյակ մը։ Վաճառականը՝ սեղանի մը առջև նամակ կարդալու զբաղած է։ Պ. Միսաք, դռանը քով, գլխարկը ձեռքը, ժպտուն կսպասե, որ ընթերցումը ավարտի։ Վաճառականը՝ վերջապես հաճելով նշմարել զինքը.

— Հա՛, դուն ես, նորեն եկա՞ր... նստե նայինք. (քիչ մը խիստ) խոսելիք ունիմ քեզի։

Պ. Միսաք կնստի աթոռի մը ծայրը, աթոռին երեք չորրորդ մասը պարապ թողլով։

Վաճառականը.— Ի՞նչ երեսով եկար, ծո՛։

Միսաք *(միշտ ժպտուն).*— Անցած տարվան երեսովս, հի՛, հի՛, հի՛...

Զմոռնամ ըսելու, որ պ. Միսաքի խոսակցության միակ աղն է բառախաղներ ու թեքերլեմներ, որոնք վաճառականներու շատ թոհաֆին կուգան երբեմն։ Այդ շուկայի սրամտության պ. Միսաք կընկերացնե ապուշ, անարտահայտիչ ծիծաղ մը, զոր հարուստներու քով «հի՛, հի՛, հի՛» ձևով կարտաբերե և ծանոթներուն քով «հա՛, հա՛, հա՛»։

Վաճառականը *(բարկությամբ).*— Աս վայլե՞ց եղածները...

էտեպսիզության երեսեն այնչափ մարդ ջարդվեցավ, ամեն բան տակնուվրա եղավ, առուտուրը դադրեցավ...

Միսաք.— Իրավունք ունիք, էֆե՛նտի, իրավունք ունիք, միայն թե՝ եթե շնորհք ընեք որ...

Վաճառականը (ավելի բորբոքած).— Ամենքդ ալ ավազակներ եք, գողեր եք, անբարոյական արարածներ եք...

Միսաք — Շատ շիտակ է, էֆենտի, բայց ներեցեք որ...

Վաճառականը.— Կախելու է, կախելու ձեզի պես մարդիկը։

Միսաք.— Շատ ճշմարիտ է, էֆենտի, բայց կհաճի՞ք որ պզտիկ...

Վաճառականը.— Անամո՛թ...

Միսաք (պաղատագին).— Էֆենտի, հանդարտեցեք, կաղաչեմ, ես ալ հասկցա հիմա, որ սխալ ուղղության կհետևիմ կոր եղեր, վստահ եղեք, որ ձեր բոլոր արդարացի դիտողությունները, զորոնք ազնվություն ունեցաք ինծի հայտնելու, նկատողության պիտի առնեմ և ըստ այնմ պիտի վարվիմ ասկե ետքը։ Ա՜խ, էֆենտի, խաբվեցանք. Նուլթանը Բառոլ տոնեռոռ տվավ Սալզպրիին, որ հայկական խնդիրը պիտի կարգադրե, ես ալ հավատացի։ Բայց հետո Բառոլ տեռոնեռ եղավ... հի՜, հի՜, հի՜։ Այս թյուրքերը ասանկ են... տեսեք Փարիզ իրարու ֆոնֆեդի կնետեն, իսկ Պոլիս իրարու ֆոֆդի կնետեն. . հի՜, հի՜, հի՜։

Վաճառականը (գրպանեն ոսկի մը հանելով).— Առ... բայց ասկե ետքը խելքդ գլուխդ ժողվե... ատ ձեր անխիլք ըրածներովը օգուտ մը չըլլալե զատ, պարապ տեղը մեր առուտուրին վնաս կընեք կոր։

Միսաք (դրամը կրպանելով).— Շատ իրավացի, շատ ճշմարիտ, շատ արդար դիտողություն մըն է ձեր ըրածը։ Վստահ եղիք, որ ամենալուրջ նկատողության պիտի առնեմ. շնորհակալ եմ։ Ձեր ազնվափայլ տիկնոջ ու սիրասուն զավակներուն ամենախորին հարգանքներս, կաղաչեմ չմոռնաք հաղորդելու։ Մնաք բարով։

Կես ժամ ետքը պ. Միսաք կներկայանա ուրիշ գրասենյակ մը։ Վաճառականը թիկնաթոռին մեջ ընկղմած անգլերեն թերթ մը կըկարդա։

Միսաք.— Զբաղա՞ծ եք արդյոք, էֆենտի՜։

Վաճառականը.— Չէ՜, նստե նայինք, նորեն փարա ուզելո՞ւ եկար. տարի մը եղա՞վ։

Միսաք.— Եղավ, հապա. այս առտու ճիշտ տարին լրացավ։

Վաճառականը.— Ի՞նչ կա չի կա (հեգնական). Սալզպրին կարգադրե՞ց հայկական խնդիրը։

Միսաք.— Սալզպրի չէ, սալթ պորու... հի՜, հի՜, հի՜։

Վաճառականը (խնդալով).— է՜յ, Հանոթոն բան մը չըրա՞վ։

Միսաք.— Ամոթուն ծածկվեցավ... հի՜, հի՜, հի՜։

Վաճառականը (ինքնահավան).— Մենք ձեզի առաջուց ըսինք, մյուսյու, ասանկ խայտառակ կերպով գործ չի տեսնվիր, Եվրոպան բան մը ընելիք չունի, պարապ տեղը առուտուրին վնաս կըհասցնեք կոր։ Հեղափոխությունը զենքով կըլլա, էֆենտի՜մ, զենքով։

Միսաք.— Շատ իրավացի է։ Հաղթանակ տանելու համար հաղթ դանակ պետք է... հի՜, հի՜, հի՜։

Վաճառականը (միշտ հեգնական).— Մեր հեղափոխական պարոնները ի՞նչ ջուրի մեջ են, նորեն հեղափոխություն կընե՞ն կոր։

Միսաք.— Հիմակուհիմա տեղափոխություն կընեն կոր... հի՜, հի՜, հի՜։

Վաճառականը (գրասեղանին դարակեն ոսկի մը կհանե ու պ. Միսաքի կուտա).— Ինչ որ է, ասկե ետքը խելքդ գլուխդ ժողվե ու խոհեմ վարվե, քեզ նայիմ, երթաս բարով։

Միսաք.— Շնորհակալ եմ, ձեր ըսածները խորին ուշադրության առարկա պիտի ընեմ, վստա՜հ եղեք։ Հաճեցե՜ք, կխնդրեմ, ամենախորին հարգանքներս մատուցանել ձեր ազնվափայլ տիկնոջ ու սիրասուն զավակներուն։ Մնաք բարով... ցտեսություն։

Ու այսպես այցելությունները կշարունակվին մինչև իրիկուն ու հաջորդ օրերը։

Պ. Միսաք իր այս առաքելության միջոցին կտեսնա, որ վաճառականները բոլորովին հակառակ դարձած են հեղափոխության և հետևաբար ինքն ալ կուզե իր ընթացքը։

***

Անկե ի վեր «հակահեղափոխական» է, խոսքով, գործով, հագուստով ու շարժումներով։

Հեղափոխականները կհարվածե, հեղափոխությունը «ապաժամանն» կամ «տարաժամանն» կգտնե, կարմիր վզնոցի տեղ սև կամ մանիշակագույն վզնոց կդնե, ըրտենկոթը կոճկած կքալե ու խոսած

ժամանակ բաղուկը նվազ կշարժե, քան 96 թվականին սկիզբները։

— Ես արդեն Ներսես Վարժապետյանի օրեն ի վեր հակառակ եմ հեղափոխության,— կրսե այն հարուստներուն, որոնց տունը կճաշե երբեմն,— մենք պետք է ամեն ջանք ընենք, որպեսզի առևտուրը չվնասվի, վաճառականությունը զարգանա, երկրին վարկը բարձրանա։ Հոն է մեր փրկությունը։

— Աֆերի՜մ, շատ ճշմարիտ է,— կպատասխանե վաճառականը։

— Նավթը որչափ տարածվի ասիական գավառներուն մեջ, այնչափ պիտի լուսավորվին հայ գավառացիները, կշարունակե պ. Միսաք։

— Շատ շիտակ է։

— Ենթադրեցեք, որ մանիֆաթուրայի խանութներ բացվին ամեն հայաբնակ գյուղերու մեջ, ի՜նչ մեծ բարիք մը պիտի եղած ըլլա մեր թշվառ եղբայրներուն համար, որոնք այսօր կիսամերկ կպտրտին զգեստ չունենալնուն։

— Շա՜տ իրավացի դիտողություն։

***

Բայց չհուսահատինք իրմե. այն օրն, ուր նավթն ու մանիֆաթուրան հաշտվին հեղափոխության հետ, պ. Միսաք մեջտեղ պիտի ելլե կարմիր վզնոցով մը, ձեռքը գրիչ ու սուր ու «Ձայնը հնչեց» պիտի երգե։

1898—1899 թթ.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂԱ

Ամեն անգամ, որ մանկության կամ պատանեկության վերհիշումներ կունենամ, անխուսափելի կերպով դեմս կկանգնի Համբարձում աղան. շիտակ, չոր, երկայնահասակ մարդ մը, 50-են 55 տարեկան, պեխերուն ծայրերը կտրած և դեպի բերանը իջած, երեսը միշտ նոր ածիլված, գլուխը խոշոր ֆես մը՝ մինչև ականջներուն կեսը իջած, ձեռքը երկար թեզպիհ մը որուն հատիկները երկուք առ երկուք կքաշե անդադար։ Իր հագուստը միօրինակ էր ամեն ժամանակ. սև թրքական սեթրի մը՝ միշտ կոճկած, կանաչագույն բանթալոն մը, որ հազիվ կոշիկներուն կեսը կհասներ և հաստ չուխայի բաց գույն բաճկոն մը զոր հազիվ տարին անգամ մը, պատեհություն կունենայինք տեսնելու, որովհետև, ինչպես ըսի, սեթրին միշտ կոճկած էր։ Մասնավոր ուշադրությունս գրաված էր ժամացույցը, ոսկի մեծ, հնօրյա ժամացույց մը, որ քիչ անգամ դուրս կելլեր բաճկոնին գրպանեն։ Այդ ժամացույցը պահված էր չուխայե պզտիկ պարկի մը մեջ, որպեսզի ոսկին չկորսնցուներ իր փայլը և ամեն մեկանց ամփոփված ընկույզի փայտե տուփիկի մը մեջ, որպեսզի ոևէ դիպվածական արկածե զերծ մնա։ Այդպիսի խնամքով պահված ժամացույց մը բնականաբար ամեն վայրկյան դուրս չէր կրնար ելլել իր թաքստոցեն։ Կհիշեմ, թե Համբարձում աղա ժամացույցը մեջտեղ կհաներ մասնավորապես երբ ոևէ մեկու մը ժամացույցը կեցած ըլլար և հարկ տեսնվեր զայն լարել և ուղղել։ Երբեմն ալ, երբ քանի մը անձերու ժամացույցներուն մեջ անհամաձայնություն ըլլար, Համբարձում աղա կհաներ իր համբավավոր ժամացույցը և ուղիղ ժամը կրսեր. ամենքը կխոնարհեին Համբարձում աղայի ժամացույցին առջև։

Համբարձում աղան մեզի խնամի էր. հորաքրոջ թե մորաքրոջ ամուսին կամ ասոնց մոտ բան մը, լավ չեմ գիտեր. միայն թե

գիտեմ, որ հաճախ մեր տունը կգտնվեր, ուր մասնավոր հարգանքով մը կվարվեին հետը։

Մենք չէինք միայն այդ հարգանքն իրեն ընծայող. իր բոլոր բարեկամներն ու ծանոթները նույն հարգանքով ու ակնածանքով կվերաբերվեին Համբարձում աղային հետ։ Լուրջ, կարևոր, պատկառելի անձնավորություն մը համարված էր։ Իր մուտքը սրահն մը ներս, միշտ հուզում մը, իրարանցում մը առաջ կբերեր. երեխաներն ու աղջիկները դուրս կելլեին, կիները իրենց սիկարեթը կմարեին, ամեն մարդ ոտքի կկենար...

— Վեր հրամմեցե՛ք, Համբարձում աղա.

— Համբարձում աղա, սա՛նկ, անկյո՛ւնը նստեցեք։

— Համբարձում աղա, այս ի՞նչ պատիվ է մեզի ըրիք։

— Համբարձում աղա, աստուծով առողջ ու հանգիստ եք...

Եվ Համբարձում աղա, բարի գալստյան այդ ողջույններուն մեջեն, հինգվուրց քրմապետի մը հանդիսավորությամբ, շիտակ, շոր, երկայնահասակ ու կոճկված, կամաց-կամաց կհառաջանար իրեն ցույց տրված տեղը, աջ ու ձախ բարևներ բաշխելով, ու կընստեր բազմոցին անկյունը, ծալապատիկ, հնդկական կուռքի մը պես։

Համբարձում աղա շատ չէր խոսեր։ Ի՞նչ կըսեմ՝ շատ քիչ կըխոսեր։ Գլխու իմաստալից տատանումներ, ձեռքի նշանակալից շարժումներ, վերջապես միմիկ խոսակցություն մը իր նախընտրած ձևն էր հարաբերության մտնելու համար ուրիշներու հետ։

Երբեք չէինք տեսած իր խնդալը, ո՛չ ալ կատակաբանություն մը լսված էր բերնեն։ Ո՛չ միայն ինքը չէր խնդար, այլ նույնիսկ իր ներկայությունը ուրիշներու ծիծաղն ալ կսառեցներ շրթներու վրա։

Շատ անգամ մեզի կըսեին։

— Մի՛ խնդաք, Համբարձում աղա քովի սենյակն է...

Ու չէինք խնդար։

Մասնավորապես ցուրտ վարմունք մը ուներ տղոց նկատմամբ, որոնց հետ բնավ խոսք մը չէր փոխանակեր։ Երբեք համբույր մը, պզտիկ գգվանք մը չէինք ընդունած իրմե։ Մեր անհաշտ թշնամին էլ անիկա. գոնե այդ տպավորությունը կըներ վրանիս և ասոր համար կատեինք զինքը։ Իր երևումը տանը սեմեն ներս, խրտվիլակի մը ազդեցություն կգործեր վրանիս. ամենքս ծակեծակ կմտնեինք։ Տարին երկու անգամ միայն պարտավորյալ

կստիպվեինք մոտենալ իրեն. Ծնունդին և Զատիկին։ Դողահար կերթայինք և ինք լուրջ, ճնշող, հուզարկավորական սառեցուցիչ շեշտով մը կըսեր.

— Ապրիք...

Ու դուրս կվազեինք սենյակեն՝ կախաղանեն փախչող մահապարտներու շտապով։

Ինչպես ըսի, Համբարձում աղա ամենակարևոր, պատկառելի հեղինակություն մը համարված էր մեր շրջանակին մեջ. մարդ մը. որուն խոսքերը մեծ կշիռ ունեին և դատաստանները վերաքննելի չէին. վերջապես առտնին Սողոմոն մը, քիչ մը ավելի խոժոռ, քիչ մը ավելի անտանելի, քան «Երգ երգոց»-ի ենթադրյալ հեղինակը։

Չի կար ոևէ հարց մը, անլուծելի խնդիր, դժվարություն մը, ամուսնական ծրագիր մը, էրիկ կնկա կռիվ, ընտանեկան գժտություն, դժբախտ արկած մը կամ ուրախալի դեպք մը, որ վիճաբանվեր կամ լուծվեր առանց Համբարձում աղայի միջամտության։

— Համբարձում աղային ըսվեցա՞վ։

— Համբարձում աղային կարծիքը ի՞նչ է։

— Անգամ մը Համբարձում աղային հարցնենք, նայինք ինչ խորհուրդ կուտա։

Կհարցնեին և խորհուրդը կուտար։ Ամենահասարակ, պարզ, բնական, ողորմելի խորհուրդ մը զոր փողոցեն անցնող առաջին մարդը պիտի տար անմիջապես, առանց ճիգ մը ընելու, առանց ուղեղը չարչարելու։ Սակայն Համբարձում աղային բերնեն ելլելով՝ այդ խորհուրդը տեսակ մը վեհափառություն կստանար, նվիրագործում մը կզգենուր, առած մը, վճիռ մը կըլլար անիկա, ֆորմյուլ մը կամ դեղագիր մը, զոր նմանօրինակ պարագաներուն կգործածվեր և զոր ամենքը ուշի ուշով կպահեին իրենց հիշողության մեկ խորշը։

Համբարձում աղա ինչպե՞ս ստացած էր այդ գերակշռությունն իր շրջանակին մեջ։ Անձնական արժեք մը, կարողություն մը՝ բնական կամ ստացական, չուներ. ընդհակառակը իրողություններն իրեն դեմ էին։ Զախող և անխորհուրդ գործերով փչացուցած էր հորենական հարստությունը և հիմակ անոր թափթփուքներովը կապրեր։ Գալով իր մտային պաշարին՝ շատ խեղճ, շատ ողորմելի բան էր. հազիվ հասարակ ընթերցանություն մը գիտեր և կյանքին

մեջ Նարեկ ու Սաղմոսեն ետքը «Մասիս» լրագիրը միայն կարդացած էր ու կկարդար։ Այն բնական ուշիմությունն ու աչքաբացությունն ալ չուներ, որով շատ անգամ տգետ մարդ մը սուր, դիտող ու ողջախոհ միտք մը կունենա։ Բթամիտ մըն էր բառին բուն իմաստով։

Իր տված խորհուրդները, հայտնած կարծիքները, ըսի արդեն, ամենահասարակ բաներ էին։ Օրինակի համար երբ էրիկ կնկան կռիվի մը առթիվ խորհուրդ հարցվեր իրեն, Համբարձում աղա հանդիսավորապես կպատգամեր.

— Նայեցեք որ ժամ առաջ հաշտեցնե՛ք, ամոթ բաներ են ասոնք. ամոթ...

Եթե հայր ու որդու մեջ գժտություն կար, նույն հանդիսավորությամբ խորհուրդ կուտար.

— Ժամ առաջ տղան տարե՛ք, թող հորը ձեռքը համբուրե, հայրն ալ թո՛ղ տղուն ճակատը համբուրե, ամոթ բաներ են ասոնք, ամոթ...

Ու ամեն մարդ՝ հիացած՝ իրավունք կուտար իրեն ու ամեն մարդ կհնազանդեր իր խորհուրդին։ Ինչո՞ւ սակայն միևնույն խորհուրդները ուրիշներու կողմե տրված, անազդեցիկ կմնային, մինչդեռ Համբարձում աղային բերնեն իյնալով կազդեին ամենուն վրա։ Հոս էր գաղտնիքը և միանգամայն Համբարձում աղային արժեքը։

Հիմակ, տարիներ ետքը, կմտածեմ այս տարօրինակ երևույթին վրա ու կուզեմ բացատրել զայն։ Ըստ իս Համբարձում աղային գաղտնիքը իր արտաքին կերպարանքին մեջն էր. իր հագուստին, քալվածքին, ձևերուն, նստվածքին մեջ։ Այսպես, օրինակի համար, միշտ կոճկված ըլլալը կարևոր ազդակ մըն էր իր ներշնչած ակնածանքին։ Վերարկուն կոճկված մարդ մը ավելի պատկառելի է, քան չկոճկվածը։ Անորոշ հարգանք մի կզգանք զինվորականներուն, ոստիկաններուն, բալասաններուն, թռամվայի տոմսավաճառներուն, երկաթուղիի պաշտոնյաներուն, թղթաբերի ցրիչներուն հանդեպ։ Ինչո՞ւ— Որովհետև ամենքն ալ կոճկված են։ Երևակայեցեք նույն մարդիկը իրենց կոճակները քակած և պիտի զգաք որ մեր հարգանքը արհամարհանքի պիտի փոխվի։ Կոճակը ինքնին արդեն պատկառելի բան մըն է, որչափ խոշոր ու որչափ շատ ըլլա հագուստին վրա. այնքան ավելի ազդեցությունը մեծ է։ Դիտված է, որ փայլուն ու խոշոր կոճակները մեծ տպավորություն կգործեն,

մանավանդ կիներու վրա։ Եվ հետո կոճկված հագուստ մը խորհրդավոր է միշտ և երազանքներու կմղե մարդս։

— Արդյոք ի՞նչ կա այդ կոճկված վերարկուին տակ,— կը խորհիս ակամա։

Եվ որովհետև չես կրնար լուծել զայն, անծանոթին տարտամ վախը կպատե քեզ կամաց-կամաց ու երկյուղածությամբ կնայիս անոր։

Քայլվածքը նմանապես մեծ դեր կխաղա։ Կամաց, համաչափ քայլվածք մը անհունապես ավելի ազդու և տպավորիչ է, քան թեթև, ոստոստուն քայլվածք մը։ Ասկե զատ, կամաց քայլող մարդիկ ամբողջ ոտքերնին հատակին վրա կկոխեն, նախ կրունկեն սկսելով ու աստիճանաբար մինչև մատներուն ծայրը երթալով և ասիկա առաջ կբերե կոշիկի հատուկ ձայն մը, տեսակ մը կոշկային երաժշտություն, որ զուրկ չէ մասնավոր ներդաշնակութենե մը և որ ամեն երաժշտության պես իր ազդեցությունն ունի մեր ականջներուն վրա, այնպես որ կամաց քայլող մարդու մը ոչ միայն քայլվածքը կտեսնենք, այլ միանգամայն կլսենք զայն։ Ու այդ ձայնը, այդ կճռտոցը միանալով քայլվածքին դանդաղության հետ, մեր ուշադրությունը կկենդրոնացնեն քալողին ոտքերուն վրա, մեր աչքերը կսևեռին, կմագնիսանան դեպի հոն և երբ մարդը արդեն բազմոցին քով հասած ու նստած է, մենք դեռ չենք թոթափած այդ քայլվածքին մեր վրա թողած բուռն տպավորությունը։

Քիչ խոսիլն ալ մեծ դեր կխաղա մարդու մը կարևորությունը բազմապատկելու։ Նախ քիչ խոսողը կխուսափե ամեն վայրկյան տխմարաբանություններ ըսելու վտանգեն, հետո իր խոսքերն ավելի արժեք կստանան իրենց սակավությանը համար. քաղաքատնտեսության մեջ մատուցումի ու խնդրանքի օրենք կըսեն ասոր, կարծեմ։ Ժողովներու և ընկերությանց մեջ շատ խոսողներուն այնչափ ուշադրություն չենք դարձներ, որչափ անոնց, որոնք հազիվ երբեմն կխոսին։ Իսկ շարժ ու ձևով իր միտքը բացատրելու կերպը հիանալի միջոց մըն է հաջողության։ Վիճաբանություն մը կա ակումբի մը մեջ և ձեր կարծիքը կհարցնեն վեճի նյութ եղող հարցին վրա, իբրև պատասխան ձեռքով շարժում մը ըրեք, օրինակի համար, սանկ օդին մեջ կես շրջանակ մը գծեցեք և պիտի տեսնեք, որ ամեն մարդ գոհ պիտի մնա, որովհետև այդ շրջանակը ամեն մարդ իր ուզած կերպովը պիտի մեկնե, վկայություն մը պիտի համարի իր ըսածին և ջախջախիչ փաստ մը դիմացինին առարկությանց։

Տղաքներու վրա նմանապես իրական ապտակի մը չափ ազդեցություն ունի օդին մեջ ձեռքի շարժումով ձևացած ապտակ մը, և աղջիկներ կան, որոնք ավելի կշիկնին երբ մատներու ծայրով համբույր մը ղրկենք իրենց, քան երբ մեր շրթներով ճշմարտապես համբուրենք այտերնին։

Ցինդալ... ահավասիկ նաև հեղինակավոր պատկառելի մարդ մը ըլլալու գլխավոր պայմաններեն մեկը։ «Կինդաք, ուրեմն զինաթափ եղաք» կըսեն ֆրանսիացիք և իրավունք ունին։ Խնդալը տղայություն մըն է, խենթություն մը, մարդկային արժանապատվության և լրջության դասալքությունը. խնդացող մարդու մը խոսքերուն երբեք կարևորություն չկրնար տրվիլ որչափ ալ բանավոր, որչափ ալ իմաստալից ըլլան անոնք։ Հին հունաց աստվածները կխնդային և ասոր համար իրենց վարկը կորսնցուցին ու կործանեցան ամենքն ալ, մինչդեռ Եհովա երբեք չծիծաղիր և ասոր համար մինչև այսօր կպատկառինք ու կվախնանք իրմե։

Այսպես ուրեմն ամփոփելով կարծիքս, սա եզրակացության կհասնիմ թե Համբարձում աղա եթե, հակառակ իր բացարձակ ոչնչություն մը ըլլալուն, կրցած էր մեծ ազդեցություն մը ձեռք ձգել իր շրջանակին մեջ, պատճառը իր միշտ կոճկված ըլլալը, կամաց քալելը, քիչ խոսիլն ու բնավ չխնդալն էր։

Արդ, ինչպես կտեսնվի, շատ խարիսուլ, շատ խուսափուկ հիմերու վրա կառուցված էր Համբարձում աղայի հեղինակությունը և բնականաբար հիմնահատակ պիտի կործաներ օր մը։

Այդ օրը հասավ և Համբարձում աղա, խաղք ու խայտառակ, իր պատվանդանեն վար առնվեցավ ողբերգախառն զավեշտական դեպքի մը առթիվ, ի մեծ գոհունակություն մեզ, տղոցս ու պատանիներուս, որ միշտ զինքը նկատած էինք իբրև անտանելի հակառակորդ մը։

***

Այս նշանավոր դեպքը պատմելե առաջ հարկ է, որ ընթերցողներուս ներկայացնեմ ուրիշ անձ մը, բոլորովին տարբեր Համբարձում աղայեն, գրեթե անոր հակապատկերը և որուն ձեռքով տեղի ունեցավ Համբարձում աղային գերակշիռ ազդեցության վերջնական ջախջախումը։

Սերգիս աղա, այս էր նախախնամական մարդուն անունը,

ագարակատեր մըն էր, Պոլսեն 6—7 ժամ հեռավորությամբ, ծովեղրյա քաղաքի մը՝ Ռոտոսթոյի մեջ։ Մեր ընտանիքին հինավուրց բարեկամ, երբ Պոլիս գար, մեր տունը կիջներ, ուր օրերով հյուր կմնար։ Ընդհանրապես ձմեռվան եղանակին կուգար, երբ ագարակին գործերը ավարտված էին, հունձքը ժողված, ծախված ու դրամները գանձված։ Հաճախ ամբողջ ձմեռվան երեք ամիսը մեզի կանցներ։

Քառասուն. քառասունըհինգ տարեկան, միջահասակ գիրուկ, կարմիր երեսներով, մշտափթիթ ծիծաղ մը դեմքին վրա, երջանիկ մարդ մըն էր Սերգիս աղան, շեն ու զվարթ բնավորությամբ, որուն ներկայությունը անընդհատ ուրախության ճառագայթում մը կսփռեր շուրջը։ Սերգիս աղա ամուսնացած էր, յոթը զավակ ուներ՝ չորս աղջիկ և երեք մանչ. կպաշտեր իր կինը, որ ագարակին հոգին էր և որուն կպարտեր իր գործերուն հաջողության մեծ բաժինը։ Ուներ նաև երկու եղբայր, որոնց մին քահանա էր և ծերունի մայր մը, անուշ, խնդումերես պառավ մը, որ երբեք Ռոտոսթոյեն դուրս ելած չէր։ Սերգիս աղային գործերը բարգավաճ էին, ագարակը լավ եկամուտ կբերեր, և բոլոր ընտանիքը օժտված էր առողջությամբ մը, որ կրնար ամենեն համբերատար բժիշկին անգամ կատաղության մղել։ Վերջապես Սերգիս աղա երջանիկ էր որչափ երջանիկ կրնա ըլլալ մարդ։

Ամեն անգամ Սերգիս աղայի գալուստը հաղթական մուտք մըն էր մեր տունեն ներս։ Երբ դուռը բացվելով— Սերգիս աղան եկա՜վ, ձայնը կհնչեր, ամենքս բակը կվազեինք զինքը դիմավորելու։ Ա՜հ, այն աղմկալից ուրախությունը, խոլական օվսաննաները, որով կընդունեինք զինքը...

— Սերգիս աղան է, Սերգիս աղան է,— կաղաղակեինք ամենքս միաբերան։

— Վա՜յ, Սերգիս աղա, բարով եկար։

Ու ահա կպաշարեինք, կսեղմեինք, կճնշեինք զինքը։ Ամենեն պզտիկները արդեն իր ուսերուն վրա էին, քիչ մը մեծերը թևերեն կախված ու ինք կհամբուրեր, կխածներ, կապտակեր ամենուս երեսները։

— Տղա՛ք, աղե՞կ եք, ո՞ի՞նտ եք, առո՞ղջ եք...

— Սերգիս աղա, կառքին մեջ ի՞նչ կա, ի՞նչ բերիր մեզի...

— Հիմա, հիմա կտեսնաք, համբերեցեք քիչ մը։

Ու ահա կառքը կսկսեին պարպել... որովհետև Սերգիս աղա միշտ խոշոր, լեցուն կառքով մը կուգար։

Ագարակեն բերած նվերներն էին, սերկևիլ, նարինջ, խնձոր, տանձ, կաղին, ընկույզ, շամիչ, թուզ փեսթիլ, կարագ, չոր սեր, թարմ պանիր, հետո տեսակ-տեսակ անուշեղեններ, զորս կինը պատրաստած էր, ապուխտ, երշիկ, օղի, վերջապես ինչ որ կար ագարակին մեջ։

— Սերգի՛ս աղա, խենթացա՞ր, ինչ պիտի ընենք այսչափ բանը, ուր պիտի դնենք,— կաղաղակեին տանտիկինները, տեսնելով այդ անվերջանալի ծրարները։

Սերգիս աղա խնդալով կպատասխաներ.

— Հոգ մի՛ ընեք, հոգ մի՛ ընեք, վաղը մյուս օր տղաքը բան մը չեն ձգեր։

Իրիկունը երբ տան էրիկմարդիկը կուգային՝ Սերգիս աղա արդեն գիշերանոցը հագած, վառարանին քով, օղիի ափսեին դիմաց «քեյֆ» կըներ։

Եվ բոլոր ընտանիքով, մեծ ու պզտիկ, կբոլորվեին շուրջը և ինք գոհ, անձընդյուր, կյանքով ու զվարթությամբ ուռեցած՝ կսկսեր խոսիլ, խնդալ, պատմել ագարակին ու իր քաղքին դրվագները զորս կհամեմեր կատակաբանություններով։ Սերգիս աղա չէր ուզեր, որ շուրջը տխուր դեմքեր տեսնե. ամեն մարդ պարտավոր էր, նույնիսկ բռնի կերպով, ծիծաղկոտ դիմակ մը անցնելու դեմքին, երբ իրեն քով գտնվեր։ Իր սովորական խոսքերեն մեկն էր հետևյալը.

— Խնդացե՛ք պե... ամենքս ալ պիտի մեռնինք օր մը, ինչ ուրախություն որ ընենք, քովերնիս կմնա։

Այս էր իր հավատո հանգանակը, իր իմաստասիրությունը։

Քաղաքականությամբ չէր զբաղեր բնավ։

— Թագավորին տուրք կուտանք կոր, որ այդ բաներուն հոգ տանի, մենք ալ սիրտ չհատցնենք պարապ տեղը, քեյֆերնիս նայինք,— կըսեր։

Ազգային խնդիրներու մասին ալ նույնը կմտածեր։

— Ատանկ բաները Պատրիարքին գիտնալիք բանն է, մեզի ի՞նչ որ միտք հոգնեցնենք, քեյֆերնիս նայինք...

Տխուր խոսքեր պետք չէր որ ըլլար իր քով։

— Գոցեցե՛ք, գոցեցե՛ք այդ խոսքերը ուրիշներուն պատահած

դժբախտություններով մենք չտխրինք, Աստված կբարկանա ետքը,— կգոչեր։

Ժողովողին խրատները կարծես իրեն նշանաբան ընտրած էր.

«Քու սրտեդ տրտմությունը վերցուր ու մարմնեդ չարությունը հեռացուր»։

«Հացդ ուրախությամբ կեր ու գինիդ ուրախ սրտով խմե»։

«Սիրած կնկանդ հետ կյանք վայելե քու ունայնության կենացդ բոլոր օրերուն մեջ»։

Եվ այսպես, անհոգ ու անկնճիռ, Սերգիս աղա ամեն տարի կուգար մեզի, իր անսպառ ու հաղորդիչ զվարթությամբը մեր տունն ալ շենցնելով մեկ երկու ամիս։ Իր ներկայությունը բոլորին կնսեմացներ, Համբարձում աղա որ գրեթե կհալեր, կջնջվեր անոր առջև, տաք արևին ճառագայթներուն ենթարկված սառույցի կտորի մը պես։

* * *

Տասնվեց տարեկան պատանի էի, երբ ձմեռ մը նորեն հյուր եկավ մեզի Սերգիս աղան։ Այդ տարին բացառիկ կերպով հաջող գացած էին իր գործերը, հրաշալի հունձք մը ըրած էր, մեծ աղջիկը նշաներ էր ռոտոսթոցի հարուստ աղաներեն մեկուն զավկին և ինքն ալ մանչ զավակ մը ունեցած էր, ութերորդը, որ քանի մը ամսե ի վեր ծներ էր։ Երբեք այնքան ուրախ տեսած չէինք զինքը։ Ամիս մը կար որ մեր տունը կգտնվեր և գալեն ի վեր ամեն օր կարծես տոնի մեջ էինք։ Ամեն առտու, անկողնեն ելլելուն պես, օրվան ժամանցի ծրագիրը կպատրաստեր— կառքով պտույտներ, թատրոն, երեկույթ, կրկես, և այլն։

Իզո՞ւր տնեցիները կըսեին.

— Սերգի՛ս աղա, ա՛լ այսօր տունը նստինք ու հանդստանանք։

— Չէ՛,— կգոչեր Սերգիս աղան անդրդվելի, անհակառակելի շեշտով մը.— ես հոս զբոսնելու եկած եմ և դուք ալ ինձի հետ պետք է որ զբոսնուք, երթալես ետքը ուզածնուդ չափ հանգստացեք։

Փետրվարի մեջն էինք և Միացյալ Ընկերություններուն մեծ պարահանդեսին օրը։ Որոշված էր, որ ամենքս ալ՝ դիմակավորյալ՝ պիտի երթայինք։ Առտվնե ի վեր Սերգիս աղա հագուստներ ու դիմակներ բերել տված էր Բերայի խանութներեն, զորս ֆփորձեինք

ու կբարեփոխեինք։ Սերգիս աղա ուրախ զվարթ կերթար կուգար, մեկիկ-մեկիկ ամենուն հագնելիք զգեստները կքններ, կզններ, ոմանցը չէր հավներ, կրկին մարդ կղրկեր ու նորանոր զգեստներ բերել կուտար։

— Պետք է որ մեր զգեստներն ու դիմակները լավագույնը ըլլան, կպոռար. պետք է որ պարահանդեսին մեջ ամեն մարդ մեզմով զբաղի...

Ինք իրեն համար արաբ շեյխի մետաքսե մեծարժեք հագուստ մը զատած էր, հոյակապ փաթթոցով մը և հնօրյա դաշույններով ու դանակներով, որոնց վրա կիտվածներ բանված էին։ Կուզեր որ մեր մեջեն մեկ քանիները նմանապես արաբական զգեստներով ծպտվին իբրև իրեն հետևորդները։ Մինչ իրիկուն տեսեց այդ պատրաստությունները։ Վերջապես ամենուն հագնելիքները որոշվեցան, պատրաստվեցան և Սերգիս աղա, գոհ սրտով, գնաց անցավ իր օդիի ափսեին դիմաց։

Սերգիս աղա սովորություն ուներ իր գավաթները «կենաց» պարպելու և նախ կսկսեր իրեններեն.

— Ասիկա հաճի մայրիկիս կենացը...

— Ասիկա կնոջս կենացը...

— Ասիկա Զապելիս կենացը։

— Ասիկա Տրդատիս կենացը...

Երբ անոնք լմմնային՝ կարգը կուգար մնզի։ Սերգիս աղայի համար միջոց մըն էր այս կրցածին չափ շատ խմելու օդին, որովհետև առարկելով թե այսինչին կենացը չէ խմած տակավին և թե կրնար վշտանալ, օդիի գավաթը չէր թողուլ, մինչև որ կենացներու ամբողջ շարքը չավարտեր։

Հիմակ ուրիշ կենաց մըն ալ ավելցած էր, այն էր նորածին մանչը.

— Այս ալ նոր ծնածին կենացը...

— Սերգիս աղա, անունը ի՞նչ պիտի դնես,— հարցուց մեծ մայրս։

— Տեսնենք, դեռ չեմ որոշած։

— Բենիամին դի՛ր։

— Բենիամի՞ն,— գոչեց Սերգիս աղա կեղծ բարկությամբ մը.— ի՞նչ ըսել կուզես, միթե ա՛լ զավակ պիտի չունենա՞մ որ Բենիամին դնեմ.... Բենիամինին շա՛տ ատեն կա, շա՛տ... դեռ ես ալ երիտասարդ եմ, կինս ալ, մենք ձեզի պես քաղաքը չենք ապրիր կոր, գեղը, դաշտերը մաքուր օդին մեջ կապրինք...

Եվ Սերգիս աղա խնդաց իր մաքուր, աննենգ ու լիառատ քահ-քահով մը։

Ատեն ատեն բնական, ինքնաբուխ մաղթանք մը կթռչեր բերանեն.

— Փա՜ռք քեզ, Տեր, փա՜ռք քեզ Աստված...

Ու կենացները կպարպեր սպասելով տան էրիկ մարդիկներուն, որոնք այդ իրիկունը քիչ մը ուշ մնացած էին։

Վերջապես եկան։ Մռայլ ու տխուր, գետնահարկի սենյակը մտան և հայրս ըսավ ինծի.

— Գնա՛ մայրդ վար կանչե կամաց մը։

Զգացի թե չարաշուք բան մը տեղի ունեցած էր։ Մայրս եկավ։

— Սոսկալի լուր մը,— ըսավ հայրս ձեռքը նամակ մը բռնած։— Սերգիս աղային կինը ութ օր առաջ հիվանդացեր է և երեկ առտու մեռեր է... եղբայրը գրեր է, որ անմիջապես իմացնենք իրեն, որպեսզի տուն վերադառնա և թաղումին կարենա ներկա գտնվիլ...

Հարվածին անակնկալությենեն սահմռկած՝ լուռ ու ապուշ իրարու նայեցանք։

— Սպասուհին կանչե՛, սրվոնք թող վերցնե,— ըսավ մայրս լռությունը խզելով։

Իրա՛վ, այս միջոցին, այդ պարահանդեսի զգեստները չեմ գիտեր ինչ դժնդակ ու հանցապարտ կերպարանք մը առած էին։

Ո՞վ պիտի իմացներ ահռելի դժբախտությունը Սերգիս աղային։ Ոչ ոք սիրտ կըներ ատոր։ Ու շվարած իրարու կնայեինք ամենքս։

— Վաղը առտու իմացնենք և անմիջապես շոգենավ դնենք զինքը,— ըսավ հայրս։

Եվ սակայն պարահանդեսը կար... Սերգիս աղա պիտի ուզեր պարահանդես երթալ անպատճառ, եթե գույժը պահեինք իրմե։ Անկարելի էր որ առանց բանավոր պատճառի մը հրաժարեր պարահանդեսեն՝ որուն պատրաստություններովը զբաղած էր օրերե ի վեր։ Չէ՛, հարկ էր անմիջապես իմացնել։

Սակայն ամենքն ալ վեհերոտությամբ, գրեթե վատությամբ մերժեցին այդ դժվարին պաշտոնը կատարել։

— Չէ՛, ես չեմ կրնար իմաց տալ... շատ կհուզվիմ։

-- Ես ալ չեմ կրնար... ջիղերս թունդ կելլեն։

— Դուն էրիկ մարդ ես, պետք է որ դուն ըսես...

— Դուն ծեր կին ես, քեզ ավելի հարմար է...

Նույն միջոցին փողոցին դուռը զարկին։

— Համբարձում աղան է,— գոչեց ծառան։

Համբարձում աղա մտավ ներքնահարկի սենյակը, լուրջ, հանդիսական, համրաքայլ, ինչպես միշտ։ Դժբախտ լուրը հաղորդեցին իրեն։

— Խեղճ Սերգիս աղա, աս ինչ սոսկալի փորձանք է եկավ գլխուն,— ըսավ Համբարձում աղա խորապես հուզված։— Պետք է անմիջապես մեղմությամբ իմացնել,— վճռեց։

— Ամա՜ն, Համբարձում աղա, մենք և ոչ մեկերնիս պիտի կրնանք ընել ատիկա, կխնդրենք դուն իմացուր, դուն կերպը գիտես հարկավ, ասանկ դժբախտություն մը մեծ զգուշավորությամբ ու վարպետությամբ պետք է իմացնել,— աղաչեց մայրս։

Համբարձում աղա վայրկյան մը լուռ մտածեց, հետո տիրական շեշտով մը ըսավ.

— Աղեկ, ես հիմակ իմաց կուտամ պետք եղած կերպով. սա՛ եղբորը նամակը ինծի տվեք, դուք ալ վեր ելեք նստեցեք, բայց չխոսեք, մենակ մտիկ ըրեք, ասանկ բաները պետք է կամաց կամաց և փափուկ կերպով իմաց տալ, չըլլա որ խոսքի մեջ մտնեք և ըսելիքներս խանգարեք։

— Շատ աղեկ, Համբարձում աղա...

— Դուք վեր ելե՛ք նստեցե՛ք, ես ալ քիչ մը ետքը կուգամ։

Սերգիս աղա բազմոցին անկյունը առանձին մնացած էր. երբ ներս մտանք ուրախության աղաղակով մը ընդունեց մեզի։

— Ո՞ւր եք, աղբար, ժամ մըն է իս մենակ ձգեր եք, սանկ չի գաք, չնստի՞ք... Ուրախության օր է այսօր... Եկե՛ք ձեռքովս մեյ մեկ օղի լեցնեմ ձեզի։

Կարելի չէ երևակայել ավելի ցավատանջ, ավելի դառնակսկիծ բան մը քան այդ րոպեին Սերգիս աղայի ցույց տված զվարթությունը։

Քիչ հետո սենյակին դուռը բացվեցավ և Համբարձում աղա երեցավ սեմին վրա... աննշմարելի տարտուր մը անցավ ամենուս վրայեն։

— Վա՜յ, Համբարձում աղա, եկո՛ւր նայինք,— գոչեց Սերգիս

աղա,— աղեկ որ եկար, այս իրիկուն քեզ միասին պարահանդես պիտի տանինք։

Համբարձում աղա դեպի բազմոցը առաջանալով պատասխանեց ծանր ու տխուր ձայնով մը։

— Այսօր պարահանդեսի ժամանակ չէ, Սերգիս աղա... Սողոմոն իմաստուն կըսե որ ամեն բանին ժամանակը կա... լալու ժամանակ և կաքավելու ժամանակ... այսօր լալու և սուգ ընելու ժամանակ է ամենուս համար։

— Ի՞նչ կա, ի՞նչ եղավ,— հարցուց Սերգիս աղա այդ խոսքերեն դող ելած։

Համբարձում աղա նստավ Սերգիս աղային քով։

— Աշխարհի մեջ դժբախտությունն ալ մեզի համար է, երջանկությունն ալ,— շարունակեց,— երկուքն ալ Աստուծմե կուգան։

— Աստուծու սիրուն, ի՞նչ կա, Համբարձում աղա...

— Եղածը մեծ բան չէ, անկե ավելի մեծ դժբախտություններ կրնան պատահիլ մարդուս... այսօր եղբորմեդ նամակ առինք, խեղճ նորածին մանչդ, Աստված քեզի օրեր տա, մեռեր է...

Այս խոսքերուն վրա ամենքս ապշած իրարու նայեցինք. արդյոք սխա՞լ հասկցած էր... մեծ մայրս ուզեց միջամտել, բայց Համբարձում աղա մատին ծայրը շրթներուն տանելով լռություն պատվիրեց։

— Վա՜խ զավակս, վա՜խ զավակս,— հեծեց Սերգիս աղա գլուխը օրորելով։

— Սերգիս աղա, Աստուծմե եկած ամեն հարված պետք է համակերպությամբ ընդունենք, առաջ տարավ Համբարձում աղա, մեռնողը նորածին մանչդ չէ, այլ խեղճ Սաթենիկդ...

Սաթենիկ յոթերորդ զավակն էր, հինգ տարեկան։

Սերգիս աղային աչքերը լեցան։

— Սաթենի՜կս... վախ յավրուս, վա՜խ հոգիս...

Եվ լռիկ հեծկլտաց։

Մենք, որ մինչև այդ օրը իրեն ոչ թե հեծկլտալը, այլ նույնիսկ տխրիլը չէինք տեսած՝ սրտի տարօրինակ սեղմումով մը կդիտեինք այս ողորմ տեսարանը։

— Քա՜չ եղիր, Սերգիս աղա,— շարունակեց անողոք Համբարձում աղան,— քա՜չ եղիր, ամեն բան մեզի համար է այս աշխարհիս երեսը. մեռնողը Սաթենիկը չէ... շիտակը ըսե՞մ, Հակոբիկդ է...

Հակոբի՜կ... իր յոթը տարեկան մանչ զավակը։

Սերգիս աղա այս անգամ բարձրագոչ աղաղակ մը փրցուց.

— Հակոբի՜կս...

Եվ սկսավ հեծաձայն կոծ մը, որ իր շնչառությունը կխանգարեր։

Վազեցինք ջուր, լեմոն և զանազան հոտեր բերելու։

Երբ քիչ մը ինքզինքը գտավ, Համբարձում աղա կրկին խոսք առավ.

— Հիմակ որ քիչ մը հանդարտեցար կրնաս իս մտիկ ընել։ Սերգիս աղա, ույժդ վրադ ժողովե՛, կամք Տեառն օրհնյալ եղիցի... Մեռնողը Զարուհիդ է...

Զարուհի հինգերորդ զավակն էր, հազիվ տասնըմեկ տարեկան։

Այս անգամ խեղճ մարդը տղու մը պես սկսավ լալ, երեսը թաշկինակի մեջ ծածկած։

Համբարձում աղա գավաթին մեջ քիչ մը վարդեջուր կաթեցուց և Սերգիս աղային տալով՝ ըսավ.

— Խմե քիչ մը, այդպես լալով Աստծու դեմ կմեղանչես՝ եթե Զարուհիին համար այսպես կուլաս կոր, հապա ի՞նչ պիտի ընես, երբոր ըսեմ որ մեռնողը Վահանն է...

— Վահա՞նը...

— Ափսո՜ս այո՛, խե՜ղճ Վահանը, մեկենիմեկ— ութը օրվան մեջ. Աստված քեզի օրերը տա, Սերգիս աղա, Աստված մյուս զավակներդ պահե։

Վահան տասնհինգ տարեկան էր, Լայտառ աշխույժ պատանի մը և իր հորը երկու աչքին լույսը։

Սերգիս աղա ոտքի ելավ լալագին ու սկսավ շուռ գալ սենյակին մեջ ձեռքերը գլխին զարնելով։

— Վահա՜ն, սիրելի զավակս, վա՜խ, վա՜խ, վա՜խ... Այս ինչ փորձանք էր գլխիս եկավ...

Ու ջախջախված, ինքնակորույս ինկավ թիկնաթոռի մը վրա, Վահա՜ն, Վահա՜ն մրմնջալով։ Հարվածը սաստիկ էր. Սերգիս աղա ընդերկար լացավ համր, անխոսուկ, ուսերը շարժելով։

Պահ մը արցունքով ողողուն գլուխը վեր առավ, և ապա երեսը սրբեց և ըսավ Համբարձում աղային.

— Եղբորս գրած նամակը տո՛ւր կարդամ։

— Նախ սրկե՛ խմե քիչ մը։

Եվ Համբարձում աղա իրեն երկնցուց վարդեջրով խառնված

ջուրի գավաթը։ Հլու՝ մեքենական շարժումով մը առավ ու խմեց։

— Տո՛ւր նամակը...

— Կեցի՛ր,— պատասխանեց Համբարձում աղա,— նամակը տալե առաջ պետք է որ բուն ճշմարտությունը ըսեմ քեզի... մեռնողը Վարդուհին է...

Վարդուհին տասնյոթը տարեկան հրաշալի գեղեցկությամբ աղջիկը մըն էր և նույն տարի շրջանավարտ եղած էր Հոմ Սքուլի ամերիկյան վարժարանին։

— Հե՞...— բացագանչեց Սերգիս աղա ապուշ, խոսակցին երեսը նայելով։

— Այո՛, հանկարծ սիրտ չբրի ըսելու, խե՜ղճ Վարդուհին է մեռնողը։ Աստված ողորմի հոգուն, լուսերու մեջ պառկի, թիֆո եղեր է... Վաղը առտու կանուխ պետք է շոգենավ նստիս ու երթաս թաղումին հասնելու համար, Աստուծո ողորմությունը թող հետդ ըլլա, դուն հավատացյալ քրիստոնյա ես, այս տեսակ փորձություններու պետք է երկայնամիտ հոգիով համբերես... Հոր Երանելին միտդ բեր ու մխիթարվե...

Սերգիս աղա կրկին տագնապ մը ունեցավ, ցավին սաստկության տակ չկրցավ լալ ու սկսավ խեղդուկ խոպոտ ճիչեր արձակել։ Քացախով դաստակներն ու քունքը շփեցինք, քիթին հոտեր քաշել տվինք, երեսը ջուր սրսկեցինք։

Մեր խելքն ու միտքը այնչափ Սերգիս աղային խղճալի վիճակովը գրաված էր, այնչափ մտասուզված էինք իրմով, որ ուշադրություն չէինք դարձուցած Համբարձում աղային այն տարօրինակ եղանակին վրա որով իր գուժականի պաշտոնը կկատարեր։ Ասկե զատ իր ազդած պատկառանքը և իր կարողության վրա ունեցած հավատքնիս տակավին այնքան զորավոր էր, որ մենք շատերը կկարծեին թե գույժը իմաց տալու լավագույն ձևը այդ էր։ Եվ սակայն, պետք է անկեղծ ըլլալ, մեկ քանիներս սկսանք թերահավատիլ...

Սերգիս աղա սթափվեցավ նորեն, բայց դիմագծերը այն աստիճան ավրված, որ կարծես թե խեղճը ամիսներե ի վեր տառապած էր։

— Նամա՜կը, եղբորս նամակը տուր որ կարդամ,— գոչեց խոսքը Համբարձում աղայի ուղղելով։

— Սերգիս աղա, կաղաչեմ կպաղատիմ, մյուս զավակներուդ արևուն համար ըլլա, ինքզինքիդ եկուր, հիվանդ պիտի ըլլաս...

— Նամա՜կը...

— Նամակը այն ատեն պիտի տամ, երբ մեջի եղածը իմացնեմ...

— Դեռ ի՞նչ կա որ մեջը...

— Մեջը կա որ... մեջը կա որ մեռնողը Վարդուհին չէ, ահա ճշմարտությունը, մեռնողը Վարդուհին չէ... Վարդուհին ողջ առողջ է...

— Ո՞վ է հապա...

— Անկե մեծը... Տրդատը... մեծ տղադ... այո, Տրդատը, տասնութը տարեկան, խե՜ղճ տղա... թիֆոեն... ութը օրվան մեջ, մեկենիմեկ...

Սերգիս աղա այս անգամ լաց ու կոծը չվերսկսավ. նայվածքը խոլոր, խուլ ձայնով մը որուն մեջ կարծես մարդկային շեշտ չէր մնացած այլևս, մոմռաց.

— Նամա՜կը, եղբորս նամակը տուր...

Համբարձում աղա, անայլայլ, բազմոցին վրա նստած իր զոհը կդիտեր։

— Նամա՜կը, նամա՜կը...— կաշխարեր խեղճը։

Վերջապես սպառնալից, վայրագ ոտքի ելավ ու դեպի Համբարձում աղային դիմեց։

— Տո՛ւր սա անիծյալ նամակը...

Համբարձում աղա հասկցավ որ այս անգամ ճար չի կար, հարկ էր նամակը հանձնել, հետևաբար աճապարեց պարունակությունը իմացնելու.

— Ա՜ռ, կարդա՛, մեռնողը Զաբելն է... անդրանիկ աղջիկդ... մեղա՜ մեղա՜, Աստված ողորմի հոգուն...

Սերգիս աղա խելահեղ հասած էր Համբարձում աղային քով։

— Նամա՜կը... Շուտով նամակը տո՜ւր,— կոռնար ահռելի ձայնով մը։

Համբարձում աղա նամակը հանձնեց...

Սերգիս աղա սկսավ կարդալ...

Ճնշող, անձկագին լռություն մը կրտիրեր բովանդակ սենյակին մեջ. շունչերնիս բռնած ակնապիշ կդիտեինք տարաբախտ մարդը, որուն դեմքը չեմ գիտեր ինչ զահնդելի ձև մը առած էր։ Երբեք կարելի չէր երևակայել մարդկային կերապարանքի մը ավերումն ու քայքայումը այսքան քիչ ատենի մեջ։

Հանկարծ աղաղակ մը արձակեց և ինկավ բազմոցի վրա։

Իմացած էր քստմնելի ճշմարտությունը։ Իր կինը՝ Թագուհի հանրմն էր մեռնողը... այն որուն վրա կառուցած էր Սերգիս աղա իր երջանկության ամբողջ շենքը։ Իր օջախին պահապան հրեշտակը, ագարակին պարիկն էր որ կանհայտանար, բովանդակ երջանկություն մըն էր, որ հանկարծ կջախջախվեր, կփշրվեր վերջնականապես, անդառնալիորեն...

Սերգիս աղա երբ քիչ մը ուշաբերեցավ, երկար ատեն հանդարտիկ լացավ, կամաց-կամաց խոսելով ինքնիրեն, իր սիրելիներուն, մեռնողին հետ. Դեռ Համբարձում աղային խոսքերուն ազդեցության տակ, կրած հարվածեն անբանացած, իրեն այնպես կթվեր թե զավակներն ալ մեռած էին, մայրն ալ մեռած էր, ամբողջ ընտանիքը ոչնչացած էր սոսկալի չարաղետքի մը մեջ ու ինք միս մենակ կմնար աշխարհի երեսը...

— Թագուհի՜ս, զավակնե՜րս, մարի՜կս, ա՜խ, իս ասանկ թողուցիք...

Լռեց։ Մեկեն ինքզինքին եկավ, քովը գտնված գավաթը պարպեց, կրկին ուշադրությամբ կարդաց նամակը, արցունքները սրբեց և ոտքի ելավ։

Նույն միջոցին Համբարձում աղա վառարանին քով կայնած կտաքանար, իրեն հանձնված ծանր պաշտոն մը հաջողությամբ կատարող մարդու մը սրտի գոհունակությամբ։

Սերգիս աղա դեպի անոր դիմեց և երկու ձեռքով, կոճկված սեթրիին օձիքներեն բռնելով, ձայնով մը որուն ահագնությունը տակավին ականջներուս կհնչէ կարծես՝ գոչեց.

— Անօրե՜ն, անաստվա՜ծ մա՜րդ... ամենեն առաջ չըսեի՞ր որ կնիկս, Թագուհին է մեռնողը... բոլոր զավակներս մեկիկ-մեկիկ մեռցուցիր, մայրս մեռցուցիր, ամենուն վրա արցունք թափել տվիր, ամենուն համար հոգիս արյունեցիր... անօրե՜ն, անաստվա՜ծ... ավանա՜կ մարդ...

Ու Սերգիս աղա, միշտ Համբարձում աղային օձիքներեն բռնած, այնքան ուժգին կերպով թոթվեց ու ցնցեց զայն, որ սեթրիին կոճակները քաղվեցան, օձիքը պատռվեցավ ու կռնակի վրա գետին տապալվեցավ։

Սերգիս աղա, գոհ ու թեթևցած հանդարտ քայլերով դուրս ելավ սենյակեն ու քաշվեցավ ննջասենյակը։

Վազեցինք Համբարձում աղային քով, որուն լեզուն բռնված

էր հուզումեն։ Վեր առինք գետնեն, խելքը գլուխը բերինք ու ճամփու դրինք։

Ա՛լ իր ազդեցությունը, իր հարգը կորսնցուցած էր ամենուս քով։ Իր թավալգլոր անկումին հետ ինկած էր նաև մինչև այն ատեն մեր աչքը կուրացնող կեղևանքը ու կտեսնեինք, որ ամենահետին տխմարի մը, կատարյալ ավանակի մը պես կատարած էր իրեն հանձնված պաշտոնը։

***

Ատեն-ատեն կուգար նորեն Համաբարձում աղան մեր տունը, միշտ կոճկված, միշտ սակավախոս, միշտ համրաքայլ։ Իր հագուստը, իր խոսքերը, իր քայլվածքը միմիայն մեր ծաղրն ու հեգնությունը կշարժեին։ Երբեմն խնդրի մը վրա իր կարծիքը կհարցնեինք, բայց միմիայն քիթին խնդալու համար և այնքան անպատկառորեն կխնդայինք, որ վերջապես դադարեցուց իր այցելությունները։

Վրեժնիս լուծած էինք։

1904

ԲԱՌԱՐԱՆ

ԴԺՎԱՐՀԱՍԿԱՆԱԼԻ ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Աբարթման — *շքեղ բնակարան, հարկաբաժին։*
Ազատամարտյան խումբ — *դաշնակցականների այն մասը, որը համախմբված էր «Ազատամարտ» թերթի շուրջը։*
Ալտրուիստական — *այլասիրական, այլասիրություն բառից։*
Ալ օն փարալբոտա բունտան — *սա էլ է խոսքի խառնվում։*
Ակրոպոլիս — *միջնաբերդ, նշանավոր էր Աթենքինը։*
Անապա — *արդյո՞ք։*
Անիմ — *անփորձ, անիրազեկ, չտեսա*
Ամաթյորներու խումբ - *սիրողների խումբ*
Ամա՜ն, ֆիդայիլեր կելիորլար — *ամա՜ն, ֆիդայիները գալիս են։*
Այվալըֆ — *այվա՝ սերկևիլ, որից պատրաստված օղին։*
Anomalie — *աննորմալություն։*
Անֆույթ — *անփույթ։*
Անձնդյուր — *հեշտակյաց։*
Անդենական — *այն աշխարհային, երկնային։*
Աշլամա — *պատվաստված, կիսատ-պռատ։*
Աշկ օլսուն — *կեցցե՛, բրա՛վո։*
Աշճի — *խոհարար։*
Աշխարճացույց — *քարտեզ։*
Ապան էրածներ — *սիրահարվածներ։*
Ապատիե — *ագարակ։*
Ապու-Տարտար — *Ալեքսանդրիայի (Եգիպտոս) գլխավոր փողոցը։*
Առապա — *առյապա, գալիք, ապագա։*
Առածգակ — *առաձգական։*
Առսրզ — *անպատկառ։*
Ասրֆզ լեպլեպեսիի մեզե — *բոված սիսեռով աղանդեր։*
Ասս.ենական — *այս աշխարհային, երկրային։*
Ատտիկե — *ատտիկեյան, հին Աթենքի հասարակապետության հատուկ. նուրբ, ճաշակավոր։*
Աերոպագոս — *ավագների ժողովը հին Հունաստանում։*
Ամյա — *թյուրքական կառավարության աքսորավայրերից մեկը։*

Բաբուճ — *հողաթափ։*
Բազ — *բազա, հիմք։*
Բազարլըխ — *սակարկություն։*
Բաբոռն — *գործատեր։*
Բալդր — *բալդիր, փաչա, սրունքի ետևի փափուկ միսը։*
Բալլիֆ -- *բանալի։*
Բայյաշը — *ծաղրածու, կլոուն։*
Բանքելեֆիֆ — *հունական շոգենավային ընկերություն։*
Բանկալ — *եկեղեցուն կից ժամկոչի սենյակը։*

Բանկ օֆ էշիբտ — *եգիպտական բանկ։*
Բանկալիթի այուրեռու վարժարան — *կաթոլիկ քույրերի վարժարան Պոլսի Բանկալթի թաղամասում՝ բարձր դասի աղջիկների համար։*
Բառոլ տ'ոնյոռ — *ազնիվ խոսք», տեռնիր՝ նշանակում է փոփոխական խոսք։*
Բարեհուսս գլուխը — *Բարեհուսս հրվանդան։*
Բարսի — *պարսի, Հնդկաստանում ապրող պարսիկները։*
Բեզիկ — *թղթախաղի մի տեսակ։*
Բիր — *մահակ։*
Բիրեյի քարափը — *Աթենքի նավահանգիստը հանդիսացող Պիրեա քաղաքը։*
Բղչախոռ — *անառակ, վավաշոտ։*
Բալիս — *ոստիկան։*
Բոքեր — *թղթախաղի մի տեսակ։*
Բոսքա — *փոստ։*
Brigandc — *հելուզակ, ավազակ։*
Բրոտ — *պրոտեստյան, բողոքական։*

Գայմագամ — *գավառապետ։*
Գառագեղ — *երկաթյա վանդակ՝ գազանների համար։*
Գարատաղ — *Ջերնոգորիա։*
Գրանաշիվ — *հանրահաշիվ։*
Գրանատխանե — *ընթերցարան։*
Գործը սուղի կապած ես — *գործը ամուր ես բռնել։*
Գործավորական խնդիր — *բանվորական հարց։*

«Դև գայ ի նմա» — *դև կա նրա մեջ։*
Դլփին — *դելֆին, ճարպատու ձուկ։*
Դիարեզա — *վաճառման դարակ, դախլ։*
Divorce — *ապահարզան։*
Դրախոմա — *դրամօժիտ։*
Դրսեցի — *ոչ պոլսեցի, գավառից եկած։*
«Դու ես, որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք» — *դու ես, որ պիտի գաս, թե ուրիշին սպասենք։*

Եալանճի տալմա, Բաթլիճան տալմա — *պասուց տալմայի տեսակներ։*
Եանիճեսնի — *դարանակալ ավազակ, գրպանահատ։*
Եճու — *երիտասարդ։*
Եասաք տըր — *արգելված է։*
Եըլարգ-ֆյոշկ — *սուլթանի պալատը Պեշիկթաշ թաղամասում։*
Եոլովը (բուրք. yol) — *ճանապարհ բառից, ճանապարհով, միջոցով։*

Զաղփաղփուն — *նրբակազմ, հիվանդոտ։*
Զավալը — *թշվառ, դժբախտ։*
Զապթիե — *թուրք. ժանդարմատուն։*
Զեհիր — *թույն։*
Զեմպիլ — *գործված պայուսակ, զամբյուղ։*
Զենկին — *հարուստ։*
Զիֆտ — *ձյութ։*

Էլմաս — *ալմաստ։*
Էճել — *օրհաս, վերջին ժամը։*
Էնյա — *զվարթություն։*
Էշրաֆ — *թուրքական պաշտոնյա։*
Էտերսինիզ — *անում եք։*
Էնթրիկ — *ինտրիգ։*
Էտեպսիզ — *անամոթ։*
Էտեպսիզություն — *անամոթություն։*
Էտիրնե — *Ադրիանապոլիս։*
Էքսկլուզիվական — *դուրս վտարված։*

Ըսատխոզ — *խեցգետին։*

Թազսիմ — *Բերայի թաղամասերից։*
Թալիան — *այսինքն Իտալիան։*
Թանձրամարտ — *խավաքարտ, ստվարաթուղթ։*
Թավան — *առատաղ։*
Թավլու — *նարդի։*

Թապելա — *ցուցակ։*
Թացան — *թրջոց կոմպրես։*
Թարսուս — *Տարսոն (Կիլիկիա), Պողոս Առաքյալի ծննդավայրը։*
Թարիֆ ընել — *բացատրել։*
Թեսլիմ ընել — *հանձնել։*
Թերացա — *պատշգամբ։*
Թենեիրե յուվարլանմբրշ քափաղրնը պուլմուշ—*պուտուկը գլորվել, խուփը գտել է։*
Թեֆերլամներ — *սրախոսություններ։*
Թեֆֆե — *մահմեդականների սրբավայր։*
Թոնաք բան — *տարօրինակ բան։*
Թոռուխը հաստ — *թորուկ՝ ոտի կոճ, հաստ ու պինդ։*
Թոյ — *նայիվ, անմեղ։*
Tupet — *համարձակ, ճարպիկ։*
Թուրի — *բողկ։*

Ժանպոռն — *խոզի ապուխտ (վետշինա)։*
Ժիլիե — *ժիլետ, բաճկոն։*
Ժուրնալ — *լրտեսագիր (դանոս)։*
Ժուրնալնի — *մատնություններով ու լրտեսագրեր գրելով զբաղվող մարդ։*

Իմ սայիես կապրիֆ — *իմ շնորհիվ եք ապրում։*
Իմզա — *ստորագրություն։*
Ինկլիզը նորեն քալան մը ճազը կրնե — *Անգլիան մի նոր դավ է պատրաստում։*
Իշտե — *ահա։*
Ինշալլահ — *երանի։*
Իշիճիզ շատ ֆենա — *ձեր գործը շատ վատ է։*
Իտարե — *խնայողություն։*
Իրագիտություն — *ֆիզիկա։*
Իքսիր — *քաղցր օղի, մրգօղի։*

Լաղապնուս հոլալը շապիկ մի՛ ճագցրեր — *ազգանվանս օտլայած շապիկ մի՛ հագցրու, այսինքն՝ ինտելիգենտ մի՛ մկրտեր։*
Լաստիկ — *կրկնակոշիկ, ռետին։*
Լաստիկլի խոսք — *առաձգական խոսք։*
Լեզալ — *օրինականացված։*
Լեպլեպի — *բոված սխտոր։*
Լեքթա — *հունական դրախմիի 1/100-ը։*
Լիկա — *լիգա։*
Լոնեա-օտասի — *արհեստավորական դատարան։*
Լոկիայով — *սոցիոլոգիա,— Կակայանցը սոցիոլոգիա էր սովորել։*
Լոն թենիս — *թենիս։*
Լորանտո — *Իտալիայի գավառներից մեկը։*
Լորդ Քրոմեր — *Եգիպտոսի անգլիական կառավարիչը։*

Խազերտ — *թերթ, գազեթ։*
Խալք մրնե՛ր — *սխալ մի՛ անիր։*
Խալիֆա — *քահանաներին հատուկ գլխարկ։*
Խալֆա — *ենթավարպետ։*
Խամշի — *մարակ։*
Խաֆիե — *մատնիչ, լրտես։*
Խեռվազ — *թիկնապահ, բարապան։*
Խրզմիշ ըլլալ — *կարմրել՝ ամոթից, բարկությունից և այլն։*
Խրյախ — *ուժգին, հետաքրքրական, գեղեցիկ։*
Խրքլրխ — *արատ, թերություն։*
Խրմպլ — *ագետ, գռեհիկ։*
Խրտիվ — *Եգիպտոսի փոխարքան նախքան անգլիացիների տիրապետությունը (1882)։*
Խրլավուզ — *ամուսնության միջնորդ։*
Խրխա — *բամբակյա վերարկու։*
Խոսմի տալմիշ եղա — *խոսքի բռնվեցի։*
Խոշությունն — *հեռու փախչել։*
Խավուշ — *գորանոց։*
Խուզիի պես — *գառնուկի պես։*
Խուռնազ — *խորամանկ։*

Խուռուլմիշ ըլլալ — *գոռոզանալ։*
Խուրուխանվենի — *բոված և ծեծած սուրճ վաճառող։*
Խուրուճի — *սրճավաճառ։*

Կալաքա Սերայ — *Թուրքական բարձրագույն դպրոց Պոլսի Ղալաթիա Թաղամասում։*
Կազամար — *Թանաքաման։*
Կաշխարեր — *կսգար, աշխարել, սրգալ բառից։*
Կապելլա — *գինետուն։*
Կառկառա — *կոկորդը ողողելու դեղ։*
Կատալիսմա — *կործանում, քայքայում։*
Կենե մի՞ — *դարձյա՞լ։*
Կեսիկ փաշա — *Պոլսի ասիական մասի Թաղամասերից մեկը։*
«Կրոլա» *հրամանագիր* — *կրոլա՝ անընդհատ, միշտ։*
Կլան — *տոհմ։*
Կինն — *արու վարազ։*
Կիշե — *դրամարկղ։*
Կյուվենմիշ կրլլա — *վստահում է։*
Կոքա — *կոդեքս։*
Կոնֆետի — *գունավոր թղթի կտորներ, որոնք պարահանդեսի ժամանակ Թափում են պարողների գլխին։*
Քոֆդի — *սուտ։ Սա մի բառախաղ է։ Ուզում է ասել, որ եվրոպական դիվանագետները շլացուցիչ խոստումներ արեցին, հետո խաբեցին։*

Հագներգություն կամ՝ ճանգներգություն — *դյուցազներգություն։*
Համիտիե — *անձնագիր. Աբդուլ Համիդի ժամանակ նաև քրդական հեծելազոր։*
Հայրատ — *լկտի, անպատկառ հայացք։*
Հանոքո — *ֆրանս. արտաքին գործերի մինիստր։*
Հափրանալ — *հագենալ, հղփանալ։*
Հեղակարծ — *անսպասելի, հանկարծակի։*
Հելպեք — *իհարկե։*
Հեռանայն — *հեռախոս։*
Հե՛ զուշուն էքի ենմեզ — *ամեն թռչունի միսը չի ուտվի։*
Հյուրրիեթ — *ազատություն։*
Հոմ-Սոքուլ — *միսիոներական (ամերիկյան) բարձրագույն վարժարան Պոլսում (աղջիկների)։*
Հորամոյն զավակ — *հորը նման, հոր բնավորությունը ունեցող։*

Ջար — *ցար։*

Ղենչակ — *գոգնոց, երեսսրբիչ, սրբիչ։*

Ճատը — *ջադուկ։*
Ճեհեզ — *օժիտ։*
Ճեպհանեն, չանքան, մաքրան — *ռազմամթերք, չանքա՝ կողքից կախվող պայուսակ, մաքրա՝ չրաման։*
Ճիլա — *փայլ, հղկումն։*
Ճիպինիկ — *մոծակներից պաշտպանող քող։*
Ճիռռ ընել — *մուրհակը ուրիշի անվան փոխանցել։*

Մաճալեպի — *բրնձի ալյուրով, կաթով և շաքարով պատրաստվող խմորեղեն։*
Մառա — *Մարատ (Ժան-Բատիստ)։*
Մաստիֆա — *օղու տեսակ։*
Մասգոթ — *բարենշան, բախտավոր։*
Մավուանա — *բարկաս, բեռնատար նավ։*
Մարեշալ — *մարշալ։*
Մարթինլն ձեռֆս... — *Մարտինի (տիպի) հրացանը ձեռքս...։*
Մեզելենմիշ ըլլալ — *նախաճաշել։*
Մեթերնիկ — *Ավստրիայի վարչապետը, Մետերնիխը։*

Մեթրո — *մետրո։*
Մեմուր — *ոստիկանապետ, ընդհանրապես պաշտոնյա։*
Մենելիք — *պայթուցիկ նյութի տեսակ։*
Սեպուս — *Թուրքական պառլամենտի դեպուտատ։*
Մեսաժոի — *ֆրանս. շոգենավային ընկերություն։*
Միճանի — *արհեստավոր, ոսկերիչ։*
Միլլեթ — *ազգ։*
Մխտար — *քյոխվա։*
Մյուլուզըմ — *մազլում՝ հեզ խոնարհ։*
Մյուտիր — *մյուտյուր, տեսուչ։*
Մյուֆտի — *իսլամ հոգևորականի աստիճան։*
Մոռքուշի — *ռնակցիոն, ռեակցիոներ։*
Մուին — *ամուսնացած, ընտանիքավոր։*
Մուճաճիրի — *գաղթական։*
Մուրատ — *մուրազ, իղձ, գործածվում է նաև իբրև անուն։*

Ցազ — *գրիր։*
Ցարար — *պատանի։*
Ցերիքացած — *հյուծված, կմախքացած։*
Ցալտրզ — *յալտզ՝ աստղ. ոսկի կամ արծաթ դրվագ։*
Ցուլար — *սանձ։*
Ցուշիճճի սոխախր — *երրորդ փողոցը։*

Նավուտիղ — *ղեկակալ։*
Նաֆարտ — *շաբլոն։*
Նուճե ոուճի — *ներվերը հանգստացնող դեղ։*
Նե ֆեափազելիֆ տիր պու—*ինչ խայտառակություն է այս։*
Նեխասաստ — *նեղսիրտ, դյուրագրգիռ։*
Նեճի է — *ինչացո՞ւ է։*
Նիլետ իշիտիեորզ—*ինչե՞ր ենք լսում։*
Նիկիո ժողովը — *առաջին տիեզերական՝ կրոնական ժողովը (325), որը դատապարտեց արիոսականությունը։*
Նիտրոգլիսերին — *նիտրոգլիցերին, ամենաուժեղ պայթուցիկ նյութերից մեկը։*
Նոպելի — *Նոբել, ավստրիացի հայտնի ինժեներ, խաղաղության կողմնակից։*
Նումեա — *Նոր Կալեդոնիայի գլխավոր քաղաքը։*

Նախալամիշ ըլլալ — *կատակաբանել, զվարճախոսել։*
Նախա բան — *կատակ, կատակախոսություն։*
Նախրն — *շվարած, շփոթված։*
Նեռիաթճի — *շերիաթին հետևող՝ պահպանողական, ռեակցիոներ։*
Նքայն Թյուրինգ — *պատրաստի հագուստի մեծ խանութներ Պոլսում։*
Նիմշիե — *շիմշիր, տոսախ (самшит)։*
Նու շիշեյի տոլտուր — *այս շիշը լցրու։*

Ուղուրլու — *խերով, հաջողակորեն։*
Ուքամամազտան (ուքանմազդան) — *առանց ամաչելու։*
Ույտուրմիշ կրնես — *սարքում ես։*
Ուղուրսրզ — *օգուտ չբերող, ձախորդ։*

Պաքախճի — *դրամ վատնող, նենգ խարդախ։*
Պատրտվել — *թաքնվել։*
Պահարան — *ծրար։*
Պանդուր — *թեթևամիտ, հիմար։*
Պանիեռ — *բանկիր, սեղանավոր։*
Պակրլը — *հրահանգ, դեկրետ։*
Պառ — *բար, գարեջրատուն։*
Պալքա կախել — *գնալ-գալ։*
Պաստրմիշ ընել — *գերազանցել։*
Պարուքա — *պորտֆեյլ, թղթապանակ։*
Պաֆու — *Բաքու (քաղ.)։*
Պելա — *փորձանք։*

Պեյալը — *փորձանք բերող։*
Պեն էյլե խամաւ իշլերիեն զարշը-մամ — *ես այդպիսի կապուծների գործերի չեմ խառնվում։*
Պեն պաւ լաֆլարտան պիր շեյ ազ-նամատրմ — *այս խոսքերից ես բան չհասկացա։*
Պենիմ ազլըմ էյլե շեյլերե եթյիշ-մեզ — *իմ խելքը նման հարցերին չի հասնում։*
Պեյխոզ — *Պեյքոզ՝ Պոլսի թաղամասերից մեկը։*
Պեոյումդերե — *ամառանոց Բոսֆորի ափին։*
Պեյնամազ — *անհասկացող։*
Պեսլեմե — *աղախին։*
Պետեվիններ — *բեռլիներ։*
Պերսիմ — *կորեկ։*
Պետեմեր — *տեղեկատու գրքույկ։*
Պեֆ շիրին մարդ է — *շատ քաղցր մարդ է։*
Պեմնի — *պահապան։*
Պիսիլեք — *հեծանիվ։*
Պիրինճի սոխախը — *առաջին փողոցը։*
Պոեր — *բոեր։*
Պոշպոշունա — *դատարկ տեղը։*
Պոռոն երմիշ կրնե — *մոտավորապես՝ թիփի է անում։*
Պոֆ — *կղկղանք։*
Պրանմին — *Բրահմին, հնդիկ կրոնավոր։*
Պրուսա — *Անատոլիայի քաղաքներից մեկը։*
Պուտա — *Բուդդահ։*
Պուտալա տբր տեյինիզ շուանա — *ասենք հիմար է։*
Պուֆրեշ — *Բուխարեստ՝ Ռումինիայի մայրաքաղաքը։*

Պալըմի նամար — *ցուցամոլության համար։*
Պամուշրնի — *լվացարարուհի։*
Պարշը — *չուկա։*

Պարրֆ — *մուճակ, մոյկ, տոբեխ։*
Պափխրն — *չարաճճի, ստահակ։*
Պրոտանալ — *լգոռոզանալ։*
Պեքաներ — *պարտիզաններ, ձիավորների զինված խմբեր, նաև ավազակներ։*
Պեմենլի բաստրմա — *բաստրմա չեմենով։*
Պյուրիկ տալ — *փթած ճյուղ, չորացած ճյուղ։*
Պալբազ — *թափառական կյանք սիրող, զբոսաշրջիկ։*
Պրոզ ալաթասի — *չոր ձկնով սալաթ։*
Պուրպանի — *գործատեր, առաջ այդպես էին կոչվում անասնավաճառները։*

Պուխա — *Պուղա, Հայաստանի հին քաղաքներից մեկը Պարսկաստանի սահմանի մոտ։*
Պրնանկիր — *հրդեհաշեջ։*

Recette — *դրամական մուտք, եկամուտ։*
Ռեժի — *ֆրանսիական ընկերություն Թուրքիայում, որի ձեռքին էր գտնվում ծխախոտի մենաշնորհը։*

Սալլանմիշ ըլլալ — *երերալ, տատանվել։*
Սարաֆլար բեճասի — *սեղանապետ, սեղանավորների պետ։*
Սարդանաբաղյան մարուֆ — *Աստվածաշնչի մեջ հիշվող Ասորեստանի թագավոր Սարդանաբալի անունից։*
Սախտե — *կեղծ, սախտե կուտա, կեղծ դրության մեջ է դնում։*
Սարը-Յար — *Պոլսի ամառանոցներից մեկը՝ Բոսֆորի ափին։*
Սեխ — *ձիապան։*
Սեն նե տերսին պաֆալըմ — *տնեսնենք գու ինչ ես ասում։*
Սերսեմ — *շշմած, ապուշ։*

Սիբարացի — *սիբարիտ, հեշտակյաց։*
Սեֆիաթ — *տարագրություն։*
Սինսիլե — *տոհմ, գերդաստան։*
Սկովտական ուիսքի — *Անգլիայում գործածական օղու տեսակ վիսկի։*
Սոլ — *ձախ։*
Սոխախը յալտրրըմ շինել — *փողոցը մայթել։*
Սոֆա — *ձեռնափայտ, դագանակ։*
Ստենոտորյան ձայն — *դժոխային ձայն։*
Սրբան — *ելավ, տարածվեց։*
Սուտալի — *դանակ։*

Տաբատ — *անդրավարտիք, շալվար։*
Տալմա — *կաթված։*
Տաֆա — *դատ։*
Տարրագիրություն — *քիմիա։*
Տերտ խասավեթ — *դարդ, հոգս։*
Տեֆ ըլլալ — *կորսվել, վտարվել։*
Տըլլա տիկին — *տխմար տիկին։*
Տոլապ Տերխի չյոփիկ — *Պերայի մի մասի ընդհանուր աղբանոցը։*
Տյուզ — *օղու տեսակ։*
Տյուտիկ — *դուդուկ։*

Ռեչինա, ուզլո — *Հունաստանում տարածված գինու տեսակներ։*
Ռուբի-ռուպի — *հնդկական դրամ։*

Փախուկ — *խելապակաս։*
Փաղախ տելիֆանելը — *փայլուն երիտասարդ։*
Փարայա պագալըմ — *փողը տեսնենք։*
Փրոյանթի — *ադամանդ։*
Փաբլամիշ ըլլալ — *տրաքվել։*
Փոլիսմեն — *ոստիկան։*
Փորթուգալ — *նարինջ։*
Փորեղ — *մեծափոր։*
Փռանկա — *տաժանակիր աքսոր։*

Քազինո — *կաֆե։*
Քանֆուրուներ — *կենգուրուներ։*
Քասա — *կասսա, տատարկդ։*
Քարյուղ — *նավթ։*
Քափուք — *զինվորական շինել։*
Քելեֆիրը խափմիշ բրին — *օգտակար գործ սկսեցին։*
Քեֆագե — *անարգ, խայտառակ, լրկտի։*
Քեոմուրճի — *ածխավաճառ, ածխագործ։*
Քլիկ — *կլիկ։*
Քմուշ — *քմահաճույք։*
Քյոլե — *ստրուկ։*
Քիրանի — *վարձակալ, տնատեր։*
Քոնսոլիտ — *արժեթուղթ, խաղարկության ենթակա։*
Քրոնիկ — *խրոնիկա, ֆելիետոնի իմաստով։*
Քուպրա-ֆուպրա — *Հնդկաստանում տարածված խիստ թունավոր օձ։*

Օլաճախ — *արհամարհական բառ։*
Օրիստե — *ներսն է, տանն է։*
Օնտալրի — *տասանորդ։*
Օվա — *հարթություն, դաշտ։*
Օ տաս կետտի — *նա էլ գնաց, մեռավ։*

Ֆանթեզի — *թեթև ժանրի հոդված։*
Ֆասուլիա փիազի — *լոբի ձեթով-քացախով։*
Ֆելլահ — *գյուղատնտեսական բանվոր, բատրակ։*
Ֆեմինիստ — *կանանց ազատագրական շարժման հետևող, կանանց ազատագրության կողմնակից։*
Ֆլիք եղանք — *փախտատուց եղանք։*
Ֆրեսերիկ Փասի — *ֆրանսիացի խաղաղասեր հրապարակախոս։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՊԵՐ

Ընտանիք, պատիվ, բարոյական 3
Թաղականին կնիկը 321

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Հեղափոխության մակաբույծները 661
Ա. Արտասահմանի գործիչը 661
Բ. Խմբագիրը 669
Գ. Որ մենք հերոս... 676
Դ. Նախկին գործիչը 685
Ե. Կեղծ լրտեսը 690
Զ. Անվավեր հերոսներ 696
Է. Հակահեղափոխականը 705
Համբարձում աղա 711

Երվանդ Օտյան

Երկեր

Ерванд Отян

СОЧИНЕНИЯ

(На армянском языке)
Издательство «Советакан грох», ул. Теряна, 91.
Ереван, 1978

Կազմ. Լ. Ն. Աբազյանը, խմբագիր՝ Ջ. Ա. Պետրոսյան, նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան, գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան, տեխն. խմբագիր՝ Ա. Վ. Սահակյան, վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ա. Բուլաթյան

И. Б.-№ 626

Հանձնված է շարվածքի 18/XI 1977 թ.։ Ստորագրված է տպագրության 28/VI 1978 թ.։ Թուղթ՝ № 1, 60×84 1/16, տպ. 23,0 մամ.=42,78 պայմ. մամ., հրատ. 37,6 մամ.։ Գինը՝ 3 ռ. 40 կ.։ Պատվեր՝ 2461։ Տպաքանակ՝ 50.000։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան, 91։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան, 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли,
Ереван-9, ул. Теряна, 91.